



ՆԻԻԹԵՐ

Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԺԲ. ՀԱՏՈՐ

Խմբագիր՝ ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

«ՆԻԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ» մատենաշարի
հրատարակությունը կը կատարուի Հ.Յ.Դ. Բիւրոյի որոշումով:

© All rights reserved
ISBN 978-9953-0-3627-4

Ներկայ հատորին տպագրությունը իրականացած է նուիրատուութեամբ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«ՆԻՒԹԵՐ»-ու ԺԲ. հատորը ամբողջությամբ նուիրում է Հայոց Մեծ եղեռնին:

1915 թ. Ապրիլ 24ը նախորդող ժամանակաշրջանին եւ յատկապէս առաջին Աշխարհամարտի շրթայազերծումով սկիզբ առած հալածանքներու, հակահայ բռնարարքներու մասին առատ նիւթ տրուած է արդէն նախորդ` ԺԱ. հատորի տարբեր գլուխներուն տակ (տեսնել էջ 198-245, 286-309): Վկայակոչուած վաւերաթուղթերուն մէջ բացայայտ կը դառնայ որ Իթքիհատի ղեկավարութեան կողմէ հայերը բնաջնջելու կանխորոշուած ծրագիրը գործադրութեան կը սկսի դրուիլ համաշխարհային պատերազմի առաջին օրերէն, *նախքան Թուրքիոյ պաշտօնական մասնակցութիւնը այդ պատերազմին*: Սկզբնական գործողութիւնները կը կեդրոնանան առաւելաբար հայկական նահանգներու եւ Կիլիկիոյ մէջ, ուր համախումբ կ'ապրէր Օսմանեան կայսրութեան աւելի քան երկու միլիոն հաշուող հայութեան ստուար մեծամասնութիւնը:

Աշխարհամարտը ծայր տուած էր 1914 թ. Յուլիսի վերջերուն, իսկ Թուրքիա պատերազմ մուտք գործեց Հոկտեմբեր 29ին: Ուստի գաղափար մը կազմելու համար միջանկեալ երեք ամիսներու ընթացքին թրքական իշխանութեանց վարած հայահալած քաղաքականութեան մասին, անհրաժեշտ կը դառնայ վերյիշել կարգ մը յատկանշական երեւոյթներ եւ իրողութիւններ, որոնք կը միտէին գրգռել հանրային կարծիքն ու թուրք խուժանը հայութեան դէմ, վերջինս ներկայացնելով իբրեւ անվստահելի ու վտանգաւոր տարր: Այսպէս. —

Ա) Ընդհանուր պատերազմի հռչակումէն անմիջապէս ետք, Թուրքիոյ տարածքին յայտարարուած էր պատերազմական դրութիւն եւ ձեռնարկուած բռնագրաւումներու: Բանակի եւ պատերազմական կարիքներու պատրուակով կատարուող լայնածաւալ բռնագրաւումներուն ենթակայ էին բացառաբար քրիստոնեաները եւ մասնաւորապէս հայերը: Ուղղակի թալան էր, որովհետեւ գրաւուած իրեղէններուն կամ պահանջուած գումարներուն հազիւ մէկ տասներորդն էր որ պիտի ծառայէր բանակի կարիքներուն: Քաղաքներու մէջ վաճառատուներէն կը տարուէր ամեն տեսակի ապրանք. գիւղերէն` ցորեն ու ալիւր, ձմեռուայ պաշար, մինչեւ իսկ սերմնացու:

Բ) Յայտարարուած էր զօրակոչ եւ բանակ կանչուած 20-45 տարեկան տղամարդիկ: Բնականաբար հայ երիտասարդները եւս պիտի ընդառաջէին ընդհանուր կոչին, հակառակ անոր որ Թուրքիոյ մէջ քրիստոնեաներու զինուորական ծառայութիւնը 1910 թուականին ընդունուած ըլլալով` անոնց մէկ փոքր մասը միայն զինավարժ էր: Շուտով արդէն հայ զօրակոչիկները զինաթափ եղան եւ տարուեցան ճամբաներու շինութեան (*ամելէ քապուրի*) կամ բեռնակրութեան: Աւելի ուշ, պիտի իմացուէր որ անոնցմէ շատերը խումբ-խումբ ամայի վայրեր տարուելով կը գնդակահարուէին:

Գ) Պատերազմական դրութեան հաստատումը արգելքի տակ առած էր մարդոց տեղափոխութիւնները.

հաստատուած էր խիստ գրաքննութիւն մամուլի եւ նամակագրութեան վրայ. խափանուած էր բնականոն կապն ու հաղորդակցութիւնը մայրաքաղաքին հետ. կեղրոնը, հետեւաբար, կտրուած կը մնար գաւառներու անցուդարձերէն, որոնք հետզհետէ լայնածաւալ բռնութիւններու բնոյթ կը ստանային: Տեղի կ'ունենային խորհրդատր սպանութիւններ, որոնց զոհ կ'երթային շարք մը հոգեւորական եւ աշխարհական անձնատրութիւններ, եւ հակառակ կառավարական շրջանակներու շնական հերքումներուն, լուրերը կը հաստատուէին հաւաստի աղբիւրներէ:

Կ. Պոլսոյ մէջ եւս, հսկողութեան տակ կը պահուէին կուսակցական եւ հասարակական շատ մը գործիչներ. *պատանդ* էին անոնք Իթթիհատի համար:

Դ) Ներքին գաւառներու հայութիւնը յարատեւ կը պահուէր ահ ու սարսափի մէջ: Այս նպատակով կազմուած էին ու պետական միջոցներով զինուած չէթական յատուկ զունդեր: Բանտերէն արձակուած աւագակ ու ոճրագործ այս մարդոց արտօնուած էր սանձարձակ ու անպատիժ ասպատակելու հայ գիւղերը, քաղանելու եւ սպաննելու «անհաւատ» հայերը: Այս զունդերը, ստեղծուած իբր թէ որպէս օժանդակ ուժ բանակային զօրքերուն, ռազմաճակատ չըլլուեցան բնաւ. քրտական որոշ ցեղախումբերու կողքին, անոնք օգտագործուեցան նախ տեղւոյն վրայ, ապա արքորի ճամբաներուն վրայ, յարձակելու եւ բնաջնջելու տարագրեալներու անպաշտպան կարաւանները:

Ե) Հայութեան դէմ սադրանքի այլանդակ միջոցի մը ծառայեցուեցաւ *զինահաւաքը*: Ձէնք փնտռելու եւ զինապահեստ երեսան հանելու անունով ձեռնարկուած խուզարկութիւններն ու բռնութիւնները հասան արտառոց համեմատութիւններու: Ձէնք կը պահանջուէր բացառաբար հայերէն, պարտադրելով մինչեւ իսկ զանոնք հայթայթել ծախսու առնելով թուրք կամ քիւրտ հարեւաններէն: Նման միջոցներով հաւաքուած զէնքերը իշխանութեանց կողմէ կը ցուցադրուէին հանրութեան ու մամուլին իբրեւ փաստ հայկական երեսակայական ապստամբութեան մը:

Հայկական ապստամբութեան վարկածը կարեւոր տեղ պիտի գրաւէր թրքական իշխանութեանց՝ արդարացնելու համար իրենց հայահալած քաղաքականութիւնը: Ուստի եւ զինահաւաքի գործողութիւններուն զուգընթաց, անոնք ճիգ չէին խնայեր հայերուն նկատմամբ առնելու նուաստացուցիչ այնպիսի քայլեր, որ հարկադրաբար զանոնք ընդդիմութեան մղեն: Նման սադրանքներու թիրախ հանդիսացան մասնաւորապէս Ձէյթունը Կիլիկիոյ մէջ եւ Տարօն-Սասուն-Վասպուրական առանցքը՝ Մեծ Հայքի տարածքին, ուր ի գործ դրուած վայրագութիւնները հասան ծայր աստիճանի լարուած դրութեան ստեղծումին: Իրօք, եթէ հետագային կարգ մը շրջաններու մէջ, ինչպէս Վան, Սասուն, Շապին Գարահիսար, Մուսալեռ, Ուրֆա եւայլն, ըմբոստութիւններ եղան, անոնք պարզապէս ինքնապաշտպանութեան փորձեր էին, հրահրուած նոյնինքն թրքական կառավարութենէն: Արդար ընդվզում՝ դանակը ոսկորին հասած մարդոց, որոնց համար պատուարժան մահը նախընտրելի էր ստրուկի ստորաքարշ կեանքէն:

Չ) Դճնաժամային կացութիւնը նոր փուլ պիտի մտնէր 1914 թ. Հոկտ. 29ին, երբ Թուրքիա պատերազմ մուտք գործեց Գերմանիոյ կողքին, մանաւանդ, Էնվեր փաշայի Կովկասի վրայ կատարած շոնդալի յարձակողականին անփառունակ ելքէն ետք:

Թէ՛ յարձակման եւ թէ՛ նահանջի ժամանակ, թրքական բանակը, քրտական համիտիէ զօրքերը եւ չէթական զունդերը հայկական նահանգներու մէջ թալանեցին ու հրկիզեցին բազմաթիւ գիւղեր: Միջոցին, Իթթիհատի կեղրոնը սուլթան Բեշատին ստորագրել տուած էր *Ճիհատի* յայտարարութիւնը: Սրբազան պատերազմի այդ կոչը, որ իբր թէ գերմանօ-թրքական զինակցութեան կողքին զօրաշարժի պիտի ենթարկէր Ասիոյ եւ Եւրոպայի 300 միլիոն հաշուող մահմետական աշխարհը, ուրիշ հետեւանք չունեցաւ բացի հայութեան դէմ նոր գրգռութիւն բորբոքելէ թուրք խուժանային զանգուածներուն մէջ:

*
* *

Համառօտ կերպով վերել յիշատակուած իրադարձութիւնները տեղի կ'ունենային, ինչպէս ըսուեցաւ, մաս մը՝ Ընդհանուր պատերազմի շրջապագերծումէն անմիջապէս ետք, մնացեալը՝ Թուրքիոյ պատերազմի մասնակցութեան առաջին ամիսներուն. այլ խօսքով, հայոց նորագոյն պատմութեան ամէնէն սեւ էջը կազմող 1915 թ. Ապրիլ 24ը կանխող ժամանակաշրջանին: Անոնք բոլորը յաջորդական օղակը կը կազմեն այն ամբողջութեան, որ ցեղասպանութիւն պիտի կոչուէր. օրուան թրքական իշխանութեանց կողմէ նախօրօք ծրագրուած եւ պետական միջոցներով գլուխ բերուած ցեղասպանութիւն, որ բացի իր խլած մէկուկէս միլիոն անմեղ զոհերէն, պատճառեց նաեւ հայաթափումն ու կորուստը հայոց դարաւոր բնօրրան հայրենիքին:

Ապրիլ 24ը խորհրդանշական թուական է անշուշտ: Այդ օրուան մէջ կը խտանայ 1914-1918 տարիներու վրայ երկարող եւ մինչեւ այսօր մարդկութիւնը զարհուրանքի մատնող ոճրային արարքներուն ամբողջութիւնը: Արդարեւ այդ օրը մայրաքաղաքի հայ ականաւոր անճանալորութիւնները,՝ կուսակցական եւ հասարակական գործիչներ՝ գրող, բանաստեղծ, խմբագիր, գիտնական, մտաւորական, թուով 225 հոգի, գիշերանց հանուելով իրենց բնակարաններէն արքայապետի Փոքր Ասիոյ խուլ անկիւնները: Մարդոցութիւնը շարունակուելով յաջորդ օրերուն՝ ձերբակալուած ու տարագրուածներու թիւը հասաւ 600ի: Նմանօրինակ գործողութիւն կատարուեցաւ երկրի մեծ ու փոքր բոլոր քաղաքներուն մէջ, տասնեակներով եւ հարիւրներով: Ծանօթ է արդէն թէ ողբերգական ինչ ճակատագիր վիճակուած էր անոնց մեծագոյն բաժնին:

Երիտասարդութեան «զինուորագրութենէն» ետք, կը գլխատուէր հայ ժողովուրդի ընտրանին:

Մայիս-Յունիս ամիսներէն սկսեալ ձեռնարկուեցաւ Թուրքիոյ հայ ազգաբնակչութեան ամբողջական ոչնչացումին, որ գործադրուեցաւ տեղահանութեան եւ գազանաբարոյ այլեւայլ միջոցներով: Տարօն-Սասունի համար, օրինակ, վճռուած էր բնաջնջել ժողովուրդը տեղույն վրայ կոտորած սարքելով. Տրապիզոնի եւ Սեւ ծովեան ափերուն՝ ժողովուրդը նստեցող կը տարուէր բացերը եւ ծով կը թափուէր: Իբրեւ ընդհանուր կանոն, սակայն, որդեգրուած էր տեղահանութեան եւ տարագրութեան միջոցը: Այսպէս, նախ կը հաւաքէին տղամարդիկը, որոնցմով կազմուած կարաւանները երկար ճամբայ պիտի չկտրէին. չէթեւեւ գունդերը պարտականութիւն ունէին բնաջնջելու զանոնք քաղաքներէն դուրս գալէ անմիջապէս ետք: Ապա, կարգը կիներուն, ծերունիներուն եւ մանկահասակներուն էր, որոնցմէ կազմուած կարաւաններու անվերջանալի շարքը անընդհատ կ'ենթարկուէր ֆիզիքական եւ բարոյական անասելի շարչարանքներու, կողոպուտի, բռնաբարութեան եւ հաւատափոխութեան: Այսպէս, հարիւրաւոր քիլոմէթր ճամբայ անցնելէ ետք, փաստօրէն անոնց կոտորակուած խլեակները միայն պիտի հասնէին տարագիրներուն որպէս նոր բնակավայր ճշդուած Մուրիոյ եւ Միջագետքի անապատները, ուր եւ տեղի պիտի ունենար անոնցմէ հարիւր հազարաւորներու ահռելի նախճիրը:

Իթքիհատի եւ Օսմանեան կառավարութեան կողմէ գործադրուած ցեղասպանութեան մասին գոյութիւն ունի հայալեզու եւ օտար մեծածաւալ գրականութիւն: Ներկայ հատորի հարիւրաւոր էջերը փաստացի յաւելեալ վկայութիւններ կը հայթայթեն, արձանագրուած օրին հայ եւ օտարագրի ժամանակակիցներու, ապա նաեւ՝ վերապրողներու արժանահաւատ պատումներով: Վերջինները ի պահ դրուած են Հ. Յ. Դաշնակցութեան Պոսթընի կեդրոնատան դիւանատան մէջ: Այլապէս նաեւ բազմաթիւ երկիրներու պետական արխիւները այդ մասին կը պարունակեն դեսպանական եւ հիւպատոսական տեղեկագիրներ, միսիոնարական ներկայացուցիչներու եւ ակամատես վկաներու մանրամասն հաղորդումներ:

Քանի մը տասնեակ պետութիւններ եւ միջազգային ստեաններ ճանաչում տուած ու դատապարտած են արդէն Օսմանեան կայսրութեան վերջին տարիներու ընթացքին հայոց դէմ գործուած ցեղասպանութիւնը, եւ եթէ այսօրուան Թուրքիոյ ղեկավար դասը կ'ուրանայ իր նախնիքներուն գործած ոճրագործութիւնը իր իսկական անունով կոչել, այդ մէկը կը նշանակէ ոչ միայն հրաժարում պատասխանատուութենէ, այլ նաեւ խուսափում հայ ժողովուրդին նկատմամբ արդար հատուցում կատարելու իր պարտաւորութենէն:

Ինչ կը վերաբերի Անգլիոյ եւ Միացեալ Նահանգներուն, որոնք դեռ ձեռնպահ կը մնան 1915ի եւ յաջորդող տարիներու արիւնալի դէպքերուն համար ցեղասպանութիւն եզրը գործածելէ, այդ վերապահութիւնը հետեւեալն է պարզապէս «դաշնակից» Թուրքիոյ հետ կապուած քաղաքական, ռազմագիտական եւ տնտեսական շահերու: Այլապէս, նոյն յիշեալ երկիրներու պետական արխիւներուն մէջ է որ կը գտնենք հայասպանութիւնը վկայող առաւելագոյն թիւով փաստաթուղթերը:

*

* *

Ինչպէս ըսուեցաւ, ներկայացուող հատորը հայկական ցեղասպանութեան նուիրուած ըլլալով՝ կը տրուի Հ. Յ. Դաշնակցութեան կեդրոնական արխիւներուն մէջ պահուած նիւթերուն ամբողջութիւնը, որ ցուցակագրուած եւ տեղադրուած է այլեւայլ թղթածրարներու մէջ: Համախմբած ենք այդ բոլորը հետեւեալ հինգ բաժիններուն մէջ. –

1.- «Մեծ եղեռնը – Անմիջական վկայութիւններ»: Կը բովանդակէ 1915 թ. Ապրիլ 24էն սկսեալ հայասպանութեան մասին օրը օրին կատարուած տեղեկատուութիւն, իրականացած ընդհանրապէս այնպիսի անսովոր պայմաններու մէջ, որուն մասին կը խօսուի համապատասխան բաժնի բացատրական մուտքով:

Առաջին այս բաժնի հարիրաւոր ծանօթագրութիւնները՝ ծածկագիր անձնանուններով եւ տեղանուններով, բացի էջատակի յղումներէն, տրուած են նաեւ առանձին ցանկով բաժնի վերջաւորութեան, էջ 228-233:

2.- «Մուսալեռցիները Եգիպտոսի մէջ»: Կ'ընդգրկէ՝ սուլտահայերու հերոսական ինքնապաշտպանութեան ետք, անոնց Փոր Սայիտ կեցութեան չորս տարիները՝ մինչեւ վերադարձ հայրենի օրրան:

3.- «Ռոստոմ եւ 1917 թ. Ընկերվար Միջազգայնականի խորհրդածողովը Ստոկհոլմի մէջ», որու ընթացքին իբրեւ Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչ, Ռոստոմ կը ներկայացնէ Յիշատակագիր մը, Թուրքիոյ իրագործած հայաջինջ քաղաքականութեան մասին, եւ կը պաշտպանէ Հայաստանի անկախ գոյութեան իրաւունքը:

4.- «Յետ-եղեռնեան վկայութիւններ»: Կոտորածներէն վերապրողներու կողմէ կատարուած մանրամասն վկայութիւնները Օսմ. Թուրքիոյ մէջ գործուած ջարդերու եւ ջարդարարներու մասին: (Փաստաթուղթերու բնագիրները ընդհանրապէս ֆրանսերէն, մասամբ անգլերէն, տուած ենք թարգմանաբար):

5.- «Վկայութիւններ Հալէպ հաւաքուած վերապրողներու»: Թուրքիոյ շարք մը նահանգներուն մէջ գործադրուած կոտորածներու նկարագրութիւն՝ վերապրողներու կողմէ:

Յայտնենք որ օտարալեզու փաստաթուղթերու մէջ յիշատակուած հարիրաւոր անձնանուններ եւ տեղանուններ, յաճախ թերի կամ սխալ կերպով արձանագրուած, ուղղած ենք ըստ կարելւոյն, յետ մանրակրկիտ ստուգման:

Նշենք, վերջապէս, որ յարգուած է ընդհանրապէս գրութեանց ժամանակագրական յաջորդականութիւնը, միշտ նկատի առնելով հին եւ նոր տոմարներու միջեւ (փոխն ի փոխ գործածուող) գոյութիւն ունեցող 13 օրերու տարբերութիւնը: Նոր տոմարը օգտագործող Եւրոպայի եւ Ամերիկայի, օրինակի համար, ապրիլեան ձերբակալութիւնները Ապրիլ 24 կը թուագրեն, մինչ հին տոմարին հետեւող Թուրքիան, Պալքանները եւ Կովկասը՝ Ապրիլ 11:

Ե. ՓԱՄՊՈՒԹԵԱՆ

Ա. ԲԱԺԻՆ
ՄԵԾ ԵՂԵՌՆԸ
ԱՆՄԻՋԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջին այս բաժինը, որ ներկայ հատորին կես ծառայը կը գրաւէ, կազմուած է մեծ մասամբ այնպիսի փաստաթուղթերէ, որոնց ծագման եւ տարածման պարագաներուն մասին հարկ կը տեսնենք կարգ մը բացատրութիւններ տալ:

Յայտնի է, որ 1915 թ. Ապրիլ 24ի վաղորդայնին Կ. Պոլսոյ մէջ ահ ու սարսափի մթնոլորտ կը տիրէր: Հարիւրաւոր մտաւորականներու եւ ազգային-կուսակցական գործիչներու անակնկալ ձերբակալութիւնն ու անոնց տարագրումը սահմեկեցուցած էր մայրաքաղաքի հայութիւնը, եւ ջլատած ամէն շարժում: Ոստիկանութեան այդ յանկարծական գործողութեան զլխաւոր թիրախը կուսակցականներն էին, զլխաւորաբար դաշնակցական յայտնի դէմքերը: Տարուած էին արդէն Հ.Յ.Դ. Բիւրոյի, Պոլսոյ Կեդր. կոմիտէի անդամները եւ այլ բազմաթիւ գործիչներ: Մարդոսութիւնը պիտի շարունակուէր նոյնպէս յաջորդ օրերուն եւ շարաքներուն՝ երեսան հանելու համար լարուած թակարդէն դիպուածով ճողոպրած դաշնակցականները: Դեռ կային այդպիսիները, որոնք անմիջապէս նախաձեռնարկ եղան անցնելու ընդհատակ լարուած վիճակի մէջ պահելու կուսակցական մեքենան եւ իրագործելու այն ինչ որ կարելի էր տագնապայի այդ օրերուն:

Արտակարգ պայմաններու մէջ ինքզինք կեանքի կոչեց եռանդամ կազմ մը «Վիշապի Առժամեայ մարմին» անունով. կեդրոնական դէմքը Շաւարշ Միսաքեանն էր, միւս անդամները՝ Գրիգոր Մերճանօֆ (Ռուզան) եւ Սամուէլ Դարբինեան (Արտաւագո): «Առժամեան» ուներ նաեւ շատ մը օժանդակ ընկերներ, որոնց գործունէութեան դաշտը կը տարածուէր Պոլիսէն մինչեւ Երկրի ներսերը, մինչեւ Կիլիկիա եւ հայկական նահանգները: Այդ օժանդակներէն կ'արժէ յիշել Մարգալետը, Խոսրով Պապայեանը, փրոֆ. Աստուածատուր Խաչատրեանը, Տիգրան Ծամհուրը եւ շատ ուրիշներ, որոնք 1915-1918 տարիներուն, արքայական կամ փախստական վիճակի մէջ, ծպտեալ իբր թուրք, քիւրտ, արաբ պետեի կամ գերմանացի, պիտի գործէին Սեբաստիոյ, Գոնիսայի, Կիլիկիոյ եւ Միջագետքի տարածքներուն վրայ, իւրաքանչիւր արտասովոր ողիսական մը ապրելով:

Առժամեայ մարմինն ստանձնած զլխաւոր պարտականութիւններէն մէկը՝ գրաւոր հաղորդակցութեան պահպանումն էր Երկրին հետ, եւ անկէ քաղուած տեղեկութիւններու փոխանցումը արտասահման: Հաղորդակցութեան համար միակ մատչելին սահմանակից Պուլկարիան էր, տակաւին ոչ-պատերազմիկ երկիր, ուր կը գործէր Հ.Յ.Դ. Պաքանի Կեդր. կոմիտէութիւնը: Ահա այդ ճամբու օգտագործումով է որ Առժամեայ մարմնի անունով Շ. Միսաքեան, յարատեւ կերպով փոխտող իր թաքստոցներէն, տեղեկութիւններ կը հասցնէր Սոֆիա, թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ Երկրի անցուղարձերուն մասին: Փոխանցումը իրականացնելու համար կ'օգտագործուէին զանազան միջոցներ. անոնցմէ մէկը՝ Կ. Պոլսոյ պուլկար դեսպանատան անձնակազմի բարեկամ ու զաղափարակից պաշտօնեաներն էին եւ անոնց վայելած անձեռնմխելիութիւնը: Ուրիշ մը՝ արտասահման ճամբորդող օտար վստահելի անձնատրութիւններ. իբրեւ ընդհանուր կանոն, սակայն, եւ կասկած չյարուցանելու համար, նախընտրութիւն կը տրուէր սովորական թղթատարին:— Գամակները կը շարադրուէին ծածկագիր. գաղտնի մելանով կը գրուէին թերթերու (թրքական, ռուսական, պուլկար) լուսանցքներուն եւ բաց տարածութիւններուն վրայ: Այս եղանակով առաքուած գրութիւններուն մեծ մասը հասած է իր հասցէին: Ապա, Պալքանի Կեդր. կոմիտէի պարտականութիւնն էր՝ վերձանել ու արտագրել այդ գրութիւնները եւ բազմաթիւ օրինակներով ուղարկել ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան, Թիֆլիս՝ Հ.Յ.Դ. Բիւրոյին, Եգիպտոս ու Ամերիկա՝ տեղւոյն կուսակցական մարմիններուն: Հաղորդուած տեղեկութիւնները քաղուածաբար կը հրատարակուէին նախ Սոֆիայի «Հայաստան» թերթին, ապա վերոյիշեալ վայրերու դաշնակցական մամուլին մէջ:

Բախտատրութիւն է որ ճգնաժամային այդ օրերուն Պոլիսէն առաքուած ու Սոֆիա ստացուած թղթակցութեան ամբողջութիւնը պահպանուած է Պոլսոյ թղթածրարներուն մէջ (հիմնականը թիւ 882): Անոր բովանդակութիւնը, ինչպէս նաեւ հայկական ցեղասպանութեան մասին օրին արձանագրուած եւ տարբեր թղթածրարներու մէջ գտնուած փաստաթուղթերու ամբողջութիւնը կը տրուի հետագայ էջերուն մէջ:

Յայտնենք նաեւ որ վերեւ նկարագրուած եղանակով Վիշապի (Պոլիս) Առժամեայ մարմնի առաջին գրութիւնը կը կրէ 14/27 Ապրիլ թուականը եւ կը գուծէ 11/24 Ապրիլի ձերբակալութիւնները: Այնուհետեւ կը շարունակուի թղթակցութիւնը (շարաքը 2-3 նամակ) ամբողջ վեց ամիս, մինչեւ Սեպտեմբերի վերջերը, երբ անսպասելի կերպով Պուլկարիա՝ Գերմանիոյ եւ Թուրքիոյ զինակցելով, պատերազմ կը յայտարարէ դաշնակիցներուն դէմ: Այդ օրուրնէ կը սկսի հալածանքը Դաշնակցութեան դէմ. կը խափանուի «Հայաստան» թերթը, Պալքանի Կեդր. կոմիտէի անդամներն ու գործիչ ընկերները կը հեռանան երկրէն. մէկ մասը կ'անցնի Ռուսաստան, ուրկէ Յովհ. Ամատունի ատեն մը եւս պիտի շարունակէր արտասահման փոխանցել Պոլսէն ստացուած տեղեկութիւնները: 1916 թ. Մարտ 16ին, Շաւարշ Միսաքեանի ձերբակալութեամբ, կը կասի նաեւ Պոլսէն կատարուող լրատուութեան հոսքը:

Փաստ 769-9

1.- ԱՀՌԵԼԻ ԿՈՏՈՐԱԾՆ ՈՒ ՍԱՐՍԱՓՈԸ ԲԱԲԵՐԴԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ԳԻՒՂՕՐԵԻՑ ՍԷՁ

Ստորև տրուած փաստատուողը բաղկացած է խիստ մանրագիր 6 մեծ էջերէ. անատրագիր է, բայց հեղինակը ականատես վկայ է ու մանրամասնօրէն կը պատմէ Էրզրում նահանգի Բաբերդ ւանին եւ շրջակայ հայկական գիւղերուն մէջ թուրք իշխանատրոններու եւ չէթեական գունդերու գործած ատերածութիւններն ու խժոճութիւնները: Յիշուած թուականներէն պէտք է հետեցնել որ նկարագրուած դէպքերը սկիզբ առած են 1914 թ. Մեայտ. 30ին, այսինքն նախքան Թուրքիոյ մասնակցութիւնը ընդհ. պատերազմին: Տրուած վերջին թուականը 1915ի Յունուարի 8ն է: Այդ օրերուն Կարնոյ նահանգի միւս գաւառներուն մէջ եւս, Երզնկա, Բասեն եւայլն, ծայր առած էին նոյնպիսի բռնութիւններ (Տես «ՆԻԻԹԵՐ»-ու ԺԱ. հատոր, էջ 224-226), որոնք մաս կը կազմէին թուրք կառավարութեան այն քաղաքականութեան, որ նպատակ ունէր նախ քան ծրագրուած մեծ եղեռնագործութիւնը, ահ ու սարսափի մատնել հայկական նահանգներու ազգաբնակչութիւնը:

Գրութեան աւարտին նշուած «շարունակելի»-ն կրնայ վերաբերիլ սպաննուած հայերու անուանացանկին, եւ կամ հեղինակի այն խոստումին՝ որ հետագային պիտի շարունակէ տեղեկագրել տեղի ունեցած անցուղարձերու մասին:

Կարնոյ կոսակալութեան յարակից ա. կարգի գայմագամութիւն մ'է Բաբերդ: Դիրքը կէս մը լեռնային կէս մ'ալ դաշտային կը համարուի: Իւր սահմաններն են արեւմուտքէն Երզնկա եւ Գալքիթ, հարաւէն Դերջան, արեւելքէն¹ Կարին եւ Սպեր, հիւսիսէն Կիւմիւշխանէ եւ Լազիստան:

Գաւառին կեդրոնը՝ Կարինէն Տրապիզոն տանող արքունի պողոտային վրայ շինուած վաճառաչահ քաղաք մըն է, իր շուրջն ունի 180ի չափ մեծ ու պզտիկ գիւղեր, որոնց 29ը գուտ հայաբնակ եւ թրքախառն են. ընդհանուր բնակիչն մօտաւորապէս 11-12000 տուն կը հաշուուի. միայն քաղաքինը 2-2500 տուն է զանազան ազգաբնակիչներէ բաղկացեալ, որուն լոկ 350ը հայ է. ամբողջ գաւառն՝ կեդրոնովն հանդերձ 1700 տուն եւ 12500 հոգի երկսեռ հայ կը պարունակէ:

Ահաւասիկ քաղաքիս եւ թէ շրջակայ գիւղորէից մէջ ի գործ դրուած խժոճութեանց եւ հարստահարութեանց նիւթողք եւ գործադրելու թելադրող պարագլուխք:

- 1.- Ձինուորական փոխ-հրամանատար Լեվա Սալէհ Ձէքի փաշա (դէպքերու հերոսը):
- 2.- Հեծելազօրաց հազարապետ Խալիլ էֆ.
- 3.- Հետեւակ զօրաց Քօլաղասի Հաճի Հիւսէին էֆ.
- 4.- Փոխ-հրամանատարին անձնական քարտուղարն Հիւսէին էֆ.
- 5.- Ձինուորական դեղագործն Սալէհ էֆ.
- 6.- Տեղիս նախորդ գայմագամը՝ Ահմէտ Ասիմ պէյ
- 7.- Տեղիս դատաւորը
- 8.- Տեղիս դատարանին առաջին քարտուղարը Համտի էֆ.
- 9.- Տեղիս դատարանին հարցաքննիչ Քամիլ էֆ.
- 10.- Նախն. դատարանի անդամ Տեվելի գատէ Նեճիպ էֆ.
- 11.- Թաղապետական ժողովոյ նախագահն Իսմայիլ էֆ.

1.- Բնագրին մէջ «արեւմուտքէն», որ սխալ է եւ անուշադրութեան հետեւանք:

- 12.- Թաղապետական ժողովոյ անդամ Պէշիկճի գատէ Ապտուրրահման
- 13.- » » քարտուղար Մեհմետ էֆ.
- 14.- » » բժիշկ Մեհմետ էֆ.
- 15.- Ոստիկանութեան նախորդ քոմիսերն Մուստաֆա էֆ.
- 16.- Նախորդ ոստիկանն Օսման
- 17.- Ժանտարմէի հարիւրապետ Եավեր Մուստաֆա էֆ.
- 18.- » յիսնապետ Ալի աղա
- 19.- Տեղիս պէյգատէներէն էմին պէյգատէ Մաշուք պէյ
- 20.- Տեղիս առաջաւորներէն Օզուլի գատէ էտհէմ էֆ.
- 21.- Հեռագր. եւ թղթատ. տնօրէն Հիւսէին էֆ.
- 22.- Երկրագործական պանքայի փաստաբան Առնավուտ Նաֆըզ
- 23.- Ելմտ. գանձուն փաստաբան Թելլիգատէ Իսմայիլ էֆ.
- 24.- Հանրայ. պարտուց վարչութեան պաշտօնեայ Շաքիր
- 25.- Իւր նախորդը Ջէքի էֆ.
- 26.- Լազ Սէֆէր էֆ.
- 27.- Սըրթէ Գարայ օղլու էօմեր
- 28.- Լուռունքլի Օսման էֆ.
- 29,30.- Հաճի Իւսուֆօղլու Հաճի պէյ եւ եղբօրորդին
- 31.- Հաճի Օսման օղլու Շալճի Պէքիր
- 32.- Հաճի Մուհարրէմ գատէ Հաֆըզ Սլէյման էֆ.
- 33.- Մսագործ Ղարայի պէյ (հարցաքննիչ Քամիլ էֆ.ի եղբ.)
- 34.- Գըչլաքցի Ալի էֆ.
- 35.- Գօճայ պէյ Ջատէ Մեճիտ պէյ
- 36.- Աւերակի Միւտիր Սալէհ աղա
- 37.- Բումեյցի Սէֆէր
- 38.- Ալմըկացի Ալի Օսման
- 39,40.- Վաղընտացի Տէլի Հաֆըզ եւ Իսմայէլ
- 41,42.- Ճէնճիցի Գարայ Օսման եւ Տէլի Թորսուն
- 43.- Սիսնեցի Իւսուֆ էֆ.
- 44.- Լուռուցի Թարուն աղա
- 45, 46, 47.- Օռտուեցի Օսման էֆ., Միւթար Ալի եւ էսէտ
- 48, 49.- Բլուրի պէյերէն Ատիլ պէյ իրեն որդւովը
- 50.- Ալիշան պէյ
- 51.- Բլուրի պէյերէն Իսկէնտէր պէյ իրեն որդւովը
- 52.- » » Հեմիտ պէյին որդին Օսման պէյ
- 53.- » » Սալէհ պէյի որդին Խայրէտտին
- 54.- Բլուրցի Կիկէլ օղլու Ղօճա աղա՝ երկու եղբայրներովը
- 55.- Պէրկիճի Նահիյէ միւտիրին՝ Մէհմէտ աղա
- 56.- Ֆէվզիին մանչը Իպրահամ էֆ.
- 57.- Կիւմրիչիանէի պէյգատէներէն Ղատիրպէյ գատէ Սալիմ պէյ (Պալախորի մէջ)

* * *

Պոլսոյ եւ Տրապիզոնի դէպքերէն յետոյ՝ երբ մեր շրջակայ գիւղերուն մէջ ալ սկսեց սոսկալի ջարդն, աւարն ու առեւանգումը, տիրող փոթորկալից սարսափին եւ անապահովութեանը համար սեպտ. 30էն մինչեւ հոկտ. 14ը ստիպուեցաւ ժողովուրդը փակել եկեղեցիները, դպրոցները, վաճառատուները, գործատուներն ու ամէն ինչ եւ ապաստանիլ տուները: Այդ ժամանակամիջոցին մէջ մեր առաջնորդարանին կողմէն Դ. բանակի հրամանատարին (Երզնկա), Կարնոյ կառավարութեան հեռագրով, եւ տեղական կառավարութեան քանիցս անձամբ յղուած դիմումներն ամէնն ալ ապարդիւն մնացին. դէպքէն վերջն էր որ զգացնել տուին մեզ բացարձակապէս հրամանին կայսերական լինելը:

Սակայն ինչ որ ալ լինի, հրամանը եթէ կայսերական իսկ էր, տեղական իշխանութիւնք, (զինուորական թէ քաղաքական)* չարաչար գործածեցին զայն, ո՛վ գիտէ, արդեօք ի՞նչ ճիւղ գրպարտութիւններով, ի՞նչ այլ ընդ այլոյ յերկրուածքներով ամբաստանեցին զմեզ անմեղ Բաբերդցիներս յառաջի բարձրագոյն իշխանութեանց մինչեւ որ յաջողեցան պատիկ հրաման մը ձեռք բերելով մոխրի վրայ նստեցնել Բաբերդի հայ ազգաբնակչութիւնը: Թէպէտ ուրիշ գաւառներու մէջ ալ տեղի ունեցան այս օրինակ խժոժութիւններ եւ դէպքեր, սակայն եւ ոչ մին համեմատաբար կը հաւասարի Բաբերդի, որ հարուածին ամենասոսկալին ու անտանելին կրեց եւ թերեւս երկրորդ Սասուն մը դարձաւ իւր անթիւ կոտորածներովն ու աւարատուութեամբը:

Եթէ սկիզբէն մինչեւ վերջ տներու մէջ արգելափակ՝ ահ ու դողի մէջ պատահականութեանց արհաւիրքն կը կրէինք վերջին օրերն (Հոկտ. 13, ուրբաթ օր) Երզնկայէն եկած վաշտ մը զօրքին գալուստէն ինքզինքնին բաւական ապահովուած կարծելով՝ ժողովուրդէն (խեղճ

հայեր, կարծեցին թէ զօրքը իրենց պաշտպանութեանը համար կու գար, մինչդեռ անոնց մահուան չարագուշակ հրամանը կը բերէր) շատեր դէպքին օրը շուկայ իջած, դպրոցներն ալ կիսովին բացուած էին. Ո՛հ, որպիսի պատրանք, ի՞նչ յուսախաբուութիւն...

Վերջապէս Հոկտ. 14ին, շաբաթ օրն էր, որ հնչեց տիրահաշակ եւ մահագոյժ ժամը, այդ օր սեւ օր մը եղաւ Բաբերդի համար: Դէպքերու հերոսն՝ Սալէհ Չէքի փաշա 15 օրուան միջոցին քանի մը մեծ գիւղերու մէջ խժոժաբար նախճիրներ գործելէ եւ զանոնք աւերել աւելցնելէ ետեւ՝ եկաւ քաղաքն ալ բնաջինջ ընելու: Երբ յարձակման փողն հնչեցնել տուաւ, մոլեռանդ թուրք խուժանը (որ 5-6000էն աւելի տեղացի, շրջակայ գիւղացի եւ լազիստանցի թուրքերէն կը բաղկանար) օժանդակութեամբ ու մասնակցութեամբ կանոնաւոր զօրաց եւ հրամանատարութեամբ անունները վերեւ յիշուած կարգ մը յեղափոխիչ պաշտօնեաներու ու երեւելիներու, խուռն եւ ահագին բազմութեամբ մոլեգնաբար յարձակեցաւ անգէն**, չդիմադրող եւ անպաշտպան խեղճ հայերու վրայ, եւ առտուան ժամը 4-էն սկսեալ մինչեւ հետեւեալ առաւօտ անխնայ ջարդեց, աւարեց եւ թալլեց տուն տեղ եւ բոլոր շուկան (հայերունը միայն, յոյներու համար բացարձակ խտրութիւն կար) առանց շիւղ մը իսկ թողնելու. շատ մը տուներ խորտակումներ եւ աւերումներ կրեցին. վեց տուներ հրճագութեամբ հրոյ ճարակ դարձան***, որոնց մէջ ողջ ողջ այրեցան, ծուխէն խեղդամահ եղան ու փրատակաց ներքեւ մնացին 5 այր, 6 կին, 8ի չափ մանչ թէ աղջիկ, մեծ ու պզտիկ տղաքներ: Այդ տներէն միուն մէջ ալ հրդեհէն առաջ յղի կնոջ մը (Վարդ խաթուն Այվագեան) արգանդը պատռելով անծին տղան դուրս հանեցին եւ սուկիներու ծայրը բարձրացուցին. մայրն ալ չարաչար յօշոտեցին, որուն վրայ անոր դրացին՝ Յովհաննէս Գրյիճեան անուն քաջասիրտ երիտասարդն (որ լաւ գինա-

*) Որոնց պաշտօնեաներուն մեծագոյն մասն անդամ լինելով թուրք յեղափոխութեան՝ բարձր հեղինակութեան մը յատուկ հրահանգովն, ըստ ամենայնի ջանահնար եղան զրգուել եւ եւ մեզ դէմ յարուցանել վայրագ խուժանը:

**) Մեծ կասկածներ ունեցան մեր վրայ. ի սկզբան թուրք խուժանը շատ կը քաշուէր հայերէն, զանոնք բոլորովին գինուած կարծելով, սակայն 15 առուր միջոցին մէջ չափելով մեր գինական ոյժն եւ կառավարութիւնն ալ կանխահոգ մտածութեամբ մը՝ շուկայի մէջ ինքնապաշտպանութեան համար գինուած պտտող, շատ մը հայերու գէնքերը ժողովեց մէկ ծայրէ, շատ տուներէ ալ արդէն ժամանակաւ հաւաքած եւ գէնքի գործածութիւնը բոլորովին արգելած էր հայոց համար: Դէպքերէն վերջն ալ դարձեալ՝ ինքզինքնին արդարացնելու նպատակաւ եկեղեցիներն ու քանի մը կասկածելի համարուած մեծ տուներ փորփրեցին, քրքրեցին եւ գէնք խուզարկեցին, բայց բուլթ դանակ մը անգամ չկրցին գտնել:

***) Հրոյ ճարակ եղած տուներն են Թաշ Թաղի մէջ Մկրտիչ աղա Գէորգեանի 2 տուները, Սիմոն աղա Մանուչարեանինը եւ անոր յարակից յոյն կօշկակարի մը տունը (հայր սեփականութիւն). այս 4 տուներուն մէջ այրուող եւ փրատակի ներքեւ մնացող ոչ ոք կայ, իսկ Գագի Զատէ Թաղին մէջ ալ Յովհ. Գրյիճեանի ու Գէորգ եւ Յովսէփ Այվագեան եղբարց տուները, որոնց մէջ են այրուող եւ մեռնողներն:

վարժ եւ նշանառու մ'էր) իր պատուհանէն կրակ ընելով չաքմաքլի հրացանով կը սատկեցնէ 4 թուրքեր, որոնց մին՝ Ձէքէրիէ շատ անգլթութիւններ ըրած էր այդ օր — ատոր համար թաղապետական բժիշկ Մեհմէտ էֆ. կրակի տալ կու տայ անոր տունը, որուն մէջ Յովհ. ինք ալ այրեցաւ, նաեւ անոր յարակից չէնքը: Էթտատիրէի վաճառական Մելքոն աղա Մութաֆեանն ալ տուն փախած ատեն զինք չըջապատող 20էն աւելի գազաններու հետ բաւական կռուելէ եւ անոնցմէ 2-3 հոգի վիրաւորելէ յետոյ ինքն ալ կը սպաննուի:

Բաբերդի հայութիւնը՝ մանաւանդ երիտասարդութիւնը ի սպառ ոչնչացաւ, ամէն հասակէ եւ դասակարգէ հարիւրաւոր անձեր (որոնց %90ը արական սեռին կը պատկանէր, ինչ որ իրենց յատուկ նպատակը կը կազմէր արդէն), զոհ գնացին անգութ եւ բարբարոս խուժանին վայրագութեանը եւ խժոժութեանը: Ո՛հ, արդեօք ի՛նչ քստմնելի եւ սարսուզողեցիկ մահացումներ, ի՞նչ սրտաճմլիկ տեսարաններ եւ աղեխարշ տուամներ պարզուեցան, որչա՛փ հուժկու չափահասներ, քանի՛ կորովի, առոյգ՝ բայց անզէն երիտասարդներ, դեռատի պատանիներ ջարդուեցան, մատղաշ մանուկներ, օրօրոցի երախաներ, արգանդի մէջ եղող անծին տղաքներ իսկ հանուելով կտրտուեցան ու սուխներու ծայրերն բարձրացան, անոնց յղի մայրերն եւս չարաչար յօշոտուեցան: Մանկամարդ կիներ, պարկեշտասուն հարսներ ու մատաղատի օրիորդներ առեւանգուեցան ու լլկուեցան: Ողջ ողջ մորթերնին քերթելով քանի մը պատանիներ եւս չարչարանաց ներքեւ մահացուցին. քանի մը հոգիներու ալ դեռ ողջ, աչքերն փորեցին եւ ապա սպաննեցին:

Ամէն նախագգուշութիւններ անգօր եւ ապարդիւն մնացին. նկուղներու եւ թաքստոցներու մէջ պահուրտածներն իսկ որոնելով գտած եւ սպաննած են: Տեղացի Տ. Խորէն Վ. Կիտոյեան, 8 գիւղացի քահանաներ եւ ազգային վարժարանաց ուսուցիչք՝ բացի մէկէ մը, ամէնն ալ խժոժաբար խողխողուեցան եւ յօշոտուեցան: Դպրոցական աշակերտներէն բաւական թուով անխնայ ջարդուեցան: Առաջնորդական տեղապահ Տ. Աշոտ քհնյ. Տ. Գէորգեանի 2 երիտասարդ գաւակներն իւր աչացն առջեւ սպաննելէ վերջ զինքն ալ քանի մը տեղերէ ծանրապէս վիրաւորեցին: Շատ մը պանդուխտ ճանապարհորդներ եւ շատ մ'ալ գիւղացիներ այդ օր քաղաքիս մէջ կոտորուեցան:

Ի մի բան՝ թուրքերու յատուկ ամէն վայրագութիւն ի գործ դրուեցաւ: Ո՛հ, ի՛նչ մայրեր լացին, որչա՛փ միամօրներ մարդկային անգլթութեան զոհ գնացին: Քանի՛ վաղեմի մեծ տուներու դռներ ի սպառ փակուեցան, քանի՛ չափահաս թէ մանկամարդ կիներ եւ նորապսակ հարսներ քանի մը ժամուան մէջ այրիացան: Սպանդանոց մը դարձաւ Բաբերդ. փողոցներն ու շուկաներն դիակներով լեցուեցան, շատ մը վիրաւորներ ձգուեցան,

որոնց դեղ ու դարմանն անգամ խնայուելով անոնցմէ շատեր ալ անանկով մահացան:

Հետեւեալ օրը կանոնաւոր գօրաց սուխներով ծածկուած դիակներն անյայտ ու գաղտագողի տեղեր պարտկուելէ եւ շատեր ալ ճորտիս խօլ հոսանաց յանձնուելէ ետեւ, ժողովուրդի գէնքերով (որոնց մեծագոյն մասը պետական ռազմամթերանոցէն հայթայթուեցան) սպաննուածներն ալ թաղապետութեան կողմէ սայլերով Պէյօղլուի գերեզմանատունը փոխադրուելով հոն բանալ տրուած խոր փոսերու մէջ իրարու վրայ դիգեցին, առանց քրիստոնէական սուրբ օրէնքով թաղուելու. առ այս՝ գիւղերն ալ իրենց կեղորոնին օրինակին հետեւած են: Դիակներ բոլորն ալ ազամային մերկութեամբ էին եւ շատեր անճանաչելի դարձած. թուրքեր իրենց գողութեամբն չկշտացած, բոլոր մեռելները կողոպտած էին, մինչ իսկ անոնց վարտիքները:

Շիտակը խօսելով՝ թուրք կառավարութիւնը շատ լաւ գիտէ վարձատրել իւր հաւատարիմ շուները, ինչպէս վարձատրեց Սաղրեան Գէորգ, Սիմոնեան Հաճի Յովհաննէս եւ Ալաճեան Վարդան էֆէնտիներն, ամէնէն առաջ գանոնք սպաննել եւ անոնց տուները թալանել տալով: Առաջին երկու շահախնդիր ցածերը այդ արժանի վարձատրութեան կը սպասէին. թուրքերու համար պահած էին իրենց գանձերը, որոնց գոնէ մէկ փոքրիկ մասը զլացած էին յեղափոխական սուրբ գործին եւ շատ անգամ ալ յեղափոխականներու բարոյական ու նիւթական վնասներ հասցուցին: Իսկ վերջինը եւս՝ բախտախնդիր փաստաբան մը լինելով, չլացած Շաքիր փաշայի զինքը ոստիկանութեան քոմիսէր ընելու խոստումէն, ինչպէս առաջ՝ վերջին օրերուն մէջ ալ շատ մատնութիւններ ըրաւ:

Փորձը ցոյց տուաւ թէ՛ երբ հայը ամբողջ զինեալ լինէր, հաւատացէք, բնաւ վնաս մը չպիտի կրէր ու եթէ կրէր իսկ՝ շատ փոքրաթիւ, միեւնոյն ատեն հակառակ կողմէն ալ շատ դիակներ պիտի ձգուէր: Յովհ. Գլբիճեան՝ եթէ իր թաղին մէջ իրեն օգնող մը ունենար եւ մարթինի հրացանով զինուած լինէր, շատ մը դիակներ եւս պիտի իյնային անոր գնդակներուն առջեւ, որուն հարուածներն երբեք չէին վրիպեր:

* * *

Եկեղեցիներուն եւ ձեռնամերձ եղան, թէ քաղաքին եւ թէ շրջակայ գիւղօրէից (ոմանց եկեղեցիները այրեցաւ ընելէ եւ բնակչաց մէկ մասը բռնութեամբ ուրացնելէ վերջ՝ մնացեալ եկեղեցիներն ալ մզկիթի վերածեցին ժամանակ մը) եկեղեցիներն ու վանքերը ամէնն ալ կողոպտեցին եւ թալանեցին. եւ տաճարներ անպատկառօրէն սրբապղծելով՝ իսկապէս մէյ մէկ գոմերու վերածեցին գանոնք. ի՛նչ թանկագին զարդեր, ի՛նչ անգին հնութիւններ եւ սփռոցներ, ի՛նչ ոսկեայ եւ արծա-

Թեայ մեծարժէք ու նուիրական անօթ եւ սպասներ ան-
յայտացուցին, քանի՜ ականակուռ խաչեր եւ արծաթա-
պատ ձեռագիր աւետարաններ, աղօթագրքեր եւ պատ-
կերներ կողոպտեցին, պատուեցին ու այրեցին առանց
չիւղ մը իսկ թողնելու եկեղեցիներու մէջ:

Գալով գիւղերու, որոնց մանրամասն տեղեկագրերն
պիտի գրեմ գատ գատ, իւրաքանչիւրին քանի մը ան-
գամներ յարձակոււմ տրուելով՝ ծեր թէ չափահաս այ-
րեր, երիտասարդներ, պատանիներ եւ տղաքներ, շատ
գիւղերու մէջ ալ կիներ տաւարի պէս ջարդուեցան եւ
եզի նման մորթուելով՝ սրոյ ճարակ դարձան: Անլուր
տանջանքներով եւ զանազան գէնքերով խժոժաբար
խողխողուեցան: Քանի մը գիւղեր ալ առ ահի երեսանց
ուրանալով ազատեցան: Շատ հարսներ ու աղջիկներ
առեւանգուեցան ու լլկուեցան: Խոտի դէզեր, յարդի
մարագներ հրոյ ճարակ դարձան, ինչքեր, տաւարներ,
արջառներ եւ երկրագործին երկանց ընկեր լծվար կեն-
դանիներ, արմտիքի շեղջեր եւ շտեմարաններ, ամէնն
ալ թալլուեցան եւ աւարի տարուեցան:

Առաջին անգամ Լուսոնք, վերջին անգամ ալ Քսան-
թայ, Բլուր, Երկի, Վարգահան, Բլրակ, Բուշտի, Քա-
րավրակ, Պալախոռ, Աւերակ անուն հայաշատ գիւղերն
կրեցին հարուածին սաստկագոյնն ու ահռելին, միւս
գիւղերն ալ թէպէտ իրենց կարգին անմասն չմնացին
ընդհանուր կոտորածէն ու թալանէն: Վերոյիշեալ քանի
մը գիւղերուն մէջ գրեթէ էրիկմարդ չմնաց, շատ ալ կի-
ներ ու տղաքներ ջարդուեցան: Քսանթայ՝ որ զազան
Սալէհ Ձէքի փաշայի նախճիրներուն թատերավայրն
հանդիսացաւ, այնչափ ահռելի կոտորածներէն գատ 25-
30էն աւելի հարսներ ու աղջիկներ թուրքերու պիղծ
ձեռքերուն անձնատուր չլինելու համար ինքզինքնին
խոր ջրհորներու մէջ նետելով՝ խեղդամահ եղան ու
ջախջախուեցան. 15-20 պզտիկ տղաքներ այս իրարանց-
ման պահուն ոտնակոխ եղան եւ 12ի չափ մատղաշ կաթ-
նակեր տղաքներ վայրագ գազաններու ձեռամբ գետի
հոսանաց մէջ նետուեցան. 10 հոգիի չափ այրեր եւս
քարկոծմամբ, շատերն ալ տապարով եւ բիրերով ըս-
պաննուեցան:

Քանի մը օր ետքը ամէն կողմէ հագարաւոր անոք,
անօգնական կիներ ու տղաքներ մերկ, բոկոտն եւ հա-
լաւնին ծուէն ծուէն եղած, գունդագունդ դիմեցին ի
քաղաք. փողոցներ անոնցմով լեփ լեցուն էին, ամէն
կողմ նօթուլթեան եւ մերկութեան աղաղակներ կը լըս-
ւէր: Միեւնոյն ատեն սոֆթաներ եւս, մեծաւ խորխոտա-
նօք եւ սոնքանօք, ուրացող հայերն սկսան քաղաք ա-
ռաջնորդել՝ պաշտօնապէս իսլամացնելու համար, սա-
կայն կառավարութիւնը յետս դարձուց զանոնք, նոյն-
պէս քաղաք լեցուող այրի ու սովատանջ կիներն ու որբ

տղաքներն՝ 7-8 օր զանոնք կերակրելէ ետեւ: Գոհու-
թեամբ կը ծանուցանենք թէ՛ այսօր ամբողջ գաւառիս
մէջ 6-7 անձ հագիւ կան առ երեսս ճերմակ կապած
գլուխնին²:

* * *

Սոսկալի աղէտէն 2-3 օր յետոյ, պատերազմական
դիւան մը կազմուելով՝ սկսան ձերբակալել տալ շուկա-
յին մէջ հանդիպած հայերն եւ անոնց ալ՝ որ ողջ մնալ-
նին գիտէին. ողջ թէ վիրաւոր, տուներէն հանելով բան-
տարկեցին, նոյնպէս շատ մալ գիւղացիներ: Ասոնք բո-
լորովին հաղորդակցութենէ զրկելով՝ ամէն օր խիստ
կերպով կը հարցաքննէին: Խոնաւութիւն եւ գարշահո-
տութիւն կը բուրէր բանտի համակ մթնոլորտը, ուր
անլուր եւ ահռելի տանջանքներ ի գործ կը դրուէին Սա-
լէհ Ձէքի փաշայի (դէպքի հերոսն) հրամանաւ ու գապ-
թիէ մէմուրի Ալի աղայի* ձեռամբ: Չմրան այս ցրտա-
շունչ եղանակին մէջ ժամերով մերկ կանգնեցնելով
պաղ ջուր կը լեցնէին շատերու գլխուն, գամերով եւ
մախաթներով կը ծակծկէին անոնցմէ ոմանց մարմին-
ները, սաստկապէս կը գանակոծէին, օրերով անօթի
ծարաւ կը պահէին, պաղ ջուր կը կապէին անոնց տակե-
րը, այսպէս շարշարանքի եւ սպառնալեաց ներքեւ ու-
զածնին ըսել եւ այս այն զրպարտել կու տային որպէս-
գի ինքզինքնին արդարացնեն:

Վերջապէս նոյ. 15ին հոս հասաւ Պոլիսէն քննիչ
յանձնախումբը Ֆէրիք Սաստէթտին փաշայի նախա-
գահութեան ներքեւ: Հայ կիներ դէպքին մանրամասն
պարագաները պատմող եւ բանտի մէջ տեղի ունեցած
խժոժութիւնները յայտնող բողոք մը տուին անոնց, որք
քննութիւն բանալով այս աղէտալի դէպքին մէջ հայոց
անմեղ լինելը տեսան ու հաստատեցին, որով սկսան
մեղմացնել տալ խստութիւնը եւ մէկ ծայրէ անպարտ
արձակել տալ բանտարկեալներն, որոնցմէ շատեր մին-
չեւ 45-50 օր բանտի մուլթ խորշերու մէջ մնացին ու հա-
լումաշուեցան: Փառք Աստուծոյ այսօր ոչ ոք ունինք
հոն:

Քննիչք՝ այցելելով տեսան եկեղեցիներու ու վարժա-
րաններու, տուներու եւ վաճառատանց ու այլոց քա-
րուքանդ այրեցաւեր ու խորտակեալ վիճակը: Յանձնա-

*) Եւ կարծես ատոնք չէին բաւեր, վերջերս ալ հայ
խնդրող եւ իրենց բանտարկեալներուն ազատութեանը
համար աղերսող հայ կիներ, որոնք կառավարութեան
դուռը խոնոտած էին, կարգ մը անարգական խօսքերէ
եւ անվայել յիշոցներէ ետք՝ մինչեւ իսկ կը յանդգնի մեր
պաշտած Ս. Խաչին ալ հայհոյել եւ այսպէս վռնտել զա-
նոնք. «Ձեր ըրածներուն չափը անցաւ» ըսելով, կարծես
թէ մենք էինք այնչափ մարդասպանութիւններն ու
հարստահարութիւնները գործողներն:

2.- Իմա՝ ճերմակ փաթոց կապած, այսինքն մահմետականա-
ցած:

րարեցին թաղապետութեան որ շինել տուաւ քաղաքիս եկեղեցիներէն երկուքին եւ վարժարանաց քանդուած ու խորտակուած մասերն, կարել տուաւ շուրջառններ, փիլոններ, երգեցիկ մանկանց շապիկներ, վարագոյրներ եւ լրացուց այս կարգի նախնական պակասներ, նմանապէս քանի մը գիւղերունն ալ: Որով 1,5 ամսուան դադարէ մը յետոյ քահանայք սկսան հասարակաց ժամերգութիւն կատարել՝ ժողովուրդն յուսահատութենէ եւ կրօնափոխութենէ զգուշացնելու համար: Այլ սակայն քանի մը գիւղերու ժողովուրդն տակաւին գուրկ կը մնայ հոգեկան մխիթարութենէ, անոնց քահանաներն սպաննուած լինելուն: Դեռ փակ կը մնան նաեւ մեր վարժարաններն մէկ կողմէ դրամի եւ միւս կողմէ դասատուի սովին պատճառաւ:

Յատուկ պաշտօնեաներ ղրկելով գիւղերը, բոլոր եկեղեցիներն բանալ եւ բռնութեամբ ուրացողներուն ճերմակներն քակել տուին: Թալլուած ապրանաց հաւաքման համար եւս հրամաններ ընելով՝ իրենք նոյն ամսոյ 23ին դէպի Կարին մեկնեցան եւ անկէ ղրկեցին իրենցմէ ստորագաս ուրիշ յանձնախումբ մը:

* * *

Շիտակը ըսելով կատարեալ հաւասարութիւն ըրաւ սուլթանը աղքատութեան մէջ, ինչ որ անկարելի էր տեսնալ հարստութեան մէջ: Երէկի հարուստ եւ փափկակեաց քաղքենին ու ունեւոր գիւղացին այսօր կարօտ աղքատներ դարձան, որուն բոլոր գոյքն ու կայքը չկան մէջտեղ, որուն հացն ու հալաւը, անկողինն ու ձմրան պարէնը առին տարին, մինչեւ իսկ խաիր մը չթողնելով ուստի այսօր հարուստ թէ աղքատ, մեծ ու փոքր, այր ու կին, ծեր եւ մանուկ ծծկերն անգամ մերկ են ու անօթի եւ գետնախշտի ցաւագին:

Տեղական կառավարութիւնը՝ մանաւանդ ներկայ գայմագամը (նախորդը մեզ զրկեց [?] տունից ու մեկնեցաւ) թէպէտ բաւական ջանքեր կ'ընէ մեր կորուստները գտնելու, առ այդ գիւղերը ղրկուեցան տեղացի կաշառակուլ առաջաւորներն ու խուժուժ պէյերն, որք կաշառուելով՝ վեր ի վերոյ փնտռտուքով կարգ մը անպէտ, մաշած պղինձեղէններ, հին ու մին անկողիններ (կողոպտողք արդէն իրենց աղտոտ ու չուլ անկողինները եւ կահ կարասիները կու տան, հայերունը իրենց վերապահելով) մէջերը գտնուած այնչափ ոսկի եւ արծաթեղէն, ընտանեկան զարդերն ու ծանրագին հանդերձեղէնները պարպած՝ դատարկ ու խորտակուած սնտուկներ միայն երեւան հանած են, որոնց համար ամէն օր կիներ ու աղջիկներ (մեր տոհմային ամօթխածութեան քօղն ալ պատահեցաւ ակամայ) ստուար բազմութեամբ կը թափին շուկաները, որուն մէջ ալ մասնաւոր հաճոյք մը ունի խուժանը. ո՞ւր էր թէ գտած եւ առածներնին իրենց կորուստներուն %2ը լեցնէր: Իսկ գիւղացւոյն

կողմն ու տաւարը եւ երկրագործութեան կենդանիք տեղ տեղ %20 եւ տեղ տեղ ալ տակաւին ոչ բնաւ վերադարձուցած են իրեն: Ո՞վ գիտէ վաղն ալ պիտի ելլեն այս այն համոզել թէ գտած եւ տուած ենք հայերու կորուստներն:

Երկու անգամ թալան կրեց ու կը կրէ Բաբերդ, առաջինը դէպքին օրերը խուժանին կողմէ, իսկ երկրորդը Թաշ-խանին մէջ արդարադատ եւ ճշմարտասէր (!) միւլֆթի Այի եւ դատարանի քարտուղարներէն Համտի էֆէնտիններու ձեռամբ, որովհետեւ այդ խանին մէջ կը մթերուին քաղաքացի թէ գիւղացի հայերու կորուստներէն գտնուածներն, որոնց վերակացուներն այդ երկուքը լինելով սկիզբէն մինչեւ վերջ բաշխման պահուն մին իւր որդիքն, միւսն ալ իւր եղբայրն հետերնին առած ներս կ'երթան, ուր աչքի զարկած եւ բեռով թեթեւ՝ գնով ծանր ապրանքներ կը գրպանեն. այսպէս շատ ապրանք ալ անկէ ատոնց ձեռամբ վերցուեցան ու կը վերցուին:

* * *

Քաղաքացի ազարակատիրոջ եւ խեղճ երկրագործին արմտիքն ու վաճառականին բիւրաւոր լիրաներ արժող վաճառք (որոնց ընդհանուրէն 780 ոսկիի ապրանք հագիւ ձեռք բերուած է) անդառնալի կերպով ցրուած են: Գիւղացւոյն օրապահեստ մը ճարելու համար յատուկ պաշտօնէից ձեռամբ մէկ մէկ քիլ ցորեն տրուեցաւ առ այժմ, զոր հանգանակեցին շրջակայ թուրք գիւղերէն: Իսկ քաղաքացի 2000էն աւելի երկսեռ ժողովուրդին 700ին միայն օրական իւրաքանչիւր անհատի կէս օխայ հաց եւեթ կը տրուի, եւ այն որ վաճառական ու խանութպան էր, եւ այն որ կալուածատէր կը կոչուէր, «կրնան իրենց ապրուստը ճարել իրենց առնելիքներովն ու վարկերովն», ըսուած է: Մինչդեռ ատոնք ոչ տոմար ունին ի ձեռին եւ ոչ մուրհակ, հետեւապէս բազմագումար առնելիքներ կորստեան մատնուած լինելու յուսահատեցուցիչ պարագային մէջ գտնուող նախկին հարուստն կամ վարկաւորը՝ համբաւոյն եւ անկման միջնակէտին վրայ տատանեալ, իր տան մէջ անգործութեան սեմին առջեւ, այն եւս օրական կէս օխայ հացի կարօտը կը քաշէ ու գիւրաւ չի կրնար ստանալ դժբախտաբար, ուստի ասոր հարուածը բազմակողմանի է եւ կարեւիւր, քան հասարակութեանը, որ առաջնոյն դունէն ու հացալից սեղանէն կ'ապրէր արդէն եւ այժմ գէթ խմոր հաց մը կը ստանայ թաղապետութեան կողմէ ցոյց տրուած փուռէն:

* * *

Բաբերդի եւ շրջակայ գիւղերու նիւթական կորուստն մօտաւորապէս 150000 ոսկիի կը հասնի. կեանքի կորուստն անհամար է. որոշ թիւն դեռ յայտնի չէ ձմրան սաստկութենէն շրջակայից հետ հաղորդակցու-

Թիւնը ընդհատուած լինելուն: Մենք պիտի սկսինք մէկ ծայրէ ստուգել եւ դրկել քաղաքիս եւ իւրաքանչիւր գիւղի մէջ սպաննուածներու ցանկը:

Անդորրութիւնն ու խաղաղութիւնը դեռ կատարելապէս վերահաստատուած չէ հոս. ամէն օր, ամէն ժամ նորանոր դէպքերու արհաւիրքն կը կրենք (ինչպէս քիչ էր մնացեր որ ամսոյս (Յունուար) Ցին երկրորդ յարձակում եւ ջարդ մ'ալ կրէինք), որովհետեւ Բաբերդի

Թուրք խուժանը շատ ու շատ բարբարոս է, եւ կոյրին ձեռքը դանակ տրուածի պէս բան մը եղած է, քանի որ նախապէս արտօնութիւնն ու թոյլտուութիւնը կառավարութենէն տրուեցաւ իրենց, որով դժուար պիտի լինի զսպել զանոնք եւ արդէն սուտ ու անհիմն լուրերով միշտ կը յուզուին ու գրգռուին անոնք վերեւ յիշուած պաշտօնեաներու եւ Թուրք յեղափոխական պարագլուխներու կողմէն³:

Ահաւասիկ քաղաքիս մէջ սպաննուած հայերու յականէ անուանէ ցանկը որոնց մեծագոյն մասը մարթինի հրացաններով եւ գօրաց սուրիներով սպաննուած եւ հազար ու մէկ խժդժութիւններով մահացած են:

	<u>արհեստ</u>	<u>տարիք</u>
1.- Պետրոս Սարայտարեան (չուկայի մէջ)	անգործ	85
2.- Կիրակոս Թեւանեան (» »)	երկաթագործ	55
3.- Միսաք Կ. » (» »)	»	22
4.- Գէորգ Տէր Աշոտեան (տան մէջ)	դերձակ	26
5.- Սարգիս Տէր Աշոտեան (» »)	»	20
6.- Սերովբէ Տէր Գէորգեան (» »)	փերեզակ	35
7.- Համբարձում Քիւլումեան (չուկայի մէջ)	խանութպան մանիֆաթուրի	50
8.- Խաչատուր » (տան մէջ)	»	24
9.- Յարութիւն Սէյիսեան (» »)	անագագործ	45
10.- Խաչատուր Վարդերեսեան (չուկայի մէջ)	պայտար	55
11.- Փիլիպպոս » (» »)	»	40
12.- Յովհաննէս » (տան մէջ)	»	35
13.- Գէորգ » (» »)	»	28
14.- Մ. Պետրոս Շամլամեան (» »)	անգործ	75
15.- Կաղ Յակոբ (» »)	անագագործ	35
16.- Ալեքսան Համբարձումեան (չուկայի մէջ)	մոլնետիկ	44
17.- Գէորգ Ծատուրեան (տան մէջ)	խանութպան մանիֆաթուրի	30
18.- Մկրտիչ Կիւլիկեան (անդամայոյժ, տան մէջ)	անգործ	28
19.- Մերկեր Աթանեան (չուկայի մէջ քարկոծմամբ եւ սուրնով)	մութաֆ	42
20.- Քրիստափոր » (խելագար, շուկայի մէջ)	երկաթագործ	30

(Շարունակելի)

3.- Իմա իթթիհատականներ:

Փաստ. 1158-40

2.- ՊԱԼՔԱՆԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Սոֆիա, 11 Ապրիլ 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Մարտ եւ 399 թուահամար նամակը. Երկրէն մեր ստացած տեղեկութիւնները կը շարունակենք հաղորդել. —

«Մուշ — Յրօնք գիւղի մօտ դասալիք գինուորներու եւ ժանտարմներու միջեւ ընդհարում կը պատահի եւ ժանտարմ մը կը սպաննուի. ասոր վրայ կառավարութիւնը հոն կ'ուղարկէ 300է աւելի անկանոն քիւրտ, որոնք կ'այրեն, կը բռնաբարեն եւ կը թալլեն ամբողջ գիւղը. ի վերջոյ այդ անբաւական համարելով 100ի չափ ալ անձեր՝ կին ու տղամարդիկ կը ձերբակալեն ու կը տանին բանտ: Յրօնքի այս դէպքէն յետոյ, Փետր. 7ին ալ կը պատահի դէպք մը Գոմսի մէջ: Դրացի շրջանի միւստիրը, ով գիտէ ինչ նպատակով, իր հետ առած քանի մը ժանտարմ, որոնց մէջ յայտնի ոճրագործ Մեհմետ էմինը եւ ուրիշ մը, որ 9 հայ սպաննած է եղեր ժամանակին, կու գայ եւ կը պահանջէ ամէլիէ, հակառակ անոր որ Գոմսը արդէն քիչ առաջ տուած էր ամէլիէները Գիւղացիք կ'առարկեն թէ արդէն իրենք տուած են ամէլիէ, բայց միւստիրը ականջ չի կախեր. եւ նորէն ծեծ, բռնութիւն եւ բռնաբարութիւն. կը պահանջէ 40 մարդ. գիւղացիք կը դիմեն ինքնապաշտպանութեան: Միւստիրը, որ իջեւանած էր Կորիւնի⁴ թավան (ախոռ), միւս ոստիկաններուն հետ կը փակուի հոն. հոն կը գտնուին նաեւ ժողովուրդ 20-է աւելի ամէլիէները: Կորիւն կը միանայ գիւղացիներուն եւ հրացանաձգութիւնը կը սկսի երկուստեք: Կորիւն կ'առաջարկէր որ Մեհմետ էմինը իրեն յանձնուի միւս ոճրագործ ժանտարմին հետ, յայտնելով որ այդ պարագային կուրը կը դադարեցնեն. մերժողական պատասխանին վրայ գիւղացիները թավանը կը րակի կու տան. Մեհմետ էմինը, միւս ժանտարմը եւ 6 ժանտարմներ կը սպաննուին, 7 անմեղ հայեր մուխէն խեղդամահ կ'ըլլան: Ռուբէնը⁵, որ պատահամբ հոն կը գտնուէր, վրայ կը հասնի եւ Կորիւնէն միւստիրն ու ժանտարմ մը: Այս դէպքին վրայ միւստարաբժը, կասկածելով որ սա Դաշնակցութեան գործն է, կը ձերբակալէ Վահանը⁶ Մուշի մէջ եւ կը խուզարկէ Դաշնակցութեան քլիւպը եւ գայն փակել կու տայ: Յետոյ, Վահանի առաջարկով, յանձնախումբ մը կը կազմուի բաղկացած Վահանէն, բուլանըզցի էսատ պէյէն եւ գինուորական քոմանտանէն, որը կը ղրկուի Գոմս քննելու դէպքի պատճառները եւ ճշդելու պատասխանատուները: Ասկէ առաջ Գոմս ղրկուած կ'ըլլան արդէն դեպօ-թապուրէն անվարժ քիւրտերու հետ թուով 250-300. միլիտի գունդը

եւ ժանտարմներ. առաջինները բոլորովին կը թալլեն գիւղը: Քննիչ յանձնախումբը այն եզրակացութեան կու գայ թէ դէպքը Կորիւնի անձնական վրէժխնդրութեան արդիւնք է: Վահանը կը թողուն եւ քլիւպը կը վերաբացուի. թէեւ միւստարաբժը կ'ընդունի որ Ռուբէնը այս գործին մէջ անմասն է, բայց կասկածելով որ մի գուցէ խաղ ըլլայ եւ գայն ձերբակալեն, ան ալ փախուտական դարձած է:

Գոմսէն ետք դէպք մը պատահած է Առաքելոց վանք. հոս հաւաքուած կ'ըլլան Տիգրանը⁷ եւ միւս բոլոր ընկերները, փախստականները. կառավարութիւնը կը ղրկէ սպայ մը 25 ժանտարմներով եւ ընդհարում կը պատահի. սպան կը սպաննուի, ինչպէս նաեւ 3 ժանտարմներ. երկուք ալ վիրաւոր. կառավարութիւնը թէեւ իսկոյն զօրք լեցնել կու տայ վանքին վարի գիւղերը, բայց յետոյ վախնալով որ շարժումը կ'ընդհանրանայ, կ'առաջարկէ Վահանին եւ առաջնորդին որ միջամտեն եւ հեռացնեն վանքին փախստականները. ուստի անարգել կ'ըլլեն վանքէն. հոն 4-5 օր մնալէ ետք կ'անցնին Բարձրաւանդակ⁸. այնուհետեւ նոր դէպք պատահած չէ: Կառավարութիւնը կը պահանջէ որ այդ խմբերը, որոնք 150 հոգիէ կը բաղկանան, ցրուին, բայց տեղացիները պահանջ կը դնեն որ այդ ցրուումը կարող է տեղի ունենալ միայն աստիճանաբար այն պայմանաւ որ քիւրտ խմբերն ալ ցրուին:

Կ'ըսուի թէ Պուլանը լեցուած իսլամ գաղթականները դաշտը պիտի տեղաւորեն, ինչպէս նաեւ իբր 2000 դեպօ-թապուրի վայրենի քիւրտեր: Արդէն մօտ 5000 բերւած են եւ տեղաւորուած Տ[արօնի] գիւղերուն մէջ: Եկած են նաեւ սպաներ՝ այդ քիւրտերը վարժեցնելու համար. կ'երեւայ թէ Մշոյ դաշտն ալ պիտի ըլլայ դիմադրութեան գիծ մը, որովհետեւ հոս լուր տարածուեր է թէ կանոնաւոր զօրք ալ պիտի բերուի Մուշ:

Վահանը Փետր. 24ին կառավարութեան արտօնութեամբ եւ պետական շիֆրայով ընդարձակ հեռագիր մը տուած է ներքին գործոց նախարարին եւ այս բոլորը մանրամասն պարզելէ եւ ժողովուրդին տանջանքները

4.- Կորիւն, յեղափոխական ծանօթ մարտիկ Գոմսայ Իսօ, անդամ Տարօն-Սասունի զինուորական մարմնին:
5.- Յեղափոխական ծանօթ ղեկավար Ռուբէն Տէր Միսասեան, անդամ Հայաստանի քիւրտի:
6.- Վահան Փափագեան (Կոմս), պետական երեսփոխան Վանէն, որ Կ.Պոլիս վերադարձի ճամբուն վրայ իլիւսնոսացած էր Մուշ մնացած էր:
7.- Ալիջանի Տիգրան, խիզախ ֆետայի:
8.- Բարձրաւանդակը Մասնոյ ժածկանունն է:

ցոյց տայլէ ետք, առաջարկած է 4 կէտեր:

Ա.- Ընդհ. ներուժ յիշեալ դէպքերու մասնակցող բոլոր հայերուն:

Բ.- Կարգադրութիւն որպէսզի Մշոյ շալակաւորները էրզակը⁹ մինչեւ Խնուս տանին (4-5 օր) որովհետեւ չի բաւեր իրենց մինչեւ պարենաւորման գիծը տանելու (10-12 օր):

Գ.- Անկանոն ժանտարմներու հեռացումը:

Դ.- Մարտ 15էն մինչեւ Ապրիլ 15ին թոյլտուութիւն թէ՛ մարդկանց եւ թէ՛ անասուններուն, որպէսզի ցանք կատարուի. հակառակ պարագային կրնայ սով ըլլալ, որովհետեւ ցանք չկայ:

(Ինչքան գիտենք Վահանի այս հեռագիրը ցարդ ոչ մէկ արդիւնք չտուաւ. կը կասկածինք մինչեւ անգամ որ գայն զարկած ըլլան Մուշէն):

Կարին.— Ոստիկանապետը Դերջան երթալով, բռնութիւն, ծեծ, կաշառակերութիւն գործ դրած է եւ ճանապարհին սպաննել տուած է մեր հին ընկերներէն մէկը իր 10 տարեկան աղջկան հետ: Համաճարակը կը շարունակէ իր հունձքը. թիֆուս, թիֆո. ոտները սառած անթիւ են: Թէեւ մէկուկէս ամիսէ ի վեր հիւանդ գործ չեն բերեր քաղաք, բայց դարձեալ օրական 300 մահ կը պատահի: Կը շարունակեն դատարկել միայն հայոց տները՝ հիւանդանոցի վերածելու համար: Պաշտօնէութիւնը գազան է կտրած: Սեղրաք Փաստրմաճեանի սպանութեան գործը քննեց¹⁰, չի հետապնդուիր: Շշուկներ կան թէ «հայերը պիտի կոտորենք երբ Պոլիսը իյնայ»: Պաշտօնէ, Աղբակ, Ալաշկերտ հայութիւն չմնաց: Ռուսներու յետա-առաջ շարժումները պիտի իրականացնեն «Հայաստան առանց հայու»ի իտէպը: Մեր ընկերները հետգհետէ կը մեռնին. Ջնդին, Վահէ Թոքաճեանը¹¹ եւ ուրիշներ մեռան արդէն: Վերակազմուած բանակը հագիւ 30/40000 հոգիէ կը բաղկանայ:

Կարին, 6 Մարտ.— Կոտորածի ձեռնարկը լուրջ բան է եղել, բայց Թահսինը¹² եւ Պոլսոյ կառավարութիւնը ընդդիմացեր են, ինչպէս նաեւ նոր եկող հրամանատարը Մահմուտ Քեամիլ փաշա. անոնք ըսած են թէ կոտորած մը պիտի վնասէր ներկայիս իրենց վարկին: Այսպէս, սկզբունքով չէ որ կը մերժուի կոտորածը, այլ ժամանակաւորապէս անտեղի կը նկատուի:

Գոլ-Օրտուի նախկին հրամանատար Ահմէտ Ֆէյզին նշանակուած է տեղիս ամբողջեանց ընդհ. հրամանատար:

Վանէն կը գրեն 16 փետր. թուականով.— Կառավարութիւնը ոչ միայն թոյլ չի տար կացութիւնը պարզել Պոլիս, այլ անգամ Բելուի դէպքէն յետոյ առաջնորդարանէն տրուած նպաստի խնդրանքի հեռագիրները վար դրաւ: Հոս կազմուած է նպաստից յանձնախումբ մը, բայց միջոցները անբաւարար են. պատրիարքարանը պէտք է մտածէ յանձնախումբ մը զրկել ջարդի վայրե-

րը, անտուն մնացած կիներն ու երեխաները հաւաքելու, ինչպէս նաեւ առեւանգուած կիներն ու աղջիկները ետ առնելու ու իրենց ընտանիքներուն յանձնելու համար: (Այս ջարդերու մասին առանձին յիշատակագիր է զրկուած ներքին գործոց նախարարութեան):

Ուրբաթ 13/16 փետր.ին ընդհարում մը տեղի ունեցեր է Ալճաւազի Առէն գիւղին եւ քիւրտ միլիսներու խմբի մը միջեւ, որ կը գտնուի եղեր Բշարէ-Չաթոյի որդու եւ հօրեղբօր հրամանի տակ: Խուճըր Արծկէ քաղաքի մէջ բռնութիւններ ընելէ ետք, Կոճեր գիւղին մէջ բռնաբարութիւններ կ'ընէ եւ կը դիմէ Առէն գիւղը: Գիւղացիները կը դիմադրեն եւ քիւրտներէն կը սպաննուի 3 հոգի, որոնց մէջ Բշարէ-Չաթոյի տղան: Հայերէն երկու սպաննուած եւ երկու վիրաւոր: Քիւրտները ետ կը քաշուին:

Աբաստիա.— Գարահիսարի շրջակայ գիւղերէն Բիւրք, Մշակնոց եւ այլն եւ այլն ընդհարում կ'ունենան կամաւոր գնացող չեթաներու հետ. հետեւանքը՝ խուզարկութիւն եւ մատնութիւն ու գրաւում 120-140 կտոր գէնքերու եւ բոլոր փամփուշտներու: Կառավարութիւնը կը հետապնդէ մեր ընկերներէն Բիծան, Վ. Հիւսիսեան եւ Հ. Գարակէօզեան¹³ իբր հայթայթիչ այդ գէնքերուն. անոնք ալ փախստական դարձած են: Սվազի գիւղերէն Ուլաշի մէջ ալ խուզարկութիւններ տեղի ունեցած են եւ կանանց ծեծած են խոստովանեցնելու համար: Յաջողած են գրաւել 12 գէնքեր:

Կեսարիոյ գիւղերէն էփերէկի մէջ ալ ռումբ մը պայթած է. վիրաւորը նախքան մեռնիլը յայտնած է թէ ինք էր պատրաստողը. խուզարկութիւն եղած է, բայց ապարդիւն. այնուամենայնիւ բազմաթիւ ձերբակալութիւններ կան:

Աբաստիոյ մէջ դասալքումը հասած է մեծ համեմատութիւններու: Հայ զինուորները զինաթափ կ'ընեն եւ կ'ուզեն տարապարհակ աշխատանքներու զրկել. անոնք ալ դասալիք կ'ըլլան: Համաճարակը, տիֆուսը ծայր տուաւ: Հայոց տուները կը պարպեն (հիւանդանոցի համար). հիւանդապահներն ալ միայն հայեր են:

Տքապիզոն, 8 Մարտ.— Սարսափի շրջան է: Փախստական զինուորները ձերբակալելու համար զրկուած ժանտարմները 10-ի տուներ վառեցին եւ անլուր անգթութիւններ ըրին չինայելով ոչ սեռի եւ ոչ տարիքի:

Ռուսները Խոփան գրաւելէ յետոյ կը յառաջանան

9.- Ապրանքը, բեռը:
10.- Արմէն Գարոյի հօրեղբայր, փոյս տնօրէն էր Կարնոյ Օսմանեան դրամատան, յարգուած անձնատրութիւն թէ՛ հայերէն եւ թէ՛ թուրքերէն. սպաննուած էր տուն վերադարձի ճամբուն վրայ 1915 թ. Յունուար 28ին:
11.- Ձնդի – Բարունակեան Կարապետ: Վահէ Թոքաճեան՝ Կարնոյ Կեդր. կոմիտէի անդամներէն:
12.- Թահսին փաշա, Էրզրումի նահանգապետ:
13.- Վահան Հիւսիսեան եւ Հմայեակ Գարակէօզեան. Շապին Գարահիսարի հերոսամարտի ղեկավարներ:

դէպի Վիցէ[?] ճամբայ շինելով: Կարնոյ դաշտի բոլոր հայերու գիւղերը ոչնչացած պէտք է համարել:

Կիլիկիա.— Չոք-Մարգպանի եւ Ջէյթունի դէպքերու մասին գրաբերս կը տայ մանրամասնութիւններ: Ջէյթունցիները զարկած են 2 բեռ պետական զէնք, սպաննելով 7 ժանտարմ: Ջէյթունի Վերի թաղը այժմ կռուի մէջ է զօրքերու հետ: Մարաշի մէջ խլրտումներ եղած են կոտորածի, բայց միւլթեսարը՝ հակառակած է. ատոր վրայ էջրաֆը¹⁴ միացած կը պահանջէ անոր պաշտօնանկութիւնը: Առաջնորդը կը փափաքի հաղորդել կացուլութիւնը Սիսի կաթողիկոսին, բայց կ'արգելին:

Բերանացի բացատրութիւններ
Հ.Բ.Պ.Հ. սուրհանդակէն

Ջէյթունցիները հակառակ որ կառավարութեան յանձնած են եղել վաղուց ի վեր իրենց մօտ ապաստանած 14 փախստականները, բայց եւ այնպէս կառավարութիւնը սկսեր է դարձեալ խիստ միջոցներու, որի վրայ Ջէյթունէն 150 հոգի ապաստաներ են վանքերէն մէկի մէջ, սկսեր են կռիւ ժանտարմների դէմ: Այդ կռուին մէջ երկու կողմէ մօտ 25 հոգի սպաննուած է. ապա պաշարուածները շղթան կտրելով կը հեռանան հետերնին տանելով վիրաւորները եւ իրենց սպաննուածներու գլուխները. ապա պաշարումը աւելի խիստ բնոյթ կ'առնէ ու թէեւ Ջէյթունի վարի երկու թաղերը ճերմակ դրօշակ կը պարզեն, բայց եւ այնպէս ապաստամբները դարձեալ իրենց գործը կը շարունակեն եւ կռուելով նոր դրկուած ուժերու դէմ կը սպաննեն արշաւախմբի հրամանատարները, հազարապետը եւ հարիւրէ աւելի զինուորներ, ժանտարմներ, եւ տարօրինակ պահանջներ կը դնեն կառավարութեան, պահանջելով նաեւ որ իրենց իրաւախոհը լինի Հալէպի վալիին՝ ձեւալ փաշան, թէեւ իրենք ենթակայ են Մարաշի անկախ միւլթեսարը՝ Ֆուլթեան:

Կոտորածի խմորումներ տեղի կ'ունենան նաեւ Այնթապի թուրք ժողովրդեան մէջ, բայց Հալէպի գերման հիւպատոսին ազդու դիմումին վրայ կը դադրին: Նման բարեբար ազդեցութիւն ունեցել է նաեւ Մուսուլի գերման հիւպատոսի միջամտութիւնը Մշոյ դաշտում: Բնորոշ դէպք մը տեղի ունեցած է նաեւ Չոք-Մարգպանի մէջ, ուր եկած են եղել երու անգլ. գործակալներ՝ Սալճեան (ասորի) եւ Քեօշկերեան (ատանացի): Վերջնոյն մայրը սպաննուած է եղել Ատանայի կոտորածներու ժամանակ¹⁵ եւ կինը՝ առեւանգուած: Ինքը Կիպրոսէն վերադարձին կը սպաննէ իր կինը առեւանգողը եւ կը դառնայ փախստական: Երբ կառավարութիւնը լուր կ'առնէ որ անոնք նաեւ անգլ[իական] գործակալներ են՝ եկած Կիպրոսէն, կը հետապնդէ: Սալճեանը կը յաջողի փախչիլ, իսկ միւսը բռնուելով կախաղան կը բարձրացուի: Այդ դէպքի վրայ խստութիւններ կը սկսին Չոք Մարգպանի մէջ եւ բոլոր այր մարդիկ 15 տարեկանէն

վեր քաղաքէն դուրս կը տարուին եւ կ'աշխատցուին դաշտերու մէջ, ուր կը մնան մինչեւ հիմա. վերջերս միայն մաս առ մաս թոյլ տրուած է վերադառնալ քաղաք:

Այդ դէպքերու առթիւ (Ազգ. իշխանութիւններու կողմէ) հեռագրուած է Եգիպտոսի արշաւախմբի հրամանատար Ճեմալ փաշային, որ պատասխանած է հանգիստ թողուլ խաղաղ ազգաբնակչութիւնը, եւ շատ խիստ լինել ապաստամբներու վերաբերմամբ:

Դիմում եղած է նաեւ գերման դեսպանատան հիւպատոսներու թիւր աւելցնելու Հայաստանի մէջ եւ այդ ուղղութեամբ աշխատանք պիտի տարուի նաեւ Պերլինի կեդր. կառավ[արութեան] մօտ:

Պատրիարքարանը դիմել է նաեւ ամերիկեան դեսպանատուն, որ իր ստացած հրամաններու հիման վրայ հաւաստիացրել է որ մինչեւ վերջը պիտի պաշտպանէ թուրքի ըրիստոնեայ ազգաբնակչութիւնը եւ նոյնիսկ Վաշինկթոնէն դիմում պիտի լինի Պերլինի ու Վիեննայի դահլիճներուն, որպէսզի անոնք ալ իրենց կարգին ազդեցութիւն բանեցնեն թուրքերի վրայ, եւ արգելեն ըրիստոնեաների դէմ սկսուած հալածանքներն ու կոտորածները»:

Ի հարկէ տեղեկութիւն ունէք Եգիպտոսի մէջ կազմուած «Ազգ. շահերու պաշտ[պանութեան] մարմնի» մասին, որուն նախագահը ինքը փաշան է¹⁶: Մեր ընկերները սկսել են արդէն կատաղի պայքար. մի քանի օրէն մենք էլ կը սկսենք Պալքաններու մէջ խիստ պայքար «Հայաստան» թերթով: Եգիպտոսի «Յուսաբեր»ը մերոնց ձեռքն է. ամէն կերպով պիտի ջանանք հակազդել նրանց ձեռնարկին: Մենք շուտով կը սկսենք պարտաւորիչ հանգանակութիւն. այս առթիւ միշտ տեղեկ կը պահենք ձեզ:

Մենք Եգիպտոսէն դեռ ոեւէ լուր չառած՝ հեռագրած էինք Թիֆլիս, թէ արդեօք Նուպար փաշայի այս ձեռնարկէն ոեւէ լուր ունին եւայլն. եւայլն: Այսօր ստացանք հետեւեալ հեռագիրը. - "Connaissions rien commision National Noubar – participez si argent sera envoye Bureau National Tiflis"¹⁷:

Կովկաս մեզ յատուկ սուրհանդակ ուղարկած է. ի հարկէ ընդարձակ տեղեկութիւն պիտի բերէ հետը: Մենք անմիջապէս մեր ստացած բոլոր լուրերը կը հաղորդենք ձեզ:

Գրեցէք միշտ:

Ընկ. բարեկներով
Հ.Յ.Դ. ՊԱԼՔ[ԱՆԵԱՆ] ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

14.- Էշրաֆ – քաղաքի թուրք երեւելիներ, մեծամեծներու եւ ազդեցիկ անձնաւորութիւններու խաւ:
15.- Խօսքը կը վերաբերի 1909 թ. Ատանայի կոտորածներուն:
16.- Խօսքը Պոդոս Նուպար փաշայի մասին է:
17.- «Ոչինչ գիտենք Նուպարի յանձնախումբին մասին: Մասնակցեցէք եթէ դրանը թիֆլիսի Ազգային բիւրոյին պիտի դրկուի»:

Փաստ. 63-40

3.- «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ

Ժրմես, 24 Ապրիլ 1915

Ընկերներ!

Չորս օր առաջ ստացանք ձեր անթուակիր նամակը Պ[ոլսի] հաղորդածների մասին. երէկ էլ վերջին նամակի պատճէնը (ձեր ամսիս 14ի թուագրեայլը), որը նոյնպէս ամբողջութեամբ գրուած էր Երկրի աննախանձելի դրութեան մասին:

Կը հաստատենք ամսիս 14-ի մեր N° 140 գրութիւնը:

Տեղեկացանք Պ[ոլսի] 2 նամակներով Երկրի տխուր կացութեան մասին. զուր տեղն են Պ[ոլսի] ընկերները դատապարտում արտասահմանի ընկերների անտարբերութիւնը, քանի որ գիտեն տեղումս գրեթէ ընկեր չի մնացել. ամբողջ գործունէութիւնը Կովկասում է կենտրոնացած, բայց հասկանալի է ընկերների այդ հոգեբանութիւնը իրենց ապրող յուսահատական օրերու պատճառով:

Այսօր իսկ գրեցինք Ամերիկայի եւ Եգիպտոսի մարմիններին, տալով Երկրի վիճակի տխուր պատկերը եւ խնդրելով օր առաջ իրենց դրամական աջակցութիւնը տեղ հասցնեն. եւ քանի որ նրանք պիտի դժուարութիւնների հանդիպեն ուղղակի Պ[ոլ]իս դրամ հասցնելու, գրել ենք որ փոխադրութիւնը կատարեն ձեր միջոցով. ուստի եթէ դրամ փոխադրելու գիծ չունէք մինչեւ օրս, ապա անմիջապէս աշխատելու [է] հնարաւոր միջոցներով գիծ ստեղծել որպէսզի դրամները ստանալուց անյապաղ տեղ հասցնէք: Այդ առթիւ գրել ենք վերոյիշեալ մարմիններին:

Վերջին 2 նամակների պատճէնը նոյնութեամբ յղե-

լու ենք կարմիր մելանով Կովկաս: Կ'ուզէինք ստոյգ իմանալ ձեզանից՝ արդեօք Պ[ոլս]ից ստացած եւ մեզ յղած տեղեկութիւնները Ամերիկա, Եգիպտոս եւ Կովկաս էլ փոխադրում էք պատճէններ թէ ոչ: Չգիտենալով այդ առթիւ դրական որեւէ բան ձեզանից, եւ մինչեւ հարց տալը, բարւոք համարեցինք վերջին 2 նամակների ամփոփումը ուղարկել Եգ[իպտոս] եւ Ամ[երիկա], իսկ ամբողջութիւնը Կովկաս:

Ընկ. Միքայէլի տեղ հասնելու լուրը ուշացած լինելով, հեռագրեցինք Տփլիս եւ Բագու հարցնելու, եւ ստացանք նրա ձերբակալուելու տխուր լուրը: Կանգնեցրել են նրան Քիչնիեւում եւ փոխադրել Նովոչերկասկ, երեւի Դաշն[ակցութեան] գործի հետ կապելու¹⁸: Նրա քայքայուած առողջութիւնը երբեք չի կարող բանտի միջոցով տանել: Դիմում պիտի անենք Ֆր[անսիական] ու անգլ[ական] կառավարութիւններին միջոցներ ձեռք առնեն ազատել տալու նրան:

Ի՞նչ անցազրով է մեկնել ձեր մօտից ընկերը եւ ի՞նչ թղթեր ունեցել իր վրայ, անմիջապէս գրեցէք:

Հարկ եւ հնարաւոր բոլորքի ձայն պիտի բարձրացնենք չէզոք պետութիւններու միջոցով Երկրի կացութեան մասին:

Շուտով կ'ուղարկենք նամակ Պ[ոլս]ի համար, որը ապահով միջոցով կը խնդրենք տեղ հասցնէք:

Ընկերական բարեւներով «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

18.- Հարցը կը վերաբերի Միք. Վարանդեանի, որ 1915 թ. առաջին ամիսներուն Երոպայի շարք մը երկիրներ այցելելէ ետք անցած էր Կովկաս եւ ճամբան ձերբակալուած հաւանաբար քանի մը տարի առաջ Դաշնակցութեան դէմ բացուած դատի հարցով: Ռուսական կառավարութեան մօտ եղած դիմումներու շնորհիւ շուտով ազատ պիտի արձակուէր ան եւ անցնէր Թիֆլիս:

Փաստ. 882-6

4.- ՎԻՇԱՊԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԷՆ ԲԱԼԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 14 Ապրիլ [1915]

1915 թ. Ապրիլ 11/24ի պոլսահայ մտաւորականութեան ձեռքաւարման մասին առաջին տեղեկատուութիւնը կատարուած է Ապրիլ 14/27ին: Արխիւային այդ փաստաթուղթը կը կրէ 882 թղթածրարին թիւ 6 համարը: Երկու էջոց ձեռագիր այդ փաստաթուղթը թերի է սակայն եւ անաւարտ: Շարունակութիւնը գտնելու համար պէտք է դիմել նոյն թղթածրարի 57 համարը կրող երեք էջոց փաստաթուղթին, որ կը սկսի էջ 3ով եւ որ նոյնպէս անաւարտ է: Ձոյգ փաստաթուղթերը գրուած են միեւնոյն ձեռագրով, - Խաչիկեան Տիգրան (Արզուման), որ իբրեւ գործիչ կը վարէր Պալքանի Կեդր. կոմիտէին քարտուղարութիւնը: Իր գրչին կը պատկանին առ հասարակ Վիշապի (Պոլիս) Առժամեայ մարմնէն ստացուած նամակներուն արտագրութիւնները: Հարկ է յիշեցնել, որ այդ գրութիւնները ընդհանրապէս ծածկագիր էին եւ լրագիրներու լուսանցքներուն վրայ գրուած՝ գաղտնի մելանով:

Վերադառնալով վերոյիշեալ երկու անաւարտ փաստաթուղթերու հարցին, յայտնենք որ գոյութիւն ունի երրորդ մըն ալ (881-48), մակագրուած «պատճէն» եւ հանուած «Եզիպտոսի արխիւ»էն: Այս վերջինը կու տայ ամփոփ կերպով բայց մօտաւորապէս նոյն բառերով՝ Պոլսոյ ձեռքաւարութիւններուն նկարագրութիւնը եւ շարունակութիւնը, որուն շնորհիւ կ'ամբողջանայ որոշ չափով վերոյիշեալ փաստաթուղթերուն (882-6 եւ 882-57) բովանդակութիւնը: Իբրեւ հաստատում մեր այս ենթադրութեան, յիշենք որ Պալքանեան Կեդր. կոմիտէին պարտականութիւն վստահուած էր Պոլսէն եւ Երկրէն զարտուղի ճամբաներով ստացուած տեղեկութիւնները արտագրել եւ անյապաղ հասցնել Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին, ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան, ինչպէս նաեւ Եզիպտոսի եւ Ամերիկայի կուսակցական մարմիններուն: Ահա այսպիսի փաստաթուղթ մը պէտք է հանդիսանար «Եզիպտոսի արխիւ»էն հանուած պատճէնը, որուն արտագրութիւնը կը պատկանի Եզիպտոսի կոմիտէի ներկայացուցիչ Արտաւազը Հանրմեանի գրչին: Ի դէպ, Ապրիլ 11/24ի առաջին ձեռքաւարութեանց մասին Սոֆիայի «Հայաստան» թերթին մէջ լոյս տեսած հաղորդագրութիւնը եւս (1915, Ապրիլ 22) լրիւ կը համապատասխանէ «եզիպտական» պատճէնին, ինչ որ համոզիչ ուրիշ մէկ ապացոյց է, որ 881-48 համարը կրող փաստաթուղթը որոշ իմաստով կը կազմէ շարունակութիւնն ու ամբողջացումը վերեւ յիշուած թիւ 882-3 + 882-57ի կորսուած բաժիններուն: Ստորեւ յաջորդաբար կու տանք յիշատակուած արխիւային երեք փաստաթուղթերը:

Ընկերներ,

Իմացած կ'ըլլաք անշուշտ օրուան դէպքը. մեր հարեւանները անորակելի դաւադրութեամբ, գիշերանց յանկարծակի ձերբակալեցին բոլոր ծանօթ ընկերները եւ ուղարկեցին կեդր[ոնական] բանտ, ուրկէ փոխադրուած են արդէն կէս գիշերուընէ դէպի Գոնիա կամ Էնկիրի, լաւ չենք գիտեր:

Դէպքը տեղի ունեցաւ առանց նախընթաց պատճառի. օրերէ ի վեր չարագուշակ շշուկներ կային, բայց դժուար թէ կարելի ըլլար երեւակայել այսպիսի զանգուածային կալանաւորում, առանց նայելու դաւանանքի, հպատակութեան, կուսակցականի կամ աղայի:

Շաբաթ առտուընէ Պոլսոյ բովանդակ ոստիկանութիւնը շարժման մէջ դրուած էր եւ ցերեկուընէ սկսան հատ հատ ձերբակալումներ ընել նախապէս պատրաստուած ցանկի մը վրայ: Գիշերը տեղի ունեցաւ բուն դաւադրութիւնը, տեւելով ժամը 9-էն մինչեւ կիրակի: Մեր յայտնի ընկերներէն գրեթէ բոլորն ալ բռնուեցան կէս գիշերէն ու փոխադրուեցան օթոմոպիլներով հսկողութեամբ ոստիկաններու եւ ժանտարմներու, շատերու անձնական թուղթերն ու գոյքերը միասին տանելով:

Ազատամարտի խմբագրատունը հսկողութեան տակ առնուեցաւ կէս գիշերին եւ ով որ կար ներսը ձերբակալուեցաւ: Մինչեւ այսօր ալ չէնք փակ է եւ ոստիկանութեան պահպանութեան տակ:

Ստորեւ կու տանք քանի մը մանրամասնութիւններ մեզի ծանօթ դէպքերու: Ընկ. Ակնունին կը ձերբակալեն իր

տանը մէջ, ուր կը գտնուէին Վարդգէսն ու Հրաչը: Այս վերջինը կը փութայ խմբագրատուն ուր կը բռնուի: Միւս առտու արդէն հնձուած էին բոլորը:

Վարդգէսը [եւ] Ձօհրապը կը դիմեն Թալէաթ պէյին, որ նախ կը պատմէ թէ Վանի մէջ մերինները լեռնէն իջեր եւ ներսի ժողովուրդի օգնութեամբ գրաւած են քաղաքը, պետական մթերանոցները եւայլն: Նախարարը յետոյ ամենայն անպատկառութեամբ կը չքմեղացնէ ինքզինքը կատարուած արտակարգ ձերբակալումներու համար, ըսելով թէ ասկէ աւելի չկրցայ ընդդիմանալ: Վարդգէսին ալ կ'ազդարարէ շատ չերեւալ հրապարակի վրայ: Մեր ընկերը տեսակցիլ կ'ուզէ ոստիկանական տեսուչ Պետրի պէյի հետ եւ անոր կը պոռայ «ըրիք չըրիք այս վիճակին բերիք վերջապէս»:

– Զանրմ մենք ինչ ընենք...

Ծանօթ Խմբ.– Հոս էջը կ'աւարտի եւ ընդհատուած կը մնայ ոստիկանութեան տեսուչին խօսքը. հաւանաբար կորսուած են յաջորդող քանի մը էջերը:

Շարունակութիւնը թիւ 882-57 փաստաթուղթով:

Փաստ. 882-57

Վարդգէս.— Դուք էք մեղաւորը: Եթէ մենք հարիւրին 40 յանցանք ունինք, դուք հարիւրին 60ը ունիք. ձեր խտրական քաղաքականութիւնն էր, որ ժողովուրդը կը դժգոհի կամ լեռ բարձրացողներ կ'ըլլան:

Այսպէս կամ այնպէս Պետրի պէյ Վարդգէսին երեք օր պայման տալով կ'ազդարարէ, որ թրքաբնակ վայր մը ընտրէ ու երեք օրուան մէջ հեռանայ: Վարդգէս կը փորձէ գոնէ ութը տասը օր ստանալ, յայտնելով թէ կ'ինը հիւանդ է: Բացարձակապէս կը մերժուի ու [կը մնայ] մինչեւ չորեքշաբթի:

Ձերբակալուած են ոչ միայն մասնաւորապէս դաշնակցականներ, այլեւ բոլոր կուսակցութեանց, միութեանց անդամները. մէկ խօսքով բոլոր անոնք, որ դեր մը կ'ընան ունենալ հանրային գործունէութեան մէջ: Իթիթհատը խելագար հետապնդումով մը ուզած է ջլատել կազմակերպութեան որեւէ ձեւ եւ շահագործած է հին ու նոր ցուցակներ: Ստորեւ կը յիշենք խառնիխառն մինչեւ հիմա ձերբակալուած անձերը.— Ակնունի, Խաթակ, Շահրիկ, Հրաչ, Շահպազ, Շամիլ, Զարդարեան, Սիւսանթո, Մովսէս, Ժիրայր, Արամ Աշոտ, Վարուժան, Տոքթ. Փաշայեան, Տոքթ. Միրզա, Գ. Բարսեղեան, Համբարձումեան եւայլն. բացի գրաշարներէն, որոնք գիշերը հոն չէին.— Բիւզանդ Քէչեան ու մեծ որդին, Ոսկան Մարտիկեան (նախկին) նախարար), Տք. Թորգոմեան, Տք. Տաղաւարեան, Տիրան Քելեկեան, Հմայ[եակ] եպիսկ., Պալաքեան վարդ., Կոմիտաս վարդ., Յովնան վարդ., Յուսիկ քհնյ., Լեւոն Լարենց, Ներսէս Զաքարեան, Զաւուչեան, Արամ Անտոնեան, Երուանդ Օտեան, Կիկօ եւ Կավուռչ, Ատոմ Շահէն, Ստեփան Քիւրքճեան, Մելքոն Կիւրճեան, Հնչակեան Մուրատ, Սկիւտարի եւ Գուլմ-Գաբուլի միութեանց վարչութեանց անդամներ, եւ դեռ բազմաթիւ անձեր, վաճառական, քհնյ., դեղագործ, բժիշկ եւայլն, մօտաւորապէս երկու հարիւր հոգի¹⁹: Վերջին պահուն Ձօհրապն ալ ազդարարութիւն ստացաւ: Կ'ըսուի թէ 15-20 թուրքեր ալ կան, յոյներէն ոչ ոք: Խիստ խուզարկութիւններ տեղի ունեցան պատրիարքարանին մէջ, Կետիկ փաշայի, Գուլմ-Գաբուլի, Ենի-Գաբուլի, Սամաթիոյ դպրոցներն ու եկեղեցիներն: Առայժմ խուզարկութիւններն լայն ծաւալ չունին. որքան կրցանք ստուգել պրպտումներու արդիւնքը կատարեալ ֆրասքօ եղած է, չնայելով որ պարկերով գիրք, թուղթ ժողովուած են բոլորովին աննշան մարդկանց տուններէն. բոլոր մեր նահատակներու պատկերները կը հաւաքեն: Կալանաւորներէն ոչ մէկը տեսնել կարելի չէ եղած, մայր, քոյր, նոյնիսկ Վարդգէսը չկրցաւ համոզել. ընկերները տեսնել ան-

19.- Ծածկանունով յիշատակուած հայ մտաւորականներու իսկական անունները.—

- Ակնունի – Մալումեան Խաչատուր:
- Հրաչ – Թիրեաքեան Հայկ, «Ազատամարտ»ի վարչական պատասխանատու:
- Շամիլ – Բարսեղեան Սարգիս – Օտապաշեան Պողոս:
- Խաթակ – Գարեգին Խաթակ, Չազարեան:
- Ժիրայր – Զօրեան Բարսեղ:
- Լեւոն Լարենց – Քիրիշչեան Լեւոն:
- Արամ Աշոտ – Սիմասեան Սարգիս:
- Վարդգէս – Մերենիկիւեան Յովհաննէս:
- Ատոմ Շահէն – Երիցեան Ատոմ:
- Կիկօ – Թորոսեան Գրիգոր:
- Կավուռչ – Թոլայեան Երուանդ:
- Սիւսանթո – Եարճանեան Ատոմ:
- Մուրատ – Պոյաճեան Համբարձում:

գամ չլծողուցին: Պատրիարքը, արտասովոր խառն ժողովի մէջ, պատրաստակամութիւն յայտնել է ամէն միջոց փորձելու. եպարքոսին²⁰ դիմեց, բայց անօգուտ: Այն քանի մը ընկերները որ այս նամակը կը փութացնեն, իրենք ալ ապահով չեն իրենց մասին: Առժամեայ Մարմին մը կազմեցինք: Շարքերը կը մնան անվճար: Մարմինը կը սպասէ դէպքերու ընթացքին, մանաւանդ հաղորդակցութեանց վերահաստատման, որովհետեւ հասցէներն ու տեսրակները ակամայ պատուեցան: Այժմ ստիպողաբար կը խնդրենք ձեռնէ, ժամ առաջ կարեւոր գումար մը հասցընել, որովհետեւ վերջին անգամ ձեր դրկած ՅՅ0նոց չէք առանց զանձուկու մնացած է Հրաչի գրպանը եւ թերեւս կորսուած է: Մեր ընկերներու ընտանիքները մեծ մասով թշուառութեան մէջ են: Յետոյ իրենք ալ յանկարծակիի եկան եւ ապահովաբար իրենք ալ դրամ չունին: Այսօր իսկ եթէ կարելի է ՅՅ0նոց չէք ետ քաշէիք ու դարձեալ դրկէիք, որ Երկրի գրամներն ալ դրկենք: Այսօր իսկ պիտի փորձենք պատրիարքի միջոցաւ երաշխաւորութիւններ պահանջել ամերիկեան, իտալական, պուլկարական եւ գերմանական դեսպանատուներէն Պոլսոյ, Հայաստանի ժողովուրդի եւ քսորուած ընկերներու կեանքի ապահովութեան մասին:

Փաստ. 881-48

Պոլսէն մեզ հետեւեալը կը գրեն

«Դէպքը տեղի ունեցաւ առանց ոեւէ առիթի:

Ճիշդ է օրեր առաջ չարագուշակ շշուկներ կը պտտէին, բայց դժուար էր երեւակայել այսպիսի զանգուածային կալանաւորումներ, ուր նկատի չառնուեցան ոչ հպատակութիւն, ոչ դասակարգ եւ ոչ ալ քաղաքական դաւանանք:

Շաբաթ առտուընէ Պոլսի ամբողջ ոստիկանութիւնը շարժման մէջ դրուած էր: Սկսան հատ հատ ձերբակալումներ, նախապէս պատրաստուած ցանկով: Գիշերը տեղի ունեցաւ բռն դաւը, տեւելով մինչեւ Կիրակի: Հ. Յ. Դաշնակցութեան ծանօթ դէմքերէն գրեթէ ամէնքն ալ ձերբակալուեցան եւ կէս գիշերէն օթոմոպիլներով, ոստիկաններու եւ ժանտարմներու հսկողութեամբ փոխադրուեցան Կեդր. բանտ: Նոյն ժամուն հսկողութեան տակ առնուեցաւ Ազատամարտի խմբագրատունը ու հոն գտնուածները նոյնպէս ձերբակալուեցան: Մինչեւ օրս ալ չէնք ըր փակ է եւ առջեւը ոստիկաններ դրուած են:

Դաշնակցականներէ զատ ձերբակալուած են հայկական բոլոր կուսակցութիւններու, հիմնարկութիւններու եւ միութիւններու աչքի ինկնող անդամները, մէկ խօսքով բոլոր անոնք որ կրնային ոեւէ դեր խաղալ հանրային գործերու մէջ:

Մինչեւ ներկայ վայրկեանը ձերբակալուած են ի մէջ այլոց հետեւեալները.— Ակնունի, Խաժակ, Շահրիկեան, Հրաչ, Բ. Շահպազ, Ռ. Զարգարեան, Շամիլ, Սիամանթօ, Մովսէս Պետրոսեան, Դանիէլ Վարուժան, Ժիրայր, Արամ-Աշոտ, Տոքթ. Փաշայեան, Տոքթ. Քեթենճեան, Գ. Բարսեղեան, Հ. Համբարձումեան, Բիւզանդ Քէչեան եւ իր որդին Պարոյր, Տոքթ. Թորգոմեան, Տք. Տաղաւարեան, Տիրան Քելէկեան, Լեւոն Լարենց, Ներսէս Զաքարեան, Չափուշեան, Արամ Անտոնեան, Եր. Օտեան, տպարանատէր Ատոմ Շահէն, Մելքոն Կիւրճեան, Կիկօ, Կալոօզ, Սկիւտարի եւ Գում-Գաբուրի միութիւններու վարչութեանց անդամները, ու դեռ բազմաթիւ ուրիշ անձեր, բժիշկ, դեղագործ, վաճառական եւայլն:

Հոգեւորականներէն ձերբակալուած են Կոմիտաս, Յովնան, Պալաքեան վարդապետները, Յուսիկ քահանայ եւ ուրիշները:

«Վարդգէսին առաջարկուած է երեք օրուան մէջ հեռանալ Պոլսէն» ոեւէ թրքաբնակ վայր: Վերջին պահուն Գ. Զօհրայն ալ նոյն իմաստով ազդարարութիւն ստացաւ: Կ'ըսուի թէ ձերբակալուածներուն մէջ կան 15-20 թուրք:

«Խիստ կերպով խուզարկուեցան Պատրիարքարանը, Գում Գաբուրի, Եէնի Գաբուրի, Սամաթիոյ դպրոցներն ու եկեղեցիները: Ամէն տեղ խուզարկութիւնը մեծ յուսախաբութիւն ունեցաւ, որովհետեւ խուզարկութիւնները ոչ մէկ արդիւնք տուին, չնայելով որ անգամ բոլորովին անյայտ մարդոց տուններէն պարկերով գիրք, թուղթ ու պատկերներ տարուած են:

Կալանաւորներէն ոչ մէկը կարելի եղաւ տեսնել: Թոյլ չտրուեցաւ մինչեւ իսկ ծնողներուն տեսնուիլ իրենց մերձակորներուն հետ: Կ'ըսուի թէ բոլոր ձերբակալուածները, որոնց թիւը 300-ը կ'անցնի, քսորուած են Գոնիա կամ էնկիւրի:

Վերջին պահուն իմացանք որ ձերբակալուածներէն մէկ քանին, ինչպէս օր[ինակի] համար Բ. Քէչեանը, ազատ արձակուած են»:

20.- Եպարքոս – Վարչապետ (Սայիտ Հալիմ փաշա):

Փաստ. 904բ-6

5.- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ԵՒ ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵՒ

Պոլսոյ մէջ հայ մտաւորականներու ձերբակալման յաջորդ օրն իսկ, Հ.Յ.Գ. Հայաստանի Բիւրոյի Պոլսոյ հատուածը, հաւանաբար անոր դեռ ազատ մնացած անդամներու միջոցաւ, արտասահման կը հասցընէ – այս պարագային Պալքանի Կեդր. կոմիտէի ճամբով – հետեւեալ լակոնական թելադրանքները, ուր նշուած են նոյնպէս հասցէներ ու հաղորդակցութեան կապեր:

Հ[այաստանի] Բ[իւրոյի] Պ[ոլսոյ] Հ[ատուած] ուղարկուած մասնաւոր սուրհանդակի միջոցաւ գործադրութեան համար մեր անելիքները

- 1.- Յարաբերութիւնները կանոնաւորել (ամէն շաբաթ նամակ գրել անպատճառ)
- 2.- Պրուդեանի խնդիր - ապրանք եւ մարդ
- 3.- Նամակագրութիւնը Եգիպտոսի եւ Ամերիկայի հետ կանոնաւորել:
- 4.- Հրահանգ մեր բոլոր թերթերուն զգոյշ լինել
- 5.- Սոֆիայի թերթը²¹ քաղաք[ական] տեսակէտով անյարմար. դադրեցնել առ այժմ:
- 6.- Դրամ հասցնել Պ[ոլսոյ] եւ Երկրի համար Սարուստանէն²², Ամերիկայէն, Եգիպտոսէն եւ Պոլկարիայէն:
- 7.- Պուքրէշի համար ալ կարգաւորել հանգանակութիւն. առհասարակ Ռուսմանիոյ մէջ եւ ուրիշ տեղեր: Հրահի 10 ոսկիի խնդիրը նոյնպէս չմոռնալ:

Հասցէ.-
M^{lle} Manichak Abadjian
American College
Arnaoutkeuy, Cons[tantino]ple

Օրիորդը ուսանողուհի է, գրել ըստ այնմ իբր թէ եղբօրը կողմէ.

Եթէ ուսաները էրգրուած գրաւեն, պիտի հեռագրել Պոլիս –
Hélène chez tante²³.

Եթէ վանը գրաւեն –
Hélène chez mamas²⁴.

Եթէ ուսու գորքը շարժուի դէպ յառաջ
Hélène part.

Պոլսէն պիտի հեռագրեն
Faites partir Hélène²⁵.

21.- Սոֆիայի թերթը – Ակնարկութիւն «Հայաստան» թերթին, որ հակառակ Հ.Յ.Գ. Տրդ Ընդի. ժողովի արգելքին, Պալքանի Կեդր. կոմիտէն սկսած էր լոյս ընծայել 1915 թ. Մարտ 10էն սկսեալ եւ պիտի շարունակուէր մինչեւ Մեպտ. 26, Պուլկարիոյ մասնակցութիւնը պատերազմին Գերմանիոյ եւ Թուրքիոյ կողմին:
22.- Սարուստան – ծածկանուն Կովկասի:
23.- «Հելէնը մօրաբոյ մօտ»:
24.- «Հելէնը Մամասի մօտ»:
25.- «Ճամբայ հանեցէք Հելէնը»:

[Հասցէներ]

Օր. Aroussyak Bostandjian
American College
Arnaoutkeuy, Constantinople

M^{elle} Vergine Khatcherian
Grand rue Pangalti, N° 53
Péra Constantinople

Յարգելի Օր. -----

1.- Madama Zmaro – Ogunanovitch
(*Յրանսերէն*) Pera Tarla – Bachi. Eyu-Sokaknet

2.- M^{lle} S. Darbinian – Kazandji Tchechme
Appartement Salih – Zeki Bey
Pera – Taxim

3.- *Հեռագրի համար* M^{me} Anastasia Tchaouchoglou
Rue Fitchidji N° 14, Tarla Bachi, Pera, Constantinople

4.- Archag Torossian
App. Saraffoglou, N° 3 (Minerva)
Pera – Tunnel

Յանձնելի Dr. *Զուկեր*

(Պոլսէն, 12 Ապրիլ 1915ի նամակ է)

Փաստ. 882-7

6.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՍԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

17 Ապրիլ [1915]

Ընկերներ!

Կը հաստատենք մեր ապրիլ 14 թուակիր նամակը ստացանք ձեր ապրիլ 8 թուակիր գոյգ նամակները: Հեւհեւ կը գրենք այս նամակն ալ:

Գիսակը²⁶ երէկ գնաց Թալէաթին եւ վճռապէս յայտնեց որ տեղ մըն ալ չի կրնար երթալ եւ հոս պիտի մնայ: Ատանկ է, մտածենք, բան մը կը խորհինք, պատասխանած է: Գիսակը նոյնպէս առած քայած է: Ճանապարհը²⁷ յիշեցրել է որ իրենները կը հարցնեն, թէ ինչո՞ւ միւսները չըրկեցիր եւ այս մէկը կը մնայ: Գիսակը պատասխանած է որ ինք այս տեսակ գործերու չի խառնուիր, եւ բաժնուած է: Թէեւ այժմ ազատ կը մնայ, թէեւ անստոյգ:

Գերմանական աղբիւրէ իմացանք թէ Վանը պաշարուած է: Այգեստանը ումբակոծուած է:

Իշխան²⁸ կառավարութեան կողմէ պաշտօնով տեղ մը ղրկուած է եւ ճամբան սպաննուած է: Տարօնէն՝ Կոմսէն²⁹ հեռագիր ստացաւ Գիսակը: Կը ծանուցանէ թէ ծանր հիւանդ է եւ 28 ոսկի կը խնդրէ: Բանալիները կորսնցուցած ըլլալով իմաստը չկրցանք հասկնալ: Երեւի կացութիւնը ծանրացած է:

Վանէն նամակ ստացանք ապրիլ 2 թուակիր. կը յիշէ կուսակալին խաղաղասիրական փորձերը, հետապնդումները դադարեցնելու խոստումը. կ'իմացնէ որ լուր ունին թէ 6-700 ձիաւորներ պիտի արշաւեն քաղաքին վրայ: Կուսակալը այս լուրը կու տայ մերոնց եւ կը հասկնայ թէ հետեւանք լաւ չպիտի ըլլայ հայերուն համար: Կը ջանայ ապահովցնել որ ամէն կերպով պիտի պահպանեն բարեկարգութիւնը: Մերոնք անորոշ պատասխաններ կու տան: Վաւաքանը կը խնդրէ հեռագրով 100 ոսկի ղրկել իրեն համար եւ պատրիարքարէն ալ նպաստ ղրկել տալ: Ի հարկէ չենք կրնար գոհացնել՝ յարաբերութիւնները խզուած ըլլալով: Մերոնք կը պահանջեն վալիէն պատերազմական ատեանի առաջ քաշել Գաւաշի գործին պատասխանատուները. ինչպէս կ'ըսեն կռիւին մերոնք թողնում են մէկ սպանեալ, միլիար՝ 44:

Ինչպէս իմացանք աքսորութեան ցանկը պատրաստած են ութը տասը հայեր, որոնց անունները պահած ենք. ամբողջը 400 հոգին կ'անցնի. երկու հարիւրը, որոնց մէջ մերոնք, ղրկուած են կիրակի գիշեր մինչեւ Պիլեծիկ անօթի ծարաւ պահած են, չթողնելով վար իջնել. հոն միայն հազիւ հաւկիթ կըրցեր են գտնել առանց աղի: Մեր կալանաւորները բանտն են:

Ընկեր Գալֆան³⁰ դիմադրած ըլլալով, ձեռնակապով բանտարկած են: Գոնիայի կուսակալը հոս կանչուեցաւ հրահանգներ ստանալու: Յատուկ քննիչ մարմին մը պիտի երթայ աքսորականները դատելու. իբրեւ թէ անմեղները պիտի վերադարձնեն: Կառավարութիւնը ինքզինքը կ'արդարացնէ ըսելով որ թէեւ կասկած չունինք բայց բան մը կրնայ պատահիլ...: Հետապնդումները թեթեւցած կը թուին, թէեւ լրտեսները միշտ կը գործեն եւ հաւանաբար շատ չ'ուշանար նոր ձեւի հնձում մը: Առժամեայ օրէնք մը մշակուած է, որով պիտի լուծուին ամէն ձեւի կազմակերպութիւններ: Դեռ իրատէն³¹ ելած չէ:

Հմայեակ եպիսկոպոսի եւ Ոսկան Մարտիկեանի ձերբակալումը սխալ է:

Գիսակը եւ Զօհրապը պատրիարքին միջոցաւ պիտի խնդրեն որ Ազատամարտի դրամարկը յանձնուի խմբագիրներու ընտանիքներուն ապրուստ տալու համար. որքան ստուգեցինք 400-450 ոսկի դրամ կայ: Ընկ. Ռուբէնը³² յաջողեցրէ Պիլեծիկէն երկտող մը ղրկել [որպէսզի] գաճախէն³³ դրամին 100-ը իրենց ղրկենք. մնացածն ալ իրենց ընտանիքներուն:

Զեր ծանուցած 10000 Ֆր.ը ղրկուած է թէ ոչ, չգիտենք. եթէ այո, ուրեմն կորսուած է, քանի որ Մարգպետն³⁴ ալ ձերբակալեցին: Ամէն պարագայի մէջ, այդ գումարը, կամ Ամերիկայի 5000 տոլարը հեռագրով ղրկեցէք հայկ. պանքայի տնօրէն Թազուր Սուքիասեանի, որպէսզի թէ ընտանիքներուն օգնենք եւ թէ երկրի անմիջական պահանջները գոհացնենք:

Նամակի հասցէները պահեցէք. Մանիչակ Ապաճեանը, R[obert] College-ի Սամուէլօֆը. Դարբինեանին մի ղրկէք նամակ կամ դրամ: Նկատի ունեցէք նաեւ դարձեալ Առնաուտքեոյի ամերիկեան քոլէճի աշակերտուհիներէն օր. Արուսեակ Պոսթանճեանը: Այս երեք հասցէներն ալ ապահով են, միայն թէ աղջիկներուն միշտ

26.- Գիսակ – Վարդգէսի մէկ այլ ծածկանունը, Սերեկիլիւսեան Յովհաննէս:

27.- Իսմայիլ Դանալոյթ, թուրք գաղտնի ոստիկանութեան պետ:

28.- Վանայ Իշխանն է, Պողոսեան Նիկոյ:

29.- Կոմս – Փափագեան Վահան:

30.- Գալֆա – Գալֆայեան Յարութիւն:

31.- Հրամանագիրը:

32.- Ռուբէն – Չարդարեան Ռուբէն, խմբագիր «Ազատամարտ»ի:

33.- Դրամարկիւն:

34.- Մարգպետ – Ղազարոսեան Ղազարոս:

ընտանեկան քաղցր՝ քրոջ եւայլն նամակներ գրեցէք. սիրահարական չըլլայ, Սուրէն եւայլն անուներ մի գործածէք...: Ձեր նոր հասցէները, որպէսզի թերթին համար ալ թղթակցութիւններ ղրկենք: Ինչ որ կը գրենք մարմնին, անշուշտ նոյնութեամբ չէք հրատարակեր թերթին մէջ: Նիքոլոֆը ձեր կողմն է: Եթէ կրնաք, ղրկեցէք մեզի ինչ որ յարմար կը տեսնէք: Հարկաւ մեր կազմի մասին տեղեկութիւն տուած էք բարձր Մարմնին³⁵:

Ժողովուրդի եւ աքսորականներու կեանքի ապահովութեան համար որոշեցինք որ դիմումը այսպէս ըլլայ:—

Ժընեւէն՝ Արեւմտեան բիւրոյի միջոցաւ լուրջ եւ կտրուկ ազդարարութիւն մը ուղղել Օսմ. դահլիճին, ըսելով որ եթէ մէկուն կեանքը վտանգուի, գիտցած ըլլաք որ

լաք որ տասնապատիկ կը հատուցանենք պատերազմը վերջանայ թէ ոչ, Պոլիս ըլլայ թէ Պաղատա: Ձանացէք որ ուուուցիկ բան մը չըլլայ, տաք գլուխի գործ է չըսեն, այլ համոզուին թէ իրապէս կ'ընենք այդպէս: Նոյն իմաստով communiqueներ³⁶ ընելու է բոլոր չէզոք պետութեանց դեսպաններուն:

Յաջորդ նամակով բանալիներ եւ հասցէներ կու տանք օրուան լուրերը իմանալու համար: Եզրիպտոսի եւ Պալքանի մասին ձեր պահանջները չենք կրնար գոհացնել, ինչպէս գիտէք: Հետաքրքիր եղէք Վանի մասին եւ օգնական ոյժ հասցնել տուէք:

Լեաբովի³⁷ հետ ջանացէք յարմարցնել, շատ կարեւոր է: Թէ մեր տուած հասցէները եւ թէ նամակի թուղթերը փոխն ի փոխ գործածեցէք. միօրինակ չըլլան:

Ընկերական բարեւներով
Վիշապի կողմէ
ԱՐՇԱԻԻՐ

Նամակները գրողները նոյնն են. գիրն է փոխուած, չկասկածիրք: Օտար հասցէներ ալ տուէք:

35.- Խօսքը կը վերաբերի Պոլսոյ մէջ Առժամեայ մարմնի կազմութեան առթիւ Բիւրոն տեղեակ պահելու հարցին:
36.- Ֆրանսերէն հաղորդագրութիւններ: Խնդրոյ առարկայ «ազդարարութիւն» ուղարկուած թուրք կառավարութեան տեսնել էջ 59-62:
37.- Լեաբով – մակեդոնացի յեղափոխական ղեկավար դէմք, բարեկամ Դաշնակցութեան. կը գործածէր Չաւէն Արշակունի ծածկանունը:

Փաստ. 63-45

7.— «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

2 Մայիս 1915

Սիրելի ընկերներ!

Կը հաստատենք մեր N° 136, 139, 143 եւ 148 նամակները: Վերջին նամակից անմիջապէս յետոյ, հեռագրել ենք ձեզ երկրի տխուր վիճակի եւ կատարուելիք եւ կոտորածների ուրուականի մասին, եւ յանձնարարել հարկ եղած միջոցները ձեռք առնէք ամերիկական կառավարութեան միջոցով: Նաեւ որ՝ մեր N° 143 նամակով գրած ենք եւ բացի դա թւում է որ Պոլսոյ գրութիւնների պատճէնը ձեզ ալ ուղարկուած կը լինի. հետեւապէս տեղեակ լինելու էք ամբողջ տխուր իրականութեան: Մենք եւս հաւանականաբար մի քանի օրից հեռագրական դիմում անենք Վաշինգտոն: Սպասում ենք դրամի հեռագիրը ուղարկելու համար, որովհետեւ ուղարկուելիք հեռագրների գումարը, Ամերիկա եւ Ե-

զրպտոս, 200 ֆրանքից անցնում է: — Արդէն հեռագրել ենք իտալական արտ[աքին] գ[ործերի] նախարարութեան, Թիֆլիս՝ Հորիզոնին, Բաբաջանեանին, Մեսրոպեայ[իսկոպոս]ին, Արղութեանին՝ ինչով որ կարող են օգնութեան հասնեն Երկրի դրութեան:

Ըստ երեւոյթին Պոլսում էլ խստութիւնները հայերի դէմ չափը անցնում են. տեղական Journal de Genève-ում հեռագրական տեղեկութիւն կար 2 օր առաջ, որ իբր թէ Պոլսում 400 հայեր (ականաւոր անձինք) ձերբակալուած են: Լուրը ստուգուած դէպքում մեզ թւում է որ պիտի ենթադրել անխուսափելիօրէն նաեւ մերոնցից նրանց մէջ լինելը:

Ընկերական բարեւներով
ԴՐՕՇԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՆ

Փաստ 882-61

8.- ՎԱՐԴԳԷՍԻ ՆԱՄԱԿԸ (Պոլսէն) ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ

21 Ապրիլ, Պոլիս

Պոլիսէն ուղարկուած այս նամակը անստորագիր է, բայց ձեռագիրը կը պատկանի պետական երեսփոխան Վարդգէսի, որ տակաւին ձերբակալուած չէր:

Ընկերներ,

Կը հաստատենք մեր ապրիլ 14 [եւ] 17 թուակիրները մինչեւ այսօր ոչ մէկ պատասխան ստացած չենք եւ կը կասկածինք որ մեր նամակները չեն հասած, կամ դուք կը դանդաղիք, ինչ որ չափազանց վրդովեցուցիչ է այս պարագաներու մէջ: Ստիպողաբար կը սպասենք առաջին նոր եւ օտար հասցէներէ. 2) դրամի, 3) լուրի, 4) ձեր հրահանգներուն:

Տարագիրներն ու ընտանիքները հեռագիրներ կը ստանան հետզհետէ (մանաւանդ Չանգրիէն եւ Էնգրիւրի կողմերէն), բայց մինչեւ այս պահուստ ոչ մի հեռագիր կայ մերիններէն: Կամ այն է որ հեռուները կը ղըրկեն քայելով, կամ բանտարկուած են: Երկու օր էլ սպասելու է, յետոյ ուրիշ միջոց պիտի խորհինք: Երէկ երկու տրէն³⁸ էլ ղըրկած են, որով բանտը մարդ մնացած չէ կը կարծենք: Չերբակալումները չեն դադարած, թէեւ թուլցած են: Երէկ 40 հոգի բռնեցին: Վահագի³⁹ նշանածին տունը խուզարկուեցաւ ուրբաթ օր շատ մանրակրկիտ, երկու ժամու չափ. խեղճ աղջիկէն ստորագրութիւն մըն ալ առեր են:

Տարագիրներու ընտանիքները սկսած են դրամ խնդրել. շտապեցէք մեր տուած հասցէին հեռագրով փոխադրել հայ պանքայի տնօրէն Սուքիասեանին տրամադրելի գումարը:

Ազատամարտի 450 ոսկին ստանալու յոյս չկայ: Պատրիարքը բոլորովին անզօր է եւ միշտ եւ միշտ կը խաբեն: Ամերիկեան դեսպանը Թալէաթին հարցումներ էր ուղղած. պատասխաներ է թէ ասիկա ոստիկանական գործ է եւ բարեկամաբար խնդրեր է որ չխօսի այս մասին: Թուրք եւ գերման կը հաւատացնեն թէ Վանը ետ

առնուեր է 12 օրուայ կռիւէն յետոյ: Իշխանը²⁸ սպանւած է իբրեւ բանագնաց ղըրկուած ատեն. ոչ մի լուր ունինք:

Սեւ Բլուրէն⁴⁰ նամակ առինք ապրիլ 6 թուակիր. սարսափելի բաներ կը պատմեն. գիւղերու մէջ դժոխային տանջանքներով գէնք կը փնտռեն. կիրներու ծիծերը կը ճեղքեն, այրերու ակռաները եւ եղունգները կը փրցընեն աքցանով, կուրծքը եւ ոտքերը կ'այրեն. 8-12 տարեկան աղջիկներն անգամ կ'անպատուեն: Գիւղացիները յուսահատ իրենց ունեցած կովը կամ եզը ծախելով չերքէզներէն գէնք կը գնեն եւ կը յանձնեն. քաղաքներ եղած են չերքէզներու ----⁴¹:

Յայտնապէս բողոքողները կը բանտարկեն: Առաջնորդը այս լուրերն անգամ չի կրնար հաղորդել: Իմացուցինք պատրիարքին որ մեր տղաքը բանտն են դեռ. ոչ իսկ հարցում մը եղած է: ----⁴¹ կը դատուին եւ կը գանակոծուին:

Սուրէնը, Եղոն եւ Բիծան⁴² ապահով են: 50 ոսկի դրամ կը պահանջեն հեռագրով. կը սպասենք ձեր չէքին: Շապին-Գարահիսարի բոլոր գիւղերը բռնի գինաթափ արած են: Ամէն տեղ հեռագրեցէք:

Իթիֆհատ լուրեր է տարածել խուժանի մէջ թէ հարիւրաւոր ուռմբեր, հրացաններ գտնուած են, թէ հայերը թիւնէլ բացած են Պոլսոյ վառօդարանի տակ եւայլն: Ըսենք անգամ մըն ալ որ իր պրպտումները յանգած են ամէն տեղ Փրասկոյի եւ հիմա կնտրիկներու կը դիմեն բան մը ստեղծելու համար: Հետապնդումները թէեւ թեթեւցած են մէկ ալ այն պատճառով որ այս միջոցին չափազանց զբաղուած են պատերազմով. գիշեր ցերեկ հազարաւոր վիրաւորներ կը հասնին. առաջին թափօրը 36000 կ'անցնի: Ոչ բժիշկ կայ եւ ոչ դեղ: Գրեցէք թէ որքան կրնայ տեւել այս վիճակը եւ քաղաքին անկումը պիտի կրնաք մի երկու օր առաջ հաղորդել:

Ազդարարագիրը հեռագրել տուի՞ք ժընեւ. շատ ուշ մնացեր ենք արդէն: Կը կարծէ՞ք որ օգուտ ունենայ մարդ ղըրկել Բերլին Հայ-գերման կոմիտէին միջամտութիւնը խնդրելու կամ այս ընթացքին հետեւանքները զգացնելու համար: Հեւիհեւ կը սպասենք[ք] ձեր եւ ձեր միջոցով բարձրագոյն մարմիններու կնդիկասիտններին⁴³:

Գրեցէք երկու աղջիկներու հասցէին փոխնիփոխ:

38.- Շոգեկաք:
39.- Վահագ՝ ծածկանունն է Վռամեան Արշակի: Նշանաձը՝ Օր. Ֆլորա:
40.- Սեւ Բլուր – ծածկանունն է Սեբաստիա-Սըվազի:
41.- Անրնթեռնելի մէկ բառ:
42.- Սուրէնը ծածկանունն է Սեբաստացի Սուրբատի (Խրիմեան-Տօնիկեան): Բիծան՝ Յովհաննէսեան Սկրտիչ, աւելի ուշ ձերբակալուեցաւ եւ կախուեցաւ Սեբաստիոյ մէջ. Եղօ՝ Չիմառացի Եղօ, բուն անունով Փափագեան Պօղոս, Սուրբատի եւ անոր խումբին հետ լեռ բարձրանալով ու կոիւնէր մղելով հասաւ մինչեւ Ռիզլէ, ուր եւ նահատակուեցաւ:
43.- Ֆրանսերէն՝ ցուցմունքներում:

Ռոբերտ կոլէճի հասցէն մի գործածէք առ այժմ. ուրիշ հասցէներ կը տանք երբ ձեզնէ լուր առնենք: Նիկոլոֆը տեսա՞ք:

Կը խնդրեմ անգամ մըն ալ կէտ առ կէտ նկատի առնել մեր գրածները եւ անյապաղ գրել: Մենք ստիպուած

ենք սպասել դէպքերու ընթացքին եւ ըստ այնմ հրահանգած են տղաքը: Ամբողջ հոգսը քանի մը ընկերոջ վրայ մնացած է, որոնց նամակներն էլ կը փնտռուին:

Սեւ Բլուրի նամակի մէկ էջը անընթեռնելի էր:

Փաստ. 63-46

9.- «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԷԻՆ

Ժընև, 6 Մայիս 1915 [նոր տոմար]

Ընկերներ!

Կը հաստատենք մեր 25 Ապրիլի N° 144 եւ 29ի N° 149 գրութիւնները, որից յետոյ ստացել ենք ձեր երեք հեռագիրները. ընկերներ Ձաւրիւ եւ Կարոյի⁴⁴ բանակցութիւններ, Պոլսոյ դրութեան եւ երկրի կացութեան առթիւ: Երէկ հեռագրել ենք որ դիմում ենք Վաշինկտոն: Դիմումներ արել ենք երկու անգամ, ընդարձակ հեռագիրներով Իտալիոյ արտաքին գործոց նախարարին եւ մի ընդարձակ հեռագիր Ամերիկայի արտ. գործ. նախարարին Վաշինկտոն: Բացի դա՝ երկրի եւ Պոլսոյ դրութեան առթիւ տրուած հեռագիրները անմիջապէս յայտնել ենք հեռագրով Թիֆլիզ Մեսրոպը եպիսկոպոսին, Արղութեանին, Սամսոն Յարութիւնեանին, Բաբաջանեանին եւ Հորիզոնին. հեռագրել ենք նոյնպէս Ամերիկայի Կ. Կ[ոմիտ]էին եւ յանձնարարել հարկ եղած դիմումները իրենք եւս անեն ամերիկական կառավարութեան: Տաճիկ կառավարութեան դիմումը գտնում ենք անյարմար ներկայ պայմաններում, եթէ իրօք՝ որեւէ դրական քայլ անել հնարաւոր լինի Պոլսում, դա ամերիկական ու իտալական կառավարութիւններն են որ պիտի կարողանան անել: Ի նկատի ունենալով կրիտիկական ըրպէն, ինչպէս որ հեռագրել ենք, այժմ էլ գրաւոր հաստատում ենք, որ Պոլսից ստացած տեղեկագիրները մեզ հետ միասին ուղղակի հեռագրէք նաեւ

Տփլիս, Ամերիկա եւ Գահիրէի մարմիններին չյապաղեցնելու համար ձեռք առնելիք միջոցների աշխատանքները: Ինչ վերաբերում է կառավարութիւններին անեւելիք դիմումներին, տեղիցս կ'անենք այդ դիմումները: Թիւրիմացութիւններից զերծ մնալու համար, այսուհետեւ հեռագրելիս, հեռագրեցէք նաեւ թէ որով կողմից է դիմում կամ յանձնարարութիւնը — Ձեր՝ թէ՞ Պոլսոյ մարմնի կողմից. աւելի լաւ կը լինի երբ առաջարկ կամ յանձնարարութիւնը ձեր կողմից է, այդ դէպքում միայն հեռագրեցէք, միւս դէպքերում արդէն մեզ հասկանալի կը լինի Պոլսից լինելը: Այս բոլորի մասին երէկ արդէն հեռագրել ենք: Սպասում ենք ձեր հեռագրած նամակին, Փաշայի⁴⁵ հետ բանակցութիւններ վարելու ձեռնպահ մնալու առթիւ: Գրեցէք երկրի եւ Պոլսոյ դրութեան առթիւ ստացած մանրամասնութիւնները:

Կողմնակի աղբիւրից տեղեկացանք որ ընկեր Ձ[աւրիւ]ը արդէն Լոնդրա է իսկ Կ[արո]ն դեռ չէ եկած:

Պ. Լոնդէն մի նամակով յայտնում է որ զանազան խոչընդոտներ ստիպել են իրեն, իւր ուղեւորութիւնը Յաբաթով յետաձգել:

Ընկերական բարեւաններով «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Յ. Գ.— Ուղարկեցէք նաեւ Վառնայի հասցէն. ընկ. Վարանդեանի յանձնարարած գրքերը Բալկաններում բոլորը ուղարկւում է, իսկ Վառնա ո՛չ, որովհետեւ հասցէ չէին տուած:

44.- Արմէն Գարոյի (Փաստրմաճեան Գարեգին):
45.- Պօղոս Նուպար փաշայի:

Փաստ. 1158-107

10.– ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, ԺՂՈՒ

Սոֆիա, 24 Ապրիլ 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր 11 ապրիլ եւ N°... թուահամար նամակը որով երկրի կացութեան մասին զանազան տեղեկութիւններ կը տայինք: Սրանից մի քանի օր առաջ Պոլսէն ստացանք մի նամակ, որը կը գուժէր տխուր բօթը. մեր ընկերները բոլորն ալ ձերբակալուած են եւ էնկիւրի կամ Գոնիա աքսորուած են (այդ դեռ մեզ ծանօթ չէ): Ներփակ ուղարկուած «Հայաստանի» մէջ կը կարդաք ձերբակալութեանց մանրամասնութիւնները: Երկար ատենէ ի վեր մեր ընկերներին հանդէպ տեղացող սպառնալիքը այժմ իրականացաւ: Մենք մեր կողմէ հեռագրեցինք Կովկաս, Ամերիկա եւ Եգիպտոս ու ձեզ, որ բողոք բառնաք չէզոք պետութիւնների մօտ՝ Հայաստանի, Պոլսոյ ժողովրդին եւ ձերբակալուածների կեանքը ապահովելու համար: Այժմ մեր ջանքերը եւ մեր կորովը պէտք է կրկնապատկենք, դիմագրուելու համար նոր գոհողութիւնների առաջ: Առ այժմ սա բացորոշ է որ դրամի մեծ կարիք կայ, թէ աքսորուած ընկերներու, նրանց ընտանիքներուն եւ Երկրի ընկերներուն հարկաւոր շուտափոյթ օգնութեան [համար]:

Մեր ընկերները դեռ չձերբակալուած, ապրիլ 6 թուակիր մի նամակ ստացանք, որի բովանդակութիւնը ստորեւ կու տանք.—

«Երկիրը արդէն ապստամբական վիճակի մէջ է. չորս կողմը սկսած Զէյթունէն, Մուշ, Պիթիւս եւ Վան. բազմաթիւ ընդհարումներ են յաջորդում մէկը միւսին: Այրուել ու թալանուել են բազմաթիւ գիւղեր. հազարաւոր ժողովուրդ մնացած է անտուն, անհաց: Կռուողներ նիւթական մեծ տազնապի մէջ են եւ եթէ դրամ լինի իրենց օրինաւոր ինքնապաշտպանութիւնը էլ աւելի լաւագոյն հիմքերի վրայ կը դնեն, բայց արտասահմանի մարմինները, մի չափազանց թիւր հասկացողութեամբ, իրենց օժանդակութիւնը տալիս են միակողմանի կերպով, այն է՝ Կովկաս կամ Ազգային բիւրոյին եւ կամ գաղթականներին: Մենք չենք հասկանում թէ ինչ կը մտածեն մեր արտասահմանի մարմինները. աւելի անհրաժեշտ է Երկրի ներսը նիւթական ու բարոյական եւ այլ ոյժեր կեդրոնացնել. ընդհակառակը բոլորովին երեսի վրայ են թողել Երկրի ընկերներին: Մուշէն, Վանէն, Սըվազէն եւ այլ վայրերէն օժանդակութիւն կ'ուզեն, իսկ մենք անոնց շարունակ խօսքով ենք կերակրում: Մինչեւ հիմա հազիւ 3-400 ոսկու օգնութիւն ենք

հասցրել երեք վայրերին: Ներկայ պարագաներում սա շատ ողորմելի գումար է: Օգնութիւնը պէտք է լինի 2 տեսակ. Ա) զուտ կազմակերպական. Բ) ժողովրդի համար:

Մուշում փախստական դարձան մեր ղեկավար եւ գինուորական ու մտաւոր ուժեր: Ռուբէնը, Տիգրանը, Կորիւնը եւ միւսները 5 օր Առաքելոց վանքը ապաստանելէ եւ զապիթը եւ մի քանի զօրք սպաննելէ յետոյ անցնում են Սասուն: Միւթեսարը՝ պահանջել է Վահանէն որ եթէ Ռուբէնը չվերադառնայ քաղաք եւ զօրքերի հետ ընդհարում ունենայ, Դաշնակցութիւնը քաղաքակառայէս պիտի վարկաբեկուի: Ի հարկէ Ռուբէնը չի կարող վստահել եւ վերադառնալ: Վահանի դրութիւնը շատ ծանր է եւ նրա վրայ նայում են իբրեւ պատանդի: Մեր ընկերների լեռ բարձրանալովը կառավարութիւնը շրջակայ գիւղերու ունենքը գանակոծած են իմանալու համար թէ ովքեր էին Առաքելոց վանքի կռուողները, եւ ամէն տեսակ բռնութիւններ ի գործ դրած: Մշոյ դաշտի մէջ Յրօնք գիւղը, 300 տնէ բաղկացած, բոլորովին թալանուած է եւ տների մէկ մասը վառուած. 95 հոգի բնատարկած են եւ 18 հոգի սպաննած: Նոյն վիճակումն է նաեւ Գոմար:

Վասպուրականում էլ խժոժութիւնները օրէ օր կը սաստկանան: Կառավարութիւնը վառել տուեց թիմարի էրերին 300 տնէ բաղկացած հարուստ գիւղը հետեւեալ պատճառներով.— Առէնի երիտասարդները Բշարէ Զաթոյի որդուն սպաննելէ եւ նրա միլիսը ցրելէ յետոյ նաևով անցնում են այդ գիւղը. գինուած գիւղացիները ցանկանում են հեռանալ գիւղէն, բայց գոլչիները⁴⁶ նկատում են եւ սկսում է կռիւ. ոչ մի վնաս ունէ կողմից. ատոր վրայ միւթեսարը՝ ուզելով Աթանանի կռուի վրէժը լուծել զօրք է ուղարկում եւ գիւղը վառել տալիս: Արճակցի փախստականներ չեն իմանում այդ բանը, այլապէս կառավարութեան համար շատ աղէտալի կը լինէր այդ բանը: Վառմեան ատոր վրայ մի երկար հեռագրով ուղղուած էնվերին եւ թալէաթին եւայն՝ բացատրել է դրութիւնը եւ պահանջել է որ [եթէ] էրերինի նման ուրիշ դէպքեր յառաջ գան, հայերը ստիպուած կը լինեն լեռները բարձրանալ եւ դուք ձեր դէմ պիտի ունենաք հայկական հարցը: Այդ կռիւներէն

46.- Թուրքերէն՝ մաքսատան պաշտօնեաները:

վառուած տները վնասը կը հասնի 10.000 ոսկիէն աւելի»:

Սրվազի շրջանում էլ սպասուում է ընդհարումներ: Կուսակալը մի խելագար անձնաւորութիւն է. նա է որ սարքեց Օտապաշեան վարդ[ապետի] տեւորը: Վերջերս էլ մի ինչ որ պատրուակով կը ձեռնարկէ դաշնակցական եւ հնչակեան դեկավարներին ձերբակալել: Պատրուակը — գերի մի ռուս սպայի անհետանալն է, որի մասին մերոնք ոչ մի լուր չունեն. ասոր վրայ ընկեր Փոլատ[եանին] եւ դեղագործ Վարդանեանին ձերբակալած են. զինուած ժանտարմները գնում են Մուրատին բերելու. նա փախուստ է տալիս: Այժմ այդ շրջանում փախստական են Մուրատ, Եղօ, Բիծա եւ Վարդան Շահպազ, իսկ Շապին Գարահիսարէն՝ Հմայեակ Հիւսիսեան-Գարակէօզեան^{46բ}: Կուսակալը ասել է՝ ուր որ հանդիպինք Մուրատին, այն գիւղը չոր խոտի պէս պիտի վառենք: Փախստականները լեռներն են ապաստանել: Շնորհիւ հայ լրտեսներու կառավարութիւնը կարողանում է Յ հայ գիւղի [մէջ] ձեռք անցընել 140 գէնք Շ. Գ[արահիսարի] շրջանում. այդ միջոցներին կը դիմէ նա Սրվազի շրջանում, բայց բարեբախտաբար մեծ արդիւնքի չեն կարող հասնել:

Զէյթունի ըմբոստներին համար, որ խաղաղուեն եւ գէնքերնին վար դնեն, կառավարութիւնը ուղարկում է Մարաշի մի քանի երեւելիներ: Զէյթունցիք անոնց վռնտում են: Կառավարութիւնը թնդանօթներ եւ զօրք է ուղարկում: Ապստամբները, վանքի մէջ փակուած, գիշեր ատեն խարոյկներ կը վառեն զանազան տեղեր եւ կեղծ փախուստի կը դիմեն: Հրամանատարը խրախուսուած հրաման է տալիս յարձակման. ահա այդ տեղ է որ հրամանատարը եւ հարիւրէ աւելի զօրք կը սպաննուի: Այդ դէպքէն յետոյ, ապստամբները քաշ-

46ա.- Ուղիղը՝ Վահան Հիւսիսեան եւ Հմայեակ Գարակէօզեան:

ւած են լեռները:

Մի բան նկատելի է Զէյթուն, Վան, Մուշ. ուր որ ընդհարումներ են տեղի ունեցել, հոն կառավարութիւնը առժամապէս մեղմացել է: Չնայած այդ մասնակի եւ ժամանակաւոր մեղմացումներին, ամէն տեղ հայալինջ քաղաքականութիւնը առաջ են տանում անհաւատալի չափերով: Ապտիւլ-Համիտի ատեն այսքան ծանր չէ եղած հայ ժողովրդի վիճակը քան այժմ. այդ են վկայում բոլոր նամակները:

Ձանազան միջոցներով դիմուած է ամերիկեան դեսպանատան եւ իտալականին, ցուցնելով հայերի անտանելի վիճակը եւ կոտորածի մղձաւանջը: Լսեցինք որ արդէն կառավարութեանը դիմում եղած է այդ մասին. դուք էլ ձեր կողմէն պէտք եղած դիմումները արէք որ պէսպի ազդեն Պոլսի ժողովրդին վրայ, այլապէս շատ ծանր ու խոչոր դէպքեր կրնան տեղի ունենալ:

Ընկ. բարեկենդրով
Հ.Յ.Դ. Պ[ԱԼՔԱՆԻ] ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Յ. Գ.— Ձեր վերջին նամակը, 149 թիւ — 29-IV, հիմա ստացանք: Ձեր դիմումի մասին ընդարձակ հեռագիրներ ենք ուղարկած. կը յուսանք թէ մինչեւ հիմա ըրած կը լինիք Օսմ[անեան] դահլիճին ուղղուած ազդարարագիրը. լաւ եւ ազդու կերպով խմբագրուած կը լինի անշուշտ: Մի քանի օր առաջ նաեւ — 454 թիւ Ձաւրիեւի մասին նամակ եւ Կովկասէն եկած սուրհանդակի միջոցաւ տեղեկագիր այդ մասին. այդ գրութիւնները որ շատ կարեւոր են եւ նաեւ ազդարարագիրը, կը յուսանք թէ այդ մասին անմիջապէս մեզ տեղեկակ կը պահէք ձեր անելիք քայլերու մասին: Միքայէլը Թիֆլիս է. հեռագիր ստացանք մի քանի օր առաջ Վրացեանէն: Բոլոր նամակներուն ստանալնիդ իմացուցէք:

Փաստ. 882-10

11.– ՊՈԼՍՈՅ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄԵՆ ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 28 Ապրիլ 1915

Ընկերներ!

Վերջապէս ստացանք ձեր Ապրիլ 18 թուակիրը, իբրեւ պատասխան մեր առաջին նամակին. յաջորդ մըն ալ ձեր բարեկամին միջոցաւ ստացանք երկրորդ նամակը յարակից թղթերով:

Կը փութանք պատասխանել ձեր բոլոր հարցերուն, պայմանաւ որ դուք ալ արագօրէն գոհացնէք մեզ, գէթ նամակներուն շուտ շուտ պատասխանելով: Տեսէք, տակաւին լուր չունինք մեր ապրիլ 17 եւ 21 թուակիրներէն, մէկը՝ թերթով: Շաբաթ օր այնքան մտահոգ էինք պատասխան չստանալնուս, որ նամակ մը պատրաստեցինք՝ մեր բարեկամ բժշկին միջոցաւ զրկելու համար, բայց յետոյ մնաց, որովհետեւ երկու նամակ մէկէն առինք: Մենք գրելէն չէ որ կը տաղտկանանք, այլ միշտ կասկածի մէջ ենք հասցէի մասին, եւ դուք առաջին նամակով նորէն նոյն միտումնաւ հասցէն կը ցուցնէք: Պարզ է որ ինչքան շատ հասցէ ունենանք, այնքան շատ նամակ կրնանք գրել:— Այս մասին լրջօրէն խորհելով, շտապեցէք մեզ զրկել ոչ միայն քանի մը ապահով հասցէ, այլեւ քանի մը երեւելի պուրկարներու հասցէն, որ պէտքի նեղ պարագային անոնց հասցէով զրկենք, եւ անոնց դեսպ[անատան] մասնաւոր սուրհանդակով առանց ծանօթ հասցէի այս դիւրութիւնը չեն տար մեզի: Ուրեմն պիտի տաք օտար հասցէներ՝ սովորական հասցէներու կարգին, որպէսզի նամակները երբեմն ալ օտար լեզուով ըլլան: Մեր հասցէները պահեցէք առայժմ, — երկու աղջիկներուն:

Կարգով կը պատասխանենք ձեր հարցերուն:

1.- Ընկերներէն հեռագիր ստացանք, առայժմ Զարդարեանէն ու Շամիրէն, որ կը գտնուին Այաշ, Հրաչէն՝ Չանդրը: Միամանթօ, տոթթ. Բարսեղեան ու չէզոքներու մեծ մասը հեռագիր եւ նամակ զրկած են:

Այսօր վերջին պահուն իմացանք, որ աքսորականներէն 30-40 հոգի, անշուշտ անվնասները (Քեչեան, Կավուօզ եւայլն) ետ կը դառնան եւ վաղը Պոլիս պիտի ըլլան: Առաջին առթիւ կը տեսակցինք եւ տեղեկութիւններ կը քաղենք մանրամասնօրէն: Մերոնց երեսուն ոսկի զրկեցինք հեռագրով, Ոսկանէն մեր փոխ առած 50 ոսկի դրամէն, որուն մէկ մասն ալ բաժնուած է տարագիրներու ընտանիքներուն: Կարելին ըրած ենք առձեռն միջոցներով գոհացնելու պահանջները, որոնք շարունակ կ'աւելնան: Նկատեցէք, որ Երկրի պէտքերուն չենք կըր-

նար պատասխանել տակաւին: Սեւ Բլուրէն⁴⁰ 50 ոսկի պահանջներ էին ստիպողաբար. կը սպասենք ձեր չէքին, որուն համար եկած օրն իսկ հեռագրեց ձեր բարեկամը: Գիսակը²⁶ որ այժմ ազատ է, քանի մը օր առաջ այցելութեան գնաց Իթիհատի ընդհ. քարտուղար Միտհաթ Շուքրիին: Տեսակցութիւնը շատ սիրալիր է եղեր... զարմանք յայտնեմ են, որ չ'երեւար մինչեւ հիմա...: Այդ պահուն դեռ մեր ընկերներէն լուր չունէինք. խոստացեր է ոչ միայն լուրեր բերել տալ, այլեւ ետ ստանալ եւ վերադարձնել Ազատամարտի 450 ոսկին, որուն համար Հրաչն ալ հեռագրած էր երէկ: Քարտուղարը թելադրեր է, որ Թալէաթին երթայ. երէկ Գիսակը գնաց նորէն, դրամի խնդիրը Թալէաթը պիտի կարգադրէր իբրեւ թէ այսօր: Թալէաթն ալ մեղրածորան խօսքերով գոցեր է մեր ընկերոջ բերանը, հարցուցեր է թէ ինչո՞ւ չի տեսնուիր Պետրիին հետ եւայլն: Այս բոլոր փաղաքշական վերաբերումներուն մէջ, մենք որոշ կը տեսնենք զարհուրելի դաւադրութիւն մը, որուն արձագանգները կը հասնին արդէն Շամէն⁴⁷, ինչպէս պիտի տեղեկանաք քիչ յետոյ:

Հետապնդումը մինչեւ վերջին օրերս կը շարունակուէր. այժմ պիտի սկսին գէնքերու պատրուակով հալածանքի մը, որ չենք գիտեր ինչ հանգամանք պիտի ունենայ: Փաստը այն է, որ մեր ստրուկները խումբ խումբ կը տանին կը յանձնեն ինչ որ ունին: Սարսափի են մատնուած բոլորը: Միայն այսօր կը մտածեն, հակառակ դառն փորձերու եւ ազդարարութիւններու: Ի՛նչ խօսք, որ միայն քրիստոնեաներու գէնքերը կ'առնեն, իսկ իսլամներունը ետ կու տան երբեմն յայտնապէս, բայց միշտ երեւոյթները փրկելով:

Ինչպէս գրած ենք, շարքերը կը մնան անվթար, թէեւ ստոյգ լուրեր ունինք, որ նոր ցանկ մը կը պատրաստուի բազմաթիւ երիտասարդներ հաւաքելու այս կամ այն պատրուակով: Ազատ ընկերներէն մէկն է Մերձանը եւ միւսը Շաւարշը. նոր ընկեր մըն ալ պահած ենք եւ երեքնիս մէկ կը վարենք գործերը խորհրդակցութեամբ Գիսակին⁴⁸: Մեր գլխաւոր ջանքերն եղան ապա-

47.- Շամ – կուսակցական ծածկանուն Վանի:
48.- Մերձանը Գրիգոր Մերձանօֆ կամ Մերձանեանն է (Ռուզան). Շաւարշը՝ Միսաքեան Շաւարշ, Արշալիր ծածկանունով. «նոր ընկերը» հաւանաբար Դարբինեան Սամուէլն է: Երեքը միասին կը կազմէին Վիշապի (Կ. Պոլիս) Առժամեայ մարմինը, որ երեսփոխան Վարդգէսի (Գիսակ) խորհրդակցութեամբ պիտի վարէր աշխատանքները:

հովել տղաքը, ապահովել յարաբերութիւնները, պահեստները, արխիւները: Գոհ ենք յայտնելու, որ ինչքան կրցանք համոզուելի, մեր ձեռքին տակ եղած փաստերով եւ ծանօթութիւններով, համարեա ոչ մէկ կենսական գաղտնիք յայտնուած է. եթէ այսուհետեւ բան մը պատահի, անպատճառ մատնութիւն պէտք է ըլլայ:

Երկրի հասցէները կ'ապահովենք հետզհետէ: Գրած ենք նամակներ Բարձրաբերդ⁴⁹, Կիլիկիա, Սեւ Բլուրին: Այսօր նամակ ստացանք Աւագանէն⁵⁰, որու մասին վարանման մէջ էինք: Շամի հետ կապ չկայ առայժմ: Գրեցինք երկրորդ անգամ Բարձրաբերդին՝ լուրեր ստանալու եւ տալու. Դուրանի⁵¹ մասին ալ կը թարթափինք տակաւին: Ծանօթ տեղերէն հասցէներ պահանջած ենք անծանօթ կամ կասկածելի վայրերու մասին: Հասցէներու հին տետրակն ալ գտանք, բայց բոլորին չենք վստահիր:

2.- Յարաբերութեան կարեւոր ձեւ մը՝ չէզոք դեպքանատուներն են: Զեր բարեկամը գարմանք յայտնեց, որ մինչեւ հիմա կապ չունինք իրենց մարդոց հետ⁵². անորոշ պատասխաններ տուինք անցեալի մասին, իսկ ներկային համար պիտի ծանօթացնէ Մերձանը (Ռուզան): Ամերիկեանի մասին ալ այսօր մէկը պիտի ներկայացնենք եւ կապուինք. կը մնայ իտալականը, որմէ շատ բան կը սպասենք, բայց դժբախտաբար entremise⁵³ կը պակսի: Պիտի փորձենք: [Բ.] Դրան եւ Պատրիարքարանի համար Գիսակը կը ճանչնանք, բայց կ'երեւայ վարանելու պատճառներ ունի, այնպէս որ պատրիարքին մեզմէ մէկը պիտի երթայ, իսկ միւսը de facto իր գործն է⁵⁴: Ըսենք այս առթիւ, որ ընկեր Գիսակը առայժմ յարմար չի տեսներ ձեր ըրած թելադրութիւնը որեւէ ձեւով հաղորդել Դրան: Իր մէկ երկու տեսակցութիւնները պարզ բարեկամական տեսակցութիւններ են, մեր հարեւաններուն⁵⁵ համար լաւ առիթներ՝ զանգատները լռեցնելու: Մենք կը կարծենք որ ինչքան ալ զգուշութեամբ, բայց անհրաժեշտ է այսպէս կամ այնպէս, մօտենալ հարցին եւ վերսկսիլ նախկին ձեւով հետապնդումները, այսպէս մենք կ'զգիացած եւ օրուան անցողարձէն պէխապար⁵⁶, նորէն յանկարծակիի կու գանք առտուան մէկը: Օրինակ, մէկ երկու օր է ի վեր զրոյցներ կան, թէ Վահաբը կախեր են. ինչպէ՞ս կարելի է ստուգել այս լուրը, բայց միայն ուղղակի դիմելով [Բ.] Դուռ եւ պահանջելով բաց հեռագրի արտօնութիւն: Այս մասին մեր լուրերը հասն[են] մինչեւ Վահաբի ձեռքակալումը:

Միտահաթ Շիւքրին իր տեսակցութեան միջոցին հաղորդեր է, որ Վանի մէջ այնքան զէնք, ռուսներ եւ այլն գտնուած է, որքան չկայ գինարանի մը մէջ: Այս լրբերի ակնարկութիւնը անկասկած կ'ըլլայ ծածկելու համար հրէշային դաւը, որուն զոհ գացած են Իշխանը եւ ուրիշ ընկերներ:

Գրած էինք ձեզի, դարձեալ կը կրկնենք, հիմնուելով մանաւանդ Շամի եւ Բարձրաբերդի վերջին նամակներուն վրայ, որ անհրաժեշտ է ժամ առաջ օգնութիւն հասցնել, Շամը եւ Դուրանը փրկելու համար: Խմբերը⁵⁷ անշուշտ լուր ունին, իսկ եթէ չունին, հարկ է որեւէ գնով զանոնք շարժման մէջ դնել դէպի սահմանը. այս մասին պիտի հեռագրենք ալ, բայց թէ՛ բանալին անբաւական էր եւ թէ՛ կը հաւատանք, որ մեր նախորդ գրութիւնները արդէն ստացած եւ հեռագրած էք, ընդունելով որ ուղղակի սահմանէն անդին ալ հասած չէ օգնութեան ստիպողական ճիշդ:

Ստորեւ, գրեթէ նոյնութեամբ կ'արտագրենք Երկրէն հասած վերջին նամակները, որոնք աղօտ գաղափար մը կու տան իրերու վիճակին եւ գործելու անհրաժեշտութեան մասին:

Ա.— ԿԻԼԻԿԻԱՅԷՆ

Սահմանաբերդէն⁵⁸ կը հաղորդեն ապրիլ 6 թուակառնով (նամակի թուականն ապրիլ 10).— «Ամէն օր 2-300 զէյթունցիներ հոս կը բերուին եւ հազիւ գիշեր մը մնալէ յետոյ, կ'աքսորուին անծանօթ կողմեր: Պանդուկները եւ դպրոցները լիքն են աքսորականներով, որոնք զէյթունցի, Փռնուզցի եւ ալապաշցի ընտանիքներ են: Շրջանը կը պարպուի արագօրէն: Որոշեր [են] վերջնապէս պարպել միւս բոլոր հայ կեդրոնները. թշուառութիւնը աննկարագրելի է, կը մոռցուին պատմական գաղթերը ջալալէտիներէն օրերէն: Կաղեր, ծերեր, պառուաներ, 4-5 տարեկան մանուկներ, բոպիկ եւ հետիոտն, շարան շարան կու գան: Սահմանաբերդի հայութիւնը նիւթապէս շատ կ'օգնէ, ցարդ տրուած նպաստը 1000 ոսկին կ'անցնի: Եկեղեցիներու բակերուն մէջ հասարակական սեղան կը դրուի ազգին կողմէ: Սահմանաբերդի մէջ մինչեւ 37 տարեկաններն զինուորագրուեցան իբրեւ միշտ ամէլէ: Զէյթունի կռուողները՝ յուսահատ, լեռները քաշուած են եւ թուրք գիւղերը կ'ասպատակեն. երկու օր առաջ հոս բերուեցան 50 զէյթունցի երիտասարդներ: Կ'ըսուի թէ պիտի կախուին՝ խուժանը գոհացնելու համար: Կը խնդրենք միջոցներ ձեռք առնել:

49.- Բարձրաբերդ ծածկանունն է Էրզրում-Կարինի. Սեւ Բլուրը ծանօթ է արդէն – Սեբաստիա:
50.- Աւագանը Տրապիզոնն է:
51.- Դուրանը Տարսուսն է:
52.- Իմա՝ պուլկար դեսպանատան կապը:
53.- Ֆրանսերէն՝ միջնորդ, միջնորդութիւն:
54.- «Իսկ միւսը» պէտք է հասկնալ Բ. Դուռը, այսինքն կառավարութիւնը, որուն նոյնպէս պէտք է դիմէ պատրիարքը:
55.- «Հարեւաններուն համար» պէտք է հասկնալ՝ թուրքերուն համար:
56.- Անտեղեակ, ոչ իրագել:
57.- Ակնարկութիւն կամատրակական գումարներուն:
58.- Սահմանաբերդ – կուս. ծածկանունն է Մարաշի:

Սահմանաբերդի մէջ խուզարկութիւնները սոսկայի են: Հաւանաբար ընկեր մը գայ ամէն բան պատմելու» (չէ եկած մինչեւ այժմ):

Այնթապէն 900է աւելի մուհաճիրներ մէկ շաբաթ առաջ ճամբայ ելած են. պիտի տեղաւորուին Ձէյթունի եւ շրջանին մէջ: Տէօրթ-Եոլ ամբողջովին պարպուած է: 16-70 տարեկան բոլոր այրերը իբրեւ ամելէ տարուեցան, մէկ օրուայ ճամբայ հեռաւորութեամբ կ'աշխատեցուն անարգանքներով եւ տանջանքներով: Հակառակող երիտասարդ մը հրացանագարկ ըրին եւ դիակը քաշկուտեցին: Բոլոր զէնքերը հաւաքած էին. գիւղին մէջ մերկ կիներ եւ պառաւներ մնացած են: Հայ մը կախաղան հանուեցաւ Ատանայի մէջ, անգլ. մարտանաւ է ելած լրտեսելու պատրուակով: Ուրիշ տասն ալ բանտարկուած են նոյն խնդրով:

Բ.— ՇԱՄԷՆ⁴⁷

Կը հաստատենք մարտ 23ը (չենք ստացած). 30 մարտ:— Վալին բարեկան կը ձեւանայ: Եկած էր ջախջախելու, բայց մօտէն տեղեկանալով իրողութեան եւ իրականութեան, թիմարի կռիւին, մեր յուսահատ որոշման, եւ թելադրուած կեդրոնի հրահանգներէն, իր որոշումը փոխած կամ յետաձգած է:— Թուրքերն ալ սկսեցին մօտենալ, նոյնիսկ խուլիզանները. առայժմ համաձայնած ենք 50 հոգի տրամադրել ճամբաներու շինութեան համար: Խնդիրը առաջին խումբը պատրաստելն է: Վալին խոստացած է նաեւ դարմանել բոլոր վնասները, միայն կը խնդրէ սպասել 2-3 շաբաթ, որ ատեն պիտի դադրին իրանի գործողութիւնները. երկու կողմէն ալ, այդ երկրին չէզոքութիւնը պահպանել համաձայնած են: Սալմաստը քարուքանդ է, տուները կը մնան, բայց հայերու ապրանքները կողոպտուած են: Յառաջխաղացում մը կը սպասուի Աբաղայէն: Գէթ մէկ օրուան ճամբայ յառաջանալու են խմբերը եւ կամ մէկ մասը, կամ բոլոր խմբերը պէտք է մէկ գծով յառաջանան, փրկելու համար Տարօնն ու Վասպուրականը: Գրեցէք Սարուստան²² եւ ստիպեցէք: Յուսահատ լուրեր կը հասնին Բաղէշէն: Վալին հրամայած է բոլոր գայմագամներուն, փոքր առիթ մը տրուելուն պէս, իջեցնել հայոց գլխուն: Այս դէպքերը կը հաղորդէք եւրոպական մամուլին, դեսպանատուն[երուն], յիշատակագիր-բողոքի ձեւով:

Անհրաժեշտ են այս բոլորը: Հազիւ 3000 անուանական ժանտարմ կայ մեր սահմանին մէջ, անոնք ալ աւելի կողոպտելու կը ծառայեն քան ապահովութիւնը պահելու: Ընդհ. լքում քրտերու մէջ: Այս ալ նպաստաւոր պարագայ մըն է յառաջխաղացման համար:

Թիմարի կորուստն է 1000 ոսկի: Պիտի ջանանք դարմանել տեղական կառավարութեան միջոցաւ: Պատ-

րիարքարանը ստիպեցէք նպաստ ուղարկելու Կարկառ եւայլնի համար: Առաջնորդարանը չի կրնար հեռագրել: Գիսակը թող միշտ շարունակէ իր հետապնդումները եւ հասկցնէ Թալէթին, Խալիլին եւայլն, որ յիմար խաղ մը չխաղան: Կարեւոր լուրերը հեռագրեցէք:

Գ.— ԲԱՐՁՐԱԲԵՐԴԷՆ⁴⁹, 12 ապրիլ (երէկ հասաւ).— Շամէն ստացանք ապրիլ 6 թուականով.— Վալին սահմանէն վերադարձին շատ կը մօտենայ մերոնց: Բայց շուտով երեւան կ'ելլէ. իր բուն նպատակն է՝ «այստեղ կամ հայ պիտի ապրի կամ իսլամ»: Ապրիլ 1ին Շատախում կը ձերբակալեն ընկ. Յովսէփը, ստոր դաւադրութեամբ: Շատախցիները կը կտրեն հեռագրաթելերը, կը պաշարեն կառավարական շէնքը ու կը փորձեն ազատել կալանաւորին. կռիւը կը սկսի յաջորդ օրը: Վալին կ'առաջարկէ, որ փոխ միւտիրին հետ մերոնցմէ ալ մարդիկ երթան դէպքին առաջին առնելու: Մերոնք իշխանին²⁸ կ'ողորկեն ուրիշ երեք ընկերով: Նոյն օրը Հայոց Ձորի Հիրչ [գիւղի] մէջ, փոխ միւտիրին գիշերանց սպաննել կու տայ մեր չորս ընկերները: Յաջորդ առտու կանուխ, երբ դեռ մերոնք լուր չունին, կուսակալը մարդ կը դրկէ ու կը կանչէ Վաւմ[եան]ն ու Արամը. այս վերջինը գործ ունենալով, Վաւմը առանձին կ'երթայ եւ անմիջապէս կը ձերբակալուի եւ իբրեւ թէ Պիթիւս կը դրկուի նաևով: Յետոյ կառավարութիւնը հայոց թաղերէն կը ժողվէ պահակներն ու ոստիկանները եւ կը սկսի պաշարել թնդանօթներով: Մերոնք կուսակցիով դաւը, դիրք կը բռնեն ու վայրկեանէ վայրկեան կը սպասեն կոտորածի: Կարինէն օգնական ուժեր ալ դրկուեցան: Երեւի մեծ կռիւներ են պատահած: Թահսինը (Կարնոյ կուսակալ) ըսեր է եւրոպացիի մը, որ իբր թէ հայերը ռումբով օդը հաներ են կառավարական շէնքը, պանքը եւայլն:

Նոյն ճգնաժամին ենթարկուած է Դուրանը⁵¹: Կարնոյ մէջ ալ տրամադրութիւնները ջարդարար են: Թուրք բարեկամներ կ'ազդարարեն շատ դուրս չելլել, կը պնդեն որ հայերը նորէն հաւաքելով պիտի դրկեն պատերազմի, կոտորել տալու համար: Ի սէր Աստուծոյ գրեցէք Կովկաս եւ ուր որ պէտք է որպէսզի խումբերը օգնութեան հասնին: Յայտնի է, որ ամիսներով չեն կրնար դիմադրել: Պէտք է մերինները յառաջանան եւ օգնութեան հասնին սպանդէն առաջ: Մենք ալ հոս կը դիմենք գերման հիւպատոսին:

Կը հաստատենք մեր ապրիլ 4ի նամակը (չենք ստացած):

Դ.— ԱԻԱՉԱՆԷՆ⁵⁰.— 7 ապրիլ (այսօր ստացանք).— Բարձրաբերդէն կը հաղորդեն թէ փետրուարի վիճակագրութեամբ, թիֆուսէն մեռած են 26000 զինուոր: Բասենի վերջին կուռում 1000 սպանուած, 2000 վիրաւոր, 400 գերի: Չէնքի տակ են կանչուած 45-52 — 17-20: Նոր

պատրաստութիւններ կը տեսնուին: Վանի եւ Մուշի ղէպքերը մեծ գրգռում պատճառած են մոլեռանդներուն մէջ: Ներքին գործոց նախարարը խստիւ պատուիրած է կարգը պահել, հաշտութեան պահուն հայերու արեան գինը չվճարելու համար, վալին հաղորդած է Առաջնորդին: Իթիթհատին չէթաները մեծ աւերներ գործած են Երզնկա, Դերջան եւ Բաբերդ: Երզնկայէն 24 հոգի շղթայակապ կարին են տարած: Ռումբ եւ զէնք կը պահանջեն: Մերոնց ստիպումով Առաջնորդը տեղեկագիր մը ներկայացուցած է վալին, որ հաստատեր է ճշգրտութիւնը: Ընդհ. հրամանատարը լուծեր է չէթաները: Քիւրդ պէկերը լաւ են երեք շրջաններուն մէջ ալ եւ կը փնտռեն մերիները: Մուշի կառավարիչը հաղորդեր է կոմսին, որ կը հաւանի Բաղէշ գումարել խառն ժողով երկու կողմի ներկայացուցիչներով:

Քանի մը ամիսէ ի վեր մահմեդական վրացիներ կը հասնին Աճառխայէն, Արդուինէն ու Մորղուլէն. աւերող ջարդողներն են ասոնք, որ ասկէ կ'երթան դէպի Փոքր Ասիոյ խորերը:

Լուր տուէք կովկասէն: Ահաւասիկ ընկերներ, մէկ երկու պատահական նամակներով ձեզի կը ներկայացնենք կացութիւնը, ուր կը գտնուի այս միջոցիս Հայաստանը, եւ մանաւանդ այն պարտականութիւնն ու պատասխանատուութիւնը, որ կը ծանրանայ մեր վրայ: Բոլորը Պոլսոյ վրայ յառած են իրենց ուշադրութիւնը՝ տակաւին անտեղեակ մեծ դաւադրութենէն, իսկ մենք ալ մեր կարգին ղէպի ձեզ կը նայինք ահաւոր պատահականութիւններ կանխել տալու համար: Արտաքին օգնութիւն մը, ինչ գնով որ ըլլայ, աւելի քան երբեք կենսական է, եւ նախագագցումով մը կը կարծենք, թէ մետասաներորդ ժամուն կամ աւելի առաջ հասեր է այդ օգնութիւնը: Մենք երբեք վհատած չենք, աւելի քան երբեք եռանդով փարած ենք գործին, ու կը զարմանանք

պարզապէս անոր համար, որ աւելի քան մը չենք կրնար ընել: Կը հասկնաք անշուշտ մեր տառապանքը, մենք որ ահանատես ենք այստեղի անցուդարձերուն ու ահանջալուր՝ Հայաստանի մասին եղած ասէկօսէներուն: Գրեցէք, եթէ ուրիշ միջոցներ կան ազդելու այստեղէն:

Ձեր բարեկամը հաղորդեց այն դիմումները, զորս ըրած են չէզոք դեսպանները, նոյնիսկ գերմանականը՝ քսոտրականներու կեանքի ապահովութեան եւ կոտորածի մասին: Աւելորդ է ըսել, որ այդպիսի հաւաստումները չեն կրնար միտնալ մեզ: Հարցուց եթէ անկեղծօրէն կրնա՞նք խոստովանիլ որ ոչ մէկ դաւադրութիւն կամ փաստաթուղթ չէ գտնուած թուրք կառավարութեան դէմ: Կարծ ու կտրուկ պատասխանեցինք որ ոչինչ, ոչինչ չէ գտնուած ու չկայ, բոլորը պետական էնթրիկներ են, այդպիսի մտադրութիւն անգամ չէ եղեր: Մեր բաղձանքները ուզեց լսել վարչապետին (Ռատոս[լաւով]ի) հաղորդելու համար: Ըսինք օրուան պատմութիւններէն, ինչ որ յարմար էր: Դրամի մասին ըսաւ թէ պատրաստ է եւ հեռագրեց որ ղրկուի: Պիտի ստանայ, մեզի պիտի յանձնէ եւ յետոյ պիտի մեկնի: Այս նամակը ուշացաւ, որովհետեւ իրեն յանձնեցինք, իսկ նախորդը պատուեցինք: Այսօր կրկին պիտի տեսակցինք:

Անգամ մըն ալ կը խնդրենք, մի մոռնաք հաղորդել՝ 1) հայ ու պուլկար քանի մը հասցէներ՝ պարզ նամակի համար, 2) քանի մը երեւելիներու (պուլկար) հասցէներ՝ պայուսակով ղրկուելու համար, 3) ձեր տուած հասցէներուն երբ թերթ ղրկենք, նկատեցէք իբրեւ նամակով: Այս շատ ապահով է. — մէկը ստացաք անշուշտ (21 ապրիլ):

Ընկ[երական] բար[եւեցումով]
Առժամեայի կողմէ
ԱՐՇԱԻԻՐ

59.- Չեօկիւրեան Յովհաննէս (Օննիկ), երբայրը ծանօթ գրագետ Չեօկիւրեան Տիգրանի: Այս վերջինը տարագրուած էր արդէն ու պիտի նահատակուէր:

Վիշապը քայքայուած է, միայն Չեօկիւրը⁵⁹ կը մնայ:

Փաստ. 1158-48
Նամակ N° 474

12.- ՊԱԼՔԱՆԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սոֆիա, 28 Ապրիլ 1915

Ընկերներ,

Կը հաստատենք մեր 470 թուահամար նամակը, որով ընդարձակ տեղեկութիւններ կը տայինք Երկրի ներկայ վիճակին եւ Պոլսի մեր ընկերների ձեռքակալման մասին: Ստացել ենք ձեր 144-145 թուահամար երկու նամակները եւ պարունակութեանց վերահասու եղած ենք: Longuet-ին⁶⁰ ձեր ցուցմունքներու համեմատ կը շարժինք: Միքայէլի մասին անցեալ նամակով ձեզ գրած ենք, ուստի աւելորդ կը սեպենք նորից կրկնել. նա արդէն թիֆլիս է:

Այժմ ձերբակալութիւնների մասին ստացած ենք նոր տեղեկութիւններ որ ստորեւ կու տանք ձեզ: Առաջին նամակը, որ թերթի մէջ հրատարակած ենք, ներփակ կը ստանաք:

Բ. նամակ.— Ինչպէս նախորդ նամակի մէջ յիշուած է որ Գիսակը (Վարդգէս) հրաման է ստացել 3 օրուայ մէջ հեռանալու. այդ պայմանաժամը լրանալուն՝ նա զնաց թալէաթին եւ վճռապէս յայտնեց որ տեղ մըն ալ չի կրնար երթալ եւ հոս կը մնայ: Ատա՞նկ է, մտածենք, բան մը կը խորհինք, պատասխանած է: Գիսակը այսպէս առած-քալած է: Ճանպոլաթը (գաղտնի լրտեսապետ) յիշեցրել է որ իրենները կը հարցնեն, թէ ինչո՞ւ միւսները զրկեցինք եւ այս մէկը կը մնայ: Գիսակը պատասխանած է որ ինք այս տեսակ գործերու չի խառնուիր, եւ բաժնուած է: Թէեւ այժմ ազատ կը մնայ, բայց անստոյգ:

Գերմանական աղբիւրէ իմացանք որ Վանը պաշարուած է, Այգեստանը ռմբակոծուած. Իշխանը կառավարութեան կողմէ պաշտօնով տեղ մը զրկուած եւ ճամբան սպաննուած է: Վանէն նամակ ստացանք Ապրիլ 2 թուակիր.— կը յիշէ կուսակալին խաղաղասիրական փորձերը, հետապնդումները դադրեցնելու խոստումները եւայլն եւայլն: Կուսակալը կ'իմացնէ որ [լուր] ունին թէ 6/700 ձիաւորներ պիտի արշաւեն քաղաքին վրայ. կուսակալը այս լուրը կու տայ մերոնց եւ կը հասկցնէ թէ հետեւանք լաւ չպիտի ըլլայ հայերուն համար. կը ջանայ ապահովցնել որ ամէն կերպով պիտի պահպանէ բարեկարգութիւնը: Մերոնք անորոշ պատասխաններ կու տան: Վրամեանը հեռագրաւ կը խնդրէ 100 ոսկի զրկել իրեն համար եւ պատրիարքարանէն էլ նպաստ զրկել տալ: Ի հարկէ չենք կրնար գոհացնել՝ յարաբերութիւնները խզուած լինելով: Մերոնք կը

պահանջեն վալիէն պատերազմ[ական] ատեանի առաջ քաշել Գաւաշի գործին պատասխանատուները: Առէնի կռուին մերոնք թողնում են մէկ սպանեալ, իսկ միլիտը՝ 44:

Ինչպէս իմացանք, աքսորութեան ցանկը պատրաստած են 8/10 հայեր, որոնց անունները պահած ենք: Ամբողջ ցանկը 400 հոգին կ'անցնի. երկու հարիւրը, որոնց մէջ մերոնք, Կիրակի գիշեր զրկուած են մինչեւ Պիլեճիկ. անօթի ծարաւ պահած են, չթողնելով վար իջնել. հոն միայն կարողացեր են հաւկիթ գտնել առանց աղի: Մեր կալանաւորները բանտն են: Ընկ. Գալֆան³⁰ դիմադրած ըլլալով՝ ձեռնակապով բանտարկած են:

Գոնիայի կուսակալը հոս կանչուեցաւ հրահանգներ ստանալու. յատուկ քննիչ մարմին մը պիտի երթայ քսորականները դատելու: Իբրեւ թէ անմեղները պիտի վերադարձնեն: Կառավարութիւնը ինքզինք կ'արդարացնէ ըսելով որ թէեւ կասկած չունինք, բայց բան մը կրնայ պատահիլ...:

Հետապնդումները թեթեւցած կը թուին, թէեւ լրտեսները միշտ կը գործեն եւ հաւանաբար շատ չուշանար նոր ձեւի հնձում մը: Առժամեայ օրէնք մը մշակուած է, որով պիտի լուծուին ամէն ձեւի կազմակերպութիւններ. դեռ իրատէն ելած չէ:

Գիսակը եւ Զօհրապը պատրիարքին միջոցաւ պիտի խնդրեն որ Ազատամարտի դրամարկը յանձուի խումբագիրներու ընտանիքներուն ապրուստ տալու համար: Ուրջան ստուգեցինք 4/450 ոսկի դրամ կայ:

Տարտանէլի մասին հոս իրարանցում կայ. գիշեր ցերեկ զօրք կը փոխադրեն. տեսնենք ի՞նչ է լինելու:

Գ. նամակը.— «Տարագիրներու ընտանիքները հեռագիր կը ստանան հետզհետէ (մանաւանդ Չանդրիէն եւ Էնկիւրիէն) բայց մինչեւ այս պահուս ոչ մի հեռագիր կայ մերիններէն. կամ այն է որ հեռուները կը զրկեն քալելով, եւ կամ բանտարկուած են: Երկու օր էլ սպասելէ յետոյ ուրիշ միջոց պիտի խորհինք: Երէկ երկու կառախումբ էլ զրկած են, որով բանտը մարդ մնացած չէ կը կարծենք: Ձերբակալումները չեն դադրած, թէեւ թուլցած են: Երէկ 40 հոգի բռնեցին: Վրամեանի նշանածին տունը խուզարկուեցաւ Ուրբաթ օր շատ մանրակրկիտ կերպով 2 ժամու չափ. խեղճ աղջիկէն ստո-

60.- Ժան Լոնկէ, ֆրանսացի քաղաքական դէմք, բարեկամ Դաշնակցութեան. եղած է տարիներով Փրօ-Արմենիայի խմբագրութեան քարտուղարը:

րագրող/թիւն մըն ալ առեր են:

Տարագիրներու ընտանիքները սկսած են դրամ խընդ-
րել: շտապեցէք մեր տուած հասցէին հեռագրով փո-
խադրել: Ազատամարտի 450 ոսկին ստանալու յոյս
չկայ:

Պատրիարքը բոլորովին անզօր է ու միշտ կը խաբեն:
Ամերիկեան դեսպանին դիմումը թալէաթին ոչ մի
օգուտ չունեցաւ:

Թուրք եւ գերման աղբիւրէ կը հաւաստիացնեն որ
Վանը ետ առնուեր է 12 օրուայ կռիւէն յետոյ: Իշխանը
սպաննուած է իբրեւ բանագնաց զրկուած ատեն. ոչ մի
լուր ունինք:

Սեւ Բլուրէն⁴⁰ նամակ առինք Ապրիլ 6 թուակիր-
սարսափելի բաներ կը պատմեն. գիւղերու մէջ դժոխա-
յին տանջանքներով գէնք կը փնտռեն. կիներու ծիծերը
կը ճեղքեն. այրերու միսերը, ակուաները եւ եղունգները
կը փրցնեն աքցանով. կուրծքերը եւ ոտքերը կը տաղեն.
8-12 տարեկան աղջիկները կը պղծեն...: Գիւղացիները
յուսահատ իրենց ունեցած կովը կամ եզը ծախելով՝
չերքէզներէն գէնք կը գնեն եւ կը յանձնեն. բողոքողնե-
րը կը բանտարկուին:

Պատրիարքին իմացուցինք թէ մեր տղաքը բանտն են
դեռ. ոչ իսկ հարցում մը եղած է: Մուրատը, Շղոն ու
Բիծան ապահով են, 50 ոսկի դրամ կը պահանջեն հե-
ռագրով. կը սպասենք ձեր դրամին: Իթիթիհատը լուրեր
է տարածեր խուժանի մէջ թէ հարիւրաւոր ռումբեր,

հրացաններ գտնուած են, թէ հայերը թիւնէլ բացած են
Պոլսոյ վառօդարանին տակ եւայլն եւայլն: Ըսենք ան-
գամ մըն ալ որ իր պրպտումները յանգած են կատար-
եալ Ֆիասթոյի եւ հիւմա էնթրիկներու կը դիմեն բան մը
ստեղծելու համար: Հետապնդումները թէեւ թեթեւցած
են, մէկ ալ այն պատճառով որ այս միջոցիս չափազանց
զբաղուած են պատերազմով. գիշեր ցերեկ հազարաւոր
վիրաւորներ կը հասնին. առաջին թափօրը 36000-ը
կ'անցնի, ոչ բժիշկ կայ եւ ոչ դեղ»:

Այս նամակի մէջ կը գրեն նորէն ձեր կողմէ ըլլալիք
սպաննական դիմումի մասին. ի հարկէ մինչեւ հիւմա
կատարած կը լինէք:

Մեր թերթի համար մինչեւ այսօր մի յօդուած
չըրկուեցաւ ձեր շրջանէն. խնդրում ենք միշտ ուղար-
կել. սով ունինք ձեր կողմի լուրերուն. եթէ տեղումդ
ներկայ պատերազմի վերաբերեալ աշխատող/թիւններ
կան, պրոշիւրներ եւայլն, անյապաղ մեզ ուղարկեցէք
օգտուելու համար: Մենք Պոլսէն, Շգիպտոսէն եւ Ամե-
րիկայէն առած լուրերը գ[աղտնի] մելանով կը զրկենք
Կովկաս, բայց ինչպէս անցեալ անգամ գրեցինք, դուք էլ
զրկեցէք. մէկը չհասնելու պարագային, գոնէ միւսը կը
հասնի. միշտ գրեցէք մեզ ու տեղեակ պահէք: Պոլսի նա-
մակը ուղարկեցէք, կը զրկենք իրենց:

Ընկ. բարեւներով
Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. Կ[ՈՄԻՏԷ]

Փաստ. 882-11

13.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՍԵԱՅԷՆ ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

Ապրիլ 29.— Այժմ գրեթէ բոլոր ընկերներէն լուր ունինք: Ակնուկնի, Շահրիկ[եան], Խաթակ, Շամիլ, Փաշայեան, Ջարդարեան, Գ. Բարսեղեան, Համբարձումեան, Ներսէս Փափագեան եւ ուրիշներ կը գտնուին Այաշ, Էնկիւրիէն ասդին, զօրանոցի կամ բանտի մէջ: Միւսները չէզոքներուն հետ խառնիխուռն փոխադրուած են Չանդրըր եւ մաս մըն ալ Չորում: Գրեթէ բոլորէն ալ թուրքերէն քարտեր հասան, 10 օր առաջ թուագրուած, եւ կը խնդրեն, որ պատասխաններն ալ թուրքերէն գրուին: Նամակները եկած են Ընդհ. ապահովութեան տեսչութեան միջոցաւ: Առաջին քարտերու տակի հայերէն ստորագրութիւններն անգամ աւրուած են: Բոլորին ալ զրկեցինք դրամ (35 ոսկի եւ ոչ թէ 30), յետոյ դարձեալ տասը, եւ ճերմակեղէններ colis postaleով: Ինչպէս գրած էինք այսօրուան թերթով, զոր ստացաք անշուշտ, խօսք կայ որ չէզոքներէն շատերը ետ պիտի դառնան: Մասնաւորապէս Չանդրըրի խմբակը. դեռ ոչ ոք չէ եկած: Հնչակեան Մուրատը զրկեք են էվրէի, երեւի ծանօթ դէպքին հետ կապելու համար ու կ'ըսուի թէ մեր ընկերներէն ալ մաս մը պիտի զրկուի Վան: Չենք գիտեր որքան ստոյգ է: Կ'իմանանք թէ Այաշի մէջ մերիները շարունակ ներկայ բացակայի կ'ենթարկուին, բոլորն ալ իրենց հանգստութենէն կը ճառեն ի հարկէ...

Այսօր Առժամեայ Մարմինը երկար խորհրդակցութիւն մը ունեցաւ Գիսակի հետ: Կրկին ու կրկին հետապնդեցինք հասկնալու համար, թէ կարելի չէ՞ վերսկսիլ իր հետապնդումները Դրան մօտ, Վանի եւայլն հարցերու մասին: Կը պատասխանէ, որ դեռ ժամանակը հաստունցած չէ այդպիսի բաներու համար, թէ փորձելը անօգուտ է, քանի որ նախարարը ոչ իսկ կ'ուզէ լսել: Բացատրեցինք թէ առանց այդպիսի յարաբերութեանց, մենք կը գտնուինք կեղծ դրութեան մը մէջ, կու գայ տեղ մը մեր ուժերը կը սպառին, կամ պատասխանատուութիւնները կը ծանրանան: Մեր հոգերը շատ են, եւ առանց ու կորով ունինք, բայց կաշկանդուած կը զգանք մենք մեզ, քանի որ ոչ որոշ իրաւասութիւններ ունինք, ոչ ալ կրնանք տարբեր քայլ մը առնել, քանի պետութեան հետ յարաբերութիւնները պաշտօնապէս խզուած չեն: Չանաց համոզել, որ ուրիշ միջոց չկայ, այսպէս պիտի երթանք աստե՛ն մը եւ մենք մեր պարտքը կը կատարենք թոյլատրուած սահմաններուն մէջ:

Երկրէն հասած օգնութեան ճիշերն ալ նոյնութեամբ կը հաղորդենք ձեզի, մանաւանդ որ Գիսակը կը հաւաստէ, որ պատրիարքարանն ալ կը դժկամակի կամ կը վախճնայ որեւէ դիմում ընել: Ահա թէ ինչու օրուան այս ժամուն ստոյգ լուր չունինք: Շամի⁴⁷ դէպքերու մասին,

ամերիկեան աղբիւրէ իմացանք թէ ապստամբութիւնը զսպուած է. մէկ մասը փախեր է եւ 700 հոգի ջարդուեք են: Գիսակին թելադրեցինք, որ գոնէ Վահաբի մասին հեռագիր մը գարնել տայ: Աւելորդ նկատեց: Ինք առանձին ալ պիտի գրէ կացութեան ու իր տեսակէտին մասին:

Այսօր երկրորդ տեսակցութիւն մը ունեցանք Խ.ի հետ: Գրած ենք արդէն ամփոփումը:

30 ապրիլ.— Երրորդ անգամ տեսակցեցանք Խ.ի հետ: Դրամի հեռագիրը եկած էր եւ կ'ուզէր դրամը Արշաւիրին յանձնել տալ, բայց որովհետեւ հեռագիրը շատ որոշ չէր, ստիպուեցաւ նորէն հեռագրել. վաղը պիտի ստանանք: Ռուզանը տարաւ ներկայացուց պուլկարականին. շատ լաւ ընդունելութիւն ըրին: Թարգմանը ամէն կերպով տրամադիր կը թուի մեզի օգնելու. տեղեկութիւններ ուզած է վերջին դէպքերու մասին, միշտ ջանալով հասկնալ թէ Դաշնակցութիւնը որեւէ դեր չունի: Ընկերը կտրուկ կերպով ժխտական պատասխան տուած է: Տեսակցութեան միջոցին, թարգմանը պահ մը դեսպանին ներկայացրէ է, որ փափաք յայտներ է անպատճառ տեսակցիլ Գիսակին հետ ու փաստացի կերպով հասկնալ մեր բոլոր տրտունջները, ծանօթանալ դէպքերու էութեան եւ Դաշնակցութեան դերին: Առաջարկեք է մեր գանգատները, դէպքերը եւայլն մեքենագրութեամբ եւ կրկնօրինակ հաղորդել կանոնաւորաբար, միւս չէզոք դեսպաններուն ալ յանձնուելու համար: Դիտել տուեք է, որ գանգատներու եւ տեղեկագիրներու տակն ալ ստորագրուի Սոֆիա Հ.Յ.Դ. կոմիտէին կողմէ, որպէսզի երբ [Բ.] Դուռը հետաքրքրուի, ցուցնեն: Սքանչելի պատեհութիւն մըն է այս պարագան մեզի համար: Ափսոս որ աւելի կանուխ չեն մտածեր մեր անդրանիկ ընկերները, կամ թերեւս մենք կը սխալինք, բոլորովին ծանօթ չըլլալով գործերուն:

Այսօր իսկ Գիսակը պիտի համոզենք, որ անպատճառ ներկայանայ դեսպանին եւ խօսի ինչպէս որ պէտք է: Դեսպանը ըսեք է, որ կրնայ պաշտօնապէս ալ ներկայանալ ինծի, արգելք չկայ: Այս առթիւ գերմանական աղբիւրէ ալ իմացանք, որ 30 հոգի կախեր են Հալէպի մէջ, երեւի գէյթուներն են:

Մայիս 4.— այսօր Խ.ի միջոցաւ շնորհակալութեամբ ստացանք 200 օսմ. ոսկի: Այս գումարը Ազատամարտի դրամէն գանձուածին հետ միասին պիտի յանձնենք պանքը, վճարելէ յետոյ 50 ոսկի փոխառութիւնը, տարագիրներուն եւ իրենց ընտանիքներուն տրուած գումարները, որոնց հաշիւները Գիսակը կը պահէ: Նաեւ

այսօր իսկ հեռագրով 50 ոսկի փոխադրեցինք Սեւ Բլուրին, որ ստիպողաբար պահանջած էր դեռ մէկ երկու շաբաթ առաջ: Ընդհ. Կազմ. հաշիւը կը պահէ Առժամեայ Մարմինը՝ մենք: Մեր բարեկամը պիտի մեկնէր, բայց կառախումբերը զինուորական փոխադրութեանց յատկացուած ըլլալով, հաւանաբար կիրակի ճամբայ ելլէ: Երէկ մեր երրորդ տեսակցութեան ընթացքին աւելորդ անգամ մըն ալ պարզեցինք, որ ոչ մէկ կազմակերպուած բան չկայ, բացի տեղական պոռթկումներէ, որոնք ծնունդ են անհանդուրժելի բռնութեանց: Պատմեց թէ Հալէպի մէջ կախուած 30 անձերը ոչ թէ 2 էջ թուներէն, այլ անգլ. մարտանաւէն ելած անգլիացի եւ հայ երկու պրոպականտիստներուն ծանօթներն են: Ամէնքը 70-80 հոգի ձերբակալուելու են այս գործին առթիւ, շնորհիւ հարբած գերման սպայի մը հետազօտութիւններուն, եւ 30ը կախելով, միւսներուն զանազան պատիժներ տուելու են: Կախուածներէն երկուքը քահանայ են եղեր: Կը խնդրենք այս կէտը ճշդել թղթակցութեան մէջ, ջնջելով «2 էջ թուներ 50 եւայլն» խօսքերը:

Գիսակը երէկ կրկին գնաց Ճամբորդութիւն, որ խոստացեր է յանձնել Ազատամարտի շէնքը, իսկ դրամին համար առաջարկեր է, որ իրենք տան տարագիրներու ամսականները: Երեւի մէկ անգամէն խոշոր գումար մը մեր ձեռքը յանձնել չեն ուզեր: Այժմ Գիսակը պիտի գրէ տղոց, որ զինքը փոխանորդ կարգեն եւ կրկնապատիկ ամսական պահանջեն, 4ի տեղ 8, որպէսզի շուտ ստանանք ամբողջութիւնը:

Մեր առած տեղեկութեանց համաձայն, 5 սայլ գիրք, թուղթ, պատկեր եւայլն փոխադրուած է Ազատամարտէն, պատերը եւ գետիները փորած, տակնուվրայ ըրած են, կասկածելի նիւթեր փնտռելով: Մինչեւ այսօր ոստիկան կը մնայ ներսը: Գիսակը պիտի աշխատի շէնքը ստանալով մնացորդ կարասիները, մեքենաները եւայլն ամփոփել մէկ երկու սենեակի մէջ եւ միւսները վարձու տալ, եթէ կարելի ըլլայ: Չէ՞ք կարծեր, որ շէնքը յանձնելու յօժարութիւնն ալ խաղ մը ըլլայ, նոր խմբակցութիւն մը հոն քաշելու եւ նոր ձերբակալումներ կատարելու համար:

Գիսակը համար: Գիսակը այս առթիւ կարծիք հարցուցեր է Ճամբորդութէն՝ Թալէաթին հետ տեսակցելու մասին: Խորհուրդ տուել է ներկայանալ. մէկ երկու օրէն պիտի տեսակցի եւ պիտի աշխատի աստիճանաբար մօտենալ մեր ծանօթ հոգեւորներ: Առաջին առթիւ կը հաղորդենք արդիւնքը:

Թերեւս աւելորդ չըլլայ անգամ մըն ալ ձեզի պարզել մեր դժուարին կացութիւնը, որպէսզի ժամ առաջ խորհրդակցիք Գերագոյն Մարմինն հետ եւ հրահանգներ ղրկէք: Ի՞նչ պիտի ըլլայ մեր իրաւասութիւնը, մինչեւ ո՞ր աստիճան պիտի համբերենք. ի հարկին մետասաներորդ ժամուն, իրաւունք ունինք ձեռնարկներ կատարելու, գիտնալով հանդերձ որ Մահ կը սպառնայ մեր բոլոր տարագիր ընկերներուն: Երկրի մարմիններէն Բարձրաբերդը արդէն կտրուկ պահանջ էր դրած, բայց առանց գիտնալու նոր դէպքը եւ կարծելով որ նորէն Բիւրոյին կը գրէ: Այս կէտերու մասին անհրաժեշտօրէն լուսաբանուել կ'ուզենք, յառաջիկային պատասխանատու չմնալու համար:

Գրեցէք ամէն բան կտրուկ եւ պայծառ, առանց երկդիմի բացատրութիւններու, որպէսզի գիտնանք մեր ընելիքը: Գիտցէք որ մենք վարանողներէն չենք ծայրայեղ պարագային, բայց ոչ մէկ sanction⁶¹ ունինք այժմ եւ միշտ աչքի առջեւ են մեր պատանդները:

Մինչեւ այս պահուստ ոչ մէկ նոր նամակ ունինք ձեզմէ կամ Երկրէն, իսկ մենք գրած ենք արդէն Բարձրաբերդին, Աւագանին, Սեւ Բլուրին⁴⁰, Կիլիկիա: Հասցէի մասին կը մտածենք Լեռնասարի⁶², Վիշապաձորի⁶³, Բանալիի⁶⁴ համար: Դուրանէն⁵¹ ալ շատ վստահ չենք: Շամիր⁴⁷ համար դիմեցինք Բարձրաբերդին⁴⁹: Ձեզի յաճախ La Turquieի լուսանցքով կը գրենք, ուրիշ թերթեր ալ երբեմն կ'ուղարկենք. միշտ ուշադիր եղէք, bandeir⁶⁵ ալ փորձելով:

Ձանացէք աւելի ապահով ձեւ մը մտածել, եթէ կ'ուզէք որ թղթակցութիւնները շարունակենք թերթին համար, թէ եւ հիմակուանը կորսնցուց իր actualitéն⁶⁶: Շնորհիւ հասցէի մասին ձեր ունեցած անհոգութեան, որ չէ դարմանուած մինչեւ այժմ, պիտի ստանաք 10 թերթ այս թուղթէն, որոնց չորսը յօդուած է⁶⁷: Մի նախք թերթեան կամ վերջաւորութեան պահանջներուն, որովհետեւ ընդհատ ընդհատ գրած ենք, իսկ երեք ճերմակ թերթ ալ առանձին պիտի ստանաք, Գիսակինն է: Այսօր թերեւս մնաք բարոյի երթանք մեր բարեկամին, որ շատ յօժարութեամբ օգնեց մեզի: Մի մոռնաք անգամ մըն ալ մեր շնորհակալութիւնները հաղորդելու:

Ընկերական բարեկներով
Առժամեայի կողմէ
ԱՐՇԱԻԻՐ

Յ. Գ.— Ազատ է նաեւ բրօժ. Խաչ[ատրեան]ը:

61.- Ֆրանսերէն՝ հաւանութիւն, հաստատում: Խօսքը կը վերաբերի ծայրայեղ միջոցներու դիմելու մասին, որուն համար Առժամեայ մարմինը պետք ունէր գերադաս մարմնի արտօնութեան. ուրիշ կաշկանդիչ պարագայ էր արտօնելու կեանքի ապահովութիւնը: Յոյս ունէին տակաւին որ անոնք կրնան վերադառնալ, իսկ ծայրայեղական արարքները կրնային վտանգել անոնց կեանքը:

62.- Լեռնասարը կուս. ծածկանունն է Խարբերդի:

63.- Վիշապաձոր կուս. ծածկանունն է Տիարպէթի-Տիգրանակերտի:

64.- Բանալի՝ կուս. ծածկանունն է Սամսոնի:

65.- Ֆրանսերէն՝ կապոց, փաթան: Գրելու համար երբեմն կ'օգտագործէին քերթերու կապոցներուն ներքեւի երեսները:

66.- Ֆրանսերէն՝ այժմեականութիւնը:

67.- Բացի պարբերական լրատուութենէն, Շաւարշ Միսաքեան Սոֆիայի «Հայաստան»-ին համար կ'ողորակէր յօդուածներ, Ռազմիկ եւ Վարազ ծածկանուններով եւ «Մեծ ճգնաժամը» ընդհանուր խորագրով:

Փաստ. 1158-121

14.- ԴԻՄՈՒՄ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Պուլկարիոյ վարչապետ Ռատոսլավօֆի ուղղուած այս նամակը ստորագրութիւն եւ թուական չունի. հաւանաբար ան հայերէն օրինակն է պուլկար լեզուով գրուած նամակին: Թուականի մասին կարելի է ենթադրել որ ան կը պատկանի 1915 թ. Ապրիլ ամսու վերջերուն: Արդարեւ այս մասին հետաքրքրական տեղեկութիւն կը հաղորդէ Սոֆիայի «Հայաստան» թերթը իր 29 Ապրիլի թիւով, յայտնելով որ Կիրակի օր (Ապրիլ 25) պատարագէն ետք «դրսեցի եւ Սոֆիայէն խումբ մը հայեր», Տէր Մեսրոպ քահանայի եւ հայաւետարանականներու Շահվելտեան պատուելիի հրաւերով խորհրդակցութիւն մը կ'ունենան եւ կ'որոշեն «Պուլսոյ եւ Հայաստանի մէջ կատարուած ծանր դէպքերու մասին դիմում մը կատարել պուլկար կառավարութեան խնդրելով որ ան միջամտէ թուրք կառավարութեան մօտ հայերու կացութիւնը բարելաւելու եւ անոնց կեանքը ապահովելու համար»: Այս առաջարկի գործադրութեան համար կ'ընտրուի 5 հոգիէ բաղկացեալ յանձնախումբ մը:

*Վսեմաշուք
Պրն. Տոքթ. Ռատոսլավօֆ,
Նախարարապետ Բուլղարական կապիւնեղի*

Վսեմաշուք Տէր!

Ապրելով Բուլղարիոյ ազատ հողին վրայ ու օգտուելով ազատութեան բոլոր բարիքներէն, մենք Սոֆիայի բուլղարահայ քաղաքացիներս, այսօր կորսնցուցած ենք մեր հոգեկան խաղաղութիւնը՝ իրագրել լինելով այն տխուր եւ սպառնական կացութեան, որուն ենթարկուած են Թուրքիոյ մէջ ապրող մեր տառապեալ ազգակիցները՝ պատերազմէն ասդին մանաւանդ:

Ձերդ վսեմութեան ու ամբողջ աշխարհին յայտնի են, թէ մեր ազգակիցները ինչպիսի անխախտ հաւատարմութեամբ եւ անձնուիրութեամբ վերաբերուեցան թուրք պետութեան՝ պատերազմի յայտարարուելէն մինչեւ այսօր:

Հայ պաշտօնական եւ քաղաքական շրջանակները անընդհատ քարոզել են մեր ազգակիցներուն զինուորական պարտականութեան եւ հայրենիքի պաշտպանութեան գաղափարը եւ այդ ձայնին հետեւեցան մեր բոլոր ազգակիցները, այնպէս որ 21-45 տարեկան ամէն հայ այսօր գրեթէ մէկ տարիէ ի վեր կը գտնուի բանակի զանազան ծառայութիւններու մէջ:

Բայց դժբախտաբար անհասկանալի պատճառներով մեր ազգակիցներու հանդէպ սնուցուած անվստահութիւն մը ծայր տուաւ եւ պատճառ դարձաւ մեծ դժբախտութիւններու, որոնք այսօր արդէն ստացեր են ազգային մեծ ու անփոխարինելի աղէտի մը կերպարանքը:

Քաղաքական անվստահութեան հետեւանքով մեր ազգակիցներուն համար կազմուեցան մասնաւոր ծանր օրէնքներ.— Պատերազմական գրաւումները եւ զանգ-

ւածային կողոպուտ, եւ մեր ազգակիցներու ամբողջ ինչքի, գոյքի կողոպուտը:

Ոստիկանական հսկողութիւնը յանձնուեցաւ յատկապէս կազմուած թուրք զինեալ չեթաներու, որոնց շահատակութիւններու հետեւանքով Թուրքիոյ հայաբնակ գիւղերը, քաղաքները հրկիզուեցան ու մեր ազգակիցներէն բազմաթիւ անմեղ մարդիկ զոհուեցան:

Բայց հակառակ այս ամէնքին մեր ազգակիցները մնացին միշտ համբերող, տեղի չտալու համար նոր բարդութիւններու:

Բայց հալածանքը աւելի խստացաւ. շնորհիւ ժողովուրդին⁶⁸, բախտախնդիր սաղրանքներու՝ հայերու վերաբերմամբ կայսերական հրամանագրով զինաթափուեցան բոլոր հայ զինուորները եւ փոխանակ հայրենիքի պաշտպանութիւնը գէնքով կատարելու, մեր ազգակիցները դատապարտուեցան տարապարհակ աշխատանքներու, մինչեւ անգամ բանակի պէտքերու փոխադրութեան գործը կռնակով կատարելու, 15-20 օրուան ճամբաներու վրայ:

Մէկ կողմէն զինուեցան հայերու դրացի եւ անհանդարտաբարոյ ցեղերը եւ միւս կողմէ զինաթափուեցան մեր բոլոր ազգակիցները Հայաստանի մէջ:

Դասալքման յերիւրուած խնդրի մը հետեւանքով հազարաւոր երիտասարդներ գնակահարուեցան ու անոնց տները այրուեցան:

Մեր ազգակիցները աղքատութեան եւ սովի գիրկը նետուեցան եւ խիստ [պայմաններու] հետեւանքով հազարաւոր հայեր զոհ գնացին եւ կը շարունակեն զոհուել:

Բոլոր դիմումները կայսերական կառավարութեան՝ կատարուած հայ պաշտօնական եւ քաղաք. հիմնարկու-

68.- Մասնիչներու:

Թիւններու կողմէ ոեւէ արդիւնք չտուին:

Ձեթաները ու գաւառական թուրք իշխանութիւնները քաջալերուած կեդր. կառավարութեան թոյլատու ընթացքէն, սկսան շատ տեղեր անխնայ սպաննել քիչ շատ աչքի ընկնող հայ անհատները, որոնք ընդհանուր հայրենիքին համար իրենց մեծագոյն ծառայութիւնները ըրած էին: Պատուի բռնաբարումներու, եւ այդ առթիւ կատարուած հակամարդկային խժոժութիւններու եւ առեւանգումներու դէպքերը այնքան շատ են, որ անոնց թւումը գայրոյթ եւ նողկանք կարող էր պատճառել:

Այս բոլորէն ետք Օսմ. կառավարութիւնը բոլորովին անհիմն պատճառներով այս ամսի Աին գանգուածօրէն ձերբակալեց մայրաքաղաքի մէջ հայ ազգութեան ամբողջ մտաւորականութիւնը. անոնց մէջ չկայ մէկ մարդ որ Թուրքիոյ բարօրութեան համար անկեղծօրէն աշխատած չլինի. անոնց մէջ կան նշանաւոր անուններ, որոնք իրենց բարի համբաւով ծանօթ են նոյնիսկ Բուլղարիոյ ամէն ընկերութիւններու, գլխաւորաբար հրապարակագիրներ, գրագէտներ, իրաւաբաններ, բժիշկներ, հոգեւորականներ եւ մաքուր քաղաքական գործիչներ են. եւն:

Ձերդ վսեմութիւնը կարող է երեւակայել, թէ մայրաքաղաքի մէջ գտնուող հայոց առաջատար ղեկավարներու ձերբակալումը ինչպիսի վտանգաւոր անդրադարձում կարող է ունենալ, գաւառական իշխանութիւններու եւ Ֆանատիկ իսլամ հասարակութեան արդէն չափազանցուած անվստահութեան վրայ դէպի մեր ազգակիցները, եւ Տէրը մի արասցէ, ընդհանուր կոտորածի եւ բնաջնջման ի՞նչ ահռելի աղէտ չի սպասեր մեր տառապած ազգակիցներուն:

Մեր ազգակիցներու այս յուսահատական կացութենէն վերջին աստիճան մտահոգուած է որ ահա կը համարձակինք դիմել Ձերդ վսեմութեան եւ բուլղարական ամբողջ ժողովուրդին, որ ի սէր մարդկութեան իր ազդու միջամտութիւնը ընէ, որպէսզի երաշխաւորուի մեր ազգակիցներու կեանքի եւ ինչքի ապահովութիւնը եւ ապացուցուի մեր կալանաւորներու եւ ամբողջ ազգի անմեղութիւնը, ի զուր տեղը զայն յուսահատական փորձերու չմղելու համար:

Ձեր մարդասէր կառավարութեան եւ թուրք պետութեան բարեկամական յարաբերութիւնները լաւագոյն երաշխիքն են այդպիսի ազնիւ միջամտութեան ձեռք բերելիք յաջողութիւններուն համար: Ուստի չենք կասկածիր, որ Նորին վսեմութիւնը ինչպէս եւ ամբողջ բուլղար կառավարութիւնը մէկ վայրկեան իսկ պիտի չվարանին օգտուիլ այդ նպաստաւոր հանգամանքէն յանուն ճշմարտութեան մը պաշտպանութեան, որմէ պիտի փրկուի անմեղ ազգի մը կեանքը:

Բուլղարիոյ ասպետական հովանու տակ շատ բարիքներ վայելած ենք մենք բուլղարահայ քաղաքացիներս, ինչպէս եւ մեր դժբախտ գաղթական եղբայրները. այժմ, այս թերեւս վերջին եւ ամենասոսկայի ազգային ճգնաժամին, դարձեալ Բուլղարիան է որ, քաջայոյս ենք, թէ պիտի երկարէ իր մարդկայնական ազնիւ ձեռքը մեր դժբախտ Մակեդոնիոյ բախտակից ազգին այսօրուան փրկութեան համար:

Սպասելով Ձերդ վսեմութեան ողորմած կարգադրութիւններուն եւ յայտնելով յանուն Սոֆիայի բուլղարահայ քաղաքացիներու եւ տարագիր հայերու մեր սրտագին երախտագիտութիւնները:

Մնամ՝

Փաստ. 904ր-2

15.- ՊՈԼՍՈՅ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 29 Ապրիլ 915

Ընկերներ!

Վերջապէս ստացանք ձեր ապրիլ 18 թուակիր նամակը իբրեւ պատասխան մեր առաջին նամակին: Միեւնոյն ատեն ստացանք ձեր ապրիլ 22-ը յարակից թուղթերով, ձեր բարեկամին միջոցաւ, որուն քովէն կու գանք այժմ երկրորդ տեսակցութիւն մը ունեցած ըլլալով: Ձեր հարցերուն պատասխանած ենք մանրամասնօրէն, արտագրելով երկրէն եկած չորս նամակներ ալ: Բոլորը միասին պիտի ստանաք Խ-ին միջոցաւ: Կարծելով թէ կ'ուշանայ, կը փութանք այս երկտողը հասցնել թուղթիկ քաղուածք մը ընելով թէ այդ նամակէն թէ ընթացիկ կեանքէն:

Մեր ընկերներէն լուր առինք հետզհետէ. միայն Ակնունիէն լուր չկայ. բոլորն ալ կը գտնուին Այաչ, Էնկիւրիէն ասդին գուտ թրքաբնակ աւան մը: Ինչպէս կ'երեւայ ամէնքը մէկ տեղ փակուած են զօրանոցի մը մէջ. հեռագրով 35 ոսկի ղրկեցինք: Առ այժմ միայն թուրքերէն լեզուով քարտեր կրնան գրել, որ կը յանձնուի ոստիկանութեան միջոցաւ: Այսօր 10 ոսկի եւս ղրկեցինք: 50 ոսկի փոխ առած ենք եւ 110 ոսկի ալ պանքայէն ստացանք, Ազատամարտի դրամէն: Մեր բարեկամը այսօր դարձեալ հեռագրեց դրամի համար. մինչեւ Ուրբաթ պիտի սպասենք, կը գարմանանք որ շատ կը վարանիք այս մասին: Եթէ մինչեւ իր մեկնումը դրամը հասած չըլլայ, պիտի ստանանք հիւպատոսի միջոցաւ: Այս առթիւ ժամադիր ենք վաղը:

Վանէն(?) ստոյգ լուր չունինք: Բարձրաբերդի միջոցաւ այսօր ստացանք նամակ մը 12 թուակիր որ կը հաղորդէ Շամի լուրերը մինչեւ ապրիլ 6: Շատախի մէջ դաւադրութեամբ ձերբակալեր են Յովսէփը: Գիւղացիները յարձակեր են. կուսակալը, փոլիս միւտիրին եւ մեր ընկերներէն երեք հոգի ղրկեր է Իշխանին հետ. ճամբան Հայոց Ձորի Հիրչ գիւղին մէջ փոլիս միւտիրին գիշերանց սպաննել տուեր է մեր չորս ընկերները: Լուրը դեռ Շամ չհասած կուսակալը իր քով կանչեր է Արամն ու Վահապը: Առաջինը զբաղած ըլլալով՝ Վահապը մինակը գացեր է եւ անմիջապէս ձերբակալուեր ու իբր թէ Բաղէշ ղրկուեր է: Ձրոյց կայ թէ կախուած է: Ոչ մէկ կերպով չկրցանք ստուգել:

[Բ.] Դրան հետ հաղորդակցութիւնը համարեա թէ խզուած է. Գիսակը անօգուտ եւ անպատեհ կը նկատէ որեւէ դիմում, քանի որ անոնք լսել իսկ չեն ուզեր, Շա-

մը ապստամբ համարելով: Պատրիարքն ալ կը դժկամակիւր:-

Մուշի հեռագիրին իմաստն է թիւ 38⁶⁹:

Բարձրաբերդը իր նամակով ստիպողաբար կը պահանջէ օգնութեան հասցնել իմբերը⁵⁷, աղէտը չպայթած. իրենց կոչը այնքան յուսահատական է որ նոյնիսկ կ'առաջարկեն ժամ առաջ վերջացնել այստեղ. ալ համբերել կարելի չէ. օգնութեան մասին ստիպողաբար գրած է նաեւ Շամ⁴⁷ իր մարտ 30 թուականով, որ քանի մը [օր] առաջ հասաւ: Գէթ մէկ օրուան ճամբայ յառաջանալու են իմբերը կամ մէկ մասը: Քաղաքին մէջ հագիւ 3000 ժանտարմ կայ, քրտերն ալ լքուած են եւ տեղ տեղ բարեկամ են: Վերջին դէպքերուն վրայ Կարինէն օգնական ոյժ գացեր է. հայոց թաղերը պաշարած եւ թնդանօթի տակ են առած: Ալ ո՞ր օրուան կը սպասեն մերոնք: Ձէյթունը համարեա թէ քարուքանդ ըրած են եւ բնակիչները հարիւրներով կ'աքսորեն, մեծ, պզտիկ, ծեր, կին, Ձելալեստիւնեան արշաւանքներով: Աքսորականները կը ղրկուին դէպի անձանօթ վայրերը, իսկ իրենց տեղ Ձէյթունի եւ շրջականներուն մէջ կը տեղաւորեն մուհաճիւրներ: 8-900 մուհաճիւր ղրկուած է արդէն: Որոշուած է ամայացնել նաեւ միւս հայաշատ կեդրոնները: Տէօրթ-Եօլ գրեթէ պարպուած է, 17-70 [տարեկանները] ամբողջ գինուոր տարին: Մէկ.....

Ծ. Խնք.- Չեռագրի երկրորդ էջի աւարտ, առանց շարունակութեան: Էջ 3-ը կը սկսի այսպէս, դարձեալ անաւարտ:

.....թղթակցութիւններ պիտի ղրկենք, կը սպասենք ձեր հասցէներուն. ամէնէն կարեւորը, արդեօք, ուղղել տուի՞ք Օսմ. դահլիճին՝ մեր յիշած ազդարարագիրը՝ ապահովութեան մասին: Եթէ մինչեւ հիմա չէք ըրած, ափսո՛ս:

Գիսակը երկու անգամ տեսակցեցաւ Մ[իւտիրին] Յ[առաջդիմութիւն] [կոմիտէի] Ընդհ. քարտուղարին հետ: Շատ սիրալիր կը թուին: Խոստացեր են վերադարձնել Ազատամարտի 450 ոսկին:— Այսօր Պոլիս գտնուող Օսմ. երեսփոխանները արտակարգ նիստի մը հրաւիրուած են Գիսակն ալ գնաց:

Ձէնքերու հաւաքումը սկսած օրէն իսկ երեւան եկաւ բացայայտ խտրութիւն. իսլամներէն չեն առներ, իսկ մեր ստրուկները խումբ խումբ տարին յանձնելու: Քիչերը ամուր կը մնան: Խուզարկութիւնները

69.- Պայմանական բանալի, որուն իմաստը անձանօթ է մեզի:

Փաստ. 882-8

16.- ՎԱՐԴԳԷՍԷՆ ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

1/14 Մայիս 1915, Պոլիս

Ընկերները արդէն ժամանակին գրեցին մեզ պատահած դժբախտութիւնը, որը բոլորովին ի դերեւ հանեց մեր այնչափ légal⁷⁰ ձգտումները եւ մեզ պարտաւորեց թերեւս զղջալու. ինչ որ է, այժմ ջանալու ենք մեղմացնել այս դառն կացութիւնը: Մինչեւ տեսնենք վերջն ինչ է գալու: Պատահած դէպքերի շարունակութիւնը դարձեալ ուրիշներ կը տեղեկացնեն. միայն կ'ուզէի ձեր ուշադրութիւնը մի բանի վրայ դարձնել, որը անհրաժեշտ է նկատի ունենալ ձեր այդ տեղի աշխատութիւններու մէջ:

Մեր կարծիքով մեր այս դժբախտութիւններու մէջ գերմանացիները մեծ դեր ունին. կը կարծենք թէ անոնց խորհրդով է, որ թուրք կառավարութիւնը այս միջոցին դիմած է, եւ որպէսզի կարելի ըլլայ ազդել թուրքերու վրայ, պէտք է ազդել գերման կառավարութեան վրայ, եւ այն կարելի է միայն ըստ իս չէզոք երկիրներու հասարակած կարծիքը գրգռելով⁷¹ եւ մասնաւորապէս ամերիկեան կառավարութեան միջոցաւ ազդել գերմաններուն վրայ եւ զանոնք պատասխանատու ճանչնալ եղած բոլոր դժբախտութիւններուն: Անոնք հոս սեւ գուժկանի նման, միայն սեւ բոթեր կը բերեն պատրիարքարան, իսկ դարմանի համար ոչ մի խորհուրդ: Թէեւ պուլկար եւ ամերիկեան ու քիչ մըն ալ իտալական դեսպանները դիմումներ կ'ընեն, բայց կարծեմ բոլորովին ապարդիւն է: ամերիկեան դեսպանը գործին մարդ է, իսկ պուլկարականն ալ թերեւս իր շահերէն դրդուած չ'ուզեր այնչափ, եւ թերեւս չի ալ կրնար յառաջ երթալ: Այդ տեղի իրենց կառավարութեան կեդրոնները պէտք է շարժել եւ պարտաւորեցնել որ իրենց դեսպաններու միջոցաւ ազդու դիմումներ ընեն:

Թէեւ իմ կարծիքով ատոնք բացարձակ արդիւնք մը չեն [կարող] առաջ բերել, բայց գոնէ մասամբ կը մեղմացնեն պատահելիքները:

Բժշկի զեկուցումը շատ ալ յուսատու բան մը չէ. այդ

բանը ճամբայ ելլելէ առաջ պէտք էր մտածել, այսչափ զոհեր տալէ, այսչափ ընելէ եւ բոլոր տաճկահայերը վտանգելէ վերջ բանակցութիւններու սկսիլ, ահա մեր դիւանագիտութիւնը. ինչ որ է եղածն եղած է, միայն ջանալու է անադմուկ ընել եւ գաղտնի որչափ կարելի է:

Խորհուրդ կու տային մեզ, որ մի կերպ խոհեմ եւ զգոյշ կերպով իմացնել թուրք կառավարութեան հայերու ձգտումները թուրք souverainité-ի⁷¹ մասին. այդ անշուշտ կը լինի եթէ պատեհութիւն ունենանք, բայց դժբախտաբար հաւատացող չկայ. իմ կարծիքով աւելի լաւ կը լինի որ եւրոպական օսմ. դեսպաններու ականջը հասցնել այդ իբրեւ մի գաղտնիք եւ անոնք անպայման հոս իրենց կառավարութեան կը հաղորդեն: Ամէնէն յարմարը Սոֆիայի դեսպանն է: Իրենց մէջ բացարձակ համոզում չկայ թէ դաշնակցականներ Տաճկաստանի մէջ իրենց դէմ շարժում մը ընելու ձգտում ունին. օրերս ա'լ աւելի սկսած են թուլնալ, կ'երեւի խոզարկութիւնները գիրենք յուսախաբ ըրին, բայց Վանի եւ Սեբաստիայի դէպքերը մտքերը պղտորած են եւ իրապէս կը վախնան շարժումներէ. գաւառներու մէջ նոյն դրութիւնը կը շարունակուի աւելի խստութեամբ եւ մենք մի կերպ չենք կարող հասկցնել որ այս պատահած դէպքերը իրենց պաշտօնէութիւններու արդիւնքն է, պատերազմական վիճակը ասպարէզ տուած է ասանկ գործերու, իսկ պատերազմի ներկայ կերպարանքը իրաւունք տուած է իրենց անպատիժ ընել ինչ որ կ'ուզեն:

Երէկ ընկեր Վարդգէսի խոստացած են Ազատամարտի շէնքը յանձնելու, իսկ դրամը բաժնելու այն ընտանիքներուն, որոնց որ կ'ուզէ Ազատամարտի վարչութիւնը: Այդ ալ բան մըն է. տեսնենք ինչպէս պիտի կարգադրեն: Կը կարծենք թէ Վահանն²⁹ ալ Մուշի մութեսարըֆի տանը բանտարկուած կը մնայ: Այստեղի գործերը մի կերպ եղաւ կ'երթան, լուր տուէք մեզ պատերազմի եւ մեր ընկերներու վիճակէն:

70.- Ֆրանսերէն՝ օրինատը:
71.- Ֆրանսերէն՝ գերիշխանութեան:

Փաստ. 1158-52

17.- ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

Սոֆիա 8 Մայիս 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր ամենավերջին նամակը 28 ապրիլի սրանից առաջ մենք ձեզ ուղարկել ենք մի շարք նամակներ, որոնք կը պարունակեն Երկրէն ստացուած տեղեկութիւնները, եւ ոչ մէկուն պատասխանը ստացած ենք. չենք գիտեր թէ արդեօք կը ստանաք: Խնդրենք առաջին առթիւ մեզ իմացուցէք այս մասին, որ մենք ալ ապահով ըլլանք:

Միայն վերջերս ձեզ ուղղել ենք քանի հեռագիրներ, բացատրելով այն դժոխային կացութիւնը որ ստեղծուեր է այժմ Հայաստանի մէջ եւ հեռագրաւ 5000 տալեր պահանջած, բայց մինչեւ այս պահուս ոչ մի հեռագիր կամ նամակ չենք ստացել: Մեր վերջին 28 թուակիրով գրել ենք Պոլսոյ վերջին ձերբակալութիւնների մասին. այժմ կը շարունակենք տալ մեր տեղեկութիւնները որ ստացանք մի քանի օր առաջ: Պոլիս յատուկ սուրհանդակ ուղարկեցինք, որ մանրամասնօրէն քննէ տեղւոյն կացութիւնը ու անհրաժեշտ կարգադրութիւնները անէ մեր ընկերներու հետ միատեղ: Մի քանի օրից կը վերադառնայ եւ այն ատեն մենք ձեզ կը գրենք մեր ստացած բոլոր տեղեկութիւնները: Իսկ այժմ կու տանք ամփոփումը մեր առած վերջին նամակին:

«Մեր ընկերներէն լուր առանք հետզհետէ. միայն Ակնունիէն լուր չկայ. բոլորն ալ կը գտնուին Այաշ, Էնկիւրիէն ասդին գուտ թրքաբնակ աւան մը: Ինչպէս կ'երեւայ ամէնքը մէկտեղ փակուած են զօրանոցի մը մէջ: Հեռագրով 35 ոսկի ղրկեցինք: Առ այժմ միայն թուրքերէն լեզուով քարդեր կրնան գրել, որ կը յանձնուի ոստիկանութեան միջոցաւ: Այսօր 10 ոսկի եւս ղրկեցինք:

Մուշէն ստոյգ լուր չունինք: Բարձրբերդի (Կարին) միջոցաւ այսօր ստացանք նամակ մը 12 ապրիլ թուակիր որ կը հաղորդէ Շամի (Վան) լուրերը մինչեւ ապրիլ 6: Շատախի մէջ դաւադրութեամբ ձերբակալեր են ընկ. Յովսէփը. գիւղացիները յարձակեր են ձերբակալողներուն վրայ եւ կռիւ է տեղի ունեցեր: Կուսակալը քննութեան համար փոլիս միւստիւրին եւ մեր ընկերներէն 3 հոգի ղրկեր է Իշխանին հետ. ճամբան Հայոց Ձորի Հիրչ գիւղին մէջ փոլիս միւստիւրին գիշերանց սպաննել տուեր է մեր չորս ընկերները: Լուրը դեռ Շամ չհասած կուսակալը առտուն կանուխ իր քով կանչեր է Արամն ու

Վուամեանը: Առաջինը զբաղուած ըլլալով, Վուամեանը մինակը գացեր է ու անմիջապէս ձերբակալուեր ու իբր թէ Բաղէշ ղրկուեր է. զրոյց կայ թէ կախուած է. ոչ մէկ կերպով չկրցանք ստուգել:

Բ. Դրան հետ հաղորդակցութիւնը համարեա թէ խզուած է: (Գիսակը) Վարդգէսը անօգուտ եւ անպատեհ կը նկատէ ոեւէ դիմում, քանի որ անոնք լսել իսկ չեն ուզեր, Շամը ապստամբ համարելով: Պատրիարքն ալ կը դժկամակի: Բարձրաբերդը իր նամակով ստիպողաբար կը պահանջէ օգնութեան հասցնել խմբերը, աղէտը չպայթած. իրենց կոչը այնքան յուսահատական է, որ նոյնիսկ կ'առաջարկեն ժամ առաջ վերջացնել, ալ համբերել կարելի չէ: Օգնութեան մասին ստիպողաբար գրած է նաեւ Շամեանը⁷² իր մարտ 30 թուականով որ քանի մը օր առաջ հասաւ: Գէթ մէկ օրուայ ճամբայ յառաջանալու են խմբերը կամ մէկ մասը. քաղաքին մէջ հագիւ 3000 ժանտարմ կայ. քրտերն ալ լքուած ու տեղտեղ բարեկամ են: Վերջին դէպքերուն վրայ Կարինէն օգնական ուժ գնացեր է. հայոց թաղերը պաշարած եւ թնդանօթի տակ են առած: Ա՛լ ո՞ր օրուան կը սպասեն մերոնք:

Ձէյթունը համարեա թէ քարուքանդ ըրած են եւ բնակիչները հարիւրներով կ'աքսորեն, մեծ, պզտիկ, ծեր, կին, ջալալետտինեան արշաւանքներով: Աքսորականները կը ղրկուին անծանօթ վայրերը, իսկ իրենց տեղ Ձէյթունի եւ շրջականերու մէջ կը տեղաւորեցնեն մուհաճիրները. 8-900 մուհաճիր ղրկուած է արդէն: Որոշուած է ամայեցնել միւս հայաշատ կեդրոնները:

Տեօրթ-եոլ գրեթէ պարպուած է. 17-70 տարեկանները ամբողջ զինուոր տարեր են մէկ օրուան տեղ եւ չարաչար կը գործածեն. մնացեր են միայն պառուները եւ կիները: Ձէյթունէն 50 երիտասարդ փոխադրած են Մարաշ եւ կ'ըսուի թէ պիտի կախուին, խուժանը գոհացնելու համար:

Երզնկայէն 24 հոգի շղթայակապ տարած են Կարին. գէնք եւ ուռմբ կը պահանջեն: Աւագանի⁵⁰ ճամբով բազմաթիւ աճառացի կիւրճիներ կը գաղթեն Փոքր Ասիոյ ներսերը:

Շամի եւ Դուրանի դէպքերը մեծ ազդեցութիւն գործած են խուժանին վրայ: Աւագանէն (Տրապիզոն) կ'իմացնեն թէ Թալաղը իստիւ հեռագրեր է՝ կարգը պահել հաշտութեան պահուն հայերու արեան գինը չլճարելու համար:

Աքսորականներէն մաս մը ետ կը դառնան. այսօր կը

72.- Այսիպն Շամ-Վանը:

սպասուհին Քէչեան, Թորգոմեան, Կափուօշ եւայլն. կը տեսակցինք: Այսօր Պոլիս գտնուող երեսփոխաններն արտակարգ նիստի մը հրաւիրուած են. Գիսակն ալ գնաց: Զէնքերու հաւաքումը սկսած օրէն իսկ երեւան եկաւ բացայայտ խտրութիւն. իսլամներէն չեն առներ, իսկ մեր ստրուկները խումբ խումբ կը տանին յանձնելու. քիչերը ամուր կը մնան: Խուզարկութիւնները այսօր պիտի սկսէին բայց դեռ չսկսան:

Հագարաւոր վիրաւորներ կը հասնին ամէն օր. 20 հագարը անց է հոս եկածը. գերի [եւ]սպանեալ 70-80000 կը հաշուեն. ուրիշ աղբիւր մը 100 հագար վիրաւոր եւ 44 հագար սպանեալ կը ծանուցանէ: Չգիտենք որքան ճիշդ է: Տուներէն՝ անկողին, մահճակալ, գաւաթ եւայլն կը մուրան: Դպրոցները հետզհետէ հիւանդանոցի կը վերածուին: Այսօր մեր աչքովը տեսանք չախմախլը հրացաններ որ նորոգելու կը տարուէին:

Մեր բարեկամին պատմութեամբ (մեր պուլկար սուրհանդակը) իրենց դեսպանը տեսակցեր է Խալիլ պէյի հետ, որ յորդորեր է թէ երբ թշնամին գայ, թնդանօթները քաղաքին վրայ պիտի ուղղեն, քարուքանդ պիտի ընեն եւ այնպէս պիտի հեռանան...»:

Այս նամակով կ'իմացնեն թէ 5 նամակ ստացած են, որը պիտի ուղարկեն մեր սուրհանդակին հետ:

Ինչպէս ձեզ գրած ենք իր ատենին թէ Նուպար փաշայի վերջին գործունէութեան առթիւ (խօսքը Ազգ. շահ[երու] պաշտ[պանութեան] մարմնի մասին է) կատարի պայքար սկսած ենք Պալքաններու մէջ բարեգործականներու դէմ, ինչ որ իր օգուտը ունեցաւ: Շատ մը վայրեր ուր ձեռնարկած էին «Ազգ. շահերու պաշտպանութեան» մարմնի անունով հանգանակութեան, այժմ իրենց մտադրութենէն ետ կեցած են. կը փափաքին մեզ հետ համաձայնիլ միասին հանգանակելու:

Հնչակեաններու հանած վայնասունը (ի մասին հըն-

չակեան կամաւորներու) թէ Պալքաններու եւ թէ Ամերիկա ու Եգիպտոս, արդէն ամբողջ քողը պատուուած է եւ իրենց դիմակները վար առնուած. սրանից մի քանի օր առաջ Ազգ. բիւրոյից ստացանք մի շրջաբերական (ուղղեալ մեր հասցէին) որը արդէն շանթաբերական կ'անուանէ. մենք մեր ձեռաց տակ ունեցած փաստերով մի թուուցիկ հրատարակեցինք, անարգանքի սիւնին դամելով նրանց բոլոր արարքները: Հասարակութեան վրայ մեր այս մերկացումները շատ լաւ տպաւորութիւն գործած է. նրանք այլեւս անկարող են այդ ուղղութեամբ (ինչ որ առաջ կ'անէին) ոեւէ շարժում յառաջ բերելու. հասարակութիւնը արդէն լաւ կը ճանչնար գանոնք:

Պալքաններու մէջ կազմակերպական հիանալի գործունէութիւն կը տիրէ. բոլոր շրջանները ոգեւորուած են. ամէն տեղ մրցում կայ օգնութեան հասնելու թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս եւ ֆիզիքապէս տանջուած ժողովրդին: Կուսակցական ընդհ. հանգանակութիւնը սկսած ենք արդէն Ռուսճուքէն. արդիւնաւոր ըլլալ կը խոստանայ:

Թերթը (Հայաստան) հասարակութեան մէջ հետզհետէ լայն ընդունելութիւն կը գտնէ. մանաւանդ վերջին դէպքերը հասարակութեան վրայ ճշող տպաւորութիւն թողած է. կ'աշխատինք միշտ վառ պահել այդ տրամադրութիւնները:

Առաջին առթիւ մեզ իմացուցէք թէ մեր ուղարկած թերթերը եւ նամակները ամբողջութեամբ ձեր ձեռքը [կը] հասնին. գրեցէք եւ մեզ տեղեակ պահէք ամերիկահայ գաղութի գործունէութեան մասին, որին մեք շատ պէտք ունենք: Սպասելով ձեր նամակներուն՝ ընկերական բարեւաններով՝

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՊԱԼՔ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 904բ-3

18.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՍԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ԲԱԼԿ. ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Պոլիս, 8/21 Մայիս 915

Ընկերներ,

Կը հաստատենք մեր ապրիլ 28, 29/30, 1 մայիս թուակիրները, ամէնը միասին յանձնուած ձեր բարեկամին: Անշուշտ ստացաք: Կը հաստատենք նաեւ հին նամակները, որոնց պատասխան չունինք տակաւին, ինչ որ նոյնիսկ կը գայրացնի մեզ, նորէն կ'ուզենք հաւատալ թէ պատասխանատուն դուք չէք: Ապրիլ 29ին գրած ենք նաեւ թերթով:

1.- Այսչիները բոլորը միասին արգելափակ կը մնան: Այդ քաղաքէն միայն չէզոք բժիշկ մը վերադարձաւ, որ կը պատմէ թէ ամէնը 80 հոգի՝ իբրեւ կուսակցականներ, յատկապէս վարձուած ագարակի մը մէջ արգելափակ կը մնան, գրկուած ամէն հաղորդակցութենէ, թէեւ թուրք ժողովուրդը շատ լաւ վերաբերում ունի: Նախ կը կարծեն եղեր թէ հասարակ չէթաներ են: Մինչդեռ հիմա համոզուեր են որ շատ յարգելի մարդիկ են... Տեղը այնքան աղտոտ է եղեր որ, գլխներուն մէջ մէկ տոպրակ կ'անցնեն մլուկներէն եւ ոջիւններէն չնեղւելու համար: Երկուքը մէկ անկողին կը պառկին եւ ուրիշ տեսակ նեղութիւններ: Չանդրբիէն դարձան միայն 8 հոգի (Քէչեան, Կոմիտաս վարդապետ, Տոքթ. Թորգոմեան, Նարկիլէճեան). պարկերով բերած են ուրիշ երկու հասարակ մարդիկ: Վարդապետը կը պատմէ որ շատ հանգիստ էին, ոչ իսկ հարցաքննութեան կանչած են: Առաջին խմբակը 206 հոգի էր, Չանդրբի մէջ բոլորն ալ շատ հանգիստ են, քաղաքին մէջ ազատ կը պտտին. հրամանատարը եւ տեղացիները շատ յարգանքով վարուած են. հրամանատարը նոյնիսկ թէյստեղանի հրաւիրած է, խոստովանած է որ սխալ մը գործուած է եւայլն. 40-50 հոգի ալ իբրեւ թէ պիտի դառնան. ուրիշ խօսքով՝ չանդրբիները իրենց տեղերը պիտի դարձնեն, իսկ այսչիները առայժմ յայտնի չէ: Կը վախնանք որ հիմա աւելի խստացուցած ըլլան անոնց վիճակը: Մերիններէն Չանդրբի է Հրաչը, որու տեղ ուրիշ Հրաչ Թիրեաքեան մը տարած են Այաչ, իբրեւ դաշնակցական: Չանդրբի են նաեւ Սրենց, Նշան, Տոքթ. Միրզա, Տոքթ. Բարսեղեան:

Ինչպէս կը հաստատուի, միեւնոյն ապրիլ 12ի օրը կայսրութեան ամէն կողմը, տրուած ազդանշանի մը վրայ, միեւնոյն կերպով ձերբակալեր են եւ աքսորումներ եղած են: Մօտ 100 հոգի տարած են Նիկոմիդիայէն, 70/80 Պարտիզակէն, 40՝ Պրուսայէն, 30/40ական Պանտրմա-Պարքեսէրէն, 80՝ Ատաբազարէն. բոլոր կուսակցական, մտաւորական, երիտասարդական տարրերը

հաւաքած եւ քշած են ներս: Գոնիայի եւ Ատանայի նահանգներուն թրքաբնակ վայրերը: Աւելի սարսափելի հետապնդումներ եղած են ներքին գաւառներու մէջ. ինչպէս պիտի տեսնաք արտագրուած վերջին նամակներէն ալ՝ Կեսարիա, Սըվազ, Կարին, ամէն կողմ նոյն բարբարոսութիւնը կատարուած է, առանց հարցաքննութեան, ասանց յառաջաբանի:

Այստեղ իսկ հետապնդումները չեն դադարած տակաւին. քանի մը օր առաջ ձերբակալեցին կրթական տեսուչ Դ. Գալանթարը, ուրիշներու հետ: Ինչպէս կը պատմեն կալանաւորները, Իթիհատը կարծեր է երեւան հանած ըլլայ հայկ. խոշոր շարժում մը, բայց հիմա ամօթապարտ է մնացեր (այսպիսի խօսքեր ըսած են հոս ալ, մանաւանդ յիշելով որ մեծ բաներ պիտի գտնէին Ազատամարտէն, բայց յուսախաբ են եղեր. հակառակ այնքան պեղումներէն յետոյ, խուժանը գոհացնելու համար բան մը գտնուած ըլլար:

2.- Երէկ գերմանական դեսպանատունէն հաղորդեցին որ Կարինի ու շրջակայ ամբողջ հայ բնակչութիւնը գիւղերով միասին՝ քշած են դէպի ներս, Մամախաթուն եւ Դերջան: Իբրեւ թէ դեսպանատունը պիտի բարեխօսէ չարիքը մեղմացնելու համար, ինչպէս պատմեց մեր բարեկամը սարսափահար ծանուցանելով այս հրէշային իրականութիւնը: Այս քայլը առնուած է եղեր իբրեւ պատասխան ռուսներու յառաջխաղացութեան: Չեզի կը թողունք կլուել կամ երեւակայել հետեւանքները այս շահապաասեան գազանութեան: Միեւնոյն աղբիւրէ հաղորդեցին թէ Վանը հայերուն ձեռքն է, թէ Կոմսը բանտարկուած է Մուշի մէջ, թէ Զէյթունը եւ Կիլիկիոյ միւս հայաշատ կեդրոնները բռնի պարպուած են եւ ալպանացի գաղթականներ գետեղուած են:

Կարին երէկ իսկ նամակ պիտի գրէինք, բայց այլեւս անօգուտ է: Չենք գիտեր թէ ստացա՞ծ են մեր ապրիլ 24 եւ 25 թուակիրները, որովհետեւ տղաքը ձերբակալուած են եղեր արդէն եւ հազիւ քանի մը հոգի կը մնային: Ստորեւ կ'արտագրենք անոնց վերջին նամակը որ մեր ձեռքը հասաւ բշ. օր.—

Կարին, 19 ապրիլ.— «Շամէն ոչ մէկ լուր. գրոյցներու նայելով, ռմբակոծում, կոտորած, հրդեհ է պատահած: Նոյնը կը պատմեն նաեւ Մուշի մասին. խստութիւնները սկսան հոս ալ, հինգ օրէ ի վեր ծայր տուած է ձերբակալումներու շարք մը: Երեւի բոլոր հայերը եւ մասնաւորապէս մեզի պիտի քշեն ներս: Ընկերներէն 10-15 հոգի բռնուած են արդէն, հերթը շուտով մնացած—

ներուն կու գայ: Մարալն⁷³ ալ բանտարկուեցաւ: Ապուշները կը վախնան եղեր հայկական ցնորական ապստամբութենէ մը: Իբրեւ թէ Դաշնակցութիւնը երկու մասի բաժնուած է. մէկը ապստամբական, միւսը՝ ոչ: Խուզարկութիւնները մնացին ապարդիւն. պատերազմ չկայ, կոտորածը վճռուած հարց կը թուի. միայն թէ պատրուակ կը փնտռեն»: Գրողը Վանիկն⁷⁴ է, որ ժամէ ժամ կը սպասէր իր ձերբակալումին, տալով նոր հասցէ:—

Ահա եւ Սեւ Բլուրի նամակը, Ապրիլ 27 թուակիր:— «Տոքթ. Փաշայեանը Այաշէն հեռագրով դրամ ուզած

73.- Մարալ – Փափախեան Փիլոս:

74.- Վանիկ – Թերլեմէզեան Միհրան, որ իբրեւ Վանի պատգամատուր Հ.Յ.Դ. Տրդ Ընդի. ժողովին մասնակցելէ ետք մնացած էր Կարին:

75.- Պարոյրը հայրուկայեան Անդրանիկն է. Վարդանը (Խանասորի) Սեհրապեան Սարգիս: Երկուքն ալ կամաւորական գունդերու հրամանատարներ:

էր: Չհասկցանք թէ ի՞նչ ըսել կ'ուզէ: Երեւի աքսորած են. գրեցինք գաղտնի դրուածքամբ, շրջանի խոշոր քաղաքները՝ Աֆիոն Գարահիսար ու Գոնիա:

Կ'իմանանք թէ Տարտանէլի մէջ հայ վիրաւորները ոչ միայն իրենց բախտին կը ձգեն, այլեւ զիտամբ կը մեռցնեն, ինչպէս պատմեցին ականատեսներ ալ: Դիտելի է որ բոլոր հիւանդանոցներուն [մէջ] ալ շատ քիչ է հայ վիրաւորներուն թիւը:

Երկրէն անհամբեր լուրի կը սպասեն, Պարոյրի, Վարդանի⁷⁵ եւ միւսներուն գործողութեանց մասին:

Ընկ. բարեկներով
Առժամեայի կողմէ
ԱՐՇԱԻԻՐ

Վաղը նամակ կը գրենք նոր հասցէին եւ թերեւս հաս մըն ալ այսօր:

ՆՈՅՆ

Փաստ. 882-56

19.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՍԵԱՅԷՆ ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԷԻՆ

Այս փաստաթուղթը կը բաղկանայ եօթը փոքրադիր էջերէ, գրեթէ բոլորն ալ պակասատուր՝ իրենց սկիզբի կամ աւարտական երեսներուն, երբեմն թէ՛ սկիզբը եւ թէ՛ աւարտին: Չատորոշելի են իրարմէ տարբեր երկու ձեռագիրներ եւ երկու ստորագրութիւններ, — «Վիշապի Առժ[ամեայ] Մարմին» եւ «Առժամեայի կողմէ՝ Արշաիր» որ, ինչպէս ծանօթ է, ծածկանունն է Շաւարշ Միսաքեանի: Ինչ կը վերաբերի ձեռագիրներուն, յիշեցնենք որ անոնք կը պատկանին արտագրող գրիչներուն:

Ձեռագիրը անթուակիր է եւ իր բովանդակութեամբ՝ կցկտուր եւ տարաբնոյթ, այն իմաստով որ հաղորդուած տեղեկութիւնները կը վերաբերին Պոլիսէն սկսեալ մինչեւ Երկրի հեռաւոր շրջաններու իրադարձութիւններուն: Կը ներկայացնենք այնպէս ինչպէս է, պակասատուր մասերը նշելով բազմակէտներով:

..... այլեւ ուրիշ ով որ հեռագիր տար ուրիշ գաւառներէ ձայներ կը հասնին այս կամ այն ձեւով. ինչպէս յուսահատական կուր մըն է որ կը մղեն, կտրուած ամէն կողմէ, գերագոյն պայքարը որ կրնայ աղէտալի վախճանի մը յանգիլ ուշ կամ կանուխ, եթէ օգնութեան չհասնին արեւելքէն: Միջոց կա՞յ արդեօք Սարուստանի²² տղոց հետ շփում հաստատելու, շղթան ճեղքելու, վերջապէս տղաքը պաշարումէ, անօթութենէ ազատելու համար, միեւնոյն ատեն փրկելով ժողովուրդն ալ:

Յոյներու տեղահանումը ճիշդ է: Իրենց պատմութեան համաձայն արդէն իսկ 50000 հոգի տեղափոխած են, բայց ո՛րը չգիտենք դեռ: Միրայի մետրապոլիտը Պոլսէն յուսահատելով անցեր է Յունաստան՝ հոն բողոքելու:

Տարագիր ընկերոջ մը կինը երէկ վրդովումով կը պատմէր որ՝ Ժընեւի մէջ տեղեկագիր մը հրատարակուած է՝ հայ կամաւորներու թուի եւ գործունէութեան մասին, եւ կը վախնար թէ ատիկա նոր պատճառ մը պիտի ըլլայ այս խելագարներուն թոյնը թափելու մերոնց վրայ: Չենք գիտեր թէ արտասահմանի մէջ ինչպէս կը տարուի բորբականտի գործը, բայց երեւի անգգոյշ քայլեր պակաս չեն, ինչպէս՝ Կարոյի Ֆետայական նկարին հրատարակումը՝ որ արտատպուեցաւ այստեղ՝ ոստիկաններու յատուկ թերթին մէջ, «դաշնակցական Ասպարէզ թերթէն առնուած» մակագրութեամբ⁷⁶: Հոս ընկերները կը զարմանան որ դուք եւայլն[?] խոհեմութեան յորդորներ եղան մեզի՝ համբերելու որպէսզի աքսորական ընկերներու կեանքը չվտանգուի, մինչդեռ այդտեղ այնպիսի յանդգնու-

76.- Խօսքը կը վերաբերի Արմէն Գարոյի (Փաստրմաճեան Գարեգին), Օսմ. խորհրդարանի նախկին երեսփոխան, որուն մէկ լուսանկարը՝ կամաւորական գունդի հետ՝ հրատարակուած Ֆրեզոնի «Ասպարէզ»ին մէջ, լայնօրէն շահագործուեցաւ Թուրքիոյ կողմէ:

Թիւններ կ'ըլլան որ մարդ ապշահար կը մնայ:

..... չեն յաջողած: Բոլոր երիտասարդ ժանտարմները պատերազմի կը դրկուին. իրենց տեղը անցած են տարեց (45էն վեր) թուրքեր՝ թաւիչ համազգեստներով, որոնք կը պտտին մէկ մէկ ոստիկանի ընկերակցութեամբ:

Ընկ. բարեկներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ

..... Իրենց գիւղերով խուզարկուեցան: Զերբակալուած են աչքի ընկնող դաշնակցականներ, հնչ[ակեաններ], չէգոքներ. եւ բոլորը հոս կը բերեն: Մօտ ատենէն կալանաւորներու թիւը թերեւս 500ի կը հասնի: Կալանաւորներուն ոչ մէկ բան կը հարցնեն. անշուշտ իբրեւ պատանդ կ'ուզեն պահել, ի հարկին կախելու համար, երբ խուփութիւն ծագի: Վարդան եւ Բիծա Որոտումէն⁷⁷ կը գրեն որ հաւանութիւն տան

..... Լօժն ալ խուզարկեցին հակառակ ընդդիմութեան. գոյքերը տարին, յետոյ վերադարձուցին: Մասնաճիւղը վախցաւ գրելու Պոլսոյ կեդրոնին, թէեւ վարդապետը Օսմ. պանքի տնօրէնին գրած է թէ օտարահպատակներուն կացութիւնը օրէ օր կը ծանրանայ, վտանգելով բոլորիս գոյութիւնը:

Մենք ալ թագնուած ենք: Զեր նամակ չգրելը կը յուսահատացնէ մեզ: Երզնկայէն

..... Վանի մէջ կոտորուած են, ինչպէս կ'իմանանք դեսպանատուներէն 400 հոգի, երեւի դուք սխալմամբ գրած էք 6000:

Ամերիկեան քոլէճը կը փակուի Մայիս 28-ին: Այժմէն կ'իմացնենք որպէսզի մեզի այն հասցէին չդրկէք: Գրեցէք հետեւեալ հասցէին.—

M^{lle} Vergine Khatcherian
Grand rue Pangalti, N° 53, Péra

Գրեցէք ընտանեկան նամակ. Minerva-ին⁷⁸ ալ կրնաք դրկել, առանց յիշելու Չէօկիւրեան կամ ուրիշ հայ անուն, միայն Ֆիրմային հասցէն գրելով եւ յանձնելի (աղջկան անունը): Ուրիշ հասցէներ ալ կու տանք, պիտի դրկեն:

Կիլիկիայէն ալ նոր նամակ չունինք. երեւի հոն ալ բանտարկած են բոլոր ծանօթ դէմքերը: Սեւ Բլուրը⁴⁰ պատասխանելով մեր հարցումին, կ'իմացնէ թէ Բանալիի⁶⁴ մէջ խիստ խուզարկութիւններ կատարուած ըլլալով իրենց յարաբերութիւնները խզուած են: Աւագանէն⁵⁰ պատասխանի կը սպասենք. Սեւ Բլուրը կապ ունի միայն Բերդի⁷⁹, Կեսարիոյ եւ շրջանակներուն հետ: Խարբերդէն ձայն չկայ: Ինչպէս կը տեսնէք Երկրէն միայն Սեւ Բլուրը կը մնայ առայժմ: Հակառակ ձեր խոստումներուն, մենք այստեղ աւելի հարուստ լուրեր կը ստանանք: Ո՞ւր է աւելի յաճախ գրելու խօսքը

..... Իբրեւ փաստ մեր correct եւ օրինապահ ընթացքին:

Ընկ. բարեկներով
Առժ[ամեայի] կողմէ
ԱՐՇԱԻՐ

Ոստիկանութեան կողմէ փակուեցան բոլոր հայ ակումբները, լսարանները եւ մարզարանները:

77.- Որոտում – կուս. ծածկանունն է Տիվրիկ քաղաքի: Տես ծանօթ 42:
78.- Minerva – դերձակատուն Պոլսոյ մէջ. կը պատկանէր Օննիկ Չէօկիւրեանին:
79.- Բերդ – կուս. ծածկանունն Շապին Գարահիսարի:

Փաստ. 882-12

20.– ՊՈԼՍՈՅ ԱՌԺԱՍԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

13/26-V-1915

Կը հաստատենք մեր Մայիս 8 թուակիրը գոյգ նամակները, մէկը թերթով: Ջղագրգիռ սպասումէ մը վերջ ստացանք ձեր Մայիս 6 թուակիրը: Այս օրուան մեր ժողովէն յետոյ կը պատասխանենք դրամի մասին ձեր ըրած հարցումին: Երեւի ձեր տրամադրած գումարին կէսն իսկ շատ պիտի գայ մեզի համար, որովհետեւ ոչ մէկ տեղ կրնանք ղրկել: Սեւ Բլուրին⁴⁰ թերեւս ղրկենք ի նախատեսութիւն:

Գիսակ երէկ ներկայացաւ Թալէաթին իր բնակարանին մէջ. չէ ուզած որ պաշտօնատուն երթայ. նախարարը բացարձակապէս յայտարարեւ է՝ «Քանի որ դուք մեր նեղ օրերուն մեր վզին չոքելով, բարենորոգում, ինքնավարութիւն, եւայլն պահանջեցիք, հիմա մենք ալ մեր լայն օրերուն հայ ժողովուրդը ցիրուցան պիտի ընենք, որպէսզի մինչեւ 50 տարի բարենորոգման կամ ինքնավարութեան խօսք չկարենաք ընել...»:

Գիսակը դիտել տուած է որ Համիտին գործը շարունակել կ'ուզէք. Թալէաթը հաստատական պատասխանած է առանց վերապահութեան: Այաչցիներու վիճակը մեղմացնելու մասին, նախարարը յայտնեւ է թէ՝ երբ քիչ մը ազատ ձգեն, կը վախնան որ փախչին... բայց եւ այնպէս խոստացեր է հրահանգներ տալ որ քիչ մը թոյլատու գտնուին. իբրեւ թէ առայժմ կ'արտօնեն եղեր օրը քանի մը ժամ պտտելու, գորանոցին բակին մէջ:

Այաչէն Հայկ Թիրեաքեան անունով նպարավաճառ մը, որ սխալմամբ տարած են Հրաչին տեղ, վերադար-

ձաւ եւ կը պատմէ որ շատ գէշ վիճակ ունին այաչցիները. աղտոտութեան մէջ են. մինչեւ արտաքնոց անգամ ոստիկան կ'ընկերանայ: Նամակները միշտ թուրքերէն կը գրուին երկու կողմէն ալ, եւ ոստիկանութեան միջոցաւ կը յանձնուին: Թերթ կը ղրկենք երբեմն, բայց վստահ չենք թէ կը յանձնեն: Մենք կը կարծենք որ այժմէն կարելին ընելու է զանոնք գոնէ քաղաքին մէջ ազատ ձգելու համար: Երբ Պոլիսը իյնայ, այլեւս անյուսալի է որեւէ մեղմացում:

Էտիրնէէն նախ 40, յետոյ 180 հոգի աքսորուած կամ բանտարկուած են. Կեսարիայէն՝ 200. սարսափելի է հետապնդումը այդ շրջանին մէջ: Սեւ Բլուրէն կը գրեն թէ շրջանէն ձերբակալուած եւ քաղաք բերուած աքսորականներուն մեծ մասը մեր ընկերներն են:

Ձէյթունի այրերը կիներէն բաժնելով, կին ու աղջիկ քշեր են Էնկիւրիի գուտ թրքաբնակ մէկ գիւղ եւ հոն ձգած են խուժանին առջեւ՝ ենթակայ անոնց ամենավայրագ կիրքերուն: Պատրիարքարանէն կարգ մը տեղեկագիրներ:

Ծանօթ Խմբ.– Երկրորդ էջը հոս կ'աւարտի, յաջորդ էջը կամ էջերը կորսուած են: Պակտոյ մասը կը գրուենք Պաքսանի Կ. Կ.ին կողմէ «Դրօշակ»ի խմբագրութեան ղրկուած քաղուածքին մէջ (տես էջ 66, սիմակ ա.):

Փաստ. 882-9

21.- ԵՐԶՆԿԱՅԻ ԸՆԴԱՐՉԱԿ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ, ՄԱՅԻՍ 12 ԹՈՒԱԿԻՐ!

16 Յունիս 1915

Ա.- Թէքէլիֆի⁸⁰ համար ինչ որ առին թուրքերէն՝ անոնց տասնապատիկը առին հայերէն: Ձիեր եւ ջորիներ կը բերէին հայ վաճառականներու դրան առջեւը եւ ինչ որ կը գտնէին մաղազայէն կամ խանութէն, նոյնութեամբ կը բեռցնէին եւ կը տանէին, հոգ չէ թէ բեռը Լաժ այդ ապրանքներու շատերը յարմար նիւթեր չէին բաւական էր որ հայերու քով կը գտնուէին եւ անոնց մաղազաներէն դուրս կու գային: Իսկ երբ տանելու կարգը թուրքերուն կու գար, քոմիսոնի⁸¹ անդամները նախապէս անոնց լուր կու տային թէ վաղը ձեզի պիտի գանք, եւ այս զեկոյցին վրայ անոնք խանութի ապրանքները տուն կը փոխադրէին: Իսկ եթէ ոեւէ հայ աննշան բան մը փոխադրելու ըլլար, փողոցներու ծայրը հակող թուրքեր իսկոյն կը բռնէին ապրանքները եւ փոխադրողը կ'առաջնորդէին բանտ եւ հոն խիստ խոշտանգումներէ յետոյ կը զրկէին Կարին պատերազմական ատեանին: Շատ հայեր այսպէս ի զուր տեղը պատերազմական ատեան զրկուեցան:

Աշնան սկիզբները տեղացի վաճառականներէն Գրիգոր էֆ. մեծաքանակ կտաւ բերել տուած էր. այն ատենները գրաւեցին անոր 800 ծր[արը]. իսկ վերջերս տունն ալ խուզարկելով մնացած բոլոր ապրանքները տարին: Կառավարիչը սակայն բացառիկ շնորհ մը ըրած ըլլալու համար վեհանձնօրէն Գրիգոր Լեփեանը պատերազմական ատեանին չէ յանձնած:

Բ.- Վերոյիշեալ քառեակի խորհրդով եւ արտօնութեամբը գինուորական Մուհամմաթը գրադիրներէն Հագգը պէյ շուկան երթալով Սարգիս Ստեփանեանի վաճառատունը կը մտնէ եւ հոն կ'ապելով աչքի գարնող մի շարք հայեր, երկու օրուան մէջ 300 ոսկի դրամ կը գանձէ, եւ կը տանի չորս կարգ բաժանումներով՝ 5-10-15-20, եւ իբր ձեւակերպութիւն շատ աննշան մաս մըն ալ կը գանձէ թուրքերէն...: Բնաւ յայտնի չէ թէ այս ոսկիներն ուր ծախսուեցաւ եւ կամ ո՞ր զրկուեցաւ: Քառեակը ամէն ինչ է այստեղ. ոչ ոքի իրաւունք տրուած չէ անոր որոշումներուն կամ գործադրութեան դիտողութիւն ընել եւ հարցում ուղղել. արդէն կողոպտուողը հայն է եւ դեռ հայր բերան ունի՞. այս պարագային հայու լեզուն իր բերնին մէջ չի դառնար:

Գ.- Շուկաները պարպելէ յետոյ կարգը կու գայ

տուններու խուզարկութեան. չարագործ ոստիկանները ոչ արցունքի կը խնայեն եւ ոչ զգացումներու: Խուզարկութեան միջոցին կիներու սնտուկներու զգեստները աղէկ մը կը քրքրեն, անոնց մէջ գէնք ու պոմպա փընտուելու եւ պատահի որ պատիկ գէնք մը կամ որսի հրացան մը ու փամփուռներ գտնուէին, մեծ բան մը գտածի պէս իսկոյն կը բանտարկեն եւ բանտարկուածներէն ոմանք ծեծելէ յետոյ զրկեցին պատերազմական ատեանին: Երեկոյ մը, ուշ ատեն Արամ Սրապեան եւ խնձորեկացի Փիլիպպոսը կը տանին բանտ. այն աստիճան կը ծեծեն որ ծեծի ազդեցութենէն շաբաթներով անկողնի կը ծառայեն. մի քանի օր յետոյ Արամ Աշոտը կը ձգեն, իսկ Փիլիպպոսը Կարին կը զրկեն: Ասկէ յետոյ փերեզակ Ամասեան Հմայեակի տունը կը խուզարկեն եւ տունն ալ միայն ամիս մը առաջ վարձած է եղեր. այս վարձուած տան թոնիրի տակից շատ հինէն մնացած ջրհորի նման փոս մը երեւան կ'ելլէ. այս մեծ գիւտէն յետոյ Հմայեակը այն աստիճան կը ծեծեն որ ոտքի կենալու անկարող վիճակի մը կ'ենթարկուի եւ 15 օր հիւանդ կը պառկի. երբ խեղճը անկողնէն կ'ելլէ կը բռնեն եւ բանտ կը նետեն. բանտին մէջ ալ քանիցս մահու հափ ծեծելէ յետոյ աքցանով մատներու եղունգները եւ գլխու մագերէրը բոլորն ալ կը քաշեն: Խելակորոյս կ'իյնայ, վրան ջուր կը լեցնեն ու երբ քիչ մը կ'ուշաթափի կրկին ու կրկին կը սկսին ծեծել հարցնելով թէ ի՞նչ կայ այդ փոսին մէջ: Երբ խեղճը իր բան մը չգիտնալը կը յայտնէ տանջանքը աւելի եւս կը սաստկացնեն. ամէնէն յետոյ տաճիկները թուղթ մը կը ներկայացնեն եւ այս չարաչար տանջանքներու մէջ բռնի ստորագրել կու տան, որուն մէջ գրուած է եղեր թէ այն թոնիրի տակը պոմպա ու գէնք պահած են, սակայն նպատակներն ինձ անծանօթ էր: Այս ստորագրութիւնը առնելէ յետոյ զինքը զրկեցին Կարին, իսկ թուղթը ցարդ երեւան չելաւ. տեսնեք վաղը ի՞նչ հրէշային նախճիրներ գործել տալու դուռ պիտի բանայ:

Քաղաքի մէջ շատերու տունները խուզարկեցին. բարեբախտաբար ոչինչ չգտան. քառեակին նպատակն է անցեալ տարուայ պոմպայի հետք մը գտնել որ ամբողջ հայութիւնը փճացնեն Երզնկայի մէջ: Քաղաքէն յետոյ կարգը կու գայ գիւղերուն:

Դ.- Ժանտարմայի յիսնապետ Սիւլէյման էֆ. 30 ոստիկաններով Մարտ 14ին Միննի գիւղը կ'երթան, նախ գիւղացիներէն 100 ոսկի կը պահանջեն առանց ըսելու

80.- Թէքէլիֆ – գինուորական հարկ:
 81.- Քոմիսիոն – յանձնախումբ:

Թէ որու հրամանով, ինչ նպատակի համար: Գիւղացիք այդքան ուստիկաններու ներկայութենէն ահաբեկած չեն իսկ հարցներ թէ այդ ինչ դրամ է. միայն կ'աղաչեն որ աւելի դիւրամատչելի գումար մը պահանջուի որ պարտքով կարողանան ճարել. շատ աղաչելէ յետոյ 50 ոսկիի որոշում կու տան եւ հարեւաններէն փոխ առնելով 64 ոսկի դրամ կը գանձէ: Դրամի խնդիրը կարգադրելէ յետոյ մինչեւ առաւօտ իրեն ուզած կերուխումը կ'ընէ եւ առտուն կանուխ կը սկսի խուզարկութեանց. կը ծեծեն այրերը, կիներն ու զաւակները եւ պոմպա ու գէնք կը պահանջեն. ծեծուողները եւ անոնց պարագաներու լացն ու կակիծը ու տաճիկներու հրէշային քրքրոցը ամէնէն ահուկ տեսարանն էր որ կը պարզեն:

Գիւղի քահանան 5 անգամ կը ծեծուի, իսկ երբ տաճիկները ծեծելէ կը յոգնին, կը դիմեն այլեւս այլ ճիւղացիին հնարքներու. օրինակ, սենեակի մէջ կը բանտարկեն ու վրանին հրագէն կը սկսին արձակել: Օթելօի Հաֆըզ անուն հրէշ մը սահմանադրութենէն յետոյ մարթին հրացաններ կը տանի նոյն գիւղը եւ սող գնեցող կը ծախէ. այժմ ցուցմունքներ կ'ընէ: Ճարահատեալ քահանան գէնք ունեցողներու անունները կու տայ եւ անմիջապէս կը հաւաքեն: Հաւաքելէ յետո սուր մը կը կախեն քահանային մէջքը, Ֆելէկլիկ մը կը ծեծին, հրացան մը ուսին. միւսներն ալ միեւնոյն կերպով. քահանան առջեւնին ձգած կը բերեն քաղաք ու դիտմամբ բազմամարդ փողոցներէ անցնելով բանտ կը տանին: Բանտի մէջ ալ ծեծելէ յետոյ, 40ի չափ գիւղացիներու հետ կարս⁸² դրկեցին: Մեծի ազդեցութենէն ու վախէն կիներ կը վիժին. հարս մը եւ երիտասարդ մը վախէն կը մեռնին եւ քանի մը հոգի ալ տակաւին վտանգաւոր կերպով հիւանդ են: Այս գիւղը մինչեւ հիմա բազմաթիւ թեքելիքներ տուած է աշարի. էղնամի, էմլաքի եւ թիճարէթի⁸³ համար 7000 ոսկի տուրք կուտայ կառավարութեան: Այնուամենայնիւ այսօր մոխրի վրայ նստեցողցին ամբողջ գիւղացիք: Գիւղի այս բոլոր պատահածները թագրիրով մը գիւղի բոլոր քահանաներու ստորագրութեամբ ներկայացուցինք կառավարչին՝ որուն պատճէնը արդէն յղեցինք ձեր սրբազնութեան մարտ 20 թուականով. կառավարիչը գիրը կարդալէ յետոյ ըսաւ թէ՛ դուք ի՞նչ իրաւասութիւնով այսպիսի գիր մը կը գրէք եւ սակայն կ'ընէք — կը պատասխանենք թէ ոչ ապաքէն բարեխնամ կառավարութիւնը հայոց մասնաւոր առանձնաշնորհներ տուած է որու շնորհիւ արտօնեալ ենք հանրութեան վերաբերեալ խնդիրներու մասին թագրիր գրել եւ խնդրանք ընել: Կը պատասխանէ թէ հիմա երիտասարդ կառավարութիւնն է որ ձեզի երբեք առանձնաշնորհում չի կրնար տալ: Հետեւաբար բնաւ

իրաւունք չունիք գիր գրելու, դիտողութիւն ընելու. կառավարութիւնը ինչ ուզէ այն կրնայ ընել: Հիմա եթէ ուզեմ ձեր այս գրով կը յանձնեմ ընդհ. դատախազին ու դուք ալ գիւղացիներու քով բանտը կ'երթաք: Պէյ Էֆէնտի, ըսինք մենք, չենք ուզեր կառավարութեան գործերուն խառնուիլ, միայն թէ ուստիկան մը ի՞նչ իրաւասութեամբ քահանայ մը 5 անգամ կը ծեծէ մեռցնելու աստիճան, նոյնպէս կիներ, տղաքներ եւ պզտիկ աղջիկներ ալ կը ծեծէ անոնցմէ պոմպա պահանջելով: Գիւղացին ինչ գիտէ ինչ է պոմպան եւ գինուա՞ծ լեռնէն բռնեցէք այդ մարդիկը որ գինուած քաղաք կը բերէք ժողովուրդը գրգռելու համար: Նա պատասխանեց թէ կառավարիչը ազատ է բացարձակապէ՛ս իր ուզած միջոցներուն դիմելու եւ թէ մեզ չի հետաքրքրեր այլեւս: Ըսաւ թէ մինչեւ ցարդ երկրին վաճառականութիւնը ձեր ձեռքն էր, յետ այսու ամէն ինչ պիտի առնենք ձեր ձեռքէն. առաջնորդ բան մըն ալ չեմ ճանաչեր. իբրեւ կրօնաւոր լոկ կրօնական գործերու կը խառնուիք. ասկէ անդին գործ չունիք եւայլն եւայլն:

Ե.- Մեղուս գիւղի մէջ յիսնապետ Սիւլէյման իրեն օժանդակ ունենալով գիւղին շարագործները, Ատել Էֆէնտի նոյն կերպով կը վերաբերուի: Նախ դրամ յետոյ խուզարկութիւն եւ ատով ալ չբաւականանալով կը ստիպեն որ իրենց դրացի թուրքերէն երթան եւ գէնք գնեն. ծեծի սաստկութեան տակ շատ մը գիւղացիներ կը պատրաստուին իրենց ինչքը ծախելու [եւ] թուրքերէն գէնք գնելու: Այս բոլորէն յետոյ գիւղի քահանան քանի մը գիւղացիներու հետ կարին կ'ուղարկեն: Մեղուսէն յետոյ կ'երթան Արձան գիւղը, միեւնոյն մեթոդները աւելի զարգացած կերպով հոս ալ ի գործ կը դնեն: 60 ոսկիի չափ դրամ առնելէ յետոյ խուզարկութեան պատրուակի տակ շարք մը կիներու զարդեղէնները կը կողոպտեն: Մեծը զարհուրելի է երբ ուստիկանին մէկը ոտքերուն եւ միւսը գլխուն վրայ կը նստի խեղճ դատապարտեալին որ 200 հարուած կ'ուտէ կրկին ու կրկին սթափեցնելէ յետոյ: Քանի մը կիներ ծեծի տակ մարեցան եւ ինկան. յիսնապետ Սիւլէյման կ'ըսէ թէ մինչեւ հիմա դուք գէնք ունենալու արտօնութիւն ունէիք բայց այժմ ձեռքս իրատէ ունիմ ձեր բոլոր գէնքերը ուզած ձեռովս հաւաքելու:

Այս գիւղին մէջ ցարդ չլուած բան մըն ալ պատահեր է եւ Մոլլա գիւղին Աւետիս Զենկեան եւ Մխիթար Համբարձում Պետրոսեան որ ուստիկանները միասին տարած էին՝ երբ ծեծէն այլեւս բոլորովին կը նուաղին, կը քաշեն արտաքնոցը եւ հոն վրանին երկու կերպ աղտոտելէ [յետոյ] կը տանին եւ առուի ջուրին մէջ կը ձգեն: Ասկէ զատ Միւտիւր Ատելը, Շաքիր եւ Հիւզգամը 3-4 ժամ կ'նոջ մը տունը կ'երթան եւ հոն կը մնան: Կիներ ծեծի պատճառով մեռաւ. քանիներ ալ հիւանդ են տակաւին:

82.- Կարս կամ Խարս, զիւղ Էրզրում նահանգի Թորթումի շրջանին մէջ:
83.- Հարկի տեսակներ. աշարը՝ տասանորդ տուրք, էղնամ՝ ոչ-խարի տուրք, թիճարէթ՝ անտարակաւ տուրք:

Մեծ-Ազգրակ գիւղէն 6 հոգի պատերազմական ատեան կը զրկեն. կ'առնեն 92 ոսկի եւ խուզարկութիւններ կը կատարեն միւսներու նման խ[ու]ժդուժ միջոցներով: Մոլլա գիւղը միեւնոյն բախտին կ'արժանանայ: Տաճրկի մէջ ոստիկաններ եւ չէթաներ պատուոյ խօսքեր կ'ընեն որով հարս ու աղջիկ լեռը կը փախչին: Հոս ալ գէնք ու կապար կ'առնեն եւ քաղաք կը տանին: Դէպքը տեղի կ'ունենայ գատկի ճրագալոյցին. չէթաներն եկեղեցի կը խուժեն, ժողովուրդը լեղապատառ կը փախչի: Պատարագը կ'ընդհատուի, քահանան կը խոշտանգուի:

Զ.- Մահմուտ Պեքրի գիւղին մէջ, նախ մեղմ կը վարւին, երեք հոգի բռնելով կը տանին քաղաք: Յիսնապետ Սիւլէյման երեք կալանաւորներէ 15 ոսկի կը պահանջէ որպէսզի չբանտարկէ: Դրամը առնելէ վերջը կը տանին բանտ, յետոյ կը հանեն եւ կ'առաջնորդեն Սիւլէյման էֆ[էնտիրին] տուն ուր եւ Օթեյճի Հաֆըզ, Ճիւօղլու եւ Շաքիր եւ ուրիշ իժեր կը սկսին սարսափելի ծեծել, երեքն ալ կը մարին: Զուր կը լեցնեն, սթափեցնելով նորէն կը ծեծեն, երբ նորէն կը մարին կ'իյնան, քաշելով կը տանին արտաքնոց եւ վրանին կը միգեն եւն. եւն.: Երկար ատեն հոն ձգելէ վերջը նորէն կը տանին Սիւլէյմանի սենեակը եւ կը սկսին աքցանով եղունգնին փրցնել եւ մէկին ալ երկու մատը կը փրցնեն աքցանով: Զէնքերու տեղը, դաշնակցականներու անունները, եթէ ոչ կը սատկեցնենք: Պատասխան չառնելով կը սկսին մատերնին կտրել, միսերնին աքցանով բզկտել, ոտքերով կոխկռտել, վերջապէս չչսուած չտեսնուած բաներ: Դիմեցի կառավարիչին, որ խոստացաւ պատժել եւ արդարեւ բանտարկեց եւ Ճիւօղլուն եւ Շաքիրը: Քաջալերուած՝ նորէն դիմեցի երկու գիւղի մէջ ծեծէն մեռած կնոջ մը համար ինդրելով որ դիակազննութիւն մը կատարուի. ասոր վրայ կատրած գազանի պէս պոռաց երեսիս, ինձ նայէ ըսաւ, ալ մեզի չէք կրնար խաբել, ալ ձեր դիմացը կառավարութիւն մը չկայ, եւն. եւն.: Կառավարիչը պոռաց երեսիս, հիմա ձեռքերդ կապած կարին կը զրկեմ քեզ. «կ'ամբաստանէ մեզ թէ խտրութիւն կը դնենք եւն»: Կէս ժամ մաքառելէ յետոյ յուսահատ երկու քահանայ առնելով դիմեցի իւրեմաներու, պէկերու եւն., բայց անօգուտ, բոլորն ալ կը վախնան կառավարիչէն, կը մեղքնան բայց ...: Շէյխին մէկը խորհուրդ տուաւ համբերել:

Երէկ չարագործ ոստիկանները ոչ միայն մեր քաղաքին վրայ այլ իրենք իսկ ըսած են թէ գիւղերէն 300 ոսկի առած են եւ միայն 180 ոսկի տուած են կառավարութեան. ասկից զատ առած գէնքերու մեծ մասն ալ իւրացուցած են: Մնաց որ այս երեքը ոչ թէ պատերազմական ատեանին չյանձնուեցան ինպէս խոստացած էր այլ ազատ արձակուեցան:

*) Ծանօթ. Խմբ.– Այս փաստաթուղթին շարունակութիւնը չկայ արխիւներուն մէջ. ամբողջութիւնը սակայն «Երզնկայի սարսափները» խորագրին տակ, հրատարակուած է Սոֆիայի «Հայաստան» թերթի Յունիս 20, 24, Յունիս 1 եւ 4 թիւերուն մէջ: Ստորեւ պակասող երկրորդ բաժինը՝ քաղուած «Հայաստան»ի Յունիս 1 եւ 4 համարներէն:

Ծաթ գիւղի մէջ Ատիլ անուն միւտիրը շատ չարիքներ գործած, շատ դրամ առած, հայ կիւն մըն ալ իրեն տրամադրելի ըրած է. ուրիշ հարս մըն ալ կը պահանջէ, եւ գիւղացիները կը համակերպին, որովհետեւ ոչինչ կրնան ընել. ո՛չ բողոք, ո՛չ աղաչանք կը լսուի:

Ապրիլ 8-ին հինգ ոստիկան եւ գանուկ շաւուշի մը կ'երթան թաղերը եւ Թաթուլ Զիրեշկերճեանը, Մասիս Այճեանը եւ Վարդան Տ. Եղիշեանը կը բռնեն կը տանին յիսնապետ Սիւլէյմանի սենեակը եւ կը սկսին չարաչար ծեծել, կոխկռտել, եղունգները աքցանով քաշել: Վարդանի աղանջին բլթակը կը կտրեն ու ամէնքն ալ կիսամեռ դրութեան մէջ կը ձգեն: Քանի մը ժամ յետոյ՝ ջուրով կը սթափեցնեն եւ կրկին ու կրկին կը ծեծեն: Ապա կը հարցնեն թէ ո՞վ են դաշնակցականները, ո՛ւր պահած են գէնքերը եւ ռումբերը եւ որքան դրամ զրկուած է քոմիթաճիներուն: Մինչեւ արշալոյս այսպէս խոշտանգելէ ետք՝ առտուան դէմ երեքն ալ մէկ մէկ մարդու շալակ տալով, կը զրկեն տուներին: Երբ աղբիւրին կը մօտենան, Մասիսը կ'ըսէ թէ շատ ծարաւ է: Ոստիկանները կը պառկեցնեն աղբիւրին առջեւ եւ կը սկսին երեսն ի վար միգել. «ահա՛ քեզի ջուր, կեաւուր օղլու կեաւուրը»: Երեքն ալ մինչեւ այսօր հիւանդ պառկած են: Դատարան բողոքեցին. բժիշկը եկաւ քննեց, արձանագրութիւն ըրաւ, վկաները լսուեցան, բայց ոչինչ եղաւ, որովհետեւ կառավարիչը արգիլեց դատը:

Բթառիճ գիւղի մէջ ալ շատ խժոժութիւններ գործուած են ճէմենի նահիլէի ուտիկաններուն եւ չէթաներու կողմէ. ծեծ, խուզարկութիւն, թալան՝ ա՛լ սովորական բաներ դարձան:

Զէթայի մը մարդիկ երկու հարս կը պղծեն, շատերու ունեցածը կը կողոպտեն: Որովհետեւ 18-45 տարեկանները զինուոր են, 45էն վեր եղողներուն ալ ամէն օր Զորբերանէն մինչեւ Մամախաթուն էրզաք⁸⁴ կրել կուտան, որով գիւղերը բոլորովին դատարկուած են ու մնացեր են ոստիկաններու եւ չէթաներու քմահաճոյքին: Ծեծի տակ այս գիւղին մէջ ալ մէկը կը մեռցնեն եւ տակաւին ուրիշ խժոժութիւններ կը գործեն:

Շարունակելի(*)

84.- Ապրանք, մթերք:

Խնճորիկ գիւղի մէջ ծեծը, պատուոյ բռնաբարումը, թալանը պակաս չեն: Նոյնպէս Ս. Թորոսի վանքը բոլորովին կողոպուտի տուած են: Որ կողմէն որ գինուոր մը կամ չէթա մը գայ, միշտ հայ գիւղերը կը մնայ. եւ եթէ գիւղին մէջ թուրք ալ գտնուի, անոր տունը չ'երթար, միշտ հայուն տունը կ'իջնէ, պայմանով որ տնեցին ամէն բան թէսլիմ ընէ: Այլ հայ գիւղերը բան չ'մնաց:

Հարիւրաւոր ընտանիքներ մերկ եւ անօթի են:

Դարաթաղ գիւղին ալ շատ չարիքներ կը գործեն չէթաներն ու ոստիկանները: Դրամ առնել, գէնք պահանջել, բռնաբարում սովորական բաներ են: Միւտիր Ատիրը, միացած ոստիկաններուն եւ չէթաներուն, ինչ որ ուզեն կ'ընեն:

Երզնկայի բոլոր գիւղերը քամելէ յետոյ, կառավարիչն ու մէպուս Հալաթ պէյը քանի մը օր առաջ գացին Կամախ: Երկու օր յետոյ տեղին ոստիկանական յիսնապետը 20 ոստիկաններով եւ թուրք ու քուրդ խուժանով կ'երթայ Կամախի երկու Բագառիճ գիւղերը կը պաշարէ եւ կը սկսի ծեծը: «Ձեզմէ 4 թնդանօթ եւ հազար հատ ալ կանոնաւոր գէնք կը պահանջեմ», կ'ըսէ: Մեռցնելու աստիճան ծեծն ալ բաւական չէ. կը պառկեցնեն, զգեստները կը հանեն եւ հրաչէկ շիշերով կը սկսին կռնակներն տաղել եւ հալած իւր լեցնել վրանին. «Ձէնքերնիդ եւ թնդանօթնիդ տուէք որ ազատիք»: Մեծ-լաճներն ու տանջուածները մէկ կողմէ կը լեցնեն եկեղեցի. «պունը տա պօքլու հանեյէ. պունտան սօրա պուրասը պօքլուք օլաճագ տըր»: Եկեղեցիին համար է որ կ'ըսեն ասիկա... Հաւատք, կրօնք, սրբութիւն, խաչ սաստիկ կ'անարգեն ու կը հայհոյեն: Ոչ միայն այր մարդիկ կը ծեծեն, այլ եւ կիներ, աղջիկներ եւ փոքր տղաներ: Մերունի Յակոբ քահանան, որ 75 տարեկան է, կը բերեն, քանի մը հատ գարնելէ յետոյ՝ յիսնապետը կը հրամայէ որ չուան մը բերեն եւ իւղտուն: Մերունին դողդողալով կ'աղաչէ որ նախ քիչ մը հաց տան իրեն եւ երկու վայրկեան ազատ ձգելէ յետոյ կ'ախեն: Այդ խօսքէն ազդուած՝ խեղճ ծերունին կը ձգեն: Շատերը ծեծելէ եւ տանջելէ յետոյ կը բանտարկեն եկեղեցիին մէջ, իսկ թուրք եւ քուրդ խուժանը բոլոր տունները պարզապէս թալանի կու տայ. խուզարկութեան պատրուակին տակ սնտուկները, պահարանները ինչ որ գտնեն՝ կ'առնեն կ'երթան: Ահաբեկ ժողովուրդը ձայն չի կրնար հանել: Գտնուած գէնքերը թուրքերուն եւ քրդերուն նուէր կու տան, որ քաջալերուին: Այս միեւնոյն խժոժութիւնը գործ կը դրուի Վարի եւ Վերի Բագառիճ ու Ս. Նշան վանք գիւղերը: Յետոյ երեք գիւղերուն միթարները, աղաները եւ Բագարատ քահանայ Պալճեանը ու Տրդատ քահանայ Աբրահամեանը կը բանտարկեն:

Երէկ երեկոյ, մայիս 11-ին, 12 աշխարհական եւ երկու քահանաները Երզնկա բերին, ուրկէ պիտի տանին Կարին: Երեք գիւղերն ալ քահանայ չ'մնաց. միայն ծերունի Տ. Յակոբը կայ, որ ձեռքերը դողդողալուն համար

հանգստեան կոչած էին:

Բագառիճէն յետոյ, Կամախի կառավարիչը կը կանչէ Քիւլլի-Տէմիր կոչուած նշանաւոր ոճրագործը, որ ցարդ գէնք առած աւագակութիւն կ'ընէր, եւ քանի մը ոստիկաններով կը ղրկէ Դաւակներ գիւղը: Այս հրէջը սոսկալի անգթութիւններ կը գործէ: Արդէն սկիզբէն գիւղացիները ծեծելէ, տաղելէ, իւղով այրելէ յետոյ՝ քանի մը գէնք, 30 ոսկի կ'առնէ եւ գիւղին Գրիգոր քահանային հետ միթարը եւ աղա մը կառավարութեան կը ղրկէ: Հոն քանի մը օր բանտարկուելէ յետոյ, երկու օր առաջ ղրկուեցան Կարին:

Չարագործ Քիւլլին Դաւակները մոխիր դարձնելէ վերջ՝ կ'երթայ Թորոս. հոն ալ շատ անգթութիւններ կը գործէ եւ վեց մարդ կապելով կը ղրկէ բանտ: Այս գիւղին Գրիգոր քահանան եւ ուրիշ երկու մարդ 3 ամիս առաջ պատերազմական ատեան ղրկած են:

Առաջնորդական տեղապահ քանի մը անգամ խօսեր է կառավարութեան հետ, թէ քահանաները գիւղական գործերու չեն խառնուիր. սակայն մտիկ չեն ըներ եւ դիտմամբ քահանաները կը ծեծեն, կը նախատեն եւ պատերազմական ատեան կը ղրկեն, որ ժողովուրդը առանց հոգեւոր միթարութեան մնայ:

Երզնկայէն, Կամախէն յետոյ կարգը կու գայ Գուրու-Չայի: Հոն ալ ոստիկան չաւուշ մը սոսկալի անգթութիւններ կը գործէ. տուններ վառելը, ոչխարներ առնելը, մարդիկ բանտարկելը սովորական բաներ են:

Ինչ որ ամէնէն սոսկալին է, յիսնապետ մը Գուրու-Չայ կ'երթայ եւ ժանտարմայի չարագործ չաւուշին հետ խորհրդակցելէ յետոյ, բոլոր թուրք, քուրդ եւ զըզըլպաշ գիւղերը նամակներ կը գրեն Վարի եւ Վերի Արմըտաններու վրայ յարձակելու եւ ջարդելու: Կառավարութիւնը կ'իմանայ եւ հիմա կը հետապնդէ եղեր՝ նամակներէն մէկը ձեռք ձգելու:

Այս գիւղերուն մէջ ալ խուզարկութիւն կատարելէ, դրամ եւ գէնք առնելէ յետոյ ջարդի երկիւղ ալ կը տիրէ:

*
* *

Մայիս 4-ին Երզնկայէն գինուորներ կը ղրկուին Կարին: Երբ Բղուան գիւղը կը հասնին՝ ջուր ուզելու պատրուակին տակ անոնցմէ երկուքը օր ցերեկով հայ կին մը կը պղծեն: Գիւղացիք կու գան կառավարիչին կը բողոքեն: Կառավարիչը սոսկալի կը նախատէ գիւղացիները եւ կը վռնտէ: Գիւղացիները կու գան առաջնորդական տեղապահին, որ կ'երթայ «նքթա գոմանտան»ին կը պատմէ իրողութիւնը: Գոմանտանը կը խոստանայ կառավարիչին ըսել որ քննութիւն կատարել տայ: Երկրորդ օրը սակայն քոմանտանը կը յայտնէ թէ կառավարիչը ըսած է որ տեղապահը «լուս ուղտ կը շինէ»: «Կառավարիչը խիստ մէկն է, — կ'ըսէ գոմանտանը, — ուստի

բարեկամաբար խորհուրդ կու տամ որ ամէն բանի համար դիմում չընէք»...

Բոլանէն անցնելէ յետոյ, նոյն թապուրը կ'երթայ երեկոյին Գարաքիլիսէ գիւղը, ուր գինուորները գիշերը 8 կին եւ 18 տարեկան աղջիկ մը կը պղծեն եւ գիւղացիներուն ալ շատ վնաս կու տան: Կին մըն ալ այն աստիճան կը ծեծեն, որ այս պահուս հիւանդ պառկած է քաղաքը:

Հայ գինուորները առհասարակ ինչապիթ, ամելիէ եւ թանգիմաթի թապուրները կը ղրկեն: Հայուն ձեռքը բնաւ գէնք չեն տար: Ինչապիթ թապուրի պաշտօնեաները ամէնէն ստոր, հայատեաց գազաններէ կը կարգեն: Հայ գինուորները Երզնկայի եւ Մամախաթունի միջեւ, Սասնայ Տէրէսի ըսուած տեղը 2-3 ամիսէ ի վեր ճամբու վրայ կ'աշխատցնեն: Պաշտօնեաները եւ չէթաները այն աստիճան կը ծեծեն եւ կը նախատեն եղեր գանոնք որ քանիններ յուսահատութենէ ինքզինքնին գետը նետած են:

Քանի մը օր առաջ Թոքատցի հայ գինուոր մը սա գանգատով դիմած է տեղապահին. «200 հոգիով եկանք եւ հիմա 50 հոգի մնացինք. բոլորն ալ հիւանդացան եւ մեռան. չարաչար ծեծ, օրական կէս օրս հաց, այն ալ սեւ խմոր, որ բնաւ չ'ուտուիր. պառկելու տեղերնիս խոնաւ, ամէնքս ալ պիտի մեռնինք»: Այս օրերս նոր բան մըն ալ սկսաւ: Ով որ շուկայի մէջ «աչքի կը գարնէ», յանկարծ կը բռնեն կը տանին, ո՞ւր, յայտնի չէ. միայն կ'ըսուի թէ Սասնա-Տէրէսին աշխատցնելու կը ղրկեն: Տեղապահը ժանտարմըրի թապուր աղասըին հետ խօսեր է թէ՛ կարելի չէ՞ որ միջոց ունեցողը իր տեղը մէկը բռնէ եւ աշխատելու ղրկէ: Կը պատասխանեն թէ՛ նպատակը աշխատիլ չէ: Հապա ի՞նչ է: «Կառավարութեան գործերէն ոչ մէկուն խելքս չի հասնիր» — կը պատասխանէ: Ասով յայտնի կ'երեւի որ կը տանին սպաննելու աչքի գարնող անձնաւորութիւնները: Մինչեւ այսօր 20-ի չափ տարած են եւ մէկ կողմէն կը շարունակեն...

Բոլոր հայ գիւղերը խուզարկեցին. գէնքերնին, դրամնին առին եւ շատերն ալ Կարին պատերազմական

ատեանին ղրկեցին: Ասոնցմէ Մթննի գիւղէն 4 մարդ կը մեռնի Կարինի բանտին մէջ: Ուրիշ գիւղերէ ալ մեռնողներ կան: Արսպա գիւղին այր մարդիկը գրեթէ պարպեցին. մնացեալ քանի մը հոգին ալ միշտ գիւղացիներու եզներով եւ էշերով շարունակ Երզնկայէն Մամախաթուն էրգաք կը տանին: Գիւղը այլեւս ոչ մարդ մնաց, ոչ ալ անասուն՝ երկրագործութիւն ընելու համար: Ի՞նչ պիտի լինի այս խեղճ ժողովրդին վիճակը: Այս բոլորը օրը օրին յայտնուած է Կարնոյ առաջնորդին, որ ըսեր է կուսակալին: Այս վերջինը շատ ազդուեր է եղած խժոժութիւններէն եւ որոշեր է Պայագիտի կառավարիչ Զիա պէյը քննիչ ղրկել: Մինչեւ այսօր ալ ո՛չ քննիչ եկաւ, ոչ ալ փոփոխութիւն մը եղաւ. ընդհակառակը, վիճակնիս հետզհետէ աւելի կը ծանրանայ:

Կարնոյ դաշտին բոլոր գիւղերը պարպած են: 15-51 տարեկանները գինուոր առնելով, ծերունիները, մանուկները եւ կիները աքսոր կը ղրկուին, որոնց մէկ մասը այսօր հոս հասաւ, եւ կ'ըսուի թէ Քէլքիտի, Գարահիսարի եւ Սրվազի կողմերը պիտի ղրկուին:

Սոսկալի բան է, եթէ վաղը հոս ալ նոյնը պատահի: Արդէն նեղութիւն, աղքատութիւն ծայրայեղութեան հասած է: Այս հազարաւոր խեղճերը ի՞նչ պիտի ընեն ճանապարհին:

Ալ լալով կեանքերնիս մաշեցաւ, ամէն օր մահ կը խնդրենք, եւ ցանկալի մահն ալ չենք գտներ...

Տեղապահը, մէկուս Հալաթ պէյին գացեր էր՝ գոնէ աքսորականներու մասին խօսելու: Բայց երեք ժամ սպասելէ ետք՝ չէ կրցեր գայն տեսնել: Թէեւ արդէն խօսիլն ալ օգուտ չունի. որովհետեւ բոլոր չարիքները իրենք՝ պաշտօնեաներն են որ կը գործեն. մանաւանդ՝ կառավարիչը, Հալաթ պէյը, Իթիհատի ներկայացուցիչ Մաճիդ պէյը, եւ թապուր աղասին: Այս չորսն են ամէն ինչ. առանց իրենց հրամանին ոչինչ կը լինի:

Եթէ կառավարիչը ասկէ հեռացնելու միջոց չգտնուի, հայերու մեծ մասը բնաջինջ պիտի ընէ եւ մնացածներն ալ մոխիրի վրայ պիտի նստեցնէ: Այս մարդը բացէ ի բաց կ'ըսէ թէ՛ հայոց դէմ է իրենց վրէժը եւ մինչեւ իսկ պատերազմը:

Փաստ. 1158-54
Նամակ N° 489

22.- ՊԱԼՔԱՆԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սոֆիա, 13 Մայիս 1915

Ընկերներ!

Ստացել ենք ձեր վերջին երկու նամակները 152 եւ 154 թուահամար ինչպէս նաեւ ձեր երկու հեռագիրները, որոնց պատասխանած ենք անմիջապէս հեռագիրներով: Իսկ այժմ ձեզ կը տանք Պոլսէն ստացած նամակների ամփոփումը Պոլսի ու երկրի դրութեան մասին:

«Ընկերներէն հեռագիր ստացանք առ այժմ Զարդարեանէն, Շամիլէն¹⁹, որ կը գտնուին Այաշ, Հրաչէն՝ Զանդրըր. Սիամանթօ, Տոքթ. Բարսեղեան ու չէզոքներ – մեծ մասը հեռագիր եւ նամակ ղրկած են: Այսօր վերջին պահուն իմացանք որ արքայականներէն 30/40 [հոգի] անշուշտ անվնասները (... Կապուռ շէն) ետ կը դառնան եւ վաղը Պոլիս կը հասնին. առաջին առթիւ կը տեսակցինք եւ տեղեկութիւններ կը քաղենք: Մերոնց դրամ ու ճերմակեղէն ղրկեցինք:

Գիտակը որ այժմ ազատ է, քանի մը օր առաջ այցելութեան գնաց Իթիհատի ընդհ. քարտուղար Միտհաթ Շիւքրիին. տեսակցութիւնը շատ սիրալիր եղեր է, զարմանք յայտնեց են որ չ'երեւար մինչեւ հիմա. այդ պահուն դեռ մեր ընկերներէն լուր չունէինք. խոստացեր է ոչ միայն լուր բերել տալ այլ եւ ետ ստանալ եւ վերադարձնել Ազատամարտի 450 ոսկին, որուն համար Հրաչն ալ հեռագրած էր երէկ. քարտուղարը թելալազրեր է որ Թալէաթին ալ երթայ: Երբ Գիտակը նորէն գնաց, դրամի ինդիքը Թալէաթը պիտի կարգադրէր իբր թէ այսօր: Թալէաթն ալ մեղրածորան խօսքերով գովեր է մեր ընկերը. հարցուցեր է, թէ ինչո՞ւ չի տեսնուիր Պետրիին հետ (ոստիկանական) տեսուչ): Այս բոլոր փաղաքշական վերաբերումներուն մէջ մենք որոշ կը տեսնենք զարհուրելի դաւադրութիւն մը, որուն արձագանգները կը հասնին արդէն Շամիլէն: Հետապնդումը մինչեւ վերջին օրերս կը շարունակուին, այժմ պիտի սկսին գէնքերու պատրուակով հալածանքի, որ չենք գիտեր ի՞նչ հանգամանք պիտի ունենայ:

Փաստը այն է որ մեր ստրուկները խուճապ խուճապ կը տանին կը յանձնեն ինչ որ ունին: Սարսափի են մատնուած բոլորը, եւ միայն այսօր կը մտածեն, հակառակ դառն փորձերու եւ ազդարարութիւններու: Ինչ խօսք որ միայն քրիստոնեաներու գէնքերը կ'առնեն, իսկ իսլամներունը ետ կու տան երբեմն յայտնապէս, բայց միշտ երեւոյթները փրկելով:

Շարքերը կը մնան անվթար, թէեւ ստոյգ լուրեր

չենք ստանար. ցանկ մը կը պատրաստուի, բազմաթիւ երիտասարդներ հաւաքելու այս կամ այն պատրուակով. ազատ ընկերներէն 3 հոգի է կազմած ենք Առժամեայ մարմինը եւ գործերը կը վարենք խորհրդակցութեամբ Գիտակին: Մեր գլխաւոր ջանքերն եղան ապահովել տղաքը, ապահովել յարաբերութիւնները, պահեստները, արխիւները, գոհ ենք յայտնելու որ ինչքան կրցանք համոզուիլ մեր ձեռքին տակ եղած փաստերով եւ ծանօթութիւններով, համարեա ոչ մէկ կենսական գաղտնիք յայտնուած է: Եթէ այսուհետեւ բան մը պատահի անպատճառ մատնութիւն պէտք է ըլլայ: Երկրի հասցէները կ'ապահովենք հետզհետէ, գրած ենք նամակներ՝ Բարձրաբերդի, Կիլիկիա, Սեւ Բլուրէն. այսօր նամակ ստացանք Աւազանէն որոնց ամփոփումը կու տանք քիչ վարը:

Յարաբերութեան կարեւոր ձեւ մը չէզոք դեսպանատուններն են. շուտով կը ծանօթանանք պուլկարական դեսպանատան հետ. Ամերիկեանի մասին ալ այսօր մէկը պիտի ներկայացնենք եւ կ'ապուինք: Կը մնայ իտալականը որմէ շատ բան կը սպասենք, բայց դժբախտաբար entremise-ը⁵³ կը պակսի. պիտի փորձենք: Բ. դրան եւ Պատրիարքարանի հետ Գիտակը կը ճանչնանք: Իր մէկ երկու տեսակցութիւնները պարզ բարեկամական տեսակցութիւններ են. մեր հարեւաններու համար լաւ առիթներ՝ գանգատները լռեցնելու. մենք կը կարծենք որ ինչքան ալ զգուշութեամբ, բայց անհրաժեշտ է այսպէս կամ այնպէս մօտենալ հարցին եւ վերսկսիլ նախկին ձեւով հետապնդումները, այլապէս մենք կ'զգիւցած կը մնանք եւ օրուան անցուդարձերէն պելխապար⁵⁶, նորէն յանկարծակիի չգալու համար օրին մէկը: Օրինակ, մէկ երկու օրէ ի վեր զրոյցներ կան թէ Վահաբը կ'ախեր են՝ ինչպէ՞ս կ'արելի է ստուգել այս լուրը, բայց միայն ուղղակի դիմելով Դուռ եւ պահանջելով բաց հեռագրի արտօնութիւն: Այս մասին մեր լուրերը կը հասնին մինչեւ Վահաբի ձերբակալումը: Միտհաթ Շիւքրիին իր տեսակցութեան մէջ յայտնեց է որ Վանի մէջ այն[քան] գէնք ու ռումբ գտնուած է որքան չկայ գինարանի մը մէջ. այս լրբերի ակնարկութիւնը անկասկած կ'ըլլայ ծածկելու համար հրէշային դաւը որուն զոհ գացած են Իշխանը եւ ուրիշ ընկերներ:

(Հոս մէջբերելէ յետոյ Երկրի նամակները կը շարունակեն):

Ահալաների ընկերներ մէկ երկու պատահական նամակներով՝ ձեզի կը ներկայացնենք կացութիւնը որ կը գտնուի առայժմ Հայաստանը, եւ մանաւանդ այն պարտականութիւնը եւ պատասխանատուութիւնը որը կը ծանրանայ մեր վրայ: Բոլորը Պոլսոյ վրայ յառած են իրենց ուշադրութիւնը՝ տակաւին անտեղեակ մեծ դաւադրութենէն, իսկ մենք ալ մեր կարգին դէպի ձեզ կը նայինք ահալոր պատահականութիւններ կանխել տալու համար: Արտաքին օգնութիւն մը ինչ գնով ալ ըլլայ աւելի քան երբեք կենսական է եւ նախագագցումով մը կը կարծենք թէ մետասաներորդ ժամուն կամ աւելի առաջ հասած կը լինի այդ օգնութիւնը: Մենք երբեք վհատած չենք. աւելի քան երբեք եռանդով փարած ենք գործին եւ կը զարմանանք պարզապէս անոր համար որ աւելի բան մը չենք կրնար ընել: Կը հասկնաք անշուշտ մեր տառապանքը, մենք որ ականատես ենք այստեղի անցուդարձերուն եւ ականջալուր՝ Հայաստանի մասին եղած ասէկօսէներուն: Գրեցէք եթէ ուրիշ միջոցներ կան ազդելու այստեղէն:

Ապրիլ 29.— Այժմ գրեթէ բոլոր ընկերներէն լուր ունինք. Ակնունի, Շահրիկ, Շամիլ, Խաթակ, Փաշայեան, Ջարդարեան, Գ. Բարսեղեան, Համբարձումեան, Ներսէս Փափագեան եւ ուրիշներ կը գտնուին Այալ, Էնկիւրիէն անդին, զօրանոցի մը մէջ: Միւսները չէզոքներուն հետ խառնիխառն զրկուած են Չանդրըր եւ մէկ մասն մըն ալ Չորում: Գրեթէ բոլորէն ալ նամակ առինք 10 օր առաջ թուագրուած:

Այալի մէջ մերիները շարունակ ներկայ բացակայի կ'ենթարկուին: Բոլորն ալ իրենց հանգստութենէն կը ճառեն, ի հարկէ...

Այսօր Առժամեայ մարմինը Գիսակին հետ երկար խորհրդակցութիւն մը ունեցաւ. հարց դրուեցաւ թէ կարելի չէ՞ վերսկսիլ իր հետապնդումները Դրան մօտ վանի եւն. հարցերու մասին. կը պատասխանէ որ դեռ ժամանակը հասունցած չէ այդպիսի բաներու համար, թէ փորձելը անօգուտ է քանի որ նախարարը ոչ իսկ կ'ողզէ լսել: Բացատրեցինք թէ առանց այդպիսի յարաբերութեանց, մենք կը գտնուինք կեղծ դրութեան մէջ: Կու գայ տեղ մը որ մեր ուժերը կը սպառին, կամ պատասխանատուութիւնները կը ծանրանան. մեր հոգերը շատ են, եռանդ ու կորով [ունէինք], բայց կաշկանդուած կը զգանք մենք մեզի, քանի որ ոչ որոշ իրաւաստութիւններ ունինք, ոչ ալ կրնանք տարբեր քայլ մը առնել քանի դեռ պետութեան հետ յարաբերութիւնները խրդուած չեն: Չանաց համոզել որ ուրիշ միջոց չկայ, այսպէս պիտի երթանք ատեն մը եւ մենք մեր պարտքը կը կատարենք թոյլատրուած սահմաններուն մէջ: Երկրէն հասած օգնութեան ճիշերն ալ նոյնութեամբ կը հաղորդենք ձեզի մանաւանդ որ Գիսակը կը հաւաստէ թէ

պատրիարքարանն ալ կը դժկամակի կամ կը վախնայ որեւէ դիմում ընել: Ահա թէ ինչո՞ւ օրուան այս ժամուն ստոյգ լուր չունինք: Շամի դէպքերու մասին ամերիկեան աղբիւրէ իմացանք թէ ապստամբութիւնը զսպուած է. մէկ մասը փախեր են եւ 700 հոգի ջարդուեր են: Գիսակին թելադրեցինք որ գոնէ Վահաբի մասին հեռագիր մը գարնել տայ: Աւելորդ նկատեց: Պուլկարական դեսպանատան հետ մեր յարաբերութիւնները լաւ են շնորհիւ ձեր բարեկամին (ինչպէս գրած ենք ձեզ երբ ձերբակալման լուրը առինք անմիջապէս մեր պուլկար բարեկամներէն Խաւրաքովը (Սոպրանիցի անդամ) ուղարկեցինք որ ուրախ ենք յայտնելու որ բաւական դեր կատարեց փոխ-յարաբերական գործի ու գանազան ուրիշ հարցերու մասին), որը ներկայացուց մեր ընկերը թարգմանին հետ. մեզի միշտ օգնելու տրամադիր կը թուին: Դեսպանը ուզեր է տեսակցիլ Գիսակին հետ եւ ծանօթանալ վերջին դէպքերու հոլթեան ու Դաշնակցութեան դերի մասին: Առաջարկեր է մեր գանազատները եւ առաջարկները մեքենագրութեամբ եւ կրկնօրինակ կանոնաւորաբար հաղորդել իրեն միւս չէզոք դեսպաններուն ալ յանձնուելու համար, դիտել է որ գանազատներու կամ տեղեկագիրներու տակն ալ ստորագրուի Սոֆիա Հ.Յ.Դ. Մարմինն կողմէ որպէսզի երբ Դուռը հետաքրքրուի՝ ցուցնեն. սքանչելի պատահութիւն մըն [է] այս պարագան մեզ համար: Այսօր իսկ Գիսակը պիտի համոզենք որ տեսնուի դեսպանին հետ:

Մեր առած տեղեկութեանց համեմատ 5 սայլ գիրք, թուղթ, պատկեր եւն. փոխադրուած է Ազատամարտէն. պատերը ու գետինները փորած են, տակնուվրայ ըրած են կասկածելի նիւթեր փնտռելով... մինչեւ այսօր ոստիկան կը մնայ ներսը:

Թերեւս աւելորդ չըլլայ անգամ մըն ալ ձեզի պարզել մեր դժուարին կացութիւնը, որպէսզի ժամ առաջ խորհրդակցիք Գերագոյն մարմինն հետ եւ հրահանգներ զրկէք:

Ինչ պիտի ըլլայ մեր իրաւաստութիւնը: Մինչեւ ո՞ր աստիճան պիտի համբերենք: Ի հարկէ մետասաներորդ ժամուն իրաւունք ունինք ձեռնարկներ կատարելու, գիտնալով հանդերձ որ մահ կը սպառնայ մեր բոլոր տարագիր ընկերներուն: Երկրի մարմիններէն Բարձրաբերդը արդէն կտրուկ պահանջ էր դրած: Բայց առանց գիտնալու նոր դէպքը եւ կարծելով թէ նորէն Բիւրոյին կը գրէ. այս կէտերու մասին անհրաժեշտօրէն լուսաբանուիլ կ'ողզենք: Գրեցէք ամէն բան կտրուկ եւ պայծառ, առանց երկդիմի բացատրութիւններու, որպէսզի գիտնանք մեր ընելիքը: Գիտցէք որ մենք վարանողներն չենք ծայրայեղ պարագային, բայց ոչ մէկ sanction ունինք այժմ եւ միշտ աչքի առջեւ են մեր պատանդները»:

Ընկերներ!

Ինչպէս քիչ վերը կարդացիք Պոլսի մեր ընկերները չափազանց յուսահատ կացութեան մատնուած են իրերու վերջին դարձուածքին բերումով եւ արդէն իրենց վերջին առաջարկն ալ այդ յուսահատութենէն յառաջ գալիք քայլերու մասին մեր ու հեղինակաւոր մարմիններէն որոշումներ կ'ուզեն: Կ. կոմիտէս իր վերջին նիստի մէջ նկատի առաւ սոյն առաջարկը եւ երկար խորհրդակցութենէ յետոյ եկաւ հետեւեալ եզրակացութեան նրանց իրաւասութեան սահմանները գծելով սապէս. «Առժամեայ մարմինը ազատ է տեղական գործերու մասին եւ փոխ-յարաբերական գործը իրենց ուզած ձեւով ղեկավարելու (տեսակ մը Պատասխանատու մարմին) իսկ ծայրայեղ պարագաներուն: Խորհուրդը կու տանք որ բացարձակ անխոհեմութիւն է ներկայ ծանր օրերէն, ուր մեր ընկերները իբրեւ պատանդ վար դրուած են, դաւադրական աքտեր անելը, քաջ գիտնալով որ փոքրիկ շարժում մը այդ ուղղութեամբ պիտի վնասէր մեր լաւագոյն ընկերների կեանքը»: Ներկայ որոշումը հաղորդեցինք նրանց. կը կարծենք թէ այսպիսի որոշում մը մեր տեսակէտով ներկայ պարագաներու պահանջներու համաձայն շարժած եղանք: Խնդրենք առաջին առթիւ հաղորդեցէք այս առաջարկի շուրջ ձեր տեսակէտն ալ, որ մեզ համար հետաքրքրական էր իմանալ:

Բարձր դրան ուղղուելիք սպառնական ազդարարագրի մասին որ դուք կը գտնէք անյարմար ներկայ պայմաններում, մենք գրել ենք այս մասին անցեալ անգամ մանրամասն. այժմ աւելորդ չենք սեպեր դիտել տալ որ մեր տեսակէտով այնքան անյարմարութիւն ներկայացնելովը [հանդերձ], կը կարծենք այդ քայլը կ'ունենայ իր դրական օգուտները: Այս մասին կրկին գրած են մեզ Պոլսէն եւ ամէնից աւելի անհրաժեշտ կը նկատեն այդ բանը: Ձեր ուշադրութեան յանձնելով

ներկայ պարագան ալ, այս մասին կը կարծենք թէ պէտք եղածը կը մտածէք»⁸⁵:

Ընկ. Նեվրուզի քրոջ տղու մասին տրուելիք դրամի համար գրած ենք Ռուսճուքի մեր մարմնին, վճարելու համար:

Ազատ ու գործող ընկերներու մասին ձեր գրածներուն տեղեկացանք. մենք նախքան ձեր նամակը ստանալը, հեռագրած էինք որ Օզանեանը անմիջապէս ուղարկէք ճամբու ծախքը մենք կը ղրկենք ձեզ շուտով. կը յուսանք թէ մինչեւ հիմա ուղարկած կը լինիք: Առայժմ ուրիշ մարդու պէտք չունինք:

Կամաւոր ուղարկելու մասին արդէն Թիֆլիսէն հրահանգ ստացած ենք, բայց տեղույս դեսպանատունը անցազիր չի տար, ասելով որ փոխարքայէն այդ մասին հրահանգ չունի. մենք կրկին ու կրկին հեռագրած ենք Թիֆլիս, որ հրամանը փութացնեն: Կամաւորները բոլորն ալ պատրաստ են եւ կը սպասեն մեր կողմէ առաջին հրահանգին շարժուելու համար. ամէն կողմէ բուռն ցանկութիւն կայ այս մասին. մանաւանդ վերջին դէպքերը չափազանց վատ ազդած են մեր ընկերներու վրայ: Բոլորն ալ վրէժխնդրական ոգևով լեցուած են:

Ընկ. Միքայէլի գրքերը Վառնա ուղարկելու համար հասցէ ուզած էք: Մեր հասցէն է.—

Apraham Melkonian
Rue Ferdinand 47, Varna

Մենք արդէն մեր ստացած կարեւոր լուրերը կը հեռագրենք Կովկաս, Ամերիկա, Եգիպտոս եւ ձեզ. այնպէս որ ինչպէս գրած էք կարիք չկայ միեւնոյն բանը ձեր կողմէ հեռագրուելու, իսկ այն խնդիրները որոնք ձեզ կը վերաբերին այդ արդէն կ'ընէք:

Հեռագիրներու մասին ձեր թելադրութիւնը նկատի կ'ունենանք ասկէ յետոյ:

Մի քանի օրէն ձեզ կ'ուղարկենք դրամ եւ թարմ տեղեկութիւններ Երկրէն ստացուած:

Ընկ. բարեկներով
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՊԱԼՔ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

85.- Ինչպէս կը տեսնուի, Հ. Յ. Դաշնակցութեան անունով թուրք կառավարութեան ուղղուելիք ազդարարագրի (տես էջ 59-62) գաղափարը կու գար Վիշապի Առժամեայ մարմնէն, որուն համամիտ էր նոյնպէս Պալքամի Կեդր. կոմիտէն:

Փաստ. 882-13

23.- ՊՈԼՍՈՅ ԱՌԺԱՍԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

15-V-1915 (Ստացում 17-V-1915)

Ընկերներ,

Կը հաստատենք մեր 13 Մայիս թերթը: Նոր լուր մը չունինք ձեզմէ. նորէն շնորհակալ ենք որ մեր 3-4 նամակին մի երկտողով կը գրէք: Կը խնդրենք միշտ միակտուր թղթի վրայ գրէք եւ անջատ կտորներ չդնել, կրնայ կորսուիլ: Յետոյ լաւագոյնն է մեկանով գրել:

Միաձայնութեամբ որոշեցինք մաս-մաս Պոլիս փոխադրել ձեր տրամադրած 7-800 ոսկին: Թէեւ Սեւ Բլուրին⁴⁰ առայժմ կրնանք գրել եւ նոր գումարն ալ պիտի փութացնենք, բայց ի նախատեսութիւն կ'ուզենք մեր ձեռքին տակ ունենալ այդ գումարը: Դուրան⁵¹ ալ զըրկելու շանսեր կը տեսնենք, թէեւ տակաւին վստահ չենք: Առայժմ մաս մը 2-300 ոսկի զրկեցէք Հայկական պանքայի տնօրէն Թագուր Սուքիասեանի հասցէին. ուրիշ ծանօթութիւն պէտք չկայ: Հետագայի գումարներն ալ հետզհետէ կ'ուղարկէք այդ հասցէին, կամ նոր հասցէ կու տանք:

Երկրէն նոր նամակ չունինք. Բարձրաբերդէն⁴⁹ կը գրեն ապրիլ 27 թուակիրով թէ տակաւին 400 ոսկի ունին աւանդատէրերուն քով, բայց դժուարութեամբ կը գանձեն: Մինչեւ հիմա 120 ոսկի Դուրան եւ 50 ոսկի Շամ⁴⁷ [չըրկուած է]:

Ոստիկանութիւնը կեղծ նամակ մը հաներ է, որով կը յայտնուի թէ Դաշ[նակցականները] որոշած են սպաննել Թահսին պէյը, բայց Փիլոսը⁷³ չէ թողեր: Խաղը այնքան վրան բաց է եղած, որ իրենք ալ ամչցեր են: Մայիս 4 թուով շրջանի բոլոր գիւղերը խուզարկեցին եւ բաւական զէնք գրաւեցին: Այս առթիւ այրեցին տուններ, խոշտանգեցին եւ սպաննեցին շատ մարդեր: Թոթորգայ գիւղին մէջ բաց է բաց սպաննեցին նախկին հնչակեան Բարսեղ Դեմիրճեանը եւ ուրիշ 6 հոգի: Քաղաքիս համար ալ 15 օր միջոց տուին զէնքերը յանձնելու: Ժողովուրդը առայժմ ոչինչ չէ յանձնած եւ շատ ալ միտք չունի: Կը կասկածինք որ գինավաճառները կարգ մը ցուցակներ տուած լինին:

Կանոնաւոր յարաբերութեան մէջ ենք Բերդի, Որոտումի եւ լեռ բարձրացած խումբերու հետ: Վարդանը եւ Բիճան խորհրդակցութեան մը համար հրաւիրեցինք քաղաք⁸⁶: Մտադիր ենք Եղոն կամ Վարդանը զրկենք Բերդ, քանի որ 50-60 լաւ զինուած եւ տրամադրելի տղաք ունինք հոն:

Շրջանի ձերբակալութիւններու թիւը կ'անցնի 300-ը. քաղաքի մէջ մեր ընկերներէն բանտարկուած են Վարդանեանը, Փոլատը, Վարդիկեանը եւ Լարիբեանը. միւսներն ալ կը փնտռուին. երեւի շատերն ալ պիտի բռնուին զէնքերը պահանջած ատեն: Շրջանի կալանա-

ւորները մեծ մասամբ մեր ընկերներն են:

Կեսարիոյ վիճակը շատ ծանր է: Բանտարկած են երկու հարիւր հոգի, մեծ մասը վաճառական: Հնչակեանները յանձնած են իրենց բոլոր տոմարները. դաշնակցութեան ներկայացուցիչը ոչինչ չէ յանձնած, ամէն բան իր վրայ առնելով:

Աւագանի⁵⁰ հետ կապ չունինք. Բանալին⁶⁴ խիստ խուզարկութեան ենթարկուելով՝ կապը կտրուեցաւ: Երբ Պոլիսը իյնայ, որի՞ հետ պիտի յարաբերինք. ո՞ր մնացին Պարոյր, Քեռի, Վարդանը: Լուրեր տուէք Շամէն:

Ճիշդ հիմա ստացանք հետեւեալ նամակը Բարձրաբերդէն մայիս 1 թուակ. — «Շամէն ոչ մէկ լուր. կամ ոչնչ[աց]ուած է, կամ յաղթած եւ կամ թշնամին արդէն լեցուած, ինչ որ կը խօսուի երկու օրէ ի վեր: Դուրանէն լուր առինք. Կոմսը տիֆուսի բռնուեր է, ապաքինուելու վրայ է. պիտի ջանան փախցնել, Վահաբի ճակատագրին չզցելու համար:

Դուրանի վիճակը մինչեւ անցած ամսուայ 23-ը սպառնական երեք կախաղան քաղաքի մէջ: Թնդանօթ դէպի հայկական թաղերը. կոտորածի պաշտօնական սպառնալիք Բիթլիսում կուսակալին կողմէ: Շամի մասին լուրերը հակասական. իբր թէ միայն մոխրակոյտ մըն է, արեւնով շաղախուած⁸⁷:

* * *

Բանակը նորէն կազմալուծուած է, վայրեր կան ամբողջութեամբ ոչնչացուած է: Թորթումը ռուսերու ձեռքը. նահանջի եւ պաշարուելու պատրաստութիւններ կը տեսնուին: Քրիթիք է հայութեան վիճակը: Բանտարկեալներու մեծ մասը արձակեցին: Իսկ այսօր յանկարծ Բալաջանը, Մարալը, Ատրուին⁸⁸ եւ քանի մը ուրիշներ աքսորեցին չգիտենք ուր. կը վախնան եղեր հայկ. խլրտումներէ: Լուր կայ որ քաղաքի հայութիւնը պիտի գաղթեցնեն: Հայ գիւղացիները դէպի ետ կը գաղթեցնեն: Հայութիւնը կը փճանայ կոր: Ռուսը պիտի ունենա՞յ իր փնտռած Հայաստանը առանց հայու: Դարձեալ հայը պիտի վերապրի եւ ոչ թուրքը: Տեղդ կախուողներ կա՞ն. շատեր փախած կամ բանտարկուած ըլլալու են»:

Ինչպէս կ'երեւայ մեր երկու նամակները չեն ստացած:

86.- Բերդը Շապին Գարահիսարն է, Որոտումը՝ Տիվրիկ. Վարդանը՝ Վարդան Շահպազ, Բիճան՝ Յովհաննէսեան Սկրտիչ, Եղո՝ Զիմառացի Եղօ:

87.- Չեռագրին մէջ հինգ տողի չափ բաց ձգուած է:

88.- Յիշեալ երեք ընկերները Կարին կը գտնուէին. Բալաջանը՝ Ստեփանեան Ստեփանն է, Մարալը՝ Փափախեան Փիլոս. Ատրուին՝ Արամ Ատրուին:

Ընկերներ! Երեւի միշտ թերթով⁸⁹ պիտի թղթակցինք, որովհետեւ այսօր Կարնոյ նամակին վրայ մէկ երկու տեղ, բայց բարեբախտաբար պարապ էջին վրայ, տեսանք որ խէժ է, եւ շատ լաւ կը բանայ. գուգադիպութեամբ է որ չեն յաջողած:

Թալէաթը նոյն իմաստով խօսած է նաեւ ամերիկեան դեսպանին, այսինքն ամէն բան պիտի ընեն մինչեւ որ 50 տարի հայերուն խելքը գլուխը չգայ:

Այսօր Գիսակը պիտի տեսակցի ձերինն հետ⁹⁰: Պատրիարքն ալ պիտի երթար իւր մասէն, բայց խորհուրդ տուած են որ ետ կենայ:

Ազատամարտի 450 ոսկիին մէջ է ձեր ղրկած 300-ը: Դեռ կարգադրութիւն չէ եղած:

Պատրիարքարանի տեղեկագիրները պատրաստ են, բայց միջոց կը փնտռենք ղրկելու: Եթէ չգտնենք պիտի ստիպուինք օրինակել ամէն օր, այսպէս լուսանցքի վրայ, ինչ թերթ ալ ըլլայ: Միշտ փնտռեցէք թերթերուն [մէջ]:

Ընկերները չափազանց վշտացած են ձեր անհոգութեան համար: Շաբաթը գէթ երկու անգամ չէ՞ք կրնար գրել, հաղորդելով օրուան լուրերը՝ քաղաքական եւ կովկասեան: Մենք հոս աւելի շատ կ'իմանանք, անհամբեր ձեզի սպասած ատեն: Յետոյ, ո՞ւր մնացին ձեր լուսաբանութիւնները մեր իրաւասութեանց մասին: Խ.ի⁹¹ հետ ղրկուած նամակներուն ոչ մէկուն պատասխանեցիք: Երեւի ամէն բան ձգած էք պատահականութեան:

Պուլկարիոյ մասնակցելու պարագան նկատի ունինք: Այն ատեն կը խորհինք, եթէ քաղաքը ինկած չըլլայ: Աւելի կարեւոր է Երկրի մէջ կապ պահելու հարցը, գոր յուզած է Սեւ Բլուրն ալ: Մենք ու դուք նոյն վիճակը պիտի ունենանք, իսկ անո՞նք. երեւի Շամին պիտի դիմեն:

Ընկ. բարեւներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺ [ԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ]

Փաստ. 1158-55

24.- ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սոփիա, 14-V-1915

Ընկերներ!

Կը խնդրենք տեղեկ պահէք մեզ ընկեր Չաւրիբեւի բանակցութիւններուն եւ ձեռք բերած արդիւնքին: Ատիկա անհրաժեշտ է, որպէսզի ինչպէս Պոլսի մեր ընկերները, այնպէս ալ մենք ըստ այնմ յարմարեցնէինք մեր առնելիք քայլերը:

Նորէն կը խնդրենք դիւանագիտական պատուիրակութեան մեր ընկեր-անդամները (Չաւրիբեւ եւ Գարոն), ջանալ համոզելու Նուպար-փաշան, որ ազդէ իր անունը վահան շինած տարրերուն վրայ Բալկանի եւ Եգիպտոսի մէջ, որպէսզի անոնք արգելքներ չչարուցանեն մեր ձեռնարկած հանգանակութեան դէմ: Դրամի անհուն պէտք ունինք, որովհետեւ այստեղէն է որ դրամ կը ղրկուի Պոլիս՝ Երկրի կարիքները հոգալու, իսկ այժմ նաեւ մեր ձերբակալուած ընկերներու եւ իրենց ընտանիքներուն համար: Ոչ Ազգային բերուն, ոչ ալ Ամերիկայի կամ Եգիպտոսի մեր ընկերները չեն կըրնար նիւթապէս օգնել մեզ, որովհետեւ իրենց դրամը հանգանակուած է յատուկ նպատակով եւ կրնայ միայն այդ նպատակին ծառայեցուիլ: Ասկէ անկէ հաւաքուած եւ հազար ու մէկ դժուարութիւններով Ազգային բերունը ու Եգիպտոսէն ստացուած քանի մը հազար

Փրանքն է որ մինչեւ օրս ղրկած ենք Պոլիս: Այդ է պատճառը, որ որոշեցինք լայն հանգանակութիւն բանալ հոս, եւ յոյս ունէինք մինչեւ 30-40,000 Փրանք ժողովել: Ու պիտի յաջողէինք, եթէ յանկարծ երեւան չելլէր փաշայի քմահաճոյքին նոր ծնունդը — «ազգային շահերու պաշտպանութեան» մարմինը: Ու շատ մը պարոններ, որոնք հարկադրուած պիտի լինէին մեզ աւելի կամ նուազխոշոր գումարներ տալ, այժմ շատ գոհ են, որովհետեւ դրամը այսուհետեւ այդ մարմինին կու տան, իսկ ան կը գոհանայ շատ համեստ գումարով: Ինչպէս կը տեսնէք, կը կրկնուի Բարեգործականին պատմութիւնը: Ասոր դէմ է որ պէտք է կտրուկ միջոցներու դիմել: Հաւանական է որ շուտով խզուին այստեղի յարաբերութիւնները թուրքիոյ հետ: Այդ պարագային մեր ընկերները հոն բոլորովին կտրուած կը լինեն դուրսի աշխարհէն ու կը մնան հոն նստած առանց մէկ փարայի: Ո՞վ պիտի հոգայ այն ատեն իրենց եւ երկրի բազմապիսի նիւթական պէտքերը. կացութիւններն կրնայ ուղղակի զարհուրելի դառնալ:

Սպասելով ձեր դրական պատասխանին, ընկերական բարեւներով,

Ի դիմաց Բալկանեան Կ. կոմիտէի՝
Ռ. ԼԵՌՆԵԱՆ⁹²

89.- Այսինքն թերթերու լուսանցքներուն, բաց տեղերուն վրայ գաղտնի մելանով գրելով:

90.- Այսինքն պուլկար դեսպանին հետ:

91.- Խարլաքով — պուլկար դեսպանատան սուրհանգակ:

92.- Ռ. Լեռնեան — կուս. ծածկանուն Նազարեանց Լիպարիտի, միաժամանակ խմբագիր «Հայաստան»ի:

Յիշեցէք իմ անձնական բարեւները Յոնանին եւ Տիկին Հորտանսին եւ տեղեկութիւն մը տուէք մեզ անոնց առողջական վիճակի մասին:

Ռ. Լ.

Փաստ. 882-15

25.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՍԵԱՅԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԷԻՆ

19-V-915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Մայիս 16ի գոյգ թերթերը, ինչպէս երէկուան թղթակցութիւնը ուղղուած նոր հասցէին:

Երէկ Բաղէշէն հեռագիր հասաւ Պատրիարքարան, որով հազար ոսկի կը պահանջեն հեռագրով: Անշուշտ չարաշուք դէպք մը կը բացատրէ այս հեռագիրը: Թերեւս դուք աւելի լաւ գիտէք բուն իրողութիւնը: Ամէն պարագայի մէջ կը ջանանք իմանալ:

Զէյթունցիներուն մէկ մասը աքսորած են Էնկիւրիի⁹³ Սուլթանիէ կոչուած տեղը, որ ճախճախուտ եւ վատառողջ անկիւն մըն է, ուրկէ թուրքերն անգամ կը փախչին եղեր, իսկ մաս մըն ալ դրկած են Միջագետքի Տէյր Զօր կոչուած վայրը, վրանաբնակ վայրենիներու մէջ: Պատրիարքը ամերիկեանի միջոցով⁹⁴ խնդրած է, որ արտօնեն դեղ, առողջապահական նիւթեր եւ եկեղեցական գոյքեր (Մաշթոց, միւռոն) դրկելու: Թալէաթը նախ ծամծամեր է, իսկ երկրորդ անգամուն երբ թարգմանը ներկայացած է վերջնական պատասխան ստանալու, յայտներ է թէ չեն կրնար արտօնել: «Մեր կայսրութեան գերագոյն շահերը կը պահանջեն այսպէս վարելի: Կը խնդրեմ որ ալ չխօսիք այս մասին»: Հակառակ այս պատասխանին, դեսպանը երկու երեք օրէ ի վեր նոր ժամադրութիւն մը կը խնդրէ, եւ երէկ պիտի տեսակցէր: Չգիտենք արդիւնքը: Ինչպէս կը տեսնէք, Իթթիհատը կատարելապէս հետեւողական է իր ծրագրին մէջ: Բնաջինջ ընել բոլոր հայկական համախմբումները, նոյնիսկ յատկապէս դէպի մահը առաջնորդելով գանոնք: Այս ուղղութեամբ առնուած վերջին քայլը այն է, որ արդէն իսկ կազմուած է յայտնի թուրքերու անդամակցութեամբ յանձնաժողով մը, գործադրելու համար տոքթ. Ռորպախի համբաւաւոր ծրագիրը.— Միջագետքի արաբները տեղաւորել Հայաստանի մէջ, որպէսզի ոչ մէկ հնարաւորութիւն չմնայ հայկ. մեծամասնութեան

կամ համախմբման, հետեւաբար եւ ինքնավարութեան:

Ազատամարտի դրամները ստանալու փորձերը կը շարունակուին: Այսչէն փոխանորդագիրներ եկած են թէ պատրիարքին եւ թէ Գիսակին անուանով. կամ մէկը կամ միւսը յաջողցնելու համար, այսօր իսկ դիմում կ'ըլլայ:

Երէկ ոստիկան մը Կեդրոնական վարժարան երթալով Խաչը⁹⁵ հարցուցեր է եւ տանը հասցէն առեր է: Հետաքրքիր ենք իմանալու, թէ նոր ցածր մը կը պատրաստեն մնացորդներն ալ հաւաքելու. կը հաղորդենք առաջին առթիւ: Կը խնդրենք ստոյգ եւ մանրամասն լուրեր տալ Շամի մասին: Վահաբի պարագան կը ցածր ճշդէր: Դէպքերու առաջին լուրերը կ'առնենք մենք, կարեւորը մանրամասնութիւններն են, այն ալ՝ մեր աղբիւրէն: Inédit⁹⁶ լուրերու կարօտը կը քաշենք եւ ձեզի ենք ապահանած: Կարգ մը ընթացիկ լուրեր հաղորդեցինք մեր ընկեր Ս. Սամուէլօֆի միջոցաւ, որ ձեր կողմը մեկնեցաւ երէկ:

Այսչիներուն տակաւին չեն թոյլատրեր հայերէն գրել. թէեւ արտօններ են բաղնիք երթալու...: Խիստ գրաքննութեան կ'ենթարկուին անոնց զրկած քարթերն անգամ, որոնք միշտ ոստիկանութեան միջոցով կու գան:

Խաչի մասին գիշերը տունն ալ հարցուցեր են. նկատելի է որ նախորդ կալանաւորումներն ալ այսպէս սկսան: Կը կասկածինք թէ հայ լրտեսները, որոնք հրապարակի վրայ են միշտ եւ որոնց կը հանդիպինք օրուան զանազան ժամերուն, նոր տեղեկութիւններ տուած են ողջ մնացողներու մասին: Ամէն պարագայի մէջ մենք միշտ իրազեկ կը մնանք: Առայժմ ձեզի պահեցէք այս բոլոր տեղեկութիւնները: Գործի վրայ է մանաւանդ հնչ[ակեան] Եասեանը:

Առայժմ այսքան, թերեւս վաղն ալ գրենք, առայժմ միշտ թերթով:

Ընկերական բարեկենդան
Առժամեայ կողմէ
ԱՐՇԱԻԻՐ

93.- Էնկիւրի, Անկորա հին անուանակոչումներն են Անգարայի:
94.- Իմա՝ ամերիկեան դեսպանի միջոցով:
95.- Խաչ. - փրոֆ. Աստուածատուր Խաչատրեան:
96.- Ֆրանսերէն՝ անտիպ:

Յ. Գ.— Քոյէճի հասցէն մի գործածէք, կը փակուի շուտով:

Փաստ. 63-54ա

26.– ՀԵՌԱԳԻՐ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ
ՕՍՄ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Փաստ. 63-54

Nous avons adressé le télégramme suivant au Gouvernement Ottoman

T A L A A T B E Y

Ministre Intérieur

Constantinople

C'est avec une profonde douleur que nous vous adressons ce télégramme pour protester de toutes nos forces, de toute notre énergie et du profond de notre être, contre les horreurs commises envers le peuple arménien par les Kurdes et les Turcs, aidés, ce qui est bien plus grave, par l'armée régulière turque.

Qui a organisé ces massacres? Qui est responsable de ces atrocités qui laissent loin derrière elles les horreurs pourtant bien terribles du régime hamidien? Qui a répandu ce voile de deuil sur toute l'Arménie, depuis la Cilicie jusqu'à l'Araxe et au Mont Ararat? Qui a changé en un monceau de ruines ce malheureux pays, massacrant sans pitié les habitants mâles sans distinction d'âge, violant et enlevant les femmes, ne laissant que les vieillards et les infirmes pleurer sur les ruines fumantes.

Le nombre des victimes se chiffre non par centaines, mais par milliers. Presque tous les villages arméniens ont souffert; un grand nombre ont été rasés et n'existent plus. Il n'a pas suffi aux agresseurs de piller les habitants, leur enlevant tout ce qu'ils possédaient, sous prétexte de réquisitions pour l'armée; il ne leur a pas suffi de rassembler tous les jeunes gens aptes au service, puis, au lieu de les envoyer à l'armée, de les massacrer lâchement dans quelque vallon écarté; d'offenser et de blesser dans leurs sentiments nationaux et religieux les recrues, les forçant à accomplir de honteuses besognes, les accusant fausement d'espionnage et de trahison et souvent les assassinant. Ce n'était pas assez de faire disparaître les personnalités en vue du monde arménien, les emprisonnant, les exilant dans quelque lieu écarté; ce n'était pas assez de faire régner la terreur parmi tout un peuple, il fallait faire de l'Arménie et de la Cilicie un vaste cimetière.

Qui est le coupable? – Le monde entier, vos malheureuse victimes au premier rang, vous crie votre crime à la face, et de même ceux qui étaient hier vos amis et avec qui vous partagiez le pain et le sel.

Et pourquoi ces crimes inouïs? – Est-ce que le peuple martyr a lutté de toutes ses forces contre le régime hamidien et a contribué pour une grande part à la révolution turque?

Est-ce parce que vous nommiez les Arméniens vos maîtres en révolution? Est-ce parce qu'ils avaient mis au service de votre jeune gouvernement toutes leurs forces juvéniles et viriles pour défendre la Constitution et la liberté nouvellement fondée?

Est-ce parce que, au moment de la réaction hamidienne, eux seuls restèrent fidèles à la Constitution et vous prêtèrent leur aide loyale, alors qu'un grand nombre de vos camarades vous abandonnaient?

Votre gouvernement a emprisonné la plupart de nos camarades, et, parmi eux plusieurs que vous aviez l'air de considérer comme des amis et des conseillers. Alors que vous aviez consolidé votre position et que vous vous croyiez hors de danger, vous avez failli à vos promesses envers vos alliés de la veille et vous avez pris une attitude ouvertement anti-armémienne; eux, pourtant, continuaient à se montrer loyaux envers vous, s'efforçant de vous faire voir quelle faute politique vous commettiez envers leur peuple et envers l'Empire turc tout entier. Et lorsque, de guerre lasse, nous dénouâmes les liens officiels qui nous unissaient à vous, nous ne nous sommes jamais posés en ennemies et avons continué à faire tout notre devoir envers vous et la patrie commune. Nous nous sommes efforcés de vous ouvrir les yeux au sujet de votre politique néfaste, vous adjurant de ne pas courir à votre perte en ouvrant des hostilités contre la Russie; de ne pas subir l'influence de l'Allemagne et de ne pas marcher contre la Triple-Entente, dont deux membres, l'Angleterre et la France, s'étaient toujours montrés des amis sincères de la Turquie et avaient, à maintes reprises, sauvé son existence.

Et qu'avez-vous fait quand ces amis séculaires et avec eux votre ennemie non moins séculaire, la Russie, vous promettaient l'inviolabilité de la Turquie? Vous vous êtes montrés ingrats; vous vous êtes retournés contre les libérateurs d'autrefois et vous vous êtes jetés dans les bras de l'Allemagne, aveuglés par sa force, et avez rompu votre sage neutralité, jetant ainsi à sa perte l'Empire Ottoman.

Le pays, pauvre déjà, en fut complètement ruiné. Vous avez attiré de terribles complications et des défaites sanglantes sur les frontières d'Arménie et avez sacrifié d'innombrables jeunes vies. Et vous combattez aujourd'hui le combat mortel, et, incapables dorénavant de sauver votre patrie, vous vous jetez lâchement sur le malheureux peuple arménien sans défense et désarmé.

C'est votre politique qui a forcé les Arméniens à lever des bandes pour lutter contre l'extermination systématique de leur race:— Vous récoltez ce que vous avez semé.

L'organe de la Fédération révolutionnaire arménienne, indépendamment du Parti et sous sa propre responsabilité, vient vous déclarer ici, à vous, représentants du Gouvernement et membres du Comité Union et Progrès, qu'il vous accuse et vous tient moralement et juridiquement pour responsables de ces crimes accomplis envers le peuple arménien, ainsi qu'envers tout l'Empire Ottoman.

**DROSHAK
Organe de Dachnaktsoutioun**

Genève, 2 juin 1915

Թ Ա Լ Է Ա Թ Պ Է Յ Ի Ն

Ներքին նախարար

(Թարգմանուած ֆրանսերէն բնագրից)

Կ. Պոլիս

Խոր վշտով է, որ ձեզ ուղղում ենք այս հեռագիրը՝ բողոքելու մեր բոլոր ուժով, մեր հոգեկան ամբողջ քափով եւ համակ էութեամբ, այն սարսափների դէմ, որ գործում են հայ ժողովուրդի դէմ քուրքերի եւ քուրդերի կողմից, եւ որ ծանրագոյնն է, ակներեւ աջակցութեամբ քրքական կանոնատր բանակի:

Ո՞վ է կազմակերպել ջարդերը: Ո՞վ է պատասխանատուն այս զագանութիւնների, որոնք նսեմացնում են մինչեւ իսկ Սուլթան Համիտի ահաւոր կոտորածները: Ո՞վ է սփռել սուգի քողը ամբողջ Հայաստանի վրայ, Կիլիկիայից մինչեւ Արարատ, Արաքսի հովիտը: Ո՞վ է այդ դժբախտ երկիրը վերածել ատերակների կոյտի, անխնայ սրածելով նրա արու գաւակները, առանց տարիքի խտրութեան, առեւանգելով եւ բռնաբարելով կիներին եւ ողջ թողնելով միայն անկարներին եւ պառաւներին՝ ողբալու համար միացող ատերակների վրայ:

Չոհերի թիւը բազմաթիւ հազարների է հասնում: Հայաստանում այլեւս գոյութիւն չունեն հայ գիւղեր, որոնք հիմնայատակ են եղել:

Բաւ չէր եղած ուղղակի թալանն ու կողոպուտը, հայերի բոլոր ինչքն ու ստացուածքը բռնագրաւուած են, զինուորական պիտոյքի պատրուակով: Բաւ չէր եղած հաւաքել բոլոր հայ չարքաշ երիտասարդներին զինակոչի անունով, եւ փոխանակ նրանց ռազմադաշտ ուղարկելու, վատօրէն խողխողած են հեռու եւ անյայտ ձորերում:

Բաւ չէ եղած վիրաւորել եւ անպատուել գորակոչիկ հայերի ազգային եւ կրօնական զգացումները, կը բռնադատէին նրանց ամօթալի եւ անպատիւ գործեր կատարելու, ստօրէն կը մեղադրէին նրանց լրտեսութեան եւ հայրենադատութեան յանցանքով ու կը սպանէին: Բաւ չէր եղած անյայտացնել հայ կեանքի ակնառու եւ որակաւոր դէմքերին եւ անձնատրութիւններին, նրանց կը բանտարկէին եւ կ'աքսորէին երկրի հեռաւոր եւ անծանօթ խորերը: Բաւ չէր ահաբեկումի ենթարկել ամբողջ հայ ժողովուրդը, Հայաստանն ու Կիլիկիան պէտք էր վերածել համատարած գերեզմանոցի:

Ո՞վ է մեղաւորը: Համայն աշխարհը եւ առաջին հերթին ձեր տարաբախտ զոհերը ձեր երեսն ի վեր կը պոռան ձեր ոճիրը. մանաւանդ այն զոհերը, որոնք երէկ ձեր բարեկամներն էին եւ ձեզ հետ միասնաբար արուհաց էին կերել:

Եւ ինչո՞ւ այս անլուր ոճիրները:

Նրա՞ համար որ այս մարտիրոս ժողովուրդը, իր ամբողջական կարողութիւններով, շարունակ կռուել է համիտեան բռնատիրութեան դէմ եւ մեծապէս նպաստել քրքական յեղափոխութեան: Նրա՞ համար որ դուք հայերին համարում էիք ձեր յեղափոխական ուսուցիչները: Նրա՞ համար որ իրենց երիտասարդ ու առնական ուժերը ձեր նորակազմ կառավարութեան տրամադրութեան տակ դրին, պաշտպանելու համար նորածիլ Սահմանադրութիւնը եւ Ազատութիւնը:

Նրա՞ համար որ համիտեան յետաշրջական շարժումների ժամանակ, հայերը միայն սահմանադրութեան հաւատարիմ մնացին, երբ ձեր ընկերներից շատերը դասալիք եղան:

Չեր կառավարութիւնը բանտարկեց մեր ընկերներից շատերին, որոնց մեծ մասը դուք կը նկատէիք ձեր բարեկամը եւ խորհրդատուն: Չեր դիրքը ամրացնելուց յետոյ, երբ ձեզ վտանգից զերծ նկատեցիք, դուք

խոստմնադրուժ եղաք ձեր վաղեմի գործակիցների հանդեպ եւ որդեգրեցիք բացայայտ հակահայկական կեցուածք: Սակայն նրանք շարունակեցին իրենց հաւատարիմ եւ օրինապահ ընթացքը, ջանալով լուսաբանել ձեր բռնած քաղաքականութեան սխալ լինելը հանդէպ թէ հայ ժողովուրդին եւ թէ օսմանեան պետութեան: Եւ երբ յուսահատ ձեր յամատ դրժումից, ձեզ հանդէպ մեր պաշտօնական կապը խզեցինք, ոչ միայն թշնամական դիրք չբռնեցինք, այլեւ շարունակեցինք մեր պարտքը կատարել հանդէպ ձեզ եւ ընդհանուր հայրենիքին: Սենք զգուշացրինք ձեզ աղէտաբեր քաղաքականութիւնից եւ նշեցինք, որ Ռուսիոյ դէմ պատերազմի մտնելը ձեզ կործանման կը տանի: Խորհուրդ տուեցինք ձեզ չհպատակուել Գերմանիոյ ազդեցութեան եւ պատերազմ չյայտարարել Երրեակ համաձայնութեան, որոնցից Անգլիան եւ Ֆրանսան միշտ հանդիսացել են Թուրքիոյ անկեղծ բարեկամները եւ բազմաթիւ առիթներով փրկած նրա գոյութիւնը:

Դուք ի՞նչ արիք, երբ ձեր այս դարատր բարեկամները եւ ձեր վաղեմի թշնամին՝ Ռուսիան ձեզ խոստացան Թուրքիոյ անձեռնմխելիութիւնը երաշխաւորել: Դուք ապերախտ եղած ձեր երբեմնի ազատարարների հանդէպ ծառանալով, եւ Գերմանիոյ զիրկը նետուեցիք, կուրացած նրա հզօրութիւնից, նաեւ վերջ տուիք խոհեմ չէզոքութեան, կործանումի ճանապարհի վրայ դնելով օսմանեան պետութիւնը:

Արդէն իսկ աղքատ Թուրքիան, այժմ ընթանում է դէպի փլուզում եւ հիմնայատակ աւերումի:

Հայաստանի սահմանների վրայ արհմաքամ պարտութիւններ կրեցիք, իսկ այժմ մղում էք մահուան կռիւր, բայց այլեւս անգօր էք հայրենիքը փրկելու համար: Դրա համար էլ դուք տմարդօրէն նետուել էք անզէն, անպաշտպան եւ դժբախտ հայ ժողովրդի վրայ:

Ձեր քաղաքականութիւնն է, որ ստիպել է հայերին խումբ առ խումբ ընկզկելու եւ կռիւ մղելու սիստեմատիկ հայաջնջումի դէմ: Դուք քաղում էք, ինչ որ սերմանել էք:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պաշտօնաթերթը, անկախ կուսակցութիւնից, իր սեփական պատասխանատուութեան տակ, զալիս է յայտարարելու ձեզ՝ անձամբ, ձեր կառավարութեան եւ Իթթի-հատի անդամներին, որ ձեզ ամբաստանում ենք, եւ ձեզ պատասխանատու ենք համարում բարոյապէս եւ իրաւապէս այն բոլոր ոճիրների համար, որ գործուում են հայ ժողովուրդի, ինչպէս նաեւ օսմանեան պետութեան դէմ:

ԴՐՕՇԱԿ
Օրգան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան

2 Յունիս 1915, Ժընեւ

Ծանօթ. ղիւանի.– Այս հեռագրի վերաբերմամբ, Յովնան Դաւթեանը անհրաժեշտ նկատել է իր ձեռագրով բացատրութիւն տալ, որը կցուած է հեռագրի բնագրին: Ապա այդ հեռագրի պատճէնը.

«Հեռագրի ինիցիատիւր (նախաձեռնութիւնը) Պոլսին է:

Իւսուֆեանի, Ահարոնեանի համաձայնութեամբ է հեռագրուած: Երեքս էլ այն կարծիքին էինք, որ ուշացել է եւ գործնական արժէք չունի, բայց բարոյական, քաղաքական եւ պատմական տեսակէտից գտանք, որ հեռագրել արժէ»:

Ուշանալու պատճառը Բալկանն է: Նա մեզ հեռագրում է՝ մի սպառնալիք ուղարկել օսմանեան կառավարութեան: Մոմենտը (քաղաքական պահը) ծանր է եւ քայլը խիստ պատասխանատու, մանաւանդ որ դեռ (անընթեռնելի բառ) որոշ եւ ճիշդ տեղեկութիւններ չէին ստացուել Երկրի վիճակի մասին: Ես այդ քայլը առնելու տրամադիր չէի: Հեռագրով հարցնում ենք ո՞ւմ ինիցիատիւն է: Եթէ Բալկանինն է, անհետեւանք կը մնայ: Պատասխան չստացանք: Բաւական ուշ, նամակով իմացանք, որ առաջարկը Պոլսինն է, եւ մինչ այդ էլ ճիշդ տեղեկութիւններ ստացուել [են] Երկրի վիճակի մասին, զուցէ չափազանցրուած, որոշեցինք հեռագրել:

Զգուշութեան համար, հեռագրի մէջ պատասխանատուութիւնը զցեցինք Խմբագրութեան վրայ»:

ՅՈՎՆԱՆ

Փաստ. 882-16

27.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 21 Մայիս 1915

Ընկերներ,

Կը հաստատենք մեր Մայիս 19 թուակիրը: Ստացանք ձեր Մայիս 16 թուակիր գոյգ նամակները:

Նոր դժբախտութեան լուրն է, որ պիտի հաղորդենք այսօր: Երէկ մինչ Գիսակը ոստիկանութեան տեսուչին գացեր էր Ազատամարտի դրամներուն համար, ինչպէս եւ խնդրելու որ Խաթակին քիչ մը դիւրութիւններ տան դարմանուելու — շարունակ կը հազայ նորէն — ժամը 5ին, կնոջը բացակայութեանը, 10-15 ոստիկաններ մտած ու խուզարկած են սենեակը: Ինչ թուղթ, որ ունէր, տարած են: Որքան կը յիշենք compromettant⁹⁷ ոչինչ կար իր քով՝ գոնէ սա նոր շրջանէն: Ինք մինչեւ իրիկուն չվերադարձաւ, իսկ այսօր արդէն կինը գնաց կամուրջին վրայ ճամբելու: Ղրկած են ուղղակի Գոնիա, Զօհրապին հետ միասին, որու տունն ալ երէկ խուզարկուեցաւ:

Երէկ կարգ մը ձերբակալութիւններ կատարած են նաեւ Մաքրիգիւղ (Տիգրան Աշխարհունի), Գոմ Գաբու-Բերա (Տիգրան Սարգիսեան): Կ'աճապարենք այս երկտողը գրել, միեւնոյն ատեն հետամուտ ըլլալով ստուգելու, թէ նոր շա՞րք մըն է որ կը սկսի, ինչպէս կը կարծենք, թէ՞ կարգ մը indication-ներ⁹⁸ եղած են: Առայժմ մենք ալ գոռոյ չենք: Կը խնդրենք ոչ թէ օրը երկու անգամ, այլ երկու օրը մէկ անգամ գրել, մինչեւ որ նոր հասցէներ տանք: Չենք գիտեր թէ իւրաքանչիւր 24 ժամ յետոյ, մեզմէ ո՞վ կը մնայ: Արշալիրը նոր մեկնած էր Գիսակէն⁹⁹, երբ եկեր են խուզարկելու:

Կ'իմանանք թէ ամերիկեանը լրջօրէն աշխատեր է ազատելու մեր աքսորականները, բայց պատասխաներ է, որ նոր ցանկ մը ներկայացնէ անվնաս եւ ոչ-կուսակցականներու: Դեսպանը բնականաբար խուսափեր է, ինչպէս ըրած էր Զաւէնն¹⁰⁰ ալ, որուն միեւնոյն առաջարկը ըրած էին: Ինչպէս կ'երեւայ վերադարձի ոչ մէկ յոյս

չկայ: Մարզպետը¹⁰¹, որ աւստրիական հպատակ է, հեռագրած էր թէ կը վերադառնայ: Խաթակն ալ, իր վերջին քարթով, գրած էր անոր մեկնումը 3-4 օր առաջ: Այժմ 15 օր անցած է եւ լուր չկայ: Կը կասկածինք, որ փոխանակ Պոլիս ղրկելու, Կեսարիա ղրկած ըլլան, ծանօթ դէպքերուն հետ կապելով: Ամէն պարագայի մէջ կ'իմացնենք իրողութիւնը: Խաթակի հիւանդութեան համար դիմում պիտի ընէր նաեւ Ոսկան Մարտիկեանը:

Երկրէն ոչ մէկ լուր չունինք: Սեւ Բլուրն⁴⁰ էր մեր միակ յոյսը, ան ալ լռեց: Կ'ըսուի, թէ քանի մը հոգի կախեր են, բայց չկրցանք ստուգել:

Այս միջոցին ձեռքի տակ ունինք թուրք ոստիկանական թերթը (Փոլիս Մէճմուլասը), որ խոշոր պատկերներով կը ցուցնէ Կեսարիոյ եւ Տիգրանակերտի մէջ կատարուած խուզարկութեանց արդիւնքները: Յուսուողովուրդէն են հարիւրաւոր ռումբեր, հրացաններ, հայկական եւ դաշնակցական զինանշաններ, Տարօնի առիւծը, դէպի ազատութիւն, հայկ. ազատամարտը, տինամիթ պատրաստելու գործիքներ եւ այլն: Իւրաքանչիւր պատկերի տակ ծանօթութիւններ կան գտնուած տեղերու մասին (հայոց եկեղեցի, դպրոց եւն), կը յիշուի Դաշնակցութիւն անունը, բայց առանձին բան չկայ հայերու դէմ: Պատկերը ինքնին շատ պերճախօս է արդէն գրգռուելու եւ բորբոքելու խուժանական կիրքերը: Յօդուած մը կայ պայթուցիկ նիւթերու գործածութեան եւ փճացման մասին, ընդարձակ մանրամասնութիւններով: Պիտի ջանանք միշտ ունենալ այս թերթէն, որ կը հրատարակուի 15 օրը մէկ անգամ՝ «Ի պէտս ոստիկաններու մտաւոր զարգացման»:

Այսչիները քանի մը օր ազատ ձգեր են, բայց ինչպէս կը լսենք, նորէն բանտարկեր են, իբրեւ թէ քաղաքացիներու հետ մտերմանալով, իրենց տառապանքները պատմած եւ մատնուած են:

Ձնջեցէք մեր վերջին հասցէն ալ (Վերժին Խաչերեան): Վաղը նոր հասցէներ կու տանք: Կրնաք մէկ երկու նամակ ալ գրել Յունիսին. աղջկանց ամերիկեան քոլէճ Օր. Արուսեակ Պոսթանճեանին (միշտ ընտանեկան):

Առժամեայի կողմէ
ԱՐՇԱԻԻՐ

Կովկասեան շարժումներէն լուր չունինք երկու երեք ամիսէ ի վեր:

97.- Ֆրանսերէն՝ վտանգաւոր:
98.- Ֆրանսերէն՝ ցուցմունքներ:
99.- Այսինքն՝ Շ. Միսաքեանը նոր էր հեռացած Վարդգէսին տուած իր այցելութեանէն, երբ ոստիկանութիւնը անոր բնակարանը խուզարկելու կու գայ:
100.- Չաւէն կամ Չաւէնեան, այստեղ եւ այսուիտեւ յաճախ կը գործածուի Կ. Պոլսոյ պատրիարք Չաւէն Արք. Տէր Եղիայեանի համար:
101.- Մարզպետ – դաշնակցական գործիչ, բուն անունով Ղազարոսեան Ղազարոս:

Փաստ. 1158-58

28.– ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՍԻՏԷԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սոֆիա, 21 Մայիս 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Մայիս 13 եւ 489 թուահամար նամակը որով թէ տեղույս եւ թէ երկրի կացութեան մասին ընդարձակ տեղեկութիւններ կը տայինք: այժմ կը շարունակենք տալ ամփոփումները Վիչապից ստացւած նամակներէն:

Վիչապ, 8/21/V.— «Այաչցիները բոլորը միասին արգելափակուած կը մնան. այդ քաղաքէն միայն չէզոք բժիշկ մը վերադարձաւ որ կը պատմէ թէ ամէնը 80 հոգի՝ իբրեւ կուսակցականներ յատկապէս վարձուած ազարակի մը մէջ արգելափակ կը մնան, զրկուած ամէն հաղորդակցութենէ, թէեւ թուրք ժողովուրդը լաւ վերաբերում ունի. նախ կը կարծեն եղեր թէ հասարակ չեթաներ են, մինչդեռ հիմա համոզուեալ են որ շատ յարգելի մարդիկ են...: Տեղը այնքան աղտոտ է եղեր որ գլուխներուն մէջ մէկ հատ տոպրակ կ'անցընեն մլուկներէն եւ ոջիւններէն չնեղուելու համար: Երկու հոգի մէկ անկողնի մէջ կը պառկին եւ ուրիշ տեսակ գանազան նեղութիւններ: Իսկ Չանդըրըն դարձան միայն 8 հոգի (Քեչեան, Կոմիտաս վարդ[ապետ], Տք. Թորգոմեան, Նարկիլիճեան եւ ուրիշ մէկ երկու հասարակ մարդիկ: Վարդապետը կը պատմէ որ շատ հանգիստ էին, ոչ իսկ հարցաքննութեան են կանչուած: Առաջին խմբակը 206 հոգի էր, Չանդըրըն մէջ, բոլորն ալ շատ հանգիստ են, քաղաքին մէջ ազատ կը պտտին: Հրամանատարը եւ տեղացիները շատ յարգանքով վարուած են: Հրամանատարը նոյնիսկ թէյասեղանի հրաւիրած է: Խոստովանած է որ սխալ մը գործուած է: 40-50 հոգի ալ իբրեւ թէ պիտի դառնան, ուրիշ խօսքով չանդըրըցիները իրենց տեղերը պիտի դարձնեն: Իսկ այաչցիները առ այժմ յայտնի չէ: Կը վախնանք որ հիմա աւելի խստացուցած ըլլան անոնց վիճակը: Մերիններէն Չանդըրըն է Հրաչը, որուն տեղ ուրիշ Հայկ Թիրեաքեան մը տարած են Այաչ, իբրեւ դաշնակցական: Չանդըրըն են Սրենցը, Նշանը, Տք. Միրզան, Տք. Բարսեղեանը: Ինչպէս կը հաստատուի միեւնոյն (ապրիլ 12) օրը կայսրութեան ամէն կողմը տրուած ազդանշանի մը վրայ, միեւնոյն կերպով ձերբակալումներ ու քստրուումներ եղած են: Մօտ 100 տարած են Նիկոմեդիայէն. 70/80՝ Պարտիզակէն, 40՝ Պրուսայէն, 30/40ական Պանտրմա Պալքէսէրէն, 80՝ Ատափազարէն. բոլոր կուսակցական, մտաւորական, երիտասարդական տարրերը հաւաքած եւ քշած են ներս,

Գոնիայի եւ Ատանայի նահանգներուն թրքաբնակ վայրերը: Աւելի սարսափելի հետապնդումներ եղած են ներքին գաւառներուն մէջ. ինչպէս պիտի տեսնաք արտագրուած վերջին նամակներէն ալ՝ Կեսարիա, Սրվազ, Կարին, ամէն կողմ նոյն բարբարոսութիւնը կատարուած է, առանց հարցաքննութեան, առանց պատճառի: Այստեղ իսկ հետապնդումները չեն դադրած տակաւին, քանի մը օր առաջ ձերբակալեցին կրթական տեսուչ Դ. Գալանթարը՝ ուրիշներու հետ: Ինչպէս կը պատմեն կալանաւորները Իթիթհատը կարծեր է երեւան հանած ըլլալ Հայկ. խոշոր շարժում մը: Բայց հիմա ամօթապարտ է մնացեր (այսպիսի խօսքեր ըսած են հոս ալ, մանաւանդ յիշելով որ մեծ բաներ պիտի գտնէին Ազատամարտէն, բայց յուսախաբ են եղեր, հակառակ այնքան պեղումներու:

Երէկ գերմ. դեսպ[անատունէն] հաղորդեցին որ Կարինի եւ շրջակայ ամբողջ Հայ ազգաբնակչութիւնը գիւղերով միասին՝ քշած են դէպի ներս, Մամախաթուն եւ Դերջան: Իբրեւ թէ դեսպ. պիտի բարեխօսէ եղեր շարիքը մեղմացնելու համար: Այս քայլը առնուած է եղեր իբրեւ պատասխան ռուսերու յառաջխաղացման: Միեւնոյն աղբիւրէն հաղորդեցին թէ Վանը հայերուն ձեռքն է, թէ Կոմսը բանտարկուած է Մուշի մէջ, թէ Չէյթունը եւ Կիլիկիոյ միւս հայաշատ կեդրոնները բռնի պարպուած են եւ ալպանացի գաղթականներ զետեղուած են:

Կարնոյ մէջ ալ ձերբակալութիւններ եղած են ի մասնաւորի մեր տղոց հանդէպ, հազիւ թէ քանի մը հոգի մնացեր են: Ստորեւ կ'արտագրենք անոնց վերջին նամակը որ մեր ձեռքը հասաւ Բշ. օր:

Կարին, 19 Ապրիլ.— «Շամէն ոչ մէկ լուր, զրոյցներուն նայելով, ռմբակոծում, կոտորած, հրդեհ է պատահած. նոյնը կը պատմեն նաեւ Մուշի մասին: Խոստովութիւնները սկսան հոս ալ. Հինգ օրէ ի վեր ծայր տուած է ձերբակալումներու շարք մը: Երեւի բոլոր հայերը եւ մասնաւորապէս մեզի պիտի քշեն ներս: Ընկերներէն 10/15 հոգի բռնուած են արդէն. հերթը շուտով մնացածներուն կը գայ, Մարալն⁷³ ալ բանատարկուեցաւ, կը վախնան եղեր հայկական ցնորական ապստամբութենէ մը: Իբրեւ թէ Դաշն[ակցութիւնը] երկու մասի բաժնուած է, մէկը ապստամբական, միւսը՝ ոչ: Խուզարկութիւնները մնացին ապարդիւն, պատերազմ չկայ, կոտորածը վճռուած հարց կը թուի, միայն թէ պատրուակ կը փնտռեն»: Ահա եւ Սեւ Բլուրի⁴⁰ նամակը. «Տոքթ. Փա-

չայեանը Այաչէն հեռագրով դրամ ուզած էր, չհասկըցանք թէ ի՞նչ ըսել կ'ուզէ, երեւի աքսորուած են. գրեցինք իրենց... չըջանի բոլոր քաղաքները իրենց գիւղերով խուզարկուեցան: Ձերբակալուած են աչքի ընկնող դաշնակցականներ, հնչ[ակեաններ], չէզոքներ եւ բոլորը հոս կը բերուին: Մօտ ատենէն կալանաւորներուն թիւը թերեւս 500ի հասնի: Կալանաւորներուն ոչ մէկ բան կը հարցնեն, անշուշտ իբրեւ պատանդ կ'ուզեն պահել, ի հարկին կախելու համար, երբ խուզուած թիւն ծագի: Վարդանը ու Բիծան Որոտուածէն⁷⁷ կը գրեն որ հաւանութիւն տանք իրենց չըջանի բանտարկեալները փախցնելու: Առ այժմ յարմար չսեպեցինք եւ հարկ եղածը գրեցինք. Վարդանը եւ Բիծան իրենց խմբերով լեռն են եւ շատ հանգիստ: Որոտուածի խուզարկութիւնները մնացին ապարդիւն, թէեւ սոսկալի տանջանքներ տուած էին: Սուրէնն ու Եղոն¹⁰² իրենց չըջանն են, բայց որովհետեւ գիւղերը շատ նեղը դրուած են, կը խորհինք Որոտուած դրկել ի հարկին. գրած ենք Վարդանին որ գէթ մինակը գայ Սեւ Բլուր խորհրդակցելու համար: Եւ պիտկոպոսը չ'ուզէր մնալ, կը կասկածինք իր նկարագրին վրայ՝ կարգ մը հաստատ պատճառներով. իմացուցէք Պատրիարքարանին ի գիտութիւն. քաղաքին մէջ ամէն օր տուն կը խուզարկուի: Օտարահպատակներուն կացութիւնը օրէ օր կը ծանրանայ, վտանգելով բոլորիս գոյութիւնը: Մենք ալ թագնուած ենք. ձեր նամակ [չ]գրելը կը յուսահատեցնէ մեզ: Երգնկայէն թնդանօթ, ռազմամթերք եւ ուտեստ կը փոխադրուի դէպի Կեսարիա: Երեւի Գոնիան կ'ամրացնեն»:

Վերջապ. 8 Մայիս.— Կը հաստատենք այսօրուան նամակը, որուն լրացուցիչն է ներկան: Կեսարիայէն նամակ մը ստացանք. կը հասկնանք թէ նոյն ցաւն է որ կ'իմացնեն, բայց որովհետեւ ոչ այս դրութիւնը գիտեն, որ ալ հասցէ տուած են, կը մնանք անձար: Ուրիշ աղբիւրէ ճշդեցինք որ հոն ալ բոլոր ընկերները եւ յայտնի դէմքերը բանտարկած են: Չորս հինգ օր է ի վեր (Պոլսի) բանտը կը պարպեն, Վոսփորի ծայրագոյն գիւղերէն: Պէօյիւք Տէրէէն, Ենի-Մահալէէն եւ Սարըբարըէն քրիստոնեայ բնակչութիւնը կը պարպեն: Մահմետականները կը մնան առ այժմ: Թերեւս խուճապի չմատնելու համար յետաձգած են, կամ միայն քրիստոնեաներու համար է հրամանը. շատ բիրտ կերպով կը վարուին, երէկ վերջին օրն էր, անոնք որ կ'ուշանան պատերազմական ատեանի կը յանձնուին: Դուրսէն պտոյտի համար ոչ ոք կրնայ երթալ: Կէօպէն¹⁰³ կը նորոգուի Սթենիայի ծոցին մէջ, վնասուած ըլլալով Կիրակի օրուան կուրիւն: Ահագին քանակութեամբ պաշար կը փոխադրուի Սիլիւսարէն եւ Հայտար Փաշայէն դէպի ներս: Օրէ օր նոր հիւանդանոցներ կը բացուին: Ֆոն Չանդերսը 100 հազար զինուոր կը պահանջէր յաջողութեան շանս մը ունենալու համար: Տարտանէլի հրամանատար ձեկատ փաշան ետ

կանչուած եւ աքսորուած է, Չանդերսի հետ հակառակ ըլլալով. խուզուածութեան արձագանգներ կը հասնին սպաներու չըջանէն. չենք գիտեր որքան ստոյգ է. կ'իմանանք թէ այդպիսիները իբր ապստամբ համարելով կ'աքսորեն զօրքի չըջանէն. խօսք կայ որ զօրանոցներէն զօրքերը մասնաւոր բնակարաններու մէջ պիտի փոխադրուին, թշնամին չփոթեցնելու համար:

Մեզի հետ միշտ վատ են տրամադրուած: Գիսակը տակաւին չկրցաւ ներկայանալ մեծերէն մէկուն: Այաչ զարնուած հեռագիրներուն պատասխաններն ալ չեն հասած տակաւին, երեւի ալ ոչ մէկ հաղորդակցութիւն պիտի թոյլատրեն, թէկուզ դրամի համար. ձերմակեղէններն անգամ շատ դժուարութեամբ կ'առնէ փոստը, հարցումներ ուղղելով:

Յիշատակագիր մը պատրաստած ենք ամփոփելով վերջին դէպքերը, կցելով յառաջաբան մը Դաշնակցութեան Մամեայ քաղաքակալութեան մասին: Պիտի ներկայացնենք Գիսակին միջոցաւ պուլի. դեսպանին որպէսզի նա էլ հաղորդէ միւսներուն: Վնամեանի վերջին եւ Կոմսի հեռագիր յիշատակագիրները աչքի առաջ չունինք, բայց քանի մը կէտեր յիշողութեամբ աւելցուցինք իբրեւ փաստ մեր correct¹⁰⁴ եւ օրինապահ ընթացքին:

Ոստիկանութեան կողմէ փակուեցան բոլոր հայ աւուլները, լաւարանները եւ մարզարանները:

Վերջապ. 13/26/V.— Գիսակը երէկ ներկայացաւ Թալէթին իր բնակարանին մէջ. չէ ուզած որ պաշտօնատուն երթայ, նախարարը բացարձակապէս յայտարարեր է «քանի որ դուք մեր նեղ օրերուն մեր վզին չոքելով, բարենորոգում, ինքնավարութիւն են. պահանջեցինք, հիմա ալ մեր լայն օրերուն հայ ժողովուրդը ցիրուցան պիտի ընենք, որպէսզի մինչեւ 50 տարի բարենորոգման կամ ինքնավարութեան խօսք չկարենաք ընել...»: Գիսակը դիտել տուեր է որ Համիտին գործը շարունակել կ'ուզէք, նախարարը հաստատական պատասխան տրուած է առանց վերապահութեան: Այաչցիներու վիճակը մեղմացնելու մասին, Թալէթը յայտներ է որ երբ քիչ մը ազատ ձգեն կը վախնան որ փախչին... բայց եւ այնպէս խոստացեր է հրահանգներ տալ որ քիչ մը թոյլատու գտնուին: Իբրեւ թէ առայժմ կ'արտօնեն եղեր օրը քանի մը ժամ պտտելու զօրանոցի բակին մէջ: Այաչէն Հայկ Թիրեաքեան անունով նպարավաճառ մը որ սխալմամբ տարած են Հրաչին տեղ, վերադարձաւ.

102.- Սուրէն՝ ծածկանունն է Սեբաստացի Սուրատի. Եղոն՝ Չիմառացի Եղոն է. Վարդանը՝ Վարդան Շահպազ:
 103.- Կէօպէն, որ գերմանական ուրիշ ռազմամասի մը (Պրեյլաու) հետ փախուստ ձեւացնելով դաշնակից ռազմամասերէն՝ ապաստանած էր Պոլիս: Ապա այդ երկու ռազմամասերը Թուրքիա «նուէր» ստացաւ գերմանացիներէն եւ սկսաւ ոմբակոծել Սեւ ծովու ռուսական նաւահանգիստները, այդ ճամբով պատճառ դառնալով ռուս-թրքական պատերազմին:
 104.- Ֆրանսերէն՝ շիտակ, օրինապահ իմաստով:

կը պատմէ թէ շատ գէշ [վիճակ] ունին: Պիտի աշխատինք կարելին ընելու գոնէ քաղաքին մէջ ազատ պատեւու համար: Երբ Պոլիսը իյնայ այլեւս անյուսալի է որեւէ մեղմացում: Էտիրնէէն նախ 40 յետոյ 180 հոգի աքսորած կամ բանտարկած են, Կեսարիայէն 200 հոգի ձերբակալած են, սարսափելի է հետապնդումը այդ շրջանին մէջ: Սեւ Բլուրէն կը գրեն որ շրջանէն ձերբակալած եւ քաղաք բերուածներուն մեծ մասը մեր ընկերներն են: Ձէյթունի այրերը կիներէն բաժնելով, կին եւ աղջիկ քէր են Էնկիլուրիի զուտ թրքաբնակ մէկ գիւղ մը եւ հոն ձգած են խուժանին առջեւ ենթակայ անոնց ամենավարձ կիրքերուն:

Կարինէն 24 Ապրիլէն կը գրեն որ ձերբակալուածներէն 20-30ը արձակեցին, բայց դեռ 50-60 կը մնան բանտը: Այսուհետեւ անշուշտ ալ ձայն չպիտի լսենք այդ կողմէն: Դեսպանատուններէն կ'իմանանք թէ ընդամէնը 400 հոգի կոտորած [են] Վանի մէջ. երեւի դուք սխալ գրած էք 6000: (Այս 6000ը մեզ հեռագրած է Թիֆլիսէն Վրացեանը ինչպէս որ մենք էլ ձեզ հեռագրած ենք ատենին):

Կիլիկիայէն նոր նամակ չունինք, երեւի հոն ալ բանտարկած են բոլոր ծանօթ դէմքերը: Սեւ Բլուրը կապ ունի Բերդի, Որոտումի, Կեսարիոյ ու շրջականերու հետ. Խարբերդէն ձայն չկայ. ինչպէս կը տեսնենք երկիրէն միայն Սեւ Բլուրը կը մնայ առ այժմ:

Տարտանէլի վիրաւորներէն անոնք որ կրնան շարժիլ, կը փոխադրուին դէպի Աֆրոն-Գարահիսար եւ Գոնիա: Կ'իմանանք թէ Տարտանէլի մէջ հայ վիրաւորները ոչ միայն իրենց բախտին կը ձգեն, այլեւ դիտամբ կը մեռցնեն, ինչպէս պատմեցին ականատեսներ ալ. դիտելի է որ բոլոր հիւանդանոցներուն մէջ ալ քիչ [է] հայ վիրաւորներուն թիւը: Երկրէն անհամբեր լուրի կը սպասեն Պարոյրի, Վարդանի եւ միւսներու գործողութեանց մասին:

Վըշապ, 15/28/V.— Երկրէն նոր նամակ չունինք. Բարձրաբերդէն⁴⁹ կը գրեն Ապրիլ 27ի թուակիրով, թէ դեռ տակաւին 400 ոսկի ունին ականդատէրերուն քով, բայց դժուարութեամբ կը գանձեն: Մինչեւ հիմա 120 ոսկի Մուշ եւ 50 ոսկի Շամ ղրկած են: Ոստիկանութիւնը կեղծ նամակ մը հաներ է որով կը յայտնուի թէ դաշնակցականները որոշած են սպաննել Թահսին բէյը, բայց Փիլոսը չէ թողեր. խաղը այնքան վրան բաց է եղած, որ իրենք ալ ամչցեր են: Սեւ Բլուրէն կը գրեն Մայիս 4 թուով.— Շրջանի բոլոր գիւղերը խուզարկեցին եւ բաւական գէնք գրաւեցին. այս առթիւ այրեցին տուներ, խոշտանգեցին եւ սպաննեցին շատ մարդիկ, Թոտորգայ գիւղին մէջ բաց է բաց սպաննեցին նախկին հնչակեան Բարսեղ Տեմիրձեանը եւ ուրիշ 6 հոգի: Քաղաքիս համար ալ 15 օր միջոց տուին գէնքերը յանձնելու. ժողովուրդը առ այժմ ոչինչ չէ յանձնած եւ շատ

էլ միտք չունի: Կը կասկածինք որ զինավաճառները կարգ մը ցուցակներ տուած լինին. կանոնաւոր յարաբերութեան մէջ ենք Բերդի, Որոտումի եւ լեռ բարձրացած խմբերի հետ: Վարդանը եւ Բիծան խորհրդակցութեան համար հրաւիրեցինք քաղաք: Մտադիր ենք Եղոն կամ Վարդանը ղրկել Բերդ, քանի որ 50-60 լաւ զինուած եւ տրամադրելի տղերք ունինք հոն:

Շրջանի ձերբակալութիւնների թիւը կ'անցնի 300ը. քաղաքիս մէջ մեր ընկերներէն բանտարկած են Վարդանեանը, Փոլատը, Ղարիպեանը եւ ուրիշներ. մի քանի ընկերներ ալ կը փնտուրին: Երեւի գէնքերը պահանջած ատեն պիտի բռնեն: Շրջանի կալանաւորները մեծ մասամբ մեր ընկերներն են: Կեսարիոյ վիճակը շատ ծանր է, ձերբակալուածները 200 հոգի են: Սեւ մասը վաճառականներ: Հնչակեանները յանձնած են իրենց բոլոր տոմարները, Դաշնակցութեան ներկայացուցիչը ոչինչ չէ յանձնած, ամէն պատասխանատուութիւն իր վրայ առնելով: Աւագանի⁵⁰ հետ յարաբերութիւնները խրճուած են: Ճիշդ հիմա ստացանք Բարձրաբերդէն Մայիս 1 թուով հետեւեալ նամակը.— «Շամէն ոչ մէկ լուր, կամ ոչնչացուած է կամ յաղթած եւ կամ թշնամին արդէն լեցուած, ինչ որ կը խօսուի երկու օրէ ի վեր: Մուշէն լուր առինք, Կոմսը թիֆուսէ բռնուեր է, ապաքինուելու վրայ է, պիտի ջանան փախցնել Վուամի ճակատագրին չյանձնելու համար: Մուշի վիճակը մինչեւ անցած ամսոյ 23ին, սպասողական: Երեք կախ աղան քաղաքին մէջ. թնդանօթ դէպի հայկական թաղերը. կոտորածի պաշտօնական սպառնալիք Բիթլիսում կուսակալին կողմէ: Շամի մասին լուրերը հակասական են: Բանակը նորէն կազմալուծուած է. Յրդ գորաբանակի մէկ ֆրքան ամբողջութեամբ [եամբ] ոչնչացուած է: Թորթումը ռուսերուն ձեռքն է. նահանջի եւ պաշարուելու պատրաստութիւններ կը տեսնուին: Քրիթիք է հայութեան վիճակը. բանտարկեալներուն մեծ մասը արձակեցին, իսկ այսօր յանկարծ Բալաջանը, Մարալը, Ատրուսին եւ քանի մը ուրիշներ աքսորեցին չգիտենք ուր, կը վախնան եղեր հայկ. խլրտումներէ. լուր կայ որ քաղաքի հայութիւնը պիտի գաղթեցնեն. հայութիւնը կը փճանայ, ռուսը պիտի ունենա՞յ իր փնտուած Հայաստանը առանց հայու. դարձեալ հայը պիտի վերապրի եւ ոչ թէ թուրքը»:

«Թալէաթը նոյն իմաստով խօսած է նաեւ Ամերիկեան դեսպանին, այսինքն, ամէն բան պիտի ընեն, մինչեւ որ 50 տարի հայերուն խելքը գլուխը չգայ. լուրեր տուէք քաղաքականութեան եւ Կովկասի անցուղարձերուն»:

Ընկերներ!

Մօտաւորապէս այս է դրութիւնը երկրի. գաղտնի գրուածքի բանալիի խիստ խուզարկութիւններ տեղի ունեցեր են, նոյնիսկ անցեալ օրուայ Կարինէն եկած նա-

մակին վրայ դեղի հետքեր կան եղեր. բարեբախտաբար պարապ էջի հանդիպած է, բայց մենք կը կարծենք որ ուրիշ տեղ ըլլալու է. գրեցինք Վիշապին անալիզ ընելու համար, որովհետեւ խիստ կարեւոր է իմանալ այս պարագան:

Ձեզի դրամ պիտի ղրկենք, բայց պանքաները չէք չեն տար. մտածեցինք valeur¹⁰⁵ նամակով թուղթ (Ֆրանս-ս[ական]), գուրեցիք[ական], որ ձեզ յանձնեն. ան ալ չեն

ընդունիր, տեսնենք մի քանի քանի օրից մի ճար կը խորհինք:

Գրեցէք աւելի յաճախ ինչու որ ներկայիս աւելի եւս անհրաժեշտ են ձեր թելադրութիւնները:

Բարեւներով
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՊԱԼՔ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 882-18

29.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԻ ՆԱՍԱԿԸ ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ

Կ. Պոլիս, 23 Մայիս 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Մայիս 21 թերթը 10-ով⁹¹ ստացանք ձեր Մայիս 19ը: Ձեք ստացած Մայիս 15ը, որու եւ ինչպէ՛ս էք ղրկած, ճշդեցէք:

1.- Կը խնդրենք վերջ տալ D. D.ին կամ ուրիշին թերթ ղրկելու ձեւին, որովհետեւ D. D. պատահաբար կ'երթայ ձեր մարդուն տունէն կարգ մը թիւեր կը գտնէ: Իսկ թուրքերէն թերթերը շատ անգամ չեն յանձնուիր. այս անգամ ալ գրաքննութեան անցած էր եւ պանտը պատուած էին, ջնջելով Միխայիլովսկիի տեսութեան մէկ մասն ալ: Կը մնայ ձեր ըսած մարդուն թերթ ղրկելու պարագան, եթէ վստահ էք որ ուղղակի իրենց սեփական սուրհանդակով կու գայ եւ ոչ թէ սովորական փոսթով. այն ատեն կրնաք միշտ պուլկ[արական] թերթ ղրկել այնտեղ, բայց ոչ թէ մեծ մարդուն, այլ երկրորդ թարգման Բեթրոֆի հասցէին, յանձնելի Կրեկորէֆի. այլպէս նամակ գրեցէք հետեւեալ երկու հասցէներուն, մանաւանդ առաջինին: N° 1 հասցէն գրել (Ֆըրանսերէն նամակ) Madama Zmaro – Ogunanovitch Pera Tarla-Bashi, Eyri-Sokak N° 7:

N° 2 հասցէ (հայերէն սիրահարական, ընտանեկան, քոյր, հայր): M^{elle} S. Darbinian, Kazandji, Tchechmé, appartement Salih-Zeky Bey – Pera-Taxim:

Շաբաթը երեք չորս նամակէն շատը N° 1 հասցէին կը գրէք. մէկը կամ շատ շատ երկուքը N° 2-ին: Minervahին գրեցէք պատահաբար, բայց հայերէն: Շուտով կը փոխենք ասոնք ալ. դուք ալ թիւեր նշանակեցէք ձեր հասցէներուն համար:

2.- Վահաբի պարագան անգամ մըն ալ կը հաստատուի Բարձրագործէն հասած Ապրիլ 28 թուակիր յապարած նամակով մը, ուր շատ կարճ ու հեւհեւ գրած են

ու կը ծանուցանեն, թէ Վահաբը Տիգրանակերտ փոխադրուած ատեն, իբրեւ թէ հայ խումբ մը կը փորձէ ազատել, ու տանողները անմիջապէս կը խփեն: Նախորդ նամակին (Մայիս 21) թէեւ Շամի հակասական լուրերու շարքին մէջ էր գրուած լուրը, ինչպէս տեսաք – թէեւ չէք կրցեր կարդալ... բայց որոշ կը տեսնուէր որ հաստատ էր, մանաւանդ երբ դիտել կու տային թէ Կոմսի մասին կը խորհին, «Վահաբի ճակարագրէն փրկելու համար»: Ուրիշ փաստ չունինք: Ասկէ աւելին՝ դուք ինքներդ ճշդած ըլլալու էք մինչեւ հիմա, քանի որ Շամը ազատ է¹⁰⁶: Դժբախտաբար մենք կը հաւատանք, քանի որ շաբաթներ առաջ ալ, ապստամբութեան զրոյցներուն հետ մէկտեղ, ժողովուրդին մէջ զրոյց կար թէ Վահաբը կախած են, ինչպէս գրեցինք ձեզ արդէն:

3.- Ջարմանալի է, որ քաղաքներու ամբողջական բառարանը չունինք, մենք յիշողութեամբ ճշդած ենք շատ բան: Բերդը՝ Շ. Գարահիսարն է, Որտոտմը՝ Տիվրիկ, Բանալին՝ Սամսոն, Աւազանը՝ Տրապիզոն: Գրած ենք թէ Սեւ Բլուրի լուրերուն համաձայն, Բանալիի հետ խուզարկութեանց հետեւանքով ամէն կապ կտրուած է, իսկ Աւազանին [հետ] յարաբերութիւն չունին: Մեր հարցումին պատասխաններ են այս. – խնդիրը այն է որ մենք ալ ոչ մէկ լուր ունինք այդ վայրերէն. մինչեւ այսօր Աւազանը չպատասխանեց մեր առաջին նամակին: Սեւ Բլուրէն ալ լուր չկայ երկու շաբաթէ ի վեր: Պիտի փորձենք հեռագրով նոր հասցէ պահանջել: Կը վախնանք որ մինչեւ հիմա թղթակցողները իրենք ալ վտանգը լուր ըլլան:

105.- Ֆրանսերէն՝ արժեքուրդ:
106.- Ակնարկութիւն Վանի ազատագրումին:

4.- Քսուլածը շատ լաւ կը բանայ, ինչպէս փորձած էք եւ դուք շատ անուշադիր եղած էիք նմանապէս շատ խէժով փակցնելով պանտը, կրնայ կարմիր կէտ ցուցնել: Զգուշանալու է: Պարապին վրայ քսած էին եւ չէր յաջողած: Ուրիշ երկիրը լաւ բան մը չկայ: Գիտակին խուզարկութեան պահուն կարգ մը դեղեր տեսեր են գրասեղանին վրայ եւ փորձեր են բայց անօգուտ:

5.- Գիտակն ու Զօհրապը ճամբեցին շատ բրտութեամբ: Գիտակը երբ գացած էր ծանօթ դիմումը ընելու Պետրին «մենք ալ քեզ կը փնտռենք» ըսելով, նետեցին բանտ: Գիշերն ալ Զօհրապը տարին եւ անարգած էին կամուրջին վրայ, դէպի շոգենաւ փոխադրած ատեն: Տիկին Գիտակը հազիւ մէկ երկու վայրկեան կրցաւ խօսիլ այն ալ թուրքերէն, ոստիկաններու աչքին տակ: Խուզարկութեան յետոյ, որ կատարուած էր միայն խեղճուկ սպասուհիի մը ներկայութեանը, երբ Տիկինը եկեր է, թուղթ մը ստորագրել տուեր են: Խեղճը իրարանցումին մէջ համակերպեր է առանց կարդալու... գղջացած էր, բայց ի՛նչ օգուտ: Նոյնը եղած էր Վահագի նշանածին, ամիս մը առաջ – պատուիրեցինք որ մինչեւ վերջը ընդդիմանան նմանօրինակ պարագաներու մէջ: Բայց շուտեր են. ինչպէս կրցանք քիչ շատ ստուգել, միակ թուղթը որ քիչ մը վիճելի կը նկատուէր, Տրդ Ընդհ. ժողովի որոշումները պիտի ըլլայ: Դեռ կ'աշխատինք աւելի լուսաբանուիլ: Երկու տոպրակ թուղթ կնքելով տարած եւ Գիտակին հետ մէկտեղ ղրկած են: Դրամ ալ տուինք Գիտակին առատօրէն: Նոյն օրը ձերբակալուած են 10-15 հոգի: Բայց ընդհ[անուր] բան մը չկայ տակաւին: Բռնած են այնպիսիներ ալ որ կը թրղթակցէին այաջցիներուն հետ:

6.- Ի. ձեր կողմն է եղեր: Հարկաւ կը մտածէք ինչ որ պէտք է հասկցնել:

7.- Դրամը եթէ չէք ղրկած, մինչեւ 500 ոսկի փոխադրեցէք դարձեալ Բեթրոֆի հասցէով. յանձնելի ըսելու պէտք չկայ: Խ.ի հետ ճշդեցէք այս պարագան եւ փութացուցէք:

8.- Բաղէշի քրտերը ապստամբած են եղեր. ինչպէս կ'իմանանք Զաւէնէն, որ պահանջուած 1000 ոսկիին 300 միայն ղրկեր է, բայց նոր հեռագրով մը դարձեալ 1000 պահանջած են. Զգիտենք ինչ աղէտ պատահած է: Արդեօք յարմար չէ՞ իմացնել Սարուստան²², որ խմբերը իբրեւ պատանդ վար դնեն Շամ՝ Դուրանի եւ Բաղէշի երեւելիները, փոխարինելու համար մեր զոհերը, բայց աճապարեցէք¹⁰⁷: Եթէ դահլիճի ազդարարութեան պէս, մէկ ու կէս ամիս յետոյ ընել պիտի տաք, չ'արժէր: Աւելորդ տեղը կրկին ու կրկին պարտադրած էք ժընեւ, երբ արդէն ժամը անցած է...:

9.- Ազատամարտի դրամներուն համար երկու տիկիներ (Գիտակին, Զարդարեանին) պիտի ղրկենք Զաւէնին, փոխանորդաբար ստանալու համար: Տեսնենք ինչ հետեւանք կ'ունենայ: A propos¹⁰⁸, Այաջցիներու մէկ ցուցակին համաձայն, ամսականներ որոշած էին կարգ մը աքսորականներու ընտանիքներուն, համագումար 35 ոսկի ամսական: Մէկ մասին Գիտակը վճարած էր Ապրիլ Մայիս ամսականները. մէկ մասը կը մնայ դեռ, որովհետեւ իրապէս պէտք չունին (Խաժակ, Շահպազ): Մենք խորհրդակցելով որոշեցինք նկատի ունենալ ընկերներուն կամքը, բայց եւ քննել պարագաներն ալ, ինչպէս կ'ընէինք Գիտակին հետ խորհրդակցաբար: Այս պարագաները կ'իմացնենք անոր համար, որ Ազատամարտի պանքայի դրամէն (105 ոսկիէն) 78-80ը արդէն ծախսուած է այդպէս եւ մնացածը չի բաւեր այդ կերպով շարունակելու: Եթէ 450ը չկրցանք ստանալ, հարկ պիտի ըլլայ բուն կազմակերպութեան դրամը գործածել, թէկուզ մեր կարօտներուն: Մնաց որ Ազատամարտի...¹⁰⁹

107.- Այսինքն՝ հայ կամաւորները Տարօնի եւ Բաղէշի բուրք երեւելիները իբրեւ պատանդ պահեն Վանի մէջ, որպէսզի անոնց փոխանակումով կարելի ըլլայ ձեռք բերել հայ աքսորեալներու ազատագրումը:
108.- Ֆրանսերէն՝ ի դէպ:
109.- Բնագրին յաջորդ էջը կամ էջերը կը պակսին:

Փաստ. 2041p-2

30.– Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՉԸ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻՆ

A P P E L

Թարգմանությունը.–

à l'opinion publique du monde civilisé

La Question Arménienne qui a été reconnue officiellement par les Grandes Puissances au Congrès de Berlin par l'article 61, et qui a été consacrée par le sang des 300.000 victimes, et en outre consolidée par le programme des réformes du 11 mai 1895 – est restée encore à l'état de projet, parce que sa solution ne pourrait pas être obtenue sans ébranler les relations réciproques de Grandes Puissances et, par conséquent, sans mettre en danger la paix de l'Europe.

Les puissances qui, dans la paix armée veillaient à l'équilibre des forces en Europe, considérèrent dans leur intérêt qu'elles ne devaient pas porter atteinte à la souveraineté de l'empire ottoman chancelant et pourri. Malgré les multiples preuves que la Turquie donna, durant les siècles, de son incapacité de se régénérer et en se réformant de devenir un état moderne, les Puissances ne cessèrent jamais de soutenir l'empire ottoman pour qui les épreuves terribles du passé ne servaient pas de leçon. Elles ne firent pas un geste décisif pour empêcher l'assassinat de tout un peuple. Si de temps en temps l'une de Grandes Puissances faisait mine de protester contre les atrocités turques commises sur les populations arméniennes, c'était pour mieux consolider sa pénétration économique et son influence politique en Turquie. En ajoutant systématiquement la question des réformes arméniennes, les puissances favorisèrent la propagation de la situation anarchique et devinrent la cause indirecte des massacres arméniens qui soulevèrent d'horreur le monde entier. Non seulement aucune d'elles ne se leva frémissante pour demander compte au Sultan-Rouge de tant de sang innocent versé, et pour arrêter la main du bourreau, mais il se trouva même des puissances qui se firent les instigatrices directes de ces massacres. Car par la disparition du peuple arménien aurait dis-

Հայկական հարցը, որ Պերլինի վեհաժողովի 61րդ յօդուածով Մեծ տէրութեանց կողմէ պաշտօնապէս ճանչցուեցաւ, եւ որ նուիրագործուեցաւ 300.000 զոհերու արեամբ, այլապէս նաեւ ամրագրուեցաւ 1895 թ. Մայիս 11-ի Բարեկարգումներու ծրագրով,– կը մնայ տակաւին նախագծի սահմանին մէջ, որովհետեւ անոր լուծումը կարելի չէր ձեռք բերել առանց խախտելու Մեծ տէրութեանց փոխադարձ յարաբերութիւնները եւ, հետեւաբար, առանց վտանգելու Եւրոպայի խաղաղութիւնը:

Տէրութիւնները, որոնք զինեալ խաղաղութեան միջոցով կը վերահսկէին Եւրոպայի մէջ ուժերու հաւասարակշռութեան պահպանումը, իրենց շահերէն մեկնելով կը համարէին որ պէտք չէր վտանգի ենթարկել գերիշխանութիւնը՝ խախտու եւ փտած Օսմանեան կայսրութեան: Հակառակ բազում ապացոյցներու որ Թուրքիան դարերու ընթացքին անկարող եղած է ինքզինք վերանորոգելու եւ բարեկարգուելով՝ արդիական պետութիւն մը դառնալու, Տէրութիւնները չդադրեցան բնաւ թիկունք կանգնել Օսմանեան Թուրքիոյ, որուն համար դաս չէին եղած անցեալի ահաւոր աղէտները: Անոնք վճռական քայլ մը չառին արգիլելու համար ամբողջ ժողովուրդի մը սպանողը: Եթէ Մեծ տէրութիւններէն մէկը երբեմն բողոքելու երեսոյթ ցոյց կու տար հայերու վրայ ի գործ դրուած զազանութեանց առթիւ, այդ կ'ըլլար՝ Թուրքիոյ մէջ իր տնտեսական թափանցումն ու քաղաքական ազդեցութիւնը աւելի եւս ամրապնդելու նպատակով: Հայկական բարենորոգումներու խնդիրը շարունակաբար յետաձգելով, տէրութիւնները նպաստեցին անիշխանութեան տարածումին եւ, անուղակիօրէն, պատճառ հանդիսացան՝ ամբողջ աշխարհի գայրոյթը առաջացնող հայկական ջարդերուն: Այդքան անմեղներու թափուած արեան համար, անոնցմէ ոեւէ մէկը ոչ միայն չվրդովեցաւ ու հաշիւ պահանջեց Կարմիր Սուլթանէն, չկասեցուց դահիճին թաթը,– այլ նոյնիսկ գտնուեցան պետութիւններ, որոնք ուղղակի սադրիչները հանդիսացան այդ կոտորածներուն: Քանզի, հայ ժողովուրդի անհետացումով, պիտի չքանար միեւնոյն ժամանակ միակ խոչընդոտը,

parue en même temps l'unique entrave qui, demain en Arménie, pourrait se dresser contre elle et se constituer l'un des héritiers naturels de la Turquie agonisante.

Après la chute du régime hamidien et la victoire du comité "Union et Progrès" tous les efforts faits pour créer un état de sécurité et de réforme, n'aboutirent pas. Les jeunes-Turcs se révélèrent des principes du régime hamidien. En dignes successeurs de l'ancien régime, ils se montrèrent aussi incapables que lui dans l'introduction de réformes. Les massacres arméniens de Cilicie en 1909 et les 30.000 victimes, sont l'œuvre personnelle (nous en avons des preuves incontestables) de ce comité qui pratiquait ainsi son programme de panislamisme.

Le pillage, l'assassinat, le viol, l'expropriation agricole, la pression exercé contre tous les peuples chrétiens qui les met en quelque sorte hors la loi, bref tout ce qui caractérisait la méthode abominable du régime hamidien, devint la règle suprême de la nouvelle Turquie, cachée sous le couvert constitutionnel.

Malgré toutes ces preuves incontestables et frappantes, les puissances continuèrent à traiter avec bienveillance la Turquie, en l'aidant même matériellement et moralement. C'est ainsi qu'elles contribuèrent au relèvement et au renforcement de ses armées et de sa flotte, sans se soucier qu'on créait ainsi un puissant allié pour l'Allemagne. Tandis que ce n'était un secret pour personne que les germanophiles gagnaient de plus en plus du terrain au sein du gouvernement jeune-turc et du parti "Union et Progrès".

A cause de cette politique orientale de Grandes Puissances, la plus civilisée, la plus vigoureuse, la plus apte et la plus productive des nations en Turquie d'Asie, la nation arménienne, fut totalement abandonnée à son sort. Elle se débattit toute seule entre les mains de ses bourreaux.

Nous ne nous posons pas ici comme accusateurs en face de l'Europe; le moment serait très mal choisi. En véritables témoins nous ne faisons qu'enregistrer les faits du passé. Ce n'est pas la haine qui nous guide dans cet exposé sommaire, mais le sentiment de justice et de vérité.

Et aujourd'hui, au lieu d'une nation arménienne forte par les efforts combinés des Puissances, c'est une nation faible, amoindrie, fractionnée, terrassée qui, par ses propres moyens, se jette sur les champs

ou plutôt y renonce, et demain, elle sera l'un des héritiers naturels de la Turquie agonisante.

Համիտեան վարչակարգի անկումէն եւ «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կոմիտէի յաղթանակէն ետք, յաջողութիւն չունեցան ապահով ու բարեկարգ պետութիւն մը ստեղծելու ուղղութեամբ թափուած բոլոր ճիգերը: Երիտ-թուրքերը եկան իբրեւ հետետորդներ համիտեան վարչակարգի [կիրարկած] սկզբունքներուն: Որպէս արժանատի յաջողները հին վարչակարգին, անոր չափ ալ անկարող եղան բարեկարգումներ ներմուծելու: 1909 թ. Կիլիկիոյ հայերուն կոտորածները եւ 30.000 զոհերը՝ առանձնապատու կործնեցին այս կոմիտէին (այս մասին ունինք անվիճելի փաստեր), որ այս ձեւով ի գործ կը դնէր իր համիսլամական ծրագիրը:

Կողոպուտը, ոճիրը, բռնաբարումը, հողային բռնագրաւումը, քրիստոնէայ ժողովուրդներուն վրայ ի գործ դրուած ճնշումները՝ որ ձեւով մը զանոնք օրէնքէ դուրս կը հռչակէր, կարճ՝ համիտեան զգուելի վարչակարգը յիշեցնող ամէն ինչ, դարձաւ գերագոյն օրէնք՝ Սահմանադրական ծածկոյթի տաք թաքնուած նոր թուրքիոյ համար:

Հակառակ այս բոլոր անվիճելի ու բացայայտ փաստերուն, Տէրութիւնները շարունակեցին բարեացակամութեամբ վարուիլ թուրքիոյ հետ, մինչեւ իսկ նիւթապէս եւ բարոյապէս սատարելով ու օգնելով անոր: Այսպէս է որ անոնք օժանդակեցին անոր բանակին ու նաւատորմին զօրացման, առանց մտահոգուելու որ այդպիսով հզօր դաշնակից մը կը պատրաստեն Գերմանիոյ համար: Մինչդէռ, ոչ ոքի համար գաղտնիք էր որ, երիտ-թուրքերու կառավարութենէն եւ «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութենէն ներս, գերմանասէրները ատելի ու ատելի գետին կը շահէին:

Մեծ տէրութեանց վարած այս արեւելեան քաղաքականութեան պատճառաւ, ասիական թուրքիոյ ամէնէն քաղաքակիրթ, ամէնէն զօրեղ, ամէնէն կարող ու ամէնէն արդիւնաբեր ազգերէն մէկը՝ հայոց ազգը, ամբողջովին լքուեցաւ իր բախտին: Ան տուայտեցաւ իր դահիճներու ձեռքին մէջ:

Որպէս ամբաստանող չենք կանգնիր հոս Եւրոպայի դէմ. առիթը պատեհ չէ ատոր համար: Որպէս իսկական վկաներ՝ միայն անցեալի իրողութիւնները կ'արձանագրենք: Ատելութեամբ չէ որ կ'առաջնորդուինք այս ամփոփ զեկուցագրին մէջ, այլ արդարութեան եւ ճշմարտութեան զգացումով:

Եւ այսօր, փոխանակ Տէրութիւններու հետ միատեղ ջանքերով զօրացած հայ ազգի մը, փոքրացած, կոտորակուած, զգետնուած տկար ազգ մըն է, որ իր սեփական միջոցներով կը նետուի ռազմի դաշտ, նկատելի ծառայութիւններ կը մատուցանէ, արեան զոհաբերութեան ճամբով իր բաժինը բերելով այսպէս

de bataille, rend des services signalés aux puissances de la Triple Entente, en apportant ainsi sa part de sacrifice en sang à la guerre libératrice menée par les Alliés.

Malgré toutes les faveurs que lui témoignèrent les puissances de la Triple Entente, la Turquie en prenant les armes pour le compte de l'Allemagne, mit en danger imminent l'intégrité de son territoire et souleva la question du partage de l'empire ottoman.

La grande guerre que le militarisme allemand créa, a réservé aux Alliés victorieux la tâche glorieuse de remanier la vieille et artificielle carte du monde sur la base du principe des nationalités.

Par son aventure, l'empire ottoman signa son suicide et dorénavant sa disparition comme puissance indépendante n'est qu'une question de temps. L'Arménie, sur laquelle pesa jusqu'ici le joug barbare des Turcs avec l'assentiment de l'Europe, est devenue actuellement le théâtre de la guerre russo-turque, partageant le sort de la Pologne et surtout de l'héroïque Belgique. Mais tandis que le monde entier eut l'occasion de comprendre et d'apprécier le rôle de la Belgique martyre, l'Arménie ensanglantée demeure encore ignorée et abandonnée.

Le vieux persécuteur des chrétiens se sentant tout à fait libre et irresponsable, a recommencé les grands massacres de 1894-96. Nos informations particulières dignes de foi ne laissent par l'ombre de doute à cet égard.

La déclaration officielle des puissances alliées du 24 mai, qui rendait personnellement responsable la Sublime Porte et ses représentants, de tous les massacres de l'Arménie, confirme officiellement la situation critique dont nous parlons. Mais, nous autres, Arméniens, tout en remerciant les Alliés de leur beau geste, nous croyons que cette déclaration n'exercera pas l'influence voulue sur le gouvernement sauvage et assassin qui, déjà en temps ordinaire, dédaignait l'opinion publique du monde civilisé et les menaces que tantôt l'une, tantôt l'autre des puissances lui faisait. Une telle déclaration faite en 1894 aurait pu empêcher sûrement le massacre de 300.000 Arméniens.

En vérité, les massacres monstrueux qui dévastent aujourd'hui l'Arménie ne prendront pas fin. La nation arménienne qui, dès les temps préhistoriques à nos jours, a su conserver son existence et son individualité nationale, est donc exposée au danger.

Le parti Arménien S.-D.-Hentchakiste, prenant en

Գաշնակիցներու մղած ազատագրական պատերազմին:

Հակառակ Երրեակ համաձայնութեան տէրութիւններու կողմէ ընծայուած բոլոր բարիքներուն, Թուրքիան, Գերմանիոյ կողքին զէնք վերցնելով, վերահաս վտանգի ենթարկեց իր հողային ամբողջականութիւնը, եւ վերստին բարձրացուց Օսմանեան կայսրութեան բաժանման հարցը:

Գերմանական ռազմատենչութեան ստեղծած մեծ պատերազմը, յաղթական Գաշնակիցներուն կ'ընծայէ հոյակապ առիթ, այն է՝ ազգութիւններու [ինքնորոշման] հիման վրայ վերադասաւորման ենթարկել աշխարհի հին ու արուեստական քարտէսը:

Օսմանեան կայսրութիւնը, իր արկածախնդրութեամբ, ստորագրեց իր անձնասպանութիւնը եւ, հետեւաբար, անոր անհետացումը որպէս անկախ տէրութիւն՝ միայն ժամանակի հարց է: Հայաստանը, որուն վրայ, Երոսպայի հաճութեամբ, ծանրացած էր ցարդ թուրքերու բարբարոսական լուծը, դարձած է այժմ թատերաբեմ ռուս-թրքական պատերազմին, բախտակից դառնալով Լեհաստանի եւ, մանաւանդ հերոսական Պելճիքայի: Սակայն, մինչ ամբողջ աշխարհ առիթ ունեցաւ իմանալու եւ գնահատելու նահատակ Պելճիքայի դերակատարութիւնը, արիւնլուայ Հայաստանը կը մնայ անձանօթ ու լքեալ վիճակի մէջ:

Քրիստոնեաներու վաղեմի հարստահարիչը, ինքզինք բոլորովին ազատ ու անպատասխանատու համարելով, վերսկսաւ 1894-1896ի մեծ ջարդերուն: Մեր ունեցած հաւաստի տեղեկութիւնները ոչ մէկ կասկած կը թողուն այդ մասին:

Գաշնակից պետութիւններու 24 Մայիսի պաշտօնական յայտարարութիւնը որ Բարձրագոյն Դուռն ու ներկայացուցիչները անձնապէս պատասխանատու կը համարէր Հայաստանի բոլոր ջարդերուն համար, կը հաստատէ տագնապալի այն վիճակը որուն մասին կը խօսինք: Բայց մենք, հայերս, շնորհակալ ըլլալով հանդերձ դաշնակիցներուն՝ իրենց վեհանձն վերաբերմունքին համար, կը կարծենք այս յայտարարութիւնը հարկ եղած ազդեցութիւնը պիտի չգործէ վայրենի ու ոճրագործ կառավարութեան վրայ, որ արդէն սովորական ժամանակներուն կ'արհամարհէր քաղաքակիրթ մարդկութեան հանրային կարծիքը եւ այս կամ այն պետութեան կողմէ երբեմն կատարուած սպառնալիքները: Նման յայտարարութիւն եթէ 1894ին կատարուէր, կրնար վստահաբար արգիլել 300.000 հայերու կոտորածը:

Իրականութեան մէջ, այն ահաւոր կոտորածները, որ այսօր կ'աւերեն Հայաստանը, վերջ պիտի չգտնեն: Հայ ազգը, որ նախնադարեան ժամանակներէն մինչեւ այսօր, կարողացած է պահպանել իր գոյութիւնը, ու ազգային ինքնուրոյնութիւնը վտանգի տակ կը

considération ce cas, au nom de l'Humanité et de la Justice, fait appel à l'opinion publique du monde civilisé et aux Etats neutres, pour arrêter d'un commun effort les mains qui assassinent une nation historique.

Nous espérons que la presse des deux continents voudra bien donner écho à notre appel. Elle a déjà fait preuve de justice, en témoignant sa sympathie à l'Arménie et en la soutenant chaque fois que l'occasion s'est présentée. Nous en sommes infiniment reconnaissants. Cette fois encore, elle fera entendre sa voix, à tous les peuples, au nom des principes éternels pour lesquels des milliers et des milliers de jeunes gens se sacrifient sur les champs d'honneur.

Dans cette gigantesque lutte des nations, nombreux sont les petits Etats organisés qui, après dix mois de guerre, n'ont pas encore compris le crime commis contre la civilisation, la justice et la paix du monde. Ne se souvenant pas de leur histoire passée, ils n'ont pas encore déterminé le sens de leur sympathie. La nation arménienne, par contre, dès le premier jour de la guerre eut la hardiesse de faire cause commune avec les Alliés. C'était un spectacle épique et digne de tous éloges que de voir une nation martyrisée depuis six siècles, oublier ses rancunes contre l'Europe et s'apprêter à se sacrifier les armes à la main, pour la cause de la civilisation.

En ce moment 80.000 soldats arméniens combattent sous le drapeau russe contre les armées austro-allemandes, et 40.000 contre la Turquie. Ce n'est pas tout. Plus [de] 10.000 volontaires arméniens venus de toute part, versent leur sang sur le front russo-turco-persan pour la victoire des armes alliées. C'est là-bas qui se trouvent les combattants expérimentés de la révolution arménienne qui, très au courant de la psychologie du soldat turc, de sa manière de combattre et connaissant les points stratégiques du pays, rendirent et rendent encore de remarquables services aux troupes d'avant-garde de l'armée russe.

La sympathie pratique et spontanée de l'Arménie Conjurée en faveur des Alliés, sera sans nul doute appréciée et récompensée par eux au lendemain de la victoire certaine, en donnant une solution à la Question Arménienne, *solution qui doit être nécessairement conforme aux vœux de la nation arménienne elle-même.*

La Question Arménienne est l'un des principaux facteurs de la question d'Orient. Sa solution est la condition *sine qua non* du rétablissement d'une paix

qu'annoncé au monde:

Նկատի ունենալով այս պարագան, հայկական Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը, յանուն Մարդկութեան եւ Արդարութեան, կոչ կ'ուղղէ քաղաքակիրթ աշխարհի հանրային կարծիքին եւ չեզոք պետութիւններուն, որ հասարակաց ճիգով մը կասեցնեն պատմական ազգ մը սպաննող ձեռքերը:

Կը յուսանք որ գոյգ ցամաքամասերու մամուլը պիտի արձագանգէ մեր կոչին: Արդարեւ, ան ապացոյցը տուաւ ատոր իր համակրանքը յայտնելով Հայաստանին եւ քիկունք կանգնելով անոր ամէն անգամ որ առիթը կը ներկայանար: Ատոր համար անհունօրէն երախտապարտ ենք: Այս անգամ եւս ան իր ձայնը լսելի պիտի դարձնէ բոլոր ժողովուրդներուն, յանուն այն յաւերժական սկզբունքներուն, որոնց համար հազարաւոր եւ հազարաւոր երիտասարդներ իրենց կեանքը կը գոհաբերեն պատուոյ ռազմադաշտերուն վրայ:

Ազգերու այս հսկայական մարտնչումին մէջ, մեծ քիւ կը կազմեն այն փոքր ու կազմակերպուած պետութիւնները, որոնք, տասը ամիսներու պատերազմէն ետք, տակաւին ծանօթ չեն արդարութեան եւ աշխարհի խաղաղութեան դէմ գործուած ոճիրին: Չմտաբերելով իրենց անցեալի պատմութիւնը, անոնք չեն ճշդած դեռ իրենց համակրանքին ուղղութիւնը: Հայ ազգը, ընդհակառակն, պատերազմի առաջին օրերէն յանդգնութիւնն ունեցաւ միաբանելու Դաշնակիցներուն հետ: Ամէն դրուատիւնքի արժանի ու դիւցազնական երեւոյթ էր տեսնել՝ որ դարերով նահատակուած ազգ մը, մոռացութեան տուած Եւրոպայի հանդէպ իր ունեցած դառնութիւնները, զէն ի ձեռին կը նահատակուի ի խնդիր քաղաքակրթութեան դատին:

Այս պահուն, 80.000 հայեր ռուսական դրօշին ներքեւ կը կռուին աստրօ-գերմանացիներուն դէմ, եւ 40.000՝ Թուրքիոյ դէմ: Ասով չի վերջանար: Ամէն տեղէ եկած 10.000 կամաւորներ իրենց արիւնը կը թափեն ռուս-թրքական ռազմաճակատին վրայ՝ վասն դաշնակիցներու յաղթանակին: Հոս է որ կը գտնուին հայկական յեղափոխութեան փորձառու մարտիկները, որոնք, քաջածանօթ՝ թուրք զինուորի հոգեբանութեան, անոր կռուելու եղանակին, ինչպէս նաեւ երկրի ռազմագիտական կէտերուն, մատուցանած են ու դեռ կը մատուցանեն աչքառու ծառայութիւններ ռուսական բանակի յառաջապահ զօրքերուն:

Միաբանեալ Հայաստանի կողմէ Դաշնակիցներուն նկատմամբ ունեցած այս գործօն ու ինքնաբոլիս համակրանքը՝ անկասկած պիտի գնահատուի եւ վարձատրուի անոնց կողմէ վաղուան ստոյգ յաղթանակէն ետք, – հայկական հարցի լուծումով, *լուծում՝ որ անհրաժեշտօրէն պէտք է համապատասխան ըլլայ նոյնիմանքն հայ ազգի բաղձանքներուն:*

Հայկական հարցը բաղկացուցիչ գլխաւոր ազդակ-

durable. L'Europe a déjà fait dans ce sens de belles promesses et pris des engagements solennels. Pendant la guerre balkanique le Parti Arménien S.-D.-Hentchakiste par le moyen de ses appels et de ses œuvres rappela la nécessité et l'opportunité de sa solution. Mais l'opposition d'une partie des puissances et l'indifférence de l'autre en empêchèrent la réalisation.

Au Congrès de la Paix de demain, l'Arménie blessée, mais le front haut, viendra réclamer ses droits historiques. Nous sommes sûrs que les Alliés victorieux prenant en considération la nécessité de résoudre la question arménienne dans le sens indiqué par nous, désireront régler définitivement cette malheureuse question afin d'épargner aux générations futures de nouvelles complications.

Le parti Arménien S.-D.-Hentchakiste qui fut le premier parti révolutionnaire en Arménie, qui organisa et dirigea les mouvements insurrectionnels de Sassoun, de Zeïtoun, de Constantinople et d'autres localités, se croit être l'interprète fidèle des vœux unanimes de la nation arménienne, en demandant l'Autonomie de l'Arménie sous la protection des Puissances alliées.

C'est là une mesure juste, humaine et conforme au principe des nationalités, pour lequel se livre la guerre actuelle.

COMITE CENTRAL DU PARTI ARMENIEN
S.-D.-HENTCHAKISTE

7 juin 1915
Paris

ներէն մէկն է Արեւելեան հարցին: Անոր լուծումը անհրաժեշտ պայման է տեւական խաղաղութեան հաստատման: Այս ուղղութեամբ, Եւրոպան արդէն հանդիսաւոր խոստումներ կատարած է եւ յանձնառութիւններ վերցուցած: Պաշտանեան պատերազմի ժամանակ, Ս. Գ. Հնչակեան կուսակցութիւնը, իր կոչերով ու գործնական քայլերով, յիշեցուցած է անոր լուծման անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ ներկայացող պատեհ առիթը: Սակայն, տէրութիւններու մէկ մասին ընդդիմութիւնը եւ միւս մասին անտարբերութիւնը՝ արգելք հանդիսացան անոր իրագործումին:

Գալիք Խաղաղութեան վեհաժողովին, Հայաստանը, վիրաւոր բայց բարձրաճակատ, պիտի գայ պահանջելու իր պատմական իրաւունքները: Մենք վստահ ենք, որ յաղթական դաշնակիցները, հաշուի առնելով Հայկական հարցի լուծման անհրաժեշտութիւնը՝ մեր կողմէ նշուած իմաստով, պիտի ուզեն վերջնական կերպով վճռահատել այս ցաւալի խնդիրը, որպէսզի գալիք սերունդներուն խնայեն նորանոր բարոյութիւնները:

Ս. Գ. Հնչակեան կուսակցութիւնը, որ եղաւ Հայաստանի առաջին յեղափոխական կուսակցութիւնը, որ կազմակերպեց ու ղեկավարեց Սասնոյ, Ջէյթունի, Կոստանդնուպոլսոյ եւ այլ վայրերու ապստամբական շարժումները, կը համարէ ինքզինք հաւատարիմ թարգմանը հայ ազգին միահամուռ բաղձանքներուն, պահանջելով Հայաստանի ինքնավարութիւնը՝ դաշնակից տէրութիւններու հոգատարութեան ներքեւ:

Այս է արդար, մարդկային եւ ազգութիւններու [ինքնորոշման] սկզբունքներուն համապատասխան միջոցը, որուն համար կը մղուի այժմու պատերազմը:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ ՀԱՅԿԱԿԱՆ
Ս. Գ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

7 Յունիս 1915
Փարիզ

Փաստ. 882-17

31.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 26 Մայիս 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր երէկուան թղթակցութիւնը, Տիկնոջ հասցէով:— Ձեզմէ նամակ չունինք:

Կացութիւնը շատ մութ է: Ստորեւ կը նշանակենք կարգ մը նոր փաստեր:—

Շատ վստահելի աղբիւրէ իմացանք որ աւելի քան 300 հոգինոց նոր ցանկ մը կը պատրաստուի մեծ աճապարանքով, աքսորելու համար: Ոչ մէկ տարակոյս որ Խաչի⁹⁵ բնակարանին ճշգրտմը կապ ունի այս նոր պատրաստութեան հետ. նախորդներն ալ այսպէս սկսան:

Գիսակէն եւ Զօհրապէն լուր չկայ մինչեւ այսօր Երզօրը: Կ'իմանանք թէ Խարբերդ — ոմանք կ'ըսեն Տիգրանակերտ — զրկած են:

2.- Այաջցիներուն վիճակը երեւի ծանրացած է: Երէկ նամակներ եկան շատերէն Մայիս 19-20 թուակիր: Ընկեր թէ չէ գոք, ամէնը միաբերան կը բացատրեն որ իրենց վիճակը անտանելի է, եւ կը խնդրեն ժամ առաջ միջոցներ խորհիլ ազատելու:

Ընկեր Ասլանը¹¹⁰ իր օրուան կեանքը պատմած է, որմէ կը հասկցուի որ բանտէն դուրս չեն կրնար ելլել: Կը խնդրէ որ բարեկամները աշխատին ազատելու: Բաբա-Գասպարը¹¹¹ ծանր հիւանդ է արդէն, եւ կը գրէ որ վիճակը անտանելի է: Տող մը ամբողջ աւրած է գրաքննիչը: Շահրիկը չորս օր առաջ հեռագրած էր իր տանտիրոջ որ դրամ չդրկեն եւ սպասեն իր ապահովագրած նամակին: Բժիշկը դարձեալ 4 օր առաջ հեռագրած է Գիսակին, որ Զարգարեանի (Ասլան) հասցէին դրամ չդրկուի: Վերջապէս երէկ լսեցինք թէ 3 այաջցիներ Կեսարիա զրկուած են: Ապահովաբար մէկը Մարգպետն¹⁰¹ է, որ իբրեւ թէ Պոլիս զրկուած էր: Թերեւս մէկն ալ Գալֆան³⁰ է: Ոչ ընկեր մըն ալ գրած է որ այստեղ այսինչ նշանաւոր բժիշկը գտնեն եւ անմիջապէս դեղագիր մը զրկեն: «Քանի անձրեւները շատնան մեր վիճակն ալ կը ծանրանայ»: Եթէ դեղ չհասցնէք ալ նամակ չեմ կրնար գրել եւն.: (Անգամ մըն ալ կը խնդրենք կոմիտէին գրուած նամակներ նոյնութեամբ չտալ թերթին, մանաւանդ այս կէտերը պահեցէք առաջժամ, փորձանք մը չբերելու տարագիրներուն կամ ընտանիքներուն):

Ինչպէս կ'երեւայ հիմնաւոր է մեր կասկածը կամ

այն է որ հարցաքննութիւնները սկսած են խստօրէն: Կամ աւելի հաւանականը, արդէն կը ցրուեն աքսորականները դէպի աւելի ներսերը, պատերազմական ատեաններով դատելու համար: Ամէն պարագայի մէջ ոչ մէկ յուսատու նշան կայ եւ ձեր բարեկամն անգամ յոռետես է:

Երէկ 3 տիկիները զրկեցինք Զաւէնին¹⁰³ նախ՝ իրենց վիճակին դառնութիւնը պարզելու ըսելով որ 30-40-100 կիներ պատրաստ են պատրիարքին հետ Դուռ երթալու եւ գէթ թեթեւացում խնդրելու կամ նոյնիսկ չէզոքներու դիմելու: Վեղարաւորը պատմեր է որ իր կարելին ըրած է եւ ոչ մէկ ճար ունի: 15 օրէ ի վեր ժամադրութիւն կը խնդրէ գէթ ունեցիներուն տէրտէր մը, միւռոն են. զրկելու համար, եւ միշտ կը ձգձգեն: Ոչ իսկ կարեւորութիւն կու տան, ըսեր է: Ազատամարտի դրամին համար խոստացեր է նախարարին երթալ քանի որ մեր տղաքը իր անունով ալ փոխանորդագիր զրկած են: Յոյս չունինք որ բարի լուր մը առնէ: Զաւէնը անճար է նաեւ Երկրի լուրերու մասին եւ մեզի ապաւինած է, իսկ մենք նոր բան մը չունինք այսօր ալ: Երկու օր առաջ մասնաւոր աշխատանքով Պոլիս դարձան Տոքթ. Թոփչեան եւ Հայկ Խոճասարեան, մէկը Զանդրոբէն եւ միւսը Այաջէն: Ասով 12 կ'ըլլայ վերագարձողներուն թիւը. իբրեւ թէ գերմանականն է աշխատեր, քանի որ մանաւանդ առաջինը սերտ կապ ունի եւ Օսմ. Լոյտի խմբագիր էր:

Երէկ ով գիտէ որո՞ւ մատնութեամբ յանկարծ կոխեցին Ներսէս Փափագեանի բնակարանը, որ չէր խուզարկուած ցարդ, եւ երեք ժամ անընդհատ պրպտեցին: Գործիքներով, հող, պատ քննեցին ռուսք գտնելու համար. թուղթերուն ձեռք չեն գարկած, թէեւ բան մը չկար: Կա'մ մատնած են եւ կամ Կոմսի մասին բան մը կայ: Այսօր ձեր մարդուն յանձնեցինք 11 էջնոց յիշատակագիր մը. օրինակն ալ ամերիկեանին տալու համար կցելով Յառաջաբանով մը համառօտիւ պարզած ենք մեր եօթնամեայ քաղաքականութեան հիմնական կէտերը եւ 2.- Զօրաշարժի առթիւ եղած բռնութիւնները. 3.- Շամէն եւ Դուրանէն հեռագրուած Յիշատակագիրները եւ մեր մէկ ամսուան ստացուած նամակներուն ամփոփումը, որ ձեզի ծանօթ է արդէն: Երկուքին տակ ալ ստորագրեցինք Com[ité] D[aschnakzoutioun] Section des Balkans, Sofia, թուական 23/5, ինչպէս խորհուրդ տրուած էր մեզի: Բան մը չենք սպասեր, բայց խղճի պարտք մըն է որ կատարեցինք, մանաւանդ որ լաւ ընդունելութիւն կ'ընեն, առանց սակայն խաբուսիկ յոյ-

110.- Ասլան — ծածկանուն Զարդարեան Ռուբէնի:
111.- Բաբա Գասպարը՝ Գարեգին Խաթակն է (Չագալեան):

սեր ներշնչելու: Պարբերաբար պիտի տանք ուրիշ փաստեր ալ թէեւ մեր աղբիւրները ցամքեցան – եթէ սաղ մնանք... Անշուշտ դուք եռանդով կը շարունակէք ձեր դիմումները, բողոք, ճնշում, ազդարարութիւն, նոյնիսկ սպառնալիք,– ինչ որ պէտք է: Զէ որ ամէն միջոց պէտք է փորձենք այս խելագարները սթափեցնելու համար, որոնք քառասմբակ կ'արշաւեն առանց ետ առաջ նայելու:

Դրամի մասին բան մը չըրիք տակաւին: Ղրկեցէք կամ Թ. Ս.ին կամ Փեթրոֆին: Մեր քով կայ հարիւր ոսկիի գումար մը: Հաշիւները կ'ուղարկենք քանի մը օրէն երբ ճշդենք Գիսակի հաշիւները: Հրաչը Գիսակին գրած է 15 ոսկի ղրկել Ռուսճուք իր ընտանիքին: Դուք կարգադրեցէք: Եթէ 450ը չառնուի, ո՞վ պիտի հոգայ այս ընտանիքները: Երկիր ղրկելու միջոց չունինք թէեւ, բայց ի նախատեսութիւն կարեւոր գումար մը գտնուելու է մեր ձեռքը, եթէ դուք առարկութիւն մը կամ նոյնիսկ վստահութեան խնդիր մը չունիք: Պարզ գրեցէք ամէն բան, որովհետեւ ժամերը թանկագին են եւ թե-

րեւս մենք ալ չազատինք:

5.- Պուլկարերէն թերթ ղրկելու միջոցը անգործնական է, ինչպէս համոզեց բ. թարգմանը: Երբեք չեն կըրնար ընդունիլ յանձնելի կրիկորիեֆի եւայլն ձեռով չեն կըրնար ստանալ կամ յանձնել: Որով կը մնայ միայն նամակը: Դրամի մասին անգամ մըն ալ պիտի տեսնուինք, աւելի ապահով ըլլալու համար: Եթէ Ի.ն ալ կ'ապահովէ, այդ canalով¹¹² ղրկեցէք, եթէ ոչ 2-300 մը Թ. Ս.ին առանց յանձնելի եւն. ըսելու. մենք կըրնանք ստանալ տիկին Գիսակով:

6.- Mémoire¹¹³ կնքել կ'ուզենք բայց չգտանք կնիքը, որ պահուած կը մնայ ընկերոջ մը մօտ:

7.- Վերջին պահուն իմացանք որ Ն. Փափագեանի տունէն տոպրակ մը թուղթ տարած են, որ կը պատկանէր եթէ չենք սխալիր Կոմսին:

Ինչո՞ւ յանկարծ լուցիք, գոնէ Տոքթ. Նիքոլայեֆին հետ բան մը կըրնայիք ղրկել:

Ընկ. բարեւներով
Առժամեայի կողմէ
ԱՐՇԱԻԻՐ

112.- Ֆրանսերէն՝ ճամբով, միջոցով:

113.- Ֆրանսերէն՝ Յիշատակագիրը:

Փաստ. 882-19

32.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԻ ԿԵՂԻ. ԿՈՍՏԻՏԷՒՆ

Կ. Պոլիս, 29 Մայիս 1915

Կը հաստատենք մեր երէկուանը Ե. Տ.ով: Տխուր լուրերն է որ պիտի տանք այսօր ալ. կէսօր է ու կ'աճապարենք գրել առանց սպասելու մէկ-երկու նամակներու որոնց հասած ըլլալը իմացանք:

1.- Այսօր խաժակէն նամակ եկաւ, թուրքերէն եւ հայերէն խառն, էնկիւրիի կայարանէն. կ'իմացնէ որ ինք, Ակնուներն, Ջարդարը եւ Ս. Մինասեանը կ'երթան էնկիւրի պատերազմական ատեանի առաջ դատուելու. միւսներէն լուր չունինք դեռ, երբ իմանանք իրիկունը նորէն կը գրենք:

2.- Փաստ է արդէն.— Հայաստանը առանց հայու... Երգնկացիները քշեր են խարբերդ: Արդէն հասեր են Ակն, ուրկէ հեռագրով դրամ կը պահանջեն, Կարինն ալ սկսեր են պարպել: Մարաշ, Այնթապ, Հաճըն, բոլոր հայկ. շրջանները պարպուած են: Կայանէ կայան կը փոխադրեն դէպի Միջագետքի խորերը, թէեւ կը խաբեն բուն տեղի մասին: Այս լուրերը կու տայ Չաւէնի գերմանացի բարեկամը, որ կ'աւելցնէ թէ ամէն ջանք թափեցին գոնէ ծերերուն եւ տղոց խնայելու, բայց անօգուտ:

3.- Կիլիկիոյ ամէն կողմը սարսափելի խուզարկութիւններ եղած են. Վահագնը¹¹⁴ բանտարկուած է: Կաթողիկոսին ընդարձակ մէկ տեղեկագիրը հասաւ, որ կը պատմէ սարսափները: Խուզարկեր են առաջնորդին սենեակը, ննջարանը, եկեղեցի, գերեզմանատուն, ամէն բան ու ամէն տեղ: Կաթողիկոսարանն ալ կոխեր են: Մինչեւ մօտեցեր են կաթողիկոսի ննջարանին, այն ատեն կաթողիկոսը յայտներ է որ կը հրաժարի եւ իր բանալիները կը յանձնէ կուսակալին ու կը մեկնի: Ասոր վրայ ննջարանէն վազ անցեր են: Տեղեկագիրը առնելով կ'արտագրենք ու կ'ուղարկենք այս ձեւով: Օրը օրին :

4.- Բոլոր հայ պաշտօնեաները խուժը խուժը կը ճամբեն: Բարձրատիճան պաշտօնեայ մը յուսահատօրէն կը յայտնէր որ մեծ բան է եթէ մեր կաշին ազատենք:

Թալէաթը հայ պաշտօնեայի մը ըսեր է եթէ մատնութիւն կ'ընես, քեզի պաշտօն կու տանք: Խօսք կայ որ Պոլսոյ հայութիւնն ալ պիտի քշեն: Կը ստուգենք:

5.- Այսօրուան տօնին առթիւ (Պոլսոյ առում) կոտորելու, թափելու սպառնալիքներ կային. բայց առտուան ամբողջ ոստիկանութեան լուր տուած են որ այս փափուկ ընկերներուն մէջ կարգը պահեն. Աղմկալի պատգամաւորութիւններ, թափօրներ եւն. կը կազմուին: Այսօր շատ ու շատ էին վախցող եւ տուներ մնացողները: Այսօր երեւի նամակ ունիք. Օրիորդին պիտի երթանք: Սեւ Բլուրէն ալ կը սպասենք մինչեւ իրիկուն: Վաղը կամ միւս օր ձեզ կը գրենք մեր տեսակէտի եւ ընթացքի մասին ձեր բարեկամին մասնաւոր canalով: Չենք գիտեր թէ, նոր փաստերուն վրայ, երբ թշնամին անվարան կը գործադրէ ինչ որ ծրագրած է, մենք պիտի մնանք հանդիսատեսի դերին մէջ: Կը խնդրենք, որ այժմէն կարելին ընէք Բիւրօ, Բարձրագոյն Խորհուրդ հրաւիրել տալու եւ կտրուկ կերպով ամբողջ կուսակցութեան դիրքը ճշդելու համար: Խեղօք կենանք թէ անխորհուրդ, կ'ըլլայ ինչ որ պիտի ըլլայ: Ո՞րն է պատճառ, ո՞րն է հետեւանք: Ծատ ճիշդ կ'ըսեն մարդիկը, «այնպէս պիտի ընենք, որ մինչեւ 50 տարի ձեր խելքը գլուխը չգայ»: Մենք ջղագրգիռներ չենք, բայց կ'ուզենք որ աւելորդ անգամ մըն ալ այս կէտերը յանձնենք որո՞ւ որ անկ է, որպէսզի խնդիրը քննեն իր բոլոր խորութեամբ եւ լայնութեամբ: Հաւանաբար վաղը կախաղաններ ալ չեն ուշանար:

Բարեկներ Վիշապի կողմէ՝
ԱՐՇԱԻՐ

Յ. Գ.— Հեռագրի համար հասցէ N° 4 եւ Ֆրանսերէն, ստորագրութիւնն ալ յունարէն: Mlle Anastassia Tchaouchoglan, rue Pitchedji, N° 14 Tarla Bachi, Pera - Con[stantinople]:

N° 1 ալ կրնաք գործածել այս նպատակով միշտ ուշադիր եղէք բովանդակութեան եւ ստորագրութեան:

114.- Տարեան Վսիսագն:

Փաստ. 882-20

33.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՍԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

30 Մայիս [1915]

Ընկերներ!

Կը հաստատենք մեր երէկուանը:

Երէկուան մեր սպասած նամակը Այնթապէն էր Մայիս 17 թուակիրը եւ ահաւաստիկ. «Հոս ալ 30է աւելի տուներ խուզարկուեցան, 28 երեւելիներ բանտարկեցին, բայց յետոյ արձակեցին. միայն մէկ ընկեր մնաց բանտը ան ալ զինուոր: Ապրիլի սկիզբէն ի վեր երկու օր անգամ մը կարաւաններ կ'անցնին եւ առանց քաղաքը կենալու կ'երթան դէպի հարաւ Միջագետքի ճահիճները: Ֆունուզ, Կապան, Ալաբաշ, ամբողջ Զէյթունը պարպուած է: Բօշնաք¹¹⁵ գաղթականները որջեր կը հաստատեն հոն: Աննկարագրելի է թուրքերու խինդը: Աքսորականներու վրայ գործ դրուած գազանութիւնները ոչ թէ պատմել, լսել անգամ գանկեր կը պայթեցնէ: Կիններ առեւանգել, կոշտեր պղծել, հայ տարագող եւ անուսով ծպտուած՝ աղջիկներ խաբել, փախցնել եւ բռնի թրքացնել ամէնօրեայ եւ սովորական դէպքեր են: Բացի մէկ երկու քաղաքէ ամբողջ Լեռնավայրի¹¹⁶ հայրութիւնը փչացաւ: Առաջնորդն ալ քանի մը տող գրել տուած է՝ Պատրիարքին յանձնելու համար, ինչ որ ըրինք անմիջապէս. միեւնոյն դէպքերը պատմելով ստիպողաբար դրամ կը խնդրէ. կ'ըսէ որ Ապրիլ 17էն ի վեր կարաւաններ կը հասնին ու կ'երթան Պապէն մինչեւ Վերանշէհիր: Այնթապի հարիւր ոսկի նպաստած է, ալ չի կրնար: Հասան Բէյլիէն եւ Տէօրթ Եոլէն 1500 հոգի, որոնց 1350ը Տէօրթ Եոլէն քշուած են Հալէպ. կը գովէ Հալէպի վալին իրբեւ բարի եւ արդարասէր մարդ, որի շնորհիւ հեռացնելու դէպք չէ պատահած այդ նահանգին մէջ¹¹⁷:

Ինչպէս կ'իմանանք նոր հրաման տրուած է այդտեղերն ալ պարպել: Ասով եօթը նամակ կ'ըլլայ շաբթուան մէջ 23-60 մայիս. չենք գիտեր կանոնաւոր առած էք: Վաղը եւեթ կը սկսին կալանաւորել. տեսնենք ողջ կը մնանք:

ԱՐՇԱԻՐ
28 մայիս

115.- Բօշնաք – Պոսնիպի:
116.- Լեռնավայր – կուս. ծածկանուն Կիլիկիոյ եւ շրջակայքի:
117.- Հայէպի նահանգապետն էր Ռեյալ պէյ, որ շուտով պաշտօնանկ պիտի ըլլար, որովհետեւ մերթադ էր գործադրել թալէաթի հրահանգները, յայտարարելով՝ «Ես այս նահանգին վալին եմ, չեմ կրնար անոր դահիճը ըլլալ»:
118.- Պայպը Հաուզ – Ամերիկեան միսիոնարութեան Աստուածաշունչի տարածման Պոլսոյ կեդրոնը:
119.- Գումարը նշանակուած չէ:

Ընկերներ!

1.- Կը հաստատենք երէկուանը. մասնաւոր լուր չունինք: Բայց կ'ուզենք գրել ամէն օր: Երէկ Կարինէն հեռագիր հասաւ՝ Պայպը Հաուզ¹¹⁸, որով միսիոնարութիւնը քանի մը ամսական կ'ուզէ շատ մը ստիպողական պէտքեր ունենալու: Չաւէնը առաջնորդէն ալ լուրի կը սպասէր բայց մինչեւ այսօր չեկաւ: Ջրոցներ շատ կան պաշարման, անկման մասին, բայց չգիտենք բուն իրականութիւնը:

2.- Զէյթունի ոչ միայն անունը ջնջեցին, այլեւ 2 միլիոն դրուշ վարկ քուէարկած են մուհաճիւրներու զետեղման համար: Յետոյ մասնաւոր պատուիրակներ ղրկուած են հայերու հողերը նորեկներուն բաշխելու համար: Պատուիրակներէն երկուքը գացած են արդէն: Չաւէնը դեռ չյաջողեցաւ հողեւորական ղրկելու փորձին մէջ:

3.- Երեք տիկիներու հեռացման մասին իրենց կարծիքները շօշափեցինք. միայն Տիկին Բաբան¹¹⁹ տրամադիր է գալու. միայն տարբեր խնդիր է թէ պիտի յաջողինք ղրկել: Տիկին Գիսակ երեք օր ուզեց մտածելու համար:

4.- Այաչցիներէն նոր նամակ չկայ: Անհատի մը նամակէն կը տեղեկանանք որ 80 հոգիէն 60ը գատ կը բնակին, 20ը առանձին. իրենց ամբաստանութեանց աստիճանի համեմատ ղրկած են կամ պիտի ղրկեն զանազան կողմեր: Վաղը միւս օր նոր փոսթ կու գայ, թերեւս լուսաբանուինք: Հեռագրի համար կրնաք գործածել մեր երեք օր առաջ տուած N° [4] եւ 2 հասցէները. աւելորդ է ըսել որ N°ը պիտի ըլլայ օտար լեզուով եւ օտար ստորագրութեամբ:

Թերեւս ուզէք գաղափար մը կազմել հաշուական դրութեան վրայ: Մանրամասն հաշիւէն առաջ ստորեւ կու տանք կարգ մը տեղեկութիւններ: Պանքէն Ազատամարտի գանձեր էինք 105 օսմ. ոսկի. 200 ստացանք ձեզմէ, 5 ալ Շահրիկեանի տանտիկինէն իրեն ղրկելու համար: Համագումար 310 ոսկի: Գիսակի օրով ընտանիքներուն ամսական վճարուած (չատերու ապրիլ-մայիս). ծախքերը եղած են 28 ոսկի: Այաչցիներուն ղրկուած է 35, Սեւ Բլուրին 50 ոսկի: Գիսակը մեկնած ատեն առաւ 30 ոսկի: Հրաչը¹¹⁹

Տեղական ծախքեր հին թէ նոր 30-35 ոսկի, որով մեզ մօտ կը մնայ 70-80 ոսկի: Դեռ կարգ մ'ամսականներ չեն տրուած: Չինուոր տղաքը թաղերու մէջ բաժնելու կ'աշխատինք, որպէսզի ատոր համեմատ վճարուանք ընենք:

ինչպէս սահմանուած էր Բիւրոյին օրով: Գիսակի կարգադրութեամբ Ռուզան եւ Արշաւիրը⁴⁸ կը ստանան ամսական 5ական [ոսկի] սկսած մայիսէն:

Սկսած մայիսէն 2ին համար սենեակ մը վարձուած է: Օր մը թագնուելու հարկադրուած ըլլալով – թէեւ ազատ կը պտտին առ այժմ – երբ հարկը պահանջէ, ինչ-

պէս կը պատահի ամէնուր: Ընկեր Ասլանի¹¹⁰ վերջին նամակէն պարապ էջ մը պատուած էին, ինչպէս կ'երեւի ամէն կերպ կը հետապնդեն մեր տարագիր ընկերները:

ԱՐՇԱԻՐ

Փաստ. 882-21

34.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԵՆ ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 1 Յունիս 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր մայիս 30 թուակիրը. այս ութերորդն է որ կը գրենք առանց պատասխան ստանալու: Ձեռք գիտեր թէ բոլորն ալ ստացած էք, նաեւ 16 եւ 18 թուակիրները: Ձեր 15 թուակիրը չենք ստացած մինչեւ հիմա:

1.- Գիսակը իր ընկերոջ հետ յաջողած էր տեղեկութիւն հաղորդել ճամբէն: Բաւական սրտածմլիկ նամակ մըն էր, այնպէս որ տիկինը ահ ու դողի մատնուած էր: Կը խնդրէր դիմումներ ընել աջ եւ ձախ, որպէսզի եթէ ոչ Պոլիս, գոնէ Գոնիա փոխադրուի դատը տեսնելու, վախնալով որ անիրաւութիւններ կ'ըլլան Տիգրանակերտի մէջ, ուր կը զրկուին. իբրեւ թէ թուղթ մը գտած են որ ծանրապէս կ'ամբաստանէ գիրենք: Տիկինը առջի օր եւ երէկ դիմեց Թալէաթին ու Միտհատ Շիւքրիին: Երկուքն ալ պատմեր են թէ թուղթ մը գտնուած է, որուն բովանդակութիւնն իրենք ալ չեն գիտեր... Հաւաստեր են որ ոչ մէկ վտանգ կայ իրենց կեանքին: Նախարարը նոյնիսկ խոստացեր է անմիջապէս հեռագրել որ Գոնիա դարձնեն: Գիսակը մնաք բարովի խօսքեր կ'ընէր, սրտաշարժ ակնարկներ եւն. եւն.: Որով շատ մտահոգ եղանք մենք ալ. բայց երեւի առաջին փոփոխութիւնը տպաւորութեան տակ գրած է: Ամէն պարագայի մէջ կասկածները չեն փարատած: Մանաւանդ որ, ինչպէս պիտի տեսնէք Սեւ Բլուրի⁴⁰ նոր նամակէն, «քաղաք պիտի տանինք» ըսելով ճամբան սպաննելը սովորական բան է դարձեր: Մենք նոյնիսկ կը վախնանք Էնկիւրի իբր թէ դատուելու զրկուած ընկերներու կեանքին համար: Խաժակը գրած էր որ Էնկիւրի կ'երթան դատուելու: Չարդարը կը գրէ որ հինգ ընկերներով (մերիններէն զատ, միւս երկուքը ճանկիւր¹²⁰ եւ Տաղաւարեանն են) հրաման ելած է Էնկիւրի երթալու. «բայց չենք գիտեր թէ յետոյ ուր պիտի երթանք». Փաշայեանն ու Շա-

միլն ալ կը ծանուցանեն անոնց մեկնումը, առանց դատի կամ Էնկիւրի մնալու խօսք ընելու: Խորհրդաւոր դարձուածք մըն է, որ քիչ մը Իշխանի եւ Վահաբի պարագաները կը յիշեցնէ, եթէ սխալ չենք դատեր: Ամէն բան կ'անցնի մեր մտքէն, ուստի կ'աճապարենք այժմէն բանալի մը զրկել, անակնկալ դժբախտութիւն մը ժամ առաջ հեռագրելու համար: Մեր գրած ձեւը դժուարութիւններ շատ ունի, մանաւանդ որ միայն երկու հասցէ տուած էք: Բայց որովհետեւ դէպքերը իրարու ետեւէ կը յաջորդեն, ստիպուած ենք փութացնել: Եթէ դուք աւելի գործնական ձեւ մը գիտէք, շտապեցէք հաղորդել N° 1 հասցէով: Մեր ծանուցանելիքը պիտի ըլլայ 10-11 ընկերոջ մէկուն կամ միւսին դաւադրութեամբ սպանումը կամ կախուիլը: Երբ մանչու ստորագրութիւն ըլլայ, կը հասկնաք որ ծանուցուած թիւերը կախուած են, իսկ աղջկան եղած ատենը՝ դաւադրութեամբ սպանուած:

Բովանդակութիւնը եւ ստորագրութիւնը պարագաներուն պիտի յարմարցնենք, կարեւորը թիւերն են: Չկնճռուելու համար 11 թուով սահմանափակուեցանք: Այժմէն պատրաստեցէք երկու հասցէի տէրերը, որովհետեւ ուղղակի անոնց պիտի հեռագրենք. մինչեւ նոր հասցէներ տրուիլը, ահա բանալին: 1.- Ակնուկ, 2.- Խաթակ, 3.- Չարդարեան, 4.- Ս. Մինասեան, 5.- Սարգիս-Շամիլ, 6.- Չոհրապ, 7.- Վարդգէս, 8.- Շահրիկ, 9.- Հրաչ, 10.- Շահպազ, 11.- Փաշայեան: Քանի մը օրէ ի վեր լուր կը չըլլի թէ 10 հայ եւ 5 թուրք կամ նոյնիսկ 25 հոգի պիտի կախուին եւ աքսորականներէն: Թուրք շրջանակներէն կ'իմանանք այս լուրերը եւ հաստատ բան մը չգիտենք: Ամէն բան կ'ընեն այս թշուառականները. նոր փաստի պէտք չկայ, ուստի պատրաստ ըլլալու է յոռեգոյն անակնկալներու:

2.- Փաշայեանը Մայիս 23 թուով Գիսակէն կը խնդրէ 20ական ոսկի զրկել Ս. Նորատունկի, Յ. Գալֆայեանի. բայց մեր քով եղածը հազիւ 60 օսմ. ոսկի, որովհետեւ մեր քով հազիւ այդքան դրամ կայ: Այսօր միայն 20 ոսկի զրկեցինք Փաշայեանի, միւսներուն համար սպասե-

120.- Ճանկիւ – Ճանկիւլեան Յարութիւն, հնչակեան յայտնի գործիչ:

լով որ բարեհաճիք փոխադրել ձեր խոստացած գումարը: Տաժանելի բան է մեզի համար՝ միշտ դրամի խօսք ընել. բայց դուք այս հարցը մէջտեղ դրիք եւ հիմա դուք էք որ կը լռէք... երկու հասցէ ենք տուած, մէկուն զրկեցիք 200, միւսին 300 ոսկի: Սեւ Բլուրին նորէն դրամ պիտի զրկենք: Յետոյ ի՞նչ պիտի ըլլայ տիկին Գիսակը: Ամուսինը այս խնդիրն ալ յուզած էր իր նամակով: Անշուշտ անոր ալ ամսական պիտի կապենք, չգիտենք ինչքան. գրեցէք այս մասին, ինչպէս եւ միւս տարագիրներու ընտանիքներու համար, որոնք նոր ամսականներ ուղղելու կը պատրաստուին: Ի դէպ Պերճուհին¹²¹ եւ Տիկին Գիսակը բացարձակապէս կը մերժեն իրենց ամուսինները լքել եւ հեռանալ. Տիկին Բաբա ալ տկար է այժմ: Կը խնդրենք որ ալ չստիպէք մեզ առեւտրականի պէս շարունակ դրամ մուրալու: Ամբողջ կացութիւնը աչքի առջեւ է: Յաջորդ էջը կ'արտագրենք Սեւ Բլուրի նամակը, կու տանք նաեւ քանի մը ուշագրաւ կէտեր կաթողիկոսի տեղեկագրէն, որ նոր ձեռք անցաւ: Միայն թէ Ձաւէնն ալ դարձեալ խնդրած է, որ ոչ մէկ պարագայի մէջ չլիչուի պատրիարք, պատրիարքարան, կաթողիկոսի տեղեկագիր, եւն: Չափազանց կը վախնան որ լուրի այս աղբիւրն ալ կը ցամաքի: Մենք ձեզի՝ Մարմինն համար մտերմաբար կը գրենք լուրերու աղբիւրները, բայց ի հարկէ երբեք թերթին մէջ [չէք] չեշտեր այդ պարագաները: Պաշտօնական տեղեկագիր ըսէք կը բաւէ. զրկողը կամ ստացողը գաղտնի մնայ:

Նոյնը կը խնդրենք նաեւ ընտանիքներու նամակներէն եղած քաղուածքներու համար, մանաւանդ տիկին Գիսակն ու Ձօհրապը չափազանց կը վախնան:

Ահա Սեւ Բլուրի նամակը Մայիս 19 թիւ, որ դառնօրէն կը գանգատի մեզմէ նամակ չստանալուն համար, թէեւ 24 ժամ չանցած պատասխաններ ենք մենք, բայց, դժբախտաբար չեն ստացեր, չնայելով որ նոր հասցէն իրենք տուեր էին:

— «Մայիս 6ին Սուրէնը⁴² իրեններով ընդհարեցաւ հետապնդող ժանտարմներու հետ, որոնք պատահամբ երկու դիրքերու վրայ դացած են: Սպաննուած է մէկ ժանտարմ եւ 2 վիրաւոր: Մնացածները փախած են, մինչեւ ցարդ կը հետապնդեն, սակայն կարելի չեղաւ տեղը ճշտել: Այս իսկ պատճառով կառավարութիւնը վերսկսաւ խիստ խուզարկութիւններ կատարել գիւղերը եւ խժոժութիւններ գործ դնել: Այրեց տուներ ամէն հայ գիւղերու մէջ եւ սպաննեց շատ մը կասկածելի նկատուած երիտասարդներ: Այս գրութիւնը մինչեւ օրս կը շարունակուի: Սուրէնը շատ կը նեղուի այս կերպ հետապնդումներէ, ու կը խորհինք առժամապէս հեռացնել գիւղը այս շրջանէն, եթէ երբեք յաջողինք: Խոճասարի մեր բանտարկեալ 9 ընկերները հոս բերելու

պատրուակով քաղաքէս երկու ժամ հեռու, ժանտարմայի գարագոյին առջեւը (Մէյֆեպէլին) գնդակահար սպաննեցին, սա պարզ գրպարտութեամբ թէ՛ կը փախչէին զարկինք: Կիւրինցի վեց տղաներ ալ գնդակահար ըրին: Խորասան-Կովտուն-Խանչառ գիւղերէն դարձեալ քաղաք բերելու պատրուակով ճամբան սպաննեցին 28 հոգի, մեծամասնութիւնը մեր ամենալաւ երիտասարդ ուժերէն, որոնք գատելով-գատելով կը սպաննեն: Թոտորկայի 7 սպանութիւնները նախորդով գրած ենք: Եթէ այս սխտեմը մէկ ամիս ալ տեւէ, Չարդը աւելի աւեր գործած պիտի ըլլայ կառավարութիւնը, քանի որ միշտ լաւ ու երիտասարդ ուժերը կը տանի կը սպաննէ: Երէկ ալ քաղաքիս բանտարկեալներէն գլխաւորները Չարդեցին (Վահան, Փօլատ, հնչակեան Մուրատ եւն) խառն, թուով 12 հոգի, գիւղերը ժամը 7ին առանց ոեւէ մէկուն իմաց տալու, եւ առանց որեւէ պատրաստութեան աքսորեցին Երզկատ. կը կասկածինք թէ ճամբան սպաննեն: Ողջամբ հասնելին կ'իմացնենք: Միշտ յարաբերութեան մէջ ենք Բերդի, Որոտումի հետ: Երէկ Որոտումէն ալ 50ի մօտ բանտարկեալներ եկան, Վարդանի ու Բիծայի տեղերը գիտնալու ամբաստանութեամբ: Պատանդ անունին տակ բանտարկեալները խիստ կը շատնան: Եւ ինչպէս կ'երեւի, լաւ ուժերն ալ գատելով կը սպաննեն: Հետեւաբար Արտասահմանի մարմնոյն գիտցուցէք, որ տալիք Յիշատակագիրը փութացնեն: Մեր գրութիւնն ալ խիստ վատթարացաւ եւ օրէ օր աւելի գէշ կ'ըլլայ: Գիւղերը գինաթափ, գինուորական փախստականները յանձնուեցան եւ օրէ օր սպանութիւններն ու աւերները կը շատնան: Առաջնորդն ալ թէ կասկածելի եւ թէ անգոր: Հայերու մէջէն նոր մատնիչներ երեւան ելած են: Այս պարագաները ձեր լուրը ուշագրութեան կը յանձնենք: Այս գրութեան մէջ այլեւս մեր կեանքն ալ բացարձակ վտանգուած է. յոյսերնիս Պոլսոյ անկման վրայ է. լուրեր տուէք Շամէն, Դուրանէն, Պարոյրէն¹²² եւն: Աքսորականները ողջամբ հասնե՞ր են: Երբ քաղաքը իյնայ, որո՞ւ հետ պիտի հաղորդակցինք:

Ընկերներ!

Միւս թերթին մէջ փնտուեցէք տեղեկագիրը, բարեկներով

Վիչապի Առժամեայի կողմէ
ԱՐՇԱԻԻՐ

Տեղեկագիրի ամփոփումը յետոյ կը գրէ:

Ահա ամփոփումը: Նախորդ Mémoireը լաւ ընդունելութիւն չգտաւ եւ թելադրեցին որ նոր փաստերը հաղորդենք շուտով: Վաղը պիտի կազմենք եւ յանձնենք, ասոնք ալ միացնելով:

Բարեկներով՝ Վիչապի Առժամեայ
ԱՐՇԱԻԻՐ

121.- Ծանօթ գրագիտուի Բարսեղեան Պերճուհի, որ կիցն էր Բարսեղեան Սարգիսի (Շամի):
122.- Այսինքն՝ Վանէն, Տարօնէն, Անդրանիկէն (կամաւորական գունդերէն):

Փաստ. 1158-63

35.- Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԷՆ «ԴԻՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոֆիս, 3 Յունիս 1915

Ընկերներ!

Կը հաստատենք Մայիս 21, 518 թուահամար նամակը, որով Պոլսոյ մեր ստացած նամակներէ հաղորդագրութիւնը ձեզ կը հաղորդենք. ձեզնից ոչ մի նամակ չենք ստացել, այժմ կը շարունակենք տալ մեր տեղեկութիւնները որոնք ոչ մի միջամտական երեւոյթ չունեն:

Վիշապ, 19 մայիս.— Երէկ Բաղէշէն հեռագիր մը հասաւ պատրիարքարան որով 1000 ոսկի կը պահանջեն հեռագրով. անշուշտ չարաշուք դէպք մը կը բացատրէ այս հեռագիրը: Ձէյթունցիներէն մէկ մասը աքսորած են Էնկիւրիի Սուլթանիյէ կոչուած տեղը, որ ճախճախուտ վատառողջ անկիւն մըն է, ուրկէ թուրքերն անգամ կը փախչին եղեր. իսկ մաս մըն ալ զրկած են Միջագետքի Տէյր-Չօր կոչուած վայրը, վրանաբնակ վայրերնիներու մէջ: Պատրիարքը ամերիկեանին միջոցաւ խնդրած է որ արտօնեն դեղ, առողջապահական նիւթեր եւ եկեղ. գոյքեր (Մաշթոց, միւռոն) զրկելու: Թալէաթը նախ ծամծամեր է, իսկ երկրորդ անգամուն երբ թարգմանը ներկայացեր է վերջնական պատասխան ստանալու, յայտնել է որ չեն կրնար արտօնել. մեր կայսրութեան գերագոյն շահերը կը պահանջեն այսպէս վարուիլ եւ կը խնդրեմ որ ալ չխօսիք այս մասին: Հակառակ այս պատասխանին, դեսպանը երկու-երեք օրէ ի վեր նոր տեսակցութիւն մը կը խնդրէ եւ երէկ պիտի տեսակցէր: Չգիտենք արդիւնքը: Ինչպէս կը տեսնէք, Իթիհատը կատարելապէս հետեւողական է իր ծրագրին մէջ.— բնաջինջ ընել բոլոր հայկական համախմբումները, նոյնիսկ յատկապէս դէպի մահը առաջնորդելով զանոնք: Այս ուղղութեամբ առնուած վերջին քայլն այն է որ արդէն իսկ կազմուած է, յայտնի թուրքերու անգամակցութեամբ, յանձնաժողով մը, գործադրելու համար Տոքթ. Ռորպախի համբաւաւոր ծրագիրը.— Միջագետքի արաբները տեղաւորել Հայաստանի մէջ, որպէսզի ոչ մէկ հնարաւորութիւն չմնայ հայկ. մեծամասնութեան կամ համախմբման, հետեւաբար եւ ինքնավարութեան:

Այաջցիներուն տակաւին չեն թոյլատրեր հայերէն գրել, թէեւ արտօներ են բաղնիք երթալու... Խիստ գրաքննութեան կ'ենթարկուին անոնց զրկած քարտերն անգամ, որոնք միշտ ոստիկանութեան միջոցաւ կու գան: Բ[րոֆեսոր] Խաչատրեանի մասին գիշերը բնակարանը եկեր հարցուցեր են. կը կասկածինք թէ հայ լրտեսները, որոնք հրապարակի վրայ են միշտ, նոր տեղեկութիւններ տուած ըլլան, ողջ մնացողներու մասին: Գործի վրայ է նամանաւանդ հնչ[ակեան] Յասեանը:

Վիշապ, 21 Մայիս.— Նոր դժբախտութեան մը լուրն է որ պիտի հաղորդենք այսօր. երէկ մինչ Գիսակը ոստիկանութեան տեսուչին գացած էր Ազատամարտի դրամներուն համար, ինչպէս եւ խնդրելու որ Խաժակին քիչ մը դիւրութիւններ տան դարմանուելու — շարունակ կը կաղայ նորէն — ժամը 5ին կնոջը բացակայութեանը 10-15 ոստիկան մտած եւ խուզարկած են սենեակը, ինչ թուղթ որ ունէր տարած են. որքան կը յիշենք compromettant⁹⁷ ոչինչ կար իր քով, գոնէ սա նոր շրջանէն: Ինք մինչեւ իրիկուն չվերադարձաւ: Իսկ այսօր արդէն կինը գնաց կամուրջին վրայ ճամբելու. զրկած են ուղղակի Գոնիա Զօհրապին հետ, որուն տունն ալ խուզարկուեցաւ: Երէկ կարգ մը ձերբակալութիւններ եղած են նաեւ Մաքրիգիւղ (Տիգրան Աշխարհունի), Գումգաբու, Բերա, եւն: Կ'իմանանք թէ Ամերիկեանը լուրջ ջանքեր է ըրեր ազատելու հին աքսորականները, բայց պատասխաններ են որ նոր ցանկ մը ներկայացնէ անվնաս եւ ոչ-կուսակցականներու: Դեսպանը բնականաբար խուսափեր է, ինչպէս ըրած էր Ջալէնն ալ, որուն միեւնոյն առաջարկը ըրած էին: Ինչպէս կ'երեւայ վերադարձի ոչ մէկ յոյս չկայ: Խաժակին հիւանդութեան համար դիմումներ պիտի ընէր նաեւ Ոսկան Մարտիկեանը: Երկրէն ոչ մէկ լուր չունինք, Սեւ Բլուրն⁴⁰ էր մեր միակ յոյսը ան ալ լռեց: Ոստիկանութեան համար կը հրատարակուէր (փոխ մէծմուսաբ), այսօրուայ թիւը շատ պերճախօս է գրգռելու եւ բորբոքելու խուժանական կիրքերը: Պատկերներ դրուած են Տիգրանակերտի եւ Կեսարիոյ մէջ եղած խուզարկութեանց համար, ցուցադրուած են հարիւրաւոր ուռմբեր, հրացաններ, հայկ. եւ դաշնակցական զինանշաններ եւ ուրիշ բաներ:

Այաջցիները քանի մը օր ազատ ձգեր են, բայց ինչպէս կը լսենք նորէն բանտարկեր են, իբրեւ թէ քաղաքացիներու հետ մտերմանալով իրենց տառապանքները պատմած եւ մատնուած ըլլան:

Վիշապ, 23 Մայիս.— (Ասկէ առաջուայ նամակով գրած էին թէ Վահաբը Տիգր. ճամբուն վրայ սպաննուած է, բայց լաւ գրուած չըլլալուն համար չկրցանք կարդալ եւ հարցուցինք ինչ որ այսօր կը գրեն): Վահաբի³⁹ պարագան անգամ մըն ալ կը հաստատուի Բարձրաբերդէն⁴⁹ հասած Ապրիլ 28 թուակիր յապաղած նամակով, ուր շատ կարճ եւ հեւ ի հեւ գրած են եւ կը ծանուցանեն թէ Վահաբը Տիգրանակերտ փոխադրուած ատեն իբրեւ թէ հայ խումբ մը կը փորձէ ազատել եւ տանողները անմիջապէս կը խփեն:

Նախորդ նամակին մէջ (21) թէեւ շատ հակասական լուրերու շարքին մէջ էր գրուած լուրը, ինչպէս տեսաք — թէեւ չէք կրցեր կարդալ, բայց որոշ կը տեսնուէր որ հաստատ էր, մանաւանդ երբ դիտել կու տային թէ Կոմսի մասին կը խորհին, Վահաբի ճակատագրին չյանձնելու համար: Ուրիշ փաստ չունինք, ասկէ աւելին՝ դուք ինքներդ ճշդած ըլլալու էք մինչ հիմա, քանի որ Շամը ազատ է: Դժբախտաբար մենք կը հաւատանք, քանի որ շաբաթներ առաջ ալ, ապստամբութեանց գրոյցներուն հետ մէկտեղ, ժողովուրդին մէջ գրոյց կար թէ Վահաբը կախուած է եւն:

Սեւ Բլուրէն⁴⁰ այսօր ալ լուր չունինք, պիտի փորձենք հեռագրով նոր հասցէ պահանջել. կը վախնանք որ մինչեւ հիմա թղթակցողները իրենք ալ վտանգուած ըլլան:

Գիսակը եւ Զօհրայը ճամբեցին շատ բրտութեամբ. Գիսակը երբ գացած էր ծանօթ դիմումը ընելու Պետրիին, մենք ալ քեզ կը փնտռենք ըսելով նետեր են բանտ: Գիշերն ալ Զօհրայը տարին եւ անարգեր են կամուրջին վրայ դէպի շոգեհաւ փոխադրուած ատեն: Խուզարկութեան յետոյ, որ կատարուած էր միայն խեղճուկ սպասուհիի մը ներկայութեան, երբ Տիկինը եկեր է, թուղթ մը ստորագրել տուեր են: Խեղճը իրարանցումի մէջ ստորագրեր է առանց կարդալու. նոյնը ըրած են Վահաբի նշանածին ամիս մը առաջ եւ պատուիրեր էինք որ մինչեւ վերջը ընդդիմանան նմանօրինակ պարագաներու մէջ, բայց շուարեր են: Ինչպէս կրցանք քիչ շատ ստուգել, միակ թուղթը որ քիչ մը վիճելի կը նկատուէր, Տրդ Ընդհ. ժողովի որոշումները պիտի ըլլայ: 2 տոպրակ թուղթ կնքելով տարած եւ Գիսակին հետ մէկտեղ զըրկած են: Նոյն օրը ձերբակալուած են 10-15 հոգի, բայց ընդհ. բան մը չկայ տակաւին. բռնուած են այնպիսիներ ալ որ կը թղթակցէին այաչցիներուն հետ:

Բաղէշի քրտերը ապստամբած են եղեր. ինչպէս կ'իմանանք Զաւէնէն, որ պահանջուած 1000 ոսկիէն միայն 300 զրկեր է, բայց հեռագրով մը դարձեալ 1000 ոսկի պահանջած են, չգիտենք ինչ աղէտ պատահած է:

Տարտանէլէն կ'իմանանք որ 7 գօրաբանակէն 3ը փճացեր են. չափազանց շատ սպայ կը սպաննուի. պաղուծիւն մը կայ թուրքերուն եւ գերմաններուն միջեւ եւ հետզհետէ կը սաստկանայ. թուրքերը կը խուսափին կռիւներէն. գերմանները կը բռնանան. ռազմանիւթ չկայ, ոչ ալ միթրայէօզ: 40000 սպանեալ եւ 50000 վիրաւոր ունեցեր են խնամիները, գերիներուն թիւը չեն գիտեր:

Վիշապ, 26 Մայիս.— Կացուծիւնը շատ մուծ է. ստորեւ կը նշանակենք կարգ մը նոր փաստեր.—

Շատ վստահելի աղբիւրէ իմացանք որ աւելի քան 300 հոգիները նոր ցանկ կը պատրաստուի մեծ աճապարանքով, աքսորելու համար: Ոչ մէկ տարակոյս որ Խաչատրեանի բնակարանին ճշդումը կապ ունի այս նոր

պատրաստութեան հետ: Նախորդներն ալ այսպէս սկսած են:

Գիսակէն ու Զօհրայէն լուր չկայ մինչեւ այսօր, Տրդ օրը, կ'իմանանք թէ Խարբերդ կամ Տիարպեքիր զրկած են:

Այաչցիներուն վիճակը երեւի ծանրացած է. երէկ նամակներ եկան շատերէն մայիս 19-20 թուակիր. ընկեր թէ չէգոք, ամէնը միաբերան կը բացատրեն որ իրենց վիճակը անտանելի է. եւ կը խնդրեն ժամ առաջ միջոցներ խորհիլ ազատելու:

Բաբա-Գասպարը (Խաժակ) ծանր հիւանդ է արդէն. եւ կը գրէ որ վիճակը անտանելի է: Վերջապէս երէկ լսեցինք թէ 3 այաչցիներ Կեսարիա զրկուած են: Ապահովաբար մէկը Մարգաբտն է, որ իբրեւ թէ Պոլիս զրկուած էր: Թերեւս մէկն ալ Գալֆան է. ինչպէս կ'երեւայ հիմնաւոր է մեր կասկածը, կամ այն է որ հարցաքննութիւնները սկսած են խստօրէն, կամ աւելի հաւանականը արդէն կը ցրուեն աքսորականները դէպի աւելի ներսերը պատերազմական ատեաններով դատելու համար: Ամէն պարագայի մէջ ոչ մէկ յուսատու նշան կայ:

Երէկ երեք տիկիները զրկեցին Զաւէնին նախ՝ իրենց վիճակին դառնութիւնը պարզելու ըսելով որ 30-40-100 կիներ պատրաստ են պատրիարքին հետ Դուռ երթալու եւ գէթ թեթեւացում խնդրելու կամ նոյնիսկ չէզոքներուն^{122ա} դիմելու: Վեղարաւորը պատմեր է որ իր կարելին ըրած է եւ ոչ մէկ ճար չունի: 15 օր է ժամադրութիւն կը խնդրէ գէթ թուրքներուն տէրտէր մը զրկելու նաեւ միւռոնի համար եւ միշտ կը ձգձգեն: Ոչ իսկ կարեւորութիւն կու տան ըսեր է: Ազատամարտի դրամներուն համար խոստացեր է նախարարին երթալ, քանի որ մեր տղաքը իր անունով ալ փոխանորդագիր մը զրկած են: Յոյս չունինք որ բարի լուր մը առնէ: Զաւէնը անձար է նաեւ երկրի լուրերուն մասին եւ մեզի ապաւինած է, իսկ մենք նոր բան մը չունինք այսօր ալ: Երկու օր առաջ Պոլիս դարձան Հայկ Խոճասարեան եւ Տոքթ. Թոփճեան, մէկը Զանդրընէն եւ միւսը Այաչէն: Ասով 12 հոգի կ'ըլլայ վերադարձողներուն թիւը:

Երէկ ով գիտէ որո՞ւ մատնութեամբ յանկարծ կռիւցին Ներսէս Փափագեանի բնակարանը, որ չէր խուզարկուած դեռ. եւ երեք ժամ անընդհատ պրպտեցին. գործիքներով, հող, պատ քննեցին, ուսմբ գտնելու համար: Թուղթերուն ձեռք չեն զարկած, թէեւ բան մը չկար: Կամ մատնած են եւ կամ Կոմսի մասին բան մը կայ:

Այսօր պուլկ[արական] դեսպ[անատան] յանձնեցինք 11 էջնոց Յիշատակագիր մը, օրինակն ալ ամերիկեանին տալու համար: Ընդարձակօրէն պարզեցինք Դաշնակցութեան եօթնամեայ քաղաքականութիւնը եւ այլ խընդիրներ. նաեւ պատերազմէն յետոյ կատարուած բոլոր փաստերը արձանագրեցինք. թէեւ բան մը չենք յուսար,

122ա.- Իմա՝ չէզոք պետութիւններու:

բայց խղճի պարտք մըն է որ կը կատարենք: Պարբերաբար պիտի տանք ուրիշ փաստեր ալ: Դուք եռանդով շարունակեցէք ձեր դիմումները, բողոքը: Չէ որ ամէն միջոց պիտի փորձենք աս խելագարները սթափեցնելու համար, որոնք քառասմբակ կ'արշաւեն առանց ետ առաջ նայելու:

28 Մայիս, Վիշապ.— Մասնաւոր լուր մը չունինք, բայց կ'ուզենք գրել ամէն օր: Երէկ Կարինէն հեռագիր մը հասաւ. Պայպըլ-հառուգէն որով միտինարուծիւնը քանի մը ամսական կը պահանջէ շատ մը ստիպողական պէտքեր ունենալուն համար. Չաւէնը առաջնորդէն ալ լուրի կը սպասէր բայց մինչեւ այսօր չեկաւ. գրոյցներ շատ կան պաշարման, անկման մասին, բայց չգիտենք բուն իրականութիւնը:

Զէյթունի ոչ միայն անունը ջնջեցին այլեւ 2 միլիոն դրուշ վարկ քուէարկած են մուհաճիրներու գետեղման համար: Յետոյ մասնաւոր պատուիրակներ դրկուած են հայերու հողերը նորեկներուն բաշխելու համար: Պատուիրակներէն երկուքը գացած են արդէն: Չաւէնը դեռ չյաջողեցաւ հոգեւորական դրկելու փորձին մէջ:

Այաջցիներէն նոր նամակ չկայ, անհատի մը նամակէն կը տեղեկանանք որ 80 հոգիէն 60ը գատ կը բնակին, 20ը առանձին. իրենց ամբաստանութեանց աստիճանի համեմատ դրկուած են կամ պէտք է դրկուին զանազան կողմեր:

29 Մայիս.— Տխուր լուրեր է որ պիտի տանք այսօր ալ, կէսօր է եւ կ'աճապարենք գրել. այսօր խաթակէն նամակ եկաւ. թուրքերէն եւ հայերէն խառն. էնկիւրիի կայարանէն կ'իմացնէ որ ինք, Ակնունին, Չարդարը եւ Սարգիս Մինասեանը կ'երթան էնկիւրի պատերազմական ատեանի առաջ դատուելու համար: Փաստ է արդէն «Հայաստանը առանց հայու...»: Երզնկացիները քշեր են խարբերդ: Արդէն հասեր են Ակն, ուրկէ հեռագրով դրամ կը պահանջեն. Կարինն ալ սկսեր են պարպել: Մարաշ, Այնթապ, Հաճըն բոլոր հայկ. շրջանները պարպուած են: Կայանէ կայան կը փոխադրեն դէպի Միջագետքի խորերը: Թէեւ կը խաբեն բուն տեղի մասին. այս լուրերը կու տայ Չաւէնին գերմանացի բարեկամը (դեսպան) որ կ'աւելցնէ թէ ամէն ջանք թափեցին գոնէ ծերերուն եւ տղոց խնայելու համար, բայց անօգուտ:

Կիլիկիոյ ամէն կողմը սարսափելի խուզարկութիւններ եղած են. Վահագնը¹¹⁴ բանտարկուած է: Կաթողիկոսին ընդարձակ մէկ տեղեկագիրը հասաւ, որ կը պատմէ սարսափները: Խուզարկեր են առաջնորդին սենեակը, ննջարանը, եկեղեցի, գերեզմանատուն, ամէն բան եւ ամէն տեղ: Կաթողիկոսարանն ալ կոխեր են: Մինչեւ մօտեցեր են կաթողիկոսի ննջարանին, որու ատեն կաթողիկոսը յայտներ է որ կը հրաժարի եւ իր

բանալիները կը յանձնէ կուսակալին ու կը մեկնի. ասոր վրայ ննջարանէն վազ են անցեր: Տեղեկագիրը առնելով կ'արտագրենք ու կ'ուղարկենք:

Բոլոր հայ պաշտօնեաները խուճ-խուճ կը ճամբեն: Բարձրաստիճան պաշտօնեայ մը յուսահատութեն կ'ըսէր որ մեծ բան է եթէ մեր կաշին ազատենք. Թալթաթը հայ պաշտօնեայի մը ըսեր է որ եթէ մատնութիւն կ'ընես, քեզի պաշտօն կու տանք. խօսք կայ որ Պոլսոյ հայութիւնն ալ պիտի քշեն. կը ստուգենք:

Այսօրուայ տօնին առթիւ (Պոլսոյ առում) կոտորելու թափելու սպառնալիքներ կային, բայց առտուան ամբողջ ոստիկանութեան լուր տուած են, որ այս փափուկ ըրուակներուն մէջ կարգը պահեն. աղմկալի պատգամաւորութիւններ, թափօրներ եւայլն կը կազմուին: Այսօր շատ ու շատ էին վախցող եւ տուներ մնացողները: Այսօր երեւի նամակ ունինք. Սեւ Բլուրէն⁴⁰ ալ կը սպասենք մինչեւ իրիկուն: Վաղը կամ միւս օր ձեզ կը գրենք մեր տեսակէտի եւ ընթացքի մասին, ձեր բարեկամին մասնաւոր canalով:

30 Մայիս.— Երէկուան մեր սպասած նամակը Այնթապէն էր, Մայիս 17 թուականաւ եւ ահաւասիկ:— Հոս ալ 30է աւելի տուներ խուզարկուեցան, 28 երեւելիներ բանտարկեցին, բայց յետոյ արձակեցին. միայն մէկ ընկեր մնաց բանտը ան ալ գինուոր: Ապրիլի սկիզբէն ի վեր երկու օրը անգամ մը կարաւաններ կ'անցնին եւ առանց քաղաքը կենալու կ'երթան դէպի հարաւ Միջագետքի ճահճները: Տունուզ, Կապան, Ալաբաշ, ամբողջ Զէյթունը պարպուած է: Բօշնաք գաղթականները որջեր կը հաստատեն հոն: Աննկարագրելի է թուրքերու խինդը: Աքսորականներու վրայ գործադրուած գազանութիւնները ոչ թէ պատմել, լսել անգամ գանկերը կը պայթեցնէ. կիներ առեւանգել, կոյսեր պղծել, հայ տարագրով եւ անունով ծպտած՝ աղջիկներ խաբել փախցնել, բուն թրքացնել ամէնօրեայ եւ սովորական դէպքեր են: Բացի մէկ երկու քաղաքէ ամբողջ Լեւոնավայրի¹¹⁶ հայութիւնը փճացաւ: Առաջնորդն ալ քանի մը տող գրած է պատրիարքին յանձնելու համար, ինչ որ ըրինք անմիջապէս. միեւնոյն դէպքերը պատմելով ստիպողաբար դրամ կը խնդրէ. կ'ըսէ որ ապրիլ 17էն ի վեր կարաւաններ կը հասնին ու կ'երթան Պապէն մինչեւ Վերան Շեհր: Այնթապ 100 ոսկի տուած. ալ չեն կրնար: Հասանձեցիլէն, Տէօրթ-Եոլէն 1500 հոգի, որոնց 1350ը Տէօրթ-Եոլէն քշուած են Հալէպ. կը գովէ Հալէպի վալին իբրեւ բարի եւ արդարասէր մարդ, որի շնորհիւ հեռացնելու դէպք չէ պատահած այդ նահանգին մէջ: Ինչպէս կ'իմանանք հրաման տրուած է այդ տեղերն ալ պարպել: Վաղը կը սկսին նոր ձերբակալութիւններու:

Ընկերներ!
Այսօր էլ ստացանք մի քանի նամակներ որոնք վաղը

կը գրենք, մանրամասնորէն. ընկ. Օզանեանը^{122բ} եկաւ: Դրամ ձեզ շուտով կ'ուղարկենք. այժմ Պոլսէն խիստ ստիպողական պահանջ լինելով ստիպուած ենք մեր մօտ մնացածը անմիջապէս փոխադրել:

Խնդրենք անմիջապէս մեզ գրեցէք. Պոլսի մեր ընկերների վերջին կտրուկ առաջարկին (ինչ որ նախապէս ալ գրած ենք) ձեր տեսակէտի մասին. նրանք ամէն օր մեզանից որոշում կ'ուզեն. մենք ոչ լիազօրութիւն եւ իրաւա-

սութիւն չունենալով ի հարկէ չենք կրնար անոնց ոեւէ դրական կամ բացասական պատասխան գրել: Այս մասին դարձեալ կը խնդրենք որքան կարելի է շուտ ձեր տեսակէտը իմացնէք նոյնիսկ հեռագրաւ, եթէ պէտք տեսնաք: Վաղը կը գրենք ուրիշ մի քանի հարցերու մասին:

Ընկ. բարեկենդանի
Հ.Յ.Դ. ՊԱԼՔ[ԱՆԵԱՆ] ԿԵԴՐ[ՈՆԱԿԱՆ] ԿՈՍ[ԻՏԵ]

Փաստ. 882-22

36.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԵՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 4/17 Յունիս 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր յունիս 2 թուակիրը, այս 11րդն է որ կը դրկենք, առանց երկտող մը ստանալու: Զեզի կը թողունք դատել ձեր ընթացքը: Գէթ վստահ ըլլայինք որ բոլորն ալ ստացեր էք, Մայիսէն 23էն մինչեւ այսօր:

1.- Երէկ լուր առինք թէ Գիսակը թէեւ Ատանա վար դրած են, բայց նախարարը վերջին դիմումին պատասխանած է թէ ճար չկայ, անպատճառ Տիգրանակերտ պիտի երթայ: Միւս չորս ընկերներն ալ որ Այաշէն ճամբայ հանուած էին, կը դրկուին Տիգրանակերտ, ինչպէս անգամ մըն ալ հաստատեցինք: Երէկ էնկիւրիէն ճամբորդ մը տեսանք որ հանդիպեր է չորսին ալ, Զարդարը եւ միւսները հազիւ կրցեր են հասկցնել թէ «մեր վիճակը շատ գէշ է, գացէք պատրիարքին ըսէք դրամ դրկել տուէք, եւն.»:

2.- Ինչպէս կը տեղեկանաք այս թերթէն ալ, առջի օրուան 21 մահապարտները — հնչակեան զոհերն են: Շատերը լաւագոյն տղաք. այլեւս հնչակեան ոչ մէկ ուժ կը մնայ հոս, բացի Հմայեակ Արամեանցէն, որ ազատ կը պտտի եւ տեսակ մըն ալ կը յոխորտայ իբրեւ թէ ոստիկանապետ, զինուորական ատեան եւն. շատ մտերմօրէն կը վարուին եղեր իրեն հետ...: Նոյնիսկ օրաթերթի արտօնութիւն ստացեր է, այս սեւ օրերուն երբ եղած հայ թերթերուն վրայ ծուռ կը նային: Կը պատմէ եղեր որ ամէն օր ոստիկանութեան ներկայանալու ստիպուած է, բայց չորս հոգիի մասին խոստովանութիւն ըրած ըլլալով աւելի չեն նեղեր...: Ամէն պարագայի մէջ այս բախտախնդիրին պարագան շատ կը զարմացնէ մեզ եւ

լուրջ պատճառներ ունինք զինքն ալ դասելու Արշաւիր Եասեանի՝ ծանօթ սրիկային տեսակէն: Այս վերջինը, որ համարձակ կը պտտի, ներկայ եղած է մահապարտներու բոլոր դատավարութեանց, իբրեւ ամբաստանող. կ'իմանանք թէ մեր կալանաւորներուն թուղթերու գործն ալ իրեն վստահուած է^{122գ}:

Ինչպէս կը լսենք, ուրիշ մահապարտներ ալ կան դեռ, հայ եւ թուրք խառն:

Երեք օր է ի վեր, Սեբաստիայէն հասած նամակները թուրքերէն են: Միւս կողմէ լուր առինք որ նորէն 8-10 [հոգի] կախեր են հոն, Սուրէնի գիւղը եւ ուրիշ մը վառեր են¹²³ եւն.: Մենք ստոյգ լուր մը չունինք: Նամակի կը սպասենք:

Մէկ երկու օր է ի վեր շատ մը անուաններ կը հարցնեն: Քանի մը հոգի ձերբակալուած են արդէն: Արամ Յակոբեանը փնտուած են: Երէկ ալ Արշաւիրը հարցուցեր են իր բնակած տունը (հօրենական): Բոլոր նշաններէն կ'երեւայ որ կարգ մը ճշդումներ կատարելէ յետոյ 300 հոգինոց նոր ցանկը պիտի հաւաքեն en flagrant délit...¹²⁴

Եթէ բացառիկ նիւթ մը չունենանք այլեւ չենք գրեր ձեզի, մինչեւ որ պատասխան ստանանք եւ ապահովենք թէ կանոնաւորաբար կ'ընդունիք մեր բոլոր գրածները: Միշտ փոխնիփոխ կը գրենք երկու հասցէներուն եւ գրեթէ միշտ այս թերթով, որ շատ յարմար է:

Սպասելով ձեր լուրերուն,

Ընկերական բարեկենդանի
Առժ[ամեայ մարմին]
ԱՐՇԱԻՐ

Յ. Գ.— Տիկին Գիսակը 10 ոսկի ուզեց իր ամուսնին դրկելու: Միւսներուն ալ պէտք է դրկել ի հարկին. ասոնք առ ի տեղեկութիւն:

Ներփակ թերթով կը ստանաք թղթակցութիւն մըն ալ, որ ծրդն է կարծենք. եթէ կարեւորութիւն մը չունին ձեր թերթին համար, դադրեցնենք:

ՆՈՅՆ

122բ.- Միքիլիան Օզանեան, Պալքան ուղարկուած կուս. գործիչ, որ ապա պիտի անցնէր Ամերիկա:

122գ.- Զինադարարէն ետք մատոնիչ Արամեանց ահաբեկուեցաւ Պոլսոյ մէջ դաշնակցական Արշակ Մուշեղեանի կողմէ (Եգիպտ Արշակ):

123.- Մուրթնը՝ Սեբաստացի Մուրատն է, գիւղը՝ Կովտուն:

124.- Ֆրանսերէն՝ յանցանք գործելու պահուն:

Փաստ. 958ա-3

37.- ԿԻԼԻԿԵԱՆ ԱՂԵՏԸ

Յուլիս 5 [1915]

Զէյթուն, Ալապաչ, Ֆունուզ, Կոկիսոն, իրենց գիւղերով, Կապան, Եարփուզ, Շերեքլի, Ալախստան բոլորովին դատարկուած են: քսան հազարէ աւելի հայեր ցրուած են արաբներու մէջ:

Թուրք գաղթականներ գրաւած են հայերու տուները, մշակուած պարտէզներն ու այգիներ, արտերն ու ագարակները: Հայերու հազարաւոր լիրանոց կալուածները ըստ հաճոյս գնահատուելով թուրք գաղթականներու անուան քերազ կ'ըլլայ [?] փոխարէն հայերուն տալով անմշակ, անջրդի անապատ տեղեր:

Քիլիսցի, ուրֆացի, տիգրանակերտցի, մարաշցի եւ սուէտացի հայ ամեկէներ Օսմանիյէ-Հալէպ ճամբուն վրայ աննկարագրելի թշուառութեան մէջ կ'աշխատին. կառավարութիւնն ալ միայն որոշ չափով անմարսելի հաց կու տայ:

Հալէպի մէջ հայ եկեղեցիին բակն ու դպրոցները բիւրաւոր գաղթականներով — հարուստ, աղքատ, վարժապետ, աշակերտ — ծայրայեղ թշուառութեան մէջ խճողուած են: Տեղահաններու կարաւանները քաղաքներէն ու ավաններէն դուրս, կիզիչ արեւի տակ, անջուր տեղեր կը կանգնեցնեն ժամերով, օրերով: Քալէրու տանջանքէն ու սնունդի պակասութենէն, մայրերը իրենց ծծկերները եւ երբեմն 1-2 տարեկան երեխաները ճամբան կը լքեն: Գաղթականներուն, իրենց բոյնէն մեկնելու ատեն, միջոց չի տրուիր նոյնիսկ փոխնորդ վերցնելու: Հազարաւոր լիրաներով կալուած, տուն, ագարակ, կարասիներ ունեցողները կը հեռացուին աւանց թոյլ տալու որ գրաստ վերցնեն, եւ օտարութեան մէջ մեթալիկի կարօտը կը քաշեն, որովհետեւ իրենց ապրանքը թողուցած են նոր տէրերուն: Շատ դրացի թուրքեր, վստահ որ ապրանքը իրենց պիտի մնայ, չեն գներ ապրանքը, ըսելով որ գեաւուրէն ապրանք գնելը արգիլուած է. շատեր ալ առիթէն օգտուելով 100 դահեկան արժող ոչխարն ու այծը 10-15 դրուշով կը գնեն. 20 ոսկի արժող ձի եւ ջորին 5 ոսկիի իսկ չի ծախուիր. տնական եզն... հազիւ 4 դրուշի կ'առնեն:

Մայիս 5-էն սկսած Հալէպ հասած գաղթականներն են.— Տորթ-Եօլէն 318 տուն (805 այր, 758 կին) — 1563 հոգի: Էօզէրլիէն 42 տուն (113 այր, 113 կին) — 226 հոգի: Օճաքըլէն 72 տուն (172 այր, 159 կին) — 331 հոգի:

Ընդամենը երկու հազար քսան հոգի:

Այս երեք գիւղերը ընդհանրապէս Տորթ-Եօլ անու-

նով ծանօթ են եւ 1500 տուն բնակիչ ունին: Կը կարծուի թէ տակաւին ուրիշներ ալ պիտի գաղթեցնեն: Իրենց տուած զինուորներու թիւը 500-ը կ'անցնի:

Հասան-Պէյլիէն ցարդ հանուած են	187 տուն	— 1118 հոգի
Մարաշէն 8 տուն		— 67 հոգի
Կարս-Փազարէն 6 տուն		— 35 հոգի
Հաճընէն ամսի 2-ին ելան 70 տուն		— 495 հոգի
Ընդամենը՝		1715 հոգի

Հաճընցիք 12 օրուայ տաժանելի ճամբորդութենէ անճանաչելի դարձած են: Ատանայի վայրն ըսած էր կաթողիկոսին թէ Հաճընէն եւ Հասան Պէյլիէն ռումբ եւ զինանիւթ գտած են: Սակայն կաթողիկոսը երդմամբ հարցուց եւ հայերը հաւաստեցին որ այդպիսի բանէ մը լուր չունին եւ երեսը տեսած չեն: Հաճընէն երեւան հանուածը միեւնոյն երկու հատ երկաթէ գնդակ է, որոնք եգիպտացի Իպրահիմ փաշայի օրէն մնացած են եւ կը գործածուէին իբրեւ կշիռի չափ: Տինամիթ ըսուածն ալ ձուկ որսալու համար է. հրապարակը կը ծախուին:

Հաճընէն ղրկուած ժանտարմըրիի հրամանատարը Ազնի պէյն է, որ գալով կը յայտարարէ որ «եկած էր մեռնելու կամ մեռցնելու»: Ահագին քանակութեամբ գէնք, ռումբ եւ տինամիթ կը պահանջէ. կը յանձնեն 80-ի չափ գրա եւ գրմաճան [?], մի քանի հատ չիֆթէ եւ չախմախլի, ատրճանակ եւ դաշոյն:

Կը բանտարկեն 100-ի չափ երեւելիներ. կը խոշտանգեն եւ կը ծեծեն նոր գէնքեր ուզելով. յետոյ յաջորդ օրը կ'աքորեն: Առանց Հալէպ հասնելու Զէյթունէն եւ գիւղերէն ղրկուած են Պապ 322, Մունպուճ 90, Իտլիպ 195, Րիհա 110, Մազարա 200, մնացած գէյթունցիները, կոկիսոնցիները, ալախստանցիները, եարփուզցիները, մօտաւորապէս 20000 հոգի, ղրկուած են Տէյր-Չօր, որ Հալէպէն 600 քիլոմետր հեռու է:

Պաղտատէն եկող գերմանացի ճամբորդ մը մինչեւ Անայի մօտ [որ] Տէյր-Չօրէն 300 քիլոմետր հեռու է, գէյթունցի տեսած է անօթի, ծարաւ:

Փաստ. 882-23

38.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԷԻՆ

Կ. Պոլիս, 6 Յունիս [1915]

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Յունիս 4 թուակիր զոյգ թերթը. ստացանք ձեր Յունիս 1 թուակիրը, 29 Մայիս չէ հասած մեր ձեռքը: Ինչպէս եւ 15 Մայիսը: Մայիս 24 թուով չենք գրած ձեզի: Ստացա՞ք 16 եւ 18 թուակիրները:

Ընկերներ, օրերով անհամբեր սպասելէ յետոյ, ստացանք նամակ մը որ բոլորովին յուսախաբ ըրաւ մեզ: Կամ այն է որ ուշադրութեամբ չէք կարդար մեր գրածները եւ կամ ձեր քարտուղարը կը մոռնայ գրել ամէն բան: Իրարու ետեւէ տասը նամակ գրելով, տասը տեսակ ցաւ ներկայացուցած ենք ձեզի: — Ձեր միջոցաւ խորհուրդ կ'ուզենք, լուսաբանութիւն կ'ուզենք, ամբողջ Դաշնակցութեան կամքը իմանալ կ'ուզենք եւ դրամ կ'ուզենք, դուք կը գոհանաք մեզի երկու խօսք ընելով, եւ թերթերու քաղուածքներով կը փակէք նամակը: Առնենք միայն դրամի խնդիրը: Աւելի քան մէկ ամիս առաջ, դուք ինքներդ 7-800 ոսկի կը դնէիք մեր տրամադրութեան տակ. նախ յայտնեցինք որ պէտք չունինք բոլորին, յետոյ Գիսակին հետ խորհրդակցաբար, որոշեցինք մաս մաս փոխադրել «ի նախատեսութիւն» եւ տուինք հասցէներ: Գիսակը դեռ հոս էր, ոչինչ չգրեցիք. ան գնաց, նորէն ակնարկ մը անգամ չկայ ձեր նամակներուն մէջ, չնայելով որ հասարակ շուկայի դառնալու աստիճան կը յիշեցնենք, ամէն նամակի մէջ: Ձեզի ներկայացուցինք հաշիւներն ալ, հարցնելու համար որ միայն տարագիրներուն եւ անոնց ընտանիքներուն օգնելու համար առնուազն 50-60 ոսկիի պէտք կայ ամէն ամիս: Ձենք խօսի՛ր ի հարկին երկիր ղրկելու, տեղական ուրիշ պէտքերու եւ ծայրայեղ պարագաներու համար: Երկու շաբաթ է որ Տոքթ. Փաշայեանը 60 ոսկի ուզած է, եւ մենք հազիւ 20 կըրցանք ղրկել, որովհետեւ մեր քով ամէնը հազիւ 60 կայ:

Ընկերները մաս մաս ճամբայ կը հանուին դէպի ներսերը. վաղը բոլորն ալ հեռագիրներով դրամ պիտի պահանջեն իրենց նոր վայրերէն: Ընտանիքները մեզի յառած են իրենց աչքերը: Այնքան հոգեկան տառապանքներու մէջ, այս նիւթական մտահոգութիւններն ալ տանիլ՝ մեր ուժերէն վեր է, եւ վաղը կընայ ստիպել մեզ ձեռնթափ ըլլալու: Այն ատեն ձեզի կը մնայ ճշդեղ պատասխանատուութիւնները, երբ մանաւանդ կացութիւնը օրէ օր կը պղտորի եւ թերեւս մենք ալ հարկադրուինք խոցէն դուրս չելլել, եթէ երբեք յաջողինք: Դառնացած սրտով կը գրենք այս բոլորը եւ չենք գիտեր թէ ուրիշ կերպ պիտի կրնա՞ր արտայայտուիլ Մարմին մը, որ իրերու զօրութեամբ, ամէն բան ըլլալու յաւակնութիւնն ունի, որ պիտի խորհի Պոլսոյ մասին, երկրի մա-

սին, նորանոր աղէտներու մասին, որ իւրաքանչիւր 24 ժամն անգամ մը սեւ լուրեր հաղորդելու պաշտօնն ունի, մէկ խօսքով, կքեր է ահաւոր պատասխանատուութեան բեռին տակ, եւ այս բոլորէն յետոյ կը մնայ ձեռքը ոտքը կապուած թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս, մնալով պարզ սուրհանդակի դերին մէջ...

Հազար անգամ նախընտրելի է Այազ գտնուիլ քան մեր դրութեան մէջ, ընե՞լ թէ չընելու, լինե՞լ թէ չլինելու ահաւոր հարցականը միշտ աչքի առջեւ: Ձեզի կը թողունք դատել այս բոլորը, եւ մեղադրել մեզ եթէ անիրաւ ենք: Այժմ կ'անցնինք ընթացիկ կեանքին, որ աւելի քան երբեք յուսահատական է:

Օրուան լուրերէն.— Շահագոյն ալ կը հեռագրէ որ ճամբայ հանուած է դէպի Էնկիւրի, ուրիշ խօսքով՝ Տիգրանակերտ: Ինչ խօսք որ Շամիլը, Շահրիկը, եւն պիտի չուշանան նոյն ճամբան բռնելու: Զարդարը եւ Խաթակը երկտող մը հասցուցած են Էրէջիէն Գոնիա, ծանուցանելով որ Տիգրանակերտ կ'երթան: Այս դժբախտները %95 կորսուած են մեզի համար: Երէկ Ռումանական դեսպանատունէն վախ կը յայտնէին որ կըրնան սպաննել կամ կախել: Միեւնոյնը կը զգուշացնէ թէ աւելի ծանր հալածանքներ պիտի սկսին, թէ պէտք չէ շատ երեւնալ, թէ նոր ձեռքալուծման պիտի ըլլան, եւն: Իսկ Ամերիկեանը բոլորովին յուսահատեր է. ինչպէս ըսինք, առջի օր դպրոցական հանդէսի մը առթիւ — կրկին եւ կրկին յայտներ է որ ինք տրամադիր է որեւէ ձեռով օգնելու, բայց իր դիւանագիտական միջոցները սպառած են: Կը խնդրէ միջոց ցուցնել որ գործէ: Թելադրուեցաւ դիմել Ուիլսոնի¹²⁵ եւ հրահանգ պահանջել նոր փաստերը ներկայացնելով: Միւս կողմէ, ստիպողաբար կը խնդրենք որ դուք անմիջապէս կարելին ընէք, նախագահ Ուիլսոնի վճռական դիմում մը կատարել տալու համար, որպէսզի պատուիրէ իր դեսպանին որ այլեւս սպառնական թոնով խօսի Բ. Դրան հետ: Ձենք գիտեր, վերջապէս ըրէք ինչ որ պէտք է ամբողջ մտաւորականութեան մը, եթէ ոչ բովանդակ հայ ժողովրդին կեանքը վտանգի մէջ է եւ մէկ օրէն միւսը աղէտը կընայ պայթիլ: 21 հոգիի կախաղանը¹²⁶ պարզ յառաջաբան մըն է միայն, եւ մեր բոլոր օտար ազգի բարեկամները աւելի յուսեան են քան մենք: Այսօր զրոյց կար թէ Մուրատը եւ Ներսէս Զաքարեանն (հնչակեան) ալ կախեր են Կեսարիոյ մէջ, թէ Վանը վերագրաւուեր է. չկըրցանք ճշդել: Ամերիկեանը Էնվերի մտերիմ բարեկամն ըլլա-

125.- Ուիլսոն – Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ:
126.- Ակնարկութիւն հնչակեան գործիչներու կախուելուն:

լով, խնդրեցինք որ երթայ խօսի մերոնց կեանքի ապահովութեան մասին: Խոստացաւ, միւս կողմէ, կը ջանանք Գ. յիշատակագիր մը տալ մեր բարեկամներուն, միշտ ձեր ստորագրութեամբ, ներկայացնելով 21 հոգիի կախաղանի պարագան, եւ կեանքի ապահովութիւն պահանջելով միւս տարագիրներուն համար: Այս մահապատիժը այնքան ազդած է ամէնուն վրայ, որ մեր ընկերներէն շատերը եկան կտրականապէս արտօնութիւն խնդրել՝ գործելու, նոյնիսկ անհատապէս: Ամբողջ դրութիւնը ներկայացնելով, համոզեցինք որ համբերեն, բայց չզգիտենք մինչեւ երբ պիտի կրնանք համբերել բոլորս ալ, մենք կամ դուք...

Ի՞նչ կը կարծէք, յարմար է 20-30 հոգինոց թուուցիկ խումբ մը ղրկել Վիշապաձորի⁶³ կողմերը, մեր հոն ուղարկուած ընկերները (Ակնունին եւն) փրկելու նպատակով: Դուրան-Բարձրաւանդակի¹³⁰ չի՞ կրնար օգնել:

127.- Դուրան-Բարձրաւանդակը Տարօն-Սասունն է:
128.- Քոթոթ՝ ծածկանուններէն մէկը Ռոստոմի. Համոն՝ Օհանջանեան Համազասպ, կրնայ ըլլալ նաեւ Սրտանձտեսանց Համազասպը:

Թելադրութիւն մըն է որ մեր յուսահատութենէն կը բխի եւ զոր ձեր ուշադրութեան կը յանձնենք: Միւս կողմէ կը կարծենք թէ Թիֆլիսը շատ հեռու է ամէն անգամ խորհուրդ հարցնելու համար, եւ տեսակ մը արտասովոր Մարմին եթէ ոչ Բիւրօ, պէտք է գտնուի ձեր քաղաքը, ժամ առաջ հրահանգ տալու, ստանալու համար: Ձեզմէ հեռագիր առած չենք Քոթոթի կամ Համոյի մասին¹³¹, դրամը, 500 ոսկիի 200ը Թ. Ս., 400ը Փեթ[րով]ի անունով ղրկեցինք այս նամակի հասած օրն իսկ:

Ընկ. բարեկներով՝ Առժամեայի կողմէ
ԱՐՇԱԻԻՐ

Յ.Գ.- Ռուզանը⁴⁸ չափազանց վշտացեր էր եւ հագիւ համոզեցինք. Երզնկա դրամ ղրկելու բիսկը չեն կրար ստանձնել, մենք հասցէ չունինք: Պատրիարքարանը կը փորձենք, բայց ան ալ մեզի չափ անճար է, մանաւանդ որ ամբողջ ժողովուրդը, ծեր, մանուկ եւն, բոլորն ալ պարպած են, ինչպէս գիտէք:

ՆՈՅՆ

Փաստ. 882-24

39.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 8/21 Յունիս [1915]

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Յունիս 6ի նամակը, նոր լուր չունինք ձեզմէ. չենք ստացած 29 եւ 15 Մայիս թուակիրները: Ձեզի հասած մեր 27 թուակիրը:

1.- Երէկ Տոքթ. Փաշայեանը կը գրէ որ Ջարդարեանը կէս ճամբէն հեռագրած է իրենց դրամ ղրկել: Կը պատուիրէ 50 ոսկի անմիջապէս ղրկել Տիգրանակերտի առաջնորդարանը. կը սպասենք ձեր հրամանին: Անոնք միշտ կը յիշեն Ազատամարտի դրամը, բայց մենք ալ յոյս չունինք ատկէ: Պատրիարքը պիտի դիմէր, տակաւին իր խնդիրներուն համար անգամ չկրցաւ ունկնդրութիւն ստանալ: Կը խնդրենք ճշգրիտ նաեւ թէ ո՞ր ընտանիքներուն պիտի դրամ տանք եւ որոնց ոչ: Այս խնդիրը փափուկ հանգամանք մը կ'առնէ կոր: Այսչցիները Ազատամարտի դրամին վրայ հաշուելով ամսական 35 ոսկիի բաշխում մը կատարած են. հիմա ուրիշներ ալ կան, որ կ'ուզեն, իսկ մեր միջոցները սպառած են եւ ձեր ղրկելիք գումարներն ալ չզգիտենք ինչպէս պիտի կարգադրէք:

2.- Երէկ բաւական լաւատեղեակ շրջանակէ մի իմացանք որ Բարձրաբերդի⁴⁹ ամբողջ ժողովուրդը ապստամբեր եւ քաղաքը կրակի է տուեր?: Յետոյ թէ՛ Կարնոյ թուրք ժողովուրդը բողոքեր է հայերու բռնի տեղափոխման դէմ, դիտել տալով, որ թշնամին ալ նոյն հարուածով պիտի հարուածէ գիրենք: Մոռցանք յիշելու թէ

երէկ Կարինէն նամակ մը ստացանք Մայիս 2 թուակիրը: Կը նկարագրէ գիւղերու բռնի տեղափոխումը. հայերու տեղ կը լեցնեն մուհաճիւրներ՝ թշնամիին յառաջխաղացեալ գիծերէն: Քաղաքն ալ պարպել սկսած են ամենալայն կատաղութեամբ: Չորս ընկերներ աքսորուած են, հաւանաբար ուրիշներ ալ կան: Իթիֆհատին շէֆերը հոն են նորէն. Սէյֆուլլահ, Հիւմին եւ Պէհազէտտին ալ կը սպասուի: Հայերու մէկ յոյսը թուրքերն են եղեր, որոնք մտածելով իրենց ապագան, թերեւս միջամտեն, կ'ըսէ նամակագիր ընկերը: Բասենը տրորուած տափաստան մը դարձեր է: Ուրիշ կարեւոր բան մը չկայ այս միամտեայ նամակին մէջ, որ չզգիտենք ինչու այսքան ուշացեր է եւ որ հաւանաբար վերջինն է:

3.- Նոր ցուցակի պատրաստութիւնը խստութեամբ կը շարունակուի, մանաւանդ Գում Գաբուլի կողմերը կը ջանան յանկարծակիի բերել, առ այժմ հատ հատ հաւաքելով: Ուրիշ կարեւոր բան մը չկայ այժմ: Անհամբեր կը սպասենք ձեր լուրերուն: Տարագիրներու ընտանիքները քանի մը օրէ ի վեր չափազանց մտահոգ են եւ մենք հագիւ կը յաջողինք սփոփել խաբուսիկ խոստումներով: «Ի սէր Աստուծոյ, ճար մը»,— Ահա իրենց սովորական արտայայտութիւնը, ամէն անգամ որ մէկուն հետ կը տեսակցինք:

Ընկ. բարեկներով
Վիշապեանի կողմէ
ԱՐՇԱԻԻՐ

Փաստ. 882-25

40.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵՂԻ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 10 Յունիս 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր 8 թուակիրը, ստացանք ձեր 4ը, Յը չենք ստացած, այս երրորդ նամակն է որ կը կորսուի: Վերջին 2ը՝ Օր. Ս.ի հասցեով. կը խնդրենք այլևս ոչինչ չղրկել այս հասցեին, այլ միայն գործածել N° 1 եւ 4 հասցէները (երկուքն ալ յոյն), նաեւ հետեւեալ հասցէն՝ հայերէնի համար եւ առեւտրական բովանդակութեամբ (կերպաս, դերձակ, հագուստի ապսպրանք եւն.) Mr Archag Torossian, app. Saraffoglou N° 3 (Minerva) Pera: Յանձնելի եւն. չ'ուզեր, ոչ ալ ուրիշ անուն:

Ընկերներ, լուրերը միշտ տխուր են եւ շատ բնորոշ: Երկու օրէ ի վեր Տիկին Շահպազը կը փնտռեն. երէկ Տիկին Գիսակին բնակարանի դրան վրայ գրեր են, մանկական կեղծ գրով եւ հայերէն. «Հեռացէք այս տեղէն»: Գում Գարուի մէջ երէկ ձեռնարկեցին ձերբակալելու 60 հոգի: Բոլոր թաղերուն մէջ ալ խստօրէն կը հետապնդեն կանանց միութիւններու վարիչները (Կարմիր խաչ եւն., եւ քանի մը հոգի իրենց թաղերէն հեռացուած են արդէն: Եթէ շատ նեղեն աքսորականներու կիները, ալ ազատում չունինք: Երբ այաչցիներուն գրել պէտք ըլլայ տիկիներէն մէկն ու մէկուն տուն կու տանք հազար զգուշութեամբ: Այժմ կը խորհինք անոնց անձնական նամակներն ալ տեսնել, որպէսզի անխոհեմ բան մը չընեն:— Մենք ալ ոստիկաններ պիտի ըլլանք մեր կարգին:

Ի դէպ տիկին Սաթակը գալ կ'ուզէ, եթէ յաջողի: Տիկին Զարդարն ալ առջի օր ինքնաբերաբար յայտնեց թէ կը խորհի Ֆիլիպէ երթալ իր գաւակներով եւ միջոց ալ կը գտնէ, եթէ ծախքը հոգան: Զեզի կը հաղորդենք այս բոլոր հոգերը որպէսզի կարգադրէք ինչպէս որ պէտք է: Մեր նիւթական միջոցները արագօրէն կը սպառին, այս քանի մը օրուան միջոցին եղած պահանջներով եւ դեռ ոչինչ զրկած ենք ոչ Այաչ եւ ոչ Տիգրանակերտ, շնորհիւ ձեր մարմարեայ լուծեան... Տիկին Գիսակը անձնապէս 30 ոսկի զրկեր է իր ամուսնին, Տիգրանակերտ:

1.- Կրթական տեսուչ Դ. Գալանթարը Պրուսա տարին, յետոյ հոս բերին եւ պատերազմական ատեանը բանտարկած են իր մանկամարդ աղջկան հետ, որուն քով նամակ մը բռնուած է: Մայրն ալ, աղջիկը մինակ չձգելու համար, միասին բանտ գնաց...

2.- Կեսարիոյ մէջ, այստեղի հնչակեաններուն հետ միաժամանակ, կախեր են 12 հոգի, երեքը մեր ընկերներէն (գործիչ Գէորգ Վիշապեանը, Յակոբ Մերտինեանը եւ Յակոբ Խայրլեանը), երեք հնչակեան (Մինաս Մինասեան, Հաճի Յակոբ Զիրտոմեան [?], տղթ. Կարապետ) իսկ 6 ջոջ վաճառականներ (Կարապետ Ճամճեան, Գառնիկ Գուլումճեան, Աւետիս Զամպաքճեան, Նեվչէ-հիրլեան, Միրիճան Հաճի Արթինեան եւ Մուրատ օղլու Կարապետ): 50-60 հոգի ալ դատապարտուած են զանազան պատիժներու (101 եւ 15 տարի):

3.- Կարինէն ստացանք մնաք բարովի նամակ մը Մայիս 25 թուակիր, որ արցունք քամել տուաւ մեզի... «Երզնկա, Քղի, Բաբերդ կը չքացնեն բռնի գաղթով. Խնուսը կոտորած են: Կարինը կը դատարկեն: Խումբ խումբ պիտի քշեն: Արհեստաւորները կը պահեն դեռ պէտք ունենալով. վերջին պահուն կրնան կոտորել: Այժմ 160 տուն վաճառականներ կը քշեն, իրենց պարտքերուն ի հաշիւ ապրանք գրաւելով: Կը լսենք թէ Մուշ ոչ մի դիմադրութիւն չէ եղեր եւ Պիթիսը գրաւեր են:

Որքան ուշացանք երբ կ'ըսէինք թէ Բժիշկը դեռ խորհուրդ չէ տուած խօսելու: Գոյութեան կռիւն է որ կը մղեն մեզի դէմ: Ապուշները կը կարծեն թէ հայութիւնը մեզմով է¹²⁹ Աքսորուածներէն եւ քշուածներէն ոչ մէկ լուր: Մուսուլ կը զրկեն եղեր: Կը յիշէ՞ք գերմանական ծրագիրը երկու տարի առաջ: Հոգ չէ, մենք կ'ուզենք որ գալիք սերունդը չներէ ասոնց ոչ անմեղին ոչ մեղաւորին, եւն. եւ նամակին կարգ մը մասերը չկրցանք կարդալ: Յետոյ կը յիշէ նաեւ կարգ մը նախընթաց նամակներ, զորս չենք ստացած: Իրենք մէկ ամիսէն ստացեր են մեր նամակը: Հրաշքի պէս եղաւ, երբ երկու նամակ ալ ստացանք Մուշէն, Կոմսի գրով, 8 եւ 15 Մայիս, Արծիւի հասցեով. մէկը շատ գրգռուած է եւ հազիւ կրցանք կարդալ: Կ'ամփոփենք ստորեւ ջնջելով հինցած դէպքերը (Վանի եւն.):

Մայիս 8ի նամակը.— Թշնամին արդէն Մանազկերտ է: Կառավարութիւնը զրկեց 7-800 զօրք, անմարդ եւն, որոնց ընկերացան նաեւ Մուսա Ղասրմ իր չեթէներով, Կարինէն ալ ուժ եկաւ, ինչպէս եւ տեղացի կամաւորներ զրկուեցան: Գնացող քրտերը սրէ անցուցին Պուլանըզի այն քանի մը գիւղերը, ուր բանակ դրած էին: Տեղիս

129.- Մէկ բառի տեղ բաց ձգուած է:

կառավարութիւնը գինեց նաեւ թուրք հասարակութիւնը ի հարկին հայերու վրայ քշելու համար: Անիշխանական վիճակ է, քրտերը սկսեր են սպանել եւ թալանել:

Երէկ սպաննեցին Գոմս գիւղի մէջ 5 աշխատող գիւղացիներ: Կ'ըսուի թէ սպաննած են նաեւ 4 անձեր Դաշտի մէջ: Այս սպանութիւնները կատարած են Գոմսի մէջ սպաննուած ծանօթ քրտերու ազգականները: Երկու օր առաջ քաղաքէս կէս ժամ հեռաւորութեամբ սպաննուեցաւ Խէյպթանցի Առաքելի որդին, քիւրտ չեթալի մը ձեռքով: Տարած են քանի մը գիւղերու տաւարները կառավարութեան բողոք կ'ըլլայ, բայց անգոր է զսպելու եւ պատժելու: Կեանքի ու գոյքի ապահովութիւն չկայ, ասոր վրայ աւելցուցէք ջարդի երկիւղը: Քրտերու տրամադրութիւնը շատ փոխուած է դէպի վատը: Կը պատրաստուինք ինքնապաշտպանութեան: Յաւալի է սակայն որ ինչպէս կը լսենք, Տիգրանակերտի շրջանէն գանազան աշիրէթներ գրոհ տուած են Սասնոյ վրայ: Զանազան գիւղեր կոտորելով այժմ կը յառաջանան Տարուորիկի եւ Իշխանաձորի վրայ:

Մենք հարկադրուած ենք կասեցնել հոսանքը, հակառակ պարագային կը կորսնցնենք մեր միակ յենարանը: Սակայն այդ պարագային ալ մեր ջնջին ուժերը կեդրոնացնելով Սասուն, դատարկած կ'ըլլանք Դուրանը⁵¹, ինչ որ շատ վտանգաւոր է: Դեռ Սասնոյ վրայ եղած քրտական արշաւին բնոյթը չէ ճշդուած: Պիտի ջանանք

նախ շարժումը խղդել եւ չթողնել որ տարածուի, որպէսզի կարենանք մեր ուժերը ի սպաս դնել Դուրանի ու Շրջանի ինքնապաշտպանութեան եւ պահելու կռուանը Սասնոյ մէջ:

Թշնամու մէկ թեւը իջած է Ախլաթ եւ Արճէշ: Այդ տեղերն ալ քիւրտ չեթաներու ձեռքով եւ կառավարութեան հրահանգով ջարդուած են հայերը: ... Կը խօսուի որ ոռոս սպաներ կը վարեն Վանայ շարժումը: Պետրխանիները արդէն գործի վրայ են. նպատակ ունին գրաւել Սղերդն ու իր շրջանները: Մոտկանի մէջ եւս քրտական շարժում սկսած է, սակայն չգիտենք ինչ բնոյթ կը կրէ: Քէօր Հիւսէին փաշան եւ Ֆաթիհ պէկը (Մանազկերտ) արդէն անցեր են թշնամու կողմը: Կը խօսուի որ Խնուս եւ Վարդօ եւս դատարկած են: Վերջերս Խնուսի եւ Կարնոյ մէջ խոշոր չափով ձերբակալումներ եղան հայ երեւելիներու: Սապահէտտինի եւ Շերիֆ փաշայի շարժումը տեղումդ ստո՞յգ է եւ որքան յաջողութիւն կը ներկայացնէ. գրեցէք իսկոյն:

Ընկերներ, ներփակ թերթով կը ստանաք նաեւ Մայիս 15ի նամակը, զոր հազիւ կրցանք կարդալ:

Բարեկներով
Վիշապի կողմէ
ԱՐՇԱԻԻՐ

Ստացուած 15 Յունիս

Փաստ. 882-14

41.- ՏԱՐՕՆԵՆ ՆԱՍԱԿ ՍԱՅԻՍ 15 ԹՈՒԱԿԻՐ

20 օրէ ի վեր ոչ նամակ կը ստանանք ձեզմէ եւ ոչ ալ թերթ: Կը կասկածինք, որ կառավարութիւնը ձեզ եւս յանկարծակիի բերէ եւ ձերբակալումներ կատարէ, ինչ-պէս ըրաւ Կարին, Տիգրանակերտ: Քանի մը օր առաջ առինք Վահաբի սպանութեան լուրը: Ըստ ոմանց, նրան կը սպաննեն Բաղէշի եւ Սղերդի միջեւ: Ըստ կառավարութեան, ընկերները կը փորձեն փախցնել նրան: Ձերբակալման պարագան գիտէք արդէն...

Քիւրտերը այժմ բանակներ ունին, Պոլսանը՞ 6-700, Դատուան նոյնքան, Վանի կողմերը, Չուխուր, Կետիկ նոյնքան: Թուրքերը մեծ ուժեր չունին թշնամիին դիմաց: Օրերս կը սպասուի մեծ կռիւներու: Քրտերու բանակները, երբ հարկադրուած կ'ըլլան նահանջելու, կը ջարդեն տեղի հայերը: այսպէս ջարդած են Պոլսանը՞ի 6-7 գիւղերը, Ախլաթի, Արճէշի եւ Ալջաւազի գրեթէ բոլոր գիւղերը: Երէկ լուր առինք որ ջարդած են նաեւ Դատուանի եւ Ուրտափի եւ Բաղէշի շրջակայ հայ գիւղերը: Արդէն հայ «մուհաճիւրներու» խմբերը երեւցան մեր դաշտը, Ալջաւազէն, Ախլաթէն... բայց զարմանալի է, որքան կրցանք ստուգել, որ Մուսա բէկը իրան լաւ կը պահէ: Մէկ եղբայրը թողեր է Չուխուրը պաշտպանելու, իսկ ինքը Պոլսանը՞ի մէջ չէ մասնակցած ջարդին: Այդ բոլոր ջարդերէն քաջալերուած, Մշոյ դաշտի հիւսիս արեւելքի քրտերը սկսեր են մասնակի թալան, ջարդ... Որքան կարելի է առաջը կ'առնենք: Խուլփ-Փսանքի վրայ ալ մէկ քանի գիւղերու մնասած են քաղուորները [?]: Մեր խմբերը արագօրէն հասնելով, տարածուելուն արգելք եղած են: Միւթասարը՞ին ձեռք առած միջոցները առայժմ կասկածելի չեն: Այն կողմ ոստիկաններու խմբեր կը դրկէ, թալանները ետ առնել կու տայ եւայլն: Անկեղծ է թէ ոչ, չենք գիտեր:

Սլաքէն¹³⁰ նամակ առինք: Տասնեակ հազարաւոր թուրք մուհաճիւրներ լցուած են հոն (Բաղէշ), իբր թէ Պոհթան ապստամբած է եւ կը քայլ Սղերդի վրայ, իբր թէ բազմաթիւ քրտեր կան թշնամու բանակին հետ՝ իբր յառաջապահ: Քանի մը օր առաջ, Մանազկերտում սպաննուած յայտնի Աւտըլ Մեծիտի աշիրէթը (6-7000 հոգի) փախած եւ տիրած է Չուխուրի լեռները: յարձակած են Մուշաղչէնի վրայ, աւերել, թալանել, սպաննել են եւ այրել եւ այժմ գիւղին տէրն են: Մուսայի եղբայրը վրայ կը հասնի եւ առաջը կ'առնէ աւելի մեծ աղէտի մը: Մեծ ահաբեկում կայ ամբողջ ժողովուրդին մէջ: Սկսած են փնտռել քրտերու պաշտպանութիւնը, որ մեծ հաճոյքով ընծայուում է նրանց պէյերու կողմէն, որոնք

իրենց կորսուած իշխանութիւնը ձեռք կը բերեն: Չուխուրի ամէն գիւղում 3-ական նէօպէտիներ¹³¹ դրել է Մուսա պէկը...

Սարսափելի լուրեր են գալիս Տիգրանակերտէն: Քաղաքի մէջ մասնակի ջարդ եւ յայտնի մարդոց ձերբակալումներ, իսկ գիւղ, աւան չէ մնացել: Ժողովուրդի գէնքերը հաւաքեր եւ ձերբակալեր, եւ սպաններ են դաշնակցական համարուածները:

Կառավարութիւնը թէ հոս եւ թէ Բաղէշ, ասկէ առաջ կանոնաւոր գէնքեր բաժանեց թուրքերուն (18-էն վեր, 45-էն վար): Այս օրերս քաղաքս կատարեալ կռուի դաշտ է դարձեր: Ժողովուրդի գէնքերը տրուած են Կէնճէն եկող մոլլա Կոփա? շէյխին, որ մօտ 1000 հոգիով գնում է պատերազմի: Ինչ որ շատ ցաւալի է, եւ մեզ կաշկանդող, չկրցանք յարաբերութեան մէջ մտնել Վիգէն-եանի¹³² իր հետ, որ մօտ է, հակառակ անոր որ միջոցներ փորձեցինք եւ կը փորձենք: Մեր ներկայ վիճակը սակայն ծանօթ է անոր, քանի որ մեր քանի մը ընկերները, որոնք Պոլսանը՞ էին, գացեր են անոր մօտ: Վիգէնը, որ կը թուի թէ աւելի հնարաւորութիւն ունի, կարծես չի փորձեր ինքը յարաբերութիւն հաստատելու:

Այստեղ կու տայ լուրեր Վանէն ու Կարիսէն, որ ծանօթ են արդէն: Յետոյ կ'իմացնէ, որ զբաղած են ջարդի դէմ ապստամբութեանց, թէւ ուժերը թոյլ են: Կոմսը կիսապիսխարստական է: Եթէ այս կողմի պատերազմի բախտը արագօրէն վճռուի, Դուրանն ալ արեան թատր պիտի ըլլայ:

Ընկերներ!

Գրեցէք թէ Մուշ եւ Պիթիս [ուսները] գրաւած են թէ ոչ, ինչպէս կ'իմանանք: Յետոյ մինչեւ այսօր չիմացուցիք Վանի մէջ մեր կորուստները: Քանի օրէ ի վեր կը խօսուի նորէն, թէ Վանը ետ աւեր են, թէ եւ չենք ուզեր հաւատալ: Օրը օրին իրագեկ պահեցէք մեզ: Յետոյ նորէն գրեցէք կորսուած նամակներուն բովանդակութիւնը, եթէ կարելոր բաներ կան: Կը վախնանք, որ հասցէի սխալով կորսուած ըլլան Օր. Ս.ի երկու նամակները:

Նամակը վերջացնելու պահուն, կ'իմանանք, որ վերջին օրերս 60 հոգի կախուած են: Չգիտենք ուր. (20 Պոլիս, 12 Կեսարիա, իսկ միւսները):

Տարտանէլէն թշնամին ուժգնօրէն քշուեր է եղեր դէպի ծովեզերք, Լեմպերկը գրաւուած... ա՛լ ի՞նչ մնաց պակաս...

Ընկ. բարեկենդանով
Հ.Յ.Դ. Վիշապի կողմէն՝ ԱՐՇԱԻԻՐ

130.- Սլաք – հին յեղափոխական գործիչ Արմենակ Օխիկեան:
131.- Պահակներ:

132.- Վիգէն-եան. Վիգէն ծածկանունն էր բժիշկ Յ. Չարեանի: Հոս հաւանաբար գործածուած է ռուս զօրքերու կամ հայ կամաւորական գումդերու մասին, որոնց շուտափոյթ հասնելուն կը սպասէին:

10 Յունիս
Ստացուած 15 Յուլիս

Փաստ. 882-26

42.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 15/28 Յունիս 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Յունիս 12 թուակիրը, Յունիս 4էն ի վեր նամակ չունինք ձեզմէ, չնայելով որ այնքան ստիպողական խնդիրներ յանձնած էինք ձեր ուշադրութեան. ինչպէս կ'երեւայ դրամի մասին մեր բոլոր գրածները ձեզի համար կը մնան «ձայն բարբառոյ յանապատի»: Մի ցաւիք որ այս ոճով կը խօսինք, չափազանց վրդովուած ձեր անմեկնելի լռութենէն: Ահա երեք շաբաթ է որ ոչ Այաշ կրցանք դրկել պահանջուած գումարը, ոչ Տիգրանակերտ, իսկ տարագիրներու ընտանիքները համարեա կը մնան իրենց բախտին, մէկէն միւսէն փոխ առնելու վիճակին մէջ...: Տակաւին չենք գրեր ծրագրուած գործերու մասին, որոնք կէս ճամբան պիտի մնան այս ընթացքով: Ուրիշ խնդիր, եթէ որոշած էք մեզ նկատել պարզ լրատու մեքենայ, այս պարագային թերեւս մեր վերջին գրութիւնն ըլլայ այս:

Կ'անցնինք ընթացիկ լուրերուն, որոնք աւելի քան երբեք սեւ են:

1.- Երեք չորս օրէ ի վեր Պոլսոյ բոլոր թաղերուն մէջ սկսած են գրել գաւառացիները եւ պոլսեցիները, մանրամասն, մասնաւորապէս շեշտելով Պոլիս ծնած ըլլալը: Ինչպէս հաստատեցինք զանազան աղբիւրներէ, այս պատրաստութիւն մըն է բոլոր գաւառացիները քշելու, պանդուխտ թէ ընտանիքով: Արդէն իսկ Պոլսոյ մօտակայ քանի մը գիւղերէն (Ալէմտաղի) քշեր են դէպի Նիկոմիդիա, իսկ Պարտիզակի շրջակայ գիւղերն ալ կը պարպեն մաս մաս: Միեւնոյն ծրագիրն է որ կը գործադրուի կայսրութեան մէկ կողմէն միւսը: Ոստիկանները տեղ տեղ կը քնացնեն, բայց շատ տեղեր ալ որոշապէս կը հասկցնեն ըլլալիքը. այս պարագաները նկատի առնելով, մենք արդէն իսկ սեղմ շրջանակի մէջ մտքերը կը պատրաստենք խաղաղ ընդդիմութեան մը. «ճամբան կոտորուելուն, հո՛ս կոտորեցէք մեզի»: Կը խորհինք Ձաւէնին ալ ազդարարել այս իմաստով, եւ վերջին պահուն թռուցիկ մը հանել:—

Այսօր Միտհաթ Շիւքրին (Իթիթի[հատի] ընդհ. քարտուղարը) պատրիարքարան գնաց ու մէկուկէս ժամի չափ տեսակցեցաւ: Քիչ վերջը պիտի տեղեկանանք. եթէ հասնի այս թերթով իսկ կ'իմացնենք էութիւնը: Սա չափը իմացանք որ մեկնած ատեն Ձաւէնը ըսեր է. «Այս բաները ըլլալու չէին»: Կը վախնանք թէ հաշտարար

տրամադրութենէ մը աւելի այս ուշադրաւ այցելութիւնը կ'ըլլայ նախապատրաստելու համար չարագուշակ աղէտ մը: Այսպէս երէկ դարձեալ կարեւոր թուրքէ մը լսեցինք որ բացարձակապէս որոշուած է կախել ոչ միայն Վարդգէսն ու Զօհրապը, այլեւ Շահրիկը, Խաթակը, Զարդարը, Ակնունին, Շամիլը, Ս. Մինասեանը եւ Ճանկիւլեանը (7 մեր ընկերներէն): Միւսներուն մասին ալ պիտի խորհին եղեր... ինչպէս կ'երեւայ ոչ մէկ քայլի առջեւ կը տատանին այս գազանները, իսկ մենք տակաւին կը սպասենք որ բոլորովին փետրաթափ ազուաւի վիճակին իյնանք: Կը խնդրենք կարճ կապել արտատու պոլսեցիները եւ գրել այս կենսական հարցերու մասին, քանի ժամանակ կայ: Երէկ Արշաւիրին տունը խուզարկեցին, հայրը բանտարկեցին, լուսանկարը պահանջեցին ու հեւիհեւ կը փնտռեն: Հայրը չարաչար ծեծելով խօսք առեր են մինչեւ Զորեքշաբթի գտնել յանձնելու...: Անշուշտ կարելին պիտի ընենք ձեռք չիյնալու համար: Այս մարդիկը որոշած են գործադրել Սուլթան Սէլիմի ծրագիրը, ինչպէս կը սպառնար վերջերս Թանին¹³³, այսինքն կամ կոտորել կամ իսլամացնել բոլոր քրիստոնեաները, մանաւանդ առաջինը:

Գիտակէն հեռագիր կայ Հայէպէն, միւսներէն ոչ մէկ լուր: Հրաչն ալ փոխադրած են Այաշ, ինչպէս կ'երեւայ իր վերջին նամակէն, ուր կ'իմացնէ թէ թղթավաճառ Մօրքանոն դատ բացած է Զարդարեանի դէմ, պարտքի համար. կը գրէ որ դիմած [է] ոստիկանութեան, որպէզի յանձնեն Ազատամարտի 446 ոսկին, պարտքերը վճարելու համար եւ ընտանիքները հոգալու: Կը պատուիրէ ծախել տպարանը գտնուած թուղթերը: Այս բոլորը գրած է Տիկին Զարդարեանին, որ վերջին անգամ յուսահատ դիմում մը պիտի ընէր այսօր Ձաւէնին: Կինները աղերսագիր մը տուած են Տիկին Վանկենհայմին¹³⁴, անոր բարեխօսութիւնը խնդրելով դեսպանին ներկայանալու եւ իրենց ամուսիններուն ապահովութիւն պահանջելու: Դեռ պատասխանի կը սպասեն: Միւս էջին կարդացէք Կարնոյ վերջին երկու նամակները որ յապաղած էին:

Կարին, 6 Մայիս.— Կը լսենք թէ սխալ է Վահաբի սպանութեան լուրը, երանի թէ այդպէս ըլլար. դրու-

133.- Թանին – Կ. Պոլիս հրատարակուող թրքական լրագիր, Իթիթիադի պաշտօնաթերթ:
134.- Վանկենհայմ – Գերմանիոյ դեսպանը Թուրքիոյ մէջ:

Թիւնը երթալով կը վատթարանայ. մեր ընկերներու քշուելէն յետոյ թէեւ ձերբակալումները վերջ գտան, բայց չարիքը ուրիշ կերպարանք առաւ. Բասենի մէջ եւ ոչ մէկ հայ գիւղ. բոլոր մնացողները բռնի գաղթեցուցին: 17-51 տարեկանները զօրք են: Արդէն գաղթեցուցին Կարնոյ Արեւմտեան դաշտի հայ գիւղացիները, 15000 հոգի մէջներէն հանելով 17-51 տարեկանները: Գիւղերն ալ կանոնաւորապէս կ'աւերեն, կը թալանեն կամ թուրք գաղթականներով կը լեցնեն: Ահա գլուխ-գործոցը Իթ-թիհ[ատի] հայահալածութեան եւ գերման հայասէր ռազմավարութեան: Քաղաքիս հայութիւնն եւս նոյն ճակատագրին ենթարկուած է: Երեք օր առաջ Խնուսից բերին 20-25 հայեր եւ երէկ առտու աքսորեցին. երէկ Քղիէն բերին 50 հոգի, երեւի ասոնք ալ միւսներուն ճամբով պիտի երթան: Էրզրումի հայութիւնը լմնալու է, իսկ անտէր կիւնն ու մանուկը, պառաւն ու ծերն ալ ենթակայ են ժանտարմներու, պաշտօնէից բռնութեանց, տանջանաց եւ անպատուութեանց: Հերթելի կանանց մէջ եղան մայրեր որ յուսահատութենէն իրենց ծծկերները Արաքսը նետեցին: Թահսինը կը չքմեղանայ ըսելով որ հրամանը վերէն է, ինք հակառակ է, բայց անօգուտ, թէ՛ Վանն է բոլորին պատճառը, եւն. եւն: Իթթիտատի մարդիկ կը կեղբոնանան հոս, Սէյֆուլլահ, Պեհա[էտտին], Հիլմին, մաս մըն ալ չեթաներ: Երեւի իրենց գլուխ գործոցը այս դժբախտ երկրին մէջ պիտի ցուցադրեն:

Կարին, 17 Մայիս.— Դրութիւնը ծանր է: Պեհաէտտի-նը եկած է. կ'ուզեն անպայման կոտորած ընել. պրովակացիայի կը դիմեն: Այսպէս 3-4 օր է կը քանդեն տեղիս հայ գերեզմանոցին ռուս յիշատակարանը: Չեթաները եւ ոստիկաններն են գործի գլուխ, շուկան են ինկած եւ ամէն հասակի եւ դասի հայեր կը բռնեն կը ծեծեն, կը

հայհոյեն, կը տանին աշխատցնելու, հոն ալ կը ծեծեն ու հայհոյանքը կը շարունակուի: Կ'ուզեն որ դիմադրող մը եւ զարնող մը ըլլայ որ իրենք առիթ գտնեն սկսելու կոտորածը, որ վճռուած՝ միայն յետաձգուած խնդիր մըն է: Եթէ վերջին պահուն բնագոյաբար ինքնապաշտպանութիւն մը եղաւ, լաւ, եթէ ոչ ներկայիս ոչինչ չկայ: Խնուս կոտորած եղեր է. մէկ կողմէն ալ ձերբակալած եւ բերած են 2-300 հոգի, կէսը ճամբան մեռցնելով: Գիւղացիները քշուեցան, մէկ ծայրն արդէն Երզնկայի շրջանն է, միւսը դեռ քաղաքէն երկու երեք ժամ հեռու: Գիւղերը կը թալանուին եւ կ'աւերուին, կամ կը բնակեցուին թուրքերով: Աւերումն ու թալանի հրամանը տրուած է բանակի հրամանատարէն. կը խօսուի որ Իթթիհատը կը պնդէ կոտորել կամ քշել. երկուքէն մէկը անխուսափելի է: Մեր աքսորուած ընկերներէն ոչ մէկ լուր: Թահսինը ըսեր է, թէ 4ը հասեր են Երզնկա, իսկ Մարալը⁷³ ճամբան փախեր է, ուրեմն գլուխը կերեր են: Բանակէն կը բերեն վերջին հայ զինուորները եւ բժիշկները: Առաջինները մասամբ կը քշեն եւ մասամբ ալ կ'անյայտացնեն: Պատերազմ կայ Խնուսի եւ Թորթումի կողմերը: Առաջուան խուճապը չկայ: Երեւի տեղս չպիտի պաշարուի: Շամի կողմէն սկսած են վերագրաւումի կռիւները: Մուշէն ոչ մէկ լուր: Կը խօսուի կոտորածի եւ գրաւման մասին:

Տարտանէլի մասին ստոյգ բան մը չենք գիտեր: Ամէն օր բազմաթիւ վիրաւորներ կը հասնին: Գրեցէք պալքաններու մասին: Յամառօրէն գրոյց կը պատի թէ 16 հոգի կախած են, ի միջ այլոց Վահան Հիւսիսեանի հայրը, երկու քահանայ, եւն.: Կը սպասենք ստոյգ լուրի:

Բարեւներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ

Փաստ. 63-67

43.- «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ
ՊՈԼՍՈՅ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԻՆ

Ապրիլ 11/24ի ձերբակալություններէն ետք, երբ Հայաստանի Բիւրոյի եւ Պոլսոյ Կեդր. կոմիտէի անդամները տարագրուած էին, Պոլսոյ մէջ թաքնուած ընկերները առաջարկած էին երեք անդամներէ բաղկացած պատասխանատու մարմնի մը միջոցաւ վարել ազգային եւ կուսակցական գործերը: Մինչ այդ անոնք սկսած էին գործել «Վիշապի Առժամեայ մարմին» անունով եւ կը սպասէին վերին մարմնի, այս պարագային Ժընեւի «Դրօշակ»ի խմբագրութեան վաւերացումին եւ լիազօրութիւններու ճշդումին: Ահա այդ դիմումին պատասխանն է ստորեւ տրուած գրութիւնը, որ ուղարկուած է Պալքանի Կեդր. կոմիտէին՝ փոխանցելու համար Պոլիս: Մեր փաստաթուղթը թերի մէկ արտագրութիւն է, եւ յապաղումով փոխանցուած, Յունիս 13/17ին, երբ արդէն Վարդգէս ձերբակալուած ու քստրուած էր (20 Մայիս - 2 Յունիսին): Յամենայն դէպս, որքան ալ ոչ ամբողջական տեսքով ներկայացուած ըլլայ այս արտագրութիւնը, Պոլսոյ Առժամեայ մարմինը իր յաջորդական նամակներով պիտի անդրադառնայ անոր՝ յայտնելով իր դառն յուսախաբութիւնը փոխանցուած ցուցմունքներուն մասին, գտնելով զանոնք ոչ համապատասխան օրուան հրամայականներուն, մանաւանդ որ Պոլսոյ ընկերները երեւի յստակ հրահանգներու կը սպասէին վճռական քայլերու դիմելու համար:

Ափսոս որ մեզի հասած այս փաստաթուղթը ամբողջական տեսքով չի ներկայանար, որպէսզի կարելի ըլլար որոշ գաղափար կազմել պահանջուածին եւ ստացուածին մասին: Իրաւասութեանց կամ որոշ ազատութեամբ շարժելու հարցին, Պոլսոյ Առժամեայ մարմինը ցաւով կ'անդրադառնայ բազմիցս (տես էջ 76, 85, 90, 102):

Ընկերներ,

Ձեր N° 489-ում յիշատակած մեր հեռագիրներէ պատասխան հեռագիրները չենք ստացեր: Այդ առթիւ արդէն մեր նախորդ գրութիւններով յայտնել ենք: Սկսեցէք Պոլսոյ եւ այլ կարեւոր խնդիրներէ առթիւ ծածկագիր գրել. ըստ երեւոյթին Աւստրիա-Գերմանիայում գրաքննութիւնը կրկնապատկօրէն խստացել է:

Պոլսոյ առթիւ ձեր արած առաջարկին կատարելապէս համաձայն ենք. նրանք (3 հոգուց բաղկացած Մարմինը) պատասխանատու Մարմին կը համարուի ներքին գործերի վերաբերմամբ, իսկ ընդհանուր ձեռնարկներէ համար նա անպայմանօրէն խորհրդակցելու է իր շրջանին մօտիկ գտնուող Կ. Կ. եւ կոմիտէներու հետ:

Առաջարկ ենք ուղարկել Կովկաս որ իրենց՝ Վասպուրականի եւ Մշոյ ընկերներէ մէջ (որը հաւանօրէն չուտով ազատուած եւ կցուած կը լինի) ժողով գումարեն ու լուրջ խորհրդակցութիւններ կատարեն¹³⁵

..... այնտեղի գործունէութեան ու ճշտեն իրաւասութեանց սահմանները, իսկ մինչ այդ կրկնում ենք Պոլսոյ նորակազմ մարմինը խորհրդակցութեամբ Վարդգէսի կը վարէ տեղական գործերը, պատասխանատու լինելով իր շրջանի գործունէութեան:

Յարգ չիմացանք Թալէազին ուղղուած մեր ընդարձակ հեռագիրը հասաւ իրեն թէ ոչ. այնուամենայնիւ նրան ուղղել ենք նաեւ հեռագրի պատճէն կցուած՝ մի պաշտօնական գրութեան:

Ընկ. բարեւներով
ԴՐՕՇԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

17/VI/915

135.- Նախադասութիւնը ընդհատուած է եւ երկու տող բաց ձգուելէ ետք շարունակուած:

Փաստ. 1158ա-186

44.- Յ. ԱՄԱՏՈՒՆԻԷՆ ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Տեւտ Ադամ, 19 Յունիս 1915

Յարգելի ընկերներ!

Տոբթ. Մալաքեան հոս եկած էր Պոլսէն. այսօր մեկնեցաւ Յունաստան:

Ինք իտալական հպատակ է, որով կրցած է օձիքը ազատել թուրք կառավարութեան ձեռքէն, պայմանաւ որ այլեւս թուրքիա չպիտի վերադառնայ:

Այսօր մեկնելու պահուն ինձմէ խնդրեց ձեզի տեղեկացնել հետեւեալը.—

Բանտարկեալներու եւ աքսորականներու նկատմամբ լաւ է մամուլով շատ աղմուկ չբարձրացնել, որովհետեւ աւելի կը կատողացնէ թուրք վարիչները եւ հաւանաբար աւելի վնաս պիտի պատճառուի քան թէ օգուտ: Եղած դիմումներուն — այս կամ այն չէզոք պետութեանց — նկատմամբ՝ հրապարակաւ բան մը չգրել:

Ամերիկեան դեսպանը չափազանց խիստ ազդարարութիւն մը ըրած է. նոյնիսկ պատասխանատուութեան խօսքը ըրած է. իրաւունք ունիք, ըսած է, կռուելու եւ ամէն տեսակ հարածանքներու ենթարկելու կռուող կամաւորներու կամ «ապստամբներու» դէմ, բայց իրաւունք չունիք բնաւ հալածելու անոնց ազգակից եղող անմեղներ եւ անզէններ, զանազան շինծու պատրուակներով. իմ կառավարութեանս անունով կ'ազդարարեմ ձեզի որ անձնապէս պատասխանատու պիտի մնաք: Ըստ երեւոյթին այս ազդարարութիւնը քիչ մը մեղմացուցած է գործ դրուած խստութիւնները թէ Պոլսոյ եւ թէ գաւառի մէջ, սակայն կրնայ խաբուսիկ ալ ըլլալ:

Այն համոզումը ունի թէ աքսորականներու կեանքին չպիտի կրնան դպչիլ պաշտօնապէս, սակայն իմացած է որ ուրիշ տեսակի դաւադրութիւն մը կ'ուզեն սարքել, — տեղային խառնակութիւններ առաջացնել խուժանի կողմէն աքսորականներու գտնուած վայրերը, որու միջոցին սպանութիւններ տեղի ունենան, միշտ կամքէ

անկախ, խուժանային խառնակութեանց վերագրելով եղած սպանութիւնները:

Սուրիական բանակի հրամանատար ճեմալ փաշայի բանակէն երկու քորբուս վերակազմուած ու Տիգրանակերտի վրայով դրկուած է դէպի Վան, նոր յարձակումով մը կորսուած տեղերը վերագրաւելու համար. ինք չի գիտեր թէ այս մասին պատկան տեղերը լուր ունին թէ ոչ:

Իբր թէ ժողովուրդի զանգուածային տեղահանութիւնները այլեւս չպիտի շարունակուի:

Վերոյիշեալ տեղեկութիւնները կը հաղորդեմ իր յայտնած ձեւով առանց իմ կողմէս ոեւէ դիտողութեան, յանձնելով զայն ձեր խորհրդածութեան:

Արձանագրուած կամաւորներու¹³⁶ խնդիրը ուշացումի երեւոյթ մը կ'առնէ եւ կարծեմ թէ ասիկա տեսակ մը սկեպտիկութիւն կը ստեղծէ անոնց մտքերուն մէջ. ձեր սուրհանդակը անշուշտ ցարդ վերադարձած ըլլալու է, աշխատեցէք շուտով կարգադրել:

Յարգ այստեղ մնացի իմ անձնական խնդիրներուս պատճառաւ. այժմ վերջացած է եւ հոս ոեւէ զբաղում չունենալուս պատճառաւ պիտի մեկնիմ այստեղէն, սակայն մեկնելէս առաջ պիտի խնդրէի ձեզմէ, եթէ կարելի էր, գոնէ տեղ մը, ինչեւէ յարմար գործի մը համար, գոնէ կարենամ ապրուստ մը ճարել, որովհետեւ հետզհետէ միջոցներս կը սկսին պակսիլ: Եթէ կարելի ըլլայ, հաճեցէք ինծի իմացնել, հոգ չէ թէ որտեղ ըլլայ, պատրաստ եմ երթալու:

Ընկեր Օզանեան հոգ հասա՞ւ. լուր մը չունեցանք. եթէ հոգ է, հաճեցէք բարեւներս հաղորդել:

Ընկերական բարեւներով՝
Յ. ԱՄԱՏՈՒՆԻ

136.- Խօսքը Կովկաս մեկնելու համար արձանագրուած պուլկարահայ կամաւորներու մասին է, որոնց մեկնումին համար ռուս դեսպանն ու հիւպատոսները դժուարութիւններ կը յարուցանէին:

Փաստ. 882-27

45.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 23 Յունիս 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Յունիս 20ը, գոյգ¹³⁷: Նոր նամակ չունինք ձեզմէ: Ինչպէս կ'երեւայ չէք ստացեր նաեւ մեր Յունիս 4ը, որուն կցուած էր թղթակցութիւն մը:

Մասնաւոր նորութիւն մը չկայ. այաչցիները կը շարունակեն գալ 5-6ով, երէկ եւ այսօր ալ հասան: Մովսէս Պետրոսեանն ալ ներսերը դրկած են եղեր: Միւսները լաւ են նոյնիսկ Շահրիկը գիրքերէ... Կը կասկածինք թէ մեր գրել տուած նամակները [իրենց] չեն յանձներ, որովհետեւ Փաշայեանէն, Հրաչէն, Սարգիսէն քարտեր հասան տիկիներուն եւ այնպիսի բաներու մասին կը հարցնեն որոնց շատոնց պատասխանած ենք արդէն: Նորէն գրել տուինք:

137.- Յայտնապէս, Մայիս 20էն ետք, շուրջ ամիս մը Պոլսոյ Առժամեայ մարմնի գրութիւնները չեն հասած Սոփիա: Այսպէս է պարագան այս նամակով յիշուած Յունիս 4ի եւ Յունիս 20ի գոյգ գրութիւններուն:
138.- Շոգեկառքի կայարան, Պոլիս:

Տրապիզոնը, Ամասիան, Խարբերդը եւն նմանապէս կը պարպեն: Տրապիզոնի առաջնորդը բանտարկեր են: Էրէյլիէն գերմանուհի մը գրեթէ փախչելով եկած է իր տեսած աղէտները պատմելու: Կ'ըսէ որ Էրէյլի մէջ 4 հայեր սպաննեցին եւ 15էն աւելի կիներ բանտը նետեցին: Նոյն տեղի մօտիկ գիւղէ մը քսան հոգի լեռ տարած եւ հոն գնդակահար ըրած են: Դեռ նոր հասաւ, բոլոր մանրամասնութիւնները կ'իմանանք եւ կը գրենք: Երէկ Սիրքէճի¹³⁸ հասան հարիւրաւոր թուրք զինուորներ, ձեռնակապերով. կ'իմանանք թէ կապ ունին գնդ-Լայիցիկների սպանութեան հետ:

Առայժմ գրելիք չունինք. ներփակ երեք թերթերը կը լեցնենք Երզնկայի տեղեկագրին մնացորդով, այլեւ Կիլիկիոյ կաթողիկոսին Յունիս 5 թուակիր տեղեկագրով, գոր երէկ ստացանք: Փնտուցէք թերթերուն բոլոր լուսանցքներն ալ:

Ընկ. բարեկներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ [ՄԱՐՄԻՆ]

Փաստ. 882-28

46.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 25 Յունիս 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Յունիս 23ը. նորէն նամակ չունինք ձեզմէ: Երէկ հեռագիր մը ստացանք. «Բարեկամիս Վասիլի միջոցաւ հինգ ոսկի դրկեցի»: Կ'ենթադրենք թէ քանի մը օր իրարու ետեւէ մեզմէ նամակ առած չըլլալով այդ հեռագիրը զարկած էք, որովհետեւ արդէն գրած էինք 20 Յունիսին, ինչպէս եւ խօսած Տիկին Խաթակին, այլեւս հարկ չտեսանք հեռագրով պատասխանել, մանաւանդ որ հեռագրի հասցէ չունիք, եւ ներկայ հասցէներէն մէկն ու մէկը կրնայ վտանգուիլ. մի մոռնաք հասցէ մը տալու, եթէ կարելի է յունական, միայն հեռագրի համար:

Հինգ հարիւրը ստացած ենք: 400ը պանք յանձնեցինք, հարիւրն ալ առձեռն կը պահենք. թէեւ գրած էինք որ 40 ոսկի դրկեցինք Հալէպ, բայց վերջին պահուն

ետ կեցանք, որովհետեւ Տիկին Գիսակը նամակ մը ստացաւ իր ամուսնէն, թուրք պաշտօնատարի մը միջոցաւ, որ բերանացի ալ տեղեկութիւններ տուաւ. կ'ըսէ թէ սարսափելի ամբաստանութեան մը տակ կը գտնուին, թէ անպատճառ Տիգրանակերտ պիտի դրկուին դատուելու, թէ Զօհրապը հիւանդ է եւն.: Միւս ընկերներու մասին չի խօսիր, կը խնդրէ իր կնոջմէ որ այլեւս ոչ մէկ դիմում չընէ այս կամ այն նախարարին: Պատմուածին համաձայն Տիգրանակերտի մէջ զէնք եւ ռուսը գրտնուեր է եւ անոնց տէրը Վարդգէսին եւ Զօհրապին անունները տուեր է: Անոր համար կը տանին հոն. այս բոլորին պատճառ կը նկատուի Գարոն⁷⁶, ինչպէս ըսաւ թուրք պաշտօնատարն ալ, որ պարագան ծանր գտնելով հանդերձ յայտնեց թէ կեանքի վտանգ չկայ: — Կը սպասենք Տիգրանակերտի հեռագրին դրամ դրկելու համար, մանաւանդ որ տիկիներն ալ կը վախնան

իրենց անունով ղրկել:

Ազատամարտի թուղթերը ծախելու պատուէր ղրկած էին այաչցիները. այսօր ստուգեցինք որ մեր չնաշխարհիկ կառավարութիւնը ինք ձեռնարկեր է զանոնք ծախելու թուրան թերթին, անշուշտ իւրացնելու համար դրամը, ինչպէս եւ ըրաւ սա դժբախտ 446 ոսկին, որուն համար շարունակ նամակ կը գրեն այաչցիք: Ուրիշ գրելիք չունենալով, ստորեւ կ'արտագրենք Կիլիկիոյ տեղեկագրին վերջին մասը:

Ընկ. բարեւներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ

Յ. Գ.— Այս հինգերորդ տեղեկագիրն է, որ ձեզի կ'ուղարկենք. առաջինը Կեսարիայէն էր, որ վախնանք չէ հասած. երեքը Կիլիկիոյ, մէկը Երզնկա: Ճշգիւ գրեցէք ինչ որ կը ստանաք: Ձաւէնը Գերմանականի թարգմանին այցելութենէն օգտուելով ըսեր է թէ քանի որ հայերը վտանգաւոր տարր կը նկատուին, կ'առաջարկեմ արտօնութիւն տալ որ ամբողջովին ուրիշ տեղ՝ մեր ուզած տեղը գաղթենք: Թարգմանը աշխատեր է համոզել: Իբր թէ Ձաւէնը ուզեր [է] Վանկէնհայմին ներկայանալ, բայց իր շրջապատի մարդիկը կ'ընդդիմանան (եպիսկոպոսները): Ի դէպ, տիկիներու դիմումը դեսպանուհին մնաց ապարդիւն:

Բարեւներով
ՆՈՅՆ

Փաստ. 882-29

47.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԷԻՆ

Կ. Պոլիս, 27 Յունիս 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Յունիս 25ը. քիչ առաջ ստացանք ձեր յունիս 23ը, չենք առած 17 եւ 18ը, ինչ որ վարմանալի է: Անշուշտ մեր բոլոր նամակները առած ըլլալով, ձեզի համար այլեւս պարզուած է խնդիրը, եւ մտահոգ ըլլալու պատճառ մը չունիք:

1.- Ընկերներ, կը խնդրենք կանոնաւորապէս հաղորդել մեզ օրուան լուրերը: Ահա 10 օրէ ի վեր անտեղեակ ենք երկրի եւ Կովկասի իրադարձութեանց. շարունակեցէք գրել ձեր ստացած տեղեկութիւնները օրը օրին:

2.- Բռնի գաղթի մանրամասնութիւնները ստուգե-

լու համար շատ կը յոգնինք, բայց ալ ամէն աղբիւր ցամբեցաւ: Հողաբլուրէն¹³⁹ լուրի կը սպասենք, եթէ երբեք ան ալ փորձանքի մը հանդիպած չէ: Իմացանք որ Կիրասոնի մէջ 400 տունէն 200ը տաճկցեր են, իսկ միւսները քշուած. Օրտուի մէջ՝ 220 տունէն 160ը տաճկցած, միւսները քշուած: Սոսկալի բաներ կը պատմուին նաեւ Սամսոնի, Տրապիզոնի, Իւնեայի եւն. համար:

3.- Այսօր մեր չորրորդ տեղեկագիրը յանձնեցինք. մինչեւ հիմա Պուլկարականին եւ Ամերիկեանին կը հաղորդէինք, 3 եւ 4րդը Իտալականին ալ տուինք, թէ եւ անօգուտ է: Գերմանականին ալ յանձնելու միտք մը ունէինք, բայց մեր բարեկամն ալ բացատրեց որ նպատակին չէ ծառայեր: 4րդ օրինակը մեզի պիտի պահենք Լեփսիուսին կամ ուրիշին ցուցնելու:

4.- Երկու օրէ ի վեր¹⁴⁰

139.- Հողաբլուր – կուս. ծածկանուն Այնթապի:
140.- Գրութիւնը կ'ընդհատուի հոս:

Փաստ. 882-30

48.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 29 Յունիս 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Յունիս 27ը, զրկուած բարեկամով: Ձեզմէ նամակ չունինք բացի 23էն:

1.- Գերման-գուրգերիացի ուսուցիչ մը, որ Հալէպ կը պաշտօնավարէր, Պոլիս հասաւ քանի մը օր առաջ, զարհուրեցի բաներ կը պատմէ իր տեսածներէն: Տիգրանակերտի մէջ ջարդ եղած, եւ միայն երկու հազար այր կոտորուած է եղեր: Տեսեր է մեր աքսորական ընկերները (Ակնունի եւն) նաեւ Մուրատը: Բոլորն ալ յուսահատ են թէ իրենց անձէն եւ թէ ամէն բանէ: Ճամբան հանդիպեր է անհամար անթաղ դիակներու: Կը նկարագրէ տեղափոխուած բազմութեանց ահաւոր տառապանքները: այր չկայ, կիներ ու մանուկներ, որոնք կը խոշտանգուին վայրագօրէն... միայն ինք երեք յղի կիներ տեսեր է, որոնց միջոց չեն տուած հանգստանալու եւ որոնք ճանապարհին մեռեր են արիւնահոսութենէ:

Այս բոլորի մասին զացեր խօսեր է Հալէպի եւ Ատանայի գերման հիւպատոսական թարգմաններուն: Մեր կողմէ խորհուրդ տրուեցաւ որ գերման դեսպանատունն ալ հանդիպի, նաեւ Ջալէնին: Եւրոպա պիտի գայ, թերեւս ձեզի ալ հանդիպի, եթէ ոչ ուղղակի ժընեւ պիտի երթայ եւ պիտի ներկայանայ թէ մերոնց եւ թէ Ֆալուին¹⁴¹: Տեսակցող ընկերը մոռցած էր փառալու մը տալ: Վաղը Պերճուհին ճամբայ կ'ելլէ, թերեւս ան ներկայացնէ եթէ տակաւին մեկնած չէ: Կ'ըսէ նաեւ որ Հալէպի վայրին (ձեւալ պէյ) պաշտօնանկ եղաւ, որովհետեւ կ'ուզէր օգնել հայերուն¹⁴²: Կը յիշէք անշուշտ որ ազգային շրջանակի [մէջ] ալ նպաստաւոր կը խօսէին այս մարդու մասին: Նոր կուսակալն է Պեթիր Սամի պէյ, Վանի նախկին կուսակալը:

2.- Խալիլ պէյը տեսակցեցաւ Ջալէնին հետ, պատմեր է որ իր Եւրոպա երթալէն առաջ Վարդգէսը կանչած եւ խորհուրդ տուած էր որ հայ ազգը իր գոյութիւնը չզգացնէ ներկայ պատերազմին մէջ, որովհետեւ վայրկեանը շատ ծանր է եւ հետեւանքը գէշ կ'ըլլայ: Երբ վերադարձաւ, տեսաւ որ ամէն բան բռնկեր է, Վանը գրաւեր են, Գարոն դաւաճաներ է, կամաւորներ զրկուեր են եւն. եւն.: Ինք ալ բան մը չի կրնար ընել «թէ եւ հալածանքները պիտի դադարին», եւն.:

3.- Կ'իմանանք թէ արդէն իսկ մասնախումբ մը հասեր է Ամերիկայէն նախագահութեամբ Վանտերպելթի, քննելու համար, տեղին վրայ, հայկական ցաւերը: Թոքատլեան իջեր են եղեր¹⁴²: Հետամուտ ենք ոչ միայն մեր

ունեցած բոլոր փաստերը իրենց տրամադրութեան տակ դնելու, այլեւ, եթէ կարելի է տեսակցելու:

4.- Չորս-հինգ օրէ ի վեր ձեր բարեկամները եռանդուն բանակցութեան մէջ են Դրան հետ, Միտիա-էնոս գիծը ստանալու համար անմիջապէս: Չգիտենք որքան ճիշդ է:

5.- Ափսո՛ս որ չէք ստացեր մեր 12 Յունիսը, կարեւոր կէտերը կը կրկնենք ստորեւ.— Լեփսիուսը հեռագրած է Պոլսոյ գերմանականին թէ Պոլիս գալ կ'ուզէ. անոնք ալ այս պարագան հաղորդեր են Թալէաթին, որ յայտներ է թէ պէտք չկայ. այսպէս ալ հեռագրուեր է. Լեփսիուսը նորէն հեռագրեր է, նոյն պատասխանը տուեր են, եւ նոյն իմաստով հեռագրեր է կրկին. Ջալէնը եւ մենք թերադրեցինք որ անպատճառ գայ: Ջալէնը միշտ կը համբերէ: Խորհուրդ տուեր են որ Վիլհելմին¹⁴³ դիմէ, մերժեր է: Ինք տեղեկագիր մը պատրաստած է Գերմանականին յանձնելու համար, իր խորհրդականը վախէն պատուեր է: Ոչ կը հրաժարի եւ ոչ ալ որեւէ ձեռնարկ կ'ընէ վախնալով որ աւելի գէշ կ'ըլլայ.— Թէ եւ ըլլալիքը եղեր է արդէն, եւ չգիտենք ի՞նչ կարելի պիտի ըլլայ փրկել: Սամսոնէն ալ բազմաթիւ հեռագիրներ կը հասնին իսլամացումներ ծանուցանող:

6.- Երզնկայէն հասած օտար ճամբորդ մը կը պատմէ որ էնտերէսի ճամբուն վրայ հանդիպեցաւ երկու քահանայի եւ ուրիշ հինգ հայերու, բոլորն ալ ձեռնակապերով, Սըվազ կը տարուին եղեր: Յաջորդ առտու նոյն եօթը դժբախտները տեսեր է ճամբուն վրայ, գանկերը ջախջախուած:

7.- Տրապիզոնի առաջնորդը Կարին զրկեր են պատերազմական ատեանով դատելու. այս միեւնոյն (12 Յունիս) նամակով ընդօրինակեր էինք նաեւ Հողաբլուրի¹³⁹ վերջին նամակը (24 Մայիս) որ ահաւասիկ:— Ձէյթուն, Ալպալաշ, Փոնոլզ, Հաճի Տերէ, Կոկիսոն, Կապան եւ Ալպիսթան ամբողջովին պարպուեցան իրենց բոլոր գիւղերով: Ատանայի մէջ կախուեցան չորս տէօրթ-եռլցի հայեր: Ընկ. Խ. Քարուկեանը դատապարտուեցաւ 10 տարի թիապարտութեան: Տէօրթ-Եոլի շրջականերէն 300 տուն Հալէպ քշուեցան, առ այժմ հոն կը մնան: Հասան Պէյլիէն 50 տուն աքսորուեցան Միջագետք: Տիգրանակերտի մէջ սարսափելի է հայերուն վիճակը: Ծեծի

141.- Լեփսիուս Ֆալու – նախագահ միջազգային Կարմիր խաչի ժընեւի կեդրոնին:
142.- Թոքատլեան – հանրաժամօք հիւրանոց Կ. Պոլսոյ մէջ:
143.- Վիլհելմ – Գերմանիոյ կայսր:

տակ սպանութիւն, միս, եղունգ քաշել եւն. սովորական բաներ են: Տիգրանակերտի հայերուն արգիլուած է քաղաքին պարիսպներէն դուրս ելլել. հրացանազարկ կ'ըլլան անմիջապէս: Առաջնորդը իր սենեակին լամբը վրան թափելով անձնասպան եղեր է, որովհետեւ պահանջներ են ստորագրել թուղթ մը, այն իմաստով թէ բանտի մէջ մեռածները բնական մահով մեռեր են: (Տիգրանակերտ տեղապահ մը կայ բայց չենք յիշեր անունը¹⁴⁴): Հիւսնի Մանսուրի եւ Խարբերդի մէջ ալ միեւնոյն դէպքերը: Հիւսնի Մանսուրի եկեղեցին խուզարկելով Ս. Սկիւնը նետեր են արտաքնոց, յետոյ ժանտարմաները շուրջառ հագեր եւ պատարագը կեղծեր են հայհոյելով Քրիստոսին, հայութեան եւն.: Քահանան բանտն է եւ ամէն օր կը խոչտանգուի:

Ատանայի աքսորեալները ներման արժանանալով վերադարձեր են Ատանա: Այս վերջին նամակն է որ ստացած ենք այդ շրջանին, իսկ այնուհետեւ ստացանք

Կիլիկիոյ կաթողիկոսին տեղեկագիրը որ աւելի նոր տեղեկութիւններ կը պարունակէ եւ զոր ձեզի հաղորդեցինք արդէն: Կը զարմանանք որ թերթերն ալ յաճախ կը կորսուին: Ստացա՞ք արդեօք 20 եւ 26 թղթակցութիւնները: Վաղը նորէն կը գրենք:

Ընկերներ, մեր հոգեկան տանջանքը սահման չունի. պատեհութիւնը կորսուած է այլեւս, եւ ամէն օր անջատ վկաները, աւելի ճիշդ արձանագրիչները կ'ըլլանք ահաւոր catastropheներու¹⁴⁵, եւ յուզումէն ու զայրոյթէն մեր մագերը ոչ միայն փուշ փուշ կ'ըլլան այլեւ կը ճերմակին.— չգիտենք ինչպէս պիտի վերջանայ այս տագնապը, յամառօրէն կը խօսուի նորէն [որ] Շ. Գարահիսարը դիմադրած ըլլալով, Երզնկայէն թնդանօթ բերած եւ մոխիր դարձուցած են: Սըվազէն ոչ մէկ լուր Յունիս 17էն ի վեր:

Ընկ. բարեկենդան
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ

Փաստ. 882-31

49.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 1 Յուլիս 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր յունիս 29 թուակիրը: Ստացանք ձեր յունիս 17ը, նոր նամակի կը սպասենք այսօր:

1.- Զօհրապը Հալէպէն կը հեռագրէ թէ ճամբայ ելած է Պոլիս դառնալու համար: Մերիններէն ոչ մէկ լուր: Այսօր հեռագրեցինք Տիգրանակերտի առաջնորդարանը: Զօհրապին համար երեւի Խալիլ պէյը միջամտած է, քանի որ ինք ալ նեղ օրերուն անոր տունը ապաստանեցաւ 15 օր:

2.- Գերման դեսպանատան թարգմանը (Չաւէնին բարեկամը) իբրեւ արդիւնք իր բարեխօսութեան, կը հաղորդէ որ աքսորականներու կեանքին վտանգ չկայ, ոչ ոք պիտի կախուի եւն.: Դեսպանին ուղարկութիւնը հրաւիրեր է հայ ժողովրդին կրած տառապանքներուն վրայ. պատասխաններ է որ բան մը չեն կրնար ընել. խոստովաներ է թէ Հալէպէն անդին հիւպատոս չունին որ պէտքի օգնէ գաղթականներուն եւն.:

3.- Խարբերդէն միսիոնարներ ճամբայ ելեր են դէպի Երզնկա, երեւի նպաստելու համար: Հասած տեղերին մնացեր են, որովհետեւ ալ թոյլ չէ տրուեր վերադառնալու:

4.- Ստուգեցինք որ Ամերիկեան Missionը¹⁴⁶ միայն նպաստ բաշխելու համար եկած է եւ Պոլսէն դուրս չպիտի երթայ: Միւս կողմէ ամերիկեան թերթ մը կը հաղորդէ որ Րոքֆորդի առեւտրական ուսումնասիրութեանց

հետ կապ ունի: Այսօր աւելի նոր տեղեկութիւններ պիտի առնենք բուն աղբիւրէն: Տիկին Ջարդարեանն ալ կը պատրաստուի ձեր կողմը գալ: Պերճուհին¹²¹ ուշացաւ քանի մը օրով: Յ. Ք.ին ղրկելու մասին ոչինչ կրնանք ընել: Երեւի Ջարեանն¹⁴⁷ է խնդրած: Որքան գիտենք, անմիջական վտանգի տակ չէ. զինուոր տարած էին, փրկանք վճարեց դարձաւ: Հիմա կարծենք թաքնուած է, եւ զայն տեսնելու ոչ հնարաւորութիւն եւ ոչ ալ ղրկելու միջոց կրնանք ունենալ, մեր զբաղումներուն պատճառով. իրեն պէս ուրիշ մտաւորականներ ալ կան (մալկարացիները օրինակ), բայց ոչ կուսակցական անհատները շատ վախնալու պատճառ չունին: Մնաց որ ուղարկելու risque¹⁴⁸ շատ մեծ է:

Ընկերներ, մի ցաւիք որ դառնութեամբ կարդացինք ժընեւի տեսակէտը՝ իրաւասութեանց եւն. մասին: Հարցը էութեան մասին չէ: Մենք ո'չ այնքան յաւակնութիւն ունինք, ոչ այդքան պատասխանատուութեան հա-

144.- Տիգրանակերտ-Տիգրանակերտի առաջնորդական տեղապահը Սկրտիչ վարդապետ Ջղատեանն էր, զոր շաբաթներ ամբողջ անլուր չարչարանքներու ենթարկելէ ետք՝ թուրքերը հրկիզեցին նկուղի մը մէջ եւ՝ հրապարակաւ յօշոտեցին անոր մարմինը:

145.- Ֆրանսերէն՝ չարաղէտ դէպքերու:

146.- Ֆրանսերէն՝ առաքելութիւնը:

147.- Խօսքը հաւանաբար Կոստան Ջարեանի մասին է. իսկ Յ. Զ.ն, նոյնպէս հաւանաբար Յակոբ Քիլիքեան (Օշական) պէտք է ըլլայ:

148.- Ֆրանսերէն՝ վտանգը:

մար բաւարար ուժ: Մենք հարց յարուցինք դեռ 2.5 ամիս առաջ, երբ միայն ձերբակալումները կային, բայց անկէ ի վեր աղէտ աղէտի վրայ բարդուեցաւ, ամբողջ հայ ժողովուրդը գինաթափ եղաւ, մօրէ մերկ դարձաւ, այժմ անապատներու մէջ սովամահ կամ սրամահ կոտորուելու վտանգին մէջ է: Բոլոր պատեհութիւնները կորսուած են, մեր ընկերներու կեանքէն վախճալով ամէն բան յետաձգեցինք, եւ ահա երեք ամիս վերջը, մեր թանկագին ընկերները՝ արտասահմանէն՝ կը բարեհաճին ճշդեւ թէ ինչ կրնանք ընել եւ ինչ բան ոչ:

Խոստովանեցէք որ կացութեան ամբողջ սարսափները օրը օրին արձանագրող մարմնի մը համար, այս վերաբերումն ալ քիչ մը շատ ծանր կը ճնշէ: Այլեւս խօսքը արտասահմանի մարմիններուն է: Մենք մեր բաժինը կատարեցինք որքան կը ներէին մեր համեստ ուժերը. այսուհետեւ շատ [բան] մը չի մնար, քանի որ մեր raison d'être¹⁴⁹ ինքնին կը չքանայ երկրի կեդրոններուն պար-

պումով: Այլ ի՞նչ ունինք ընելիք, եթէ ոչ ասկէ անկէ իմացուած լուրերը օրը օրին հաղորդել ձեզի: Իրաւասութիւն... փակեցէք այս էջն ալ, մինչեւ որ թշնամին քաղաք մտնէ, եւ տեսնենք թէ ի՞նչ է մնացեր...

Մենք արդէն շատոնց վճռած ենք մեր հարցերուն պատասխանը, ի գուր սպասելով կարգ մը լուսաբանութիւններու, որոնք այնքան ուշացան որքան կեանքեր թաւալելու կը գահավիժին, [իրենց] հետը տանելով մեր իրաւասութիւններն ալ, մեր դատն ալ, ժողովուրդն ալ: Այլ պատմութեան կ'իյնայ խօսքը:

Ընկ. բարեկներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ

Յ. Գ.— Եթէ կարելի է այս թղթակցութիւններէն մէկն ու մէկը պարունակող թերթ մը ղրկեցինք ձեր բարեկամին canalով¹⁵⁰. Ներփակ թերթով կը ստանաք թղթակցութիւն մը:

ՆՈՅՆ

149.- Ֆրանսերէն՝ գոյութեան իմաստը:
150.- Ֆրանսերէն՝ միջոցով, ճամբով:

Փաստ. 882-32

50.— ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆԵՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

[Կ. Պոլիս], 5 Յուլիս [1915]

Ընկերներ!

Ուղարկում ենք ձեզ Մուշի նամակէն (10 Յունիս) քաղուածքներ: Վահաբը սպաննուած է, նաեւ Տիգրանակերտի բոլոր ընկերները. բռնուած են Խարբերդի, Էրզրումի, Պոլսոյ գրեթէ բոլոր ընկերները. վերջինները աքսորուած են Այաչ: Հոս փախստական են բոլոր ընկերները, վերջերս նաեւ Կոմսը: Զինուած խումբեր ունինք... Յարգ մեր Դաշտը որ քիչ վնասներով գերծ էր մնացեր միւս վայրերու բախտէն, վերջին օրերս մօտալուտ պայթման նշաններ ցոյց կու տայ: Մասսայական սպանութիւններ կառավարութեան կողմէ, թալաններ քիւրտերու կողմէ, ասոնք գործն են իթիթիհատական ոճրագործ Հիլմիին (եկած Կարինէն). ժողովուրդը ահաբեկուած՝ փախուստ է տալիս Սասուն: Այս վիճակին հանդէպ թէեւ անյոյս, հարկադրուած պիտի լինենք պայթեցնելու: Վերին Սասուն, Սիլվան եւ Տիարբեքիի հայութեան մեծ տոկոսը ջարդուած, ցրուած. նոյնը Էրզրումում. ջարդուած են Պիթիիի հայ գիւղերը, Խընուսի գիւղերը. թուրք թէ քիւրտ ազգաբնակչութիւնը բոլորովին անյոյս է թուրք բանակի յաջողութեան: Դաշտի հիւսիսային քիւրտերը պատրաստուած են քաշուելու Բռնաչէն, Խոյթ, Մոտկան լեռներու մէջ: Մուսս

Ղասըմ եւս վախճալով վրէժխնդրութենէ, ձեր յառաջխաղացման [պարագային], պիտի գաղթէ: Մուհամմադներին ահագին շարքը, որ Բաղէշով ներսերը պիտի անցնէր, կը վերադառնայ դէպի Ճապաղջուր, Տիգրանակերտ:

Բոհտան-Սղերդ ծագած քրտական ապստամբութեան պատճառով, Դաշտի քիւրտերէն հայերուն հովանաւորելու առաջարկ կ'ընէ. հասկցած ենք որ կոտորելու, ջարդ կազմակերպելու համար է: Տեղիս պաշտօնեաները իր[ենց] ընտանիքները ղրկեցին ներսերը: Ռուս բանակը չկրցաւ օգտուել իր յաղթութենէն Կոփի շրջանում: Անարգել պիտի գայիք Մուշ: Ձեր տատանումները միջոց տուին կասեցնելու ձեր յառաջխաղացումը եւ վճռական կը դարձնեն Տարօնի հայութեան ջարդը:

Հեռագրով հարցուցած էք կամաւորների մասին. այստեղ փոխարքան կասկածելով որ դուք կը ջանաք (կրնաք) լրտեսութեան ծառայել կտրուկ մերժած է դիւրութիւն տալ անցնելու: Ռումանիայէն եկան կրկին 70-80 հոգի: Վստահելի մարդիկ կարող էք ուղարկել փոքր խմբերով:

Գրեցէք որքան դրամ էք ստացել Ամերիկայէն: Ինչ նորութիւն Վիչապէն:

Փաստ. 882-33

51.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵՂԻ. ԿՈՍԻՏԵԻՆ

[Կ. Պոլիս], 7 Յուլիս 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Յուլիս 4 գոյգը: Կը շարունակենք գրել առանց ձեզմէ նամակ ստացած ըլլալու:

Ինչպէս կ'իմանանք ձեմալ փաշան աճապարանօք մեկներ է Հայաստան, Վանը վերագրաւելու համար:— Չէ՞ք կարծեր որ նոր Լեմպերկ մը ունենան քեռիները¹⁵¹:

Բռնի գաղթի մասին վերջին լուրը այն է որ Սիս ու Տարսոնն ալ կը պարպեն: Միւս կողմէ, իբրեւ թէ բանաստեղծ Մեհմէտ էմինը ըսած կ'ըլլայ որ, եւրոպական միջամտութեան վրայ, Պոլսէն հրաման գացեր է գաւառ՝ դադրեցնել գաղթը եւ գաղթականները ուր որ են հոն մնան...: Գերման դեսպանատունը ուղղակի հասկըցուցած է թէ՛ ոչ մէկ միջամտութիւն կրնան ընել, որովհետեւ իրենց մտիկ ընող չկայ: Դանիոյ եւ Սպանիոյ դեսպանները փափաք յայտներ են տեղեկանալու հայերու վիճակին: Թերեւս մեր չորս տեղեկագիրներէն անոնց ալ մէյ մէկ պատճէն տանք: «Անճարը կ'ուտէ բանջարը...»: Երեւի յոյներն ալ պիտի քչեն, կամ արդէն սկսած են շատ մը տեղերու մէջ, կը ստուգենք: Առ այժմ սա ճիշդ է որ անոնք ալ դիմած են գերմ. դեսպանատուն, որ մեր-ժողովական պատասխանով մը ճամբեր է: Յետոյ էնվերին գացեր են, որ վոնտեր է, ըսելով թէ «գուք օտարներուն կը դիմէք, մենք օտարներուն խօսքով բան չենք ըներ»:

3.- [Չորք] Մարգուան ջարդ է եղած, մնացած ժողովուրդն ալ քչեր են: Իբրեւ թէ 600 մատուցեր գտնուեր է: Մարգուանի, ինչպէս եւ Տարսոնի միսիոնարները որոնք

հոս են, չեն կրնար վերադառնալ պետական արգելքով:

4.- Կարինէն առաջնորդը հեռագրով հարիւր ոսկի պահանջած է. ինչպէս կ'երեւի, քաղաքը դեռ ամբողջովին չեն պարպած: 400 ոսկի դրկուեցաւ Սուլթանիյէ, ուր կը գտնուին 6-7000 գէյթուներ:

5.- Պոլսոյ Օսմ. վարժապետանոցէն 7 հայ շրջանաւարտներ թունաւորուեցան առջի օր եւ մէկը, վանեցի խոսրով Պարթեւեան մեռաւ: Միւսները կը դարմանւին. կը հաւաստէին թէ դիտմամբ թունաւորած են, բայց իրենց ազատ ընկերները չեն հաւատար այդպիսի բանի մը եւ ժանգոտած պնակներու կը վերագրեն: Միայն հայերը թունաւորուած ըլլալու պարագան ալ անով կը բացատրեն, որ թուրքերը, ցերեկին ծոմ էին, այդ եօթը հայերուն (գիշերօթիկ) առանձին կերակուր տրուած է: Ամէն պարագայի մէջ շատ խորհրդաւոր գործ մըն է եւ կ'աշխատինք ճշդել: Մեծ մասը մեր ընկերներն են, բոլորն ալ գաւառացի եւ շատ յաջողութեամբ պսակուած:

Տիկին Ասլանն¹¹⁰ ալ կու գայ քանի մը օրէն: Չանկըրըն մաս մը աքսորականներ վերադարձան, բայց 40 հոգի ալ քչեր են աւելի ներս, [Տէր] Չօր, ինչպէս կ'իմանանք: Այսօր վաղը կը ստուգենք թէ ովքեր են: Բ. Շահպազը հասած է Այնթապ, եւ կնոջմէն կը խնդրէ որ աշխատին հոն պահել: Միւսներէն լուր չկայ: Չեզմէ նամակ չենք ստանար ահա 15 օրէ ի վեր: Ինչո՞վ բացատրել, շատ մտահոգ ենք: Վերջապէս չկրցանք իրար հասկընալ սա նամակներու կանոնաւորութեան համար:

Ընկ. բարեւներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ

151.- Քեռիները իմա ոռսերը:

Փաստ. 1158-78

52.- ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԷՆ

Սոֆիա, 9 Յուլիս 1915

Ընկերներ,

Դրութիւնը Հայաստանի մէջ չափազանց յուսահատական ըլլալ կը թուի: Շ. Գարահիսարը դիմադրած լինելով, մոխրակոյտի վերածուած է, իսկ Մարգուանն ու Թորքատը կը դիմադրեն:

Տեղոյս թուրք դեսպանատունը հրապարակային յայտարարութիւն մը ուղղեց յայտնելով թէ Թրքահայաստանի մէջ տեղի չեն ունենար խժոժութիւններ, որոնց համար հայերը կ'աղմկեն, այլ հայերն են, որ տեղի կու տան նման անախորժութեանց եւ կը դժուարացնեն կառավարութեան գործերը. եւ կը յիշեն Շ. Գարահիսարի դէպքերը: Ի հարկէ հասարակութիւնը խնդաց կարդալով այդ քանի որ շաբաթներ առաջ մանրամասն կարդացեր են մեր հրատարակութեան տուած փաստերը: Բայց եւ այնպէս լռութեամբ պիտի չանցնինք այդ յայտարարութեան վրայով, այլ պատրաստելու վրայ ենք փաստացի տեղեկութիւններով հաղորդագրութիւն մը, որ շուտով կը յանձնենք պուլկար մամուլին: Նոյնպէս պուլկար կառավարութիւնը հրահանգ դրկած է Պոլիս իր դեսպանատան, դիմումներ ընելու հայ ժողովրդի ներկայ դրութեան եւ մասնաւորապէս պուլկարահպատակ հայերու համար:

Ամերիկայէն Պոլիս հասած է մի պատգամաւորութիւն տեղին վրայ քննելու հայերու կրած տառապանքները եւ նրանց օգնելու համար, բայց թուրք կառավարութիւնը թոյլ չէ տուեր ներքին գաւառները երթալու: Պատգամաւորութենէն երկու հոգի, կը լսենք, որ այստեղ են: Պիտի ջանանք տեսակցիլ եւ մանրամասն տեղեկանալ նրանց միսիայի մասին եւ տեղեկութիւններ հայթայթել: Կը գրենք եթէ նոր բան մը քաղենք:

Մի քանի օր առաջ Կովկասէն վերադարձաւ Արզումանը¹⁵²՝ բաւական մխիթարական տեղեկութիւններով, որոնց ամփոփումը յաջորդիւ կը գրենք ձեզ: Սաքանը ըսենք, որ Պալքանից կամաւոր դրկելու խնդիրը չէ յաջողած, այնպէս որ մեզի համար դժուարին մի կացութիւն ստեղծուած է: Տեսնենք ինչպէս դուրս պիտի գանք:

Չեր ուղարկած 6,500 տոլարը ամբողջութեամբ ստացած ենք եւ կարելոր գումար մը փոխադրած ենք Երկիր: Թէ Կովկասի, Վիշապի եւ թէ մեր տեսակէտն է որքան կարելի է շատ դրամ ունենալ հոս, ի հարկին կարելոր պէտքերուն գործածելու համար: Պատրիարք եւ Սոյ կաթողիկոս մեզ են ապաւինած սովալլուկ ժողովրդին օգնութեան փութալու համար: Ուստի կը խնդրենք առաջին առթիւ իսկ, նոյն ճանապարհով, մեզ ուղարկեցէք դարձեալ մի կարելոր գումար, ապա թէ ոչ ժողովրդի կացութիւնը խիստ վտանգաւոր կը դառնայ:

Ինչպէս անցեալ անգամ գրեցինք, դարձեալ կը կրկնենք եւ կը շեշտենք, որ մեր նամակներէն ոչ մի արտատրպում չիինի, այլ միայն «Հայաստան»ից ըլլան միայն այդ արտատպումները, որովհետեւ մի քանի անգամ տպագրեցիք տեղեկութիւններ, որոնք երբեք պէտք չէին հրատարակուիլ: Այս մասին խիստ դիտողութիւն եղած է Ժընեւէն: Ուստի կը խնդրենք, ընկերներ, լրջօրէն նկատի առէք այս կէտը եւ ըստ այնմ վարուեցէք, նոյնիսկ եթէ պէտք լինի արձանագրեցէք լոկ չոր փաստը, առանց աղբիւրը եւ այլ մանրամասնութիւնները յիշելու:

Սպասելով ձեր նամակներուն, որոնց երկարատեւն է ի վեր կը սպասենք,

Ընկերական բարեւներով՝
ԲԱԼԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵ

152.- Արզուման՝ կուս. ծածկանունն է Խաչիկեան Տիգրանի, որ Հայաստանի Բիւրոյին կողմէ իբրեւ գործիչ դրկուած էր Պուլկարիա:

Փաստ. 882-34

53.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵՂԻ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 9 Յուլիս 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Յուլիս 7ը: Ձեզմէ նամակ չու- նինք, մեկնութիւն մըն ալ չենք կրնար տալ: Ամէն բան ձգեք ենք բախտին:

1.- Վարդգէսը կը հեռագրէ նոյնպէս՝ թէ Ձօհրապին հետ ճամբայ ելած են դէպի Տիգրանակերտ. ուրեմն սուտ ելան այս մասին եղած հաւաստումներն ալ, զորս հաղորդած էինք ձեզի. միւսներէն միշտ լուր չկայ: Ե- րէկ իբրեւ թէ Քրիստ¹⁵³ եւ ուրիշ երեք հոգի Պոլիս բեր- ւեր են, մինչդեռ Այաշէն հասած բարեկամը բոլորովին տարբեր բան կը պատմէր: Այսօր պիտի ստուգենք: Մեր Մովսէս Պետրոսեանին համար ալ խօսք կայ որ դարձեր է: Թերեւս Յ[ետ] Գ[րութեան] մը գրենք այս մասին:

2.- Շապին Գարահիսարէն յոյն սպայ մը եկած է, որ շատ կարեւոր տեղեկութիւններ ունի: Ժամադիր ենք բոլոր լուրերը քաղելու: Առ այժմ իր պատմածը այն է որ, երբ քաղաքին մէջ եօթը հոգի կախել կ'ուզեն, Սու- րէնը⁴² կամ իր ընկերները հասեր եւ արգիլեր են. ամ- բողջ ժողովուրդը ոտքի ելեր է. քաղաքը եւ շրջակայ բո- լոր գիւղերը մոխրակոյտի վերածուեր են: Միայն յու- նական 10 գիւղ մոխիր դարձած է: Բոլոր էրիկ մարդի-

կը, մինչեւ 55 տարեկան, զատած են եղեր, եւ ոչ մէկը ողջ մնացած է: Մնացած ժողովուրդը քչեր են չգիտեն ուր: Սուրէնը հազար աջ ու ձախ¹⁵⁴: Ձօրք դրկուեր է, բայց անօգուտ:

Այս բոլոր կէտերը կը յանձնենք ձեր լուրջ ուշադրու- թեան:

Կարնեցի վաճառականներէն Հրանդ Աղաջանեան, որ Պոլիսէն Այաշ եւ յետոյ դարձեալ Պոլիս՝ պատերազ- մական ատեան փոխադրուած էր, սարսափելի տան- ջանքներու կ'ենթարկուի: Առջի օր, ծեծի տակ, փորձեր են ստորագրել տալ թուղթ մը, որ կ'ըսէ թէ Խաժակ, Ակ- նունի, Ջարդարեան եւ միւսները կարգադրած են կա- մաւորներու գործը, զէնքերու փոխադրումը, եւն: Մարդը մինչեւ այսօր մերժած է ստորագրել: Ի՛նչ խօսք որ փաստեր կ'ուզեն ճարել կախաղաններ շարելու հա- մար: Անվնաս մարդ էր, բայց չգիտենք ի՛նչ պատճառով այսքան կը ծանրանան իր վրայ: Իրեն պէս ուրիշ մէկը չկայ որ Այաշէն հոս բերուած ըլլայ դատուելու:

Երէկ յանկարծ ձերբակալեցին յայտնի վաճառական Իբրանոսեանը (Հաճի աղան) եւ կեսարացի վաճառա- կան Գալթաքճեանը. կ'ըսուի թէ ուրիշ 30 հոգի ալ պիտի բռնեն: Այս գործն ալ կը հետապնդենք իր կարգին: Տի- կին Ջարդարեանը մեկնեցաւ այսօր: Ուղղակի Ֆիլիպէ պիտի երթայ: Վաղուան համար ջարդի շրջակներ կան (Յուլիս 10) բայց չենք հաւատար: Սա ստոյգ է որ ամերի- կացիները (քոլեճական, անհատ, եւն.) կը պատրաստը- լին հեռանալու:

153.- Քրիստ – հին յեղափոխական գործիչ, Ֆեներճեան Քրիստ (Սիլվիո Ռիչի):

154.- Արրուած ու անընթեռնելի 3-4 բառեր: Այլ տեղ կը յիշուի «Սուրբնը հազար հոգիով կ'ասպատակէ». չափազանցութիւն է անշուշտ:

Փաստ. 882-35

54.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

[Կ. Պոլիս], 13 Յուլիս 915

Ընկերներ!

Խղճի հանգստութեան համար հարկ կը գգանք անգամ մըն ալ ձեր միջոցաւ վերին մարմիններու լուրջ նկատողութեան յանձնել մեր արդի վիճակը, մեր տագնապներն ու տանջանքները: Վերջին երեք ամսուայ ընթացքին, ուրիշ փորձառու ընկերներու հետ ալ յաճախակի խորհրդակցելով, եկանք այն եզրակացութեան թէ երբ թշնամին Պոլիս մտնէ, մեզի ուրիշ բան չի մնար ընել, բայց միայն հաւաքեկել արդէն իսկ ցուցակագրուած 8-10 յայտնի հայ լրտեսներ, խուճապի տեղի չտալ, արգիլել ամբողջալից ցոյցեր, հակապետական ձեռնարկ կամ փոխ վրէժ, քանի որ ոչ միայն մեր թանկագին ընկերները, այլեւ ամբողջ հայ ժողովուրդը պատանդ կը մնայ իթթիհատեան բռնապետութեան ձեռքը: Ապագային կը ձգուէր բոլոր հաշիւներու կարգադրութիւնը: Դուք ալ այս տեսակէտը պաշտպանեցիք, առանց սակայն բարձրագոյն խորհուրդի մը կամքը յայտնելու: Վերջին պահուն միայն հաղորդեցիք ժընեւի տեսակէտը, որ կարծես երեք կապ չունի օրուայ իրականութեան հետ: Մինչ այս մինչ այն, հալածանքը սաստկացաւ. ոչ միայն մեր ընկերները, այլ եւ հազարաւոր թանկագին ուժեր կալանաւորուեցան, բանտ կամ դատարան նետուած կը մնան այսօր, շատերը սպաննուեցան, բայց մանաւանդ ամբողջ հայ ժողովուրդը զինաթափ, տեղահան, մօրէ մերկ, քշած են լեռներէ ու ձորերէ անդին, կը թափառին անապատները, սովամահ մեռնելու, կամ վայրկեանէ վայրկեան ջարդուելու վտանգին տակ: Ամբողջ շրջաններ ջարդուած են արդէն (Խնուս, Տիգրանակերտ, Ծ. Գարահիսար, Մարգուան, նորերը յիշելով): Երկրորդ հանգրուանն է այս, եւ տակաւին չենք գիտեր կուսակցութեան կամքը: Այժմ մենք շուարած, էլք մը կը փնտռենք: Կատարե՞լ ռեւէ ձեռնարկ: Բայց ո՞վ կու տայ մեզ այդ իրաւունքը, եւ մանաւանդ ո՞վ կրնայ կշռել հետեւանքները: Երեք ամիս առաջ, թերեւս

աւելի chance¹⁵⁵ կար արդիւնք մը ստանալու, քանի որ կարեւոր ուժերը չէին կաշկանդուած, ժողովուրդը զինաթափ չէր եղած, եւ կը մնար իր տեղին վրայ: Սպասե՞լ մինչեւ քաղաքին անկումը: Բայց արդեօք թշնամին չպիտի կրկնէ նոյն խաղը, մնացած ընդունակ ուժերն ալ կաշկանդելով, ժողովուրդը քշելով, եւն.: Եւ այն ատեն ուշ չէ՞, եւ այն ատեն դահիճները չպիտի՞ պրծին, ազատօրէն շարունակելու իրենց շահատակութիւնները: Կամ արդեօք շարժի՞լ, երբ փորձեն քշել Պոլսոյ ժողովուրդն ալ: Որոշած ենք դիմադրութիւն յառաջ բերել արդէն: Այսպէս, ոտքով ձեռքով կապուած, երկրի նամակներէն անգամ զրկուած, մութին մէջ կը թարթափինք անզօր ցասուած մը: Զեր մինչ այժմեայ կողմնակի նամակներէն, պատասխաններէն կը հետեւի որ վերին մարմինները խորհած են ամէն բան, եւ պատեհ ժամուն կը սպասեն: Գոնէ մեզի ալ տեղեկացնէիք այդ մասին — արդեօք միջոցներ ծրագրուած են թէ ժողովուրդը փրկելու եւ թէ այս խելագարները խելքի բերելու համար: Կամ պարզապէս յայտնեցէք որ այս մասին ոչ մէկ պատասխանատուութիւն ունի Վիշապի մարմինը, ոչ այսօր եւ ոչ ալ վաղը, որպէսզի մեր խիղճը հանգստանայ, որքան ալ չկարենանք հանդուրժել կատարուած խժոժութեանց, որոնք կը նորոգուին եւ կը բազմապատկուին ամէն օր: Արտասահմանի մարմինները անշուշտ աւելի պայծառ կը տեսնեն եւ միջոցներ գտած են: Մենք անհամբերներու բազմութիւն մըն ալ ունինք որոնց քարոզ կը կարդանք ամէն օր, յաճախ մենք ալ տարակուսելով մեր խօսքերուն վրայ: Փրկեցէք մեզ այս դժբախտ վիճակէն, գծելով մեր պարտականութիւնները թէ կողմ իբրեւ Պոլսոյ Տեղական մարմին: —

Բարեկամին միջոցաւ զրկուած նամակներուն արտաքին մասը գրեցէք առանց քաղաքի անուն դնելու եւ Ռուզանի¹⁵⁶ տեղ ալ Grigorieff, պահարանն ալ: ZOVO Caps. մի զրկէք, գտանք:— Վաղը ձեր կողմերը կու գայ մեր ընկերներէն Սամուէլ (վանեցի). որովհետեւ առանց մեր հաւանութեան մեկնած է, կը նկատենք իբրեւ դասալիք:

Ընկ. բարեկներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ

155.— Ֆրանսերէն՝ պատեհութիւն, յարմարութիւն իմաստով:
156.- Ռուզանը Գրիգոր Մերճանօֆն է, որ իբրեւ պովկարա-
հայատակ յաջողած էր Սոֆիա անցնիլ, ապա վերադառնալ Պոլիս:

Փաստ. 882-36

55.– Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

14 Յուլիս [1915]

Ընկերներ!

Արզումանը¹⁵⁷ անշուշտ հասած կ'ըլլայ. խնդրում ենք նրան յատկապէս հասցնել մեզ տեղեկութիւններ ձերբակալուած ընկերներու եւ անոնց ընտանիքներու մասին: Օտեսայի դրամը դեռ չենք յետ ուզած, կրնաք պահանջել, բայց կը խնդրենք նպաստներ տալով միայն միք զբաղուիլ, այլեւ ձեռնարկների մասին մտածէք: Այստեղի վերջին նորութիւնը տխուր է, մեր լաւ ընկերներէն Դաշնակցական Խեչոն¹⁵⁸ (նախիջեւանցի) սպաննուեց Շատախում ամսի 6ի Յուլիսին: Մեր ամենամաքուր ու եռանդուն գործիչներից էր: Մանրամասնութիւններ

չունինք դեռ, գիտենք որ նա ձիաւոր խմբով գացած էր Շատախի գիւղերը պաշտպանելու, վերջերս հարաւից եկած քրտերի յարձակումներից: Հասցրէք մեզ զինուորական լաւ անհատներ, մասնագէտներ, արտելերիայից¹⁵⁹ եւն.:

Ընդհանրապէս կամաւորներ Բուլղարիայէն, այստեղի կառավարութիւնը կը վախնայ ընդունելու լրտեսութեան պատճառով:

Շատ վստահելիներ միայն կարող են գալ:

Ընկ. բարեկներով

Փաստ. 882-37

56.– ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 16 Յուլիս [1915]

Ընկերներ!

Կը հաստատենք 13 նամակը, ինչպէս եւ 14 գոյգը: Ոչ մէկ լուր ձեզմէ, չկրցանք լուծել այս հանելուկը: Լեփս[իոս]ը¹⁶⁰ եկաւ, յարաբերութեան մտաւ, նիւթեր հայթայթած ենք: Նորէն լուրեր կան որ հրահանգ տրուած է կասեցնել գաղթը: Չենք հաւատար:

Ներփակ թերթով կը ստանաք թղթակցութիւն մը, խառնիխուռն բովանդակութեամբ. փրկեցէք մեզ այս անստուգութենէն, այսպէս կամ այնպէս՝ լուր մը հաղորդելով:

Ընկ. բարեկներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԷՆ

157.- Արզուման – Խաչիկեան Տիգրան:

158.- Դաշնակցական Խեչո – բուն անունով Ամիրեան Խաչատուր: Կամաւորական գումդերու հրամանատար:

159.- Հրետանի, քնդանօթային գումդ:

160.- Եոհան Լեփսիոսն է. գերմանացի հանրաժանօթ միսիոնար, նախագահ գերմանական Արեւելեան եւ հայ-գերմանական ընկերութիւններու:

Փաստ. 882-38

57.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 21 Յուլիս [1915]

Ընկերներ!

Կը հաստատենք մեր յուլիս 16ը. երէկ ստացանք ձեր յուլիս 14ը, մէկ մէկ յիշեցէք ինչ որ կը ստանաք: Միւսները չեն հասած դեռ: Ընկերներ, պարզապէս կը կատարեցնէիք կոր մեզ: Ի՞նչ պիտի ընենք, ի՞նչ պիտի ըլլանք: Մենք կը յուսալինք բեկորները փրկել, եղածն ալ վրայ պիտի տանք...: Յուսահատութեան ծայրագոյն աստիճանին հասած ենք ոչ միայն մենք այլեւ մեր բարեկամները:

Տոբթ. Լեփս[իոլս]ը եկած ատեն շատ խանդավառ էր, յոյսեր կը ներշնչէր: Երբ տեղեկացաւ իրականութեան, երբ ստացաւ մեր 4-5 տեղեկագիրները, որոնք կը վերաբերին նախընթաց ծանօթ դէպքերուն եւ ոչինչ են նորերուն քով, բայց մանաւանդ երբ կարգադրեցինք որ տեսակցի Սրվազի միսիոնար Մ. Փաթրիչի հետ — չափազանց ընկճուած, յուսահատ, յայտնեց որ աս գուլում չէ, այլ ուղղակի բնաջնջում, որ՝ պէտք է օրհնել Համիտը, եւն.: Իր դեսպանին հետ առաջին տեսակցութիւնն ալ բնաւ յուսատու չէր: Դեսպանը ըսեր է որ իր առաջին այցելութեան իսկ բողոքեց Թալթաթին եւ եպարքոսին, բայց անօգուտ: Իր կարծիքով, այսպիսի դիմումներ աւելի կը կատարենք գազանները: Նոյնիսկ խորհուրդ տուած է Լեփս[իոլս]ին, որ շատ այս գործերուն ետեւէ չիմնայ, որովհետեւ կրնան գինքը ձերբակալել եւ ինք չի կրնար ազատել, քանի որ capitulation¹⁶¹ չկայ: Ուղեցինք վերջապէս Լեփսէն հասկնալ իր վերջնական տրամադրութիւնը: — Տեղեկագիր մը կը պատրաստէ, զոր պիտի տանի ներկայացնէ Ձուիցերիա, Ամերիկեան Կարմիր խաչին, անոր կողմէ հեռագիր մը ուղղելու համար Ուիլսընին: Ոչինչ կը յուսայ Գերմանիայէն, մինչդեռ առաջին օրը կը պնդէր որ Գերմանիոյ մէջ եղածին 1/100 անգամ չգիտեն, թէ Յուլի 10-ը մէջտեղ դնելու է, թէ այժմէն կարգադրելու է հայ-թուրք խնդիրը, պատերազմը չվերջացած եւն.: Տեղեկագիրը հետը տանելու մասին ալ մեր կարծիքը հարցուց, մեր միջոցները հասկընալ ուղեց, քանի որ կը խուզարկեն...: Նորէն պիտի երթար դեսպանին: Կ'իմանանք թէ սպանիական եւ դանիական դեսպաններն ալ դիմեր են իշխան Հոհենլոյին¹⁶², որ յայտներ է թէ ոչինչ կրնայ ընել, պիտի շարունակէ իր նախորդին քաղաքականութիւնը:

Յուսահատ է նաեւ Ձաւէնը: Երէկ խառն ժողովի¹⁶³ մը խնդիր են ըրած պատրիարքարանը փակելու մասին, նոյնիսկ անոնք որ հրաժարման եւն. հակառակ էին,

դարձեր են: Մէկ երկու ակնկալութիւններ կան եղեր, անկէ վերջը լրջօրէն պիտի խորհին:

Նիկոմիդիոյ շրջանը պարպելու գործողութիւնը սկսած է արդէն: Մէկ երկու օրէ ի վեր խօսքեր կան նաեւ Սկիւտարի մասին, որ պիտի ըլլայ Պոլսոյ յառաջաբանը: — Էնվերը իբրեւ թէ ըսած ըլլայ որ եթէ ուզէ, 15 օրէն բոլոր քրիստոնեաները կը քչէ — երանի՛ թէ — եւ միայն թուրք եւ գերման կը ձգէ: Այս հրէշը այժմ Տարտանէլ կը գտնուի, որովհետեւ լուրջ պառակտում ծագած է բանակին մէջ: Ձանտերսը¹⁶⁴ հրաժարած է, բայց չեն ընդունած, երեւոյթները փրկելու համար, մէկ ամիս արձակուրդ են տուած:

Ձօհրապը մեռեր է Տիգրանակերտի ճամբուն վրայ, Ուրֆայի մէջ: Հրէշային անպատկառութեամբ մը, երէկ ներքին գործերու խորհրդականը թելէֆոնով հաղորդեր է Տիկին Ձօհրապին. «Ձօհրապը մեռեր է Ուրֆայի մէջ»: Մերիններէն միշտ լուր չկայ, միջոց ալ չունինք: Այսչիները ձեւ մը հաղորդեր են մեզի, նամակի համար, բայց բոլորովին անբաւական է եւ անգործնական: Ներկայ միջոցով պիտի հասկցնենք, քանի որ այս ալ յիշեր էին: Բոլորովին պէխապէր⁵⁶ աշխարհէն՝ կը տանջուին խեղճերը:

Տոբթ. Լեփս[իոլս]ը ըսաւ, որ բանակին բոլոր հայ բժիշկները պիտի ձերբակալեն — կը հասկնանք ի՞նչ չարաշուք նպատակով: Անշուշտ մտաւորականութեան այդ տարրն ալ պիտի փճացնեն այս կամ այն ձեւով: Սրվազի մէջ ձգեր են միայն վալիին հայ դերձակը, սահիրիչը, փախստական տոբթ. Արշակին կիներ, եւ 2000է աւելի այրեր՝ բոլորն ալ բանտարկուած: — Պիթիսի վալին Տիգրանակերտէն կը հեռագրէ որ քաղաքը գրաւած է: Անգամ մըն ալ յիշեցնենք, որ գրաւուած վայրերուն մէջ մոլեգնօրէն կը գործադրուի ակն ընդ ականը. ուրիշ ինչ կերպ կայ այս ճանապարհները քիչ մը կասեցնելու: Վեր-

161.- Քափիթիլասին կը կոչուէր այն արտօնութիւնը, որնով օսմանեան պետութիւնը կը զիջէր երոպական պարտատէր երկիրներուն՝ շահագործելու իր հանքերը, մետաղագիտութիւնը, փոստ-հեռագրատունը եւայլն: Ընդհ. պատերազմի սկիզբը, թրքական կառավարութիւնը միակողմանի կերպով ջնջուած յայտարարած էր այդ արտօնութիւնները:

162.- Գերմանիոյ նոր դեսպանը, յաջորդը Վանկեմհայմի: 163.- Խառն ժողով — այդպէս կը կոչուէր Կ. Պոլսոյ հայոց պատրիարքութեան Կեդր. վարչութեան կրօնական եւ քաղաքական ժողովներու միացեալ նիստը:

164.- Լիման Օթթօ Ֆոն Ձանտերս — գերմանացի գորավար, որ թրքական բանակը մարզելու առաքելութեամբ դրկուած էր:

ջը — վերջը երբ մենք յուսահատինք, եւ այստեղ ալ սկըսին նոյն բաները, պիտի ընենք ինչ որ կու գայ մեր ձեռքէն, ա՛լ մեզի չ'իյնար ճշդել պատասխանատուութիւնները: Երգնկայէն երկու հայ սպաներ եկած են, մագապուր[ծ] ազատած մահէն՝ շնորհիւ իրենց թուրք ընկերներուն, որոնք իրենք զիրենք վտանգեր են քանիցս անոնց սիրոյն: Անճար տղաք են. այնքան շշմած՝ որ հիւլանդացեր են եւ հատ ու կտոր բաներ կրնան պատմել — միշտ տեսակ տեսակ: Բայց ամէնէն կարեւորն է բարեբանի այրի տիկին Վ. Փ.ի պատմութիւնը, զոր ամբողջութեամբ կ'արտագրենք այս եւ ներփակ թերթին մէջ: Զինքը չվտանգելու համար, կարգ մը բաներ ջնջած ենք, մնացածը տպեցէք նոյնութեամբ, առանց յիշելու տիկին[ին] սկզբնատուերը, եւն. այլ միայն իբրեւ ականատեսի պատմութիւն. — ահա այդ նամակը¹⁶⁵:

Ընկերներ!

Ոչ միայն բուն Հայաստանէն այլեւ Կիլիկիայէն Հալէպ հասած ժողովուրդէն ալ ոչ մէկ լուր, ասոնք 6-700

քիլոմետր հեռուները, անապատները պիտի ղրկուին կամ ղրկուած են, կենդանութեան ոչ մէկ նշոյլ: Միայն ճամբորդներէ տեղեկութիւն առնուած է որ Գարահիսարի սանճաքին եւ յարակից գազաներու եւ գիւղերու հայ ժողովուրդը մեծագոյն մասամբ ջարդուած է: Մարզուանէն ալ 100-150 տուն թրքացած են: Սուրէնը⁴² իրեններով տակաւին կը կուռի եղեր Գարահիսարի կողմերը, աջ ու ձախ աւերուելով: Կարելի չէ՞ օգնութեան հասնիլ թէկուզ չէթաներով: Բիճան⁴² կախուած է արդէն: Ինչպէս գրած ենք նախորդով: Շ. Գարահիսարի առաջնորդն ալ կախած են: Վաղը նորէն կը գրենք, հաղորդելով Նիկոմիդիոյ շրջանին դէպքերը եւ առօրեայ լուրեր: Գէթ միւլթարական լուր մը հասցնէիք, քանի մը ժամ սփոփելու համար մեզ այս զարհուրելի տագնապին մէջ, որ ուղղակի խելագարութեան կը տանի մեզ, մանաւանդ այս խցարգել վիճակով: Բ. Կապուտիկն ալ մեկնած է առանց մեր հաւանութեան: Գրեցէ՛ք, բարի ընկերներ, բայց մանաւանդ գործեցէ՛ք, ըրէ՛ք ինչ որ կարելի է: Ախ, յոյսի նշոյլ մը:

Համբոյրներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ

Յ. Գ.— Զօհրապի մահը պիտի հեռագրէինք. չեղաւ, հարկաւ հեռագիր եկած է:

ՆՈՅՆ

165.- Նշուած նամակը չկայ արխիւներում մէջ, բայց ան հրատարակուած է «Ականատեսներու պատմածը» խորագրով, «Հայաստան» քերթի Յուլիս 22, 25 եւ 29 թիւերում մէջ, ուրկէ քաղելով կու տանք յաջորդ թիւ 58 փաստաթուղթով:

58.– ԱԿԱՆԱՏԵՄՆԵՐՈՒ ՊԱՏՄԱԾԸ

(Բարեբոլոսի այրի տիկին Վ. Փ.ի պատմածը,
քաղուած «Հայաստան», 1915 թ. Յուլիս 22, 25, 29 քիտրեմ)

Ընկճուած՝ մինչեւ հիւանդութեան աստիճան, անպատոււրած՝ մինչեւ իրենց ամենանուրբ զգացումներուն խորքը, մարդկութենէ, աշխարհէ հիասթափուած, յուսահատած երկու եւրոպացի «քոյրեր» են՝ որ իրենց մարդասիրական պարտքը կատարելու համար թուրք գազաններէ հալածական՝ իրենց տեսած սարսափները կը պատմեն:

Հեռուէն կը սկսին անոնք ողբերգական պատմութիւնը, երբ անցած հոկտեմբերին Կարինի գինուորական հիւանդանոցին մէջ տիֆուսէ բռնուած ալեգարդ բժիշկ Թաշճեան, հոգեվարքի գալարումներուն մէջ աղօթքներ կը մըմնջար իր ցաւատանջ ժողովուրդին համար: Իր կեանքի վերջին վայրկեաններուն մէջ նախագագացած էր դժբախտ ծերունին գալիք արիւնոտ արհաւիրքը, որուն առաջին գոհը եղաւ իր պատանի գաւաղը, սպայ մը թուրք բանակին մէջ:

Ռուսեւթուրք պատերազմի հռչակման օրէն մինչեւ ապրիլի սկիզբները Կարինի հայութեան գլխուն կախուած էր ծրագրուած ջարդի սպառնալիքը: Եւ միայն շնորհիւ պարկեշտ թուրքի մը, որ դիւային ծրագրին գոյութիւնը իմացուցած էր բժիշկ Թաշճեանին եւ անոր միջոցով երկու «քոյր»երուն՝ քաղաքի գերմանացի քոմանտանը կրցաւ փրկել հայ ազգաբնակչութիւնը բնաջնջումէ եւ ասոր համար հարկադրուեցաւ հրաժարական տալ:

Ոչ նուազ օգտակար եղաւ հայերուն նաեւ Կարինի գերմանական հիւպատոսը, որու մասին հայերը մինչեւ օրս ալ գովեստով կը խօսին: Սակայն այս միջամտութիւնները այն արդիւնքը ունեցան, որ թուրքերը սկսան ծուռ աչքով նայիլ օտարներուն: Այսպէս, Կարինէն ստիպուած եղաւ հեռանալ ամերիկեան միսիոնը, որ եկած էր Սեբաստիայէն՝ օգնելու համար պատերազմէն վնասուածներուն: Ու որպէսզի երկրին ներսը տեղի ունեցող եւ յետագային ունենալիք գազանութիւնները ծածուկ մնան օտարներու նայուածքէն՝ արգիլուեցաւ Փոքր-Ասիոյ մէջ գտնուող բոլոր միսիոններուն, կառավարութեան արարքներու այս միակ վկաններուն, թղթակցիլ կամ հեռագրական յարաբերութիւն ունենալ իրար հետ: Միակ բանը, որ թոյլատրուեցաւ իրենց, Պոլիս եղող մըսթըր Փիթի հետ սոսկ դրամական խնդիրներու մասին հեռագրով հաղորդակցիլն էր:

Երբ հիւանդութիւնները սկսան ծայր տալ Երզնկայի մէջ, քոյրերը ապրիլին հոն փութացին, տանելով իրենց հետ ճնշող տպաւորութիւնը հազարաւոր մահերուն եւ հայկական ջարդի չարագուշակ շշուկներուն:

Գալով տեղահանութեան սոսկալի աղէտին՝ քոյրերու կարծիքով, Երզնկա իրենց եղած ատենը՝ Կարինէն մինչեւ 500 հայ ընտանիք տարուած էին անծանօթ ուղղութեամբ, հաւանօրէն Սարբերդէն հարաւ:

Երզնկայի մասին քոյրերը կը պատմեն արդէն իբրեւ ականատեսներ:

Օր մը, քաղաքէն մէկ ժամ հեռու գտնուող գինուորական հիւանդանոցին կառավարիչ գերմանացի բժիշկ Քօլայ կը ժողվէ բոլոր պաշտօնեաները եւ յայտնելով անոնց Վանի հայերուն ապստամբութեան լուրը՝ կ'ըսէ թէ կառավարութիւնը ստիպուած է նախագգուշական միջոցներու դիմել, բանտարկելով կամ աքսորելով տեղին հայերը:

Հազիւ շաբաթ մը անցած, կը սկսին ձերբակալել հայ հարուստներն ու մտաւորականները եւ Սարբերդ աքսորել: Ճիշդ է, անոնցմէ լուր եկած է՝ թէ տեղ հասած են. բայց ատիկա կասկածելի կը թուի, ենթադրուելով թէ կառավարութիւնը ինքը տարածած է այդ լուրը: Հաւանականը այն է որ բոլոր աքսորեալները ճամբան կոտորուած են...

Քանի մը օր ետք ճամբայ կը հանուին երկրորդ եւ երրորդ խմբերը, որ ըսել է՝ գրեթէ ամբողջ ազգաբնակչութիւնը:

Երբ այս խմբերը Քեմախ-Դէրէսի կը հասնին, կամուրջին վրայ եղող ժանդարմները եւ ոստիկանները երկու կրակի մէջ կ'առնեն զանոնք եւ կը կոտորեն: Այս սխրագործութեան մասին միամտաբար պատմած են ջարդարար ոստիկանները իրենք, յարելով թէ ըրած են ատիկան կառավարութեան հրամանով եւ հակառակ իրենց կամքին:

Երզնկայի մէջ, իրենց տան դիրքէն, որ կ'իշխէ Դերջանի, Բաբերդի եւ Կարինի ճամբաներու հանգոյցին, քոյրերը օրը օրին տեսած են հազարաւոր հայերու կարաւաններ, որոնք սահմանուած էին քշուելու անծանօթ ուղղութիւններով: Ու ժանդարմները իրենց ուղղուած հարցումներուն միշտ ալ կը պատասխանէին, թէ տարագիր «կեափուր»ներու խմբերը աւելի բազմամարդ եղած են, բայց շարունակ ջարդելով միայն այսքանը բերած հասցուցած են այստեղ:

Ու երբ քոյրերէն մէկը ծայրայեղ յուզումի մէջ կը հարցնէ ժանդարմի մը թէ՛ ինչո՞ւ կը գործէ այդ բարբարոսութիւնը, ան կը պատասխանէ թէ՛ ինք անձամբ մասնակցած չէ, իսկ իր ընկերները հարկադրուած էին համակերպիլ վերէն տրուած հրամանին, այն է՝ մորթելով վարել հայերու կարաւանները: Յետոյ ժանդարմը

կը պատմէ որ ճամբաները լեցուն են անթաղ դիակներով, եւ ինք խղճահարուելով թաղած է երեք կիներու մերկ ու խոշտանգուած դիակները:

Քոյրերը այնուհետեւ կը սկսին յորդորել՝ թէ այս ամէնը անթոյլատրելի մեղքեր են: Ու այդ օրուընէ քոյրերը կը դիտուին իբրեւ «կասկածելի»ներ, եւ բժիշկ Քօլայ ուղղակի կը յայտարարէ անոնց թէ իրենց ընթացքը երկրին քաղաքականութեան դէմ է...

Քոյրերը օրերով ականատես եղած են եղերական կարաւաններու շարժման, իսկ յաճախ կարճ տարածութիւն մը մինչեւ իսկ հետերնին գացած են:

Ամէն անգամ, երբ նոր կարաւան մը կը հասնէր Երզնկա, մահամետական ամբոխը դիւալին ցնծութեամբ դուրս կ'ելլէր քաղաքէն, ու ամէն մէկը իրեն համար կ'ընտրէր իր հաւնած աղջիկները կամ երեխաները:

Վերջը քոյրերն ալ որոշեցին՝ երեխաներ առնել, գոնէ անոնցմէ մէկ քանին ազատած լինելու համար: Յաջողեցան ստանալ 8-14 տարեկան 4 մանչ եւ երկու աղջիկ, ինչպէս նաեւ 4 տարեկան աղջիկ մը: Նոյն օրը այս վերջինս յանձնեցին հիւանդանոցի թուրք խոհարարուհիին, որ ուղեցի հիւանդանոց, մինչեւ որ իրենք կու գային: Սակայն, երբ աղջիկը հիւանդանոց բերուեցաւ, թուրք վերակացուն գազանաբար գայն փողոց նետեց եւ լաւ մը ծեծեց խոհարարուհիին: Թշուառ երեխայի վիճակը մինչեւ վերջն ալ անյայտ մնաց քոյրերուն:

Միւս 6 երեխաները հիւանդանոց բերուելուն՝ անոնք ալ, քոյրերն ալ արտաքսուեցան:

Ճարահատ քոյրերը երեխաներու հետ ապաստանեցան պանդոկ մը, եւ որովհետեւ թուրքերը միշտ ալ պնդած էին թէ՛ կարաւաններու վրայ յարձակողները եւ խժուրթիւններ գործողները քրդերը եղած են, քոյրերը որոշեցին երթալ վերջին կարաւանին հետ եւ համոզել յարձակող քուրդերը՝ ետ կենալ իրենց ընթացքէն: Միամիտ եւրոպուհիները կը կարծէին թէ՛ իրենք երկարատեան գործած լինելով քուրդերու մէջ՝ պիտի յաջողին ազդել անոնց վրայ եւ փրկել գոնէ այդ մէկ կարաւանը:

Բայց նախ քան այդ, կ'երթան միւթէսարըֆի օգնականին ու կը յայտնեն որ 6 երեխաներ առած են պահելու համար: Օգնականը կը հարցնէ երեխաներու տարիքի եւ սեռի մասին եւ կ'առարկէ թէ՛ ինչո՞ւ մանչեր եւ ոչ աղջիկներ վերցուցած են. վերջը կը յայտնէ թէ պիտի փոխէ երեխաներու քրիստոնէական անունները: Քոյրերը չեն ընդդիմանար:

Այդ գիշերը քոյրերը երեխաներու հետ կը մնան պանդոկը: Երեխաներէն մէկը, պատուհանէն դուրս նայելով, կը նկատէ իր հայրը սպաննող թուրքը եւ վազելով կը յայտնէ ատոր մասին քոյրերուն, յարելով թէ հայրը խողխողուելէ առաջ դրամները իրեն տուած էր, եւ կը յանձնէ այդ դրամը, քանի մը զրուշ, քոյրերուն:

Ականատես քոյրերը կը պատմեն՝ թէ ինչպէս ամբողջ օրուան ընթացքին հայ կիներ եւ երեխաներ կը պաղատէին թէ՛ իրենց եւ թէ դահիճներուն փրկել գիրենք:

Գիշերը միւթէսարըֆը կ'իմանայ քոյրերուն որոշումը՝ երեխաներու հետ միանալ կարաւանին, եւ մարդ կը դրկէ որ գտնեն բերեն գանոնք իր մօտ:

Առտու քոյրերը հարկադրուած կը լինին ներկայանալ միւթէսարըֆին, որ կ'ընդունի գանոնք կոպտաբար ու հայհոյանքներով: Առաջին խօսք կը լինի թէ՛ երեք թոյլ պիտի չտայ հետեւի կարաւանին երեխաներու հետ: «Դուք, — կը պոռայ կատաղած հրէշը, — ձեր կին վիճակով կ'ուզէք քաղաքականութեամբ զբաղիլ: Անմիջապէս պէտք է ճամբայ իյնաք»: Ու գանգահարելով կը հրամայէ ծառաներուն երթալ պանդոկ եւ երեխաները վերցնել, ինչ որ իսկոյն կը գործադրուի:

Երբ քոյրերը կը վերադառնան պանդոկ, տէրը կը յայտնէ թէ՛ խստիւ արգիլուած է կասկածելիներ եւ հայեր ներս առնել:

Քոյրերը կը մնան փողոցը: Այդտեղ ոստիկաններ կը մօտենան անոնց եւ կը պահանջեն երեխաներու կողմէ իրենց տրուած դրամները, առարկելով թէ՛ նոյն իրենց երեխաներու համար պիտի ծախսեն: Քոյրերը կը մերժեն, հաստատ համոզուած որ երեխաները արդէն կոտորուած են:

Պատահած աղէտներու պատճառով Բաբերդի հայ ազգաբնակչութիւնը սարսափահար՝ խոր սուգի մէջ թաղուած էր. ամէն տուն արիւն կու լար եւ ժամէ ժամ կը սպասէր նոր պատահարներու:

Շաբաթէ մի ի վեր հայ գիւղերը դատարկուած էին իրենց բնակչութենէն, եւ կը լսէինք թէ ճամբուն վրայ գոհ գացած էին ոստիկաններու եւ չէթաներու վայրագութեանց:

Մեր մեկնումէն երեք օր առաջ, 8 օրուան բանտարկութենէ յետոյ, քաղաքին մէջ կախաղան հանուած էին առաջնորդ Անանիա վարդապետ Հազարապետեան, քաղաքին ազնուականներէն Յովհաննէս Աղապապեան, Վաղարշակ Լուսիկեան, գիւղին հարուստներէն՝ Զաքրիոս Պալախարցի եւ ուրիշներ, ամբողջ 8 հոգի:

Քաղաքէն 7-8 երեւելի անձնաւորութիւններ ալ իրենց տան բակին մէջ սպաննուած էին, տեղահանութեան համակերպած չլինելով: 70 կարեւոր հայեր բանտին մէջ կը հեծէին. ի վերջոյ իմացանք որ անոնք ալ սպաննուել են քաղաքէն դուրս, անտառներու մէջ:

Քաղաքին բնակիչներու երկու երրորդ մասը, քանի մը օր առաջ երկու անգամէն մեկնած լինելով, կարգը եկած էր մնացեալ հայերուն: Յունիս 1-ին, Լուսաւորչի պահոց երկուշաբթի օրը, կարաւանին հետ ինկանք ճամբայ, Երզնկա մեկնելու համար: Մեզի կ'ընկերանային 15 ոստիկաններ: Քաղաքապետը ուրախ գուարթ ճամբու դրաւ 4-500 հոգիէ բաղկացած կարաւանը:

Հագիւ քաղաքէն քանի մը ժամ հեռացած էինք, հրագէններով, լախտերով, կացիներով զինուած՝ ձիաւոր չէթաներու եւ թուրք գիւղացիներու անհամար բազմութիւն մը շրջապատեց: Նախ ամէնքս կողոպտեցին, ձիերը ոստիկանները ծախեցին թուրք գիւղացիներու եւ դրամը գրպանեցին: Բոլորին վրայ, մինչեւ իսկ կիներու եւ աղջիկներու, մանրակրկիտ խուզարկելով, առին՝ ինչ որ կար պահուած, ժողովուրդին բոլոր ուտեստը աւարի տուին ու յետոյ սկսան արուները մէկիկ մէկիկ հրագէնով սպաննել: Երկու հարուած միայն կը բաւէր գանոնք գետին զլորելու: Իմ մօտս սպաննեցին Դերջան գիւղացի Տ. Վահան քահանան, ինչպէս եւ ծերունի Տ. Միքայէլը, որ 90 անց է. վեց-եօթը օրուայ մէջ 15 տարեկանէ վեր բոլոր արուները սպաննեցին հետզհետէ:

Չէթաները լաչակները վեր կ'առնէին, եւ որքան գեղեցիկ կ'ին եւ աղջիկ որ տեսնէին, ձիու վրայ դնելով կը տանէին, միամեայ երեխաներ գետին ձգելով:

Ճամբուն վրայ հանդիպեցանք նախապէս տեղահան եղած էրիկ մարդերու, պատանիներու, որոնք անկենդան եւ արիւնաթաթալ գետին ինկած էին. հանդիպեցանք նաեւ քիչ թուով կիներու եւ աղջիկներու, որոնք իրենց զաւկին կամ ամուսիններուն քով սպաննուած էին: Լերան գլուխները, ձորերու մէջ տեսանք անխնամ թողուած ծերունիներ, ծծկեր երեխաներ, որոնց ձայնը մարած էր լացէն:

Չէին թողուր գիշերել գիւղերու մէջ, բացօթեայ կը գիշերէինք լեռներու եւ ձորերու մէջ: Գիշերային մթութեան մէջ ոստիկաններու եւ չէթաներու կողմէ անխոստովանելի արարքներ կը գործուէին: Կսկիծէն ու անօթութենէն քալելու անկարող ժողովուրդը ճամբան խոտ կ'ուտէր: Երեկոները մօտակայ գիւղերէն ոստիկանները կը բերէին չորաբեկ հացեր, որոնցմէ հագիւ մէկ մէկ պատառ կ'իյնար մեզմէ իւրաքանչիւրին: Անօթութենէ ու կսկիծէ յանկարծամահ եղողներ չպակսեցան:

Առաւօտ մը 50-60 կառք տեսանք ճամբուն վրայ. պոլսեցի 30 այրիացած թրքուհիներ էին, որոնց սպայ ամուսինները պատերազմին մէջ մեռած՝ իրենք կահ կարասիներով կը վերադառնային Պոլիս:

Այս թրքուհիները իւրաքանչիւրին քով 10 տարեկանէն վար 5-6 հայ աղջիկներ կը գտնուէին: Թրքուհիներէն մին նշան ըրաւ ոստիկանի մը եւ հայ էրիկ մարդ մը ուզեց սպաննելու համար:

- Հանրմ, կրնա՞ս սպաննել,— հարցուց ոստիկանը:
- Ինչո՞ւ չէ,— պատասխանեց եւ մէջքէն ատրճանակ հանելով դժբախտ հայը գետին տապալեց:

Հոս չմոռնամ շեշտելու թէ՛ թուրքերը երբեք արու մանուկներ չէին ուզեր ունենալ. ընդհակառակը, բոլոր արուները կը ջանային բնաջինջ ընել, ի՛նչ տարիքի մէջ ալ գտնուէին անոնք:

Այդ թրքուհիներէն մին աղջիկ մը ուզեց միասին տանիլ: Երեխան լացաւ, մայրն ալ: Վերջապէս երկուքը մէկ առին, իսլամացնելու պայմանով, եւ անմիջապէս անուններն ալ փոխեցին:

Աղէտին ամէնէն զարհուրելիին վերապահուած է եղեր Երզնկայի դաշտին մէջ, Սփրատ գետին մօտերը:

Մարդկային ոչ մէկ երեւակայութիւն պիտի կրնայ նկարել այս աղբիարչ տեսարանը. կիներու, աղջիկներու, մանուկներու երկինք բարձրացուցած վայնասուներ լեռներ կը դղրդէին: Աղջիկները, կիները, 15 տարեկանէն վար ողջ մնացող մանուկները ոստիկաններու եւ չէթաներու կողմէ գետը նետուեցան: Անոնք որ լողալու շարժում մը կ'ընէին, գետին մէջ գնդակահար կը լինէին: Գետը դիակներով լեցուեցաւ:

Երբ Երզնկա հասայ, հոն հայ մը չտեսայ: Բազմաթիւ հայ աղջիկներ ու կիներ կային, բոլորն ալ բռնի ամուսնացած, ինչպէս կը պատմէին թուրքերը իրենք: Կարաւանը շատոնց շարժած էր արդէն: Երբ էնտերէզ հասանք, արտերը, լեռները, ձորերը լեցուած էին ուռած եւ սեւցած դիակներով. մթնոլորտը ապականուած էր գարշահոտութեամբ: Ճամբուն վրայ ոստիկանները նշմարեցին վեց կիներ, իրենց գիրկը գտնուած մանուկներով: Ուշադրութեամբ դիտելով, տեսան որ պիտերնին ածիլած երիտասարդներ էին, կանացի տարագներով, բոլորն ալ սպաննեցին: Ամբողջ 32 օր ճամբորդեցինք՝ հայու մը երես չտեսանք: Պոլսի մէջ հայեր տակաւին կ'ապրին եղեր...

Փաստ. 1158-85
N° 598

59.- ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԵԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ

Սոֆիա, 23 Յուլիս 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր 576 թուահամար նամակը: Կը շարունակենք միշտ տիրուր արձագանգը ըլլալ Երկրի լուրերուն որոնք հետզհետէ աւելի կը սաստկանան եւ սպառնական կը դառնան մեր գոյութեան տեսակէտէն:

Վերջապ 4 Յունիս.— Ամերիկեան mission-ը հինգ հոգիէ կը բաղկանայ եղեր, որոնք երկուքը մնացեր են Պուլկարիա: Եկեր են կարօտներուն օգնելու: Ներս չպիտի կրնան երթալ, որովհետեւ, ինչպէս խոստովաներ են, կառավարութիւնը թոյլ չի տար: Իրենց թելադրուած է որ կարելին ընեն երթալու համար: Ամերիկեան դեսպանը մէկ երկու օր առաջ Ուիլսոնին ուղղեր է ամենախիստ հեռագիր մը, որուն նմանը չէ խմբագրած եղեր մինչեւ հիմա:

Մարզուանի մէջ միսիոնար մը լալով պատմեր է իր տեսածները: Ըսենք այս առթիւ որ Շ. Գարահիսարը, դիմադրած ըլլալով, մոխրակոյտի վերածուած է, իսկ Թոքատ եւ Մարզուան տակաւին կը դիմադրեն եղեր:

Զաւէնը քանի մը օր առաջ դատական նախարարին գնաց, որ առանց այլեւայլի յայտներ է թէ որոշուած է ամբողջ հայութիւնը տեղափոխել, զրկելով որոշ վայր մը կամ ցրուելով գանազան կողմեր, իբր վտանգաւոր տարր: Զաւէնը դիտել տուեր է որ զինքը ազատ ձգեն ժողովուրդը առնելու, ուզած կողմը երթալու: Նախարարը շատ նեղացեր է, որ այդպիսի միտք մը կ'արտայայտէ...: Զաւէնը յետոյ տեսակցեր է Խալիլ պէյի հետ, որ պատմեր է ծանօթ մասալները¹⁸⁶ (Վան, Մարզուան, Թոքատ). ըսեր է որ տակաւին բարենորոգումներու ինդրին ատեն հայերը աչքէ ելած էին, քանի որ եւրոպացի քննիչ պահանջեցին, թէ երբ պատերազմը սկսաւ, զինուորական իշխանութիւնը որոշած էր տեղափոխել բոլոր հայերը, որովհետեւ Ռուսիոյ պիտի միանային, բայց իրենք հակառակեցան. սակայն Վանի պարագան իրաւունք տուաւ զինուորական տարրին, որ հիմա ոչ մէկը մտիկ չ'ընեն զիրենք: Խոստացեր է միջնորդել որ մեղմացումներ ըլլան:

Ինչպէս կ'երեւայ Վանկնհայմը ետ կանչած են, մեր ցաւերուն հանդէպ ապիկար գտնուելուն համար?:

Պերլինէն հրահանգ եկած է այստեղի դեսպանատունը Վահաբը ազատելու համար անմիջական վտանգէ:

Այս շաբթու խուզարկութիւնները սկսան նաեւ Նի-

կոմիտիոյ շրջանին մէջ, ծանօթ սարսափներով: Պարտիզակի մէջ խորհրդակցութիւն մը կատարելու պատրուակով 80 հոգի կը հաւաքեն Ազգ. վարժարանը, եւ սարսափելի ծեծով գէնք կը պահանջեն: Իգմիտի միւթեսարը ինք կը կարգադրէ ամէն բան: Կը պատմէ Վանայ շարժումը. կ'ըսէ որ ահագին քանակութեամբ գէնք գտնուած է, թէ անոնց տեփոն հոս է: Մաս մը կը յանձնեն, բայց նորէն կը պահանջուի ու նորէն տանջանք: Կ'անցնին Օվաճըք. քահանային մօրուքը կը փետեն փողոցին մէջ, եւ երբ ժողովուրդը կը յայտնէ որ բան մը չ'ունին, զիւղը կը պաշարեն 50 ժանտարմայով եւ շրջակայ չեքէզներով: Նոյն բաները կ'ըլլան Նիկոմիտիոյ քաղաքին մէջ: Հալածանքը չէ դադրած տակաւին. այսօր նոր լուրերու կը սպասենք: Տարակոյս չկայ որ ժողովուրդը զինաթափ ընելէ վերջ պիտի քչեն ներս, ինչպէս եղաւ ամէն տեղ: Յետոյ արդէն կարգը Պոլիսինն է:

Մերիները (Ակնունի) Զօհրապին եւ Վարդգէսին հետ զրկուեր են Տիգրանակերտ. այսօր վաղը լուրի կը սպասենք:

Վերջապ 7 Յուլիս.— Ինչպէս կ'իմանանք ճեմալ փաշան 70000 զօրքով մեկներ է Հայաստան, Վանը վերագրուելու համար.— Չէ՞ք կարծեր որ նոր Լեմպերկ մը ունենան քեռիները:

Բռնի դաղթի մասին վերջին լուրն այն է, որ Սիս ու Տարսոնը կը պարպեն:

Գերման դեսպանը ուղղակի հասկցուցած է թէ՛ ոչ մէկ միջամտութիւն կրնան ընել, որովհետեւ իրենց մտիկ ընող չկայ: Երեւի յոյներն ալ պիտի քչեն, կամ արդէն սկսած են շատ մը տեղերու մէջ. կը ստուգենք: Առայժմ սա ճիշդ է որ անոնք ալ դիմած են գերման դեսպանին, որ մերժողական պատասխանով մը ճամբեր է: Յետոյ էնվերին գացեր են, որ վունտեր է ըսելով թէ «դուք օտարներուն կը դիմէք, մենք օտարներուն խօսքով բան չենք ըներ»:

Մարզուան ջարդ եղած է, մնացած ժողովուրդն ալ քչեր են. իբրեւ թէ 600 մավգեր գտնուած է: Մարզուանի ինչպէս եւ Տարսոնի միսիոնարները որոնք հոս են, չեն կրնար վերադառնալ պետական արգելքով:

Պոլսոյ Օսմ. Վարժապետանոցին 7 հայ շրջանա-

166.- Մասալ – հեքիաթ, յերիւրածոյ, շիւծու պատմութիւն:

լարտները թունաւորուեցան առջի օր եւ վանեցի Խոսրով Պարթեւեան մեռաւ. միւսները կը դարմանուին. կը հաւաստէին թէ դիտամբ թունաւորած են, բայց իրենց ազատ ընկերները չեն հաւատար այդպիսի բանի մը եւ ժանգոտած պնակներու կը վերագրեն, եւ միայն հայեր թունաւորուած ըլլալու պարագան ալ անով կը բացատրեն որ թուրքերը ծոմ էին, այդ 7 հայերուն առանձին կերակուր տրուած է: Ամէն պարագայի մէջ շատ խորհրդաւոր գործ մըն է եւ կ'աշխատինք ճշդել: Մեծ մասը մեր ընկերներէն են, բոլորն ալ գաւառացի եւ շատ յաջողութեամբ պսակուած:

Վիշապ 9 Յուլիս.— Ե. Գարահիսարէն յոյն սպայ մը եկած է, որ շատ կարեւոր տեղեկութիւններ ունի. ժամադիր ենք բոլոր լուրերը քաղելու: Առ այժմ իր պատմածը այն է որ, երբ քաղաքին մէջ 7 հոգի կախել կ'ուզէին, Սուրէնը⁴² կամ իր ընկերները հասեր եւ արգելել են: Ամբողջ ժողովուրդը ոտքի ելեր է. քաղաքը եւ շրջակայ բոլոր գիւղերը մոխրակոյտի վերածուեր են. միայն յունական 10 գիւղ մոխիր դարձած է: Բոլոր էրիկ մարդիկը մինչեւ 55 տարեկանները գացած են եղեր, եւ ոչ մէկը ողջ մնացած է. մնացած ժողովուրդը քշեր են, չգիտեն ո՛ւր: Սուրէնը 1000 հոգիով կ'ասպատակէ աջ եւ ձախ: Զօրք դրկուեր է բայց անօգուտ: Հիմա աւելի կարեւոր ուժ մը կը դրկուի եղեր: Կը պատմէ որ Սուրէնը եւ իրենները կրթնած են Տերսիմի: Այսպէս կամ այնպէս ամէն բան մոլոր է մեզ համար. ոչ միայն մենք, այլեւ ուրիշ ով որ հեռագիր գարկաւ Սըվազ, ոչ մէկ պատասխան եկաւ, մինչդեռ գաւառներէ յոյներ կը հասնին, այս կամ այն ձեւով: Ինչպէս կ'երեւի տղաքը յուսահատական կուի մ'է որ կը մղեն, կտրուած ամէն կողմէ: Յոյներու տեղահանումը ճիշդ է. իրենց պատմութեան համաձայն արդէն 50000 հոգի տեղափոխուած է. բայց ո՛ւր, չգիտենք դեռ:

Կարնեցի վաճառականներէն Հրանտ Աղաջանեան, որ Պոլիսէն Այազ եւ Այազէն դարձեալ Պոլիս՝ պատերազմական ատեան փոխադրուած էր, սարսափելի տանջանքներու կ'ենթարկուի: Առջի օր ծեծի տակ, փորձեր են ստորագրել տալ թուղթ մը, որ կ'ըսէ թէ Խաթակ, Ակնունի, Զարդարեան (եւ միւսները) կարգադրած են կամաւորներու գործը, գէնքերու փոխադրումը եւայլն: Մարդը մինչեւ այսօր մերժած է ստորագրել. ի՛նչ խօսք որ փաստեր կ'ուզեն ճարել կախաղաններ շարելու համար անվնաս մարդեր. բայց չգիտենք ինչ պատճառով այսքան կը ծանրանան իր վրայ: Իրեն պէս ուրիշ մէկը չկայ որ Այազէն հոս բերուած ըլլայ դատուելու:

Երէկ յանկարծ ձերբակալեցին յայտնի վաճառական Իբրանտեանը եւ կեսարացի վաճառական Գայթաքճեանը. կ'ըսեն թէ ուրիշ 30 հոգի ալ պիտի բռնեն:

Պրիսլաւը Թորփիլանաւերով գացած էր Ռուսմանիայէն անցած ռազմանիւթը փոխադրելու. վերագարձաւ

եւ Սթենքիայի առջեւ կեցաւ ծանրապէս վնասուած: Միւսներն ալ փախած են եղեր, որով եւ փոխադրումը չէ յաջողած:

*
**

Կովկասի վրայով Մուշէն նամակ ստացանք 10 Յունիս, որմէ կը քաղենք հետեւեալները.— «Տիրապետութիւնը բոլոր ընկերները սպաննուած են: Բռնուած են Խարբերդի, Էրզրումի եւ Պոլսի գրեթէ բոլոր ընկերները. վերջինները աքսորուած են Այազ (ծանօթ.- ուրեմն Պոլսի նամակը ստացած են): Հոս փախստական են բոլոր ընկերները. վերջերս նաեւ Կոմսը: Զինուած խմբեր ունինք... Յարդ մեր դաշտը, որ քիչ վնասներով գերծ էր մնացեր միւս վայրերու բախտէն, վերջին օրերս մօտալուտ պայթման նշաններ ցոյց կու տայ: Մասսայական սպանութիւններ՝ կառավարութեան կողմէ, թալաններ՝ քրտերու կողմէ, ասոնք գործն են իթթիհատական ոճրագործ Հիլմիին (եկած Կարինէն). ժողովուրդը ահաբեկուած փախուտ է տալիս Մասուն: Այս վիճակին հանդէպ թէեւ անյոյս, հարկադրուած պիտի լինենք պայթեցնելու...: Վերին Մասուն, Սլիվան եւ Տիրապեքիւրի հայութեան մեծ տոկոսը ջարդուած, ցրուած են. նոյնը էրզրումում: Զարդուած են Պիթիսի հայ գիւղերը, Խնուսի գիւղերը: Թուրք թէ քրտեր բնակչութիւնը բոլորովին անյոյս է թուրք բանակի յաջողութիւնից: Դաշտի հիւսիսային քրտերը պատրաստուած են քաշուել Բուռաչէն, Խոյթ, Մոտկան, լեռներու մէջ: Մուսա Ղասրմ եւս վախնալով վրէժխնդրութենէ, ձեր յառաջխաղացման [պարագային] պիտի գաղթեն: Թորդանի, Պոհտանի եւ Սղերդի մէջ ծագած քրտական ապստամբութեան պատճառով, Դաշտի քրտերը հայերուն հովանաւորելու առաջարկ կ'ընեն: Հասկցուցած ենք որ կոտորելու, ջարդ կազմակերպելու համար է, որ տեղիս պաշտօնեաները իրենց ընտանիքները զրկեցին ներսերը: Ռուս բանակը չկրցաւ օգտուել իր յաղթութենէն Կոփի շրջանում. անարգել պիտի գայիք Մուշ:

Ընկերներ!

Ինչպէս կարգացիք լուրերը, վերին աստիճանի տխուր եւ յուսահատական մի կացութիւն ստեղծուած է. Տաճկահայաստանի բնակչութիւնը բնաջնջման նախօրեակին կը գտնուի: Մի քանի օր առաջ Սոֆիա եկան երկու գերման միսիոնարութիւններ, որոնք աքսորուած են Երզնկայէն իրենց ունեցած հայասէր ձգտումներուն համար. տեսակցեցանք. սարսափելի բաներ կը պատմեն (մանրամասնութիւնը թերթի մէջ գրուած է)¹⁶⁷: Բանից դուրս է գալիս որ բռնի գաղթն ալ խաբուսիկ մի խաղ

167.- Տես էջ 106 («Ակամաստեսներու պատմածք»):

է: Իրենք ականատես եղած են թէ ինչպէս Երզնկայի ժողովուրդը երբ քաղաքից դուրս կը հասնի, նախ չեթաներու կողմէ անմիջապէս կողոպտուտի կ'ենթարկուի եւ մի քիչ քալելէ վերջ կը սկսին անխնայ կոտորել առանց սեռի կամ տարիքի խտրութեան: Հասարակ պաշտօնեաներ գազան են կտրած եւ ամէն ինչ կը գործադրեն: Գաւառ չկայ որ ենթարկուած չըլլայ միեւնոյն դժբախտութեան: Բռնի իսլամացման դէպքերն ալ նուազեցան, քանի որ կառավարութիւնը գանոնք ալ կը քշէ. խեղճէրը յոյս մը ունէին որ գոնէ իսլամացման մէջ կը գտնեն իրենց կեանքի փրկութիւնը, բայց ան ալ չգօրեց:

Բնական է որ մինչեւ հիմա Հորիզոնից լսած կը լինէք մեր թանկագին ընկեր խեչոյին սպանուած. այս առթիւ Կովկասից ստացանք մի նամակ. թէպէտ մանրամասնութիւններ չկան, բայց եւ այնպէս կը պարզուի թէ ուր է սպանուած: Խեչոն ձիաւոր խմբով գացած էր Շատախի գիւղերը պաշտպանելու, քանի որ վերջերս հարաւից քիւրտերը յարձակումներ կը գործեն այդ շրջանի վրայ. եւ հոն կռուի ատեն կը սպաննուի:

Այժմ կատաղի կռիւները տեղի կ'ունենան Բիթլիսի եւ Մուշի ուղղութեամբ: Ըստ երեւոյթին թուրքերը բաւականաչափ ուժ բերած լինելու են Կարինից, քանի որ վերջերս յամառ դիմադրութիւն ցոյց կու տան: Հաւանաբար վերջին օրերս այդ ճակատամարտները որոշ ելքի մը կը յանգին եւ մենք բախտը կ'ունենանք ձեզ հեռագրելու Մուշի եւ Բաղէշի անկման լուրը:

Անցեալ անգամ ձեզ գրած ենք թէ Բերլինէն Տք. Լեփսիուսը եկած է եւ Վիչապ մեկնած: Կը լսենք որ հոն ինքը բաւական դժուարութեանց մատնուած է իր դիմումներուն մէջ: Պատրիարք եւ վարչ[ութեան] ժողովի անդամներ իրենց դիրքին անհամապատասխան ընթացքի մէջ գտնուած են. նոյնիսկ չեն կարողացեր մէկը նշա-

նակել որ նրա հետ միասին կատարեն դիմումները: Բայց եւ այնպէս, հակառակ այդ բոլորին նա անվհատ կը շարունակէ իր դիմումները աջ ու ձախ... արդիւնք մը ձեռք բերելու յոյսով: Մերոնց հետ յարաբերութեան մէջ է: Իր դիմումների մասին մանրամասնութիւններ չստացանք. երբ ստանանք կը գրենք:

Ստացանք ենք ձեր 162 եւ 170 թուահամար նամակները, որոնք մեծապէս գոհ կը թողուն մեզ ձեր տեղեկութիւններով: Դրամի մասին շատոնց գրած եւ հեռագրած ենք արդէն. նոյնիսկ հեռագրած ենք 10000 տալեր եւս ուղարկելու, քանի որ կարիքը մեծ է եւ մենք նորանոր ձեռնարկներու համար պէտք ունինք որքան կարելի է շատ դրամ ունենալ մեր տրամադրութեան տակ. ուստի կը խնդրենք, եթէ մինչեւ այս նամակը ստանալնիդ չէք ուղարկած վերոգրեալ գումարը, ընդփոյթ ուղարկէք մեզ, անմիջապէս մեզ հեռագրելով: Ձեր առաջարկը ի մասին Կիլիկիոյ, իր ատենին ձեռնարկներ եղած են, բայց մինչ այժմ որեւէ դրական քայլ առնուած չէ. երբ ընկ. Միքայէլ Վար[անդեան] հոս էր գրեց Անգլ[իոյ] արտ[աքին] գործ[ոց] նախ[արարին], բայց դեռ պատասխան ստացած չենք. երեւի առ այժմ չեն ուզեր նման ձեռնարկ մը ընել. ամէն պարագայի մէջ ձեր առաջարկը նկատողութեան առած ենք եւ շուտով կը խորհրդակցինք Եզրիպտոսի հետ եւ մեր կարծիքը կը յայտնենք:

Կովկասի անցքերու մասին արդէն ընկ. Վրացեանը օրը օրին ձեզ տեղեկութիւններ կը տայ օրուայ անցուդարձերու մասին: Այժմ ձեզ մի նմոյշ տալու համար, թէ որքան մեծ է ոգեւորութիւնը Կովկասի մէջ եւ ինչ ծրագիրներ կան մշակուած եւ գործադրելիք, արժէ մէջ բերել ընկ. Ռոստոմի հետեւեալ նամակը ուղղուած արտասահմանի մարմիններուն.—

*
* *

«Ընկերներ!

Վանի գրաւումով մենք արդէն համարեա մեր բոլոր միջոցներով կլանուած ենք դէպի վերանորոգչական գործը, որ այսօր անհրաժեշտութիւն կը ներկայացնէ մեր գոյութեան տեսակէտէն. ուստի անհրաժեշտ է որ արտասահմանի մեր ընկերները միաժամանակ միջոցներ ձեռք առնեն իրենց վայրերում մասամբ դիւրացնելու մեր աշխատանքները:

Պէտք է ձեռք բերել, բացի հրացաններից եւ փամփուշտներից, գնդացիներ եւ թնդանօթներ: Կառավարութիւնը իր վրայ է վերցնում փոխադրութեան գործը: Ուզել ենք նաեւ Ամերիկայից օդանաւորներ, սաւառակներ: Եթէ այս բոլորի մեր ձեռքի տակ մի երկու հատ լինէին, կապ հաստատուած կը լինէր զանազան զաւառների միջեւ ու քրդերը զսպուած կը լինէին:

Մեր նպատակն է կազմել մի կանոնաւոր դիվիզիա, իր հեծելազօրքային թնդանօթներով եւ այլ պարագաներով: Տեղական միլիցիայի հետ միասին, ռուս բանակի վրայ յենուած՝ կարող ենք ապահովել մեր երկիրը եւ պաշտպանել ռուս բանակի թիկունքը:

Մեր դրուժինաների թիւը չի աւելանում, կառավ[արութեան] տեղական շրջանակների կողմից յարուցուող դժուարութիւնների պատճառով. մեր համակիրների ջանքերը յաճախ ի գուր են անցնում. հակառակորդները սկզբում պնդում էին, թէ չպէտք է յոյս դնել կամաւորների վրայ իբր կանոնաւոր զօրքի, բայց երբ փաստերը սպասուածից աւելին ցոյց տուին (240 վերստ 12 օրում, մօտ 15 կռիւներով) տիրեց նախանձ եւ ձգտում խանգարելու առաջիկայի յաջողութիւնները: Թերթերում թոյլ չէին տալիս նպաստաւոր լուրեր տպել: Պաշտօնական հաղորդագրութեան մէջ յիշուած է ասորիներու աջակցութեան մասին, բայց ոչ մի խօսք ոչ միայն կամաւորների, այլև Վանի ապստամբների դերի մասին: Օգովին, որ պաշտպան էր մեր գնդերին, հեռացրին Օկանովսկու շտաբից: Նոր դրուժինաներու կազմութեան կարգադրութիւն էր ստացած Նիկոլայ Նիկոլայեւից: Կառավարութիւնը դեռ Սեպ[տեմբեր] ամսից առաջարկել է ձեռք բերել սեփական զէնքեր. ոչինչ չի արուած. յանցանքը մերն է: Գոնէ այժմ պէտք է լրջօրէն մտածել. եսպոնական հրացանների պատուէրի ձեռնարկ է եղել. գնացել է ընկ. Ք. ձեռք բերելու»:

*

* *

Առ այժմ այսքան, սպասելով ձեր նամակներուն

Ընկ. բարեկներով՝

Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 24-15

60.- ՌՈՍՏՈՍԷՆ «ԴԻՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիզ, 29/VII/1915

Սիրելիք, Անտոն եւ Միսակ

Ստացայ Յոնանի նամակը:

Խոստացել էր երկու օր յետոյ ուրիշ նամակ էլ գրել, բայց դեռ եւս ոչինչ չկայ: Արդեօք հիւանդացած չլինի:

Մեր կացութիւնը այժմ շատ [է] ծանր: Ահագին հոսանք կայ գաղթականների: Որովհետեւ չափազանց անակնկալ էր, ոչինչ չկայ կազմակերպուած: Ահագին թուով մեռնողներ կան, մեծ մասամբ մանուկներ: Բոլոր ընկերութիւնները փաթուեւ են, եռանդով գործում են. կառավարութիւնը խոստացել է խոշոր նպաստ, մօտ մէկ միլիոն ռուբլի:

Այստեղ մի կերպ կը կարգադրուի. բայց ի՞նչ է հիմա ներսի վիճակը: Ամբողջ կատաղութեան թոյնը մեր գլխին է թափւում. գոնէ Մշոյ դաշտը ազատուէր. 1-2 օր աւելի ուշ սկսուէր նահանջը, շատ բան փրկուած կը լինէր: Ի՞նչ է այժմ Սասուն ապաստանածների դրութիւնը: Ճիշտ է գէնք ունեն, բայց ինչո՞վ պէտք է կերակրուեն:

Վաղը մեկնելու եմ փախստականների վայրերը: Եթէ սիրտ լինի, այնտեղից էլ կը գրեմ:

Բարեկներս Գուստաւին, Միշէլին: Բարեւում են ձեզ Բաղդասարը եւ Օննիկը:

Ձեր Ռ.

Փաստ. 24-16

61.- ՌՈՍՏՈՍԷՆ ՅՈՆԱՆ ԴԱԻԹԵԱՆԻՆ (ԺԸՆԵԻ)

Թիֆլիզ, 30/VII/1915

Սիրելի Յոնան,

Արդէն իմացած կը լինէք, որ շատ վայրերում տղամարդկանց կոտորելուց յետոյ կանանց եւ երեխաներին քշել են, բայց թէ ուր, յայտնի չէ: Չէ՞ր արժի դիմել շուէյցարական կառավարութեանը, կամ աւելի լաւ՝ Կարմիր Խաչին, որ յանձն առնեն մի իսկական մարդասիրական գործ, այն է՝ մարդիկ ուղարկել, տեղեկանալ, թէ ինչ վիճակի մէջ են քուլաձները: Գոնէ օտար աչքը գուցէ կարողանայ գսպել գազանութիւնը:

Կանգ ենք առնում շուէյցարացիների վրայ, քանի որ նրանք իսկական չէզոքներ են: Կարելի էր դիմել ի հարկին եւ Միացեալ Նահանգներին:

Այս մասին կը խօսենք նաեւ Երեւանում, գուցէ եւ էջմիածնում, բայց դուք էլ այդտեղ մի բան մտածէք: Լսում ենք, որ Կարինն էլ են դատարկել, դա նշանակում է էլ տեղ չմնաց:

Ուրիշ նամակ կը գրեմ Երեւանից: Ստացայ ես հեռագիրը բժշկի մասին: Անհամբեր սպասում ենք նրա գալուստին: Սաֆրաստեանի հետ ի՞նչ ունէք:

Համբոյրներս ձեզ եւ Օրտանսին:

Քո Ռ.

Փաստ. 882-39

62.– ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԵՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 25 Յուլիս 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր 23 գոյգը: Նոր նամակ չունինք ձեզմէ: Վաղը սուրհանդակ կայ եղեր: Մասնաւոր բան մը չկայ այսօր: Երկու օրէ ի վեր զրոյց կը չըլի թէ Գիսակն ալ մեռած է: Չենք ստուգած տակաւին: Պոլսոյ ոստիկանութեան պետերուն գոց պահարաններ յանձնուած են, չգիտենք ինչ բովանդակութեամբ: Դիտելի է, որ ընդհ. ձերբակալութիւններէն առաջ ալ, այսպիսի կնքուած պահարաններ յանձնուած էին:

Պրոսայի հարուստները տաճկացած են, աղքատները քշած, շատերն իրենց զաւակները քանի մը մէծիտի ծախած են թուրքերու:

Ատափազարի ժողովուրդը ահագին վայնասուն հանած է կայարանը. կառավարութիւնը վախնալով որ թուրքերը կ'ազդուին, թմբուկներով թաղերը մոնետիկ պտտցուցեր եւ պատմեր են հայերու գէշութիւնները, պոմպաները: Դրամ ունեցողները կառախումբով զըրկած են, իսկ միւսները՝ ոտքով: Իբրեւ թէ Գոնիայէն 18 ժամ անդին տեղ մը պիտի երթան: Այրերը եւ կիները միշտ կը գատուին: Տոքթ. Լեփս[իոս]ը դեռ հոս է, ազդարարութիւնը չստուգուեցաւ: Չանդըրէն 7 հոգի դարձան, մէկը՝ Տոքթ Ա. Բարսեղեանը: 40 հոգի աքսորուած են [Տէր] Չօր, բայց մեզմէ մարդ չկայ:

Ընկերներ!

Մինչեւ այսօր ձեր գրածներէն այնպէս կը հետեւի որ՝ ընկերներու մասին աւելի կը մտածէք քան ամբողջ ժողովուրդին: Եթէ յուսահատական քայլեր պէտք է առնել մեր ընկերներու կախուած պարագային, անփառունակ բան մը պիտի ըլլայ, իսկ եթէ ժողովուրդին գոնէ մնացորդը փրկելու համար հարկ է համբերել մինչեւ ծայրը, այդ ալ վճռեցէք: Այս մասին աւելի երկար կը գրենք երբ ստանանք ձեր տեսակէտները, ձեր ակնկալութիւնները, եւ մեր ալ ամբողջ շրջանին վճռական կամքը:

Կը յուսա՞ք որ, եթէ Պուլկարիոյ բոլոր հայ կիները թափին վարչապետին կամ թագաւորին եւ միջամտութիւն խնդրեն, օգուտ մը ծագի. այսօր նորէն իմացանք որ Պուլկարիա պիտի մասնակցի 20-25 օրէն: Այնքան լսեցինք, որ ալ ձանձրացանք. եթէ ճիշդ է, գոնէ շտապէին մահամերձ ժողովուրդ մը փրկելու համար:

[ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԵՆ]

Փաստ. 1158-124

63.– ԱՊՐԻԼ 24-Ի ԱՌԱՋԻՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՍՈՖԻԱՅԻ ՄԷՁ

Այս յայտարարութիւնը տպելէ ետք, Սոֆիայի «Հայաստան» թերթը Օգոստոս ամսուան յաջորդական թիւերուն մէջ արձագանգ կը հանդիսանայ Պուլկարիոյ զանազան քաղաքներուն մէջ Սուզի օրուան ոգեկոչումներուն, վաճառատուներու փակ պահուելուն եւ այլ ձեռնարկներու: Նշենք այս առթիւ որ նման սգահանդէսներ սարքուած էին արդէն աւելի կանուխ, Սայիս ամիսէն սկսեալ կովկասեան կեդրոններուն մէջ:

ՄԵԾԱՊԱՏԻԻ ՏԻԱՐՔ,

Երկրի մէջ կատարուած բռնութիւններու, կոտորածի եւ տեղահանութեան դէպքերը մեծ յուզում եւ իրարանցում յառաջ բերած են գաղութիս հայութեան մէջ:

Բնաջնջուող ժողովուրդին օգնութիւն հասցնելու ամէն ձեռնարկ գրեթէ ապարդիւն մնացած է:

Կը դիմենք վերջին միջոցի մըն ալ:

Չանագան հոսանքներու ներկայացուցիչներու նախաձեռնութեամբ կազմելով Յանձնախումբ մը՝ որոշուեցաւ.–

Ա. Օգոստոսի 4-ին, երեքշաբթի օրը, փակել տալ բոլոր խանութներն ու վաճառատուները՝ ի նշան ընդհատուի:

Բ. Նոյն օրը կազմակերպել հոգեհանգիստ եւ սգահանդէս:

Գ. Հրաւիրելով օտար բարեկամներ, հասարակութիւններու ներկայացուցիչներ եւ հայ ժողովուրդը, պարզաբանել երկրի մէջ կատարուած աննախընթաց դէպքերը իրենց մանրմասնութիւններով եւ եղածներու մասին բողոքի որոշումներ տալով՝ զանոնք ներկայացնել տեղույն եւրոպական, դիւանագիտական ներկայացուցիչներուն եւ տեղական կառավարութեան, խնդրելով թախանձագին՝ ընել շուտ ընդ փոյթ ազդու միջամտութիւններ Բ. Դրան՝ վերջ մը դնելու համար հայկական սարսափներուն:

Կը խնդրենք նոյնպէս կազմել տեղույդ մէջ նման յանձնախումբ մը, աշխատիլ նոյն օրը գործադրել տալ տրուած այս որոշումները:

Կը յուսանք այս միջոցով օտար պաշտօնական շրջանակներու ուշադրութիւնը հրաւիրել մեր վրայ, մամուլը զբաղեցնել եւ գործնական արդիւնք մը ստանալ:

Յարգանքներով
ՍՈՖԻԱՅԻ ՆԱԽԱՉԵՌՆՈՂ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ
[Ստորագրութիւններ]

Փաստ. 882-40

64.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Վիշապ, 2/15 օգոստոս 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր յուլիս 30 գոյգը: Այսօր ստացանք ձեր յուլիս 27-ը: Այս հասցէին մի գրէք առայժմ, այլ միայն canalով, մինչեւ որ նոր հասցէ տանք: Ինչպէս յուլիս 18էն ասդին, ուրիշ նամակ չէք գրած:

1.- Ինչպէս գրած էինք, օրեր առաջ ոստիկանութեան բաժնուած էին պահարաններ, որոնք պիտի բացուէին պայրամէն յետոյ: Ընդհ. տպաւորութիւնը շատ գէշ էր, մանաւանդ որ, ինչպէս ստուգեցինք, գոց պահարանները կը վերաբերին անհամար ձերբակալութիւններու: Տեղահանութեան փոխարէն, գազանները որոշած էին հաւաքել գէթ 3/4-ը արու բնակչութեանց, իբրեւ յեղափոխական, կասկածելի միութեանց անդամ են: Տխուր զրոյցներ կը շրջէին շաբաթ եւ կիրակի օրերու համար, մենք ալ հարկադրուեցանք տեղափոխուիլ, երրորդ անգամ, չորրորդ անգամ ըլլալով, որովհետեւ բոլոր հայ տունները կոխելու, դասալիքներ կամ կասկածելիներ ձերբակալելու պատրաստութիւն կար. շաբաթէն առաջ տեղի ունեցան բազմաթիւ ձերբակալութիւններ. արդէն 70 հոգի աքսորուած են: Ձերբակալուեցան շատ վաճառականներ (Աղամեան, Մինասեան, Խերպէկեան, Գրիգորեան, Պասմաճեան եւն.): Կալանաւորներու մէջ էր նաեւ ծանօթ գրող Արտաշէս Յարութիւնեան: Խեղճը այնքան ծեծեր էին, որ աքսոր գացած ատեն, ստիպուած էր կօշիկները ձեռքը առնել, ոտքերու ցաւէն: Մեր ունի հայրն անգամ, որ գացած էր դրամ տանելու, միասին զրկեցին: Հեւիհեւ կը սպասենք շաբաթ օրուան: Իրիկուան դէմ իմացանք, որ գոց պահարանները իբր թէ ետ առնուեր են: Իսկ այսօր աւելի իրազեկ աղբիւրէ մը ճշդեցինք որ ամերիկեան, իտալական, բուլղարական, սպանիական եւ հոլանտական դեսպանները միասին խորհրդակցեր ու գացեր են Գերմանականին գանգատելու, որուն վրայ հալածանքը մեղմացեր է: Այսօր ալ արտասովոր բան մը չկար: Իբրեւ թէ կառավարութիւնը խոստացեր է դադրեցնել հալածանքը, կարգ մը կասկածելիներ միայն ձերբակալելով: Կը հետեւինք օրը օրին:

2.- Երէկ Այաշէն Տոքթ. Փաշայեանը կը հեռագրէր 20 ոսկի զրկել էնկիւրի, Սերովբէ Նորատունկեանի հասցէին. հեռագրով զրկեցինք, չենք գիտեր թէ ստացան, որովհետեւ հեռագիրը յուլիս 29 թուականը կը կրէր, եւ երկու օր պահեր էին: Դրամի առաքումը շատ դժուար

րութեան հանդիպեցաւ փոստին մէջ: Ինչպէս կը կասկածինք, նորէն խումբ մը ընկերներ զրկած են ներս քշելու համար, թէեւ այսօր խօսք կայ թէ Մովսէս Պետրոսեանը (որ ձեր կողմը մեկնեցաւ) հաւաստեր է որ Պոլիս կու գան: Չենք հաւատար վայրկեան մը իսկ:

3.- Տիգրանակերտէն ոչ մէկ լուր: Այս ընթացքով, ոչ անոնցմէ եւ ոչ ալ ընդհանուր ժողովուրդէն կարելի պիտի ըլլայ լուր առնել: Պայպլլ Հաուր¹⁶⁸ իմացեր է որ Սրվազի ժողովուրդը Խարբերդ է հասած 28 օրուան ճամբորդութենէ մը: Կրնա՞ք ձեր դահլիճին¹⁶⁸ թելադրել որ այստեղի դեսպանին միջոցաւ լուր պահանջեն, գոնէ Ակնունիի եւ ընկերներու մասին, հասա՞ծ են, ո՞ղջ են, ո՞ւր են:

Ընկերներ!

Ձեր վերջին նամակէն ալ պարզ կը տեսնուի որ տեսակէտի խոշոր տարբերութիւն մը կայ մեր եւ ձեր միջեւ: Միշտ գործելու արտօնութիւն տուած ատեն անգամ, կը նկատէք թէ մենք եթէ կրնանք փրկուիլ, վազ անցնինք: Սկիզբէն մինչեւ հիմա նկատի ունեցանք միայն մեր ընկերները, որոնք պատանդ են եւ ատոր համար կաշկանդուեցանք, իսկ հիմա որ ամբողջ հայ ժողովուրդը պատանդ է, տասն անգամ աւելի կը մտածենք: Մեր գերագոյն յուսահատութեան պահուն անգամ, փոխվրէժի մարմաջը երբեք չունեցանք. գիշեր ցերեկ կը մտածենք ընէ թէ չընելու մասին, բայց հալածական ժողովուրդին գէթ մնացորդը փրկելու — ատոր հետ մէկտեղ կալանաւորներն ալ անշուշտ — տեսակէտով եթէ՛ աքթն էր կտրուկ միջոցը՝ լաւ, եթէ ոչ, համբերելէն ուրիշ միջոց չկար: Եւ այսօր կը շարունակենք այդ ընթացքը, մանաւանդ որ 100ին մէկ chance¹⁵⁵ չենք տեսներ չարիքը արմատէն պոկելու: Մեր բարեկամներն ալ համբերութեան կողմն են: Եթէ տեղահանում ըլլար, դիմադրութիւնն անխուսափելի էր, բայց այդ տարբեր բան է բուն ծրագրէն: Մինչ բոլոր ընկերները միաձայն են որ տեղահանում չեղած ոչինչ կատարուի, կարծիքները երկուքի բաժնուած են տեղահանումի պարագային գործելու մասին: Այսինքն կամ բաւականանալ ժողովուրդը կրաւորական դիմադրութեան մղելով, եւ կամ առի-

168.- Այսինքն պոլկար կառավարութեան:

Թէն օգտուել ամէն բան ընելու: Վերջին տեսակէտը փոքրամասնութեան կարծիքն էր, հիմնուած այն ենթադրութեան վրայ թէ Պոլսէն դուրս ամբողջ ժողովուրդը կոտորուած է արդէն, եւ սպասելէն խեր մը չկայ: Այսպէս կամ այնպէս, այժմ կը սպասենք, թերեւս այս ճգնաժամն անցնելէ յետոյ, մանաւանդ եթէ Պոլսի գրաւուած ամիսէն աւելի չուշանայ, ժողովուրդին եթէ ոչ կէսը գոնէ %25ը կը փրկուի...

Մենք վայրկեան մը իսկ խորհած չենք մեր կաշին ազատելու մասին, եթէ գիտնանք որ կտրուկ գործողութենէ մը բարիք կը ծնի: Թէեւ հիմա կը կատողինք, կը փտինք ու կը մաշինք,— բայց ի՛նչ արած: Այաշի ընկերներն անշուշտ մեզի պէս կը խորհին խօսելով «բեկորներու մասին»: Ինչ կը վերաբերի մեր ընելիքին, մեծ բան մը չէ, բայց այսօրուրնէ գրելու պէտք ալ չկայ: Canalով կը գրենք, պէտք չէ մոռնալ որ ամէն բան պատրաստութեան շրջանի մէջ էր, երբ այս դէպքերը ծագեցան:

Դրամի պէտք չունինք: Աւելի քան 400 ոսկի կայ այժմ մեր քով: Աքսորականներու եւ տեղական ծախքերու հոգէն զատ, ուրիշ տեղ դրամ ղրկելու միջոց չկայ

արդէն: Քրմոյ(եան)ին 5 ոսկի վճարեցինք: Մէկ երկու օրէ ի վեր լուրեր կան Շամի վերագրաման մասի: Անգամ մըն ալ կը խնդրենք մեզ օրը օրին իրագեկ պահել կովկասեան անցուղարձերուն: Խեչոյին մահը¹⁵⁸ կ'իմանանք թերթերէն...: Ուրեմն շէնք շնորհք կապ մը չկայ ձեր եւ Թիֆլիզի միջեւ, դուք որ Եւրոպան կը ներկայացնէք: Ալ չենք զարմանար որ ամբողջ Ա ամիս Ազգբերուոյի կամ վերին մարմիններու կարծիքն իմանալ ուզեցինք, ու դուք հազար նեղութիւն կրեցիք լուր մը ստանալու... Թիֆլիզ մարդ չէ՞ մնացեր արդեօք: Յետոյ կը վախնանք թէ սահմանի վրայ պարզապէս մեր տղաքն է որ կը գործեն: Ո՞ւր մնաց, Մուշ, Բաղէշ անգամ չեն գրաւուած տակաւին: Կարինէն լուր չկայ. այս ընթացքով, ամիս մը յետոյ ամէն բան կանգ պիտի առնէ եւ ժողովրդին մնացորդն ալ ձմեռը պիտի կոտորուի, շնորհիւ մեր բարեկամներու զարհուրելի անհոգութեան: Կրակը վառեցին եւ աւերը կը դիտեն...

ՎԻՇԱՊԻ
ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ

Փաստ. 882-41

65.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Վիշապ, 4 օգոստ. 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր օգոստ. 2ը: Նոր նամակ չունինք ձեզմէ:

1.- Մեր բարեկամէն ճշդեցինք, որ դեսպանները հաւաքաբար դիմած են Բ. Դուռ, եւ բարեկամօրէն հասկըցուցած են թէ հալածանքը շարունակելը լաւ հետեւանք չունենար ոչ իրենց, ոչ ալ թուրքերուն համար: Որեւէ պահանջ չեն ըրած: Դուռը պատասխանած է թէ «բան մը կ'ընենք»:

Պոլսոյ մասին Ձաւէնը երէկ կ'ըսէր թէ վերջնական որոշում մը չեն տուած տակաւին: Մէկ մասը կ'առաջարկէ եղեր ձգել որ ժողովուրդը արտասահման երթայ օսմանեան հպատակութենէ հրաժարելով, իսկ միւս մասը կը պահանջէ անպատճառ քշել. այսպէս առկախ կը մնայ ինդիրը: Ձերբակալումները կը շարունակուին խումբ խումբ, ընդհանրապէս պանդուխտներ է որ կը հաւաքեն առ այժմ: — Խորհրդաւոր լուսթիւն մը կայ, որ շատ գէշ նշան է: Արդեօք պիտի չկրնանք արտաքին միջոցներով, գէթ այս վիճակին մէջ պահել չարիքը:

Ձաւէնը գոց պահարան մը ընդուներ է. իբրեւ թէ Բիւզանդիոնի եւ ժամանակի իմբադրատուններուն մէջ ժողով եղած է, եւ որոշեր են պահանջել որ պատրիարքը հրաժարի, եւ տեղապահ ընտրուի Իզմիրի առաջնորդ Ինճէեան վարդ.: Քաղաք[ական] եւ կրօն[ական] ժողովներն ալ ջնջուելով կազմուի «երեւելեաց ժողով» մը՝ երկու ծերակուտականներէն՝ Աբրահամ փաշա եւ Տիւպեր եւ ուրիշ պաշտօնեաներէ, ջնջուին Ազգ. Սահմանադրութիւնը, առանձնաշնորհումները, Փերմանները եւն.: Մի հրատարակէք այս լուրը, մինչեւ որ լաւ մը հասկընանք:

2.- Վերջին կալանաւորներուն մէջ է Արամ Չարըքը: Այսօր Ֆիրիպէ մեկնեցաւ ընկերուհի Հոփսիմէն, ձեզի

ալ կը հանդիպի: Տիկին Գիսակը կը մեկնի վաղը, Սոֆիա: Կը դիմաւորէք անշուշտ:

Անատուրուի ընկ[երութենէն] պահանջուեր է ճամբել բոլոր հայ պաշտօնեաները: Տնօրէնը պատասխաներ է որ եթէ արձակէ 8-900 հայ պաշտօնեաները, գիծը կը դադրի գործելէ:

Ճի՞շդ է Շամի վերագրաւման լուրը: Հարուած հարուածի վրայ. մեր բարեկամները¹⁶⁹ պարզապէս կրակը նետեր են մեզ եւ կը գողարձանան չէ՞ ... Էնվերի խօսքերէն կը հասկցուի որ Մուշն ալ պարպեր եւ ջարդեր են: Թղթ[ակցութեան] մէջ Էնվերի ըսած խօսքերուն տեղ, եթէ կ'ուզէք ջնջեցէք Էնվերի անունը եւ ըսէք նախարարին: Խօսքերը բառ բառ ճիշդ են եւ ըսած է Լեփս[իոս]ին, որ մեկնեցաւ երէկ: Հարկաւ պիտի տեսնուիք:

Ընկերներ!

Նամակի մասին ժլատ մի ըլլաք, ուրիշ մխիթարութիւն չունինք, եւ թող գոնէ քանի մը շող կաթի մեր հոգիներուն մէջ, որ կը թարշամին ժամէ ժամ, ափսո՛ս:

Արսլանպէկի եւ Պարտիզակի հայ զինուորներէն մօտ 200 հոգի, իրենց ճարած գէնքերով, անտառը ապաստաներ են: Երբ Պարտիզակը պարպուի, պիտի փորձէին ժողովուրդը լեռը հանել եւ գիւղը կրակի տալ:

Սուրէնը⁴² Օրտուէն քշուած քարաւանին հանդիպած է, կ'ըսեն: Միւս կողմէ կը պատմուի թէ պաշարէ նեղուելով՝ դէպի Շամ կ'երթայ եղեր: Ասէկօսէներ են, ստոյգ բան չգիտենք:

Այաչցիները բոլորը քշուած են Էնկիւրի, ինչպէս կը հաւաստեն: Երեւի [Տէր] Չօր պիտի ղրկեն եւ իրենց տեղ նոր կալանաւորներ պիտի լեցնեն: Հազար տեսակ գրոյց կը պտտի հասարակութեան մէջ, որ ջղագրգիռ է դարձեր: Իրիկուն է: Եթէ քիչ յետոյ նոր լուրեր ունենանք կը գրենք, ուստի միւս էջի լուսանցքն ալ փորձեցէք:

Համբողջներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ

169.- Այսիքն ուսերը:

Փաստ. 882-42

66.– ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԵՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

[Պոլիս], 6 օգոստ. 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր օգոստ. 4 գոյգը: Դարձեալ նամակ չունինք ձեզմէ: Արտակարգ բան մը չկայ այսօր.— Պանդուխտներու ձերբակալումները կը շարունակուին մեծ խստութեամբ: Առջի օր 150 հոգի աքսորուեցան: Դէպի Պուլկարիա գաղթն ալ կը շարունակուի, բայց այսօր մեկնողները չթողուցին չգիտենք ինչ պատճառով:

Մեր բարեկամին միջոցաւ դրկեցինք փոքր ծրար մը, գոր պիտի յանձնէք տիկին Գիսակին, իր անձնական թուղթերն են. նաեւ Ռուզանին²² երկու քոբի տետրակները: Բարի եղէք խնամով պահելու ասոնք, անձնական են: Բոլորը յանձնուած պիտի ըլլան տիկին թինեւի:

Ընկերուհի Հոփսիմէն եւ Մանիչակը, որոնք հարկաւ ձեզի հանդիպեցան, երկուքն ալ մեծ տրամադրութիւն ունէին Սարուստան²² անցնելու եւ գործնապէս ծառայելու. միայն միջոցներու մասին կը վարանէին. անշուշտ կը կարգադրէք ինչ որ պէտք է. այս առթիւ եթէ ուրիշ օրիորդներու պէտք կայ, կրնանք մեր ընկերուհիներէն դրկել. Հոփսիմէին քոյրն ալ այսօրուան մեկնողներուն մէջ էր եւ մնաց:

Այսօր իմացանք թէ Կելիպոլուի եւ Պուլայրի հիւանդանոցները Ռոտոսթօ փոխադրուած են: Իբր թէ Վիլհելմ Բ.¹⁴³ հեռագրած կ'ըլլայ որ եթէ ամիս մըն ալ դիմանան, յաղթութիւնը ապահով է: Գիշեր ցերեկ վիրաւոր կը հասնի: Հացի տազնապը չափազանց սուր հանգամանք առաւ այս շաբթուն, անոնքի չգոյութեան

պատճառով աղօրիքները չեն կրնար բանիլ, նպարեղէն են. ծայրը ծայրին են, բայց մանաւանդ հացի համար ամէն օր կուլ կայ: Վերջին պահուն կ'իմանանք թէ — իբրեւ գրոյց — եպարքոսը եւ Շէյխ ուլ-Իսլամը հրաժարելու վրայ են, իսկ էնվերն ու Թալթաթը Չաթալճա գացեր են, անգլիացիները Ուզուն-Քէօփրիլ կը կուտին:

Այսօր ոստիկաններ ներկայանալով Տիկին Ներսէս Փափագեանի եւ Տիկին Մուրատ[իւն] (Պոյաճեան) ազդարարներ են որ առաջինը Գոնիա եւ երկրորդը Կեսարիա երթան, ըսելով թէ «ձեր ամուսինները չպիտի դառնան»: Պիտի ստուգենք թէ միւս տարագիրներուն ալ նման ազդարարութիւն եղա՞ծ է:

Այսօրուան կառախումբէն արգիլքը են միայն հայերը, ետ դարձնելով կին աղջիկ են: Արդեօք ձեր կողմի հանրային կարծիքը շատ է գրգռուած այս խուճապային գաղթէն, եւ անո՞ր համար կ'արգիլեն, թէ ուրիշ չարաշուք դաւ մը կայ:

Պրուսայի շրջանն ալ ամբողջովին կը պարպեն: Ազատամարտի իմբադիրներէն Հ. Համբարձումեան էնկիւրի բանտէն կը գրէ թէ 30 հոգիով հոն եկած են: Դեռ չըկցանք ստուգել թէ բոլորը մէ՞կ են, եւ չե՞ն քշուած արդեօք: Ձեր բարեկամներուն ուշադրութեան յանձնեցինք, պարզապէս իբրեւ խղճի պարտք:

Գրեցէք ընկերներ:

Համբոյրներով
ՎԻՇԱՊԻ
ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԵՆ

Փաստ. 882-43

67.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Պոլիս, 8/21 օգոստ. 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր օգոստ. 6ր: Ձեզմէ նամակ չկայ ու չկայ...: Ինչպէս գրած էինք, Պոլսէն էնկիւրի փոխադրուած են 25-30 հոգի: Ոչ միայն Փափազեանի եւ Մուրատի այլեւ բոլոր այդ տեղափոխուածներուն կիները կամ մայրերը ազդարարութիւն ստացան շաբաթօր (այսօր) մեկնելու Գոնիա: Խեղճերը ահուղողի մատնուած դիմեցին պատրիարքին, որ էնվերին գթութիւնը հայցեց. եւ ահա երէկ բոլորին ալ նորէն լուր եկաւ որ տեղերնին մնան...: Խորամանկ ձե՞ւ մըն էր այս Պոլիսն ալ պարպելու: Չհակցանք:

Խնդիրը այն է որ առայժմ միայն պանդուխտներ կը հաւաքեն: Բարեգործականի անդամներուն լրակատար մէկ ցանկը պատրաստած են, ձերբակալելու. այս ալ յետաձգուած է առայժմ. կը լսենք, որ ճաւիտը¹⁷⁰ խորհուրդ տուեր է որ հալածանքը դադարի, որովհետեւ ահագին աղմուկ կը հանեն հայերը Եւրոպայի մէջ: Մէկ երկու օրէ ի վեր խորհրդակցութիւններ տեղի կ'ունենան: Ազդարարութիւն ստացողներուն մէջ կային Գ. Բարսեղեանի մայրը, Տիկին Տաղաւարեան, Ենովք Շահէն, Կիկօ, Շ. Քրիսեան, Փափազեան, Ս. Քիւրքճեան, Արիստակէս Գասպարեան եւն. ընտանիքները:

Պապական նուիրակը Թալէաթին գացած էր գան-

գատելու. պատասխաններ է թէ կաթողիկոսներուն համար բան մը կ'ընենք: Պայպը Հառլզէն ալ լուր կայ թէ հրամայուած է ոստիկանութեան՝ հանգիստ ձգել կաթողիկեւ բողոքական հայերը:

Այնթապէն Տոքթ. Շեփրտ եկաւ. կը պատմէ թէ Տարսոնի մօտ հանդիպեցաւ Ատաբազարի գաղթականներուն, սոսկալի թշուառութեան մէջ: Կիլիկիոյ շրջանէն դեռ կը մնան միայն Մարաշ եւ Ատանա, բայց իր կարծիքով անոնք ալ պիտի քշուին. այս կողմէն տարուածները կը քշուին Դամասկոսէն անդին, անշուշտ Զօր:

Նախապէս Սուլթանիէ (Գոնիա) քշուած 6-7000 գէյթիկներն ալ քշած են դէպի Զօր: Ձէյթիկներ լեռները ապաստանած փախստականները իրենց տեղերը զետեղուած թուրքերուն վրայ յարձակելով, շատերը սպաններ եւ գիւղը այրեր են:

Գոնիա-էնկիւրի ուր որ հինգ տուն հայ կայ, տեղահան ըրած են:

Նոր հասցէ նամակի համար (Փրանսերէն կամ գերմաներէն) M^{le} Valentine Indas-Madjar Jaddessi N° 38 tarlabachi-Péra.

Ինչպէս կը տեսնէք մէկ երկու օր է ի վեր թերթի թուղթերը խայտառակ են, եւ ճարահատ պիտի փոխենք եթէ այսպէս երթայ:

Համբոյրներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ

170.- Ճաւիտ.- Իթքիհատի ազդեցիկ դէմքերէն, ելեմտական նախարար:

Փաստ. 882-44

68.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Պոլիս, 11 օգոստ. [1915]

Ընկերներ!

Կը հաստատենք մեր օգոստ. 8ը: Ստացանք ձեր 4 եւ 6ը եւ տպագիրը:

Նախ՝ քանի մը պատասխան ձեր յուզած հարցերուն:— Մեր հեռանալու մասին երբեք խորհած չենք եւ միջոցներն ալ շատ վտանգաւոր են, գոնէ շատերու համար: Ձեր զրկած անցագիրները կը ստանանք, բայց տեսնենք ով կրնայ օգտուիլ: Քանի այս սպասողական վիճակը կայ, եւ քանի մենք կը հարկադրենք տղաքը որ չհեռանան, մենք ալ պատրաստ ենք մնալ մինչեւ վերջին պահը, թէկուզ մեռնելու համար: Մեր կարօտ ընկերներու մասին ձեր գրածը զարմանալի էր: Որո՞նք են այդ ընկերները որոնց մասին ոչ Արշալիրը գիտէ, ո՛չ ալ ուրիշներ: Զըլլայ որ խնամիրական խնդիրներ յուզեն: Առանց ատոր ալ շատերուն որոշ եւ կանոնաւոր օգնութիւններ կ'ըլլան մեր պատասխանատուութեամբ, պարզապէս տղաքը հոս պահելու համար: Օրինակ այսօր խումբ մը բռնի կը պահանջէր որ անպատճառ ձեռնարկ մը կատարուի, եթէ ոչ իրենք պիտի երթան, քանի որ կրնան բռնուիլ, իբրեւ գաւառացի: Թաքնուելու պարագային անօթի պիտի մնան եւ ահա դրամի խնդիր:

Այաչցիներու [?] ընտանիքները, որոնք մէկ երկու ամսական կանխիկ կ'ուզեն կամ յաւելում կը պահանջեն: Այս ընթացքով պիտի դառնանք աղքատախնամ մարմին մը: Ինչ կը վերաբերի ընկերուհիներուն, մենք համաձայն չենք այդպէս խումբ խումբ զրկելու: Նեղ օրերու համար պատրաստուած են անոնք, եւ եթէ այդ դժոխքէն ազատելու մասին միայն կը մտածեն, ապսո՛ս մեր ջանքերուն: Մնաց որ, այլեւս ոչ ոքի թոյլ չեն տար մեկնիլ:

Ընկերներ!

Կացութիւնը ոչնչով բարւոքած է: Ձերբակալումները կը շարունակուին հարիւրներով: Երէկ միայն բռնեցին 500 հոգի: Ճիշդ է որ առ այժմ ընտանիք ունեցող գաւառացիները ազատ կը ձգեն, բայց ո՞վ գիտէ: 1300 հոգի քշած են արդէն: Բոլորն ալ կը տանին կոտորելու: Չգիտենք, վերջը վերջը ի՞նչ փրկուած պիտի ըլլայ: Յօդուածով եւ նամակով քաղուածներ կը ներկայացնենք Գոնիայի առաջնորդին նամակէն: Կը տեսնենք որ մերձակայ շրջաններուն համար անգամ ոչ մէկ մեղմացում կայ եւ %75ը կոտորուած պիտի ըլլայ մինչեւ աքսորավայրը:

Տեղեկութիւններ քաղցիւնք Այնթապի Տոքթ. Շեփրտէն: Այս միսիոնարը շատ ալ բարեացակամ չէ հայերու մասին եւ տեղական ապստամբութիւնները կը նկատէ պատճառ՝ այդ դժոխային բարբարոսութեանց, բայց եւ այնպէս իր տեղեկութիւններն անգամ քարերը կը լացնեն: Ահա իր պատմութիւնը:

«Այնթապի տեղահանութեան հրամանը տրուեցաւ նախ յուլիս 21ին, իր մեկնած օրը, երբ 60 ընտանիքներ պիտի քշուէին: Երկրորդ հրամանը տրուեցաւ քանի մը օր յետոյ, 70 ընտանիքի համար: Յետոյ քշուեցան 1500 հոգի եւ ճիշդ յաջորդ օրը՝ հազար հոգի, որով պարպուած կ'ըլլար Այնթապի փոքրաթիւ հայութիւնը: Բոլոր ջանքերը՝ ամերիկեան հաստատութիւնները այս կարգադրութենէն զերծ պահելու՝ մնացին ապարդիւն: Քշուողները ազատ չեն իրենց հետ վերցնելու ուզածնին. կրնային ունենալ միայն մէկ անասուն, իւրաքանչիւր ընտանիքի պէտքերը բեռցնելու համար:

Աքսորականներու առաջին հանգրուանը կը կազմէր Հայէպ, ուր իր անցած ատեն կային 15000 հայեր, դէպի ներսերը քշուելու համար: Դիմադրութեան շատ քիչ փորձեր եղած են. միայն Մարաշի մօտերը, Ամանոս լեռներու մէջ Ֆընտըճաք հայ գիւղը սպաննած էր տեղահանութեան համար զրկուած ժանտարմը, որու հետեւանքով երեք ջոկատ զօրք զրկուեցաւ եւ գիւղը գերեզմանի ու մոխրակոյտի վերածուեցաւ: Զէյթունցիները քանի մը անգամ յաջող փորձեր ըրին աքսորականներու կարաւաններ կեցնելու եւ ազատելու...: Կիլիկիոյ շրջանի տեղահանումը կը կատարուի համեմատաբար աւելի լաւ պայմաններու մէջ: Անշուշտ բոլոր քշուածները կը կողոպտուին ասպատակներու կողմէ, բայց առեւանգումներ եւ սպանութիւններ այնքան խոշոր տոկոս մը չեն կազմեր, որքան բուն իսկ հայկական նահանգներու մէջ: Այն սակաւաթիւ մնացորդները որոնք կը վերապրին այդ տաժանելի ճամբորդութենէն, ցանուցիր կը տեղաւորուին թուրք եւ արաբ գիւղերու մէջ: Մեծագոյն տոկոսը շտեպալ Տէյր-Չօր, ուր 15000է աւելի հայեր արդէն հասած էին: Իսկ ատկէ սկսելով մինչեւ վարը, Ճէրապուս, Սասըլան եւն., ցամաք ու անապատ տեղեր, ցանցնուած են ամէն կողմէ քշուած հայերով: Ճամբան մինչեւ Պոլիս հասնիլը, ամէն քաղաքէ հայեր կամ արդէն տեղահան եղած, կամ ըլլալու վրայ են: Բայց որքան ատեն որ ճամբորդութիւնը թրեւնով կ'ըլլայ, կոտորածը այնքան խոշոր չէ: Ինչ կը վերաբերի

զուտ հայկական նահանգներու, Տիգրանակերտէն մինչեւ Երզնկա, Սըվազ, Պիթլիս, Կարին, եւն., ժողովուրդը բոլորը կոտորուած է: Ամելէ թապուրներու մէջ առնուած երիտասարդները տեղն ու տեղը սպաննուած են, կիներ՝ կամ առեւանգուած կամ նոյնպէս սպաննուած են: Կոտորած եղած է այն հաշուով որ այլեւս խօսք չի լինիր նոր ծնող հայ սերնդի մը. 1-2 տարեկան երեխաները թուրք ընտանիքի մէջ առնուած են, իսկ անկէ վեր մինչեւ ամէնէն ծերը ջարդուած են: Տեղին վրայ կոտորուած հայերու թիւը՝ առանց երբեք չափազանցելու՝ 200000 (երկու հարիւր հազարը) կ'անցնի, չհաշուելով տեղահանութեանց ընթացքին ոչնչացած հայերու թիւը: Այնպէս որ կարելի է ըսել թէ այլեւս Հայաստանի մէջ հայ չկայ: Քանի մը վիճակագրական տեղեկութիւններ ալ՝ որոնք առնուած են համեմատաբար «լաւ» կատարուած տեղահանութիւններէ: Հիւսնի Մանսուրէն քուած 212 անձերէն Հայէպ հասած են 128 հոգի. սպաննուած 56 այր եւ 11 կին, առեւանգուած 9 տղայ եւ 3 աղջիկ, կորսուած 6 հոգի: Բերրիէն (Պարբերդ) քուած 128էն Հայէպ հասած 32 հոգի, սպաննուած 24 [այր] եւ 12 կին, առեւանգուած 13 տղայ, 29 կին եւ աղջիկ, կորսուած 10 հոգի: Հիւսնի Մանսուրէն (բ. տեղահանում), քուած 696 անձ, Հայէպ հասած 321, սպաննուած 206 այր եւ 57 կին, առեւանգուած 19 տղայ եւ 70 կին աղջիկ, կորսուած 23 հոգի: Իսլամացումները համարեա չեն ընդունուիր Կիլիկիոյ շրջանին մէջ»:

Վերջ:

11 նոյն [Օգոստոս 1915]

Բ[ալկանի] Կ[եդրոնական] Կ[ոմիտէի] ընկերներ!

Կը հաստատենք ներփակ նամակն ու թղթակցութիւնը.— (Որ խայտառակ բան մը եղաւ կարծեմ):—

Այսօր յանկարծ խստացան ձերբակալումները: Ինչպէս գրած ենք, ճամբան, հանրային վայրեր, կը բռնեն բոլոր հայերը եւ թեզքերէ կը հարցնեն, իբրեւ թէ միայն պանդուխտ կամ ամուրի գաւառացիներու համար է: Կը տեսնենք եւ օրին կը գրենք փաստերը: Մի մոռնաք որ՝ ասոնք բոլորը պիտի կոտորուին՝ իբրեւ արու սերունդ: Կոտորուած են եւ պիտի կոտորուին նաեւ բոլոր հայ գիւնուորները, որոնք իբրեւ բանուոր զէնք ալ չունին արդէն: Կը հասկնաք թէ ինչ կը մնայ անդին: Չանդրըցիներուն արտօներ են Պոլսէն դուրս իրենց ուզած քաղաքն երթալու... Այաչցիներէն ոչ իսկ լուր. եթէ Զօր քած են, կոտորուած համարեցէք:

Համբոյրներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ

Փաստ. 1158-93

69.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԵՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵՂԻ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 13 օգոստ. 915

Ընկերներ!

Թերեւս մեր մնաք բարոյի նամակն ըլլայ այս երկ-տողը: Կացուցիւնը աւելի քան սեւ է, ձերբակալումները կը շարունակուին անօրինակ կատաղութեամբ: Արդէն իսկ բռնուած եւ աքսորուած են 4-5000 հոգի. խան, խանութ, ամէն կողմ կը մտնեն եւ հայ երիտասարդներ կ'որսան. շոգենաւով կը դրկեն եւ ոչ ոք գիտէ թէ ո՛ւր, բայց ոչ մէկ տարակոյս որ ամէնքն ալ սպանդանոց կ'երթան: Արդէն խօսքեր կան որ Նիկոմիդիայէն անդին լեռները կ'արձակեն եւ ժանտարմները խոյս տալով կը ձգեն չեթաներուն որոնք տեղն ու տեղը կը սպաննեն: Երէկ կոխեցին Գարակէօզեան որբանոցը եւ ձերբակալեցին ոչ միայն ուսուցիչները, այլեւ չափահաս որբեր (17, 18, 20 տարեկան): Քչած են նաեւ շատ մը անգէն զին-ւորներ, որոնք հարպիէին մէջ կը գտնուէին, եւ որոնք նմանապէս պիտի մորթուին: Իբրեւ թէ 70000 այր մարդ պիտի ձերբակալուի, եւ այս գործը աւարտելէ յետոյ 10-15 օրէն պիտի քչեն բոլոր գաւառացիները իրենց ընտա-նիքներով, ուրիշ խօսքով Պոլիս ալ տեղահան պիտի ըլ-լայ: Մենք այլեւս ոչ մէկ բան կրնանք ընել, մանաւանդ որ չենք ուզեր փճացնել յոյսի շա՛տ աղօտ մէկ նշոյլը: Եթէ ժամանակ ունենանք տեղահանութեան պահուն յուսահատ ճիգ մը փորձելու, այդ է, եթէ ոչ՝ մնաք բա-րով ընկերներ:

Բոլոր տունները կոխելու եւ դասալիք կամ փախստա-կան բռնելու ծրագիրը կայ: Ոչ մէկ ելք կը տեսնենք պրծելու: Այսօր ձերբակալեցին Գուլմ Գափուլի մեր ըն-կերներէն մեծ մասը: Ժամէ ժամ լուրի կը սպասենք միւս թաղերէն: Կողոպուտն ալ սկսած է քաղաքին մէջ: Մետաֆաի մեյլիէի հրէշները հայ վաճառատուն մը եր-թալով կ'ուզեն 5000 ոսկի ապրանքը գրաւել եւ փոխա-րէն ստացագիր մը առնել թէ հինգ հարիւր ոսկիի ծախե-ցի... երբ մարդը կը մերժէ կ'ըսեն թէ արդէն բոլորը մերն է: Ուրիշ վաճառականի մը նոյն առաջարկը կ'ընեն եւ եղած չեղածը պարպելով կը տանին: Երրորդի մը 450 ոսկիի, խահվէն կը գնեն 45 ոսկիի սարսափի մատնելով մարդը: Իբրանոսեան հաճի աղան մեռած է Կեսարիոյ մէջ. երէկ կառավարութիւնը կ'ըսէ վաճառատունը: Գիսակի մահն ալ կը ստուգուի, Թալաթը իր մէկ բա-

րեկամին ըսած է որ նա էլ մեռած է, բայց չենք ուզեր յայտնել որ խեղճ կինը չյուզուի:

Ձեր դրկած անցագիրները ստացանք, բայց անօգուտ են, որովհետեւ Սոֆիայէն Պոլիս եւ Պոլսէն Պուլկարիա գացած ըլլալը կը գրուի: Եթէ միջոց կրնաք գտնել, նոյն կերպով ուղարկեցէք երեք հատ, հետեւեալ նշաններով (թէ եւ երբեք յոյս չունինք որ մեր ձեռքը հասնի, կամ օգ-տակար ըլլայ: Երեքն ալ պէտք է ըլլան պուլկար անուն-ներով)։—

1.- Michel Abrahamoff, 29 տարեկան, հասակ — մի-ջակ, պեխ եւ մազ՝ շէկ, քիթ եւ դէմք՝ սովորական (Ռու-զանին):

2.- Անունը դուք գրէք. տարիք 28, հասակ — միջակ, մազ — սեւ, պեխ — ցորենագոյն, դէմք եւ քիթ — սովո-րական (Արշալիրին համար):

3.- Անունը դուք գրէք. տարիք 20, հասակ — միջակ, դէմք եւ քիթ — սովորական, մազ — ցորենագոյն, պեխ — ածիլուած (Ս. Դարբինեանին համար):

Այս երեքն ալ պէտք է վաւերացուած ըլլան Սոֆիայի Օսմ. հիւպատոսէն, իբրեւ թէ Պոլիս գալու համար: Տե-սէք, մենք շատ հաւատք չունինք:

Այսօր Զաւէնին պիտի ազդարարենք թէ կ'երաշխա-ւորէ՞ որ գոնէ Պոլիսը տեղահան չըլլայ: Կը խորհինք եւ վերջին անգամ նոյն իմաստով իմացնել Պուլկարակա-նին եւ Ամերիկեանին: Բայց ի՛նչ օգուտ: Հոս բան մը չըլ-լար կ'ըսեն, եւ ահա սխաթեմաթիկ ծրագրով մը կը հնձուի ամբողջ արու բնակչութիւնը: Ձեռնարկ ըրած չըրած՝ մէկ բան է. եթէ ձեր ձեռքէն նոր բան մը կու գայ, լաւ, եթէ ոչ խաչ քաշեցէք այստեղի հայութեան վրայ ալ:

Երէկ իմացանք թէ Ամերիկեանն ալ պիտի մեկնի, պուաւօ!

Կը մնանք դէմ դիմաց գազաններուն հետ, քանի որ ձեր բարեկամին մեկնումն ալ անխուսափելի է, կ'ըսեն: Մերսին, Ատանա, զօրք հանուած ըլլալը ճի՞շդ է: Գէթ կարաւան մը գաղթական ազատէին:

Կրկին ու կրկին, մնա՛ք բարով, ընկերներ. քանի որ ջ ենք, կը գրենք:

Համբոյրներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԻՆ

Փաստ. 958ա-1

70.- ԱՏԱՆԱՅԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Ստորև կու տանք ներքին գործոց նախարարութենէն հաղորդուած եւ հայերուն իսլամացման եւ իսլամացած հայերու կալուածներուն վերաբերեալ հրահանգներուն պատճէնը: Ասոնց վրայ պարտիք հարկ եղածը տնօրինել:

Ատանայի կուսակալ
ՀԱՔՔԸ

5 նոյեմբեր 331 (1915)

1.- Այն հայերը որք տեղահան եղած են եւ իրենց վայրերը թողուած, կրնան իսլամանալ:

2.- Այն հայերը, որք ճամբու ընթացքին մասնաւոր հրամանաւ տեղահանութենէ զերծ կացուցուած են — իրենց հին բնակավայրը վերադարձած ըլլան կամ ոչ — կրնան իսլամանալ:

3.- Իրենց իսլամացումը վերոյիշեալ պայմաններու տակ ընդունուած հայերու ինչքերը պիտի վերադարձուին եւ կամ եթէ վաճառուած են, փոխարժէքը պիտի վճարուի:

4.- Տեղահանութեան ընթացքին իրենց վար դրուած վայրերու մէջ իսլամներու հետ ամուսնացող հայ կիներուն եւ աղջիկներուն՝ նոյն տեղերու լքեալ կալուածներէն տուն պիտի յատկացուի:

5.- Այն պարագային երբ հաւաքական ձեւի տակ եւ կամ քաղաքի մը, գիւղի մը, թաղի մը բնակչութիւնը ամբողջութեամբ իսլամանալու համար դիմում կատարէ, ասոնք իսլամ գիւղերու մէջ պիտի ցրուուին եւ միշտ ի նկատ պիտի առնուի որ իսլամ բնակչութեան %5-ը չանցնին, եւ անկէ վերջ է որ իրենց իսլամութիւնը պիտի ընդունուի:

6.- Ծնողքները տեղահան եղած փոքրիկներուն պիտի թոյլատրուի իրենց քաղքին մէջ մնալ. այն պարագային երբ այսպիսիներու ծնողաց ինչքերու փոխարժէքը պարտքերուն հաշուուելով՝ այս փոքրիկներուն ոչինչ կը մնայ, կառավարութեան անուան արձանագրուած կալուածներէն բաժին պիտի հանուի իրենց կորուստը փոխարինելու համար:

ԽԻՍ ՔԱՂՏՆԻ

1.- Հայ բողոքական եւ կաթոլիկներէն անոնք որք մինչեւ հիմա տեղահան եղած են, իրենց տեղերը պիտի չվերադարձուին:

2.- Ատանայի հայ կաթոլիկները տեղահան պիտի չըլլան եւ անոնց թիւը մեզ պիտի հաղորդուի:

3.- Այն վայրերը ուր հայ կաթոլիկ եւ բողոքականները իսլամ բնակչութեան հետ բաղդատամբ բազմաթիւ են, ըստ առաջ նոյն տեղահանութեան պիտի ենթարկուին, իսկ այն տեղերը, ուր հայ բողոքական ու կաթոլիկները նուազ են եւ իսլամ տարրին հետ բաղդատամբ առ նուազն հարիւրին հինգի կը հասնին, այն տեղերու հայ բողոքականները եւ կաթոլիկները իսլամ գիւղերու մէջ պիտի բաշխուին:

Սխալ մեկնումներու տեղի չտալու համար խնդիրը վերստին կը լուսաբանուի:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

Վերեւ կու տանք ներքին գործոց նախարարութեան հեռագրական հեռագիրը. ըստ այնմ պարտիք շարժելու:

Կուսակալ ՀԱՔՔԸ

14 Օգոստոս 331 (1915)

Փաստ. 882-45

71.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵՂՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Պոլիս, 15/28 օգոստ. 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր օգոստ. 11 եւ 13 թուակիրները: Նոր նամակ չունինք ձեզմէ: Ձերբակալումները կը շարունակուին միշտ, բայց երէկ իրիկուընէ այսօր մեղմացում կը տեսնուի դարձեալ: Հակասական լուրեր կը պտտին: Այսօր բաւական իրազեկ աղբիւրէ մը իմացանք թէ Իթթիհատը ժողով գումարեր է եւ Պոլսոյ տեղահանութեան մասին խօսեր են: Շէյխ-ուլ-Իսլամը սպառնացեր է հրաժարիլ եթէ Պոլիսն ալ տեղահան ըլլայ: Իբրեւ թէ որոշուեր է.

1.- Գաղթականները իրենց հասած տեղին մէջ պահել:

2.- Պոլիսը տեղահան չընել:

3.- Ձերբակալումները սահմանափակել «կասկածելի» մարդոց համար: Մեր լաւագոյն ընկերները կաշկանդուած ըլլալով, չկրցանք պէտք եղածին պէս ստուգել այս լուրերը: Կը հետապնդենք: Միեւնոյն ատեն երկու օրէ ի վեր լուր կը չըլլի թէ Նիկոմիդիոյ շրջանէն աքսորականները կը դառնան: Թէ երեք օրէն ընդհ. ներում պիտի ըլլայ եւն.: Սա ճիշդ է որ բողոքականներուն եւ կաթողիկոսներուն չեն դպչիր: Եւ հոս ալ ընտանիք ունեցողներէն անոնք կը բռնեն որոնք իրենց ընտանիքները արտասահման են դրկած:

Հետեւեալ ամփոփ տեղեկութիւնները քաղցիւնք Ձաւէնէն. ամբողջական պատճէնները ստանալէ յետոյ կ'ուղարկենք: Իրեն ազդարարած էինք որ երաշխաւորէ Պոլսոյ համար: Պատրիարքը ընդարձակ բողոքագիր մը պատրաստած է «ուղղուած եպարքոսին», որ բաւական ուժգին շեշտով մը կը թուէ բողոքագիրները եւ կը խնդրէ դադարեցնել հալածանքը: Երէկ արտակարգ ժողովի հրաւիրած էր վարչութիւնը անոր հաւանութիւնը ստանալու համար: Հազիւ երեք աշխարհական անդամներ հաճեր էին ներկայ ըլլալ:

Արդիւնքը աս է.— Այս շաբաթ ալ սպասել, Սուլթանին ուղերձ մը տալ, քանի մը նախարարներ տեսնել եւ յետոյ յանձնել բողոքագիրները:

Կարնոյ առաջնորդը քչեր են չգիտենք ո՛ւր: Կիլիկիոյ կաթողիկոսը կը նկարագրէ այդտեղ հասած գաղթա-

կաններուն վիճակը: Անհուն կարօտութիւն, ոչ մէկ օգնութիւն: Կարինի շրջականներէն հոն հասեր են քանի մը հազար հոգի, որոնց մէջ 11 տարեկանէն վեր արու չկայ: Եղեսիոյ մէջ կախած են 42 հոգի, որոնց մէջ բողոքական պատուելին, ուսուցիչ, եւն.: Տիգրանակերտը սպանդանոց է: Ներփակ դրկած է նաեւ Վարդգէսի եւ Ջօհրայի վերջին կտակ-նամակները՝ իրենց ընտանիքներուն ուղղուած: Կուսակալը յայտարարեր է թէ Կիլիկիոյ մէջ անդամալոյժ հայ մըն ալ չպիտի մնայ: Դեռ չպարպուած տեղն ալ կը պարպեն մեծ փութով: Կաթողիկոսը ինքն ալ մեծ վախի մէջ է: Հալէպ ալ պիտի պարպուէր: Գաղթականներուն կը պատուիրեն միայն 300 դր. առնել ուրիշ ոչինչ: Արգիլուած է որեւէ բան ծախել: Ազգ. ժողովի քարտուղար Աբիկ Մուպահաճեան (չգրել անունը) որ նոր աքսորուեցաւ, էրէյլիէն կը նկարագրէ մինչեւ հոն իր տեսածները: Բոլոր կայարաններուն մէջ հազարաւոր գաղթականներ կը սպասեն: Կը հաղորդէ նաեւ որ Ատանայի կուսակալը հրաման ստացեր է գաղթականները անկէ անդին չանցընել: Բողոքական եւ կաթողիկ հայերը եւ զինուորներու ընտանիքները չըջել:

Կեսարիայէն հայ բժիշկ մը թուրք ձեւանալով եկած եւ ահուելի բաներ պատմած է պատրիարքին: Մինչեւ իր մեկնած օրը կախուած էին աւելի քան ութսուն հայեր, որոնց մէջ է Մուրատը (Համբ. Պօյաճեան). Իբրանոսեանն ալ պիտի կախէին: Գարմէն? պահուած ըլլալով ազատուեր է (այս անունը կը ճշդենք. մեր Գարմէն¹⁷¹ է արդեօք): Կեսարիոյ շրջանին մէջ «էրմէնի» անունը խստիւ արգիլուած է. արտասանողը պատերազմական ատեան կը տանին: Էրմէնիի տեղ կը գործածեն «միկրոք» գոր պէտք է մաքրել: Չարհուրելի բաներ կան դեռ: Կարգադրեցինք որ ամբողջ պատմութիւնը մեր ձեռքը հասնի, որպէսզի ձեզի ղրկենք, միւս բոլոր տղերմաններուն հետ:

Երէկ իմացանք թէ Կարին եւ Պիթիս ինկած են եւ ռուսները այժմ Խարբերդի վրայ կը քալեն: Գէթ այս անգամ չխաբուէինք... Ատանա եւ Մերսին գրաւուած են իրապէս: Մենք ալ այս անձար եւ տիրացու ժողովուրդին պէս սկսեր ենք հաւատալ ամէն բանի:

Միւս թաղերուն մէջ ընկերներէն մարդ բռնուած չէ դեռ. կարգադրութիւններ ըրինք գոն ընդունակները ապահովելու համար: Եթէ տուները խուզարկելու փորձ

171.- Գարմէն – Մեթրոնեան Սկրտիչ. կուսակցական գործիչ Տարօնի մէջ:

չըլլայ ապահովաբար ամէնքն ալ կ'ազատին: Ո՞ւր մնաց
.....¹⁷²: Վերջին կալանաւորներու մէջ է իբրեւ մտաւորական Յակոբ Տէր Յակոբեանը: Կը փնտռեն նաեւ Արտաշէս Յարութիւնեանի եղբայրը.— Սըվազի մեր լաւագոյն ընկերներէն մէկուն եղբայրը կը փնտռեն հոս լուսանկարով: Կ'իմանանք թէ 70-80 հոգի պիտի կախուին հոն ալ: Գիտէք անշուշտ 1500-2000 բանտարկեալ կայ այդ դժոխքին մէջ:

Այն աղբիւրը որ կը հազորդէր Իթիէհատի վերջին որոշումը, կ'աւելցնէ որ հայերու չափ թուրքեր ալ կը ձերբակալուին եւ կը սպաննուին հոն պատերազմական

ատեանի նկուղներուն մէջ: Այսօր թղթակցութիւն մըն ալ պիտի ունենայիք բայց տրամադրութիւն չկայ...

Համբոյրներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ

Անշուշտ ստացաք մեր նոր հասցէն: Օրը օրին գրեցէք. գէթ կարելոյ դէպքերը հաղորդելու համար: Յայտնի է որ վճռական շարժում մը տեղի կ'ունենայ ամէն կողմ, բայց ինչո՞ւ մեր ստոյգ լուրերը չունենանք ձեզմէ:

ՆՈՅՆ

172.- Անունը արուած:

Փաստ. 881-45

ՄԵԾ ՃԳՆԱԺԱՄԸ

72.- ԿԷՊԷՐԻՆՆԻՅԷ ԳԱՏԱՐ

Ինչպէս յայտնած ենք, Վիշապի Առժամեայ մարմնի գլխաւոր դէմքերէն Շաւարշ Միսաքեան (Արշա-
փր), որ հրաշքով փրկուած էր Պոլսոյ հայ մտաւորականներու ձերբակալութիւններէն, օրը օրին տեղեկու-
թիւններ կը փոխանցէր արտասահման թէ՛ մայրաքաղաքի եւ թէ ներքին գաւառներու անցողարձերուն
մասին: Ասոր գուգահեռ, Հ.Յ.Դ. Պալքանեան Կեդր. կոմիտէի պաշտօնաթերթ «Հայաստան»ի մէջ լոյս կը
տեսնէին իր յօդուածները «Մեծ ճգնաժամը» ընդհանուր խորագրով եւ Վարազ կամ Ռ-ազմիկ ծածկանուն-
ներով: Ահա այդ յօդուածներէն մէկն է ստորեւ տրուած, «Կէպէրինճիյէ գատար»ը (Մատկելու աստիճան),
որ մեզի անձանօթ պատճառներով մնացած է անտիպ եւ կը պահուի կեդրոնական արխիւին մէջ: Ար-
տագրուած է Յ. Ամատունիի ձեռագրով:

Ճիշդ այսպէս:
Իպրահիմ պէյն է, Պոլսոյ բանտին տնօրէնը, այժմ լի-
ազօր փոխարքայ Նիկոմիդիոյ շրջանին մէջ, ուր դրկը-
լած էր գէնքերը հաւաքելու եւ ժողովուրդը տարագրե-
լու համար. իր պաշտօնը գլուխ հանած ըլլալով գազա-
նային մոլեգնութեամբ, այժմ բազմած Նիկոմիդիոյ հայ
եկեղեցին, Պոլսէն որսի կը սպասէ ծեծելու եւ խոշտան-
գելու համար:

– Պիտի գարնեմ մինչեւ որ սատկիք... ախ ձեր Զա-
ւէն էֆէնտին ալ ձեռքս անցնէր անգամ մը:

Եւ, Պոլսէն տարագրուած դժբախտներու բազմու-
թեան մէջ, հագուազիւտ են անոնք որ առանց ծեծի
կրնան շարունակել իրենց ճամբան, դէպի անստոյգ ճա-
կատագիրը:

Հետաքրքրական է նոյնիսկ այդ ուղեւորութիւնը՝
Պոլսէն մինչեւ Նիկոմիդիա եւ անկէ մինչեւ Գոնիա եւ
աւելի հեռուն՝ Պղոտտոնը միայն գիտէ:

Աքսորականները ընդհանրապէս Պոլսէն ճամբայ կը
հանուին շոգենաւով, 150-200 հոգի նուազելու աստի-
ճան իրարու վրայ դիզուած եւ շատ բարեբախտ են, եթէ
ոչլոտ ժանտարմայի մը սիրտը շահելով կարենան դուռ-
ները բանալ տալ եւ քիչ մը օդ առնել, կամ կամրջակը
բարձրանալ:

Երբ հասան Նիկոմիդիա, – եւ տասն անգամ է որ կ'ի-
մանանք միեւնոյն պատմութիւնները – քսորականնե-
րը կը բաժնուին երկու դասակարգերու, մէկ մասը, մե-
ծամասնութիւնը՝ յաճախ կը դրկուի եկեղեցին, քննիչ
ատեան, իպրահիմ պէյի ոտքերուն առջեւ տրորուելու,
իսկ միւսները անմիջապէս կը բանտարկուին ոստիկան
գինուորներու ձիերուն ախոռը, մինչեւ որ ճամբայ
հանուին:

Այստեղ անգամ մը ժանտարմները կը մաքրեն իրենց

հաշիւները, պահանջելով ճամբու ծախք ինչպէս եւ ու-
տեստի դրամ Պոլսէն մինչեւ Նիկոմիդիա, յետոյ կը գա-
տեն անոնք որ դրամ ունին որպէսզի շոգեկառքով եր-
թան: Միւսները – դարձեալ մեծ մասը – պիտի քալեն
օրն ի բուն մինչեւ Պիլեճիք կամ Գոնիա, եւ անկէ անդին
ալ եթէ տակաւին ուժ ունին:

Անմիջապէս որ գնացքը ճամբայ կ'իյնայ, անմիջա-
պէս ժանտարմները իրենց մէջ կը բաժնեն պաշտօննե-
րը: Մէկը արտաքննոցին պահակութիւնը կը ստանձնէ եւ
20-30 փարա չառած չի թոյլատրեր որ քսորականը եր-
թայ միգէ. ուրիշ մը հաց գնելու կ'երթայ եւ հացին հա-
տը չորս դրուշ, պանիրի շերտը 60 փարա, ողկոյց մը
խաղողը 40 փարա, գաւաթ մը ջուրը 15 փարա կը ծախէ:

Իսկ աւելի մարդասիրական պաշտօն մը կ'առնէ եր-
րորդ մը, կը բարեհաճի վակոնի մը պատուհանը բանալ
փոխան հինգ դրուշի, որպէսզի տարաբախտ քսորա-
կանները չիւեղուին, շոգէն եւ աղբէն: Չմոռնանք որ
վաճառարձ վակոններով կ'ըլլայ այս ուղեւորութիւ-
նը: Տարագիրները գլխիկոր կը համակերպին այս բոլոր
բարբարոսութեանց, այլապէս ապտակը, կամ հրացա-
նին բունը, կամ մտրակը պատրաստ են կարճ կապելու
համար:

Ասոնք՝ կը հասկնաք անշուշտ, հարուստներն են:

Մօտենանք այն կարաւանին որ քալելով պիտի եր-
թայ: Քաղաքէն քանի մը ժամ անցած, ամայի լեռան կո-
չին, ահա ոստիկանները կը լեցնեն հրացանները, եւ ուղ-
ղած կարաւանին վրայ՝ կը պահանջեն ինչ որ կամին, –
նախ՝ իրենց հաշիւները, որոնք երբեք չեն փակուիր.
դրամ ունեցողը կը վճարէ. չունեցողը կը ծախէ ինչ որ
վրան մնացեր է, – վերարկու մը, կօշիկը, կամ բաճկո-
նակը, եւ կ'աղաղակէ ժանտարմին որ ներողամիտ ըլ-

լայ... բայց ոստիկանէ ոստիկան տարբերութիւնը մեծ է, եւ եթէ կան որ այս իրաւախոհութեամբ կը վերջանան, աւելի գազանները առանց մէկուն բան մը հարցընելու, կը կողոպտեն ինչ որ ուզեն, դրամ, գոյք,— եւ կը քշեն բոկոտն, անօթի, անզէն բազմութիւնը լեռնէ լեռ, տափաստանէ տափաստան, մինչեւ նշանակուած կայանը: Հերթը կը ձգեն յաջորդներուն, որոնք կ'ընեն պակասը:

Կանխամտածութեամբ սպանութիւններ ալ հազուադէպ չեն: Հայր ճանճ մըն է, որ ամէն իսլամ կրնայ ճգմել կամ խեղդել առանց խղճահարութեան, առանց պատասխանատուութեան, առանց խտիր դնելու մեծի եւ պզտիկի, սեռի կամ տարիքի: Այս է իթթիհատի պատգամը:

*
* *

Բայց, դառնանք Իպրահիմ պէյին, եւ պարզենք ինչ որ կատարած է Արմաշի մէջ, իբրեւ յատկանշական էջ մը բոլոր այն սիրազորութիւններուն, որոնց վրէժը եօթն անգամ եօթանասուն սերունդ պիտի չկրնար լուծել արժանաւորապէս:

Այս աղտեղի հրոսապետը Արմաշ հասած օրն իսկ վեհարանին մէջ բանտարկել կու տայ միաբանները, քահանաները եւ գիւղին տղամարդիկը՝ վանքը խիստ հսկողութեան տակ կ'առնէ: Յաջորդ օրը անխնայ կը խոչտանգէ բոլոր կալանաւորները: Օգ[ոստոս] 6ի կիրակին վանահայրը եկեղեցի կը կանչուի եւ Իպրահիմ պէյ իր թիկնապահներով, խորանին ետեւ գանձատան դրան

առջեւ, ուր մատենադարանի գրքերն ու սնտուկները դրուած էին — խուզարկութեան պէս բաներ կը փորձէ, բացը դրուած պարզ տախտակի մը տակէն երեք կլոր բաներ հանելով կը պոռայ — «Չէ որ հոս ալ կան այս բաներէն»...

Ջզուելի խեղկատակութիւն մը, որուն հրէշը ինք իսկ չի հաւատար, որովհետեւ քանի օրէ ի վեր իրենց ձեռքն էր ամբողջ մենաստանը, եւ ոչ թէ երեք ուումը, այլ 300 հրացաններ կրնային շարել ոստիկանները եւ երեւան հանել իբրեւ փաստեր հայկական դաւադրութեան: Եւ դեռ աւելին: Իպրահիմ պէյ իմանալով որ վանքին գոյքերէն մաս մը ծախուեր է, նոյնիսկ կառավարութեան դրդումով, եւ կառավարութեան անդամներէն բարկացած՝ ան ալ գրեթէ թալանի գնով — սպառնալից կը կանգնի վանահօր առջեւ, կը պահանջէ դրամները՝

— Ատոնք ազգին դրամներն են, դուք պատասխանատու էք, կը գոռայ: Հազար աղաչանք, պաղատանք հազիւ կը գօրեն վաճառումէն գոյացած 735 դրուշը վար դնելու միաբանութեան եւ աշակերտներու ճամբու ծախքերուն համար:

Վաճառումի պայմաններու մասին յստակ գաղափար մը տալու համար, յիշեմ որ 50 ոչխար, 30 գառ, 17 այծ, 10 ուլ, 4 ձի, 12 ոչխար, երկու եզ, երկու գոմէշ գներ են 572020 դրուշի, արծաթեղէնները 20-40 փարայի, չորս շուրջառ քսան ոսկիի եւայլն:

Պարզ պատմութիւններ են, թերեւս ձանձրանաք, այնքան միօրինակ:

ՎԱՐԱԶ

Փաստ. 1158-96
N° 622

73.- ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԷՆ

Սոֆիա, 17 օգոստ. 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Յուլիս 29 թուահամար նամակը: Կը շարունակենք տալ ձեզ Երկրից ստացուած նամակներուն ամփոփումը, որ դժբախտաբար վարդագոյն չէ բնաւ:

Վիշապ, 21 Յուլիս.— Դրուժիւնը ծանր է. յուսահատ են գոնէ բեկորները փրկելու մասին մեր բարեկամներն ալ: Յուսահատ է նաեւ Ջաւէնը: Երէկ Խառն ժողովի մէջ խնդիր են ըրած Պատրիարքարանը փակելու մասին, նոյնիսկ անոնք որ հրաժարման մասին հակառակ դարձեր էին. մէկ երկու ակնկալութիւններ կան, անկէ յետոյ լրջօրէն պիտի խորհին:

Նիկոմիդիոյ շրջանը պարպելու գործողութիւնը սկսած է արդէն: Մէկ երկու օրէ ի վեր խօսքեր կան նաեւ Սկիւտարի մասին, որ պիտի ըլլայ Պոլսոյ յառաջաբանը: Էնվերը իրբեւ թէ ըսած կ'ըլլայ թէ՛ որ եթէ ուզէ, 15 օրէն բոլոր քրիստոնեաները կը քչէ միայն թուրք ու գերման կը ձգէ:

Չօհրապը մեռեր է Տիգրանակերտի ճամբուն վրայ, Ուրֆայի մէջ: հրէշային անպատկառութեամբ մը երէկ ներքին գործերու խորհրդականը թելեֆոնով հաղորդեր է տիկին Չօհրապին՝ «Չօհրապը մեռեր է Ուրֆայի մէջ»:

Մերիններէն միշտ լուր չկայ. միջնորդ ալ չունինք: Տոքթ. Լ[եփսիոս] ըսաւ որ բանակին բոլոր հայ բժիշկները պիտի ձերբակալեն. կը հասկնաք ինչ շարաշուք նպատակով, անշուշտ, մտաւորականութեան այդ տարրն ալ պիտի փճացնեն այս կամ այն ձեւով: Բաբերդէն եկած այրի տիկին Վ. Փ.ի ականատեսի պատմութիւնը կը ստանաք ներփակ թերթով (ծանօթ.- նոյնը հրատարակուած է «Հայաստան»ի մէջ, ներփակ կը ստանաք):

Ոչ միայն բուն Հայաստանէն, այլեւ Կիլիկիայէն Հալէպ հասած ժողովուրդէն ալ ոչ մէկ լուր. ասոնք 6-700 քիլոմետր հեռուները, անապատները պիտի զրկուին կամ զրկուած են. կենդանութեան ոչ մէկ նշոյլ. միայն ճամբորդներէ տեղեկութիւն առնուած է որ Գարահիսարի սանձաքին եւ յարակից գազաներու եւ գիւղերու հայ ժողովուրդը մեծագոյն մասամբ ջարդուած է: Մարգուան ալ 100-150 տուն թրքացած են: Սուրէնը իրեններով տակաւին կը կռուի եղեր Գարահիսարի կողմը:

մերը, աջ ու ձախ աւերելով: Բիճան կախուած է արդէն: Ծ[ապին] Գարահիսարի առաջնորդն ալ կախած են:

Վիշապ 23 Յուլիս.— Լ[եփսիոս] բացարձակապէս յուսահատեցաւ. ոչինչ կը սպասէ դիւանագիտական ճանապարհով. վերջին փորձ մըն ալ պիտի ընէ: Ջաւէնը նոր ձեռնարկ մը ըրած չէ. ամբողջ յոյսը դրած է Լ[եփսիոս]ի վրայ:

Իգմիրի մէջ կարգ մը հայեր կախուած ըլլալով, աւստրիական հիւպատոսարանը Պոլսոյ դեսպանին դիմած ըլլալով, Բ. Դուռնէն պատասխաններ են թէ՛ անոնք պատրիարք ունին, թող ան գայ դիմէ, դուք մի խառնուիք:

Վիշապ, 25 [Յուլիս].— Պոլսոյ ոստիկանութեան պետերուն գոց պահարաններ յանձնուած են, չգիտենք ինչ բովանդակութեամբ: Դիտելի է որ ընդհ. ձերբակալութիւններէն առաջ ալ այսպիսի կնքուած պահարաններ յանձնուած էին: Պրուսայի հարուստները տաճկցած են, աղքատները քշուած, շատերն իրենց զաւակները քանի մը մեծիտի ծախած են թուրքերու:

Ատափագարի ժողովուրդը հազարն վայնասուն հանած է կայարանը. կառավարութիւնը՝ վախնալով որ թուրքերը կ'ազդուին, թմբուկներով թաղերը մոռնետիկ պտտցուցեր են. պատմեր է հայերու գէշութիւնները, պոմպաները: Դրամ ունեցողները կառախումբով դրրկած են, միւսները ոտքով: Իբրեւ թէ Գոնիայէն 18 ժամ անդին տեղ մը պիտի երթան: Այրերը եւ կիները միշտ կը գատուին:

Չանդըրիէն 7 հոգի դարձան, մէկը Տոքթ. Ա. Բարսեղեանը. 40 հոգի աքսորած են [Տէր] Չօր, բայց մեզմէ մարդ չկայ: Արտասահման գաղթողներ շատցան, բայց 18-55 տարեկան այրերը չեն թողուր: Այս մէկ երկու օրուան միջոցին 50 հայեր աքսորուեցան Պոլսէն: Սկսած են ձերբակալել խաներու օտապաշիններն ալ, եւ անմիջապէս կը քչեն դէպի ներս, չգիտենք ո՞ւր:

Վիշապ, 27 [Յուլիս].— Ջաւէնը այսօր գնաց ծերակուտական Աբրահամ փաշային, պարզեր է կացութիւնը եւ առաջարկեր որ ծերակուտականները հաւաքաբար դիմում կատարեն. փաշան շատ յուզուեր եւ լացեր է. խոստացեր է անմիջապէս Տիլպերին¹⁷³ հետ երթալ եպարքոսին եւ նախարարներուն:

173.- Չարեհ Տիլպեր, ծերակուտական:

Նիկոմիդիոյ շրջանին համար [Լեփսիոս] դիմած էր ամերիկեան դեսպանին, որ գացեր է նախ Թալէադին, որ շնական անպատկառուութեամբ պատասխաներ է եղած աղէտներուն: Երբ դեսպանը դիտել տուեր է որ յղի կրներուն անգամ չեն խնայեր, նախարարը պատասխաներ է «Թող քիչ ծնին, ի՞նչ պէտք կայ որ այդչափ շատ սողայ ունենան»: Ծերերն ու պառաւները ճամբուն վրայ, լեռներուն վրայ անխնամ կը ձգուին, ըսեր է դեսպանը: Թալէադը ըսեր է որ արդէն «պիտի մեռնին», տունն է եղեր թէ դուրսը, միեւնոյնն է: Եւ դեռ այսպիսի գոհար խօսքեր, որոնցմէ շատ վիրաւորուած կը մեկնի դեսպանը: Յետոյ կ'երթայ սպարապետին, որ կը յայտարարէ թէ՝ ծրագիրը պիտի գործադրուի անդառնալիօրէն, բայց եթէ ունիք առաջարկներ իրենց վիճակը դիւրացնելու համար, սիրով պիտի ընդունին: Դեսպանը դիմած էր Զաւէնին, որ նշանակած էր 10-ի չափ կէտեր եւ ուղարկած դեսպանին. ատոնք են՝

- 1.- Նախապէս յայտնել գաղթականներուն թէ ո՞ր պիտի երթան:
- 2.- Ճանապարհը ապահովել յարձակումներէ եւ կողոպուտէ:
- 3.- Ճամբան տալ պէտք եղած պարէնը:
- 4.- Հասած տեղերու մէջ նոյնպէս ապահովել ապրուստը մինչեւ որ կարենան իրենք աշխատիլ:
- 5.- Գաղթականներու բնակութեան շրջանակը որոշել յետոյ, ազատ ձգել որ իրենց ուզած տեղը եւ իրենց դրացիներուն հետ բնակին:
- 6.- Թոյլ տալ որ աքսորեալները հոս՝ իրենց ազգականներուն գրեն եւ անոնցմէ օգնութիւն ստանան:
- 7.- Առաջնորդներուն եւ քահանաներուն թոյլ տալ պատրիարքարանի հետ յարաբերութիւն հաստատելու եւ իրենց վիճակի մասին տեղեկութիւն հաղորդելու:
- 8.- Թոյլ տալ հանգ[անակութիւն] կատարելու եւ անոնց օգնութեան հասնելու:

Պարտիզակի եւ Նիկոմիդիոյ 5 օր միջոց տուած են վերջին պահուն: [Լեփսիոս]ը միշտ յուսահատ է: Ամերիկեան դեսպանը ըսեր է սպարապետին որ հայերէն եթէ դժգոհ էք եւ չէք ուզեր որ Երկրին մէջ մնան, թոյլ տուէք որ Երկրէն ելլեն, փոխանակ ոչնչացնելու, մենք սիրով պիտի ընդունինք: Ես կը դիմեմ իմ կառավարութեանս, խոշոր նաւեր բերել կու տամ եւ կը փոխադրեմ: Էնվերը պատասխաներ է թէ մենք դժգոհ չենք եւ չենք ուզեր զրկուիլ այդպիսի օգտակար տարրէ մը. անոնք որ հեռանան այս երկրէն, ինչպէ՞ս պիտի կրնայ յառաջ դիմել:

Չանդրիէն եկողներուն մէջ է նաեւ Նոյիկ Տէր Ստեփանեանը. անոնցմէ հաստատեցինք որ Երզնկայէն Էնկիւրի կը բերեն եղեր 7 բանտարկեալներ, որոնցմէ վեցը մէկ օր առաջ հասեր եւ ճամբան սպաններ են. եօթներորդը առանձին բերած են, որ ճամբան հանդիպեր է

սպանեալներու հագուստները ծրարած ժանտարմաներուն. այդ վեց զոհերէն չորսը Սըվազի մեր լաւագոյն ուժերն են.— Վահան Վարդանեան (դեղագործ), Յ. Փոլատ, Մկրտիչ Ղարպեան եւ Յ. Վարդիկեան, որոնք Սըվազէն Եոզկատ փոխադրուած են. հինգերորդը հնչակեան մըն է, կարծենք Մուրատ (ոչ Պոյաճեանը), միւսը՝ չենք ճանչնար:

Վիշապ, 30 [Յուլիս].— Պոլիսը պարպելու համար ահագին իրարանցում կար քանի մը օրէ ի վեր: Երեքշաբթի օր Էնվերը Զաւէնը կը կանչէ եւ կ'իմացնէ թէ Պոլսոյ հայերը չպիտի քշեն, պայմանաւ որ հանգիստ մնան: Գերմանական աղբիւրէ ալ ստուգեցինք որ դեսպանատունը միջամտած է եւ միայն այրերը պիտի քշուին: Ամէն պարագայի մէջ, ճշմարտութիւնը սա է որ պայրամէն յետոյ Շաբաթէն Կիրակի տեղի պիտի ունենան եթէ ոչ ընդհ[անուր] գոնէ զանգուածային ձերբակալումներ եւ սարսափելի խուզարկութիւններ. արդէն չորս հինգ օրէ ի վեր խումբ խումբ կալանաւորներ կը տարուին՝ ամէն տեսակէ, եւ շատ մը տուններ խուզարկուած են առանց հետեւանքի: Պարտիզակը դեռ ազատ կը մնայ, միւս գիւղերը բոլորը քշած են Գոնիայի ներսերը: Ատափագարի բողոքականներուն գիջումը քան Գոնիա քաղաքը բնակելու: Էնկիւրիի կաթոլիկները արձակուած են, իսկ ձերբակալուած լուսաւորչականներն ալ (30-40 հոգի) երաշխաւորութեամբ ձգած են:

Վիշապ, 2 Օգոստ.— Ինչպէս գրած էինք, օրեր առաջ ոստիկանութեան բաժնած էին գաղտնի պահարաններ, որոնք պիտի բացուէին պայրամէն յետոյ: Ընդհ. տպաւորութիւնը շատ գէշ էր, մանաւանդ որ, ինչպէս ստուգեցինք, գոց պահարանները կը վերաբերէին անհամար ձերբակալութիւններու: Տեղահանութեան փոխարէն գազանները որոշած էին հաւաքել գէթ 3/4-ը արու բնակչութեան, իբրեւ յեղափոխական, կասկածելի միութեանց անդամ եւայլն: Շաբաթէն առաջ տեղի ունեցան բազմաթիւ ձերբակալութիւններ. արդէն 70 հոգի աքսորուած են. ձերբակալուեցան շատ վաճառականներ (Ադամեան, Մինասեան, Խերպէկեան, Գրիգորեան, Պասմաճեան եւայլն). կալանաւորներու մէջ էր նաեւ ծանօթ գրող Արտաշէս Յարութիւնեան. խեղճը այնքան ծեծեր էին, որ աքսոր գացած ատեն, ստիպուած էր կօշիկները ձեռքը առնել՝ ոտքերու ցաւէն:

Այսօր իրագեկ աղբիւրէ ճշգեցինք որ ամերիկեան, իտալական, բուլղարական, սպանիական եւ հոլանտական դեսպանները միասին խորհրդակցեր ու գացեր են գերմանականին գանգատելու, որուն վրայ հալածանքը մեղմացեր է: Այսօր ալ արտասովոր բան մը չկայ: Իրբեւ թէ կառավարութիւնը խոստացեր է դադրեցնել հալածանքը, կարգ մը կասկածելիներ միայն ձերբակալելով:

Տրագրանակերտէն ոչ մէկ լուր. այս ընթացքով, ոչ անոնցմէ, ոչ ալ ընդհ. ժողովուրդէն կարելի պիտի ըլլայ լուր առնել: Պայպըլ Հառուզը իմացեր է որ Սըվազի ժողովուրդը Խարբերդ հասեր է 28 օրուան ճանապարհէ մը վերջ:

Քանի մը օրէ ի վեր զրոյց կը շրջի թէ Սուրիան ապստամբած է եւ Պէյրութը կ'այրի: Ամերիկեան պահականաւը խուզարկուեցաւ փախստականի համար. թոյլ չտուին որ Վոսիփոր երթայ, եւ Ոսկեղջիւր քշեցին:

Վըշապ, 4 Օգոստ.— Մեր բարեկամէն ճշդեցինք որ դեսպանները հաւաքաբար դիմած են Բ. Դուռ եւ բարեկամօրէն հասկցուցած են, թէ հալածանքը շարունակելը լաւ հետեւանք չ'ունենար, ոչ իրենց, ոչ ալ թուրքերուն համար: Որեւէ պահանջում չեն ըրած. Դուռը պատասխանած է թէ «բան մը կ'ընենք»: Պոլսոյ մասին Զաւէնը կ'ըսէր թէ դեռ վերջնական պատասխան չեն տուած. մէկ մասը կ'առաջարկէ եղեր ձգել որ ժողովուրդը արտասահման երթայ Օսմ. հպատակութենէ հրաժարելով, իսկ միւս մասը կը պահանջէ անպատճառ քշել. այսպէս առկա կը մնայ ինդիքը: Զերբակալումները կը շարունակուին խուճապ խուճապ. ընդհանրապէս պանդուխտներ է որ կը հաւաքեն առ այժմ: Խորհրդաւոր լուրերն մը կայ, որ շատ գէշ նշան է:

Անատոլոյի [երկաթուղիի] ընկ[երութենէն] պահանջուեր է ճամբել բոլոր հայ պաշտօնեաները: Տնօրէնը պատասխաներ է որ եթէ արձակէ 8-900 հայ պաշտօնեաները, գիծը կը դադրի գործելէ:

Արսլանպէկի եւ Պարտիզակի հայ գինուորներէն մօտ 200 հոգի իրենց ճարած գէնքերով անտառը ապաստաներ են. երբ Պարտիզակը պարպուի, պիտի փորձեն ժողովուրդը լեռ հանել եւ գիւղը կրակի տալ:

Սուրէնը⁴² Արդուին քշուած կարաւանին հանդիպած է կ'ըսեն: Միւս կողմէ կը պատմուի թէ պաշարէ նեղուելով, դէպի Շամ կ'երթայ եղեր. ստոյգ բան չգիտենք:

Այաչցիները բոլոր քշած են Էնկիւրի. ինչպէս կը հաստատեն երեւի [Տէր] Զօր պիտի դրկեն, եւ իրենց տեղ նոր կալանաւորներ պիտի լեցնեն: Հազար տեսակ զրոյց կը պտտի հասարակութեան մէջ, որ ջղագրգիռ է դարձեր: Հացի տագնապը չափազանց սուր հանգամանք առած է: Ածուխի չգոյութեան պատճառով աղօրիքները չեն կրնար բանիլ: Նպարեղէնները ծայրը ծայրին են. բայց մանաւանդ հացի համար ամէն օր կուր կայ: Վերջին պահուն կ'իմանանք թէ, իբրեւ զրոյց, եպարքոսը եւ Շէյխ ուլ Իսլամը հրաժարելու վրայ են: Պրուսայի շրջանն ալ ամբողջովին պարպած են:

Օգոստոս 8.— Այաչէն Էնկիւրի փոխադրուած են 25-30 հոգի. առջի օր մեր ընկերներու եւ չէզոքներու շատ մը ընտանիքներ ոստիկաններու կողմէ ազդարարութիւն ստացան Գոնիա մեկնելու քանի որ իրենց ամու-

սինները հոն են եւ չպիտի վերադառնան. մինչեւ շաբաթ պայմանաժամ տուած են. կիները, ահ ու դողի մատնուած, դիմեր են Զաւէնին. նա էլ Էնկիւրին գլխութիւնը հայցեց եւ այսօր վերջին պահուն հրաման եկաւ որ տեղերնին մնան... Խորամանկ ձե՞լ մըն էր այս Պոլսն ալ պարպելու, չհասկցանք: Խնդիրը այն է որ առ այժմ միայն պանդուխտներ կը հաւաքեն, Բարեգործականի անդամներուն լրակատար մէկ ցանկը պատրաստած են ձերբակալելու. այդ ալ յետաձգուած է առ այժմ: Կը լսենք որ Ճաւիտը խորհուրդ տուեր է որ հալածանքը դադրի, որովհետեւ ահագին աղմուկ կը հանեն հայերը Եւրոպայի մէջ: Մէկ երկու օրէ ի վեր խորհրդակցութիւններ տեղի կ'ունենան:

Պապական նուիրակը Թալէթին գացած էր գանգատելու. պատասխաններ է՝ կաթոլիկներուն համար բան մը կ'ընենք: Պայպըլ Հառուզէն ալ լուր կայ թէ հրամայուած է ոստիկանութեան՝ հանգիստ ձգել կաթոլիկ եւ բողոքական հայերը:

Այնթապէն Տոքթ. Շեփրտ եկաւ. կը պատմէ թէ Տարսոնի մօտ հանդիպեցաւ Ատափազարի գաղթականներուն, սոսկալի թշուառութեան մէջ: Կիլիկիոյ շրջանէն դեռ կը մնան միայն Մարաշ եւ Ատանա, բայց իր կարծիքով անոնք ալ պիտի քշեն: Այս կողմէն տարածները կը քշեն Դամասկոսէն անդին, անշուշտ [Տէր] Զօր: Նախապէս Սուլթանիէ (Գոնիա) եղած 6-7000 գէյթի թուանցիներն ալ քշած են դէպի Զօր: Զէյթունի լեռները ապաստանած փախստականները իրենց տեղերը գետեղուած թուրքերուն վրայ յարձակելով շատերը սպաններ եւ գիւղը այրեր են:

Ընկերներ!

Ստացած ենք եւ ժամանակին պատասխանած ձեր 162, 170, 177 թուահամար նամակները. երէկ ստացանք ձեր 185 թուակիրը. չենք ստացած 168, 169 եւ 182 թուահամարները. ինդրենք կարեւոր տեղեկութիւնները կրկնեցէք: Զարմանալի է որ մինչեւ հիմա չէք ստացած մեր նամակները, որով կը հաղորդէինք դրամը ստացած ըլլալու պարագան:

Ուրախութեամբ տեղեկացանք տարագիրներու ընտանիքներու մասին ձեր բացած հանգանակութեան. այժմէն կը մաղթենք ձեզ լիուրի յաջողութիւն. մենք վստահ [ենք] որ՝ որքան ատեն մեր ժողովրդի շահերուն ընդառաջ կը գնանք եւ մեր արեան գնով կ'ուզենք պահպանել այդ ժողովուրդը, հաւատացած ենք որ այդպիսի ժողովուրդ մը բնաւ չի դաւաճաներ իր շահերը հետապնդող մեծ կուսակցութեան: Ապացոյց՝ որքան որ կ'ուզէք, ձեր նախկին հանգանակութիւնը, Եգիպտոսի հանգանակութիւնը եւ Կովկասի շարժումը. դրանք կարկառուն փաստեր են, որ մեր ժողովրդի լայն զանգուածները միշտ մեզ հետ են:

Ինչպէս կը տեսնէք ներկայ նամակներէն, աւերը եւ

հալածանքը կը շարունակուի ամենակատաղի թափով. Հայաստանի հայուլթիւնը բնաջնջուած է, իսկ մնացեալ մասերուն միեւնոյն ճակատագիրը կը սպառնայ: Տոքթ. Լեփսիուսը եկաւ, բաւական մնաց հոս. փաստացի մի տեղեկագրութիւն կազմեցինք Դաշնակցութեան՝ թըրքական մոպիլիզասիոնի օրէն մինչեւ այսօր հետեւած քաղաքականութեան: Մի քանի օր առաջ մեկնեցաւ Զուլիցերիա՝ Միջագգային Կարմիր խաչին միջոցաւ բողոքելու:

Մեր դիմումները հոս կը շարունակենք նոյն ոգեւորութեամբ. ամբողջ Բուլգ[արիոյ] եւ Ռուսմանիոյ մէջ կազմակերպեցինք միօրեայ սուգ, որ արդէն բոլոր խանութները փակուեցան. հրատարակեցինք մի ընդարձակ կոչ բուլգար եւ ֆրանսերէն լեզուներով, ցրուեցինք ամբողջ հասարակութեան. ահագին տպաւորութիւն գործեցին այդ կոչերը հասարակութեան վրայ: Միշտ հայանպաստ յօդուածներ կ'երեւան հեղինակաւոր թերթերու մէջ:

Որոշեցինք ամէն օր կանոնաւորաբար Bulletin-ի¹⁷⁴ ձեւով ֆրանսերէն եւ բուլգ[արերէն] լուրերն ու տեղե-

կագիրները տալ դեսպաններուն, կառավարութեանց եւ բուլգար, ռուսէն եւ եւրոպական զանազան օրգաններուն: Վերջապէս փրօփականտայի ամէն միջոց ի գործ պիտի դնենք գոնէ այս խելագարները վերջին բոպէին խելքի բերելու: Արդէն դուք ալ սկսած էք նոյն ուղղութեամբ աշխատանք կատարել, որ գովելի է:

«Հայաստան»ը ձեր ցոյց տուած հասցէներուն կը դրկենք պէտք եղած քանակութեամբ. միայն կը խընդրենք որ գրէք կոմիտէներուն եւ բաժնեգիրները բոլորը ձեր քով հաւաքելով, նախկին միջոցաւ մեզ փոխադրէք խնդրենք այդ գործողութիւնը որքան կարելի է արագ կերպով կատարէք, ինչու որ «Հայաստանի» տպարանը ճոխացնելու համար ահագին դրամի պէտք ունինք:

Առ այժմ այսքան, սպասելով ձեր նամակներուն,

Ընկերական ջերմ համբոյրներով
Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Յ. Գ.— Վերջին բոպէին Վիշապից ստացանք նոր մանրամասնութիւններ տեղահանութեան մասին. վաղն իսկ կը գրենք ձեզ:

ՆՈՅՆ

174.- Ֆրանսերէն՝ պարբերական հրատարակութիւն, տեղեկագիր:

Փաստ. 63-87

**74.- ՁՈՒՑԵՐԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՍԻՏԷԻ ԿՈՉԸ ՏՊԱԳՐՈՒԱԾ
ՁՈՒՑԵՐԻԱԿԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐՈՒՄ**

REDACTION DU JOURNAL DE GENEVE,
GENEVE

Malgré les assurances faites aux représentants des Grandes Puissances à Constantinople, le gouvernement turc a commencé inexorablement l'expulsion des Arméniens de Constantinople.

Jusqu'à présent on a expulsé déjà 10.000 personnes dont la majorité est assassinée dans les montagnes d'Ismid. La liste de 70.000 hommes [est] préparée.

Au nom de christianisme et d'humanité sauvez les derniers débris d'un peuple qu'on extermine et par une intervention efficace arrêtez le martyr des innocents.

COMITE ARMENIEN

30 août 1915

Փաստ. 63-87ա

ԺՈՒՌՆԱԼ ԴԸ ԺԸՆԵՒԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Հակառակ մեծ պետութեանց Պոլսոյ ներկայացուցիչներին տրուած ապահովութիւններին, թուրք կառավարութիւնը սկսած է անողորմարար Պոլսոյ հայերի տեղահանութիւնը:

Յարդ Պոլսից տարագրուած է տասը հազար անձ, որի մեծամասնութիւնը կոտորուած է Իզմիտի լեռներում: Կառավարութիւնը 70 հազարի ցանկ պատրաստած է:

Յանուն քրիստոնէութեան եւ մարդկութեան փրկեցէք վերջին բեկորները մի ժողովուրդի, որին բնաջնջում են: Ազգու միջամտութեամբ կասեցրէք անմեղների մարտիրոսութիւնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՍԻՏԷ

30 Օգոստոս 1915

Հրատարակուած Ժուռնալ դը Ժընեւ օրաթերթում

Փաստ. 1158-97

75.– Յ. ԱՄԱՏՈՒՆԻԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂԻՐ. ԿՈՄԻՏԷԻՆ

18 Օգոստոս 1915
Սոֆիա-Պուլկարիա

Անշուշտ ստացաք անցեալ նամակս եւ թղթակցութիւնը:

Երէկ Պոլսէն վերադարձաւ Տոքթ. Լեփսիուս. չափազանց գէշ ազդուած էր կացութենէն. երկար խօսեցանք իր հետ. պատմեց խժոժութիւններու մասին աւելի քան մեր լսածները:

Դիմումներ կատարած է բոլոր նախարարներուն. գլխաւոր չարագործները կը մատնանչէ թալէաթ-էն-վեր գոյգ ոճրագործները: Թալէաթը յոյս չունի եղեր թուրքիոյ ապագային նկատմամբ, սակայն այսօրը կ'ապրի, վաղուան համար չի հոգար. իսկ էնվերը «Ֆանթեզիստ է, մեծ յոյս ունի ապագային նկատմամբ, մինչդեռ իբրեւ պետական մարդ ոչնչութիւն մըն է, Աֆիոն Գարահիսար եւ Շապին Գարահիսար իրարմէ զանազանելու չափ կարողութիւն չունի», կ'ըսէ Լեփսիուս: Էնվերը ըսած է որ ինք հարկադրուած է հայերու հետ վարուելու այդ կերպով. այդ կը պահանջէ եղեր պետութեան ապագայի ամրապնդումը. հայ ժողովուրդը պիտի ցրուէ բոլորովին այնպէս՝ որ այլեւս [իբրեւ] ազգային հաւաքականութիւն առանձին դիմագծութիւն չներկայացնեն:

[Լեփսիուս] դիմած է բոլոր դեսպաններուն եւ արդիւնքը այն եղած է որ status quo-ն¹⁷⁵ պիտի պահպանուի եթէ Դաշնակցութիւնը վրէժի ոեւէ գործողութեան չբխմէ. չեմ գիտեր թէ պիտի յարգեն այս խոստումը. միւս կողմէն պիտի թոյլատրուի որ միջազգային Կարմիր խաչը եւ բարեգործական ընկերութիւններ խնամեն

մնացորդները: Լեփսիուսի հաստատումով տեղահանուածներու 75% տոկոսը ողջ են եւ պէտք է զանոնք ապրեցնել մինչեւ որ ներկայ տագնապը անցնի. այդ ուղղութեամբ իր բոլոր ժամանակը պիտի տայ Եւրոպայի մէջ: Այսօր կամ վաղը պիտի ներկայանայ տեղույս արքայական զոյգին, անկէ յետոյ պիտի անցնի Զուլիցերիա միջազգային Կարմիր խաչերու նախագահին, յետոյ Գերմանիա. պիտի հրատարակէ եւ մերկացնէ թուրքիոյ խորերը կատարուած բոլոր խժոժութիւնները, որոնց բոլոր տեղեկագիրները հիմնուած են պաշտօնական փաստաթուղթերու վրայ, — չէզոք [պետութեանց] դեսպանատանց, գերմանական, աւստրիական դեսպանատանց եւ միսիոնարական հաստատութեանց տեղեկագիրներէն կազմուած:

Անցեալ շաբթուն, գերմանական արտաքին գործոց նախարարութիւնը տուած է խիստ նոթա մը՝ վերջ դնելու տնտեսական քայքայման գործին, հայկական հալածանքին, որովհետեւ իրենց (գերմաններու) ապագայ շահը կ'ոտնակոխուի այդպիսով: Էնվերը կատարած կ'ըսէ եղեր թէ այս երկիրը մերն է եւ ոչ եւրոպացիներուն. գերմաններն ալ պիտի հեռանան ասկէ յետոյ: Լեփսիուս կ'ըսէ՝ այժմ ամբողջ Գերմանիան կը հասկնայ թէ ինչ կը նշանակէ թուրքիոյ ուժեղացումը. անիկա երես առած՝ այլեւս ոչ ոքի կ'ուզէ լսել:

[Յ. ԱՄԱՏՈՒՆԻ]

— Յաջորդով պիտի տամ այլ տեղեկութիւններ: Այսօր հեռագիրը հաղորդեց որ Վան վերագրուած է թուրքերուն կողմէ:

175.- Լատիներէն՝ նախկին, «նախապատերազմեան» կացութեան հաստատում:

Փաստ. 882-46

76.– ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 20 օգոստ. 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր օգոստ. 15 գոյգը, նամակ չունինք ձեզմէ. զանազան պատճառներով չկրցանք գրել այս 4-5 օրը: Կացուցիւնը անստոյգ է: Ձերբակալումները մեղմացած են, նախընթաց երկու օրերու միջոցին ձերբակալուածներն ալ արձակեցին, բայց «կասկածելի» պիտակին տակ ամէն օր մարդ կը տանին: Տեղահանութեան ծրագիրն ալ մէկ կողմ դրուած կը թուի: Զաւէնը պալատ երթալով ուղերձ մը ներկայացուց: Իր պատմութեամբ՝ ընդունելութիւնը լաւ է եղեր: Սուլթանը ուղերձը կարդալէ յետոյ վար դրեր է, մասնաւոր նկատողութեան առնելու համար: Ուղերձին մէջ ակնարկութիւն միայն կայ եղեր ներկայ կացութեան մասին, ըսուած է թէ ազգը ամէնէն աւելի ներկայիս պէտք ունի ձեր գլխութեան: Առջի օր գնաց նաեւ դատական նախարարին, որ երեւան հաներ է նոր խնդիր մը: Նախարարը ըսեր է թէ այս միջոցին կ'ուսումնասիրէ ձէվտէթ փաշայի մէկ տեղեկագիրը՝ էջմիածնի կաթողիկոսին իրաւաստութեանց մասին եւ թէ որքան վնասներ հասած է թրքահայերուն՝ այդ իրաւաստութեանց երեսէն...

Զաւէնի պատմութեամբ՝ խմբակ մը կազմուած է, գլուխ ունենալով Քէչեանը՝ որոնք կ'արծարծեն այն գաղափարները թէ Օսմ. պետութեան շնորհին արժանալուն համար պէտք է թրքահայերը խզեն իրենց յարաբերութիւնները էջմիածնի հետ ու կաթողիկոսին անունն ալ չյիշեն եկեղեցիներու մէջ: Ասոր արդիւնքն է նախարարին ձեռնարկած ուսումնասիրութիւնն ալ:

Ատանայէն հասած ճամբորդներ կը պատմեն թէ Ա-

տանա, Մերսին եւ չրջակաները նոր սկսած են պարպելու համեմատաբար աւելի մեղմ վարմունք ցուցնելով: Ձէմալ փաշան ըսեր է կաթողիկոսին թէ «եթէ գիտնաք թէ Անատոլուի գաղթականներուն հետ ինչպէս կը վարուին եւ ինչեր պատահած են, այն ատեն ձեր բարեկամ անգլիացիներն ու Ֆրանսացիները շատ գոհ պիտի մնան իմ վարմունքէն»: Ճամբորդներն ալ կը խոստովանին թէ աւելի վեհանձն (?) վերաբերում ունի եւ չէթայական յարձակումներուն արգելք կ'ըլլայ: Բայց մենք կը կարծենք թէ այս մասին աւելի պերճախօս են կաթողիկոսին երկու նամակները, զորս կ'արտագրենք քիչ անդին:

Յամառօրէն կը պնդեն որ գոնէ Նիոկոմիդիոյ չրջանի բողոքական եւ կաթողիկոսները ինչպէս եւ գինուորի ընտանիքները դարձեր են, կամ վերադարձի ճամբուն վրայ են: Միւս կողմէ կ'իմանանք թէ Գոնիայի թուրք ժողովուրդը մեծ դժգոհութիւն յայտնած է կառավարութեան դէմ, ի տես գաղթականներու աննկարագրելի թշուառութեան, մուրացկանութեան եւայլն: Իբրեւ թէ երկաթուղիի գիծեր ալ քանդուել են: Պիտի աշխատինք դրկել Գիսակի վերջին նամակը:— Իբրանոսեանի մահը կը հերքուի. մահուան դատապարտեր եւ յետոյ ներեր են, ինչպէս կը հասկցուի վերջին նամակէն:

Այսու կ'արտագրենք Կիլիկիոյ կաթողիկոսին վերջին երկու նամակները, որոնցմէ կրնաք քաղուածքներ ընել, անշուշտ զանց առնելով կաթողիկոսի անունը: Այս առթիւ ի հարկէ դուք ալ ուժ կու տաք նպաստամատոցի գործին, ժողովուրդի բեկորները անօթութենէ փրկելու համար:

Նամակ կաթողիկոսի N° 1

Հալէպ, 19 Յուլիս

«Տիգրանակերտ գնացողներէն լուր չկայ դժոխք գնացողներու պէս: Պ. Չօիրապի ինքնագիր կտակը կը ներփակենք: Աստուած ըլլայ մխիթարութիւն՝ բովանդակ ազգին եւ Տիգրանակերտի յողարկատրաց պարագայից: Այնքապի եւ Քիլիսի գաղթն ալ ազդարարուեցաւ եւ այս գիշեր 51 ընտանիք Այնքապէն հասան: Այս կրկին քաղաքաց հայ բնակչութիւնը Դամասկոսի Հարան (կամ Հորան) գաւառը կը տեղափոխեն: Ուրֆայէն ալ, թերեւ Տիգրանակերտէն ուր հարիւր հոգի հասնելու վրայ են: Քոլիէն, Խարբերդէն եւն. բերուածները Բաս-էլ-Այնէն ուղղակի Տէյրի-Չօր կը դրկուին: Հիւանդութիւնը համաճարակ է. երկիցս դեղ ու նպաստ դրկուեցաւ, բայց կաթիլ մը ովկիանոսի մէջ: Քսան հազարէն աւելի են այդ գաւառի գաղթականք: Հալէպի մէջ համախմբուած են աւելի քան 15000, եւ օրէ օր հեղեղի նման կը հասնին: Անօթութիւնը հիւանդութեան չափ կոտորած կ'ընէ: Պա-

ընդհանուր առմամբ կանոնադրաբար կը տրուի, բայց դուրսերը հաց կ'աղաղակեն կամ փրկարար հրաշագործ գործունեւորը եւ կամ թագաւորական գանձ պէտք է, որ կէս միլիոն կիլիկեցիք, թերեւս նոյնչափ կամ անելի արեւելեան գաւառներէն գալիքները կարենան կերակրուիլ Սուրիոյ անապատներուն մէջ: Թողունք Ամերիկայի եւ Եւրոպայի մարդասէրները: Ի՞նչ կ'ընեն տարաբնակ, եգիպտաբնակ եւ ամերիկաբնակ հայերը: Ժամանակ է որ գաղթականաց հոսանքին պէս նպաստի հոսանքներ կազմուին. աշխարհ տեսած չէ, եւ պիտի չտեսնէ այսքան արհաւիրք, այսքան թշուառութիւն եւ կարօտութիւն: Երուսաղէմի ատերը բախտաւորութիւն է հայութեան ատերակաց բաղդատմամբ: Կոտորած, բռնաբարութիւնք, երկսեռ մանուկներու անհետացում, անհամար առեւանգութիւնք, գեղադէմ կանանց, հարսներու եւ կոյսերու վաճառում, մինչեւ անգամ երեք մէճիտի... Չի համբուիր եւ չի բացատրուիր: Մի՛ առարկէք թէ ճամբայ չկայ, միջոց չկայ օգնութեան հասնելու: Ո՞ր եւ Խաչի ընկերութիւնները. խաչին գոհուող ժողովուրդի մը եթէ ձեռք չերկնցնեն, ինչո՞ւ խաչին անունը կ'արատաւորեն. վիրաւոր կը փնտռեն – նիւթապէս, բարոյաբար, կրօնապէս եւ մտաւորապէս վիրաւոր. մեր հայ ժողովուրդն է: Դրամ հասցուցէք, հինգ հարիւրները ոսկի չեն, այլ դրուշներ: Անշունչ բնութիւնը, քարերն ու ապառաժները կուլան: Սրտերը թող լան, ըլլան օտար, ըլլան ընտանի: Ի՞նչ պիտի ըլլան Աստուծոյ տաճարները, ի՞նչ պիտի ըլլան վանքերն ու մենաստանները, ի՞նչ պիտի ըլլան եկեղեցապատկան կալուածները, Ս[ուրբ] սպասները, գրքերն ու զգեստեղէնք: Խորհուրդ տուէ՛ք, մինակ եմ, խելք չմնաց գլուխս, արտասուք չմնաց աչքերուս մէջ, զգացում չմնաց սրտիս մէջ: Չորս կողմն գիշեր ու ցերեկ մերկութիւն, անօթութիւն, նուաղում, լաց ու վայնասուն...

Ի՞նչ կ'ընէք, ի՞նչ յոյս ունիք, ի՞նչ ապագայ կ'ընդունարէք: Ժողովուրդը ամէն օր կը հարցնէ. ի՞նչ կ'ընէ Պոլիսը, ի՞նչ կ'ընէ պատրիարքը, ի՞նչ կ'ընեն ժողովները:– Ժողովուրդը խելագարուած է, չ'ըմբռներ ցաւին չափն ու տեսակը, կը կարծէ որ անտարբեր են կաթողիկոսարան–Պատրիարքարան. կը ստիպեն որ դիմումներ ընեն կեղորոնը, կայսեր ու աւագանիին, կը ստիպեն որ անօթիին հացագինը հեռագրի տամ: Բայց գիտեմ որ ամէն դիմում, ամէն աղաչանք եւ պաղատանք անօգուտ են, եւ անելի նոր խստութիւններու եւ չարիքներու պատճառ կրնան ըլլալ: Արտասուքով կը գրեմ, կը խնդրեմ որ այս ընդի. ցաւին մէջ մոռնանք անձնական աննշան ցաւերը: Հաճըն պարպուեցաւ. Հաճընի առաջնորդ Պետրոս եպ. տառապեցաւ անգիտակից ժողովներէն ատերող բան, այն ցրուեցին. իսկ մնացած այրիները իսկական որբեր են որ կը տառապին անօթութեամբ եւ [կը] տառապեցնեն եպիսկոպոսը: Հրահանգ տուինք, եթէ մնացողները հանգիստ պիտի թողնեն իրենց տեղերուն եւ եթէ վանքին գոյութիւնը կ'ապահովուի, քառասունհինգ չափ բոլորովին անտէր, անտիրական որբեր հաւաքէ եւ իր պատասխանատուութեան տակ որբանոցը կազմակերպէ իբրեւ ձեռք բանի: Այս հրահանգը որ արդէն տուած էինք, երեկ վախէն տեղեկացանք, որ Կիլիկիոյ մէջ ոչ մէկ քաղաքի եւ գիւղի մէջ մահամերձ հայ մը անգամ պիտի չձգուի: Ի՞նչ անսահման պատիժ: Ատանա, Տարսոն, Մերսին ալ պիտի պարպուին եւ արդէն Տարսոնէն քառասուն տունի չափ հասած են Օսմանիյէ: Հալէպի նախորդ վալի Դելալ պէյ խոստացած էր Պոլսոյ մէջ աշխատիլ գոնէ մասամբ մեղմացնելու ծովածաւալ թշուառութիւնը: Թերթերուն մէջ կարդացինք Պոլիս գալը բայց թէ յիշեց ու խօսեցա՞ւ: Քիլիսցիներէն բաւական ընտանիք իսլամութիւնն ընդունելու առաջարկ ըրած են տեղական կառավարութեան:

Նամակ N° 2

Հալէպ, 28 Յուլիս

Յուլիս 4ին Պ. Չօհրապի եւ Վարդգէսի Հալէպէն մեկնելու պահուն, իրենց ընտանեաց ուղղեալ նամակները յանձնեցին, զորս դրկած ենք, նաեւ Չօհրապի ինքնագիր կտակը, «իմ կամքս է» վերնագրով:

Անցեալ շաբթու հեռագրեցինք դատական նախարարութեան՝ վանական եւ եկեղեցական կահուց, սպասուց եւ սրբազան գրեանց մասին եւն., որեւէ պատասխան չառինք: Դուրսէ դուրս կը լսուի թէ հաշուով եւ ցուցակով կառավարութիւնը պիտի առնէ իբրեւ աւանդ:

Ամբողջ ազգը բնաջնջուելու վրայ է, որբանոցներու մասին կը խօսինք, որբանոց չմնաց, Տէօթթ-Եոլիսը կառավարական պէտքերուն յատկացուած է, որբերը ցրուած. Հաճըն վաղուց փակուած է, Հասան Պէյլիսը մասամբ, առ այժմ կայ Մարաշիւնը, բայց ան ալ պիտի փակուի, քանի որ Մարաշի հայերն ալ պիտի ցրուին եւ արդէն ազդարարած են:

Այնթապի եւ Քիլիսի գաղթը սկսուած է. Այնթապէն ելած առանձին երկու կարաւանները բոլորովին կողպտուած էին, մանաւանդ երկրորդը, որ յարձակման ենթարկուած էր, մէկ սպանեալ եւ տասներկու վիրաւոր

ուներ. տեղական կառավարության դիմումներ եղան. պետք եղած կարգադրությանց շնորհիւ, Գ. կարաւանը թէ հանգիստ եւ թէ ապահով հասած էր Հալէպ, սակայն քիլիսցիներուն պէս դուրս չհանեցին, ուղղակի տարին Դամասկոսի նահանգը, եւ այսուհետեւ գալիքներն ալ, ըլլան Ատանայէն, Տարսուսէն եւ Մերսինէն, Հալէպ չպիտի հանուին: Հալէպի մէջ համախմբուած գաղթականաց առաքումն ալ շատ խստութեամբ սկսաւ կատարուիլ: Կ'ըսուի որ խիստ հրամաններ տրուած են, որ 15 օրէն Հալէպի մէջ գաղթական չմնայ. Իսթեմբուլուն եւ Պէլլան հանուեցան: *Սուէտիոյ* եւ *Քեսասի* համար անախորժ լուրեր կը հասնին, որպէս թէ լեռը քաշուած են: Այսքան աղէտներու մէջ, տակաւին չխրատուեցանք եւ միշտ առիթները անպակաս կ'ընենք, որ կառավարութիւնը իրատունք ունենայ գթութեամբ չվարուելու: Եթէ միայն կիլիկեցոց գաղթումը ըլլար, չորս հարիւր հազարէ աւելի պիտի ըլլային թշուառութեան մատնուած հայերու թիւը, բացի Արեւելեան նահանգներու հազարաւոր այրիներէն ու երկսեռ մանուկներէն զատ: Եոզկատի Հին-Վերին գիւղին 52 այր մարդիկ եւ Թոմարգայէն (Կեսարիա) 200 հոգի եկան Հալէպ:

Ճամբան ամէնքն ալ կողոպտուած են, հետեւաբար ամէնքն ալ անօթի են: Եւ կառավարութիւնը այս կարգի տարագրելոց, իբրեւ վնասակար անձանց թալիւն¹⁷⁶ չի տար: Հալէպի Ազգային յանձնաժողովը օրական 5-6 խանթար հաց կը բաշխէ, բայց ընդի. անօթութիւնը չի կրնար փոքր ի շատէ մեղմացնել: Ինչպէս նախորդներով, նոյնպէս ներկայիս կը կրկնեն – աղէտին առաջին առնել անկարելի է. դիմում, աղաչանք, լաց ու ողբ ոչ միայն անգօր են, այլեւ ծիծաղ կը պատճառեն. միայն աշխատելու ենք ողջ մնացողները ապրեցնելու. հազարաւոր մերկեր ու բոպիկներ կան, ներսերէն եկած այրիներու ոտնամաններն անգամ կողոպտուած են. ամէնքն ալ մաշուած, վիրատրուած եւ ուռած ոտքերով հասան. դեղ ու դարման տարուեցաւ. համաճարակ ալ կայ Բաս-էլ-Այնէն Տէյրի-Չօր փոխադրուողներու մէջ. օրական մահերու թիւը քսանէն աւելի է:

Անսահման գումարներու պէտք կայ հացի, զգեստի, դեղի, բժիշկի եւ այցելու հովիւներու. եթէ պահեստի գումարներ կան, ինչ անունով ալ ըլլան, պէտք է այս նպատակին յատկացնել*. ծանօթ Վիշապի. – չե՞նք կրնար մեր Չաւարեան ֆոնտը եւ օգնենք Սասունի ֆոնտէն 2000ի մօտ գումար մը առնել եւ յատկացնել այս նպատակին. իրապէս չգիտենք ուր դրուած են, Հայ-Պանք թէ ուրիշ տեղ:

Երէկ Տոքթ. Շեփրտը Պոլիս մեկնեցաւ, կենդանի պատմութիւն է բազմակերպ աղէտներու եւ թշուառութեանց. նպատակ ունի աշխատելու, չարիքը մեղմացնելու, եթէ յաջողի Ամերիկա պիտի անցնի, մարդասէրներու գթութեան դուռները ափ առնելու եւ դրամ, մեծաքանակ դրամ ձեռք բերելու: Ամէն յարգանքի եւ մեծարանքի արժանի է. ցարդ մատուցած ծառայութիւնները անգնահատելի են: (Մասնաւոր):

Ուրֆայի համար ալ արիւնտ լուրեր սկսան հասնիլ: Առաջին անգամ քառասուն երկու երեւելիներ, որոնց մէջ պատուելիներ եւ քարոզիչներ, նաեւ առաջնորդը նահատակուած են: Երանի՛ սուտ ըլլային բոլոր դժոխսային լուրերը. անկէ վերջը 17 հոգիի համար ալ լսուեցան: Տիարպէքիի սպանդանոցը սկսաւ ծաւալիլ, կը մօտենայ Հալէպի սահմաններուն. աղօթքները սպառեցան, սրտերը հալեցան, շրթունքները երիթացան¹⁷⁷, լսող, կարեկցող չկայ, ո՛չ յերկրի եւ ո՛չ յերկինս:

Հռովմէականաց համար կ'ըսուի որ անոնց գաղթը յետ մնացած է, բարձրագոյն հրամանաւ: Իցի՛ւ թէ ստոյգ ըլլար, գոնէ անոնք թող ապրին. շատերը ձեռնարկներ կ'ընեն կաթոլիկ արձանագրուելու, եթէ կառավարութիւնը թոյլատրէ. չեն կարծեր թէ յաջողին, քանի որ իսլամութեան դիմողներն անգամ իբր թէ չեն ընդունիր: Դրամ հասցուցէք, Տէյրի-Չօրի տասնեակ հազարաւոր հայերը անօթութենէ եւ հիւանդութենէ կը ջարդուին: Երանի՛ եկեղեցական անօթները ձեռք բերելու եւ ծախելու միջոցներ ըլլային, որպէսզի կենդանի անօթները փրկուէին, տարապարտ մահէ ու կորուստէ:

Նամակին կցուած է հետեւեալ Յ. Գ-ը գրուած կաթողիկոսի քարտուղարին կողմէ:

Այս բոպէիս լուր առինք որ Մարաշէն 15-45 տարեկան բոլոր այրերը Այնթապ դրկած են, դէպի Տէյրի-Չօր փոխադրելու համար: Կը վախցուի որ ասոնց կեանքը վտանգուի: Երէկ երեկոյ ալ Սըվազի եւ Կարնոյ շրջակայ գիւղերէն երկու հազարի չափ այրի կիներ եւ որբեր հասան Հալէպ: Տոյոց տարիքը 11ը չ'անցնիր: Ճամբան առեւանգուած աղջիկներ եւ տղաքներ ալ կան. ասոնց ապրելու հնարաւորութիւն եւ յոյս չկայ: Անհրաժեշտ դարմանի կը կարօտին: Ասոնց ամէնքը դէպի Արաբիոյ անապատները պիտի դրկեն: Մեր ալ մահու «դատեա՛» ն կարդացուած է, օր աւուր մահուան կը սպասենք. վիճակնիս անտանելի է, յուսահատութիւնը վերջին ծայրը հասած է:

176.- Մթերաբաժին, ուտեստ:

177.- Հալումաշ եղան:

Ընկերներ!

Կը յուսանք վաղն ալ կարգ մը տեղեկագիրներ ստանալ եւ հաղորդել:

Հացի խնդիրը չափազանց սուր կերպարանք առաւ մանաւանդ այս շաբթուն: Հագարաւոր բազմութիւն 5-6 ժամ կը սպասէ փողոներու առջեւ. վեսեգայով¹⁷⁸ կուտան հացը, մարդ գլուխ կէս օխա, բայց քանի օրէ ի վեր ընտանիք գլուխ մէկ օխա իսկ չի տրուիր:

178.- Վեսեգա – հոս՝ պարէն ստանալու յատուկ վկայագիր:
179.- Խաչը՝ փրոֆ. Ա. Խաչատրեանն է, Լիպարիտը՝ Նազարեանց:

Ի՞նչ եղան անցագիրները: Խաչը կը խնդրէ Լիպարիտին¹⁷⁹ գրել Սուլինա՝ իր կնոջը՝ թէ ողջ առողջ է, բոլոր նամակները ստացած եւ պատասխանած է: Քրմոյին հինգ ոսկին գարմանալի թուեցաւ:

Միւս կողմէ Օր. Սրուանձտեանը ծախքերու մասին կը խօսի, երեւի անոր պիտի տրուի: Ճշդեցէք: Լուրեր տուէք Հայաստանէն: Ի՞նչ վիճակ ունի հայկ. հարցը՝ ձեր ծանօթ գեկոյցէն յետոյ: Գէթ հաստատ երաշխիք մը կա՞յ ինքնավար Հայաստանի, թէ կուզ առանց հայու...
Կարնոյ անկումը ճի՞շդ է...

Համբոյրներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ

Փաստ. 882-47

77.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 22 օգոստ. 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր 20 թուակիր գոյգը, միեւնոյն հասցէով.— Ստացանք ձեր օգ. 17ը:

1.- Աղէտ աղէտի վրայ: Մեծ կոտորած մը եղած է էն-կիւրիի մէջ, որուն մանրամասնութիւնները չենք գիտեր տակաւին, երկաթուղիի երթեւեկը դադարած ըլլալով: Սա ճիշդ է որ սպանեալներուն մէջ կան տասը կաթորիկ վարդապետ, եւ 17 երկաթուղիի պաշտօնեայ: Կը պատմուի թէ բոլոր այրերը լեռը տարած եւ ջարդած են: Բայց մենք մտահոգ ենք մանաւանդ ուրիշ կէտի մը համար: Կը կասկածինք որ ոչ միայն այաջիները եւ չանդրըցիները, այլեւ վերջերս Պոլսէն աքսորուած դժբախտներու բազմութիւն մը համախմբուած եւ կոտորուած ըլլայ էնկիւրիի ժողովուրդին հետ: Այս ջարդին առթիւ պապական նուիրակ Տոլչի գերման դեսպանին գնաց եւ շատ խիստ խօսքերով բողոքեց՝ Գերմանիան պատասխանատու նկատելով այս բոլորին, այն աստիճան որ, դեսպանը սրտնեղեր եւ ըսեր է թէ շատ կը ծանրանաք. իրեւ պատասխան նուիրակը յայտարարած է, «իրաւունք ունիմ, եթէ դուք ուզէիք կրնայիք առաջը առնել»: Յետոյ գացեր է Թալէաթին եւ երեսին ըսած է որ դուք սուտ կը խօսիք, կը խօսէիք շարունակ. եւ սպառնացեր է մեկնիլ անմիջապէս: Նախարարը խոստացեր է բաւարարութիւն տալ եւ նոր կարգադրութիւններ ընել...

2.- Ահմէտ Բիզան հարցապնդում մը ուղղած է ծերակոյտի նախագահին, սա իմաստով,— կայսրութեան

մէջ գտնուած հայերը տեղահան կ'ըլլան եւ իրենց կ'արգիլուի որեւէ բան առնել հետերնին. ճամբան այրերը կը կոտորուին եւ կիները կը կողպտուին, կը բռնաբարւին: Այսպիսի բան Օսմ. պատմութեան մէջ տեսնուած չէ եւ ոչ ալ օտար պատմութեան մէջ կայ նման դէպք: Ինծի կը վերապահեմ ծերակոյտի բացման ատեն ընելիք հարցապնդումի իրաւունքը:

Կը ջանանք գտնել եւ հաղորդել այս դիմումին բուն պատճէնը:

3.- Լիբանանի մարոնիներն ալ կը հեռացնեն, երկրէն բոլորովին արտաքսելով: Արդէն թուրք կուսակալ մը նշանակած են, ջնջելով անոնց ալ ինքնավարութիւնը: Պէյրութի մէջ բազմաթիւ արաբներ (երբեմն բարենորոգում պահանջողներէն) կախած են. բազմաթիւ փախըտականներ, բժիշկներ եւ ուրիշ մտաւորականներ, այսպէս մահուան դատապարտուած են:

4.- Մուսուլի գերման հիւպատոսը 500 ոսկի նպաստ բաշխած է հոն հասած աքսորականներուն: Զաւէնին թելադրեցինք որ խօսի իրենց հիւպատոսներուն միջոցաւ նպաստ ղրկելու միւս տեղերն ալ: Մերժեր են առարկելով թէ կառավարութիւնը կ'արգիլէ մեր ձեռքով դրամ բաշխել... Երեւակայեցէք որ Մորթման (գերման դեսպ[անատան] հայկ. բաժնի պետը) խոստովաներ է թէ կը զգուշանայ պատրիարքին գալ, որպէսզի կառավարութիւնը դիտողութիւն չընէ... Դուք դատեցէք թէ ո՞րն է աւելի զգուշիւն, Թուրքիա՞ն թէ Գերմանիան: Նպաստի պահանջը ամէնէն կենսականն է այս միջոցին: Ի՞նչ կը խորհիք այս ուղղութեամբ: Ինչպէս կ'երեւայ

վերջին տեղեկություններէն, մնացորդ բեկորները պիտի մեռնին պարզապէս անօթութեանէ եւ հիւանդութեանէ: Օտար Կարմիր խաչերը, գաղութները եւն. իրար անցընելու է դրամ հասցնելու, բայց մանաւանդ դրամը իր բուն տեղը դրկելու եւ բաշխելու համար: Գազանները ատոր անգամ արգելք կ'ըլլան:

Ասկէ առաջ 200 ոսկի դրկուած էր Սուլթանիյէ աքսորուած 6-7000 զէյթունցիներուն համար: Գոնիայի առաջնորդին թոյլատրեք են դրկել միայն 40 ոսկի: Խեղճերը տակաւին աւելի ներս չքշուած, օրական 4-5 մեռել կ'ունենային, իսկ մէկ մասը քայլ մը առնելու անկարող են, այնպէս որ ճամբան բազմաթիւ մահեր պատահած ըլլալու են:

Դարձեալ գերման դեսպանատունէն Տոքթ. Վեպեր, խոստովանեք է թէ Թուրքիոյ բռնած ընթացքը հայերու հանդէպ՝ Գերմանիոյ դէմ հանած է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի հասարակաց կարծիքը, որ պատասխանատու կը համարեն զայն:

Այստեղ նոր բան մը չկայ, ձերբակալումները նուազած են եւ մեծ մասը տեղի կ'ունենան մատնութիւններու վրայ. կը հաւաստեն թէ երեք-չորս շաբթուան ընթացքին 15000 հոգի ձերբակալուած է, բայց այս թիւը կասկածելի կ'երեւայ. կ'աշխատինք ճշդել:

Իզմիրի վայրին միշտ կ'ընդդիմանայ տեղահանութեան, հակառակ կեդրոնի հրահանգներուն: Գոնիայի վայրին ալ (Ճելալ պէյ) կարգ մը մեղմացումներ ընծայեք

է եւ անոնք որ Գոնիան կամ Ատանան չեն անցած, կը մնան իրենց հասած տեղերը (գէթ ալպէս էր օգոստ. 14 թուակիր նամակի բովանդակութիւնը գրուած ազգ. ժողովի քարտուղարէն. երեք նամակներ կան օգ. 7, 11 եւ 14 կը քաղենք եւ կ'ուղարկենք ձեզի): Էականը այն է, որ սարսափելի թշուառութիւն կը տիրէ մանաւանդ որ նորագիր զինուորներ հասած ըլլալով՝ հացի նուազութիւն կայ: Կը հաստատուի որ Գոնիայի, էրէյլի եւ շըրջականերու ժողովուրդը եւ նոյնիսկ պաշտօնական անձեր լաւ վերաբերում ցոյց տուած են հայ ժողովուրդին, բայց իրենց պատասխան տրուած է «թէ հրամանը վերէն է»: Այս բաներէն վերջն է որ տեղի կ'ունենայ էնկիւրիի կոտորածը, որուն շարժառիթը հասկցանք տակաւին, եթէ միայն դիւային ծրագիր մը չէ յեղափոխական, մտաւորական փունջին մնացորդն ալ ոչնչացնելու:

Գիտակին նամակը ուղղուած իր կնոջ՝ մեր քով է եւ կ'ուղարկենք բարեկամով: Պահարանը բացուած է այն մէկ անձին կողմէ, որ կը փոխադրէ Ձաւէնին նամակները. այլապէս կը մերժէ ընդունիլ: Այս պարագան ձեզի վերապահելով, անշուշտ երկու խօսք կ'ըսէք տիկին Գիսակի, որ անուղղամտութեան կասկածներ չունենայ: Ձեր յանձնարարութիւնները կը կատարենք, բայց կը խնդրենք որ ուրիշ ատեն նամակներու բուն մարմինը՝ բովանդակութիւնը այդպիսի *corvées*ներ¹⁸⁰ չըլլան:

Համբոյրներով
ՎԻՇԱՊԻ
ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ

180.- Ֆրանսերէն՝ բառացի կը նշանակէ ձրի եւ բռնի աշխատանք, հոս՝ տաժանելի գործ:

Փաստ. 1158-98

78.– Յ. ԱՄԱՏՈՒՆԻԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ

22 Օգոստ. 1915
Սոֆիա – Պուլկարիա

Միրելի ընկերներ,

Անցեալ նամակաւ ձեզի հաղորդեցի թէ Պոլսոյ տեղահանութիւնը սկսուած էր, սակայն երէկ նամակ ստացանք Վիչապէն. ըստ երեւոյթին դադրեցուցած են, հաւանաբար արտաքին ազդու դիմումներու շնորհիւ (կ'ենթադրուի Պուլկարիան. անոր ներկայացուցիչներն են միայն որ խոշոր ազդեցութիւն ունին այս միջոցին): Մինչ այդ հաւաքուած ոչ-ընտանիքաւոր պանդուխտներէն քանի մը հազար զրկած են դէպի Գոնիա, իսկ մնացեալ 200ը, որ զրկուելու վրայ էին, ազատ ձգուած են:

Հակառակ տրուած յոռի լուրերուն, կը տեղեկացնեն թէ Պոլսոյ եւ Նիկոմիդիոյ տեղահանուածներու նկատմամբ բռնութիւն եւ կոտորած տեղի չէ ունեցած, Պոլսէն զրկուածներէն բոլորէն ալ նամակ ստացուած է, որոնք կ'իմացնեն թէ գիրենք հոն թողուցեր են իրենց կամքին այդ շրջանի կից ուզած տեղերնին հաստատուելու համար: Այդ ամբողջ շրջանի քուածներուն համար հրամայուած է Գոնիայէն անդին չզրկել. ըստ երեւոյթին, ինչպէս նամակը կը հաստատէ, իտալական նոր դեսանտէ մը կը վախճան կիլիկեան ափերը եւ չեն ուզեր որ այդ ժողովուրդը անոնց ձեռքը իյնայ:

Վերջերս Չանկըրիէն եւ Այաշէն եկող պուլկարահպատակ ընկերներ կը հաւաստեն մեզի թէ այնքան ալ գէշ չէ անոնց վիճակը որքան մենք կ'ենթադրենք, յամենայն դէպս չափազանց անստոյգ է իրենց վիճակը եւ ատկէ աւելի շատ կը նեղուին:

Այստեղ սկսուած է կարեւոր բանակցութեանց նոր ձեռնարկներու համար, որուն նկատմամբ այժմ կան-

խահաս է գրել. ապագային:

Անցեալ նամակաւ գրեցի ձեզի «Հայաստան»ի նկատմամբ. չափազանց անկազմակերպ վիճակի մէջ էր. հարկադրուեցայ վերակազմութեան գործը ստանձնել: Փոխադրուեցանք նոր հասցէին — աւելի յարմարագոյն տեղ մը — Tzar-Boris 89, Sofia: Բնականաբար առաջին պատեհութեամբ դժուարութեան կը բախիմ, մասնաւորապէս նիւթականի անձկութեան պատճառաւ. ստիպողաբար պիտի խնդրեմ ձեզմէ, նախ անմիջապէս զրկեցէք ձեզի զրկուած թերթերուն փոխարժէքը, որքանով որ սպառուած է. հոս տոմարին մէջ բաւական խոշոր հաշիւ մը կայ: Երկրորդ՝ շրջաբերականին կցուած է մասնաւորապէս, որ կոմիտէներուն հասցէին զրկուած թերթերը սպառէին եւ հաշիւները կամ ձեզի զրկէին ի հաշիւ մեզի եւ կամ ուղղակի մեզի զրկեն:

Անուղղակի միջոցաւ սկսանք մաս առ մաս կամաւորները զրկել, եթէ հոտը չելլելով առջեւը չառնուի:

Անցեալ անգամ գրեցի ձեզի որ Թրոյ Միսաք Նորսիկեանէն 50 տոլարի չափ առնելիք մը ունիմ. աշխատիք տեղւոյն ընկերներուն միջոցաւ գանձել ու ինձ հասցնել. նիւթական նեղութեան մէջ եմ: Կը յուսամ բարի կ'ըլլաք խնդրանքներս անհետեւանք չթողուլ:

Այս միջոցին հոս ունինք բաւական հիւրեր, Պոլսէն եկած, որոնք ընկերուհիներ են եւ կամ տարագրուած ընկերներու ընտանիքներ, որոնց բոլորին ալ հոգատարութիւնը ծանրացած է տեղւոյս կեդր. կոմիտէին վրայ:

Ընկերական ջերմ բարեկներով՝
Յ. ԱՄԱՏՈՒՆԻ

Փաստ. 882-48

79.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵՂԻՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

[Կ. Պոլիս], 25 օգոստ. 915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր 22ը, երկու հասցեներով, մէկը նամակ եւ միւս երկուքը թղթակցութիւն]. նամակ չունինք ձեզմէ եւ այս պարագան շատ կը ճնշէ մեր վրայ, որովհետեւ կը կարծենք թէ գէթ լուրերը հաղորդելու համար առատ նիւթ կ'ունենաք: Երէկ եւ այսօր նորէն իմացանք թէ իտալացիները գրաւած են Մերսին, Ատանա, Տարսոն, Ատալիա, կտրած են երկաթուղիի գիծը, թէ թուրքերը կը պարպեն Գոնիան, թէ էնվերը եւ իր արբանեակները, ինչպէս եւ սելանիկցիները արդէն դէպի ներս փախցուցած են իրենց կիները, եւն.: Աղբիւրները բաւական իրագրեկ կը թուին, բայց մենք կը կատարինք որ մեր սեփական աղբիւրներէն լուր չենք ստանար եւ ամբողջին ասէկօսէներով կը սնանինք: Զարմանազան լուրեր կը պտտին նաեւ Պալքաններու մասին: Ինչով բացատրել ձեր ժխտութիւնը: Կ'իմանանք նոյնիսկ որ Թուրքիան արդէն գիշեր է էտիրնէն եւն.:

Խաչը¹⁷⁹ որ ամիս մը առաջ ոստիկանութեան կողմէ կանչուած էր եւ յետոյ արձակուած, պէտք է ձերբակալուէր շաբաթ օր. բարեբախտաբար բնակարանէն բացակայ է ատենէ մը ի վեր: Շատ ստիպեր են տան աղջիկը որ ըսէ տեղը: Հարցումներ ուղղած են նաեւ կնոջը մասին: Բայց անօգուտ: Մենք կ'աշխատինք աւելի ապահովել եւ ձեռք չանցնել: Միւս կողմէ ստոյգ աղբիւրէ մը իմացանք որ վերջերս Պոլսէն աքսորուածներէն մաս մը սաստիկ ծեծեր են Իզմիտի եկեղեցիին մէջ (ուր քննիչ ատեան կայ), թէ խոստովանութիւններ եղած են պատանիներու եւ 130 հոգիի մասին: Կը կասկածինք որ այդ կայանաւորներուն մէջ ըլլան նաեւ մեր կարգ մը ընկերները (Գում Գաբուէն 2, Սկիւտարէն մէկ, Պէշիկթաշէն մէկ), որոնք լաւ կը ճանչնան մեզ եւ բաներ մըն ալ գիտեն: Գոնէ երկուքին համար շատ վստահ չենք որ դիմանան. ամէն պարագայի մէջ, միշտ արթուն կը սպասենք. եթէ այս անգամ ալ ձեռք չիյնանք, ալ հրաշք է:

Այս միջոցին յոյներ ալ կը ժողովեն: 300ի չափ եղած են արդէն, իսկ թշնամի տէրութեանց հպատակներուն համար տուները կը հարցնեն նորէն:

Օրէնք մը հանած են արդէն եւ երեւի պիտի քշեն: Ե՞րբ պիտի գան վերջապէս սա մարդիկը: Ծի՞շդ է որ ցարը ինքնագիր հեռագիր մը ուղղած է Պոլսոյ ամբերիկեանին, պահանջելով դադարեցնել հայերու հալածանքը

եթէ ոչ...: Յետոյ, կ'իմանանք թէ Պապն ալ սպառնացեր է Յրանց Եոզէֆ¹⁸¹ կայսեր... նոյն հարցին համար: Էնկիւրիի կոտորածը կաթոլիկներու գլխուն պայթած կը թուի, քանի որ ժողովուրդը քելած էր:

Տոքթ. Փաշայեանի Յուլիս 29 թուակիր մէկ հեռագրին վրայ քսան ոսկի դրեցինք էնկիւրի հեռագրով: Եւ ահա օրեր վերջը այդ դրամը ետ կու գայ: Տարաբախտ ընկերներ, եթէ ողջ իսկ ըլլան, ինչպէս պիտի ապրին: Ըսենք միանգամ ընդմիշտ, որ ոչ մէկէն լուր չկայ, ըլլայ կուսակցական, ըլլայ պարզ անհատ: Երեւի դրամը իրենց ձեռքը չհասած, բանտէն ճամբայ հաներ էին: Սարսափելի պատմութիւններ կը հասնին Նիկոմիդիոյ շրջանէն, գործուած աւերներու մասին: Թուրքերն անգամ կու լան եղեր:

Այսօր զրոյց կար թէ Նիկոմիդիա քաղաքին հայերու 800 տուները կրակի տուած են. թշուառութեան մէջ են նաեւ թուրքերը, քանի որ կեանքը դադարած է: Ատաբազարի գայմագամը հրեայի մը հետ ընկեր եղեր է, հայերու գոյքերը ծախելու եւ մէջերնին բաժնելու, սկսելով Արմաշի վանքէն. յետոյ վէճ ծագեր է մէջերնին, եւն.: Այս բոլորի մասին լաւ մը տեղեկանալէ յետոյ, թղթակցութիւն մը կը փութացնենք:

Ծի՞շդ է որ թուրք սպայակոյտը Ուզուն Քեօիբիւր քաղուեր է, թէ Ֆրանսական ճակատին վրայ գերմանացիները կը պարտուին:

Քիչ մը մեզ ալ լուսաւորեցէք ձեր արեւէն, անասուածներ: Յարմար թերթ չկար որպէսզի լայնօրէն թղթակցութիւն մը գրէինք. այս խեղճ երիզը մնաց օրուան քանի մը լուրերը հաղորդելու համար: Զեր հարցերէն, Վահան Մինախորեանը եթէ Սամսոնի Վահանն է, կը խոստովանինք որ ոչ մէկ լուր ունինք Ընդհ. ժողովէն դառնալէն ի վեր, քանի որ նախորդ մարմիններէն Բիւրոյին հետ ալ կապ չունինք: Թանինը դժուար թէ գրտնենք, բայց կ'աշխատինք. շատ ճիշդ է: Նախընթաց պարագաները (ինչո՞ւ չգործադրեց եւն.) 4-5 տարուան խօսքեր են, Արշաւիրը կը յիշէ, իսկ ուղղակի այդ ծրագիրը գործադրելու սպառնալիքը, այս պատերազմի ընթացքին եղաւ:

Հուլիսիմէին ըսէք որ Արմէնն ալ կը փնտռեն Սրվագէն հասած լուսանկարով, երեւի յայտնութիւններ եղած են. անհամբեր սպասելով ձեր նամակներուն:

Համբոյրներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ

181.- Աւստրիոյ կայսր եւ Հունգարիոյ թագաւոր:

Փաստ. 1158-99

80.- ՅՈՎՀ. ԱՄԱՏՈՒՆԻԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

28 Օգոստոս 1915, Սոֆիա - Պուլկարիա

Միրելի ընկերներ,

Դէպքերը թուրքիոյ սահմանէն ներս խելակորոյս արագութեամբ իրարու յաջորդեցին, այնպէս որ անկարելի է գրիչով կարենամ ընդհանուր պատկերը տալ:

Պէտք է այնպէս ընդունինք այլեւս թէ՛ հայաբնակ շրջաններու մէջ հայ ժողովուրդ գոյութիւն չունի. ոչ միայն Հայաստանի այլեւ (բացի Պոլսէն) մնացած բոլոր շրջանները. քաղաքացիներու մէջ քանի՞ տոկոսով այժմ կ'ապրի կամ ողջ է՝ ստոյգ տեղեկութիւն չկայ, եւ քիչ շատ տեղեկութիւն ունեցող օտարներու կարծիքները իրարմէ կը տարբերին, իսկ եթէ յիշուի բաւական տոկոս կ'ապրին, ինչպէս կը հաստատէ տոքթ. Լեփսիուս, անոնք ալ այս կամ այն ձեւով պիտի մեռնին, եթէ մեր բարեկամները — որ կը խոստանան — ռեւէ ձեւով չկարենան օգնութեան հասնիլ:

Միւթարականը միայն այն է, որ մէկ երկու շրջաններու մէջ ոչ միայն ապստամբութիւնը անընկճելի կը մնայ, այլ նաեւ անոնք ահագին թրջական շրջաններ կ'աւերեն եւ կը կոտորեն:

Վերջին մեր ստացած նամակները կը հաստատեն թէ ընկեր Մուրատ հետզհետէ փախստականներով բազմացուցած է իր բանակը, որուն թիւը կը հասնի 2000ի եւ Սեբաստիա-Շապին Գարահիսար շրջանները կը կոտորէ եւ կ'աւերէ. մտադրած է դէպի Սասուն-Վան ուղղութեամբ շարժուելու, որպէսզի կարենայ կամաւորական գունդերուն հետ միանալ կամ առնուազն յարաբերութեան մտնել՝ վերահաս ձմեռին անպատրաստ չմնալու համար: Ի հարկէ պիտի շարունակէ աւերելով ու կոտորելով. ունի դիւրութիւն, որովհետեւ թուրքերը պատերազմի ճակատներէն մեծ ուժեր չեն կրնար խնայել իրենց դէմ դրկելու համար. իսկ թուրք եւ քիւրտ գիւղերու մէջ կռուող ուժեր չեն մնացած, ամբողջ բանակները տարուած են¹⁸²:

Վերջին նամակներով կը տեղեկացնեն նաեւ որ Զէյթունի Լեռը քաջուած կռուողները նորահաստատ թուրք զաղթական ժողովուրդը կոտորած են ամբողջութեամբ, ցոյց տալով [համար] թուրքերուն, թէ այնպէս դիւրին բան չէ անոնց բոյները բռնութեամբ գրաւել:

Տոքթ. Լեփսիուս քանի մը օր առաջ մեկնեցաւ Զուլիցերիա տեսնուելու Միջագագային Կարմիր խաչերու նախագահին եւ ուրիշ անձնաւորութիւններու հետ: Այստեղ տեսակցութիւն ունեցաւ նախարարապետին հետ՝ մեր խնդրոյն առթիւ: Նորին վսեմութիւնը պատասխանած էր թէ իրենք չեն կրնար անտարբեր մնալ ոչ միայն

անոր համար որ բարեկամ են հայերու, այլ նոյնիսկ ազգային շահու տեսակետէն: Խորհուրդ տուած էր որ թագաւորին հետ տեսակցութիւն մը ունենայ, սակայն դըժբախտաբար չիրականացաւ՝ թագաւորին բացակայութեան պատճառաւ, որ անակնկալօրէն երկարաձգուած էր:

Տոքթ. Լեփսիուս պատրաստած էր ընդարձակ տեղեկագիր մը՝ քաղուած դեսպանատանց տեղեկագիրներէ եւ իր տեսածներէն ու վստահելի տարբեր աղբիւրներէ քաղածներէն. իրեն տուինք նաեւ մեր կազմակերպական պաշտօնական փաստաթղթերուն օրինակները՝ հաստատապէս ապացուցանելով որ մեր կազմակերպութիւնը ոչ միայն նպատակ չէ ունեցած թուրքիոյ մէջ շարժում առաջացնել հակառակ կառավարութեան, այլ նաեւ ժողովուրդին յորդոր կարգացած է կատարելու իր պարտքը հանդէպ պետութեան:

Սոյն տեղեկագիրը պիտի տպագրուի Պերլինի հայկական քոմիթէին կողմէ եւ պիտի ցրուուի ժողովուրդին: Քոմիթէն պիտի աշխատի մերկացնել թուրքերու ամբողջ թաքուն եւ ոճրագործ ծրագիրը հայ ժողովուրդի հանդէպ: Ըստ Լեփսիուսի, գերմանները սկսած են այն համոզման գալ, որ թուրքերը ուժեղացնել կը նշանակէ չարիք ստեղծել նոյնիսկ իրենց համար: Հաւանական կը նկատուի նաեւ որ թուրքիա պատերազմէն յետոյ անցնի հակառակ խմբակցութեան կողմը, Գերմանիոյ ապագայի ոտնձգութիւններէն ազատ մնայ, ի հարկէ եթէ թուրքիա պիտի ապրի իբրեւ պետութիւն:

Այս շրջանի կամաւորական հարցը կը մնայ միշտ անորոշ. մեր բոլոր բանակցութիւնները ռուսական դեսպանատան հետ անցան ապարդիւն: Միշտ մեզի կ'ըսէին որ հրահանգի կը սպասեն, սակայն մենք կռահելով որ նոյնինքն դեսպանատան քիչքն է որ կը յարուցանէ խռնրդոտ, միշտ փոխաբայութիւնը թունաւորելով, պալքանեան հայ ժողովուրդը ներկայացնելով ոչ վստահելի տարրեր, — մենք ուղղակի իրենց երեսին ըսինք որ դո՛ւք էք բոլոր չարեաց աղբիւրը. կցորդը նեղը մնացած՝ յայտարարեց որ ինք վստահութիւն չունի պալքանեան հայութեան: Յարաբերութեան խզումէն ետք, մենք դիմում ներկայացուցինք Փրանսական դեսպանատունը, զանոնք գիտակ պահելու համար անցուղարձին:

Փրանսական եւ անգլիական դեսպանատներէն խոստացան 20.000 կոթ եւ ծայրեր, պայմանաւ որ ռուսականը համաձայնի թրանզիթի համար. ցարդ կը ձգձգեն եւ չեմ հաւատար որ պիտի տան հաւանութիւն. մեզի կը մնայ մէկը դրկել Կովկաս այնտեղէն կարգադրելու համար:

«Հայաստան» կը հրատարակուի չափազանց սուղ

182.- Բոլորովին չափազանցուած, երեւակայական:

միջոցներով. իբրև նոր թերթ մեծ խոչընդոտներու կը հանդիպի. որպէսզի անսայթաք շարունակուի, պէտք է մեծ աշխատանք թափել, որուն համար ձեր բարոյական աջակցութիւնն ալ կը խնդրենք: Ձեր ղրկած ցանկին վրայ կոմիտէներուն ղրկեցինք 400 օրինակ, պիտի խնդրէինք որ կոմիտէներուն բացատրէիք մեր վիճակը եւ թելադրէիք որ որքան կարելի է արագ փոխադրէին մեզի դրամները, ինչպէս նաեւ ցարդ Կեդրոնական կոմիտէին անուան ղրկուած եւ ծախուածներու գումարը:

Այս օրերս հոս հասան տիկիններ Ջապէլ Եսայեան, Վարդգէս, Ջարդարեան, Խաչատրեան եւ Շահապազին ու Սարգիսին տիկինները իրենց պարագաներով:

Ամսոյս 4/17ին ամբողջ Պոլսկարիոյ եւ Ռուսմանիոյ

համար նշանակեցինք սուգի օր. անցաւ շատ յաջող. պատրաստեցինք հայերէն, Ֆրանսերէն եւ պոլսկարերէն մեմորանտում եւ ցրուեցինք հասարակութեան:

Պիտի պատրաստենք մեր ձեռքին տակ գտնուած բոլոր տեղեկագիրներուն եւ տոքիւմենտներուն հաւաքածոն Ֆրանսերէնով՝ ցրուելու ամբողջ Եւրոպային:

ԱՄՍՏՈՒՆԻ

Նամակս փոսթին յանձնելու կը պատրաստուէի, ստացանք նամակ. Պոլսոյ տեղահանութիւնը սկսած է. կը գրեմ շուտով:

Փաստ. 882-49

81.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵՂԻ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 29 օգոստ. 915

Կը հաստատենք մեր Օգոստ. 27ը: Դարձեալ ոչ մէկ նամակ ձեզմէ: Սարսափ սարսափի վրայ: Իրականութիւն է արդէն մեր երկիւղը: Իբրև պատասխան Պոլսկարիոյ մէջ կատարուած ցոյցերուն եւ սգահանդէսին, ջարդեր են Այաշի բոլոր կալանաւորները: Լուրերը կ'արձանագրենք միայն:

Նախընթաց գիշեր հաւաքեցին ռուսահպատակները. մինչեւ հիմա մեր քաղաք տեղեկութիւնները կը հաստատեն թէ միայն ռուսահպատակ հայերն է որ կը բռնեն՝ արունները, 10 տարեկանէն մինչեւ 70-80: Միտիթարեան վարժարանի 13 տարեկան տղաքը անգամ տարին: Ի՛նչ խօսք որ բոլորն ալ պիտի կոտորեն: Ռուզանը¹⁵⁶ մագապուրծ ազատեցաւ. տունը գացած եւ գինքը հարցուցած էին, իբրև ռուսահպատակ. բացակայ ըլլալով ծերունի հայրը (85 տարեկան) որ տեղէն չի կրնար շարժիլ, առին տարին եւ պիտի աքսորեն, ամէն դիմում անօգուտ է: Ռուզանը վերջերս պոլսկարական անցագիր մը ճարեց, եւ առայժմ պահուած է:

Կէտիկ փաշա եւ Գում Գաբու երէկ նորէն խուզարկեցին, 200ը կ'անցնի կալանաւորներու թիւը: Տղոց զէնք պարպած ըլլալու պարագան շատ ճիշդ չէ: Մէկը փախած ատեն բռնուած է: Այպոյս ճեանը արձակեր են, բայց երանի ատենը դատեն: Ամէն օր ձերբակալուած կայ տուններէն, փողոցէն, խանութէն. այսօր շուկայէն 20 խանութպան տարին: Մեր ընկերներէն ալ կան բռնուած: Չգիտենք ո՞վ կը մնայ վերջը վերջը: Նիկոմիդիոյ հայոց բոլոր տունները վառած են: Կը մնայ միայն եկեղեցիի փողոցը քանի մը տուն, ուր կիւրծինքը գետեղած են:

Անատոլուի երկաթուղիի վարչութիւնը հարցուցած

էր թէ հայ գաղթականներէ՞ն ալ ճամբու ծախք պէտք է գանձել 1/2 համեմատութեամբ: Կառավարութիւնը պատասխանած է թէ հայերէն ամբողջ գանձելու է:

Բարձրաստիճան հայ մը Ջաւէնին կը ներկայանայ եւ կը հաղորդէ որ թուրք կարեւոր անձ մը իրեն ըսած է թէ, Վանի, Մուշի, Կարինի եւ Երզնկայի կողմի հայերը թուրք չեն թողեր ջարդեր են: Ձեր պատրիարքը ինչո՞ւ իր ազդեցութիւնը ի գործ չի դնէր եւ այս կոտորածները արգիլեր... Միայն Խնուսի մէկ ընդհարման մէջ հազար թուրք ջարդուեր են: Ուրեմն այս տեղերը գրաւուած են¹⁸³, ինչպէս կը խօսուի օրերէ ի վեր. (Ի՛նչ կ'ընէք Աստուծոյ սիրոյն, երկու լուր ալ չպիտի տաք):

Վեզիր-Քէօփրիէն (Ամասիա-Մարգուան) երկու հայ աղջիկներ յաջողած են Պոլիս հասնիլ: Ջարհուրեի բաներ կը պատմեն (7-40 տարեկան բոլոր էգերը վաճառքի հաներ են հրապարակաւ. միայն առանց վճարի ով քանի հատ որ ուզէ կրնայ տանիլ):

Գոնիա եւ Էրէյլի գտնուած գաղթականները աւելի առաջ կը քշուին. իբրև թէ նախարարաց խորհուրդը որոշեր է Պոլսոյ հայերը ա'լ տեղահան չընել եւ ուղարկուածները մնան ուր որ են:

Ռուսահպատակներու խիստ հետապնդման պատճառ կը ցուցուի ծովեզերքներու ումբակոծումը: Էտիրնէի մէջ իթիլաֆականի մը կողմէ ռումբ նետուած է կուսակալին օթոմոպիլին վրայ: Սպաննուած է որդին եւ շոֆէօրը, իսկ կուսակալը վիրաւորուած:

Պապական նուիրակը մեծ եռանդով կ'աշխատի...

Համբոյրներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ

Յ. Գ.— Սիրտ չունինք. վաղը նորէն կը գրենք:

ՆՈՅՆ

183.- Իմա՝ ուսերու կողմէ:

Փաստ. 904բ-4

82.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 1 սեպտ. 915

Կը հաստատենք մեր օգոստ. 29ը: Այսօր ստացանք օգոստ. 21ը եւ տպագիրը:

Ռուզանը խցարգել, Արշաւիրը խցարգել. պատուհաններէն կը դիտենք կացութիւնը, մեր անվնաս տղաքն ու աղջիկները ձեռք չտալու հոգն ալ շալկած... Ռուզանին հայրը արձակեցին: Ձինքը կը փնտռեն իրբեւ ռուսահայտակ: Չափազանց խիստ էր ռուսահայտակներու ձերբակալումը եւ բոլորն ալ աքսորեցին անմիջապէս, Գոնիա եւ Էնկիւրի: Ամերիկեան դեսպանը բոլոր դիմումներուն կը պատասխանէր թէ ոչինչ կրնայ ընել, ինչպէս բան մը չկրցաւ ընել նախորդ պարագաներուն: Միայն կը հաւաստէ որ ոչ մէկուն կեանքին վտանգ կայ:

Գոլմ-Գաբուի մէջ խուզարկութիւնները շարունակուեցան մինչեւ երէկ: Ձէնք թէ մարդ ինչ որ գտնեն կը տանին: Գործողութիւնը տեղի կ'ունենայ փողոցները պաշարելով: Ապահովաբար շուտով կարգը կու գայ Սկիւտարի եւ Բերայի: Նոյնիսկ խօսքեր կան թէ հրաման պիտի տրուի իրիկուան որոշ ժամէ մը յետոյ (6-էն կամ 9-էն) տուներէն դուրս չելլել որով բոլորս ալ կըրնանք բռնուիլ. առ այժմ կը հսկենք արթուն: Դեռ չկրցանք ստուգել այաչցիներու սպանութեան մանրամասնութիւնները: Էնկիւրիի ջարդին հետ խառնուած են, թէ ուրիշ տեղ մը (Պանտրամ?) խմբովին ջարդած են: Ոչ մէկէն լուր կայ 25 օրէ ի վեր:

Հացի տագնապը անպատմելի է: Մարդ գլուխ կէս

օխա կու տային, հիմա 100 գրամ անգամ չեն կրնար հասցնել:— Հազարաւոր այր կին փուռերուն առջեւ կը սպասեն առաւօտէն մինչեւ երեկոյ. այսօր Բերայի մէջ ոչ իսկ հարիւր գրամ կրցան առնել, ըսելով թէ այլուր չկայ:

Ձերբակալումները կը շարունակուին անընդհատ, ամէն պատրուակով: Ջարդարեան—Ակնունի խմբակին փախած ըլլալու մասին առասպել մը կը պտտի բերնէ բերան, ամբողջ շուկային մէջ: Ֆանթեզին միշտ անպակաս է այս քամբախտ երկրին մէջ. իբրեւ թէ հայ չէթա մը փախցուցած ըլլայ:

Վաղը նուազ ցամաք նամակ մը գրելու յոյսով, կը փակենք այս երկտողը:

Համբոյրներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ

Յ. Գ.— Պօղոս Վաբորեանի օսմ. 1.66ը դրկեցինք Գըլլըճեան-Գալուստեանի, պատասխաներ է թէ չի ճանչնար նշանակուած հասցէն (Կարապետ Վաբորեան), թէ ռիսկ չ'ընէր եւն.: Հետեւաբար դրամը կը մնայ, իմացուցէք իրեն: Կամ թող ուրիշ մէկը ցուցնէ:

ՆՈՅՆ

Փաստ. 1158-105

83.- ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵԷՆ

Սոֆիա, 2 սեպտ. 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր օգոստ. 28 եւ 632 թուահամար նամակը: Նոր նամակ չենք ստացած ձեզանից:

Երկրից ստացած տեղեկութիւնները չափազանց վատ են. ամէն օր տասնեակներով սովամահ կ'ըլլան, վերահաս ձմրան ատեն, արդեօք ինչեր տեղի պիտի ունենայ: Մարդկային բանականութիւնը անզօր է երեւակայել այդքան չարիք: Կիլիկիոյ կաթողիկոսը մի նամակ է գրած պատրիարքին որուն մէջ դառնութեամբ կ'արտայայտուի հանդէպ Պոլսին եւ մանաւանդ արտասահմանի հայութեան ցոյց տուած քար անտարբերութեան: Այդ նամակները բոլորն ալ պատրաստուելու վրայ են, վաղը կամ միւս օր ձեզ կ'ուղարկենք: Միայն այժմ ստիպողաբար կը խնդրենք որ ձեր առաջին գործն իսկ ըլլայ աղմկել թերթերուն մէջ որքան կարելի է շատ, դրամական խոշոր նուիրատուութիւն ձեռք բերելու: Նոյնպէս եւ կ'առաջարկենք անմիջապէս դիմել տեղւոյդ ամերիկեան Կարմիր խաչին եւ անոր միջոցաւ օգնութեան հասնիլ: Մեր լրածին համեմատ Ամերիկայի նշանաւոր ընկերվարական Miss Alice Stone Bladewell-ի միջոցաւ ալ

կրնաք խոշոր նուէրներ ձեռք բերել. ամէն պարագայի մէջ ձեզ կը թողունք միջոցները ընտրել նպատակը իրագործելու համար:

Միայն պիտի խնդրենք նաեւ որ ամէնէն աւելի ձեր աշխատանքը թափէիք աւելի սա կէտին վրայ, որ նուիրատուութիւնները հասնին իրենց նպատակին, այսինքն ամերիկացիները միջոցներ գտնէին, ուղղակի իրենց ձեռքով բաշխելու հանգանակուած դրամը, ինչու որ թուրքերը ատոր անգամ արգելք կ'ըլլան, որովհետեւ պատրիարքարանը 200 ոսկի էր ղրկած իր Գոնիայի առաջնորդին, կուսակալը հրամայած է 40 ոսկի առնել եւ բաժնել Սուլթանիէ աքսորուած 6-7000 գէյթունցիներուն:

Մենք գրած ենք նաեւ Տոքթ. Լեփս[իուս]ին, որ նա էլ իր միջոցները գործածէ. երկու կողմն ալ կը փորձենք, տեսնենք որը կը յաջողինք. սպասելով այս առթիւ ձեր անմիջական կարգադրութեանց եւ այդ մասին ձեր նպաստաւոր պատասխանին:

Ընկ. ջերմ բարեկներով
Հ.Յ.Դ. ՊԱԼՔ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 904բ-5

84.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

Պոլիս, 7/IX/1915

Ընկերներ,

Կը հաստատենք մեր 5/IX թուակիրը (չկարդացուեցաւ: Ծան. Կ.Կ.Ի): Ձեռնէ ոչ մէկ նամակ: Շաբաթը անգամ մը կը սպասէինք, ան ալ կը զլանաք: Երանի՛ ձեր լայն սրտին: Արդէն վարժուած զրկանքի՛ այդ տարօրինակ զրկանքն ալ կը տանին ընկերները:

Ռուզանը¹⁵⁶ մատնուած ըլլալով՝ կը փնտուռի թշուառականի մը կողմէ¹⁸⁴

Տանտէրը վարձակալին հետ վէճ ունենալով՝ այդ ստորնութեան դիմեր է: 15 տարեկան պատանի մը չարահար ծեծեցին, բայց անօգուտ:

Տարսոնէն Գարեգին վրդ. (Գոնիայի առաջնորդը) կը հեռագրէ թէ ժողովուրդը խտուրթեամբ կը քչեն դէպի առաջ: Հայէպի գերման վարժարանին ուսուցիչը եկած ըլլալով Զուլիցերիայէն, իմացանք թէ Լեփս[իուս]ը Տիշէրին կը սպասէ, թէ հանգանակութեան ձեռնարկած է:

Պաղտատէն գերմանացիներ կը նկարագրեն իրենց տեսած թշուառութիւնները, մանաւանդ Հայէպէն անդին: Հայերը անոնց ըսած են թէ՛ իրենց թշուառութեան պատճառը Գերմանիան է: Այս բանը պատմած են հիւպատոսներուն: Յամառ զրոյցներ կան թէ կառավարութիւնը ծրագիր մը կը պատրաստէ՝ հայոց պատրիարքութիւնը ներքին գաւառները փոխադրելու նման քաղաքացոց եւ ասորոց պատրիարքութիւններուն: Ձաւէնեանը երէկ աւելի ստոյգ լուրեր ստացաւ այդ մասին, եւ այժմ կը խորհրդակցին իրենց բռնելիք դիրքի մասին:

Ձեռնհաս թուրք պաշտօնեայ մը ըսած է թէ Պոլսի հայերուն վտարումը կախում ունի փոքր պայթումէ մը,

միջադէպէ մը: Խնդիր է թէ կառավարութիւնը պիտի սպասէ՞ որ հայերը յառաջ բերեն այդ միջադէպը, թէ ինք պիտի յարուցանէ: Կառավարութիւնը առայժմ կը վարանի ստանձնել Պոլիսը պարպելու պատասխանատուութիւնը, թէեւ զարմանալի է որ ստանձնեց այնքան բիրտ հալածանքին պատասխանատուութիւնը: Կառավարութիւն մը ինչո՞ւ պիտի վարանի, ո՞ր կէտին մէջ: Յիշուած պաշտօնատարը Պոլիսը պարպելու կուսակիցներէն է եւ հայոց դէմ խստօրէն գործելու համամիտ:

Երկու օր առաջ էնկիւրիէն էսկի-Շէհր բերած են 3-400 կիներ, առանց մանուկներու եւ այրերու: Ձաւէնեանը անցեալ շաբաթ օր տեսնուեցաւ վարչապետին հետ՝ յայտնեց թէ հայերու կորուստը 500,000է աւելի է, չհաշուելով մանուկներու յափշտակութիւնը, կիներու բռնաբարութիւնը եւայլն:

Վարչապետը լուրթեամբ մտիկ ըրած է եւ առանց պատասխանելու զարմացած՝ այն տպաւորութիւնը ձգեր է թէ՛ իր ձեռքը չի գտնուիր այս գործերու բանալին, եւ թէ ինքն ալ զգացուած է:

Հաստատուած է Ներսէս Չաքարեանի (հնչակեան, անդամ քաղ. ժողովի) սպանութիւնը:

Կեսարիոյ պաշտօնական թերթին մէջ հրատարակուած են հետեւեալ մահավճիռները¹⁸⁵...

Մեր լուրերուն համաձայն՝ այդ շրջանին մէջ հրաշքով ազատ կը մնան Գարմէն եւ Մարզպետ (խիստ գաղտնի):

Մահավճիռները դեռ շատ են, արագօրէն գործադրուած. թերեւս միւս անուններն ալ ստուգենք:

Վաղը նորէն կը գրենք:

184.- Երկու տող բաց. հաւանաբար կարելի չէ եղած գաղտնի մելանով գրուած այս նամակը լրի բանալ:

185.- Մահավճիռ ստացած անձերու անունները չեն յիշուած հնս. Տես փաստ. 881-46, էջ 149):

Համբոյրներով՝
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ

Փաստ. 882-50

85.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ ԴԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Վիշապ, 8 սեպտ. 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր 7 թուակիր գոյգը: Դարձեալ ոչ մէկ ձայն ձեզմէ:

Այսօրուան միջազգային լուրերը պարզապէս կը յուսահատեցնեն մեզ: Սերպիան ճգմել, Պուլկարիան Թուրքիոյ կողքին... Ուրեմն մեր բոլոր ցնորքները կը փլին իրարու ետեւէ, ինչպէս հիւսիսի հսկան իր ահռելի փտուլթեամբ:

Գոնէ իրազեկ պահեցէք մեզ օրուան անցուղարձեւումը, մենք անկարելին կը փորձենք ձեզի լուր հասցնելու համար: Ձեր բոլոր հաշիւներն ու նախատեսութիւններն ալ սխալ են. ինչպէս կ'իմանանք Պուլկարիան երբեք տրամադիր չէ քառեակի¹⁸⁶ ապիկարութեան հետ կապելու իր բախտը: Անցնինք:

Մասնաւոր լուր մը չունինք այսօր. ձեզի կը դրկենք ցանկը այն այաջցիներուն, որոնք հոն կը գտնուէին մինչեւ վերջերս. մեր կանխագոյն ցուցակն է այս եւ աշխատեցանք ճշդել որքան հնար է, բայց սխալներ կան անպատճառ քանի որ զանազան առիթներով փոխադրութիւններ եղած են թէ աւելի ներս եւ թէ Չանկըրիէն Այաջ եւ փոխադարձաբար: Մենք տեսնուեցանք ամէնէն վերջին վերադարձողին հետ, հարկաւ դուք ալ ստուգումներ կը կատարէք Մովսէսէն, Քրիստէն¹⁸⁷:

Յանկը առայժմ մի հրատարակէք մինչեւ որ ամբողջ պատմութիւնը իմանանք. մեր անծանօթ ընկերներու անունին սկիզբը X նշանը կը դնենք, միւսները գիտէք արդէն:

- 1.- Մելքոն Կիւրճեան, 2.- Սմբատ Բիւրատ, 3.- Շաւարշ Քրիսեան, 4.- Տիգրան Չօկիւրեան, 5.- Ներսէս Ջաքարեան (սպաննուած), Խաչիկ Կլորիկեան, 6.- Լեւոն Լարենց, 7.- Գարեգին Հիւսիսեան, 8.- Սարգիս Բարսեղեան, 9.- Տոքթ. Փաշայեան, 10.- Տոքթ. Լեւոն Պարտիզպանեան, 11.- Յ[արուլթիւն] Շահրիկեան, 12.- Ներսէս Փափազեան, 13.- Բարթող Զօրեան, 14.- Գեղամ Բարսեղեան, 15.- Հ[ամբարձում] Համբարձումեան, 16.- Սիւամանթօ, 17.- Ենովք Շահէն, 18.- Գէորգ Թերճիմանեան, 19.- Հայրիկեան, 20.- Կիկօ, 21.- Հայկ Թիրեաքեան (Հրաչ), 22.- Միհրդատ Հայկազն, 23.- Ժազ Սայապալեան, 24.- Վռամշապուհ Սամուէլօֆ, 25.- Ռոստոմ Ռոստոմեանց, 26.- Թէոտոր Մենճիկեան (այս երկուքը յայտնի վաճառական), 27.- Արիստակէս Գասպարեան, 28.- Գրիգոր Արծրունի, 29.- Յարուլթիւն Գալֆայեան, Սերովբէ Նորատունկեան, 30.- Հայկ Մոմճեան (երբեմնի ուսուսական հիւպատոս), Ազատամարտի գրաւարներէն, 31.- Գրիգոր Յակոբեան, 32.- Նշան Պաղտիկեան, 33.- Մկրտիչ Կարապետեան, 34.- Մանուկ Խանպէկեան (չմշկածագցի), 35.- Փիլիպոս Յովհաննէսեան, 36.- Օննիկ Մաղազաճեան, 37.- Կազմարար Ալեքսան Գարաաղաճեան, 38.- Դոնապան Մովսէս (Ազատ[ամարտի] եւ ցրուիչ), Արմենակ Առաքելեան, Յովհաննէս Գլճեան, 39.- Օննիկ Սրապեան, 40.- Յակոբ Ռաֆայէլեան, 41.- Օննիկ Թիւֆէնկեան, 42.- Տիգրան Սվաճեան, 43.- Յակոբ Թաշճեան, 44.-¹⁸⁸ 45.- Յակոբ Տիրունի (հնչ.), 46.- Ատոմ Շահէն, 47.- Յարուլթիւն Գոնիալըեան, 48.- Պարոյր Արզուման, 49.- Դեղազորձ Վահրամ Ասատուրեան, 50.- Պօղոս¹⁸⁸:

Ընդամէնը թուով 54-55 հոգի: Աստուծէ Յ. Գալֆայեանը շատոնց փոխադրած էին էնկիւրի: 34 հոգի փոխադրուեցաւ էնկիւրիի կոտորածէն 15 օր առաջ, իսկ մնացած քսանն ալ կոտորածի օրերուն:

[Ընկերական բարեւաններով՝ ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ]

186.- Քառեակ – Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ դաշնակցութեամբ կազմուած զինակցութիւնը կը կոչուէր Երրեակ համաձայնութիւն. 1915 թ. Ապրիլ-Մայիս ամիսներուն, Իտալիոյ յարումով անոր՝ Երրեակը դարձաւ Քառեակի համաձայնութիւն: Սկզբնական ակընկալութիւնը այն էր որ Պուլկարիա եւս կը միանայ այս դաշինքին, բայց պիտի պատահէր հակառակը.– Սեպտեմբերի վերջերուն (ի՞նչ տոմար) ան ընդդ. պատերազմին պիտի մասնակցէր գերման-աստրիական-թուրք զինակցութեան կողքին:

187.- Մովսէս Պետրոսեան եւ Քրիստէն Գեորգեան:

188.- Թիւ 44ի ազգանունը նշանակուած չէ. նոյնպէս թիւ 50ի:

Փաստ. 882-51

86.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՍԵԱՅ ՄԱՐՄԵՆ ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

Վիշապ, 13/26 սեպ. 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր սեպտ. 10-ը, ստացանք ձեր սեպ. 4-5-ը տպագրեալ:

Յարութիւնի գործի մասին լուսաբանութիւններ կը յուսայինք ստանալ մեր ազատ ընկերէն, Արտաւազգէն (Ս. Դարբինեան)¹⁸⁹, որուն հետ շատ մտերիմ էր վերջերս: Դժբախտաբար ուրբաթ կէսօրին ձերբակալուեցաւ Արտաւազգը, մատնուած ըլլալով իբրեւ քոմիթէճի, գէնք փոխադրող: Մատնութիւնը եղած է Ռոպրթ քոլէճէն, ինչպէս կը ցուցնեն բոլոր նշանները: Ազդու միջամտութիւն եղաւ քոլէճի մէկ պուլկար փրոֆեսորի կողմէ, որ Առնաւուտ գիւղի ոստիկանապետին բարեկամն էր, բայց պատասխաններ է թէ հրամանը Բերայէն է տրուած:

Հակառակ ամբաստանութեան ծանրութեան մեղմ վերաբերուած էին. թէ Առնաւուտ գիւղին, թէ Պէշիկ-թաշի մէջ կարելի եղաւ տեսնել. երէկ իրիկուան փոխադրեցին Բերա մէկ ոստիկանով. չափազանց մտահոգ էինք սենեակի մասին, վախնալով նոյնիսկ որ Յար[ութիւնը] թուղթեր տուած եւ հոն ձգուած ըլլան: Յոյն տանտիրուհին չափազանց չարակամ կը թուէր. կարելի փորձեցինք խուզարկութենէն առաջ compromettant⁹⁷ բաները վերցնելու, որովհետեւ քիչ մը անհոգ էր. կարելի չեղաւ: Իր նշանածը վերջին դիմում [մը] ընելու վրայ էր, երբ Արտաւազգը ինք եւ գաղտնի ոստիկան մը միասին սենեակ մտան գոյքերը առնելու:¹⁹⁰ Թուղթ եւ ծայր¹⁹¹, ինչ որ կրնար վտանգաւոր ըլլալ, եւ տարած են միայն գրքերը եւ զգեստները: Այժմ օրը օրին կը հետեւինք: Ամբաստանուած է նաեւ իբրեւ քսակահատ, թրամուէլին մէջ հրմշտկուած է, որ ատեն թուրքի մը հետ զարնուած ըլլալով: Բայց մենք կը կարծենք թէ այս պարզապէս սարքուած է, կամ գաղտնի ոստիկան մըն է որ Բերայէն մինչեւ Առնաւուտ գիւղ հետեւած է իրեն:

Իր վրան ալ բան մը չկար. այնպէս որ եթէ չըլլար վան[ե]ցի, պանդուխտ եւ զինուորի հանգամանքները, թերեւս ազատի. թերեւս պարզապէս աքսորեն, կամ աւելի ճիշդը՝ զրկեն Նիկոմիդիա քննիչ ատեանի առջեւ խոչտանգելու:

Այսպէս վտանգուեցաւ մեր մէկ ազատ ընկերն ալ, եւ այժմ մենք աստիճան մը աւելի զգոյշ կը մնանք, թէ եւ նախկին տեղերնիս փոխելու պէտք չտեսանք առայժմ: Ծայրայեղ պարագային պիտի անցնինք ձեր բարեկամին ցուցուցած տեղը, ուր ոչ մէկ յարմարութիւն կ'ուենանք թերեւս գործելու:

Իսկ Յար[ութիւն]ի պարագան հետզհետէ աւելի ծանր կը թուի. Ռուզանը¹⁵⁶ պարզապէս մահ կը պահանջէ: Իսկապէս անորակելի դասալքութիւն մըն է այդ տղուն ըրածը: Շամիրը¹⁹² ներկայացուցած էր, իբր ամէնէն լաւ տղան, ու մենք ալ կասկածելու ոչ մէկ պատճառ ունէինք: Իր ըրածը անբուժելի տխմարութեան մը պիտի վերագրէինք, բայց ապուշ չէ: Երեւակայեցէք որ -----¹⁹³ շինութեան ձեռնարկուած էր իր մասնակցութեամբ. իր գտած դեղը մաս մը պատրաստ էր, երբ Ռուզանը ստիպուեցաւ փակուել. մաս մը կը մնայ տեղ մը, ուրկէ ոչ մէկերնիս կրնանք առնել. ոչ մէկ նիւթի տեղը եւ հաշիւը տուած է, ոչ մէկերնիս կրնանք իր աշխատած տեղն երթալ եւ աշխատիլ. ոչ մէկերնիս զիտենք կարգ մը պահեստներ. հաշիւ չէ տուած ոչ իսկ խումբի մասին, ոչ իր գնած պաշարներու մասին: Մէկ երկու գէնք հանուած է պահեստէ մը, եւ արդէն յանդիմանեցինք, բայց չգիտենք որու ձգած է: Վերջին անգամ դրամ տուած էր կարգ մը վճարումներու համար եւ մնացած զրուշը պիտի բերէր: Զինքը մեր տրամադրութեան տակ պահելու համար, ամսական 2 ոսկի կը ստանար: Սեպ.ի ամսականը ուզեց օրեր առաջ, եւ ահա իր փախուստը, որ աւելի իտէլա գործունէութեամբ մը պիտի արդարացնէ: Արտաւազգին ալ եթէ ոչինչ յայտնած է, փակուած կը նկատենք ինքնարդարացման ամէն դուռ: Արդէն արգելափակ պահելու էր, զրկելով նոյնիսկ թղթակցութենէ Պոլսոյ հետ, որովհետեւ շատ կը վախնանք որ այսքան տխմար եւ այսքան վտանգաւոր քայլ մը առնողը, աւելի գէշ փորձանքներ բերէ: Մենք վերջնական որոշում չկրցինք տալ, պարզապէս անոր համար որ քննութեան ոչ մէկ հնարաւորութիւն կայ: Տեսակէտի թեթեւ տարբերութիւն մը կայ երկուքիս միջեւ, բայց Ռուզանը իր մասին վճռուած կը նկատէ ամէն բան, մանաւանդ որ, եթէ հարկը պահանջէ, ո'չ մէկ բան կրնանք ընել, ամիսներու աշխատանքը քանդուած եւ վտանգուած ըլլալով: Կարգ մը դիւրութիւններ իր նշանածը պիտի տար, բայց ան ալ սաստիկ զայրացած է, կը պատրաստուի իր ետեւէն գալ:

Անգամ մըն ալ ձեր ուշադրութեան յանձնելով այս

189.- Վիշապի Առժամեայ մարմնի անդամ:
190.- Տոյ մը յրացուած:
191.- Ծայր – փամփուշտ:
192.- Շամիր – Բարսեղեան Սարգիս (Օտապաշեան Պօղոս), անդամ Հայաստանի բիւրոյին, ձեռքակալուած, տարագրուած, սպա սպաննուած:
193.- Բառը ջնջուած է:

պարագաները, այժմէն կ'ազդարարենք թէ ապագային համար ոչ մէկ պատասխանատուութիւն չենք ստանձներ, եթէ իր օձիքը ազատէ, կամ եղածը դարմանելու միջոցներ չգտնուին. մնաց որ ուրիշ ընկերներ ալ կ'ուզեն հեռանալ, պարզապէս իրենց կաշին ազատելու համար, իսկ մենք պիտի մնանք՝ երեւի իբրեւ բուեր:

Բարի եղէք անմիջապէս հաղորդելու ձեր քննութեան արդիւնքը: Գրեցէք նաեւ օրիորդին հասցէով: Ախ, մեր կաշկանդուած ըլլալը ինչքան չարիքներ կրնայ

եղեր ծնիլ, մանաւանդ որ տղաքն ալ մեծ մասով փակուած են, եւ հարկ կ'ըլլայ շատ շուտ լուր դրկել:

Յարուածիւնը քիչք մը ունէր իրեն հետ, բայց իր տգիտութեանը ներելով եւ իր ուղղամտութեանը վստահելով, չէինք կարծեր որ այսքան ոճրապարտ քայլ մը կ'առնէ:

Ներփակ թերթն ալ փորձեցէք. կարգ մը ընթացիկ լուրեր կան:

Փաստ. 881-46

87.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԵՆ ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԵՒՆ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ Ս[եպտ.]13-Ի

Կեսարիոյ պաշտօնաթերթը Օգոստ. 29 թուականով կը հրատարակէ հետեւեալ մահազրուանները (արդէն կախուած են):

Յակոբ Եսայեան, Յովհաննէս Պոյաճեան, Օհան Քիւրքճեան, Տալմաճեան Մարտիրոսի որդի Օհան, Յակոբ Գասպարեան:

Կը հաստատուի այաչցիներէն Տոբթ. Ռ. Չիլիկիւրեանի (Սեւակ) մահը:

Ահմէտ Րիզան՝ տեղեկացանք որ հարցապնդում մը պատրաստած է ներկայացուցչականի համար:

1.- Ինչու հայերը կը հալածուին եւ դեռ չէ դադարել հալածանքը:

2.- Թուրք, հրեայ, յոյն կ'աքսորուին առանց քննութեան:

3.- Պոլսոյ մէջ տիրող սղութեան պատճառները եւ թէ կառավարութիւնը մինչեւ հիմա ինչ միջոցներ ձեռք առած է:

4.- Ինչ է պատերազմին վիճակը եւ մինչեւ հիմա ինչ շահեցանք:

Իզմիրի գերման հիւպատոսը, Պոլսոյ դեսպանատան դիմելով, խնդրած էր միջամտել հայերու դէմ կատարուած հալածանքը դադարեցնելու համար. դեսպանատունէն պատասխաններ են, թէ «Ստորին հայերուն համար պէտք չէ որ ինք միջամտէ»:

Կեսարիոյ շրջանէն 500 տուն տաճկցած են:

Գաւառները գտնուած բոլոր հայ դատաւորները պաշտօնանկ են եղած:

Հացի կռիւր օրէ օր կը սրի, ծեծկռտուք, իրարու

մազ փետել, սքանդալներ ամէն օր անպակաս են:

Վեսիգայի¹⁷⁸ ղրութենէն ալ վազ անցան. ոստիկանները ա'լ չեն խառնուիր ամէն բան իր վիճակին ձգելով:

Խորհրդարանի վերաբացման առթիւ Գեղամը Խաչին¹⁹⁴ կարծիքը շօշափած էր. մենք յայտնեցինք որ մասնակցիլը եւ անօգուտ եւ ծիծաղելի է, իսկ Խաչը խորհուրդ տուած է — Գեղամին ալ ուզածն է, — երթալ արձանագրուիլ, բայց նիստերու չհետեւիլ եւ բարեմիտ թուրք երեսփոխաններու հետ աշխատիլ նպաստ դրկել տարու:

Յովսէփ Մատաթեանը¹⁹⁵ զարմանքով յայտնած է թէ ինք իբրեւ մաքուր օսմանցի պիտի մասնակցի հայրենիքին ծառայելու:

Հալէպի երեսփոխան, Յար[ութիւն] Պօչկէզէնեան որ Հալէպ երթալու համար ճամբայ ելած էր, մինչեւ Օսմանիէ կրցեր է երթալ եւ ետ դարձեր է:

Ձերբակալութիւն ամէն օր կայ, փողոցները միշտ վեսիգա կը հարցնեն:

Վաղը թերեւս տեղեկագիրներ եւ թուղթ ունենանք Ձօհ[րապ]ի կտակին համար. դիմեցինք Ձաւէնեանին: Տեսնենք: Գիսակի թուղթերը բարապանը պիտի բերէր, իր հերթին կը սպասէ: Միւսն ալ կ'ուղարկենք:

ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ

Յ. Գ.— Արշաւիրը զարմացած է որ իր օգոստ. 22ի յօդուածէն ոչ միայն ամբողջ պարբերութիւններ ջնջուած են այլեւ պիտանի մասը. կարծենք մէկ սիւնակ, ամբողջովին չկայ. կ'երեւի չէք բացած, թէ նախորդով էք հրատարակած, ունայն եւ անշահ բան մը դարձեր է: Չ'ուզեր ստանալ «Հայաստան»ի տուած 10 ոսկին, քանի որ արդէն կուսակցութեան դրամով կ'ապրի ամիսներէ ի վեր, պահուրտած ըլլալով ապրիլի ձերբակալութիւններէն ի վեր:

ՆՈՅՆ

194.- Գեղամը՝ Տէր Կարապետեան Գեղամն է, դաշնակցական երեսփոխան Մուշէն. հիւանդութեան պատճառաւ չէր տարագրուած (պիտի մահանար Սեպտ. 1918ին): Խաչը՝ փրոֆ. Ա. Խաչատրեանն է:

195.- Մատաթեան Յովսէփ — երեսփոխան Կարիմէն, ընտրուած Իթքիիստի ցանկէն:

Փաստ. 882-52

88.– ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ

Վիշապ, 14/27 սեպ. 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր սեպտ. 13-ը: Ընկ. Արտաւազդի պարագան աւելի ծանր է քան կը նախատեսէինք. նշանածը յոյն տանտիրուհիէն հաւաստիք ստացած էր թէ compromettant¹⁹⁷ պայուսակը իր քով կը պահէ մինչեւ 10-20 տարի, գնդասեղ մը անգամ չի կորսուիր եւն.:

Աղջիկը լացած է, տանտիրուհին ալ իբրեւ թէ յուզուած՝ մանաւանդ Արտաւազդի [ձերբակալութիւնը] տեսնելով, ամէն ապահովութիւն տուած էր. մենք ճարահատ՝ կը խորհէինք բռնի խլել, բայց՝ նախ որ հրկողութիւն կար, երկրորդ, տանտիրուհին անկեղծ կը թուէր եւ վերջապէս տրամադրելի ընկեր չկար. այնքան խակ, այնքան ձախող բաներ ըրած է մեր դժբախտ ընկերը, եւ մինչ նշանածը կը հաւաստէր, թէ գէնք չկայ, թէ թողութեւր անհետացուցած էին — ահա այսօր լուր բերաւ թէ պայուսակը նոյնութեամբ յանձնուեր է ոստիկանութեան:

Ուրբաթ գիշեր բաւական ծեծեր էին, յետոյ փոխադրեր էին ոստիկանութեան դռուը, ուր այս առտու գնաց տեսակցելու օրիորդը. ուրախ է եղեր եւ հայերէն խօսեր են: Բայց այս բոլորը խաղեր կը թուին, մանաւանդ որ Արտաւազդը խոստովանած է նշանածին թէ, պայուսակին մէջ կար նաեւ երկու տետրակ. մեր արխիւէն ոչինչ կայ իր քով, բայց չգիտենք ի՞նչ indicationներ¹⁹⁶ երեւան պիտի գան, մանաւանդ որ, ինչպէս հիմա գրելու պահուն ստուգեցինք, տետրակները հաւանաբար ինքնապաշտպանութեան կանոններ են եղեր, զոր Յար[ութիւն]ը ինք ատենին ունէր եւ օրինակել տուեր է: Կազմա-

կերպութիւնը ոչ [մէկ] մեղք ունի ասոր մէջ, բայց անգամ մըն ալ երեւան կու գայ Յար-ի կատարած դաւաճանութիւնը: Ստուգեցինք որ պայուսակին մէջ ձգուած N° 11ը¹⁹⁷ Յար. ձգած է եւ կը կասկածէինք որ մերինն է:

Այսպէս կամ այնպէս ընկերներ, ջղագրգիռ ենք եղած այս երկու դէպքերէն, որ մոռցած մեզ սպառնացող վտանգը — այս ընթացքով 24 ժամէն ծուղակը կ'իյնանք — կը խորհինք բան մը փրկելու կամ նոր փորձանք մը չհանելու մասին:

Օրը օրին կը սպասենք: Յար-ի մասին ձեր կատարած քննութեան եւ պատժին. արխիւէն ալ մաս մը հին տոքիւմէնտներ պահած է այդ տղան:

Այսօր իմացանք որ մեզի պատսպարելու համար ներկայացուած երկու բժիշկները մեկնեւ են: Չգիտենք ինչ պիտի ընենք այժմ, հասկցէք Սէր., Նիք. եւ Կազ-էն թէ առժամաբար են գացած. մենք բարեկամէն պիտի հասկնանք որ ուրիշ մէկը նեկայացնեն:

Անցագրի մասին ձեր ըսած յանձնարարականը անօգուտ է. եթէ կարենաք չէզոք կամ աւելի գերմ[անական] կամ ակտիւ[իական] անցագիր մը ղրկել գէթ մէկուս համար, թերեւս օգնէ:

Այսօր մեր ընկերուհիներէն պուլկարահայտակ մը պիտի գար, չթոյլատրեցին. ոստիկանութիւնը յայտնած է որ ոչ մէկ հայ, ինչ հպատակ ալ ըլլայ, երկրէն դուրս պիտի չելլէ:

Այնքան ընդհատուեցաւ այս նամակը որ, չգիտենք թէ պիտի կրնա՞ք առանց նեղութեան կարգալ:

«Ազատամարտ»ի շէնքը ամբողջովին պարպած են, մեքենաներն անգամ հանած տարած են ծախելու, ինչպէս թողութեւր, պրոչիւրները, գրքերը եւ ուրիշ ինչ որ կար:

196.- Ֆրանսերէն՝ ցուցմունքներ:
197.- N° 11 — խօսքը հաւանաբար մատուցելու ատրճանակի մասին է:

ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ

Փաստ. 882-53

89.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՍԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

Վիշապ, 16/29 սեպտ. 1915

Միրելի ընկերներ!

Կը հաստատենք մեր 14 թիւը. ձեր նամակ գրելը այնքան ձեր բարի յօժարութեան ձգտած ենք որ այլեւս խօսքը չենք ընկեր:

Արտաւազըը երկու օրէ ի վեր կը ծեծեն խոստովանութիւններ կորցելու համար. այսօր առաջին անգամ նշանածը չէր կրցած տեսնել, թէ եւ իրիկունը նորէն պիտի երթայ:

Միւս կողմէ զօրաւոր միջամտող մը կայ, բայց չգիտենք թէ պայտուակի խնդիրը վերջնականապէս չպիտի փակէ ամէն դուռ. օրը օրին կը հետեւինք մնալով մեր տեղերը եւ շարունակելով գործերը:

Էրզրումի մէկուսէի Յատաթեանին կինը եկած էր, կը պատմէ որ Յուլիսի սկիզբը իրենց մեկնումը եղած է 450 տունով, եւ իրենք վերջին կարաւանն են: Կարին մնացած է միայն Տիկին Սողիկեան, որ գեղեցիկ աղջիկներէն 17 հոգի հաւաքած է իր քով, գերման հիւպատոսին պաշտպանութեան տակ: Ինք չէ ուզած Սողիկեանի հետ մեկնիլ, եւ հիւպատոսը գինքը պաշտպաններ է:

Կարինէն մեկնելէն երեք օր յետոյ գերման սպայի մը կողմէ քանի մը գինուորներ հետեւած են իրենց եւ բռնի ետ տանիլ տուած են Տոքթ. Թաշճեանի կինը եւ աղջիկը: Հայ գինուորներուն թոյլ տրուած է իրենց ընտանիքներուն ընկերանալու:

Իսլամ գաղթականներ կը հասնին Ռուսաստանէն գունդ գունդ, անօթի եւ մերկ եւ կը զրկուին երկրին ներսերը:

750 սայլով ճամբայ ելած է վերջին կարաւանը. Խարբերդի ճամբան բռնած է, ասոնց հետ Սմբատ եպիսկոպոսն ալ¹⁹⁸:

Ճամբան ոչ մէկ տեղ հայ մնացած է:

Սրվազ կը մնան Սանասարեանի ուսուցիչներէն Տէտէեան, Ղոյինեան, Մուշեան, Թուղլաճեան եւ 15 ուսանողներ, Գնէլ եպիսկոպոսն ալ միասին կառավարութեան կողմէ յատկացուած տան մը մէջ:

Ծանօթ.- Այս լուրերը մասնաւոր բնոյթ ունին եւ պատմողն ալ իր ամուսնոյն պէս մէկն է, ուստի հարկ չկայ ըսելու որ միայն մէկ երկու տող կրնաք օգտուիլ թերթին համար, եւ թէ Սանասարեանի պարագան եւ թէ գերման սպային դէպքը մանաւանդ յերիւրանքի մը վերագրելու է:

2.- Գոնիայէն ճամբորդ մը կը պատմէ թէ օրական 5-10 մահ կը պատահի գաղթականներուն մէջ, որոնց թիւը 25000ը կ'անցնի. գաղթականաց յանձնաժողովը կառավարութեան կողմէ կը բաժնէ աղքատներուն օրական 150-200 հաց միայն. հակառակ ասոր գաղթականներու մէջ հանգանակութիւն սկսած է ի նպաստ Ազգ. ինքնապաշտպանութեան (Թրքական) քոմիթէին եւ հարիւր ոսկի կորցած են: Թշուառութիւնը ծայր աստիճանի հասած է. ամերիկացի Տոքթ. Ուատ կերակուր կը բաշխէ Կարմիր խաչին շնորհիւ:

Պոլսոյ ձերբակալութիւնները կը շարունակուին. օրական 30-40 հոգի հետզհետէ կը զրկուին շատ թշուառ վիճակի մը մէջ:

Պուլկար հիւանդանոցի վարչութիւնը կը մեկնի, խօսք կայ թէ ամբողջովին պիտի պարպեն:

Հելլենահայատակ գինուորները ոստիկանութեան կողմէ ձերբակալուելով կը յանձնեն հիւպատոսին: Ռոտոսթոն ալ տեղահան ըրած են. կը կարծէինք որ Տարտանէլի գործողութեանց պատճառաւ ամբողջովին կը պարպեն, մինչդեռ հաստատուեցաւ որ հայերը միայն տեղահան ըրած են. երկու օրէ ի վեր բազմաթիւ ընտանիքներ հասած են, այրերը ոստիկանութեան դուռը, իսկ կիները Պայագիտի Միսաֆիր խանէն բանտարկուած կը մնան, այսօր-վաղը Գոնիա աքսորելու համար:

Այսօրուան թերթերէն կը տեղեկանանք թէ առժամեայ օրէնքը՝ տեղահանուած ժողովուրդի ստացուածքի մասին՝ այլեւս անդառնալի կերպով նուիրագործուեցաւ — բնաջնջման վերջին աթիւր: Կարդացէք եւ արտատպեցէք:

Երբ գերման միսիոնարուհին թուրքերուն ձեռքը ինկաւ Վանայ առման ժամանակ, նամակ գրած է թէ վալին ձեւտէթ պէյը ողջ է եւ չէթաներ կը կազմէր Սղերդի կողմը. ուրեմն խոշապի կռիւը անոր գործն է:

Վարուժանի¹⁹⁹ սպանութեան մասին ալ շատ կը խօսուի, բայց չկրցինք ստուգել, ինչպէս բոլորովին մոլթը կը մնայ այսչօրներուն պարագան. Չաւէնեանն անգամ անճար կը մնայ հակառակ մեր ստիպումներուն: Տոքթ. Ռ. Սեւակ Չիլինկիրեանը ձիւղ է. պատմութեան մը հա-

198.- Սմբատ եպ. Մատթթեան, Կարնոյ առաջնորդ, որ թուրքերու կողմէ անլուր չարչարանքներու եւ կտտանքներու ենթարկուելէ ետք կը սպաննուի եւ կը նետուի իր փորած փոսին մէջ:

199.- Բանաստեղծ Դանիէլ Վարուժանի: Ռուբէն Սեւակ՝ նոյնպէս ծանօթ բանաստեղծ (Չիլինկիրեան):

մաճայն, 5 հոգի, որոնց թուին Վարուժանը եւ Ռ. Սեւակն էին, Չանկըրիէն Այաշ կը փոխադրուէին, ճամբան հրոսախումբ մը կը յարձակի, Սեւակը կը սպաննուի, մէկը կը փախչի եւ երեքը էնկիւրի կը հասնին: Ոչինչ գիտենք այդ մէկին փախչելուն կամ սպաննուելուն, որ կ'ըսեն Դանիէլ Վարուժանն է, եւ միւս երեքի մասին:

Սեւակի կինը որ գերմանացի էր Եւրոպա աքսորեցին: Թերեւս տեսակցելով՝ բան մը հասկցուի. ինք գուցէրիացի է, հարկաւ Լօզան գնաց:

Երկու օրէ ի վեր Փանթեզիները ծայր տուած են նորէն. երէկ իրիկուն դրօշակ պարզուեցաւ Թօփհանէի վրայ, լատինական Սէնթ-Էտիէնի վրայ որ հիւանդանոց է եւ ուրիշ տեղեր. «չորս օրէն կու գան կոր» — ահա,

ամբոխային շշուկները: Վստահելի աղբիւրներէ իմացանք այսօր թէ մզկիթներու մէջ քարոզ խօսուեր է, թէ Շաբաթ օր մարտանաւեր պիտի գան Տարտանէլէն, թէ հաշտութիւն պիտի ըլլայ, թէ ոչ-խսլամներուն պէտք չէ բան մը ընել եւայլն: Չենք գիտեր, վերջին անգամն է որ կը լսենք գայլի աւետարանները:

Համբոյրներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ

Յ. Գ.— Արշաւիրի հայրը աքսորեր են, իզմիթ[ի] մէջ տանջեր, առանց տասնոցի ձգեր եւ Գոնիա քչեր են մէկ ամիս առաջ, եւ նոր կ'իմացնեն իրեն: Այսօրուան օրէնքով թերեւս տունն ալ մոխիրի վրայ նստի:

Փաստ. 884-40

90.– ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Այս Յիշատակագիրը ֆրանսերեն է: Հաւանաբար մէկն է այն յուշագիրներէն, զորս պարբերաբար Հ.Յ.Դ. Պոլսոյ Առժամեայ մարմինը կը յղէր Օսմանեան մայրաքաղաքի օտար դեսպանատուներուն պարզելու համար հայոց վիճակուած դառն ճակատագիրը եւ խնդրելու համար անոնց միջամտութիւնը թրքական կառավարութեան մօտ (Տես փաստ. 882-29, էջ 95): Յիշատակագիրը հասկնալի պատճառներով անստորագիր է եւ թուական չի կրեր. միայն լուսանցքին վրայ ձեռագրով Մեպտ. 1915? նշումը կայ. այս թուականը մօտաւորապէս ճիշդ կը թուի, նկատի ունենալով նկարագրուած դէպքերու ընթացքը եւ Յիշատակագրին կցուած վիճակագրական տուեալները: Կու տանք թարգմանաբար:

MEMORANDUM

Թարգմանութիւնը.–

Selon les sources véridiques, nous affirmons que depuis le 25 mai de cette année les événements sont précipités et pour la population arménienne de l'Empire Ottoman s'est créée une situation insupportablement douloureuse.

Վստահելի աղբիւրներու համաձայն, կը հաստատենք որ այս տարուան [1915] Մայիս 25էն ի վեր դէպքերը գահավէժ ընթացք մը ստացան եւ Օսմանեան կայսրութեան հայ ազգաբնակչութեան համար ցաւալիօրէն անտանելի կացութիւն մը ստեղծուեցաւ:

Jusqu'aujourd'hui on croyait que le gouvernement turc éloignait seulement la population arménienne de quelques localités de Cilicie et les transportait par force. Pour Erzerum il n'y avait que des bruits inquiétants. Mais maintenant nous savons d'une façon certaine que le gouvernement turc a expulsé non seulement toute la population arménienne de Cilicie les exilant dans les déserts d'Haleb, mais aussi tous les Arméniens de la Turquie en général.

Յարդ կը կարծուէր որ թուրք կառավարութիւնը միայն Կիլիկիոյ կարգ մը շրջաններէն բռնութեամբ պիտի տեղափոխէր հայութիւնը: Էրզրումի համար կային մտահոգիչ տարածայնութիւններ միայն: Այժմ սակայն որոշապէս գիտենք որ թուրք կառավարութիւնը արտաքսած է ոչ միայն Կիլիկիոյ ամբողջ ազգաբնակչութիւնը՝ Հալէպի անապատները արտարելով զանոնք, այլեւ Թուրքիոյ բոլոր հայերը ընդհանրապէս:

Ainsi donc tous les Arméniens du vilayet d'Erzeroum et à partir des villes de Samsoun et Césarée jusqu'à Diarbékir et Edesse, les Arméniens des vilayets de Trébizonde, Sivas, Kharpourt, Bitlis et Van sont expulsés vers les déserts de Mésopotamie entre Mousoul et Bagdad.

Այսպէս, դէպի Միջագետքի, Մուսուլի եւ Պաղատի անապատները արտարուած են՝ Էրզրումի, Մամսուրի, Կեսարիոյ, Տիարպէքիի, Ուրֆայի, Մեքաստիոյ, Խարբէրդի, Պիթլիսի եւ Վանի բոլոր հայերը:

Le gouvernement turc a pris le soin de ne laisser aucun Arménien dans ces régions et tous le biens mobiliers et immobiliers sont distribués parmi les tribus turcs des voisinages.

Թուրք կառավարութիւնը հոգ տարած է առանձնապէս որ ոչ մէկ հայ մնայ այս շրջաններուն մէջ եւ շարժուն ու անշարժ գոյքերը բաշխուած են շրջակայքի թուրքերուն:

Il est inutile de mentionner que les expulsés n'ont pas été en état de prendre quoique ce soit avec eux, parce que le gouvernement avait déjà requisitionné tous les moyens de communication.

Աւելորդ է յիշատակել որ արտարեալները ի վիճակի չեն եղած ոչինչ տանիլ իրենց հետ, որովհետեւ կառավարութիւնը կանխաւ բռնագրաւած էր փոխադրական բոլոր միջոցները:

"Arménie sans Arméniens": Voilà le programme infernal du gouvernement turc. Les exilés Arméniens étaient obligés de marcher pendant plus de deux

«Հայաստան առանց հայերու»!.. Այս էր դժոխսալին ծրագիրը թուրք կառավարութեան: Արտարեալ հայերը ստիպուած էին քալել աւելի քան երկու ամիս՝ հասնելու համար կանխորոշուած վայրը, որ եւ պիտի դառնար իրենց գերեզմանոցը: Արդէն, ըստ հասած տեղեկութիւններուն, դժբախտ այս արտարեալներուն անցած ճամբաները ծածկուած են դիակներովը այն

mois pour arriver à leur destination dans le désert qui leur servira comme cimetièrre. Déjà d'après les renseignements parvenus les chemins par lequel ont passé ces malheureux expulsés sont couverts par les cadavres de ces Arméniens qui sont morts comme martyrs.

Les ondes d'Euphrate emportent les corps des morts. De cette masse énorme de population rien que des débris sont parvenus à leur destination dans le désert, où ils sont prédestinés à un mort certain parce qu'ils sont privés de vivres. C'est un terrible moyen pour exterminer définitivement les Arméniens de la Turquie, sans bruits et sans faire prononcer le mot massacre.

Il faut avoir toujours en vue que les hommes de 20 à 45 ans se trouvent dans les rangs de l'armée; de 15 à 20 et de 45 à 60 ans sont employés pour les divers services de l'armée. Quant à ceux qui sont libérés du service militaire par le paiement du taxe d'exonération sont arrêtés sous différents prétextes; de sorte que les expulsés sont particulièrement composés de femmes, d'entants et de vieillards. Ces malheureux sont obligés de voyager par des chemins qui même en temps normals manquent complètement de sécurité.

Les tchétras et bachibozouks turcs, ainsi que les gendarmes et officiers d'Etat sont absolument libres d'assouvir leurs passions en violant les femmes privées de défense. Nous avons appris que par endroit, ces pauvres êtres étaient obligés, pour sauver leur vie, d'accepter la religion musulmane comme un moyen désespéré. Les cours martiales condamnent à mort tous les Arméniens, même quand ils se trouvent sous une légère accusation. Si on trouve sur quelqu'un une arme, une image ou un livre même non prohibés, ceci devient suffisant pour le condamner à mort.

Il sont déjà sans nombre ceux qui sont pendus à Constantinople, à Césarée à Diarbékir etc. D'autres, d'après les ordres donnés par les cours martiales, sont tués en route pendant qu'on les transportait d'une ville à l'autre.

Il serait superflu de mentionner toutes les tortures supportées par la population arménienne sous prétexte de chercher des armes. Aucune institution (Eglise, écoles etc.) n'est restée à l'abri des perquisitions. Elles sont profanées, saccagées, ruinées.

Les prélats aussi ne sont pas ménagés dans ce carnage. Les évêques de Brousse, de Trébizonde, de Césarée et de Tcharsandjak sont envoyés devant les cours martiales.

հայերուն, որոնք մահացած են իբրև նահատակներ:

Եփրատի ալիքները կը տանին մեռելներու մարմինները: Այս ժողովուրդի հսկայական զանգուածէն միայն բեկորներ հասած են անապատ, ուր նախասահմանուած են անոնք ստոյգ մահուան, որովհետև զուրկ են ապրուստի ամէն միջոցէ: Ասիկա ահռելի ձեւ մըն է վերջնական բնաջնջումի ենթարկելու Թուրքիոյ հայութիւնը, անաղմուկ կերպով եւ առանց գործածելու կոտորած բառը:

Պէտք է միշտ նկատի ունենալ որ 20-45 տարեկան տղամարդիկ բանակ կը գտնուին. 15-20 եւ 45-60 տարեկանները բանակի տարբեր ծառայութեանց մէջ են: Ինչ կը վերաբերի անոնց որ փրկագին վճարած ըլլալով ազատ էին, զանազան պատրուակներով անոնք եւս ձերբակալուեցան. այնպէս որ, յատկապէս կիներէ, երեխաներէ եւ ծերունիներէ բաղկացած են աքսորի կարաւանները: Այս դժբախտները ստիպուած են հետիոտն անցնիլ այնպիսի ճամբաներէ, որոնք մինչեւ իսկ բնականոն ժամանակներուն բոլորովին անապահով են:

Թուրք չեթէները, պաշտպանութիւնները, ինչպէս նաեւ ժամտարմներն ու պետական պաշտօնեաները բացարձակ ազատութիւնն ունին յագեցնելու իրենց կիրքերը եւ բռնաբարելու անպաշտպան կիները: Իմացանք որ տեղ-տեղ այս խեղճ էակները իրենց կեանքը փրկելու յուսահատութեան մէջ ստիպուած են մահմետական դառնալ: Պատերազմական ատեանները, ամենաթեթեւ մեղադրանքներու պարագային իսկ, մահավճիռ կ'արձակեն բոլոր հայերուն նկատմամբ: Բաւական է որ մէկուն վրայ գտնեն զէնք մը, նկար մը, զիրք մը, նոյնիսկ ոչ-արգիլեալ, որպէսզի մահուան դատապատուի ան:

Անհաշիւ է արդէն Կ. Պոլսոյ, Կեսարիոյ եւ Տիարպեքիի մէջ կախաղան բարձրացուածներու թիւը: Ուրիշներ քաղաքէ քաղաք փոխադրուած միջոցին սպաննուած են, պատերազմական ատեաններու արձակած հրամաններով:

Աւելորդ է յիշատակել այն չարչարանքները, որոնք կը գործադրուին հայերու վրայ՝ զէնք փնտռելու պատրուակին տակ: Ոչ մէկ հաստատութիւն (եկեղեցիներ, դպրոցներ եւայլն) զերծ չէ մնացած խուզարկութենէ: Սրբապղծուած, կողոպտուած ու քանդուած են բոլորը:

Այս սպանդին մէջ չեն խնայուիր նաեւ հոգեւորականները: Պատերազմական ատեան դրկուած են Պրուսայի, Տրապիզոնի, Կեսարիոյ եւ Չարսանճաքի եպիսկոպոսները:

Տիարպեքիի առաջնորդը տեղւոյն բանտին մէջ վախճանած է զանակոծութեան տակ:

Անկարելի է լուր ստանալ հայկական միւս համայնքներէն, որովհետև Փոքր Ասիոյ հայութեան ար-

L'évêque de Diarbékir est mort sous les coups dans la prison de l'endroit.

Il est impossible d'avoir des nouvelles des autres colonies arméniennes parcequ'en général toute communication est défendue à la population arménienne de l'Asie Mineure avec le monde extérieur.

Les alentours de Van et de Bitlis sont incendiés et les habitants assassinés ignominieusement.

Dans les premiers jours du mois de Juillet il y a eu des massacres à Karahisar où même les enfants ne sont pas épargnés.

Vous voyez donc que les Arméniens de la Turquie vivent leurs derniers jours et rien ne pourra les sauver de l'extermination.

A part ces atrocités, le gouvernement turc a formé des commissions spéciales dont le rôle consiste à mettre en ruine tous les endroits habités par les Arméniens et distribuer aux Islams les biens des Arméniens expulsés: maisons, magasins, champs, etc. Les jeunes filles et les jeunes femmes arméniennes sont appropriées comme des biens. A ce propos, le mot d'ordre des turcs est: "Le bien du giavour appartient par droit au musulman!"

En réalité il n'existe plus d'Arméniens dans toute l'Arménie. Toutes les églises et couvents sont convertis en mosquées, en casernes et en écuries. Les turcs et les kurdes sont devenus maîtres de tout, tandis que les Arméniens, les maîtres légitimes, sont expulsés vers les déserts de Mésopotamie.

Nous n'avons absolument aucune nouvelle de ces exilés et nous ne savons pas s'ils sont arrivés à leurs destinations ou s'ils sont encore vivants ou non. Nous savons seulement une chose, et positivement, que les 90% de la population expulsée est massacrée, soit en route, soit par la faim et par fatigue; et les restants sont dispersés parmi les tribus sauvages kurdes dans les environs d'Haleb et de Moussoul.

D'après la liste ci-jointe on se rend compte de la proportion énorme du nombre des massacrés, des disparus, des Arméniens convertis en Islamisme et des pendus, ainsi que des prélats pendus, assassinés, emprisonnés et exilés.

գիլում է ընդհանրապես հաղորդակցիլ արտաքին աշխարհի հետ:

Վանի եւ Պիթլիսի շրջակայքը հրդեհում է եւ բնակչութիւնը անարգաբար կոտորում:

Յուլիսի առաջին օրերուն, կոտորած տեղի ունեցաւ Շապին Գարահիսարի մէջ, ուր չխնայուեցաւ մինչեւ իսկ մանուկներուն:

Կը տեսնէք որ Թուրքիոյ հայերը կ'ապրին իրենց վերջին օրերը եւ ոչինչ կրնայ փրկել զանոնք ոչնչացումէ:

Բացի այս դաժանութիւններէն, թուրք կառավարութիւնը առաջացուցած է յատուկ յանձնախումբեր, որոնց պարտականութիւնը կը կայանայ հայոց բնակավայրերու քանդումին եւ արտաքսումը հայերու ինչքերը – բնակարան, վաճառատուն, արտ եւայլն – իսլամներուն բաժնետուն մէջ: Երիտասարդ կիներն ու աղջիկները եւս կը սեփականացուին իբրեւ ինչք: Այս առթիւ, թուրքերու մօտ կարգախօս է. «Կեաւորին հարըստութիւնը իրաւամբ կը պատկանի մահմետականին!»:

Իրականութեան մէջ, այլեւս հայ գոյութիւն չունի Հայաստանի մէջ: Բոլոր եկեղեցիներն ու վանքերը վերածուած են մզկիթի, գորանոցի եւ ախոռի: Թուրքերն ու քիւրտերն են տէր տիրական ամէն ինչի, մինչդեռ անոնց իրաւատէր հայերը՝ արտաքսուած են դէպի Սիջազէտքի անապատները:

Բացարձակապէս ոչ մէկ տեղեկութիւն ունինք այս արտոքսուելներէն, եւ չենք գիտեր թէ հասած են անոնք իրենց համար սահմանուած վայրերը, կամ արդեօ՞ք ողջ են կամ մեռած: Մէկ բան միայն գիտենք, եւ հաստատ կերպով, որ արտաքսուելներու 90 առ հարիւրը կոտորուած է, ըլլայ ճամբու ընթացքին, ըլլայ սովահարութեան կամ յոգնութեան հետեւանքով, իսկ մնացեալը ցրուած է Հալէպի եւ Մուսուլի շրջակայքը, քիւրտ վայրերնի ցեղախումբերու մէջ:

Ներփակեալ ցուցակէն կարելի է գաղափար կազմել ջարդուածներու եւ ահետացածներու թիւին մասին, նաեւ՝ իսլամացուած եւ կախաղան բարձրացուած հայերու, ինչպէս նաեւ կախուած, սպաննուած, բանտարկուած եւ արքայուած բարձրաստիճան հոգեւորականներու մասին:

**La liste des Arméniens
qui par suite des expulsions en masse
sont assassinés, disparus et islamisés**

**Ցուցակ այն հայերու,
որոնք զանգուածային արտոյի հետեւանքով
սպաննուած, անհետացած կամ իսլամացուած են**

1. Ismid	65000	personnes	1- Իզմիտ	65.000	հոգի
2. Armach	5000	"	2- Արմաշ	5.000	»
3. Brousse	25000	"	3- Պրուսա	25.000	»
4. Banderma	15000	"	4- Պանտրմա	15.000	»
5. Césarée	45000	"	5- Կեսարիա	45.000	»
6. Sivas	81000	"	6- Սեբաստիա	81.000	»
7. Edesse	23500	"	7- Եդեսիա [Ուրֆա]	23.500	»
8. Amassia	25000	"	8- Ամասիա	25.000	»
9. Chabin-Karahissar	25000	"	9- Շապին Գարահիսար	25.000	»
10. Samsoun	20000	"	10- Սասուն	20.000	»
11. Trébizonde	32700	"	11- Տրապիզոն	32.700	»
12. Erzeroum	75000	"	12- Էրզրում	75.000	»
13. Eriza	25000	"	13- Երզնկա	25.000	»
14. Baïbourt	17000	"	14- Բաբերդ	17.000	»
15. Passène	10500	"	15- Բասեն	10.500	»
16. Terdjan	15000	"	16- Դերջան	15.000	»
17. Kémakh	10000	"	17- Քեմախ	10.000	»
18. Kharpourt	45000	"	18- Խարբերդ	45.000	»
19. Keghi	24000	"	19- Քղի	24.000	»
20. Seghert	25000	"	20- Սղերդ	25.000	»
21. Diarbékir	55100	"	21- Տիարպեքիր	55.100	»
22. Eguine	10200	"	22- Ակն	10.200	»
23. Arapguir	19500	"	23- Արաքլիր	19.500	»
24. Tchemechgadzak	9000	"	24- Չմշկաձագ	9.000	»
25. Haleb	15800	"	25- Հալէպ	15.800	»
26. Sis-Hadjen	30300	"	26- Սիս-Հաճըն	30.300	»
27. Zeitoun-Fernous	28000	"	27- Չէյթուն-Ֆոնուզ	28.000	»
28. Divrik	11300	"	28- Տիվրիկ	11.300	»
29. Bitlis-Mouche	51500	"	29- Պիթլիս-Մուշ	51.500	»
Total	835.500	personnes	Գումար	833.500	հոգի

Liste de prélats pendus, assassinés,
emprisonnés et exilés

Անուանացանկ
կախուած, սպաննուած, քանտարկուած
եւ արտրեալ հոգետրականներու

1. Diarbékir – Le père Tchelkhadian – Brulé vif
2. Ismid – L'Archevêque Hovaguim – exilé
3. Armach – Le supérieur de Couvent Armach –
L'évêque Mesrob – exilé
4. Brousse – Le père Tanielian – empoisonné[?]
5. Césarée – L'évêque Begriguian – emprisonné
6. Sivas – L'évêque Knel Kalemkerian – assassiné
7. Edesse – Le père Kasbarian – exilé
8. Chabin-Karahissar – Le père Toriguian – pendu
9. Samsoun – Le père Hamazasp – exilé
10. Trébizonde – Le père Thourian – emprisonné
11. Baïbourt – Le père Hazarabedian – pendu
12. Kamakh – Le père Hemayak – exilé
13. Kharpourt – Le père Khorénian – assassiné
14. Tcharsandjak – Le père Nalbandian – pendu
15. Haleb – L'évêque Nerses Tanielian – exilé
16. Bitlis – Le père Kalémian – exilé
17. Erzeroum – L'évêque Saadetian – assassiné

- 1- Տիարպեքիր – [Սկրտիչ] վրդ. Ջղատեան –
ողջ-ողջ այրած
- 2- Իզմիտ – Յովակիմ Արք. – արտրուած
- 3- Արմաշ – Մեսրոպ եպս. վանահայր Արմաշի
վանքին – արտրուած
- 4- Պրուսա – Դանիէլեան վրդ. – թունաւորուած[?]
- 5- Կեսարիա – [Խոսրով] եպս. Պեհրիկեան –
քանտարկուած
- 6- Մեքաստիա – Գնէլ եպս. Գալենքերեան –
սպաննուած
- 7- Եդեսիա (Ուրֆա) – Գասպարեան վրդ. –
արտրուած
- 8- Շապին Գարահիսար – [Վաղինակ Ծ. վրդ.]
Թորիկեան – կախուած
- 9- Սամսոն – Համազասպ վրդ. – արտրուած
- 10- Տրապիզոն – Թուրեան վրդ. – թունաւորուած
- 11- Բարբերդ – [Անանիա Ծ. վրդ.]
Հազարապետեան – կախուած
- 12- Քեմախ – Հմայեակ վրդ. – արտրուած
- 13- Խարբերդ – [Պսակ Ծ. վրդ. Տէր] Խորէնեան –
սպաննուած
- 14- Չարսանճագ – [Գէորգ Ծ. վրդ.]
Նալպանտեան – կախուած
- 15- Հալէպ – Ներսէս եպս. Դանիէլեան –
արտրուած
- 16- Պիթլիս – [Սուրէն Ծ. վրդ.] Գալէմեան –
արտրուած
- 17- Էրզրում – [Սմբատ] եպս. Սաատէքեան –
սպաննուած

Des prélats des autres localités aucune nouvelle.

Այլ վայրերու առաջնորդներու մասին ոչ մէկ տեղեկութիւն:

Փաստ. 882-54

91.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՍԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ

Վիշապ, 18 սեպտ. 1915

Սիրելի ընկերներ!

Կը հաստատենք մեր սեպտ. 16ը, ոչ մէկ լուր ձեզմէ:

Ձեր բարեկամին լուր դրկած էինք հասկնալու համար. այս առթիւ նա ցաւ յայտնած է որ պատեհուած թիւնը փախցուցինք, եւ թէ այլեւս չպիտի կրնայ պաշտպանել մեզ, քանի որ հիւանդանոցն ալ կը պարպուի: Ձեզի կը թողունք կարգադրել եւ ապահովել տալ հոս, [որպէսզի] թէ՛ կարենանք աշխատիլ եւ թէ՛ էլ նահատակ չըլլանք, հարիւր հազարներու պէս. թէ որ գիտնանք գործը տանողներ կան, որքան ալ չենք զբաղեցնել մենք մեզմով:

Խաչը կրկին փնտռեցին առջի օր. Կեդ. վարժարանէն այս առթիւ ձերբակալեցին ընդհանուր հսկիչ Ա. Մարկոսեան, տնտեսը, ժամկոչը եւ երկու սասուկցի ուսանողներ, որոնք բոլորն ալ դրկուեցան Իզմիթ:

Երէկ բարեկամ մը կ'աւետէր թէ էքօ տը Պուլկարիի մէջ կարգացինք որ Կրէյը²⁰⁰ ընդունած է նաեւ Լոնտոնի հայ դեսպանը... Ի՛նչ միամտութիւն մեր մէջ:

Այսօր ձեզի կ'ուղարկենք կարգ մը տեղեկագիրներ, դրուած եպիսկոպոսներու, վարդապետներու կամ աւանատեսներու կողմէ. անունները տալու հարկ չկայ: Կը հրատարակէք յապաւուսներով:

№ 1.— Էսկի Շէհիրի վրանաբնակ գաղթականէ մը հասած է հետեւեալ պարզուկ եւ արցունքոտ հիւալը:

«Ժողովուրդը պիտի փճանայ անօթութենէն. իր ինչքը արդէն թողած, ունեցած չնչին դրամն ու վերմակն ալ կը կողոպտուի. մեծամասնութիւնը այժմ տասնոց մը չունի, աս ի՛նչ դառն կացութիւն է: Ստորին պաշտօնեաներու անգիտութիւնը չափ չունի. առջի գիշեր երկու ժանտարմ Գըլըճ գիւղացիներու վրանները (որոնք նոյն իրիկունը եկած էին), կը կողոպտեն եւ մէկ քանին կը վիրաւորեն ծեծով: Դարձեալ 40-50 վրան տեղէն հանել փորձեցին, յետոյ մէջերնէն մէկը եկաւ եւ յանձնարարեց չափուչին սիրտը շինել. անմիջապէս 400 դրչ. հաւաքուեցաւ եւ տրուեցաւ որ հեռանան: Մէկը հինգ դրուչի վերմակ մը ծախեց եւ բերաւ մասնակցեցաւ: Եկողները բոլորն ալ ճամբան կողոպտուած են, մերկ եւ անօթի են: Սթասիոն մը, «դուք գացէք, կարասիքները մենք կը դրկենք», ըսելով ճամբած են, դրամներն ալ կողոպտելէն յետոյ: Որ մէկը թուեմ, եւ այդ տեղափոխութեան միջոցին ծանր հիւանդներ հոն կը մնային, ոմանք իրենց զաւակները ծով կամ գետ նետած են, ոմանք

ճամբան թողած, ոմանք անձնասպան եղած: Ասոր վերջը աւելի գէշ պիտի ըլլայ: Ինչու գոնէ նպաստ չեն դըրկեր. անօթի եւ մերկ մարդ չի դիմանար. շատերն ալ մէկզմէկ կորսնցուցեր են, հաւանաբար Գոնիա ըլլան:

№ 2.- Սեպտ.—

Նիկոմիդիոյ եւ Պրուսայի նահանգներէն տեղահան եղած ժողովուրդը իւրաքանչիւր կայարանի մէջ անտանելի թշուառութեան մատնուած՝ կը սպասէ մահուան ժամերուն: Էսկի Շէհիրէն Գոնիա հարթավայրերը լեցւած են հայերու վրաններով, որոնք արեւին կամ անձրեւին դէմ իսկ չեն կրնար պաշտպանել: Այսուհանդերձ այդ սարսափելի թշուառութիւնը չի շարժեր անգուժ պաշտօնէութեան սիրտը, եւ ասոնք խարազաններով, սօփաներով կը յարձակին, առանց սեռ եւ տարիք նկատի առնելու:

Էսկի Շէհիրէն Գոնիա տառապանքը մեղմ է շնորհիւ կուսակալ ձեռքալ պէյին, 2-3 օրէ ի վեր սկսած են գաղթականները ձրի փոխադրել, մինչեւ հիմա եղածները պէտք է դիւրատար նկատել, էրէյլիէն եւ Պոզանթիէն անդին եղածներուն հետ բաղդատելով: Գոնիա ոտքով եկող կարաւանը աչքովս տեսած ըլլալով հանդերձ չեմ կարող նկարագրել վիճակը պառաւ կիներու եւ անմեղ մանուկներու, որոնք մարդկութենէ դուրս ելած, կերպարանափոխուած էին:

Տեղահանութեան հրամանին անսաստած ըլլալով, երեք հարիւրի մօտ նահատակներ տուած, մնացած այրիները լեռը ելած էին: Եւ արդէն այրերը ցանցառ էին: Ամէն կողմէ հետիոտն գալու բռնադատուածներ կային, քանի որ ձրի փոխադրելու համար կանոնաւոր որոշում չէ տրուած եւ տեղ տեղ բանակելու համար ժանտարմաներու շորթած տուրքերը կ'անցնի չափ ու սահման: Շոգեկառքով ըլլայ թէ հետի, գաղթականները դատապարտուած են կողոպտուելու, խոշտանգուելու:

Գոնիայէն դէպի էրէյլի, Պոզանթի, Ատանա, Հայէպ, Տ[էր] Զօր, Մուսուլ հաւաքուածներուն մէջ խիստ սակաւաթիւ են Նիկոմիդիոյ շրջանէն, եւ ամէնքն ալ ունեւորներ: Կառավարութիւնը բռնի հեռացուցած է Ստեփանոս եպ. եւ Գարեգին վարդապետը, որպէսզի ժողովուրդը յուսահատի այս կողմերը մնալէ:

200.- Էդուարդ Գրէյ – Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար:

Սուրիոյ եւ Լիբանանի ժողովուրդն ալ տեղահան կ'ըլլայ եւ արդէն անոնց առանձին կարաւանը հասած է Գոնիա: Ռումէլիի իսլամ գաղթականները կը բերեն հոս հաստատելու: 130 հոգիին 30 հաց կը բաշխեն, ան ալ ոչ ամէն տեղ»:

№ 3.- Տեղեկագիր.—

Աֆիոն Գարահիսարի լեռնաղաշտէն 10/23 սեպտ.:

Տարագրելոց մէկ մասը Գոնիա ղրկուած է, բայց հոս Աֆիոն Գարահիսարի ցուրտ լեռնաղաշտին վրայ՝ վրաններու տակ եւ անվրան, կը տառապին շուրջ 11 հազար ահաբեկ թշուառներ. անկարելի է նկարագրել անոնց մեծ մասին վիճակը, ճամբուն կրած չարչարանքները, որոնց զոհ գացած են ստուարաթիւ խեղճեր: Այդ ահաբեկիչ տառապանքի մանրանկարը ներկայացուցած ըլլալու համար, ըսենք թէ հէք մայրեր ստիպուած են եղեր իրենց հոգեհատորները ձգելու ճամբան: Շատերը 10, ոմանք 20, ուրիշներ 4 օր հետիոտն քայելու բռնադատուած, եսթաղաններու սպառնալիքներու եւ հայհոյանքներու տեղատարափէն սարսափահար. եւ որպէսզի հետիոտն ուղեւորութիւնը անկարելի չըլլայ, իրենց բոլոր գոյքերը, ճամբայ չելած եւ ճամբորդութեան միջոցին, ստիպուած են նետել, նոյնիսկ ամենակարեւորները, եւ մերկ ու անպատսպար մնացած են

ձմեռնաշունչ սարահարթին վրայ:

Այս թշուառ բազմութիւնը կը բաղկանայ Պայրքէսի-րի, Պանտրմայի, Էրինճիքի, Հայ Գիւղի, Միխայրճի, Գասապայի, Պրուսայի, Կէմլեյիկի, Պէնլիի, Մարմարճըքի, Քարսախի, Կիւրլէի, Եհնիճէի, Ճէրահի, Պարտիզակի, Ֆէրիզլիի, Ատաբազարի, Քարասուի գիւղերուն, Եալովայի Չուքուր, Քարճի, Գըրճ, Շագշաֆ գիւղերուն, Պրուսայի Փագար գիւղին (օրխան Ղազիի) Մեծ նոր գիւղին, Չէնկիլէրի, Օրթագիւղի եւ Քէրէմեթի հայ բնակչութիւններով, որոնց բախտակից են յիշեալ գիւղերու ժողովուրդներու քահանաներէն տասը հոգի ալ:

Հարուստը աղքատացաւ, եւ աղքատը իր ողբալի չքաւորութեան մէջ մերկ ու անօթի, անօգնական եւ անյոյս, մահուան արհաւիրքներէն պաշարուած է: Յրտաշունչ քամիները միացած անօթութեան՝ կորուստ կը սպառնան, եւ աշնան թուխ ամպերը ջրհեղեղով այս խեղճերու կեանքին վերջ տալու երեւոյթն ունին:

Այս ահաւոր թշուառութեան զարհուրելի տեսարանին առջեւ, անվրան, անպատսպար մերկ եւ անօթի այս թշուառ ամբոխին արցունքի, պաղատանքի, աղիողորմ հառաչանքներուն հանդէպ, մարդ կը նախընտրէ մեռնիլ քան տեսնել:

Միւս կողմէ շոգեկառքը զօրք փոխադրելուն համար, որոշուած է եղեր այս բազմութիւնը հոս ձգել երկար ժամանակ. ուրեմն բացօթեայ տառապանքէն ազատելու ալ ճար չկայ. միայն այսօր 12 հոգի մեռան:

Փաստ. 881-44

92.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՍԵԱՅ ՍԱՐՄՆԷՆ ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ

Վիշապ, 19 սեպտ. 1915

Միրելի ընկերներ!

Կը հաստատենք մեր 18 թուակիր գոյգը: Ձեզմէ՝ ոչինչ:

.....²⁰¹ կազմող վերի վայրումներ տեղի կ'ունենան, եւ դուք չէք հաճիր գոնէ շաբաթը մէկ նամակ գրել, մտածեցէք որ ձեր վերջին նամակը սեպտ. 4 թուակիր էր:

Պօղոս փաշայի դէմ արձակուած վճռին հետեւանքով, Բարեգործականի Պոլսոյ մասնաճիւղը լուծուած է, բոլոր հաշիւները պատրիարքին յանձնուած են:

Այստեղ տիրող սղութեան մասին գաղափար տալու համար կը նշանակենք քանի մը թիւեր: Կազ՝ օխան 12 դրշ., շաբար՝ օխան 10-12 դրշ., մաքառոնի 12, շեհրիէ 9, ալքոլ 16-էն բարձրացաւ 32-ի, պտուղներ (դեղձ, սալոր, տանձ եւայլն) 8-10 դրշ. քաշը:

Արտաւազըը այլեւս չեն ծեծեր, եւ կը թոյլատրեն տեսակցիլ. տակաւին ոստիկանութեան դուռն է: Տեսնենք ինչ պատիժ պիտի սահմանեն: Եթէ չըլլային պայտակին բաները թերեւս բոլորովին ազատէր: Իր ընկերները հարցուցած են՝ երեք անգամ ծեծելով, բայց չորս հինգ օրէ ի վեր հանգիստ կը մնայ:

Ստորեւ կը զրկենք նոր տեղեկագիրներ:

Տեղեկագիր N° 4

Գոնիա, 11 սեպտ.

Այլեւս էսկիւզհիրի դաշտին մէջ վրաններ չեն մնացած, բոլորն ալ փոխադրուած են դէպի այս կողմ: Սակայն անոնք որ կաշառք տալու կարողութիւն ունին, անոնց միայն արտօնուած է Գոնիա իջնել: Հասարակ ժողովուրդը ամբողջովին քշուած է էրէյլի, ուր դժոխային կացութիւն մը ստեղծուած է, որովհետեւ հարկ է խոստովանիլ, Գոնիայի կուսակալը ամէն դիւրութիւն կ'ընծայէ, բայց ոստիկանութիւնը գազանացած է:

Մէկ երկու օրէ ի վեր բաւական արտօնութիւն կայ քաղաքին մէջ տուն վարձելու եւ կարասիներ փոխադրելու, ինչ որ առաջ միայն կաշառքով կ'ըլլար: Այնպէս որ մօտ երկու հազար ընտանիքներ, աւելի ԱՖ[իոն] գարահիսարցի, պրոսպի եւ Նիկոմիդիոյ շրջանի ունեւորներէն, քաղաք են իջած, իսկ նոյն տեղերու մնացած հասարակ ժողովուրդը, հինգ հազար վրաններու տակ դրուած է Գոնիայի կայարանէն տասը վայրկեան հեռու բաց դաշտին մէջ:

Նիկոմիդիոյ շրջանի աղքատ գիւղերու թշուառ ժողովուրդին վիճակը անտանելի է, վասնզի այստեղ թէ կառավարութեան կողմէ թէ տըքթ. Ուլաթի եւ մասնաւորներու կողմէ նպաստներ կը բաժնուին, բայց Ա-Ֆ[իոն] Գարահիսար եւ էրէյլի օգնութիւն փութացնող ձեռք չկայ: Յուրտերն ալ սկսուած են, բարեբախտաբար անձրեւ չկայ: Հոս միջին հաշուով օրական 20 հոգի կը թաղենք, աւելի փոքր մանուկներ եւ ծերունիներ. եթէ այսպէս երթայ մինչեւ տարեգլուխ ողջ մնացողները բացառութիւն պիտի կազմեն:

Երկու օրէ ի վեր փութկոտութիւն մը կը տեսնուի վրանները աչքէ հեռու պահելու. պատճառը անյայտ է: Զինուորի ընտանիքները գատեցին եւ շրջակայ թուրք եւ յոյն գիւղերը գետեղելու համար, մինչեւ 8 ժամ հեռաւորութեամբ ճամբայ հանեցին:

Կ'երեւի թէ սպարթացիներու, պրոսպիցիներու, աֆ. գարահիսարցիներու, պրոսպիցիներու մասնաւոր շնորհ մը կ'ըլլայ, վասնզի անոնք ուղղակի Պոլիս հեռագիրներ քաշած էին, եւ «պաշ քոմանտան վէթիլի էնվեր» ստորագրութեամբ պատասխան մը կ'ըսէր, «ճիզպատա ինքեուն էտիլմէնիզ իչիւն հարպիլէտէն մուհաճիրէյն մուտուրիաթտատը»:

Հաւանաբար այս օրերս հոս ալ ժամանէ այդ պաշտօնեան: Զրոյցի մը համաձայն, զինուորի ընտանիքները պիտի վերադարձուին, իսկ մնացածները պիտի մնան հոն ուր որ են: Թէեւ մասնաւորներ՝ Պոլիս, Իզմիր սպայութիւն, զինուորութիւն ընողներ յաջողեցան կարգադրել որ իրենց ծնողները եւ ընտանիքները իրենց մօտ երթան, եւ մինչեւ էրէյլի գացող բազմանդամ ընտանիքներ իսկ Պոլիս եւ Իզմիր մեկնեցան, բայց ասիկա ընդհանուր ձեւ մը չունի դեռ:

Այստեղի քաղաքային եւ զինուորական պաշտօնեաները բաւական բարեացակամ են, բայց ոստիկանութիւնը անպատմելիօրէն թունաւորուած է, անխնայ վայրագութեամբ կը վարուին հանդէպ «Միւրտահիմներուն», ինչպէս սովոր են կոչել հայ գաղթականները, որոնք յաչս իրենց ոճրապարտներ են:

Շաբթոս՝ քաղաքը հասան Ատանայէն բաւական թուով իսլամ ընտանիքներ. իրենց տուած տեղեկութիւններէն կը հասկցուի թէ կարեւոր գործողութիւններ կատարուած են Մերսինի, Ատանայի եւ Տարսոնի վրայ իտալիացիներու կողմէ. թերեւս Մերսին ալ գրաւ-

201.- Բառ սը բաց ձգուած:

լած է եւ ցամաք զօրք ելած, վասնզի, տեսնելով որ շարունակ Ատանայի վրայ ուղարկելու կը տեղացնեն, նահանգին վարչութիւնը փոխադրուած է Պոզանթի գտնուող Պելլիմետիք ըստուած տեղը:

Կ'ըսուի թէ 1500ի չափ տայ գաղթականներ ազատուած են իտալացիներու կողմէ, որոնց օրական մէկ Ֆրանք կը տրուի:

Չորս օրուան լուր է այս. սա ստոյգ է որ Ատանայի բազմաթիւ թուրք ընտանիքներ Գոնիա հասնելու վրայ են, տեղական կառավարութիւնը մուսուլմաններու կանչել տրուած ըլլալով, թէ ուզողը կրնայ հեռանալ քաղաքէն: Դէպի Պոզանթի դրկել կարելի եղած է: Բայց մէկ երկու օրէ ի վեր պարապ վակոններ Պոլսէն կու գան կ'անցնին եւ ոչ ԱՖ. Գարահիսարէն ոչ ալ Գոնիայէն գաղթական չեն առած եւ պարապ գացած են Պոզանթի:

Հայ զինուորներ Պոլսէն եւ շրջականերէն ամրութիւն փորել տալու համար կը դրկուին Պոզանթի:

Գոնիացի եւ պրոսպացի հայ զինուորները կ'աշխատեցնեն հունձքերը հաւաքելու, քաղելու եւ կալի աշխատանքներու, Տարտանէլ մեկնած թուրք զիւղացի զինուորներուն տեղ:

Այս առթիւ կը խնդրենք «Հայաստան»ի խմբագրութեան, որ եթէ տեղեկագիրը պիտի հրատարակէ, իբրեւ Գոնիայէն գրուած նամակ, վերի հատուածը «չաբթուս քաղաք հասած են» մինչեւ հոս հրատարակէ իբրեւ էնկիւրի տեղահանուած ժողովուրդը Պոզանթիի ճամբայով դրկուած է: Ամէնէն սոսկալին է գէյթունցիներուն վիճակը. երէկ անցորդ մը քստմնելի բաներ կը պատմէ Սուլթանիէի մէջ անոնց կրած տառապանքի [մասին]. դժբախտութիւնը կատարեալ ըլլալու համար, թիֆոյի համաճարակ մը 1600 հոգի գետին փռած է, եւ երբ մնացեալները ազատելու համար փախած են, ժանտարմներու գնդակին եւ խարազանին տակ մեռնողներու թիւն ալ փոքր չէ եղած: Բայց վերջապէս կառավարութիւնը

ստիպուած է դէպի անյայտ ուղղութեամբ տեղեր ցրուել զանոնք եւ իրենց հետ միասին են եղեր Թոքթաճեան Բարթոլոմէոս վրդ., եւ Առաջնորդը, որոնք կ'անրծեն Կիլիկիոյ կաթողիկոսը (Չնջել):

Տխուր է էնկիւրիցիներու վիճակը, մանաւանդ որ բաժնուած են իրենց այրերէն եւ մանուկներէն: Մաս մը հոս եկածներ ալ կան, Գոնիա եկողներուն հետ, բայց մեծ մասը ճամբան գատած են եւ տեղ տեղ վար դրած: Թշուառ կիները ոչ մէկ լուր ունին իրենց այրերուն եւ մանուկներուն մասին մինչեւ մէկ երկու օր առաջ եւ բոլորովին յուսահատուած էին անոնց ողջ մնալէն. բայց հետգհետէ հաւանական կը դառնայ անոնց հետիոտն դէպի այս կողմերը բերուիլը, իսկ կիները շոգեկառքով եկած են. կառավարութիւնը Գոնիայի մէջ 20 եւ մեծերուն 40-ական փարա կը բաշխէ թէեւ, բայց առանց այր մարդու շատ հասկնալի է իրենց վիճակը, մանաւանդ որ հինգէն տասը ոսկիով աղջիկ գնելու առաջարկները անպակաս են, նոյնիսկ կառավարական պաշտօնեաներու կողմէ:

Անցեալ օր էրէյլիի մէջ Գոնիայի գաղթական երեւելիներէն միւթագիմ Դանիէլ էֆ. Չոլաքեան սուլիմահար սպաննուած է, իսկ կիներ ոստիկաններու վաւաշտութեան յանձնուած:

Նմանօրինակ մասնակի դէպքերը խիստ յաճախադէպ են, թէեւ ընդհանուր կոտորած չկայ, բացի Չէնկիլէրէն ուրկէ եկողներուն մէջ հազուադէպ է այր մարդու հանդիպիլ, քանի որ աւելի քան 200 նահատակներ տուած են, եւ մնացածները զինուոր են: Այս օրերս Գոնիա հասան Պոլիսէն եւ Իզմիրէն հետիոտն բերուած 700 գաւառացիներ, որ ճամբան կողոպտուած ըլլալով անօթի են. քահանաներ ալ կան անոնց մէջ:

Այս թշուառներէն շատերը անճանաչելի դարձած են, 20-էն քսանը հինգ օր քայլով անօթի, ծարաւ մնացած են:

Փաստ. 882-55

93.- ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԷՆ
ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

Վիշապ, 22 սեպտ. 1915

Սիրելի ընկերներ!

Կը հաստատենք մեր 19 թուակիրը, տասնըմէկերորդն է այս որ կը գրենք առանց պատասխան առնելու. կը հիանանք ձեր կրանիթիայ լուծեան վրայ: Քէ՞ն էք պահած. չունի՞ք, թէ նիւթ կը պակսի, ի՞նչ առեղծոած է այս որ կը յուսահատեցնէ մեզի, մանաւանդ հիմա, որ 24 ժամը անգամ մը ահռելի անակնկալներ կը բացուին, շնորհիւ Ս... անմտութեան:

Կարդացիք անշուշտ, թերթի վրայ այս օրուընէ սկըսած ենք անուն մը դնել, եթէ կանոնաւոր կու գայ կը շարունակենք, եթէ ոչ գերմանական կամ աստրոլիական] հասցէ տուէք:

Ձեք գիտեր ինչէ՞ն ծագում առաւ այս նոր կարգադրութիւնը:

Այնքան հարցեր տուած էինք ձեզի Յ[արութիւն]ի մասին, գէթ անոնց պատասխան տայիք: Հոս նորէն կը խօսուի Պոլսոյ տեղահանութեան մասին, վա՛յ մեզի եթէ դարձեալ գլուխ պիտի ծռենք ձեռքերը ծալած:

Գոնիայի վալի շէլալ պէյը պաշտօնանկ եղաւ իբրեւ բարեկամ հայերու²⁰²:

Տրապիզոնի առաջնորդ Գէորգ վրդ. Թուրեան որ երկու ամիս առաջ Կարնոյ պատերազմական ատեանի պահանջով հոն դրկուած էր, չէ հասած իր տեղը, ուրեմն սպաննուած է ճամբան ուրիշ հարիւրաւորներու պէս:

Կ'իմանանք թէ՛ երբ Բաղէշը գրաւեցին ռուսերը, իսլամները փախած են դէպի Սղերդ, իսկ սղերդցիք ալ հայերով միասին՝ դէպի հարաւ. իսկ երբ Բաղէշը պարպուած է, անոնք դառնալով սպաննած են բոլոր հայերը, առաջնորդ Եղիշէ վրդ. Գալէմեանն ալ միասին:

Հայ ժամատարմներն ու գինուորներն ալ սպաննուած են. իսկ այն իսլամները որոնք հայեր պահած էին, յարձակում կրած էին կառավարութեան հրամանով, իրենք պատերազմական ատեանի յանձնուած են, իսկ հայերը կոտորուած: Կանխաւ փախածներէն շատ քիչե-

րը ազատուած են, Մուսուլ ապաստանելով: Կ'ըսուի թէ Մուսուլ ալ ջարդ եղած է եւ երեք օր տեւած:

Սուլթանին մտերիմներէն մին պատմեր է հայաջինջ հալածանքը եւ ըսեր է թէ քու թագաւորութեանդ համար մեծ արատ մը պիտի ըլլայ. պատասխաներ է թէ ես համամիտ չեմ եղած այս բաներուն, բայց նախարարներս կարեւորութիւն չեն տար:

Ահմէտ Րիզայի հարցապնդումը դրուած է ծերակոյտին եւ մեծ յուզում առաջ բերած է ծերակուտականներու եւ ներկայ նախարարութեան միջեւ, որոնք սպառնացեր են հայոց արարքները մերկացնել եւ երկրին մէջ յառաջ գալիքներուն պատասխանատուութիւնը չստանձնել: Պահանջած են որ այդ հարցապնդումը ետ առնուի. կ'ըսուի թէ շատեր համամիտ են Ահմէտ Րիզայի եւ հայոց դէմ եղած հալածանքը մեծ արատ մը կը նկատեն օսմանեան պատմութեան, եւ խոստացած են որ եթէ Ահմէտ Րիզա իր հարցապնդումը ետ առնէ, յատուկ պատուիրակութեան մը ձեռքով իր յուզած խնդիրները դահլիճին ուշադրութեան պիտի յանձնուին: Այս պատուիրակութեան գլուխ պիտի գտնուի թուրք պաշտօնական պատմագիր Ապտիւրահման պէյ որ վերջերս ծերակոյտին Բ. նախագահ անուանուեցաւ:

Դեռ լուր չառինք թէ ինչ կերպ լուծուեցաւ խնդիրը. երէկ գրոյց կը շրջէր թէ Ահմէտ Րիզա ձերբակալուած է հարիւր համախոհներով, բայց տակաւին չկրցանք ստուգել:

Թալէաթը այսօրուան համար ուզած էր պատրիարքը:

Կեսարիոյ առաջնորդ Խոսրով եպ., որուն բանտարկութիւնը բերդարգելութեան փոխուած էր, հեռացւած է Կեսարիայէն, ապահովաբար ճամբան սպաննուելու համար:

Գերմանական դեսպանատունը այլեւս ոչ մէկ օժանդակութիւն կ'ընծայէ. բոլորովին երես դարձուցած է, չգիտենք ինչ պատճառով:

Խորհրդարանի մէջ քանի մը իսլամ երեսփոխաններ պիտի փորձեն եղեր հարցնել թէ իրենց բացակայ ընկերները ի՞նչ եղած են:

Հետզհետէ անհատական նամակներ կը հասնին Հա-

202.- Սիւեւոյն Դելալ պէյն է, Հալէպի նախկին նահանգապետը, որ մերժած էր գործադրել Թալէաթի հրահանգները:
203.- Չեր բարեկամները – ակնարկութիւն պուկարներուն:

լէպէն եւ ուրիշ վայրերէ, որոնց մէջ կը յայտնուի թէ այր մարդիկ անհետացած են եւ կիներն ու քանի մը մանուկներ մնացած:

Կիւրիինի 4-500 կիներն ու աղջիկները, որոնք Գոնիա հասած էին, երբեք լուր չուներն իրենց ամուսիններէն, եւ կը կարծեն որ անոնք ուրիշ ճամբով աքսորուած են...

Գրեցէք թէ որ դժուրը պիտի նետուինք երբ ձեր բա-

րեկամներն²⁰³ ալ միանան այս գազաններուն: Սեպտ. 4-էն ի վեր ոչ մէկ լուր ունինք ձեզմէ, մինչ մենք ստորկաբար կը կատարենք ձեր հրամանները. չգիտենք ինչպէս պիտի արդարանաք:

Համբոյրներով
ՎԻՇԱՊԻ ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄԻՆ

Փաստ. 1357-9

94.– ԼՈՆՏՈՆԻ «ՀԱՅՈՑ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԱՆԱՆՑ ԿՈՄԻՏԷ»Ի ԿՈՉԸ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅՈՒԹԵԱՆ

[Շրջաբերականի ձևով Կոչը, անգլերեն եւ ֆրանսերեն խմբագրութեամբ,
ուղարկուած է եւրոպական, յատկապէս չէզոք երկիրներու մամուլին]

Սեպտեմբեր 1915

Փաստ. 1357-9

“L'ARMENIE EXTERMINÉE”
Septembre 1915

A Monsieur le Rédacteur
Cher Monsieur,

Dans ce temps d'horrible crise de l'histoire de l'Arménie infortunée, Nous, “Le Comité des dames pour les fonds de secours aux Arméniens” sommes obligées de faire appel au monde Chrétien pour la sympathie de l'Arménie victime de l'incomparable injustice, en apportant le secours de nos dons à son peuple.

C'est le moment, certainement que toutes les nations neutres protestent au nom de l'humanité contre les crimes les plus affreux commis dernièrement et qui continuent encore, par les Turcs contre leurs sujets de l'Arménie dépourvus d'armes.

Le rideau épais de l'oubli et du silence qui avait couvert l'Arménie depuis la déclaration de guerre de la Turquie contre les alliés a été enfin partiellement soulevé et nous avons vu certaines réalités, d'incomparables horreurs, des massacres systématiques organisés contre les Arméniens de six vilayets, l'extermination entière de la nation, leur déportation dans les régions déserts où ils seront inévitablement perdus par la famine – et l'appropriation de leurs biens par les musulmans.

Toute la politique de Satan est arrivée à son point culminant. Les missionnaires sont expulsés de leurs régions de missions auxquelles ils se sont dévoués avec un héroïsme exceptionnel restant toujours – comme l'ombre de grandes roches dans un terrain altéré – entre le peuple et leurs persécuteurs.

Les dernières nouvelles qui nous arrivent de l'Amérique envoyées par nos amis missionnaires de Van, que nous avons soutenus et aimés en qualité de Comité collaborateur, s'enfuirent devant les Turcs, quand les Russes durent évacuer la ville de Van.– Le 17 Août ils sont arrivés à Tiflis, malades, découragés, abandonnés, Docteur Uscher gravement malade et Madame Raynolds souffrant de la fracture de sa jambe et pour achever la tragédie Madame Raynolds est décédée juste deux jours avant l'arrivée de son mari à Tiflis venant des Etats Unis d'Amérique où le Docteur Raynolds dirigeait une organisation dont le but était la réalisation d'un projet pour la fondation d'un collège à Van.

Aujourd'hui tous les amis du noble peuple Arménien doivent être pleins d'indignation et de chagrin – d'autant plus qu'ils sont envahis par la guerre terrible – et je suis sûr que nous tous également, désirons exprimer notre profonde douleur.

Nous les vieux amis de la cause, devons également avoir une aversion profonde pour les présentes cruautés qui brisent et anéantissent tous nos plans, nos espoirs, notre travail et notre zèle pour l'élévation de cette nation.

Mais nous pouvons faire plus que plaindre et regretter, nous pouvons et nous devons faire protester le plus énergiquement et solennellement pour faire connaître comme responsables la Turquie et l'Allemagne pour ce dernier et le plus grand crime envers l'humanité.

Aujourd'hui nous envoyons dans toutes les parties du monde où les Arméniens ont trouvé une hospitalité, notre sincère, profonde et fraternelle sympathie et nos vœux autant que nous le pouvons soit individuellement soit collectivement. – Nous verrons cette indépendance, car la justice et le droit complet dans la politique sont assurés à la nation Arménienne dans le congrès final de la paix qui suivra tôt ou tard la guerre Européenne.

Votre sincère
MADELAINE COLE

Trésorière honoraire du Comité des dames
pour les fonds de secours Arméniens à Londres

Թարգմանութիւնը.–

ՀԱՅԱՍՏԱՆ ԲՆԱԶՆՁՈՒԱԾ

Սիրելի պարոն խմբագիր,

Տարաբախտ Հայաստանի պատմութեան այս զարհուրելի տագնապի օրերուն, մենք՝ «Հայոց Օգնութեան հիմնադրամի կանանց կոմիտէն», հարկ կը զգանք կոչ ուղղելու ամբողջ քրիստոնեայ աշխարհին մեր համակրանքը ցոյց տալու անօրինակ անարդարութեան զոհ Հայաստանին, օգնելով անոր ժողովուրդին մեր նուիրատուութիւններով:

Ատենն է, վատահարար, որ բոլոր չէզոք ազգերը, յանուն մարդկութեան, բողոքեն այն ահաւոր ոճիրներուն դէմ, որոնք կը գործադրուին թուրքերու կողմէ, եւ կը շարունակեն գործադրուիլ, իրենց հպատակ ու անպաշտպան հայերուն վրայ:

Ինկած է վերջապէս, գէթ մասամբ, Հայաստանի վրայէն մոռացումի եւ լուութեան այն վարագոյրը, որ քաշուած էր թուրքիոյ կողմէ՝ դաշնակիցներու դէմ պատերազմի յայտարարութեան առաջին օրէն, եւ մենք տեսանք որոշ իրողութիւններ,– այն աննկարագրելի սարսափները վեց վիլայէթներու բոլոր հայերուն, ծրագրաւորուած կոտորածները, բնաջնջումը ամբողջ ազգին, անոնց տարագրումը ամալի վայրեր ուր անոնք, սովահար, կորուստեան պիտի մատնուին անխուսափելիօրէն, եւ սեփականացումը անոնց ինչքերուն մահմետականներու կողմէ:

Սատանայական այս քաղաքականութիւնը հասաւ իր գագաթնակէտին: Միսիոնարները արտաքսուեցան իրենց քարոզչական շրջաններէն, ուր կը գործէին անոնք նուիրումով, բացառիկ հերոսութեամբ, մեծ ապառաժներու ստուերին նման՝ կանգուն մնալով ժողովուրդին եւ անոր հարստահարիչներուն միջեւ:

Ամերիկայի ճամբով մեզի հասնող վերջին լուրերուն համաձայն,– զրկուած Վանի մեր բարեկամ միսիոնարներու կողմէ, զորս սիրած ու իրենց թիկունք կանգնած ենք որպէս գործակից կոմիտէ,– Անոնք փախուստ տուած են թուրքերէն երբ ուսները պարպած են Վան քաղաքը: Օգոստոս 17ին, անոնք հասած են Թիֆլիս, հիւանդ, յուսաբեկ եւ լքեալ վիճակի մէջ: Տոքթ. Լչըր ծանրօրէն հիւանդ եւ տիկին Ռէյնալտս՝ կոտորուած սրունքին պատճառած ցաւերով, եւ, ի լրումն ողբերգութեան, տիկին Ռէյնալտս մեռած է իր ամուսնոյն Թիֆլիս ժամանումէն ուղիղ երկու օր առաջ: Տոքթ. Ռէյնալտս կու գար Ամերիկայէն, ուր դրամահաւաք մը կը կազմակերպէր ի նպաստ՝ երկու տարիներէ ի վեր առաջադրուած քոլէճի մը հիմնումին Վանի մէջ:

Այսօր, հայ ազնուական ժողովուրդի բոլոր բարեկամները պէտք է վրդովմունքով եւ վիշտով համակուին, մահաւանդ որ սոսկալի պատերազմը տարածուած է նաեւ իրենց երկրին մէջ: Ես վստահ եմ որ բոլորս ալ կ'ուզենք արտայայտել մեր խոր տրամոլթիւնը:

Մենք, հին բարեկամներ [հայ] դատին, պէտք է խորունկ նողկանք զգանք նոյնպէս այժմ տեղի ունեցող գազանութիւններուն համար, որոնք կը խորտակեն ու կ'ոչնչացնեն մեր բոլոր ծրագրիները, յոյսերը, աշխատանքն ու եռանդը այս ժողովուրդի վերելքին համար:

Գանգատելէն ու ցաւելէն աւելին կրնանք ընել սակայն. պէտք է բոլորս բողոք բարձրացնենք, ուժգին եւ հանդիսաւոր կերպով, թուրքիան եւ Գերմանիան պատասխանատու հռչակել տալով մարդկութեան դէմ գործուած այս վերջին ու մեծագոյն ոճիրին համար:

Այսօր, աշխարհի բոլոր այն երկիրներուն մէջ ուր հայերը ասպնջականութիւն գտած են, անոնց կը յղենք անհատաբար թէ հաւաքական կերպով, մեր անկեղծ, խորունկ եւ եղբայրական համակրանքն ու բաղձանքները: Պիտի տեսնենք այս անկախութիւնը, որովհետեւ քաղաքական կեանքին մէջ արդարութիւն ու ամբողջական իրաւունք ապահովուած պիտի ըլլան հայոց ազգին համար, խաղաղութեան այն վեհաժողովին, որ ուշ կամ կանուխ պիտի յաջորդէ եւրոպական պատերազմին:

Անկեղծօրէն Ձերդ՝
ՄԱՏԸԼԷՆ ՔՈԼ

Պատուոյ գանձապահուհի
Լոնտոնի «Հայոց Օգնութեան հիմնադրամի կանանց կոմիտէին»

Փաստ. 1731դ-1

95.— A P P E L**Septembre-Octobre 1915**

Tandis que la guerre absorbe toutes les forces des grands Etats d'Europe et distrait l'attention du monde, la Turquie est le théâtre d'événements qui dépassent en horreur tous ceux auxquels nous assistons ailleurs et aussi tout ce qui s'est précédemment accompli dans les mêmes régions.

Il ne s'agit de rien moins que de l'anéantissement d'un peuple, les ARMÉNIENS, dans l'intention arrêtée d'établir dans l'Empire turc la domination exclusive de l'Islam.

Déjà des centaines de mille d'Arméniens ont été massacrés, ou bien, expulsés en masse de leurs villes et de leurs villages, transportés dans des lieux déserts en Mésopotamie et dans d'autres régions, ils périssent misérablement. Un très grand nombre, surtout les femmes et les enfants, sont contraints de se convertir à l'Islam.

Ces faits sont établis par l'affirmation de témoins oculaires, impartiaux, irrécusables en raison de leur caractère et de leur situation.

Les soussignés, tout en appelant le peuple suisse à venir matériellement en aide à ce qui reste du malheureux peuple arménien, attirent l'attention du monde entier sur ces faits et font appel à l'opinion publique dans tous les pays, afin que la sauvegarde des Arméniens survivants soit sans retard prise en mains par ceux qui peuvent exercer une influence à Constantinople.

MM.

Pfr. H. ANDRES, Bern.
 Prof. C. BÉGUELIN, recteur, Neuchâtel.
 Prof. Br. BLOCH, Basel.
 Prof. P. BÖHRINGER, Basel.
 Eug. BONHÔTE, conseiller national, Neuchâtel.
 Félix BONJOUR, conseiller national, Lausanne.
 Louis BONNARD, syndic, Nyon.
 Prof. E. BOVET, Zürich.
 H. BOVEYRON, président du Grand Conseil, Genève.
 A. BRÜSTLEIN, Advocat, Bern.
 Chr. BUCHMANN-SCHÄRD, Basel.
 Prof. CASTELLAZ, Fribourg.
 Francesco CHIESA, Tessin.
 Pfr. P. FLURY, Schiers.
 Pfr. Osk. FREL, Alt St. Johann.
 Pfr. K. FUETER, Olten.
 Dekan J. GANZ, Zürich.
 Prof. Lucien GAUTIER, Genève.
 Dr. Rud. GEIGY, Basel.
 Prof. Philippe GODET, Neuchâtel.
 Kirchenrat U. GUHL, Frauenfeld.
 C. GUTZWILLER, Basel.
 Stadtmann H. HÄSSIG, Aarau.
 Pfr. J. HAURI, Davos.
 Dr. Friedrich HEGAR, Zürich.
 Dr. Karl HENKING, Schaffhausen.
 Dr. Ed. HERZOG, Bischof der christ.-kat. schw. Kirche, Bern.
 Prof. Andreas HEUSLER, Basel.
 Alt Pfr. HUGENDUBEL, Bern.
 Stadtrat Aug. HUGGLER, Bern.
 Dir. E. IMHOF, Schaffhausen.
 Dr. Hans ISELIN, Basel.
 Pfr. Paul.-H. KIND, Schwanden.
 Prof. K. KIRCHHOFER, Schaffhausen.
 Stadtrat Conr. LEU, Schaffhausen.
 Alt. Reg.-Rat F. MANATSCHAL, Chur.
 Prof. K. MARTI, Bern.
 Prof. Alf. MARTIN, Genève.
 Dekan J. MEIER, Frauenfeld.
 Al. DE MEURON, conseiller national, Lausanne.
 Prof. G. MEYER VON KNONAT, Zürich.
 Pfr. E. MIESCHER, Basel.
 G. DE MONTENACH, conseiller aux Etats, Fribourg.
 Past. Alex. MOREL, Bern.
 Prof. Paul MORIAUD, Genève.
 Oberrichter P. MÜRI, Aarau.
 Dr. T. MUSY, présid. du Conseil d'Etat, Fribourg.
 Gustave-L. NAVILLE, Zurich.
 Prof. Ed. NAVILLE, Genève.
 Ern. FERRIER, procureur général, Fribourg.

MM.

Prof. Rob. CHODAT, Genève.
 Dr. H. CHRIST-SOCIN, Riehen.
 Th. DIETHELM, St-Gallen.
 Pasteur H. DU Bois, Neuchâtel.
 DUSSELLER, curé de Notre-Dame, Genève.
 Prof. Louis EMERY, Lausanne.
 Pfr. E. ETTER, Rorschach.
 Nat.-Rat H. EUGSTER-Züst, Speicher.
 Emile FAVRE, Lausanne.
 Léopold FAVRE, Genève.
 Henri FAZY, conseiller national, Genève.
 Pfr. H. FICHTER, Basel.
 D^r Jos. FRAGNIÈRE, protonotaire apostol., Fribourg.
 Pfr. C. PESTALOZZI, St-Gallen.
 Dr. PESTALOZZI-PFYFFER, Zug.
 Ern. PICOT, juge fédéral, Lausanne.
 Prof. Conradin PLANTA, Chur.
 Ed. QUARTIER-LA-TENTE, conseiller d'Etat, Neuchâtel.
 Prof. de QUERVAIN, Basel.
 Prof. L. RAGAZ, Zürich.
 Gonz. DE REYNOLD, Fribourg.
 D^r Eug. RICHARD, anc. prés. Conseil des Etats, Genève.
 Pfr. A. ROTHEBERGER, St-Gallen.
 Dr. César ROUX, Lausanne.
 Pfr. E. RYSER, Bern.
 Pfr. A. SALIS, Basel.
 Alfred SARASIN, Basel.
 Stadtrat Samuel SCHERZ, Bern.
 Pfr. A. SCHLATTER, Herisan.
 Pfr. Th. SCHLATTER, St-Gallen.
 Pfr. E. SCHNYDER, Schaffhausen.
 Pfr. Emil SCHULTZE, Chur.
 Ed. Secrétan, conseiller national, Vaud.
 Paul SEIPPEL, Genève.
 Prof. G. SENN, Basel.
 Prof. Fr. SIEBENMANN, Basel.
 Jean SIGG, conseiller national, Genève.
 Pfr. Ant. SPEHN, Zürich.
 Prof. E. STEHELIN, Basel.
 Dir. Rud. STAUB, Baden.
 Dr. von TAVEL-STETTLER, Bern.
 Pfr. C. TICHLER, Herisau.
 E. USTERI-PESTALOZZI, Zürich.
 VIRIEUX, directeur Banque cantonale, Lausanne.
 Prof. Eberh. VISCHER, Basel.
 D^r Wilh. VISCHER, Basel.
 Jean DE WATTENWYL, Bern.
 Ständerat Dr. O. WETTSTEIN, Zürich.
 Pfr. G. WIKEMANN, Rothrist.
 Leo v. WYSS, Thalwil.

Թարգմանությունը –

Փաստ. 1683-10

ԿՈՉ
ՉՈՒՑԵՐԻՈՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ
Պազել, 11 Հոկտեմբեր [1915]

Մինչ պատերազմը կը սպառէ երոպացի պետութեանց բոլոր ուժերը եւ կը գրաւէ ամէնուն ուշադրութիւնը, Թուրքիան թատերաբեմ է այնպիսի դէպքերու, որոնք նոյնիսկ սարսափելիին վարժ մեր ժամանակներուն համար՝ ահաւոր են եւ կամ գործուած ըլլան նախապէս միեւնոյն այդ շրջաններուն մէջ:

Հարցը կը վերաբերի քրիստոնէայ ամբողջ ժողովուրդի մը՝ ՀԱՅԵՐՈՒՆ կազմակերպուած բնաջնջումին, որ թուրք կայսրութեան մէջ ներկայիս կը գործադրուի բացառաբար իսլամական տիրապետութիւն հաստատելու նպատակով:

Արդէն կոտորուած են հարիւր հազարաւոր հայեր, եւ կամ, արտաքսուելով իրենց քաղաքներէն ու գիւղերէն, անոնք կը մեռնին թշուառ վիճակի մէջ Միջագետքի անապատներուն եւ այլ շրջաններու մէջ: Մեծ թիւ մը անոնցմէ, ի մասնաւորի կիներ եւ երեխաներ, բռնադատուած են մահմետական դառնալու:

Այս իրողութիւնները հաստատուած են վկայութիւններովն ու զեկոյցներովը այնպիսի անխաթար անձերու, որոնց [ծանօթութիւնը] հիմնուած է սեփական տեղեկութիւններու վրայ:

Ստորագրեալները, կոչ ուղղելով զուիցեքիացի ժողովուրդին նիւթապէս օգնութեան հասնելու տակաւին ողջ մնացած դժբախտ հայերուն, միաժամանակ այս իրողութեանց վրայ կը հրաւիրեն ուշադրութիւնը բոլոր երկիրներու հանրային կարծիքին, որպէսզի անյապաղ ձեռնարկուի վերապրող հայերու վրկութեան գործին՝ անոնց կողմէ որ ազդեցութիւն կրնան բանեցնել Կոստանդնուպոլսոյ վրայ:

Կոչը կը կրէ հետեւեալ անձնատրութեանց ստորագրութիւնները.

[Կը հետեւին անուններ, տես էջ 166]:

Փաստ. 1683-11

96.- ԶՈՒԻՑԵՐԻԿԱՑԻ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԿՈՉՐ

(Թարգմանութիւն գերմաներէն բնագրէն)

ՀԱՅԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Ներկայ սարսափելի ժամանակաշրջանին անհամար դժբախտութիւններ մեր օգնութեան կարիքը կը ստեղծեն: Զուիցերիական Բարեգործութիւնը արդէն մեծահոգի գործ տեսած է անոնց համար, որոնք պատերազմէն կը տուժեն, մեր մօտ կամ մեզի դրացի երկիրներէն ներս: Բայց եւ այնպէս Զուիցերիոյ մէջ գոյութիւն ունեցող հայերուն օժանդակութեան կոմիտէները այս դժբախտ ժողովուրդին համար, որուն ներկայ տառապանքը երբեմնի դժբախտութիւնը կը գերազանցէ, օգնութեան նոր կոչ մը ուղղելու ստիպողութեան տակ են: Անտարակուսելի եւ վստահելի լուրերու համաձայն, հարիւր հազարաւոր կիներ եւ երեխաներ թրջական տուներու մէջ քաշքուտուած են կամ տարագիր են, իսկ ատակ ալրերը անգութօրէն կոտորուած: Ներկայ պատերազմի զոհերուն մէջ չկան ասոնց չափ ամբողջութեամբ մերկացածներ եւ այնքան ուղղակի կերպով անօթութեան եւ ամէն տեսակի գրկանքներէ վրտանգուածներ: Եթէ դուրսէն օժանդակութիւն չհասնի, ժողովուրդին կը սպառնայ ամբողջական բնաջնջում:

Ներկայիս դեռ դժուար է դէպի Միջագետք տարագրուած հայերուն ապահով կերպով օժանդակութիւն հասցընել: Ընդհակառակն ռուսերու ժամանակաւոր նահանջը աւելի քան 250000 հայեր ստիպեց լքել իրենց հայրենիքը, յատկապէս՝ Վանի շրջանէն դէպի Կովկասի անհիւրընկալ շրջանները փախչելու համար: Այդտեղ ահաւոր թշուառութիւն կը տիրէ. հազարաւոր երեխաներու ծնողները մահացած են, կամ գաղթի ընթացքին անոնցմէ բաժնուած: Կովկասահայերէ կազմուած կոմիտէներ գործօն են, բայց իրենց կը պակսին միջոցները, իսկ ձմեռը կը մօտենայ: Անմիջական կարիքը առկայ է, որ իրենց օժանդակութիւն հասնի: Երանի թէ մեր այնքան լաւ պաշտպանուած ժողովուրդէն շատեր անոնց համար գութ ունենան:

Մասնակցութիւնները կ'ընդունուին պարոն Կոնր. Պեստալոցցիէն՝ Պեստալոցցիշերասը 50, Յիւրիխ (Postscheck VIII 2562), եւ Աւետարանական Ընկերութեան գրախանութէն՝ Պետերշերասը, Յիւրիխ ((Postscheck VIII 344), ինչպէս նաեւ հայերուն համար զուիցերիական կեդրոնական գանձապահ պարոն Ֆ. Տիւպապքիէ, Քոմբա Բորել 6, Նոյընբուրգ (Postscheck IV 467):

Յիւրիխ, 25 Հոկտեմբեր 1915

Im Namen der Schweizerischen Hilfskomitees für die Armenier:
Pfr. H. DuBois, Neuenburg, Präsident des Schweizerischen Zentralkomitees; a. Pfr. L. v. Wyß, Thalwil, Präsident des Zürcher Hilfskomitees; Dr. Pestalozzi-Pfiffner, Zug, Vizepräsident; Konrad Pestalozzi, Zürich, Quästor; Rektor J. Schürter, Aktuar; Prof. S. Abelfanz; a. Prof. S. Keffelring; Pfr. P. Liechti; Dr. J. Stöckel, Regierungsrat; Dekan J. Ganz; Pfr. D. Herold, Winterthur; Pfr. Zimmermann, Greifensee; Pfr. Ant. Spehn, St. Antoniuskirche, Zürich; Dr. Ant. v. Schultheß, Präsident der Schweizerischen Gemeinnützigen Gesellschaft; Pfr. S. Hirzel, Präsident der Zürcher Kantonalen Gemeinnützigen Gesellschaft; G. Heß-v. Schultheß, Präsident der Hilfsgesellschaft in Zürich; Prof. E. Dövet, Zürich; Dr. Fr. Hegar; Prof. Dr. G. Meyer von Knonau; Gustave Naville, Kilchberg; Prof. L. Nagaz, Zürich; A. Coradi-Stahl, Waifenrat; Dr. C. A. Schmid, Sekretär der Zentralauskunftsstelle für Armenpflege und soziale Fürsorge; Privatdozent R. Seidel, Nationalrat; E. Usteri-Pestalozzi; Dr. D. Wettstein, Ständerat.

Փաստ. 1213-35

97.- ԱՄԱՏՈՒՆԻԷՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԵԻՆ

Հասցե.- Amadouni
198 Calea Mosilar
Bucarest, Rumania
Կ. Կ.ի համար

14/27 Հոկտ. 1915, Պոլսքէ

Ինչպէս կ'իմացուի Յ. Ամատունիի ստորեւ տրուած նամակէն, Պուկարիոյ պատերազմի մուտքով՝ գերմանո-աւստրիա-թուրք զինակցութեան կողքին, պիտի խափանուէր ոչ միայն Պալքանի Կ. կոմիտէութեան գործունէութիւնը, այլեւ պիտի կտրուէր յարաբերական կապը Պոլսոյ Առժամեայ մարմնին հետ: Ատով ալ կը բացատրուի երեք շաբաթ թոթակցութեան ընդհատումը Պոլսոյ եւ Սոֆիայի միջեւ: Յ. Ամատունի, որ Կ. կոմիտէի կարգ մը անդամներուն հետ անցած էր՝ մինչ այդ ոչ-պատերազմիկ Ռումանիոյ մայրաքաղաքը, պիտի շարունակէր ատեն մը եւս Երկրի անցուդարձերու մասին ստացուած սակաւաթիւ եւ հատուկտոր տեղեկութիւնները փոխանցել արտասահման, գլխաւորաբար Եգիպտոս, Ամերիկա եւ, վերջիններու ճամբով ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան: Առաջին այս նամակին յաջորդող Ամատունիի գրութիւնները (Փաստ. 1213-36, 1213-50, 1213-55) ընդհանրապէս զաղտնի մելամուղ գրուած են, «բացուած» եւ արտագրուած Եգիպտոսի կոմիտէի ներկայացուցիչ Արտաւազը Հանրմեանի կողմէ:

Սիրելի ընկերներ!

Այն ինչ որ մենք կ'ուզէինք ձեզի թելադրել նամակաւ մը արդէն դուք մտածած էք ու ձեր նամակը փոխան Սոֆիայի, ուղղած էք Պոլսքէ, որը այսօր ստացայ եւ պարունակուած թիւերը տեղեկագրեցի Կ. Կ.ին:

Կը փութամ կարգ մը տեղեկութիւններ տալու ձեզի: Գիտէք թէ ինչպէ՞ս պատահեցաւ Պուկարիոյ (Երբեակ) Զինակցութեան²⁰⁴ կողմը անցնիլը. աւելորդ է այդ նկատմամբ բացատրութիւն, միայն այնքան կրնանք ակնարկել թէ այդ պայմանագրութիւնը կնքուած է եղեր Յամիս առաջ. միայն Թուրքիոյ հետ հողային գիշտման սահմանագծումը կը մնար անորոշ, որը վերջերս ճշգրտեցաւ: Թէ իրապէս պուկար ազգին բաղձանքն էր այս ձեւի միջամտութիւն, այս կէտին շուրջ կարծիքները կը տարբերին: Իմ կարծիքով այս ապերախտութեան սեւ մուրը քսուած է Սոֆիայի մտաւորականութեան մեծամասնութեան ճակատին, մասնաւորապէս գինուորականութեան, շատ հասկնալի՝ գինուորական հոգեբանական տեսակէտէն նայելով: Պայթում մը դէպի ուժեղ միլիթարիզմը, որուն անուշ խաթերը համար համբուր-լեցան նաեւ իրենց նախկին դահիճին հետ. իսկ գլխաւոր պատասխանատուն, ինքը սահմանադրութիւնն է, որ տուած է այնքան լայն իրաւասութիւն երկրին գերմանացի վեհապետին: Փոքրաթիւ մտաւորական հակառակորդները կը հալածուին այնպէս, ինչպէս հայերը թուրքերի մէջ: Թէ ինչով կը վերջանայ պուկար վեհապետի եւ միլիթարիզմի խելագար յաւակնութիւնները, կարելի է այժմէն նախատեսել:

Ինչպէս գիտէք, «Հայաստան» դադար առաւ. երկար ատեն թուրք դեսպանատան աչքին փուշը եղած էր ու ամէն միջոց ներքի էր մուծին մէջէն դաւելու, սակայն ցորչափ Պուկարիոյ դիրքը չէր ճշդուած վտանգ չկար. սակայն զօրակոչէն յետոյ մենք զգացինք թէ մեզ համար ստեղծուեցաւ ճնշող դրութիւն մը: Մեզի լաւ ծանօթ բարեկամ կարեւոր պաշտօնեայ մը թելադրեց մեզի դադարեցնել թերթը, որովհետեւ այլապէս պիտի գայ օր մը որ կառավարութիւնը պիտի դադարեցնէ, որը տեսակ մը թուրքերու ցանկութիւնը պիտի լրացնէ, աւելի լաւ պիտի ըլլար հող չհասցնել. տրամաբանական թուեցաւ եւ դադարեցուցինք:

Անդամալուծուեցաւ նաեւ Կ. Կ.ի գործունէութիւնը. փոխադրուեցաւ ապահով տեղ մը ամբողջ արխիւը. հեռացան բոլոր մտաւորական ընկերները եւ հոն մնաց միայն ընկեր Լեռնեան²⁰⁵ տեղացի Կ. Կ.ի ընկերներուն հետ միմիայն Վիշապի եւ դուրսի հետ յարաբերութեան կապ պահելու համար: Միւս ընկերները անցան Կովկաս եւ ես մնացի հոս արտասահմանի եւ Մարուստանի²² միջեւ յարաբերական կապը պահելու համար, մինչեւ այնքան ատեն որ հոս կարելի կ'ըլլայ մնալ:

Յարգ Պուկարիոյ բարեկամական դիրքը չէ փոխուած հայ ժողովուրդի հանդէպ. թէեւ կաշառուած գաղտնի ոստիկանութիւնը չափազանց եռանդուն գործունէութեան մը դիմեց, նոյնիսկ հրամայեց «Հայաս-

204.- Երբեակ Զինակցութիւն կը կոչուէր գերմանո-աւստրիական-թուրք ճակատը:
205.- Լեռնեան – Նազարեանց Լիպարիո:

տան»ի շուրջ գտնուողներուն հեռանալ Պուլկարիայէն, սակայն մեր դիմումները մերկացուցին կեղծիքը եւ ամօթի սիւնին գամուեցաւ գաղտնի ոստիկանութեան ընդհ. տնօրէնը եւ կառավարութիւնը յայտարարութեամբ մը ապահովեց[ուց]:

Տարագիր ընկերներու ընտանիքները եւ Պոլսէն խոյս տուած մտաւորական ընկերուհիներ, այս օրերս ամէնքն ալ միասին դրկեցինք Կովկաս, նկատի ունենալով որ թէ՛ Սոֆիայի մէջ կրնայ անպատեհ ըլլալ անոնց մնալը եւ թէ անդին կրնան օգտակար ծառայութիւններ մատուցանել:

Սոֆիայի եւ Վիշապի միջեւ յարաբերութիւնը նոյնութեամբ կը շարունակուի: Վերջին եկած տեղեկութիւնները ցոյց կու տան որ քիչ մը աւելի մեղմացած կը թուի:

Նիկոմիդիոյ չըջնի հայութիւնը թէեւ տեղահան, սակայն կոտորած բնաւ չէ եղած, բացի Չենկիլէրէն եւ Պանտրմայէն — որտեղ կուտած եւ հերոսաբար մեռած են. մնացողները փոխադրուած են Գոնիա: Էսկիշէհիւրէն մինչեւ Գոնիա եւ Պոզանթի ամբողջ տափաստանները վրաններով լեցուած են. օրական մէյ մէկ քիչ հաց կը տրուի իւրաքանչիւրին: Նախկին Հալէպի եւ վերջերս Գոնիայի վալին ձէլալ պէյ չափազանց լաւ կը վարուի եղեր գաղթականութեան հանդէպ, սակայն վերջին նամակով իմացանք որ պաշտօնանկ եղած է իբրեւ հայերու բարեկամ:

Վերջերս մեզի դիմեց պատրիարքը ընդհանուր հան-

գանակութեան մը ձեռնարկելու համար ի նպաստ տեղահանուածներուն, ապահովեցելով թէ պիտի կրնայ հասցնել անոնց: Չենք գիտեր որքան ճշմարիտ է այս սակայն եւ այնպէս մենք գրեցինք Կովկաս, Ամերիկա եւ ձեզի ալ կը գրենք նոյնը: Յոյս ունինք որ միջազգային Կարմիր խաչի նախագահը պիտի կարենայ օգնութեան հասնիլ կերպով մը. անոր դիմում կատարուած է արդէն:

Ահմէտ Ռիզան հարցապնդում դրած էր եւ պաշտպանները եղած էին Ֆուատ փաշա, նախկին ելեւմտական նախարար Նայիլ պէյ, նախկին ծովային՝ Մահմուտ փաշա, նախկին սպարապետ Իզզէթ փաշա, Խուլուսի պէյ եւ ուրիշ շատեր, սակայն Թալէպթ յայտնապէս սպառնացած է այս խնդիրը յուզողներուն եւ պաշտպաններուն, պահանջած է որ ետ առնուի հարցապնդումը, սակայն նա մերժած է: [Ահմէտ Ռիզա] Թաքիր մը տուած է կառավարութեան որ Սեպտ. 13-ի նոր օրէնքի (տեղահանուածներու ամբողջ ինչքերուն գրաւում) գործադրութիւնը յետաձգուի, առաջարկ մը ներկայացուցած է ծերակոյտին՝ տեղահանուածները եղած տեղերին տեղաւորելու եւ պետական նպաստ տալու: Ծերակոյտը միաձայնութեամբ ընդունած եւ յղած է կառավարութեան:

Պալք[անեան] Կ. Կ-ի կողմէն
ԱՄԱՏՈՒՆԻ

Յաջորդ նամակը փորձեցէք ջրապակի[ով բանալ]:

Փաստ. 1213-36

98.— ԱՄԱՏՈՒՆԻԷՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԷԻՆ

17/30 Հոկտ. 1915, Պուրթշ

Սիրելի ընկերներ!

Կը հաստատեմ թիւ 1 նամակը, բաց գրով. կը յուսամ ստացաք: Գրած էի որ ջրապակիով բանաք այս նամակը. հետեւեալ ձեռով կը պատրաստէք մելանը — գրչի ծայրով Ֆէնոլ ֆթալէին կը դնէք շատ մաքուր ու օդի չոր գաւաթի մը մէջ, վրան քանի մը կաթիլ մաքուր ալքոլ. լաւ մը լուծելէ յետոյ կը լեցնէք քիչ մը ջուր որ կը դառնայ կաթի նման. անոր վրայ քանի մը կաթիլ ամոնիաք, եւ կը ստանաք մելանը. կը բացուի ջրապակի սիլիքատ տը սուտով. եթէ հարկ ըլլայ կարեւոր բաներ գրելու ծածկամելանով կրնաք գրել:

Այդտեղ կամաւորներու արձանագրութիւն կ'ըլլայ

եղեր. ի՞նչ բանի համար. արդեօք Կիլիկիոյ համար կարգադրութիւն մը ունիք:

Գոնիայէն ստացանք նամակ մը, որուն մէջ կ'ըսուէր թէ Ատանայի իսլամ բնակչութեան առաջին կարաւանը հոն հասած է եւ կ'ակնկալուի ուրիշներու գալուն. իբր թէ Ատանայի վրայ ռումբեր կը տեղան եղեր իտալացիներու կողմէ եւ վիլայէթին կառավարութիւնը փոխադրուած է Պոզանթի: Հոս այս մասին բան մը իմացած չենք. դուք բան մը գիտե՞ք, հաճեցէք գրել:

Կովկասէն մենք ալ նամակ չենք առներ. ընկեր Արգումանը գնաց. կը յուսանք շուտով տեղեկութիւններ ունենալ:

Յ. ԱՄԱՏՈՒՆԻ

Փաստ. 1213-55

99.- Յ. ԱՄԱՏՈՒՆԻԷՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԷԻՆ

26 Հոկտ./6 Նոյ. 1915, [Պուրթէշ]

Աւելի լաւ է որ այս մեղանով գրէք եթէ չափազանց կասկածելի ըլլայ գրածնիդ. եթէ երկիրը մուտ գտնող թերթի մը — եթէ թուղթին վրայ մեղանը չի ցրուիր — լուսանցքին վրայ գրել եւ միայն թերթը դրկել:

[Չորս տողի չափ բաց տեղ. հաւանաբար գաղտնի մեղանը չբացուած ու իմաստը չվերծանուած բաժին]:

Այս օրերս Կովկասէն սուրհանդակ կ'ակնկալեմ. հասնելէ յետոյ պէտք եղած նորութիւնները ձեզի կը գրեմ:

Օր մը առաջ հոս հասաւ Պոլսոյ սուրհանդակը. այս գիշեր կը վերադառնայ նոր հրահանգներով: Տրուած տեղեկութիւններուն նայելով բաւական լաւացած է կացութիւնը: Զերբակալութիւնները դադրած են: Ըստ երեւոյթին ներքին խոշոր երկպառակութեան մը առջեւ կը գտնուի Իթիթիհատը: Ահմէտ Ռիզան կը ներկայանայ հակառակորդներու շէֆը: Մերակոյտին մէջ խօսքը ուղղելով արտաքին գործոց նախարար Խալիլին ըսած է. «Կը յուսանք [որ] մեր կայսրութեան գործերը մեզմէ չես ծածկեր, ինչպէս ձեր նախորդը կ'ընէր: Այսօր մեր կայսրութեան գինուորութիւնը եւ ելեւմուտքը քայքայուած է. Թուրքիան բաժանելու օրերը կը մօտենան...»:

Այդ միջոցին էնվերի բարեկամները գոռումով վրան կը յարձակին, սակայն իր կողմնակիցները կը պաշտպանեն մինչեւ կը լրացնէ իր ըսելիքը: Նիստէն յետոյ կը ձերբակալուի, բայց գահաժառանգի միջամտութեամբ ազատ կը թողուի:

Քանի օրէ ի վեր բժիշկ Զաւրիեւը հոս է կարելի է կը մնայ այժմ²⁰⁶ կ'աճապարեմ, յետոյ թերեւս գրեմ: Այստեղի անցուղարձերու վրայ երկար բացատրութիւններ տուի. պէտք է զգոյշ լինել, կ'ըսէ, որովհետեւ մեր ներքին անհամաձայնութիւնը անգլո-ֆրանսական դիւանագիտութեան վրայ չափազանց յոռի տպաւորութիւն կը թողու: Անոնք կ'ենթադրեն թէ ապագային վէճերը պակաս չեն ըլլար եւ միշտ բաց դուռ կը մնայ ռուսական միջամտութեան: Առհասարակ պէտք է ցոյց տալ կառավարելու հասունութիւն: Ովքեր կը սիրեն գործը՝ անոնք պէտք է որ զոհեն:

Սահմանին միւս կողմը Ֆերտինանտը²⁰⁷ բացարձակ բռնաւոր (տիքթաթոր) է. կացութիւնը չափազանց ծանրացած է: Ընդդիմադիրները անխնայօրէն կը հալածուին: Այստեղ է Ռատկօ Տիմիթրիեւ, ուրիշ ռուսական ժեներալի մը հետ, ու կ'աշխատին համոզել ռումանացիները՝ այստեղէն խոշոր բանակ մը անցընելու եւ Ֆերտինանտի ձեռքէն ազատելու համար Պուլկարիան:

Ընկերական ջերմ բարեկներով
Պալքանի Կ. կոմիտէի կողմէ
Յ. ԱՄԱՏՈՒՆԻ

206.- Կիտաւորները հաւանաբար «չբացուած» խօսքեր են:
207.- Ֆերտինանտ — Պուլկարիոյ քաղաք: Ռատուլաւով վարչապետ:

Փաստ. 1213-50

100.- ԱՄԱՏՈՒՆԻԷՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԵԻՆ
(N° 3 կամ Հ. Յ. Դաշնակցութեան Եգիպտոսի կոմիտէին)

1/14 Նոյ. 1915, Պաքրէշ

Ընկերներ!

Կը հաստատեմ նախորդ ծածկագիրը. չեմ գիտեր առիթ թէ ոչ: Նախորդ նամակով ըսած էի հետեւեալը.

Դէպքերը դասավէժօրէն կը թաւալին Պալքանի մէջ: Պուլկարիան ոչ միայն գործեց զարհուրելի դաւաճանութիւնը, այլ նաեւ սկսած է հետեւիլ թրքական ոճրագործ սխիթեմին. հալածանք ամէնուրեք: Հաւատացուցին մեզ թէ պիտի մնան միշտ բարեկամ, սակայն գործը խոստումին չյարմարեցաւ. հայերը լուրջ կերպով ճնշման տակ են: Սրիկայ Ռատոսլավոֆը թող է տուած Ֆէրտինանտի գիշատիչ ախորժակին: Սոֆիայի մէջ գրեթէ անդամալուծեցին մեզ եւ մեր գործունէութիւնը. մտաւորական մարդ միմիայն ընկեր Լեռնեանը մընացած էր, տեղացի ընկերներուն հետ վարելու գործը, մանաւանդ յարաբերականը, հնարաւոր չափով, բայց վերջին պահուն կ'իմանամ թէ ան ալ ենթարկուած է աքսորականքի: Քանի մը օր առաջ իրմէ ստացայ բաց նամակ մը, ուր կը հասկցնէր թէ պիտի մեկնի, բայց չի գիտեր ուր. հասցէն պիտի գրէր սակայն ցարդ լուր չեկաւ:

Խնայարուեցաւ նաեւ մեր Վիշապի յարաբերութիւնը. 15 օրէ ի վեր նամակ չի գար բնաւ. կ'աշխատինք հոս կապել յարաբերութիւնը:

Մէկ շաբաթ առաջ Վիշապի սուրհանդակը հոս եկաւ. եւ մի քանի օր մնալէ յետոյ վերադարձաւ. նա հաղորդեց թէ Պուլսոյ մէջ խստութիւններ դադրած են, հին ուժգնութիւնը չունին. Վիշապի հայերը կը պահեն իբրեւ պատանդ, «որ եթէ Դաշնակցութիւնը փորձէ տերորի գործ, այն ատեն պիտի կոտորենք բոլոր հայերը»:

Ըստ երեւոյթին յագեցած չեն տակաւին: Պուլկարիոյ մասնակցութիւնը հայերը յուսահատութեան մատնած է: Կը մտածեն որ այլեւս փրկութիւն չկայ:

Կովկասէն ստացայ նամակ. այսօր մեր սուրհանդակը եկաւ: Այնտեղ մերիններուն եւ ռուսերուն միջեւ եղած ցրտութիւնը վերջացած է. նոր փոխարքան բաւական լաւ կարգադրութիւններ ըրած է եւ ատկէ յետոյ զինուորական նոր շարժումը սկսած է. մանաւանդ քիւրտերը մաքրելու անհասկացողութիւնը հարթուած է: Իշխան Արդուլթեանի գունդը (նոր գունդ, 6-7000 հոգի, որ նոր կ'երթայ ռազմադաշտ) անցած է Մանագկերտ, անկէ յետոյ, նոյն ուղղութեամբ Անդրանիկի գունդը:

Համագասպը անցած է Լոռիի[?] հարաւային կողմէն դէպի Սղերդ եւ Սասնոյ շուրջը. անպայման պիտի հասնին Սասուն: Քեռին ալ իր գունդով պիտի մեկնի Մանագկերտ. իսկ Դրոն անցած է եղեր 200 ընտիր հեծեալներով Շամ-Իգտիր գիծը խզող քիւրտերը մաքրագործելու: 30 քիւրտական գիւղեր ջնջած է եւ դարձած է իր ամբողջ գունդով. պիտի հետեւի Համ[ագասպ]ին. անոնց միսիան պիտի ըլլայ առաւելագոյն քիւրտերու մաքրագործման կարեւոր պաշտօնը: Երկու նոր քորբուս եւս կ'ուղարկէ փոխարքան ռազմաճակատ: Ռուբէնը կանչուած է Բեթրոկրատ, այնտեղ զեկուցում տալու համար. հաւանաբար օգտակարութիւն ունենայ: Փափագեանը տիֆոյ վարակուած է եղեր, բայց հիմա լաւացած է.

Պալքանի վիճակը, ինչպէս գիտէք, աւելի նպաստաւոր եղած է գերմանօ-թուրք-պուլկարական բանակներուն, սակայն ըստ երեւոյթին շուտով պատկերը պիտի փոխուի: Այսօր Ֆրանսական կցորդին քովն էի. նա ըսաւ, թէ ցարդ 250.000 զօրք Սելանիկ հասած է. անոնց թիւը պիտի հասնի կէս միլիոնի: Ռուսաստանը, ինչպէս կը հաստատէ մեր սուրհանդակն ալ, Պեսարապիա կեդրոնացուցած է 600.000 զինուոր, որ պիտի շարժուի դէպի Պալքան, եթէ նոյնիսկ Ռուսմանիան չհամաձայնուի, ինչպէս պատահեցաւ Յունաստանի հետ:

Տաճկահայ տեղահանուածներու օգտին քուէարկուած է 50.000 ռուբլի էջմիածինէն, նոյնքան՝ Ազգային բիւրոյէն, նոյնքան ալ Մոսկուայէն եւ Բեթրոկրատէն, ու պիտի հեռագրուի Ամերիկա, նոյնքան ալ անկէ, եւ ամերիկեան կառավարութեան միջոցաւ պիտի բաշխուի տեղահանուածներուն՝ ամերիկեան ներկայացուցիչներու միջացաւ: Յետոյ նորէն պիտի շարունակուի օգնութեան գործը:

Տք. Զաւրիւելը այստեղ եկաւ եւ կը մնայ հոս քանի մը շաբաթ որոշ միսիայով (ծածուկ կը մնայ եւ պէտք է լուռ մնաք հոգ ալ): Այդտեղի ինդիւրներու շուրջ երկարօրէն բացատրութիւն տուի, թելադրեց որ հանդուրժենք եւ լուռ մնանք. այդ կը պահանջէ մեր քաղաքական շահը:

Պալքանի Կ. Կ.ի կողմէն՝
ԱՄԱՏՈՒՆԻ

Փաստ. 1213-52

101.– Յ. ԱՄԱՏՈՒՆԻԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

20 [Նոյ.] / 2 Դեկտ. 1915
Bucarest – Rumania

Միրելի ընկերներ,

Ցարդ ունի նամակ չստացանք ձեզմէ. արդեօք մեր նամակները ձեզ չհասան, թէ ոչ ծածկագիրները չկրցիք բանալ: Հետզհետէ կը սկսին յարաբերութիւնները դժուարանալ եւ մենք կը սկսինք աշխարհէն կտրուել:

Անցեալ նամակներուն գրած էի որ բժիշկ Ջաւրիելը հոս է. տակաւին կը մնայ. ձեռնարկը չվերջացաւ. յոյս ունինք թէ քանի մը օրէն կը լմննայ. չենք գիտեր տղայ կ'ըլլայ թէ ոչ աղջիկ:

Անցեալ անգամ գրած էի արդէն ճերմակի²⁰⁸ նկատմամբ, որ դուք ուզած էիք Ամերիկայի շրջանին համար. նոր բան չեմ աւելցնէր. միայն կը հաստատեմ առջի գրածներս:

Ընկեր Լեռնեան²⁰⁵ կանչուեցաւ Եգիպտոս «Յուսաբեր» ի խմբագրութեան համար: Բացի շուէտական-Լոնտոն ճանապարհէն, ուրիշ ճանապարհ չկայ. անկէ ճամբայ դնելու համար Ռուսաստանէն անցնիլ պէտք է, իսկ Լեռնեանին մոտքը ապահով չէ Ռուսաստան. եթէ արտօնութիւն կարենանք առնել պիտի երթայ:

Թիֆլիս գրած էինք ձեր Պալքան զրկած գումարներու հաշուոյն նկատմամբ. անոնք հոս դիտողութիւն ըրած էին, որ մենք գրամ կը ստանանք եւ հաշիւ չենք տար: Ձեզմէ ստացուած գումարներուն գործադրութեան նկատմամբ այժմ մանրամասնօրէն հնարաւորութիւն չունի Կեդր. կոմիտէն գուտ քաղաքական պայմաններու անյարմարութեան պատճառաւ, սակայն վերիվերոյ կարելի է գրել: Ձեր զրկած գումարներէն 8000 Ֆրանք տրուած է պուլկար թագուհւոյն. մաս մը ուրիշ գումարներու հետ զրկուած է Վիչապ, որոնց համար ընկալագիրներ չկան, իսկ վերջին 3200 Ֆրանքը կը մնայ գանձին մէջ. իսկ Թիֆլիս փոխադրուած գումարը զրկեցին, նաեւ ուրիշ գումարի հետ. միասին կը գործածուի Բժիշկին¹³² ձեռնարկին վրայ: Ապագային յարմար առթիւ կը տրուի ձեզի մանրամասն հաշուեկշիռապահով եղէք. անշուշտ կ'աճապարէք պատգամաւորական ժողովին ներկայացնելու. գիտեմ, եւ պատգա-

մաւորական ժողովն ալ նկատի ունենալով այս տարուան բացառիկ պայմանները, շատ խստապահանջ չ'ըլլար:

Վիչապի հետ մեր յարաբերութիւնը գրեթէ դադար առաւ. Պուլկարիոյ քաղաքական կացութեան պատճառաւ: Քանի մը օր առաջ ընկեր Արզումանեան անցաւ Սոֆիա, այնտեղէն յարաբերութեան նոր գիծ մը ստեղծելու. եթէ հնարաւոր ըլլայ, կը յուսանք թէ յաջողուի այնպէս, որ նոր տեղեկութիւններ կ'ունենանք հաղորդելու: Միմիայն Պոլսէն եկողներէն հատուկապէս տեղեկութիւններ կ'առնենք, որոնց ճշդութեան չենք կրնար վստահիլ: Ըստ երեւոյթին այժմ խստութիւններ չկան եւ դուրս կու գայ, որ Նիկոմիդիոյ եւ Եւրոպական Թուրքիոյ շրջաններու տեղահանութիւնը համեմատաբար շատ աւելի թեթեւ եղած է. ջարդ բնաւ չէ եղած եւ տեղահանուածները չեն քշուած աւելի հեռուն քան Կիլիկիա. արդէն շատերէն նամակներ կը հասնին զանազան վայրերէ: Իսկ հայկական նահանգներուն [մէջ] զարհուրելի բաներ պատահած ըլլալն օրէ օր ստացուած փաստերը կ'ապացուցանեն:

Տոքթ. Լեփսիուս քանի մը օր առաջ հոս եկաւ եւ վերադարձաւ. Տոքթորին նայելով թէ եւ մամուլին արգիլուած է բան մը գրել, սակայն Գերմանիոյ մէջ բաւական աղմուկ բարձրացած է, որ պատճառ տուած է սրիկայ Ռեպենտոյթի ծանօթ յօդուածները գրելու: Կը հրատարակուի 600 երեսնոց գիրք մը, որուն մէջ ամփոփուած պիտի ըլլայ բոլոր դոկումենտները, ապացուցանելով, որ հայերը անջատումի հակառակ էին, ու բոլոյ այն փաստերը, որ թուրքերը կ'ուզէին հնարել, սուտ գրքարտութիւններ [էին]: Այս գրքին համար նիւթ կու տան կարգ մը միսիոնարուհիներ:

Ձեզի զրկեցի չէք մը. Brown-Brosէն առնուած 200 ոսկի գումար մըն էր. անշուշտ գանձեցիք եւ Թիֆլիս զրկեցիք, ինչպէս որ նախորդ նամակներով գրած էի:

Ընկ. բարեկներով՝
Պալքանեան Կ. կոմիտէի կողմէն
Յ. ԱՄԱՏՈՒՆԻ

208.- Գերմանկ – Բոզիեան Յովհաննէս:

Փաստ. 63-121

102.– ԱԻԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԷՆ ՅՈՆԱՆ ԴԱԹԵԱՆԻՆ²⁰⁹

Paris, 8 Դեկտ. 1915

Սիրելի Յովնան,

Հակառակ ենթադրութեանս ու ցանկութեանս ահա դեռ Պարիզ եմ եւ հաստատապէս մեկնելու եմ վաղը թէ միւս օրը՝ Դեկտ. 10-ին: Չէի կարող կարծել, թէ անցագրի համար այսքան գլխացաւանք կայ այստեղ: Պէտք եղաւ երկու օր շարունակ ռուսական հիւպատոսարան գնալ-գալ, ապա Պարիզի ոստիկանապետի մօտ, երկու անգամ անգլիական հիւպատոսարան, յետոյ շուէտական-նորվեկիական, ամէն տեղ անցագիրը visa անել տալու համար, վճարելով որոշ տուրք հիւպատոսարաններին 2-5 Ֆլրանք]: Վերջապէս այդ ձեւակերպութիւններից ազատուեցի, տոմսակս էլ առայ Կոնկից²¹⁰ եւ պատրաստ եմ ճամբայ ընկնելու 10-ին: Ուղարկածդ 100 Ֆր.ը ստացայ. աւաղ, բայց դա չկարողացաւ իմ գրպանում առաջ եկած բացը soulager անել: Լաւ օյին եկաւ գլխիս — Պարիզ այսպէս երկար մնալով, փոքրիկ տնտեսութիւնս քամին տարաւ. այժմ գնում եմ բաւական նեղուած: Յոյս ունեմ սակայն գլուխ թափել²¹¹. անհանգիստ չլինես:

Ինչո՞ւ ուշացայ:

Պարիզ մի փոքր գործ կատարելու համար միշտ ահագին ժամանակ է պէտք, իսկ հայոց հարցով զբաղուողը, որ պէտք է մեծամեծների դռները թակի, սպասի, գրի, խնդրի տեսակցութիւն, նորից խնդրի միջնորդների, — կատարեալ պատուհասի մէջ է լինում: Ամէնից անյարմարը այս պարագաներում անցորդի դրութիւնն է, որ ստիպուած է հեւ ի հեւ գործել: Ես հակառակ եմ հեւիհեւին, ապա երեք շաբաթ մնացի Պարիզ: Աւելի քան երեք գալիս եմ այն խորին համոզման, որ Պարիզում մենք պէտք է 1-2 խելքը գլխին մարդ ունենանք շարունակ. մեր ահաւոր ազգային թշուառութեան ցաւը եւ ցասումը հասարակական կարծիք պահելու համար: Համաշխարհային կետրոն է. այստեղից արձագանգները գնում են աշխարհի բոլոր ծայրերը: Եւ ի պատիւ Տըրանսիային, հակառակ այս զարհուրելի պատերազմի պատճառած իրաւացի մտահոգութեան, այս ամէնօրեայ գոհերին, այս մարդիկ դեռ ժամանակ են գտնում օտարի, մեզ նման հեռաւոր ժողովրդի ցաւով զբաղւել: Հարկաւոր է միայն շարունակ ասել, խօսել, գրել, հրահրել զարթնած զգայութիւնը դէպի մեր դատը ու լարուած պահել:

Պարիզ գալուցս 1-2 օր յետոյ, մեզ շատ բարեկամ A.M.D.ի²¹² մօտ հաւաքուած էին ճաշի 7-8 կարեւոր ան-

ձինք, պարլամենտի անդամներ, ուր իմ տուած նկարագիրը մեր ապրած սոսկումները՝ ահագին տպաւորութիւն թողեց: Ի՛նչ ասել որ ամէնքն էլ սրտով [?] ցաւում էին, որ անմիջական եւ վճռական դարձար մեր ցաւին՝ անհնարին է այժմ, բայց Ֆրանսիական հասարակութեան համաձայնութեան մի շօշափելի օրինակ տալու համար վճռուեց անմիջապէս մի կոմիտէ կազմել բացառապէս ականաւոր ֆրանսիացիները՝ գէթ մի որեւէ գումար հասցնել հայ գաղթականներին, որպէս համակրութեան ապացոյց: Կոչը (appel) ուղղուած ֆրանսիական հասարակութեան անմիջապէս խմբագրուեց տեղն ու տեղը եւ ստորագրողների, այսինքն կոմիտէի անդամների ցանկը կազմուեց: Չգիտեմ, այդ կոչն ու այդ ցանկը լրիւ թերթի միջոցով քո ձեռքը հասաւ, թէ ոչ, բայց նա լոյս տեսաւ այստեղի շատ թերթերում — ներփակ կը գտնես:

Ինչպէս տեսնում ես, լուրջ եւ ականաւոր մարդկանց անունների մի ցանկ է, սենատորներ ու պարլամենտի անդամներ, բոլորն էլ մեր դատին բարեկամ, մեր ցաւին ցաւակից: Անկարելի էր մի քանի օրում խոշոր անունների մի աւելի մեծ ցանկ հրապարակ հանել, բայց բարուք համարեցինք չտապել եւ այսքանով բաւականանալ: Որքան դրամ կը հաւաքուի, այդ չէ հականը, այլ այն բարոյական արժէքը որ ունի այս ձեռնարկը: Appel-ը տպելով, Ֆրանսիական թերթերը առիթ ունեցան վերստին մեր ազգային աղէտի, մեր ճակատագրի, մեր ապագայի մասին խօսել:

Այս կոմիտէից ո՛չ պակաս արժէքաւոր եւ նշանակալից եղաւ այն զեկուցումը Հայաստանի արդի վիճակի մասին, որ ես հազուադիւրս եւ բարեպատեհ առիթը ունեցայ անել պարլամենտական արտաքին գործոց կոմիտիայի անդամներին պարլամենտում (Comission parlementaire des affaires extérieures): Սա մի բացառիկ եւ գրեթէ անսպասելի ուշադրութիւն եւ խորունկ համակրութիւն էր [դէպի] մեր դատը: Աւելի բնորոշն այն է, որ գաղափարն իսկ պատկանում է հայասէրներին: Երբ մասնաւոր ընտանեկան շրջանում խօսեցի մեր մասին, ցանկութիւն յայտնուեց որ ես աւելի ընդարձակ exposé ներկայացնեմ պարլամենտում, յիշեալ comission-ին:

209. Նամակին վերեւ, ֆրանսերէն գրուած. — «Հայերէն եւ շատ ստիպողական. հաճեցէք կարելի արագութեամբ տեղ հասցնել»:
210.- Դամբորդական Cook Travel Co. ընկերութիւն:
211.- Գլուխ թափել — ազատիլ, պրծիլ:
212.- A.M.D. = Ա. Մինոր Դորի (աւելցուած այլ ձեռագրով):

Այս էր, որ տեղի ունեցաւ անցեալ ուրբաթ, ճաշից յետոյ Ժ-ը 3¹/₂-ին: Այս մասին գրուեց տեղական թերթերում: Ահա այս գեկուցումը անելու համար էր որ ես ստիպուած եղայ սպասել: Սա այնքան կարեւոր, այնքան լուրջ եւ ըստ ամենայնի սրտապնդիչ մի mission էր, որ ես պատրաստ էի դարձեալ օրեր մնալ մինչեւ յաջողուի: Եւ յաջողուեց: Չափազանց գոհ մնացին եւ իրենք:

Կարդացիր մեր J. Longuet-ի²¹³ յօդուածը L'Humanité-ի մէջ: Ես գոհ եղայ. յոսսամ դու էլ դժգոհ չմնացիր: Այսպիսի յօդուածներ շարունակ կարելի է լոյս ընծայել այստեղի նոյնիսկ խոշոր թերթերում, միայն թէ պէտք է զբաղուող լինի, աշխատող լինի, որ տարաբախտաբար չկայ ու չկայ: Մեր բարեկամ V. Béard²¹⁴ ցաւով ասում էր, թէ մենք լքել ենք մեր դատը, որ այստեղ Պարիզում չկայ մէկը, որ պարբերաբար հայ թերթերից քաղելով տեղեկութիւններ տայ հայաստեանին, եւ շարունակ յօդուածներ երեւան թերթերում: Միայն է կարծել, թէ գիտեն մեր աղէտը: Լսել են անորոշ, տարտամ. հարկաւոր է շարունակ հրահրել, շարունակ գրել:

Տեսայ երկու միւսստր, մեզ բարեկամ, տեսայ խմբագիրներ, տեսայ պարլամենտի շատ անդամներ. բոլոր գրոյցներից եզրակացութիւնս հետեւեալն է. — Մեր դատը, մեր տառապանքը աւելի քան երբեք համակրութեան, ուշադրութեան առարկայ է բոլոր շրջաններում: Չեն ուզում հաւատալ, թէ Հայաստանը ինքնավար, ազատ — այլեւս անկարելիութիւն է:

La famille arménienne est par trop prolifique. Il ne faut pas désespérer²¹⁵. Խորունկ համոզմունք է, որ Պոլիսը անպատճառ կը վերցնեն ռուսները, որ Հայաստանը կը ստանայ իր ինքնուրոյնութիւնը, ինչ էլ լինի հայերի թիւը: Միրիայի եւ մասամբ Կիլիկիայի վրայ Ֆրանսան լուրջ visée-ներ²¹⁶ ունի, եւ եթէ ամբողջ Հայաստանին կցուի արեւմտեան Կիլիկիան, առանց Ալեքսանտրէտ-

տի, թողնելով հայերին միայն Մերսինը, պէտք է շատ գոհ լինել, ունենալով Ֆրանսայի ազնիւ հարեւանութիւնը Միջերկրականի ափերին:

Տեսայ Փաշային²¹⁷. նոյն լաւատես հաւատն ունի մեր ապագայի մասին, թէ եւ ջարդերը չափազանց կ'ընդունեն իր ճակատը: Նա այն կարծիքին է որ առ այժմ, "nous devons faire le mort"²¹⁸, եւ այս է պատճառը, որ շատ չի շարժուում, սպասելով պատերազմի վախճանին: Ես ի հարկէ նրա այդ կարծիքը չեմ բաժանում եւ շատ ցաւում եմ, ինչպէս ասացի, որ ես մնալ չեմ կարող, եւ ուրիշ մարդիկ չունենք այստեղ մշտապէս հայերով զբաղուող: Կան Պարիզում ապրող հայերը, կայ եւ մի կոմիտէ հայկական. դրամ էլ են հաւաքում, բայց այս մարդիկ մեծ մասամբ իրենց անձնական գործին յենած մարդիկ են, եւ իրենց գործունէութիւնը կապուած է պատահականութիւնների հետ: Հարկաւոր էր մի Bureau-ի կամ organe arménienne-ի պէս մի բան, որ անընդհատ թափէր խմբագիրների գլխին մեր աղէտի մանրամասնութիւնները: Համակրութիւն շատ կայ, հրահրող, բորբոքող չկայ:

A propos²¹⁹, վատ չէր լինի, եթէ Դրօշակի խմբագրութեան ստորագրութեամբ շարունակ, կամ կարեւոր դէպքերում բեմինկտոնով տպուած կարեւոր լուրեր Հայաստանից, լաւ Ֆրանսերէնով, ուղարկուէին այստեղի բոլոր թերթերին: Մեծ մասամբ կը հրատարակուէին: Վերջապէս եթէ երբեմն հրապարակեն, դարձեալ...: Յիշում եմ Արեւի²²⁰ մէջ Արամայիսի գրի առած Մուշի սարսափները՝ այդպիսի նկարագիրներ, ինչպէս եւ մեր պայքարը լաւ ընդունելիութիւն կը գտնի:

Temps-ի խմբագրատունը եղայ, ուր ինձ խնդրեցին գրել հայերի մասին: Բայց ո՞ր տեղից գրեմ, երբ գնում եմ: Կովկասից գրեթէ անկարելի է:

Նամակս շատ երկարեց: Գուցէ եւ բաներ մնացին: Ներողամիտ եղիր, որ ուշ գրեցի. սպասում էի որոշ բան գրելու համար: Ցաւում եմ, որ Լոնդոն շատ չեմ կարող մնալ, գրպանս շատ է դատարկ: Եթէ 10-12 օր մնամ, ճամբորդութիւնս նիւթական մեծ դժուարութիւնների կը հանդիպի: Պիտի աշխատեմ 3-4 օրից մեկնել: Ցաւալի է, բայց այլ կերպ անհնարին է վարուել:

Վերստին ջերմ համբոյրներ քեզ եւ վերստին մնաս բարի:

Քո ԱԻՆՏ

P. S.— Յաջորդ նամակս կը լինի Լոնդոնից:

213.- Ժան Լոնգէ, Դաշնակցութեան հին բարեկամներէն Փրօ-Արմենիայի խմբագրութեան անդամ:

214.- Վիկտոր Պերար. ֆրանսացի քաղաքական դէմք, նոյնպէս Հ.Յ.Դ.ի հին բարեկամներէն, եւ խմբագիրներէն մէկը Փրօ-Արմենիայի:

215.- Հայկական ընտանիքը չափազանց բազմածին է: Պէտք չէ յուսահատիլ:

216.- Ֆրանսերէն միտում, դիտաւորութիւն:

217.- Պօղոս Նուպար փաշային:

218.- Ֆրանսերէն՝ մտեալ ձեւացնել:

219.- Ֆրանսերէն՝ ի դէպ:

220.- Պարու լոյս տեսնող դաշնակցական թերթ: Արամայիս — Տէր Դանիէլեան Միսակ:

Փաստ. 793-9

103.- ՏՐԱՊԻԶՈՆԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ ԱՊԱՍՏԱՆԱԾ ՓԱԽՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՐՈՒ ՆԱՄԱԿԸ (20 Դեկտ. 1915)

Արխիային այս հազուագիտ վաերագիրը կը ներկայացնէ 1915ին Տրապիզոնի կոտորածներէն փրկուած եւ անտառները ապաստանած խումբ մը հայ երիտասարդներու ողբասկանը:

Տրապիզոնի հայերուն ջարդը, արդարեւ, ամենէն զարհուրելիներէն մէկն էր եղած, որովհետեւ կուսակալ Ճեմալ Ազմիի հրահանգով՝ թուրքերը հազարաւոր կիւն, մանուկ, ծերունիներ նաւերու վրայ բեռցուցած կը տանէին բացերը եւ ծով կը թափէին: (Ճեմալ Ազմի եւ հայակեր ուրիշ բորենի մը՝ Պեհաւետոն Շաքիր իրենց արժանի պատիժը պիտի գտնէին 1922 թ. Ապրիլ 17ին, զգետնուելով Պերլինի մէջ Արշալիր Շիրակեանի եւ Արամ Երկանեանի արդարահատոյց գնդակներէն):

Նամակագիրը մէկն է այն հայ երիտասարդներէն, որոնք լեռ բարձրացած՝ մէկ կողմէ կը կռուէին զիրենք հետապնդող թուրք զօրքերուն դէմ, միւս կողմէ՝ ջարդերէն ազատուածները կ'առաջնորդէին դէպի ապահով վայրեր՝ ռուսական սահման: Նամակը պէտք է ուղղուած ըլլայ ռազմաճակատի միւս կողմը գտնուող Պաթումի կամ Թիֆլիսի դաշնակցական մարմիններէն մէկուն, որոնցմէ կը սպասէին օգնութիւն իրենց սպառող զինամթերքը լրացնելու եւ փրկարար գործը շարունակելու համար:

Նամակը կը գտնուի բաւական գէշ վիճակի մէջ, էջեր ամբողջ գունաթափ՝ անընթեռնելի ըլլալու աստիճան: Հարկ եղաւ համակարգչային նկարահանումի արհեստագիտութիւնը օգտագործել, որպէսզի կարելի ըլլայ վերականգնել բնագիրը:

Հաւանաբար արդէն լսած կը լինէք մեր ցաւագին դժբախտութեան մասին. մանրամասնութիւններու մէջ մտնելու կարիք չկայ. ահա հակիրճ կերպով եղելութիւնը:

Յունիսի 18-ին, կառավարութեան կողմէ յայտարարուեցաւ մեզ հինգ օրուայ մէջ պատրաստուելի աքսորուելու համար ընտանեօք, մեր ցոյց տուած անհաւատարիմ ընթացքի պատճառաւ: Այս հինգ օրուայ մէջ ամէն միջոցի դիմեցինք, ամէն տեսակ երաշխաւորութիւն եւն. եւն. ցոյց տուինք յայտարարութիւնը ետ առնելու, ամենավերջը գոնէ առնուազն որոշ չափով մեղմացնելու համար, այսինքն միայն յեղափոխական կամ վտանգաւոր ճանչցուած անձերը աքսորելու, իսկ մնացած անմեղները, կիւն, երեխայ եւն. եւն. ետ ձգելու:

Քոնսիւլներու, կրօնական պատասխանատու անձերու դիմել, աղաչել, խնդրել ոչ մէկ արդիւնք չունեցաւ, ընդհակառակը մեր դժբախտութեան պատճառներուն նպաստեցին: Որովհետեւ [...] շարունակ յոյս տուին որ կ'աշխատինք մեծ զիջումներ ընել տալու, ու յաջողութեան մեծ յոյս ունինք, ապահով եղէք, մի վախճաք եւն.: Թերեւս այս խօսքերը եթէ չլինէին կազմակերպւած ուժի, գէնքի դիմէինք եւ որոշ արդիւնք ձեռք բերէինք. թէեւ խոշոր գործ անկարելի էր սպասել քանի որ

20-25 հոգի, աչքառու ընկերներէն յանկարծակի առաջին օրը ձերբակալելով, ծովամոյն ըրին (ըստ իրենց աքսորեցին), ուրիշներ արդէն զինուորութենէ փախստական ասդին անդին փախած հեռացած էին. այնպէս որ մնացած տղաները երաշխիք չէին ցոյց տար դիմադրելու, բայց եւ այնպէս կ'ըսեմ, եթէ կակիծի ու այդ տըրւած յոյսերու տպաւորութեան տակ չընկալէինք, յիմարացած չըլլայինք, թերեւս նորէն օգտակար բան մը կարենայինք ընել: Սակայն այսպէս թէ այնպէս իրակաւորութիւնը այն եղաւ, որ առանց աննշան զիջումի մը, ճիշդ յայտարարութեան համաձայն Յունիսի 23էն սկսած աքսորեցին (որպէս թէ) առհասարակ բոլոր հայերին. մինչդեռ իրականին մէջ ճանապարհին մորթոտեցին, կտրտեցին. ականատեսները սարսափելի դէպքեր կը պատմեն, նորածիններ սուղիս ծայրը անցնել, ջահել աղջիկներու ու կիներու լլկում ու ահուելի տանջանքներ պատճառել սովորական բաներ են եղած. իսկ չափահաս կարգ մը զեղեցիկ աղջիկներ ու կիներ քաղաքին մէջ եւ շրջակաները կնուութեան առած են, բռնի իսլամացնելով. կան նոյնպէս բաւականաչափ տղաներ անչափահաս, որոնք նոյնպէս իսլամացնելէ վերջ, որպէս իրենց զաւակը կը պահեն: Դեռ գրոյց կը շրջի թէ մաս մը իսկապէս աքսորուածներ կան, Մոսսուլ, Գոնիայի շրջանները, բայց այս բանը հաւատարի չի թուիր մեզ:

Գալով, ինքնապաշտպանութեան դիմելով, փախուստ տուող, եւ անտառը ապաստանողներու մասին: Գլխաւորապէս Շանայի շրջանի հայերը չյանձնուեցան. կ'ըսեն թէ 300-500 անձեր (տղայ եւ կին ալ մէջերը լինելու պայմանով) իրենց անտառները ապաստանած են գէնքով. յաճախ ժանտարմներ կ'ուղարկուին ձերբակալելու. սակայն, առ հասարակ գոհերը թուրքերու կողմէ կը լինին, ձեռնուկնայն կը վերադառնան. միայն վերջին անգամ 3 գոհ տուին մերոնք, ի դիմաց 9 ժանտարմայի (4-ը մեռած, 5-ը վիրաւոր). ապահովաբար երբեք ձեռք չեն անցնիր, եթէ միայն երկար չտեւէ դրուածները եւ ռազմամթերքին ապակասով չսպառուի, որովհետեւ երբեմն 24 ժամ շարունակ փոխադարձ հրացանաձողութիւն տեղի կ'ունենայ: Ասոնց հետ մեր յարաբերութիւնները խզուած են մինչեւ հիմա. թերեւս նոր միջոց մը ճարենք յարաբերութեան. իրենց մասին կ'իմանանք միայն:

Նամակաբերս եթէ յաջողի անձամբ նամակս ձեզ հասցնել, արդէն կը պատմէ իմ մասին. իսկ կարող է պատահիլ, որ փոստարկղի միջոցաւ ուղարկէ: Այդ պարագային ստիպուած եմ մանրամասնութիւններ տալու իմ գործի մասին: Նամակաբերիս հօրեղբօր որդին, որ վրացի շատ ազնիւ անձ մըն է, ամէն գոհաբերութիւն յանձն առաւ հակառակ այնքան խստութիւններու. ամէն ջանք ի գործ դրաւ քաղաք մնացած այնքան աղջիկներու հետ միասին ազատելու: Ես մի քանի օր ասոնց մօտ մնալէ վերջ, իմանալով որ ուրիշ անտառի մը մէջ փախստական հայեր կան, փութացի քովերնին: Հիմա այդ ազնիւ վրացին կը պահէ փոքրիկներ, իսկ ես անտառն եմ մօտաւորապէս 90-100 հոգիի հետ:

Ասոնց մասին ահա մանրամասնութիւններ: Կէսը անչափահաս տղաներ եւ կիներ են. մնացած տղամարդկանց հազիւ 15-20 հոգին կարգին գէնք ունին, մնացածները անգէն են, արդէն գրեթէ բոլորը գիւղացիներ են ու խեղճուկրակ: Մեզ ալ շրջապատեցին քանիցս, բայց

օգուտ չունեցաւ. շատ հեշտ չէ անտառներէ մեզ ձեռք ձգել: Միայն աննկարագրելի թշուառութիւն ու խեղճութիւն կը տիրէ մերիններու մէջ. շրջակայի յոյն գիւղացիք օգնած ու կերակրած են հազիւ հազ բաւելի չափով, իսկ բռնութիւն գործածել հաշուի չի գար, աւելի կը վտանգէ մեր գործը: Վերջերս գիւղացիք շատ կը դժուարանան, որովհետեւ հող բաւական տնտեսական տագնապ գոյութիւն ունի. ամէն ոք ինքզինքը կը հոգայ: Մի քանի եւրոպացիներու դիմեցինք դրամական օգնութեան համար, շատ անբաւական գումար ուղարկեցին: Վիճակնիս աննկարագրելի է, ձմեռը եւ ցուրտը շատ կը նեղեն մեզ. եթէ դրամ լինի բաւականաչափ կարելի է գոնէ կիներն ու տղաքը յոյներու տուններու մէջ տեղաւորել, որովհետեւ վերջերս կառավարութիւնը թոյլ կը շարժի դէպի մեզ, նոյնիսկ յայտարարեց որ փախուստականներ եթէ կան՝ դան յանձնուին, «այլեւս վտանգ չկայ»: ասոր վրայ խիստ նեղուողներ ուրիշ տեղերէ 10-ի չափ քաղաք իջան, խլամացած են ու կը գործեն ազատ առ այժմ: Խնդիրը այս սրիկաներու լարած թակարդի շուրջ չէ. խնդիրը հոն է, որ այս խօսքերը ու դէպքերը քիչ քաջութիւն կը ներշնչեն յոյն գիւղացիներու, որոնք առաջուայ չափ չեն սարսափիր հայեր պահելէ, միայն թէ դրամ լինի, դրամ ու միշտ դրամ. կարճ՝ դրամով կարելի է մեր կեանքը փրկել:

Վերջացնելէ առաջ ասեմ նաեւ թէ քանի երկար տեւէ դրութիւնը, եւս որքան ուշանայ օգնութիւնը, այնքան կը ծանրանայ եւ կը կնճռոտի մեր գործը:

Սպասելով ձեր անմիջական աջակցութեան,
Սրտագին բարեկներով,
Ի դիմաց փախստական հայերու
Ստորագրութիւն

Տրապիզոն, անտառ
20 Դեկտ. /2 Յունուար 1916

Փաստ. 1050-97

104.– Յ. ԱՄԱՏՈՒՆԻԷՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԵԻՆ

Գաղտնի մեղադրանքով գրուած մամակ է, արտագրուած Գահիրէ՝ Ա. Հանրմեանի ձեռագրով: Այս վերջինը կը նշէ. «Մտորել կ'արտագրենք ընկեր Յ. Ամատունիի մամակը»: Թուակաւոր՝ «4 Մարտ 1916», որ անշուշտ ստացման կամ արտագրութեան թուականն է. բուն մամակը գրուած պիտի ըլլայ անլի կանուխ, որովհետեւ բժ. Չարիեի համար կ'ըսուի «Յարդ Բժիշկը կը մնայ հոս», այսինքն Պուրթէշ, մինչ նոյն Ամատունի 5/18 Յունուար 1916 թուակիր գրութեամբ (տես էջ 186) կ'ըսէ «Բժիշկ Չարիեի այսօր մեկնեցաւ», ինչ որ կը նշանակէ թէ մտորելու ներկայացուած փաստաթուղթը գրուած է 1916 թ. 5/18 Յունուարին առաջ, հաւանաբար 1915 թ. Դեկտեմբեր ամսուն:

Սիրելի ընկերներ,

Երկար ժամանակէ ի վեր ձեզմէ լուր չենք ստանար. չենք գիտեր բոսթի անկանոնութեան պատճառով է թէ մեր նամակներն ալ ձեզի չեն հասնիր: Մասնաւորապէս վերջին նամակին պատասխանը շատ կարեւոր էր եւ հեռագրով խնդրած էինք (պատասխանը?): Գրած էինք ձեզի թէ հնարաւորութիւն կա՞յ ունէ միջոցաւ յարաբերութեան մէջ մտնելու թրքաց Սուրիոյ բանակին ընդհանուր հրամանատար ճեմալ փաշայի հետ: Եթէ ստանայիք պիտի պատասխանէիք հեռագրով «կարելի» կամ «անկարելի» է: Շատ կարեւոր էր այդ պարագան, որովհետեւ յիշեալ փաշան միշտ դժգոհ է կեդրոնէն եւ կարելի կ'ըլլայ իր բանակովը քաշելու մեր կողմը՝ տարով իրեն գանազան խոստումներ:

Այդ ուղղութեամբ այժմ քառակի¹⁸⁶ մէջ բանակցութիւններ տեղի կ'ունենան. թերեւս մեզի յանձնուի նախնական քայլերը առնելու՝ ճանապարհ բանալու համար: Եթէ պէտք ըլլայ մեզի յանձնելու՝ մեզմէ մէկը հող պիտի գայ՝ այդ ուղղութեամբ ձեզ հետ միասին աշխատելու: Այս գործը պէտք է ըլլայ չափազանց գաղտնի՝ խիստ գզուշութեամբ:

Յարդ Բժիշկը կը մնայ այստեղ. տակաւին իր ձեռնարկը չըրացաւ: Յոյս ունինք որ շուտով կը լրանայ անմիջապէս յետոյ կը մեկնի Բեթրոկրատ: Արդէն իր բացակայութիւնը զգալի պակաս մըն է:

Մօտաւորապէս մէկուկէս ամիս Կովկասի հետ յարաբերութիւնը խզուած էր. ռուսական զօրաշարժերու պատճառով սահմանները փակուած էին, եւ ոչ մէկ հաղորդակցութիւն, նոյնիսկ հեռագիրները դադար առած էին:

Դժբախտաբար եկած նամակները կը մնան բոսթատունները եւ մենք կը ստանանք միայն վերջին նամակները՝ որոնք կապ ունին անցեալ նամակներուն հետ: Վերջին նամակով իմացուցած էին Մուրատի Կովկաս անցնիլը. թերեւս դուք ալ իմացած էք. մանրամասնութեան ծանօթ չենք, որովհետեւ չստացուած նամակներուն մէջ գրուած են եղեր մանրամասնութիւնները: Միայն գիտենք թէ 14 կռուողներով առագաստանաւով անցած է Սամսոնէն Պաթում. ծովին վրայ կռուի բռնուած է եւ կռուին մէջ Նոյն մեռած է (Բինկեանցի Եղոն):

Թէ իր կռուողները ի՞նչ եղած են, ո՞ւր մնացած են,

չենք գիտեր:

Պուլկարիոյ պատերազմին պատճառով մեր յարաբերութիւններու գիծը Պուլսոյ հետ խանգարուեցաւ եւ բաւական ատենէ ի վեր լուր չենք կրնար առնել: Սուրհանդակը, որ ետ վերադարձաւ, որուն հետ դրամ ու նամակներ կը դրկէինք, Քէօփրիւ Քէոյէն վար դրուեցաւ եւ դուրս վճարուեցաւ: Այժմ հոս կը մնայ: Ընկեր Արզումանեանը (Նաչիկեան) անցաւ Սոֆիա քանի մը օր առաջ եւ պիտի աշխատի նոր գիծ մը ստեղծելու եթէ հնարաւոր ըլլայ: Այսպէս ուրեմն մեր աղբիւրներէն տալիք լուր չունինք: Հատուկտոր եկողներ կ'ըլլան, որոնց տուած տեղեկութիւնները միշտ հակասական են: Ըստ երեւոյթին այժմ քիչ մը դադրած է խստութիւնը, ամբողջ աշխարհի մեղադրանքը ուղղուած ըլլալով Գերմանիոյ՝ իբրեւ մեղսակից եւ պատասխանատու՝ գերմաններու վրայ քիչ մը ազդած է. կ'ուզեն կերպով մը ցոյց տալ որ իրենք չեն պատասխանատուն:

Քանի մը օր առաջ Տոքթ. Լեփսիւսը հոս էր, նոր փաստեր հաւաքելու համար իր նոր հրատարակելիք գրքին, որը բացառապէս ուղղուած պիտի ըլլայ թուրք կառավարութեան ոճրային ծրագիրներուն դէմ: Արդէն ճորտ փաստեր ունի վերցրած թէ մեզմէ եւ թէ չէ գոք դեպքանատուններէն: Գիրքը պիտի բաղկանայ 3 հարիւր երեսէ. միաժամանակ ցոյց պիտի տայ գերման ժողովուրդին թէ իրենք կը խաբուին շահ ակնկալելով թուրքիայէն:

Արդէն կարգ մը միսիոնար եւ միսիոնարուհիներ, որ հայկական սարսափներէն յետոյ վերադարձած են, սկսած են կատաղի բրբաբականտ հակառակ թուրքերուն. Ռէվենտոլթի ծանօթ յղուածներուն առիթ ծառայած էր անոնց բրբաբականտը: Հետաքրքիր էր որ Լեփսիւսը այս անգամ բոլորովին փոխուած էր, անգլիացիներուն դէմ նախկին յոխորտանքը չունէր: Կը խոստովանէր որ անկարող են անոնց վնասել եւ անոնք զիրենք կը խաղցնեն ամէն ճակատներու վրայ. խաղաղութիւնը անոնցմէ կախում ունի ըսաւ:

Շուտով գրեցէք մեզի:

Ընկերական ջերմ բարեկներով
Պալքանեան] Կ. Կոմիտէի կողմէն՝
ԱՄԱՏՈՒՆԻ

Փաստ. 1406-160

105.- ՌՈՒԲԷՆ ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆԷՆ ԱՐՄԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻՆ

Բաւական վատ վիճակի մէջ հասած ցամակ, որ կը գտնուի Հ.Յ.Դ. կեդրոնական արխիւի Ամերիկայի կազմակերպութեան յատկացուած 1918 թուականի թղթածրարին մէջ. ցամակին թուականը թիւրիմացաբար կարդացուած է 1918. պէտք է ըլլայ 1915. այդպէս ալ կը հետեցուի բովանդակութիւնէն: Հեղինակը, ինչպէս ձեռագիրն ալ ցոյց կու տայ, Ռուբէն Տեր Մինասեանն է, Տարօն-Սասունի հին գործիչներէն, եւ դեկավարներէն մէկը 1915 թ. Սասնոյ ինքնապաշտպանութեան: Եօթը ամիս Սասնոյ լեռներուն մէջ թորք ջարդարարներուն դէմ անհաւասար ու հերոսական կռիւներ մղելէ ետք, յաջողած էին ինք եւ Վահան Փափագեան (Կոմս) ճեղքել պաշարման շղթաները ու շուրջ 30 մարտիկներով անցնիլ Կովկաս: Այս ցամակը, այլապէս յուզումնալի, գրուած է ուրեմն իր ապրած ողիսականէն երեք ամիս ետք: Ուղղուած է Արսէն Միքայէլեանին, բուն անունով Տեր Յովհաննիստեան Արսէն (1885-1941), դաշնակցական երիտասարդ բայց եւ վաստակատու գործիչներէն, որ յիշեալ թուականին Ամերիկայի Կեդր. կոմիտէի գործիչներէն էր: Նախապէս, 1914 թ. Սեպտեմբերին ուսումնասիրական գործով ան եղած էր Տարօնի շրջանը. այդ տեղէն նստելու կու գար իր մտերիմ ծանօթութիւնը Ռուբէն Տեր Մինասեանի հետ:

Սիրելի Արսէն,

Ես չեմ մոռացել քեզ, մանաւանդ այն արշալոյսը երբ մենք ճանապարհին կը կտրէինք Դաշտի, սիրելի Դաշտի չէն հայ գիւղերը:

Սիրելի Արսէն, անհուն վիշտը կը ծանրանայ կրծքումս երբ կը գիտակցեմ այժմս, որ այն բոլորը ինչ տեսաք, այլեւս չկայ... ինչո՞ւ կ'ուզես որ ես վերջիչեմ տեսածներս. կորցրած եմ ամէն ինչ. թիւրիմացութեամբ մնացի ողջ. երեւի միայն նրա համար, որ տանջուեմ: Չպիտի կարողանամ նկարագրել Սասունն ու Դաշտը. միայն քեզ բաւարարելու համար հարցրածդ անձանց մասին պիտի գրեմ համառօտակի:

— Գեղամը ձերբակալուեց եւ կախուեց Բիթլիսում. Տիգրանը կարողացաւ մինչեւ կռիւների վերջը ողջ մնալ, բայց յուլիսի վերջին 5 օրեայ քաղցից յետոյ կը պաշարուի եւ 2 օր կռուելէ ետքը կը սպաննուի Պօղոսի (Մջոյի եղբօր), Օսկիանի եւ այլոց հետ միասին Հարմոյի գոմերի դիմացը, Հողանդէնում. նրանց դիակները դրուած են գետի[?] մէջ: Կորիւն սպանուեց Համբրնու դիրքի վրայ. այդ առիւծը որից մահն իսկ կը վախնար, ընկաւ եւ նրա գլուխը կտրուելով ցուցադրուեց Մուշում: Մջոն սպանուեց Կռչիկում. իսկ ճ Մջոն յուսահատ մահը կը փնտռէր եւ գտաւ փառահեղ մահը: Քիւրտ մէյտանի Գրիգորը վառուեց Աւզաղբիւրում: Տեսուչ Դաւիթը եղաւ տեսուչ եւ գինուորների եւ այդ դեռահաս երիտասարդը թառամեցաւ Աւսուրբի լանջին: Աւետիսը 10-ից աւելի ընկերներով ուղեւորուեց Ռուսիա լուր տալու մեր անտանելի վիճակի մասին, բայց կոտորուեցին ամբողջը Այնթափի²²¹ կողմերում: Ղարախանեանը²²² երջանիկներից էր. նա չտեսած Տարօնի մահը՝ մա-

հացաւ տիֆլից: Վարդան վարդապետ վառուեց Խասգիւղում, Յովհաննու վարդապետը ակնատես եղաւ Տարօնի կործանմանը, իւր իսկ վանքի հիմնադատակ լինելուն եւ չարժանացաւ իւր ձեռօք փորած գերեզմանի մէջ հանգչելուն. նա կտրատուելով իւր սնուցած վանքի շներին կեր եղաւ: Մկրտիչ վարդապետ ոտաբոբիկ ողջամբ հասաւ քաղաքի մօտ, բայց Կառնենի ձորում գնդակի բռնուեց: Ստեփան վարդ[ապետ], հերոսների հերոսը եղաւ նա. մինչեւ վերջին շունչը կռուեց Փսանքում, այնտեղէն հալածական հասաւ մեզ, մասնակցեց եւ մեր տանջանքներին ու ի վերջոյ սպանուեց Կռչիկում: Սրանց մասին էիր հարցրած, դժբախտաբար մեծի մասին չկարողացայ բարի լուր տալ. մի հարցներ, որի մասին հարցնես, նոյնն է սիրելիս:

Իմ մասին կը հարցնես. ես արտաքուստ շատ լաւ եմ, առողջ, նոյնիսկ կը ծիծաղեմ եւ կ'ուրախանամ. շատերն ինձ երջանիկ կը համարեն. բայց իրականի մէջ թէ ես եւ թէ հետս ազատուած ընկերներս կեանքին բովանդակուեցին կորցրած՝ հատուցման ժամի տենչերով քարշ կու տանք կեանքներս: Նկար ունեմ, չեմ ուղարկելու. ես ինքս հակառակ լինելով տանջանքների շահագործումը հրապարակախօսութեամբ, կը խնդրէի իմ մասին ոչ մի խօսք չգրել ձեր թերթում:

Ներիր որ քեզ չկարողացայ լիովին բաւարարութիւն տալ. ըմբռնիր սիրելիս, որ դժուար է ինձ համար. գուցէ ապագայում երբ աւելի բթմանն իմ գգացմունքներս, հնարաւոր կը լինի խօսել եւ գրի առնել այն անե-

221.- Գիւղ, Պայագիտի շրջան:
222.- Ներսէս եպս. Դարախանեան, առաջնորդ Տարօնի: Մջոն՝ Պոլէեան Սկրտիչն է: Վարդան վարդապետը՝ Յակոբեան, Ս. Յովհաննու Կարապետ վանքի վանահայր: Կորիւնը՝ Գոմսայ Իսրօ:

ընկալելի արհաւիրքները, որ պատահ[եց]ան Սասուն-Մշուհ:

– Դուք ամէն կերպ աշխատեցէք այդ տեղերի չէզոք պետութեանց մէջ կազմակերպել կոմիտէներ եւ նրանց միջոցով ազդել ձեր կենտրոնական կառավարութիւններին վրայ միջամտելու աւելի ազդու կերպով եւ ճնշելու թուրքիոյ, Գերմանիոյ վրայ բարեկաւելու՝ Կիլիկիա, Միջագետք գաղթեցրած բազմաթիւ հայերի վիճակը եւ դադարեցնելու այն հալածանքը մեր դէմ, որի իսկական պատճառը դեռ ինձ համար շատ որոշ չէ: Ես էլ քեզ նման հարց կը տամ, ինչո՞ւ հալածեցին մեզ. հայ ժողովրդին բոլորովին անմեղ կը գտնեմ այս պարագային, եւ չեմ կարող համաձայնուել, որ դա բաւական չէր:

– Տեղիս գաղթականներին վիճակը շատ լաւ չէ. հոս

եւս նեղութեան պատճառով կը կոտորուեն. ջանացէք դրամապէս օգնել:

– Մարդիկ ուղարկելու մասին ես անհատապէս հակառակ եմ. գուցէ հող է որ պիտի մարդկանց խնայողութիւն լինի, գուցէ եւ դրանք հարկաւոր են վերաշինութեան պարագային, որին կը ջանամ հաւատար:

Լցրէք վրէժի եւ վերաշինութեան տենչերով տեղիդ ժողովուրդը, վառ պահեցէք յոյսը, բայց դեռ զսպէք նրան նետուելու այս կրակի մէջ, որ օր աւուր կը սպառնայ եւ տեղիս մնացորդներին:

Ձերմ համբոյրներով
ՌՈՒԲԷՆ

1915, 22 Դեկ[տեմբեր], Թիֆլիս

Գրուած ստիպելով որ քանակը եւ ինչ կարգը, ջանք եւ
սպասումս երբ անի որպէսզ քեզ պատճառաբան
Վարդապետներ լինի ինչի եւ թիւ սակի, որ
աւելցանք ինչպէս ինչ որ պատահեալ
Աստուծո՛ւ յարմար:
– Պատճառով որքան պարտաւոր չեմ լինի
չորստեցիք մեզ կարգաւորելու ջանքերը եւ նրանց
քանակը աւելի չէ մեր կարգաւորման ջանքաւորութեան
վրայ միջամտելու անի որքան ջանքով եւ թշուար
բարձր, Գրուած վրէժի մեզ անի ինչի, որպէսզ
բարձրագոյն կարգաւորելու ջանքերը եւ կարգաւորելու
չէ կարգաւորելու մեր, որ ինչպէսզ պարտաւոր
որքան ինչ կարգը զայն որքան չէ: Ես էլ ինչ անի
նրանց նպատակ, ինչ կարգաւորելու մեր ինչպէսզ
բարձրագոյն կարգաւորելու ջանքերը, որ
չէ ինչպէսզ կարգաւորելու, որ ինչպէսզ չէ:
– Ինչպէսզ կարգաւորելու ջանքերը զայն որքան չէ. ես էլ
նրանց նպատակ պարտաւոր ինչպէսզ, ինչպէսզ
որքան որքան չէ:
– Ինչպէսզ կարգաւորելու ջանքերը ինչպէսզ
նրանց նպատակ. ինչպէսզ եւ ինչպէսզ ինչպէսզ
նրանց նպատակ. ինչպէսզ եւ ինչպէսզ ինչպէսզ
նրանց նպատակ. ինչպէսզ եւ ինչպէսզ ինչպէսզ

Նմոյշ մը Ռուբէն Տէր Մինասեանի ձեռագրէն

Փաստ. 65-40

106.— LES ARMÉNIENS ET LES JEUNES-TURCS

ՀԱՅԵՐԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐԶԵՐԸ

Ներկայացուած փաստաթուղթը մէկն է այն հաղորդագրութիւններէն, զոր հերթական կերպով կը կատարէր «Դրօշակ»ի խմբագրութիւնը եւրոպական մամուլն ու հանրային կարծիքը հաղորդ պահելու համար թուրք կառավարութեան վարած հայաջինջ քաղաքականութեան մասին: Այս պարագային խնդրոյ առարկայ կը դարձնուի Գերմանիոյ պատասխանատուութեան բաժինը:

Փաստաթուղթը անթուակիր է. կը յիշուի գերմանական խորհրդարանի նիստը՝ «այս ամսու 11-ին», որու ընթացքին սոցիալ դեմոկրատ երեսփոխան Քարլ Լայպքնեխտ հարցապնդում կը կատարէ հայերու տեղահանութեան եւ ջարդերու մասին, հարց տալով թէ վարչապետը ի՞նչ միջոցներ կը խորհի ձեռք առնել դադրեցնելու համար այդ սարսափելի արարքները: Պատասխանողը արտաքին նախարարութեան քաղաքական բաժանմունքի տնօրէն Ֆերտինանտ Քարլ Շարուն է: Եւ երբ հարցապնդողը կը յիշատակէ փրոֆ. Լեպսիուսի այն վկայութիւնը թէ «փաստօրէն թուրք կառավարութիւնը իրագործելու վրայ է թուրքիոյ հայութեան անբողջական բնաջնջումը», խորհրդարանի նախագահը կ'ընդմիջէ հարցապնդող երեսփոխանին խօսքը եւ նիստը փակուած կը յայտարարէ: Արդարեւ մեր փաստաթուղթի վկայակոչած գերման խորհրդարանի այդ գումարումը տեղի ունեցած է 1916 թ. Յունուար 11-ին:

Շահեկան է նոյնպէս փաստաթուղթին երկրորդ մասը, որ կու տայ Մոսկուայի մէջ Ռուսիէն Տէր Մինասեանի ներկայացուցած զեկուցագրին մէկ ամփոփումը Տարօնի ու Մասնոյ հայութեան եօթնամեայ մարտնչումներուն մասին:

A la séance du Reichstag Allemand du 11 courant, le directeur de la division politique de l'Office des Affaires Etrangères, M. Von Strumm répondant à la question posée par le député socialiste Liebknecht au sujet des Arméniens, a dit:

" Le Chancelier sait que la Porte, il y a quelques temps, devant les menées de nos adversaires, s'est vue forcée d'évacuer la population Arménienne de certaines régions de l'Empire Ottoman et de lui fixer de nouveaux lieux de résidence".

Nous sommes en état de démentir formellement cette déclaration qui ne répond nullement à la réalité. — Et, en effet, il existe une quantité de preuves contre la dite déclaration officielle dans la presse neutre, par exemple les journaux d'Amérique, de la Roumanie, ainsi que de Bulgarie avant son entrée dans la guerre, pour ne rien dire de ceux de la France, d'Italie, de Russie et surtout d'Angleterre.

Quant à nous, parmi de nombreuses preuves, nous avançons en attendant la suivante.

A la fin de l'an dernier, un notable Allemand venant de Constantinople, et qui à plusieurs reprises a rempli des missions diplomatiques, qui connaît à fond la question d'Orient et surtout la question Arménienne, et dont nous sommes malheureusement obligés de taire le nom pour le moment, lors de son passage à Genève, nous déclara: "Tout ce qui se

Թարգմանութիւնը.—

Այս ամսու 11-ին, Գերմանիոյ Ռայխստակի նիստին, Արտաքին նախարարութեան քաղաքական բաժանմունքի տնօրէնը, պ. Ֆոն Շարուն, պատասխանելով հայոց մասին ընկերվար երեսփոխան Լայպքնեխտի մէկ հարցումին, ըսաւ.—

«Վարչապետը գիտէ որ [Բ.] Դուրը թշնամիներու մեքենայութեանց դիմաց, ատեն մը առաջ ստիպուած եղած է Օսմանեան կայսրութեան կարգ մը շրջաններէն պարպել տալ հայ բնակչութիւնը եւ անոր համար բնակութեան նոր վայրեր ճշդել»:

Մենք ի վիճակի ենք բացայայտօրէն հերքելու այս յայտարարութիւնը, որ ոչ մէկ կերպով կը համապատասխանէ իրականութեան: Եւ արդարեւ պաշտօնական այդ յայտարարութեան դէմ բազմաթիւ փաստեր կան չէզոք [երկիրներու] մամուլին, օրինակ՝ Ամերիկայի, Ռումանիոյ, ինչպէս նաեւ Պոլկարիոյ (նախքան պատերազմի մէջ մտնելը) թերթերուն մէջ, առանց խօսելու Ֆրանսայի, Իտալիոյ, Ռուսիոյ եւ մանաւանդ Անգլիոյ լրագիրներու մասին:

Գալով մեզի, բազմաթիւ այդ փաստերէն առաջ կը բերենք հետեւեալը.—

Անցեալ տարուան վերջերուն, Կոստանդնուպոլսէն եկած գերմանացի երեւելի անձնաւորութիւն մը, որ բազմաթիւ դիւանագիտական առաքելութիւններ կատարած է, որ քաջատեղեակ է Արեւելեան եւ, մանաւանդ, Հայկական հարցին, եւ որուն անունը դժբախ-

passé en Arménie a été depuis longtemps projeté par les Jeunes-Turcs, ils n'attendaient qu'un moment propice et l'horrible guerre actuelle fut la meilleure occasion pour eux. – *L'insurrection Arménienne n'est qu'un prétexte. J'ai des preuves que je publierai toutes en leur temps*, nous assurait-il.

Laquelle de ces deux déclarations est exacte?

L'Officielle, prononcée de la Tribune du Reichstag Allemand ou bien celle de l'honorable Allemand émise dans notre rédaction?

Laquelle des deux est mensongère?

Pour nous, ainsi que pour le monde entier, il est hors de doute que c'est la déclaration officielle qui est contre la vérité et contre laquelle s'élèvent les cris de protestations de centaines de millions de victimes innocentes, d'enfants, de jeunes filles et de vieillards; c'est contre elle que crie le sang de centaines de milliers de martyrs, l'Arménie ruinée et transformée en un vaste cimetière.

*
* *

L'un des chefs combattants de Sassoun, nommé Ruben*, qui a pu grâce à son héroïsme, accompagné de 30 combattants et volontaires, percer la ligne des troupes Turques et hordes Kurdes et passer des hautes sommités de Sassoun au Caucase, s'est rendu à Petrograd pour exposer la situation de l'Arménie aux dirigeants du Gouvernement Russe et, à son retour, a présenté à la colonie Arménienne de Moscou le rapport suivant que les journaux russes ont également publié.

Ce rapport qui jette quelques clartés de haute importance sur les faits déroulés au cours de l'année 1915 en Arménie présente en même temps l'image réelle des événements qui y ont eu lieu.

Au début de la guerre Européenne, a dit le rapporteur, s'est réuni à Erzeroum le Congrès du Parti "Daschnakzoutioun" dans le but de prendre une dé-

տաբար ստիպուած ենք չչիչել առ այժմ, ժընեւ այցելութեան ընթացքին մեզի յայտարարեց. «Ինչ որ տեղի կ'ունենայ Հայաստանի մէջ, շատ վաղուց էր ծրագրուած Երիտ-թուրքերու կողմէ. կը սպասէին պատեհ ժամանակին միայն, եւ այժմու ահաւոր պատերազմը լաւագոյն առիթը հանդիսացաւ իրենց համար: Հայկական ըմբոստութիւնը պատրուակ է միայն: Ունին ապացոյցներ. բոլորը պիտի հրատարակեն իր ատենին, կ'ապահովեցնէր ան:

Այս երկու յայտարարութիւններէն ո՞րն մէկն է ճիշդ: Գերմանական խորհրդարանի բեմէն կատարուած պաշտօնական յայտարարութիւնը, թէ մեր խմբագրատան մէջ պատուարժան գերմանացիին ըրած յայտարարութիւնը:

Երկուքէն ո՞րն է խաբէականը: Մեզի, ինչպէս նաեւ ամբողջ մարդկութեան համար, կասկածէ վեր է որ խաբէականը պաշտօնական յայտարարութիւնն է, որ՝ ան հակառակ է ճշմարտութեան եւ որուն դէմ կը բարձրանան բողոքի աղաղակները հարիւր հազարաւոր գոհերուն, երեխաներուն, աղջնակներուն եւ ծերունիներուն. այդ յայտարարութեան դէմ կ'աղաղակէ հարիւր հազարաւորներու արիւնը, աւերուած ու հսկայական գերեզմանոցի վերածուած Հայաստանը:

*
* *

Սասնոյ մարտիկներու պետերէն մէկը, Ռուբէն*, որ շնորհիւ իր հերոսութեան 30 մարտիկներով եւ կամաւորներով, կարողացաւ ձեռքի թրքական զօրքերու եւ քրտական հրոսակներու շղթան, եւ Սասնոյ բարձունքներէն անցնել Կովկաս, գնաց Պետրոգրադ՝ պարզելու համար ռուս կառավարութեան ղեկավարներուն Հայաստանի կացութիւնը. վերադարձի [ճամբուն վրայ], Մոսկուայի հայ համայնքին ներկայացուց հետեւեալ գեկուցագիրը, զոր ռուս լրագիրներն ալ հրատարակեցին:

Այս գեկուցագիրը, որ շատ կարեւոր լուսաբանութիւններ կու տայ 1915 տարուան ընթացքին Հայաստանի անցուղարձերուն մասին, կը ներկայացնէ միեւնոյն

*) Ruben est un des chefs de la révolution arménienne. Pendant le régime du Sultan Hamid, il a dirigé des groupes de volontaires et pris une part active aux combats de défense nationale en Arménie. Avec la constitution Ottomane, il déposa ses armes et se rendit à Genève pour se consacrer aux travaux intellectuels. Il entra à la faculté des Sciences de l'Université pour se spécialiser dans la Chimie, mais le devoir envers sa patrie l'ayant appelé à la besogne beaucoup plus tôt qu'il ne s'y attendait, il dut abandonner à moitié chemin ses études et se rendre en Arménie. Avec l'insurrection, il reprend les armes et devient un des chefs des combattants de Sassoun.

*) Ռուբէն ղեկավարներէն մէկն է Սասնոյ յեղափոխութեան: Մուլթան Համիտի վարչակարգին օրօք, ան առաջնորդած է կամաւորներու խումբեր եւ գործօն կերպով մասնակցած Հայաստանի ազգային պաշտպանութեան մարտերուն: Օսմանեան սահմանադրութենէն ետք, զէնքերը վար դրաւ ու ժընեւ գնաց մտաւորական աշխատանքներու նուիրուելու համար: Արձանագրուեցաւ Համալսարանի գիտութեանց բաժանմունքին՝ քիմիա-ազիտութեան մէջ մասնագիտանալու համար. սակայն, հայրենիքի նկատմամբ իր պարտականութիւնը կատարելու կոչը իր նախատեսածէն աւելի կանուխ հասած ըլլալով, ստիպուեցաւ կիսատ ձգել ուսումը եւ վերադառնալ Հայաստան: Ապստամբութեան ժամանակ, վերստին զէնք կը վերցնէ ու կը դառնայ Սասնոյ մարտիկներու ղեկավարներէն մէկը:

cision nette en ce qui concerne l'attitude du Parti envers la guerre.

Les Jeunes-Turcs, renseignés au sujet du dit congrès, se hâtèrent d'envoyer leurs représentants à Erzeroum pour proposer, que la "Parti" déclarât nettement son intention d'aider et de défendre la Turquie en organisant l'insurrection des Arméniens du Caucase en cas de déclaration de guerre Russo-Turque.

D'après le projet des Jeunes-Turcs, les Arméniens s'engageraient à former des légions de volontaires et à les acheminer au Caucase avec les propagandistes Turcs dans le but d'y faire des préparatifs préliminaires d'agitation.

Les représentants des Jeunes-Turcs avaient déjà amené avec eux à Erzeroum les propagandistes susdits au nombre de 27 et de nationalité Persane, Turque, Lézgui et Circassienne. – Leur chef était Emire Hechmate – qui à ce moment organise des bandes de rebelles à Hamadan – Perse –. Les Turcs tâchent de persuader les Arméniens que l'insurrection est inévitable au Caucase, que sous peu les Tartars, les Géorgiens et les montagnards se révolteront et que par conséquent les Arméniens devraient les suivre.

Ils font même la future carte géographique du Caucase.

Les Turcs offraient, avec leur générosité toute spéciale: aux Géorgiens, les Provinces de Koutaïs et de Tiflis, la région de Batoum et une partie de la province de Trébizonde; aux Tartars: Choucha, les régions montagneuses jusqu'à Vladi-Caucase, Bacou et une partie de la province de Elisavétopol; aux Arméniens: Kars, la province d'Erivan, une partie d'Elisavétopol, un fragment de la province d'Erzeroum, Van et Bitlis. – Tous ces groupements deviendraient d'après les Jeunes-Turcs autonomes sous le protectorat Turc.

Le congrès d'Erzeroum refuse catégoriquement ces propositions et de son côté conseille aux Jeunes-Turcs de ne pas se lancer dans le courant de la conflagration Européenne, celle-ci n'étant qu'une aventure bien dangereuse qui mènerait la Turquie à la ruine.

Les Jeunes-Turcs se révoltèrent.

C'est là une trahison, s'écrie Boukhar-Eddine-Chakire – l'un des délégués de Constantinople – "Vous tenez le parti des Russes dans un moment si critique; vous refusez de défendre le Gouvernement" et "vous oubliez que vous jouissez de son hospitalité".

Les Arméniens restent stables dans leurs décisions.

Les Jeunes-Turcs avant le début de la guerre Russo-Turque essaient de nouveau d'obtenir l'aide des Arméniens. Ils recommencent leurs pourparlers avec

ատեն հոն տեղի ունեցած իրադարձութեանց իրական պատկերը:

Եւրոպական պատերազմի սկզբնաւորութեան, կ'ըսէ զեկուցաբերը, էրզրումի մէջ գումարուեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհ. ժողովը, որպէսզի յատկօրէն ճշդէ կուսակցութեան դիրքը պատերազմին նկատմամբ:

Երիտ-թուրքերը, տեղեկացած ըլլալով յիշեալ ժողովին մասին, էրզրում փութացուցին իրենց ներկայացուցիչները՝ առաջարկելու համար որ «կուսակցութիւնը» որոշ կերպով յայտարարէ իր կողմնորոշումը, – ռուս-թրքական պատերազմի յայտարարութեան պարագային, օգնելու թուրքիոյ եւ պաշտպանելու գայն՝ կազմակերպելով [Ռուսիոյ դէմ] կովկասահայութեան ապստամբութիւնը:

Թուրքերու մտադրութիւնը այն էր որ հայերը յանձն առնեն կամաւորական գունդեր կազմել թուրք քարոզիչներու հետ գանոնք առաջնորդել Կովկաս, հոն խլրտումի նախապատրաստութիւններ տեսնելու համար:

Երիտ-թուրքերու ներկայացուցիչները իրենց հետ էրզրում բերած էին արդէն վերոյիշեալ քարոզիչները, 27 հոգի, եւ ազգութեամբ պարսիկ, թուրք, լեզգի եւ չերքէզ: Իրենց ղեկավարն էր էմիրէ Հեշմատ, որ այժմ ապստամբական գունդեր կը կազմակերպէ Համատանի մէջ, Պարսկաստան: Թուրքերը կը ջանան համոզել հայերը, որ Կովկասի մէջ ապստամբութիւնը անխուսափելի է, որ շուտով թաթարները, վրացիները եւ լեռնականները [տաղստանցի] պիտի ապստամբին եւ, հետեւաբար, հայերը պէտք է հետեւէին անոնց:

Նոյնիսկ կը կազմեն ապագայ Կովկասի քարտէսը:

Իրենց յատուկ վեհանձնութեամբ, թուրքերը վրացիներուն կ'ընծայէին՝ Քուլթալիսի եւ Թիֆլիսի նահանգները, Պաթումի շրջանը եւ Տրապիզոնի նահանգին մէկ մասը:

Թաթարներուն՝ Շուշին, լեռնային շրջանները մինչեւ Վլատկաւկաս, Պաքուն եւ էլիզավետպոլ նահանգին մէկ մասը:

Հայերուն՝ Կարսը, Երեւանի նահանգը, էլիզավետպոլի մէկ մասը, էրզրում նահանգէն հատուած մը, Վանը եւ Պիթլիսը: Ըստ Երիտ-թուրքերուն, բոլոր այս խմբաւորումները թրքական հովանաւորութեան ներքեւ ինքնավար պիտի ըլլային:

էրզրումի Ընդհ. ժողովը բացարձակապէս կը մերժէ այս առաջարկները եւ իր կողմէ խորհուրդ կու տայ Երիտ-թուրքերուն չնետուիլ Եւրոպայի մէջ բոցավառած կրակին մէջ. այդ մէկը շատ վտանգաւոր արկածախնդրութիւն է, որ թուրքիոյ քանդումին պատճառ կ'ըլլայ:

Երիտ-թուրքերը գայրացան:

«Դաւաճանութիւն է այդ», կը բացազանչէ Պուխարէտիւն-Շաքիր – Կոստանդնուպոլսոյ պատուիրակներէն մէկը – «Տագնապալի պահու մը, ռուսերուն կողմը կը բռնէք. կը մերժէք պաշտպանել Կառավարութիւնը» եւ կը մոռնաք որ կը վայելէք անոր ասպնջակամութիւնը»:

des propositions plus modestes et cette fois-ci avec les représentants arméniens de chaque Vilayet.

A Van, les pourparlers sont menés par le Gouverneur provincial Tahsin-Bey et Nadji-Bey; à Mousch, par Servete-Bey e Iskhan-Bey – ce dernier se trouvant parmi les prisonniers de guerre en Russie –; à Erzeroum par le même Tahsin-Bey et d'autres.

La question d'insurrection des Arméniens du Caucase est supprimée. Ils proposent de faire une "petite concession" – s'unir à l'insurrection des Tartares du Caucase, cette dernière étant indiscutable pour les Jeunes-Turcs.

Les Arméniens, cette fois-ci, leur refusent également.

Dès la déclaration de la guerre, les soldats Arméniens se présentent à leurs régiments, pour y servir, mais refusent catégoriquement de former des bandes.

En général, jusqu'à la fin de 1914, la situation a été calme en Arménie.

Mais ce furent les Arméniens qui durent payer l'énorme défaite subie par les troupes turques. – Les Turcs étaient particulièrement révoltés, car les Arméniens du Caucase avaient formé des légions de volontaires que dirigeaient les chefs du mouvement libérateur Arménien, comme Andranik et d'autres.

C'est alors que commence le désarmement en masse des soldats, gendarmes et autres militaires arméniens. De ces soldats Arméniens désarmés ils formèrent des groupes de mille individus pour les travaux grossiers; ils les expédièrent dans différentes régions pour construire des ponts, creuser des tranchées et travailler aux forteresses.

En même temps, ils commencèrent les massacres en masse.

Les premières victimes tombèrent à Diarbékir, Erzeroum et Bitlis. – Ils massacrèrent en groupe, les soldats, femmes et enfants, soit dans les villes, soit dans les villages.

A la fin de Janvier dernier, les massacres s'étendent partout en Arménie.

Les atrocités turques, atteignent un degré incroyable.

Dans les villages d'Arméniens, on sort par groupes les mâles à partir de 12 ans et on les fusille sous les yeux des femmes et des enfants.

Le premier mouvement de révolte Arménien fut au commencement de Février à "Koms" où arrivèrent 70 gendarmes turcs ayant l'ordre de massacrer les notables parmi lesquels Ruben et Korioun; les arméniens, connaissant d'avance cette décision, s'élançèrent sur eux et les massacrèrent tous. Ils firent également, prisonnier le chef de la région chez le-

Հայերը կը մնան հաստատ իրենց որոշումներուն մէջ: Ռուս-թուրքական պատերազմի սկզբնաւորութենէն առաջ, Երիտ-թուրքերը դարձեալ կը փորձեն ձեռք բերել հայերու օգնութիւնը: Այս անգամ, իւրաքանչիւր վիլայէթի հայ ներկայացուցիչներուն հետ կը վերսկսին բանակցութեանց աւելի համեստ առաջարկներով:

Վանի մէջ բանակցութիւնները կը վարեն նահանգապետ Թահսին պէյ եւ Նաճի պէյ. Մուշի մէջ՝ Սերվետ պէյ եւ Իսխան պէյ – այս վերջինը կը գտնուի Ռուսիա որպէս պատերազմական գերի. Էրզրումի մէջ՝ միեւնոյն Թահսին պէյն ու ուրիշներ:

Ջնդուած է Կովկասի մէջ հայոց ապստամբութեան խնդիրը: Կ'առաջարկեն կատարել «փոքր զիջում» մը – միանալ Կովկասի թաթարներու ապստամբութեան, [որովհետեւ] այս վերջինը անհրաժեշտ է Երիտ-թուրքերուն համար:

Այս անգամ եւս հայերը մերժողական պատասխան կու տան:

Պատերազմի յայտարարութենէն անմիջապէս ետք, հայ զինուորները կը ներկայանան իրենց զօրագունդերու ծառայութեան, սակայն բացարձակ կերպով կը մերժեն [առանձին] հրոսակախումբեր կազմել:

Ընդհանուր կերպով, կացութիւնը հանդարտ էր Հայաստանի մէջ մինչեւ 1914ի աւարտը:

Սակայն, հայերուն համար ծանր արժեք թուրք զօրքերուն կրած սոսկալի պարտութիւնը: – Թուրքերը զայրացած էին մանաւանդ անոր համար, որ կովկասահայերը կազմած էին կամաւորական գունդեր, զորս կը ղեկավարէին հայ ազատագրական շարժման պետերը, ինչպէս Անդրանիկ եւ ուրիշներ:

Այն ատեն է որ կը սկսի հայ զինուորներու եւ ժամտարմներու զանգուածային ապազինումը: Զինաթափ եղած այս զինուորներէն, թուրքերը հազար հոգինոց գունդերը կազմեցին, ծանր աշխատանքներ կատարել տարու համար անոնց. ուղարկեցին զանոնք տարբեր շրջաններ՝ կամուրջներ շինելու, խրամներ փորելու եւ բերդերու մէջ աշխատելու համար:

Միեւնոյն ատեն, սկսան զանգուածային կոտորածները:

Առաջին զոհերը ինկան Տիարպեքիրի, Էրզրումի եւ Պիթիւսի մէջ: Քաղաքներու թէ գիւղերու մէջ, անոնք ջարդեցին խումբ-խումբ կիներ ու երեխաներ:

Անցնող տարուան Յունուարի վերջերուն ջարդերը կը տարածուին Հայաստանի բոլոր կողմերը: Թուրքական գազանութիւնները կը հասնին անհաւատալի աստիճանի մը:

Հայկական գիւղերու մէջ, տղամարդիկը (12 տարեկանէն սկսեալ) խումբերով դուրս կը հանեն եւ հրացանագարկ կ'ընեն՝ կիներու եւ երեխաներու աչքին առջեւ:

Հայերու ապստամբական առաջին շարժումը տեղի ունեցաւ Փետրուարի սկիզբը Գոմս գիւղին մէջ, ուր ժամանեցին 70 թուրք ժամտարմներ, որոնց հրահանգը լաճ էր կոտորել տեղւոյն երեւելի անձնաւորութիւններ:

quel ils trouvèrent l'ordre suivant écrit par le gouverneur de Mousch. – "Réaliser la décision donnée verbalement".

Le même jour les notables Arméniens se retirèrent sur les hauteurs où se groupèrent également les jeunes gens armés de la région de Mousch.

Les Turcs, au nombre de 2000, commandés par Mehmed Effendi, prennent l'offensive contre les Arméniens, mais ces derniers les anéantissent également.

Ainsi commença la révolte en Arménie.

Le Gouvernement, voyant que l'insurrection s'étend, recommence les pourparlers, promettant de faire cesser le désarmement des Arméniens, leur déportation et renonce au projet de l'extermination de Sassoun. – Il se forme une commission d'enquête à laquelle prennent part Essad Pacha, le kaïmakam de Boulanuck, le président du tribunal militaire de Mousch et comme Arménien, V. Papazian, député du Parlement Ottoman.

La commission d'enquête prouve que les gendarmes sont cause des troubles arméno-turcs et le gouvernement promet de mettre fin aux rerésailles.

Talaat-Bey télégraphie de Constantinople de laisser tranquilles les représentants Arméniens.

Le calme se rétablit provisoirement, mais au mois de Mai, les Turcs essaient de pénétrer à Sassoun et en même temps recommencent de façon inattendue les massacres à Kharbert, Erzeroum et Diarbékir.

Les Arméniens repoussent les Turcs et prennent position autour de la ville de Mousch où un grand nombre de troupes turques étaient concentrées à ce moment.

Les choses étaient dans cet état, lorsque à la fin de Juin les Turcs effectuèrent à Mousch les grands massacres; la moitié de ses habitants furent massacrés et l'autre moitié chassés de la ville.

Et les massacres s'étendaient dans toute la plaine de Mousch. Les Arméniens qui avaient pu se retirer sur les sommités de Sassoun avec leurs faibles forces et leur peu de munitions attaquèrent les Turcs dans les gorges et vallées de Sassoun, leur causant des pertes considérables. – Une partie des Arméniens échappés aux massacres percèrent la ligne des Turcs et arrivèrent à Van occupé déjà par les troupes Russes.

Le nombre des victimes arméniennes est considérable.

Rien qu'à Mousch des 15.000 Arméniens, il n'y a que 200 survivants; des 59.000 habitants de la plaine de Mousch, à peine 9.000 sont sauvés.

REDACTION DU DROSCHAK

ըր, ներառեալ Ռուբէնն ու Կորիւնը: Նախօրօք տեղեակ ըլլալով այս հրահանգին, հայերը յարձակեցան ու կոտորեցին ամէնքը: Բանտարկեցին նոյնպէս շրջանի դեկավարը, որուն վրայ գտան Մուշի կառավարիչին կողմէ գրուած հետեւեալ հրամանը. «Գործադրել բերանացի տրուած հրամանը»:

Միեւնոյն օրը հայ երեւելիները քաշուեցան լեռները, ուր հաւաքուեցան նոյնպէս Մշոյ շրջանի զինեալ երիտասարդները:

Թուրքերը, թուով 2000 հոգի, Մեհմէտ էֆէնտիի հրամանատարութեան ներքեւ, կը յարձակին հայերուն վրայ, բայց վերջիններս գանոնք նոյնպէս կ'ոչնչացնեն:

Այսպէս սկսաւ ապստամբութիւնը Հայաստանի մէջ:

Կառավարութիւնը, տեսնելով որ ըմբոստութիւնը կը տարածուի, կը վերսկսի բանակցութեանց, խոստանալով դադրեցնել հայոց զինաթափումն ու տեղահանութիւնը, եւ կը հրաժարի Սասնոյ բնաջնջման ծրագրէն: Կը կազմուի քննիչ յանձնախումբ մը, որուն մաս կը կազմեն էսատ փաշա, Պուլանուկի գայմագամը, Մշոյ զինուորական ատեանի նախագահը եւ, իբրեւ հայ, Օսմանեան խորհրդարանի անդամ Վ[ահան] Փափագեան:

Քննիչ յանձնախումբը կը փաստէ որ ժանտարմներն են եղած պատճառ հայ եւ թուրք խռովութեանց, եւ Կառավարութիւնը կը խոստանայ վերջ տալ բռնութիւններուն:

Թալէաթ պէյ Կոստանդնուպոլսէն կը հեռագրէ, որ հանգիստ թողուն հայ ներկայացուցիչները:

Ժամանակաւորապէս հանդարտութիւն կը տիրէ, բայց Մալխիսի թուրքերը կը փորձեն Սասուն թափանցել եւ, միեւնոյն ժամանակ անսպասելիօրէն, ջարդերը կը վերսկսին Խարբերդի, Էրզրումի եւ Տիարպեքիի մէջ:

Հայերը ետ կը մղեն թուրքերը եւ դիրք կը բռնեն Մուշ քաղաքի շուրջը, ուր այդ պահուն մեծ թիւով թրքական զօրագունդեր կեդրոնացուած էին:

Իրերու կացութիւնը այդպէս էր, երբ Յունիսի վերջերուն թուրքերը Մուշի մէջ ի գործ դրին մեծ կոտորածներ. բնակիչներուն կէսը ջարդուեցաւ, եւ միւս կէսը քաղաքէն դուրս արտաքսուեցաւ:

Հայերը չէին գիտեր որ այդ պահուն ռուսական զօրքերը Մուշէն միայն 2-3 ժամ հեռու կը գտնուէին:

Եւ ջարդերը կը տարածուէին ամբողջ Մշոյ դաշտին մէջ: Այն հայերը, որ տկար ուժերով ու անբաւարար ռազմամթերքով, յաջողած էին քաշուիլ Սասնոյ բարձունքները, յարձակեցան թուրքերուն վրայ, զգալի կորուստներ պատճառելով անոնց Սասնոյ կիրճերուն եւ ձորերուն մէջ: – Կոտորածներէն փրկուած մաս մը հայեր, ճեղքեցին թրքական զիծերը եւ հասան՝ արդէն ռուս զօրքերու կողմէ գրաւուած վան:

Մեծ է թիւը հայ զոհերուն: Միայն Մշոյ 15.000 հայերէն 200 վերապրողներ կան. Մշոյ դաշտի 59.000 բնակիչներուն հազիւ 9000ը ազատած են:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

Փաստ. 1214-1

107.– ԱՄԱՏՈՒՆԻԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. Կ.ԻՆ

Պուքրէշ, 5/18 Յունուար 1916

Միտքի ընկերներ,

Ստացայ ընկեր Դարբինեանի²²³ նամակը. անշուշտ Կ. Կ.Ի կողմէն ըլլալու էր:

Պուկարիոյ mobilisation-էն²²⁴ յետոյ եկած ձեր նամակները չենք ստացած, որով ձերմակը կ'ուզէք եղեր: Անցեալ ծածկագիր նամակներովս գրած եմ այդ խընդրոյն նկատմամբ. չեմ գիտեր ծածկագիրները բացած էք թէ ոչ: Ձերմակը²⁰⁸ դաշնակցական չէ. մեզի զարմանք պատճառեց երբ Յովնանը²²⁵ ժընեւէն հեռագրեց թէ՛ ձերմակը Ամերիկա կ'ուզեն. չկրցանք հասկնալ թէ որտեղէն կը ճանչնաք զայն եւ ով յանձնարարած է ձեզի:

Ձերմակը եթէ դաշնակցական ալ ըլլար, ձեր պահանջներուն գոհացում տուող մէկը չէ ամէն կերպով. ուրեմն վազ անցէք այդ սեւտայէն եւ ձեր ուժերով բաւականեցէք կամ ուրիշ ընտրութիւն մը ըրէք: Այս առթիւ անշուշտ մեր հեռագիրն ալ իր ատենին ստացաք:

Բժիշկ Զաւրիեւը այսօր մեկնեցաւ Փեթրոկրատ. 2.5 ամիս մնաց այստեղ, հազիւ հազ ձեռնարկը լրացաւ: Արդիւնքը դեռ անյայտ կը մնայ. յաջողութեան պարագային կը յուսանք իմացնել արդիւնքի մասին: Մեկնելէ առաջ ինդրեց եղբայրական եւ ընկերական ողջոյնները զրկելու. յուզուած է Ամերիկայի մեր ընկերներու գործունէութենէն. կը գտնէ ամենազնահատելի: Թող հաւատան մեր ընկերները, կ'ըսէ բժիշկը, որ մենք պիտի ապրինք եւ անպայման պիտի պատժենք թուրքերը, պիտի կործանենք զանոնք:

Հակառակ մեր բոլոր ջանքերուն Վիչապի հետ յարաբերութեան գիծ չկրցինք հաստատել. չափազանց դժուարացած է: Ներսի ընկերները մէկ ամիս առաջ սուրհանդակ զրկեցին. վերադարձին Ուզուն Գեօփրի բռնութեցաւ եւ հազիւ օձիքը ազատեց եւ նորէն հոս վե-

րադարձաւ, կը մնայ: Նոր միջոցներով գիծ հաստատելու համար մեր ընկեր Արզումանեանը Կովկասէն վերադարձին զրկեցինք Սոֆիա. չենք գիտեր կրցաւ բան մը ընել թէ ոչ. 10 օր առաջ ան ալ ձերբակալուեցաւ, անշուշտ թուրք դեսպանատան ցուցմունքով եւ ցարդ կը մնայ բանտ: Կ'աշխատինք կերպով մը ազատել եւ հոս բերել նորէն: Անշուշտ զարմանալի կը գտնէք մեր բարեկամներուն վարմունքը: Վաղը պիտի դիմենք այստեղի պուկար դեսպանին (նախկին մակեդոնացի մօտիկ ընկեր մը). տեսնեք ի՞նչ արդարացում ունի այդ գորչելի արարքին համար. պէտք եղածը պիտի ընենք, նոյնիսկ պիտի սպառնանք որ, եթէ հակառակ մեր բարեկամական զգացումներուն, կը շարունակեն իրենց անբացատրելի ընթացքը, մենք ալ պիտի սկսինք ընել մեր գիտցածը:

Թուրքիայէն եկած հատուկտոր լուրերէն կը հասկըցլի թէ հալածանքները ըստ բաւականին մեղմացած են. գերմանները սկսած են քիչ մը հաշուի առնել քաղաքակիրթ մարդկութեան մեղադրանքները: Պէտք է խոստովանիլ թէ Տքթ. Լեփսիուս բաւական աշխատանք կը թափէ իր ընկերներու աջակցութեամբ:

Կովկասեան գաղթականներուն ցուցակը կազմել ինչպէս դուք կը ցանկաք, այստեղէն անհնար է. հաւանաբար շուտով անցնիմ Կովկաս. եթէ կ'ուզէք այդ գործով կը զբաղիմ եւ պէտք եղածին պէս կը պատրաստեմ տեղի, ընտանիքի եւ անհատներու անունները. անշուշտ պէտք պիտի ըլլայ քիչ մը ծախս, որը պէտք է զրկէք ինձ. թերեւս 2 ամիս առնէ բոլոր տեղերը երթալով տեղին վրայ կազմել ցուցակները:

Ընկերական ջերմ բարեկներով՝
Պալքանի Կ. Կ.Ի կողմէ
ԱՄԱՏՈՒՆԻ

223.- Չշփոթել Ռ. Դարբինեան-Չիլիցաբեան Արտաշէսի հետ: Այս մէկը Դարբինեան Յովակիմ անդամ էր Ամերիկայի Կ. կոմիտէին:

224.- Ֆրանսերէն՝ գորաշարժ:

225.- Դաւթեան Յոնան, Դաշնակցութեան առաջին սերունդի մտաւորական եւ գաղափարախօս ընկերներէն:

— Ընկեր Լեռնեան ալ հոս է եւ հարկադրուած է մնալ քանի որ Ռուսաստան չի կրնար երթալ. դեսպանատան միջոցով կ'աշխատինք արգելքը հարթել: Խնդրեմ չմոռնալ մեր սրտագին համբոյրները բոլոր ընկերներուն:

Փաստ. 64-9

108.– ԼԵՈՓՈՒՏ ՖԱԻՐԻ¹⁴¹ ՆԱՍԱԿԸ Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ

Genève le 29 Janvier 1916

Monsieur Aaronian
Cher Monsieur,

J'ai reçu en Décembre une lettre de M. Scippel qui me communiquait une réponse qu'il avait reçue de M. Rombey, ambassadeur d'Allemagne. Elle était ainsi conçue: "En ce qui concerne les poètes arméniens dont vous faites mention, les consuls allemands en Turquie et spécialement en Asie Mineure font tout leur possible pour le sort du peuple arménien qui à la suite de la récente révolution et ses troubles qui en ont résulté, se trouve dans une situation si malheureux et difficile".

C'était la réponse à une lettre de la Société de Ecrivains Suisses qui demandait pour les écrivains arméniens l'intervention de l'Allemagne.

Malgré le peu d'intérêt de la réponse, cela nous intéressera de savoir que la Société suisse avait tenté une démarche en leur faveur.

Recevez cher Monsieur l'expression de mes sentiments très dévoués.

LEOP[OLD] FAVR

Թարգմանութիւնը.—

Սիրելի պարոն,

Գեկտեմբեր ամսուն նամակ մը ստացայ պարոն Շիփէլէն, որ հաղորդ կը պահէր զիս Գերմանիոյ դեսպան պարոն Ռոմբէյէն ստացած մէկ նամակին մասին: Այսպէս էր գրուած. «Ինչ կը վերաբերի հայ բանաստեղծներուն, զոր կը յիշատակէք, գերման հիւպատոսները Թուրքիոյ եւ մասնաւորաբար Փոքր Ասիոյ մէջ կ'ընեն իրենց կարելին հայ ժողովուրդի ճակատագրին համար, որ վերջին յեղափոխութեան եւ անկէ բխող խռովութեանց հետեւանքով, կը գտնուի այնքան դժբախտ եւ դժուարին վիճակի մը մէջ»:

Ասիկա պատասխան մըն էր զուիցերիացի գրողներու միութեան մէկ նամակին, որ Գերմանիոյ միջամտութիւնը կը խնդրէր [ի նպաստ] հայ գրագէտներուն:

Հակառակ պատասխանին [ներկայացուցած] աննշան շահեկանութեան, ձեզ պէտք է հետաքրքրէ այն՝ որ զուիցերիական Ընկերութիւնը իրենց օգտին դիմում մը կատարած է:

Սիրելի պարոն, ընդունեցէք յարգալից գգացմանս հաւաստիքը:

ԼԵՈՓՈՒՏ ՖԱԻՐ

Փաստ. 25-4

109.- ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս 25/II/916

Արեւելեան քիւրդի այս նամակը բացայայտ կերպով ցոյց կու տայ ռուսական քաղաքականութեան հիմնական շրջադարձը հայութեան նկատմամբ՝ Արեւմտեան Հայաստանի գրաւումէն ետք: Այդ մասին պերճախօս վկայութիւն մը կը կազմեն ստորեւ տրուած քաղուածքները Թիֆլիսի Ազգ. քիւրդի փոխ-նախագահ Յովսէփ Խունունցի ներկայացուցած զեկուցագրէն, իր Էրզրում այցելութենէն վերադարձին:

Նամակը գրուած է գաղտնի թանաքով. արտագրութիւնը կատարուած է Ժընեւ քաւական յաջող կերպով:

Ընկերներ!

Ստացած ենք ձեր երկու նամակները եւ պարունակութեանը վերահասու եղած ենք:

Այսօր ձեզ կը հաղորդենք էրզրումից նոր վերադարձած պրն. Խունունցի²²⁶ տեղեկագրի այն մասերը, որոնք կը վերաբերին Կարնի գրաւուելուց յետոյ տեղի ունեցած դէպքերու մասին, իսկ անկէ առաջ կատարուածներու մասին չարժէ գրել որովհետեւ ժամանակին Բալկաններէն ձեզ գրուած է:

Էրզրումի մէջ կան եղեր 50 ընտանիքի չափ, բոլորն ալ արհեստաւոր, որոնք թուրքերու նահանջի ատեն բոլորն ալ կոտորուած են. հազիւ մէկը ազատուած է: Այժմ կենդանի մնացած հայերի թիւը կը հասնի 80 հոգիի, իսկ ուրիշներ կ'ըսեն թէ մինչեւ 100 հոգի կան, գրեթէ բացառապէս կիներ եւ երեխաներ: Բոլորին խընամում եւ կերակրում է ամերիկական հիւպատոսը, որի մօտ ապաստան են գտել եւ պաշտպանութիւն 17 հայ աղջիկներ, բոլորն էլ ուսանողներ Ամերիկեան միսիոնարական վարժարանի: Հիւպատոս Ստիպելտոնը կ'ըսէ որ քանի իր մօտ կայ գաղթած հայերից իրեն յանձնուած պաշարեղէն եւ դրամ, դեռ կարող է մի կերպ այդ դիմողների կարիքներին հասնել, բայց այդ միջոցները սպառուելու վրայ են, հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն:

Քաղաքը տաճիկների ձեռքով չէ այրուած: Այրել են եկեղեցուն կից հայկական դպրոցը, առաջնորդարանը, շուկայի մի մասը եւ մի քանի զօրանոցներ: Հայերի տները չէն են մնացել որովհետեւ մէջները տաճիկներ են նստել եւ տիրացել: Նահանջի ժամանակ այդ տները այրել չէին կարող: Միայն ռուս զօրքի մօտենալուց յետոյ սկսուած է հրդեհումը: Զինուորներին արգելուած է տները քանդել եւ փայտերը վառել: Հայերի գոյքի մի մասը հակ-հակ կապուած ամբարած է եղել հայկական եկեղեցում, որտեղ տաճիկները նրանց ձեռք չեն տուել: Ռուսաց բանակի ներս մտնելուն, եկեղեցու դուռը բաց են անում եւ մէջի իրերն ամէն մի ուժ ունեցող տանում է:

Ռուս իշխանաւորների վերաբերմունքը դէպի տեղական տաճիկ ժողովուրդը բարեկամական է, դէպի հայերը՝ պարզ կերպով թշնամական: Կասկածում են թէ հայերից այս վայրում էկսցեզներ²²⁷ սպասել: Հայերի մուտք արգելուած է: Մի քանի կարնեցիք, որ Խորէն եպիսկոպոսի²²⁸ միջոցաւ գեն[երալ] Երևանից հեռագրական թոյլտուութեամբ Երևանից անցազիր էին ստացել՝ ազատ էրզրում վերադառնալու, ներս (մտնելուց) ընդունելու ժամանակ ահագին դժուարութիւն են յարուցել: Մեսրոպ եպ.ի²²⁹ դիմումը մերժուել է:

Մի քանի հացթուխներ Սարըղամիջից եկել են էրզրում բերելով ապրանքներ եւ ալիւր, եւ կամեցել էին խանութներ եւ փռեր բանալ, չէին թողել. ասել էին՝ տուէք ապրանքները մի տաճիկի, նրա անունով խանութ բաց արէք, որտեղ դուք կարող էք լինել միայն գործակատար. նրանք էլ ապրանքները ծախել ու վերադարձել էին: Մի յոյն իրաւունք է ստանում փուռ բանալու, բայց նրանից պահանջում են որ հայ ծառայող չպահէ: Այն հայ խուզարկուներին եւ ուղեցոյցներին որոնք ռուսական զօրքին ճամբաներ են ցոյց տուել եւ տարել ամրոցի կռնակը, առաջարկուել է երեք օրուայ մէջ հեռանալ. երբ այդ մարդիկը առարկել են թէ՛ չէ՞ որ իրենք ճամբաները ցոյց տուող եւ խուզարկուներ են, պատասխանել են թէ՛ մինչեւ այսինչ մասն են առաջնորդող, ոչ թէ խուզարկուներ եւ ուղեցոյցներ են:

Արգելուած է ռուս զօրքին հայ զինուորներ կարաւու²³⁰ նշանակել: Տեղական տաճիկ ժողովրդից ընտրուած են մուխթարներ որ պիտի քաղաքը պահպանեն. նրանց հրամայուած է ձերբակալել ամէն մի զինուորի որ կը համարձակուի մտնել տաճիկի տան մէջ:

226.- Խունունց Յովսէփ – Թիֆլիսի Ներսիսեան վարժարանի տեսուչ եւ փոխ-նախագահ Ազգ. քիւրդի:

227.- Ծայրայեղութիւններու, բռնութիւններու:

228.- Խորէն եպ. Մուրատբեգեան – ապագայ կաթողիկոս, խեղդամահ եղած:

229.- Մեսրոպ եպ. – Առաջնորդ Թիֆլիսի եւ նախագահ Ազգ. քիւրդի:

230.- Կարաւու – պահակակէտի հսկիչ:

Տաճկական տներում անշուշտ կան հայ կանայք, որոնց արգելում են դուրս գալ, չլինի թէ փախչեն ռուսների մօտ: Դրանցից մի քանիսին յաջողուել է դուրս պրծնել, բայց ո՛չ մի միջոց ձեռք չէ առնուած որ այդպիսիներին հնարաւորութիւն տրուի ազատուելու: Հաւանական է դրանցից շատերին տաճիկները իրենց տներում սպանում են:

Արգելուած է կողոպտել տաճիկների տները, մինչդեռ ինքը հրամանատար Կայիցինը Փոլսի գոյններով ապրանք է տանում իր մօտ հայոց եկեղեցուց. այդ արդէն բազմաթիւ փաստերով ապացուցուած է: Նրա օրինակից խրախուսուած ուրիշ հրամանատարներ նոյնն են արել: Ետտեսնիչը որ եկել է, ուզեցել է վերջ դնել այդ բանին, եւ կարգադրել է որ կազմուի մի յատուկ մասնախումբ, որը պիտի ցուցակագրէ հայերի մնացած գոյքը, հակերը բաց անէ, ինչ որ հարկաւոր է հիւանդանոցների եւ այլ հիմնարկութիւնների համար՝ վերցնէ ռեկվիզիտայով²³¹, մնացածները ծախի եւ դրամը յանձնի տէրերին, եթէ այդպիսիները գտնեն: Մենք ասում ենք, թէ հակերը բանալուց եւ իրերը խառնելուց յետոյ, ինչպէ՞ս կարող են տէրերը իրենց սեփականութիւնը ջոկել, եւ արդե՞ք չեն դուրս գալ ինքնակոչ սեփականատէրեր: Այդ առարկութեանը ուշք դարձնող չեղաւ:

Մասնաժողովի նախագահ նշանակուել է Չիքովանի անդամներից երկուսը, նոյնպէս վրացի են. հայերից նշանակուել է բժ. Տէրտէրեանը: Հէնց մասնաժողովի կազմուելու յաջորդ օրը Իշխ[ան] Արդութեանը նկատում է որ եկեղեցու դուռը բաց է: Մտնում է ներս եւ տեսնում՝ որ Չիքովանին քրքրում է իրերը, մի կողմ գատելով զանազան մետաքսեղէն եւ ուրիշ լաւ առարկաներ. գտել է պատարագի գինին եւ կարգադրել է իր տունը ուղարկել: Չիքովանին ճանաչելիս չի լինում

Տէրտէրեանը եւ երբ իմացել է որ նա էլ մասնաժողովի անդամ է — աւելի լաւ, շատ լաւ, ո՛չինչ եւայլն — եւ իրերն եւ գինին իր մօտ է փոխադրում:

Անհրաժեշտ է անմիջապէս հոգ տանել կենդանի մնացած հայերի վրայ եւ աշխատել ազատել տաճիկ ընտանիքների մէջ փակուած հայերին: Այժմեայ կոմենդանտ Իւան Խմեցկի [?], որ ազգով սարտ է, ծածուկ յայտնել է որ իրեն հրամայուած է առհասարակ հայերին հեռացնել էրզրումից եւ թոյլ չտալ նորերին այնտեղ հաստատուել: Անհրաժեշտ է նպաստել կարնեցիների վերադարձին Կարին եւ իրենց գոյքին տէր դառնալուն: Մասնասարեան դպրոցի կահարասիքին եւ գրադարանին դեռ մօտեցող չի եղել: Թէեւ Ռոստոմը աշխատում էր որ իրեն լիազօրութիւն տրուի այդ շինութիւնը իր հսկողութեան տակ առնելու, բայց դեռ հարց է թոյլտուութիւն կը ստանայ էրզրում մնալու: Ասում են՝ արդէն մի քանի թղթեր կորած են, մինչդեռ այնտեղ շատ թանկարժէք իրեր կան (կամ չկան)?:

Ի վերջոյ տեղեկագիրը կ'եզրակացնէ որ անհրաժեշտ է մի ազդեցիկ մէկը ղրկել որ ցուցակագրի անշարժ եւ շարժուն կալուածները եւայլն, եւ հսկէ անոնց վրայ: Գնացողը պիտի լինի ազդեցիկ մարդ ռուսների առաջ:

Այս է Խունուկի տեղեկագիրը:

Ռոստոմը հոն է դեռ. իրմէ նամակ չառինք. եթէ տեղեկութիւն ստանանք, կը գրենք:

Եւրոպա մարդ ղրկելու մասին կը խորհինք դեռ, շուտով մի որոշման կը յանգենք: Գրեցէք ձեր կողմերը եղած բոլոր շարժումների մասին:

Ընկերական ջերմ բարեկենդանով
(ստորագրուած) ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻԻՐՕ

231.- Բռնագրասումով:

110.— ՌՈՍՏՈՄԵՆ ՅՈՆԱՆ ԴԱԻԹԵԱՆԻՆ (Ժընև)

8-2-1916, Թիֆլիզ

Սիրելի Յոնան,

Միսակի նամակներից իմացայ, որ առողջութիւնդ դէպի լաւն է գնում: Բայց դեռ մի շտապիր այստեղ գալու: Կազդուրուիր բոլորովին:

Մեզ շատ հետաքրքիր է, ինչ է արւում Միջագետք տեղահան արուածների մասին: Որքա՞ն են մօտաւորապէս, ով, ինչ չափով նպաստ է հասցնում: Չի՞ կարելի աւելի կանոնաւորել, ի՞նչ ձեւով. մենք՝ կովկասցիներս ի՞նչ կարող ենք անել: Տեսնւ՞մ ես Favre-ի¹⁴¹ եւ միւս շուէյցարացի բարեգործների հետ: Ի՞նչ է կատարում Դանիայում, ուր մի ժամանակ այնքան բարեկամներ ունէինք, տեսնուիր, հարցրու եւ մանրամասը գրիր: Պօղոսի մասին համամիտ եմ քեզ: Ձերմ բարեկենդան բոլորին:

Քո Ռ.

Փաստ. 1404-114

111.- ՀԱՄԱԶԱՍՊԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

17 Փետր. 1916

Հաւանաբար Թիֆլիսէն ուղարկուած նամակի մը պատճէնն է՝ գաղտնի մելանով գրուած. մատիտով կատարուած արտագրութիւնը խիստ զուրկաբար է: Յայտնենք որ յաջորդող էջերուն տրուած շարք մը փաստաթուղթեր, նոյնպէս Կովկասէն ուղարկուած, գրուած են գաղտնի թանաքով, յայտնապէս գրաքննութենէն խուսափելու համար: Տեղեկութիւնները կը վերաբերին առ հասարակ Արեւմտեան Հայաստանի ազատագրուած շրջաններուն, ռուսական զօրքի եւ հայ կամաւորական զուգորդու մուտքէն ետք Վանի, Կարնոյ եւ Տարօնի եւ այլ վայրերու հայաթափ եւ աներեւելի վիճակին, ինչպէս նաեւ ցարական իշխանութիւններու վարած հակահայ նոր քաղաքականութեան:

Ընկերներ,

Կը հաստատենք Յունուար 27 եւ [Փետրուար] 7 թուակիրները:

Կովկասեան ճակատը խոշոր փոփոխութիւններ տեղի ունեցան վերջերս, որը չգրեկուս պատճառը այն է որ հեռագրական տեղեկութիւններից իմացած կը լինէք, որոնցից զատ ոչ մի նորութիւն չկար ձեզ հաղորդելու: Միայն երէկ ստացանք Սարըղամիշից մի նամակ մեր ընկերներէն, որոնք կը գնան Կարին եւ որը իր տեղեկութիւնները քաղած էր Կարնոյ հասած փախստականներից: Գրածին համաձայն Կարնոյ մէջ հազիւ 120-130 հոգի կան, կին, երեխայ եւ տղամարդ: Թուրքերը նահանջի ատեն 50 տունի չափ արհեստաւորները հետերնին տարած եւ կոտորած են. ասոնցմէ միայն մէկը ազատուած է, որ պատմած է մեր ընկերներուն: Շուտով Ռոստոմից նամակ կը ստանանք որը ձեզ կը գրենք:

Իսկ Մուշից դեռ որոշ լուր չկայ, միայն արձագանքներ է որ կը հասնի հոս, բայց ինչպէս կ'երեւի հոն շատ անելի ժողովուրդ կայ քան իրզրում: Քրդերը բաւականին ծառայութիւններ մատուցած են հայերուն, պահելով իրենց մօտ բաւական ժողովուրդ: Դրոն՝ որ այժմ Թիֆլիս կը գտնուի եւ որի խումբն է եղած առաջին անգամ Խնուս մտնողը, կը պատմէ թէ սկիզբը ոչ մի հայ չկար քաղաքը, երեկոյեան դէմ սկսան հաւաքուիլ դէսից դէսից 500-1000-1500 հոգի, մեծ մասով կանայք: Այդ շրջանի քրդերը, մեծ մասը զազաներ, իրենց մօտ պահել են շատ-շատեր եւ որ ամենազարմանալին է, այդ քրդերը գրեթէ չեն դպել հայ կանանց պատուին. այդ բանը

ինք ստուգած է բազմաթիւ կիներէ:

Իսկ այն քիւրդը որ ունի 100 ոչխար, իր հետ վերցրել է մի տղամարդ իբր ծառայ: Հոս գտնուող մշեցի մեր ընկերները իրենց փախած ատեն հարեւան քրդերու մօտ պահ տուած են բազմաթիւ երիտասարդներ եւ հիմա պիտի երթան փնտռելու:

Շուտով Մուրատի եւ Սեպուհի ղեկավարութեամբ մի քսան հոգինոց ձիաւոր խումբ մը կը մեկնի, որը նպատակ պիտի ունենայ մէկ կողմէն վրէժ լուծելու մնացեալ թուրքերէն եւ միւս կողմէն՝ լեռները, ձորերը թուրքերու մօտ իսլամացած եւ այլ տեղեր թաքնուած ցանուցրիւ ժողովուրդը հաւաքելու: Նոյն նպատակաւ երեւի կը կազմուի մի խումբ Կարնոյ շրջանին համար, որը յոյս ունինք որ արդիւնքները տայ:

Առ այժմ Կարին ազատօրէն գնալ զայլ արգիւրուած է. կարելի է գնալ միայն ռուսական շտաբի թոյլտուութեամբ: Ռոստոմը երէկ երեկոյ մեկնեցաւ. զանազան հարցերու շուրջ տեսակցութիւն կ'ունենայ գեն[երալ] Նուտենիչի հետ. իր ստացած տեղեկութիւնները ձեզ կը հաղորդենք:

Երէկ Պուրքէշի մեր ընկերներից լուր առինք, որ Վարդգէսը ողջ առողջ է եւ ապահով տեղ կը գտնուի: Զրոյց կը շրջի թէ Ակնուսին, Խաթակը, Զարդարեանը Պոլիս բերած են²³²: Գրեցինք Պուրքէշ որ այս լուրը հաստատեն Տոքթ. Լեփսիուսի միջոցաւ ու մեզ գրեն: Մեր ստացած տեղեկութիւնները ձեզ կը գրենք, նոյնիսկ հեռագրով կը հաղորդենք:

Սպասելով ձեր պատասխան նամակին

Ընկ. ջերմ բարեկներով
ՀԱՄԱԶԱՍՊ

232.- Պատերազմի ամբողջ տեսողութեան մման անհիմն գոյցներ շրջան ըրած են:

Փաստ. 25-5

112.– Յ. ԱՄԱՏՈՒՆԻԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

(Ծածկագրի պատճենը)

Թիֆլիս, 10/23-III-1916

Սիրելի ընկերներ,

Հոս գալիս յետոյ ընկեր Սեդրակի հետ ուղարկեցի նամակ մը. չեմ գիտեր ձեզ հասաւ թէ ոչ: Անկէ ի վեր դէպքերը գահավիժօրէն ընթացան եւ մենք եկանք դէմ յանդիման նոր երեւոյթներու, որոնք գերազանցապէս շշմեցուցիչ հանգամանք ունին: Իցիւ թէ պէտք չունենայի ձեզի գրելու հարկին տակ գտնուելու: Գոնէ մինչեւ վերջը կը մնայիք անգիտակ եւ ձեր մտքերն ալ մերինին նման չէր վրդովուեր: Դաշնակիցներու նոր որոշումով սկսուեց Կարնոյ յարձակողականը, որուն հետ նաեւ ամբողջ կովկասեան եւ արագօրէն (երկու բառ չի կարդացուիր):

Այսօր ամբողջ Հայկական Բարձրաւանդակը կը գտնուի ուռս բանակներուն ձեռքը: Հայ ժողովուրդը պահ մը կը յուսար նոր գրաւուած վայրերը անմիջապէս մտնել՝ իր որոնումները ընելու, մնացորդ բեկորները փրկելու կամ ներգաղթ մը ստեղծելու, որպէսզի շուտով շէննայ ամայացած Հայաստանը. սակայն յուսախաբուցիւն ամէն կողմէ: Նախ գրաւուած վայրերը, ուր զուտ թրքական շրջաններ են, ինչպէս Կարինը, բնաւ հայեր չեն մնացած — իսկ քրտական շրջանները, ուր զանազան նպատակաւ իբրեւ գերի, միրիպա²³³ եւ կամ կանայք իբրեւ հարձեր պահած էին, այդ շրջաններէն բաւական թուով դուրս կու գան, ինչպէս օրինակ Մշոյ, Խնուսի, Սասնոյ շրջանէն, ուր դուրս եկան 10 հազարի չափ հայեր, անշուշտ մեծ մասամբ սասունցիներ: Իսկ Կարինը գրաւելէ յետոյ գտնուեցաւ հայերու ամբողջ ապրանքները կնքուած ու պահ դրուած եկեղեցին եւ Ամերիկեան հաստատութիւնը: Ասոնց մէջ էին թէ

խանութներու եւ թէ տուներու ապրանքները. գինուորական իշխանութիւնը գրաւեց իբրեւ պատերազմական աւար եւ պատիժով սպառնաց բոլոր [անոնք որ] այդ մասին խօսք ընեն: Կարնոյ մէջ մէկուն տները կը գտնուին հայ կիներ եւ երեխաներ. սակայն գին[ուորական] իշխանութիւնը չի թոյլատրեր որ կարնեցիները երթան եւ որոնեն. չի թողուր նաեւ որ [անոնք] վերադառնան եւ իրենց տուներուն տէր դառնան: Առ հասարակ ամբողջ Ֆրոնտին վրայ առաւել կամ նուազ չափով այս երեւոյթը գոյութիւն ունի, եւ մարդ կը մնայ շուտաւ: Փաստեր շատ կան, սակայն կարիք չկայ մի առ մի թուել...

(երկու տողեր իրարու վրայ գրուած ըլլալուն չեն կարդացուիր):

...[բար]եացակամ է մեզ հանդէպ: Հարկաւոր է միշտ տեղեակ պահել նրանց չափազանց զգուշաւոր կերպով, սակայն հոս գալիս ի վեր որքան աշխատեցայ, որ աճապարեն մասնաւոր եւ կարող անհատներ զրկել, չաջողուեց: Սկզբունքով պէտքը ընդունած են եւ կը ձգձգեն: Ես յուսահատեցայ այլեւս, մօտերին չեմ երթար: Դիմեցի Քաղաքներու Միութեան որպէսզի ազատուողներուն շուտափոյթ օգնութիւն հասնի, եւ աջողուեց քանի մը խմբեր կազմել ու զրկել: Ես ինքս ալ տեղ մը պիտի երթամ, որովհետեւ բարոյական միջնորդող սպանիչ է այստեղ եւ անհանդուրժելի. գոնէ հեռու մնալով չեմ իմանար եղածները:

Քարդով մը ձեզի գրեցի դրամիս նկատմամբ. չէք գիտեր թէ որքան նեղը մնացած եմ. ոտքս կօշիկ չկայ, իսկ դուք կ'ուշացնէք. գոնէ երկտողով մը բացատրութիւն տայիք:

Համբոյրներով՝
ԱՄԱՏՈՒՆԻ

233.- Միրիպա – սեփականագործի գիւղացի, վարձկան մշակ իմաստով:

Փաստ. 64-19

113.- ԼԵՈՓՈԼՏ ՖԱԻՐԻ ՆԱՄԱԿԸ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Genève, le 2 avril 1916
6, Rue des Granges

ժրնեւ, 2 Ապրիլ 1916
6, Rue des Granges

Cher Monsieur,

Սիրելի պարոն,

Voici les renseignements que l'on avait à Constantinople il y a environ 4 semaines.

Ահաւասիկ այն տեղեկութիւնները զորս ունէինք Կոստանդնուպոլսէն, ասկէ շուրջ 4 շաբաթ առաջ:

Dans la région de Halep Damas, Nord de la Syrie Urfa - Deir el Zor – Bagdad Mossoul, il y avait au 1er Janvier 492.000 arméniens déportés. Il est possible de leur faire parvenir de l'argent par l'intermédiaire de l'ambassadeur américaine de Constantinople, mais difficile ou impossible d'envoyer des vivres, des vêtements etc. On peut envoyer de l'argent pour secours général, et aussi de l'argent pour secours à une famille ou à un individu, mais si les Turcs soupçonnaient l'expéditeur ou le destination d'être révolutionnaire l'argent n'est pas remis.

Հալէպ-Դամասկոս, հիւսիսային Սուրիա-Ուրֆա, Տէր Ջօր – Պաղատա-Մոսսուլ, Յունուար 1-ին կային 492.000 տարագրուած հայեր: Կարելի է անոնց օգնութիւն հասցնել ամերիկեան դեսպանի միջոցաւ, բայց դժուար կամ անկարելի է ուտեստեղէն, զգեստներ եւայլն ուղարկել: Կարելի է դրամ ուղարկել իբրեւ ընդհանուր նպաստ. նաեւ դրամի նպաստ ընտանիքի մը կամ անհատի մը, բայց եթէ թուրքերը կասկածին ուղարկողին կամ ստացողին յեղափոխական մը ըլլալուն, դրամը չի յանձնուիր:

Les malheureux déportés sont dans une misère terrible.

Ամերիկայի կոմիտէները պէտք է հասկացողութեան մը գան Ուաշինկթընի Պետական քարտուղարութեան հետ իրենց ուղարկածները հասցնելու համար Կոստանդնուպոլսոյ ամերիկացի դեսպանին: Ասիկա ամէնէն վստահելի միջոցն է:

Les comités arméniens d'Amérique devraient s'entendre avec le Department of State à Washington pour faire parvenir leurs envois à l'ambassadeur d'Amérique à Constantinople. C'est la manière la plus sûre.

Կովկասի մէջ կան 310.000 գաղթական հայեր, որոնց 200.000ը կարիքի մէջ կը գտնուին:

Au Caucase il y a 310.000 Arméniens réfugiés dont 200.000 sont dans le besoin.

Կը ցաւիմ որ աւելի ամբողջական տեղեկութիւններ չեմ կրնար տալ: Կը կարծեմ որ բարձրաձայն պէտք չէ արտայայտուիլ որ կարելի է օգնութիւն հասցնել ամերիկեան դեսպանատան միջոցաւ, որովհետեւ թուրքիոյ մէջ կացութիւնը շատ լարուած կը թուի ամերիկացիներու հետ:

Je regrette de ne pas pouvoir vous donner des renseignements plus complets. Je crois qu'il ne faut pas crier trop haut que l'on peut faire parvenir des secours par l'ambassade d'Amérique car la situation paraît très tendue en Turquie avec les Américains.

Թալէաթ պէյ ըսած է որ 800.000 հայեր տարագրած են եւ որ 300.000 ջարդուած, կախաղան հանուած կամ մեռած են տարագրութեան ճամբուն վրայ: Այս գնահատումը շատ ցած կը թուի իրականութենէն:

Talaat Bey a dit qu'ils avaient déporté 800.000 arméniens et que 300.000 ont été massacrés, pendus ou sont morts pendant le voyage [et la] déportation.

Հաւատացէք ինծի:

Cette estimation paraît très en dessous de la réalité. Croyez moi.

Bien à vous
LEOP FAVR

Ձերդ
ԼԵՈՓՈԼՏ ՖԱԻՐ

Փաստ. 1404-115

114.- ԳՐԻԳՈՐ ՊՈՒԼԿԱՐԱՑԻԷՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ
(Ծածկագրի պատճեն)

Թիֆլիս, 14 Ապրիլ 1916

Հ.Յ.Դ. Արեւելեան բիրոյի կողմէ արտասահման ուղարկուած այս փաստաթուղթը, 10 էջ, գրուած է գաղտնի մելանով, «բացուած» եւ արտագրուած է մատիտով. գունաթափ է եւ դժուար ընթեռնելի: Կը բաղկանայ երկու անջատ մասերէ. առաջինը կը խօսի հայ կամաւորական զոհերու մասին, յատկապէս ռուսական կառավարութեան այն որոշումին, որով պիտի վերջ տրուէր անոնց առանձին գործունէութեան. փոխարէնը կը ծրագրուէր հայ եւ ռուս սպաներու ղեկավարութեան տակ կազմել հայկական զօրագունդ մը: Արեւմտեան Հայաստանի մեծագոյն մասի գրաւումով, կը շրջուէր այսպէս հայութեան նկատմամբ ցարական կառավարութեան բարեացակամ վերաբերմունքը:

Փաստաթուղթին երկրորդ բաժինը, ստորեւ տրուած, Գ. Պուլկարացիի (Գրիգոր Կէօզեան, 1878-1922) մէկ նամակին արտագրութիւնն է: Ենթական դաշնակցական հին մարտիկներէն է: 1915 թ. Վանի հերոսամարտի օրերուն, իբրեւ անդամ Ձինուորական մարմնի, աչքառու դեր խաղացած էր ինքնապաշտպանութեան կռիւներուն մէջ: Ռուսական բանակի կողմէ Վան-Վասպուրականի երկիցս պարպումէն եւ վերագրաւումէն ետք, Գ. Պուլկարացի վերադարձած էր եւ իր զինակից ընկերներուն հետ լծուած՝ գաղթական հայութիւնը իր բնօրրանին մէջ վերահաստատելու աշխատանքներուն:

[Կը գրենք Վանայ մեր ընկերներից ստացուած տեղեկութիւնները]:

Վանի մէջ գտնուող գաղթականութիւնը առայժմ ամփոփուած է քաղաք, Այգեստան, արուարձաններ, երկու Թիմարներ եւ Հայոց Ձոր:

Կոստիան²³⁴ այդ շրջաններու մէջ ինչ որ կարելի է սկսած է գործադրել արդէն: Առ այժմ դժուար է Արճէշ, Արճեվազ, Վան-Իգտիր գծերու վրայ գործ սկսել, քանի որ բառի իսկական իմաստով ամայութիւն է: Այստեղ ոչինչ չէ կարելի ճարել: Լծկանի, կիթանի եւ սերմացուի կարիքները հոգալու համար՝ յոյս դնել տեղական միջոցների վրայ ցնորք է:

Պիթիլիսի եւ Խիզանի շրջաններէն հազար ու մէկ դժուարութիւններով ու կեղծիքներով հազիւ կարելի եղաւ երկու երեք հարիւր տաւար ձեռք բերել: Խոշապի քրտերէն գուցէ կարողանանք 150-200-ի չափ գոմէշներ ձեռք բերել. գնելու համար պէտք է անպատճառ տաճկական դրամ ունենալ, որովհետեւ քրտերը ռուսական դրամ չեն վերցնել: Լծկան գտնուած տեղերը վարուցանքը սկսուած է արդէն:

Եթէ գաղթականական վերադարձը չի կարելի զրուպել, աշխատեցէք նախ եւ առաջ գիւղացիները ուղարկել ինչքան կարելի է շուտ, որպէսզի կարողանան գարնան աշխատանքներուն հասնիլ: Քաղաքացիներէն կարեւոր են արհեստաւորներ, — հիւսն, որմնադիր, կօշկակար,

երկրագործ, որոնց կարիքը պիտի զգացուի գաղթականներու վերադարձէն յետոյ: Կարեւոր է նաեւ բարեխիղճ եւ ուղղամիտ ինտելիգենտ ուժեր ուղարկել գաղթականներուն գործը հսկելու ու պաշտօններ վերցնելու համար: Ասոնցմէ գատ մեծ կարիք կայ նաեւ առեւտրականների: Հրապարակը գատարկ է գրեթէ բոլորովին: Կեանքի անհրաժեշտ իրեր գրեթէ գոյութիւն չունին, եղածներն ալ շատ թանգ են:

Գաղթականների վերադարձին հետ կապուած է նաեւ ապահովութեան խնդիրը. կեանքի ու գոյքի ապահովութիւն չկայ, կատարեալ անտիրութիւն է: Քաղաքական իշխանութիւնը գոյութիւն չունի: Եղածն ալ երկու ջուխտ մի կենտ տղաներ են, նուիրուած իրենց անձնական շահերու եւ քմահաճոյքներու. իրենց ամբողջ գործունէութիւնը հիմնուած է թալանուած եւ կողոպտուած հայ գիւղացիներու կեանքի գնով ձեռք բերած չուլն ու չափութիւ կամ մի քանի չափ ցորենը իբրեւ թալանուած ապրանք գրաւելու եւ իւրացնելու մէջ:

Մեր գալէն վերջ կատարուած ոճիրներուն մասին կը զրենք, անկէ առաջուանները զանց առնելով, որոնք բաւական պիտի լինին դրուութիւնը պարզելու համար:

Օր ցերեկով սպաննուած գտնուեցաւ Արմենակ Հացագործեանը. ոճրագործները սպաննուողի վրայից տարած էին տասնոց ատրճանակն ու 1500-2000 ռուպլի փող:

Արտամետի ճանապարհին թալանուած եւ 3-4 տեղից վիրաւորեցին Միհրան Ճինոյեանը: Մաշտակի մէջ Գասպարին կողոպտելով առին 140 ռուպլի փողը, իսկ ինքը

234.- Համբարձումեան Կոստի – Վասպուրականի քաղաքներու միութեան լիազօր ներկայացուցիչ, ապա Վանի կոմիսար:

ճարպիկուլթեամբ փախած էր: Միսկներ գիւղի մէջ ապրող երեք գիւղացի,— Պօղոս Եղիազարեան, Կարապետ Պօղոսեան եւ Փալապըլք Մանաս — իրենց տանը մէջ սպաննուած գտնուեցան. ոճրագործները տարած են անոնց դրամները (քանակը չգիտենք) եւ մի ձի:

Կը լսուի, որ Վանի միլիցիան շուտով պիտի լուծուի: Տերմէնի²³⁵ խօսակցութիւններէն այնպէս կ'երեւի, որ հիասթափուած է. կամաց կամաց սկսած է սահմանափակել այդ կամայական կամաւորներու շուկուած իրաւունքները: Անոնց միջոցով նպաստ բաշխելու գործը դադարեցուցած է. խոստացած է նոր կոմիտէ մը կազմել որու մէջ պիտի մտնեն Տերմէնը, Կոստիան, բժիշկ Մատինեան (երկուքն ալ մեր ընկերներէից) եւ ուրիշներ, որոնք յոյս ունինք մերոնցից լինին մեծամասնութիւնը: Այս կոմիտէին իրաւասութիւնը մեծ է եւ բազմակողմանի:

Մեր գէնքերու պահեստը վառուած է բացի երկու հարիւրէն: Առ այժմ չենք կարող օգտուիլ այդ գէնքերէն: Նորոգութեան համար հարկաւոր են ժամանակ, վարպետներ եւ դրամ: Այս պատճառով առ այժմ չեն կարող կազմակերպական աշխատանք սկսիլ: Աշխատեցէք կամաւորներու եւ վերադարձող ընկերների միջոցով ուղարկել հարիւրի չափ կանոնաւոր հրացան իրենց փամփուշտներով, պայմանով որ մեզ բերեն ուղղակի:

Ժողովուրդը մեր ուզած շրջանակներու մէջ պահելու միտքը անիրագործելի է: Ամէն մէկը ինչ ալ լինի կ'ուզէ իր պապենական օճախը վերադառնալ. նախ որ

խեղճ գիւղացին չպիտի կարողանայ վստահ լինել, որ աշխատանքը օտար հողի վրայ պիտի թոյլատրուի իրեն. արդէն հիմակուանից բնիկները հալածանք սկսած են եկուորներու դէմ. տան, հողի, փայտի, խուրձի խնդիրներ ամէն օր անպակաս են: Շատ տեղեր այս կարգի խնդիրներ այն աստիճան սուր կերպարանք կը ստանան, որ եկուոր գիւղացիք ստիպուած կը լինին գիշերով գիւղէ գիւղ փոխադրուիլ: Այս կռիւը չէ սահմանափակած գիւղացու եւ անհատներու մէջ, այլ ամբողջ շրջանը՝ եկուորի դէմ. իրենց թշնամիներու լքած հողերը իրենց հալալ իրաւունքը կը համարեն. մէկ խօսքով գիւղացին իր գիւղին եւ ամէն շրջան իր շրջանին տէրն է ու ժառանգորդը:

Վերջին հրամանով գաւաչոց թոյլատրուած է վերադառնալ իրենց գիւղերը. գուցէ մի երկու օր վերջ նոր հրաման կը ստացուի Մոկսի, Կարկառի, Շատախի, Կարճկանի եւ Ալճեվագի համար: Ստիպուած ենք նախապատրաստուիլ ժողովուրդի ինքնապաշտպանութիւնը ապահովելու համար: Շրջանները դատարկ են. շատ տեղեր լեցուած են քրտերով: Զէնք չկայ, եղածն ալ խիստ թանգ է: Շուտով ուղարկեցէք գէնքերը, նաեւ ձեր հրահանգները:

Բարեկներով՝
ԳՐԻԳՈՐ ՊՈՒԼԿԱՐԱՅԻ

Մեր լաւ ընկերներից է. առ այժմ այսքան: Մի քանի օրից նորից կը գրենք: Թուականը մոռցանք՝ 14 Ապրիլ 1916:

235.- Տերմէն – Շրջանապետ Վանի:

Փաստ. 65-41

115.- ՏՐԱՊԻՉՈՆԻ ՉԱՐԴԵՐԸ

ՌՈՒՄԻՈՅ «ԸԱՂԱՔՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ» ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԻՇԽԱՆ ԱՐԳՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

«Դրօշակ»ի կողմէ երոպական մամուլին յղուած ուրիշ փաստաթուղթ մը,– Ռուսական բանակի բարձրաստիճան գինուորականներէն Իշխան Արղուօեան Երկայնաբազուկի տեղեկագիրը Տրապիզոնի ջարդերուն մասին: Հեղինակը անձամբ մասնակցած էր Տրապիզոնի գրաւման, ականատես եղած շրջանին մէջ թուրքերուն գործած սարսափներուն, մանրամասն տեղեկութիւններ քաղած սակաւաթիւ վերապրողներէն ու, մանաւանդ, օտար հաւաստի աղբիւրներէ:

Այս տեղեկագրին հետ միասին, «Դրօշակ»ի խմբագրութիւնը կ'ուղարկէ նաեւ տրապիզոնցի հայ սպայի մը՝ իր հայրենակից-բարեկամին դրկած մէկ նամակը, ուր հակիրճ բայց սրտառու կերպով կը նկարագրուի իրենց ընտանեկան պարագաներուն վիճակուած դառն ճակատագիրը:

Չոյզ փաստաթուղթերը ֆրանսերէն են շարադրուած. ստորեւ կու տանք զանոնք իրենց հայերէն թարգմանութեամբ:

LES MASSACRES DE TREBIZONDE

Թարգմանութիւնը.–

Rapport du Prince Arghoutian Yergainapazouk Représentant de "L'Union des Villes" de Russie

Trébizonde comptait avant la guerre 55.000 h. dont 25.000 Turcs, 15.000 Grecs et 15.000 Arméniens.

Nous avons occupé la ville sans coup férir et nous avons trouvé intact les somptueux palais, les magasins pleins de marchandises, les ponts, les routes, les casernes, le canal, les points stratégiques ainsi que d'énormes provisions.

Les Grecs nous expliquèrent que les Turcs en évacuant Trébizonde n'avaient rien détruit car ils étaient fermement convaincus qu'ils la réoccuperaient bientôt." Nous nous en garderons disaient-ils de détruire tous ces biens qui ne tarderont pas à passer de nouveau dans nos mains".

Quand les Russes entrèrent à Trébizonde il n'y avait plus que 15.000 h. presque tous des Grecs. Les Turcs s'étaient enfuis avec l'armée. Quant aux Arméniens ils avaient presque tous été massacrés ou noyés par les Turcs. Les seuls survivants de cette effroyable bouche-rie sont: quelques centaines d'enfants et 100 ou 120 francs-tireurs qui pour se soustraire au massacre firent une guerre de partisans.

Les Arméniens des villages environnants ont eu le même sort. Les atrocités dont furent victimes les Arméniens de cette région dépassent en horreur toutes cel-

Պատերազմէն առաջ Տրապիզոն ունէր 55.000 բնակչութիւն, որուն 15.000-ը յոյն եւ 15.000-ը հայ էին:

Մենք քաղաքը գրաւեցինք առանց դժուարութեան²³⁶, եւ անվթար վիճակի մէջ գտանք՝ չքեղ պալատները, ապրանքներով լեցուն վաճառատունները, կամուրջները, ճամբաները, զօրանոցները, ջրանցքը, ուղմազիտական դիրքերը, ինչպէս նաեւ հսկայական մթերք: [Թուրքերը] ոչինչ քանդած էին, համոզուած հաստատապէս որ շուտով պիտի վերագրաւեն զայն: «Պիտի չքանդենք, կ'ըսէին անոնք, այս հարստութիւնները, որոնք վերստին մեր ձեռքը պիտի անցնին անյապաղ»:

Երբ ռուսերը Տրապիզոն մտան, միայն 15.000 բնակիչ մնացած էր, գրեթէ բոլոր յոյն: Թուրքերը փախած էին բանակին հետ: Ինչ կը վերաբերի հայերուն, ջարդուած էին գրեթէ բոլորը թուրքերու կողմէ, կամ խեղդամահ եղած ծովուն մէջ: Սարսափելի այս սպանդէն վերապրած էին միայն քանի մը հարիւր երեխաներ եւ 100-120 ազատամարտիկներ, որոնք ջարդերէն ազատելու համար փարթիզանական կռիւ կը մղէին:

Միեւնոյն ճակատագիրը ունեցած էին շրջակայ գիւղերու հայերը: Այն գազանութիւնները՝ որոնց գոհ գացին այս շրջանի հայերը, իրենց ահաւորութեամբ կը գերազանցեն այլուր կատարուածները: Յոյներու, ամերի-

236.- Տրապիզոնը ռուսերու կողմէ գրաւուեցաւ 1916 թ. Ապրիլին:

les qui ont été commises ailleurs. Les déclarations des Grecs, du missionnaire américain, d'une Suissesse propriétaire d'un hôtel de la ville, de quelques sujets russes, de deux arméniens catholiques, de quelques francs-tireurs qui ayant appris la chute de Trébizonde sont descendus des montagnes, nous présentent de la façon suivante l'horrible tableau de ces massacres. C'est en Juillet 1915 qu'ont commencé à Trébizonde la déportation des Arméniens.

D'après les uns les Turcs ont accordé 5-6 jours pour se préparer au départ. Dès le premier jour ils ont arrêté quelques centaines de jeunes gens et des notables en vue sous prétexte qu'ils contribuèrent aux succès russes. Ils les ont embarqués dans des mahonnes et conduits du côté d'Eros et du cap Bladeau. Quelques-unes des victimes qui purent se sauver racontèrent qu'ils furent tous noyés.

Le délai expiré des gendarmes ont séparé les hommes des femmes; parmi ces dernières ils ont choisi les plus jeunes et les plus jolies, ils les ont enfermées dans une maison où elles furent mises à la disposition des officiers. Ces femmes et ces jeunes filles quelques temps après furent égorgées et jetées à la mer.

Les autres, hommes et femmes ont été séparément déportés à Djevizlik qui est à 25 verstes de Trébizonde; les femmes furent violées par les gendarmes. A Djevizlik tous furent massacrés, des enfants embrochés à la batonnette. Un officier imagina un abominable divertissement, il fit aligner des enfants, puis il s'amusa à les abattre à coups de revolver en les visant au front. Ceux qui restèrent encore après ces carnages, hommes, femmes et enfants furent poussés en avant vers Erzeroum. Des paysans turcs racontèrent aux Grecs que la route était jonchée de cadavres d'enfants et d'adultes.

Au moment de quitter Trébizonde les Arméniens avaient reçu paraît-il, l'assurance qu'il ne leur serait fait aucun mal. Mais quand les premiers groupes quittèrent la ville, ils commencèrent à enlever de force les enfants mâles et les plus vigoureux furent distribués aux Turcs pour profiter gratuitement de leur bras après avoir convertis à l'islamisme. Quant aux autres les uns furent tués, les autres furent selon les témoignages des Grecs, mis dans des corbeilles et jetés à la mer.

Le commandant d'un navire de guerre m'a raconté que la mer a rejeté sur la côte 11 cadavres d'enfants. Beaucoup de cadavres se trouvent sur le rivage non loin d'Arkhavé. Les Turcs en quittant la ville ont laissé aux Grecs quelques-uns des enfants Arméniens.

Des membres d'une société de bienfaisance de Ba-

կացի միսիոնարին, քաղաքի մէկ պանդոկատէր գուլիցերուհիի մը, կարգ մը ռուսահպատակներու, կաթողիկէ երկու հայերու, Տրապիզոնի անկումը լսելով լեռներէն վար իջած [հայ] արձակագէտներու յայտարարութիւններէն, հետեւեալ ձեւով կը պատկերացուին այդ սոսկալի ջարդերը:— 1915 թ. Յուլիսին է որ սկսած է Տրապիզոնի հայերուն տարագրութիւնը:

Ըստ ոմանց, թուրքերը 5-6 օր ժամանակ տուած են մեկնումին համար: Առաջին օրէն ձերբակալած են քանի մը հարիւր երիտասարդներ եւ ծանօթ երեւելիներ, այն պատրուակով որ անոնք կրնան օժանդակել ռուսերու յաջողութեանց: Թրքական նաւերու վրայ բարձրացնելով, տարած են զանոնք էրոսի եւ Պլատոյի հրուանդանին կողմերը: Փրկուած զոհերէն մէկ քանին պատմեցին որ մնացեալ բոլորը ծովամոյն եղած են:

Տրուած պայմանաժամի աւարտին, ժանտարմները տղամարդիկը զատած են կիներէն: Այս վերջիններէն ընտրած են ամէնէն երիտասարդներն ու գեղեցիկները, փակած են զանոնք տան մը մէջ, ուր դրուած են անոնք սպաներու տրամագրութեան տակ: Ատեն մը ետք, այդ կիներն ու աղջիկները սպաննած ու ծով նետած են:

Միւսները՝ տղամարդ եւ կիներ՝ անջատաբար քսորուած են ձեւիզլիք, որ Տրապիզոնէն 25 վերստ հեռու կը գտնուի: Կիները բռնաբարուած են ժանտարմներու կողմէ: Ձեւիզլիքի մէջ բոլորը կոտորուած են, երեխաները սուիներուն շամփուրուած: Սպայ մը զարչելի գուարճալիք մը երեւակայած է.— Տղաքը շարքով կանգնեցուցած է, յետոյ գուարճացած՝ սպաննելով զանոնք ատրճանակի հարուածներով՝ նշան բռնելով անոնց ճակատներուն: Այս սպանդէն ողջ մնացածները,— տղամարդիկ, կիներ եւ մանուկներ — քշուած են առաջ դէպի էրզրում: Թուրք գիւղացիները պատմած են յոյներուն, որ մանուկներու եւ չափահասներու դիակները ճամբուն վրայ սփռուած էին:

Տրապիզոնը լքած ժամանակ, ըստ երեւոյթին, [թուրքերը] վստահեցուցած էին հայերը [թէ որեւէ չարիքի պիտի չհանդիպին. բայց երբ առաջին խումբերը կը հեռանան քաղաքէն, սկսած են բռնութեամբ վերցնել մանչերը եւ անոնցմէ ամէնէն զօրեղները բաշխել թուրքերուն, որպէսզի մահմետականցնեն եւ օգտագործեն զանոնք իրենց աշխատանքներուն մէջ: Գալով միւսներուն, ոմանք սպաննած, իսկ ուրիշները, ըստ յոյներու վկայութեան, կողովներու մէջ դնելով ծով թափած են:

Ռազմանաւի մը հրամանատարը պատմեց ինծի, որ ալիքները ծովափ նետած են 11 մանուկներու դիակները: Շատ մը դիակներ կը գտնուին Արխաւի ծովեզերքէն ոչ շատ հեռու: Քաղաքէն հեռացած ժամանակ թուրքերը քանի մը տղայ ձգած են յոյներուն:

Պաթումի Բարեսիրական ընկերութեան անդամները այժմ կը հաւաքեն Տրապիզոնի եւ շրջակայքի այս որբերը: Մինչեւ հիմա հաւաքած են 50 հատ, բայց յոյներու

toum sont en train de recueillir ces orphelins à Trébizonde et aux environs. Jusqu'à présent ils ont recueilli 50; mais selon le dire des Grecs on pourrait atteindre le chiffre de 1000. La plupart de ces petits malheureux ont été hébergés par les familles grecques qui en cette douloureuse circonstance ont rendu de signalés services aux Arméniens et fait preuve d'une grande humanité.

Beaucoup de ces enfants se sont sauvés dans les forêts voisines, ils ont dû se cacher dans les cavernes, se nourrissant de racines, de fruits et quelquefois de la charité des rares passants à travers la forêt.

A la vue de ces orphelins hospitalisés en ce moment à Trébizonde on est saisi d'une douloureuse impression: ils sont encore couverts de haillons, ils sont d'une débilité extrême; ils regardent tous ceux qui s'approchent d'eux avec des yeux pleins d'épouvante. Ils demandent même à ceux qui les soignent s'ils ne vont pas les tuer. J'ai vu un jeune garçon fils de parents aisés ayant eu précepteur, aujourd'hui à demi vêtu, malade, le corps couvert de plaies. J'ai vu chose horrible une malheureuse fillette de 12 ans enceinte. J'ai vu une jeune fille d'une riche famille, élevée à l'européenne parlant plusieurs langues que les officiers ont violée à tour de rôle après qu'ils eurent massacré ses parents. Ces deux jeunes filles, quand nous les vîmes, manifestaient tous les signes de la folie. Il m'est impossible d'oublier la tragique situation de cette pauvre fillette qui répétait sans cesse qu'elle aurait un enfant de celui qui a assassiné ses parents et qui a à jamais brisé sa vie.

Les Arméniens catholiques n'eurent d'abord pas à se plaindre mais plus tard ils eurent le même sort que les Arméniens grégoriens; même les sœurs Mikhitaristes furent égorgées.

Le métropolitain grec avait recueilli 200 enfants, le consul américain 300. Au début le gouvernement laissa faire à condition que les enfants aient moins de 10 ans. Mais au moment le plus actif des massacres il exigea que les enfants soient confiés à l'orphelinat de la ville où ils furent pendant un certain temps assez bien traités, mais bientôt l'orphelinat se vida: les fillettes de 10-11 ans furent distribuées aux Turcs comme odalisques; quant aux autres il est probable qu'ils furent noyés ou empoisonnés.

Quelques enfants furent aussi sauvés par des familles persanes habitant Trébizonde.

C'est l'opinion unanime des Grecs que le promoteur de ces massacres fut le gouvernement turc qui les fit

հաւաստմամբ այս թիւը կարելի է բարձրացնել հազարի: Այդ դժբախտ մանուկներուն մեծամասնութիւնը կը հիւրընկալուի յոյն ընտանիքներուն մօտ, որոնք ցաւալի այս պարագաներուն մէջ աչքառու ծառայութիւն եւ մարդկային վերաբերում ցոյց կու տան հայերուն:

Շատերը այս մանուկներէն փրկուած են ապաստան գտնելով շրջակայ անտառներուն մէջ. պահուրտած են քարայրներու մէջ, սնանելով բոյսերու արմատներով ու պտուղներով եւ, երբեմն, շնորհիւ պատահաբար անտառէն անցնող մարդոց ողորմութեանը:

Տրապիզոնի հիւանդանոցին մէջ այս պահուն գտնուող որբերու տեսարանին առջեւ, մարդս ցաւալի տպաւորութեամբ մը կը պարուրուի. տակաւին ցնցոտիներու մէջ են անոնք, ծայրայեղօրէն վատոյժ. սարսափահար աչքերով կը նային բոլոր անոնց որ կը մօտենան իրենց: Մինչեւ իսկ զիրենք խնամողներուն հարց կու տան թէ արդեօ՞ք պիտի չսպաննեն զիրենք: Տեսայ մանուկ մը, զաւակ բարեկեցիկ ծնողներու, այժմ կիսամեղկ, հիւանդ, մարմինը վէրքերով ծածկուած: Տեսայ, սարսափելի բան, 12 տարեկան աղջնակ մը՝ յի: Տեսայ հարուստ ընտանիքի աղջիկ մը, եւրոպական ուսումով, որ շատ մը լեզուներ կը խօսէր. ծնողները սպաննելէ ետք, [թուրք] սպաները փոխնիփոխ բռնաբարած էին զինք: Այս երկու աղջիկները, երբ տեսանք զիրենք, խելագարութեան մը բոլոր նշանները ցոյց կու տային: Անկարելի է որ մոռնամ ողբերգական վիճակը այն խեղճ աղջնակին, որ կը կրկնէր անդու թէ զաւակ պիտի ունենար այն մարդէն որ սպաննած էր իր ծնողները եւ ընդմիջտ քանդած իր կեանքը:

Կաթողիկէ հայերը գանգատելու պատճառ չեն ունեցած սկիզբը, բայց աւելի ուշ անոնք եւս ենթարկուած են լուսաւորչական հայերու ճակատագրին: Մորթուած են մինչեւ իսկ Միսիթարական միաբանութեան մայրապետները:

Յոյներու մետրոպոլիտը 200 երեխաներ հաւաքած էր, ամերիկացի հիւպատոսը՝ 300: Սկիզբը կառավարութիւնը ազատ թողած է, պայմանաւ որ մանուկները 10 տարեկանէն վար ըլլան: Սակայն ջարդերու ամէնէն թէ՛ միջոցին, պահանջած է որ փոքրիկները յանձնուին քաղաքի որբանոցին, ուր ատեն մը բաւական լաւ խնամուած են, բայց շուտով որբանոցը պարպուած է. — 10-11 տարեկան աղջնակները որպէս հարեմի հարճ թուրքերուն պարգեւ տրուած են. գալով միւսներուն, հաւանաբար ջրախեղդ եղան անոնք կամ թունաւորուեցան:

Քանի մը տղաք փրկուեցան Տրապիզոն բնակող պարսիկ ընտանիքներու կողմէ:

Յոյներու միաբան կարծիքով, ջարդերու դրդիչը թուրք կառավարութիւնն է, որ զանոնք գործադրել տուած է կանխամտածուած եւ ըստ պատշաճի պատրաստուած ծրագրով մը: Տեղական իշխանութիւնը

exécuter selon un plan prémédité et dûment préparé. L'autorité locale punissait sévèrement tous ceux qui essayaient de cacher les Arméniens. Un fonctionnaire supérieur turc a avoué à un notable grec qu'on avait noyé environ 800 enfants.

Quelques arméniens se sont suicidés au moment où les gendarmes venaient chercher les membres de leur famille; on cite entre autre: Minas Toutountchian et Katchik Aslanian qui se sont brûlés la cervelle après avoir tué leurs filles.

Les quelques survivants de cette effroyable tragédie expriment leurs sentiments de vive reconnaissance envers tous ceux qui essayèrent avec courage de sauver quelques-uns de ces malheureux. Ils citent les noms suivants: le consul d'Amérique, le missionnaire américain M. Grafforte; une Suissesse propriétaire d'un hôtel; un Turc Chelket bey Chatir Zaddé dont le fils fut tué par les gendarmes pour avoir commis le crime... d'intervenir en faveur des massacrés.

Par contre nous avons appris de source autorisée le fait suivant: le consul allemand avait depuis longtemps à son service une cuisinière arménienne; malgré toutes les facilités dont il disposait pour la cacher, il l'a remise aux bourreaux qui l'ont égorgée.

On nous a aussi raconté la conduite inhumaine de la femme du consul allemand qui eut l'occasion de sauver quelques-unes de ces victimes et qui n'en a rien fait.

Les Turcs ont agi de la façon suivante avec les biens des Arméniens. Les maisons environ 1000, ont été confisquées au profit du trésor impérial, les objets précieux ont été réunis dans une maison et les meubles dans l'église. Après le massacre des Arméniens tous les butins ont été transportés chez les Turcs; puis quand ces derniers abandonnèrent la ville ces meubles et ces objets ainsi que ceux des Turcs furent pillés par une partie des habitants de la ville.

Les Turcs abandonnèrent volontairement Trébizonde après la chute d'Erzeroum mais ils furent contraints de l'évacuer après la prise de Rizé.

Ils propageaient la nouvelle que l'armée russe était précédée de volontaires arméniens qui massacraient tous les Turcs sur leur passage, que les Russes enverraient les femmes dans des maisons publiques; quant aux jeunes gens ils les incorporeraient dans l'armée.

Quant aux secours que doit fournir l'Union des Villes, le prince Argoutian juge indispensable l'envoi d'un représentant muni de pleins pouvoirs pour:

խստորէն կը պատժէր բոլոր անոնք որ կը փորձէին հայեր պահել: Թուրք բարձրաստիճան պաշտօնեայ մը խոստովանած է յոյն երեւելի անձնաւորութեան մը, որ շուրջ 800 երեխաներ խեղդամահ ըրած են:

Կարգ մը հայեր անձնասպան եղած են երբ ժանտարմները կու գային իրենց ընտանիքի անդամները տանելու. կը յիշուին, ի միջի այլոց, Մինաս Թիւթիւն-ճեան եւ Խաչիկ Ասլանեան, որ իրենց աղջիկները սպաննելէ ետք ատրճանակով պայթեցուցած են իրենց ուղեղը:

Այս սարսափազդու ողբերգութենէն որոշ վերապրողներ երախտագիտական բուռն զգացումները կը յայտնեն բոլոր անոնց, որ քաջաբար փորձեցին քանի մը դժբախտներ փրկելու համար: Անոնցմէ կը յիշատակեն հետեւեալ անունները.— Ամերիկայի հիւպատոսը, ամերիկացի միսիոնար պր. Կրաֆֆորթ, պանդոկատէր զուրիցերուհի մը, թուրք մը՝ Շելքէթ պէյ Շաքիր Զատէ, որուն որդին ժանտարմներէն սպաննուեցաւ՝ կոտորուողներուն ի նպաստ միջամտելու ոճիրը գործած ըլլալուն համար:

Ասոր հակառակ, հաւաստի աղբիւրէ իմացանք հետեւեալ դէպքը.— գերման հիւպատոսը երկար ատենէ ի վեր իր ծառայութեան մէջ ունէր հայ խոհարարուհի մը. հակառակ զայն պահելու համար իր ունեցած բոլոր դիւրութիւններուն, յանձնած է զայն դահիճներուն, որ եւ սպանած են կինը:

Մեզի պատմեցին նաեւ անմարդկային վերաբերումը գերման հիւպատոսի կնոջը, որ միջոց ունեցած էր այս զոհերէն մէկ քանին փրկելու, բայց ոչինչ ըրաւ:

Թուրքերը հետեւեալ ձեւով վարուեցան հայերու ունեցուածքին հետ: Տունները, շուրջ 1000 հատ, բռնազրուաւուեցան յօգուտ կայսերական գանձին: Թանկարժէք իրերը հաւաքեցին տան մը մէջ, իսկ կարասիները՝ եկեղեցիին մէջ: Հայերը կոտորելէ ետք, ամբողջ աւարը փոխադրուեցաւ թուրքերու տունները. յետոյ, երբ անոնք լքեցին քաղաքը, այս կարասիներն ու առարկաները, ինչպէս նաեւ թուրքերուն պատկանածները, կողոպտուեցան քաղաքի բնակիչներուն մէկ մասին կողմէ:

էրզրումի անկումէն ետք, թուրքերը կամովին լքեցին էրզրումը, բայց Ռիզէի առումէն ետք միայն ստիպուեցան պարպել [Տրապիզոն] քաղաքը:

Կը տարածէին այն լուրը, թէ ռուս բանակին յառաջապահները հայ կամաւորներն են, որոնք պիտի կոտորեն բոլոր թուրքերը, որ՝ ռուսերը հանրատուն պիտի դրկեն կիները, իսկ մանկամարդ աղջիկները պիտի տանէին բանակին:

Ինչ կը վերաբերի Քաղաքներու Միութեանը հայթայթելիք օգնութեան, Արդութեան Իշխանը անհրաժեշտ կը գտնէ լիազօր ներկայացուցիչի մը առաքումը.—

- 1.- Ouvrir un orphelinat pour 300-500 enfants;
- 2.- Organiser des stations d'alimentation;
- 3.- Former un comité pour la protection des biens des orphelins et de ceux qui rentreront dans leur foyer;
- 4.- Créer un comité spécial pour la recherche des enfants et des jeunes filles qui sont gardés arbitrairement chez les quelques familles turques des environs de Trébizonde.

- 1.- Որքանոց մը բանալ 300-500 երեխաներու համար:
- 2.- Կազմակերպել սննդամատակարարման կայան մը:
- 3.- Կազմել յանձնախումբ մը, որբերու եւ իրենց օճախները վերադարձողներու ինչքերը պաշտպանելու համար:
- 4.- Կազմել Յատուկ յանձնախումբ մը, հետախուզելու եւ հաւաքելու համար Տրապիզոնի եւ շրջակայքի թուրք ընտանիքներուն մօտ բռնութեամբ պահուած սղաքն ու աղջիկները:

LETTRE DE TREBIZONDE
Adressée par le capitaine Grikor
à son ami E. Moutafian

Le capitaine Grikor de la marine marchande, de retour à Trépizonde sa ville natale m'adresse la lettre suivante datée du 17 courant.

“Je suis à Trébizonde où je n'ai trouvé personne des miens. Mes voisins grecs m'ont fait le récit de toutes les horreurs qui se sont passées dans cette ville. Je ne puis te le décrire. Le deuil et la ruine règnent partout.

Le gouvernement turc a prévenu les Arméniens qu'ils devaient se préparer à être déportés dans une semaine.

Tout d'abord trente Arméniens furent arrêtés puis embarqués sur un mahonne sous prétexte de les conduire à Samsoun. A peine s'étaient-ils éloignés du port qu'ils furent dévalisés et égorgés. Un seul nommé Vartan quoique blessé put à la faveur de la nuit s'échapper à la nage. Il alla se réfugier chez une famille grecque où il fut découvert et amené à l'hôpital où il fut empoisonné.

Les Arméniens crurent d'abord qu'en réalité ils seraient simplement déportés. Mais quand ils eurent vent des vraies intentions des Turcs il était déjà trop tard pour essayer de s'enfuir car toutes les issues étaient minutieusement gardées.

Ils furent donc amenés par petits groupes toujours sous la fausse allégation de les déporter et en cours de route ils furent en partie massacrés avec d'indescriptibles cruautés et en partie jetés dans le fleuve sans épargner ni les femmes ni les enfants. Ils ont seulement gardé les jeunes filles. Ils ont ainsi totalement dépeuplé la ville des Arméniens.

Il n'y a plus personne de ma famille. Mes trois jeunes filles ont été enlevées, ma pauvre vieille mère assassinée, ma femme exilée, ma fille aînée Hranouche,

ՆԱՍԱԿ ՏՐԱՊԻԶՈՆԷՆ
(Սպայ Գրիգորէն
իւր բարեկամ Մութաֆեանին)

Իւր ծննդավայր Տրապիզոն վերադարձին, ծովասպայ Գրիգոր, ամսուս 17ին հետեւեալ նամակը դրրկած է ինձի։

«Տրապիզոն կը գտնուիմ, ուր մերիններէն ոչ ոք գտայ: Մեր յոյն դրացիները պատմեցին այս քաղաքին պատահած բոլոր սարսափները: Չեմ կրնար նկարագրել զանոնք: Սուզն ու աւերը կը տիրեն ամէն կողմ: Կառավարութիւնը իմաց տուած է հայերուն, որ պատրաստ ըլլան մէկ շաբաթէն տեղահանուելու:

Ամէնէն առաջ 30 հայեր ձերբակալուած եւ թրքական նաւու մը վրայ բարձրացուցած են՝ Սամսոն փոխադրուելու պատրուակին տակ: Հազիւ հեռացած նաւահանգիստէն, կողոպտուած եւ սպաննուած են: Մէկ հոգի միայն, Վարդան անունով, թէեւ վիրաւոր, բայց շնորհիւ գիշերուան խաւարին, յաջողած է լողալով ազատիլ: Գացած է ապաստանելու յոյն ընտանիքի մը մօտ, ուր պատմած է իր դժբախտ ընկերներու ողբերգական վախճանին մասին: Քանի մը օր ետք բռնուած է եւ տարուած հիւանդանոց, ուր թողնուած է:

Սկիզբը հայերը կարծած են որ իրօք պարզապէս պիտի տարագրուին, սակայն երբ զգացած են թէ ինչ է թուրքերու իսկական նպատակը, բայց արդէն շատ ուշ էր փախուստ փորձելու համար, որովհետեւ բոլոր ելքերը խստիւ փակուած էին:

Այսպէս ուրեմն տարուած են փոքր խումբերով, պարզ տեղահանութեան կեղծ երաշխիքով: Ճամբու ընթացքին, մէկ մասը կոտորուած է անասելի դաժանութեամբ. միւս մասը գետ թափած են առանց խնայելու կրիներուն եւ մանուկներուն: Միայն մանկամարդ աղջիկները պահած են: Այսպէս քաղաքը ամբողջութեամբ պարպած են հայերէն:

Մարդ չէ մնացած մեր ընտանիքէն: Մանկամարդ երեք աղջիկներս առեւանգած են: Խեղճ պառաւ մայրս սպաննուած, կրինս աքսորուած, մեծ աղջիկս՝ Հրանոյշը

mariée à un Turc, mon fils Smpad tué ainsi que mon frère Yervant. Quant à mon frère cadet Archak, il a d'abord réussi à se cacher avec trois de ses amis; mais lui et ses amis ayant été lâchement dénoncés mon frère et deux de ses compagnons furent massacrés.

Ta mère exilée ainsi que ton père, ton frère Krikor est mort de maladie. Tes deux jeunes frères sont tués. Ta belle-sœur Satenik est aussi exilée. Ta sœur Zwart on l'a mariée à un Turc; ton neveu Noubar est avec elle.

Les Turcs en abandonnant la ville les ont emmenés avec eux. Il n'y a plus un seul turc ici. Les quelques arméniens qui ont pu se cacher dans les environs rentrent peu à peu à Trébizonde.

Թուրքի մը կին տրուած, Սմբատ տղաս սպաննուած, նոյնպէս եղբայրս Երուանդ: Գալով կրտսեր եղբօրս Արչակին, սկիզբը յաջողած է երեք բարեկամներով պահուլտիլ, բայց վատաբար մատնուած ըլլալով՝ եղբայրս եւ իր երկու ընկերները սպաննուած են:

Մայրդ տարագրուած է, նոյնպէս եւ հայրդ. Գրիգոր եղբայրդ հիւանդութեամբ մեռած է. երկու կրտսեր եղբայրներդ սպաննուած են. հարսդ Սաթենիկ նոյնպէս տարագրուած է. քոյրդ Ջուարթը ամուսնացուցած են Թուրքի մը. Նուպար զարմիկդ իրեն հետ է:

Քաղաքէն հեռացած ժամանակ, Թուրքերը իրենց հետ տարած են զիրենք: Հոս այլեւս ոչ մէկ Թուրք կայ: Այն սակաւաթիւ հայերը, որոնք կրցած են պահուլտիլ շրջակայքը, քիչ-քիչ Տրապիզոն կը վերադառնան:

REDACTION DU DROSCHAK

«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Փաստ. 64-43

116.- ԶԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԷՆ

Ստորև շարք մը քաղուածքներ 1916 թ. կովկասահայ մամուլէն, ուր ականատեսներու կողմէ կենդանի վկայութիւններ կը տրուին հայկական նահանգներու մէջ թուրք ջարդարարներու գործած վայրագութեանց մասին: Ժընեւի մէջ «Դրօշակ»ի խմբագրութիւնը այս քաղուածքները ֆրանսերէնի թարգմանելով կը յղէր եւրոպական մամուլին: Մեր կարգին, ձեռքի տակ չունենալով այդ մամուլի հաւաքածոները, կը ներկայացնենք զանոնք արեւմտահայերէնի վերածելով:

Թարգմանութիւնը.-

TRADUCTION
D'UNE LETTRE REPRODUITE PAR LE JOURNAL
ARMENIEN "HAMPAPER" DE TIFLIS

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ «ՀԱՄԲԱՒԱԲԵՐ»
ԼՐԱԳՐԻՆ ՄԷՋ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ
ՆԱՄԱԿԻ ՄԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Dans son N° 33 du 14/27 avril 16

(Թիւ 33, 14/27 Ապրիլ 1916)

“Nous avons de la peine à croire aux renseignements fournis au Journal "Horizon" par M. Haïg Aghayan délégué de l'hôpital d'Erzeroum. Nous reproduisons sa lettre sous la responsabilité de l'auteur.

«Դժուար է հաւատալ այն տեղեկութեանց որ տրուած են էրզրումի հիւանդանոցին պատուիրակ պ. Հայկ Աղայեանի կողմէ «Հորիզոն» թերթին: Կ'արտատպենք նամակը՝ հեղինակին պատասխանատուութեան տակ:

Tous les Turcs d'Erzeroum et des environs ont libre accès à l'entrée et à la sortie de la ville tandis que les Arméniens doivent être munis d'un certificat délivré par l'autorité militaire pour pouvoir circuler.

«Էրզրումի եւ շրջակայքի բոլոր թուրքերը ազատ ելեմուտք ունին քաղաքին մէջ, մինչդեռ հայերը շրջագայելու համար պարտին ունենալ գինուորական իշխանութեան կողմէ տրուած վկայագրի:

“Quant à moi, comme délégué, je ne suis pas soumis à cette formalité; je peux librement visiter les villages et recueillir à l'occasion les orphelins et les malades qui sont soignés à l'orphelinat et à l'hôpital créés à Erzeroum par le "Comité Arménien de Moscou”.

Իբրեւ պատուիրակ, ես ենթակայ չեմ այս ձեւակերպութեան. կրնամ ազատօրէն այցելել գիւղերը եւ այս առթիւ հաւաքել որբերն ու հիւանդները, որոնք խնամք կը ստանան «Մոսկուայի հայկական կոմիտէի» կողմէ էրզրում հիմնուած հիւանդանոցին մէջ:

“Presque tous les villages arméniens sont déserts dans toute l'acceptation du mot et les maisons détruites. Les Turcs continuent de s'approvisionner en bois de chauffage dans ces villages; ils charrient le bois de charpente des maisons, les portes, les volets, en un mot tout ce qui leur semble utile.

Հայկական գրեթէ բոլոր գիւղերը տառացիօրէն ամայի են, եւ տուները քանդուած: Թուրքերը կը շարունակեն իրենց վառելիք փայտը մատակարարել այս գիւղերէն. սայլերով կը տանին տուներէն շինութեան փայտերը, դուռները, փեղկերը, մէկ խօսքով՝ ինչ որ պիտանի կը համարեն:

“Les autorités ne permettent pas aux Arméniens d'enlever les récoltes de leurs champs tandis que les Turcs vendent continuellement au marché le foin fauché dans les champs arméniens, à raison de 25 roubles le char. Je certifie avoir vu tout cela de mes propres yeux.

Իշխանութիւնները հայերուն թոյլ չեն տար որ իրենց արտերու հունձքը տանին, մինչդեռ թուրքերը, յարատեւ, իւրաքանչիւր սայլի համար 25 ռուբլի փոխարէն, շուկային մէջ կը ծախեն հայոց արտերէն հնձուած յարդը: Կը վկայեմ որ այս բոլորը տեսած եմ սեփական աչքերով:

“Il y a quelques jours une jeune fille arménienne de 18 ans fut trouvée chez Hassan Ali, grâce aux recherches discrètement effectuées par le frère et le cousin de la jeune fille. L'autorité militaire a arrêté les deux

Քանի մը օր առաջ, 18 տարեկան հայ աղջիկ մը գտնուեցաւ Հասան Ալիի տան մէջ, շնորհիւ աղջկան եղբոր եւ զարմիկին գաղտնաբար կատարած փնտնտուք-

jeunes gens ainsi que le Turc. Mais celui-ci fut relâché au bout de 24 heures. Tandis que ce n'est que grâce à l'intervention d'un officier arménien que les deux Arméniens furent mis en liberté. Voici l'argument soutenu par l'autorité militaire:

“Si la jeune fille n'avait pas voulu se rendre chez Hassan Ali, celui-ci n'aurait jamais pu l'emmener de force.

“La jeune fille dit qu'il y a encore beaucoup d'Arméniennes enlevées par les Turcs. Elle connaît la plupart des noms des ravisseurs mais ignore où ils demeurent”.

* * *

DU CORRESPONDANT PARTICULIER
DU JOURNAL ARMÉNIEN “HORIZON”
DE TIFLIS.

Van, 4 sept. 1916

“Des Arméniens du Vilayet de Van réfugiés au Caucase et qui rentrent dans leur pays sont constamment attaqués en route par les kurdes.

“Ainsi l'autre jour Avo de Nor-Kugh et un certain nombre de paysans qui l'accompagnaient furent assaillis par les Kurdes qui tuèrent 3 paysans, en blessèrent 3 autres dont deux mortellement. Ils réussirent à enlever 20 moutons, 7 bœufs et 1200 à 1500 roubles de marchandises. Avo et quelques-uns des paysans étaient heureusement armés, de sorte qu'ils opposèrent une énergique résistance. Des soldats russes du poste de Savouk-Sou et M. Tchangalian qui se rendaient à Iktir, arrivèrent sur les lieux; mais les Kurdes s'étaient déjà retirés en emportant leur butin. Dans l'espace de quelques semaines plusieurs cas analogues se sont produits. Aucune mesure radicale n'est prise pour assurer la sécurité des routes aux Arméniens qui voudraient se rapatrier.

Van, 11 sept. 1916

“Les Kurdes et certaines tribus syriennes musulmanes se sont livrés au pillage des villages arméniens. Le gouverneur Dermen a exigé des renseignements des personnes au courant de ces faits. Il résulte de ces informations que 83 villages ont été saccagés. Ceux qui se trouvaient à proximité des lieux habités par des Kurdes ont été incendiés après que ces derniers eurent emporté les meubles et le blé que les Arméniens avaient serré dans des cachettes souterraines. Ils ont aussi moissonné et enlevé les récoltes des Arméniens.

ներուն: Զինուորական իշխանութիւնը ձերբակալեց երկու երիտասարդներն ու թողարկեց: Սակայն, վերջինս ազատ արձակուեցաւ 24 ժամ ետք, իսկ երկու հայերը ազատուեցան հայ սպայի մը միջամտութեամբ միայն:

Ահա թէ ինչ պատճառաբանութիւն կու տայ զինուորական իշխանութիւնը.—

Եթէ հայ աղջիկը ուզած չըլլար Հասան Ալիի տունը երթալ, այս վերջինը պիտի չկարենար բնաւ բռնութեամբ տանիլ զինք:

Աղջիկը կ'ըսէ որ թուրքերու կողմէ առեւանգուած դեռ բազմաթիւ հայուհիներ կան: Գիտէ առեւանգիչներուն մեծ մասին անունները, բայց կ'անգիտանայ անոնց տեղը:

* * *

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ «ՀՈՐԻԶՈՆ» ԹԵՐԹԻ
ՅԱՏՈՒԿ ԹՂԹԱԿԻՑԷՆ

Վան, 4 Սեպտ. 1916

Վանայ նահանգէն կողկաս ապաստանած հայեր՝ իրենց երկիրը վերադարձի ճամբուն վրայ՝ միշտ յարձակման կ'ենթարկուին քիւրտերու կողմէ:

Այսպէս, անցեալ օր Նոր գիւղի Աւոյի եւ իրեն ընկերացող որոշ թուով գիւղացիներու վրայ գրոհ տարով՝ քիւրտերը սպաննեցին 3 գիւղացի եւ վիրաւորեցին 3 ուրիշներ, որոնցմէ երկուքը մահացու կերպով:

Յաջողեցաւ յափշտակել 20 ոչխար, 7 եղ եւ 1200-1500 ռուբլի արժող ապրանք: Աւոն եւ գիւղացիներէն մէկ քանին բարեբախտաբար զինուած էին, այնպէս որ բռնուն դիմադրութիւն ցոյց տուին: Սաւուք-Սուի պահականոցը գտնուող ռուս զինուորներ եւ Պ. Չանգալեան, որ իգտիր կ'երթային, հասան տեղւոյն վրայ: Բայց քիւրտերը նահանջած էին արդէն, իրենց աւարով մէկտեղ: Մէկ քանի շաբաթներու ընթացքին, բազմաթիւ նման դէպքեր տեղի ունեցան: Արմատական ոչ մէկ միջոցի դիմուած է ներգաղթել ուզող հայերու ճամբու ապահովութեան համար:

Վան, 11 Սեպտ. 1916

Քիւրտերն ու մահմետական սուրիացի որոշ ցեղախումբեր զբաղած են հայկական գիւղերը կողոպտելու գործով: Կառավարիչը՝ Տերմէն այս դէպքերուն ծանօթ մարդոցմէն պահանջեց տեղեկութիւններ, որոնցմէ ի յայտ եկաւ որ 83 գիւղեր աւարուած են: Իրենց բնակավայրերուն մօտիկ գտնուող գիւղերը այրելէ առաջ, քիւրտերը տարած էին կարասիներն ու ցորենը, զոր հայերը պահած էին գետնափոր թաքստոցներու մէջ: Անոնք հնձած ու տարած են նաեւ հայոց հունձքը:

Iktir, 13 sept. 1916

“Par suite de l'insécurité, la route d'Iktir à Van est devenue excessivement dangereuse. Des Arméniens qui retournaient à Van durent rebrousser chemin. Les Kurdes reprennent de l'audace et recommencent à piller et à assassiner. Il y a deux jours ils ont attaqué les courriers de Savouk-Sou et Pazit-Agh. Les pertes ne sont pas encore connues.

Hier 200 Kurdes armés du village d'Artzap ont enlevé 500 têtes de bétail après avoir tué l'un des bergers et emmené trois autres avec eux.

Erzingan, 7 sept. 1916

“On a trouvé le matin du 4 sept. dans une des rues du quartier habité par les émigrés arméniens, le cadavre étranglé et les yeux crevés d'une fillette arménienne de 8 ans. Le médecin a fait les constatations et reconnu qu'on est en présence d'un crime; mais la police russe n'a ordonné aucune enquête jusqu'à présent”.

* * *

N° 212 JOURNAL “HORIZON” DU 23 SEPT. 16

Iktir, le 14 sept. 16

“Voici un récit typique qu'un employé de la “Société Agricole Arménienne” m'a fait.

“J'étais chargé d'accompagner quelques centaines de paysans arméniens qui retournaient au pays avec leur bétail. Arrivé à Guaré, ancienne frontière russo-turque, nous aperçûmes les premières flammes d'un vaste incendie allumé dans les champs et dont les auteurs s'enfuyaient; l'épaisse fumée qui montait de ces récoltes nous empêchait de distinguer la direction suivie par ces malfaiteurs.

Le commandant du premier poste que nous rencontrâmes nous demanda si nous avions des armes. Je lui répondis que non. – “Mais alors, comment osez-vous continuer votre route sans armes?” – Que pouvons-nous faire, puisque vous nous défendez d'en porter? Je le priai de nous faire escorter de quelques gardes pour passer les endroits dangereux. “Cela n'est pas possible nous dit-il; seulement si vous êtes attaqués en route je tâcherai d'arriver à notre secours.” Je me permets de vous faire observer Mr. le Commandant que jusqu'à ce que vous arriviez à votre secours les Kurdes auraient tout le temps de nous dévaliser et d'assassi-

Իգտիր, 13 Սեպտ. 1916

Անապահովության պատճառաւ, Իգտիր-Վան ճանապարհը չափազանց վտանգաւոր դարձած է: Վան վերադարձող հայեր ստիպուեցան ետ դառնալ: Քիւրտերը վերստին յանդգնած՝ կը վերսկսին թալանել եւ սպաննել: Երկու օր առաջ, անոնք յարձակեցան Սաւուք-Սուի եւ Պազիտ-Ազի փոստերուն վրայ: Կորուստները յայտնի չեն տակաւին:

Երէկ, Արծափ գիւղի 200 քիւրտերը աւարեցին 500 գլուխ արջառ, հովիւներէն մէկը սպաննելէ եւ երեք ուրիշներ իրենց հետ տանելէ ետք:

Երզնկա, 7 Սեպտ. 1916

Սեպտ. 4ի առաւօտուն, հայ գաղթականներու բնակած թաղամասի մը մէջ, խեղդուած եւ աչքերը փորուած 8 տարեկան հայ աղջնակի մը դիակը գտնուեցաւ: Բժիշկը հաստատեց ու գտաւ որ գործուածը ոճիր մըն էր. սակայն ուս ոստիկանութիւնը մինչեւ այսօր քնննութիւն բանալու ոչ մէկ հրահանգ տուած է:

* * *

«ՀՈՐԻԶՈՆ», ԹԻԻ 212, 23 ՍԵՊՏ. 1916

Իգտիր, 14 Սեպտ. 1916

Ահաւասիկ յատկանշական պատմութիւն մը, զոր «հայ երկրագործական ընկերութեան» պաշտօնեայ մը պատմեց ինծի.—

«Պարտականութիւն ունէի ընկերանալու քանի մը հարիւր գիւղացիներու, որոնք Երկիր կը վերադառնալին իրենց անասուններով: Ռուս-թրքական նախկին սահմանի վրայ գտնուող Գուարէ հասնելով, նշմարեցինք առաջին բոցերը՝ արտերուն մէջ բռնկած ընդարձակ հրդեհի մը, որուն հեղինակները կը փախչէին. ցորենի հունձքերուն վերեւ բարձրացող թանձր ծուխին պատճառաւ կարելի չէր գատորոշել չարագործներու հետեւած ճամբան:

Մեր հանդիպած առաջին պահականոցին հրամանատարը հարցուց թէ գէնք ունի՞նք: Ոչ, պատասխանեցի.— «Այն ատեն, առանց գէնքի, ինչպէ՞ս պիտի յանդգնիք ձեր ճամբան շարունակել»: «Ի՞նչ կ'ընանք ընել երբ կ'արգիլէք գէնք կրել»: Խնդրեցի որ վտանգաւոր վայրերէն անցնելու համար քանի մը պահակներ ընկերացնէ մեզի:— «Այդ մէկը անկարելի է, ըսաւ. եթէ ճամբան յարձակման ենթարկուիք, այն ատեն միայն պիտի ջանամ օգնութեան հասնիլ ձեզի»: Պիտի ուզէի դիտել

ner un grand nombre d'entre nous. – “En ce cas je vous conseille, nous dit-il, de retourner sur vos pas”. – Nous sommes bien obligés de faire ainsi, lui ai-je répondu. En effet nous dûmes, faute de sécurité et de protection, rebrousser chemin”.

* * *

N° 219 JOURNAL “HORIZON” TIFLIS
LE 1ER OCTOBRE 16

Iktir, le 20 sept. 16

“La ville de Van est pleine de volontaires kurdes de la vallée d'Apagha et de Zilan.

Nourtoullah bey de Mogs et Lezki fils de Chakir de Chatagh ont fait leur soumission aux Russes. Ils sont installés avec leur famille, leurs biens et leur bétail dans les villages arméniens de Tchor.

“Les Arméniens de Chadagh ont été éloignés de Tchoroum où ils s'étaient réfugiés. Ils se rendent actuellement au Caucase.

Ces mêmes Kurdes ont assassiné 23 Arméniens de Chadagh qui faisaient la moisson et la récolte des noix.

“Un certain nombre d'Arméniens rapatriés à Van se préparent à retourner au Caucase afin de se soustraire à l'insupportable situation qui leur est faite.

“Les récoltes sont complètement détruites”.

Vagharshak Hoghikian

* * *

DU JOURNAL ARMÉNIEN “AREV”

Bakou, le 11 sept. 1916

Du pays des Horreurs.

“Echappé par miracle au massacre de 300 soldats arméniens, un jeune homme de Passène nous a raconté les faits suivants”.

“Nous étions 300 Arméniens qui travaillions depuis 7 à 8 mois sous la surveillance de gendarmes. Nous formions une compagnie de soldats – manœuvres (amélé-tabouri) et étions chargés de la construction des routes à l'est de Passène, non loin du village de Haztir”.

Je passerai sous silence la brutalité des gendarmes à notre égard.

“Le 15 juillet de l'année dernière environ 50.000 Arméniens dont la plupart étaient des femmes, des vieil-

lards, պարոն հրամանատար, որ մինչեւ ձեր օգնութեան հասնիլը, քիւրտերը առիթ պիտի ունենան մեզ կողոպտելու եւ մեզմէ շատեր ալ սպաննելու»: «Այն ատեն խորհուրդ կու տամ որ վերադառնաք»: Ստիպուած ենք անշուշտ այդպէս ընել, պատասխանեցի իրեն: Արդարեւ, անվտանգութեան եւ պաշտպանութեան բացակայութեան պատճառաւ, ետ դարձանք:

* * *

«ՀՈՐԻԶՈՆ» ԹԵՐԹ, ԹԻՖԼԻՍ
1 ՀՈԿՏ. 1916

Իգտիր, 20 Սեպտ. 1916

Վան քաղաքը լեցուած է Ապաղայի դաշտին եւ Զիլանի քիւրտ կամաւորներով:

Մոկսի Մուրթուլլահ պէյը եւ Շատախի Շեքիրի որդի Լեզքին հպատակութիւն յայտնեցին ռուսերուն: Իրենց ընտանիքով, ինչքերով եւ արջառով հաստատուած են Չորի հայկական գիւղերուն մէջ:

Շատախի հայերը հեռացուեցան Չորումէն, ուր ապաստան գտած էին: Այժմ անոնք Կովկաս կը մեկնին:

Միեւնոյն այս քիւրտերը սպաննեցին 29 շատախի հայեր, որոնք ցորեն կը հնձէին ու ընկոյզ կը քաղէին:

Վան ներգաղթած որոշ թիւով հայեր կը պատրաստուէին Կովկաս վերադառնալ, ազատուելու համար իրենց պարտադրուած անտանելի վիճակէն:

Հոռնձքերը ամբողջովին փճացած են:

Վաղարշակ Հողիկեան

* * *

ՀԱՅԿԱԿԱՆ «ԱՐԵՒ» ԼՐԱԳՐԷՆ

Պաքու, 11 Սեպտ. 1916

Սարսափներու երկրէն

300 հայ զինուորներու ջարդէն հրաշքով ազատած բասենցի երիտասարդ մը պատմեց մեզի հետեւեալ եղելութիւնները:

«300 հայեր էինք, որ ժանտարմներու հսկողութեան տակ 7-8 ամիսներէ ի վեր կ'աշխատէինք: Աշխատաւոր-զինուորներու (ամելէ-թապուրի) ջոկատ մըն էինք, որուն պարտականութիւն տրուած էր ճամբաներու կառուցումը Բասենի արեւելքը, ոչ հեռու Հացտիր[?] գիւղէն:

Չանց կ'առնեմ խօսիլ մեր նկատմամբ ժանտարմներու կոպտութեան մասին:

Անցեալ տարուան Յուլիսի 15ին, շուրջ 50.000 հայեր, մեծ մասամբ կիներ, ծերունիներ եւ մանուկներ, անցան

lards et des enfants passèrent par la route du village où nous travaillions. Le lendemain de leur passage nous reçûmes l'ordre de partir avec nos outils à Douz-Guetigor. Nous partîmes donc toujours sous la surveillance des gendarmes. Arrivés au sommet de la montagne nous aperçûmes une masse compacte humaine entourée de tchévés (volontaires) kurdes et turcs. Nous continuâmes notre route jusqu'au village d'Ogoumi où l'on nous défendit d'aller plus loin. Un des gendarmes qui nous accompagnaient alla s'entretenir avec les tchévés. Une demi-heure après revenant vers nous il dit: "Nous avons aujourd'hui une affaire importante, il vous faut donc travailler plus que d'habitude". Ces mots furent pour nous le présage d'un malheur. En effet vers une heure de l'après midi les tchévés commencèrent à massacrer sous nos yeux cette foule sans défense. Nous fermions les yeux pour ne pas voir les coups de hache qui s'abattaient sur les victimes, brisant les crânes et les membres de nos malheureux compatriotes; mais les plaintes des blessés, les râles des agonisants, les cris des enfants, des femmes retentissaient dans les montagnes et déchiraient nos cœurs et nous étions condamnés à l'impuissance, car comment aurions-nous pu rompre l'étroite chaîne des gendarmes armés et défendre sans armes nos compatriotes contre les tchévés.

"Cette effroyable scène de carnage arrachait des sanglots à quelques centaines de jolies arméniennes qu'on avait choisies dans la masse et groupées sur un côté de la montagne sous la surveillance d'autres tchévés. Le massacre dura quatre heures; des enfants qui essayaient de s'enfuir étaient abbatués à coups de fusil ou de revolver par les tchévés placés partout. Quand ils eurent achevé leur sanguinaire besogne les tchévés firent la part du butin des gendarmes et s'éloignèrent en emmenant avec eux les Arméniennes qu'ils avaient préalablement choisies".

Le commandant des gendarmes, Moustafa Zade Souleyman de Sivas, nous ordonna d'enterrer les cadavres et de faire disparaître les traces de sang. D'immenses fosses étaient déjà creusées; au fond de l'une d'elles nous vîmes avec stupeur des cadavres en costume de soldats du régiment des manœuvres (amélé-tabouri). Mais la chose était facile à comprendre: Des soldats arméniens après avoir creusé ces fosses avaient été massacrés et enterrés dans l'une d'elles que les Turcs appellent la porte de l'enfer (djehinem kapoussi).

"Sous la menace des revolvers braqués sur nous, nous dûmes remplir les fosses de ces malheureux. Il y en avait qui n'étaient que blessés; ils nous regardaient en comprimant de leurs mains des blessures béantes. L'un de nous ayant osé hésiter à entraîner les blessés

մեր աշխատած գիւղի ճամբայէն: Յաջորդ օրը հրաման ստացանք մեր գործիքներով երթալու Տուզ-Կետիկոր: Գացինք հետեւաբար միշտ ժանտարմներու հսկողութեան տակ: Երբ լեռան գագաթը հասանք, տեսանք մարդկային հոծ զանգուած մը՝ քիւրտ եւ թուրք չեթէներէ շրջապատուած: Շարունակեցինք մեր ճամբան մինչեւ Օգումի գիւղը, ուր արգիւտեցաւ մեզի աւելի հեռու երթալ: Մեզի ընկերացող ժանտարմներէն մէկը գնաց չեթէներուն հետ խորհրդակցելու: Կէս ժամ ետք վերադառնալով, ըսաւ. «Այսօր կարեւոր գործ մը ունինք, հետեւաբար սովորականէն աւելի պէտք է աշխատիք»: Այս խօսքերը դժբախտութեան մը գուշակումը հանդիսացան մեզի համար: Արդարեւ, կէսօրէ ետք ժամը 1-ին չեթէները մեր աչքերուն առջեւ սկսան կոտորել այս անպաշտպան բազմութիւնը: Մեր աչքերը կը փակէինք, որպէսզի չտեսնենք զոհերուն վրայ թափող կացինի հարուածները, որ ջարդուփշուր կ'ընէին դժբախտ մեր հայրենակիցներուն գանկերն ու մարմնի անդամները: սակայն ողբն ու կոծը վիրաւորներուն, հոնդիւնը հոգեվարք ապրողներուն, երեխաներու եւ կիներու ճիւղերը՝ արձագանգ կու տային լեռներուն մէջ եւ կը պատուէին մեր սիրտերը. եւ մենք անգորութեան էինք դատապարտուած, որովհետեւ ինչպէ՞ս պիտի կարենայինք ճեղքել զինեալ ժանտարմներու խիտ շղթան եւ, առանց գէնքի, պաշտպանել մեր հայրենակիցները չեթէներուն դէմ:

Սարսափազդու այդ նախճիրին տեսարանը յորդառատ արցունք թափել կու տար հարիւրաւոր գեղանի հայուհիներու, զորս գատած էին բազմութեան մէջէն եւ չեթէներու հսկողութեան տակ՝ խմբած լեռան լանջին: Կոտորածը չորս ժամ տեւեց. փախչիլ փորձող երեխաները՝ ամէն կողմ դիրք բռնած չեթէներու կողմէ կը սպաննուէին հրացանի կամ ատրճանակի կոթերուն հարուածներով:

Իրենց այս արիւնարբու գործը աւարտելէ եւ ձեռք բերուած աւարէն ժանտարմներու բաժինը ձգելէն ետք, չեթէները հեռացան իրենց հետ տանելով ընտրուած հայուհիները:

Ժանտարմներու հրամանատարը, սըվազցի Մուսթաֆա Ջատէ Սուլէյման, հրամայեց մեզի դիակները թաղել եւ անհետացնել արեան հետքերը: Արդէն փորուած էին հսկայ փոսեր. անոնցմէ մէկուն խորը ապշանքով տեսանք ամելէ թապուրիի տարագով դիակներ. դիւրին էր հասկնալ իմաստը.— հայ գինուորները այս փոսերը փորելէ ետք սպաննուած էին եւ թաղուած անոնցմէ մէկուն մէջ, զոր թուրքերը կը կոչէին դրախտի դուռ (ճեհեննէմ քափուսի): Մեր վրայ ուղղուած ատրճանակներու սպառնալիքին տակ՝ ստիպուեցանք լեցնել այդ դժբախտներուն փոսերը: Կային անոնց մէջ այնպիսիներ, որ վիրաւոր էին միայն. մեզի կը նայէին ձեռքերով փակելով բաց վէրքերը: Մեզմէ մէկը, երբ կը

dans la fosse, on entendit la voix brutale du gendarme: "Tous, aussi bien les cadavres que les blessés" et faisant feu, il étendit à terre notre camarade.

"On entendit à chaque instant ces mots du commandant: "Dépêchez-vous, fils de chien, il fera bientôt nuit".

"Un vénérable vieillard gémissait en essayant de se traîner sur le sol; un camarade et moi nous l'enlevâmes; il ouvrit les yeux, nous fixa quelques instants puis avec un gros soupir laissa tomber sa tête de côté; au moment où nous le déposâmes dans la fosse il leva ses bras et dit: "Barbares, pourquoi m'enterrez-vous, je suis encore vivant". L'ordre était formel et nous étions impuissants.

"Une fois que tous furent dans les fosses, cadavres et agonisants, nous les recouvriâmes de terre.

"Il faisait déjà nuit lorsque nous eûmes achevé notre macabre besogne.

"Les gendarmes nous attachèrent les uns aux autres et nous ordonnèrent de marcher. Tous nos regards étaient involontairement attirés par ces fosses où les enterrés vivants se débattaient parmi les cadavres dans les spasmes de l'agonie.

"Nous arrivâmes au village établi au pied de la montagne. Après nous avoir enfermés dans des maisons, les gendarmes se réunirent sur la place, allumèrent des feux de joie et se mirent à échanger leurs impressions de la journée.

"A l'aurore on ouvrit les portes. Quelques instants après comme nous étions en train de faire notre toilette au ruisseau qui passe dans le village, le commandant des gendarmes s'approchant de nous dit: "Je suis très content de votre travail d'hier, aussi je vous marierai aujourd'hui avec vos jolies sœurs enlevées par les tchétsés". Nous comprîmes la signification de ces mots: mariage voulait dire massacre. Nous nous regardâmes tous. Alors quelques-uns d'entre nous se jetèrent sur les gendarmes et les prirent à la gorge. Beaucoup des nôtres et des leurs tombèrent. Nous étions six qui ayant en un clin d'œil arraché les armes à ceux des gendarmes qui étaient tombés, allâmes occuper des positions sur la petite colline d'à côté; huit autres camarades nous rejoignirent. Les autres prirent différentes directions. Le commandant et une vingtaine de cavaliers se ruèrent sur nous; nous les reçûmes à coup de fusil. Mais bientôt il ne nous resta plus de cartouches. Il fallait à tout prix gagner la montagne. Pendant la retraite, neuf des nôtres furent tués, deux furent pris, un autre a disparu; un camarade et moi avons pu gagner la montagne et nous cacher dans les rochers. La nuit nous sortîmes de nos cachettes et après avoir longtemps marché nous atteignîmes à l'aurore un village où il n'y avait personne sauf un vieillard. Etonnés,

տատամսէր վիրաւորները փոսին մէջ նետել, կը լսուէր ժանտարմին վայրագ գոռոցը. «Բոլորը, բոլորը, վիրաւոր թէ մեռած՝ փոսին մէջ», ու կրակ բանալով գետին փռեց մեր ընկերը:

Ամէն վայրկեան կը լսէինք հրամանատարին այս խօսքերը. «Աճապարեցէք, շանորդիներ, շուտով պիտի մթննայ»:

Պատկառելի ծերունի մը տառապազին կը փորձէր սողալով առաջ շարժիլ. ընկերոջ մը հետ փորձեցինք զինք ոտքի կանգնեցնել. աչքերը բացաւ, մեզ դիտեց քանի մը վայրկեան, ապա մեծ հառաչանքով մը ինկաւ գլուխը կախ. զինք փոսին մէջ տեղաւորած պահուն, բազուկները բարձրացուց եւ ըսաւ. «Բարբարոսներ, ինչո՞ւ կը թաղէք զիս, դեռ կենդանի եմ»: Հրամանը մեկին էր, եւ մենք անզօր էինք:

Բոլորը, դիակներն ու հոգեվարք ապրողները, փոսերուն մէջ գետեղելէ ետք, հողով ծածկեցինք:

Գիշեր էր արդէն, երբ ավարտեցինք մեռելաթաղի մեր գործը:

Ժանտարմները, մէկզմէկու կապելով մեզ, հրամայեցին քալել: Բոլորիս ակնարկները կակամայ այս փոսերուն էին, ուր ողջ-ողջ թաղուողները կը տապալակէին հոգեվարքի ջղաճգութեամբ:

Հասանք լեռան լանջին հաստատուած գիւղը: Մեզ տուներու մէջ փակելէ ետք, ժանտարմները հաւաքուեցան տեղւոյն վրայ, կրակ վառեցին հրճուանքով եւ սկսան օրուան տպաւորութեան մասին միտքեր փոխանակել:

Արեւածագին, դռները բացին: Քանի մը վայրկեան ետք, երբ կը լուացուէինք գիւղէն անցնող առուակին մէջ, ժանտարմներու հրամանատարը մեզի մօտենալով ըսաւ. «Շատ գոհ եմ երէկուան ձեր աշխատանքին համար, ուստի ձեզ պիտի ամուսնացնեմ չեթէներու կողմէ առեւանգուած ձեր սիրուն քոյրերուն հետ»: Մենք հասկցանք այդ խօսքերուն իմաստը. ամուսնութիւն՝ կը նշանակէր կոտորած: Այն ատեն, մեզմէ մէկ քանին նետուեցան ժանտարմներուն վրայ եւ խեղդեցին գանոնք: Մեզմէ եւ իրենցմէ շատ շատեր ինկան: Մեզմէ վեց հոգի՝ որ յաջողած էինք ակնթարթի մը մէջ խլել սպաննուած ժանտարմներու գէնքերը, գացինք ու դիրք գրաւեցինք մօտը գտնուող բլուրին վրայ. ուրիշ ութ ընկերներ միացան մեզի: Միւսները մեկնեցան այլ ուղղութիւններով: Հրամանատարն ու մօտ քսան ճիւղերներ յարձակեցան մեր վրայ. հրացանի գարկերով դիմաւորեցինք զիրենք: Բայց շուտով, փամփուշտ չմնաց: Հարկ էր ամէն գնով լեռ բարձրանալ: Նահանջի ատեն մեզմէ 9 հոգի սպաննուեցան, երկու հոգի ալ գերի բռնուեցան, ուրիշ մը անյայտացաւ. ես եւ ընկեր մը յաջողեցանք լեռ բարձրանալ եւ թաքնուել ժայռերուն մէջ: Գիշերը դուրս ելանք մեր թաքստոցներէն եւ երկար ժամանակ քալելէ ետք, արշալոյսին, հասանք գիւղ

nous lui avons demandé ce qu'il faisait là tout seul. "Le village, nous a-t-il dit, s'appelle comme moi Mollah-Ah-med; l'autorité turque a ordonné aux habitants d'évacuer le village". Mon camarade lui demande pourquoi il était resté, s'il n'avait pas peur des Russes?. – "Je suis un vieillard où puis-je aller?" nous a-t-il répondu. Puis, nous prenant pour des soldats turcs, il nous bénit et demanda à Dieu de nous accorder la force d'exterminer les guiaours. Nous apprîmes par lui, sans éveiller ses soupçons, la direction des positions russes. Après nous être reposés dans le village nous continuâmes notre route.

D'après les renseignements que le vieillard nous avait fournis, nous avons atteint la zone dangereuse et il fallait faire un suprême effort. A peine avons-nous franchi les lignes turques qu'on nous aperçut de là et qu'on ouvrit le feu sur nous. Nous courions vers les positions russes en tenant à la main un morceau de linge blanc. Mon camarade tomba en poussant un cri; sans pouvoir m'occuper de lui j'ai couru de toutes mes forces et atteint enfin les lignes russes. Là, on m'accueillit avec joie, on m'offrit du thé; mais on m'enleva mon fusil et la dernière lettre que j'avais reçue de ma sœur qui est à Alep:

"Maintenant je pars avec d'autres réfugiés arméniens à Alexandropol".

"Les lecteurs penseront peut-être que laissant aller mon imagination j'ai faussé la vérité. Il n'est rien. J'ai tout simplement écrit ce que m'a raconté le soldat Meguerditch Tateossian de Bas-Passène".

A. Damadian

* * *

– *J'ajoute que pendant que toutes les nations belligérantes tâchent d'augmenter le nombre de leurs combattants, la Russie dissout les corps de volontaires arméniens qui depuis le début de la guerre Russo-turque se battaient comme avant-gardes des armées russes.*

Sisvan

մը, ուր ծերունիէ մը գատ ոչ ոք չկար: Զարմացած՝ հարցուցինք թէ միայնակ ինչ կ'ընէր հոն: «Գիւղը, ըսաւ մեզի, ինծի նման կը կոչուի Մոլլահ-Ահմէտ. թրքական իշխանութիւնը հրաման արձակեց բնակիչներուն որ գիւղը պարպեն»: Ընկերս հարց տուաւ թէ ինք ինչու մնացած էր, չէ՞ր վախնար ռուսերէն:— «Ես ծեր մարդ եմ, ո՞ւր կրնամ երթալ» պատասխանեց: Յետոյ, մեզ թուրք զինուոր կարծելով, օրհնեց մեզ եւ Աստուծմէ խնդրեց որ զօրացնէ մեզ կեաւուրները ոչնչացնելու համար: Առանց կասկած առաջացնելու՝ իմացանք իրմէ ռուսական զիրքերուն տեղը: Գիւղին մէջ հանգչելէ ետք, շարունակեցինք մեր ճամբան:

Ծերունիին հաղորդած տեղեկութիւններէն՝ իմացանք որ մուտք գործած ենք վտանգաւոր գօտի եւ հարկ էր գերազոյն ճիգ ի գործ դնել: Հագիւ թրքական զիծերը անցած՝ մեզ նշմարեցին այդ տեղէն ու կրակ բացին: Ճերմակ լաթի կտոր մը ի ձեռին՝ կը վազէինք ռուսական զիրքերուն կողմը: Ընկերս ինկաւ ճիչ մը արձակելով. առանց կարենալու իրմով զբաղիլ, բոլոր ուժերով վազեցի եւ վերջապէս հասայ ռուսական զիծերը: Հոն ուրախութեամբ հիւրընկալեցին զիս եւ թէյ հրամցուցին, բայց առին զէնքս ու Հալէպ գտնուող քրոջս ղրկած վերջին նամակը:

Այժմ ուրիշ տարազիր հայերու հետ կը մեկնիմ Ալեքսանդրապոլ:

Ընթերցողները թերեւս կարծեն որ երեւակայութենէ տարուած՝ ճշմարտութիւնը խեղաթիւրեցի: Այդպէս չէ: Պարզապէս գրեցի այն ինչ որ պատմեց ինծի բասենցի Մկրտիչ Թադէոսեանը:

Ա. Տամատեան

* * *

Կ'ատելցնեն, որ մինչ պատերազմիկ բոլոր ազգերը կը ջանան բարձրացնել իրենց կռուողներուն թիւը, Ռուսիան լուծարքի կ'ենթարկէ հայ կամաւորական գունդերը, որոնք ռուսերուրք պատերազմի սկիզբէն ի վեր կը մարտընչին իբրեւ յառաջապահները ռուսական բանակին:

Միսուան

Փաստ. 1404-116

117.– ՄԱՐԶՊԵՏԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ

4 Նոյեմբեր 1916

Նամակագիրը՝ Մարգալետ (Ղազարոսեան Ղազարոս – 1878-1918) դաշնակցական յայտնի գործիչ է. շրջանաւարտ Լափցիկի համալսարանէն իբրեւ մանկավարժ. երկարամեայ գործունէութիւն ծաւալած է Պուլկարիոյ, Ատրպատականի եւ Արեւմտեան Հայաստանի ցահանգներուն մէջ: 1915ին ինք եւս ձերբակալուած եւ բանտարկուած էր նախ Կեսարիա, ապա Պոլիս, ուրկէ տարագրուած էր Գոնիա: Այստեղ Մարգալետ յաջողած էր փախուստ տալ բանտէն եւ ամբողջ երեք տարի վարել արկածալից եւ ծայր աստիճան վտանգաւոր կեանք մը: Ծպտեալ երբեմն իբրեւ գերմանացի, պաշտօնավարած է Պաղտատի երկաթագծին վրայ, երբեմն իբրեւ թուրք տերվիշ կամ արաբ պետելի շրջած է տարագրութեան ճամբաներուն եւ Սիջագետքի անապատներուն մէջ ջանալով մահուան ճիրաններէն փրկել հայ կեանքեր. Ամանոսի լեռներուն մէջ կազմած է հայ երիտասարդներէ բաղկացած զինեալ խումբ՝ վրէժխնդիր ըլլալու համար ջարդարար թուրքերէն: Այդ շրջաններուն մէջ ունեցած է իրեն բախտակից գործընկերներ, ինչպէս Տիգրան Ծամհուր, Խոսրով Պապայեանը, փրոֆ. Ա. Աստուածատրեանը եւ ուրիշներ, որոնք տարագիրներու մասին իրենց քաղած տեղեկութիւնները կը հասցնէին մինչեւ Պոլիս, ուրկէ Հ.Յ.Դ. Առժամեայ մարմնի ներկայացուցիչ Շաւարշ Սիսաքեան, ինչպէս զիտենք, օրը օրին կը փոխանցէր Սոֆիա, Պալքանի Կեդր. կոմիտէին:

Դժբախտաբար հերոսատիպ այս մարդուն կեանքը պիտի ընդհատուէր անհետք արկածի մը հետեւանքով: 1918ին, զինադադարի նախօրեակին Նիսիպիսի մէջ ձիւն վար իյնալով յանկարծամահ պիտի ըլլար Մարգալետ:

* * *

Ստորեւ ներկայացուած գրութիւնը յղուած է Ամերիկայի Կեդր. կոմիտէին: Նամակին վերեւ լատինատառ գրուած է Bersaba. փակագծի մէջ Islahie. ապա Կ. կոմիտէին կը ծանօթագրէ «նամակին դրոշմին կնիքը»: Իսլահիէն՝ կիլիկեան Ամանոս լեռներու արեւելքը, հին Նիկոպոլիս քաղաքն է:

Մարգալետի նամակը ենթադրաբար գաղտնի մելանով գրուած է, կամ տեղ հասած է այնպիսի վատթար վիճակի մէջ, որ արտագրողը տեղ-տեղ, դժուար ընթեռնելի բաժիններուն համար կը նշէ «երկու բառ» կամ «տող մը չի կարդացուիր»: Այլապէս հապճեպով գրի առնուած Մարգալետի այս նամակը հայ տարագրութեան դժբախտ ականատեսի մը յուսահատական ճիչն է՝ «մեռնող հայութեան» դեռ կենդանի մնացած խլեակներուն օգնութեան հասնելու աղերսանքով:

Կը փորձեմ լուր մը հասցնել մեռնող հայութենէն: Ահաւոր կոտորած տեղի ունեցաւ 1.5-2 ամիս առաջ Տէր-Չօր: Կոտորածը քիչ յետոյ կրկնուեցաւ, այնպէս որ Տէր-Չօրի կողմէ գաղթական զրկուած հայութիւնն եւս բնաջինջ եղաւ: Ոճրագործ կառավարութիւնը հոս իբրեւ մութեսարըֆ զրկեց էվերէկի (Կեսարիա) ջարդարար յայտնի ոճրագործ եւ գազան Շէքիր, իբրեւ միւլթեսարըֆ:

Ամբողջ այրերը սրտապատառ ջարդուեցան, օրերով անօթի կոտորուեցան. մնացածներն ալ սրէ անցուցին: 5-6 ամիս առաջ կիլիկերը եւ երեխաները Եփրատ գետը թափելով խեղդամահ ըրին: Հազարաւոր հայեր 5-6 ամիս առաջ սրէ անցուցին: Ռաս-իւլ-Այնի գաղթական հայերը, երեխաներն ու կիլիկերը անապատի մէջ մերկ անօթի կոտորուեցան: Ամիս մը առաջ Չաւէն պատրիարքը դէպի Պաղտատ [---- անընթեռնելի մէկ տող] աքսոր զրկեցին ընտանեօք: Անշուշտ ճամբան զոհ գնաց ընդունուած սիստեմին: 5 ամիս առաջ Մամուրիէն-Մինաս (?)-պաշի [---- անընթեռնելի կէս տող] Պաղտատի եր-

կաթուղիի գծին վրայ աշխատող 5-600 գաղթական [---- անընթեռնելի մէկ բառ] քշեցին Միջագետք: Կէսէն աւելին ճամբան սրով եւ քաղցի հիւանդութենէն կոտորեցին: Քչած ատեն չեն թողուր, որ ունեցած դրամը կամ հագուստը միասին առնեն: Ով որ ալ յաջողի առնել, ճամբան կը կողոպտէին: Մերկ, անօթի, մտրակի եւ հրացանի կոթով, հրով, սրով քշեցին դէպի անապատ [---- անընթեռնելի մէկ բառ]:

2-3 միլիոն հայութենէն մնաց փոքրիկ բեկորներ: Մնացածներու գաղթը այստեղէն այնտեղ կը շարունակուէր: Արդեօ՞ք դուք միջոց մը չէք կրնար գտնել մնացած բեկորները փրկելու: Մեծ ջարդերու [---- քանի մը տող չի կարդացուիր]:

Բոլոր կուսակցական եւ անկուսակցական ազգային գործիչները կախաղաններու վրայ կամ աքսորի ճամբուն վրայ սրով կամ կացինով կոտորեցին. յետոյ բոլոր քաղաքներու ու գիւղերու այր մարդիկը բանտերը լեցուցին. գիշերով իրարու ոտքերը կապած՝ աքսոր քշեցին ու լեռներու մէջ բոլորը կոտորեցին, սրով, թուրով,

կացինով, գնդակով եւայլն: Կիներն ու երեխաները ճամբայ հանեցին դէպի Միջագետքի անապատները: Աստուծոյ ալ ճամբան անօթութեանէ ու մերկութեանէ կոտորուեցան: Հայաստանէն հասնող կանացի բեկորները բոլորովին մերկ հասան Տիգրանակերտի սահմանները: Գեղեցիկ կիները թուրքերը բաժնեցին իրենց մէջ. շատերը լլկելէ յետոյ կոտորեցին: Գաղթական զրկուած հայու թեան ինչքը կառավարութիւնը կողոպտեց ու իր հաշուոյն ծախեց. ու այսպէս բոլոր ազգային հարստութիւնները, — վանք, եկեղեցի, դպրոց եւայլն: Փառաւոր հայութեան տեղը մնաց համատարած աւերակ եւ կոտորած: Չէ՞ք կրնար, իբրեւ ամերիկացի, Պուլկարիա եւ Պոլիս մարդիկ զրկել եւ կապ հաստատել:

Հազար ու մի նկատումներով հասցէ չեմ կրնար տալ: Ես ձեր նախկին յոգևածագիրներէն եմ: Կը գրէի ինկած հերոսներու [մասին] ու յեղափոխական կեանքէ: Հոգ օտարութիւն անուն եղբայր մը ունիմ, որ երբեմն ինծի կը գրէր: Ձինքը տեսէք եւ ողջ ըլլալս իմացուցէք:

Դաշնակցական, հնչակեան եւ ազգային գործիչները Ապրիլ 12-ին, քուրեցան էնկիւրի եւ հոն ջարդուեցան: Համբարձում Պոյաճեան²³⁷ [---- անընթեանէի մէկ բառ] կախուեցաւ: Վարդգէս-Չօհրապ Ուրֆայէն երեք ժամ դուրս սպաննուեցան: Ակնունին, Խաթակ, Զարդարեան, Սարգիս Մինասեան, Տոթթ. Տաղաւարեան, Ժամ-

կիւլեան Տիգրանակերտի ճամբուն վրայ կոտորուեցան: Նորէն կը խնդրեմ, դրսէն բանակցութիւններու եւ կամ ոեւէ միջոցաւ փոխադարձ զիջումներով փրկութեան միջոց մը խորհեցէք հայութեան բեկորներուն համար:

ՄԱՐԶՊԵՏ

Մոռցայ, Սուրիա զրկուած հայ գաղթականները իսլամացուցին:

Դուրսէն կտրուած ենք: Ոչ մէկ լուր չունինք: Չգիտենք թէ պատերազմը թուրքիոյ ո՞ր կէտերու վրայ կ'ըլլայ: Չգիտենք թէ՛ հայերն ի՞նչ շահերու մտքով այսքան գոհեր տուին: Ամբողջութեամբ առնելով իբր [?] դժբախտ եղբայր:

Հայ որբերը անհայր, անմայր, փողոցները կը թափառին, անտէր եւ անտուն: Կտոր մը հաց չկայ: Գերման միսիոնարներու կամ Պաղտատի երկաթուղիի միջոցաւ մարդ եւ դրամ հասցուցէք ասոնք հաւաքելու համար:

Frankfurt % M. Pastor Lohmanը Մարաշի որբանոցի տնօրէնուհին հայասէր է [---- անընթեանէի երկու բառ] դրամ զրկել տուէք:

Ուրիշ գերման միսիոնարներ զրկել տուէք, օգնելու եւ որբերը փողոցներէն հաւաքելու համար:

Ծանօթ Կ. կ[ոմիտէի].— նամակը գրողը Մարգարէտն է:

237.- Համբարձում Պոյաճեան – հնչակեան հանրաժամանօք առաջնորդ, ղեկավարը 1894ի Մասնոյ առաջին ապստամբութեան:

Փաստ. 1405-81

118.— ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԵՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

1917, 6 Յուլիս, Ժընև

Սիրելի ընկերներ,

Թուրքիայից, Հայկալից եւ ուրիշ տեղերից աքսորուած հայերին (երեւի մեր ընկերներից, Հ. Յ. Դաշնակցութեան) մօտիկ մարդկանցից ու նրանց ընտանիքների մնացորդներից) երբեմն նամակներ ենք ստանում, որոնցով դիմում են մեզ դրամական օգնութեան համար:

«Դրօշակ»ի խմբագրութիւնը այդ նպատակի համար գումար չունի իր ձեռքի տակ. ուստի սրանով խնդրում ենք Ձեզ, որ ընդառաջ գալով մեր այս դիմումին, մի կարգադրութիւն անէք, — կամ խմբագրութեանս մօտ գտնուած Ձեր գումարից մի որոշ մաս տրամադրէք այդ նպատակի համար, կամ մի նոր գումար ուղարկէք:

Եւ այսպիսով միջոց կու տաք խմբագրութեանս գոնէ մի որոշ չափով օգնութեան հասնելու մեր թշուառ ազգակիցներին:

Գիտենք, որ դուք բոլոր հոգով զգալու էք այս անհրաժեշտութիւնը, որովհետեւ ի՞նչ կայ ներկայումս աւելի անյետաձգելի, քան այս տանջուածներին ապրեցնելը:

Աւելորդ չի լինել ասել, որ հիմա հնարաւորութիւն կայ որոշ աքսորավայրեր դրամ հասցնելու:

Սպասում ենք Ձեր անյապաղ կարգադրութեանը:

Ընկերական բարեկենդանով

(Թղթածրար Մ. Վարանդեանի)

119.- ՌՈՍՏՈՍԵՆ ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆԻՆ

1/IX/1917, Ստոկհոլմ

Միրելի Միքայել,

Մեր դեսպանի միջոցով Նուբար փաշային հաղորդը-
լած հեռագիրը արդէն ստացուած կը լինի:

Օգտուում եմ դեսպանի սիրալիրութիւնից, ուղարկե-
լու համար ներփակ ամփոփումը այն պահանջներին, որ
մտադիր ենք ներկայացնել Սոց[իալիստական] համա-
գումարին, Հայաստանի վերաբերեալ, ինչպէս նաեւ
հաղորդելու մի քանի տեղեկութիւններ, որ գուցէ
իր[ենց] մանրամասնութիւններով յայտնի չեն այդտեղ:

Նախ ասեմ, որ Պետրոգրադ էի, երբ ստացուեց Նու-
բար փաշայի հեռագիրը, որով նա հրաւիրում էր
Բժշկին²³⁸, կամ մի ուրիշին, որ կարող կը լինէր նրան
փոխարինել, Պարիզ գալ խորհրդակցութիւնների հա-
մար. աւելացնում էր նաեւ, որ հակառակ պարագային
Վարանդեանը կարող է մեկնել Պետրոգրադ: Այդ հե-
ռագրին պատասխանուեց, Լիպարիտի²³⁹ ստորագրու-
թեամբ, որ Բժիշկը Թիֆլիս է, նոր նշանակուած լինելով
նուաճուած վայրերի ընդ[հանուր] նահանգապետի օգ-
նական, չի կարող հեռանալ. թող Վարանդեանը գայ
Ստոկհոլմ՝ տեսնուելու համար Ռոստոմի հետ: Ինչպէս
երեւում է այդ պատասխանը տեղ չի հասել. այլպէս
դու վաղօրօք կը պատրաստուէիր մեկնելու կամ որեւէ
ակնարկ կ'անէիր քո carte-երում այդ մասին:

Ռուսաստանի յեղաշրջումից անմիջապէս յետոյ յայ-
տարարեցինք, որ Դաշնակցութիւնը ոչ մի առանձնակի,
ազգային վտանգ չի դնելու մինչեւ Սահմանադիր ժողո-
վի գումարումը, դժուարութիւններ չյարուցանելու հա-
մար ժամանակաւոր կառավարութեան հանդէպ: Քանի
որ նոր կարգերը արդէն իրենք լուծում են մի շարք ազ-
գային խնդիրներ, առաջնակարգ տեղը մնում էր սո-
ցիալական, տնտեսական պահանջներին, որ ընդհանուր
են ամբողջ Ռուսաստանի համար: Վերջերում միայն
երբ դրուած էր գեմստփոնների²⁴⁰ խնդիրը, պնդեցինք
նահանգների եւ գաւառների սահմանների փոփոխու-
թեան անհրաժեշտութեան վրայ, առանց որի գեմստփոն
կորցրած կը լինէր իր նշանակութիւնը կովկասահայու-
թեան համար: Դրանով արդէն զբաղուած են Պետրո-
գրադում:

Իսկ գայով Տաճկահայաստանին, անհրաժեշտ դատ-
ւեց նախ եւ առաջ դնել նուաճուած վայրերի իշխանու-
թեան հարցը: Քանի այդ իշխանութիւնը մնար կախ-
ւած կովկասեան իշխանութիւնից, մեր նահանգների վի-
ճակը չէր կարող գերծ մնալ կողմնակի ազդեցութիւն-
ներից: Անջատելը անհրաժեշտ էր: Այդ նպատակով
Բժիշկը մեկնեց Պետրոգրադ, ուր նա յաջողութիւն ու-
նեցաւ շնորհիւ Միրլուկովի եւ Կերենսկու²⁴¹ ջանքերին:

Նոր կառավարութեան այդ քայլը նրանք նկատում են
իբրեւ առաջինը, հիմնականը հայկական ինքնավարու-
թեան տեսակէտից: Այսուհետեւ նուաճուած վայրերի
իշխանութիւնը կապ պիտի ունենայ անմիջապէս ար-
տաքին գործոց նախարարութեան հետ: Ընդհանուր
նահանգապետ է նշանակուել գեն. Ավերիանովը, որը
միաժամանակ վարում է գեն. Եանուշկեվիչի պաշտօնը:
Իբրեւ օգնական նա ունի բժ[իշկ] Զաւրեանին՝ Վանի,
Բաղէշի եւ Էրզրումի նահանգների համար, որոնք ճա-
նաչուած են իբրեւ հնուց ի վեր հայկական²⁴² եւ Պետ[ա-
կան] II Դոմմայի նախկին պատգամաւոր Իվանիչկուն
Տրապիզոնի շրջանի համար: Պաշտօնական հրահանգ-
ների մէջ կան 2 կարեւոր կէտեր, որոնք չեն հրատա-
րակուած. ա) բոլոր հայերը, որոնք առաջուց գաղթել են
Թուրքիայից, կարող են վերադառնալ եւ վերաբնակել
նուաճուած վայրերում, բ) այն թուրքերը, որոնք հեռա-
ցել են թուրք գործերի հետ միասին, գրկուում են վերա-
դառնալու իրաւունքից: Արդէն զբաղուած էին վարչու-
թեան եւ միլիցիայի կազմութեան խնդրով, երբ հեռա-
նում էի Թիֆլիսից:

Դժուարութիւններ կարող են յարուցուել Կովկասի
թուրքերի կողմից, որոնց դեկավարները չեն ծածկում,
որ Թուրքիայի վիճակը նրանց աւելի է զբաղեցնում,
քան Կովկասինը: Նրանք հակառակ չեն վի[այ]թնների
ինքնավարութեանը, միայն այդ նահանգները պիտի
մնան Թուրքիայի սահմաններում: Հայերի, իբրեւ փոք-
րամասնութիւն, իրաւունքները ապահովուած կը լինեն
հիմնական օրէնքներով: Առիթներ էին փնտռում բողո-
քելու համար: Պետրոգրադում արդէն ստացուել էր
նրանց մի խիստ բողոքը, որով պահանջում էին փոխա-
րինել Զաւրեանին մի ուրիշ հայով, եւ նրա կողքին աւե-
լացնել մի ուրիշ օգնական՝ թուրք: Այնտեղ տրամադիր
չէին ընդառաջ գնալու թուրքերի պահանջներին:

Կար եւ ուրիշ խնդիր, որ կարեւորութիւն ունի թէ
թուրքահայկական եւ [թէ] կովկասեան տեսակէտից,
դա՛ հայ գիւնուորների թուի աւելացնելն էր կովկասեան
ճակատում եւ նրանցից նոր մասեր կազմելը: Կովկասի
ապահովութեան տեսակէտից եւս նա մեծ նշանակու-

238.- Բժիշկը տոքթ. Յակոբ Չարեանն է, կամ Չարիեւ, որ
Ժամանակատր կառավարութեան կողմէ նշանակուած էր Արեւ-
մըտեան Հայաստանի նահանգներում կառավարիչի օգնական:
239.- Լիպարիտ Նազարեանց (Լեւոնեան) մաս կը կազմէր
Կովկասի հայոց Ազգ. խորհուրդի Մոսկուա ուղարկած պատուի-
րակութեան:
240.- Չեմստփոն – Տեղական ինքնակառավարութեան մարմին:
241.- Միրլուկով – Ժամանակատր կառավարութեան արտաքին
գործոց նախարար. Կերենսքի՝ վարչապետ:
242.- Բնագրին մէջ «հնուց ի վեր հայկական»ը ուստիւն է:

Թիւն ունէր: Բայց դա աւելի դժուար էր իրագործել: Բանն այն է, որ ուկրայինցիները եւ ուրիշները դրել են ազգային բանակ կազմելու խնդիր: Մերը թէեւ տարբեր է, ներքին բնակչութիւնն չունի, նուաճուած վայրի պահպանութեան խնդիր է, մի վայրի, որը պէտք է իր ինքնավարութիւնը ունենայ, բայց եւ այնպէս անպատճառ դուռ կը բանայ ուրիշների համար: Իսկ Ռուսաստանի ներկայ խառնակ վիճակում դա բնաւ ցանկալի չէ: Մեր տեսակէտին համամիտ էին եւ Եւրոպայի եւ Խորհրդային Միութեան ղեկավարները²⁴³: Առանձնապէս նշանակութիւն ունեցաւ այն հանգամանքը, որ ընդհանուր խառնաշփոթութեան ընթացքում հայկական բաղադրուածները չչարժուեցին իրենց դիրքերից, այնտեղ ոչ մի դժգոհութիւն չծագեց սպաների, հրամանատարների դէմ, եւ ոչ մի զինուոր դասալիք չեղաւ: Հայ զինուորականների ժողովը մշակեց խնդրի գործնական ձեւը եւ ընտրեց պատգամաւորութիւն, որը գեն. Եւրոպայի նամակով միասին մեկնեց Պետրոգրադ եւ այնտեղից ընդհանուր] հրամանատարի բանակատեղին: Դրանից առաջ արդէն Բժիշկը դրել էր խնդիրը: Առայժմ դրականը այն է, որ վճռուած է

գոյութիւն ունեցող 6 բաղադրուածները վերածել 6 գնդերի, երկուսական բաղադրուածներից կազմած: Այդ 12 բաղադրուածները ժամանակին կը դառնան դիվիզիա, եւ գուցէ յաջողուի մի կորպուս կազմել: Այդ պարագային կովկասեան ճակատի վրայ նա կը վերցնի իր վրայ շատ զգալի պատասխանատուութիւն:

Բացի Թիֆլիսի զինուորական մարմնից, Պետրոգրադում կազմուել է մի ուրիշը:

Մենք ոչ մի որոշակի տեղեկութիւն չունենք այն ծրագրի գործադրութեան մասին, որ յայտնել էր Նուպար փաշան: Ինչպէ՞ս անդրադարձաւ Ամերիկայում: Իմացած կը լինէք, որ Գարոն⁴⁴ արդէն մեկնել է Ամերիկա Ճապոնիայի վրայով: Նա պիտի կապ հաստատի այնտեղից՝ պատուիրակութեան հետ:

Քո ՌՈՍՏՈՄ

Յ. Գ.- Քո գալը անհրաժեշտ է, անկախ համագումարից: Չեմ կարող վերադառնալ առանց քեզ տեսնելու այստեղ:

Ն[ՈՅՆ]

(Թղթածրար թիւ 65)

120.- ՌՈՍՏՈՄԷՆ ԱՆՏՈՆ ԳՕՇԻՆ, Ժընեւ

12/X/1917, Ստոկհոլմ

Միրելի Տիար Անտոն,

Ներկապ ուղարկում եմ 1.196 fr. մի չէք: Սրանից 1.000 fr. պէտք է ուղարկել Խաչատրեանին²⁴⁴, որ հաւասարապէս բաժանի Մարգարեանին, Չարըզին, Ատրոնու ընտ[անիքին], Լեփեանին[?], Տիկ. Բարիկին (Հր. Լուսպարոնեանի կնոջ), Խաչիկի մօրը եւ կնոջը, իրեն եւ այլն: Երեւի ամէն մէկին կ'ընկնի մօտ 100 fr.: Առաջին անգամին դա էլ մի բան է: Եթէ ուրիշ աւելի հաստատ միջոց չունէք, ուղարկէք Բագէլի կոմիտէի միջոցով Zollinger բանկին: Այս ճանապարհը ցոյց են տուել ինձ Կոպէնհագէնից: Ուրեմն մի նամակով կը յայտնէք Խաչատրեանին, թէ ինչպէս պէտք է բաժանել եւ կը խնդրէք, որ գրի, թէ ո՞վ առանձնապէս կարօտ է օգնութեան: Յոյս ունեմ ձեր տրամադրութեան տակ դնել այդ նպատակով մի որոշ գումար: Թող յայտնեն նոյնպէս, թէ ուրիշ ի՞նչ վայրերում կան նման ընտանիքներ: Չարեաններին եւ Քրոմոյեանին կը յայտնեմ, որ այդ ճանապարհով կարող են օգնել իրենցներին: Բայց երեւի

նրանք արդէն գիտեն: Տեղեկացիր նոյնպէս, չի՞ կարելի արդեօք դրամ հասցնել Մոսուլ: Խարբերդից եկածների պատմելով՝ այնտեղ են Փիլոսի²⁴⁵ ընտանիքը եւ Գալուստ Կարապետեան: Հարցրէք Մարուքէ Մարանճեանի մասին: Ղազար Չարըզը անպատճառ տեղեկութիւն կ'ունենայ:

Պատկերները ստացայ: Մի մի կապոց (ոչ բոլորից, միայն տիպիկ պատկերները՝ ինչպէս 1) Սերոբ Փաշան, 2) Տարօնի Առիւծը, 3) Թորգոմի խմբանկարը, 4) Խանը, 5) Եփրեմը, 6) Քրիստափորը եւ այլն) ուղարկիր հետեւեալ հասցեով՝

- 1) Madame Nalbandian
Birkerød – (Danemark)
- 2) Mlle Ingeborg Maria Sick
Pile - Allée, 19
Copenhagen – (Danemark)

Պատկերների տակը համառօտ գրել Ֆրանսերէն, թէ ով ի՞նչ դեր է խաղացել:

Քո ՌՈՍ[ՏՈՄ]

243.- Եղեմիչ – ռուս գորավար. կովկասեան ռազմաճակատի հրամանատար: Խորհրդով – Անդրկովկասեան առանձին կոմիտէի (Օգակոմ) նախագահ:

244.- Փրոֆ. Աստուածատուր Խաչատրեանն է, արքայական:

245.- Փիլոս – Փափախեան Փիլոս:

245ա.- Լիզը Ռոստոմի կինն է. Յոնանը՝ Դարբեան:

Մնացած 126 fr. կը տաս Լիզին, որից 110 Fr. Յոնանին պարտքն է^{245ա}:

Չէքը ստանալու մասին անմիջապէս յայտնիր:

Փաստ. 1405-103

121.- ՌՈՍՏՈՍԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

1917 թ. աշնան ամիսներուն Ռոստոմ կը գտնուէր Մտոկիով և կը մասնակցէր ընկերվար կուսակցութիւններու համագումարին, որուն նպատակն էր վերջ տալ պատերազմին, և խաղաղութեան հաստատման համար նոր համակարգի մը սկզբունքները ճշդել: Ընդարձակ զեկուցագրով մը, երիտասարդ թուրքերու վարչակարգին գործած եղեռնագործութիւնը պարզելով՝ առանձին յուշագրով մը Ռոստոմ պիտի ներկայացնէր նոյնպէս Հ. Յ. Դաշնակցութեան պատկերացումը Հայաստանի ապագայ ճակատագրի մասին:

Այս աշխատանքներու կողքին, ինչպէս կը տեսնուի Ամերիկայի Կեդր. կոմիտէին յղուած իր այս նամակէն, Ռոստոմ միշտ հոգածու վերաբերում ցոյց կու տար նահատակուած ընկերներու ընտանիքներուն նկատմամբ, ջանալով ամէն միջոցով օգնութիւն հասցնելու անոնց: Ռոստոմ, Վարանդեան և շատ ուրիշներ կը թղթակցէին ֆրանսերէնով, որովհետեւ պատերազմի այդ տարիներուն Եւրոպայի մէջ գրաքննութիւնը վար կը դնէր ընդհանրապէս անձանօթ լեզուով կատարուող գրագրութիւնը:

14 / X / 1917, Stockholm

Chers camarades,

Je viens de recevoir 1473 R. que vous m'aviez transférés par la Banque «Skandinaviski».

C'était juste à temps. Etant retenu ici, j'ai été obligé de télégraphier pour l'argent à Petrograde. Dans les circonstances actuelles j'aurais la réponse et l'argent au plus tôt dans un mois.

J'ai immédiatement transféré 1000 fr. à Aleppo, aux familles déportées de nos camarades. Vous savez, peut être aussi, que les familles de Lousparonian, d'Atrouni, de Pastermadjian de même que Marzpet, Tcharek et Khatchatrian et nombre d'autres se trouvent dans ces régions. La plupart sont privés des moyens d'existence. Il faut absolument s'occuper de leur sort. Nous aurons la possibilité de secourir par leur intermédiaire, aussi les familles, qui sont déportées et installées plus loin. D'après ce que j'ai appris à Copenhague, ce n'est pas difficile. Il faut pour la première fois, mettre à la disposition de nos camarades à Genève une somme plus ou moins importante, pour qu'ils puissent la faire parvenir au fur et à mesure à sa destination. C'est à nous qu'incombe ce devoir jusqu'à ce que la situation en Russie s'améliore un peu. Je m'adresse spécialement à nos sœurs de la Croix Rouge des Etats-Unis.

Avez-vous reçu ma longue lettre en arménien il y'a jusque un mois?

Թարգմանութիւնը.—

Սիրելի ընկերներ,

Նոր ստացայ Սկանտինաւսկայա դրամատան միջոցաւ ձեր փոխադրած 1473 ռուբլին:

Ճիշդ ատենն էր: Հարկադրուած ըլլալով հոս մնալ, ստիպուեցայ դրամին համար հեռագրել Պետրոգրադ: Ներկայ պայմաններուն մէջ, պատասխանը եւ դրամը ամենաշուտ կրնամ ունենալ մէկ ամիսէն:

Անմիջապէս 1000 ֆրանկ փոխանցեցի Հալէպ, տարագրեալ մեր ընկերներու ընտանիքներուն: Դուք ալ գիտէք, թերեւս, որ Լուսպարոնեանի, Ատրունիի, Պաստրմաճեանի ընտանիքները, ինչպէս նաեւ Մարզպետը, Չարըզը, Խաչատրեանը եւ շատ ուրիշներ կը գտնուին այդ շրջաններուն մէջ: Մեծ մասը գուրկ է ապրուստի միջոցներէ: Անպայման պէտք է զբաղիլ իրենց ճակատագրով: Մենք հնարաւորութիւն ունինք իրենց միջոցաւ օգնելու նաեւ ընտանիքներուն, որոնք տարագրուած եւ հաստատուած են աւելի հեռու: Կուպենհագնի մէջ իմացածէս դատելով՝ դժուար չէ այդ: Նախ եւ առաջ պէտք է ժընեւի մեր ընկերներու տարագրութեան տակ դնել կարեւոր գումար մը, որպէսզի կարենան մաս առ մաս տեղ հասցնել: Այդ պարտականութիւնը մեզի կ'իյնայ, մինչեւ որ Ռուսիոյ մէջ կացութիւնը քիչ մը բարելաւուի: Մասնաւորաբար կը դիմեմ Միացեալ Նահանգներու Կարմիր Խաչի մեր քոյրերուն:

Pourquoi Hanemian n'est-il pas venu? J'avais tant de choses à lui dire!

Le memorandum désigné pour la Conférence est imprimé à la machine. Dans quelques jours je vous enverrai un exemplaire. Comme vous verrez, il n'est pas complet. La partie concernant l'organisation des massacres dans les différentes régions et les actes de défense des Arméniens est abandonnée. Nous avons surtout en vue de démontrer le degré de responsabilité du gouvernement turc dans notre désastre national.

Il nous manque des renseignements des régions occidentales. Ne pourriez-vous pas exposer tout ce que vous savez et l'envoyer à Genève ou à Petrograde?

Le Bureau Hollando-scand[inavien] va lancer un appel à la Paix. Il y a des propositions concrètes pour les principales questions. Pour notre cause est proposé «Le rétablissement territorial de l'Arménie Turque avec garantie de libre développement».

Jusqu'à présent pas une lettre de vous! Pourtant j'attends de vos nouvelles. La présence d'un de vous est indispensable provisoirement au Caucase.

Si les écoles d'aviation acceptent les Arméniens, ne pourriez-vous pas y mettre quelques dizaines – je voudrais même dire – quelques centaines de jeunes gens?

Salutations fraternelles
STEPHAN ZORIAN

Ստացա՞ք ամիս մը առաջ հայերէնով գրած երկար նամակս:

Ինչո՞ւ համար Հանրմեանը²⁴⁶ չեկաւ: Այնքա՛ն բաներ ունէի իրեն ըսելիք:

Համագումարին սահմանուած յուշագիրը տպուած է գրամեքենայով: Քանի մը օրէն օրինակ մը պիտի ղրկեմ ձեզի: Ինչպէս պիտի տեսնէք, ամբողջական չէ: Տարբեր շրջաններու մէջ [կատարուած] ջարդերու եւ հայոց դիմադրութեան կազմակերպումը՝ մէկ կողմ ձգուած է: Նկատի ունէինք ցոյց տալ ազգային մեր աղէտին մէջ մա՛նաւանդ թուրք կառավարութեան պատասխանատուութեան աստիճանը²⁴⁷:

Մեզի կը պակսին տեղեկութիւններ արեւմտեան շրջաններէն: Չէ՞ք կրնար խմբագրել այն ամէնը որ զիտէք եւ ղրկել ժընեւ կամ Պետրոգրադ:

Հորանտա-սկանդինաւեան բիւրոն Խաղաղութեան կոչ մը պիտի ուղղէ: Գլխաւոր հարցերուն մասին շօշափելի առաջարկներ կան: Մեր հարցին համար առաջարկուած է «Թրքահայաստանի հողային վերահաստատումը՝ ազատ զարգացման երաշխիքով»:

Մինչեւ հիմա ձեզմէ ոչ մէկ նամակ... Մինչդեռ ձեր լուրերուն կը սպասեմ: Ձեզմէ մէկուն ներկայութիւնը անհրաժեշտ է Կովկաս:

Եթէ օդանաւային վարժարաններ հայեր կ'ընդունին, չէ՞ք կրնար հոն զետեղել քանի մը տասնեակ – պիտի ուզէի նոյնիսկ ըսել՝ քանի մը հարիւր երիտասարդներ:

*Եղբայրական բարեկներով՝
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ*

246.- Հանրմեան Արտասագր – Եգիպտոսի Հ.Յ.Դ. կոմիտէին ծանօթ ներկայացուցիչը այդ օրերուն կը գտնուէր Ամերիկա իբրեւ քարտուղար Փարիզի Ազգ. պատուիրակութեան, որուն կողմէ առաքուած էր ամերիկահայ այլազան հաստատմաներուն միջեւ համերաշխութիւն գոյացնելու պարտականութեամբ:

247.- Ստոկհոլմի համագումարին եւ Ռոստոմի ծաւալած աշխատանքներուն մասին տեսնել ներկայ հատորի Գ. բաժինը, էջ 263-308:

(Թղթածրար թիւ 65)

122.- ՌՈՍՏՈՍԷՆ ԱՆՏՈՆ ԳՕՇԻՆ, Ժընևի

23 Հոկտեմբեր 1917, Ստոկհոլմ

Միրելի Տիար Անտոն,

Ստացայ օր. Ազնիւի նամակների պատճէնները: Չգիտեմ, ինչպէս հայհոյեմ մեզ բոլորիս, որ դեռ ընկերների կամ նրանց ընտանիքների օգնութեան գործը չի կազմակերպուած: Մեղադրում եմ աւելի ձեզ: Գոնէ յայտնէիք, որ հնարաւորութիւն կայ: Երբ Աւետիքը²⁴⁸ գրել էր, թէ Չարըզը օգնութիւն է ուզում Վարանդեանից, ես մտածում էի, թէ ի՛նչ ճանապարհով կարելի կը լինի մի բան ուղարկել: Ինձ համար անակնկալ էր, որ տիկ. Ատրոնին արդէն նպաստ է ստացած եղել «Հայրենիքից»: Ինչո՞ւ մի տող չէիք գրել Ստեփանի ընտանիքի մասին: Մինչեւ հիմա բերել տուած կը լինէք Թաւրիզից նրանց տան գրքերը [?]: Աւետիքը չպէտք է անտարբեր գտնուէր: Կամ գուցէ չէք իմացել, որ Ստեփանը Բալաջանն է²⁴⁹:

Չափազանց ուրախացայ, երբ իմացայ, որ Վահան Գասպարեանը Լեւոնի եւ Վահանի հետ միասին Հիւսնի Մանսուր են: Նրանց բոլորովին սպանուած էինք կարծում: Բայց գուցէ խօսքը Մազմանեան Լեւոնի եւ Վահանի մասին չէ, այլ ուրիշ: Աստուած սիրէք, հարցրէք

չուտով Ազնիւին եւ խնդրէք, որ պատասխանը անմիջապէս հաղորդի, եթէ կարելի է նոյնիսկ հեռագրով: Յամենայն դէպս, յայտնէք այն կողմերը, որ Վահան Գասպարեանի ընտանիքը Երեւան է, երեխաները դպրոց են դրուած: Մազմանեանի մայրը, քոյրը՝ Մարիամը, կինը՝ Ադէլը, երկու զաւակներով այժմ Կարին են, եւ լաւ են:

Կարդացի տիկ. Մանիկի նամակը: Քոյրը դրամ հասցնո՞ւմ է արդեօք, Պոլսից ոչինչ չե՞ն ստանում: Ո՞ր է տիկ. Նոյեմզարը իր որդիներով: Որքա՞ն դժուար է մտածել այդպիսիներին նպաստ հասցնելու մասին: Յայտնիր տիկ. Նազենիկ Ղազարոսեանին, որ վերադարձիս ամէն կերպ կ'աշխատեմ գտնել այն պատանու հետքը, որ իրեն ցոյց էր տալիս իբրեւ Բարսեղ աղայի որդին: Գրում եմ «ցոյց ես տալիս», որովհետեւ կասկած կար: Տեսայ նրան Երեւանում, ուզում էր կամաւոր գրուել, խորհուրդ չտուի: Այնուհետեւ այլեւս չերեւաց: Կը լինէր 16-17 տարեկան: Կարելի է յայտարարութիւն տալ «Հորիզոն»ում:

Յոյս ունեմ 1.000 ֆր.ը արդէն փոխադրած կը լինէք: Գրիր, խնդրեմ, թէ ի՛նչ միջոցով էք դրամները հասցնում, կամ կարելի՞ է արդեօք մեծ գումար ուղարկել մի անգամից, որ այնտեղ բաժանեն. կը յայտնեմ բոլոր աքսորուածների ազգականներին: Հէնց այսօր նամակ եմ գրում օր. Ազնիւի ազգականին:

Քո Ռ. [ՈՍՏՈՍ]

248.- Աւետիք Իսահակեան, որ այդ շրջանին ժընևի կը գտնուէր:

249.- Ստեփան Ստեփանեան, ծանօթ Բալաջան ծածկանունով:

Փաստ. 65-29

123.– ԼԷՈՓՈԼՏ ՖԱԻՐԻ ՆԱՍԱԿԸ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, ԺՂՆԵՒ

Genève, le 29 octobre 1917
6, Rue des Granges

Ժընև, 29 Հոկտեմբեր 1917
6, տէ Կրանտ փողոց

A la Rédaction du Droschak, Genève,
Messieurs,

Պարոններ,

Je reçois votre lettre du 27 octobre. Pour envoyer des fonds en Mésopotamie, je me suis toujours adressé au Dr. Andreas Vischer qui a deux correspondants à Alep et un correspondant à Urfa. Son adresse est Nauenstrasse 43 à Bâle.

Je ne sais s'il s'agit pour vous d'envoyer de l'argent à des particuliers ou si vous désirez que votre somme soit consacrée à l'œuvre générale des déportés et des orphelins. Dans les deux cas le Dr. Vischer pourra faire le nécessaire. Je suis d'ailleurs tout prêt à vous fournir des explications complémentaires que vous pourriez désirer.

Veillez agréer, je vous prie, l'assurance de mon dévouement.

LEOPOLD FAVR

Ստացայ 27 Հոկտեմբերի ձեր նամակը: Միջազետք դրամ ուղարկելու համար միշտ դիմած եմ Տոքթ. Անդրէաս Ֆիշերին, որ երկու թղթակիցներ ունի Հալէպ եւ հատ մըն ալ Ուրֆա: Իր հասցէն է՝ 43, Նաուէնտրաս, Պազէլ:

Չեմ գիտեր թէ մասնաւոր անձերու կ'ուզէք դրամ ուղարկել, եւ կամ ձեր գումարը կ'ուզէք որ յատկացուի տարագիրներու եւ որբերու ընդհանուր գործին: Երկու պարագաներուն ալ Տոք. Ֆիշեր պիտի կարենայ անհրաժեշտ կարգադրութիւնը կատարել: Այլապէս նաեւ պատրաստ եմ տալ ձեր փափաքած լրացուցիչ բացատրութիւնները:

Հաճեցէք ընդունիլ իմ պատրաստակամութեան հաւաստիքը:

ԼԷՈՓՈԼՏ ՖԱԻՐ

Փաստ. 65-34

124.– ՌՈՍՏՈՄԻ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ ՍՏՈԿՀՈԼՄԷՆ

Արտագրութիւն հաւանաբար Ստոզիովնէն ֆրանսերէն գրուած Ռոստոմի մէկ նամակին, ստորագրուած Ստեֆան, որ հասկնալի պատճառով շարադրուած է բոլորովին փոխաբերական իմաստով: Յիշատակուած անուններէն Մարգպետը՝ Ղազարոս Ղազարոսեանն է, Շահբազը՝ Բարսեղ Շահբազը, Յայգալոյսը՝ նոյնանուն երկի հեղինակ Ռուբէն Չարդարեանը, Խաչը՝ փրոֆ. Աստուածատուր Խաչատրեանը, Հայկը՝ հաւանաբար Թիրեաքեան Հայկը (Հրաչ), Հուրիկին հայրը՝ Գրիգոր Չօհրապ, եղբայրները՝ Վարդգէս Մերենկիպեան, Վիշապը՝ Պոլիս:

«6 Décembre [19]17»

6 Դեկտեմբեր [19]17

«Chère Mme Antoinette»

Սիրելի տիկին Անտուանէտ,

«Il y a longtemps que j'ai déjà reçue la carte. Je voudrais savoir si vous avez reçu ma lettre détaillée du 17 Octobre*.

Երկար ատեն է որ բացիկը ստացած եմ: Պիտի ուզէի գիտնալ թէ արդեօք ստացած էք 27 Հոկտեմբերի իմ նամակս:*

Le 7 Novembre oncle Rosdom par une lettre me demande des nouvelles précises sur les membres de notre famille. Combien il est difficile de nous écrire sur leurs sorts malheureux! Il faut les considérer tous presque perdus. Les derniers membres de notre famille qui se trouvaient encore à Vichabe ont changé leur demeure il y a une année, depuis lors nous n'avons aucune nouvelle d'eux. Les quelques petits qui sont restés à Vichabe se trouvent à l'hôpital gravement malades et nous demandent toujours des secours. J'ai fait tout mon possible pour les aider mais il est inutile de dire que mes moyens sont insuffisants. Moi et les membres de ma famille aussi avons assez souffert, mais à présent nous nous portons mieux. Nous recevons parfois des nouvelles vagues et même fauleuses sur Mlle Marzbed, petite Chahbaz et Mme Tzaikalouisse mais nous faisons beaucoup d'efforts pour obtenir des nouvelles exactes. Le père de Hourig est mort avec ses frères près d'Ourfa; nous avons déjà reçu son testament au moyen des amis. Quant aux petits-fils de Haïk ils sont encore à [Ter] Zor et à Damas dans une situation lamentable. Leur oncle doit les aider le plus tôt possible. Mme Khatch est à Konia; nous lui avons envoyé de l'argent. Njdeh est vivant ou non? Salutations de tous les miens».

Նոյեմբեր 7-ին Ռոստոմ հօրեղբայրը նամակով մը ճշգրիտ տեղեկութիւններ կ'ուզէ մեր ընտանիքին մասին: Որքա՛ն դժուար է գրել ձեզի անոնց դժբախտ ճակատագրին մասին: Հարկ է բոլորը կորսուած համարել: Մեր ընտանիքին վերջին անդամները, որ տակաւին Վիշապ կը գտնուէին, տարի մըն է որ իրենց բնակարանը փոխած են. ատկէ ի վեր ոչ մէկ լուր ունինք իրենցմէ: Քանի մը փոքրիկներ որ Վիշապ մնացած են՝ հիւանդանոց են, ծանրօրէն հիւանդ եւ միշտ օգնութիւն կ'ուզեն: Ամէն կարելիս կ'ընեմ իրենց օգնելու համար, բայց աւելորդ է ըսել որ միջոցներս անբաւարար են: Ես եւ ընտանիքիս անդամները եւս բաւական տառապեցանք, բայց ներկայիս լաւ ենք: Երբեմն տարտամ եւ նոյնիսկ անհաւատալի լուրեր կը ստանանք տիկին Մարգպետի, փոքրիկն Շահբազի եւ տիկին Յայգալոյսի մասին, բայց շատ ջանքեր կը թափենք ճշգրիտ տեղեկութիւններ ունենալու համար: Հուրիկին հայրը իր եղբայրներուն հետ մեռած է Ուրֆայի մօտ. կտակը ստացանք՝ բարեկամներու միջոցով: Գալով Հայկի թոռնիկներուն, տակաւին [Տէր] Ջօր եւ Դամասկոս են՝ ողբայր վիճակի մը մէջ: Իրենց հօրեղբայրը կարելի եղածին չափ շուտ պէտք է օգնէ իրենց: Տիկին Խաչ Գոնիա է. դրամ զրկեցինք իրեն: Նժդեհը ո՞րչ է թէ ոչ: Բարեկներ բոլոր իմիններուս կողմէ:

«Ton dévoué cousin»
«STEPHAN»

«Անձնուէր գարմիկ»
«ՍՏԵՓԱՆ»

*) La lettre en question ne nous est pas parvenue.

*) Խնդրոյ առարկայ նամակը չենք ստացած:

Փաստ. 1005-1

125.- ՓՐՈՖ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ՈՂԻՍԱԿԱՆԸ

1918 Յունիս 25, Բաղդաս

Համաշխարհային Ա. պատերազմի ավարտին, դաշնակից զորքերու Պոլիս մուտքէն անմիջապէս ետք, ազգային եւ կուսակցական կեանքը մեծ թափով կը վերսկսի Թուրքիոյ մայրաքաղաքին մէջ: Առաջին առթիւ կը ձեռնարկուի հրատարակմանը կուս. պաշտօնաթերթին, որ նախ «Արդարամարտ» եւ «Արիամարտ», ապա «Ճակատամարտ» անունով լոյս կը տեսնէ: Կը վերակազմուին թաղային խումբերը եւ 1919 թ. Յունիս-Օգոստոս ամիսներուն կը գումարուի Կ. Պոլսոյ յետ-պատերազմեան առաջին Շրջանային ժողովը, ուր կը կարդացուին նաեւ զեկուցագրեր անցնող արհարաւից չորս տարիներու տնտրութեան կուսակցութեան ընդհատակեայ գործունէութեան մասին: Արխիւներուն մէջ պահուած են Պապայեան Խոսքովի (Վաղարշ) եւ ընկ. Սկրտիչի զեկույցները: Այս կարգի մէկ վկայութիւն է փրոֆ. Աստ. Խաչատրեանի «Ողիսականը»: Յիշեալները, այոց հետ միասին, կը ղեկավարէին Պոլսէն մինչեւ Սեբաստիա, Կիլիկիա եւ Միջագետքի կուսակցութեան ընդհատակեայ գործունէութիւնը, որ շահեկան է այն իմաստով որ պատմութեան այդ երեսը շատ քիչ լուսաբանուած է վերապրողներու յուշերուն մէջ:

Յաջորդաբար կու տանք վերոյիշեալ երեք զեկուցագիրները:

Ընկերներ,

Երեք տարուան տառապանքներէն ու արհաւիրքներէն հազիւ ազատուած՝ կը շտապեմ տեղեկութիւն հաղորդել ձեզի իմ եւ ուրիշ ընկերներու մասին:

Պիտի ներէք անշուշտ, որ նախ իմ մասին հաղորդեմ քանի մը տեղեկութիւններ: — 1915-ի Ապրիլի 11-12-ի գիշեր մեր բոլոր ընկերներուն ձերբակալութեան ատեն քմահաճ պատահարով մը ես չձերբակալուեցայ: Ես շարունակեցի տեղական պաշտօնս «Ազգ. Կեդրոնական վարժարան»-ում եւ միւս կողմէն Գիսակի ու Արշաւիրի հետ կուսակցական գործունէութիւնը: Գիսակի ձերբակալութենէն վերջ՝ Արշաւիրի եւ Ռուզանի հետ²⁴⁸. Իսկ երբ Արշաւիրն ալ ստիպուեցաւ պահուիլ՝ հրապարակի վրայ մինակ մնացի, մինչեւ որ Սեպտեմբերին ես ալ ստիպուեցայ պահուիլ եւ Հոկտ. վերջը ձերբակալուեցայ. Պոլիս բանտ մնացի մէկ ամիս, ուր հանդիպեցայ Մարգարեան¹⁰¹, որ խորամանկութեամբ յաջողեց էր Կեսարիայի բանտէն Պոլիս գալ: Պոլիս մէկ անգամ ինձ քննութեան կանչեցին Ռեշատ Պէյի մօտ, ուր քննութենէն աւելի՝ իմ ամբաստանագիրս ու դատավճիռս կարդաց սապէս բանաձեւուած. — Պոլսում Դաշնակցութեան ներկայացուցիչ, Պալքանի կոմիտէի հետ յարաբերութիւն պահպանող, Արտասահմանեան թերթերու տեղեկատու, «Ազատամարտ»-ի աշխատակից եւ այլն: Աս քննութենէն քանի մը օր վերջը գաղտնի ոստիկանու-

թիւնը ինձ լուսանկարեց եւ անկէ քանի մը օր վերջը ճամբայ հանուեցայ դէպի Դիարբէքիր՝ Էնկիւրիի գծով: Ինչ 10 օր առաջ ճամբայ հանուեցաւ Մարգարեան դէպի Կեսարիա, ուր իր դատավարութիւնը պիտի վերջանար կախաղանով: Մարգարեան յաջողեց էր Ղոնիայի մէջ փախիլ:

Ինձ թոյլ չտուին դրամ առնել եւ ստիպուած էի Իգմիտէն ոտքով ճամբորդել: Ինձի համար այս պարագան նպաստաւոր էր, միայն թէ աս յառաջացած տարիքիս մէջ կարողանայի տոկալ ոտքով երթալուն հետ կապուած դժոխային պարագաներու: Այնուամենայնիւ ընտրեցի աս կերպը, որովհետեւ եթէ ազատուելու հնար կար, ատ ալ հետեւակ երթալով միայն կարելի էր: Շատ լաւ համոզուած էի, եթէ երկաթուղիով մինչեւ Էնկիւրի երթայի ալ անկէ անդին կարելի չէր ողջ մնալ, ինչպէս մեր բոլոր ընկերները: Դիարբէքիրի անունով ճամբայ հանեցին եւ բոլորն ալ չարաչար կերպով նահատակեցին: — Հոս չեմ ուզեր ճամբորդութեանս մանրամասնութեան մէջ մտնել. ասքանը միայն ըսեմ, որ կրցայ Դեկ.-Յունուար ամիսներուն Իգմիտէն մինչեւ Սուլթանիէ (Ղոնիայի արեւելեան կողմ) ոտքով ճամբորդեցի եւ 27 օր անընդհատ քալելէն վերջ (չուրջ 700 քիլոմէթր) հասնիլ Սուլթանիէ բոլորովին սպառած ուժով ու քսակով: — Ճամբան յաջողեցայ ոչնչացնել դատապարտութեանս գիրը եւ փոխել անունս ու խառնուել վանեցի ու մշեցի մշակ աքսորականներու հետ: Սուլթանիէ յաջողեցայ դուրս ելլել աքսորականներու խումբէն եւ պահուրդով: Հոն մնացի 2 1/2 ամիս: Աս միջոցին հոն եկաւ նաեւ Մարգարեան, որ՝ ինչպէս ըսի, յաջողեց էր փախիլ եւ այժմ կ'ուզէր անցնիլ Հալէպի կողմ, որովհետեւ իր

248.- Գիսակ՝ երեսփոխան Վարդգէսն է (Սերենկիլիւեան Յովհաննէս). Արշաւիրը՝ Միսաքեան Շաւարշ. Ռուզանը՝ Գրիգոր Մերճանօֆ:

հետապնդութիւնը կը շարունակուէր Ղոնիայի մէջ, ուր կատարուած էր իր փախուստը: Հոս պէտք եղած խորհրդակցութիւններն ու ծրագիրները կազմելէն վերջ (1916 Մարտ) բաժնուեցանք: Քանի մը օր վերջ ես մեկնեցայ Ղոնիա, ուր մնացի մինչեւ 1917, Նոյեմբեր:

Աս միջոցին կանոնաւոր յարաբերութիւն կը պահէի, թէ՛ Պոլսի ընկերներուն եւ թէ՛ Մարզպետի եւ ուրիշ ընկերներու հետ: Առ այժմ կը զգուշանամ անուններ տալէ: Աս շրջանում մեզ զբաղեցնող ամենակարեւոր խնդիրն էր սահման անցնելու հարցը: Մարդ ղրկեցինք Սվազ ուսումնասիրելու պայմանները եւ արդիւնքը անյաջող եղաւ: Երկրորդ գիծն էր Կիլիկիայէն Կիպրոս, որու ուսումնասիրութեան համար ես եկայ Տաւրոս, ուր քանի մը ամսուայ ջանքը նոյնպէս արդիւնք մը չտուաւ. կը պակսէին դրամ եւ ինծի ընկերանալ ուզող խիզախ ընկերներ: Բայց Մարզպետը, որ տարիէ մը ի վեր Նիսիբին կը գտնուէր, նպաստաւոր տեղեկութիւններ կու տար սահմանանցի մասին, թէպէտ ինք ո՛րեւէ վճռական ձեռնարկութիւն ընելու տրամադիր չէր երեւար: Կը մնար, որ անձամբ հոն երթայի եւ տեղին վրայ գործը ուսումնասիրէի: 1918 Մայիսի 7-ին կը մեկնէի Տաւրոսի կայարաններէն մէկէն եւ 5 օրէն կը հասնէի Սերջէ-խան (նոյն ատեն երկաթուղիի վերջին կայարանը) եւ հոն կը հանդիպէի Մարզպետին, որ Նիսիբինէն հոն եկեր էր առժամապէս խոյս տալով՝ իր մասին եղած ամբաստանութեան մը պատճառով: Ինքը հող կը մնար իբր թուրք հաճի Հիւսէն անունով, բայց աս միջոցին քուրդ մը ծեծած ըլլալուն պատճառով քուրդը բողոքագիր մը տուած էր կառավարութեան եւ ըսած, թէ հաճի Հիւսէնը հայ մըն է եւ կեղծ թուրք մը: — Հոս Մարզպետի հետ տեսնուելով հաղորդեցի իրեն, թէ վճռեր եմ անցնիլ ինչ գնով ալ ըլլայ. կա՛մ մեռնիլ կամ ազատուիլ: Ինքն ալ համաձայնեցաւ եւ հոն ծրագրեցինք մեր փախուստը: Հետեւեալ օր ինք մեկնեցաւ Նիսիբին նախապատրաստութիւններ տեսնելու, 2 օր վերջ ալ ես պիտի երթայի: Իր մեկնելու հետեւեալ օր իրիկուան նամակ մը կը ստանամ մեր մէկ ընկերէն, որ կը հաղորդէր թէ հաճի Հիւսէն ձիւն վար ինկեր եւ զգայազուրկ վիճակի մէջ կը գտնուի: Հետեւեալ առաւօտ կանուխ մեկնեցայ դէպի Նիսիբին եւ կէս ճամբան իմացայ, որ արդէն մեռեր է: Շանթահար եղայ աս ահաւոր անակնկալին առջեւ. հասայ տեղը եւ հաստատեցի դժբախտ իրականութիւնը: Մարզպետ իր բարեկամի մէկ շատ լաւ ձին կը հեծնի եւ անգլիացի գերի բժշկի մը եւ ուրիշի մը հետ Division²⁴⁹ կ'երթայ (1 ժմ. հեռու) եւ վերադարձին բժշկի հետ ձի կը վազցնեն, կ'իյնայ եւ այլեւս չ'ելլար: Իբր թուրք կատարեցին իր թաղումը եւ Նիսիբինի ասորական վանքի մօտ

գտնուած թուրք գերեզմանոցում թաղուեցաւ հաճի Հիւսէն- Մարզպետ:

Աս եղաւ տխուր վախճանը մեր մէկ պատուական ընկերոջ, երբ բանտերէն ու կախաղանէն ազատուած՝ վերջնական ազատութեան համար նախապատրաստութիւն կը տեսնէր:

Այժմ միայնակ պիտի իրագործէի փախուստիս ծրագիրը: Թէպէտ հոս շատեր կային մեր ընկերներէն, որոնք նոյնպէս կ'ուզէին փախիլ, բայց քաջութիւն չէին ունեցեր փորձելու: Հոս դեռ մանրամասնութիւնները պէտք է վերապահեմ: Բարեկամներէս մէկը տուաւ ինծի պէտք եղած դրամական օժանդակութիւնը եւ ես իբր արաբ ծպտուած՝ արաբի մը առաջնորդութեամբ անցայ Սէնճար լեռը՝ ուր եզիտիներ կը բնակէին եւ որոնք մինչեւ 4-5 ամիս առաջ համարեա անկախ էին, բայց բռնակալ պետութիւնը անոնք ալ խորտակեց եւ այժմ Սէնճարն ալ կը հեծէ թուրք էսկէրի մտրակի տակ: Սէնճար հանդիպեցայ եզիտիներու կրօնապետին, որ նոյնպէս կ'ուզէր փախիլ. եւ իբր եզիտի եւ անոր ծառան, արաբներու առաջնորդութեամբ, անցանք ամբողջ Միջագետքի անապատը միշտ ընտրելով ամայի ճամբաներ եւ մեծ վտանգներէ հազիւ ճողոպրած հասանք Սամարա, ուրկէ հոս փոխադրուեցանք: Ազատուելէ արդէն մէկ օր առաջ Ձեզի հաղորդեցի եւ հրահանգ ուղեցի:

Այժմ քանի մը տեղեկութիւններ.— Նախ պէտք է ըսեմ, որ մեզ հետապնդելու գործը երբեք չդադրեցաւ ու երեք տարուան ընթացքում Ղոնիա գտնուածս միջոցին ամէն 3-4 ամիս անգամ Պոլսէն հայ լրտեսներ կու գային եւ դրամական ու այլ խոստումներով կը ջանային հետք մը գտնել: Աս մասին նշանաւոր հանդիսացան Հրանտ վարդապետ Յովսափեան, Պէշիկթաշի մուխթար Յարութիւն Մկրտչեան²⁵⁰ եւ ուրացող Մամբրէ վարդապետ Սիսեան: Հայէպի մէջ մեծ շահատակութիւն կ'ընէ իր արբանեակներով յայտնի հնչակեան մատնիչ Արշալիրը: Վերջին անգամ երբ Հայէպէն անցայ, իմացայ, որ քանի մը օր առաջ ոստիկանութեան կողմէն ազդ մը փակցուած է եղեր հայոց եկեղեցուն դուռը, ուր կ'ըսուի եղեր, թէ Խաչատրեանի, Մարզպետի եւ Արամ Չարբաբի (ամէն մէկի նկարագիրը տալով) անունով Եւրոպայէն դրամ եկեր է: Ո՛վ որ ասոնք կը ճանչնայ կամ ասոնց տեղը գիտէ, թող ներկայանայ ոստիկանատուն եւ պէտք եղած տեղեկութիւնները տայ: (Եթէ իսկապէս դրամ դրկուած է, պէտք է ետ պահանջել: Եթէ ստոյգ է, խիստ ցաւալի է, որ մեր ընկերները դեռ ամբողջովին վերահասու չեն բուն կացութեանը եւ կ'ելլեն յայտնի ճամբով դրամ կ'ուղարկեն...):

Համառօտակի յիշեմ, որ հայաջինջ քաղաքականութիւնը երբեք չէ դադրեր Թուրքիայի մէջ եւ վերջին 4-5 ամիսներում նոր կատաղութեամբ սկսեր է: Թէպէտ բացայայտ կոտորածներ չեն կատարուիր՝ ինչպէս նախորդ տարիները, բայց զինուոր ժողովելու եւ ուրիշ

249.- Ֆրանսերէն՝ hno գորակայան իմաստով:
250.- Յարութիւն Մկրտչեան – մատնիչ, պատերազմի աւարտին ահաբեկուեցաւ Սողոմոն Թեհլիրեանի գնդակով:

անուններով 15-80 տարեկան արականները հաւաքեցին եւ դեռ կը հաւաքեն եւ ճամբաները անօթի ու ծեծի տակ կ'ոչնչացնեն: Ասպէս վերջերս Մոսկուէն հաւաքեցին 250 հոգի եւ ղրկեցին Դիարբէքիր: Ալեքսանտրէթէն փախտական մը կը պատմէր. «Երբ տեղական հրամանատարը մեզ յանձնեց ժանտարմրիին, ըսաւ. ես ձեզ համրանքով չեմ տար ասոնք եւ ոչ ոք համրանքով պէտք է պահանջէ ձեռնէ. ասոնք գինուոր ալ չեն. ձեզ կը յանձնեմ 50 հոգի. ոտքը ծուռ կոխողը զարկէք»: Եւ մինչեւ իր փախուստը արդէն 12 հոգի զարկած են: Աս է ընդհանուր կացութիւնը: Ամէն տեղ նոյն բանն է:

Վերադառնալով նորէն ինծի, պէտք է ըսեմ, որ հակառակ եռամեայ տաժանելի եւ միշտ սարսափի տակ ապրած կեանքիս եւ վերջին ծանր ու արհաւիրակից ճամբորդութեանս՝ առողջութիւնս շատ լաւ է, եւ եթէ Կովկասի ճամբան բաց ըլլար պիտի շարունակէի ուղիս, բայց այժմ չեմ գիտեր, թէ ո՛ւր պէտք է երթալ կամ ի՛նչ ընել, ուստի Ձեռնէ հրահանգի կը սպասեմ: Ես կը խորհիմ, թէ իմ ներկայութիւնը հոգ կամ Փարիզ կրնայ օգտակար ըլլալ, քանի որ մեր կուսակցութեան գործերու

մօտէն տեղեակ եւ վերջին 1914-15-ի ազգային կեանքին մէջ բոլոր անցած դարձածներուն մասնակից միակ կենդանի վկան մնացած եմ:

Շատ խնդիրներու բացատրութեան համար ինծի անպիտի փաստեր յայտնի են, որոնք ոչ ոք գիտէ: Եթէ դուք ալ օգտակար կը համարէք իմ ներկայութիւնը հոգ, հեռագրեցէք: Ասկէ մեկնելու համար դրամի պէտք կայ, հարկաւ աս մասին ալ պէտք եղածը պիտի կարգադրէք: Ամէն պարագայի մինչեւ Ձեռնէ պատասխան մը ստանալս, ինծի համար՝ հոս մնալու վերջնական գործի մը պիտի չձեռնարկեմ:

Ասկէ Կովկաս կնոջս լուր մը տալ նոյնպէս կարելի չէ. ուստի, եթէ դուք հնարաւորութիւն ունիք, գրեցէք «Հորիզոն»ի խմբագրութեան որպէսզի հաղորդեն քենիս՝ տիկին Հրարիի Նիկոլ Աղապալեանին, որ կրնայ լուր տալ կնոջս:

Ձերմագին բարեկենդրով
 Ձեր պատասխանին սպասող՝
 Ա[ՍՏՈՒԱ]ԾԱՏՈՒՐ ԽԱԶԱՏՐԵԱՆ

Փաստ. 882-64

126.– ՊԱՊԱՅԵԱՆ ԽՈՍՐՈՎԻ [ԸՆԿԵՐ ՎԱՂԱՐՇ] ՁԵԿՈՒՑՈՒՄԸ

1914ի Շրջ. ժողովի ընտրած Կ. կոմիտէին ես ալ իբր անդամ ընտրուած էի, բայց որովհետեւ բնակավայրս հեռու էր՝ Պարտիզակ, միայն հարկեցուցիչ պարագաներու մէջ կը հրաւիրուէի խորհրդակցութեան: Գրեթէ ամիս անգամ մը ուղղակի շփումներ ունեցայ Կեդր. կոմիտէի հետ եւ շատ բան չունիմ աւելցնելու ընկերներու գիտցածներուն վրայ: Ծանօթ են Մուշի դէպքերը, Պիթլիսի եւ Խնուսի կողմերը երեւան եկած երեւոյթները, արտասահմանի մտայնութիւնը եւայլն եւայլն:

915 Մարտ 25ին երեք օրով Պոլիս էի. ընկերները խորապէս համոզուած էին որ հայածանքի մը նախօրեակին կը գտնուին: Գաղտնի ոստիկանութեան հետապնդողները, ընկերներէ ոմանց մասին եղած հարցումները եւ զանազան երեւոյթները կը խռովէին ընկերներու միտքը, բայց եղած յարձակումները Չանաք Գալէի վրայ, պուլկարներու չէզոքութիւնը, գերմաններու գիւնակցութիւնը եւ ուրիշ պարագաներ յոյս կը ներշնչէին, որ շուտով վերջ կը գտնէ Թուրքիոյ հետ եղած պատերազմը եւ անգլիացիներ կը կանխեն ամէն դէպք իրենց մուտքովը դէպի Պոլիս:

Ասով հանդերձ կար որոշ աշխատանք՝ դիմագրաւելու համար ծանր ընկերները, բայց դժբախտաբար եւ նաեւ հակառակ անոնց պնդումին, ընկերները չէին նախատեսեր թէ յանկարծական ձերբակալութիւններ կըրնան ըլլալ եւ մեծ մասով կը հաւատային նախարարութեան՝ միշտ կասկածներ զուգորդելով:

Ապրիլ 11-ը տարաւ մեր ընկերներու զանգուածը, որ խոր ազդեցութիւն ըրաւ գաւառի մէջ: Նոյնը կրկնուեցաւ Պոլսոյ շրջակայքը՝ Ատաբազար, Իգմիտ, Պարտիզակ, ամէն կողմ: Ես մնացի տուն խիստ հիւանդ պառկած եւ առաջին ցանկերու առաքումէն յետոյ, կարծէք պահել ուզեցին հսկողութեան տակ, զինհասարակութիւնը ատեն իրենց կիրքին ու գայրոյթին բաւարարութիւն տալու համար:

Մայիս 23-ին, հակառակ արգելքներու դարձեալ Պոլիս մտայ, գտայ ընկերները եւ դարձեալ ունեցանք խորհրդակցութիւն մը: Դժբախտաբար սխալ ժամադրութեան մը հետեւանքով, կարելի չեղաւ համախումբ խորհրդակցութիւն մը ունենալ, բայց եւ այնպէս աւելի քան որոշ էր կացութիւնը: Առաջարկեցի ընկերներուն անցնիլ մեծ մասով Պարտիզակի կողմը եւ այն տեղէն դեկավարել, բայց անկարելի գտան այդ բանը: Համաձայնեցանք որ մինչեւ Այազ ընկերներու հետ կանոնաւոր յարաբերութիւն հաստատենք՝ Ատաբազար-Նար-լուխանի վրայով եւ զանոնք փախցնելու ձեռնարկել:

Այդ մտքով գրուեցաւ նաեւ Մուրատին⁴², որ Սվազի վրայէն թերեւս կրնար ընկերներուն մօտենալ:

Իմ ջանքերս հանդարտ կերպով կ'արդիւնաւորուէին արդէն. պատրաստ էր մարդ եւ միջոց դէպի Այազ մեկնելու. կը սպասէի ընկերներէն դրամի եւ նոր հրահանգի, երբ ճամբաները խստիւ փակուեցան եւ սկսաւ գիւնահաւաքումը, Իգմիտի շրջանի տեղահանութիւնը: Զինահաւաքումի ատեն ես եւ ընկերներս կրեցինք ծանր տանջանք: Դժբախտաբար հակառակ իմ եւ որոշ ընկերներու հրահանգներուն, զինաթափութիւնը տեղի ունեցաւ, եւ ժողովուրդը սարսափի մատնուած՝ թափեց իր գէնքերը աղայական եւ կղերական դասակարգի կարգ մը մարդոց առաջնորդութեամբ:

Տեղահանութեան ատեն ընդհ. այլքին խառնուեցանք եւ անցանք էսկի Շէհիր, Գոնիա, ուր ծանօթ կուսակալ Զեյալ պէյլի՝ նախապէս ինձ հետ ունեցած բարեկամութեան եւ հայասիրութեան պատճառով կարելի եղաւ մնալ: Քիչ մը ապահովուած՝ քսորի ճամբայէն ետ կանչեցի ձեմիլը²⁵¹, որ եկաւ միացաւ մեզ եւ իրարու ետեւէ փախուստով ապաստան գտան մեր քով՝ մինչեւ 1915 Դեկտ. Մարգպետը¹⁰¹ եւ ուրիշ ընկերներ:

Գոնիայի մէջ գուգադիպօրէն կը խմբուէին ամէն կողմէ հաւաքուած մեր ընկերները եւ մեր տունը իբրեւ վեսիքայով²⁵² ապահովուած վայր՝ ժամադրավայր եւ բնակավայրը եղաւ ընկերներու: Այսպէս հոն էինք ես, ձեմիլ, Մարգպետ, Խաչատուրեան, Արիս Իսրայէլեան, Արամ Գազազեան. յետոյ եկան անցան Սարեան, Գուլումեան, Շնորհք Տէյլիմէնճեան, Պարսամեան եւայլն եւայլն: Երկար չտեւեց սակայն մեր հանգիստը. կուսակալը փոխուեցաւ եւ ուշադրութիւնը մեր վրայ էր: Զգուշութիւններու հետ միասին փնտուեցինք միջոցներ յարաբերելու Պոլսոյ հետ. երկու կողմէ ալ գրեթէ միեւնոյն ատեն նամակներով գտանք զիրար եւ սկսանք յարաբերիլ:

Մեզ համար անտանելի եւ անհասկանալի էր Պոլսոյ մէջ ցոյց տրուած կրակորական քաղաքականութիւնը: Երկար եղաւ մեր թղթակցութիւնը այդ ուղղութեամբ: Շաւարչէն ստացած մեր նամակները յուսահատական էին. ընկերներու մէջ տիրող ոգին անհամապատասխան կը գտնէինք կացութեան: Շաւարչ բացատրած էր քանի մը անգամ այդ պատճառները, որոնց հետեւանքով

251.- Խօսքը Ֆերիտ Ռեմիլ - Տիգրան Ծամհուրի (Ամսէեան) մասին է:
252.- Վեսիքա – վաւերաբուրք, փաստաբուրք:

բաւականացած էր միայն յիշատակագրերու առաքումով, եւ անկարելի կը գտնէր յեղափոխական միջոցներու կիրարկումը եւ ամէնէն վերջ այն եզրակացութեան կու գար, որ ինք մինակ է, փակուած, եւ պարագաները անթոյլատու են ազատ շարժումներու:

Խորհրդակցութենէ յետոյ Գոնիայի մէջ եկանք որոշ եզրակացութեան: Համոզուած էինք թէ պատերազմը դեռ պիտի շարունակուի, հայ գաղթականութեան բեկորները փճանալու կը դատապարտուին, անպատուաբեր մահով մը կը կնքենք մեր կեանքը: Հարկ է վրէժով փոխարինել մեր հալածանքը եւ մեծ յոյս ունէինք որ յեղափոխական ծառայողներով կարելի պիտի ըլլայ ազդել թէ՛ Իթիօպիայի եւ թէ՛ Իթիօպիայի հակառակորդ փոքրաթիւ տարրերուն, որոնց մէջէն քանի մը անգամ ըմբոստ ոգիներ դուրս եկան, թէեւ ծանօթէն պատժուեցան:

Երկար թղթակցութիւններէ յետոյ համաձայնեցանք Պոլսոյ ընկերներուն հետ եւ բաժնեցինք ոյժերը: Ես կ'անցնէի Պոլիս, Մարգպետը՝ Հալէպ, Ճեմիլ՝ Ժամանակաւորապէս Խաչատուրեանի հետ կը մնար Գոնիա, իսկ Միրզան²⁵³ եւ Պալեան Էսկիշէհի կը գտնուէին:

Մեր դաւադրական ծրագիրը ամփոփուեցաւ հետեւեալներու մէջ. —

- 1.- Կազմել Վրէժի խումբեր եւ անցնիլ լեռ, թէ պաշտպանուելու եւ թէ յարձակելու համար:
- 2.- Այդ խումբերու միջոցաւ սպառնալ երկաթուղիին, կամուրջներու, թիւնեղներու եւ երկաթուղիներու եւ հեռագրաթիւերու:
- 3.- Դասաւորել եղած աշխատանքը՝ Պոլսոյ տարագրութեան պարագային, քաղաքի շատ վայրերը հրդեհելու:
- 4.- Ուսումնասիրել եւ գտնել միջոցներ մէջտեղէն վերցնելու քանի մը գլխաւոր ոճրագործներ, որոնց ամէն օրուայ կերը հայու արիւնն էր, եւ իրենց հարստութիւնը հայու կողմուտը. այս տեսակետով Վանկընհայմի եւ Եոսուֆ Իզգետինի թաղման նման պարագաներ, որոնց միջոցին քանի մը ընկերներու անձնագոհութիւնը պիտի արժեցնէր շատ բան, կորստեան մատնելով հայակեր ջոլի մը:
- 5.- Յարաբերութիւն եւ հաղորդակցութիւն ընդլայնել մինչեւ Շամ²⁵⁴, Մուսուլ եւ եթէ կարելի ըլլար Իզմիրի կամ Կիպրոսի վրայով դէպի արտասահման. կը յուսայինք աւելի մեծ դիւրութեամբ Պոլսուարիա ճամբայ մը բանալ:
- 6.- Ճամբայ բանալով իրաց կացութիւնը աւելի լայնօրէն պարզել եւ միջոցներ տալ որ մեր ընկերները փութան յաւաքանալ եւ միւս կողմէ՝ վտանգուած ընկերներն ու երիտասարդները դէպի արտասահման ղրկել:

Այս հիմունքներու շուրջ համաձայնած՝ բաժնեցինք մեր ոյժերը: Յաջող էր մեր գործը, մանաւանդ յարաբե-

րութեանց մեր աշխատութիւնը որ հոգին եւ հիմնական աշխատանքն էր:

Այսպէս անվնաս անցայ Պոլիս. Մարգպետ հասաւ Հալէպ եւ սկսաւ տենդագին գործունէութիւն մը. սկըսանք փոխադրել զէնք յարմար կէտերու վրայ գետեղելու համար, եւ պէտք է ըսեմ որ կեանքը եռուն էր եւ ընկերները շատ լաւ տրամադրուած:

Պոլիս հասնելուս, Շաւարշ կազմած էր նոր մարմին մը իրեն օժանդակ, եւ ես թէեւ նկատողութիւն ըրի թէ աւելի լաւ էր եթէ մարմինը կազմուէր իմ գալէս յետոյ եւ խորհրդակցաբար, բայց մարմնի հետ իմ տեսակցութիւններս եւ ընկերներու ալ տուած հիմնաւորումները գործակցելու համար բաւարար էին, եւ սկսանք գործի լծուիլ:

Ծանօթ է ընկերներուն թէ ինչպէս ուստիկանութիւնը դիւալին ծրագրով մը հետեւած էր մեզի մինչեւ Պոլսուարիա եւ այնտեղէն Մերձանօֆի հետքերէն հասած էր մինչեւ Պոլիս: Դժբախտաբար մեր դաւադրական աշխատութեան գուզընթաց յառաջ գնացած էր ուստիկանական դաւադրութիւնը եւ մենք գտնուեցանք ծանր դրութեան մը առջեւ Պոլսուարիայի մեր ընկերներու միամիտ յանձնարարութեան պատճառաւ: Եղաւ որ մենք վստահինք ծանօթ դաւաճան պոլսուարին²⁵⁵ եւ Շաւարշը ձերբակալուեցաւ իր փոքրիկ տետրակներով, ուրկէ կարելի էր որոշապէս քաղել տեղեկութիւններ մեր վերջին ծրագիրներու ուղղութեան մասին:

Շաւարշի ձերբակալումէն յետոյ երեւան եկան մեր դաւադրութեան ընդհ. գոյները եւ ուստիկանութիւնը հետզհետէ ծանօթացաւ անձերուն: Պարզ էր որ խստութիւնները հասան իրենց ծայրայեղութեան. իրարու ետեւէ ձերբակալուեցան Չէօկիւրեան, Սամուէլ, Արմենակ, Կարօ, Աշոտ, Մուշեղ, Նազիկ, Մառի, Սիրան, Պօղոս, եւ ամբողջ ութ ամիս յետոյ եւս կը փնտուռէին Մկրտիչն ու Գալուստը:

Այսպէս կիսատ մնաց մեր Վրէժի խումբի պատրաստութիւնը, զոր այնչափ արագ եւ ձեռնհասօրէն վարեց Մուշեղը. կիսատ մնաց մեր դաւադրութիւնը, որուն բաժին բերած էին ընկերները առ հասարակ:

Դժբախտութիւնը ծանր էր. մեզ կը մնար հոգ տանիլ մթերքներուն, գաւառի ընկերներու եւ նիւթերու պաշտպանութեան, Պոլիս մնացող փոքրաթիւ ընկերներու պահուելուն:

Պէտք է գնահատելի նոթ մը ընել մեր ընկերներու եւ մանաւանդ Շաւարշի քաղաքականութեանը, դատաւարութեան ընթացքին ցոյց տուած իմաստուն քաղաքա-

253.- Միրզա – Բժ. Միրզա Քեթեմճեան:
 254.- Շամ – Դամասկոս:
 255.- Ծանօթ դասաւանդ Շաւարշ Միսաքեանը մատուց պուլկարական դեսպանատան բարապանն է, Վլատիմիր Տիմոթիեւ, որ աւելի ուշ ահաբեկումի պիտի ենթարկուէր դաշնակցական ահաբեկիչ Եզիտ Արշակի (Մուշեղեան) ձեռամբ:

կանոնադրերն են ընկերներու բարոյական լուրջ վերաբերումին համար: Դատարանը չկրցաւ ունենալ մատնութեան, լրտեսութեան եւ իրերու ապացոյցներ: Գնահատելի էր նաեւ այն պարագան, որ ոստիկանութիւնը, հակառակ իր խիստ պրպտումներուն, գանակոծութիւններուն, եւ խիստ վերաբերմունքին, հակառակ նոյնիսկ դրկուած գէնքերու N^o ները ունենալով ձեռքին եւ շատ մարդոց անուները եւ տեղերը ճշգրտած, սակայն չկրցաւ ձեռքաւարել ոչ մի ընկեր Սկիւտարէն մինչեւ Հայլէպ, որոնց թիւը 40-50ի կը հասնէր, որոնց մեծ մասը ուղղակի գործօն մաս կը բերէր մեր աշխատութիւններուն:

Մեր ծրագիրներու փրկուումը ծանր էր, բայց լաւ էր եւ մեր միջոցառումները դատի վերջաւորութեան համար: Երեքը բանտարկութեան դատապարտուած էին, որոնց բանտարկութիւնը կեանքի ապահովութիւն էր. 10ը աքսորի, որոնցմէ 8ը ծանր ատենագրութեամբ՝ դէպի մահ կը քշուէին եւ 2ը դէպի էնկիւրի նոյն ծանր գրութեամբ:

Մեր դատի լաւ վերջաւորութեան նպաստեց 1) մեր ընկերներու լաւ եւ իմաստուն վերաբերումը, 2) քաղաքական պայմաններուն ազդումը, 3) թարգմանութիւններու ժամանակ ոստիկանութեան ըրած եղծումները, 4) թերեւս մեր դիմումները պուլկար դեսպանատան, ուրկէ լուեկայն խոստացեր էին բարեխօսել:

Աքսորի ենթարկուած ընկերներէն երկուքը փախան ոստիկաններու առջեւէն դէպի լեռ եւ փրկեցին իրենց կեանքը. յաջողեցան քաջաբար եւ ծրագրած ձեռով գողնալ (պատուաւոր եւ քաջ գողութիւն) իրենց մահապատիւ ազդանշանը կրող թուղթերը եւ այդ ձեռով ըլլալ պարզ աքսորական եւ խառնուիլ աքսորականներուն հետ:

Դատի ենթարկուած խումբէն չկան այժմ՝

- 1.- Գրիգորը, որուն հետքը 917-ի կիսուն գտանք Նիսիբիս եւ որ այժմ կորսուած է.
- 2.- Չօկիւրեանը, որ այնքան տառապանքէ յետոյ, դարձին երկաթուղիի ծանօթ արկածին գոհ գնաց.
- 3.- Հիւանդանոցի մէջ մեռաւ մեր ընկեր Կօլեանը, որ թէեւ բանտ չմտաւ բայց իր հիւանդութեան օրերուն տառապանքը նուազ չեղաւ: Իսկ միւսները այժմ ձեզ հետ են եւ կ'ապրին:

Այս դէպքերու առթիւ Գոնիայի մէջ բանտ դրին մեր ընկերուհիներէն մէկը իր գաւակովը, եւ մեր համակիրներէն մէկը, որոնք հակառակ այնքան ծանր տանջանքներու ոչ մի հետք չտուին մեր գործերու մասին, եւ պահեցին բարոյական շատ բարձրութիւն: Գոնիայէն բանտէ բանտ բերին հարցաքննելու նաեւ մեզ հետ ունեցած իրենց կապերուն համար Աբիկ Մեքահեանը, Մեսրոպ եպիսկոպոսը, նմանապէս պատրիարքը, որոնք պահեցին իրենց բարոյական գնահատելի բարձրութիւնը: Դժբախտաբար միայն Հրանտ վրդ. Յովհաննէս-

եան, հակառակ որ ոչ մի կապ չունէր մեզ հետ, դարձաւ դաւաճան եւ ուղեցոյց ոստիկանութեան:

Պոլիս իրը գործավար եւ յարաբերութիւն պահող մնաց միայն ընկեր Մկրտիչը, որ յարմար ատեններէն կանչած էր իրեն գործակիցներ: Դրուած պայմաններու մէջ դաւաճողական գործի ձեռնարկ մը աւելորդ էր այլ լեւս. միջոցներու պակաս, ընկերներու կորուստը եւ այլն ուժաթափ բրին այդ ուղղութեամբ. կը մնար պահել եղածը եւ ընդարձակել յարաբերութիւնը:

Հազիւ ազատուած ոստիկանութեան հալածանքէն, շուտով կազմակերպեցինք մեր յարաբերութեան գիծը եւ դարձեալ սկսանք մեր աշխատութեան:

Գոնիայէն՝ Խաչատուրեան Յովնաթան,
Էսկիշէհի՝ Վաղարշ Պալեան,
Պիլեմիտիկ՝ Ֆերիտ Ճեմիլ եւ ընկ.,
Ալլահիէ՝ Մարգպետ, Շնորհք, Լեւոն,
Հայլէպ՝ Գարմէն եւ Ղ[ազար] Չարրզ,
Նիսիբիս՝ Մովսէս Ստեփանեան,
Կ. Պոլիս՝ Շաւարշ (բանտ), Մկրտիչ եւ այլն:

Գրաւոր կատարուած բանակցութիւններէ յետոյ, կուսակցական աշխատանքը սահմանեցինք հետեւեալ երեք կէտերու վրայ՝

- 1.- Յարաբերութեան պահպանում.
- 2.- Փորձել սահմանը անցնելու, լուրեր տանելու եւ վտանգուածները ազատելու:
- 3.- Ընկերական փոխադարձ օժանդակութիւն:

Ես յետոյ անցայ Նիսիբիս, ուր կը գտնուէին արդէն Մարգպետը, Չօկիւրեանը եւ Ստեփանեանը, որոնց հետ կազմեցինք բարոյական միջնորդ մը, ուրկից մինչեւ Պոլիս հասաւ մեր օժանդակութիւնը, թէեւ քանակով քիչ, բայց իր բարոյական որակովը խիստ խրախուսիչ. յարաբերութիւններն ալ թէեւ դանդաղ բայց ստացան կանոնաւոր եւ պարբերական ձեւ:

Նիսիբիսի մէջ կեանքը մեզ համար դարձաւ նորմալ. Մարգպետ իբրեւ թուրք, ես իբրեւ ասորի, Ստեփանեանը իբրեւ հայ եւ կարող ձեռնարկու գերման երկաթուղիի շինութեան: Օգնեցինք փախստական հայերուն, նեղուածներուն, եւ համաձայնելով Համօ աղա քիւրտ բէկի հետ, վտանգի օրերուն եւ անոր սահմաններուն լեռներուն մէջ գտանք ապաստան: Երբ Ալի Հասան փաշան բոլոր հայերը դէպի Տիգրանակերտ աքսորել կ'ուզէր, գնահատելի էր գերման ընկերութեան վերաբերումը, անշուշտ իրենց գործին համար, բայց դարձեալ լաւ վարուեցաւ այդ ընկերութիւնը, որուն շնորհիւ Մուսուլ-Հայլէպ գծին վրայ իրենց տաժանելի աշխատանքի փոխարէն ունեցան հաց եւ բաւարար սնունդ մօտ 700է աւելի հայեր:

Ծանր էր սահմանի ծրագիրը. մեր փորձերը դէպի

Պուլկարիա անյաջող եղած էին. ծանօթ է Շաւարշի պարագան: Գիտէինք նաեւ որ Պուլկարիայէն անդին անցնիլ շատ դժուար էր:

Արմէն Մեծատուրեանը ինքնաբերաբար յանձն առաւ փորձել Սվազի վրայով անցնիլ. հասաւ հոն, միացաւ Մեսրոպ Քաջբերունիին, հաստատեց կանոնաւոր յարաբերութիւն թէ Գոնիայի եւ թէ Պոլիս՝ Մկրտիչի հետ, բայց դժբախտաբար ինկաւ իր առաքելութեան ճամբուն վրայ:

Պիլեմէտիկէն դէպի Կիպրոս անցնելու փորձերը մնացին ապարդիւն: Ռուսերու հետ մեր գործակցութիւնն ալ արդիւնք չտուաւ. մէկ ընկեր գոհ գնաց Սելէֆքէի եզերքներուն վրայ. խումբ մը հասած էր այդ նպատակով, մէկ ընկեր նաւակ մը գրաւելու համար ծով մտած ատեն չէր վերադարձած:

Մեզ յաջողուեցաւ սակայն որ փրոֆ. Խաչատուրեանը, որոշ ծրագրի եւ աշխատութեան եւ դրամական գոհողութեան արդիւնք, հասցնել Պաղտատ: Ասրեանը յաջողեցաւ անցնիլ Եգիպտոս: Խենթ Արամը երկար փորձեր ըրաւ թէ սահման անցնելու, թէ տարագրութեան մասին լուրեր ստանալու համար: Մարզպետ թէեւ

պատրաստուած էր միանալու Խաչատուրեանին կամ Ռեւանտուզէն անցնիլ Պարսկաստան, արկածի գոհ գնաց ձիւն իյնալով: Նմանապէս Չէօկիւրեան, որ դարձին թուենի արկածի գոհ գնաց:

Մեզ կարելի եղաւ նաեւ օգնել այն ընկերներուն, որոնք ստիպեցին եւ պարտադրեցին մեզ՝ թոյլ տալ իրենց որ Առնաւուտ գիւղէն եւ Սկիւտարէն միացած ելնել լեռ. անոնք բաւական ատեն պահեցին իրենց գոյութիւնը լեռներուն վրայ եւ յետոյ իջան երբ շրջանը նեղնալ սկսաւ եւ իրենց հոն մնալը՝ աւելորդ:

Այսպէս ահա մեր տաժանելի օրերը: Մենք պահեցինք մեր կուսակցական կեանքն ու գոյութիւնը մինչեւ որ գինադադարը եկաւ եւ անկէ յետոյ աւելի լայն սահմաններու մէջ վերահաստատուեցաւ մեր կեանքը Հալէպի մէջ, ուր շատ արդիւնաւոր եղաւ մեր գործունէութիւնը, Կիլիկիայի մէջ, ուր հասան նոր ընկերներ, եւ Պոլսոյ մէջ, որուն կեանքն ու ոյժը այժմ փաստ է:

Թողնելով ուրիշներու տալ Պոլսոյ մեր կեանքի 917 Մարտ — 1918 գինադադարը, եւ անկէ յետոյ եղած շրջանի գործունէութեան զեկուցումը, կը փակեմ գրութիւնս:

Փաստ. 882-63

127.– ԸՆԿԵՐ ՄԿՐՏԻՉԻ ՁԵԿՈՒՑՈՒՄԸ

916 Մալխա — 1918 Յուլիս:— Արշալիրի ձերբակալումէն վերջ ոստիկանութիւնը 916 ապրիլին յաջողեցաւ ձեռք անցնել մեր ընկերներին Արմենակ, Կարօ, Մուշեղ, Գրիգոր եւ վերջն ալ Տիգրանը. Վաղարշն ալ շատ խրատութեամբ կը փնտռուէր եւ տունէն դուրս գալ չէր կարող. Հրանդը քաշուած էր Մաքրիգիւղ եւ իրմէ բնաւ տեղեկութիւն չկար. այս վիճակի մէջ Վաղարշի հետ համախորհուրդ լինելիք ձեռնարկները ամբողջութեամբ մէկդի դրուեցան եւ ես ստանձնեցի գործավարութիւնը:

Յարաբերական խնդրոյ մասին թէ գաւառի եւ թէ Պալքանի հետ օր օրին կարողացանք երկու տեղերն ալ հասցնել անհրաժեշտ լուրերը: Ամիսներ վերջ հոկ. (1916)ին Վաղ. Յ. Խուբէսէրեան մատնութեամբ ոստիկանութեան ճանկն ինկաւ. ինձ յաջողուած էր յարաբերութեան մտնել բանտի տղայոց հետ. ասով ես կարողացայ հասկնալ թէ ո՞ր ընկերները ոստիկանութեան խիստ հետապնդութեան տակ են. անմիջականօրէն գրեցի գաւառը փրօֆ. Խաչատուրեանին եւ Ճէմիլին նոյնպէս լուր տուի Մաքրիգիւղ Հրանդին որ ինքն եւս հետապնդութեան ենթակայ է, իսկ ինչ կը մնար ինձ, առանց քաշուելու մէկ ամիս ես շարունակեցի հրապարակին վրայ պտտիլ. երբ այլեւս նկատեցի հնարաւորութեան սահմանները կ'անցնին եւ կրնամ անմիջապէս ձեռք իյնալ, քաշուեցայ Գատը գիւղի շրջանը եւ ծածկուեցի, միեւնոյն ատեն կապ պահելով շրջաններու ծածկուած տղաներուն. իսկ Պալքանը Մայիսէն արդէն խզուած էր յարաբերութենէ, հակառակ տասնեակ նամակներուն:

Ձերբակալուած ընկերներու դատը վերջացաւ եւ ինչպէս Վաղարշի գեկուցումէն յայտնի է, ոմանք մի քանի տարիներու վճիռ ստացան, իսկ մեծագոյն մասը ոստիկ[անութեան] միջոցաւ քսոորի ճամբան բռնեցին. օրը օրին լուր ունենալու համար անմիջապէս գրեցի գաւառի ընկերներուն որ ամէն ճիգ գործ դնեն փախուստին դիւրացնելու:

917ի սկիզբներին Մուշեղի ղեկավարութեամբ լեռ ելնելիք տղաներէն մաս մը Ռումելի Հիսարի մէջ դեռ կը մնային ծածկուած. օրին մէկը ոստիկանութիւնը այդ տղաներէն Մարտիրոսին տասնոց ատրճանակով միասին կը յաջողի ձեռք ձգել: Բայց Մարտիրոս կը յաջողի պահականոցէն ձեռքերը կապուած վիճակով գիշերանց խոյս տալ եւ միանալ ընկերներուն. Ոստիկ[անութիւնը]

գործի վրայ էր. ամբողջ այդ շրջանը սարսափի էր մատնուած: Մկրտիչեանը²⁵⁶ շատ լրջօրէն կը սպառնար թէ՛ այդ տեղի մեր տղաները ձեռք ձգել եւ թէ՛ ժողովուրդը, իրաց այդ վիճակին մէջ տեսակ մը պարտադրութեան տակ, այդ եւ մի քանի ուրիշ տղաներ, ընկերներէն Նշան Երուանդի ղեկավարութեան տակ, դէպի Պարտիզակի լեռները ղրկեցինք՝ նախապէս Մարմնոյ որոշած Վրէժի գործը սկսելու համար. եւ որպէսզի տղաք կարենային մինչեւ հոն գինուորական տեսակէտով ապահով ճամբորդութիւն ընել, Ջանանի հետ խորհրդակցաբար եւ նիւթական մեծ գոհողութիւններով յաջողեցանք գինուորական կեղծ կնիք մը պատրաստել տալ որով թուղթեր եւ տղայք ապահովաբար լեռը հասան եւ միացան այդ տեղ գտնուող պատերազմի առջի օրէն սկսեալ մօտիկ գիւղերու մի քանի երիտասարդներու. եւ որպէսզի կարենայինք ուրիշ ծածկուած եւ վտանգուած ընկերները հետզհետէ լեռ դրկել, ձեռնարկեցի կազմակերպ[ական] այն պահեստներու գէնքերը ձեռք բերելու որոնք ինձ ծանօթ էին. դժբախտաբար թէ այն ատեն եւ թէ վերջը, երբ գաւառէն սահմանցի ծրագրի իրագործման համար երբ գէնք ուզուեցաւ, մեր կարգ մը ընկերներ, որոնց մօտ գէնքերը պահ դրուած էին, չուզեցին յանձնել առարկելով թէ «այն գէնքերը միմիայն Պոլսոյ համար են եւ ոչ ոք իրաւունք ունի Պոլսէն դուրս հանելու. ահա այս դժուարութիւնները պատճառ եղան որ չկարողանամ լեռ գտնուողներուն գինակած բաւարար օժանդակութիւն ընել, նոյնպէս ուրիշներ ղրկելու միանալու անոնց:

Այս օրերուն յանկարծ Վաղարշէն նամակ մը կը ստանամ որ իր փախուստը կ'աւետէր. սկսանք նոր եռանդով գործի սկսիլ եւ յարաբերական կապը աւելի ընդլայնել եւ ամրապնդել: Հաւաքում մը ունեցանք հոս Ա. Սաֆրաստ[եան]ի եւ Ա. Ջանանի հետ եւ Պոլսոյ շրջանակները բաժնելով իւրաքանչիւր շրջանի հետ յարաբերութիւն պահող ընկերները որոշեցինք. այսպիսով Ա. Սաֆրաստ պիտի ղեկավարէր Բերայի շրջանը եւ աշխատէր ցրուած եւ հեռացած ընկերներու միջեւ սերտ կապակցութիւն ստեղծել. Հրանդ՝ Գում Գաբուրի Մաքրիգիւղի շրջան, ես՝ Գատը Գիւղ-Սկիւտար, Արտաշէս եւ Մանուկ՝ սպայից վարժարանի աշակերտութեան. Պանտըմա՝ Ն. Էյնաթեան եւ Ջանան, Իզմիր՝ Մանուէլ Ոսկերչեան: Այս կարգադրութիւնը անմիջականօրէն գրուեցաւ բոլոր ընկերներուն եւ յանձնարարուեցաւ ուշի ուշով հետեւիլ օրուայ կացութեան եւ ստացուած լուրերը հաղորդել պէտք եղած տեղը գործավար ընկերով:

256.- Խօսքը մատնիչ Յար. Մկրտիչեանի մասին է. տես ծանօթ 250:

Վաղարշին²⁵⁶ կը ստանայի ընդարձակ ծանօթութիւնները մեր աքսորական ժողովրդի կեանքի մասին եւ որպէսզի կարողանայինք մեր ուժերով օգտակար ըլլալ մերկ եւ անօթի ժողովրդին համար. կանանց շրջանակէն էլ սկսեցինք հագուստեղէնի հանգանակութիւն: Պիտի ըսէի որ ընկերուհիներէն օր. Ֆլորա եւ Տ[իլին] Նուարդ շատ մեծ աշխատանք ի գործ դրին եւ հաւաքումները Վաղարշին ղրկելով որոնք հոն բաժնուեցան:

Կանոնաւոր յարաբերութեան մէջ էի Գեղամին¹⁹⁴ հետ օր. Ֆլորայի²⁵⁷ միջոցաւ, որ ամէն ատեն կու տար իր խորհուրդները, նիւթական աջակցութիւն գաւառի ընկերներուն եւ տեղեակ կը պահէր կառավարութեան ձեռնարկներու մասին:

Նկատի ունենալով որ բացարձակապէս զրկուած ենք արտասահմանի հետ յարաբերուելէ, Պալքանի լուծութիւնը եւ ընկերներու գործունէութիւնը սահման անցնելու մասին, ծրագիր մը մէջտեղ եկաւ, մի քանի կէտերով եւ ինչպէս Վաղարշը իր գեկուցման մէջ յիշեր է, կ'ուզէինք կանոնաւոր գիծ մը ստեղծել շարունակական թղթակցութեան եւ յարաբերութեան մասին: Այս ձեռնարկը ի գլուխ հանելու համար զէնքի անհրաժեշտութիւն կար եւ ես ոգի ի բռին աշխատելով յաջողեցայ մաս մը զէնք հասցնել գաւառ ընկերներուն. նոյն գործի յաջողութեանը սատարելու համար, իր անձնուէր մասնակցութիւնը բերաւ ընկ. Արմէն Մեծատուրեանը, որ գաւառ մեկնելով Սեբաստիայէն անցք մը բանալու պարտականութիւնը իր վրայ առած էր. հոն հասնելով ընկ. Արմէնը կանոնաւոր յարաբերութեան մէջ մտաւ թէ Գոնիայի ընկերների եւ թէ հոս ինձ հետ, բայց դժբախտաբար ճանապարհին զոհ զնաց իր պարտականութեան՝ Մեսրոպին հետ:

Զինուորական փախստականներու համար խուզարկութիւնները սկսած էին եւ ծածկուած ընկերներուն բանտարկուելէ ազատելու համար աշխատեցան եւ ընկերներէն մէկի միջոցաւ գինուորական կեղծ կնիքներ շինելով գինուոր[ական] կեղծ թուղթեր հասցնելու անոնց այդ թուղթերու շնորհիւ հնարաւորութիւն կ'ունենայի դուրս գալ այսօր այն շրջանը եւ պէտք եղածները կարգադրել. ընկ. Հրանդ, որ ծածկուած օրէն սկըսեալ հնարաւորութիւն չէր ունեցած դուրս գալու, յաջողեցաւ այդ թուղթերով դուրս ելլել, որովհետեւ հնարաւորութիւն ունեցանք զիրար տեսնելու եւ նոյնիսկ բանտը Արշաւիրին հետ յարաբերութիւն պահելու: Կեանքը սկսած էր աւելի եռուն ըլլալ եւ ահա յանկարծ իմ Գատը գիւղ ըլլալ իմանալով ուզեր են ձերբակալել զիս, բայց կարողացայ կէս գիշերին փախիլ Սկիւտար եւ օձիքս ազատել:

Գաւառէն Պալքանի հետ յարաբերութիւն ստեղծելու ձեռնարկներ ըրած էին, բայց նկատելով որ իրենց փորձերը ապարդիւն կ'անցնին, ինձ յանձնարարեցին որ հոսկէ ձեռնարկեմ յարաբերութեանց վերստեղծումի

աշխատանքին: Բաւական ժամանակ այս ձեռնարկը նախորդներու պէս ամուլ վիճակ մը ունեցաւ, բայց վերջապէս 918ին Պալքանի ընկ. Արզումանը¹⁵² ընդարձակ նամակով մը կը խզէր լուծութիւնը եւ շատ մը ուրախալի լուրերով մեզ կը խանդավառէր:

Այդ օրերուն ընկ. Գ. էյնաթեանը արձակուրդով հոս էր ժամանած. Պալքանի հետ յարաբերութեան վերստեղծումը, նոյնպէս ժողովրդեան մէջ եղած զրոյցը թէ՛ «հայ վաճառականները հանրագրութեամբ մը կ'ուզեն ժողովրդեան հասած բոլոր չարիքներուն պատճառը հայ յեղ. կուսակցութիւնները համարել», եւ թէ կազմկարգերը աւելի սեղմելու համար, որոշեցինք 12 ընկերներով խորհրդ[ակցական] ժողով մը գումարել որ նախապէս յիշուած շրջաններու մասին կրկին յանձնարարուեցաւ ղեկավարող ընկերոջ՝ ընկերներու յարաբերութիւնները աւելի մտերմացնել եւ գործը տանիլ մինչեւ հիմա եղած ուղղութեամբ առանց խմբական կազմ ստեղծելու: Մարմինը կանոնաւորելու համար որոշուեցաւ որ ես տանիմ գործավարութիւնը, ինձ հետ ունենալով Ա. Սաֆրաստեան, Հրանտ, Արշաւիրն ալ (բանտէն) խորհրդակցաբար:

Ընկերներու նիւթական անձկութիւնը նկատի ունենալով ընկ. Գալուստ առաջարկեց որ գաւառի մէջ իրենք պիտի աշխատին պարէն հայթայթել եւ ղրկել հոս որ կարօտ ընկերներուն բաժնուի:

Գործերը այսպէս կ'ընթանային, Վաղարշը անցած էր Նիսիբիս, փրոֆ. [Աստուածատուրեանը] Պիլէմէտի, իսկ Գոնիա կը մնար Տիկ. Վաղարշը, որ շատ կանոնաւորապէս կը պահէր յարաբերական կապը: Պալքանը սկսած էր լուրջ հետաքրքրութիւն ցոյց տալ եւ ահա Ֆիլիպպէէն ընկերներ Ռուզան¹⁵⁶ եւ Օհանէս սկսեցին շուտ շուտ գրել թէ իրենց կեանքէն եւ թէ քաղաքական աշխարհէն. անոնք ղրկեցին այդ շրջանին նաեւ 1500 լէվ=6024 դրչ.ի չափ գումար մը:

Պատերազմը տարբեր փուլի մը մէջ ինկած էր. պուլչիվիկներուն շարժումին հետեւանքով կովկասեան ճակատի ամբողջ բեռը հայերու ուսին մնալով, հետզհետէ ճաճկաստանէն գրաւուած նահանգները կը պարպուէին եւ թրքական բանակը կ'երթար եւ Երեւանի առջեւ կանգ կ'առնէր. Բաթումի բանակցութիւնները սկսած եւ վերջացած էին, մէկ ալ յանկարծ Ահարոնեան եւ ընկ. հոս հասան բանակցութիւնները շարունակելու եւ վերջացնելու համար:

Ընկ. Ահարոնեան հոս հասնելով, ինչպէս ամէն հայու, բայց աւելի շատ մեզ համար, մեծ պատճառ կար եղած իրադարձութիւններուն ծանօթանալ եւ իմանալ մեր դիրքը: Սկսանք փորձեր ընել զինք տեսնելու, Արշաւիրի հետ խորհրդակցաբար երկու նամակներ գրե-

256.- Վաղարշ – Պապայեան Խոսրով:
257.- Օր. Ֆլորա – Ա. Վոսմեանի նշանածը:

ցինք իրեն համառօտ կերպով պատկերացնելով մեր վիճակը եւ վերապրող ընկերներու մասին. դեռ հնարաւորութիւն ունեցած չէինք գինք տեսնելու, երբ ահա Յուլիս 10-ի գիշերը Օվաճրգի մուխթար Վահան ժամկոչեանի մատնութեամբ ես եւ տիկինս ձերբակալուեցանք. ձերբակալուեցան եւ իր ընկերուհիներէն օր. Նազիկը:

Բանտէն հնարաւորութիւն ունեցայ տիկնոջս հետ նամակային յարաբերութիւն սկսելու (որովհետեւ տիկինս 6 օրէն վերջ ազատ ձգեցին): ընկերներին յաճախ կը գրէի բայց շատ քիչ պատասխաններ կ'առնէի: Ծանօթ էին ինձ դրսի աշխատութիւնները եւ ահա զինադարը վրայ հասնելով նոյ. 15ին ազատուեցի բանտէն եւ գտայ ընկերներին. նոր Մարմին կազմուած էր, նոր մարդեր երեւան ելած էին գործերը աւելի լաւ տանելու եւ ես հանգստի պէտք ունենալուս համար, նոյնպէս տիկնոջս հիւանդութիւնը, զիս կազմ[ակերպութեանէն] հետու մնալ ստիպեցին մինչեւ 919 փետր. երբ կանչուեցայ իբր Կ. Կ.ի անդամ:

ԸՆԿԵՐ Ա. ՍԱՖՐԱՍՏԵԱՆԻ ՁԵԿՈՒՑՈՒՄ

Մինչեւ Կ. կոմիտէի եւ Պատասխանատու] մարմնի կազմութիւնը (1918 փետր. 3 – 1919 փետր.)

Զինադարը չկնքուած կարելի եղած էր յարաբերութեան մէջ մտնել ընկ. Ղարիբի²⁵⁸ հետ եւ անոր թելադրութիւնները իմանալ մեր շրջանի վերակազմութեան եւ առհասարակ նախապատրաստուած ազգային եւ քաղաքական գործերու համար:

Ընկ. Ղարիբը յարմար նկատած էր որ մինչեւ այդ ատեն կազմ. գործերու պատասխանատու անձերը կազմեն առժամեայ մարմին եւ ստանձնեն գործերը մինչեւ որ կարելի ըլլայ Հայաստանէն ստանալ Բիւրոյի հրահանգները: Իր մեկնած ատեն հարիւր լիրա թղթադրամ էր ձգեր իբրեւ աւանս Բիւրոյի կողմէ զրկուելիք գումարին:

1.- Վերակազմութիւն.— Առժամեայ մարմինը իր գործունէութեան գլխաւոր հոգերէն մինը ըրաւ Պոլսոյ թաղերու վերակազմութիւնը: Երկու երեք անգամ ընկերներէն կազմուեցան խորհրդակցական ժողովներ եւ եղան թելադրութիւններ խումբեր կազմելու եւ տըրուած ընկերները հաւաքելու համար. որոշուեցաւ որ վերակազմութեան այս գործը տարուի խիստ զաղտնի եւ վստահելի տարրերու մէջ միայն, նկատի ունենալով քաղաքական պայմաններու անստուգուելիւնը:

2.- Յարաբերութեանց գործը.— Առժամեայ մարմինը իր գլխաւոր հոգերէն մին ըրաւ նաեւ յարաբերութեան միջոցներ գտնել Եւրոպայի եւ Հայաստանի ըն-

կերներու հետ: Առաջին առթիւ ընդարձակ տեղեկագիր մը զրկուեցաւ Փարիզ ընկ. Վարանդեանին: Գրուեցաւ նաեւ Ամերիկայի, Երեւանի, եւ Փարիզի ընկերներուն՝ տալով անհրաժեշտ տեղեկութիւններ:

3.- Ազգ. գործերը.— Զինադարարի կնքումէն յետոյ ազգ. գործերու եւ իշխանութիւններու անկերպարան վիճակը նկատի ունենալով, յարմար նկատուեցաւ որ իշ ազատական տարրերու հետ միասին խորհրդակցութիւններ կատարել եւ կազմել հայկ. լիկ անունով խմբակցութիւն մը, որ դեռ իր մէջ առնելով բոլոր հասանքներու ներկայացուցիչները, պիտի ըլլար Ազգ. իշխանութեան վերահսկիչ մարմին:

Ապա այդ լիկէն ծնունդ առաւ Ազգ. խորհրդակց. ժողովը, որ բաժնուած էր չորս յանձնախումբերու (պըրոպականտի եւ յարաբերութեան, փաստահաւաք եւ տարագրելոց): Այս խորհրդակց. ժողովի միջոցով էր որ մեր ընկերները յաջողեցան ընտրել տալ Փարիզի հայկ. համագումարին պատուիրակները եւ ի վերջոյ ընդունիլ տալ ազգ. մեծ քոնֆէրանսի մը գումարումը Պոլսոյ մէջ, որ պիտի ընտրէր Ազգ. խորհուրդ եւ Գործադիր իշխանութիւն մը:

4.- Թերթի հրատարակութիւն.— Ի նկատի ունենալով որ ազգ. եւ կուսակց. խնդիրներու լուսաբանութեանց համար անհրաժեշտ է ունենալ որոշ օրգան, Առժամեայ մարմինը որոշեց անմիջապէս հրատարակել «Ազատամարտ»ը:

Թերթի խմբագրական կազմը եւ բարոյական պատասխանատուութիւնը իրեն վերապահելով, նիւթական եւ թեքնիք գործերը յանձնուած է հինգ ընկերներէ կազմուած վարչական մարմնի մը, որոնք հարիւրական ոսկիի նուիրատուութեամբ մը կազմեցին թերթի հիմնական դրամագլուխը:

5.- Յարաբերութիւն դաշնակիցներու հետ.— Ընկերները անհատական յարաբերութիւն պահած են դաշնակիցներու Պոլսոյ ներկայացուցիչներու հետ, իրենց հայթայթուած է հարկ եղած փաստաթղթերը եւ տուած են շատ մը տեղեկութիւններ:

6.- Դրամական միջոցներ.— Առժամեայ մարմինը, բացի ընկ. Ղարիբէն ստացած գումարէն, ստացած է նաեւ 8000 Ֆրանքի գումար մը եւս Պալքանի Կեդր. կոմիտէէն:

7.- Պալքանի ընկերները.— Պալքանի Կեդր. կոմիտէն երկու ընկերները զրկած է Վիչապի շրջան կազմակերպական գործերուն ընթացք տալու համար:

8.- Յունուար 15-ին գումարուած խորհրդակցական ժողովի մը մէջ որոշուած է կազմել Պոլսոյ Պատասխանատու մարմին, ի նկատի ունենալով Բիւրոյի զրկած երկու ընկերները, Վիչապի նախկին ընկերներէն երեք ընկերները, Պալքանի երկու ընկերներ, ինչպէս նաեւ թերթի խմբագրապետը, որ խորհրդակցական ձայնով ժողովին մասնակցի:

258.- Ղարիբ – Ա. Ահարոնեան:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. ԲԱԺԻՆ

1.- Բնագրին մէջ «արեւմուտքէն», որ սխալ է եւ անուշադրութեան հետեւանք:

2.- Իմա՝ ճերմակ փաթեց կապած, այսինքն մահմետականացած:

3.- Իմա իթքիհատականներ:

4.- Կորին, յեղափոխական ծանօթ մարտիկ Գոմսայ Իսօ, անդամ Տարօն-Սասունի զինուորական մարմնին:

5.- Յեղափոխական ծանօթ ղեկավար Ռուբէն Տէր Մինասեան, անդամ Հայաստանի բիրոյի:

6.- Վահան Փափագեան (Կոմս), պետական երեսփոխան Վանէն, որ Կ.Պոլիս վերադարձի ճամբուն վրայ հիւանդացած եւ Մուշ մնացած էր:

7.- Ալիջանի Տիգրան, խիզախ ֆետայի:

8.- Բարձրաւանդակը Սասնոյ ծածկանունն է:

9.- Ապրանքը, բեռը:

10.- Արմէն Գարոյի հորեղբայր, փոխ տնօրէնն էր Կարնոյ Օսմանեան դրամատան, յարգուած անձնատրութիւնն է՝ հայերէն եւ թէրքերէն. սպաննուած էր տուն վերադարձի ճամբուն վրայ 1915 թ. Յունուար 28ին:

11.- Ջնդի – Բարունակեան Կարապետ: Վահէ Թոքաճեան՝ Կարնոյ Կեդր. կոմիտէի անդամներէն:

12.- Թահսին փաշա, Էրզրումի նահանգապետ:

13.- Վահան Հիւսիսեան եւ Հմայեակ Գարակէօգեան. Շապին Գարահիսարի հերոսամարտի ղեկավարներ:

14.- Էշրաֆ – քաղաքի թուրք երեսելիներ, մեծամեծներու եւ ազդեցիկ անձնատրութիւններու խաւ:

15.- Խօսքը կը վերաբերի 1909 թ. Ատանայի կոտորածներուն:

16.- Խօսքը Պողոս Նուպար փաշայի մասին է:

17.- «Ոչինչ զիտենք Նուպարի յանձնախումբին մասին: Մասնակցեցէք եթէ դրանք Թիֆլիսի Ազգային բիրոյին պիտի դրկուի»:

18.- Հարցը կը վերաբերի Միք. Վարանդեանի, որ 1915 թ. առաջին ամիսներուն Երոպայի շարք մը երկիրներ այցելելէ ետք անցած էր Կովկաս եւ ճամբան ձերբակալուած հաւանաբար քանի մը տարի առաջ Դաշնակցութեան դէմ բացուած դատի հարցով: Ռուսական կառավարութեան մօտ եղած դիմումներու շնորհիւ շուտով ազատ պիտի արձակուէր ան եւ անցնէր Թիֆլիս:

19.- Ծածկանունով յիշատակուած հայ մտաւորականներու իսկական անունները.–

Ակունի – Մալումեան Խաչատուր:

Հրաչ – Թիրեաքեան Հայկ, «Ազատամարտ»ի վարչական պատասխանատու:

Շամիլ – Բարսեղեան Սարգիս – Օտապաշեան Պողոս:

Խաժակ – Գարեգին Խաժակ, Չազալեան:

Ժիրայր – Ջօրեան Բարսեղ:

Լեւոն Լարենց – Զիրիշչեան Լեւոն:

Արամ Աշոտ – Մինասեան Սարգիս:

Վարդգէս – Սերենկիլեան Յովհաննէս:

Ատոմ Շահէն – Երիցեան Ատոմ:

Կիլո – Թորոսեան Գրիգոր:

Կավոշ – Թոլայեան Երուանդ:

Միամանթօ – Եարճանեան Ատոմ:

Մուրատ – Պոյաճեան Համբարձում:

20.- Եպարքոս – Վարչապետ (Սայիտ Հալիմ փաշա):

21.- Սոֆիայի թերթը – Ակնարկութիւն «Հայաստան» թերթին, որ հակառակ Հ.Յ.Դ. ճրդ Ընդհ. ժողովի արգելքին, Պալքանի Կեդր. կոմիտէն սկսած էր լոյս ընծայել 1915 թ. Մարտ 10էն սկսեալ եւ պիտի շարունակուէր մինչեւ Սեպտ. 26, Պուլկարիոյ մասնակցութիւնը պատերազմին Գերմանիոյ եւ Թուրքիոյ կողքին:

22.- Սարուստան – ծածկանուն Կովկասի:

23.- «Հելէնը մօրաբոլո մօտ»:

24.- «Հելէնը Մամասի մօտ»:

25.- «Ճամբայ հանցեցէք Հելէնը»:

26.- Գիսակ – Վարդգէսի մէկ այլ ծածկանունը, Սերենկիլեան Յովհաննէս:

27.- Իսմայիլ Ճանպուլաթ, թուրք գաղտնի ոստիկանութեան պետ:

28.- Վանայ Իշխանն է, Պողոսեան Նիկոլ:

29.- Կոմս – Փափագեան Վահան:

30.- Գալֆա – Գալֆայեան Յարութիւն:

31.- Հրամանագիրը:

32.- Ռուբէն – Ջարդարեան Ռուբէն, խմբագիր «Ազատամարտ»ի:

33.- Դրամարկղէն:

34.- Մարգալտ – Ղազարոսեան Ղազարոս:

35.- Խօսքը կը վերաբերի Պոլսոյ մէջ Առժամեայ մարմնի կազմութեան առթիւ Բիրոն տեղեակ պահելու հարցին:

36.- Ֆրանսերեն՝ հաղորդագրություններ: Խնդրոյ առարկայ «ազդարարություն» ռուարկուած թուրք կառավարութեան տեսնել էջ 59-62:

37.- Լեարով – մակեդոնացի յեղափոխական դեկավար դէմք, բարեկամ Դաշնակցութեան. կը գործածէր Չաւեն Արշակունի ծածկանունը:

38.- Շոգեկառք:

39.- Վահագն՝ ծածկանունն է Վռամեան Արշակի: Նշանածը՝ Օր. Ֆլորա:

40.- Մե Բլուր – ծածկանունն է Սեբաստիա-Սրվազի:

41.- Անընթեռնելի մէկ բառ:

42.- Սուրէնը ծածկանունն է Սեբաստացի Մուրատի (Խրիմեան-Տօնիկեան): Բիծան՝ Յովհաննէսեան Սկրտիչ, աւելի ուշ ձեռքակալուեցաւ եւ կախուեցաւ Սեբաստիոյ մէջ. Եղօ՝ Չիմառացի Եղօ, բուն անունով Փափագեան Պօղոս, Մուրատի եւ անոր խումբին հետ լեռ բարձրանալով ու կռիւներ մղելով հասաւ մինչեւ Ռիզէ, ուր եւ նահատակուեցաւ:

43.- Ֆրանսերեն՝ ցուցմունքներուն:

44.- Արմէն Գարոյի (Փաստըմաճեան Գարեգին):

45.- Պօղոս Նուպար փաշայի:

46.- Թուրքերէն՝ մաքսատան պաշտօնեաները:

46ա.- Ուղիղը՝ Վահան Հիւսիսեան եւ Հմայեակ Գառալեօզեան:

47.- Շամ – կուսակցական ծածկանուն Վանի:

48.- Մերճանը Գրիգոր Մերճանօֆ կամ Մերճանեանն է (Ռուզան). Շաւարշը՝ Միսաքեան Շաւարշ, Արշալիր ծածկանունով. «նոր ընկերը» հաւանաբար Դարբինեան Սամուէլն է: Երեքը միասին կը կազմէին Վիշապի (Կ. Պոլիս) Առժամեայ մարմինը, որ երեսփոխան Վարդգէսի (Գիսակ) խորհրդակցութեամբ պիտի վարէր աշխատանքները:

49.- Բարձրաբերդ ծածկանունն է Էրզրում-Կարի-նի. Մե Բլուրը ծանօթ է արդէն – Սեբաստիա:

50.- Աւագանը Տրապիզոնն է:

51.- Դուրանը Տարօնն է:

52.- Իմա՝ պուլկար դեսպանատան կապը:

53.- Ֆրանսերեն՝ միջնորդ, միջնորդութիւն:

54.- «Իսկ միւսը» պէտք է հասկնալ Բ. Դուռը, այսինքն կառավարութիւնը, որուն նոյնպէս պէտք է դիմէ պատրիարքը:

55.- «Հարեւաններուն համար» պէտք է հասկնալ՝ թուրքերուն համար:

56.- Անտեղեակ, ոչ իրազեկ:

57.- Ակնարկութիւն կամատրական գունդերուն:

58.- Սահմանաբերդ – կուս. ծածկանունն է Մարաշի:

59.- Չէօկիւրեան Յովհաննէս (Օննիկ), եղբայրը ծանօթ գրագէտ Չէօկիւրեան Տիգրանի: Այս վերջինը տարագրուած էր արդէն ու պիտի նահատակուէր:

60.- Ժան Լոնկէ, ֆրանսացի քաղաքական դէմք,

բարեկամ Դաշնակցութեան. եղած է տարիներով Փրօ-Արմենիայի խմբագրութեան քարտուղարը:

61.- Ֆրանսերեն՝ հաւանութիւն, հաստատում: Խօսքը կը վերաբերի ծայրայեղ միջոցներու դիմելու մասին, որուն համար Առժամեայ մարմինը պէտք ունէր գերադաս մարմնի արտօնութեան. ուրիշ կաշկանդիչ պարագայ էր արտորեալներու կեանքի ապահովութիւնը: Յոյս ունէին տակաւին որ անոնք կրնան վերադառնալ, իսկ ծայրայեղական արարքները կրնային վրտանգել անոնց կեանքը:

62.- Լեռնասարը կուս. ծածկանունն է Խարբերդի:

63.- Վիշապածոր կուս. ծածկանունն է Տիարպեքիր-Տիգրանակերտի:

64.- Բանալի՝ կուս. ծածկանունն է Սամսոնի:

65.- Ֆրանսերեն՝ կապոց, փաթան: Գրելու համար երբեմն կ'օգտագործէին թերթերու կապոցներուն ներքեւի երեսները:

66.- Ֆրանսերեն՝ այժմեականութիւնը:

67.- Բացի պարբերական լրատուութեան, Շաւարշ Միսաքեան Սոֆիայի «Հայաստան»-ին համար կ'ուղարկէր յօդուածներ, Ռազմիկ եւ Վարագ ծածկանուններով եւ «Մեծ ճգնաժամը» ընդհանուր խորագրով:

68.- Մատնիչներու:

69.- Պայմանական բանալի, որուն իմաստը անծանօթ է մեզի:

70.- Ֆրանսերեն՝ օրինաւոր:

71.- Ֆրանսերեն՝ գերիշխանութեան:

72.- Այսինքն Շամ-Վանը:

73.- Մարալ – Փափախեան Փիլոս:

74.- Վանիկ – Թերլեմէզեան Միհրան, որ իբրեւ Վանի պատգամաւոր Հ.Յ.Դ. Տրդ Ընդի. ժողովին մասնակցելէ ետք մնացած էր Կարին:

75.- Պարոյրը հայրուկապետ Անդրանիկն է. Վարդանը (Խանասորի) Մեհրապեան Սարգիս: Երկուքն ալ կամատրական գունդերու հրամանատարներ:

76.- Խօսքը կը վերաբերի Արմէն Գարոյի (Փաստըմաճեան Գարեգին), Օսմ. խորհրդարանի նախկին երեսփոխան, որուն մէկ լուսանկարը՝ կամատրական գունդի հետ՝ հրատարակուած Ֆրեզոյի «Ասպարէզ»-ին մէջ, լայնօրէն շահագործուեցաւ Թուրքիոյ կողմէ:

77.- Ռոտում – կուս. ծածկանունն է Տիվրիկ քաղաքի: Տես ծանօթ 42:

78.- Minerva – դերձակատուն Պոլսոյ մէջ. կը պատկանէր Օննիկ Չէօկիւրեանին:

79.- Բերդ – կուս. ծածկանունն է Շապին Գարահիսարի:

80.- Թէքլիֆ – զինուորական հարկ:

81.- Զոմիսիոն – յանձնախումբ:

82.- Կարս կամ Խարս, գիւղ Էրզրում նահանգի Թորթումի շրջանին մէջ:

83.- Հարկի տեսակներ. աշարը՝ տասանորդ տուրք,

էղնամ՝ ոչխարի տուրք, թիճարէթ՝ առեստրական տուրք:

84.- Ապրանք, մթերք:

85.- Ինչպէս կը տեսնուի, Հ. Յ. Դաշնակցութեան անունով թուրք կառավարութեան ուղղուելիք ազդարարագրի (տես էջ 59-62) գաղափարը կու գար Վիշապի Առժամեայ մարմնէն, որուն համամիտ էր նոյնպէս Պալքանի Կեդր. կոմիտէն:

86.- Բերդը Շապին Գարահիսարն է, Ռրոտումը՝ Տիվրիկ. Վարդանը՝ Վարդան Շահապազ, Բիճան՝ Յովհաննէսեան Սկրտիչ, Եղօ՝ Ջիմառացի Եղօ:

87.- Չեռագրին մէջ հինգ տողի չափ բաց ձգուած է:

88.- Յիշեալ երեք ընկերները Կարին կը գտնուէին. Բալաջանը՝ Ստեփանեան Ստեփանն է. Մարալը՝ Փափախեան Փիլոս. Ատրունին՝ Արամ Ատրունի:

89.- Այսինքն թերթերու լուսանցքներուն, բաց տեղերուն վրայ գաղտնի մելանով գրելով:

90.- Այսինքն պուլկար դեսպանին հետ:

91.- Խարլաքով – պուլկար դեսպանատան սուրհանդակ:

92.- Ռ. Լեռնեան – կուս. ծածկանուն Նազարեանց Լիպարիտի, միաժամանակ խմբագիր «Հայաստան»ի:

93.- Էնկիլիբի, Անկորա հին անուանակոչումներն են Անգարայի:

94.- Իմա՝ ամերիկեան դեսպանի միջոցով:

95.- Խաչ. – փրոֆ. Աստուածատուր Խաչատրեան:

96.- Ֆրանսերէն՝ անտիպ:

97.- Ֆրանսերէն՝ վտանգատր:

98.- Ֆրանսերէն՝ ցուցմունքներ:

99.- Այսինքն՝ Շ. Միսաբեանը նոր էր հեռացած Վարդգէսին տուած իր այցելութենէն, երբ ոստիկանութիւնը անոր բնակարանը խուզարկելու կու գայ:

100.- Չաւէն կամ Չաւէնեան, այստեղ եւ այսուիտեւ յաճախ կը գործածուին Կ. Պոլսոյ պատրիարք Չաւէն Արք. Տէր Եղիայեանի համար:

101.- Մարգալետ – դաշնակցական գործիչ, բուն անունով Ղազարոսեան Ղազարոս:

102.- Սուրէն՝ ծածկանունն է Սեբաստացի Մուրատի. Եղոն՝ Ջիմառացի Եղոն է. Վարդանը՝ Վարդան Շահապազ:

103.- Կէօպէն, որ գերմանական ուրիշ ռազմանաւի մը (Պրելաու) հետ փախուստ ձեւացնելով դաշնակից ռազմանաւերէն՝ ապաստանած էր Պոլիս: Այլա այդ երկու ռազմանաւերը Թուրքիա «նուէր» ստացաւ գերմանացիներէն եւ սկսաւ ռմբակոծել Սեւ ծովու ռուսական նաւահանգիստները, այդ ճամբով պատճառ դառնալով ռուս-թրքական պատերազմին:

104.- Ֆրանսերէն՝ շիտակ, օրինապահ իմաստով:

105.- Ֆրանսերէն՝ արժեթուրք:

106.- Ակնարկութիւն Վանի ազատագրումին:

107.- Այսինքն՝ հայ կամաւորները Տարօնի եւ Բա-

ղէշի թուրք երեսելիները իբրեւ պատանդ պահեն Վանի մէջ, որպէսզի անոնց փոխանակումով կարելի ըլլայ ձեռք բերել հայ աքսորեալներու ազատագրումը:

108.- Ֆրանսերէն՝ ի դէպ:

109.- Բնագրին յաջորդ էջը կամ էջերը կը պակսին:

110.- Ասլան – ծածկանուն Ջարդարեան Ռուբէնի:

111.- Բարա Գասպարը՝ Գարեգին Խաժակն է (Չապալեան):

112.- Ֆրանսերէն՝ ճամբով, միջոցով:

113.- Ֆրանսերէն՝ Յիշատակագիրը:

114.- Տաքեան Վահագն:

115.- Բօշնաք – Պոսնիացի:

116.- Լեռնավայր – կուս. ծածկանուն Կիլիկիոյ եւ շրջակայքի:

117.- Հալէպի նահանգապետն էր Ճելալ պէյ, որ շուտով պաշտօնանկ պիտի ըլլար, որովհետեւ մերժած էր գործադրել Թալէաթի հրահանգները, յայտարարելով՝ «Ես այս նահանգին վալին եմ, չեմ կրնար անոր դահիճը ըլլալ»:

118.- Պայպըլ Հաուզ – Ամերիկեան միսիոնարութեան Աստուածաշունչի տարածման Պոլսոյ կեդրոնը:

119.- Գումարը նշանակուած չէ:

120.- Ճանկիլ – Ճանկիլեան Յարութիւն, հնչակեան յայտնի գործիչ:

121.- Ծանօթ գրագիտուի Բարսեղեան Պերճուհի, որ կինն էր Բարսեղեան Սարգիսի (Շամի):

122.- Այսինքն՝ Վանէն, Տարօնէն, Անդրանիկէն (կամաւորական գունդերէն):

122ա.- Իմա՝ չէզոք պետութիւններուն:

122բ.- Միրիջան Օզանեան, Պալքան ուղարկուած կուս. գործիչ, որ ապա պիտի անցնէր Ամերիկա:

122գ.- Ջիմառադարէն ետք մատնիչ Արամեանց ահաբեկուեցաւ Պոլսոյ մէջ դաշնակցական Արշակ Մուշեղեանի կողմէ (Եզիա Արշակ):

123.- Սուրէնը՝ Սեբաստացի Մուրատն է, գիւղը՝ Կովտուն:

124.- Ֆրանսերէն՝ յանցանք գործելու պահուն:

125.- Ուիլսըն – Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ:

126.- Ակնարկութիւն հնչակեան գործիչներու կախուելուն:

127.- Դուրան-Բարձրաւանդակը Տարօն-Սասունն է:

128.- Քոթոթ՝ ծածկանուններէն մէկը Ռոստոմի. Համոն՝ Օհանջանեան Համագասպ, կրնայ ըլլալ նաեւ Սրուանձտեանց Համագասպը:

129.- Մէկ բառի տեղ բաց ձգուած է:

130.- Սլաք – հին յեղափոխական գործիչ Արմենակ Օխիկեան:

131.- Պահակներ:

132.- Վիզէն-եան. Վիզէն ծածկանունն էր բժիշկ Յ. Չարեանի: Հոս հաւանաբար գործածուած է ռուս գոր-

քերու կամ հայ կամատրական գունդերու մասին, որոնց շուտափոյթ հասնելուն կը սպասէին:

133.- Թանհն – Կ. Պոլիս հրատարակուող թրքական լրագիր, Իթքիհատի պաշտօնաթերթ:

134.- Վանկենհայն – Գերմանիոյ դեսպանը Թուրքիոյ մէջ:

135.- Նախարարութիւնը ընդհատուած է եւ երկու տող բաց ձգուելէ ետք շարունակուած:

136.- Խօսքը Կովկաս մեկնելու համար արձանագրուած պուլկարահայ կամատրներու մասին է, որոնց մեկնումին համար ռուս դեսպանն ու հիւպատոսները դժուարութիւններ կը յարուցանէին:

137.- Յայտնապէս, Մայիս 20էն ետք, շուրջ ամիս մը Պոլսոյ Առժամեայ մարմնի գրութիւնները չեն հասած Սոֆիա: Այսպէս է պարագան այս նամակով յիշուած Յունիս 4ի եւ Յունիս 20ի զոյգ գրութիւններուն:

138.- Շոգեկառքի կայարան, Պոլիս:

139.- Հողաբլուր – կուս. ծածկանուն Այնթապի:

140.- Գրութիւնը կ'ընդհատուի հոս:

141.- Լեւոպոլս Ֆավոն – նախագահ միջազգային Կարմիր խաչի Ժընեւի կեդրոնին:

142.- Թորատլեան – հանրաժանօթ հիւրանոց Կ. Պոլսոյ մէջ:

143.- Վիլիելմ – Գերմանիոյ կայսր:

144.- Տիարալեքիր-Տիգրանակերտի առաջնորդական տեղապահը Սկրտիչ վարդապետ Ջղատեանն էր, զոր շաբաթներ ամբողջ անկող չարչարանքներու ենթարկելէ ետք՝ թուրքերը հրկիզեցին նկուղի մը մէջ եւ՝ հրապարակաւ յօշոտեցին անոր մարմինը:

145.- Ֆրանսերէն՝ չարաղէտ դէպքերու:

146.- Ֆրանսերէն՝ առաքելութիւնը:

147.- Խօսքը հաւանաբար Կոստան Չարեանի մասին է. իսկ Յ. Բ.ն, նոյնպէս հաւանաբար Յակոբ Բիւֆեճեան (Օշական) պէտք է ըլլայ:

148.- Ֆրանսերէն՝ վտանգը:

149.- Ֆրանսերէն՝ գոյութեան իմաստը:

150.- Ֆրանսերէն՝ միջոցով, ճամբով:

151.- Քեռիները իմա ռուսերը:

152.- Արգուման՝ կուս. ծածկանունն է Խաչիկեան Տիգրանի, որ Հայաստանի Բիւրոյին կողմէ իբրեւ գործիչ դրկուած էր Պուլկարիս:

153.- Քրիստ – հին յեղափոխական գործիչ, Ֆեներճեան Քրիստ (Սիլվիօ Ռիչի):

154.- Արուած ու անընթեռնելի 3-4 բառեր: Այլ տեղ կը յիշուի «Սուրէնը հազար հոգիով կ'ասպատակէ».

չափազանցութիւն է անշուշտ:

155.- Ֆրանսերէն՝ պատեհութիւն, յարմարութիւն իմաստով:

156.- Ռուզանը Գրիգոր Մերճանօֆն է, որ իբրեւ պուլկարահպատակ յաջողած էր Սոֆիա անցնիլ, ապա վերադառնալ Պոլիս:

157.- Արգուման – Խաչիկեան Տիգրան:

158.- Դաշնակցական Խեչօ – բուն անունով Ամիրեան Խաչատուր: Կամատրական գունդերու հրամանատար:

159.- Հրետանի, թնդանօթային գունդ:

160.- Եռհան Լեփսիուսն է. գերմանացի հանրաժանօթ միսիոնար, նախագահ գերմանական Արեւելեան եւ հայ-գերմանական ընկերութիւններու:

161.- Քափիթիլասիոն կը կոչուէր այն արտօնութիւնը, որով օսմանեան պետութիւնը կը զիջէր եւրոպական պարտատէր երկիրներուն՝ շահագործելու իր հանքերը, նաւահանգիստները, փոստ-հեռագրատունը եւայլն: Ընդհ. պատերազմի սկիզբը, թրքական կառավարութիւնը միակողմանի կերպով ջնջուած յայտարարած էր այդ արտօնութիւնները:

162.- Գերմանիոյ նոր դեսպանը, յաջորդը Վանկենհայնի:

163.- Խառն ժողով – այդպէս կը կոչուէր Կ. Պոլսոյ հայոց պատրիարքութեան Կեդր. վարչութեան կրօնական եւ քաղաքական ժողովներու միացեալ նիստը:

164.- Լիման Օթթօ Ֆոն Չանտերս – գերմանացի զօրավար, որ թրքական բանակը մարզելու առաքելութեամբ դրկուած էր:

165.- Նշուած նամակը չկայ արխիւներուն մէջ, բայց ան հրատարակուած է «Ականատեսներու պատմամը» խորագրով, «Հայաստան» թերթի Յուլիս 22, 25 եւ 29 թիւերուն մէջ, ուրկէ քաղելով կու տանք յաջորդ թիւ 58 փաստաթուղթով:

166.- Մասալ – հեքիաթ, յերիւրածոյ, շինծու պատմուածք:

167.- Տես էջ 106 («Ականատեսներու պատմամը»):

168.- Այսինքն պուլկար կառավարութեան:

169.- Այսինքն ռուսերը:

170.- Ճախտ.– Իթքիհատի ազդեցիկ դէմքերէն, ելեմտական նախարար:

171.- Գարմէն – Մելքոնեան Սկրտիչ. կուսակցական գործիչ Տարօնի մէջ:

172.- Անունը արուած:

173.- Չարեհ Տիլպեր, ծերակուտական:

174.- Ֆրանսերէն՝ պարբերական հրատարակութիւն, տեղեկագիր:

175.- Լատիներէն՝ նախկին, «նախապատերազմեան» կացութեան հաստատում:

176.- Մթերաբաժին, ուտեստ:

177.- Հայրուհի եղան:

178.- Վեսեգա – հոս՝ պարէն ստանալու յատուկ վկայագիր:

179.- Խաչը՝ փրոֆ. Ա. Խաչատրեանն է, Լիպարիտը՝ Նազարեանց:

180.- Ֆրանսերէն՝ բառացի կը նշանակէ ձրի եւ բռնի աշխատանք, հոս՝ տաժանելի գործ:

- 181.- Աստրիոյ կայսր եւ Հունգարիոյ թագաւոր:
- 182.- Բոլորովին չափազանցուած, երեւակայական:
- 183.- Իմա՝ ռուսերու կողմէ:
- 184.- Երկու տող բաց. հաւանաբար կարելի չէ եղած գաղտնի մելանով գրուած այս նամակը լրի բանալ:
- 185.- Մահավճիռ ստացած անձերու անունները չեն յիշուած հոս. Տես փաստ. 881-46, էջ 149):
- 186.- Քառեակ – Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ դաշնակցութեամբ կազմուած զինակցութիւնը կը կոչուէր Երրեակ համաձայնութիւն. 1915 թ. Ապրիլ-Մայիս ամիսներուն, Իտալիոյ յարումով անոր՝ Երրեակը դարձաւ Քառեակի համաձայնութիւն: Սկզբնական ակնկալութիւնը այն էր որ Պուլկարիա եւս կը միանայ այս դաշինքին, բայց պիտի պատահէր հակառակը.– Մեպտեմբերի վերջերուն (հին տոմար) ան ընդհ. պատերազմին պիտի մասնակցէր գերման-աստրիական-թուրք զինակցութեան կողքին:
- 187.- Սովսէս Պետրոսեան եւ Քրիս Ֆեներճեան:
- 188.- Թիւ 44ի ազգանունը նշանակուած չէ. նոյնպէս թիւ 50ի:
- 189.- Վիշապի Առժամեայ մարմնի անդամ:
- 190.- Տող մը չբացուած:
- 191.- Ծայր – փամփուշտ:
- 192.- Շամիլ – Բարսեղեան Սարգիս (Օտապաշեան Պողոս), անդամ Հայաստանի բիրոյին, ձեռքակալուած, տարագրուած, ապա սպաննուած:
- 193.- Բառը ջնջուած է:
- 194.- Գեղամը՝ Տէր Կարապետեան Գեղամն է, դաշնակցական երեսփոխան Մուշէն. հիւանդութեան պատճառաւ չէր տարագրուած (պիտի մահանար Մեպտ. 1918ին): Խաչը՝ փրոֆ. Ա. Խաչատրեանն է:
- 195.- Մատաթեան Յովսէփ – երեսփոխան Կարիւնէն, ընտրուած Իթքիհատի ցանկէն:
- 196.- Ֆրանսերէն՝ ցուցմունքներ:
- 197.- N° 11 – խօսքը հաւանաբար մաուզեր ատրճանակի մասին է:
- 198.- Սմբատ եպս. Սաատէթեան, Կարնոյ առաջնորդ, որ թուրքերու կողմէ անլուր չարչարանքներու եւ կտտանքներու ենթարկուելէ ետք կը սպաննուի եւ կը նետուի իր փորած փոսին մէջ:
- 199.- Բանաստեղծ Դանիէլ Վարուժանի: Ռուբէն Մեակ՝ նոյնպէս ծանօթ բանաստեղծ (Չիլիակիւրեան):
- 200.- Էդուարդ Գրէյ – Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար:
- 201.- Բառ մը բաց ձգուած:
- 202.- Սիւնոյն ճելալ պէյն է, Հալէպի նախկին նահանգապետը, որ մերժած էր գործադրել Թալէաթի հրահանգները:
- 203.- Չեր բարեկամները – ակնարկութիւն պուլկարներուն:
- 204.- Երրեակ Ձինակցութիւն կը կոչուէր գերմանո-աստրիական-թուրք ճակատը:
- 205.- Լեռնեան – Նազարեանց Լիպարիտ:
- 206.- Կիտաւորները հաւանաբար «չբացուած» խօսքեր են:
- 207.- Ֆերտինանտ – Պուլկարիոյ թագաւոր: Ռատուլաւով՝ վարչապետ:
- 208.- Ճերմակ – Բոզիեան Յովհաննէս:
209. Նամակին վերեւ, ֆրանսերէն գրուած.– «Հայերէն եւ շատ ստիպողական. հաճեցէք կարելի արագութեամբ տեղ հասցնել»:
- 210.- Ճամբորդական Cook Travel Co. ընկերութիւն:
- 211.- Գլուխ թափել – ազատիլ, պրծիլ:
- 212.- A.M.D. = Ա. Մինոր Դորի (աւելցուած այլ ձեռագրով):
- 213.- Ժան Լոնգէ, Դաշնակցութեան հին բարեկամներէն Փրօ-Արմենիայի խմբագրութեան անդամ:
- 214.- Վիկտոր Պերար. ֆրանսացի քաղաքական դէմք, նոյնպէս Հ.Յ.Դ.ի հին բարեկամներէն, եւ խմբագիրներէն մէկը Փրօ-Արմենիայի:
- 215.- Հայկական ընտանիքը չափազանց բազմածին է: Պէտք չէ յուսահատիլ:
- 216.- Ֆրանսերէն՝ միտում, դիտաւորութիւն:
- 217.- Պողոս Նուպար փաշային:
- 218.- Ֆրանսերէն՝ մեռեալ ձեռագրէն:
- 219.- Ֆրանսերէն՝ ի դէպ:
- 220.- Պաքու լոյս տեսնող դաշնակցական թերթ: Արամայիս – Տէր Դանիէլեան Միսակ:
- 221.- Գիւղ, Պայազիտի շրջան:
- 222.- Ներսէս եպս. Ղարախանեան, առաջնորդ Տարօնի: Մջոն՝ Պոլէեան Սկրտիչն է: Վարդան վարդապետը՝ Յակոբեան, Ս. Յովհաննու Կարապետ վանքի վանահայր:
- 223.- Չշփոթել Ռ. Դարբինեան-Չիլիակարեան Արտաշէսի հետ: Այս մէկը՝ Դարբինեան Յովակիմ անդամ էր Ամերիկայի Կ. կոմիտէին:
- 224.- Ֆրանսերէն՝ զօրաշարժ:
- 225.- Դարթեան Յոնան, Դաշնակցութեան առաջին սերունդի մտաւորական եւ գաղափարախօս ընկերներէն:
- 226.- Խունունց Յովսէփ – Թիֆլիսի Ներսիսեան վարժարանի տեսուչ եւ փոխ-նախագահ Ազգ. Բիրոյի:
- 227.- Ծայրայեղութիւններու, բռնութիւններու:
- 228.- Խորէն եպս. Մուրատբէգեան – ապագայ կաթողիկոս, խեղդամահ եղած:
- 229.- Մեսրոպ եպս. – Առաջնորդ Թիֆլիսի եւ նախագահ Ազգ. Բիրոյի:
- 230.- Կարաուլ – պահակակէտի հսկիչ:
- 231.- Բռնագրաւումով:
- 232.- Պատերազմի ամբողջ տեւողութեան նման անհիմն զրոյցներ շրջան ըրած են:

233.- Միրիայա – սեփականագուրկ գիւղացի, վարձկան մշակ իմաստով:

234.- Համբարձումեան Կոստի – Վասպուրականի քաղաքներու միութեան լիազօր ներկայացուցիչ, ապա Վանի կոմիսար:

235.- Տերմէն – Շրջանապետ Վանի:

236.- Տրապիզոնը ռուսերու կողմէ գրաւուեցաւ 1916 թ. Ապրիլին:

237.- Համբարձում Պոյաճեան – հնչակեան հանրածանօթ առաջնորդ, ղեկավարը 1894ի Մասնոյ առաջին ապստամբութեան:

238.- Բժիշկը տոքթ. Յակոբ Զարեանն է, կամ Զարիե, որ Ժամանակաւոր կառավարութեան կողմէ նշանակուած էր Արեւմտեան Հայաստանի նահանգներուն կառավարիչի օգնական:

239.- Լիպարիտ Նազարեանց (Լեռնեան) մաս կը կազմէր Կովկասի հայոց Ազգ. խորհուրդի Մոսկուա ուղարկած պատուիրակութեան:

240.- Չեմսովօ – Տեղական ինքնակառավարութեան մարմին:

241.- Միլիկով – Ժամանակաւոր կառավարութեան արտաքին գործոց նախարար. Կերենսքի՝ վարչապետ:

242.- Բնագրին մէջ «հնուց ի վեր հայկական»ը ռուսերէն է:

243.- Եւդենիչ – ռուս զօրավար. կովկասեան ռազմաճակատի հրամանատար: Խարլամով – Անդրկովկասեան առանձին կոմիտէի (Օզակոմ) նախագահ:

244.- Փրոֆ. Աստուածատուր Խաչատրեանն է, արտորական:

245.- Փիլոս – Փափախեան Փիլոս:

245ա.– Լիզը՝ Ռոստոմի կինն է. Յոնանը՝ Դարբեան:

246.- Հանըմեան Արտաւազդ – Եգիպտոսի Հ.Յ.Դ. կոմիտէին ծանօթ ներկայացուցիչը այդ օրերուն կը գտնուէր Ամերիկա իբրեւ քարտուղար Փարիզի Ազգ. պատուիրակութեան, որուն կողմէ առաքուած էր ամերիկահայ այլազան հատուածներուն միջեւ համերաշխութիւն գոյացնելու պարտականութեամբ:

247.- Ստոկիոլմի համագումարին եւ Ռոստոմի ծաւալած աշխատանքներուն մասին տեսնել ներկայ հատորի Գ. բաժինը, էջ 263-308:

248.- Գիսակ՝ երեսփոխան Վարդգէսն է (Մերենկիւեան Յովհաննէս). Արշալիրը՝ Միսաքեան Շաւարշ. Ռուզանը՝ Գրիգոր Մերճանօֆ:

249.- Ֆրանսերէն՝ հոս զօրակայան իմաստով:

250.- Յարութիւն Սկրտիչեան – մատնիչ. պատերազմի աւարտին ահաբեկուեցաւ Սողոմոն Թեիլիրեանի գնդակով:

251.- Խօսքը Ֆերիտ ճեմիլ - Տիգրան Ծամհուրի (Ամսէեան) մասին է:

252.- Վեսիքա – վաւերաթուղթ, փաստաթուղթ:

253.- Միրզա – Բժ. Միրզա Զեքեանճեան:

254.- Շամ – Դամասկոս:

255.- Ծանօթ դաւաճանը՝ Շաւարշ Միսաքեանը մատնող պուլկարական դեսպանատան բարապանն է, Վլատիմիր Տիմիթրիեւ, որ աւելի ուշ ահաբեկումի պիտի ենթարկուէր դաշնակցական ահաբեկիչ Եգիս Արշակի (Մուշեղեան) ձեռամբ:

256.- Վաղարշ – Պապայեան Խոսրով:

257.- Օր. Ֆլօրա – Ա. Վռամեանի նշանածը:

258.- Ղարիբ – Ա. Ահարոնեան:

Բ. ԲԱԺԻՆ

ՄՈՒՍԱԼԵՌՑԻՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Մուսա լեռան հերոսամարտը հայ ժողովուրդի դիցազնական խոյանքներն մեկն է: 1915ը, տարագրութեան եւ կոտորածներու տարին, բոլորովին խաւարային թուական մը պիտի մնար հայոց պատմութեան էջերուն մէջ եթէ չըլլային Վանի, Սասնոյ, Շապին Գարահիսարի, Ուրֆայի, Սուէտիոյ եւ այլ հայաշատ վայրերու մէջ հայոց ինքնապաշտպանական մարտերը: Ասոնցմէ շատերը ունեցան ողբերգական վախճան, նկատի ունենալով ուժերու եւ միջոցներու անհասարար համեմատութիւնը. սակայն եւ այնպէս, անոնք ապացոյց են անկոտորում կամքին կռուի դաշտ նետուողներուն, որոնք նախընտրեցին պատուով մեռնիլ իրենց հայրենի օճախները պաշտպանելով, քան ենթարկուիլ տարագրուելու եւ կոտորուելու անարգ ճակատագրին:

Եթէ շիշուներ Վանն ու Վասպուրականը, ապա քիչերուն վիճակուեցաւ յաղթական դուրս գալ մահու եւ կենաց այդ գոյամարտէն: Այս վերջիններէն է անկասկած հերոսական Սուէտիան Մուսա լեռան բարձունքներուն իր մղած քառասուրեայ հերոսական մարտնչումով: Ունինք այս մասին պատմագրական եւ յուշագրական բազում երկեր, գրի առնուած ուղղակի մասնակիցներու կողմէ: Անոնցմէ է, եւ հաւանաբար ամենէն վաւերականներէն մէկը, այս գլուխին տակ ներկայացուած փաստաթուղթը՝ գրի առնուած այս սխրագործութենէն միայն երկու ամիս ետք (տես «Տեղեկագիր Սուէտիոյ հայոց ապստամբութեան մասին», էջ 243): Մուսա լեռան հերոսամարտը անմահացած է նոյնպէս եւ համաշխարհային ուշադրութեան առարկայ դարձած շնորհիւ միջազգային տաղանդաւոր գրագէտ Ֆրանց Վերֆէլի հանրածանօթ վէպին: Այս բոլորը գօտեպնդիչ են ոչ միայն Մուսա լեռան ժառանգորդներուն համար, այլեւ համայն հայութեան, մանաւանդ երիտասարդ սերունդներուն, որոնք ներշնչման եւ ոգեւորութեան անսպառ աղբիւր պիտի գտնեն այդ հերոսամարտի իրաքանչիւր դրուագին մէջ:

* * *

Ծանօթ է որ 1915 թ. Յուլիսի վերջին օրերուն լեռ բարձրացած մուսալեռցիները, շուրջ մէկուկէս ամսուան գոյամարտէն ետք, փրկուեցան շնորհիւ ֆրանսական մարտանաւերուն, որոնք նշմարած ըլլալով լեռան լանջերուն բարձրացուած եւ օգնութիւն աղերսող դրօշը, մօտեցան ծովափ եւ ժողովուրդը, աւելի քան 4000 հոգի, փոխադրեցին Եգիպտոսի Փոր Սայիտ քաղաքը (14-15 Օգոստոս): Հոս, Սուէտի ջրանցքի ափին գտնուող Լազարէք կոչուող արագուտքին, վրաններով ծածկուած քէմփի մը մէջ տեղաւորուեցան քաջարի մուսալեռցիները. Եգիպտոսի ասպնջական հողին վրայ անոնք պիտի ապրէին լման չորս տարի, մինչեւ պատերազմի արարող, մինչեւ իրենց վերադարձը հայրենի օճախ:

Փոր Սայիտի վրանաքաղաքին մէջ մուսալեռցիները կազմակերպեցին իրենց համայնքային կեանքը, կրթական օճախը, Կարմիր խաչի միաւորը եւ այլն: Կարեւոր իրագործումներէն մէկը, անկասկած, Բարեգործական միութեան օժանդակութեամբ հիմնուած «Միսուան» վարժարանն էր, ուր կրթութիւն ստացան աւելի քան հազար աշակերտ. աւելի ուշ, նոր գաղթականներու յաւելումով, կրթական այդ օճախի սաներուն թիւը պիտի հասներ երկու հազարի:

Շուտով պիտի սկսէր թափ առնել նաեւ կուսակցական գործունէութիւնը: Դաշնակցական կորիզը, այնպէս ինչպէս նախաձեռնողն ու ղեկավարողն էր եղած հերոսամարտին, այդպէս նաեւ պարտաւորութիւն կը համարէր տիրութիւն ընելու Փոր Սայիտ տեղափոխուած հայրենակիցներուն եւ հոգալ անոնց բազմապիսի կարիքները: Ուստի կը տեսնենք որ իրենց նոր գաղթավայր հաստատուելէն ամիս մը ետք, արդէն «Ընկեր Ադամեանի վրանին տակ» կը գումարուի ընկերական ընդհանուր ժողով եւ կ'ընտրուի Հ.Յ.Դ. Մուսա լեռան «Կարմիր լեռ» ենթակոմիտէն:

* * *

Բարեբախտաբար Հ.Յ.Դ. Եգիպտոսի թղթածրարները բաւական միւթ կը պարունակէն սուէտահայերու եւ «Կարմիր լեռ» ենթակոմիտէի գործունէութեան մասին: Յիշատակելի են անոնցմէ՝

- Կուսակցական շարքերու, պատանեկան միութեան եւ յարանական դրութեան կազմակերպումը:
- Վերել յիշատակուած «Միսուան» վարժարանն ու անոր ջանքած ազգային դաստիարակութիւնը:
- Երիտասարդութեան մարզումը, որ աւելի ուշ պիտի յանգէր դաշնակից զօրքերու կողքին կռուող Հայկական լեգէոնի կազմութեան, ծանօթ Պաղեստինի եւ Սուրիոյ մէջ իր վարած յաղթական մարտերով:
- Մուսա լեռան ապստամբութեան մասին ներկայացուած տեղեկագրով:
- Եգիպտոսի եւ Ամերիկայի դաշնակցական կազմերու միութեան եւ բարոյական օժանդակութեամբ սուէտահայերուն:

Փաստ. 1048-184

1.- ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ
Հ.Յ.Դ. ԿԱՐՄԻՐ ԼԵՌԻ ԸՆԿԵՐԱԿԱՆ Ա. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ

22 Հոկտ. 915, Լազարեթ (Բօր-Սալիս)

Այսօր, Ուրբաթ, կէսօրէն յետոյ ժամը երկուքին, ընկեր Ադամեանի վրանին տակ, ներկայութեամբ ընկերներ Հանրմեանի եւ Եփրեմեանի¹, գումարուեցաւ ժողովս՝ օրակարգի նիւթ ունենալով ենթակոմիտէի ընտրութիւնը: Ներկայ էին քսաներկու (22) ընկերներ, որոնց ամբողջական քուէովը մարմինը վերակազմուեցաւ հետեւեալ ընկերներով՝

- Մ. Տէր Գալուստեան
- Ս. Շէրպէթեան
- Պ. Ադամեան
- Թ. Այնթապեան
- Գ. Շառայեան

Ընտրութենէն յետոյ ընկեր Հանրմեան խօսեցաւ Ազգ. բիւրոյին կազմութեան վրայ, եւ վեր հանեց Դաշնակցութեան դերը կամաւորական շարժման մէջ, որմէ յետոյ ընկեր Եփրեմեան տեղեկութիւններ տուաւ մեզի նոյն կուսակցութեան Եփրատոսի շրջանակին մէջ տեղի ունեցած գործունէութեանը վրայ: Ժողովը փակուեցաւ ժամը երեքին (3):

Փաստ. 1048-198

2.- Հ.Յ.Դ. ԿԱՐՄԻՐ ԼԵՌԻ ՍԱՐՄՆԷՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԵԻՆ

5 Նոյ. 915, Բօր-Սալիս

Ընկերներ,

Հ. Յ. Դաշնակցութեան Կարմիր լեռի մարմինը 22 Հոկտ.ին վերակազմուած է, եւ այդ թուականէն սկսեալ կանոնաւոր կերպով կը գործէ: Մարմինը շաբաթը երկու անգամ կը գումարուի եւ կը զբաղի տեղական ընթացիկ գործերով:

Այժմ տեղս կը գտնուին երեսունչորս (34) գործօն ընկերներ. այս թիւը կը յուսանք թէ քիչ ատենէն պիտի կրկնապատուի, որովհետեւ մեր կազմին մէջ ընդունուելու փափաք յայտնողներն ու դիմողները բազմաթիւ են:

Ընկերները շաբաթը մէկ անգամ ընդհ. ժողովի կը հրաւիրուին:

Վերջին շաբթուան ընթացքին պատանեկան միութիւն մըն ալ կազմեցինք, «Հ.Յ.Դ. Սուէտիոյ պատանեկան «Անդրանիկ» միութիւն» անունով, որուն վիճակացոյցը այս շաբաթ կը ստանաք:

Ներփակ կը դրկենք մեր անդամացուցակը եւ ատենագրութիւնը այն ընկերային ընդհ. ժողովին, որուն մէջ ընտրուեցաւ մարմինս, ու կը մնամք

Ընկերական սիրալիր բարեկներով
Հ.Յ.Դ. ԿԱՐՄԻՐ ԼԵՌԻ ՍԱՐՄԻՆ

1.- Արտաւագ Վանդեան եւ Սկրտիչ Եփրեմեան, անդամներ Եփրատոսի կոմիտէին:

Փաստ. 1047-85

3.- ԱՆԴԱՄԱՑՈՒՑԱԿ
 Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՐՄԻՐ ԼԵՐԱՆ ԵՆԹԱԿՈՍԻՏԷԻՆ

Թի	Անուն մականուն	Ծածկանուն	Մուտքը	Տարիք	Ծննդավայր	Արհեստ	Կարգավ-գրել
1	Նարեկ Արքահամեան	Մուրէն	1912	21	Խտրրայէյ	վաճառական	այո
2	Պետրոս Աղամեան	Պետօ	1908	27	Եողուն Օլուզ	սանտրագործ	այո
3	Միհրան Աղամեան (այժմ Աղեքսանդրիա է)	Հրայր	1910	23	»	»	»
4	Մովսէս Աղամեան	Կայծակ	1911	30	»	երկրագործ	նչ
5	Գաբրիէլ Աղամեան	Վրէժ	1911	29	»	ջորեսկան	նչ
6	Սերոբ Շերպէթեան	Քրիստափոր	1908	22	Խտրրայէյ	ուսուցիչ	այո
7	Սերոբ Կէպէշեան (Աղեքսանդրիա է)	Արծիւ	1909	28	Եողուն Օլուզ	սանտրագործ	այո
8	Տիգրան Արքահամեան (Գահիրէ կը գտնուի)	Վարպետ	1908	27	»	»	նչ
9	Թոմաս Այնթէպեան	Փայլակ	1911	33	Վագրֆ	վաճառական	նչ
10	Սարտիրոս Պոյաճեան	Մուրատ	1909	27	Խտրրայէյ	ջուլիակ	այո
11	Մովսէս Տէր Գալուստեան	Անուշաւան	1908	23	Եողուն Օլուզ	ուսուցիչ	այո
12	Պետրոս »	Երկաթ	1911	25	»	սանտրագործ	»
13	Կարապետ Սգայեան	Կրանիթ	1912	23	Վագրֆ	պարտիզպան	այո
14	Փանոս »	Բոց	1912	20	»	»	նչ
15	Կարապետ Գ. »	Կարիճ	1912	21	»	»	այո
16	Ճապրա Հանիսեան	Կրակ	1909	25	Խտրրայէյ	խաշնարած	այո
17	Սարգիս Ինճեան	Ֆարիատ	1909	27	»	պարտիզպան	»
18	Գեղարդ Շառայեան (թէն վաղուց ընկ. բայց ցարդ ուզած էր գաղտնի մնալ)	Ջան-աղբէր	1915	18	Եողուն Օլուզ	ուսանող	այո
19	Սեդրակ Պուրսալեան (Աղեքսանդրիա կը գտնուի)	Բազէ	1910	22	»	սանտրագործ	այո
20	Իսթիֆան Հապէշեան	Սահրատ	1912	21	»	»	այո
21	Միսաք Հապէշեան	Ազատ	1912	20	»	»	»
22	Յակոբ Տաշճեան	Միսակ	1911	25	»	»	»
23	Մովսէս Եարամազեան	Մարիուս	1913	28	»	»	նչ
24	Սեդրակ Հապիպեան	Ճանիկ	1913	20	»	»	այո
25	Միքայէլ Գազանճեան	Երնջակ	1912	20	»	դարբին	այո
26	Սեդրակ Աղամեան	Մարալ	1913	20	»	սանտրագործ	նչ
27	Փանոս Թերիբեան	Առիծ	1913	27	»	»	»
28	Փանոս Այնթապեան	Տիրան	1912	20	Վագրֆ	երկրագործ	այո
29	Կարապետ Չլտրեան	Արամ	1912	23	»	պարտիզպան	»
30	Խաչեր Տ[էր] Մովսէսեան	Արտէմ	1915	30	Եողուն Օլուզ	սանտրագործ	նչ
31	Յովհաննէս Մասմանեան	Սերճան	1913	23	»	»	այո
32	Պօղոս Պետրոսեան	Սարենց	1913	30	»	»	»
33	Պետրոս Շերպէթեան	Ճէլլատ	1908	28	Խտրրայէյ	պարտիզպան	»
34	Թովմաս Գէրնէշեան	Նորայր	1915	33	Վագրֆ	»	նչ

Փաստ. 1049-108

3.- ԱՆԴԱՄԱՑՈՒՑԱԿ
 Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՐՄԻՐ ԼԵՐԱՆ ԵՆԹԱԿՈՍԻՏԵԻՆ
 (Շարունակություն)

Թիւ	Անուն մականուն	Ծածկանուն	Մուտքը	Տարիք	Ծննդավայր	Արհեստ	Կարգալ-գրել
35	Մարկոս Մնասյան	Պարթեւ	1915	25	Պիթիաս	դգալագործ	այո
36	Գեորգ Գըրընեան	Քիվալի	1915	34	»	»	նչ
37	Մանուկ »	Մամար	1915	28	»	»	այո
38	Կարապետ »	Կարօ	1915	32	»	»	»
39	Արմենակ Քէլեան	Էլիա	1915	19	»	պարտիզական	նչ
40	Կարապետ »	Պիպուր	1915	37	»	պարտիզական	»
41	Եսայի Քէշիշեան	Խանձուր	1915	20	»	ջուլիակ	այո
42	Ալեքսան Քէլեան	Սանայիք	1915	27	»	պարտիզական	նչ
43	Գրիգոր Սթամպոլեան	Միհրապ	1915	24	»	որմնադիր	»
44	Պողոս Տ[էր] Մովսէսեան	Քալաշ	1915	20	Եօղուն Օլուզ	սանտրագործ	այո
45	Պետրոս Սգայեան	Ռազմիկ	1915	35	Վազըֆ	պարտիզական	նչ

Փաստ. 1048-221

4.- Հ.Յ.Դ. ԿԱՐՄԻՐ ԼԵՌԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԵԷՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԵԻՆ

23 Նոյ. 915

Ընկերներ,

Ձեր Նոյ. 10 թուակիրը, որով փութացած էիք վաւերացնել վերակազմուիլը ենթակոմիտէիս, ինչպէս նաեւ շրջաբերականը, ստացած ենք ժամանակին:

Կը սիրենք յուսալ թէ պիտի չմեղադրէք զմեզ պատասխանը ուշացնելնու համար, քանի որ գիտէք թէ ինչ աննպաստ պարագաներու տակ կը գտնուինք արդ:

Անցնող երկու շաբթուան ընթացքին մեր կազմին մէջ ընդունուեցան տասը (10) երիտասարդներ, եւ կը փափաքինք դիմողներէն մի քանիին ալ գոհացում տալ այս շաբաթ:

Ապաւինելով ժողովուրդին մեզի հանդէպ ցոյց տուած անհուն համակրանքին՝ կու գանք կատարելապէս ապահովցնել զՁեզ թէ՛ գաղութիս մէջ սէրն ու միութիւնը պիտի պահպանենք յաւէտ, թէ՛ եւ դուրսեցիներն ու անոնցմէ թելադրուածները պառակտումի որոմին սերմը կը սերմանեն ամէն կողմ, ամէն անգամ որ առիթ գտնեն: Նոյնչափ վստահութիւն ու հաւատք ունինք այն վսեմ օրուան հասնելուն վրայ ալ, ուր՝ բոլոր սուէտացիներս մէկ՝ պիտի ողջունենք չքնաղ ափերը մեր նուիրական հայրենիքին, ու հո՛ն պիտի հաստատուինք մեր վերածնած յոյսերուն ու երազներուն հետ, նպաստելու համար հայ ազգին սիրալի, պաշտելի՛ իտէալին:

Պատանեկան «Անդրանիկ» միութեան վիճակացոյցը — զոր ներփակ պիտի գտնէք — զրկելու համար սպասեցինք ենթակոմիտէիս պաշտօնապէս վաւերացուելուն, որպէսզի մենք ալ մեր կարգին վաւերացնէինք անոր կազմուիլը: Անոր անդամներուն ընտրութիւնը մեծ զգուշութեամբ է որ կը կատարենք, որովհետեւ անոնք ո՛չ միայն վաղուան յեղափոխականները, այլ նաեւ անոնց ռահվիրաներն ու առաջնորդները պիտի ըլլան: Այս խանդավառ պատանիներուն համար կը խնդրենք որ հաճիք մեր անզուգական հերոսին, Անդրանիկին պատկերը զրկել, ինչ որ թանկագին նուէր մը պիտի ըլլայ իրենց համար:

Ենթակոմիտէիս նախաձեռնութեամբը՝ քէմբը իր լսարանն ալ ունեցաւ, ուր՝ ամէն Կիրակի՝ լրագրական տեղեկութիւններ պիտի տանք եւ պիտի խօսինք ազգային նիւթերու վրայ: Այս ձեռնարկը մեծ խանդավառութեամբ ողջունուեցաւ ժողովուրդին կողմէ:

Ընկերները կը փափաքին Ֆութպոլի գնդակ մը ունենալ. չափազանց շնորհակալ պիտի ըլլանք, եթէ հատ մը զրկելու միջոցը գտնէք:

Ընկերական սիրալի բարեկներով
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԱՐՄԻՐ ԼԵՌԻ ՄԱՐՄԻՆ

Փաստ. 1047-89

5.- ՎԻՃԱԿԱՑՈՅՑ
Հ. Յ. Դ. ԿԱՐՄԻՐ ԼԵՌԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ «ԱՆԴՐԱՆԻԿ» ՄԻՈՒԹԵԱՆ
 – 1915 –

Թի	Անուն մականուն	Տարիք	Ծննդավայր	
1	Թովմաս Աբրահամյան	15	Եօղուն Օլուզ	օգն. ուսուցիչ «Միսուան» վարժարանի
2	Գառնիկ Տ. Գալստեան [?]	16	»	» » » »
3	Գեորգ Գազանճեան	16	»	» » » »
4	Միհրան Մըրըզեան	16	»	» » » »
5	Յովհաննէս Պուրսալեան	16	»	» » » »
6	Յարէք Ադամեան	17	»	այժմ ոչինչ կ'ընէ. խումբին մէջ ամենէն [աւելի] պէտք ունի կարողալու աշակերտ «Միսուան» վարժարանի
7	Ադամ Ադամեան	16	»	
8	Յովհաննէս Մարգարեան	17	Խտըրպէյ	օգն. ուսուցիչ «Միսուան» վարժարանի
9	Մովսէս Միքայէլեան	16	»	ուսուցիչ էր Սուեփա. գիտէ ֆրանս[երէն]
10	Պօղոս Շէրպէճեան	16	»	աշակերտ

Փաստ. 1049-57

6.- ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԵԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՍԻՏԵԷՆ

Գահիրե, 1916 Յունիս 23 (հին տոմար)

Սիրելի ընկերներ,

Ստացած ենք ժամանակին ձեր բոլոր նամակները, ինչպէս նաեւ վերջին մայիս 26 թուակիրը՝ ներփակ քառասուն եւ եօթը անգլիական ոսկի, մէկ շիլին երեք բէնի արժողութեամբ չէքով: Մեր ծայրայեղօրէն բազմազբաղ վիճակը եւ աշխատող ձեռքերու պակասը թոյլ չտուին մեզի որ ժամանակին կարենանք պատասխանել ձեր նամակներուն:

— Ի նպատակ Բոր-Սայիտի սուկտացի քաջարի գաղթականներուն ձեր ուղարկած երկու հարիւր տասնըչորս անգլիական ոսկի, երկու շիլին եւ ութը բէնի արժողութեամբ չէքը կոմիտէս ստացած է ժամանակին եւ անոր փոխարէն գանձած է 20,797.25 եգիպտական դասեկանի գումար մը:

Մենք մտածեցինք այդ գումարը յատկացնել մնայուն ձեռնարկի մը, որուն արդիւնքով բարելաւուէր մեր կտրիճ գաղթականներու սնունդը: Սակայն, նկատելով որ այդ մասին Ազգային առաջնորդարանի հետ առաջ տարուած երկարաշունչ բանակցութիւնները որոշ արդիւնքի մը չկրցան յանգիլ՝ Ազգ. իշխանութիւններու ծանօթ խոսսափումներուն հետեւանքով. նկատելով որ նմանօրինակ ձեռնարկները (նոյն գաղութին համար), քոնթրոլի անկարելիութեան հետեւանքով՝ ոչ միայն չեն տուած մինչեւ հիմա իրենցմէ սպասուած արդիւնքը, այլ ամէն կարգի գանձատներու առիթ կ'ընծայեն. նկատելով որ գաղթականները կը գտնուին նիւթական ողբալի վիճակի մէջ, մենք որոշեցինք այդ գումարը բաժնել ուղղակի բոլոր գաղթականներուն անխտիր՝ Զատկական տօներու առիթով, որպէսզի ամէն մէկը իր հասկցած եղանակով եւ իր ստացած գումարով բաւարարութիւն տայ իր պէտքերուն:

Մեր Աղեքսանդրիոյ ենթակոմիտէն, նոյն նպատակին գործածուելու համար մեր տրամադրութեան տակ դրած է 6,374.75 եգիպտական դասեկանի գումար մը, որով մեր մօտ կ'ունենայինք 27,172 ե. դ.: Բաշխումի գործողութիւնը կատարուած է Բոր-Սայիտի քէմբին մէջ ապրիլ 18 եւ 19ի երեքշաբթի եւ չորեքշաբթի օրերը, կոմիտէիս մէկ ներկայացուցչին միջոցաւ, ի ներկայութեան տեղւոյն քահանաներուն, Առաջնորդարանի թարգման Պ. Ն. Թոքաթի եւ Սուկտիոյ մեր ենթակոմիտէն երկու ընկերներու:

Ստորեւ կու տանք մանրամասն հաշիւը ստացուած եւ բաժնուած գումարներուն.

Մուտք

Ամերիկայի Կեղր. Կոմիտէն	ե.դ. 20,797.25
Աղեքսանդրիոյ ենթակոմիտէն	6,374.75
գումար	27,172

Ելք

3706 (այսինքն բոլոր քէմբին մէջ ներկայ եղող) գաղթականներուն մէկ մէկ ուուիի (6.50 ե. դ.)	24,089
--	--------

Տկարակազմներու խոհանոցին	1,500
5 քահանաներու եւ պատուելիին	
130ական դասեկան	780
Զատկի տօներու յանձնախումբին	325
Եկեղեցական պէտքերու համար	260
Զանազան ծախք	218
գումար ե. դ.	27,172

Հ. Յ. Դաշնակցութեան այս ժեսթը ամենամեծ եւ խիստ գոհացուցիչ տպաւորութիւն գործած է Սուկտիոյ մեր հերոս հայրենակիցներուն վրայ, որոնք դիմած են քահանայից դասին, իրենց շէյխերուն (գիւղական) եւ Սուկտիոյ մեր ենթակոմիտէին՝ իրենց անկեղծ եւ սրբտաբուխ շնորհակալիքը յայտնելու համար: Քահանայից դասը, գիւղական շէյխերը եւ մեր ենթակոմիտէն ալ իրենց կարգին մեզ դիմած են՝ խնդրելով որ ժողովրդի գոհունակութեան եւ շնորհակալութեան զգացումներուն թարգմանը հանդիսանանք Կեղր. կոմիտէիդ եւ նուիրատու յարգոյ ազգայիններուն մօտ:

— Ինչ կը վերաբերի ձեր նոր ուղարկած գումարին, անիկա շատ փոքր է վերոյիշեալ ձեւով բաժնուելու համար գաղթականներուն, ինչպէս որ փափաք կը յայտնէ նուիրատու մարմինը, քանի որ մարդ գլուխ մէկ զրուշի գումար մը միայն պիտի իյնայ: Եթէ կրնաք այդ որոշումը փոխել տալ, եւ բաշխումի տարբեր ձեւ մը հրահանգել տալ մեզ, խնդրենք աշխատեցէք այդ ուղղութեամբ: Մինչեւ այդ, եթէ պատահի որ ուրիշ աղբիւրներէ նոր գումարներ դրուին մեր տրամադրութեան տակ՝ նոյն նպատակին գործածուելու համար, այդ պարագային առանց սպասելու ձեր պատասխանին՝ մենք կը բաժնենք դրամը:

– Լեոնավայրի² եւ Միջագետքի մասին ձեր գրածները եւ Կովկասի մեր ընկերներուն թելադրութիւնները կարդացինք: Նախ ըսենք որ A. Hanemian հասցէին պարզ եւ բացայայտ կերպով ամէն ինչ կրնաք գրել եւ պէտք չունիք դարձադարձիկ միջոցներ գործածելու, որովհետեւ այդ անունին ոեւէ աղբիւրէ եկած նամակները չեն բացուիր այստեղ: Երկրորդ, մենք սկիզբները քանիցս գրեցինք Կովկաս, նոյնիսկ պաշտօնական թուղթ չգործածեցինք մեր վերջին նամակներուն մէջ եւ զգուշացանք Դաշնակցութեան անունը տալէ, բայց մեր բոլոր գրութիւնները մնացին անպատասխան: Այդ պատճառով մենք ենթադրեցինք որ մեր նամակները տեղ չեն հասնիր եւ հետեւաբար դադարեցուցինք մեր նամակները: Եթէ առանձին հասցէ եւ գրելու եղանակ ունիք դուք, խնդրենք մեզ իմացուցէք որպէսզի մենք ալ օգտուինք անոնցմէ եւ կապ պահենք Կովկասի հետ:

Ինչ կը վերաբերի ձեր գրածներուն, չափազանց փափուկ են անոնք ու դժուարակնճիւ: Մօտերս Եգիպտոսի մէջ պիտի գումարենք շրջանային ժողով եւ այդ ժողովին օրակարգի մասին կարեւոր հարցերէն մէկն ալ այդ խնդիրը պիտի ըլլայ: Այդ մասին ուրեմն ձեզ մանրամասն կը գրենք Շրջանային ժողովէն յետոյ:

Առ այժմ սաչափ միայն ըսենք, որ ինչպէս յայտնի է ձեզ, Փրանսացի մարզիչ սպաներ մեր սուէտիացի երիտասարդներէն, թուով մօտ 300 հոգի, երկար ժամանակ եւ կանոնաւոր կերպով մարզեցին եւ ժամանակ մը եղաւ որ օրը օրին կը սպասէինք Լեոնավայրի ձեռնարկի մը³, բայց յետոյ յանկարծ լքեցին մարզանքները եւ այլեւս բան մը չխօսուեցաւ ձեռնարկի մասին: Այս օրերս դարձեալ շշուկներ կան՝ չենք գիտեր որ աստիճան հաստատ գետնի վրայ:

Դարձեալ աղաներու⁴ եւ հնչակեաններու համերաշխութիւնը՝ որ Եգիպտոսի մէջ իբրեւ գլխաւոր կռուան ունէր Լեոնավայրի ձեռնարկ մը, այս վերջերս խզուած է, որովհետեւ աղաները վերջին պահուն չեն ուզեր քալել՝ իրենց հետ ունենալով ռամկավարական ըսուած յետադիմականները, դրժեր են իրենց խոստումները, դաշնակիցներուն ըսեր են որ իրենք ոեւէ պատասխանատուութիւն չեն վերցներ եւ մերժեր են այդ գործին յատկացնել Ամերիկայէն նոյն նպատակին համար ստացւած 17000 տոլարի գումար մը:

Հնչակեաններու հետ (Ս[ոցիալ] Դ[եմոկրատ], միւսները⁵ չկան հոս) մեր յարաբերութիւնները առ այժմ շատ լաւ են. հաւանականաբար վաղը միւս օր հոգ եւս խզում առաջ գայ իրենց միջեւ: Մենք կը խորհինք որ լաւագոյն թաքթիքը որդեգրած կ'ըլլաք դուք եւս ընդ առաջ երթալով հնչակեաններուն, եթէ ոչ ուրիշ բանի համար՝ գէթ տկարացնելու համար աղայական-յետադիմական-բարեգործական անիծապարտ պլոքը, որ ամէն միջոցի կը դիմէ թունաւորելու համար ժողովուրդը եւ կասեցնելու համար անոր ազատական խոյանքը:

Լեոնավայրի եւ ուրիշ նման ձեռնարկներու մասին խնդրենք ծայրայեղ կերպով զգուշ ըլլաք եւ ոեւէ առիթով թերթի մէջ ոեւէ հրատարակութիւն չընէք:

Մեր կամաւորանպաստ հանգանակութիւնը ըստ առաջնոյն կը շարունակուի. մինչեւ հիմա ուղարկած ենք 45000 ռուբլի եւ կը շարունակենք: Նպաստամատոյցը իր ծրագրէն վերցուց կամաւորներու մասը եւ այսօր կը գործէ գաղթականներու, տարագիրներու եւ Հայաստանի վերաշինութեան համար, ինչ որ այն առաւելութիւնը ունի որ աւելորդ ընդհարումներու եւ չիֆթութիւններու տեղի չի տար եւ մենք շատ գոհ ենք իրաց այս նոր դրութենէն:

«Յուսաբեր»էն տեղեկացաք անշուշտ թէ ինչպէս վիժեցին մեր վերջին համերաշխական բանակցութիւնները: Մենք մեր հիմնական սկզբունքներուն վրայ երկաթի պէս անխախտ մնալով հանդերձ, այնպիսի վարպետ եղանակով մը առաջ տարինք բանակցութիւնները եւ «Յուսաբեր» խնդիրը ներկայացուց այնպիսի լոյսի մը տակ որ ամբողջ հասարակութիւնը վիժման յանցանքը նետեց Նպաստամատոյցին վրայ եւ Նպաստամատոյցի մասին կարեւոր անդամներէն մէկը ի նշան բողոքի հրաժարեցաւ:

– Զեր համերաշխական բանակցութիւններու մասին հրատարակած գրքոյկը չենք ստացած. խնդրենք կրկին ղրկեցէք:

– Սուէտիոյ ինքնապաշտպանութեան կռիւներու մասին նոր բան մը անկարող ենք գրելու. բաւականացէք առ այժմ մեր տեղեկագրով, որ թէեւ համառօտ բայց դարձեալ լիակատար է ինքնին:

– Պ. Երամեանի նամակը ղրկեցինք իր հասցէին:

– Ներփակ նամակ մը «Դրօշակ»ի խմբագրութենէն ձեր հասցէին ուղղուած: Զուիցերիայէն ղրկուած նամակները Փրանսայի մէջ ինչպէս կ'երեւայ ահագին արգելքներու կը հանդիպին եւ այդ պատճառով այսուհետեւ «Դրօշակ»ի խմբագրութիւնը մեր վրայով պիտի ղրկէ իր նամակները ձեզի: Դուք ալ ձեր պատասխանները այսուհետեւ ղրկեցէք մեր հասցէին եւ մենք անմիջապէս կը հասցնենք իրենց:

2.- Լեոնավայրը Կիլիկիան, Մուրիան եւ Լիքանանը ընդգրկող Հ.Յ.Դ. կազմակերպութեան ծածկանունն է:
 3.- Ակնարկութիւն Դաշնակից գործերու կողմէ կիլիկեան ծովափ էջը կատարելու ծրագրի մը:
 4.- Պահպանողական տարրերու:
 5.- Այսինքն՝ Վերակազմեալ հնչակեանները:

– Աղեքսանդրիայէն եւ Գահիրէէն արդէն «Հայրենիք»ի թղթակիցներ ինքնին ճարուած են, այնպէս որ կը կարծենք նորերուն պէտք չունիք. միայն ձեզ դիտել կու տանք որ Գահիրէի ձեր թղթակիցը մեր ընկերներէն չըլլալով՝ մէկ քանի անգամ սխալ գնահատեց անձեր եւ իրողութիւններ, ինչ որ օր մը կրնայ անտեղութիւններու պատճառ հանդիսանալ եւ հակասութեան մէջ դնել մեզ կամ ձեզ:

Սպասելով ձեր լաւագոյն լուրերուն,

Ընկերական ջերմ բարեկներով
Հ.Յ.Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԻ

Յ.Գ.- Խնդրենք, «Հայրենիք»ի խմբագրութեան իմաց տուէք որ «Դրօշակ»ի խմբագրութիւնը չի ստանար «Հայրենիք»ները. ահաւասիկ թէ ինչ կը գրեն անոնք մեզի այդ մասին.

«Հայրենիք»ի խմբագրութեան գրեցէք որ ներկայ թուի համարներից ստացել ենք միայն 1-8 համարները, որից յետոյ դադարել է, եւ խնդրեցէք մեր կողմից որ 8 համարից մինչեւ օրս լոյս տեսած «Հայրենիք»ները ուղարկեն մեր հասցէով, իսկ դուք էլ նոր պանտի տակ մեզ ուղարկէք, եւ շարունակեն այդպէս մինչեւ պայմանների փոխուելը»:

Հ.Յ.Դ. Ե[ԳԻՊՏՈՍԻ] Կ[ՈՍԻՏԻ]

Փրօֆեսորապետ
Հ.Յ. Դ- Եգիպտոս խմբագրութեան Գր. Գրաստան
22 հոկտ. 915
Լուսաբեր (Բօր - Ալեքսիոս)

Քիչաց, սքրիպա, ինչ օրէ յոյս ձեռք իրաւիք, լալթ Եգիպտոս Երաւիք
քան, Երաւիքստիւնիք լալթ Եգիպտոս և Երաւիքստիւնիք, Երաւիքստիւնիք
Եգիպտոսի Երաւիքստիւնիք Երաւիքստիւնիք լալթ Եգիպտոս:

Երաւիքստիւնիք Եգիպտոս (22) լալթ Եգիպտոս, որպէս Երաւիքստիւնիք Եգիպտոս
Երաւիքստիւնիք Եգիպտոս լալթ Եգիպտոս:

- Մ. Երաւիքստիւնիք
- Ս. Երաւիքստիւնիք
- Պ. Երաւիքստիւնիք
- Դ. Երաւիքստիւնիք
- Գ. Երաւիքստիւնիք

Երաւիքստիւնիք Եգիպտոս լալթ Եգիպտոս Երաւիքստիւնիք Եգիպտոս
Երաւիքստիւնիք Եգիպտոս, և ինչ Երաւիքստիւնիք Եգիպտոս Երաւիքստիւնիք
Երաւիքստիւնիք Եգիպտոս, որպէս Երաւիքստիւնիք Եգիպտոս Երաւիքստիւնիք
Երաւիքստիւնիք Եգիպտոս Երաւիքստիւնիք Երաւիքստիւնիք Երաւիքստիւնիք
Երաւիքստիւնիք:

Երաւիքստիւնիք Եգիպտոս (3):

Փաստ. 1047-69

7.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՈՒԷՏԻՈՅ ՀԱՅՈՑ ԱՊՍԱՄԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՐՈՅԻՆ)

Սուէտիա.— Սուէտիոյ հայկական շրջանը բաղկացած է եօթը հայաբնակ գիւղերէ, կառավարական կեդրոն ունենալով Լէվշիէն՝ ուր գրեթէ հայեր չկան: Այդ 7 հայ գիւղերն են, Եռզուն-Օլուք (300 տուն), Հաճի Հապիպի (300 տուն), Քէպուսիէ (250 տուն), Պիթիա (180 տուն) Խրտըր պէյ (160 տուն), Վաքըֆ (80 տուն), Էզուր (50 տուն):

Սուէտիոյ շրջանը մաս կը կազմէ Անտիոքի միւթե-սարըֆութեան, կը գտնուի Անտիոքի հարաւ-Արեւմտեան կողմը՝ ծովեզերքէն մօտ մէկ երկու ժամ դէպի ներս. 10 ժամուայ հեռավորութեամբ եւ Որոնդէս գետով բաժնուած է Քեսապի շրջանէն եւ ունէր մօտ 7000 հայ բնակչութիւն:

Յեզ. կազմակերպութիւնները Սուէտիոյ մէջ.— 95-96 թուականներուն եւ անկից առաջ, Հնչակեան կուսակցութիւնը ներկայացուցիչներ դրկած եւ կազմակերպել աշխատած է շրջանը, եւ սակայն այդ կազմակերպութիւնները տեւականութիւն չեն ունեցած եւ քանդուած են գործիչներու մեկնումէն յետոյ: Վերակազմեալ հրնչակեան կուսակցութիւնը նոյնպէս բաւական մեծ ջանք թափած է կազմակերպելու համար Սուէտիան, բայց առաջիններէն աւելի մեծ արդիւնք մը չէ կրցած ձեռք բերել: Սահմանադրութենէն ասդին, այդ երկու կուսակցութիւնները, արդէն իսկ պառակտուած ու կազմալուծուած, ոչ մէկ ուշադրութիւն դարձուցած են այդ շրջանին վրայ, այնպէս որ ներկայ պատերազմի սկիզբը Սուէտիոյ մէջ գոյութիւն ունեցած են Վերակազմեալ եւ Հին հնչակեան անհատ կուսակցականներ միայն:

Դաշնակցութիւնը մտած է Սուէտիոյ մէջ Սահմանադրութենէն մէկ քանի տարի առաջ միայն՝ առանց մեծ յաջողութիւն մը ունենալու: Սահմանադրութենէն վերջն է որ ստեղծուած է կանոնաւոր կազմակերպութիւն, ենթակոմիտէի ցէնզով եւ անունով: Այդ մարմինը կանոնաւոր կերպով շարունակած է իր գործունէութիւնը մինչեւ պատերազմի սկիզբը եւ ապստամբութեան շրջանին՝ կանոնաւոր կերպով կապ պահելով Հ.Յ.Դ. Քեսապի շատ աւելի կարեւոր ենթակոմիտէին հետ: Աւելորդ չէր ըլլար թերեւս ըսել որ Դաշնակցութեան վերջին Ընդհանուր ժողովին Կիլիկիոյ պատգամաւորը քեսապի եւ Քեսապի կազմին պատկանող երիտասարդ բժշկական ուսանող մըն էր, Աւետիս Ինճէ-ճիքեան, որ յաջողելով իր շրջանը վերադառնալ՝ Ընդհ. ժողովի մասին պէտք եղած տեղեկութիւնները տուած

էր իր շրջանի եւ Սուէտիոյ ընկերներուն: Դաշնակցութեան Սուէտիոյ ենթակոմիտէն իր 5 տարուայ անբասիր եւ նպատակաշարժար գործունէութիւնովը ժողովրդական լայն խաւերու վստահութիւնը լիովին շահած եւ բարոյական մեծ հեղինակութիւն ձեռք բերած է: Ոգի ի բռին մաքառած է երթալով լայն ծաւալ ստացող գողութեան դէպքերու դէմ, հետապնդուած ու բռնած է կարգ մը գողութեան հեղինակներ եւ յաջողած է գրեթէ ամբողջովին անոնց առաջը առնել: Այս յաջողութիւնը բնականաբար շատ նպաստած է Դաշնակցութեան վարկի հաստատմանը: Տեղական ենթակոմիտէն պահած է նոյնպէս կանոնաւոր ընթերցասրահ մը:

Սուէտիոյ ենթակոմիտէն, համախորհուրդ Քեսապի մարմնին հետ, գլխաւորաբար ուժ տուած է շրջանին ինքնապաշտպանութեան գործին: Վերջին հինգ տարուայ ընթացքին, ուղղակի իր միջոցներով եւ Քեսապի ենթակոմիտէի խողովակով Սուէտիա մտցուցած է հարիւր քառասուն յունական «կրա» հրացան, բաւականաչափ փամփուշտով:

Մեկնելով այն շատ իրաւացի հիմնակէտէն, զոր Դաշնակցութիւնը որդեգրած է գրեթէ ամէն տեղ, թէ զէնքի համար դրամ վճարող հայը միայն այդ զէնքին յարգը կը ճանչնայ եւ ձրիաբար բաժնուած զէնքերը ընդհանրապէս գիւղացիները կը ծախեն իրենց թուրք ու քիւրտ դրացիներուն, Սուէտիոյ ենթակոմիտէն, շատ աժան գինով եւ վճարումի ահագին դիւրութիւններով այդ զէնքերը ծախած է գիւղացիներուն: Կոտորելու համար մեր կուսակցութեան վարկը, եւ Սուէտիոյ փառաւոր ինքնապաշտպանութեան կռիւներուն դափնիները իրենք խլելու համար (ի՛նչ տգեղ մտայնութիւն), մեր հակառակորդները այսօր կ'ըսեն թէ Դաշնակցութիւնը պարզապէս զէնքի վաճառականութիւն ըրած է, ուրիշ ոչինչ, եւ ատոր մէջ ոեւէ արժանիք չկայ:

Իրականութիւնը այն է սակայն, որ Հայէպի մէջ 1 կրա հրացանը վեց օսմանեան ոսկի արժած ժամանակ, Դաշնակցութիւնը Սուէտիոյ [մէջ] չորս ֆրանսական ոսկի բաժնած է իր զէնքերը՝ ամսական կամ նոյնիսկ շաբաթական չնչին վճարումներով եւ մինչեւ երկու տարի պայմանով: Իրականութիւնը հոն է դարձեալ որ մեր ընկերներու մտցուցած զէնքերէն դուրս հնչակեանները իրենց համար 7 հրացան միայն մտցուցած են, եւ ան ալ երկար աշխատութիւններէ, ու գլուխին չորս կողմ զարնելէ յետոյ՝ նորէն մեր ընկերներուն միջոցաւ

ձեռք բերած են:

Մենք չպիտի ուզէինք այս տեղեկագրին մէջ տեղ տալ այս տգեղ մանրամասնութիւններուն, որոնք ստուեր կը ձգեն Սուէտիոյ ապստամբութեան վրայ: Հակառակորդները այն աստիճան լրբութիւն կը դնեն շահագործելու համար հայ ազատագրութեան կռիւներու այս գեղեցիկ դրուագը, որ մենք ստիպուած՝ գոնէ ուզեցինք մեր ընկերները գիտակ պահել իրականութեան:

Եւ իրականութիւնը այն է որ, եթէ նոյնիսկ մէկ կողմ ձգենք ժողովուրդը համոզելու, կռիւները վարելու եւ դիմադրութիւնը կազմակերպելու համար Սուէտիոյ դաշնակցական ենթակոմիտէին կատարած նախաինամական դերը, չըջանք իր փրկութիւնը կը պարտի դարձեալ ու միմիայն Դաշնակցութեան ջանքերովը հոն մտցուած հրացաններուն:

Արդէն, Սուէտիոյ առաջնորդական փոխանորդ Տէր Աբրահամ քհնյ. [Տէր] Գալստեանի բացարձակ վկայութեամբ, «եթէ չըլլար Հ. Յ. Դաշնակցութեան Սուէտիոյ մարմինն հինգ տարիէ ի վեր չըջանին ինքնապաշտպանութեան համար թափած ջանքերը, Սուէտիան մեռած էր այսօր»:

Գաղթի հրամանը.— Գաղթի հրամանը տրուած է Անտիոքի կառավարութեանէն, յուլիս 17/30ին, միաժամանակ Քեսապի եւ Սուէտիոյ հայ գիւղերուն՝ եօթը օրուայ պայմանաժամ տարով անոնց: Բնականաբար պաշտօնական ծանուցագիրը խմբագրուած էր խիստ մեղմ ու քաղաքավարի կը խոստանար աղքատներուն օգնել, ճամբուն պէտք եղած դիւրութիւնները տալ եւ իրենց նոր գաղթավայրին մէջ հանգիստ կերպով տեղաւորել գիրենք:

Բարեբախտաբար, մինչեւ գաղթի հրամանը տրուելը, Սուէտիացիք մանրամասնօրէն իմացած էին արդէն Ձէյթունի, Տէօթ-Եոլի եւ ամբողջ չըջանի տեղահանութեան ու գործուած սարսափներուն մասին, այնպէս որ, նոյնիսկ հրամանը դեռ չստացուած, յեղափոխական տարրերը քանի մը անգամ փորձած էին պարզել ապրտամբութեան դրօշակը: Ամէն պարագայի մէջ անոնք մտքերը պատրաստած էին արդէն, եւ ժողովուրդը գիտէր թէ ինչ կը սպասէ իրենց եթէ անսան տեղահանութեան հրամանին:

Հոս պէտք է ըսենք թէ մեր ընկերներուն ամէն կերպով օգնած են հնչակեաններն ու Վերակազմեալները եւ եղեր է ժողովուրդը համոզելու գործին մէջ, եղեր է ինքնապաշտպանութեան կռիւներու ամբողջ ընթացքին՝ բացարձակ ու կատարեալ համերաշխութիւն տիրած է ամբողջ յեղափոխական տարրերուն միջեւ:

Յուլիս 19-1 Օգոստոսին, լուր կը հասնի որ Քեսապի ծովեզերեայ Քարատուրան գիւղի հայերը՝ արդէն որոշում տուած են գաղթելու: Օրինակը կրնար վարակիչ ըլլալ՝ հետեւաբար պէտք էր աճապարել:

Սուէտիոյ աղաները ժողով կը գումարեն եւ կ'որոշեն առաջնորդական փոխանորդ Տէր Աբրահամ քահանան քանի մը ընկերներով Անտիոք դրկել՝ տեղակալին եւ քաղաքին երեւելիներուն միջոցաւ գաղթականութեան առաջըր առնելու համար:

Փոխանորդը ճամբայ կ'իյնայ դէպի Անտիոք. աղաները նոր ժողով կը գումարեն որոշում մը կայացնելու համար, ու մեր տղաքը կը գործեն՝ որովհետեւ խօսքի ժամը անցած էր արդէն եւ պէտք էր գործել:

Սուէտիա ապստամբ.— Եօթը օրուայ պայմանաժամը դեռ չըրացած, վախնալով որ օր առաջ կառավարութիւնը կը ձեռնարկէ գիւղերը պաշարելու, եւ միեւնոյն ժամանակ օրինակ հանդիսանալու համար տատամսող զանգուածներուն, Հ. Յ. Դաշնակցութեան Սուէտիոյ մարմինը կ'որոշէ պարզել ապստամբութեան դրօշակը՝ համաձայն յեղափոխական միւս բոլոր տարրերուն հետ: Այն երկու գիւղերը ուր ամէնքէն աւելի զօրաւոր կերպով ծաւալած էին յեղափոխական առողջ գաղափարները՝ Եոթուն-Օլուք եւ Խտըր-Պէկ, ամբողջովին կը միանան յեղափոխականներուն: Իրենց կը միանայ Վաքըֆ գիւղի ամբողջ բնակչութիւնն ալ՝ համոզուած եւ առաջնորդուած մեր ընկեր Թոմաս Այնթապեանէն: Եւ այս երեք գիւղերը ամբողջ բնակիչները, այր, կիւն, ծեր, մանուկ, ամէնքն ալ առանց բացառութեան, իրենց գլուխը ունենալով Դաշնակցութիւնը եւ տեղոյն միւս յեղափոխական տարրերը, կը ձգեն իրենց տունն ու տեղը եւ կը բարձրանան դէպի Մուսա-Տաղ, իրենց հետ տանելով պէտք եղած պաշարը եւ անհրաժեշտ կահ կարասիքը՝ հակառակ Միւտիոյն յորդորներուն եւ սպառնալիքներուն:

Առաջնորդական փոխանորդ Տէր Աբրահամ քահանան Անտիոքէ ձեռնունայն եւ յուսահատ վերադարձին երբ կը լսէ ժողովուրդին լեռ բարձրացած ըլլալը, ինքն ալ անմիջապէս կը փութայ հետեւի իր քաջարի հօտին: Տէր հօր տուած այս գեղեցիկ օրինակին վրայ, «Պիթիաս» եւ «Հաճի-Հապիպի» գիւղերը ժողովուրդը մեծ մասամբ, իսկ «Էգուր»՝ ամբողջովին, կը հետեւին ապրտամբական շարժումին եւ կը քաշուին դէպի Մուսա-Տաղ: Լեռը բարձրացողներուն կ'ընկերանան միւս բոլոր քահանաներն ալ, ինչպէս նաեւ Ձէյթունէն դարձող եողուն-օլուքցի պատ[ուելի] Տիգրան Անդրէասեանը՝ որ առաջին լուրը բերած էր Ձէյթունի դժբախտ իրադարձութեանց:

Միայն «Քէպուսիէ» գիւղն է որ գրեթէ ամբողջութեամբ կը մնայ, ոչ մէկ գնով չուզելով միանալ ապրտամբներուն եւ իր ետեւէն քաշելով «Պիթիաս» եւ «Հաճի-Հապիպի» գիւղերէն 60-70 ընտանիք: Մնացողները, թուով մօտ 2000 հոգի, կը տարագրուին, եւ կասկած չկայ որ կառավարութիւնը ապստամբներուն վրէժը այս դժբախտ հայերէն առած ըլլայ:

Չէնք եւ ռազմամթերք.— Ինչպէս ըսինք, ամբողջ Սուէտիոյ շրջանին մէջ իբր քիչ շատ արժէք ներկայացնող պատերազմական գէնք կը գտնուէր միայն Դաշնակցութեան մտցուցած 140 կուս հրացանը եւ հնչակեաններու 7 կրաները: Ասոնցմէ միայն 85 կրաներ գտնուած են ապստամբներուն ձեռքը՝ մնացածները գաղթողներու պատկանելով չգտնուած՝ եւ կամ աղաներու պատկանելով հոս հոն անգտանելի տեղեր թաղուած ըլլալով: Պատերազմական գէնքերէ դուրս եղած են 150-200-ի չափ հին որսի հրացաններ (չիֆթէ եւ չախմախը):

Սուէտիացի գէնք կրելու ընդունակ հայերու թիւը 7-800 հոգի կ'ըլլէ, բայց գէնքի չգոյութեան պատճառով հազիւ 3-400 հոգի իրապէս մասնակցած են կռուին (միւստամանակ): Իսկ շատ անգամ ալ անձրեւի կամ ծայրայեղ խոնավութեան օրերու մէջ վառօդը թրջած ըլլալով, որսի հրացանները չեն բաւած եւ մինակ 85 կրայով է որ ինքզինքնին կրցած են պաշտպանել:

Իբրեւ ռազմամթերք Դաշնակցութիւնը կռուողներուն տրամադրած է 4000 կրայի փամփուշտ եւ 76 քիթ վառօդ: Հնչակեաններն ալ իրենց կողմէն տրամադրած են 2000 փամփուշտ եւ 30 քիթ վառօդ:

Այս թիւերուն վրայ պէտք է աւելցնել կռուներու ընթացքին թշնամիէն գրաւուած 10-ի չափ մավզէրը եւ 10.000ի չափ փամփուշտը:

Կազմակերպութիւն.— Սուէտիոյ ինքնապաշտպանութեան հերոսական կռուներուն կազմակերպական մասը եւ առ հասարակ մերիներուն կատարած դերը, Աղեքսանդրիոյ «Արեւ» թերթին մէջ, որուն մեզ հանդէպ տածած զգացումները յայտնի են, ծայրայեղօրէն չարափոխուած ըլլալով, մենք թէեւ չուզեցինք հրապարակաւ ճշտումներ կատարել, փոքրօգուծիւն սեպելով այդ բանը, սակայն կ'ուզենք որ գէթ մեր ընկերները տեղեակ ըլլան բուն իրականութեան:

Առաջին երեք ընդհարումներու ընթացքին, զինուորական գործողութիւններու գերագոյն ղեկավարը եղած է, ընդհանուր հսկիչ (սէվքիէթ ըէիսի) անուան տակ, եւ ժողովրդին կամքովն ու ընտրութեամբը, Հ.Յ.Դ. Սուէտիոյ ենթակոմիտէի ներկայացուցիչ մեր ընկեր Մովսէս Տէր Գալուստեանը՝ իրեն օգնական ունենալով ընկ. Սերոբ Շէրպէթճեանը եւ պ. Տիգրան Իբրաճեանը:

Իսկ ժողովրդեան պէտքերը հոգալու եւն., ըսենք մատակարարական ճիւղին համար, ընտրուած է 13 հոգիներէ բաղկացած մարմին մը (Մէճրիս) անուան տակ՝ առնուած կռիւի բոլորովին անընդունակ աղաներէն եւն.:

Երրորդ ընդհարումէն յետոյ, երբ տեսնուած է որ թշնամի մէկէ աւելի տարբեր եւ իրարմէ շատ հեռաւոր կէտերէ կը սկսի յարձակիլ, որոշուած է կռուողները եւ

ժողովուրդն ալ բաժնել երեք կէտերու վրայ: Այդ ձեւին տակ, միակ ղեկավարի մը անկարելի ըլլալով կռիւը վարել, որոշուած է նշանակել ընդհ. հսկիչներ, որոնք եղած են

- 1.- Գօջճիչաղի համար (Գրգիլճան?), ընկեր Մովսէս Տէր Գալուստեան
- 2.- Տամլաճրքի համար, Եսայի Աբրահամեան եւ Տիգրան Իբրաճեան
- 3.- Գաբլան Տուչախի համար, Յաբէթ Իսկենտէրեան (հնչ.)

Այս ընդհանուր հսկիչներու ձեռքին տակ գտնուած են ոստիկանական մարմիններ (գուվէյի ճէպրիէ) անուանին տակ:

Գօջճիչաղի համար, ընկ. Պետրոս Աղամեան, ընկ. Տիգրան Աբրահամեան, Միհրան Գազանճեան, Աւետիս Իգնատիոսեան, Պետրոս Տուտազլեան, Յակոբ Պոյաճեան:

Տամլաճրքի համար՝ ընկեր Թովմաս Այնթապեան, Եսայի Եաղուպեան, Պետրոս Տեմլաքեան եւ Պետրոս Գալուստեան:

Իսկ Գաբլան Տուչախի համար՝ Գիվալի, Գիգալիի եղբայրը եւն.:

Ինչպէս կը տեսնուի Տամլաճրքի ոստիկանական մարմինն է որ «Արեւ» կը ներկայացնէ իբր զինուորական գերագոյն մարմին, առանց մոռնալու այդ մարմնոյ կազմէն նախապէս դուրս ձգել Թովմաս Այնթապեանը՝ որովհետեւ այս վերջինը դաշնակցական մըն է:

Ուզմաբեմին գիրքը.— Սուէտիոյ հայերը, ինչպէս ըսինք, իրենց զիւղերը պարպելով կը քաշուին դէպի Սուսա Տաղ (Ճէպէլ Միսիս): Սուսա տաղը կը կազմէ Ամանոսեան լեռնաշղթային վերին օղակը, դէպի ծով, եւ կը գտնուի Սուէտիոյ հիւսիսային կողմը: Մէկ կողմ ձգելով իր սեպ կողերն ու բարձրաբերձ, անառիկ կատարները, Սուէտացիներու ընտրած ռազմաբեմը, ինքնապաշտպանութեան կռուներու համար կը ներկայացնէր ուրիշ թանկագին առաւելութիւն մը: Սուսա Տաղի կողերն ամբողջ ծածկուած ըլլալով ամենախիտ, անթափանցելի անտառներով, թուփերով ու մացառներով, ուր արեւուն լոյսն իսկ դժուարաւ կը մտնէ եւ ուր գիւղացիներն անգամ մոլորելու վախով կը զգուշանային առաջանալ, յարձակող բանակը պարտաւոր էր բարձրանալ գոյութիւն ունեցող երեք ճամբաներէ՝ ինչ որ շատ կը դիւրացնէր պաշտպանողներուն գործը եւ անկարելի ըլլալու աստիճան դժուարին կը դարձնէր յարձակողներու վիճակը:

Ընդհարումները.— Սուէտիոյ ինքնապաշտպանութեան հերոսական կռուները, որոնք երբեմն կանոնաւոր ճակատամարտերու համեմատութիւնները առած են եւ որոնք պիտի կազմեն մեր յեղափոխութեան ու ա-

գատագրութեան պատմութեան ամէնէն փառաւոր էջերէն մէկ քանին, թէեւ կ'արժէր որ մանրամասնօրէն գրի առնէինք, բայց մեր նպատակը չըլլալով Սուէտիոյ ապստամբութեան պատմութիւնը գրել, եւ մեր տեղեկագրին մասնաւոր նպատակը նկատի ունենալով, զանց կ'ընենք մտնալ անոնց մանրամասնութիւններուն մէջ եւ կը բաւականանանք իրենց լայն գծերուն մէջ տալ գլխաւոր ընդհարումներու էական կէտերը:

Ա. ընդհարում.— Առաջին ընդհարումը տեղի ունեցած է Օգոստոս 8-ին: Թուրքերը 200 զինուորով յարձակած են Եօլ-Աղզը ըստած ճամբէն: Հակառակ անոր որ հայերը իրենց պարտաւորութիւնները եւ կազմակերպութիւնը չէին լրացուցած տակաւին, կրակ բացած են անմիջապէս թուրքերուն վրայ եւ հալածած են զանոնք մինչեւ Գապաքը թրքաբնակ գիւղը՝ անոնցմէ սպաննելով 7-8 հոգի:

Տեղւոյն եւ ռազմական գործերու ծանօթ հայերու կարծիքը այն է որ, եթէ սուէտիացիք իրենց պատրաստութիւնները վերջացուցած ըլլային այդ ընդհարումէն առաջ, եւ անմիջապէս կրակ չբանային, կարող էին շարել այդ 200 զինուորը եւ ամէնքը մէկանց գերի վերցընել,՝ ինչ որ առջի օրէն իսկ 200 մաւզէր կ'աւելցնէր իրենց 85 կրաներուն վրայ եւ իրենց գերակշռութիւնը կ'ապահովէր միանգամընդմիշտ:

Բ. ընդհարում.— Երկրորդ ընդհարումը տեղի ունեցած է Օգոստոս 10-ի լուսաբացին, Պաքաճը կոչուած կէտէն: Թրքական ուժերը, բաղկացած մօտ 1500 կանոնաւոր զինուորներէ, իրենց հետ ունենալով երկու թընդանօթ, եւ առաջնորդուած անտառին բոլոր արահետներուն եւ լեռան դիրքերուն ծանօթ թիւրքմէններէ, կը յարձակին կատաղօրէն հայ փոքրաթիւ պահակներուն վրայ: Առտուայ կէս խաւարին եւ թանձր մառախուղին պատճառով, մերերը յանկարծակիի եկած, կը ստիպւին տեղի տալ եւ թուրքերը կը յառաջանան՝ մաւզէրի եւ թնդանօթի հարուածներով ծածկելով կռուողներուն դիրքերը:

Հակառակ տեղացող անձրեւին, որ վառօդը թրջելով անգործածելի կը դարձնէ որսի հրացանները, հայերը, իրենց կրաներովը միայն, հերոսաբար կը կռուին եւ թշնամին 13 ժամ անդադար թէեւ կրակ կը տեղացնէ մերիններուն դիրքերուն վրայ, բայց իր առաջին գրաւած կէտէն քայլ մը իսկ առաջ չի կրնար անցնիլ:

Գիշերը վերջ կը դնէ կռուին, եւ յաջորդ առաւօտ հայերը կը տեսնան որ թռնամին խոյս տուած է, իր հետ տանելով իր վիրաւորները՝ եւ պատերազմի դաշտին վրայ ձգելով բազմաթիւ դիակներ՝ որոնց թուին սպայ մըն ալ:

Գ. ընդհարում.— Օգոստոս 11-էն 14 նոր ընդհարումներ տեղի չեն ունենար: Թուրքերը առաջին երկու ընդ-

հարումներէն խրատուած, Անտիոքէն, Քեսապէն ու Պելանէն զինուոր բերել կու տան, առնուազն 2000 հոգի եւ չորս կողմէն կը հաւաքեն թուրք, թիւրքմէն, ֆելլահ եւ արաբ զինուած պաշարօգուներ՝ թուով առնուազն 2-3000-ի չափ՝ որոնք կը դրուին 131րդ զօրաբաժնի հրամանատար հազարապետ Րիֆաթ պէյի հրամանին տակ:

Հակառակ այդ պատկառելի ուժին, թուրքերը կ'աշխատին ծուղակը ձգել սուէտիացիները, եւ հազարապետ Րիֆաթ մէկ կողմէն, միւս կողմէ զինուորական բժիշկ Բենիամին Հեքիմեան, կ'աշխատին համոզել հայերը որպէսզի վար դնեն զէնքերը եւ անձնատուր ըլլան՝ ամէն տեսակ խոստում շուքելով անոնց: Հայերը սակայն պատասխան մինչեւ անգամ չեն տար անոնց գրութիւններուն՝ բացարձակապէս որոշելով պատուաւոր մահով մը մեռնիլ:

Օգոստոս 15-ին, 4-5000 կանոնաւոր եւ անկանոն զօրքերէ բաղկացած բանակ մը 5 տարբեր կէտերէ կատաղօրէն կ'արշաւէ հայոց վրայ՝ նպատակ ունենալով հայոց կեդրոնը գրաւել: Գլխաւոր յարձակումը կը կեդրոնանայ Թաթար Ալանկի դիրքին վրայ՝ ուր տեղի կ'ունենան հոմերական գիրկընդխառն կռիւներ: Թուրքերը, որոշած միանգամ ընդ միշտ վերջ դնել կռուին՝ յամառօրէն կը յառաջանան՝ համազարկերով եւ ուժամբերու տարափով մը աշխատելով շքմեցնել եւ փախուստի մատնել Սուէտիոյ կտրիճ մարտիկները՝ որոնք հերոսաբար կուրծք կու տան գրոհին: Իրիկուայ դէմ, քէպուսիէցի երկու դաւաճան հայերէ առաջնորդուած, 500 զինուորներ, կռուողներուն իսկ անձանօթ շաւիղէ մը անցնելով, յանկարծ անսպասելի կերպով երեւան կու գան եւ կրակ կը բանան ժողովրդեան հիւղակներուն վրայ: Խուճ մը կտրիճներ կը սուրան դէպի այն կողմ, կը յաջողին ողջ ողջ բռնել հայ առաջնորդները (որոնք քիչ յետոյ հրացանի կը բռնուին) եւ փախուստի կը մատնեն զինուորները:

Մուլթը կը կոխէ ու կուր կը շարունակուի տակաւին: Յանդուզն կռուողներու խումբ մը անտառին անծանօթ ճամբաներէն սողոսկելով կը յառաջանայ, կը մտնէ թուրքերուն կեդրոնը եւ յանկարծ, մուլթին մէջ, կրակ կը բանայ անոնց վրայ: Թուրքերը, շուարած եւ պաշարումէ վախնալով, կը ցրուին անտառներուն մէջ եւ կրակը կը դադրեցնեն:

Այս կարեւոր ընդհարման միջոցին թուրքերը կ'ունենան 100-է աւելի մեռեալ եւ մօտ 150 վիրաւոր: Մերերը կը գրաւեն չորս մաւզէր եւ 1-2 հազար փամփուշտ:

Դ. ընդհարում.— Յաջորդ առաւօտ, Օգ. 16-ին, թըշնամին կը կրկնէ իր յարձակումը, աւելի մեծ թափով եւ կատաղութեամբ: Փողերը կը հնչեն, «արշ»երը կը գոռան, ուժամբերը կրակ կը տեղան անդադար: Կէսօրէն յետոյ թնդանօթները կը յաջողին լիովին քանդել հայերու գլխաւոր պատնէշները: Հայերը կը ստիպուին այդ

պատճառով ձգել այդ պատնէշները եւ բլուր մը պարպելով ետ քաշուիլ: Թուրքերը քաջալերուած, աւելի կատաղօրէն առաջ կը վազեն, կը մօտեցնեն թնդանօթները եւ կը յաջողին մինչեւ զօրանոցին (հայոց) առջեւը եւ ժողովուրդին վրայ ուռմբ ու զնդացիր տեղացնել: Պէտք կ'ըլլայ զօրանոցը պարպել ու ժողովուրդը հեռացնել: Կռուողներն ալ ետ կը քաշուին եւ դիրք կը բռնեն ձորի մը միւս կողմը գտնուող իրենց վերջին պատնէշներուն ետին, որոնք խիստ լաւ ծածկուած էին: — Քիչ յետոյ թուրք բանակը, անցնելով հայոց նախկին դիրքերուն վրայէն, իր յաջողութենէն գինովցած եւ ապահովուած, կը մտնէ ձորին մէջ: Կռուողները կը ձգեն որ մօտենան անոնք, եւ յանկարծ ամէնքը մէկանց դժոխային կրակ մը կը բանան: Թնդանօթաձիգներուն բոլորն ալ կը սպաննուին, կը սպաննուի նաեւ հրամանատարը հարիւրապետ Հիւսէին Էֆենտի եւ վայնասունը կը բարձրանայ բանակին մէջ: Խուճապը կատարեալ կը դառնայ, երբ սուէտիացի քաջերը յաջող կերպով քանի մը ձեռնառումը կը պայթեցնեն թուրքերուն գլխուն եւ ահագին բանակը չարաչար պարտութեան մատնուած բռւ մը հերոսներու կողմէ, փախուստի կը դիմէ:

Թուրքերը այդ օրը կ'ունենան մօտ 150 մեռել, 200-ի չափ վիրաւոր, եւ հայոց ձեռքը կը ձգեն 7 մաւզէր հրացան եւ 3000 փամփուշտ: Ասոնցմէ դուրս թրքական բանակը 500-ի չափ կորսուած կ'ունենայ (կը կարծուի թէ այդ 500 հոգին իրենց տունները փախած ըլլան սարսափահար):

Զինագաղար.— Օգոստոս 15-ի եւ 16-ի մեծ ընդհարումներէն յետոյ, որոնց միջոցին թուրքերը տուած էին 1000-է աւելի մեռած, վիրաւոր եւ կորսուած, թուրքերը կը ստիպուին դադարեցնել յարձակումները եւ մինչեւ սեպտ. 9 չեն համարձակիր նոր յարձակում գործել:

Այդ միջոցին, սուէտիացիք կը սկսին արտաքին օգնութեան մը վրայ խորհիլ, որովհետեւ իրենց ռազմամթերքը եւ ուտելիք պաշարը հատնելու վրայ ըլլալով, պարզ էր որ յաւիտենապէս չէին կրնար դիմադրել իրենց լեռներուն վրայ:

Ուտելիքի խնդիրը որոշ չափով կը կարգադրեն 100-ի չափ կտրիճ երիտասարդներ՝ խումբերու բաժնուած շրջակայ թուրք գիւղերը գարնելով եւ կողոպտելով: Իսկ արտաքին օգնութիւն մը ձեռք բերելու համար նախ Տամլաճըքի ծովահայկաց բարձրութեան վրայ հսկայ ճերմակ դրօշակ մը կը կանգնեն՝ մէջտեղը կարմիր խաչով մը եւ անոր մօտն ալ ուրիշ նոյնքան հսկայ դրօշակ մը՝ վրան դիտակով հեռուէն կարգացուցելու չափ խոշոր տառերով գրուած՝ «Մենք հայ ենք, օգնեցէ՛ք մեզի»: Այդ դրօշակներուն մօտ եւ ծովեզերքը կը դրուին պահակներ՝ իրենց մօտ ունենալով անգլիերէն լեզուով պատրաստուած խնդրագիր մը՝ որը պիտի աշխատէին հասցնել առաջին հանդիպած մարտանաւին:

Տեսնելով որ Սուէտիոյ առջեւէն մարտանաւեր չեն անցնիր, կռուողները երկու անգամ կը յաջողին մարդ զրկել, գինուորական շղթան կտրելով, մինչեւ Իսկէնտերուն, տեսնելու համար որ հոն մարտանաւեր չկա՞ն եւ ըլլալու պարագային՝ աշխատելու համար անոնց հետ յարաբերութեան մտնել:

Գնացողները երբ յուսահատ կը վերադառնան, սուէտիացիք այս անգամ կը մտածեն Կիպրոսի հետ յարաբերութեան մտնալ (մերձաւոր եզերքը մօտ 70 մղոն հեռաւորութիւն ունի թրքական ափերէն), եւ այդ նպատակով կը ձեռնարկեն լաստափայտի մը շինութեան:

Բայց լաստափայտին շինութիւնը դեռ չաւարտած ծովուն վրայ կ'երեւայ Փրանսական ազատարար շոգենաւը, Կիչէն գրահաւորը, որ կարմիր խաչը եւ միւս դրօշակը հեռուէն նշմարելով կը մօտենայ Սուէտիոյ ափերուն, եւ յարաբերութեան մէջ կը մտնէ ապստամբներուն հետ (Սեպտ. 5):

Հետաքրքիր էին հպարտ սուէտիացիներու խնդիրքները, որոնք փոխանակ «Ի սէր Աստուծոյ մեզի ազատեցէ՛ք», ըսելու, կը խնդրէին.

- 1.- Իրենց տալ պէտք եղած գէնքը, ռազմանիւթը եւ ուտելիքը՝ որպէսզի կարողանան մնալ իրենց սեփական հայրենիքին մէջ եւ շարունակել իրենց կռիւը:
 - 2.- Հակառակ պարագային (բայց հակառակ պարագային միայն), փոխադրել գիրենք ազատ վայր մը:
- Նաւապետը կը համակրի այդ քաջերուն, կը խոստանայ պէտք եղած դիմումները կատարել եւ իր իսկ պատասխանատուութեան տակ եւ հայերու ցուցմունքով կը ռմբակոծէ Քէպուսիէ գիւղը՝ ուր թուրք կառավարութիւնը իսլամ մուհաճիրներ լեցուցած էր, լեղապատառ փախուստի մատնելով զանոնք:

Անթիլ հեռագրով գրահաւորը տեղեկութիւն կու տայ Բօր-Սալիտի ծովակալ-նաւին, որ յաջորդ օրը կու գայ եւ կը մեկնի կեդրոն՝ սուէտիացիներու տեղափոխման համար պէտք եղած բանակցութիւնները վարելու:

Հինգերորդ ընդհարում.— Քէպուսիէի ռմբակոծումը որոշ կերպով ցոյց կու տայ թուրք իշխանութեանց, թէ հայերը յաջողած էին յարաբերութեան մտնել մարտանաւին հետ: Այդ պատճառով կառավարութիւնը կ'որոշէ վերջին փորձ մը ընել, խորտակելու համար հայերու դիմադրութիւնը եւ Սեպտ. 9-ին, անձնատուութեան գուր հրակէրէ մը յետոյ, արաբներու եւ պաշարագուքներու հսկայ բանակ մը, իրենց ետին ունենալով կանոնաւոր բանակը, Գապաքլլի եւ Շէյխ-Եուրտուի կողմէն կը յարձակուին կատաղօրէն. հայերը թոյլ կու տան որ անոնք յառաջանան մինչեւ այն կիրճը՝ որուն ետեւ անառիկ պատնէշներ շինած էին իրենք, եւ յանկարծ խիստ մօտէն կրակ կը բանան անոնց վրայ՝ մահ սփռելով անոնց շարքերուն մէջ: Թուրքերը շփոթած երբ կը սկսին ետ քաշուիլ, մեր քաջերը դուրս կու գան

իրենց պատնէշներէն եւ գրոհ կու տան թշնամիին վրայ ու կը հետապնդեն զանոնք մինչեւ Գապաքը:

Կռուի ընթացքին Սուէտիոյ առջեւ կ'երեւան դարձեալ Ֆրանսական զրահաւորները եւ առիթը կ'ունենան աչքով տեսնալու հայոց դիւցազնական դիմադրութիւնը՝ որուն վրայ զմայլանքով կը պատմեն մինչեւ հիմա:

Ռմբակոծում.— Յաջորդ առաւօտ կանուխ (Սեպտ. 10), Ֆրանսական նաւատորմը կրակ կը բանայ թրքական դիրքերուն դէմ եւ հայերու ցոլցմունքներուն վրայ կը ումբակոծէ Լեվշիէն՝ քանդելով զօրանոցն ու քաղաքապետական շէնքը, Գապաքըի թուրք բանակատեղին եւն., մեծ վնաս պատճառելով թշնամիին:

Այս ումբակոծման ընթացքին, երբ թուրք զինուորները սարսափահար կը փախչէին, հայերն ալ վերէն հրացանի կը բռնեն զանոնք եւ կը հալածեն՝ կոտորելով անոնցմէ շատերը:

Վերջին ընդհարում.— Սեպտ. 11-ին հայ պահակները իմաց կու տան որ թշնամին նոր յարձակման պատրաստուելու համար կը համախմբուի: Առանց սպասելու թուրքերու յարձակողականին, հայ կտրիճները, քաջալերուած իրենց նախկին յաջողութիւններէն եւ նաւատորմին ներկայութենէն, իրենք նախայարձակ կը հանդիսանան եւ գրոհ կու տան, անտեղիտալի թափով մը, Եօղուն-Օլուքի վրայ, կը կոտորեն ու փախուստի կը մատնեն թշնամին՝ վանելով զայն իրենց սահմաններէն:

Այս ընդհարումը վերջինը կ'ըլլայ ու կը փակէ Սուէտիոյ ապստամբութեան փառաւոր պատմութիւնը, որովհետեւ յաջորդ օրը, Սեպտ. 12, Ֆրանսական ծովակալը պէտք եղած արտօնութիւնը կը ստանայ Եգիպտոս փոխադրելու համար սուէտիացիները ամբողջ:

Ազատում.— Սեպտ. 12-ին ուրեմն, Ֆրանսական 5 մարտանաւեր կը շարունին Սուէտիոյ առջեւ եւ իրենց ստացած հրահանգին համաձայն կը հրաւիրեն ժողովուրդը նաւերը ապաստանիլ՝ փոխադրուելու համար Եգիպտոս: Թէեւ առանց խանդավառութեան, բայց ստիպուած, սուէտիացիք կը համակերպին:

Նոյն օրն իսկ ամբողջ ժողովուրդը ծովափ կ'իջնէ ձորին մէջէն, զրահաւորներու կրակին եւ երկու կողմերը պատնէշ կազմող հայ մարտիկներու հրացաններուն պաշտպանութեանը տակ, եւ կը փոխադրուի զրահաւորներուն վրայ:

Յաջորդ օրը կռուողները իրենք ալ նաւ կը նստին, մինչեւ վերջինը, իրենց հետ առնելով իրենց փառապանծ զէնքերը, եւ մարտանաւերը զանոնք կը փոխադրեն շիտակ Բօր-Սայիտ՝ ուր կը հասնին մէկ մասը Սեպտ. 14-ին եւ մնացածը 15-ին:

Սուէտիոյ գաղթականները, թուով մօտ 4100 հոգի (վերջնական մարդահամար մը չէ եղած տակաւին), հիմա կը գտնուին Բօր-Սայիտի Լազարէթին շուրջը, քաղաքէն կէս ժամ անդին, եւ տեղաւորուած են անգլիական իշխանութեանց տրամադրած 450 վրաններուն տակ: Իրենց ուտելիքի հոգը, տեղւոյս զինուորական իշխանութիւնները, Ֆրանսական կառավարութեան հաշուոյն, իրենց վրայ առած, իսկ հագուստեղէնի, հիւանդանոցի եւն. ուրիշ պէտքերն ալ Եգիպտոսի հայերը կը հոգան:

Կորուստները.— Ընդհարումներու ընթացքին թուրքերը կորսնցուցած են 1000-է աւելի մարդ, մեռած ու վիրաւոր, առանց հաշուելու վերջին ումբակոծութեանց պատճառած կորուստները, զորս կարելի չէ եղած ճշդել: Իսկ հայերը տուած են ընդամենը 20 մեռեալ եւ 15 վիրաւոր:

Մեռնողներուն մէջ կը գտնուին մեր ընկերներէն Յովհաննէս Լուրջեան եւ Յակոբ Գարակէօզեան:

Այս վերջինին կորուստը արցունք խլած է ամբողջ սուէտիացիներուն աչքերէն, որովհետեւ ինչպէս կը պատմեն իրենք, տասնեակ դարեր չեն ծնիր այսպիսի կտրիճ մը:

Ահաւասիկ թէ ինչ կը գրէ «Արեւ»ի մէջ պ. Մ. Տամատեան, անոր մասին. «Հերոսը՝ Յակոբ Գարակէօզեան (Վաքըֆ գիւղէն) կարելի էր Սուէտիոյ առիւծը կոչել զայն. շրջակայից թուրքերն ու Ֆէլլահները կը դողային անոր անունէն»:

*
**

Այս տեղեկութիւնները քաղուած են Սուէտիոյ մեր ընկերներէն եւ ճշդուած են չէզոքներու վկայութիւններով:

Հ.Յ.Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԷ
(ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ)

Եգիպտոս
18 Նոյ. 1915

Փաստ. 1049-107

8.- ԱՆՈՒԱՆՑ ՅՈՒՑԱԿ [1916 թ.]

ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ ԿԱՐՄԻՐ ԼԵՐԱՆ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻ

Թի	Անուն եւ մականուն	Ծածկանուն	Մուտք	Տարիք	Ծննդավայր	Զգադրում	Կարգավ-գրել
1	Նարեկ Աբրահամեան	Սուրեն	1921	21	Խտրրայէյ	առետուր	այո
2	Պետրոս Աղամեան	Պետո	1908	27	Եողուն Օլուք	սանտրագործ	այո
3	Միհրան »	Հրայր	1910	23	»	»	»
4	Մովսէս »	Կայծակ	1912	30	»	երկրագործ	նչ
5	Գաբրիէլ »	Վրէժ	1911	25	»	սանտրագործ	նչ
6	Սերոբ Շերպէճեան	Քրիստփոր	1908	22	Խտրրայէյ	ուսուցիչ	այո
7	Սերոբ Կէպէշեան	Արծիւ	1909	28	Եողուն Օլուք	սանտրագործ	նչ
8	Տիգրան Աբրահամեան	Վարպետ	1908	27	»	»	նչ
9	Յակոբ Ապամեան	Մեմտոր	1913	21	»	ուսուցիչ	այո
10	Թովմաս Այնթապեան	Փայլակ	1911	35	ՎագրՖ	առետրական	նչ
11	Սարտիքոս Պոյաճեան	Մուրատ	1908	28	Խտրրայէյ	ջուլիակ	այո
12	Մովսէս Տէր Գալուստեան	Անուշաւան	1908	23	Եողուն Օլուք	ուսուցիչ	»
13	Պետրոս Տէր Գալուստեան	Երկաթ	1911	25	»	սանտրագործ	»
14	Կարապետ Սգայեան	Կրանիթ	1912	23	ՎագրՖ	պարտիզական	այո
15	Փանոս Սգայեան	Բոց	1912	20	»	»	նչ
16	Կարապետ Գ. Սգայեան	Կարիճ	1912	21	»	»	այո
17	Գաբրիէլ Հանիսեան	Կրակ	1909	25	Խտրրայէյ	»	»
18	Սարգիս Ինճէեան	Յարիատ	1909	28	»	»	»
19	Գեղարդ Շառայեան	Լեղապատո	1914	18	Եողուն Օլուք	ուսանող	»
20	Սեդրակ Պուրսապեան	Բազէ	1910	22	»	սանտրագործ	»
21	Ստեփան Հապէշեան	Սահրատ	1912	20	»	»	»
22	Միսաք Հապէշեան	Ազատ	1912	20	»	»	»
23	Յակոբ Տաշճեան	Միսակ	1911	25	»	»	»
24	Մովսէս Եարամագեան	Մարիոս	1913	28	»	»	»
25	Սեդրակ Հապիպեան	Ճանիկ	1913	20	»	»	»
26	Միքայէլ Գազանճեան	Երնջակ	1912	20	»	երկաթագործ	»
27	Սեդրակ Աղամեան	Մառաշ	1915	20	»	սանտրագործ	նչ
28	Փանոս Թէրիբեան	Առիծ	1913	28	»	»	»
29	Փանոս Այնթապեան	Տիրան	1912	20	ՎագրՖ	երկրագործ	այո
30	Կարապետ Չլորրեան	Արամ	1912	23	»	պարտիզական	»
31	Խաչեր Տէր Մովսէսեան	Արտէմ	1915	30	Եողուն Օլուք	սանտրագործ	»
32	Յովհաննէս Մասմանեան	Ստրճան	1913	23	»	»	»
33	Պօղոս Պիտանեան	Սարենց	1913	30	»	»	»
34	Պետրոս Շերպէճեան	Ճելլադ	1908	28	Խտրրայէյ	պարտիզական	»
35	Թովման Գէրնէշեան	Նորայր	1915	33	ՎագրՖ	պարտիզական	նչ
36	Մարկոս Մնայեան	Պարթեւ	1915	25	Պիթիաս	դգալագործ	այո
37	Գեորգ Գըրճեան	Գիվալի	1915	34	»	»	նչ
38	Մանուկ »	Մամար	1915	28	»	»	այո
39	Կարապետ »	Կարօ	1915	32	»	»	»
40	Արմենակ Զէլեան	Էլիա	1915	19	»	պարտիզական	նչ
41	Կարապետ »	Խանձուր	1915	37	»	»	»
42	Եսայի Զէշիշեան	Պիպոտ	1915	20	»	ջուլիակ	այո
43	Ալեքսան Զալեան	Սանալիք	1915	27	»	պարտիզական	նչ
44	Գրիգոր Մթամպոլեան	Միհրապ	1915	24	»	որմնադիր	»
45	Պօղոս Տէր Մովսէսեան	Զալաշ	1915	20	Եողուն Օլուք	սանտրագործ	այո
46	Պետրոս Սգայեան	Ռազմիկ	1915	35	ՎագրՖ	պարտիզական	նչ
47	Պօղոս Զէլեան	Վրոյր	1915	20	Պիթիաս	»	այո
48	Նիկողոս Նիկողոսեան	Աշոտ	1915	21	Խտրրայէյ	ուսանող	»
49	Փանոս Գօճանեան	Վարագրատ	1915	28	»	պարտիզական	»
50	Եսայի Սգայեան	Արագ	1915	22	ՎագրՖ	»	նչ

Փաստ. 1050-364

9.- ԲԱՅ ՆԱՄԱԿ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ամէն անգամ, որ ստացուած հայ թերթերը բաց եմ անում, նախ սկսում եմ հետաքրքրութեամբ թերթի ամէն անկիւնները հետախոյզ աչքերով որոնել եւ գտնել որեւէ լուր, տեղեկութիւն, թէ արդեօ՞ք դուք եւս հետեւելով Կովկասին, մեր քաջարի հերոս սուէտացիների զաւակների համար բացել էք դպրոց-որբանոց թէ ոչ:

Եւ ամէն անգամ ցաւ ի սիրտ, դառնացած հոգով յուսախաբուած եմ լինում եւ չնայելով իմ բոլոր պրպրտումների այդ մասին ոչինչ չեմ գտնում: Այնուհետեւ յուզուած սրտով ես ինձ հարց եմ տալիս. հապա էլ ո՞ր օրուայ համար է մեծահարուստ Բարեգործականը, ինչո՞ւ է հետեւում Կովկասի օրինակին, ինչո՞ւ է ուշացնում, ի՞նչ է մտածում անել, ինչո՞ւ է փութացնում եւ չի հիմնում ու բացում անմիջապէս քաջարի սուէտացիների մօտաւորապէս հազար դպրոցական հասակ ունեցող մանչ-աղջիկների համար դպրոց-որբանոց եւ չի աշխատում նրանց պահել-պահպանել, նրանց կրթութիւն, դաստիարակութիւն տալ, որոնք պիտի կազմեն Կիլիկիայի վաղուան մեր հայութիւնը:

Այս բաց նամակով դիմում եմ Ձեզ, Տեարք պատւական, յիշեցնում եմ Ձեզ ձեր սրբազան պարտքը եւ աղաչում, ինդրում եմ փութալ, աճապարել, որովհետեւ առանց այդ էլ շատ էք արդէն ուշացել, անմիջապէս ձեռնարկել եւ բաց անել մեր քաջարի սուէտացիների զաւակների համար ժամանակակից պահանջների համաձայն առողջապահիկ դպրոց-որբանոց եւ տալ նրանց առողջ, հայ հոգով մտաւոր, բարոյական եւ ֆիզիքական ուսումն ու կրթութիւն:

Ինձ հետ միասին ամբողջ հայութիւնը ի սփիւռս աշխարհի այսօր աչքերը Ձեր վրայ սեւեռած, անհամբերութեամբ, անձկալից սպասում է — այս ծով արիւն արցունքի, այս մեր եղեռնի օրերում — որ մեր հերոս, մեր

պարծանք, մեր մխիթարութիւն, որ այնքան քաջաբար պաշտպանեցին եւ փառաւորեցին իրենց անունն ու պատիւը, մեր պատիւն ու անունը, հայութեան պատիւն ու անունը, որ դուք փութաք եւ հանդիսաւորապէս հիմնարկէք եւ բաց անէք նրանց զաւակների համար դպրոց-որբանոցը:

Այսուհետեւ Բարեգործականի դպրոց-որբանոցի ձեռնարկի ուշացումը, յետաձգումը ամբողջ հայութեան կողմից պիտի նկատուի եւ պիտի ընդունուի որպէս ամենածանր յանցանք, մահացու ոճիր:

Օ՛ն, ուրեմն, Տեարք, յառա՛ջ, ի գո՛րծ, համարձակ, առանց տատանուելու եւ առանց յապաղելու:

Տեարք պատուական, եթէ երբեք դուք թերանաք Ձեր սրբազան պարտքի առաջ եւ զանց առնէք եւ չբացանէք անմիջապէս այդ դպրոց-որբանոցը, այնուհետեւ երբե՛ք, յաւիտեան Եգիպտոսի Բարեգործականը հայութեան առջեւ, պատմութեան առջեւ չպիտի կարողանայ քաւել այդ մեծ ոճիրը, արդարանալ եւ դա կը լինի նրա տապանաքարը:

Յ. ԻՈՒՍՈՒՅԵԱՆՅ⁶

Լօզան
31 Յունուարի 1916

N. B.— Ի միջի այլոց հրաւիրում եմ այս քաջարի սուէտացիների զաւակների համար բացուելիք դպրոց-որբանոցի* հարցի վրայ եգիպտահայ մամուլի, հասարակական գործիչների, հանրային հիմնարկութիւնների, ազգի ցաւով տառապող, դեղ ու դարման որոնող ու խորհողների լուրջ ուշադրութիւնը եւ եռանդուն աջակցութիւնը:

6.- Իոսուֆեանց Յովհաննէս (1850-1920), ծանօթ Մելիք եւ Վահանեան ծածկանուններով, Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր սերունդին պատկանող դէմք էր, կազմակերպիչը Կ. Պոլսոյ եւ Ամերիկայի դաշնակցական միատրոներուն. վերջին տարիներուն հիւանդ, քաշուած էր գործօն կեանքէ եւ կ'ապրէր Ձուիցերիոյ Լօզան քաղաքը:

*) Դպրոց-որբանոցը պիտի ըմբռնել գիշերօթիկի մտքով, որովհետեւ բարեբախտաբար սուէտացի մանչ-աղջիկները որբեր չեն:

Փաստ. 1050-51

10.- Հ.Յ.Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԵԻՆ

Գահիրէ, 10 Փետր. (ն.տ.) 1916

Ընկերներ,

Ստացած ենք Ձեր Յուն. 20 թուակիրը, որուն մէջ այնքան գեղեցիկ կերպով կ'արտայայտուէիք գաղթականներու հանդէս:

Հո՛ս, ազնի՛ւ ընկերներ, մեր եղերաբախտ հայրենակիցներու ջերմ գգացմանց խոնարհ թարգմանը կ'ըլլանք, անոնց խորին շնորհակալութեանց հաւաստիքը դրկելու ձեզի, որպէսզի դուք ալ ձեր կարգին բարեհաճիք զանոնք հաղորդել Ամերիկայի Հ.Յ.Դ. Կեդր. կոմիտէին, իր հայրենակիցներու ցոյց տուած անօրինակ ու բարեմոյն ժեսթին համար:

Հաճեցէք գրել այս պարագան Ամերիկայի մեր փարեյի ընկերներուն եւ աւելցուցէք թէ պապենական իր խոշտանգուած օճախէն խլուած սուէտիացին խիստ գոհ մնացած է իրենցմէ եւ ինքզինք երախտապարտ կը զգայ իր անհամար ցաւերն ու կարիքները տեսնող Հ.Յ.Դ. Ամերիկայի արի գինուորներուն: Յայտնեցէք անոնց նաեւ մեր Ե[նթա]կոմիտէի սրտազեղումները:

Ձեր յանձնարարութեանց համաձայն, ներկայ ընկերներու մեծամասնութիւնը, աւելիօրէն մասնակցեցան մարզանքին, բայց դրսեցիներուն անհաճոյ միջամտութիւններն ու մարզանքին անգոհացուցիչ ընթացքը, ոմանց մէջ կասեցուցին մարզուելու բուռն խանդավառութիւնը: Եւ այսօր, ցաւ ի սիրտ, հազիւ հինգ հոգի մը կը պահեն իրենց մասնակցելու եռանդը եւ կ'աշխատին մարզանքին անտեղիտալի պէտքին մէջ իրենց լաւագոյն բաժինը ունենալ:

Ձեր ուզած տեղեկատուութեանց վրայ ստորեւ կու տանք ձեզ անունները այն ընկերներուն, որոնք հեռացած են տեղէս եւ հաստատուած Եգիպտոսի միւս քաղաքներուն մէջ:

Գահիրէ.— Ընկերք Թովմաս Այնթապլեան եւ Տիգրան Աբրահամեան, Միսակ եւ Ստեփան Հապէշեան:

Աղեքսանդրիա.— Ընկերներ Սեդրակ Պուրսալեան, Սերոբ Կէպէշեան, Յակոբ Տաշեան, Պօղոս Պիտանեան, Կարապետ Սգալեան, Սեդրակ Հապիպեան, Փանոս Թէփիրեան:

Կը գրէիք, թէ «Կոմիտէս որոշած է 1000 տոլարը գումէշներու գնման յատկացնել»: Թո՛ղ ներուի մեզ, հոս անգամ մ'ալ շեշտելու թէ, ինչպէս որ ուրիշներն ալ կը հաւատան, այդ միջոցը պատճառ պիտի ըլլայ որ կառավարութիւնը դադրեցնէ քէմփի հիւանդանոցին, տկարներուն եւ ծծկերներուն կաթ հայթայթելու անհրաժեշտութիւնը:

— Ատկից աւելի օգտուէտ միջոց մը չկա՞ր արդեօք:
— Այնուամենայնիւ, մենք դարձեալ սրտի գոհունակութեամբ կ'ընդունինք այդ որոշումը եւ սակայն, միւս կողմէն, չենք վարանիր ըսելու թէ՛ ժողովուրդը խիստ դժգոհ պիտի կացուցանէ:

— Ստացած ենք եզական հերոս Անդրանիկին պատկերը:

— Ուրիշ նոր դիմումներ կ'ըլլան մեզի:

Ընկերական ջերմ բարեկներով
Հ.Յ.Դ. ԿԱՐՄԻՐ ԼԵՐԱՆ Ե[ՆԹԱ]ԿՈՄԻՏԷ

Փաստ. 1049-64

11.- ՏԵՂԵԿԱԳԻՐ
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՐՄԻՐ ԼԵՌ ԵՆԹԱԿՈՍԻՏԷԻ
(1915 Հոկտեմբերի 6 մինչև 1916 Յուլիս 10)

I Ենթակոմիտէի վերակազմուելը

Կարմիր Լեռի ենթակոմիտէս միշտ գործունէութեան մէջ էր Սուէտիոյ մէջ, սակայն ինքնապաշտպանութեան ընթացքին խոհեմութիւն սեպեց կուսակցական առանձին գոյն մը չտալ իր գործունէութեան, որով ժողովուրդը իր մի անհատ կուռելու պատրաստ կը գտնուէր: Գալով Բօր-Սայիտ, եգիպտական հողին վրայ ոտք կոխելէ ետք ամիս մը առանց կազմակերպուելու մնացինք, բայց միշտ ամբողջ ընկերներս համախմբուած մեր շահը պաշտպանեցինք մինչև որ օր մըն ալ ընկերներ Արտաւազը Հանրմեան եւ Մկրտիչ Եփրեմեան¹ եկան եւ անոնց թելադրանքովն ու յորդորանքովը վերակազմուեցաւ Կարմիր Լեռան ենթակոմիտէս:

II Պատանեկան խումբ

Ենթակոմիտէս կազմուելէ վերջ առաջին գործը եղաւ Դաշնակցութեան համակիր պատանիներէ կազմել պատանեկան միութիւն մը, որուն նպատակը ըլլայ պատրաստել մեր պատանիները՝ ապագայ ընկերները ըլլալու համար. ձեռնարկը բաւական յաջողեցաւ. մինչև հիմա իրենց անդամներու թիւը հասած է 18ի եւ կը գործեն միշտ Կարմիր Լեռան ենթակոմիտէին հակողութեանը տակ: Իրենք իրենց յատուկ ժողովը ունին եւ յաճախ ժողով կը գումարեն տեսակ-տեսակ խնդիրներու համար. շատ անգամ ալ կը հրաւիրուին ընկերական ընդհանուր ժողովին:

III Անդամացուցակին ընդլայնումը:

Յիշատակելի պարագայ մըն է մեր հոս նոր ունեցած անդամագրութիւնը, որով նորերը եկան աւելի եւ աւելի՝ գօրացնել մեր կազմը եւ լեցնել մեր բացակայ ընկերներուն տեղը: Մեր ունեցած գործունէութիւնը եւ կուսակցական լուրջ կեցուածքը պատճառ եղաւ որ անդամագրուելու փափաք յայտնեն զինուորական գործին մէջ կարեւոր ազդեցութիւն ու դիրք ունեցող երիտասարդները: Մենք հրաւիրեցինք որպէսզի այդ գործի մէջն ալ մեր ազդեցութիւնը յիշատակելի եւ գերազանց ըլլայ եւ յաջողեցանք: ունինք այնպիսի անդամներ, որոնց միջոցաւ շատ մը բաներու լի ու լի տիրացանք:

Ներկայ ընկերներու թիւը կը հասնի 72ի: Սա կէտն ալ մոռնալու չէ որ մենք ընդունած ենք այնպիսի անդամներ որոնք քիչ թէ շատ կարող են որեւէ մէկ բանով օգտակար ըլլալ մեր վեհ գործին:

IV Կուսակցութեան դերը ժողովուրդին մէջ

Կուսակցութիւնս քաջ ծանօթ էր ժողովուրդին եւ անոր աղէկ կամ գէշ կողմերն ալ ուսումնասիրած էր, ուստի գործածեց անանկ միջոցներ որ մեր «չիրքէթ»ը ինչպէս կը կոչուէր ժողովուրդէն, ինքզինքը սիրցուց եւ անոր աչքին առջեւ բարձրացաւ եւ միւսներուն նայած աչքով չէր նայեր: Ինչպէս որ յիշեցինք ամէն կերպով անոր օգտակար ըլլալ ուզած էր. օրինակ, ի՞նչ էր եւ որո՞ւ կը պարտէինք ազգային լսարանի գոյութիւնը, որ շատ մը հակառակութիւններու եւ արգելքներու դէմ շարունակուեցաւ: Ժողովուրդը ինքը գգաց թէ դուրսի աշխարհէն տեղեակ ըլլալով եւ թէ բարոյական եւ իրենց օգտաւէտ նիւթեր լսելովը: Ազգային լսարանը զուտ կուսակցական լսարան մը չէր եւ ժողովուրդը գայտ գիտէր, սակայն անոր մէջ գործող ընկերներու ներկայութիւնը ամէն տեսակէտով իր մեծ եւ սքանչելի արդիւնքը ունեցած էր: Կուսակցութիւնս ուղղակի կամ անուղղակի ժողովրդին խորհրդատուն եղած էր եւ շատ մը կէտերու մէջ մեզմէ խորհուրդ հարցուցած էր եւ տակաւին կը հարցնէ:

V Կուսակցութեան յարաբերութիւնը միւս կուսակցութիւններու հետ

Առջի օրերուն փափաքեցանք համերաշխութիւն մը գոյացնել, որը կարելի է շատ օգտակար պիտի կարենար ըլլալ թէ մեզ եւ թէ իրենց, սակայն անոնց ցարդ [ցոյց] տուած պաղովութիւնը եւ երկդիմի ընթացքը մեզ բոլորովին զինաթափ ըրաւ այս գործէն: Բայց այսուհանդերձ մենք իրենց հանդէպ որեւէ ոխ ու քէն չպահելով ապրեցանք: Շատ անգամ տաքարիւն ընկերներն ալ խրատած ենք որ մեր կուսակցութեան վայել ընթացքի մը մէջ գտնուին եւ գոնէ իրենք խօսքի տեղի չտան. թէեւ յաճախ հակառակ կողմէն գրգռութեան ցոյցեր երեւան եկան, բայց կարեւորութիւն չտրուեցաւ անոնց:

VI Մարզանքի խնդիրը

Նախ այս խնդիրը բոլորս մէկէն կարծեցինք թէ տարբեր կուսակցութեան մը կողմէ պատրաստուած եւ նիւթուած բան մըն էր, այս պատճառաւ մեզմէ ոչ մէկը անոր մասնակցեցաւ, սակայն կոմիտէէն եկած հրահանգին համաձայն մեր ընկերները մեծ մասամբ մասնակցեցան եւ մեր մասնակցելովն էր որ թիւը բարձրացաւ եւ մարզանքը լուրջ գործի մը կերպարանքը ստացաւ: Անոր մէջ ցոյց տրուած եռանդը նկատելի էր, անանկ որ քիչ ժամանակէն ունեցանք յիսնապետներ եւ խմբապետներ. սակայն խնդրին ելքը ամէնուր յայտնի է, որը յանկարծակի եղաւ եւ մինչեւ այդ ատեն բաւական հասունցած պտուղը չորցուց. պատճառը չենք գիտեր, միայն աս գիտենք, թէ մարզանքը կառավարութեանց ուզելովը կասեցուեցաւ եւ ամէն բան տեղն ու տեղը մնաց:

VII Մարմինս ինչ պայմաններով գործած է

Գիւղի ազատ շրջանակէն վերջ այսպիսի նեղ եւ սահմանափակ տեղի մը մէջ մնացինք, այնպէս որ ժողով գումարելու տեղ մը չկար ուր ընկերները հոն իրար տարբեր կերպով մը պիտի տեսնէին: Շատ անգամ արհեստանոցներու մէջ եւ շատ անգամ ալ բացօթեայ տեղեր խոնաւ աւազին վրայ ստիպուած էինք մեր նիստերը գումարել: Չենք կրցած ոեւէ դասախօսութիւն սարքել, մեր շատ մը անուս ընկերները քիչ-շատ լոյսի առջեւ բերել, ասկից կարելի է հետեւցնել որ եթէ աւելի ազատ պայմաններու տակ ապրած ըլլայինք, աւելի ու աւելի գործունէութիւն մը երեւան պիտի բերէինք:

Փաստ. 1050-318

12.- ՄՈՎՍԷՍ ՏԷՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻՆ, Գահիրե

16 Հոկտ. 1916, Բօր-Սայիս

«Կարմիր լեռ» ենթակոմիտեի այս ցամաքը, համեմատաբար երկար (10 փոքրադիր էջ), մեծ մասամբ կը խօսի Փոքր Մայիտ վրանաքաղաքի մասին, ծանրանալով յատկապես «Միսուան» վարժարանի ներքին խնդիրներուն: Ձեռնած ենք այդ բաժինը, որ այնքան ալ շահեկան չէ: Հետաքրքրական է սակայն ցամաքին այն հատուածը, ուր կը խօսի 1916ի աշնան ֆրանսական մարտանալով մը 4 երիտասարդներու այցելութիւնը հայրենի բնօրրան: Հարկ կը տեսնենք նշելու որ առաջին անգամ է որ մման իրադարձութեան մը իրազեկ կը դառնանք, որովհետեւ Մուսա լեռան հերոսամարտին մասին մեզի ծանօթ ոչ մէկ աղբիւր, մինչեւ իսկ նոյնիմքն ցամաքագիր Սերոբ Շերպէճեանի հեղինակած «Պատմութիւն Սուեախայերու» գործը (Պէյրութ, 2010), յիշած կամ անդրադարձ կատարած ըլլայ այս ուշագրաւ իրադարձութեան:

Սիրելի ընկեր,

Ղրկած նամակդ ժամանակին ստացած ենք: Մինչեւ ցարդ պատասխանը յետաձգելնուս պատճառը, Սերովբէի հօրը Գահիրէ մեկնումին սպասելն էր. անշուշտ առիթ մըն էր որ կը ներկայանար մեզ, որմէ օգտուելով ներկայ նամակը ազատ ու համարձակօրէն գրել, եւ հետեւաբար պիտի ջանանք կարելի եղածին չափ ընդարձակ եւ մանրամասն տեղեկութիւններ գրել քէմբէն:

.....

Հիւանդանոցը հիւանդներով լեցուն է. ըստ սովորականին գրեթէ ամէն օր մահ պիտի պատահի, մէկ կամ երկու հատ: Թէեւ հիւանդանոցի պաշտօնեաները իրենց պարտականութիւնը կը կատարեն, սակայն եղածները անբաւարար են. Կարմիր խաչ մը ունինք որուն վրայ մէկ կարեւոր յոյսերնիս դրած ենք, բայց 1 բժիշկ, 2 հիւանդապահուհի եւ 3 հիւանդապահներով ինչ կրնայ ընել. անշուշտ որ [այդ] ուժով հագիւ այդքանը կրնայ ընել. ցաւալի է որ մէկ քանի երիտասարդներ ալ մեռած են վերջերս. ա՛հ այս Կարմիր խաչը:

Քէմբէն Սուրիոյ եզերքները գնացող տղաքներէն մէկ քանին եկան, որոնց մէջն է նաեւ մեր ընկեր[ներ]էն «Արապը»: Իր պատմածները կէտ առ կէտ ահա ձեզ կը գրենք, բայց կը խնդրենք ընկերք Հանրմեանէ եւ Եսայեանէ գատ ոչ ոքի կը կարդաս:

Իրենց պարտականութիւնը լիովին կատարած եւ իրենց վրայ դրուած յոյսերը իրականացուցած են: Կ'ըսէ 4 ընկերներով միասին մեր Լեռը ելանք, եւ գիշեր ատեն մեր գիւղերը պատեցանք. իւրաքանչիւր գիւղի մէջ միմիայն 20-25 տունի չափ թուրք «մուհաճիրներ» կան. տունները նոյնութեամբ կը մնան եղեր. Սուէտիոյ «միւտիրը» Մելքոնին տունն է, իսկ ընկեր Նարեկենց եւ Եսայ-

յի Աբրահամեանենց տուններն ալ զինուոր կան եղեր, այսինքն «Գարագուէ»⁷:

Մեր իջած նաւամատոյցի քովի (գոլէզը) մէկ քանի զինուոր ըլլալով, տղաքը գիւղերէն վերադարձած ժամանակին ընդհարում տեղի կ'ունենայ մէջերնին, որը 24 ժամ կը տեւէ. կռիւր կը վերջանայ, զինուորներէն 2 սպաննուած, 2 գերի կ'առնեն եւ մարտանաւը կը բերեն. իրենցմէ ոչ մէկ կորուստ եւ վիրաւոր եւ արդէն զինուորները 14 հատ են եղեր ամբողջութեամբ:

Մէկ քանի հատ ալ Տէօրթեօլի, Իսկէնտէրունի եւ Քեսապի կողմերը ելած են, ասոնցմէ քեսապցիները եկան այս օրերս, նոյն բանը կը պատմեն. Քեսապի մէջ եղած թուրք «մուհաճիրները» շատ աննշան թիւ մը ունի կ'ըսեն:

Միւսներն ալ թէեւ վերադարձուցած են, բայց դեռ քէմբը չեն եկած. ողջ եւ առողջ Փրանսացիներուն քովն են. մօտ օրերս կու գան: Կրկին կը խնդրենք որ այս խընդիրը ուրիշներուն չըսէք:

Գալով Իսկէնտէրեանի խնդրոյն. հնչակեանները ձգնեցան դաշնակցականներուն վերադրել Իսկէնտէրեանի քարտէսին խնդիրը, ըսելով թէ վկաները իրենցմէ են եւ թէ գիշեր ատեն (թելեֆոնով) Բօր-Սայիտի կառավարութեան հետ բանակցութեան մէջ մտած են. իբր թէ Բօր-Սայիտէն պիտի ազատուի եթէ երբեք այն գիշերը դաշնակցականները ժողովուրդի կողմէն իրենց հանդէպ ցցուցած դժգոհութիւնը չհաղորդեն: Բայց ընդհակառակը, թէեւ պիթիասցի մեր ընկերներէն 1-2 վկայ կային, մենք աշխատեցանք որ մեր ընկերները հրաժարին վկայութիւն ընելէ. չյաջողեցանք ինչ-ինչ պատճառներով...

Քէմբը կարեւոր ոչ մէկ բան կայ. անցեալ կիրակի

7.- Ոստիկանատուն, պահականոց:

երկու հարսնիք տեղի ունեցաւ միայն:

Կոմիտէին նամակ չգրելու ոչ մէկ պատճառ ունէինք, միայն թէ իրմէ նամակ կը սպասէինք. եւ միւս կողմէն ճամբան կարգացուելէն կը զգուշանայինք. եւ հիմա յարմար ժամանակը ըլլալով ընդարձակ նամակ մը կը գրենք, ինչպէս նաեւ նոր ընկերներու անուանացանկն ու Գահիրէի ընկերներուն ցանկը ներփակ պիտի ստանաք:

Քէմբը խաղաղ է. ժողովուրդին մէկ մասը իրեն զբաղում հայթայթած կ'աշխատի, իսկ պզտիկ մէկ մասն ալ պարապ կը թափառի:

Ձեր հոս անգամ մը այցելութիւնը փափաքելի է ոչ միայն մեզի համար, այլեւ ընդհանուր ընկերներուն փափաքն է ձեր գալը. եթէ դիւրութիւն կայ գալու անգամ մը գալնիդ պէտք կը զգանք:

Այս օրերս երկու ամերիկուհիներ տեղս հասան. մէ-

կը, տանթելայի գործին մէջ պիտի ծառայէ, իսկ միւսը Ամերիկայի Կարմիր խաչի կողմէն եկած. տկարակազմերու հոգը իրենց վրայ պիտի առնեն եւ իրենք պիտի վարեն գործը, քանի որ կ'ըսեն ծախսին մեծ մասը կը վճարենք, պէտք է բոլորովին մեր ձեռքը ըլլայ. բայց ըստ մեր լսածին, մեր Հայ Կարմիր խաչը կը դժկամակի եղեր տալու:

Ընկերներ Արտաւազդ Հանրմեանին եւ Ստեփան Եսայեանին մեր ջերմագին բարեւներն ու անկեղծ յարգանքները. եղբայրներուդ Պետրոսին եւ Գառնիկին, ինչպէս նաեւ միւս բոլոր ընկերներուն մեզմէ եւ հոս եղող բոլոր ընկերներուն կողմէ բարեւներ. մնամք անկեղծ բարեւներով

ՍԵՐՈՒ ՇԵՐՊԷԹՃԵԱՆ,
ՆԱՐԵԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ,
Յ. ԱՊԱՃԵԱՆ

Փաստ. 1052-113

13.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԵԻՆ

30 Դեկտ. 1917, Բօր Սայիտ

Ընկերներ,

Տեղւոյս Հ. Յ. Դաշնակցութեան ենթակոմիտէի անդամներուն մեծամասնութեան կամաւորական շարժման մասնակցելուն եւ ընդհանուր ընկերներուն թիւը պակասած ըլլալուն առթիւ կազմը լուծուած էր եւ այս պարագան ալ արդէն ձեզի ծանօթ էր: Սակայն վերջերս բաւական թիւով ընկերներ հասան տեղս եւ հոս պիտի մնան. յիշեալները ընդհանուր բժշկական քննութենէ անցած եւ զինուորական ծառայութեան անկարող նկատուելով ետ դրկուած են. անոնք ունին իրենց ձեռքը վկայականներ, որոնք կը վկայեն իրենց անկեղծ ծառայութեանց լիապէս կատարելուն համար:

Հոս եղող թիւով երեսունի չափ ընկերներս ընկերական ընդհ. ժողով գումարելով ներքին կանոնադրի համեմատ ենթակոմիտէ մը ընտրուեցաւ որուն անդամները հետեւեալներն են.—

- | | | |
|------------|-------|-----------------|
| Ատենապետ | ընկեր | Սերոբ Շէրպէթեան |
| Ատենադպիր | » | Յակոբ Ապաճեան |
| Գանձապահ | » | Մովսէս Քէչիշեան |
| Գոյքապահ | » | Գէորգ Գըլլըճեան |
| Խորհրդական | » | Պետրոս Սգայեան |

Արդ, այս բաները ձեզի իմացնելէ վերջ, կու գանք ծանուցանել որ նորընտիր ենթակոմիտէն սկսած է իր գործունէութեան եւ ինքը պիտի պատրաստէ ընկերներուն անձանց ընդհ. ցանկը:

Ընկերական ջերմ բարեւներով
Ընդհ. ժողովի դիւան

Ատենապետ
Ինձի՛եԱՆ

Ատենադպիր
Գ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Փաստ. 1054-237

14.- ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿ
«ԿԱՐՄԻՐ ԼԵՌ» ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ
(ՓՈՐ ՍԱՅԻՏ)

Թի	Անուն եւ մականուն	Տարիք	Ծննդավայր	Մուտք	Կարգավ-գրել
<u>Սուէտիա</u>					
1	Յովհաննէս Պուրսալեան	20	Եօղուն Օլոք	1912	այո
2	Մովսէս Աղամեան	32	»	1910	նչ
3	Միքայէլ Գազանճեան	23	»	»	այո
4	Պօղոս Պիտտանեան	32	»	»	»
5	Յակոբ Ապանճեան	22	»	1915	»
6	Սարգիս Տ. Մովսէսեան	20	»	»	նչ
7	Յարութիւն Հապէշեան	22	»	»	»
8	Արմենակ Հանիսեան	18	»	1919	այո
9	Գէորգ Գազանճեան	20	»	1915	»
10	Գրիգոր Քէօշքէրեան	20	»	»	նչ
11	Յարութիւն Լուրջեան	30	»	1911	նչ
12	Մանուէլ »	20	»	1915	այո
13	Մովսէս Տ. Մովսէսեան	20	»	1919	նչ
14	Եղիշէ Գազանճեան	20	»	»	այո
15	Սթիփան Փանոսեան	19	»	»	»
16	Կարապետ Պուրսալեան	18	»	»	»
17	Փանոս »	20	»	»	»
18	Խաչեր Աղամեան	19	»	»	»
19	Սարգիս Տօնիկեան	20	»	»	նչ
20	Սարգիս Գապայեան	35	»	»	»
21	Մարտիրոս Հապէշեան	24	»	»	այո
22	Փանոս Հապէշեան	19	»	»	»
23	Ենովք Հաճիեան	20	»	»	»
24	Սերոբ Շերպէքճեան	25	Խորրպէլ	1910	այո
25	Մարտիրոս Պոյաճեան	28	»	»	»
26	Գարրիէլ Հանիսեան	27	»	»	»
27	Սարգիս Ինճեան	29	»	»	»
28	Փանոս Գօճանեան	30	»	»	»
29	Սարգիս Պոյաճեան	35	»	»	»
30	Սարգիս Ատաճեան	40	»	1915	»
31	Սողոմոն Ատաճեան	23	»	»	նչ
32	Պետրոս Զերմէնեան	36	»	»	»
33	Յովհաննէս Գապաղեան	20	»	»	»

Թի	Անուն եւ մականուն	Տարիք	Ծննդավայր	Մուտք	Կարգավ-գրել
34	Աւետիս Գօճանեան	20	Խտրրայէյ	»	նչ
35	Միսակ Տաշճեան	25	»	»	»
36	Յովհաննէս Շերպէթեան	20	»	»	»
37	Արմենակ Թապազեան	20	»	»	այո
38	Խաչեր Թազեան	20	»	1919	նչ
39	Թովմաս Աշգարեան	20	»	»	»
40	Մովսէս Ինճէեան	20	»	»	այո
41	Յովհաննէս Քերմէնեան	20	»	»	»
42	Մանուէլ Գէճանեան	20	»	»	»
43	Պօղոս Տօմանեան	26	»	1910	»
44	Կիրակոս Խօշեան	35	»	1919	նչ
			<u>Սուտիա</u>		
45	Կարապետ Սըգայեան	24	Վազրֆ	1912	այո
46	Փանոս »	22	»	»	նչ
47	Կարապետ Չըտրեան	25	»	»	այո
48	Թովմաս Գերնէշեան	30	»	»	նչ
49	Պետրոս Սըգայեան	35	»	»	»
50	Պետրոս Տ. Գալստեան	35	»	1915	»
51	Պետրոս Պեհլումեան	35	»	»	»
52	Վանէս Պապիկեան	35	»	»	»
53	Իգնատիոս Մանճեան	20	»	»	այո
54	Միսակ Սըգայեան	20	»	»	»
55	Դանիէլ Պապիկեան	22	»	»	նչ
			<u>Սուտիա</u>		
56	Գէորգ Գըլրճեան	38	Պիթիաս	1915	նչ
57	Գրիգոր Սթանայուեան	30	»	»	»
58	Պօղոս Չափարեան	26	»	»	այո
59	Կարապետ Հ. Փանոսեան	26	»	»	նչ
60	Մովսէս Անտէկեան	25	»	»	այո
61	Մովսէս Պ. Քէշիշեան	23	»	»	»
62	Մովսէս Չափարեան	23	»	»	նչ
63	Քերոբէ Քէշիշեան	20	»	»	այո
64	Գէորգ »	20	»	»	»
65	Կարապետ »	18	»	»	»
66	Իսկէնտէր Խաչիկեան	20	»	»	»
67	Սահակ Անտէկեան	20	»	»	»
68	Ենուք Քէօշեան	20	»	»	»
69	Օհաննէս Գըլրճեան	20	»	»	»
70	Յակոբ Սրբզեան	19	»	»	»
71	Սարգիս Քէօշեան	26	»	»	նչ
72	Գրիգոր Քէշիշեան	35	»	»	»
73	Յակոբ Չափարեան	28	»	»	այո

Թի	Անուն եւ մականուն	Տարիք	Ծննդավայր	Մուտք	Կարգալ-գրել
<u>Ատանա</u>					
74	Շուքրի Մալմեան	20	Խառն	1919	այո
75	Գեորգ Չագրրեան	20	»	»	»
76	Սողոմոն Թրաշեան	20	»	»	»
77	Աւետիս Մուրատեան	20	»	»	»
78	Յովսէփ Գամալեան	20	»	»	»
79	Սահակ Կէօվկեօզեան	20	»	»	»
80	Գրիգոր Աղամեան	20	»	»	»
81	Մովսէս Փաթիաթեան	20	»	»	»
82	Պօղոս Յակոբեան	20	»	»	»
83	Յովնան Պետրոսեան	20	»	»	»
84	Միսակ Ֆռնրզլեան	20	»	»	»
<u>Կեսարիա</u>					
85	Կարապետ Խաթունեան	20	Չօմագլու	1919	այո
86	Օհան Շըխլիեան	20	»	»	»
87	Արսէն »	22	»	»	»
88	Ռստիկ »	19	»	»	»
<u>Ատանա</u>					
89	Արմենակ Յարութիւնեան	22	Մարաշ	1919	այո
90	Տիգրան Տազէսեան	24	»	»	»
91	Յակոբ »	26	»	»	»
92	Վահան Գոչունեան	20	Կիւրին	»	»

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
«ԿԱՐՄԻՐ ԼԵՌ» ԵՐԹԱՅԻՆՍԻԷ

Ընդհ. ժողովի դիւան

Ատենապետ

Ատենադպիր

ՄԱՆՈՒԷԼ ԼՈՒՐՁԵԱՆ
ՓԱՆՈՍ ԳՕՃԱՆԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՈՒՐՍԱԼԵԱՆ

Գ. ՀԱՆԻՍԵԱՆ

Փաստ. 1054-4



15.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԵԻՆ, Գահիրե

Բօր-Սախա, 13 Յունուար 1918

Ընկերներ,

Ներկայ ամսոյ Յին ստացանք Ձեր 3 թուակիր նամակը: Քէմբը՝ ներկայ ընկերներու ընդհանուր անդամացուցակը ներփակ կը յղենք Ձեզ անուն եւ ծածկանուններով:

Տեղոյս նախկին ենթակոմիտէն որ միայն (2) երկու ամիս գործունէութիւն ունեցած է, եւ ընդհանուր ընկերներու կամաւորական շարժման մասնակցելուն պատճառաւ կազմը կազմալուծուած ըլլալով՝ կը ցաւինք որ մեր վրայ նշանակուած պիւտճէն բաց կը մնայ, եւ այս առթիւ հաշուեկշիռ չպիտի կրնանք ներկայացնել: Բայց վստահ ենք որ այս մասին ներողամիտ պիտի գտնուիք հանդէպ Սուէտահայ ընկերներուն, որոնք իրենց կեանքը՝ իրենց արիւնը տրամադրած են փոխան դրամի Դաշնակցութեան դատին՝ հայրենիքի դատին:

Տեղոյս դժուարութիւնները նկատի առնելով՝ ներողամիտ պիտի ըլլաք եթէ տեղեկագիրը ուշացնենք:

Ընկերական ջերմ բարեւներով

Հ. Յ. Դաշնակցութեան «Կարմիր լեռ» ենթակոմիտէի

Փոխ ատենապետ
ՄՈՎՍԷՍ ՔԷՇԻՇԵԱՆ

Ատենապետ
ՍԵՐՈԲ ՇԵՐՊԵՏԻՅԱՆ

Փաստ. 1406-6

16.- ԱՄԵՐԻԿԱՅԷՆ «ՅՈՒՍԱԲԵՐ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, Գահիրե

Պոստոն, 15 Յունուար 1918

Սիրելի ընկերներ,

1916 Մայիս 10ին, մեր կողմէ \$225,00 զրկած էինք Ձեզ, բաժնուերու համար սուէտիացիներուն: Այս ժամանակը այդ գումարը, փոքր նկատուելով իր նպատակին յատկացուած չէր: Հաճեցէք իմացնել մեզ, թէ այդ գումարը գործածուած է. եթէ այո՛, տուէք նաեւ մանրամասնութիւններ:

Ներփակ պիտի գտնէք Ձեր անունին հանուած քսան անգլ. ոսկիի (\$200,00) չէք մը. հաճեցէք սոյն գումարը բաժնել Սուէտիոյ կռիւներու մէջ զոհուող մեր ընկերներու ընտանիքներուն, մասնաւորապէս Տիկ. Գարակէօզեանի եւ անոր նմաններուն:

Ուրախ պիտի ըլլանք, եթէ մանրամասն տեղեկութիւններ տաք մեզ, մեր ընկերներու ղեքախտ որբեկայրիներու ներկայ վիճակներուն շուրջ:

Ընկերական բարեւներով՝
ԴԻԻԱՆ Հ.Յ.Դ. ԱՄԵՐ[ԻԿԱՅԻ] Կ. ԿՈՄԻՏԵԻ

[Ծանօթ. ենթակոմիտէի].- Նամակին մէջ յիշուած չէքը 20 անգլ. ոսկի չէր, այլ 20 ոսկի, 19 շիլին եւ 9 բէննի. սոյն չէքը պ. Արշակ Ֆերմանեանի ձեռամբ Լոնտոն դրկուեցաւ գանձուելու համար:

Փաստ. 1054-41

17.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԵԻՆ, Գահիրտ

Բօր-Սայիտ, 24 Մարտ 1918

Ընկերներ,

Ձեր 15 եւ 20 թուակիր նամակներուն պատասխանելէ յետոյ, ստացանք նաեւ ձեր 19 եւ 21 թուակիրները՝ 23ին:

Ներփակ կը դրկենք Ձեզ Մուսա լերան կռիւներուն զոհուող հերոսներու ընտանիքներուն անուանացանկը⁸: Իսկ Դաշնակցութեան քաջերու հերոսական մահովը այրիացած ընտանիքներու համար առանձին ցանկ չպիտի կրնանք դրկել այն ժամանակուայ ընկերներու մեծամասնութեան բացակայութեան պատճառաւ:

Նորակազմ ենթակոմիտէն քէմբի այս նեղ շրջանակին մէջ՝ ցարդ ունեցած է հետեւեալ գործունէութիւնը: Ամէն անգամ մեր ունեցած հաւաքման տեղի անպատեհութիւններէն ազատուելու համար առժամանակեայ ընդունեցինք հին խմբական դրութիւնը, եւ շաբաթը երեք-չորս իրիկուն հաւաքելով մէկ խումբի անդամները, խօսեցանք եւ կարդացինք անոնց Հ. Յ. Դաշնակցութեան անցեալ գործունէութենէն որոնց այնչափ պէտք ունէինք:

Զգալով թէ մենք ալ պէտք ունինք դրամական շաբաթավճարներու, վաստակ ունեցող ընկերներէն սկըսանք կանոնաւոր տուրք հաւաքել որը այս ամսէն սկըսեալ կանոնաւորապէս պիտի շարունակուի:

Անցեալ Շրջանային ժողովին մէջ մեզի ձգուած

պիտոճէն չկրցանք այս տարի ներկայացնել ընդհանուր ընկերներուն՝ կամաւորական նուիրական շարժման մասնակցելուն պատճառաւ, որը պատճառ եղած էր արդէն նախկին ենթակոմիտէին կազմալուծման:

Պատանեկան Ա[նդրանիկ] միութիւնը ձուլուած է տեղւոյս կազմին մէջ: Նախկին ենթակոմիտէն տակաւին չլուծուած, որոշեց թէ պատանեկան Ա[նդրանիկ] միութեան այն անդամները որոնք պիտի մասնակցին կամաւորական շարժման, կատարեալ դաշնակցական պիտի նկատուին, եւ մեծամասնութիւնը այսօր կամաւորական շարքերուն մէջ կը գտնուին իրենց պարտականութիւնը կատարելու համար հայրենիքի ծով ցաւերուն:

Տեղւոյս իրադարձութիւններու մասին ոեւէ բան մը չպիտի գրենք. մինակ պիտի փափաքինք հասկնալ թէ ինչո՞ւ այս ժողովուրդը լքուեցաւ եզրպտահայ մարմիններու կողմէ: Կառավարութիւնը չափէն աւելի լաւ կը ինամէ ժողովուրդը:

Մնամք ընկերական բարեկեցութիւնով

Հ. Յ. Դաշնակցութեան «Կարմիր լեռ» ենթակոմիտէ

Փոխ ատենապետ
ՍՈՎՍԷՍ Պ. ՔԷՇԻՇԵԱՆ

Ատենապետ
ՍԵՐՈԲ ՇԷՐՊԷԹՃԵԱՆ

8.- Նշուած անունացանկը չկայ:

Մուսա լերան հերոսամարտին զոհուած էին 18 հոգի.–

- 1) Յակոբ Գարակէօզեան (Ըլլէն)
- 2) Պօղոս Անտէքեան
- 3) Գրիգոր Նգրուրեան (Եուզպաշի)
- 4) Յովհաննէս Գոճանեան (Ֆենտ)
- 5) Պաղտասար Մարտիկեան
- 6) Գաբրիէլ Խէյոյեան
- 7) Պետրոս Փենէնեան

- 8) Մարգիս Շաննագեան
- 9) Գրիգոր Գպուրեան
- 10) Աբրահամ Սեուկեան (Սեքլեմեան)
- 11) Միսաք Պայրամեան
- 12) Պարսամ (Համբարձում) Խօշեան
- 13) Յակոբ Հաւաքեան (Քեսապցի)
- 14) Սամուէլ Պոյաճեան
- 15) Սամուէլ Մարգարեան
- 16) Յարէք Վանայեան
- 17) Յովհաննէս Լուրջեան
- 18) Պետրոս Հաւաքեան

Փաստ. 960-49

18.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՍԻՏԵԻՆ, Գահիրե

Խտրալէկ, 5 Նոյ. 1919

«Կարմիր լեռ» ենթակոմիտէի ներկայացուցիչ Սերոբ Շերալթճեանի այս նամակը՝ ուղղուած Եգիպտոսի կոմիտէին, գրուած է Խտրալէկէն, երբ Փոք Սայիտի վրաններուն տակ ապրող հայերուն մեծագոյն մասը վերադարձած էր ծննդավայր: Արդարեւ, Ընդհ. պատերազմի աւարտին, երբ ֆրանսական բանակը մուտք գործած էր Կիլիկիա, ուր հասած էին նաեւ մուսալեռցի հայ կամաւորները, Փոք Սայիտի գաղթակայանին մէջ տունդարձի մեծ շարժում սր կ'առաջանայ եւ 1919 տարուան ընթացքին, սուլտահայերը, մեծ մասամբ ծովու ճամբով, կը վերադառնան իրենց բնօրրանը,– Յուլիսին 300 հոգի, Օգոստոսի վերջը՝ 1200, մնացեալը մինչեւ Դեկտեմբեր:

Ընկերներ,

Ինչպէս որ Բօր-Սայիտի Կարմիր լեռ ենթակոմիտէն ժամանակին տեղեկագրած էր Ձեզ, երկու ամիս առաջ վերադարձայ Սուէտի կազմակերպելու համար շրջանիս ընկերները: Ներկայիս Սուէտի մէջ 200ի չափ կազմակերպուած ընկերներ ունինք: Նկատի ունենալով կարգ մը դժուարութիւնները, ստիպուած եղանք ամէն մէկ գիւղի մէջ առանձին ենթակոմիտէ մը կազմել եւ ընդհանուր շրջանին համար կոմիտէ մը:

Մօտ ամիս մը առաջ Խտրալէկի մէջ գումարեցինք բացառիկ շրջանային ժողով մը, եւ անմիջապէս Կիլիկիոյ Կ. կոմիտէին տեղեկագրեցինք կոմիտէի ընտրութիւնը եւ մէկ քանի հարցերու շուրջ եղած որոշումները:

Երբ Բօր-Սայիտի Կարմիր լեռ ենթակոմիտէն պաշտօն կու տար ինձ տեղւոյս ընկերներու կազմակերպութեան մասին՝ պարտք կը մնար վրաս տեղեկութիւններ տալ Ձեզ, բայց ցաւալի է որ այստեղի փոսթիան շատ անկանոն է եւ շատ դժուար է հոգ նամակ հասցնել:

Մեր ընկերները շատ եռանդոտ են. ամէն գիւղի մէջ, առանձին գրադարաններ բացած են եւ գործելու շատ փափաք ունին, բայց ապրելու միջոցները կը պակսին եւ այդ պատճառաւ դժբախտաբար բոլոր երիտասարդները ստիպուած պիտի ըլլան ասդին անդին ցրուելու իրենց ընտանիքներու ապրուստը ապահովելու համար:

– Յարգ ժողովուրդին ունեցէ նպաստ տրուած չէ, մինակ մեր ժամանելէն անմիջապէս յետոյ Ֆրանսական Անթիոքի կառավարիչին կողմէ 100 եգիպտական ոսկի նուէր մը եղաւ նոր հասնող գաղթականներուն ցորեն գնելու համար, որ մարդ գլուխ 5.5-ի ցորեն գնուեցաւ:

– Ապահովութիւնը առ այժմ լաւ է. ազատ համարձակ ուզած տեղերնիս կ'երթանք, բայց երբեմն շատ զգոյշ կը գտնուինք եւ գէնք ճարելու միջոցներ կը խոր-

հինք: Գիւղերու մէջ եղած գէնքերը շատ քիչ թիւ մը կը կազմեն. բերելու ճամբան գտած ենք, բայց այս անգամ ալ դրամը կը պակսի. արդեօք կարելի չէ [որ] կոմիտէն այդ նպատակին համար մեզի գումար մը դրկէ, եթէ ինքն ալ համամիտ է Եգիպտոսայ Ազգ. միութեան այն յայտարարութեան, որով ինքզինքը անպատասխանատու կը հռչակէ որեւէ դժբախտ պարագայի մը. բայց մենք վստահ ենք որ մեր Սուէտի վերադառնալուն համար մեր ընկերները երբեք մեզի չեն մեղադրեր, եւ եթէ մեղադրեն արդարանալու շատ մը պատճառներ ունինք:

Մէկուկէս ամիս առաջ հիւանդութիւնը ծայր աստիճան սոսկալի էր. պատահեցաւ որ մեր գիւղին մէջ (Խտրալէկ) մէկ օր 4 հոգի մեռան. տեղւոյս Ազգ. միութիւնը իր կրկնակի գրաւոր դիմումներէն յետոյ հեռագրով ալ խնդրեց Կիլիկիոյ բժշկական առաքելութեանն որ բարեհաճին բժիշկ մը դրկելու. երբեք նկատի չառնուեցան այս խնդրանքները եւ ստիպումի տակ, մասնաւորապէս մարդ դրկեցինք Քեսապ, եւ մեր ընկեր Տոքթ. Աւետիս Ինճէճիկեանը բերել տուինք եւ այդպէս սով եղած հիւանդութեան առջեւ առինք:

Ինչո՞ւ այս ատելութիւնը այս խեղճ ժողովուրդին հանդէպ ազգային մարմիններու կողմէ. ինչո՞ւ երբեք հետաքրքրուող չկայ եւ այսպէս լքուած կը մնան իրենց բախտին խեղճ ու անօթի. այն աստիճան սղութիւն է որ անկարելի է այս ժողովուրդը ձմեռը ապրի եթէ դուրսէն օգնութիւն չըլլայ:

Եթէ այս ժողովուրդին իրենց հայրենիք վերադարձը յանցանք կը նկատուի եւ ազգային մարմիններու ձեռքը իրեւ գէնք կը գործածուի ինքզինքնին արդարացնելու համար, ըստ իս բոլորովին սխալ է. եւ վաղը թող հայրենիքի ճամբաները բացուին, կը վստահեցնեմ Ձեզ որ ամէնէն առաջ Հայաստան ու Կիլիկիա հաստատուող-

ները պիտի ըլլան սուէտացիները, ինչպէս եղան կամաւորական շարժման նախակարապետները:

Տակաւին Բօր-Սայիտ, տեղւոյն ենթակոմիտէն մէկ քանի անգամ գրեց Ձեզ թէ Սուէտիոյ մէջ գտնուող արձակուած կամաւորներու վիճակը ինչ պիտի ըլլայ. իմ հոն եղած ատենս տակաւին որոշ պատասխան մը առած չէր ինք, եւ ցարդ կը տեսնեմ արդիւնք մը չկայ մէջտեղ: Ծանօթ է Ձեզ որ այս կամաւորները իրենց ընտանիքները ձգած էին Բօր-Սայիտի հայկական քէմբը. ուրիշներ դրամ կը շահէին եւ իրենց ընտանիքները լաւ կ'ապրեցնէին, իսկ այս խեղճերը թէ իրենք կը տանջուէին եւ թէ ընտանիքները կը մնային խեղճ ու թշուառ վիճակի մէջ: Հիմա կամաւորներուն ընտանիքները վերադարձած են իրենց մօտ, ոչ մէկ միլիմ ձեռքերնին չունին: Եգիպտահայ Ազգ. միութիւնը, երբ ինքզինքը կամաւորական

շարժման ստեղծիչը կը հռչակէ, ինչո՞ւ նկատի չունեցաւ ասոնց վիճակը եւ Իսթէնտէրունի դէպքին հեղինակներուն — որոնք ազգին պատիւը ոտնակոխեցին — 12-24 ոսկի նուէր մը քուէարկեց իբրեւ իր շրջանին մէջ համազգեստը հանող կամաւորներ: Բայց Եգիպտահայ Ազգ. միութիւնը պէտք էր մտածէր որ Սուէտիա մեկնողները իրենց կամքին հակառակ հոն դրկուեցան եւ պատճառ եղան բոլոր ժողովուրդին քէմբէն փութով ներգաղթին: Հետեւաբար կը խնդրեմ ձեզմէ որ բողոքէք Ազգ. Միութեան այս թերի քայլին դէմ եւ պաշտպանէք կամաւորներու իրաւունքները, ինչպէս միշտ Դաշնակցութիւնը պաշտպանած է զայն ամէն տեղ:

Ընկերական ջերմ բարեկներով
ՍԵՐՈՒ ՇԷՐՊԷԹՅԱՆ

Գ. ԲԱԺԻՆ

ՌՈՍՏՈՍ ԵՒ 1917 Թ. ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ՍՏՈԿՀՈԼՄԻ ՄԷՋ

Աելի քան չորս տարիներ տետղ Համաշխարհային Ա. պատերազմի ընթացքին մեկ ատի փորձեր կախարարուած են դարեցնելու համար աշխարհաւեր բախումները, առանց սակայն գործնական որեւէ արդիւնքի յանգելու: Այդ փորձերէն մէկը պէտք է համարել 1917 թուականին հրաւիրուած Ընկերվար Միջազգայնականի խորհրդաժողովը Շուտի մայրաքաղաք Ստոկհոլմի մէջ: Ժողովին համար նշանաբան ընտրուած էր «Անմիջական խաղաղութիւն, առանց հողային կցումներու»: Նախաձեռնող յանձնախումբը՝ Հոլանտա-Սկանտինաւեան կոմիտէն՝ հրաւիրեալ պատուիրակութիւններուն ուղարկած էր պատերազմի դադարեցման համար իր կազմած սկզբնական նախագիծը, որուն շուրջ տեղի պիտի ունենային առաջին վիճաբանութիւնները: Նախագիծը օրակարգի վրայ կը բերէր պատերազմին առիթ ծառայած շարք մը խնդիրներ եւ կու տար անոնց լուծման իր պատկերացումը: Օրակարգի վրայ դրուած էր նաեւ Թրքահայաստանի ինքնորոշման հարցը:

Խորհրդաժողովը կը հրաւիրուէր Յուլիս ամսու 8-ին, բայց պատերազմին ստեղծած դժուարութիւնները եւ այլ խոչընդոտներ պատճառ պիտի ըլլային անոր յետաձգումին մինչեւ Սեպտեմբեր: Յայտնաբար ֆրանսական եւ անգլիական կառավարութիւնները հաշտ աչքով չէին նայէր այս համագումարին. ուստի մերժեցին անցագիր տալ իրենց քաղաքացի ընկերվար պատգամաւորներուն: Գործնապէս մասնակցեցան ուրեմն Ռուսիայէն, Գերմանիայէն, Աւստրո-Հունգարիայէն, Թուրքիայէն եւ շարք մը ոչ-պատերազմիկ ու չէզոք երկիրներէ եկած ներկայացուցիչներ: Ընկերվար Միջազգայնական բիրոյի անդամ՝ Միք. Վարանդեան հրաւիրուած էր անշուշտ, բայց պիտի չկարենար Ստոկհոլմ մեկնիլ. այդ օրերուն ան Փարիզ կը մնար ու կը գործակցէր Պօղոս Նուպարի գլխաւորած Ազգ. պատուիրակութեան հետ: Փոխարէնը, հեռագրով մը պահանջեց որ Խորհրդաժողովին կողմէ ընդունուի հայոց ինքնորոշման իրաւունքը եւ Հայաստանը ազատագրուի այլեւս թրքական լուծէն:

Հ. Յ. Գաշնակցութեան կողմէ իբրեւ լիազօր ներկայացուցիչ Ստոկհոլմի խորհրդաժողովին մասնակցեցաւ Ռոստոմ, որ ընդարձակ զեկուցագիր մը յղեց, ուր մանրամասնօրէն կը պարզէ Թուրքիոյ տարածքին գործուած հայասպանութիւնը, տեղ-տեղ հայերու ցոյց տուած հերոսական բայց յուսահատական դիմադրութիւնը թուրք եւ քիւրտ ջարդարար զօրքերուն. Ռոստոմ կը դնէ ոչ միայն անմիջական հատուցման եւ վերապրողներուն օգնութեան հասցնելու հարց, այլ Վարանդեանի մման՝ Հայաստանի ազատագրութիւնն ու անոր ինքնավար գոյութեան միջազգային երաշխաւորութեան անհրաժեշտութիւնը: Ռոստոմի ֆրանսերէն այդ ծաւալուն տեղեկագիրը, հրատարակուած համագումարին կողմէ լոյս ընծայուած հատորին մէջ (Ed. Tidens Forlag, Stockholm 1918), պատմական արժէք ունեցող փաստաթուղթ է. ան կը հանդիսանայ վկայութիւններէն մէկը պատերազմի տարիներուն միջազգային բեմերու վրայ հայ դատի հետապնդման ուղղութեամբ թափուած ջանքերուն:

Ռոստոմ Ստոկհոլմ մնացած է երկար, չորսուկէս ամիս: Վերեւ յիշուած դժուարութիւններն ու ձգձգումները պատճառ եղած են որ նախատեսուած թուականին չգումարուի ու փաստօրէն լիարժէք կերպով չկայանայ ժողովը: Ահա այս ժամանակամիջոցին է, որ ան խմբագրած է իր տեղեկագիրը,

աշխոյժ մասնակցութիւն ունեցած խորհրդակցութիւններուն, հանդիպումներ ունեցած քաղաքական անձնատրութեանց հետ, ապա նաեւ զբաղած զինք մտահոգող այն գլխաւոր հարցով, որ նիւթական օգնութիւն հասցնելն էր տարագրութեան մէջ գտնուող ընկերներուն եւ անոնց ընտանեկան պարագաներուն*:

*

**

Այս գլուխին տակ տրուած փաստաթղթերուն մեծագոյն մասը ֆրանսերէն են. կը տրուին անոնք կողքի սիւնակներուն մէջ թարգմանութեան հետ միասին:

*) Պատրնի Հ.Յ.Դ. Կեդր. արխիւներուն մէջ պահուած են Ստոկհոլմէն գրուած Ռոստոմի բազմաթիւ նամակներն ու բացիկները: Առաջինը Յուլիս 28 թուակիր. ապա Օգոստոս՝ 2, 3, 4, 10, 23, 28. Մեպտեմբեր՝ 1, 2, 18, 22. Հոկտեմբեր՝ 12, 14, 23, 25, 30. Նոյեմբեր՝ 6, 10, 14. Դեկտեմբեր՝ 2, 3, եւ 12. վերջինիս մէջ կը գրէ «Այսօր վերջապէս գնում եմ»:

Ի դէպ, Ռոստոմ 4 Օգոստոսին (Փաստ. 1-1) կը գրէ Ժընեւ, «Դրօշակ»ի դիւանապետ Անտոն Գոշին (Պոյաճեան). «Խնդրեմ ներփակ դոկումենտը, որ ոչ մի տեղ չէր ճարում, լաւ պահես: Դաշնակցութեան] ա[ռաջին] մանիֆեստը կայցրու հաւաքածոյին»: Արդարեւ, նախքան Ստոկհոլմ մեկնիլը, Ռոստոմ կը գտնուէր Պետերբուրգ, ուր օգտուելով Փետրուարեան յեղափոխութեան բերած ազատութենէն՝ յաջողած էր մուտք գործել գաղտնի ոստիկանութեան դիւանատունը եւ անկէ վերցուցած Դաշնակցութեան վերաբերող կարգ մը փաստաթղթեր: Անոնցմէ մէկն էր 1890 թ. Հ. Յ. Դաշնակցութեան ծնունդը աւետող առաջին մանիֆեստը, որուն տպագրեալ բոլոր օրինակները գրաւուած ըլլալով օրին ցարական ոստիկանութեան կողմէ՝ ան կը մնար անգտանելի մինչեւ անոր այս յայտնաբերումը Ռոստոմի կողմէ:

Փաստ. 1405-123

1.- ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ՍՏՈԿՀՈԼՄԻ ՀԱՍՏԱԳՈՒՄԱՐԻՆ

Հեռագիրը կ'արտագրենք Մ. Վարանդեանի մէկ նամակէն, ուղղուած Ամերիկա, «Հայրենիք» օրաթեր-
քին: Իբրեւ անդամ Ընկերվար Միջազայնականի բիւրոյին Վարանդեան հրաւիրուած ըլլալով հանդերձ
Ստոկհոլմի համագումարին, պիտի չկարենար մասնակցիլ անոր: Փոխարէնը կը յղէ ստորեւ արուած հե-
ռագիրը նամակով մը, ուր կը նշէ որ Համագումարի օրակարգին վրայ «Ալգաս-Լոռենի, Պելջիկայի, Սեր-
պիոյ եւայլն եւայլն խնդիրների հետ՝ դրուած է եւ Հայաստանի խնդիրը»: Վարանդեան կ'աւելցնէ որ նոյ-
նիմաստ հեռագիրներ դրկած է նաեւ Ռուսիոյ բանուորներու եւ զինուորներու Խորհուրդին, ընկերվարա-
կան նախարար Չեռնովին եւ մամուլի օրկաններուն:

Թարգմանութիւնը.-

L'Arménie turque a subi durant cette guerre le plus atroce des martyres. Une population paisible de 800.000 hommes, femmes, enfants fut exterminée par ordre du gouvernement turc et sous les regards impassible de l'Allemagne.

Après ces horreurs indescriptibles s'ajoutant aux atrocités du temps d'Abdul Hamid, la démocratie mondiale en peut pas laisser l'Arménie sous la tutelle turque, qui ne tolérera jamais l'existence d'une nation consciente de ses droits. J'espère que les sections de l'International, en proclamant une paix sans annexions, ne sacrifieront pas le peuple arménien, mais que fidèle au principe des nationalités, elles réclameront la libération de l'Arménie, sans quoi, il n'y aura jamais de paix durable en Orient.

M. VARANDIAN

Membre du bureau de l'International Socialiste

Այս պատերազմի ընթացքին Թրքահայաստանը ենթարկուեցաւ ամէնէն ահաւոր մարտիրոսութեան: Թուրք կառավարութեան հրամանով եւ Գերմանիոյ անտարբեր աչքերուն առջեւ, բնաջինջ եղաւ 800.000 հոգի, խաղաղասէր տղամարդ, կին ու երեխայ:

Անկարագրելի այս արհաւիրքներէն ետք, որոնք կու գան աւելնալու Ապտիւ Համիտեան խոզոտութիւններուն վրայ, համաշխարհային ժողովրդավարութիւնը չի կրնար Հայաստանը թողուլ ենթակայութեանը ներքեւ Թուրքիոյ, որ պիտի չհանդուրժէ բնաւ իր իրաւունքներուն գիտակից ազգի մը գոյութիւնը:

«Խաղաղութիւն առանց կցումներու» հռչակելով, յուսամ որ Միջազգայնականի մասնաճիւղերը չեն զոհաբերեր հայ ժողովուրդը, այլ, հաւատարիմ ազգութիւններու [ինքնորոշման] սկզբունքին, անոնք պիտի պահանջեն Հայաստանի ազատագրութիւնը, առանց որուն Արեւելքի մէջ տեւական խաղաղութիւն պիտի չըլլայ:

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

Անդամ Միջազգային Ընկերվարական բիւրոյին

Փաստ. 1679-21

2.- ՌՈՍՏՈՍԻ ՄԷԿ ԵԼՈՅԹԸ ՍՏՈԿՀՈԼՄԻ ՄԷՁ

Ստոկհոլմի խորհրդատուների ընթացքին Ռոստոմի միջամտություններն մեկը՝ պաշտպանելու համար Արեւմտեան Հայաստանի ինքնորոշման իրաւունքը եւ կարելիութիւնը զայն արեւմտահայ մնացորդացով վերաբնակեցնելու:

Les circonstances présentes ne nous permettent pas d'envoyer «L'Avant-projet du programme de la paix» aux organes compétents de notre parti, pour avoir leurs opinions et les communiquer au bureau organisateur de la conférence de la Paix.

Nous voudrions cependant exprimer notre avis personnel sur le partie de l'avant-projet concernant l'Arménie.

L'avant-projet reconnaissait pour l'Arménie russe le droit de s'organiser librement dans le cadre de la République Fédérative, et pour l'Arménie, actuellement Turquie, il demandait l'indépendance, la restitution du territoire et la garantie de pouvoir se développer économiquement.

Dans le mémoire explicatif nous trouvons en outre les lignes suivantes (p. 29).

«Après la lecture du mémorandum de la délégation arménienne il n'est personne qui ne reconnaîtra, que la solution de la question arménienne est aussi urgente et nécessaire, que *difficile*».

Si la solution de notre question est reconnue difficile, cela doit être expliqué par le fait de l'extermination de la population arménienne en Turquie.

En effet, ce qui reste, ou plutôt ce qui restera des arméniens déportés après la guerre, ne pourrait nullement servir d'élément pour constituer un Etat indépendant, même une communauté autonome. Ce fut là le principal mobile des dirigeants turcs, et si aujourd'hui les chefs dirigeants turcs de la Jeune Turquie se vantent d'avoir accompli brillamment leur tâche, cela veut dire, qu'ils n'ont épargné que des débris pitoyables des masses déportées.

Nous devons affirmer cependant, que l'Arménie pourra être reconstituée *quand même*.

Թարգմանութիւնը.—

Ներկայ հանգամանքները թոյլ չեն տար մեզի, որ «Խաղաղութեան յայտագրի նախագիծը» ուղարկենք մեր կուսակցութեան իրաւասու մարմիններուն, վերջիններուն տեսակէտները ունենալու համար: Այսուհանդերձ պիտի ուզէինք մեր անձնական կարծիքը արտայայտել նախագծի Հայաստանին վերաբերող բաժնին մասին:

Նախագիծը կ'ընդունէր Ռուսահայաստանի համար՝ [ռուս] Դաշնակցային Հանրապետութեան շրջագծէն ներս ազատօրէն կազմակերպուելու իրաւունք, եւ Հայաստանի համար, այժմ թրքական, կը պահանջէր անկախութիւն, [նախկին] հողատարածքի վերահաստատում եւ տնտեսապէս զարգանալու երաշխիք:

[Ներկայ] յիշատակագրի բացատրականին մէջ կը գտնենք հետեւեալ տողերը (էջ 29).-

«Հայկական պատուիրակութեան Յուշագրի ընթերցումէն ետք, ամէն մարդ պիտի ընդունի, որ հայկական հարցի լուծումը նոյնքան ստիպողական է եւ անհրաժեշտ որքան՝ դժուար»:

Եթէ մեր հարցին լուծումը կ'ընդունուի դժուար, ապա այդ մէկը պէտք է բացատրուի թուրքիոյ հայ բնակչութեան բնաջնջման իրողութեամբ:

Արդարեւ, ինչ որ կը մնայ, կամ մանաւանդ ինչ որ պիտի մնայ պատերազմէն ետք տեղահանուած հայերէն, բնաւ հիմք չի կրնար ծառայել անկախ պետութեան մը, նոյնիսկ ինքնավար համայնք մը կազմելու համար: Այդ եղաւ արդէն գլխաւոր շարժառիթը թուրք վերին ղեկավարները կը պարծենան որ փայլուն եւ լիակատար կերպով ամբողջացուցած են իրենց գործը, ասիկա կը նշանակէ, որ խնայած են տարագրուած զանգուածներու խղճալի բեկորներուն միայն:

Այս բոլորով հանդերձ, մենք պիտի հաստատենք թէ՛ ինչ որ ալ ըլլայ Հայաստանը պիտի կարենայ վերակազմուիլ:

Երիտասարդ թուրքերու հարուածը հայկական

Le coup des Jeunes Turcs fut formidable, inouï dans l'histoire des peuples, mais non mortel pour la cause arménienne, pour la simple raison, qu'il reste encore, hors de leur atteinte, une quantité considérable d'Arméniens de Turquie, qui pourraient facilement repeupler l'Arménie.

1. Signalons d'abord, que les Arméniens de tout le vilayet de Van, de même que de quelques districts des vilayets de Bitlis et d'Erzeroum, échappèrent aux déportations et furent sauvés, grâce à la résistance.

Furent sauvés aussi les Arméniens des districts d'Alaschkert, de Bayazed, de la grande partie de la vallée de Passène, envahis par l'armée russe, les premiers jours de la guerre.

A leur nombre il faut ajouter ceux, qui furent trouvés, après la prise d'Erzeroum, de Mouch, d'Erzindjan, de Trébizonde, chez quelques tribus kurdes, qui les protégeaient, ou dans les montagnes, où ils continuaient encore leur résistance. De nombreux enfants et femmes furent arrachés aux musulmans.

Tous sont établis au Caucase et dans les régions occupées par l'armée russe.

2. Au moment de la déclaration de la guerre, plus de 350.000 jeunes gens, appartenant aux différentes régions de la Turquie, se trouvaient à l'étranger. Ils étaient pour la plupart du nombre d'ouvriers, d'artisans etc. qui quittaient habituellement leurs familles pour gagner de l'argent en Russie, en Amérique, en Egypte, en Bulgarie etc, et retourner chez eux.

350.000 jeunes gens,- cela veut dire presque autant de nouvelles familles restituées en Arménie libre.

3. Il y a outre cela, des centaines de milliers d'émigrés de Turquie, installés en Russie et ailleurs. Cette émigration prit des dimensions tangibles à partir de la guerre de Crimée, surtout dans la période de la domination d'Abdul Hamid.

Pour se faire une idée approximative de leur nombre il suffit de se rapporter à la statistique de M. Oupotchine, faite d'après les données officielles en 1845. M. Oupotchine comptait encore en 1845, en Turquie 2.500.000 Arméniens. En admettant les données, dont se servait Oupotchine, conforme à la réalité (d'après les sources arméniennes le nombre réel d'Arméniens fut supérieur), nous aurions dû trouver en Turquie en 1914, après 70 ans, au moins 6 millions d'Arméniens. Pourtant, à cette époque nous n'avons pu compter que 2.000.000 âmes en tout, et encore ce chiffre fut-il con-

հարցին համար եղաւ ահաւոր, բայց ո՛չ մահացու, պարզ այն պատճառով, որ իրենց հասողութենէն դուրս կը մնայ տակաւին Թուրքիոյ հայերու նկատուելի բազմութիւն մը, որ կրնայ դիւրութեամբ վերստին չէնցնել Հայաստանը:

1.- Նշենք նախ եւ առաջ, որ ամբողջ Վանի վերայէ-թին, ինչպէս նաեւ Պիթիսի եւ Էրզրումի կարգ մը գաւառներուն հայերը, շնորհիւ դիմադրութեան, ազատեցան տեղահանութենէն եւ փրկուեցան:

Փրկուեցան նոյնպէս Ալաշկերտի, Բայազէդի, Բասենի դաշտին մեծագոյն մասի հայերը, գաւառներ՝ որոնք պատերազմի առաջին օրերուն գրաւուեցան ռուսական բանակէն:

Անոնց վրայ պէտք է աւելցնել անոնք, որ Էրզրումի, Մուշի, Երզնկայի եւ Տրապիզոնի գրաւումէն ետք, գտնուեցան կարգ մը քրտական ցեղախումբերու մօտ, որոնք պատսպարած էին զիրենք, կամ լեռներու մէջ՝ ուր դեռ կը շարունակէին դիմադրել: Մահմետականներու ձեռքէն խլուեցան բազմաթիւ տղաք եւ կիներ:

Բոլորը հաստատուած են Կովկաս եւ ռուսական բանակի գրաւած շրջաններուն մէջ:

2.- Պատերազմի յայտարարութեան պահուն, աւելի քան 350.000 երիտասարդներ՝ Թուրքիոյ տարբեր շրջաններու պատկանող, կը գտնուէին արտասահման: Մեծ մասամբ գործաւորներ, արհեստաւորներ եւայլն էին անոնք, որոնք կը հեռանային իրենց ընտանիքներէն՝ Ռուսիա, Ամերիկա, Եգիպտոս, Պուլկարիա եւայլն՝ դրամ չահելու եւ վերադառնալու համար:

350.000 երիտասարդներ,- կը նշանակէ նոյնքան վերականգնած ընտանիքներ ազատ Հայաստանի մէջ:

3.- Ասկէ զատ, հարիւր հազարաւոր գաղթականներ կան Թուրքիայէն, հաստատուած Ռուսիա եւ այլուր: Այս արտագաղթը շօշափելի չափեր ստացաւ Խրիմի պատերազմէն ետք, մասնաւորաբար Ապտիւլ Համիտի իշխանութեան օրերուն:

Մօտաւոր գաղափար մը կազմելու համար անոնց թուաքանակին մասին, կը բաւէ դիմել պաշտօնական տուեալներու հիման վրայ 1845ին կազմուած Պ. Ուպոչինի վիճակագրութեան: Տակաւին 1845ին, Պ. Ուպոչինի Թուրքիոյ մէջ կը հաշուէր 2.500.000 հայեր: Ուպոչինի օգտագործած տուեալները իրականութեան համապատասխան համարելով (ըստ հայկական աղբիւրներուն հայերու իսկական թիւը աւելի մեծ էր), պէտք է որ 1914ին, 70 տարիներ ետք, Թուրքիոյ մէջ գտնէինք առնուազն 6 միլիոն հայեր: Սակայն այդ օրերուն ընդամէնը 2.000.000 հոգի կը համարուէինք, ու այս թիւն ալ վիճելի համարուեցաւ Թուրքերու կողմէ:

4 միլիոնի այս աչքառու տարբերութեան պատճառը միայն ջարդերը չեն, այլ նաեւ վերոյիշեալ արտագաղթը, որոնք երբեմն զանգուածային գաղթի բնոյթ կը ստանային:

testé par les turcs.

Cette différence frappante de 4 millions est due non seulement aux massacres, mais aussi aux *émigrations* susmentionnées, qui prenaient par moments le caractère d'exodes en masses.

En Russie, en particulier au Caucase, nous observons, au contraire, un accroissement extrêmement rapide de la population arménienne. De 350.000 qu'ils étaient en 1830 au Caucase, les arméniens y sont déjà au nombre de 2.000.000. Sans *immigration*, dans l'espace de 87 ans, ils auraient été 1.200.000, maximum 1.400.000. Il est évident que rien qu'au Caucase 600-800 m[ille] d'Arméniens se rapportent aux ressortissants de la Turquie.

Mais retourneront-ils, nous demande-t-on, l'amour platonique pour la sol natal suffit-il pour les ramener en masse en Arménie libre ?

Nous sommes sûrs, que le rapatriement s'effectuera rapidement. Si les émigrés avaient arrangé leur vie à l'étranger, on aurait pu exprimer des doutes à ce sujet. Mais la plus grande partie d'entre eux souffre de la manque de terres; ils n'attendent que l'heure de liberté sonner pour affluer de tous les coins du monde à leurs anciens foyers.

Une autre difficulté de la solution de notre question est notée dans le mémoire explicatif. La réunion des délégations trouve que «L'Allemagne ne s'opposera pas seulement à toute cession de territoire, mais aussi ... au partage de la Turquie». «De ce point de vue découlent des indications ... pour le règlement des affaires turques, indication qu'il importe d'envisager à chaque solution concrète» (p. 22).

Il en résulte, que notre cause, comme une des «affaires turques» se heurtera à l'opposition de l'Allemagne et que dans les intérêts de la Paix générale, elle pourrait être sacrifiée ou satisfaite à demi.

Cette question se présente à nous un peu autrement.

L'Allemagne, qui tendait à tenir sous son influence toute la Turquie, alors que les puissances d'Entente voulaient la partager, devrait naturellement opposer ses intérêts impérialistes à ceux de l'Entente; et la Réunion des délégations, dans le but d'aboutir à une prompte Paix de conciliation, n'aurait pu favoriser les intérêts d'un côté au détriment de l'autre.

Mais après la révolution russe la situation n'est plus la même. La Russie *renonce* catégoriquement aux an-

Ռուսիոյ եւ յատկապէս Կովկասի մէջ, ընդհակառակն կը տեսնենք հայ ազգաբնակչութեան արագ աճ: Հայերը, որ Կովկասի մէջ 350.000 էին 1830ին, այժմ 2.000.000 են: Առանց ներգաղթի, 87 տարուան մէջ անոնք պէտք է ըլլային 1.200.000, առաւելագոյնը 1.400.000: Բացորոշ է որ [յաւելեալ] 600-800.000ը կը վերաբերի Թուրքիոյ հայազգի քաղաքացիներուն:

Բայց պիտի վերադառնա՞ն անոնք, հարց կը տրուի մեզի. հայրենի հողի հանդէպ ունեցած պղատոնական սէրը կը բաւէ՞՞ վերստին բերելու համար զիրենք ազատ Հայաստան:

Վստահ ենք որ շատ արագ տեղի պիտի ունենայ Հայրենադարձութիւնը: Եթէ գաղթականները կարգաւորած ըլլային իրենց կեանքը արտասահմանի մէջ, կարելի էր այդ մասին կասկածներ ունենալ: Սակայն անոնց մեծագոյն մասը կը տառապի հողի պակասէն. կը սպասեն ազատութեան ժամու հնչելուն, աշխարհի բոլոր անկիւններէն գունդագունդ խուժելու համար իրենց հին օճախները:

Յիշատակագրի բացատրականին մէջ մեր հարցի լուծման համար ուրիշ դժուարութիւն մը եւս նշուած է: Պատգամաւորական ժողովը կը գտնէ, որ «Գերմանիա պիտի ընդդիմանայ ոչ միայն հողային որեւէ զիջումի, այլ նաեւ... Թուրքիոյ բաժանման»: «Այս տեսակէտէն կը բխին ցուցմունքներ... թրքական խնդիրներու կարգաւորման համար, ցուցմունքներ՝ զորս կարելոր է նկատի ունենալ իւրաքանչիւր հարցի իսկական լուծման համար (էջ 22):

Կը հետեւցուի որ մեր հարցը, որպէս «թրքական խնդիրներէն» մէկը, պիտի բախի Գերմանիոյ ընդդիմութեան եւ որ ան կրնայ զոհուիլ կամ կիսով զոհացուի՝ ընդհանուր խաղաղութեան շահերուն համար:

Այս հարցը այլապէս կը ներկայանայ մեզի:

Գերմանիան՝ որ կը ջանար իր ազդեցութեան տակ պահել ամբողջ Թուրքիան, մինչ Համաձայնական տէրութիւնները կ'ուզէին զայն [մասերու] բաժնել, բնականաբար իր կայսերապաշտական շահերը պիտի հակադրէր Համաձայնականներու [շահերուն]. եւ պատգամաւորական ժողովը, խաղաղութեան համար շուտափոյթ հաշտութեան մը յանգելու նպատակով, չէր կրնար մէկ կողմին շահերը նպաստաւորել ի հեճուկս միւս կողմին:

Բայց ռուսական յեղափոխութենէն ետք կացութիւնը այլեւս նոյնը չէ: Ռուսիան բացարձակօրէն կը հրաժարի [հողային] կցումներէն: Ֆրանսան եւ Մեծն Բրիտանիան, որոնք՝ կցումներու կամ հոգատարութեանց ընդարձակման առաջադրանքով, կ'ուզէին հակադրել մասամբ ռուսական տիրապետութիւնը Փոքր Ասիոյ մէջ, անհրաժեշտօրէն պիտի բարեփոխէին իրենց ծրագիրները: Այս փոփոխութիւնը թոյլ պիտի տայ որ

nexions. La France et la Grande Bretagne, qui, en projetant des annexions ou l'extension de leur protectorat, voulaient en partie contrebalancer la domination russe en Asie Mineure, seraient nécessairement amenées à modifier leurs programmes. Ce changement permettra que «les affaires turques» se présentent au monde sous leur vrai aspect. Les Arméniens, les Arabes, Les Syriens, Les Juifs, les Grecs, les Kurdes, les Chaldéens etc. pourront désormais réclamer soit l'indépendance, soit l'autonomie, ou le protectorat, sans être accusés de servir d'instruments des puissances.

Le centre de gravité n'est plus dans les tendances impérialistes des puissances, mais dans celles des peuples, gémissant sous le joug des dirigeants turcs.

Nous ne sommes donc pas en présence *du partage* de la Turquie, où les intérêts d'une puissance sont en opposition directe à ceux d'une autre, mais du *démembrement* de la Turquie, — procès naturel, historiquement nécessaire, où les aspirations des peuples à la liberté sont en opposition au régime de feu et de glaive.

En face de ce changement, l'Allemagne perd sa raison de défendre l'intégrité de l'Empire Ottoman. Si elle persiste à le faire et partant à s'opposer à la solution de la question arménienne et d'autres «affaires turques», ce serait une *atteinte* au principe du droit des peuples à disposer librement de leur sort, principe reconnu déjà pour certains cas par l'Allemagne elle-même.

La démocratie internationale irait contre ses propres principes, si elle considère nécessaire d'envisager les vues impérialistes allemandes, à chaque solution complète... des affaires turques, au lieu de les combattre de toutes ses forces.

«Թրքական հարցերը» աշխարհին ներկայանան իրենց իսկական տեսքով: Հայերը, արաբները, սուրիացիները, հրեաները, յոյները, քիւրտերը, քաղղէացիները եւ այլն այսուհետեւ պիտի կարենան պահանջել ըլլայ անկախութիւն, ըլլայ ինքնավարութիւն կամ հոգատարութիւն՝ առանց տէրութիւններուն գործիք ծառայելու ամբաստանութեան տակ իյնալու:

Ծանրութեան կեդրոնը այլեւս տէրութիւններու կայսերապաշտական ձգտումներուն մէջ չէ, այլ՝ թուրք ղեկավարներու լուծին տակ տառապող ժողովուրդներուն:

Հետեւաբար չենք գտնուիր Թուրքիոյ բաժանման [հարցին] առջեւ, ուր տէրութեան մը շահերը դէմ յանդիման կը գտնուին ուրիշի մը շահերուն, այլ Թուրքիոյ անդամահատութեան, — բնական գործընթաց, պատմականորէն անհրաժեշտ, ուր ժողովուրդներու ազատութեան ձգտումները հակադրուած են կրակի եւ սուրի վարչակարգին:

Այս փոփոխութեան լոյսին տակ Գերմանիա կը կորսնցնէ Օսմանեան կայսրութեան ամբողջականութիւնը պաշտպանելու պատճառաբանութիւնը: Եթէ շարունակէ ընել եւ, հետեւաբար, ընդդիմանալ հայկական հարցի եւ ուրիշ «Թրքական խնդիրներու» լուծումին, կը նշանակէ հարուածել սկզբունքն իսկ, որ [կը դաւանի] ժողովուրդներու իրաւունքը ազատորէն տնօրինելու իրենց ճակատագիրը: սկզբունք՝ Գերմանիոյ իսկ կողմէ ճանաչում գտած որոշ պարագաներու համար:

Միջազգային ժողովրդավարութիւնը իր սկզբունքներուն դէմ գործած պիտի ըլլար, եթէ «Թրքական խնդիրներու» հիմնական լուծման իւրաքանչիւր պարագային, անհրաժեշտ գտնէր հաշուի առնել գերմանական կայսերապաշտութեան հայեացքները, փոխանակ ընդդիմանալու անոնց:

Փաստ. 1685-1

3.- ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ Ռուստոմի ներկայացուցած Յուշագիրը
Ստոկհոլմի Ընկերվար Միջազգայնական Համագումարին (1917)

MEMORANDUM
DE LA FEDERATION REVOLUTIONNAIRE
ARMENIENNE "DACHNAKZOUTIOUN"

La paix immédiate est d'un intérêt primordial pour l'Arménie dévastée.

Elle doit être conclue sur la base de trois principes, énoncés par la démocratie russe. Mais si nous sommes adversaires des contributions de guerre, nous trouvons équitable de réclamer des indemnités pour les pays ruinés, surtout par des violations des droits des gens et des conventions internationales. Pareille sanction diminuerait sensiblement les risques des guerres futures.

Nous sommes également, comme nous l'étions avant la guerre, adversaires des annexions violentes. Mais comme ce principe donnait lieu à des interprétations diverses, l'assemblée générale de notre parti, tenue à Tiflis le 6-12 avril 1917, a trouvé nécessaire de souligner qu'elle considérerait comme acte antidémocratique non seulement l'annexion forcée des pays conquis, mais aussi le rattachement forcé des peuples à leurs anciens maîtres. Le principe "pas d'annexions" ne doit pas être traité isolément, mais éclairé à la lumière du principe du "droit des peuples de disposer librement d'eux-mêmes"

Nous joignons donc notre voix à celle des autres partis, qui demandent le rétablissement complet de la Belgique, de la Serbie, du Montenegro, de la Roumanie, de même que de la Pologne, unie et indépendante. Toutes les régions, enlevées à la Russie (sauf la Pologne russe), doivent être restituées à la République qui garantit à ses peuples le droit de disposer librement d'eux-mêmes. L'assemblée constituante de la Russie devra garantir toute liberté à la Finlande, L'Alsace-Lorraine qui a été détachée de force de la France, doit revenir à celle-ci, mais dans l'intérêt de la paix en Euro-

Թարգմանութիւնը.—

Անմիջական խաղաղութեան հաստատումը առաջնակարգ նշանակութիւն ունի աւերեալ Հայաստանի համար:

Ան պէտք է կնքուի ռուսական ժողովրդավարութեան¹ հռչակած երեք սկզբունքներուն հիման վրայ: Եթէ մենք հակառակ ենք պատերազմական հարկադրանքի գաղափարին², բայց եւ այնպէս կը գտնենք որ արդար է հատուցում պահանջել մասնաւորաբար այն երկիրներու համար, որոնք աւերուած են՝ մանաւանդ մարդկային իրաւունքներու եւ միջազգային դաշնագիրներու դրժումին հետեւանքով: Այդպիսի պատժամիջոց մը զգալիօրէն պիտի նուազեցնէր ապագայ պատերազմներու վտանգը:

Հակառակ ենք նոյնպէս, ինչպէս էինք նախապէս, հողային բռնագրաւումներուն: Եւ որովհետեւ այս սկզբունքը տարբեր մեկնաբանութիւններու տեղի կու տար, մեր կուսակցութեան ընդհանուր ժողովը (գումարուած Թիֆլիս, 1917 թ. 6-12 Ապրիլին)³ հարկ տեսաւ ընդգծելու որ հակաժողովրդավարական կը նկատէ ոչ միայն նուաճուած երկիրներու բռնագրաւումը, այլ նաեւ ժողովուրդներու ենթարկումը իրենց նախկին բռնակալներուն: «Ոչ կցումի» սկզբունքը պէտք է գործադրել անջատաբար, այլ տեսնել զայն «ժողովուրդներու ազատօրէն ինքնորոշուելու» սկզբունքին լոյսին տակ:

Հետեւաբար կը միանանք բոլոր անոնց, որոնք կը պահանջեն ամբողջական վերահաստատումը Պելլիտոյ, Սերպիտոյ, Մոնթենեգրոյի, Ռուսիանիոյ, ինչպէս նաեւ միացեալ եւ անկախ Լեհաստանի: Ռուսիայէն զրաւած բոլոր շրջանները (բացի ռուսական Լեհաստանէն)

1.- Խօսքը կը վերաբերի 1917ի Փետրուարին Ռուսիոյ մէջ տեղի ունեցած յեղափոխութեան, որուն շնորհիւ ժողովրդավարական կարգեր հաստատուած էին Ռուսիոյ մէջ:

2.- «Պատերազմական հարկադրանք»ը պէտք է հասկնալ այն իմաստով, որ յաղթական կողմը իրաւունք կը համարէր հողային կցումներ կատարել եւ այլ առանձնաշնորհումներ ունենալ, մինչդէռ Ստոկհոլմի համագումարը հրաւիրուած էր «անմիջական խաղաղութիւն» հաստատելու նպատակով՝ «առանց հողային կցումի» սկզբունքով:

3.- Յիշուած ժողովը ընդհանուր չէր, այլ ռայոնական:

pe, il sera peut-être bon qu'un referendum de la population indigène et expatriée détermine finalement le sort de ces provinces. Les intérêts des peuples des Balkans exigent la création de la Confédération Balkanique. La Macédoine aura la liberté de décider de son propre sort, c'est à dire qu'elle pourra faire partie de la Confédération, comme unité indépendante ou se rattacher à l'un des Etats voisins.

Nous réclamons pour tous les pays, où il y a des minorités nationales, l'adoption du principe d'autonomie territoriale ou culturelle.

Pour la Turquie, la Russie et la Perse, où est concentrée l'activité de notre parti, nous soulignons les revendications suivantes:

1. L'Arménie Russe doit être, avec la Géorgie et la Tartarie (de Transcaucasie) autonome au sein de la Russie Fédérative et Républicaine dont la loi fondamentale sera réglée par l'Assemblée Constituante.

2. Le droit de disposer librement d'elle-même ne peut être refusé à la Perse, qui a droit à l'indépendance politique complète. La Grande Bretagne et la Russie doivent enlever toutes les entraves imposées au libre développement de la Perse Constitutionnelle. Le régime féodal et théocratique doit y être supprimé complètement et l'Etat organisé et constitué sur des bases largement démocratiques. Les libertés nationales, culturelles, dont jouissent en fait les Arméniens, doivent être développées et fixées par la loi fondamentale.

3. Nous attirons l'attention de la démocratie internationale sur l'état tout exceptionnel de l'Arménie sous la domination des Turcs.

Toute la politique des dirigeants turcs tendait à diminuer le nombre des Arméniens dans leur patrie et à y augmenter la masse musulmane. Si le sultan Abdul Hamid avait encore accentué la politique traditionnelle basée sur l'extermination des Arméniens, les Jeunes Turcs ont suivi des directions identiques et décidé d'achever d'un coup la tâche que le Sultan Selim avait imposée à ses successeurs. Les provinces arméniennes, actuellement sous la domination des Turcs, sont presque vidées d'éléments arméniens et l'application littérale du principe énoncé ci-dessus serait, dans les circonstances présentes, une grande injustice, car ce ne seraient que les occupants qui seraient appelés à donner leur avis.

պէտք է վերադարձուին [ռուս] Հանրապետութեան, որ կ'երաշխաւորէ իր ժողովուրդներուն ազատ ինքնորոշման իրաւունքը: Ռուսիոյ Սահմանադիր ժողովը պէտք է երաշխաւորէ Ֆինլանտային ամէն ազատութիւն. Ֆրանսայէն խլուած Ալգաս-Լոռէնը պէտք է վերադարձուի իրեն, բայց եւրոպական խաղաղութիւնը պահպանելու համար, թերեւս լաւ է որ բնիկ եւ տարազրեալ ժողովուրդի մասնակցութեամբ հանրաքուէի մը միջոցաւ վճռուի վերջնական ճակատագիրը այս նահանգներուն: Պալքանեան ժողովուրդներու շահերը կը պահանջեն ստեղծուող Պալքանեան Համադաշնակցութեան մը: Մակեդոնիան պէտք է իրաւունք ունենայ որոշելու իր ճակատագիրը, այսինքն ան պէտք է կարենայ մաս կազմել Համադաշնակցութեան որպէս անկախ միաւոր եւ կամ միանալ դրացի պետութիւններէն մէկն ու մէկին:

Ազգային փոքրամասնութիւններ ունեցող բոլոր երկիրներուն համար կը պահանջենք որ որդեգրուի հողային կամ մշակութային ինքնավարութեան սկզբունքը:

Թուրքիոյ, Ռուսիոյ եւ Պարսկաստանի համար, ուր կեդրոնացած է մեր կուսակցութեան գործունէութիւնը, կարեւոր կը նկատենք հետեւեալ պահանջները.—

1) Ռուսահայաստանը, Վրաստանի եւ Կովկասի թաթարներուն հետ, պէտք է ըլլայ ինքնավար՝ Դաշնային եւ Հանրապետական Ռուսիոյ ծիրին մէջ, որուն հիմնական օրէնքը պիտի ճշդուի Սահմանադիր ժողովին կողմէ:

2) Ազատ ինքնորոշման իրաւունքը կարելի չէ մերժել Պարսկաստանին, որ քաղաքական ամբողջական անկախութեան իրաւունք ունի: Մեծն Բրիտանիան եւ Ռուսիան պէտք է վերցնեն Սահմանադրական Պարսկաստանի ազատօրէն զարգացման դէմ պարտադրուած բոլոր խոչընդոտները: Ամբողջովին պէտք է ջնջուի հոն տիրող աւատատիրական եւ աստուածպետական վարչակարգը, եւ պետութիւնը պէտք է կազմակերպուի լայնօրէն ժողովրդավարական հիմերու վրայ: Հայերուն՝ իրողապէս վայելած ազգային եւ մշակութային ազատութիւնները պէտք է ընդլայնուին եւ ամրազրուին հիմնական օրէնքով:

3) Միջազգային ժողովրդավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրենք թուրքերու տիրապետութեան տակ գտնուող Հայաստանի բացառիկ կացութեան վրայ:

Թուրք ղեկավարներու ամբողջ քաղաքականութիւնը կը ձգտէր հայերու թիւը նուազեցնել իրենց հայրենիքին մէջ, եւ հոն աւելցնել մահմետական զանգուածը: Եթէ սուլթան Ապիւլ Համիտ աւելի եւս շեշտած էր՝ հայերը բնաջնջելու աւանդական քաղաքականութիւնը, Երիտասարդ Թուրքերը, միեւնոյն ուղղութեան հետեւելով, որոշեցին մէկ հարուածով աւարտին հասցնել այն գործը զոր սուլթան Սելիմ պարտադիր դարձուցած

Nous demandons donc:

1. Que la démocratie internationale fasse son possible pour mettre fin à la tragédie séculaire arménienne, tolérée jusqu'à présent à cause des rivalités des puissances impérialistes; que le territoire de l'Arménie soit rendu aux Arméniens qui ont mérité ce rétablissement par leur passé de lutttes et que nos compatriotes expatriés aient la possibilité de revenir pour s'établir dans leurs foyers et se prononcer sur leur destinée nationale. Conformément au vœu énoncé par nos camarades français, il est du devoir de la démocratie internationale de prendre en considération non seulement les voix des survivants, mais aussi celles des victimes des dirigeants turcs, sinon la démocratie socialiste sanctionnerait une politique sanguinaire.

2. L'Arménie libre doit comprendre les 6 vilayets arméniens avec la Cilicie, excepté les régions musulmanes, annexées aux provinces arméniennes après la guerre russo-turque de 1877-1878.

3. L'Arménie devra être déclarée neutre et sa neutralité garantie internationalement.

4. Les régions de Hekkari (kurdes), de Djoulamerik (Chaldéens), de Botan, Ourfa (Kurdes), de Trébizonde (Lazes, Grecs et Arméniens), La Syrie et la Palestine Juive formeront des unités séparées. La constitution de ces unités et leurs relations réciproques et internationales seront réglées après la guerre. La province kurde Dersime jouira de l'autonomie. Constantinople est déclarée ville libre.

5. Comme le souvenir des atrocités passées pourrait donner lieu à des nouveaux conflits, il serait nécessaire de faire des déplacements partiels de différents éléments habitant l'Arménie.

6. Les éléments musulmans installés en Arménie par les dirigeants turcs, dans un but politique, seront ramenés à leurs anciens foyers.

Nous demandons en outre:

1. Que du gouvernement turc soit exigé une indemnité pour les familles des Arméniens exterminés au cours de la guerre, pour toutes les ruines matérielles, qu'on ne saurait même justifier par des raisons d'ordre stratégique, pour l'avoir en argent, en bétail, en marchandises, en meubles, enlevés aux Arméniens, au cours des massacres et des déportations par le Trésor, par les fonctionnaires civils et militaires, par les memb-

եր իր յաջորդներու համար: Ներկայիս թուրքերու տիրապետութեան տակ գտնուող հայկական նահանգները գրեթէ պարպուած են հայ տարրերէն, եւ այժմու պայմաններուն մէջ յիշեալ սկզբունքին տառացի գործադրութիւնը մեծ անարդարութիւն պիտի ըլլար, որովհետեւ զաւթողներուն միայն կարծիքը պիտի առնուի:

Հետեւաբար, կը պահանջենք՝

1) Որ միջազգային ժողովրդավարութիւնը իր կարելին ի գործ դնէ վերջ տալու համար հայոց դարաւոր ողբերգութեան՝ հանդուրժուած մինչեւ այսօր կայսերապաշտ պետութիւններու մրցակցութեան պատճառաւ: Նոյն հայաստանի հողամասը վերադարձուի հայերուն, որոնք արժանի են այդ հատուցման իրենց անցեալի մարտնչումներով, եւ որպէսզի տարագրուած մեր հայրենակիցները կարենան վերադառնալ իրենց օճախները եւ վճռել իրենց ազգային ճակատագիրը: Մեր Փրանսացի ընկերներու արտայայտած բաղձանքին համաձայն, միջազգային ժողովրդավարութեան պարտականութիւնն է հաշուի առնել ոչ միայն վերապրողներու ծայները, այլեւ թուրք ղեկավարներու զոհերուն (ձայնը), այլապէս ընկերվար ժողովրդավարութիւնը ընդունած ու վաւերացուցած պիտի ըլլար արիւնհարբու քաղաքականութիւն մը:

2) Ազատ Հայաստանը պէտք է բովանդակէ հայկական 6 նահանգները եւ Կիլիկիան, բացի մասմետական շրջաններէ, որոնք հայկական նահանգներուն կցուած են 1877-1878ի ռուսեթուրք պատերազմէն ետք:

3) Հայաստանը պիտի յայտարարուի չէզոք եւ իր չէզոքութիւնը երաշխաւորուի միջազգայնօրէն:

4) Հեքթարի (քիւրտ), Ջուլամերիկի (քաղդէացի) Պոհթանի, Ուրֆայի (քիւրտ), Տրապիզոնի (լազ, յոյն եւ հայ շրջանները), [ինչպէս նաեւ] Սուրիան եւ հրէական Պաղեստինը պիտի կազմեն անջատ միաւորներ: Այս միււրերու կազմութիւնը եւ անոնց փոխադարձ ու միջազգային յարաբերութիւնները պիտի որոշուին պատերազմէն ետք: Տերսիմի քրտական նահանգը պիտի օժտուի ինքնավարութեամբ: Կոստանդնուպոլիսը հռչակուած է [արդէն] ազատ քաղաք:

5) Որովհետեւ անցեալի սարսափները կրնան տեղի տալ նոր բախումներու, անհրաժեշտ պիտի ըլլայ մասնակի տեղափոխութիւններ կատարել Հայաստանի մէջ բնակող տարբեր տարրերու միջեւ:

6) Թուրք ղեկավարներու կողմէ՝ քաղաքական նպատակներով Հայաստանի մէջ տեղաւորուած մասմետական տարրերը պէտք է վերադարձուին իրենց նախկին վայրերը:

Կը պահանջենք նաեւ՝

1) Որ՝ հատուցում պահանջուի թրքական կառավարութենէն՝ պատերազմի ընթացքին բնաջնջուած հայ ընտանիքներուն՝ այն բոլոր նրկական վնասներուն

res du Comité Jeune Turc, par les bandes "tcheta"s, par les militaires et par la masse musulmane.

2. Que la démocratie internationale, en particulier les partis socialistes des puissances centrales et des Etats neutres agissent auprès de leurs gouvernements respectifs dans le but d'obtenir du gouvernement ottoman qu'il soit porté secours, par l'intermédiaire des pays neutres ou des alliés de la Turquie, aux survivants Arméniens, aux Syriens, Grecs et Juifs de Palestine. L'indifférence des partis socialistes, surtout des pays alliés à la Turquie, équivaut à participer à l'œuvre d'extermination de ce qui reste des Arméniens, pour la plupart femmes et enfants. Cette extermination est poursuivie par la voie lente par la faim, les privations et les maladies.

C'est aux pays neutres qu'incombe le but de poursuivre la conclusion de la paix. Mais comme le nombre de nations augmente [?] avec la marche des événements, il est nécessaire que les représentants des Neutres fassent tout leur possible pour empêcher leurs pays de s'engager à leur tour dans la guerre actuelle.

La démocratie internationale ne peut compter dans les circonstances présentes, sur le concours du parlement et des partis socialistes en Turquie. Après la perte des provinces d'Europe, il n'est de socialistes en Turquie que parmi les Arméniens. Dans la grande catastrophe nationale arménienne, les Jeunes Turcs n'ont eu aucune raison d'épargner les socialistes. Au contraire, les premières victimes ont été notamment les membres des partis, les rédacteurs, même les membres du parlement ottoman. Parmi les membres de notre organisation, on n'a pu sauver que ceux qui ont pris les armes ou gagné les montagnes. Les rédactions, les clubs du parti, les Maisons du peuple, les riches bibliothèques, les organisations rurales, embrassant presque la totalité des paysans, celle d'ouvriers, les unions professionnelles, les coopérations, les sociétés auxiliaires de gymnastique, de chant, de musique etc. Tout ce produit de travail obstiné des dizaines d'années d'organisation a été supprimé d'un seul coup par les constitutionnels de la Jeune Turquie.

Quant aux éléments d'opposition, musulmans et autres, parlementaires ou non, ils ne peuvent manifester leur opinion malgré leur nombre. Le régime Constitutionnel Jeune Turc étouffe la moindre opposition.

Համար, զորս կարելի չէ արդարացնել մինչև իսկ ռազմավարական նկատումներով. Հատուցում՝ այն բոլոր հարստութեանց՝ դրամ, անասուն, ապրանք, կարասի, որ խլուած են հայերէն պատերազմի եւ տարագրութեանց ընթացքին՝ պետական գանձին, քաղաքային եւ զինուորական պաշտօնեաներուն, իթթիհատ կոմիտէի անդամներուն, չեթայական վոհմակներուն, զինուորականներուն եւ մահմետական ամբոխին կողմէ:

2) Որ՝ միջազգային ժողովրդավարութիւնը, մասնաւորապէս կեդրոնական պետութեանց ընկերվար կուսակցութիւնները եւ չէզոք պետութիւնները ազդեցութիւն ի գործ դնեն իրենց համապատասխան կառավարութիւններուն վրայ, որպէսզի ստիպեն օսմանեան կառավարութիւնը որ, չէզոք երկիրներու կամ Թուրքիոյ դաշնակիցներու միջոցաւ, օգնութիւն հասցուի հայերուն, սուրիացիներուն, յոյներուն եւ Պաղեստինի հրեաներուն: Թուրքիոյ դաշնակից երկիրներու ընկերվար կուսակցութիւններու անտարբերութիւնը կը նշանակէ մասնակից ըլլալ՝ մեծ մասամբ կիներէ եւ մանուկները բազկացած ողջ մնացած հայերու բնաջնջումին: Այս ոչնչացումը կը հետապնդուի դանդաղօրէն՝ սովի, զրկանքներու եւ հիւանդութեանց ճամբով:

Չէզոք երկիրներու վրայ կ'իյնայ նաեւ խաղաղութեան կնքումի գործին հետապնդումը: Եւ սակայն, ինչպէս դէպքերու ընթացքը ցոյց կու տայ, [պատերազմի] ազդերու թիւը կ'աւելնայ. անհրաժեշտ է որ չէզոք պետութիւնները ամէն ինչ ի գործ դնեն որպէսզի արգիլեն իրենց երկիրներուն մասնակից դառնալ ներկայ պատերազմին:

Միջազգային ժողովրդավարութիւնը ներկայ պարզաներուն չի կրնար վստահիլ Թուրքիոյ խորհրդարանին եւ թուրք ընկերվար կուսակցութիւններու բերելիք նպաստին: Եւրոպական նահանգները կորսնցնելէ ետք, Թուրքիոյ մէջ, բացի հայերէն, ընկերվարականներ չեն մնացած: Հայոց ազգային մեծ աղետին մէջ, Երիտասարդ Թուրքերը ոչ մէկ ողջմտութիւն ունեցան ինայելու ընկերվարականներուն: Ընդհակառակն, առաջին զոհերը դարձան յատկապէս կուսակցականները՝ խմբագիրներն ու նոյնիսկ օսմանեան խորհրդարանի անդամները: Մեր կազմակերպութեան անդամներէն կարելի եղաւ փրկել միայն անոնք որ գէնք վերցուցին ու լեռները բարձրացան: Խմբագրատունները, կուսակցութեան ակումբները, ժողովրդային Տունները, ճոխ գրադարանները, ամբողջ գիւղացիութիւնը իրենց մէջ ընդգրկող երկրագործական ընկերութիւնները, բանուորական եւ արհեստակցական միութիւնները, համագործակցականները, մարմնամարզական, երգչախմբային, երաժշտական յարակից միաւորները եւայլն, — Տասնեակ տարիներու յարատեւ ջանքերու արդիւնք այս կազմակերպութիւնը մէկ հարուածով

Celle-ci ne pourra agir qu'en cas de victoire des Alliés, ou si le régime démocratique est établi en Allemagne.

La tranquillité dans nos régions et en général en Orient ne sera assurée que quand l'Europe sera reconstituée sur la base de la plus large démocratie. Le triomphe de la démocratie doit aboutir au désarmement général et élargir l'action de l'Internationale.

L'ARMENIE – HISTORIQUE

La Fédération révolutionnaire arménienne "Daschnakzoutioun" était le premier parti politique qui, pour la solution de la question arménienne, n'admettait pas comme condition sine qua non l'indépendance politique de l'Arménie, c'est à dire, la séparation de l'Arménie et de la Turquie. Bien que nous connaissions les tentatives faites par les réformateurs turcs, – des Richad, Ali, Fouad, Midhat paschas et autres, – qui au cours du XIXe siècle, ont travaillé à la régénérescence de la Turquie, et que nous en savions également les résultats stériles et quelquefois funestes, nous croyions que leur idée était féconde.

Nous attribuons les insuccès précédents à ce que les porteurs des idées réformatrices n'étaient que quelques groupes ou individualités, quoique haut placés, tandis que la masse musulmane restait entièrement réfractaire aux nouvelles idées. Nous savions aussi, que les réformateurs eux-mêmes n'étaient pas guidés par des convictions intimes, absolues de la nécessité vitale pour l'avenir de la Turquie, de réaliser toutes les mesures préposées et par conséquent, ils faisaient quelque fois semblant d'introduire des réformes dans le but d'obvier à l'intervention des puissances.

Mais nous pensions que le débâcle de 1877-1878 aurait amené un changement profond dans les esprits des Turcs. De plus, le fort courant des nouvelles idées démocratiques n'aurait pu laisser tout à fait indifférents les éléments musulmans en Turquie. Et le désir ardent de tous les dirigeants turcs d'éviter l'intervention des puissances dans les affaires intérieures de leur patrie aurait dû enfin pousser les futurs représentants de la Jeune Turquie à introduire sincèrement les réformes demandées.

Les mesures cruelles d'Abdul-Hamid envers les Turcs eux-mêmes démontraient suffisamment la présence réelle d'un vaste mécontentement contre l'an-

ջնջուեցաւ Երիտասարդ եւ Սահմանադրական Թուրքիոյ կողմէ:

Ինչ կը վերաբերի ընդդիմադիր տարրերուն, մահմետական ըլլան անոնք թէ այլ, խորհրդարանական կամ ոչ, հակառակ իրենց մեծ թուին, չեն կրնար անոնք արտայայտել իրենց կարծիքը: Երիտասարդ թուրքերու սահմանադրական վարչակարգը կը խեղդէ նուազագոյն ընդդիմութիւնն իսկ: Ընդդիմադիրները պիտի չկարենան գործել բացի այն պարագայէն երբ Դաշնակիցները յաղթական դուրս գան, կամ եթէ ժողովրդավար վարչակարգ հաստատուի Գերմանիոյ մէջ:

Մեր շրջաններուն եւ առհասարակ Արեւելքի մէջ խաղաղութիւն կրնայ հաստատուիլ միայն այն ժամանակ, երբ Եւրոպան կը վերակազմուի աւելի լայն ժողովրդավարական հիմերու վրայ: Ժողովրդավարութեան յաղթանակը պէտք է յանգի ընդհանուր ապագիտումի եւ միջազգային ընկերվարութեան գործունէութեան ընդլայնումին:

ՀԱՅԱՍՏԱՆ – [ՀԱՐՅԻՆ] ՊԱՏՄԱԿԱՆԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը քաղաքական առաջին կուսակցութիւնն էր, որ հայկական հարցի լուծումին համար նախապայման չդրաւ Հայաստանի քաղաքական անկախութիւնը, այսինքն Հայաստանի եւ Թուրքիոյ բաժանումը: Թէեւ ծանօթ էինք թուրք բարեկարգիչներ՝ Ռեշատ, Ալի Ֆուատ, Միտհատ փաշաներու փորձերուն, որոնք ԺԹ դարու ընթացքին ջանքեր թափեցին Թուրքիոյ վերանորոգութեան համար. ծանօթ էինք նոյնպէս անոնց ապարդիւն եւ երբեմն աղէտալի հետեւանքներուն. կը հաւատայինք այսուհանդերձ որ իրենց [վերանորոգչական] գաղափարը արդիւնաւոր կը դառնայ:

Չախողութիւնը կը վերագրէինք այն իրողութեան որ բարեկարգչական գաղափարներ կրողները քանի մը խմբակներ էին միայն, կամ բարձրաստիճան կարգ մը անհաստականութիւններ, մինչ մահմետական զանգուածը ամբողջովին կը հակառակէր նոր գաղափարներուն: Գիտէինք նոյնպէս որ բարեկարգիչները, իրենք, առաջնորդուած չէին ներքին ու բացարձակ այն համոզումով, որ Թուրքիոյ ապագային համար կենսական նշանակութիւն ունէր առաջադրուած միջոցներու իրագործումը եւ, հետեւաբար, երբեմն կը ձեւացնէին որ բարենորոգումները կ'ընէին պարզապէս առաջին առնելու համար [եւրոպական] պետութեանց միջամտութեան:

Կը խորհէինք որ 1877-78ի [պատերազմին] վերիվայրումները խոր փոփոխութիւն առաջացուցած կ'ըլլան թուրքերու մտայնութեան մէջ: Աւելին, ժողովրդավարական նոր գաղափարներու հոսքը չէր կրնար բոլորովին անտարբեր թողուլ Թուրքիոյ մահմետական տարրերը: Թուրք բոլոր դեկավարներու ջերմ փափաքը եւս,

cien régime.

Et nous croyions opportun de poursuivre notre but, autant que possible, avec le concours des autres éléments habitant la Turquie.

D'après les décisions de l'assemblée générale en 1892, le parti *Daschnakzoutioun* dans sa lutte acharnée et implacable contre le régime despotique, cherchait à attaquer de préférence les causes du mal dont souffraient non seulement les Arméniens, mais aussi les autres peuples. En propageant l'idée de la solidarité de toutes les nationalités, le parti faisait des efforts spéciaux pour découvrir surtout les éléments d'opposition parmi les Turcs et contribuer à l'organisation des premiers cadres révolutionnaires de la race dominante. L'organe central du parti "Droschak" ne laissait échapper aucune occasion pour souligner la différence que mettait le parti entre le gouvernement turc et le peuple turc, et pour démontrer aussi que notre lutte était dirigée exclusivement contre le gouvernement, même après les évènements sanglants de 1895, lorsque toute la presse vociférait contre les atrocités des Musulmans en général, "Droschak" m'hésita pas à plaider pour la masse musulmane, quoique celle-ci fût dans sa majeure partie imprégnée du sang de centaines de milliers d'Arméniens. Nous la regardions comme un instrument inconscient dans les mains du gouvernement du Sultan Abdul-Hamid, seul responsable des horreurs. Nous avons même jugé opportun de déclarer par notre organe "Droschak" de même que le rapport du parti présenté au Congrès International socialiste de Londres (1896), que nous aspirions à l'autonomie de l'Arménie au sein de la Turquie régénérée, démocratique et fédérative.

Des relations immédiates furent établies entre nous et les Jeunes Turcs émigrés en Europe, et grâce aux efforts persévérants du parti, le premier comité révolutionnaire Jeune Turc fut enfin créé en 1897 à Genève. Son manifeste, publié en des milliers d'exemplaires, fut distribué aux musulmans en Turquie comme en Perse par l'intermédiaire de nos organisations. En même temps on projeta une action commune à Constantinople.

Nos liens avec les Jeunes Turcs devinrent plus intimes après l'arrivée à Paris et à Genève de Tamat Mahmoud pascha, de ses fils et d'autres réfugiés aux tendances plus libérales et plus révolutionnaires. Les Jeu-

որ կը ձգտէր խուսափիլ իրենց հայրենիքի ներքին գործերուն մէջ մեծ պետութիւններու միջամտութիւններէն, պէտք է ի վերջոյ մղէր Երիտասարդ Թուրքիոյ ապագայ ներկայացուցիչները, որ անկեղծօրէն հետամուտ ըլլան պահանջուած բարեկարգումներու իրագործումին:

Ապտիւլ Համիտի գործածած դաժան միջոցները թուրքերուն իսկ նկատմամբ, բաւարար փաստ էին որ մեծ դժգոհութիւն մը կար հին վարչակարգին դէմ:

Եւ մենք յարմար կը գտնէինք մեր նպատակը հետապնդել, որքան կարելի էր, Թուրքիա ապրող միւս տարրերու գործակցութեամբ:

1892 տարուան Ընդհ. Ժողովի որոշումներուն համաձայն, Հ. Յ. Դաշնակցութիւնը, բռնատիրական վարչակարգին դէմ իր մղած կատաղի ու անողոք պայքարի ընթացքին, կը ջանար նախընտրաբար թիրախ ընտրել չարիքին այն պատճառները, որոնցմէ կը տառապէին ոչ միայն հայերը, այլ նաեւ միւս ժողովուրդները: Զատագով հանդիսանալով բոլոր ազգերու միասնութեան, կուսակցութիւնը յատուկ ճիգ կը թափէր յատկապէս թուրք ընդդիմադիր տարրերուն մէջ, նպատակ ունենալով «տիրող ցեղի» յեղափոխական առաջին շարքերու կազմակերպումը: Կուսակցութեան պաշտօնաթերթ «Դրօշակ»ը ոչ մէկ առիթ կը փախցնէր ընդդէմը համար այն տարրերութիւնը որ կուսակցութիւնը կը դնէր թուրք կառավարութեան եւ թուրք ժողովուրդին միջեւ, փաստելու համար նոյնպէս, որ մեր պայքարը ուղղուած էր բացառապէս կառավարութեան դէմ եւ այս՝ նոյնիսկ 1895ի արիւնալի դէպքերէն ետք, երբ մամուլը բարձրադաղակ կը մեղադրէր բոլոր մահմետականները ընդհանրապէս, իսկ «Դրօշակ» չվարանցեալ պաշտպանելու մահմետական զանգուածը, հակառակ անոր որ մեծամասնութեամբ այս վերջինիս ձեռքերը թաթիլուած էին հարիւր հազարաւոր հայերու արեան մէջ: Մենք կը նկատէինք զայն իբրեւ անգիտակից գործիք սուլթան Ապտիւլ Համիտի կառավարութեան ձեռքին, — միակ պատասխանատուն գործուած գազանութիւններուն: Յարմար դատեցինք նոյնիսկ յայտարարելու մեր պաշտօնաթերթ «Դրօշակ»ով եւ Լոնտոնի մէջ կայացած Միջազգային ընկերվար համագումարին ներկայացուցած տեղեկագրին մէջ, որ կը ձգտէինք Հայաստանի ինքնավարութեան՝ վերանորոգ, ժողովրդավար եւ դաշնակցային Թուրքիոյ շրջագծին մէջ:

Անմիջական յարաբերութիւններ հաստատուեցան մեր եւ Եւրոպա գաղթած Երիտասարդ Թուրքերու հետ եւ շնորհիւ կուսակցութեան հետեւողական ճիգերուն, վերջապէս 1897ին Ժընեւի մէջ ստեղծուեցաւ Երիտասարդ թուրքերու յեղափոխական առաջին կոմիտէն: Իր յայտարարութիւնը, հազարաւոր օրինակներով տպուած, մեր կազմակերպութիւններու միջոցաւ բաժնուեցաւ Թուրքիոյ, ինչպէս նաեւ Պարսկաստանի

nes Turcs écrivaient dans notre organe, en développant leurs vues de solidarité. Ils publiaient des brochures, lançaient des proclamations que nous distribuons dans nos régions en grande quantité.

En même temps, les négociations furent engagées (depuis 1897) dans l'intérieur du pays avec les Turcs et les Kurdes. Peu à peu, elles aboutirent à l'action. Les comités mixtes publièrent des journaux et des proclamations en turc (Van, Erzeroum, Mouch), et les actions communes sur le terrain politique, agraire, venaient rompre les entraves imposées par les traditions séculaires. Pour montrer l'importance du changement produit, il suffit de rappeler que lors de la révolte à Erzeroum, en 1906, organisée de commun accord, les chefs turcs défendirent aux camarades arméniens toute participation aux manifestations publiques, et après les arrestations en masse des Turcs, pas un Arménien ne fut dénoncé, malgré les tortures habituelles dans les prisons. A Van, ce fut grâce au large concours des kurdes que notre Comité Central put transporter en 1907 des milliers de fusils et plus d'un million de cartouches. Dans les provinces de Van et de Mouch, les paysans kurdes se mettaient volontiers sous la protection de nos comités pour lutter contre les vexations des beys féodaux. Le second Congrès (le premier congrès qui eut lieu en 1902, n'eut aucun résultat pratique à cause de l'opposition que fit le groupe d'Ahmed Riza "Union et Progrès" à la tactique révolutionnaire) à Paris des Jeunes Turcs et des révolutionnaires arméniens (décembre 1907), dû à l'initiative de l'assemblée générale de notre parti (mars 1907), pris à Vienne, eut un grand retentissement dans les cercles turcs avancés et à nos yeux il fut le couronnement de nos efforts de 15 ans. C'est dans ce congrès qu'un accord formel fut établi entre le parti *Daschnakzoutioun* et les Jeunes Turcs dans le but de renverser Abdul-Hamid et de rétablir la constitution. C'est là où la méthode révolutionnaire fut adoptée par tous les Jeunes Turcs et que l'on traça une action commune.

La Révolution, survenue en 1908, l'exaltation générale à Constantinople et dans les provinces, les manifestations ininterrompues, les discours ardentes, les appels à la fraternité et à l'union semblaient annoncer, — comme on le rêvait alors, — le commencement d'une nouvelle ère dans l'histoire lugubre de la Turquie.

Il semblait que les idées des Richad, Midhat et

մասմետականներուն: Միեւնոյն ժամանակ, ձեռնարկը-
ւեցաւ համատեղ գործունէութեան մը Կոստանդնու-
պոլսոյ մէջ:

Մեր կապերը Երիտ. թուրքերուն հետ աւելի սերտա-
ցան՝ Տամատ Մահմուտ փաշայի, իր որդիներուն եւ
աւելի ազատական ու յեղափոխական ձգտումներ ունե-
ցող այլ գաղթականներու ժընեւ եւ Փարիզ հասնելէն
ետք: Երիտ. թուրքերը կը գրէին մեր պաշտօնաթերթին
մէջ, միասնականութեան տեսակէտներ զարգացնելով:
Կը հրատարակէին պրոչիւրներ եւ յայտարարութիւն-
ներ, զորս մեծ քանակութեամբ կը ցրուէինք մեր շըր-
ջաններուն մէջ:

Միեւնոյն ատեն, 1897էն սկսեալ բանակցութիւններ
սկսան երկրին ներսը թուրքերուն եւ քիւրտերուն հետ:
Հետզհետէ գործի վերածուեցան անոնք: Խառն կոմի-
տէները թուրք լեզուով լրագիրներ եւ յայտարարու-
թիւններ հրատարակեցին Վանի, Էրզրումի եւ Մուշի
մէջ. այսպէս, քաղաքական եւ երկրագործական գետնի
վրայ տարուած գործունէութիւնը կու գար քանդելու
դարաւոր աւանդութեանց պարտադրած արգելքները:
Յոյց տալու համար տեղի ունեցած փոփոխութեանց
կարեւորութիւնը, կը բաւէ յիշել որ միասնաբար կազ-
մակերպուած 1906ի Էրզրումի ըմբոստութեան ատեն,
թուրք ղեկավարները թոյլ չտուին որ հայ ընկերները
որեւէ մասնակցութիւն ունենան հրապարակային ցոյ-
ցերուն մէջ, եւ մեծ թիւով թուրքերու ձեռքակալութե-
նէն ետք, եւ հակառակ բանտերու մէջ ի գործ դրուած
սովորական չարչարանքներուն, ո՛չ մէկ հայ մատնուե-
ցաւ: Վանի մէջ քիւրտերու լայն օժանդակութեան
չնորհիւ է որ 1907ին մեր Կեդր. կոմիտէն յաջողեցաւ
հազարաւոր հրացաններ եւ աւելի քան մէկ միլիոն
փամփուշտ փոխադրել: Վանի եւ Մուշի նահանգներուն
մէջ, քիւրտ գիւղացիները կամովին մեր կոմիտէներու
պաշտպանութեան կ'ապաւինէին՝ պայքարելու համար
աւատատէր պէյերու հարստահարութեանց դէմ: Ե-
րիտ. թուրքերու եւ հայ յեղափոխականներու 1902ի ա-
ռաջին համագումարը գործնական ոչ մէկ արդիւնք
տուած էր՝ Ահմէտ Ռիզայի «Միութիւն եւ Յառաջդի-
մութիւն» խմբակին յեղափոխական մարտավարու-
թեան ընդդիմանալուն պատճառաւ: 1907 թ. Դեկտեմ-
բերին Փարիզի երկրորդ համագումարը, որ կայացած
էր մեր կուսակցութեան Ընդհ. ժողովի նախաձեռնու-
թեամբ (Մարտ 1907), մեծ արձագանգ գտաւ թուրք
առաջաւոր շրջանակներուն մէջ եւ, մեր տեսակէտով,
հանդիսացաւ պսակումը 15 տարիներու մեր ջանքե-
րուն: Այս համագումարին մէջ է որ բացայայտ համա-
ձայնութիւն գոյացաւ Դաշնակցութեան եւ Երիտ.
թուրքերու միջեւ՝ Ապտիւլ Համիտը տապալելու եւ
Սահմանադրութիւնը վերահաստատելու նպատակով:
Հո՛ն է որ բոլոր երիտասարդ թուրքերու կողմէ որ-
դեգրուեցաւ յեղափոխական գործելակերպը եւ գծուե-

autres réformateurs sans succès avaient enfin trouvé dans la personne des Jeunes Turcs de 1908 leurs heureux interprètes. On s'imaginait que le chartes des libertés, proclamées si solennellement en 1839 et en 1856 et restées lettres mortes, étaient déjà en voie de réalisation. Et vraiment, la liberté de la presse, de la parole, l'égalité des peuples fut affirmée. Toutes les restrictions, décrétées contre les Arméniens en qualité de révolutionnaires, furent immédiatement abolies. Condamnés politiques et les émigrés furent amnistiés et reçus avec de grands honneurs. On leur témoigna la plus haute considération et en même temps une confiance entière pour remplir les charges publiques. Tout cela suffisait à fortifier l'espérance que les nouvelles idées étaient pénétrées dans les masses et que la Turquie pouvait cette fois traverser la crise historique sans devoir subir une nouvelle réaction.

Le gouvernement Jeune Turc eut même l'audace d'expulser des régions arméniennes les musulmans qui y avaient été introduits sous l'ancien régime, pour livrer les terres aux propriétaires arméniens qui avaient été forcés d'émigrer au Caucase, en Perse, en Amérique et ailleurs.

La Jeune Turquie gagnait non seulement nos sympathies, mais aussi la confiance de certaines puissances qui pensaient même abolir les capitulations et prêter leur large concours à la consolidation définitive du nouveau régime. A cette dernière circonstance, les Jeunes Turcs accordaient une importance spéciale et si, dans la suite, ils s'abstenaient d'excès manifestes contre les autres nationalités, c'est qu'ils ne voulaient pas perdre les sympathies de l'Europe.

L'entente entre le Parti "Daschnakzoutioun" et le Comité Jeune Turc, établie avant la Révolution pour rétablir la constitution ottomane, fut jugée nécessaire aussi pour la première période de la Constitution – malgré la divergence des vues des deux organisations – dans l'unique but de consolider le nouveau régime et de mener à bout la lutte contre les féodaux dans nos régions, lutte également nécessaire aux deux partis. D'ailleurs, le Comité Jeune Turc était seul à fixer ses racines dans les couches démocratiques du peuple turc.

Pourtant la lune de miel de la Révolution Jeune Turque ne fut pas de longue durée, et notre parti eut à subir de nombreuses déceptions, qui devinrent de plus en plus cruelles.

ցաւ հասարակաց գործունէութեան մը ծրագիրը:

1908 թ. յեղափոխութիւնը, Կոստանդնուպոլսոյ եւ գաւառներուն մէջ անոր առաջացուցած ընդհանուր խանդավառութիւնը, անընդհատ տեղի ունեցող ցոյցերը, կրակոտ ճառերը, եղբայրակցութեան եւ միութեան ուղղութեամբ արձակուած կոչերը կարծես կ'աւետէին, ինչպէս կ'երեւակայէինք այն ատեն – նոր դարաշրջանի մը սկզբնաւորումը՝ Թուրքիոյ եղբրական պատմութեան մէջ:

Կը թուէր թէ Ռեշատներու, Միտհատներու եւ միւս բարեկարգիչներու յաջողութիւն չգտած գաղափարները, ի վերջոյ, յանձին 1908ի Երիտ. թուրքերուն, գտած էին իրենց երջանիկ կենսագործողները: Կը թուէր թէ ազատութեան հրովարտակները, այնքան հանդիսաւոր կերպով հռչակուած 1839ին եւ 1856ին եւ մեռեալ տառ մնացած, իրագործման ճամբուն վրայ են արդէն: Եւ իսկապէս, հաստատուեցան մամուլ եւ խօսքի ազատութիւնը, ժողովուրդներու հաւասարութիւնը: Հայերու դէմ (իբրեւ յեղափոխականներու) արձակուած բոլոր հրամանները անմիջապէս ջնջուեցան: Քաղաքական բանտարկեալներն ու գաղթականները ներումի արժանացան եւ ընդունուեցան մեծ պատիւներով: Մեծ յարգանք ցոյց տրուեցաւ անոնց եւ միեւնոյն ժամանակ վստահութիւն՝ հանրային գործերը վարելու: Այս բոլորը բաւ էին ամրապնդելու այն յոյսը, որ նոր գաղափարները թափանցած էին զանգուածներուն մէջ եւ որ Թուրքիան այս անգամ կրնար շրջանցել պատմական տագնապը, գերծ մնալով յետադիմական նոր շարժումի մը ենթարկուելու վտանգէն:

Երիտ. թուրքերու կառավարութիւնը յանդգնեցաւ նոյնիսկ հայկական շրջաններէն վտարելու նախկին վարչակարգի կողմէ բերուած մահմետականները, եւ հողերը վերադարձնելու հայ սեփականատէրերուն, որոնք պարտադրուած՝ գաղթած էին Կովկաս, Պարսկաստան, Ամերիկա եւ այլուր:

Երիտասարդ Թուրքիան կը շահէր ոչ միայն մեր համակրանքը, այլեւ վստահութիւնը որոչ պետութիւններու, որոնք նոյնիսկ կը խորհէին ջնջել քափիթիւլախոնները եւ լայնօրէն օժանդակել նոր վարչակարգին վերջնական ամրապնդումին: Երիտ. թուրքերը մասնաւոր կարեւորութիւն կ'ընծայէին այս խնդրին, եւ եթէ հետագային միւս ազգութիւններուն դէմ բացայայտ ծայրայեղութիւններէ խուսափեցան, պատճառը այն էր որ չէին ուզեր կորսնցնել Եւրոպայի համակրանքը:

Յեղափոխութենէն առաջ, եւ օսմանեան սահմանադրութիւնը վերահաստատելու նպատակով՝ Հ. Յ. Դաշնակցութեան եւ Երիտ. թուրքերու համերաշխութիւնը – հակառակ երկու կազմակերպութեանց միջեւ գոյութիւն ունեցող տարակարծութեանց – անհրաժեշտ եղաւ շարունակել Սահմանադրութեան առաջին շրջանին եւս, որպէսզի ամրապնդուի նոր վարչակարգը:

La première eut lieu après le contre-coup des réactionnaires, acolytes d'Abdul Hamid, le 31 mars 1909. Le mouvement fut, il est vrai, vite étouffé. Constantinople fut repris par l'armée constitutionnelle et Abdul Hamid fut déclaré déchu. Mais cette victoire des Jeunes Turcs fut le commencement de la défaite des idées jeunes Turcs. Au lieu de combattre l'esprit réactionnaire, au risque même de perdre provisoirement le pouvoir, les Jeunes Turcs trouvèrent mieux d'aller par la voie de la moindre résistance dans leur lutte contre les réactionnaires. Comme ceux-ci exploitaient le "Chariath" en présentant les Jeunes Turcs comme des athés, comme des instruments des infidèles, comme des guaiours, les "nouveaux réformateurs" commencèrent à se montrer fanatiques de l'Islam, et partant adversaires des Chrétiens.

Le congrès de Salonique des Jeunes Turcs vint démontrer que la politique des Vieux Turcs gagnait de plus en plus de terrain sous le drapeau de la Jeune Turquie.

En analysant, dans ce congrès, la situation du pays, créée après le régime constitutionnel, les dirigeants turcs ne le trouvèrent pas consolante. Mais au lieu d'en chercher les causes dans leur incapacité de réaliser les principes énoncés par eux-mêmes, ils vinrent à la conclusion, que ces principes, n'étaient pas compatibles avec la psychologie des masses musulmanes, étaient contraires aux intérêts de la Turquie, comme Etat musulman et turc par excellence. De cette manière, les bases de l'ottomanisme, au nom duquel les Jeunes Turcs combattaient les tendances séparatistes des divers nationalités, furent ébranlées par eux-mêmes. Et le principe de l'ottomanisme, qui d'après la conception des Jeunes d'avant la Révolution, devait signifier l'égalité de tous les sujets de l'Empire ottoman sans distinction de races et de religions, cessait de correspondre aux vues du Comité après quelque temps de vie constitutionnelle.

Se basant sur des intérêts faussement compris des musulmans, en particulier des Turcs, les Jeunes se prononcèrent contre l'égalité réelle des nationalités, en considérant que les conditions égales favorisent le développement économique et culturel des Chrétiens au détriment de la race dominante.

Dans ce congrès, il fut décidé, entre autres mesures, de peupler de musulmans, surtout de Turcs, les

եւ աւարտին հասցուի մեր շրջաններուն մէջ աւատատէրերու դէմ մղուած պայքարը. պայքար մը՝ որ անհրաժեշտ էր երկու կուսակցութիւններուն համար հաւասարապէս: Այլապէս նաեւ, Երիտ. թուրքերու կոմիտէն միակն էր որ արմատ կը նետէր թուրք ժողովուրդի առաջաւոր խաւերուն մէջ:

Այսուհանդերձ, Երիտասարդ Թուրքիոյ մեղրամիսը երկար չտեւեց, եւ մեր կուսակցութիւնը ունեցաւ բազմաթիւ յուսախաբուցութիւններ, հետզհետէ աւելի ու աւելի չարաղէտ:

Առաջինը տեղի ունեցաւ 1909 թ. Մարտ 31ին, Ապտիւլ Համիտի արբանեակներու յետադիմական հարձակումէն ետք: Ճիշդ է որ շարժումը արագորէն խեղդուեցաւ: Կոստանդնուպոլիսը վերագրաւուեցաւ սահմանադրական բանակին կողմէ, եւ Ապտիւլ Համիտ գահնկէց եղաւ: Սակայն Երիտ. թուրքերու այս յաղթանակը սկիզբն եղաւ իրենց գաղափարական պարտութեան: Փոխանակ յետադիմութեան դէմ մարտնչելու — ի գին նոյնիսկ ժամանակաւորապէս իշխանութիւնը կորսնցնելու վտանգին — Երիտ. թուրքերը նախընտրեցին մեղմացնել իրենց պայքարը յետադիմականներուն հանդէպ: Եւ որովհետեւ վերջինները կը շահագործէին Շարիաթը՝ Երիտ. թուրքերը ներկայացնելով իբրեւ անաստուածներ, իբրեւ անհաւատներու գործիք, իբրեւ կեաւուր, — «Նոր բարեկարգիչները» սկսան իրենք զիրենք ցոյց տալ որպէս մոլեռանդ իսլամներ եւ, հետեւաբար, թշնամի քրիստոնեաներուն:

Երիտ. թուրքերու Սելանիկի համագումարը եկաւ փաստելու որ Հին թուրքերու քաղաքականութիւնը հետզհետէ աւելի գետին կը շահէր՝ Երիտասարդ Թուրքիոյ դրօշին ներքեւ:

Այս համագումարին մէջ, սահմանադրական վարչակարգէն ետք Թուրքիոյ մէջ ստեղծուած կացութիւնը քննութեան առնելով, Երիտ. թուրքերը մխիթարական չգտան զայն: Սակայն, փոխանակ անոր պատճառները իրենց իսկ հռչակած սկզբունքները կենսագործելու անկարողութեանը մէջ փնտռելու, — յանգեցան այն եզրակացութեան, որ այդ սկզբունքները յարմար չէին մահմետական զանգուածներու հոգեբանութեան, որ՝ անոնք հակառակ էին Թուրքիոյ նման մահմետական եւ գերազանցօրէն թուրք պետութեան մը շահերուն: Այս ձեւով, իրենք իսկ խախտեցին հիմերը Օսմանիզմին, որուն անունով Երիտ. թուրքերը կը հալածէին տարբեր ազգութեանց անջատողական շարժումները. եւ Օսմանիզմի սկզբունքը, որ նախա-յեղափոխական շրջանի Երիտ. թուրքերու մտայնացումով պէտք է նշանակէր Օսմանեան կայսրութեան բոլոր հպատակներուն հաւասարութիւնը՝ առանց ցեղի եւ կրօնի խտրութեան, կը դադարէր քիչ անց համապատասխան ըլլալէ կոմիտէի տեսակէտներուն:

Մահմետականներու եւ ի մասնաւորի թուրքերու

régions où les éléments chrétiens se trouvaient en masse plus ou moins compacte. Le congrès n'avait donc qu'une apparence de nouveauté. Il ne formule et ne concrétise que ce qui depuis longtemps animait les esprits des dirigeants turcs.

Même les mouvements des Albanais, dont la plupart musulmans, des Arabes, de Syriens, provoqués par l'étroite politique de nationalisme, ne purent arrêter les dirigeants Jeunes Turcs dans leur voie funeste.

En poursuivant les intérêts de Turcs, ils ruinaient la Turquie.

Les Jeunes Turcs n'avaient toujours l'adoption des résolutions susmentionnées, mais les événements ne s'attardèrent pas à dévoiler la vérité. Le gouvernement turc se mit à installer les musulmans en Macédoine et les provinces arméniennes. Il arrêta le retour des terres enlevées aux Arméniens sous l'ancien régime et il protégea de nouveau les beys kurdes etc.

Après une série de vaines protestations contre la tournure des Jeunes Turcs, le parti "Daschnakzoutioun" se trouva la nécessité, au mois de mai 1912, se basant sur la décision de l'assemblée générale du parti en 1911, de rompre l'entente avec le Comité Jeune Turc, en énumérant les causes dans un mémorandum détaillé.

La même politique, commencée à être appliquée en Macédoine, provoqua les vives protestations des Macédoniens. Les "tcheta"s (bandes) reprurent leur activité. Les éléments partisans de la Turquie, hostiles à l'intervention des puissances balkaniques, se jetèrent de nouveau dans les bras du gouvernement bulgare. Des hostilités conduisèrent aux attentats à Ichtib, Kotchana, aux massacres des Chrétiens, jusqu'à la guerre balkanique et la débâcle formidable de la Turquie.

On aurait pu croire que les funestes conséquences de l'application de la vieille et toujours nouvelle politique en Macédoine aurait influencé les Jeunes Turcs et les aurait détournés d'une nouvelle aventure périlleuse. Le langage des organes Jeunes Turcs fut un moment changé. On préconisa, après la guerre balkanique, une autre politique en Asie Mineure, la vraie patrie des Turcs. Mais ce ne fut qu'un moment. Après le petit succès à la seconde guerre balkanique, tous les beaux mots furent de nouveau mis dans l'oubli.

Les Jeunes Turcs après le désastre dans les Balkans allèrent plus loin encore, jusqu'à adopter la formule

կողմէ սխալ ըմբռնուած շահերու վրայ հիմնուած, Երիտ. թուրքերը վճռականօրէն դէմ արտայայտուեցան ազգութեանց իրական հաւասարութեան, նկատի ունենալով որ հաւասար պայմանները կը նպաստեն քրիստոնեաներու տնտեսական եւ մշակութային զարգացումին, ի վնաս իշխող ցեղի [չահերուն]:

Այս համագումարին մէջ, այլեւայլ միջոցառումներու կողքին, որոշուեցաւ մահմետականներով, մասնաւորապէս թուրքերով բնակեցնել այն շրջանները, ուր քրիստոնեայ տարրերը այս կամ այն չափով հոծ զանգուածով կը գտնուէին: Համագումարը երեւութապէս միայն նոր էր: Ան կը բանաձեւէ ու շօշափելի իրողութեան կը վերածէ այն ինչ՝ որ երկար ատենէ ի վեր կ'ոգեւորէր թուրք ղեկավարներուն մտայնութիւնը:

Մինչեւ իսկ արպանացիներու (մեծամասնութեամբ մահմետական), արաբներու, սուրիացիներու շարժումները, որոնք հետեւանք էին ազգայնական այդ նեղմիտ քաղաքականութեան, չյաջողեցան ետ կեցնել Երիտ. թուրք ղեկավարները իրենց բռնած աղէտալի ուղիէն:

Թուրքերու շահերը հետապնդելով, անոնք քանդեցին Թուրքիան:

Երիտ. թուրքերը կ'ուրանային միշտ վերեւ յիշուած որոշումներու որդեգրումը. դէպքերը շատ չուշացան քողագերծելու համար իրականութիւնը: Թուրք կառավարութիւնը սկսաւ մահմետականներ տեղաւորել Մակեդոնիա եւ հայկական նահանգներ: Դադրեցուց հին վարչակարգի օրերուն հայերէն խլուած հողերուն վերադարձը, եւ վերստին պաշտպան կանգնեցաւ քիւրտ պէյերուն:

Երիտ. թուրքերու շրջադարձին դէմ եղած շարք մը ապարդիւն բողոքներէ ետք, 1912 թ. Մայիս ամսուն Հ. Յ. Դաշնակցութիւնը, հիմնուելով 1911 թ. կուսակցութեան Ընդհ. ժողովի որոշման վրայ, անհրաժեշտ գտաւ իսկ Երիտ. թուրքերու կոմիտէին հետ կայացած համերաշխութիւնը՝ մանրամասն Յուշագրով մը իր պատճառաբանութիւնները թուելով:

Միեւնոյն քաղաքականութիւնը սկսաւ գործադրուիլ Մակեդոնիոյ մէջ եւ առաջացուց մակեդոնացիներու բռնն բողոքները: Չեթայական գունդերը վերսկսան իրենց գործունէութեան: Թուրքիոյ կողմնակից տարրերը, որոնք հակառակ էին պալքանեան պետութիւններու միջամտութեան, վերստին նետուեցան պուլկար կառավարութեան գիրկը: Թշնամութիւնները առաջ բերին Իշտիպի, Քոչանայի մահափորձերը, քրիստոնեաներու վրայ ի գործ դրուած ջարդերը, մինչեւ իսկ պալքանեան պատերազմն ու Թուրքիոյ սարսափելի քայքայումը:

Կարելի էր խորհիլ, որ Մակեդոնիոյ մէջ ի գործ դրուած հին — ու միշտ նոր — քաղաքականութեան աղէտալի հետեւանքները որոշ ազդեցութիւն կ'ունենան Երիտ. թուրքերուն վրայ եւ կը շեղեցնեն զանոնք վտանգալի

historique du fameux sultan Sélim.

On sait que ce Khalife, qui extermina tous ses frères pour régner tranquillement, et en fit une loi pour ses successeurs, prit aussi la résolution de massacrer en une fois tous ses sujets chrétiens ou de les convertir à l'Islam pour assurer l'avenir des musulmans. "La Turquie aux Turcs" tel fut le mot d'ordre, élané par ce réformateur turc au XVIe siècle.

Le sultan Abdul Hamid en fut l'exécuteur distingué, d'extrême prudence. Il dépeuplait les provinces arméniennes par la voie lente de vexations exceptionnelles, tout en favorisant l'envahissement du territoire arménien par les kurdes et mouhadjirs (émigrés musulmans). Quant aux massacres, il ne les ordonnait qu'après avoir obtenu le consentement des diplomates des puissances intéressées.

Abdul Hamid renversé en pleine activité dans l'accomplissement de son programme, voyait, après quelque temps, son œuvre ressuscitée peu à peu.

A la veille de la guerre européenne, la déportation des Grecs en Asie Mineure était en pleine exécution (d'après les Jeunes, le nombre des déportés dépassait 150.000). Quant aux Arméniens, on se contentait alors d'allusions à ce sujet.

Après la déclaration de la guerre, l'organe officieux des Jeunes Turcs "Tanine" pouvait déjà déclarer ouvertement, que la formule du sultan Sélim serait pleinement appliqué aux Arméniens.

Ce qui fut fait en 1915.

DASCHNAKZOUTIOUN ET LA GUERRE

Après l'établissement en Turquie du régime constitutionnel, dont la politique créa un nouveau ferment de complications internationales. Le parti socialiste "Fédération Révolutionnaire Arménienne" – "Daschnakzoutioun", fidèle à ses traditions, – manifesta toujours contre la solution des conflits au moyen de la force des armes.

Dès la première nouvelle de la déclaration de la guerre de l'Italie à la Turquie, le parti envoya un télégramme de protestation à Rome et une adresse au Bureau Socialiste International. Ayant appris plus tard qu'un meeting allait être organisé à Vienne, il s'empressa d'y déléguer son représentant pour joindre ses protestations à celle des camarades de différentes frac-

արկածախնդրություններ: Պահ մը Երիտ. թուրք բանբերներու լեզուն փոխուեցաւ: Պալքանեան պատերազմէն ետք, ուրիշ քաղաքականութիւն մը ծնունդ առաւ Թուրքիոյ իսկական հայրենիք՝ Փոքր Ասիոյ մէջ. շատ կարճատեւ շրջանի մը համար: Պալքանեան երկրորդ պատերազմի փոքր յաջողութենէն ետք, կրկին մոռացութեան տրուեցան բոլոր գեղեցիկ խօսքերը:

Պալքանեան աղէտէն ետք, Երիտ. թուրքերը աւելի հեռու գացին, մինչեւ հռչակաւոր սուլթան Սելիմի պատմական դարձած տարագրին որդեգրումը:

Գիտենք որ այս Խալիֆան, որ անխռով իշխելու համար սպաննեց իր բոլոր եղբայրները, – եւ այդ մէկը օրէնք դարձաւ իր յաջորդներուն – վճռեց նոյնպէս միանգամընդմիջտ կոտորել քրիստոնեայ իր բոլոր հպատակները, կամ իսլամացնել զանոնք, որպէսզի ապահովէ մահմետականներու ապագան: «Թուրքիան՝ թուրքերուն», այդ էր նշանաբանը, արձակուած Ժ.Չ. դարու Թուրք բարեկարգիչին կողմէ:

Սուլթան Ապտիւլ Համիտ՝ ծայրայեղ գզուշաւորութեամբ բայց եւ գերազանց վարպետութեամբ՝ հանդիսացաւ այդ նշանաբանը գործի վերածողը: Դանդաղ բայց եւ անօրինակ հարստահարութիւններու միջոցաւ, ան կ'ամայացնէր Հայաստանը, միաժամանակ սատարելով քիւրտերու եւ մահմետական գաղթականներու հայկական հողեր ներխուժելուն: Իսկ ջարդերու հրահանգ կ'արձակէր միայն այն ատեն, երբ կը ստանար շահագրգիռ պետութեանց հաւանութիւնը:

Իր ծրագրի գործադրութեան ընթացքին գահընկէց դարձած Ապտիւլ Համիտ, քիչ անց, կը տեսնէր արդէն իր սկսած գործին վերանորոգումը:

Եւրոպական պատերազմի նախօրէին, Փոքր Ասիոյ յոյներուն տարագրումը ընթացքի մէջ էր (ըստ Երիտ. թուրքերուն տարագրեալներու թիւը 150.000է աւելի էր): Գալով հայերուն, անոնք կը բաւականանային այդ ժամանակ միայն ակնարկութիւններ ընելով այդ մասին:

Պատերազմի յայտարարութենէն ետք, Երիտ. թուրքերու պաշտօնաթերթ «Թանին»ը բացորոշ կերպով կը յայտարարէր, որ սուլթան Սելիմի նշանաբանը ամբողջութեամբ պիտի գործադրուի հայերուն վրայ:

Ինչ որ իրագործուեցաւ 1915ին :

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թուրքիոյ մէջ Սահմանադրական վարչակարգի հաստատումէն ետք, այս վերջինին վարած քաղաքականութիւնը միջազգային նոր գրգռութիւններ պատճառեց: Հ. Յ. Դաշնակցութիւնը, հաւատարիմ իր աւանդութիւններուն, միշտ հակառակ եղաւ խնդիրները զէնքի ուժով լուծելու միջոցին:

Թուրքիոյ դէմ Իտալիոյ կողմէ պատերազմի յայտարարումը:

tions du parti socialiste d'Autriche.

Plus tard encore, à la veille de la guerre balkanique, vu les relations extrêmement tendues entre la Turquie et les Etats balkaniques, par suite des évènements sanglants de Ichtib et de Kotchana, notre parti, tout en exprimant son indignation pour les actes barbares du gouvernement Jeune Turc, tout en considérant comme urgente l'application de mesures radicales en Macédoine, protesta vivement contre l'idée de faire la guerre. Comme solution du conflit, le parti recommandait la création de la Confédération balkanique dans laquelle entrerait la Macédoine autonome. En outre, il signa, avec les représentants des organisations socialistes des pays balkaniques une proclamation dans le même sens.

Après la seconde guerre balkanique qui aggrava encore la situation aux Balkans, le parti, en prévoyant la possibilité d'une guerre entre les grandes puissances, vota dans son assemblée générale, à Erzeroum, au mois d'août 1913, la résolution suivante:

«Considérant que le démembrement du peuple arménien est le résultat de la politique impérialiste et aventurière des puissances rivales, dont souffrent économiquement et moralement avec les vaincus les vainqueurs tout à la fois,

«Que dans l'avenir, dans le cas d'une guerre, qui imposera inévitablement d'énormes sacrifices physiques, matériels et moraux,— le changement des frontières des belligérants ne peut garantir les droits humains, nationaux et économiques des travailleurs arméniens;

«L'assemblée décide:

«Qu'en cas de complications politiques, elle ferait tout son possible, par les moyens légaux et en plein accord avec les autres partis socialistes, pour prévenir la conflagration générale.

«Considérant pourtant que chaque membre du parti, qui, en sa qualité de citoyen, jouit de droits au sein de son Etat, a encore des devoirs à accomplir,

«L'assemblée décide:

«En cas de guerre, chaque membre du parti doit remplir ses devoirs civiques envers son Etat respectif».

A l'assemblée de l'année suivante, tenue aussi à Erzeroum, le 10-20 juillet 1914, coïncidant ainsi avec la proclamation de la guerre européenne et la mobilisation immédiatement suivie de la Turquie,— les résolutions de l'assemblée de 1913 furent confirmées à nou-

րարութեանն անմիջապէս ետք [1911-1912], կուսակցութիւնը բողոքի հեռագիր մը ուղարկեց Հռոմ եւ ուղերձ մը՝ Ընկերվար Միջազգայինի գրասենեակին: Աւելի ուշ, իմանալով որ հաւաք մը կը կազմակերպուի Վիեննայի մէջ, ան փութաց պատգամաւոր մը առաքել, որպէսզի իր ձայնը միացնէ Աւստրիոյ ընկերվար կուսակցութեան տարբեր հատուածներուն պատկանող ընկերներու բողոքին:

Աւելի ուշ եւս, պալքանեան պատերազմի նախօրէին, ի տես Թուրքիոյ եւ պալքանեան պետութեանց յարաբերութիւններու ծայր աստիճան սրումին, որ հետեւանք էր Իշտիպի եւ Քոչանայի արիւնայի դէպքերուն, մեր կուսակցութիւնը, Երիտ. Թուրք կառավարութեան բարբարոսական արարքներուն դէմ իր բողոքը արտայայտելով եւ Մակեդոնիոյ մէջ արմատական միջոցառումներու գործադրութիւնը անհրաժեշտութիւն նկատելով հանդերձ, բոլոր բողոք բարձրացուց պատերազմելու գաղափարին դէմ: Խնդրի լուծման համար, կուսակցութիւնը կը յանձնարարէր ստեղծումը պալքանեան Համադաշնակցութեան, որուն մաս պէտք է կազմէր ինքնավար Մակեդոնիան: Այլապէս նաեւ, պալքանեան երկիրներու ընկերվար կուսակցութիւններու հետ ստորագրեց նոյնիմաստ յայտարարութիւն մը:

Պալքանեան երկրորդ պատերազմէն ետք, որ աւելի եւս ծանրացուցած էր Պալքաններու կացութիւնը, մեծ պետութեանց միջեւ ծագելիք պատերազմ մը կանխատեսելով՝ կուսակցութիւնը 1913 թ. Օգոստոսին էրզրումի մէջ գումարուած Ընդհ. ժողովին հետեւեալ որոշումը կայացուց.—

«Նկատի ունենալով որ հայ ժողովուրդի անդամահատութիւնը արդիւնք է մրցակից պետութիւններու կայսերապաշտական եւ արկածախնդրական քաղաքականութեան, որմէ կը տուժեն թէ տնտեսապէս եւ թէ բարոյապէս հաւասարաբար պարտեալներն ու յաղթողները,

«Որ ապագային, պատերազմի պարագային անխուսափելիօրէն պիտի պարտադրուին Ֆիզիքական, նիւթական եւ բարոյական հսկայ գոհողութիւններ, պատերազմող երկիրներու սահմաններուն փոփոխութիւնը չի կրնար երաշխաւորել հայ աշխատաւորներու մարդկային, ազգային ու տնտեսական շահերը:

«Ժողովը կ'որոշէ.

«Որ քաղաքական խառնակ կացութիւն ստեղծուելու պարագային, պիտի ընէ կարելին՝ օրինական միջոցներով եւ համաձայնաբար ընկերվար այլ կուսակցութիւններու, որպէսզի կանխարգիլուի համայնաջինջ պատերազմը:

«Նկատի ունենալով նոյնպէս, որ կուսակցութեան իւրաքանչիւր անդամ, որ իբրեւ հպատակ իր ապրած երկրին իրաւունքները վայելելով մէկտեղ, ունի նաեւ պարտաւորութիւններ,

veau. On souligna, en particulier, que dans le conflit européen, la Turquie devait garder une stricte neutralité.

LE COMITE JEUNE TURC ET
LE PARTI "DASCHNAKZOUTIOUN"
A LA VEILLE DE LA GUERRE

Les travaux de l'assemblée générale du parti "Daschnakzoutioun" venaient d'être terminés quand arrivèrent de Constantinople à Erzeroum, les délégués au Comité Jeune Turc Nadji Bey, Hilmi bey et Beha-éddine bey. Les deux premiers appartenaient à l'ancien groupe révolutionnaire Jeune Turc avec lequel nous continuions toujours avoir de bonnes plus ou moins intimes relations.

Les délégués exprimèrent leurs vifs regrets de n'avoir pu venir plus tôt pour s'entretenir avec le parti avant la clôture de l'assemblée générale. Ayant résolu de déclarer la guerre à la Russie, le Comité voulait connaître l'orientation du parti arménien. Les mesures préventives dans le but de faciliter les opérations de l'armée turque dans le Caucase étaient déjà prises. L'adhésion du parti arménien aurait contribué sensiblement aux succès des Turcs. Les délégués étalèrent tous les avantages de cette guerre pour la Turquie, qui en sortirait agrandie, puissante, fortifiée intérieurement et extérieurement. Ils promettaient, en récompense, l'autonomie de l'Arménie Turque après la guerre victorieuse.

Les représentants du "Daschnakzoutioun" se basant sur les résolutions des congrès du parti, répondirent qu'ils ne pouvaient donner leur adhésion à la proposition du Comité Jeune Turc. Outre des raisons de caractère général, le parti était contre l'intervention du gouvernement turc dans le conflit européen, parcequ'il était fermement persuadé, que cette tentative amènerait à la catastrophe de la Turquie et sous ses ruines pourrait succomber le peuple arménien. Le parti était toujours partisan de la stricte neutralité de la Turquie, mais si la guerre éclatait quand même, Daschnakzoutioun tout en restant neutre, comme parti, recommanderait à ses membres en Turquie, en Russie et en Perse, de remplir leurs devoirs envers leurs Etats respectifs.

Les échanges de vues de même nature continuèrent

«ժողովուրդը կ'որոշէ».

«Պատերազմի պարագային, կուսակցութեան իւրաքանչիւր անդամ պէտք է իր քաղաքացիական պարտականութիւնը կատարէ համապատասխան պետութեան հանդէպ»:

1914 թ. Յունիս 10-14ին էրզրումի մէջ գումարուած յաջորդ Ընդհ. ժողովին, որ կը զուգադիպէր եւրոպական պատերազմի յայտարարութեան եւ Թուրքիոյ մէջ անմիջական կերպով անոր յաջորդող զօրակոչին,— 1913 թ.ի որոշումները վերահաստատուեցան: Յատկապէս ընդգծուեցաւ, որ Թուրքիան պէտք է խիստ կերպով չհզօրութիւն պահէ եւրոպական պատերազմին մէջ:

ԵՐԻՏ. ԹՈՒՐԲԵՐՈՒ ԿՈՄԻՏԷՆ ԵՒ
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհ. ժողովին աշխատանքները նոր աւարտած էին, երբ Կոստանդնուպոլսէն ժամանեցին Երիտ. Թուրքերու կոմիտէին պատուիրակները՝ Նաճի պէյ, Հիլմի պէյ եւ Պեհաէտտին պէյ: Առաջին երկուքը կը պատկանէին Երիտ. Թուրքերու յեղափոխական հին խմբակին, որուն հետ միշտ կը շարունակէինք առաւել կամ նուազ սերտ յարաբերութիւններ ունենալ:

Պատուիրակները խոր ցաւ յայտնեցին, որ չէին կրնցած աւելի կանուխ գալ, Ընդհ. ժողովի փակումէն առաջ կուսակցութեան հետ բանակցութիւններ ունենալու համար: Որոշած ըլլալով Ռուսիոյ դէմ պատերազմ յայտարարել, կոմիտէն [Երիտ. Թուրքերու] կ'ուզէր իմանալ հայկ. կուսակցութեան դիրքորոշումը: Կանխարգելիչ միջոցներ ձեռք առնուած էին արդէն՝ Կովկասի մէջ թրքական բանակի գործողութիւնները դիւրացնելու նպատակով: Հայկ. կուսակցութեան միացումը զգալապէս պիտի նպաստէր թրքական յաջողութիւններուն: Պատգամաւորները թուեցին այն բոլոր առաւելութիւնները Թուրքիոյ համար, որ պատերազմէն դուրս պիտի դար ընդարձակուած, հզօրացած, ներքնապէս ու արտաքնապէս ամրապնդուած: Իբրեւ վարձատրութիւն, կը խոստանային Թրքահայաստանի ինքնավարութիւնը պատերազմէն ետք:

Դաշնակցութեան ներկայացուցիչները, հիմնուելով Ընդհ. ժողովի որոշումներուն վրայ, պատասխանեցին որ չէին կրնար համաձայնիլ Երիտ. Թուրքերու կոմիտէի առաջարկներուն: Բացի ընդհանուր կարգի պատճառներէն, կուսակցութիւնը դէմ էր Թուրք կառավարութեան մասնակցութեան ընդհանուր պատերազմին, որովհետեւ հաստատ կերպով համոզուած էր որ նման փորձ պիտի առաջացնէր Թուրքիոյ քայքայումը, եւ անոր աւերակներուն տակ կործանումը հայ ժողովուրդին: Կուսակցութիւնը կողմնակից էր Թուրքիոյ բա-

à avoir lieu dans les entrevues ultérieures. Majdi bey et Hilmi bey étant partis pour Van les négociations se renouvelèrent avec notre Comité Central de Van. Les résultats furent les mêmes malgré la promesse de Nadjji bey, qu'en cas de participation du "Daschnakzoutioun", à l'Arménie autonome turque serait annexée l'Arménie Russe.

Les préparatifs de guerre se poursuivaient cependant avec un zèle extraordinaire sous la direction des Allemands. Les Jeunes Turcs exploitaient chaque succès allemand pour exciter le peuple Turc qui se montrait plus qu'indifférent. Mais après la défaite de la Marne, la marche victorieuse des Russes en Galicie, la plupart des Jeunes Turcs commencèrent à hésiter. En tout cas, on ne se montrait plus partisan de l'offensive immédiate. On préférait attendre encore la marche des événements. Notre propagande en faveur de la neutralité trouvait partout un terrain plus favorable.

Après trois mois de préparatifs et d'hésitations, les illusions des Chefs du Comité prédominèrent. Le soulèvement des pays musulmans, de la Perse, de l'Avganistan, du Béloudjistan, des Indes, de l'Egypte etc., la victoire facile à remporter sur la Russie, engagée entièrement dans la lutte contre l'Allemagne et l'Autriche, la conquête du Caucase, du Turkestan, l'anéantissement des éléments chrétiens, enclavés dans les masses musulmanes, la création de cette manière, du monde compact musulman, de la Mer Noire jusqu'aux Indes, sous l'égide du Khalife siégeant à Constantinople, l'hégémonie de la Turquie en Asie, appuyée sur celle de l'Allemagne en Europe, la quatrième part, 20 milliards au moins, revenant à la Turquie de l'énorme contribution de la guerre,— telle fut la perspective séduisant à laquelle ne purent résister les esprits éblouis des chefs de la Jeune Turquie.

Si l'on compare ces rêves de caractère universel et les résultats obtenus jusqu'à présent, on constate qu'après tant de pertes, les Jeunes Turcs ne peuvent se vanter d'autre chose que d'avoir massacré les Arméniens, les Grecs, les Syriens et les Chaldéens.

LES JEUNES TURCS ET LES MASSACRES

Les Jeunes Turcs ne nient plus les déportations et les massacres des Arméniens. Ils les justifient. La cause principale serait la révolte des Arméniens. On ne

ցարձակ չէզոքութեան. բայց պատերազմի պարագային, Դաշնակցութիւնը, իբրեւ կուսակցութիւն չէզոք մնալով հանդերձ, պիտի յանձնարարէր Թուրքիոյ, Ռուսիոյ եւ Պարսկաստանի իր անդամներուն, որ իրենց պարտականութիւնը կատարեն համապատասխան պետութիւններուն հանդէպ:

Այս կարգի տեսակէտներու փոխանակումներ տեղի ունեցան նաեւ հետագայի հանդիպումներուն ընթացքին: Նաճի եւ Հիւմի պէյերու Վան մեկնումէն ետք, բանակցութիւնները վերսկսան Վանի մեր Կեդր. կոմիտէին հետ: Արդիւնքները նոյնն էին, հակառակ Նաճի պէյի այն խոստումին, որ Դաշնակցութեան մասնակցութեան պարագային Ռուսահայաստանը պիտի կցուէր ինքնավար Թրքահայաստանին:

Այսուհանդերձ, պատերազմական պատրաստութիւնները՝ գերմանացիներու ղեկավարութեամբ՝ կը շարունակուէին արտասովոր եռանդով: Երիտ. Թուրքերը կը շահագործէին գերմանական իւրաքանչիւր յաջողութիւն՝ գրգռելու համար Թուրք ժողովուրդը, որ [այսուհանդերձ] կը մնար անտարբեր: Սակայն Մառնի պարտութենէն եւ Կալիսիոյ մէջ ռուսական յաղթական առաջխաղացքէն ետք, Երիտ. Թուրքերու մեծ մասը սկսաւ տատամսիլ: Յամենայն դէպս, Թուրքերը կողմնակից չէին երեւեր անմիջական յարձակողականի մը. կը նախընտրէին սպասել դէպքերու ընթացքին: Մեր քարոզչութիւնը ի նպաստ չէզոքութեան՝ նպաստաւոր գետին կը շահէր ամէն տեղ:

Երեք ամիսներ տեւող նախապատրաստութիւններէ եւ տատանումներէ ետք, [Երիտ. Թուրք] կոմիտէի ղեկավարներու ցնորքները յաղթանակեցին.—

- Ըմբոստացումը մահմետական երկիրներուն՝ Պարսկաստան, Հնդկաստան, Եգիպտոս եւ այլն.
- Դիւրին յաղթանակ Ռուսիոյ վրայ, որ ամբողջովին կլանուած էր Գերմանիոյ եւ Աւստրիոյ դէմ պատերազմով.

- Նուաճումը Կովկասի եւ Թուրքեստանի.
- Բնաջնջումը՝ մահմետական զանգուածներու մէջ կղզիացած քրիստոնեայ տարրերուն.

— Ստեղծումը այս ձեւով — Կոստանդնուպոլիս հաստատուած Խալիֆայի մականին ներքեւ — մահմետական միաձոյլ աշխարհի մը, որ պիտի տարածուէր Սեւ ծովէն մինչեւ Հնդկաստան.

— Ասիոյ մէջ գերակշիռ դիրքը Թուրքիոյ, թիկունքին ունենալով Եւրոպայի մէջ գերիշխանութիւն ձեռք բերած Գերմանիան.

— Մէկ քառորդ մասը, առնուազն 20 միլիառ, զոր պիտի ստանար Թուրքիան որպէս աւարի բաժին իր պատերազմի մասնակցութեան փոխարէն:

Ահա այն շողջողուն հրապոյրը, որուն չկրցան դիմադրել Երիտ. Թուրքիոյ վարիչները:

Եթէ բաղդատենք տիեզերական բնոյթի այս երազ-

voulait pas tolérer derrière l'armée une population en état d'insurrection. Les Jeunes Turcs invoquent les mouvements à Van, à Schabine-Karahissar, à Ourfa, etc.

Est-il besoin de dire que les événements incriminés aux Arméniens ont été provoqués par les Jeunes Turcs eux-mêmes? Ces prétendues "insurrections" n'étaient que des tentatives de défense, faites au cours même des déportations et des massacres, avec un faible espoir de succès,— Van, Schatak, Swedia en Cilicie. C'étaient aussi des actes de pur désespoir de la population, qui préférait la mort les armes à la main, au lieu d'être égorgée ou de servir aux instincts bestiaux des triomphateurs.

Nous avons déjà parlé de la tactique générale des Jeunes Turcs envers les Chrétiens en Turquie et en particulier, envers les Arméniens. Nous avons vu, que pour la suppression des Arméniens de l'Arménie, ils aspiraient à un moment opportun et que la guerre européenne présentait à leurs yeux justement le moment historique si longtemps attendu.

Accuser, en présence de cette circonstance, les Arméniens d'insurrections, ce serait répéter la fable du loup et de l'agneau.

Pour mieux éclaircir la conduite des Jeunes Turcs nous allons énumérer une série des mesures prises à l'égard des Arméniens dès les débuts du conflit européen. Le rapprochement de ces actes prouve nettement, que le programme des Jeunes Turcs existait non seulement en théorie, en attendant, pour être mis à exécution et à réalisation, les événements de Van ou d'Ourfa; mais que le dernier complot contre le peuple arménien se tramait bien avant la guerre turco-russe, alors qu'on ne pourrait citer un seul fait de déloyauté des Arméniens en Turquie.

1. GENDARMERIE.— Les provinces arméniennes furent inondées, surtout après la déclaration de la mobilisation, de gendarmes et de détectives, choisis soigneusement parmi ceux qui étaient restés disponibles après la perte des provinces de Turquie d'Europe; avec eux apparurent nombre de fonctionnaires de même genre. Battus cruellement par les Bulgares, les Serbes et les Grecs, humiliés devant leurs anciens sujets, impuissants dans leur rage contre eux, ces victimes,— comme ils se considéraient — des peuples chré-

tiens et les garrigues de la région, les jeunes Turcs invoquent les mouvements à Van, à Schabine-Karahissar, à Ourfa, etc. Est-il besoin de dire que les événements incriminés aux Arméniens ont été provoqués par les Jeunes Turcs eux-mêmes? Ces prétendues "insurrections" n'étaient que des tentatives de défense, faites au cours même des déportations et des massacres, avec un faible espoir de succès,— Van, Schatak, Swedia en Cilicie. C'étaient aussi des actes de pur désespoir de la population, qui préférait la mort les armes à la main, au lieu d'être égorgée ou de servir aux instincts bestiaux des triomphateurs.

ԵՐԻՏ. ԹՈՒՐԿԵՐԸ ԵՒ ԶԱՐԴԵՐԸ

Երիտ. թուրքերը չեն ուրանար այլևս հայոց տեղահանութիւններն ու ջարդերը: Կ'արդարացնեն զանոնք: Գլխաւոր պատճառը պէտք է նկատել հայոց ըմբոստութիւնը. բանակի կողքին՝ կարելի չէր հանդուրժել ապստամբ վիճակի մէջ գտնուող ժողովուրդ մը: Երիտ. թուրքերը կը վկայակոչեն Վանի, Շապին Գարահիսարի, Ուրֆայի եւ այլ շարժումները:

Հարկ կ'ա՞յ ըսելու թէ հայերուն վերագրուած դէպքերը թուրքերը իրենք յառաջացուցին: Կարծեցեալ այդ «ըմբոստութիւնները» պարզապէս ինքնապաշտպանութեան փորձեր էին, կատարուած — Վանի, Շատախի, Սուէտիոյ եւ Կիլիկիոյ մէջ — տեղահանութեանց եւ կոտորածներու իսկ ընթացքին, եւ այն ալ յաջողելու տկար յոյսով մը: Անոնք յուսահատական փորձերն էին ժողովուրդի մը, որ կը նախընտրէր մեռնիլ զէն ի ձեռին, քան սպաննուիլ եւ կամ ենթարկուիլ յաղթող կողմի անասնական բնազդներուն:

Խօսած ենք արդէն թուրքիոյ քրիստոնեաներուն եւ ի մասնաւորի հայերուն նկատմամբ Երիտ. թուրքերուն հետեւած ընդհանուր մարտավարութեան մասին: Տեսանք որ Հայաստանի հայերուն բնաջնջումին համար անոնք կը սպասէին պատեհ առիթին եւ որ եւրոպական պատերազմը իրենց տեսակէտով կը ներկայացնէր արդարեւ երկար ատենէ ի վեր սպասուած պատմական այդ պահը:

Հայերը ամբաստանել ապստամբութեան մեղքով, այս պարագային, կը նշանակէ կրկնել գայլին ու գառան [ծանօթ] առակը:

Հաւագոյնս լուսաբանելու համար Երիտ. թուրքերու վարմունքը, պիտի թուենք այն միջոցները որ ձեռք առնուեցան հայերու նկատմամբ եւրոպական պատերազմի առաջին օրերէն սկսեալ: Այդ արարքներու համակարգումը յստակօրէն կը փաստէ որ Երիտ. թուրքերու ծրագիրը գոյութիւն ունէր ոչ միայն իբր տեսութիւն որ գործադրութեան պիտի դրուէր Վանի կամ Ուրֆայի դէպքերուն առիթով, այլ որ հայ ժողովուրդին դէմ դաւ կը նիւթուէր ռուս-թրքական պատերազմէն շատ առաջ, այն ժամանակներէն, երբ թուրքիոյ նկատմամբ հայոց անհաւատարմութեան ո՛չ իսկ մէկ արարք» կարելի է յիշատակել:

1.- Ուստիկան գօրքերը.— Զօրակոչի յայտարարութեանէն ետք մանաւանդ, հայկական նահանգները ողող-

tiens, devraient naturellement chercher à se venger sur n'importe quel autre sujet chrétien, resté encore sous leur domination. Les Arméniens, par les considérations politiques, furent le meilleur objet de leur vengeance.

2. LES "TCHETA"Տ.— Immédiatement après la mobilisation, c'est-à-dire, 3 mois avant la guerre turco-russe et 9 mois avant la première "insurrection" arménienne, tous les forçats et autres criminels furent mis en liberté; on en forma des détachements, nommés "tcheta"s (en bulgare: bande), y incorporant aussi tous les assassins et les brigands, connus dans le pays. Le commandement fut confié aux plus sanguinaires sous la direction générale des membres influents de la Jeune Turquie.

Le nom bulgare "tcheta", accordé à ces détachements, fut de lui-même symptomatique. Comme les Turcs se plaignaient surtout contre les "tcheta"s bulgares, en les accusant de toutes sortes d'atrocités commises sur la population musulmane, il n'était pas difficile de prévoir le rôle qu'on leur réservait dans les provinces arméniennes.

De fait, nous avons vu, que dans tous les viols et massacres, la part la plus brillante revenait notamment aux "tcheta"s.

3. MILICE MUSULMANE.— Parallèlement aux formations des "tcheta"s se poursuivait l'armement de la population musulmane, dans les villes, comme dans les villages. Les agents de police et les membres du Comité distribuaient en abondance les fusils et les munitions *aux premiers jours de la mobilisation*. Aux inquiétudes des Arméniens, les Turcs répondaient, qu'ils créaient "la milice nationale", qui devrait surveiller la sécurité du pays, de même qu'aller contre l'ennemi extérieur. On ne pensait pas pourtant à admettre un seul chrétien dans cette organisation nationale. Il va sans dire que le seul fait de l'élimination de l'élément chrétien, [la formation] de la milice suffisait pour discerner le vrai caractère de cette mesure et pour mettre en évidence l'état réel d'esprit des Jeunes Turcs, bien avant les "insurrections arméniennes". C'était aussi aux yeux de la population musulmane tant qu'arménienne, une démonstration manifeste du retour des jours d'Abdul Hamid.

Les millionnaires n'eurent pas, certes, l'occasion de

ուղեցան ժանտարմներով եւ գաղտնի ոստիկաններով, խնամքով ընտրուած եւրոպական թուրքիոյ նահանգներէն բերուած տարրերէն, այդ նահանգներու կորուստէն ետք: Անոնց հետ միասին երեւցան նոյն կարգի շատ մը պաշտօնեաներ: Սոսկալիօրէն պարտուած պուլկարներէն, սերպերէն եւ յոյներէն, նուաստացած իրենց երբեմնի հպատակներու աչքին, անկարողութեան մատնուած անոնց առջեւ, — քրիստոնեայ ժողովուրդներուն գոհերը նկատուող այս մարդիկը, բնականաբար, պիտի ջանային վրէժ լուծել իրենց տիրապետութեան տակ գտնուող ոեւէ քրիստոնեայ հպատակէ: Քաղաքական նկատումներով՝ հայերը լաւագոյն առարկան հանդիսացան իրենց վրէժխնդրութեան համար:

2.- «Չեթաները».— Զօրակոչէն անմիջապէս ետք, այսինքն երեք ամիս առաջ ռուսելթուրք պատերազմէն եւ նախ քան 9 ամիս հայկական առաջին «ըմբոստութեանէն», բոլոր յանցագործներն ու ոճրագործները ազատ արձակուեցան. անոնցմէ կազմուեցան «չեթա» կոչուած ջոկատները (պուլկարերէն՝ խումբ), որոնց միացուեցան երկրին մէջ քաջածանօթ բոլոր մարդասպաններն ու աւագակները: Հրամանատարութիւնը վստահուեցաւ ամէնէն արիւնարբուններուն՝ ընդհանուր ղեկավարութեամբ Երիտ. Թուրքիոյ ամէնէն ազդեցիկ անդամներուն:

Այս ջոկատներուն «չեթա» անուանակոչումը ինքնին խտանաչանական էր: Եւ որովհետեւ թուրքերը կը գանգատէին պուլկար «չեթա»ներու դէմ՝ զանոնք մեղադրելով մահմետական ժողովուրդի դէմ գործուած ամէն կարգի վայրագութեանց համար, դժուար չէր, հետեւաբար, նախատեսել թէ ի՞նչ դեր վերապահուած էր անոնց հայկական նահանգներուն մէջ:

Իրապէս ալ մենք տեսանք, որ բոլոր բռնաբարումներու եւ կոտորածներու պարագային, «ամէնէն փայլուն» բաժինը վերապահուած էր մասնաւորաբար «չեթա»ներուն:

3.- Մահմետական քաղաքագործը.— Չեթայական ջոկատներուն գուգահեռաբար, քաղաքներու եւ գիւղերու մէջ տեղի կ'ունենար մահմետական բնակչութեան զինումը: Ոստիկանական գործակալներն ու [Երիտ. Թուրք] կոմիտէի անդամները, զօրակոչի առաջին օրերէն, առատօրէն հրացաններ ու զինամթերք կը բաժնէին: Հայոց մտահոգութեան ի պատասխան, թուրքերը կ'ըսէին թէ կը ստեղծէին «ազգային աշխարհագոր», որ պիտի հսկէր երկրի ապահովութեան, ու նաեւ կուռէր արտաքին թշնամիին դէմ: Այսուհանդերձ, ազգային այս կազմակերպութեան մէջ մէկ քրիստոնեայ իսկ չէր մտածուեր ընդունիլ: Հասկնալի է որ քրիստոնեայ տարրին բացառումը աշխարհագորային այս կազմաւորումէն կը բաւէր՝ նշմարելու համար այս միջոցաւան

déranger l'ennemi extérieur. Mais ils remplirent leur tâche quant à "l'ennemi intérieur", en guettant les caravanes des déportés, en violant les mères et en noyant les nourissons.

4. Parler des massacres des Arméniens, c'est penser aux Kurdes. En créant les "régiments hamidié"s en 1894, Abdul Hamid visait justement les Arméniens. Dans tous les massacres précédents les "hamidié"s justifiaient les espérances d'Abdul Hamid. Depuis la Constitution, cependant, les kurdes devinrent l'élément le plus déloyal dans nos régions. Les chefs kurdes, quelque fois même avec leurs hommes, se retiraient en Perse, engageaient des négociations avec les agents du gouvernement du tzar et armés par eux, agitaient le pays. A la veille de la guerre, une vraie insurrection fut organisée. S'il y avait un élément déloyal en Turquie, c'étaient justement les kurdes. Mais les suprêmes intérêts de l'Islam demandaient la réconciliation avec les musulmans malgré l'insurrection.

Les délégations composées des chefs des plus éminents de la Jeune Turquie et parmi eux, les députés du parlement ottoman, Seyfoulah Ilias et autres furent chargés de cette mission. Elles partirent munies de plans d'action élaborés par le Comité. Pour la réconciliation, il fallait séduire les kurdes par des promesses. On leur accorda la liberté d'agir contre les Arméniens, de même le partage des terres et des biens arméniens après les massacres et les déportations.

Nous ne nous arrêterons pas à retracer le rôle des tribus kurdes. Il n'est que trop connu.

5. "Kassap tabouri". Un peu plus tard, on organisa des bataillons d'élite, "kassap tabouri" (bataillons de bouchers), placés sous le commandement des militaires du Comité. Ces bataillons se conduisèrent en vrais bouchers, surtout dans la vallée de Mousch, où 100.000 Arméniens furent exterminés.

Les Jeunes Turcs entreprirent d'un autre côté, une série d'autres attaques qui s'aggravèrent de jour en jour et prirent des proportions désastreuses:

1. Arrestations.— On commença à arrêter sous de vagues prétextes, des individualités en vue. Quand on parvenait à démontrer toute la futilité des faits incriminés aux détenus, les Jeunes Turcs n'hésitaient pas à

խոկական բնոյթը եւ ակներեւ դարձնելու, «հայկական ըմբոստութիւններէն» շատ առաջ, Երիտ. թուրքերու իսկական մտայնութիւնը: Ասիկա բացայայտ ցուցադրութիւն մըն էր նաեւ թէ՛ թուրք եւ թէ՛ հայ ժողովուրդին համար Ապտիւլ Համիտի օրերուն վերադարձի մասին:

Աշխարհագորայինները արտաքին թշնամին անհանգրստացնելու առիթը չունեցան անշուշտ: Սակայն իրենց պարտականութիւնը լիովին կատարեցին «ներքին թշնամի»ին նկատմամբ, դարանակալ սպասելով տարագրեալներու կարաւաններուն, բռնաբարելով մայրերն ու խեղդելով ծծկեր մանուկները:

4.- Խօսիլ հայկական ջարդերու մասին՝ կը նշանակէ մտաբերել քիւրտերը: 1894 թ. «Համիտիէ գոնդերը» ստեղծելով, Ապտիւլ Համիտի թիրախը հայերն էին: Սահմանադրութենէն ի վեր, այսուհանդերձ, քիւրտերը հանդիսացան ամէնէն անհաւատարիմ տարրը շրջաններուն մէջ:

Քիւրտ ցեղապետները, երբեմն իրենց մարդոցմով, կը քաշուէին Պարսկաստան, բանակցութիւններ կը վարէին ցարի կառավարութեան գործակալներուն հետ, եւ անոնց կողմէ գինուած, կը խռովէին երկիրը: Պատերազմի նախօրէին, կազմակերպուեցաւ իսկական ապստամբութիւն մը: Եթէ անհաւատարիմ տարր մը կար թուրքիոյ մէջ, արդարեւ քիւրտերն էին: Սակայն, հակառակ ապստամբութեան, Իսլամի գերագոյն շահերուն համար անհրաժեշտ էր հաշտուիլ մահմետականներուն հետ:

Երիտ. թուրքիոյ ամէնէն երեւելի ղեկավարներէն, ներառեալ օսմանեան երեսփոխաններէն Սէյֆուլլահ Իլիասի եւ ուրիշներու, կազմուեցան պատուիրակութիւններ եւ անոնց վստահուեցաւ այդ առաքելութիւնը: Մեկնեցան անոնք ի ձեռին ունենալով [Երիտ. թուրք] կոմիտէին կազմած ծրագիրները: Հաշտութիւնը իրագործելու համար, պէտք էր խոստումներով հրապուրել քիւրտերը: Անոնց շնորհուեցաւ հայերու դէմ ազատութիւն գործելու եւ, կոտորածներէն ու տեղահանութիւնէն ետք, հայերու հողերուն ու ինչքերուն տիրանալու իրաւունքը:

Կանգ պիտի չառնենք քիւրտ ցեղերու խաղաղած դերի նկարագրութեան վրայ: Այդ մէկը շատ ծանօթ է:

5.- «Քասսապ թապուրի».— Քիչ մը աւելի ուշ, կազմակերպուեցան ընտրանիներէ բաղկացեալ ջոկատները, — «Քասսապ թապուրի» (մսագործներու ջոկատներ), [Երիտ. թուրք] կոմիտէի գինուորականներու հրամանատարութեամբ: Այս ջոկատները գործեցին որպէս իսկական մսագործներ, մանաւանդ Մշոյ դաշտին մէջ, ուր 100.000 հայեր բնաջնջուեցան:

Երիտ. թուրքերը ձեռնարկեցին նաեւ շարք մը յարձակումներու, որոնք հետզհետէ խստանալով հասան աղէտալի չափերու:—

les accuser d'espionnage à la solde des Alliés. Dans les provinces orientales, ils devenaient les espions du gouvernement russe, en Cilicie – des espions anglais. Et on les traita comme tels.

Quelques-uns d'entre eux expirèrent à la suite des tortures. Un des notables et des héros de Zeitoun – Nazareth Tchvouch fut une des premières victimes.

2. Perquisitions.– Le plan des Jeunes Turcs exigeait, qu'il y eut encore outre les espions, des rebelles, des dépôts d'armes, de munitions, de bombes et autres indices de révolte sur le point d'éclater. Les perquisitions en masse dans les villes, comme dans les villages, dans le but de découvrir des dépôts imaginaires, surprisent toute la population.

Après avoir cerné le village, on séparait les hommes des femmes et des enfants, pour "interroger" les deux groupes séparément. Les perquisitions s'opéraient par les soins des gendarmes de Roumélie et de Macédoine, assistée par les "tcheta"s.

Aux protestations des Arméniens, les Turcs "amis" répondaient, que la participation de "tcheta"s ne serait qu'occasionnelle. Les perquisitions elles-mêmes seraient provoquées par les dénonciations des ennemis des Arméniens. Une fois la fausseté des bruits au sujet des dépôts d'armes, transportés par les agents du gouvernement russe, prouvée, par les les perquisitions minutieuses, la loyauté des Arméniens serait reconnue définitivement, et toutes les mesures exceptionnelles cesseraient à leur égard...

Les perquisitions ne découvrirent *pas une seule arme de provenance russe*. On n'y trouva que quelques fusils de vieux système "gras" dont l'existence était connue d'avance – achetés pour la plupart chez les Jeunes Turcs eux-mêmes, les premières années de la liberté constitutionnelle. Néanmoins, les Arméniens, arrêtés, furent conduite en grande pompe et enfermés dans les prisons; car il fallait absolument avoir des rebelles.

3. Réquisitions.– Rien ne fut si efficace pour pousser à bout le désespoir de la masse arménienne, que le système de réquisition, adopté envers elle, dès la déclaration de la mobilisation.

La situation devenait insupportable surtout dans les villages. Les troupes, installées presque exclusivement

ա. – Ձերբակալութիւններ. – Ճղճիմ պատրուակներով սկսան ձերբակալել աչքի զարնող անձնաւորութիւններ: Երբ կը փաստուէր կալանաւորներուն վերագրուած մեղադրանքներուն ոչնչութիւնը, Երիտ. թուրքերը չէին վարաներ ամբաստանելու զանոնք Դաշնակիցներու օգտին լրտեսելու յանցանքով: Արեւելեան նահանգներու մէջ անոնք կը դառնային ռուսերու լրտես, Կիլիկիոյ մէջ՝ անգլիացիներու լրտես:

Իբրեւ այդպիսին ալ կը վարուէին անոնց հետ: Անոնցմէ ոմանք չարչարանքներու տակ մահացան: Զէյթունի երեւելիներէն եւ հերոսներէն՝ Նազարէթ Չաւուշ առաջին զոհերէն մէկը եղաւ:

բ. – Խուզարկութիւններ. – Երիտ. թուրքերու ծրագիրը կը պահանջէր որ բացի լրտեսներէն, ըլլային ապրտամբներ, զինապահեստներ, ռումբեր եւ պայթելու վրայ գտնուող ապստամբական ուրիշ փաստեր: Երեւակայական պահեստներ երեւան հանելու նպատակով կատարուած խուզարկութիւնները, քաղաքներու թէ գիւղերու մէջ, զարմանք պատճառեցին ամբողջ բնակչութեան: Գիւղը պաշարելէ ետք, տղամարդիկը կը բաժնէին կիներէն եւ մանուկներէն, որպէսզի երկու խմբակները անջատաբար «հարցաքննեն»: Խուզարկութիւնները կը կատարուէին Ռումելիի եւ Մակեդոնիոյ ժանտարմներուն կողմէ, «չեթա»ներու ներկայութեան:

Հայերու բողոքներուն՝ «բարեկամ» թուրքեր կը պատասխանէին որ «չեթա»ներու մասնակցութիւնը դիպուածով է: Խուզարկութիւններ տեղի կ'ունենան հայոց թշնամիներու մատնութեամբ: Անգամ մը որ, մանրակրկիտ խուզարկութիւններէն ետք, փաստուի թէ սուտ են՝ ռուս կառավարութեան գործակալներուն կողմէ փոխադրուած զինապահեստներու մասին շրջան ընող զրոյցները, վերջնական կերպով յայտնի պիտի դառնայ հայոց հաւատարմութիւնը, եւ պիտի դադրին իրենց հանդէպ առնուած բոլոր արտակարգ միջոցառումները...

Խուզարկութիւնները ռուսական աղբիւրէ եկած ոչ մէկ զէնք ի յայտ բերին: Գտնուածները «կրա» սիստեմի քանի մը հրացաններ էին, որոնց գոյութիւնը նախօրօք ալ յայտնի էր, – գնուած էին անոնք Երիտ. թուրքերէն սահմանադրական ազատութեան առաջին տարիներուն: Ասով մէկտեղ, ձերբակալուած հայերը մեծ աղմուկով տարուեցան ու բանտ նետուեցան, որովհետեւ ի գին ամէն բանի պէտք էր ապստամբներ ունենալ:

գ. – Բռնագրաւումներ. – Ոչ մէկ բան այնքան ազդու եղաւ հայ զանգուածները ծայր աստիճանի յուսահատութեան մղելու որքան բռնագրաւումներու դրութիւնը, որդեգրուած զօրակոչի յայտարարութենէն անմիջապէս ետք:

Դրութիւնը անտանելի կը դառնար մանաւանդ գիւ-

chez les Arméniens, prenaient tout gratis: pain, blé, avoine, chevaux, chariots, beurre, fromage, linge. Elles prenaient plus qu'elles n'avaient besoin. Ce fut aussi une bonne occasion pour ne pas ménager l'honneur des familles. Les plaintes, les lamentations furent rejetées dédaigneusement. Les réquisitions s'opéraient non seulement par les troupes, mais aussi, et avec plus de cruauté par les gendarmes et des "tcheta"s. Ce fut pis que les dragonnades.

4. Réserve sans armes.— Lors de la mobilisation, on appela tous les chrétiens de 20 à 43 ans (plus tard de 18 à 48 ans). Ceux qui avaient plus de 27 ans auraient dû être exemptés. Car le service militaire des chrétiens ne date que de la promulgation de la Constitution.

Les Turcs "amis" interprétaient cette illégalité comme favorable aux intérêts arméniens. "Plus d'Arméniens sous les armes, affirment-ils, plus de sécurité pour la nation arménienne, moins de danger de massacres".

Cependant, les réservistes arméniens, appelés sous les armes, ne reçurent point d'armes. On les priva même du droit de porter le pistolet ou le couteau et ils furent envoyés aux travaux de terrassement, à la réparation et à la construction des routes.

C'était une procédure ingénieuse pour arracher à la masse populaire tous les hommes valides, capables de résister en cas de danger.

Ils seraient tenus comme des otages, à la disposition des exécuteurs des massacres.

5. Désarmement des soldats.— Plus que cela. On commença à désarmer les soldats arméniens de l'armée active et à les affecter aux mêmes travaux.

La désarmement ne prit pas d'extension alors grâce à l'intervention de quelques militaires supérieurs, qui appréciaient les qualités du soldat arménien. Mais la première pierre était jetée. Les vraies tendances Jeunes-turques, manifestées au moment où personne ne pensait aux insurrections, exercèrent leur influence néfaste sur les milieux des soldats. Les Arméniens furent qualifiés de suspects, de traîtres. On aurait pu et on aurait dû, par conséquent, les maltraiter, leur infliger toutes sortes d'outrages jusqu'à les considérer tous hors la loi. Pour donner une idée de l'atmosphère

դերուն մէջ: Գրեթէ բացառաբար հայ տուներու մէջ հաստատուած զօրքերը ամէն ինչ կը վերցնէին ճրիօրէն.— հաց, ցորեն, յարդ, ձիեր, սայլեր, կարագ, պանիր, ճերմակեղէն: Կ'առնէին աւելի քան պէտք ունէին: Այս եւս լաւ առիթ ծառայեց չինայելու համար ընտանեկան պատիւին: Գանգատներն ու աղերսանքները ետ մղուեցան արհամարհանքով: Բռնագրաւումները կը կատարուէին ոչ միայն զօրքին կողմէ այլ նաեւ, ու աւելի դաժանօրէն, ժանտարմներու եւ «չեթա»ներու կողմէ: Եղածը վատագոյն էր քան տրակոննատները⁴:

դ.— Պահեստի գինուոր առանց գէնքի.— Զօրակոչի ժամանակ [բանակ] կանչեցին 20-43 տարիքի բոլոր քրիստոնեաները (աւելի ուշ 18-48 տարու): Անոնք, որոնք 27 տարեկանէն վեր էին պէտք է ազատ ձգուէին, որովհետեւ քրիստոնեաներու գինուորական ծառայութիւնը սկիզբ առաւ Սահմանադրութեան հռչակումէն ետք:

«Բարեկամ» թուրքերը այս ապօրինութիւնը կը բացատրէին՝ թէ հայերու օգտին է. «Որքան շատ ըլլան բանակ կանչուած հայերը, կ'ըսէին անոնք, այնքան աւելի ապահովութիւն կ'ըլլայ հայոց ազգին եւ նուազ՝ կոտորածի վտանգը»:

Այսուհանդերձ, բանակ կանչուած հայ պահեստիները բնաւ գէնք չստացան: Զրկուեցան մինչեւ իսկ ատրճանակ կամ դանակ կրելու իրաւունքէն, եւ զրկուեցան հող փորելու, ճամբաներու շինութեան ու նորոգութեան աշխատանքներուն:

Ասիկա ճարտար հնարք մըն էր ժողովուրդէն խլելու բոլոր զօրեղ տղամարդիկը, որոնք վտանգի պարագային ի վիճակի կրնային ըլլալ դիմադրելու:

Անոնք պիտի պահուէին որպէս պատանդ՝ ջարդերը դործադրողներու տրամադրութեան ներքեւ:

ե.— Զինուորներու գինաթափումը.— Աւելին. սկսան գինաթափ ընել բանակի հայ գինուորները եւ գանոնք յատկացնել միեւնոյն աշխատանքներուն:

Զինաթափութիւնը այն ատեն մեծ համեմատութիւններու չհասաւ, շնորհիւ բարձրաստիճան կարգ մը գինուորականներու, որոնք կը գնահատէին հայ գինուորին յատկութիւնները: Սակայն առաջին քարը նետուած էր: Երիտ. թուրքերու իսկական նպատակները իրենց ուղղակի ազդեցութիւնը գործեցին գինուորական շրջանակներուն վրայ ճիշդ այն պահուն, երբ ոչ ոք կը մտածէր ըմբոստացումի մասին: Հայերը որակ-ւեցան կասկածելի, դաւաճան: Կարելի էր եւ, հետեւաբար, պէտք էր չարաչար վարուիլ անոնց հետ, ենթարկել գանոնք ամէն կարգի նախատինքի, մինչեւ իսկ բոլորը

4.- Ֆրանսերէն՝ ակնարկութիւն ԺԷ. դարու վերջերուն Ֆրանսայի մէջ բողոքականներուն դէմ ի գործ դրուած բռնաբարքներուն:

créée, il suffit de rappeler qu'aux premiers jours des hostilités, 60 soldats arméniens furent dépouillés, égorés et mis en pièces par leurs compagnons d'armes, dans le village de Eghan (vallée de Passène).

Les Jeunes Turcs créaient des conditions insupportables et voulaient qu'il n'y eut pas de déserteurs parmi les soldats arméniens.

Ces cas de désertation, d'ailleurs beaucoup moins fréquents que chez les musulmans, donnaient aux Jeunes Turcs un chef d'accusation contre le peuple arménien.

6. Corvée.— Les hommes exempts du service militaire furent contraints aux corvées. Il ne s'agissait pas d'une corvée habituelle, plus ou moins supportable par endroits. On forçait les hommes à coup de fouets, à transporter les munitions, sur le dos, pendant des centaines de kilomètres. Dans une seule vallée de Mouch, il périt 3.000 hommes de faim, d'exténuation, de maladies, en faisant leur service de bête de somme entre Erzeroum et Mouch.

7. Assassins.— Pour comble de malheur, les terroristes de la Jeune Turquie entreprirent une série d'assassinats de personnages en vue, dans les différentes régions de l'Arménie. Citons, entre autres, l'assassinat d'un notable à Diarbekir, K. Aloyan, un des vétérans du parti "Daschnakzoutioun" à Bayazed; du prêtre Aristakess (vil. Odzni, vallée d'Erzeroum), qui exerçait une grande influence sur la population rurale; de l'évêque Odabachian, qui se rendait de Constantinople à Erzindjan, pour reprendre son poste; de Setrak Pastermadjian, vice-directeur de la Banque Ottomane à Erzeroum; de l'inspecteur de la Dette Publique Khosrov Beylikjian noyés avec sa femme et son enfant dans la Mer Noire.

D'après des lettres de nos camarades, morts maintenant et les témoignages des survivants, les Jeunes Turcs tendaient, par la cruauté de leurs actes de terreur, à provoquer des réactions de la part des Arméniens pour pouvoir justifier leurs représailles ultérieures.

Nous avons encore à mentionner deux mesures, qui eurent une importance fatale pour la destinée des Ar-

որէնքէ դուրս հռչակել: Գաղափար մը տալու համար ստեղծուած մթնոլորտի մասին, կը բաւէ յիշել որ պատերազմի առաջին օրերուն Եղան գիւղին մէջ (Բասենի դաշտ) 60 հայ զինուորներ մերկացուելով, սպաննուեցան եւ կտոր-կտոր եղան իրենց զէնքի ընկերներուն կողմէ:

Երիտ. թուրքերը անտանելի պայմաններ կը ստեղծէին ու կ'ուզէին որ դասալիքներ չըլլան հայ զինուորներու շարքերուն մէջ:

Դասալքման այս պարագաները,— այլապէս նուազ յաճախադէպ քան մահմետականներու մօտ—, Երիտ. թուրքերու ձեռքը զէնք էր հայ ժողովուրդը ամբաստանելու համար:

գ.— Կռուր [բռնի աշխատանք].— Զինուորական ծառայութեան գերծ մնացած տղամարդոց պարտադրուեցաւ կռուր: Խօսքը տեղ-տեղ տանելի, սովորական պարտադիր աշխատանքի մասին չէ: Մտրակի հարուածներու տակ կը ստիպէին որ մարդիկ հարկւրաւոր քիւրմեթերք քալելով զինամթերք փոխադրէին իրենց կռնակին վրայ: Միայն Մշոյ դաշտի մէկ ձորին մէջ 3.000 մարդ, գրաստի աշխատանքին լծուած, մեռան անօթութեան, ուժասպառութեան եւ հիւանդութեան պատճառով:

է.— Սպանութիւններ.— Ի լրումն դժբախտութեանց, Երիտ. թուրքիոյ ահաբեկիչները ձեռնարկեցին սպանութեանը, Հայաստանի տարբեր շրջաններուն մէջ, շարք մը աչքի գարնոց անձնաւորութեանց: Յիշենք, այլոց կարգին, երեւելի մը սպանութիւնը Տիարպեքիւրի մէջ. Պայագէտի մէջ դաշնակցական վեթերաններէն Գ[ալուստ] Ալոյեան. Արիստակէս քահանան (Օձնի գիւղ, Կարնոյ դաշտ), որ ազդեցիկ անձնաւորութիւն էր գաւառական բնակչութեան մէջ. Օտապաշեան եպիսկոպոս, որ Կոստանդնուպոլսէն կ'ուղեւորուէր իր պաշտօնատեղին՝ Երզնկա. Սեդրակ Պաստրմաճեան, փոխ-տնօրէնը էրզրումի Օսմանեան դրամատան. Հանրային պարտուց վերակացու Խոսրով Պէյլիքճեան, որ իր կնոջ եւ զաւակին հետ խեղդամահ եղաւ Սեւ ծովուն մէջ:

Մեր ընկերներու (այժմ մահացած) նամակներուն, ինչպէս նաեւ վերապրողներու վկայութեանց համաձայն, ահաբեկչական այս արարքներու միջոցաւ Երիտ. թուրքերը կը ձգտէին մղել հայերը ընդդիմութեան, որպէսզի արդարացնեն իրենց ապագայ խստութիւնները:

Պիտի յիշատակենք նոյնպէս երկու միջոցառումներ, որոնք վճռական կարեւորութիւն ունեցան հայոց ճակատագրին համար. քափիթիւլասիոններու ջնջումը եւ Սրբազան պատերազմի հռչակումը:

méniens. C'étaient l'annulation des capitulations et la proclamation de la Guerre Sainte.

8. A l'origine du conflit européen (9 sept. 1914), il fut annoncé, qu'à partir du 1 octobre 1914 les capitulations cesseraient de fonctionner. Le 1 octobre fut proclamé et fêté à grand tapage par les chefs des Jeunes Turcs "l'acte de l'affranchissement de la Jeune Turquie du joug séculaire de l'Europe".

On sait que les capitulations garantissaient non seulement les intérêts des sujets des puissances étrangères, qui jouissaient en Turquie des droits d'extraterritorialité. Grâce aux capitulations, la France et après elle les autres puissances réussirent à étendre leur protection à tous les Chrétiens de la Turquie. Dans tous leurs actes concernant leurs sujets chrétiens, les Sultans furent tenus à prendre en considération les vues des puissances intéressées, de l'opinion publique du monde civilisé. Si le programme du Sultan Selim d'exterminer tous les Chrétiens de l'Empire ne s'accomplissait pas librement et exactement, il faut en chercher la cause en partie dans l'existence des capitulations. Tous les Turcs de bon sens comprenaient bien qu'au point de vue de la politique générale l'annulation des capitulations n'apporterait rien à la Turquie. En cas de victoire des alliés, les capitulations seraient rétablies probablement même avec plus de restrictions pour le gouvernement turc; quant à la victoire de l'Allemagne, elle amènerait la dépendance complète de la Turquie. Au lieu de 6 tutelles, elle n'en aurait plus qu'une, mais elle serait importante.

Le seul avantage réel, que les Jeunes Turcs pouvaient tirer de l'acte de l'annulation, c'était de continuer à leur aise leur œuvre d'extermination des Chrétiens.

Les Turcs eurent raison. Quand les Turcs massacraient et déportaient les Arméniens, les Alliés se bornèrent à faire entendre des protestations et de vaines menaces. Les neutres gardèrent un silence prudent. Les hauts représentants des puissances centrales non seulement furent forcés de ne pas intervenir, — eux, qui dirigeaient toute la politique extérieure et intérieure de la Turquie, — mais ils défendirent même à leurs agents et à leurs nationaux dans le pays de s'occuper du sort des Arméniens. Les diplomates de Berlin et de Vienne, qui avaient garanti, en apposant leurs signatures au

ը.— Եւրոպական պատերազմի սկիզբը (9 Սեպտ. 1914), ծանուցուեցաւ որ 1 Հոկտեմբերէն սկսեալ քափիթիւլասիոնները պիտի դադրէին ի զօրու ըլլալէ: Հոկտեմբեր 1-ը հռչակուեցաւ եւ Երիտ. Թուրքերու կողմէ «տնուեցաւ իբրեւ Երիտ. Թուրքիոյ ազատագրումի օր Եւրոպայի դարաւոր լուծէն»:

Ծանօթ է որ քափիթիւլասիոնները չէին երաշխաւորեր միայն օտար երկիրներու հպատակներուն շահերը՝ որոնք Թուրքիոյ մէջ արտերկրային իրաւունքներ կը վայելէին: Քափիթիւլասիոններու շնորհիւ, Ֆրանսա, ապա նաեւ միւս պետութիւնները յաջողեցան իրենց հովանաւորութիւնը տարածել Թուրքիոյ բոլոր քրիստոնեաներուն վրայ: Քրիստոնեայ հպատակներուն վերաբերեալ բոլոր վճիռներուն համար, սուլթանները ստիպուած էին նկատի առնել շահագրգիռ պետութեանց տեսակէտներն ու քաղաքակիրթ աշխարհի հանրային կարծիքը: Եթէ բոլոր քրիստոնեաները բնաջնջելու սուլթան Սելիմի ծրագիրը ազատօրէն եւ ճշգրտօրէն չէր գործադրուեր, պատճառը մասամբ պէտք է փնտռել քափիթիւլասիոններու գոյութեան մէջ: Բոլոր ողջմիտ Թուրքերը լաւ կ'ըմբռնէին որ, ընդհանուր քաղաքականութեան տեսակէտով, քափիթիւլասիոններու ջնջումէն Թուրքիան ոչինչ պիտի չհասէր: Դաշնակիցներու յաղթանակին պարագային, քափիթիւլասիոնները պիտի վերահաստատուէին, հաւանաբար աւելի մեծ խստութեամբ Թուրքիոյ համար: Իսկ Գերմանիոյ յաղթանակը [պիտի նշանակէր] Թուրքիոյ ամբողջական կախումը անկէ. 6-ի փոխարէն [Թուրքիա] պիտի ունենար մէկ իննամակալութիւն, բայց շատ կարեւոր:

Իրական միակ առաւելութիւնը, զոր Երիտ. Թուրքերը կրնային ունենալ այս ջնջումէն, հանգիստ կերպով շարունակելն էր քրիստոնեաներու ոչնչացման իրենց գործը:

Թուրքերը իրաւացի ելան: Երբ Թուրքերը կը ջարդէին ու կը տարագրէին հայերը, Դաշնակիցները գոհացան բողոքներով եւ ունայն սպառնալիքներով: Չէզոք երկիրները խոհեմ լռութիւն պահեցին: Կեդրոնական պետութեանց⁵ բարձրագոյն ներկայացուցիչներուն պարտադրուեցաւ չմիջամտել. — ներկայացուցիչներ, որոնք կը ղեկավարէին Թուրքիոյ արտաքին եւ ներքին քաղաքականութիւնը. բայց եւ այնպէս անոնք մինչեւ իսկ արգիլեցին իրենց գործակալներուն եւ ազգակիցներուն հայոց վիճակուած ճակատագրով զբաղիլ: Պերլինի եւ Վիեննայի դիւանագէտները, որ Պերլինի դաշնագիրը ստորագրելով՝ երաշխաւորած էին հայոց ապահովութիւնը չերթէզներու եւ քիւրտերու դէմ, որ՝ յանձն առած էին հսկել հայկական նահանգներու բարեկարգութեանց, նախընտրեցին անտարբեր վկաները հանդիսանալ միեւնոյն նահանգներու կոտորածներուն եւ տեղահանութեանց:

5. Իմա՝ Գերմանիոյ եւ Աւստրիոյ:

traité de Berlin, la sécurité des Arméniens contre les Circassiens et les Kurdes, qui s'étaient engagés à surveiller l'application des réformes dans les provinces arméniennes, préférèrent assister impassibles, dans les mêmes provinces à des massacres et à des déportations.

9. La Guerre Sainte fut proclamée par le Scheik-ul-Islam, une créature des Jeunes Turcs le 8/21 novembre 1914. Si les initiateurs rêvaient de soulever les pays musulmans contre les Guiaours en général, personne ne doutait de l'objet immédiat de la déclaration: attaquer les guiaours les plus proches: les Arméniens.

L'histoire de la Turquie démontre que dans toutes les guerres avec les puissances d'Europe, ce sont les sujets chrétiens de l'Empire ottoman qui ont payé de leur vie et de leurs biens tous les insuccès des fidèles et qui étaient considérés, en général, comme des parties intégrantes des forces ennemies.

Certains éléments de la population musulmane en Turquie se jetaient sur leurs voisins chrétiens, aux premières nouvelles des hostilités commencées entre la Turquie et n'importe quel Etat chrétien. Sans attendre la proclamation de Guerre Sainte.

*
* *

La guerre débuta par deux immenses incendies. L'un à Diarbékir, l'autre à Adrianople. Des milliers d'ateliers, de maisons, appartenant aux Arméniens, furent ravagés par le feu.

Ces incendies ne furent que les manifestations spontanées de l'impatience des fidèles. En présence de cet état d'esprit de la grande masse musulmane et des dispositions connues des dirigeants turcs, la proclamation de la guerre sainte signifiait pour les Arméniens une sentence de mort, prononcée par l'autorité la plus haute du monde musulman en Turquie.

Par là, tout accaparement des biens des Chrétiens devenait légitime. Les viols, les massacres se transformaient en actes approuvés par Allah. Le vieillard qui égorgerait de ses mains tremblantes les victimes, étendues au seuil de sa demeure; la femme, qui achèverait les blessés, l'enfant qui poignarderait ses camarades de jeu et les précipiterait dans le fleuve ou dans le ravin, — tous ils commettraient des actes de piété, leur assurant une place au paradis.

Թ.— Արբազան պատերազմը հռչակուեցաւ 1914 թ. 8/21 Նոյեմբերին Երիտ. Թուրքերու ձեռնասուն՝ Շէյխ-Իւլ-Իսլամի կողմէ: Նախաձեռնողները կ'երազէին մահմետական աշխարհը ոտքի հանել կեաւուրներուն դէմ ընդհանրապէս. ոչ ոք կը կասկածէր յայտարարութեան անմիջական նպատակին մասին.—

Յարձակում գործել ամէնէն մօտիկ գտնուող կեաւուրներուն՝ հայերուն վրայ:

Թուրքիոյ պատմութիւնը կը փաստէ, որ եւրոպական մեծ պետութեանց հետ մղուած բոլոր պատերազմներուն ընթացքին, Օսմանեան կայսրութեան քրիստոնեայ հպատակները, անբաժան մասնիկ նկատուելով թշնամի ուժերուն, տուժած են իրենց կեանքովն ու ինչքերով: Թուրքիոյ եւ քրիստոնեայ ոեւէ պետութեան միջեւ պատերազմ սկսելուն պէս, Թուրքիոյ մէջ մահմետական ժողովուրդի որոշ տարրեր, առանց սպասելու Սրբազան պատերազմի յայտարարութեան, կը յարձակէին իսկոյն իրենց դրացի քրիստոնեաներուն վրայ:

*
* *

Պատերազմին սկիզբը տեղի ունեցաւ հսկայական երկու հրդեհ, մէկը Տիարպեքիւրի, միւսը Ատրիանապոլսոյ մէջ: Հրոյ ճարակ դարձան հայապատկան հազարաւոր գործատեղիներ եւ բնակարաններ:

Ասիկա ինքնաբուխ ցոյց մըն էր հաւատացեալներու անհամբերութեան: Նկատի ունենալով Մահմետական մեծ զանգուածի մտայնութիւնը եւ թուրք ղեկավարներու ծանօթ տրամադրութիւնները, Սրբազան պատերազմի յայտարարութիւնը հայերուն համար մահաւժըն էր, արձակուած մահմետական աշխարհի բարձրագոյն իշխանութեան կողմէ:

Ատով՝ օրինական կը դառնար քրիստոնեաներու պատկանող բոլոր հարստութեանց յափշտակումը: Բռնաբարումներն ու կոտորածները կը վերածուէին Ալլահի կողմէ հաւանութիւն գտած արարքներու: Այն ծերունին, որ իր դողդոջուն ձեռքերով պիտի խեղդէր իր զոհերը ու փռէր զանոնք իրենց տան սեմին, այն կինը, որ պիտի սպաննէր վիրաւորեալները, այն երեխան, որ պիտի դաշունահարէր իր խաղընկերները ու գլորէր զանոնք գետին կամ ձորին մէջ,— բոլորը կատարած պիտի ըլլային բարեպաշտական այնպիսի արարքներ, որ զիրենք պիտի արժանացնէ դրախտին մէջ տեղ մը ունենալու իրաւունքին:

Մահմետականներէն անոնք որ՝ առաջնորդուած իրենց մարդկային զգացումներէն կամ հեռաւոր ապագայի շահերու նկատումներէն, պիտի ուզէին փրկել քանի մը հայեր, կը հրաժարէին այդ միտքէն, վախնալով որ Իսլամի թշնամի կը նկատուին ու խստօրէն կը պատժուին:

Քափիթիւլախոններու ջնջումով թիրախ կ'ընտրը-

Ceux des musulmans qui, guidés soit par les sentiments humanitaires soit par les considérations de leurs propres intérêts lointains, auraient voulu sauver quelques Arméniens, étaient détournés de cette possibilité par la peur d'être proclamés ennemis de l'Islam et punis sévèrement.

Par l'annulation des capitulations, on visait l'extérieur; par la proclamation de la Guerre Sainte, l'intérieur.

L'extermination des Arméniens, le peuple le plus loyal de Turquie, fut donc préméditée. Le programme de cette politique de mort fut élaboré avec une prévoyance exceptionnelle par les dirigeants turcs. Leurs mesures avaient eu pour but de mobiliser toutes les forces musulmanes contre les Arméniens, – de provoquer des réactions pour pouvoir aggraver la situation et taxer les Arméniens de rébellion; écartier tous les obstacles à l'accomplissement de leur programme d'ordre extérieur ou intérieur; de mettre la population arménienne hors d'état de se défendre. La population arménienne s'est vue un jour encerclée dans un immense abattoir, où les bouchers mobilisés ont la pleine possibilité d'atteindre des victimes, en nombre voulu et au moment voulu.

LE PRELUDE DES MASSACRES

La débacle des visées des Jeunes Turcs sur la Caucase à Sarikamische, à Ardahan (décembre 1914), précipita les évènements.

L'évêque d'Erzeroum Sambat fut invité au Kanak après le retour des vaincus à Erzeroum, avec quelques notables arméniens. L'inspecteur de l'armée lui déclara en présence du gouverneur Tahsin bey, de l'évêque catholique et des notables turcs, que la responsabilité du désastre de l'armée turque à la frontière russe retombait entièrement sur les Arméniens, et que le gouvernement Impérial s'en souviendrait!

Le 10 janvier 1915 on effectua le recensement général de tous les Arméniens à Erzeroum. Le 26 janvier eut lieu l'assassinat de S. Pasternadjian, dont nous venons de parler. On n'osait plus sortir le soir. Tous les villages étaient frappés de terreur. Les jours de carnaval se passèrent en un deuil général. Le chef de police Khouloussi bey étendit son activité sur les districts de Mamakhatoun-Keghi où il sévit avec la dernière ri-

dezir arrotant, guidés soit par les sentiments humanitaires soit par les considérations de leurs propres intérêts lointains, auraient voulu sauver quelques Arméniens, étaient détournés de cette possibilité par la peur d'être proclamés ennemis de l'Islam et punis sévèrement.

Թուրքիոյ ամէնէն հաւատարիմ ժողովուրդի՝ հայերու բնաջնջումը, ուրեմն, կանխամտածուած էր: Այս մահաբեր քաղաքականութեան ծրագիրը Երիտ. թուրքերու կողմէ ծրագրուած էր բացառիկ հեռատեսութեամբ: Միջոցառումները նպատակ ունէին՝ հայերուն դէմ զօրաշարժի ենթարկել մահմետական բոլոր ուժերը, գրգռել [հայերու] հակազդեցութիւնները՝ կացութիւնը աւելի ծանրացնելու եւ ապստամբութեան մեղադրանքով ամբաստանելու համար հայերը, չէզոքացնել՝ իրենց ծրագրի գործադրութեան արգելք հանդիսացող արտաքին եւ ներքին բոլոր խոչընդոտները, պաշտպանութեան միջոցներէ զրկել հայ բնակչութիւնը: Այսպէս, օրին մէկը հայ բնակչութիւնը ինքզինք պաշարուած գտաւ հակայական սպանդանոցի մը մէջ, ուր գործի լծուած մսագործները հնարաւորութիւն ունէին հարուած հասցնելու իրենց զոհերուն, որքան եւ երբ կը բաղձային:

ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ ՆԱԽԵՐԳԱՆՔԸ

Կովկասի մէջ Երիտ. թուրքերու հետապնդած նպատակը ձախողեցաւ Սարիքամիշի եւ Արտահանի պարտութեամբ (Դեկտեմբեր 1914), եւ արագացուց դէպքերու ընթացքը:

Պարտեալներու էրզրում վերադարձէն ետք, Կարնոյ եպիսկոպոս Սմբատ [Սատէթեան] քանի մը երեւելի հայերու հետ հրաւիրուեցաւ նահանգապետարան: Բանակին վերատեսուչը, ի ներկայութեան կառավարիչ Թահսին պէյի, կաթողիկէ եպիսկոպոսին ու թուրք երեւելիներու, յայտարարեց իրենց որ ռուսական ճակատին վրայ թրքական բանակին կրած աղէտին պատասխանատուութիւնը ամբողջովին կ'իյնար հայերուն վրայ եւ որ կայսերական կառավարութիւնը պիտի չմոռնար այդ պարագան...

1915 թ. Յունուար 15ին, կատարուեցաւ էրզրումի հայերուն ցուցակագրումը: Յունուար 26ին, տեղի ունեցաւ Ս[եդրակ] Պաստրմաճեանի սպանութիւնը, որուն մասին խօսք եղաւ արդէն: Երեկոյեան մարդ դուրս չէր ելլեր: Բոլոր գիւղերը սարսափի մատնուած էին: Բարեկենդանի օրերուն ընդհանուր սուգ էր: Ոստիկանապետ Խուլուսի պէյ իր գործունէութիւնը տարածեց Մամախաթուն-Քղի գաւառներուն վրայ, ուր ի գործ դրաւ ծայր աստիճան խստութիւններ: Փետրուար 4ին, Կարնոյ դաշտի գիւղացիները, սարսափահար, քաղաք խուժեցին: Տեղի ունեցան զանգուածային նոր ձերբակալութիւններ: Գերմանացի մը զգուշացուց եպիսկոպոսը ջարդերու վտանգին մասին: Այս շրջանին է որ բոլոր Երիտ. թուրքերը, երեսփոխաններէն սկսեալ մինչեւ յետին կալանաւորը, մէկ հոգ ունէին միայն, – դրամ

gueur. Le 4 février les paysans de la vallée d'Erzeroum affluèrent en ville, affolés. Des nouvelles arrestations eurent lieu en masse. Un des Allemands prévint l'évêque du danger des massacres. C'était la période, où tous les Jeunes Turcs, depuis les députés jusqu'au dernier forçat n'avaient qu'un seul souçi, celui d'estorquer de l'argent aux morituri.

Kossav pacha (un autrichien), commandant de la forteresse d'Erzeroum, fut rappelé à cause de son opposition aux projets Jeunes Turcs. Les Kurdes et les gendarmes impatients provoquèrent des agressions prématurées dans la vallée de Mouch. Koriun, un de nos camarades, après avoir puni les agresseurs, fut obligé de gagner les montagnes. Le gouvernement central blâma la conduite des gendarmes. Mais peu de temps après d'autres camarades furent forcés de rejoindre Koriun et notamment Rouben, Tigran, Medjo, Avedis, Vahan Papazian (député de Van au parlement ottoman) etc. Des rencontres ont lieu aussi à Kartchkan, Karkar (vil. De Bitlis), à Schatakh (vil. De Van). Le 2 mars, grande agitation parmi les Turcs D'Erzeroum. Des réunions publiques ont lieu. On parle des massacres en ville. Le gouverneur rétablit l'ordre. Il rassure les Arméniens et il leur fait dire par l'évêque que jamais il n'y aura des massacres à Erzeroum. Il tint parole car les massacres eurent lieu loin de la ville.

Mêmes agressions à Sivas, à Kharpout, à Diarbekir, en Cilicie. Elles s'aggravèrent de plus en plus, en dépit des communications rassurantes du pouvoir central. Tous ces incidents n'étaient qu'un prélude aux grands massacres, dont l'ère s'ouvrit au mois d'avril 1915.

Ni la loyauté, manifestée par les partis politiques, dès le début du conflit européen, ni les déclarations réitérées du patriarcat arménien, ni les fondations d'hôpitaux aux frais des communautés arméniennes, ni les dons en argent et autres sacrifices matériels, ni la sublime résignation des chefs et des groupes des partis, qui s'exposaient au risque de perdre leur crédit à l'extérieur, ni les supplications des victimes, rien ne put arrêter les dirigeants turcs.

Pour définir la tactique des Jeunes Turcs dans la première période des massacres et pour montrer toute la valeur de leurs accusations, il est nécessaire de dire quelques mots sur l'origine de la prétendue révolte de Van.

Le 1 avril, notre camarade Ischkhan Mikaélian fur

կորզել մահապարտներէն:

էրզրումի միջնաբերդին հրամանատարը՝ Քոսավ փաշա (աւստրիացի) պաշտօնանկ եղաւ՝ Երիտ. թուրքերու ծրագրին հակառակ ըլլալուն համար: Անհամբեր դարձած քիւրտերն ու ժանտարմները վաղահաս յարձակումներ գործեցին Մշոյ մէջ: Մեր ընկերներէն մէկը՝ Կորիւն, նախայարձակները պատժելէ ետք, ստիպուեցաւ լեռ բարձրանալ: Կեդրոնական կառավարութիւնը մեղադրեց ժանտարմներու վարմունքը: Սակայն քիչ ատեն ետք ուրիշ ընկերներ միացան Կորիւնին, յատկապէս Ռուբէնը, Տիգրանը, Մճոն, Աւետիսը, Վահան Փափագեան (Վանի երեսփոխան Օսմանեան խորհրդարանի մէջ) եւ այլն: Բախումներ տեղի ունեցան նաեւ Կարճրկան, Կարկառ (Պիթլիսի վիլայէթ), Շատախ (Վանի վիլայէթ): Մարտ 2ին, մեծ զրգուլթիւն էրզրումի թուրքերու շարքին: Տեղի կ'ունենան հանրահաւաքներ: Քաղաքին մէջ կը խօսին ջարդերու մասին: Կառավարիչը կը վերահաստատէ կարգն ու կանոնը: Կը վստահեցնէ հայերը եւ, եպիսկոպոսին բերնով, իրենց կ'ըսէ որ էրզրումի մէջ ջարդեր տեղի պիտի չունենան: Խոստումը յարգեց, որովհետեւ ջարդերը տեղի ունեցան քաղաքէն հեռու վայրեր:

Նոյն կարգի նախայարձակումներ Սըվազ, Խարբերդ, Տիարպեքեր, Կիլիկիա: Լուրջ համեմատութիւններու հասան անոնք, հակառակ կեդրոնական իշխանութեան հանդարտեցուցիչ հաղորդումներուն: Բոլոր այս միջադէպերը կը կազմէին նախերգանքը միայն այն մեծ կոտորածներուն, որոնք սկսան 1915 թ. Ապրիլ ամսուն:

Ո՛չ օրինապահութիւնը՝ քաղաքական կուսակցութեանց կողմէ ցոյց տրուած եւրոպական պատերազմի սկիզբը, ո՛չ հայոց պատրիարքարանի կրկնակի յայտարարութիւնները, ո՛չ հայ համայնքի ծախսերով հիմնուած հիւանդանոցները, ո՛չ դրամական նուիրատուութիւնները եւ այլ նիւթական զոհողութիւններ, ո՛չ վեհանձն համակերպումը կուսակցութեանց եւ խմբաւորումներու ղեկավարներուն, որոնք խնդրոյ առարկայ կը դարձնէին իրենց վարկը արտաքին աշխարհի աչքին, ո՛չ զոհերուն աղերսանքները, ոչ մէկ բան կրցաւ կասեցնել թուրք ղեկավարները:

Պաղատար մը տալու համար, թէ ի՛նչ մարտավարութեան կը հետեւէին Երիտ. թուրքերը ջարդերու առաջին շրջանին, եւ ցոյց տալու համար իրենց ամբաստանութեան արժէքը, անհրաժեշտ է քանի մը խօսք ըսել Վանի կարծեցեալ ապստամբութեան ծագման մասին:

Ապրիլ 1-ին [1915], Վանի կառավարիչ Ճեւտէթ պէյ խնդրեց մեր ընկեր Իշխան Միքայէլեանէն որ Շատախ մեկնի, յատուկ առաքելութիւն տալով քիւրտերուն եւ հայերուն վրայ ազդեցութիւն բանեցնել եւ վերահաստատել քիւրտերու կողմէ խանգարուած կարգն ու կա-

prié par le gouverneur de Van Djevdet bey de se rendre en mission à Schatak pour exercer son influence sur les Kurdes et sur les Arméniens, et rétablir l'ordre troublé par les Kurdes. Ischkhan consentit volontiers et se mit en route, accompagné de 3 camarades. Au village de Hertch, *il fut traîtreusement tué avec ses compagnons*, par une bande embusquée à cet effet par le gouverneur lui-même.

Après le départ d'Ischkhan, le gouverneur invita chez lui deux autres camarades influents, Vramian, député à la Chambre ottomane et Aram "pour délibérer sur les questions du jour". Vramian, – député et légalement inviolable, répondit à l'invitation, fut aussitôt arrêté, amené au bateau, conduit à Datvan, de là à Bitlis, où *il fut tué*. Aram, retenu ailleurs par les affaires du parti, échappa à la mort.

L'indignation fut grande, mais le gouverneur, encouragé par la réussite de sa première manœuvre, réclama un certain contingent d'homme "pour besoins de guerre". Les habitants refusèrent. Ils avaient compris les machinations de Djevdet bey, connu depuis Abdul Hamid par ses cruautés et persuadés que tous les Arméniens, tombés dans ses griffes, seront anéantis. Le gouverneur menaça de sa vengeance toute la population. Deux soldats arméniens furent assassinés par les soldats turcs et en même temps arrivèrent les nouvelles d'un commencement de massacres dans les provinces.

Les Arméniens se mirent en état de défense. La ville de Van, de même que le district de Schatak luttèrent glorieusement durant un mois, jusqu'à l'arrivée des troupes russes et des volontaires arméniens du Caucase.

Leur crime consistait en ce qu'ils ne se laissèrent pas massacrer et, par leur résistance acharnée ils contribuèrent à la défense des autres Arméniens, dispersés dans les provinces.

Il est superflu de prouver que ceux qui résistèrent à Schabin-Karahissar, à Angora, à Ourfa, villes éloignées de la zone d'opération de guerre d'au moins 500, à 800 et à 1000 kilomètres, dans un pays coupé de montagnes infranchissables, ne pouvaient avoir d'autre but que de mourir avec honneur, les armes à la main. Leur attitude leur fut imposée par les massacres des déportés d'Erzeroum, d'Erzindjan etc., qui n'avaient même pas manifesté la moindre désobéissance, durant toute la période de déportation.

նոնր: Իշխան համաձայնեցաւ եւ ճամբայ ելաւ երեք ընկերներու հետ: Հիրճ գիւղին մէջ, սպաննուեցաւ ան դաւադրաբար իր ընկերակիցներուն հետ միասին՝ խմբակի մը կողմէ, որ դարան մտած էր հոն անձամբ կառավարելին կարգադրութեամբ:

Իշխանին մեկնումէն ետք, կառավարիչը իր մօտ հրահրեց ազդեցիկ երկու ուրիշ ընկերներ, – Օսմանեան խորհրդարանի անդամ Վրամեանն ու Արամը՝ [Մանուկեան] «օրուան խնդիրներուն շուրջ խորհրդակցելու համար»: Վրամեանը – երեսփոխան եւ անձեռնմխելի ըստ օրինի – ընդունեց հրահրելու անմիջապէս ձեռքակալուեցաւ եւ նաւակով տարուեցաւ Գատուան, ուր սպաննուեցաւ: Արամը, կուսակցութեան գործերով զբաղած ըլլալուն բերումով, մահէ փրկուեցաւ:

Մեծ եղաւ ընկերները բայց կառավարիչը, քաջալերուած իր առաջին յաջողութենէն, պահանջեց որոշ թիւով մարդիկ՝ «պատերազմական կարիքներու համար»: Բնակիչները մերժեցին: Հասկցած էին անոնք դաւադիր ընթացքը ձեռնէթ պէյի, ծանօթ իր գազանութիւններով Ապտիւլ Համիտի օրերէն, եւ համոզուած՝ որ անոր ձիրաններուն մէջ ինկած բոլոր հայերը պիտի ոչնչացուին: Կառավարիչը սպառնաց վրէժ լուծել ամբողջ բնակչութենէն: Երկու հայ գինուորներ սպաննուեցան թուրք գինուորներու կողմէ եւ միեւնոյն ժամանակ լուրեր հասան գաւառներու մէջ կոտորածներ սկսելու մասին:

Հայերը պաշտպանողականի անցան: Վան քաղաքը, ինչպէս նաեւ Շատախ գաւառը փառաւորապէս պայքարեցան ամիս մը ամբողջ, մինչեւ ժամանումը ռուսական զօրքերուն եւ Կովկասի հայ կամաւորներուն:

[Հայերուն գործած] ոճիրը կը կայանար այն բանին մէջ, որ չջարդուեցան եւ իրենց կատաղի դիմադրութեամբ նպաստեցին գաւառներու մէջ ցրուած միւս հայերու ինքնապաշտպանութեան:

Հարկ չկայ ապացուցանելու որ պատերազմական գործողութիւններէն 500, 800 եւ 1000 քիլոմետր հեռու գտնուող եւ անանցանելի լեռներով կտրատուած երկրի մը մէջ, Շապին Գարահիսարի, Անգարայի եւ Ուրֆայի մէջ դիմադրական կռիւ մղողները այլ նպատակ չէին կրնար ունենալ քան զէն ի ձեռին մեռնիլ պատուով:

Ստիպուած էին այս կեցուածքը բռնել իբր հետեւանք էրզրումի, Երզնկայի եւ այլ վայրերու մէջ տարագրուածներու ջարդուելուն: այս վերջինները անհրաժեշտութեան ոչ մէկ նշան ցոյց տուած էին տարագրութեան ժամանակ:

RESPONSABILITE

Si nous nous sommes arrêtés à des détails, c'était poue mieux démontrer le degré de responsabilité de la Turquie dans le désastre de l'Arménie.

Notre parti était l'ennemi le plus acharné du régime d'Abdul Hamid et il était devenu le partisan le plus loyal de la Jeune Turquie. Nous avons toujours été adversaires des guerres, et toute atteinte à l'intégrité de la Turquie Constitutionnelle. Nous nous sommes prononcés contre la participation de la Turquie au conflit européen. Quand la guerre fut néanmoins déclarée par la Turquie, le peuple arménien décida de remplir ses devoirs civiques. Mais la guerre aux Alliés fut complétée d'une guerre intérieure contre le peuple arménien. Parallèlement aux préparatifs de guerre générale, on mobilisa des troupes spéciales (gendarmes, Kurdes, "Tcheta"s, etc.) contre nous et on se livra à des provocations contre notre population.

Les Turcs nient ces actes de provocation. Mais n'ont-ils pas agi de même envers les puissances alliées? N'ont-ils pas provoqué celles-ci en pleine paix, en concentrant les forces à la frontière du Caucase et de l'Egypte, en s'appropriant le "Goeben" et le "Breslau",— en forçant les Anglais à quitter la flotte,— en infligeant des outrages aux représentants de la Russie et de la France à Erzeroum, à Trébizonde, à Smyrne,— en créant l'incident du paquebot Sakhalien,— en attaquant les postes russes à la frontière du Caucase,— et enfin en bombardant les navires et les ports russes? Voudraient-ils dès lors ménager les Arméniens?

Le lendemain du bombardement dans la Mer Noire, ils se mirent à crier à l'offensive des Alliés. Hériteraient-ils à ne pas taxer de rébellion les Arméniens après avoir commencé à les massacrer?

Même s'il y avait des rebelles parmi les Arméniens, rien ne peut justifier le crime envers toute une nation.

La Turquie aura à répondre du sort des victimes de sa provocation; du sort d'un million et demi des déportés, qui, sans la moindre apparence de résistance s'étaient livrés à la merci du gouvernement; du sort d'au moins d'un million de femmes et d'enfants, qui en aucune manière ne pouvaient être qualifiés d'insurgés.

ՊԱՏՄԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Եթէ մանրամասնութիւններու վրայ կանգ առինք, այդ այն նպատակով էր որ աւելի յստակ կերպով ցոյց տանք Թուրքիոյ պատասխանատուութեան բաժինը Հայաստանի կործանման մէջ:

Մեր կուսակցութիւնը ամէնէն կատաղի թշնամին էր Ապտիւլ Համիտի վարչակարգին, եւ դարձած էր ամէնէն հաւատարիմ կուսակիցը Երիտ. Թուրքիոյ: Մենք միշտ հակառակ եղած ենք պատերազմներուն, եւ Սահմանադրական Թուրքիոյ ամբողջականութեան դէմ առնուած որեւէ քայլի: Դէմ ենք արտայայտուած Թուրքիոյ մասնակցութեան եւրոպական պատերազմին: Այսուհանդերձ, երբ Թուրքիոյ կողմէ պատերազմ յայտարարուեցաւ, հայ ժողովուրդը որոշեց իր քաղաքացիական պարտականութիւնները լիուլի կատարել: Սակայն Դաշնակիցներուն դէմ մղուած պատերազմին վրայ աւելցաւ ներքին պատերազմ մը՝ հայ ժողովուրդին դէմ ուղղուած: Ընդհանուր պատերազմի պատրաստութիւններուն զուգահեռ, զօրաշարժի ենթարկուեցան յատուկ գունդեր (ժանտարմներ, քիւրտեր, «չեթա»ներ եւայլն) մեզի դէմ, եւ սկսան գրգռութիւններ մեր ժողովուրդին դէմ:

Թուրքերը կ'ուրանան այդ գրգռիչ արարքները: Բայց արդեօք նոյն ձեւով չչարժեցան դաշնակից պետութիւններուն հանդէպ: Խաղաղութեան օրերուն չգրգռեցին արդեօք այս վերջինները՝ զօրքերը կեղերոնացնելով Կովկասի եւ Եգիպտոսի ռազմաճակատներուն վրայ, սեփականացնելով Կէօպէն եւ Պրեսլաու [ռազմանաւերը], ստիպելով որ անգլիացիները հեռացնեն նաւատորմիդը, նախատելով էրզրումի, Տրապիզոնի, Չմիւռնիոյ, Ռուսիոյ եւ Ֆրանսայի ներկայացուցիչները, ստեղծելով Սախալեան նաւու միջադէպը, յարձակելով ռուսական պահանջներուն վրայ Կովկասի սահմանին, եւ, վերջապէս, ռմբակոծելով ռուսական նաւերն ու նաւահանգիստները: Այս ամէնէն էտք, պիտի ուզէի՞ն խնայել հայերուն:

Սեւ ծովու ռմբակոծման վաղորդայնին, սկսան պռոչտալ Դաշնակիցներու յարձակման մասին: Պիտի ուզէի՞ն արդեօք տատամսիլ, հայերը ջարդել սկսելէ էտք, զանոնք ապստամբութեամբ մեղադրելէ:

Եթէ մինչեւ իսկ ըմբոստներ կային հայերուն մէջ, ոչ մէկ բան կ'արդարացնէ ամբողջ ազգի մը դէմ գործուած ոճիրը:

Թուրքիան պարտաւոր է պատասխան տալ իր գրգռութեան զոհ դարձած մարդոց ճակատագրին մասին. ճակատագրին մասին մէկ ու կէս միլիոն տարագրուեալներու, որոնք, առանց ոչ մէկ ակնյայտ դիմադրութեան, ապաւինած էին կառավարութեան գթութեան. ճակատագրին մասին առնուազն մէկ միլիոն կիներու եւ երեխաներու, որոնք ոչ մէկ կերպով ըմբոստներ կըրնային համարուիլ:

Փաստ. 1685-2

4.– ՊԱՐՈՆ ԶՕՐԵԱՆԻ ՅՈՒՇԱԳՐԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

(Հոլանտա-Սկանդինավեան կոմիտէին ներկայացուած Պր. Զօրեանի Յիշատակագրին այն բաժինը, որ յիշեալ կոմիտէի քարտուղար Պր. Հիւսմանգի կողմէ հանուեցաւ եւ պիտի չտպագրուի)

ԿՈՏՈՐԱԾՆԵՐ, ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՈՑ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

SUITE DU MEMORANDUM DE M. ZORIAN

(Partie du rapport de M. Zorian, présentée au comité Hollandais Scandinave, et qui a été supprimée par M. Huysmans, Secrétaire dudit Comité, et qui ne sera pas imprimée)

MASSACRES, DEPORTATIONS ET RESISTANCE DES ARMÉNIENS

Թարգմանութիւնը.—

Les massacres commencèrent par le vilayet de Van, limitrophe du Caucase.

D'après le plan, tout le vilayet de Van fut partagé en régions; pour chaque région furent désignés des détachements spéciaux de Kurdes, de gendarmes et de tchetas, assistés par les troupes. Ils avaient pour tâche de commencer les opérations simultanément avec celles qui auraient lieu en ville.

Pour la réussite, le Comité Jeune-Turc avait décidé de s'emparer tout d'abord des chefs. Comme tels furent désignés de nos camarades: Ischkhan, député, Vramian et Aram.

Ischkhan, Président de l'assemblée Nationale à Van, rédacteur en chef du journal Aschkhatank (Travail, organe de notre parti à Van), connu surtout depuis les temps d'Abdul Hamid par sa bravoure et ses capacités militaires, fut pris le premier.

Chargé par le Gouverneur Djevdet bey de se rendre en mission à Schatak, pour rétablir l'ordre troublé, en exerçant son influence sur les Kurdes et sur les Arméniens, il se mit en route avec ses quatre camarades, accompagnés de gendarmes.

Dans le village de Hertch, Ischkhan et ses quatre

կոտորածները սկսան Կովկասի սահմանակից Վան նահանգէն:

Մրազրուածին համաձայն, Վանի ամբողջ նահանգը բաժնուեցաւ շրջաններու, իւրաքանչիւր շրջանի համար ճշգրտեցան քիւրտերէ, ժանտարմներէ եւ չեթաներէ բաղկացած յատուկ ջոկատներ, իրենց կողքին ունենալով բանակային զօրագունդեր: Անոնց պարտականութիւնն էր՝ քաղաքին մէջ գործողութիւններու սկսելէն անմիջապէս ետք գործի անցնիլ գաւառներուն մէջ:

Յաջողութեամբ գործելու համար, Երիտ. թուրքերու կոմիտէն որոշած էր նախ եւ առաջ ձեռք անցնել [հայ] ղեկավարները: Իբրեւ այդպիսին նշուեցան մեր ընկերներէն Իշխանը, երեսփոխան Վ. Լամեանը եւ Արամը⁶:

Իշխանը⁷, նախագահ Ազգային ժողովի, գլխաւոր խմբագիր մեր կուսակցութեան պաշտօնաթերթ «Աշխատանք»-ի, ծանօթ Ապտիւլ Համիտի ժամանակներէն իր քաջութեամբ եւ զինուորական կարողութեամբ, առաջին գոհը դարձաւ:

Կառավարիչ ձեւտէթ պէյի կողմէ յատուկ առաքելութեամբ Շատախ դրկուեցաւ ան որպէսզի քիւրտերու եւ հայերու վրայ իր ազդեցութիւնը ի գործ դնելով խանգարուած կարգը վերահաստատէ. ժանտարմներու

6.- Մանուկեան Արամ:

7.- Միքայէլեան Պօղոս:

camarades, pendant qu'ils prenaient leur repos, tout tranquilles, furent brusquement assaillis par une nombreuse bande de tchetas embusqués. Ils tombèrent tous criblés de balles, sans pouvoir saisir leurs armes.

Vramian, député de Van au parlement ottoman, connu dans le journalisme et le monde politique, exerçant une grande autorité sur la population, écouté même par les adversaires politiques, fut invité chez le gouverneur avec le camarade Aram, aussitôt après le départ d'Ischkhan de Van. Aram, retenu par les affaires du parti, ajourna sa visite et échappa ainsi à la mort. Vramian, — notons, en sa qualité de député inviolable, — fut saisi, amené sur le champ au bateau, conduit à Datvan, de là à Bitlis, où il fut, dit-on, sous peu, étranglé et pendu.

A la nouvelle de l'ignoble assassinat d'Ischkhan, apportée à Van par les exécuteurs eux-mêmes, et celle de la disparition de Vramian, la ville fut alarmée. En même temps arrivèrent les nouvelles inquiétantes des provinces. Le Gouverneur, encouragé par son premier succès, procéda à l'accomplissement du second point du programme élaboré. Il exigea en certain contingent d'hommes "pour les besoins de guerre", en menaçant, en cas de refus, de représailles. Les Arméniens refusèrent, persuadés, à juste titre, que tous les Arméniens tombés dans la main du Gouvernement seraient anéantis.

L'assassinat, en plein jour, par les soldats turcs, de deux soldats arméniens accourus aux cris d'une femme qu'on voulait violer, forçait les Arméniens à prendre des précautions et à se mettre en état de défense.

Dès ce jour, des coups de fusil commencent à partir des deux côtés. C'est ainsi que surgit la soi-disant insurrection de Van.

La défense.— Un gouvernement provisoire est vite constitué des représentants des trois partis politiques. Aram, celui qui était échappé par un hasard aux griffes du Gouverneur, dirige la défense. On se mit à l'œuvre. Différentes commissions sont organisées. Hommes, femmes, adolescents, tous ont leur part de travail.

Relativement mal armés, manquant surtout de munitions, coupés en deux parties en ville et au faubourg "Aikestan", on n'eut pas le temps de se réunir, attaqués par des forces supérieures de 6000 soldats turcs et

ընկերակցութեամբ, ան ճամբայ ելաւ չորս ընկերներով:

Հիրճ գիւղին մէջ, ուր Իշխան եւ իր չորս ընկերները կը հանգստանային, յանկարծ յարձակման ենթարկուեցան դարանակալ չեթայական բազմամարդ խումբի մը կողմէ: Բոլորը գնդակահար սպաննուեցան, առանց որ կարենան գէնքի դիմել:

Վռամեան, օսմանեան խորհրդարանի երեսփոխան, ծանօթ հրապարակագրութեան եւ քաղաքական շրջանակներու մէջ, հեղինակաւոր անձնաւորութիւն ժողովուրդին մէջ, իր խօսքը լսելի նոյնիսկ իր քաղաքական հակառակորդներուն կողմէ, Իշխանի մեկնումէն անմիջապէս ետք, ընկեր Արամի հետ հրաւիրուեցաւ կառավարիչին մօտ: Արամ, կուսակցութեան գործերով զբաղած ըլլալով, յետաձգեց իր այցելութիւնը եւ այդպէս փրկուեցաւ մահուանէ: Վռամեանը — նշենք որպէս երեսփոխան իր անձեռնմխելիութիւնը — կալանաւորուեցաւ, տեղւոյն վրայ առաջնորդուեցաւ նաև, տարուեցաւ Դատուան, անկէ Պիթլիս, ուր կ'ըսուի թէ քիչ ետք խոշտանգուած ու կախաղան հանուած է:

Իմանալով Իշխանի անարգ սպանութեան լուրը, որ Վան բերած էին իրենք՝ ոճրագործները, եւ Վռամեանի անհետացումին մասին, քաղաքը ահազանգի մատնուեցաւ: Միեւնոյն ատեն մտահոգիչ լուրեր հասան գաւառներէն: Կառավարիչը, քաջալերուած իր առաջին յաջողութենէն, ձեռնարկեց կազմուած ծրագրի երկրորդ կէտին գործադրութեան: Պահանջեց որոշ թիւով մարդիկ «պատերազմի կարիքներուն համար», սպառնալով, մերժումի պարագային, ծայրայեղ միջոցներու դիմելու: Հայերը, մերժեցին, համոզուած յիշաւի, որ կառավարիչին ձեռքը անցած բոլոր հայերը պիտի ոչնչացուէին:

Թուրք զինուորներու կողմէ օր ցերեկով սպանութիւնը երկու հայ զինուորներու, որոնք փութացած էին օգնութեան հասնելու բռնաբարուելու վտանգին ենթակայ կնոջ մը, — կը հարկադրէր հայերը, որ կանխագուշակաւ միջոցներ ձեռք առնեն եւ անցնին պաշտպանողականի:

Այդ օրուան սկսեալ, հրացանները կ'որոտան երկուստեք: Այսպէս է որ պայթեցաւ Վանի կարծեցեալ ըմբոստութիւնը:

[Ինքնա]պաշտպանութիւնը.— Ժամանակաւոր կառավարութիւն մը կազմուեցաւ, բաղկացած քաղաքական երեք կուսակցութեանց ներկայացուցիչներէն: Արամ, ան որ դիպուածով ազատած էր կառավարիչին ճիրաններէն, կը ղեկավարէ պաշտպանութիւնը: Գործի անցնելով կը կազմակերպուին տարբեր յանձնախումբեր: Տղամարդիկը, կիները, պատանիները բոլորին աշխատանքի բաժին կայ:

Յարաբերաբար գէշ զինուած, մանաւանդ անբաւարար

kurdes, bombardés sans cesse, les Arméniens sont obligés de se tenir sur la plus stricte défensive.

Dans de nombreuses positions fortifiées, dans les tranchées creusées, ils repoussent les attaques des assaillants. Mais peu après, ils réussissent à fondre leurs petits canons, à fabriquer des obus de la poudre, des matières explosives, des balles et même des douilles. Repris de force, ils passent peu à peu à l'offensive, s'emparant des casernes et des positions turques hors la ville. Les assiégés sont presque maîtres de la situation, lorsque des troupes russes, avec les volontaires arméniens, passent la frontière et s'approchent de Van. Les Turcs, qui attendaient à leur tour les forces de Khalil bey, pour écraser la ville, se retirent, en massacrant, en dernier lieu, les 150 jeunes hommes détenus dans la prison et en incendiant les églises et d'autres édifices.

Les clefs de la ville sont remises au Général russe par le Gouvernement provisoire. Aram est désigné gouverneur du vilayet. L'administration, la justice, la milice sont créées d'éléments arméniens.

La Défense de Schatak.— Non moins glorieuse fut la défense du district montagnard de Schatak. Aux premières tentatives des Kurdes, le Arméniens de cette région répondirent par des coups décisifs, ils les chassèrent, de même que le Kaïmakam, occupèrent tous les défilés et tinrent à toutes les attaques des hamidiés kurdes, jusqu'à l'arrivée, après la délivrance de Van, des volontaires arméniens du Caucase.

Dans les autres districts du vilayet de Van, les Arméniens malheureusement se laissèrent surprendre. Après avoir isolé et massacré les chefs d'abord, ensuite les hommes plus ou moins valides. On les isolait, sous prétexte de les envoyer à la construction des routes, on y procédait aux massacres généraux. Une partie des Arméniens réussit à se sauver au Caucase. D'autres se réfugièrent dans les îlots du lac de Van, ou, partagés par groupes, traqués par les kurdes et les tchetas, ils se cachaient ou se défendaient dans les montagnes et dans les forêts.

Les volontaires arméniens s'étant répartis dans les districts, combattaient les Turcs et délivraient les Arméniens, en grandes partie femmes et enfants.

րար ռազմամթերքով, հաղորդակցական կապի բացակայութեամբ քաղաքի եւ Այգեստան թաղամասի, որոնց միջեւ կապ ստեղծելու ժամանակ չէր եղած, այլապէս ենթարկուած 6000-ը անցնող թուրք եւ քիւրազի ուղղորդու գերակշիռ ուժի մը կողմէ եւ անընդհատ տեղացող ռումբերու տարափին տակ,— ստիպուած էին հայերը բացառաբար պաշտպանողական դիրք բռնել:

Ամրացեալ բազմաթիւ դիրքերու վրայ, փորուած խրամներու մէջ, անոնք ետ կը մղեն նախայարձակները: Քիչ անց, սակայն, կը յաջողին ձուլել իրենց փոքրիկ թնդանօթները, շինել վառօղէ ռումբեր, պայթուցիկ նիւթեր, փամփուռներ եւ մինչեւ իսկ պարկուճներ: Ուժերը հաւաքած՝ հետզհետէ կ'անցնին յարձակողականի եւ կը գրաւեն զօրանոցներ եւ քաղաքէն դուրս գտնուող թրքական դիրքերը: Պաշարուածները կացութեան տէրն են գրեթէ, երբ ռուսական զօրքերը եւ հայ կամաւորները սահմանը կ'անցնին ու կը մօտենան Վանին: Թուրքերը, որ իրենց կարգին կը սպասէին խալիպէյի ուժերուն որպէսզի ճգմեն [ընդդիմութիւնը], կը նահանջեն, վերջին պահուն կոտորելով 150 գերի երիտասարդներ եւ կրակի տալով եկեղեցիներն ու այլ շէնքեր:

Ժամանակաւոր կառավարութեան կողմէ քաղաքին բանալիները կը յանձնուին ռուս զօրավարին: Արամ կը նշանակուի նահանգին կառավարիչ: Հայերով կը կազմուի վարչութիւնը, արդարադատութիւնը եւ աշխարհազօրը:

Շատախի պաշտպանութիւնը.— Նուազ փառաւոր չեղաւ Լեւոնային Շատախ գաւառակի պաշտպանութիւնը: Քիւրտերու առաջին փորձերուն դէմ, այս շրջանի հայերը վճռական հարուածներով հակադարձեցին, փախուստի մատնեցին զանոնք ինչպէս եւ գայմազամը, գրաւեցին բոլոր կիրճերը եւ դիմադրեցին համիտիէ քիւրտերու բոլոր յարձակումներուն, մինչեւ որ, Վանի ազատազրուամէն ետք, հասան Կովկասի հայ կամաւորները:

Վանի նահանգին միւս գաւառներուն մէջ, դժբախտաբար, անակնկալի եկան հայերը: Նախ եւ առաջ [թուրքերը] կը մեկուսացնէին ու կը սպաննէին ղեկավարները, ապա՝ առաւել կամ նուազ ամրակազմ տղամարդիկը: Ծամբաներու շինութեան ղրկելու պատրուակին տակ, կ'առանձնացնէին զանոնք ու կը սպաննէին: Հայերուն մէկ մասը յաջողեցաւ փախուստ տալ Կովկաս: Ուրիշներ ապաստանեցան Վանայ լճի կղզեակներուն մէջ, ուր, քիւրտերուն եւ չեթաներուն կողմէ հետապնդուած, կը թաքնուէին անոնք, կամ պաշտպանողական կռիւ կը մղէին լեռներու եւ անտառներու մէջ:

Հայ կամաւորները, գաւառները մեկնելով կը կրուէին թուրքերուն դէմ եւ կ'ազատէին հայերը, մեծաւ մասամբ կիներ ու երեխաներ:

Environ 200.000 Arméniens en tout furent sauvés dans les régions conquises en été 1915.

Les massacres et la résistance à Mousch.— Les troupes russes et les volontaires se dirigèrent vers Bitlis et la vallée de Mousch où les massacres commencés, les Arméniens, par endroits, luttaient désespérément. Là aussi le Gouvernement Jeune-Turc avait réussi à arrêter, par ruse, quelques notables de la ville, à les enfermer avec le supérieur du couvent S. Karapet, Vartan Vartapet, très influent dans le pays, et ils furent brûlés vifs, après de longues tortures et profanations.

Le quartier arménien de Mousch, après trois jours de résistance acharnée, bombardé sans arrêt, fut détruit et pris. Plusieurs familles mirent le feu, à la dernière minute à leurs maisons, et furent la proie des flammes avec tous leurs biens.

Femmes, filles, enfants, se jetèrent dans le fleuve. Le reste des femmes et des filles furent partagées comme butin de guerre. Quelques hommes seulement purent rompre la chaîne des troupes et des kurdes pour gagner les hauteurs de Sassoun. Parmi les défenseurs tombés fut un des vieux combattants Hadji Agop.

La lutte inégale continuait dans les montagnes. Plusieurs fois les Turcs et les Kurdes furent battus. Mais les munitions manquaient aux Arméniens. Les chefs Koriun, Tigran, Medjo et autres tombèrent. Rouben et Vahan Papazian (député) dirigeaient la défense encore quelque temps.

En même temps les troupes russes avec les détachements de volontaires arméniens avançaient vers la vallée de Mousch, des deux côtés. On espérait sauver la plus grande partie de la population. Mais à peine pénétrées dans la vallée, les troupes russes reçurent l'ordre de se retirer sur toute la ligne. 100.000 Arméniens environ furent abandonnés à la merci des kurdes et des "kassab tabouri" (bataillon des bouchers) de Kiasim bey. Cette retraite précipitée, imprévue, qui, de plus, ne put être justifiée par des raisons stratégiques, coûta la vie non seulement des Arméniens abandonnés à Mousch, à Sassoun, mais aussi celle de dizaines de mille qui périrent dans l'émigration en masse de toutes les régions conquises. Elle eut, en outre, pour conséquences, la dévastation complète de Van et des autres districts et ... la substitution du régime de gouverne-

1915 թ. ամրան, վերագրաւուած շրջաններուն մէջ շուրջ 200.000 հայեր փրկուեցան:

Կոտորածներն ու դիմադրութիւնը Մուշի մէջ.— Ռուսական զօրքերն ու կամաւորները ուղղուեցան դէպի Պիթլիս եւ Մշոյ դաշտ, ուր ջարդերը սկսած էին եւ հայերը տեղ-տեղ կը պայքարէին յուսահատօրէն: Հոս եւս Երիտ. թուրքերու կառավարութիւնը յաջողած էր խորամանկութեամբ ձերբակալել քաղաքին կարգ մը երեւելի անձնաւորութիւնները, բանտարկել զանոնք, իրենց հետ միասին նաեւ երկրին մէջ մեծ հեղինակութիւն վայելող Ս. Կարապետ վանքի վանահայր Վարդան վարդապետը. բազում շարժարանքներու եւ պղծագործութիւններու ենթարկուելէ ետք, բոլորը հրկիզուեցան ողջամբ:

Մուշի հայկական թաղամասը, երեք օր կատաղօրէն դիմադրելէ ետք, անընդհատ ումբակոծումի ենթարկուելով քանդուեցաւ եւ գրաւուեցաւ: Բազմաթիւ ընտանիքներ վերջին պահուն կրակի տուին իրենց բնակարանները եւ իրենց ունեցուածքով միասին զոհ գացին բոցերուն:

Կիները, աղջիկներն ու մանուկները իրենք զիրենք նետեցին գետ: Մնացեալ մասը կիներուն եւ աղջիկներուն, իբրեւ պատերազմական աւար, [թուրքերը] բաժնեցին իրենց միջեւ: Քանի մը տղամարդիկ միայն յաջողեցան ճեղքել զօրքին ու քիւրտերուն [պաշարման] շղթաները եւ անցնիլ Սասնոյ բարձունքները: Չոհուողներու շարքին մէջ կը գտնուէր հին մարտիկ Հաճի Յակոբը⁸:

Անհաւասար կռիւը կը շարունակուէր լեռներուն մէջ: Շատ անգամ թուրքերն ու քիւրտերը պարտութիւն կրեցին: Սակայն հայերու զինապաշարը կը սպառէր: Խմբապետներ Կորիւնը, Տիգրանը, Մճոն եւ ուրիշներ ինկան: Ռուբէնը⁹ ու Վահան Փափագեանը (երեսփոխան) ատեն մը եւս շարունակեցին ինքնապաշտպանութեան պայքարը:

Միեւնոյն ատեն, ռուսական զօրքերն ու հայ կամաւորական գունդերը երկու թեւով կը յառաջանային Մշոյ դաշտին ուղղութեամբ: Յոյս կար փրկելու ժողովուրդին մեծագոյն մասը: Բայց հազիւ [Մշոյ] դաշտ մուտք գործած, ռուսական զօրքերը հրաման ստացան նահանջելու ամբողջ ռազմաճակատի գծի երկայնքին: Շուրջ 100.000 հայեր մատնուեցան վրէժխնդրութեանը քիւրտերուն եւ Քեազիմ պէյի «Քասապ թապուրիին» (մսագործներու ջոկատ): Չնախատեսուած եւ հապըտապօրէն կատարուած այս նահանջը, որ այլապէս նաեւ կարելի չեղաւ արդարացնել ռազմավարական նկատումներով, արժեք կեանքը ոչ միայն Մշոյ եւ Սասունի

8.- Հաճի Յակոբ Կոտոյեան:

9.- Տէր Մինասեան Ռուբէն:

ment arménien, établi dans le vilayet après la retraite des Turcs, par le régime russe.

La résistance ne cessait quand même pas, après la retraite des Russes. Les chefs Rouben et Papazian, en tête d'un petit détachement armé, mais presque sans cartouches, réussissent à se frayer passage jusqu'aux lignes russes. D'autres groupes encore le suivirent avec succès. A la seconde invasion des troupes russes dans la région de Mousch, apparurent encore environ 1500 Arméniens. Ils étaient du nombre de ceux qui se tenaient dans les montagnes, durant de longs mois, au prix d'incroyables privations, étant obligés d'attaquer parfois les kurdes ou les gendarmes pour se procurer des vivres et des cartouches.

En outre, environ 5000 Arméniens furent livrés aux volontaires et aux Comités arméniens par quelques tribus kurdes, qui les gardaient en dépit de toutes les menaces des Jeunes-Turcs.

Les massacres de Khniss commencèrent le 4 Mai. Les Arméniens déportés de cette région furent massacrés à Vartar [?]. Ceux qui évitèrent la caravane des déportés, en se groupant les armes à la main, purent se sauver en grande partie.

Le gros de la population arménienne à Kap [?], à Boulanik, à Melezkerd put battre les Kurdes et passer dans la zone occupée par les troupes russes.

Les déportations dans les régions d'Erzeroum, Keghi, Mamakhatoun, Baïbourt s'accomplirent sans le moindre désagrément pour le Gouvernement. Le Gouverneur Tahsin bey, connu comme diplomate le plus fin, avec les autres chefs des Jeunes Turcs d'Erzeroum agissaient avec l'habileté et la fermeté exemplaires. Leur premier acte fut l'arrestation et l'assassinat près d'Erzindjian des chefs en vue de notre parti:

1.- Pilos, du Comité Central, rédacteur de notre organe "Haratch" (En Avant), un des fervants de la cause Jeune Turquie de jadis, comptant parmi les Jeunes Turcs nombre d'amis intimes.

2.- Atrouni, rédacteur responsable du même journal.

3.- Stéphanian, de l'Arménie russe, exilé en Sibérie en 1891, évadé en Perse, échappé en 1911 à Tauris à l'échafaud russe, pour agitation anti-russe en Perse et condamné par les Turcs comme agent du Gouvernement russe! Avec eux périrent Herant Keossayan et Ke-

լքեալ հայերուն, այլ նաեւ տասնեակ հազարաւոր ուրիշներու, որոնք մահացան ազատագրուած բոլոր շրջաններէն զանգուածային գաղթի ժամանակ: Այլապէս նաեւ այս նահանջի հետեւանքներէն պէտք է համարել Վանի եւ իր գաւառներուն ամբողջական ամառացումը, ինչպէս նաեւ թուրքերու նահանջէն ետք հաստատուած հայկական կառավարութեան փոխարինումը ռուսական վարչակարգով:

Այսուհանդերձ դիմադրութիւնը չէր դադարել ռուսերու նահանջէն ետք եւս: Ռուբէն եւ Փափագեան, զըլուխը անցած փոքր ջոկատի մը — որ զինուած էր թէեւ բայց առանց փամփուշտի գրեթէ — յաջողեցան ճամբայ հարթել մինչեւ ռուսական զիծերը: Ուրիշ խումբեր ալ հետեւեցան անոնց յաջող կերպով: Ռուսական զօրքերու Մշոյ շրջան երկրորդ ներխուժման ատեն, շուրջ 1500 հայեր երեւան եկան: Անոնցմէ էին ասոնք, որոնք երկար ամիսներու ընթացքին, ի գին անհաւատալի զրկանքներու, կը դիմադրէին լեռներուն մէջ, ստիպուած ըլլալով երբեմն յարձակիլ քիւրտերու եւ ժանտարմներու վրայ որպէսզի ուտեստեղէն կամ փամփուշտ ձեռք բերեն:

Ասկէ զատ, շուրջ 5000 հայեր յանձնուեցան կամաւորներուն եւ հայկական կոմիտէներուն՝ կարգ մը քիւրտ ցեղապետներու կողմէ, որոնք կը պահէին զանոնք, հակառակ Երիտ. թուրքերու բոլոր սպառնալիքներուն:

Խնուսի ջարդերը սկսան Մայիս 4ին: Այս շրջանէն տարագրուած հայերը կոտորուեցան Վարտարի¹⁰ մէջ: Անոնք որ խոյս տուին տարագիրներու կարաւաններէն, զինեալ խումբեր կազմեցին ու յաջողեցան մեծ մասամբ փրկուիլ:

Կապի [?] Պոլլանըիսի եւ Մանազկերտի հայ բնակչութեան մեծագոյն մասը յաջողեցաւ յաղթել քիւրտերուն եւ անցնիլ ռուսական զօրքերու կողմէ գրաւուած շրջանները:

Կառավարութիւնը դժուարութիւն չունեցաւ տարագրելու էրզրումի շրջանները՝ Քղի, Մամախաթուն, Բաբերդ: Կառավարիչ Թահսին պէյ, յայտնի իբր ճկուն դիւանագէտ, էրզրումի Երիտ. թուրքերու միւս ղեկավարներուն հետ միասին կը վարուէին թէ՛ ճարպիկութեամբ եւ թէ՛ խստութեամբ. իրենց առաջին գործը եղաւ ձերբակալումն ու սպանութիւնը Երզնկայի մէջ մեր կուսակցութեան յայտնի ղեկավարներուն:

ա- Փիլոսը¹¹, անդամ Կեդր. կոմիտէի, խմբագիր մեր պաշտօնաթերթ «Յառաջ»ի, ջատագովներէն մէկը երբեմնի Երիտ. թուրքերու դատին, որ բազմաթիւ բարեկամներ ունէր Երիտ. թուրքերու շարքերուն մէջ:

բ- Ատրունի, պատասխանատու խմբագիր միեւնոյն լրագրին:

10.- Արդեօ՞ք Վարդօ:

11.- Փափախեան Փիլոս:

gham Palassanian. Le crime de celui-ci consistait en ce que son frère se battait en France dans la Légion Et-rangère.

Le 2 mai, commence la déportation de la vallée d'Erzeroum. A peine cette déportation terminée, est proclamé le 22 mai, l'ordre général de déportation de la ville d'Erzeroum et de tous les autres districts. Cet ordre émanait de Constantinople où, avant la proclamation de l'acte officiel de déportation (20 mai) le Gouvernement avait arrêté et exilé (20 avril) tous les membres de tous les partis politiques, tous les intellectuels plus ou moins en vue. Parmi eux se trouvaient de nos camarades: Maloumian-Aknouni publiciste connu, Vartkess (député à la chambre ottomane), Zartarian [?] (rédacteur en chef de notre organe "Azadamart", écrivain très célèbre), Khajak (publiciste, professeur), Sarkis Parseghian, Tiriakian, Docteur Pashayan, Minasian, journaliste, Barsegh Chahbaz, Kalfayan, Siamanto (poète), Varoujan (poète), Noradounkian et nombre d'autres.

Leur fin demeure inconnue. Vartkess, avec Zohrap (écrivain, publiciste distingué) auraient été tués près d'Ourfa. Zartarian, pendu à Konia, Barsegh Schahbaz à Kharpout.

Le groupe de Hentchakistes, avec Hamparzoom Boyadjian (député à la Chambre), furent pendus en même temps. Ce fut aussi l'une des mesures préventives. Tous les organes centraux furent d'un coup supprimés. Les provinces [ne] pouvaient attendre les nouvelles et les directives du centre; les relations entre les différentes régions entretenues par l'intermédiaire des organes centraux furent par cela même interrompues: ce qui se passerait dans un coin de la Turquie, ne serait pas connu dans l'autre.

On fait tout pour ne pas provoquer les soupçons: les déportés n'iraient pas trop loin, ils s'arrêteraient à Erzindjian, le plus à Diarbékir. Ce ne serait que pour la période aiguë de la guerre, après quoi ils pourraient revenir. Le Gouverneur lui-même accompagne la caravane des déportés. Il leur tient des discours encourageants, fait distribuer à Baïbourt 2000 kilos de pain. Un gendarme est sévèrement puni pour une insulte infligée à l'un des déportés. Les Allemands aussi secourent les nécessiteux. On prend de nombreuses photographies pour avoir le souvenir historique d'un peuple qui

գ- Ստեփանեան, ռուսահայ, 1891ին Սիպերիա աքսորուած, փախուստ տուած Պարսկաստան, 1911ին փրկուած ռուսական կախաղանէ՝ հակառուս խռովութեան մեղադրանքով, իսկ թուրքերու կողմէ ամբաստանուած որպէս ռուս կառավարութեան գործակալ...

Ասոնց հետ կորստեան մատնուեցան Հրանտ Քէօսէեանն ու Գեղամ Պալասանեանը: Այս վերջինին մեղքը այն էր որ իր եղբայրը Ֆրանսայի մէջ գինուոր էր Լեօփոն Էթրանժէի մէջ:

Մայիս 2ին կը սկսի Կարնոյ դաշտին տարագրութիւնը: Հազիւ աւարտած այս տարագրումը, Մայիս 22ին ընդհանուր հրաման կ'արձակուի էրզրում քաղաքի եւ միւս բոլոր գաւառներու տարագրութեան: Հրամանը կու գար Կոստանդնուպոլսէն. այս հրամանը հասնելէն առաջ (20 Մայիս), կառավարութիւնը ձերբակալած եւ աքսորած էր (20 Ապրիլ) քաղաքական բոլոր կուսակցութեանց պատկանող առաւել կամ նուազ չափով աչքի գարնող բոլոր մտաւորականները: Ասոնց մէջ կը գտնուէին մեր ընկերներէն՝ ծանօթ հրապարակագիր Մարտիան Ակնունին, Վարդգէսը (Օսմ. խորհրդարանի անդամ), Զարդարեանը (մեր պաշտօնաթերթ «Ազատամարտ»ի խմբագրապետ եւ անուանի գրող), Խաթակը (հրապարակագիր, ուսուցիչ), Սարգիս Բարսեղեանը, Թիրեաքեանը, Տոթթ. Փաշայեանը, Մինասեանը, Բարսեղ Շահպազը, Գալֆայեանը, Սիամանթոն (բանաստեղծ), Վարուժանը (բանաստեղծ), [Սերովբէ] Նորատունկեանը եւ բազմաթիւ ուրիշներ:

Ասոնց ճակատագիրը կը մնայ անյայտ: Վարդգէս եւ Զօհրապ (գրող, նշանաւոր հրապարակագիր) սպանուած պէտք է ըլլան Ուրֆայի մերձակայքը. Զարդարեանը՝ կախաղան հանուած Գոնիայի մէջ. Բարսեղ Շահպազը՝ Խարբերդ:

Հնչակեաններու խումբը, Համբարձում Պոյաճեանի հետ մէկտեղ (խորհրդարանի անդամ), կախուեցան միեւնոյն օրերուն: Այս ալ նախազգուշական միջոցներէն մէկն էր: Բոլոր կեդրոնական մարմինները խափանուեցան: Գաւառները ցուցմունք չէին կրնար ստանալ կեդրոնէն. այսպիսով խզուեցան այն յարաբերութիւնները որ տեղի կ'ունենային կեդրոնական մարմիններու խողովակով.— Թուրքիոյ մէջ շրջանին տեղի ունեցող անցուդարձերը պէտք չէ գիտցուէին միւսներէն:

Ամէն ինչ կը կատարուի կասկածներ արթնցնելու նպատակով: Տարագրեալները պէտք չէ տարուէին շատ հեռուները, պէտք է կանգ առնէին Շրգնկա, շատ-շատ Տիարպէի: Իբր թէ ասիկա պատերազմի նեղ օրերուն համար էր. յետոյ պիտի վերադառնային: Կառավարիչը անձամբ կ'ընկերանայ տարագրեւորներու կարաւանին: Քաջակերական ճառեր կը խօսի անոնց, Բաբերդի մէջ 2000 քիլո հաց բաժնել կու տայ: Ժանտարմ մը խստօրէն կը պատժուի՝ տարագրեալներէն մէկը անարգած ըլլալուն համար: Գերմանացիները եւս օգնութիւն կը փու-

avait dans le temps habité la Turquie. C'est à Erzindjian que les déportés apprennent les premières nouvelles sinistres et à Kamach Haghas [?], étape préférée des bourreaux jeunes turcs, devenus désormais historique, qu'ils subissent les premiers massacres.

La même tactique d'extrême prudence est suivie à Trépizonde, Erzindjian, khérassonde, Samson, Sivas, Kharpourt, Malatia, etc. Cependant, dans ces régions, on ne tourmente pas les déportés en leur faisant parcourir des centaines de kilomètres. On commence à les massacrer après une seule journée de traversée, ou on profite de la présence de la Mer Noire, pour y noyer les victimes.— hommes, femmes, enfants. Là aussi les chefs sont saisis et exterminés en premier lieu. Nos camarades à Kharpourt, emprisonnés, parmi eux Karo, Astikian, mettent eux-mêmes le feu dans la prison et périssent dans les flammes.

Résistance.— Quelques milliers d'Arméniens se retirent quand même dans les fôrets et dans les montagnes; la plupart sont tombés dans la lutte; une partie s'est tenue jusqu'à l'arrivée des troupes russes ou des volontaires arméniens. Quelques groupes frayent eux-mêmes leur passage jusqu'aux lignes russes. Le premier arrive le groupe de Kaïkarouni [?], de la région de Trépizonde. La plus longue et difficile Odyssée est celle de Mourad. Invité aussi chez le Gouverneur de Sivas, il faillit être arrêté, mais prévenu à temps par un gendarme turc, il se cacha. Les massacres commencés à Sivas, il organise un groupe et se met à attaquer à son tour les gendarmes. Dans une longue série de combats, il réussit à atteindre Samsoun; là il s'empare dans le port d'un voilier turc, fait provision de vivres et d'eau, aux yeux des gendarmes abrités dans les postes et s'embarque pour Batoum. Sur la mer il soutient deux attaques des canots automobiles turcs, où il perd un de nos anciens camarades Egho. Vartan Chahbaz avec son groupe passe dans les environs de Tivrig près de deux ans. On le croyait depuis longtemps perdu, comme son camarade Bidza, pendu. Dans une des attaques, obligé de se retirer vers l'est, il traverse les lignes russes et vient à Erzindjian.

Citons ici le grand service rendu par les tribus kurdes Kizilbachi, surtout dans le district de Dersime, près d'Erzindjian. Ils ont protégé non seulement les Armé-

թացնեն կարիքաւորներուն: Կը լուսանկարեն զանոնք բազմիցս, որպէսզի պատմական յիշատակ ունենան ժողովուրդէ մը, որ ատենօք ապրած է թուրքիոյ մէջ:

Երզնկայի մէջ է որ տարագիրները կ'իմանան առաջին չարաշուք լուրերը, իսկ Կամախի մէջ, որ դահիճներու նախընտրած հանգրուանն է, անոնք կ'ենթարկուին առաջին կոտորածներուն:

Ծայրայեղ զգուշաւորութեան միեւնոյն մարտավարութիւնն է որ ի գործ կը դրուի Տրապիզոն, Երզնկա, Կիրասոն, Սամսոն, Սըվազ, Խարբերդ, Մալաթիա եւ այլ վայրերու մէջ: Այսուհանդերձ, այս շրջաններուն մէջ տարագիրները չեն չարչարեր՝ հարիւրաւոր քիլոմետրեր քայլել տալով անոնց: Ջարդել կը սկսին միայն մէկ օրուան ճամբորդութենէ ետք, կամ Սեւ ծովու մօտիկութենէն օգտուելով՝ խեղդամահ կ'ընեն իրենց գոհերը՝ տղամարդ, կին ու երեխայ: Հոն եւս նախ եւ առաջ կը վերցուին ու կը սպաննուին ղեկավար ղէմքերը: Խարբերդի մէջ, կալանաւոր մեր ընկերները, անոնց մէջ Կարոն, Աստիկեանը, իրենք կրակի կու տան բանտը եւ կը մահանան բոցերուն մէջ հրկիզուած:

Իրմագրութիւն.— Այսուհանդերձ, քանի մը հազար հայեր կը քաշուին անտառներու մէջ եւ լեռները. մեծ մասը կը մահանայ կռիւներու մէջ. մէկ մասը կը տոկայ մինչեւ ռուս զօրքի կամ հայ կամաւորներու ժամանումը: Քանի մը խումբեր՝ իրենք ճամբայ կը հարթեն մինչեւ ռուսական գիծերը: Առաջինը կը հասնի Տրապիզոնէն Գայգարունի¹² խումբը: Ամէնէն երկար ողիսականը Մուրատի ճամբորդութիւնն է: Սեբաստիոյ կառավարիչին կողմէ հրաւիրուած ըլլալով, քիչ կը մնար որ ձերբակալուէր. բայց նախապէս թուրք ժանտարմի մը կողմէ զգուշացուած ըլլալով, թաքստոց կը մտնէ: Սեբաստիոյ ջարդերը սկսելուն պէս, խումբ մը կը կազմէ եւ կը սկսի իր կարգին յարձակիլ ժանտարմներուն վրայ: Շարք մը երկարատեւ կռիւներէ ետք, կը յաջողի հասնիլ Սամսոն. հոն, նաւահանգիստին մէջ կը գրաւէ առագաստանաւ մը, ուտեստեղէնի եւ ջուրի պաշար կը հաւաքէ եւ, պահականոցներու մէջ ծուարած ժանտարմներու աչքին առջեւ, կը նաւարկէ դէպի Պաթում: Ծովուն վրայ կը դիմադրէ թրքական երկու մակոյկներու յարձակումներուն, որոնց ընթացքին կը զոհուի մեր հին ընկերներէն Եղոն¹³:

Վարդան Շահպազը իր խումբով կ'անցնի Տիվրիկի շրջանները, ուր կը մնայ մօտ երկու տարի: Վաղուց կը կարծուէր որ մեռած է, ինչպէս որ կախաղան հանուած

12.- Անունը աղաւաղուած է. հաւանաբար խօսքը Հայկազուն Խանեւտանեանի խումբին մասին է, որ արդարեւ 1915 թ. Մայիսին ծովու ճամբով անցաւ Պաթում: Այս խումբին մաս կը կազմէր նաեւ Պաթումի հայոց ջարդերուն պատասխանատու Պէյպուտ խան Եփրանշիբի ապագայ անաբեկիչ Միսաք Թորլաբեան:

13.- Զինաւազի Եղօ, բուն անունով Փափագեան Պօղոս:

niens de leur région, mais donnèrent aussi toute aide et protection à tous ceux qui, échappés aux massacres, se réfugiaient chez eux. Environ 7000 Arméniens furent livrés par eux aux comités arméniens après la prise d'Erzindjian.

Toute autre fut l'attitude des Arméniens de Schabine-Karahissar, au sud de Kerassonde. Ils étaient connus comme de bons artisans, industriels, attachés passionnément à la culture; ils faisaient tous les sacrifices pour maintenir en état florissant leurs écoles. Pas d'illettrés chez eux.

A la nouvelle des déportations, toute la population résolut unanimement de ne pas obéir à l'ordre. C'était bien après les déportations d'Erzeroum et d'Erzindjian.

La rencontre avec les gendarmes, pénétrés dans une maison arménienne, avec une sale intention, fut pour eux le premier avertissement. Après la tentative du Gouvernement d'arrêter deux jeunes hommes, attirés par ruse au Konak, tentative terminée par la fusillade des Arméniens, sentant leur heure sonnée, ils brûlèrent eux-mêmes leurs maisons avec toutes leurs richesses et gagnèrent la vieille forteresse située sur la hauteur (juin 1915).

Isolés du monde, sans aucun espoir de salut, les "morituri" de Schabine-Karahissar attendaient la fin, comme les premiers chrétiens, ou plutôt comme les gladiateurs dans les arènes de Rome.

En la personne d'un vieux révolutionnaire, Ghoukass, ils avaient un commandant ferme et expérimenté. Après de nombreuses attaques et des sommations vaines de se rendre, les Turcs furent forcés de faire venir les canons modernes et les mitrailleuses. Les assiégés, repoussaient quand même toutes les attaques. Un mois passé, le moral était excellent. Sous la grêle de balles et d'obus, les chœurs des jeunes gens, des vieillards, des jeunes filles faisaient retentir des chants religieux ou révolutionnaires.

Ghoukass cependant fut tué; les vivres s'épuisèrent et il restait très peu de munitions. Les assiégés décidèrent la sortie désespérée. Un grand nombre de jeunes filles et de femmes demandèrent la mort pour éviter les harems turcs. Toute la provision de poison fut mise en disponibilité. Plus de 300 personnes purent obtenir leurs doses. Celles qui hésitaient, qui tremblaient au dernier moment furent aidées par leurs mères et

էր ընկերը՝ Բիճան¹⁴: Յարձակումներէն մէկուն ընթացքին ստիպուած ըլլալով նահանջել դէպի արեւելք, ռուսական զիժերու մէջէն անցնելով Երզնկան հասաւ:

Յիշատակենք այստեղ քրտական Գզըլպաշի ցեղախումբին մատուցած ծառայութիւնները, մանաւանդ Տերսիմ գաւառակին մէջ, Երզնկայի մօտ: Անոնք ոչ միայն պաշտպան կանգնեցան իրենց շրջանի հայերուն, այլ նաեւ ամէն կարգի պաշտպանութիւն եւ օգնութիւն ցոյց տուին բոլոր անոնց, որ ջարդերէն ազատելով իրենց մօտ կ'ապաստանէին: Երզնկայի առումէն ետք, անոնք շուրջ 7000 հայեր յանձնեցին հայկական կոմիտէներուն:

Բոլորովին այլ եղաւ կեցուածքը Կիրասոնի հարաւը գտնուող Շապին Գարահիսարի հայերուն: Ճանչցուած էին անոնք իբրեւ լաւ արհեստաւորներ ու արուեստաւորներ, ջերմօրէն կապուած մշակոյթի. ամէն գոհողութիւն յանձն կ'առնէին ծաղկուն վիճակի մէջ պահելու համար իրենց վարժարանները: Անգրագէտ չկար իրենց մէջ:

Տարագրուելու լուրը իմանալով, ամբողջ բնակչութիւնը միաձայն վճռեց չենթարկուիլ հրամանին: Ասիկա տեղի կ'ունենար էրզրումի եւ Երզնկայի տարագրուելէն ետք:

Բախումը ժանտարմներուն հետ, որոնք աղտոտ նպատակով հայու մը տունը մտած էին, հանդիսացաւ առաջին ազդարարութիւն իրենց համար: Վճռական պահը հասած նկատեցին անոնք երբ կառավարութիւնը փորձեց ձերբակալել նենգօրէն քաղաքապետարան տարուած երկու երիտասարդներ. փորձը վերջացաւ կրակոցներովը հայերուն, որոնք կրակի տալով իրենց տուներն ու ունեցուածքը՝ բարձրացան հին միջնաբերդը (Յունիս 1915):

Աշխարհէն կտրուած, առանց փրկութեան որեւէ յոյսի, Շապին Գարահիսարի մահապարտները կը սպասէին իրենց վախճանին, նման առաջին դարերու քրիստոնեաներուն կամ, աւելի ճիշդ, հռոմէական կրկէսներու սուսերամարտիկներուն:

Յանձինս հին յեղափոխականի մը, Ղուկասին¹⁵, անոնք ունէին անվեհեր եւ փորձառու հրամանատար մը: Բազմաթիւ յարձակումներէ եւ յանձնուելու անօգուտ ազդարարութիւններէ ետք, թուրքերը ստիպուեցան բերել տալ արդիական թնդանօթներ եւ գնդացիներ: Պաշարեալները, այսուհանդերձ, բոլոր յարձակումները ետ կը մղէին: Ամիս մը անց, բարոյականը սքանչելի էր: Գնդակներու եւ ռումբերու կարկուտին տակ, երիտասարդները, ծերունիներն ու աղջիկները միաձայն կը թնդացնէին կրօնական եւ յեղափոխական երգեր:

14.- Սվազի Յարութիւն:

15.- Տէօվէթեան Ղուկաս:

sœurs. Leurs derniers adieux dans les bras des leurs furent l'épisode le plus tragique dans l'épopée de Schabine-Karahissar. Le reste des femmes et des filles résolurent de suivre leurs maris et leurs frères. L'attaque eut lieu pendant la nuit. Dans ce corps à corps inégal 800 hommes et femmes à peine purent traverser la chaîne des soldats et gagner les montagnes environnantes. Là ils se dispersèrent par groupes, traqués sans trêve. On ne sait plus rien de leur sort. Jusqu'à présent deux seulement de la fournaise de Schabine-Karahissar purent arriver l'un à Trépizonde, l'autre à Erzindjian, après avoir erré durant des mois pour apporter au monde les détails de leur lutte unique.

Ourfa.— La défense d'Ourfa (septembre 1915) rappelle dans ses traits généraux celle de Schabine-Karahissar. La même psychologie de la population. Cependant, les victimes de cette ville coururent trop tard aux armes, après que leurs notables et une partie des jeunes gens avaient été pris et exécutés par les Turcs. Résolus à mourir avec honneur, ils se retranchèrent dans les différents points de la ville. Aux sommations des Turcs de se rendre, à leurs assertions qu'aucun danger ne les menaçait, les Arméniens réclamèrent le retour des notables déportés. Les filles prenaient part également dans les combats. Après une lutte d'un mois, le quartier arménien fut pris. Le coup de grâce aux positions arméniennes fut porté par l'officier allemand qui dirigeait le feu d'artillerie!

Une victoire de plus pour l'armée allemande.

Zeitoun.— Célèbre par son héroïsme séculaire et, de nos jours, par sa défense de 1915. Lors des massacres généraux, Zeitoun fut naturellement l'objet de l'attention exceptionnelle des jeunes-turcs. Les premières persécutions commencèrent à Zeitoun avant la déclaration de la guerre. Les notables et nombre de jeunes gens furent arrêtés et affreusement maltraités. Nous avons déjà mentionné la mort de Nazareth Tchavouch, l'un des héros de 1895. A la veille des grandes déportations, des forces considérables furent dirigées contre Zeitoun. Les habitants, après quelques rencontres, se retirèrent dans les montagnes. Cependant l'intervention du Catholicos arménien de Sis, qui agissait sous l'incitation des Turcs et des Allemands, força les zei-

Այս բոլորով մէկտեղ, Ղուկաս սպաննուեցաւ. ուտեստեղէնը սպառեցաւ եւ շատ քիչ ուղղամթերք կը մնար: Պաշարեալները որոշեցին [պաշարման օղակը] ճեղքելու յուսահատական փորձ մը: Մեծ թիւով աղջիկներ ու կիներ, թրքական հարէմներ չիյնալու համար, նախընտրեցին մահը: Ամբողջ թոյնի պաշարը տրամադրուեցաւ իրենց: Աւելի քան 300 հոգի օգտուեցաւ այդ դեղաչափէն: Վերջին պահուն տատամսողներուն, դողդղացողներուն օգնութեան հասան իրենց մայրերն ու քոյրերը: Իրենց հարազատներու գրկին մէջ տրուած վերջին հրաժեշտը Շապին Գարահիսարի դիւցազներգութեան ամէնէն ողբերգական դրուագներէն մէկը հանդիսացաւ: Մնացեալ կիներն ու աղջիկները վճռեցին հետեւի իրենց ամուսիններուն եւ եղբայրներուն:

Յարձակումը տեղի ունեցաւ գիշերը: Այս անհաւասար գիրկընդխառնումին մէջ հազիւ 800 տղամարդ ու կին յաջողեցան ճեղքել զինուորներու շղթան եւ բարձրանալ մօտակալ լեռները: Հոն, խիստ հետապնդումի տակ, անոնք ցրուեցան խումբերով: Ոչինչ գիտենք իրենց ճակատագրին մասին: Շապին Գարահիսարի դժոխքէն ցարդ երկու հոգի միայն կրցան հասնիլ՝ մէկը Տրապիզոն, միւսը Երզնկա, որպէսզի երկու ամիս թափառելէ ետք, պատմեն մարդոց իրենց եզակի պայքարին մանրամասնութիւնները:

Ուրֆա.— Ուրֆայի ինքնապաշտպանութիւնը (Սեպտեմբեր, 1915) իր ընդհանուր գիծերուն մէջ կը յիշեցնէ Շապին Գարահիսարի հերոսամարտը: Միեւնոյն հոգեվիճակը ժողովուրդին: Այսուհանդերձ, այս քաղաքին գոհերը շատ ուշ դիմեցին գէնքի, երբ արդէն իրենց երեւելի դէմքերը եւ երիտասարդներուն մէկ մասը բռնուած ու սպաննուած էին թուրքերուն կողմէ: Պատուով մեռնելու վճռակամութեամբ, քաջուեցան քաղաքի տարբեր կէտերուն: Թուրքերու կողմէ եղած յանձնուելու ազդարարութեանց, անոնց տուած հաւաստիացումներուն թէ ոչ մէկ վտանգ կը սպառնայ իրենց, հայերը պահանջեցին որ վերադարձուին տարագրեալ երեւելիները: Աղջիկները եւս մասնակից էին կռիւներուն: Մէկ ամսուան պայքարէն ետք, հայկական թաղամասը գրաւուեցաւ: Հայկական դիրքերուն հասցուած մահացու հարուածը տուաւ հրետանիի հրամանատար գերմանացի սպան...:

Գերմանական բանակին համար եւս մէկ յաղթանակ:

Չէյթուն.— Հռչակաւոր իր բազմադարեան հերոսութեամբ եւ մեր օրերուն՝ 1915ի դիմադրութեամբ: Ընդհանուր կոտորածներու ատեն, Չէյթունի մէջ առաջին հալածանքները սկսան պատերազմէն առաջ: Երեւելիներն ու շատ մը երիտասարդներ ձերբակալուեցան ու չարաչար խոշտանգուեցան: Յիշեցինք արդէն 1895ի հերոսներէն Նազարէթ Չաւուշի մահը: Մեծ տա-

touniotes à se livrer. Ils furent tous immédiatement exterminés. Le reste des zeitouniotes finirent leurs jours dans le désert de Mésopotamie.

Le Gouvernement Jeune-Turc exerçait, dans de pareils cas, la pratique favorite d'Abdul Hamid, pour obliger les Arméniens à ne pas courir aux armes, ou à déposer les armes. Il menaçait, en cas de refus et de résistance, de se venger sur la masse populaire sans défense.

Nous venons de voir, dans notre exposé que les Jeunes-Turcs, dans cette guerre, provoquaient eux-mêmes les Arméniens à quelque contrecoup, pour avoir dans les mains des preuves de la révolte des Arméniens. En face de cette attitude des Turcs, les Arméniens en général, et parmi eux les membres des partis politiques furent forcés de faire toutes sortes de concessions, jusqu'au sacrifice de leur vie, dans le faible espoir de détourner le coup prêt à s'abattre sur la tête de la grande masse populaire.

C'était là la plus grande tragédie de nombre de nos camarades à Erzeroum, à Trépizonde, à Kirassonde, à Kharpout, etc. qui se joignaient aux caravanes de déportés, persuadés que leur perte était imminente et le salut de la masse très douteux.

րագրութեանց նախօրէին, Զէյթունի դէմ առաքուեցան մեծաթիւ ուժեր: Քանի մը բախումներէ ետք, բնակիչները քաշուեցան լեռները: Այսուհանդերձ, թուրքերու եւ գերմանացիներու թելադրանքով շարժող Սիսի հայոց կաթողիկոսին միջամտութիւնը զէյթունցիները ստիպեց յանձնուելու: Անմիջապէս սպաննուեցան բոլորը: Մնացեալ զէյթունցիները մահացան Միջագետքի անապատին մէջ:

Նման պարագաներուն, եւ ստիպելու համար որ հայերը զէնքի չդիմեն եւ կամ զէնքերը վար դնեն, կառավարութիւնը ի գործ կը դնէր Ապտիւլ Համիտի նախընտրած վարքագիծը.— մերժումի պարագային՝ կը սպառնար վրէժ լուծել անպաշտպան ժողովուրդէն:

Մեր զեկուցագրէն ի յայտ կու գայ, որ այս պատերազմի ընթացքին Երիտ. թուրքերը, իրենք, կը մղէին հայերը որեւէ հակադարձումի, որպէսզի հայերու ապստամբութեան մասին փաստեր ունենան ի ձեռին: Թուրքերու այս կեցուածքին դիմաց, հայերը ընդհանրապէս, եւ անոնց կարգին քաղաքական կուսակցութեանց անդամները, ստիպուեցան կատարել ամէն կարգի զիջումներ, մինչեւ իսկ զոհաբերումը իրենց կեանքին, այն աղօտ յոյսով որ այդ ձեւով կը յաջողին հեռացնել ժողովուրդի մեծ զանգուածին վրայ պատրաստուած հարուածը:

Ասիկա եղաւ էրզրումի, Տրապիզոնի, Կիրասոնի, Խարբերդի եւ ուրիշ վայրերու մեր ընկերներէն շատերուն մեծ ողբերգութիւնը. անոնք կը միանային տարագրեալներու կարաւանին, համոզուած որ վերահաս է իրենց կորուստը եւ կասկածելի՝ զանգուածին փրկութիւնը:

Փաստ. 65-42

5.- ՌՈՍՏՈՄԻ ՄԷԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Թարգմանութիւնը.-

Le délégué du parti socialiste "Daschnagtzoutioun" vient de recevoir des informations d'après lesquelles le gouvernement turc aurait l'intention de déporter une seconde fois les Arméniens installés actuellement à Konia, Aleppo et environs et de les conduire dans les déserts de Mésopotamie.

Pareille mesure ne signifierait pas autre chose qu'un arrêt de mort pour des milliers de femmes et d'enfants et la misère pour les survivants.

Les Arméniens, dont il s'agit, ont vécu à Aleppo et Konia une vie très difficile, et on les a même forcés d'embrasser l'Islam. Mais quelques-uns ont pu trouver du travail et d'autres ont pu recevoir des secours de leurs parents habitant Constantinople et l'étranger.

Le délégué du "Daschnagtzoutioun" fait appel aux parties socialistes des pays centraux pour qu'ils interviennent auprès de leurs gouvernements respectifs en faveur de la population arménienne tant pour arrêter l'exécution de nouvelles déportations que pour l'organisation de secours, qui doivent sauver les débris d'une nation que l'on veut faire mourir dans les déserts de Mésopotamie. Si les Arméniens sont suspects au gouvernement turc, il suffit de les envoyer soit en Egypte, soit dans les provinces arméniennes, occupées par la Russie.

Ընկերվարական «Դաշնակցութիւն» կուսակցութեան պատուիրակի նոր ստացած տեղեկութիւններու համաձայն, թրքական կառավարութեան նպատակն է երկրորդ անգամ տարագրել ներկայիս Գոնիա, Հալէպ եւ շրջակայքը հաստատուած հայերը եւ փոխադրել զանոնք Միջագետքի անապատները:

Նման միջոցառում մը ուրիշ բան պիտի չնշանակէր եթէ ոչ մահապատժիտ հազարաւոր կիներու եւ մանուկներու, եւ թշուառութիւն՝ վերապրողներուն համար:

Խնդրոյ առարկայ հայերը Հալէպի եւ Գոնիայի մէջ ապրած են շատ դժուարին կեանք մը. նոյնիսկ անոնց պարտադրուած է մահմետականութիւն ընդունիլ: Այսուհանդերձ անոնցմէ ոմանք կրցած են աշխատանք գտնել. իսկ ուրիշներ՝ օգնութիւն ստացած Կ. Պոլսոյ եւ արտասահմանի իրենց ազգականներէն:

«Դաշնակցութիւն» կուսակցութեան պատուիրակը կոչ կ'ուղղէ Առանցքի երկիրներու ընկերվար կուսակցութիւններուն, որպէսզի միջամտեն իրենց պետութեանց մօտ ի նպաստ հայ ազգաբնակչութեան թէ՛ օգնութեանց կազմակերպումին համար, եւ թէ՛ դադրեցնել տարու համար նոր տեղահանութեանց գործադրութիւնը, որպէսզի փրկուի մնացորդացը ազգի մը, զոր կ'ուզեն մեռցնել Միջագետքի անապատներուն մէջ: Եթէ հայերը կասկածելի են թուրք կառավարութեան համար, կը բաւէ զանոնք ղրկել կամ Եգիպտոս եւ կամ ռուսերու կողմէ զրաւուած հայկական նահանգները:

Փաստ. 1405-116

6.- ՌՈՍՏՈՍԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

2/XII/1917, Ստոկհոլմ

Սիրելի ընկերներ,

Երէկ ուղարկեցի ձեզ «Հայրենիք»ի հասցէով մի օրինակ "Un avant-projet du programme de Paix"¹⁶, հրատարակուած Համագումարի կազմակերպիչ կոմիտէի կողմից: Ես արդէն ձեզ առաջուանից յայտնել էի, եւ դուք էլ կը տեսնէք, որ չէզոք երկիրների պատուիրակների ժողովը պահանջել է Հայաստանի համար Indépendance et rétablissement territorial de l'Arménie Turque avec garantie de développement économique¹⁷. "Rétablissement territorial" ասելով պէտք է հասկանալ հեռացումը հայկական գաւառներից այն մահմետականների, որոնց տեղաւորել են քաղաքական նպատակով, իսկ garantie de développement économique-ը նշանակում է ելք դէպի ծովը: Նոյն պահանջը դրուած է եւ Լեհաստանի համար:

Մանիֆեստին կցուած Mémoire explicatif-ի¹⁸ մէջ ընդունում են (4, 23) "qu'il est impossible humainement d'attendre d'eux (հայերից) qu'ils retournent sous le joug"¹⁹. անհրաժեշտ եւ ստիպողական են համարում մեր հարցի լուծումը, բայց դժուարին:

Դժուարութիւնները երկու տեսակի են, նրանց կարծիքով այսպէս ասած՝ ներքին եւ արտաքին. ներքին դժուարութիւններն են վերաբերում հայերի սակաւ թիւը՝ այսքան կոտորածներից յետոյ, եւ այն հարցը, թէ ինչպէս պիտի կառավարուեն մահմետական տարրերը: Հարկ եղած բացատրութիւնները տուի թուրի մասին, աւելացնելով, որ մի կողմը թողած թուրքական տիրապետութեան տակ այժմս գտնուող հայերին, միայն թուրքիայից դուրս հաստատուած հայերը կարող են լեցնել Հայաստանը, եթէ սա ազատ հռչակուի: Գալով կառավարելու եղանակին՝ դրա վրայ կանգ չառայ առանձնապէս. գուցէ մեկնելուցս առաջ գրաւոր բացատրութիւն ներկայացնեմ. այնտեղ կը շեշտեմ մեր մէջ ընդունուած լայն ապակենտրոնացման սկզբունքների վրայ, որ չափազանց կը դիւրացնէ երկիրը կառավարելու գործը:

Աւելի լուրջ են նկատում արտաքին դժուարութիւնները, որ նրանց համոզումով պիտի բխին Գերմանիայից: Երես 22 պարզ ասուած է, որ Գերմանիան հակառակ կը լինի թուրքիայի բաժանման, որովհետեւ հաշտութեան համար անհրաժեշտ պէտք է լինեն փոխադարձ զիջումներ, ուստի մեր դատը կարող է տուժել: Սա այնպիսի խնդիր է, որ միայն դէպքերից, ապագայի անցուղարձից է կախուած:

Թէեւ գուցէ մօտ ապագայում Գերմանիայի դիրքը պարզուի: Եթէ գինադադարի, կամ անջատ հաշտութեան խնդիրը առաջ դնայ, եթէ Լեւինը եւ Գերմանիայի կանցլերը իրարու գան, եթէ ոչ ամբողջ Հայաստանի, գէթ գրաւուած վայրերի խնդիրը անհրաժեշտօրէն կը դրուի: Տեսակէտները երկու կը լինեն՝ գէնքի իրաւունք եւ ինքնորոշման սկզբունք: Գերմանիան կը պահանջի՞ արդեօք, որ գրաւուած վայրերը վերադարձուեն թուրքիային: Բարեբախտաբար, Ռուս[ական] Լեհաստանի խնդիրը կայ. ինչպէս գերմանացիների զէնքով նուաճուած Լեհաստանը ստանում է անկախութիւն, այնպէս էլ ռուսների զէնքով նուաճուած Հայաստանը պէտք է ստանայ անկախութիւն: Մեր պահանջը աւելի իրաւացի է, քանի որ Վասպուրականը ազատուել է հայերի ապստամբական ուժերով. Վանը՝ արդէն ազատուած՝ դրուել է Ռուսաստանի հովանաւորութեան տակ: Եթէ խնդիրը գալու լինի ինքնորոշման սկզբունքին, ժողովրդական քուէարկութեան, — հայ ժողովուրդը վաղուց իր քուէները տուել է անհամար դիակներով:

Զինադադարի խնդիրը ո՞ւր պէտք է տանի մեզ վերջի վերջոյ: Շուարած եմ մնացել: Հոսանքը մեզ քշում է, եւ դեռ քշելու է, աշխատենք՝ ժայռերի չզարնուել: Մի քանի օրից յետոյ, փորձելու եմ անցնել Ռուսաստան, բայց չգիտեմ՝ պիտի կարողանա՞մ կովկաս ինձ ձգել:

Ձեր՝ ՌՈՍՏՈՍ

16.- Ֆրանսերէն՝ «Խաղաղութեան ծրագրի նախագիծ մը»:
17.- Ֆրանսերէն՝ «Թրքահայաստանի անկախութիւն եւ հողային վերականգնում՝ տնտեսական զարգացման երաշխաւորութեամբ»:
18.- Ֆրանսերէն՝ «Բացատրական յիշատակագիր»:
19.- Ֆրանսերէն՝ «Որ անհնար է մարդկօրէն՝ պահանջել անոնցմէ [հայերից] որ վերադառնան լուծի տակ»:

Փաստ. 65-33

7.- ՌՈՍՏՈՍԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

12/XII/1917

Սիրելիք,

Այսօր վերջապէս գնում եմ. ուղարկում եմ ներփակ [Միջազգային ընկերվար] Բիւրոյին ներկայացուած պատասխանիս պատճէնը: Տուէք սրբագրեն, մի օրինակ ուղարկէք «Հայրենիքին», միւսը Պարիզ, [Ազգ.] պատուիրակութեան, Մասէհեան Խանին, մի օրինակ էլ «Լոնտոնի կոմիտէին»:

Տեսնուեցի Շէյքեմանի²⁰ հետ: Խօսեցի տարագրեալների եւ մեր քաղաքական պահանջների մասին: Տարագրեալների համար խոստացաւ աշխատել, որ

1) Նոր խստութիւններ գործ չդնեն այլ նաեւ

2) Կազմակերպեն օգնութիւնը՝ չէզոք կամ թուրքերին դաշնակից քաղաքացիների միջոցաւ:

3) Թոյլ տան սահմանակից վայրերից անցնելու դէպի Կովկաս կամ Եգիպտոս տեղում գտնուող հայերին. գէթ կանանց եւ երեխաներին, որով կը զբաղուին դարձեալ Թիւրքիային ոչ-թշնամի երկրների քաղաքացիները: Ընդունելու համար նրանց, ցոյց տուի կէտեր՝ Երզնկա, Քղի-Կարին, Մուշ, եւ ծովեզերեայ քաղաքները:

Խոստացաւ պաշտպանել մեր քաղաքական պահանջները, ազգերի ինքնորոշման տեսակէտի վրայ կանգնած:

Չպէտք է մոռանալ, որ այս բոլորը անհատի եւ ընկերվարականի խոստումներ են, որ հարկաւ դժուարութիւնների պիտի հանդիպեն:

Շատ եմ ափսոսում մի տեսակէտից, որ հիմա եմ ստիպուած գնալ: Շատ կարեւոր է մէկի ներկայութիւնը Ստոկհոլմում:

Ուղարկէք նրա հասցէին Բերլին, գերմանական աղբիւրներ, մանաւանդ Լեփսիուսի գիրքը: Այժմ Լեփսիուսը կարող է մեծ դեր խաղալ: Պէտք է հետը տեսնուել եւ միջոցներ տալ:

Նորից, բոլոր հրատարակութիւններից ուղարկէք միջազգային Բիւրոյին: Ուզում եմ, որ նրանք մի բաժին ունենան՝ մեր հարցին վերաբերեալ հրատարակութիւններից:

Դէհ, ցտեսութիւն:

Ջերմ համբոյրներով՝
ՌՈՍՏՈՍ

20.- Ֆիլիպ Շէյքեման, գերմանացի երեսփոխան եւ անդամ Գերմանիոյ Սոցիալ դեմոկրատ կուսակցութեան գործադիր կոմիտէին, որ բազմիցս հարցապնդած էր կառավարութիւնը Հայաստանի մէջ գործուող թրքական բարբարոսութիւններուն մասին:

Դ. ԲԱԺԻՆ

ՅԵՏ-ԵՂԵՌՆԵԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս բաժինին մէջ ներկայացուած նիւթերը եւս կը վերաբերին 1915-18 տարիներու հայկական կոտորածներուն եւ տարագրութեան: Անոնք կազմուած են ընդի. պատերազմի աւարտին, Չինադադարի առաջին ամիսներուն, երբ Դաշնակից յաղթական զօրքերը մուտք գործած էին Կ. Պոլիս եւ Մեծն Բրիտանիոյ Բարձր կոմիսարութիւնը դարձած էր ձեռով մը պարտեալ Թուրքիոյ հոգատար վերին իշխանութիւնը: Այս վերջինը ձեռնարկած էր փաստահաւաքի գործին, որպէսզի թրքական ռազմական ատեանի միջոցով դատուին ու պատժուին պատերազմական ռճրագործները, որոնց գլխաւորներէն մէկ քանին, ի դէպ, փախած էին արդէն Կ. Պոլսէն: Ժամանակները այնպէս էին որ թրքական նոր կառավարութիւնն ու հանրային կարծիքը չէին ուրանար ահաւոր եղեմագործութիւնը, այն տարբերութեամբ որ անոր ամբողջական պատասխանատուութիւնը կը վերագրէին բացառաբար օրուան կառավարութեան եւ Իթթիհատի վարիչներուն: Կը թուէր կարծես, որ դաշնակիցները նպատակ ունէին իսկապէս գործի վերածել 1915 թ. Մայիս 24ի իրենց պաշտօնական այն յայտարարութիւնը, որմով կ'ազդարարէին՝ թէ հայկական կոտորածներուն համար անձնապէս պատասխանատու պիտի համարէին Օսմանեան կառավարութեան բոլոր անդամներն ու յանցագործ պաշտօնեաները:

Ծանօթ է որ գործնական գետնի վրայ ամօթալի ի՛նչ հետեւանք ունեցան Դաշնակիցներու այս ազդարարութիւնն ու թրքական պատերազմական ատեանին արձակած վճիռները: Դատապարտեալները տարւեցան Մալթա կղզի, ուրկէ թոյլատրուեցաւ անոնց մէկ մասին փախուստը, իսկ միւսներուն փոխանակումը քանի մը անգլիացի գերեվարեալներու փոխարէն...: Հ. Յ. Դաշնակցութեան «Յատուկ գործ»ը ի՛նք պիտի ստանձնէր մէկ ու կէս միլիոն նահատակներու վրիժառութեան գործադրութիւնը՝ երոպական ոստաններու մէջ պատուհասելով Թալէաթն ու Պեհաւտտին Շաքիրը, Ճեմալ Ազմին ու Մայիտ Հալիմ փաշան, Ճեմալ փաշան եւ միւսները:

Չինադադարի յայտարարութիւնը (1918 թ. Հոկտ. 30) եւ Դաշնակից զօրքերու մուտքը Կ. Պոլիս ու Թուրքիոյ միւս շրջանները, այլապէս, առիթ պիտի ծառայէր հայ կեանքի վերաշխուժացման, աներեւակայելի արագ թափով: Բանտերէն ազատ արձակուածներ, տարիներով մայրաքաղաքի թաքստոցներուն մէջ ապաստանածներ, ապա նաեւ գաւառներէն ու արտասահմանէն փութացող վերապրողներ անցան տենդոտ աշխատանքի: Վերաշխուժացաւ առաջին առթիւ կուսակցական, ապա նաեւ ազգային կեանքը: Չեռնարկուեցաւ իսկոյն պաշտօնաթերթի հրատարակութեան, որ քանի մը թիւ «Արդարամարտ» ու «Արիամարտ» անուններով լոյս տեսնելէ ետք, դարձաւ «Ճակատամարտ»: Համերաշխական մթնոլորտի մէջ եւ հայկական երեք յարանուանութեանց եւ կուսակցութիւններու գործակցութեամբ, ստեղծուեցաւ Կեդրոնական մարմին մը՝ «Ազգ. Միութիւն» կամ «Ազգ. լիկ» անունով: Այս վերջինը արդէն Դեկտ. 7ին սկսաւ լոյս ընծայել իր ֆրանսերէն պաշտօնաթերթը՝ «Renaissance» («Վերածնունդ» անունով, որ հայ դատի հետապնդման զուգընթաց՝ պարտականութիւն ունէր՝ կոտորածներու, ջարդարարներու, ինչպէս նաեւ հայոց կրած մարդկային, մշակութային ու տնտեսական կորուստներու մասին փաստացի տեղեկութիւններ հաւաքել ու հրատարակել: Ազգ. Միութիւնը ունէր իր «Որբախնամ» եւ «Տարագրելոց» ընկերութիւնները, որոնք ատելի ուշ, հայոց պատրիարքութեան վերակազմուելէն ետք միացուելով՝ ճանչցուեցան իբրեւ «Ազգ. Խնամատարութեան մարմին»: Այս վերջինի հիմնական գործերէն եղաւ՝ հետախուզել, ապա հայութեան վերադարձնել թուրքերու մօտ գտնուող հայ որբերն ու իսլամացուած հայերը: Այս մարմնին եւ հայ Կարմիր խաչի ջանքերով Պոլսոյ թաղերուն մէջ միայն հիմնուած են 25 որբանոցներ եւ տարագրեալները կամ զաղթականները պատասպարող հաստատութիւններ: Նմանօրինակ կազմակերպութիւններ առաջացած են նոյնպէս գաւառական կեդրոններուն մէջ: «Մէկ հայ, մէկ ոսկի» նշանաբանով գործող այս մարմինները հայութեան գիրկը վերադարձուցին փաստօրէն թրքացման վտանգին ենթակայ հազարաւոր եւ հազարաւոր հայորդիներ:

* * *

Այս բոլորին, բայց մանաւանդ ամբողջ Թուրքիոյ տարածքին գործուած շարագործութեանց, ջարդերու, կրօնափոխութեանց, հայապատկան հարստութեանց իւրացման մասին փաստացի տուեալներ կը պարունակեն յաջորդ էջերուն մէջ տրուած հարիւրաւոր վկայութիւնները, որոնք, հասկնալի պատճառներով, խմբագրուած են ֆրանսերէն լեզուով, մասամբ նաեւ անգլերէն:

Բոլորը կու տանք թարգմանաբար:

Նշենք, որ չենք հետեւած խնդրոյ առարկայ թղթածրարով (թիւ 883) ներկայացուած փաստաթուղթերու (մեքենագիր) հերթական շարքին, որ շատ անկապակից ու խառն ձեւ ունի: Նախընտրելի համարած ենք մեծ ու փոքր վկայութիւնները համախմբել 12 ենթագլուխներու տակ, համաձայն Թուրքիոյ այդ շրջանի նահանգային բաժանումներուն:

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ

Փաստ. 883-10

Ա 1.- ՀԱՅԵՐՈՒ ԶԱՐԴԵՐՈՒՆ ԵՒ ՏԱՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿ

Այս խորագրով եւ ֆրանսերէն ու անգլերէն լեզուով կազմուած են անուանացանկեր, ուր տրուած են ցեղասպանութեան պատասխանատու 201 անձերու անունները իրենց պաշտօններով կամ հանգամանքով: Ստորեւ կը տրուի անոնց գլխաւորներուն անունները միայն:

Թալէաթ փաշա.— Ներքին գործոց նախարար, նախկին վարչապետ եւ նախագահ Իթթիհատի Կեդր. վարչութեան (այժմ փախստական):

Սալիտ Հալիմ փաշա.— Ծերակուտական, նախկին վարչապետ, նախկին արտաքին գործոց նախարար, նախկին նախագահ Իթթիհատի Կեդր. վարչութեան:

Էնվեր փաշա.— Պատերազմական նախարար, գլխաւոր պետ օսմանեան բանակի (այժմ փախստական):

Ճեմալ փաշա.— Ծովային նախարար (այժմ փախստական)

Հալիլ Կէլի.— Ծերակուտական, նախկին Շէյխ-իւլ-իսլամ. ինքն է որ արձակեց ձիհատի՝ սրբազան պատերազմի Ֆեթվան:

Ճանպուրաթ Կէլի.— Երեսփոխան, նախկին նախարար, ոստիկանապետ, Թալէաթ փաշայի աջակցութեամբ՝ կազմակերպիչ պոլսահայ ընտրանիի բնաջնջման:

Տոքթ. Նազիմ եւ Տոքթ. Պեհաէտտին Շաքիր.— Անդամներ Իթթիհատի Կեդր. վարչութեան: Շրջապտոյտներ կատարած հայկական վեց նահանգներուն մէջ, որոնց վալիներուն հետ եւ ուրիշ հրէշի մը՝ Հիլմիի հետ կազմակերպեցին չէթէական գուռները, վեց վիլայէթներու հայութեան բնաջնջումին նպատակով: Այժմ երկուքն ալ փախստական:

Չիա Կէօք Աբի.— Դասախօս Սթամպուլի համալսարանին մէջ. անդամ Իթթիհատի Կեդր. վարչութեան:

Տոքթ. Ռեշիտ.— Տիրապէրի վալի, որ դաժանօրէն բնաջնջեց նահանգին հայ ազգաբնակչութիւնը:

Մահմուտ Նետիմ.— Ուրֆայի երեսփոխան. Զօհրապի եւ Վարդգէսի սպաննիչներէն մէկը:

Սուամմէր Կէլի.— Սեբաստիոյ վալի, տիրահռչակ ջարդարարը բնաջնջողը Սեբաստիոյ, Սամսոնի, Ամասիոյ, Թոքատի եւ այլ վայրերու հայ բնակչութեան:

Ճեմալ [Ազմի] Կէլի.— Տրապիզոնի վալի. Նահանգի հայութեան բնաջնջող, այժմ Պերլին ապաստանած:

Թահսին Կէլի.— Էրզրումի, ապա Սուրիոյ վալի:

Ճեւտէթ Կէլի.— Վանի վալի. Նահանգի հայութեան սարսափը եւ ջարդերու կազմակերպիչը:

Սալիհ Զէքի Կէլի.— Նախապէս հռչակ հանած Կեսարիոյ նահանգի հայութեան մէջ գործած իր ոճիրներով. 1916ին կազմակերպած է Տէր Զօրի 60000 վերապրող հայերու բնաջնջումը եւ հազարաւոր մանուկներ նետած Եփրատի ջուրերուն մէջ:

Պետրի Կէլի.— Ոստիկանութեան ընդհ. տնօրէն, Կ. Պոլսոյ քաղաքապետ, գլխաւոր դերակատար մայրաքաղաքի ձերբակալութիւններուն, ապա Վալի Հալէպի: Այժմ փախստական:

Խալիլ փաշա.— Էնվերի հօրեղբայր, կազմակերպիչ չէթէներու, որոնք սպաննեցին Զօհրապը, Վարդգէսը, Ակնունին, Գարեգին Խաթակը, Տոքթ. Տաղաւարեանը, Ս. Մինասեանը, Յ. Ճանկիւլեանը եւ շատ ուրիշներ:

Մեմտուհ Կէլի.— Գայմագամ Այաշի, ջարդարարներէն մէկը հոն տարագրուած հայ մտաւորականութեան:

Փաստ. 883-13

Ա 2.- ՀԱՅԵՐՈՒ ԴԷՄ ԳՈՐԾՈՒԱԾ ՎԱՅՐԱԳՈՒԹԵԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Առհասարակ ընդունուած է որ 1914-1918 տարիներուն հայերուն դէմ գործուած սարսափներուն պատասխանատուութիւնը կ'իյնայ Իթիթհատ Վէ Թերաքքի (Միութիւն եւ Յառաջդիմութիւն) կուսակցութեան կոմիտէին վրայ: Կարեւոր է, հետեւաբար, ծանօթանալ այս կոմիտէին եւ իր կազմակերպութեան:

Իթիթհատը չէ եղած եւ չի կրնար ըլլալ ներկայացուցիչը ժողովուրդի միայն մէկ դասակարգին, այնպէս ինչպէս կ'ըմբռնուի Եւրոպայի մէջ: Ընդհակառակն, ան կը ներկայացնէ թուրք ազգին ամբողջութիւնը, հետեւեալ պատճառներով:

Իթիթհատը կը ղեկավարուի կեդրոնական կոմիտէով մը, որ իր ակումբներն ու ենթակոմիտէները ունի մեծ թէ փոքր իւրաքանչիւր քաղաքի մէջ: Տեղւոյն բոլոր գործօն տարրերը ներգրաւուած են անոր մէջ առանց վերապահումի, — Ամբողջ դիւանակալութիւնը՝ ներառեալ բոլոր պաշտօնեաները, բանակը, կառավարական բոլոր պաշտօնակատարները, ոստիկանութիւնը, ոստիկան գործերը, քաղաքին երեւելիները (էշրաֆ), Ուլմահաները կամ կրօնաւորները, մամուլի ներկայացուցիչները եւ, նոյնիսկ, թիապարտներն ու ոճրագործները:

Իրարմէ տարբեր այս բոլոր տարրերը կ'անդամակցին Ակումբին, որովհետեւ վերջինս կը ծառայէ իրենց անձնական եւ հանրային նպատակներուն: Այս ձեւի ակումբներ կը գտնուէին բոլոր քաղաքներուն մէջ: Անոնց անդամներուն միջեւ գոյութիւն ունէր այնպիսի միաբանութիւն մը, որ ոչ-Իթիթհատականի մը համար անկարելի կը դառնայ հասնիլ կառավարական բարձր դիրքի կամ պաշտօնի: Ատոր արդիւնքով է որ բոլոր քաղաքապետներն ու վալիները, դատաւորները, դատախազները, ոստիկանապետները, տարբեր նախարարութեանց տեսուչներն ու ներկայացուցիչները կը բաղկանան միմիայն [Իթիթհատի] իսկական անդամներէն: Կառավարութեան եւ անոր քաղաքականութեան վերաբերեալ ամէն հարց կը բերուէր Ակումբի վարչութեան եւ հոն կը գտնէր իր լուծումը: Ակումբը կը ղեկավարէր ընտրովի կամ նշանակովի սակաւաթիւ անդամներէ, իսկ նախագահը պատասխանատու քարտուղարն էր (Քեաթիպ Մուսուլ): Վերջինս տեղւոյն ամէնէն ազդեցիկ եւ հզօր անձնաւորութիւնն էր: Ան կրնար միջամուխ ըլլալ շատ մը խնդիրներու եւ թելադրել ամէն ձեւի կարգադրութիւն, առանց որեւէ հակակշռի ենթակայ ըլլալու: Իր հրամանը պէտք է գործադրուէր առանց ընդդիմութեան կամ առարկութեան: Կը վայելէր կեդր. կոմիտէի ամբողջական վկայութիւնը: Ինք է

որ կը ստանար եւ կը պահէր գաղտնի որոշումները: Աւելին, Քեաթիպ Մուսուլը իշխանութիւն ունէր ըստ կամս պաշտօնանկ ընելու կառավարիչները: Կոմիտէին վստահութիւնը շահած նման անձնաւորութիւններ, ըստ պարագայի, կրնան գործիք ծառայել անոնց կամքին:

Կոմիտէն յաջողած էր, շատ աննշան բացառութեամբ, իրեն կապել թուրք ազգը ամբողջութեամբ, որովհետեւ՝

- 1.- Ան միակ կազմակերպութիւնն է որ իր անդամներուն համար պաշտօններ կ'ապահովէ:
- 2.- Իր նպատակն է թուրք տարրերը, — ուրիշներու հաշուոյն, տնտեսապէս զօրացնել:
- 3.- Իր համիւլամական գաղափարները եւ համաթըրքական քարոզչութիւնը կը շոյեն թրքական զգացումները:
- 4.- Ան կը բորբոքեցնէ գիւղացիութեան եւ ընդհանրապէս թուրք ժողովուրդին մոլեռանդութիւնը:
- 5.- Քափիթիւլասիոններու ջնջումով՝ ամբողջ թրքութեան կ'ընծայէր ազատօրէն գործելու հնարաւորութիւն:

Այս ձեւով է որ Իթիթհատը ապահովեց համակրանքն ու համագործակցութիւնը իր թուրք հայրենակիցներուն, — քաղաքացիին ու գիւղացիին, հարուստին ու աղքատին, ըլլան անոնք ուսեալ թէ անուս:

*
**

Կասկածէ դուրս է այժմ, որ հայերու, յոյներու եւ միւս ազգերու դէմ գործուած ոճիրները կը կատարուին ուսումնասիրուած կերպով եւ գիտակցաբար: Ծրագիրը պատրաստուած էր խոր կշռադատումով, եւ գործադրուած՝ ճարտարօրէն:

Կեդր. կոմիտէն (Մերքէզի Ումումի) հաստատուած էր Կ. Պոլիս: Ան, սուլթան Ռեշատի անուանական գահակալութեան օրօք, բարձրագոյն ատեանն էր, որ կը ղեկավարէր երկրին ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը: Խորհրդարանի անդամները [մեծամասնութիւնը] ամէն պարագայի տակ Իթիթհատականներ էին: Պետական Խորհուրդն ու դահլիճը երկրի գործերուն մէջ երկրորդական դեր կը խաղային՝ ազդեցութեան տակ գտնուելով [Իթիթհատի] Կեդր. կոմիտէին, որ առանձին իր կամքը կը պարտադրէր, հրամաններ կ'արձակէր ու կը պատրաստէր անոնց քաղաքական գործունէութեան ծրագիրը: Խորհրդարանը Իթիթհատի

մէկ համախմբում մըն է եւ հլու գործիք մը անոր ձեւ-
քին: Թուրքիոյ սահմանադրական դրութեան համա-
ձայն, երեսփոխանները կ'ընտրուէին քուէարկու-
թեամբ: Թուրք ընտրողները, որոնք մեծամասնու-
թեամբ Կոմիտէի անդամներ են, իրենց քուէն անշեղ-
ընէն կու տան իթթիհատական թեկնածուներուն, որոնց
անունները իրենց կը հաղորդուի պետական ներկայա-
ցուցիչներու կողմէ կազմակերպուած ժողովրդային
հաւաքներու ընթացքին: Կառավարութեան ճնշման
տակ, ոչ-իթթիհատական ընտրողները ստիպուած են
իրենց քուէն տալ իթթիհատի թեկնածուներուն:

Երեւոյթները փրկելու նպատակով, իթթիհատի կո-
միտէն Խորհրդարանի քանի մը անդամներ կը վերապա-
հէ երկրի ոչ-մահմետական տարրերուն, առանց սա-
կայն հաշուի առնելու անոնց թուաքանակն ու իրա-
ւունքները: Ազատ ընտրութեամբ քուէարկելու իրա-
ւունք չէ տրուած անոնց:

* * *

Ոճրագործներու դասակարգումին համար, նկատի
առած ենք հետեւեալ իրողութիւնները.—

1.- Անոնք որոնք կազմակերպեցին սպանդը, գրգռե-

լով ուրիշները որ գործադրեն գայն:
2.- Անոնք որոնք գործօն մասնակցութիւն ունեցան
սպանդին, որուն համար հայթայթեցին ամէն միջոց՝
կոտորելու, կողոպտելու, բռնաբարելու եւայլն:

3.- Անոնք որոնք ոճիրները գործեցին կուրաբար,
կամ նիւթական շահագրգռութեամբ, մոլեռանդու-
թեամբ կամ պարզապէս սովորութեան բերումով:

Առաջին դասակարգին համար, կրնանք ապահովա-
բար մատնանշել [իթթիհատի] կեդր. կոմիտէի բոլոր
անդամները, կառավարական ոճրածին դահլիճի նա-
խարարները, թուրք երեսփոխանները, իթթիհատի ա-
կումբներուն բոլոր պատասխանատուները, վալիներու
եւ միւթեսարըֆներու մեծամասնութիւնը եւ թուրք
լրագրողները:

Երկրորդ դասին կը պատկանին քաղաքային եւ գին-
ւորական պաշտօնեաները, ոստիկանութիւնը, ոստիկա-
նութեան եւ ժանտարմըրի պետերը, ուլեմաները, էշ-
րաֆի [երեւելի] գլխաւոր դէմքերը եւ նոյնիսկ մամուլը:

Երրորդ դասուն մէջ կ'իյնան չեթէները, քիւրտերը,
չերքէզները, լազերը, ինչպէս նաեւ թափառական գա-
նազան ցեղախումբերն ու գօրքը:

Փաստ. 883-92

Ա 3.- ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Թուրք մտաւորականները — դասախօս, բժիշկ, փաստաբան, հրապարակագիր, գրագէտ, բանաստեղծ, իրաւաբան — Կոստանդնուպոլսոյ քոլէճներուն թէ արեւմտեան Եւրոպայի կեդրոններուն մէջ ուսանած, բոլորը լքուած էին իրագործմանը «Թուրքիան թուրքերուն» իտէպին:

Այս նշանաբանին շուրջ համախմբուեցան թրքական բոլոր կազմակերպութիւնները,— Օսմանեան պետութիւնը, «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութիւնը, «Թուրք Օճախին», «Ազգային Միութիւնը» եւ այլն:

Ոչնչացման [ոչ-թուրք տարրի] այս քաղաքականութիւնը, սկզբնապէս դանդաղ ընթացքով, այնուհետեւ լայն ծաւալով կիրարկուեցաւ 1908-1914 տարիներուն՝ կարմիր ու սպիտակ ջարդերու, տնտեսական հալածանքի, գողութեան ու կողոպուտի միջոցներով, որոնք խանդավառութեամբ կ'օրինականացուէին խորհրդարանին կողմէ:

«Ինչ որ երեսուն տարուան մէջ չկրցաւ ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏ, եւ գլուխ հանեցի երեսուն օրուան մէջ», կը յայտարարէր շարունակ թալէաթ փաշա, խօսելով հայերու բնաջնջման մասին: Արդարեւ տիրահաշակ մեծ վեզիրը [թալէաթ] հանճարեղ յղացում եւ անզուգական ճարտարութիւն ցոյց տուաւ բազմադարեան աղէտներէ վերապրած ցեղի մը անճիտման գործին մէջ:

«Պալքանեան պատերազմի օրերուն մեզ չարչարեցիք ձեր բարենորոգումներու պահանջներով. այժմ այնպիսի բիրտ հարուած մը պիտի տանք ձեզի, որ յիսուն տարի չկարենաք ձեր գլուխը բարձրացնել»: Ընդհանուր պատերազմի յաջորդող օրերուն արտասանուած թալէաթի այս յայտարարութիւնը՝ տառացիօրէն գործադրուեցաւ:

Ընդհանուր զօրակոչի յայտարարութենէն անմիջապէս ետք, Իթիթհատի կեդրոնէն էրզրում ուղարկուած Տոքթ. Պեհաէտտին Շաքիրն ու Էօմէր Նաճին կ'առաջարկեն Դաշնակցութեան որ հայկական գունդեր կազմեն եւ ներխուժեն Կովկասի երկրամաս, ուր վրացիները, թաթարներն ու թուրքերը անյապաղ կը սպասէին Օսմանեան զօրքերուն, որպէսզի ապստամբին, համաձայն թրքական կառավարութեան եւ վրացիներու ու թուրք-թաթարներու միջեւ կնքուած դաշնագրին:

«Դաշնակցութիւն» կուսակցութիւնը չէր կրնար ընդունիլ նման առաջարկութիւն. այլապէս ան դէմ գացած պիտի ըլլար ամբողջ հայ ազգի բաղձանքներուն:

Թրքական կառավարութիւնը, վստահ իր վերջնական յաղթանակին, որմէ ետք ինք պիտի թելադրէր իր

պայմանները Համաձայնական պետութիւններուն, ուստի եւ գործադրութեան դրաւ հայերու բնաջնջման իր ծրագիրը: Էրզրումի մէջ գումարուած ժողովի մը ընթացքին, որուն կը մասնակցէին Իթիթհատի կողմէ առաքուած եւ անսահման լիազօրութիւններով օժտուած Տոքթ. Պեհաէտտին Շաքիրը եւ արեւելեան վեց վիլայէթներու նահանգապետները, կը ճշդունին բնաջնջման ծրագրի գործադրութեան հետեւեալ տրամադրութիւնները.—

- 1.- Խստիւ պիտի արգիլուի հայերու ճամբորդութիւնը:
- 2.- Խիստ գրաքննութիւն պիտի հաստատուի, թոյլ չտալու համար լուրերու արտահոսքը:
- 3.- Հայ մտաւորականներն ու ղեկավար դէմքերը պէտք է ձերբակալուին միեւնոյն օրը, տարագրուին ու կոտորուին մեկուսի վայրերու մէջ:
- 4.- Ձէնքերու գրաւումը պէտք է կատարուի խստագոյն պայմաններու մէջ:
- 5.- Ձինաթափ ընելէ ետք, արու բնակչութիւնը պիտի տարագրուի եւ անբնակ վայրերու մէջ կոտորուի:
- 6.- Ծերունիները, կիներն ու մանուկները պիտի տարագրուին, կոտորուին եւ ցրուին թրքական գիւղերու մէջ:

Այս յայտագրի ճշդումէն ետք, վալիները կ'անցնին իրենց պաշտօնատեղիները:

Վանի նահանգապետ ձեւտէթ պէյն է որ կը սկսի Վանի վիլայէթի կոտորածին: ձեւտէթի օրինակին կը հետեւին՝ Պիթիլիսի վալի Ապտիւլ-Խալիքը, էրզրումի վալի Թահսինը, Սըվազի վալի Մուամմէրը, Տիարպեքիւրի վալի Տոքթ. Ռաշիտը, Տրապիզոնի վալի ձեմալ Ազմին, Խարբերդի վալի Սապիթը:

Տոքթ. Պեհաէտտին Շաքիրը եւ «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան միւս պատուիրակները առաքելութիւն ունին կազմակերպելու համար ջարդերն ու կողոպուտը, որոնք Իթիթհատի գործը ըլլալով հանդերձ, կը կատարուին յանուն Օսմանեան պետութեան եւ որոնք իրենց վաւերացումը գտած են Շէյխ-Իւլ-Իսլամ Խալի Էֆէնտի յայտարարած սրբազան պատերազմով:

Ըստ թուրք պաշտօնատարի մը յայտարարութեան, Անգարա նահանգի հայերը պիտի տեղահանուէին միայն: Ջարդերը որոշուած էին միայն արեւելեան եօթը նահանգներուն համար»: Եւ սակայն, նահանգապետ Աթըֆ պէյ իր երկրամասի բոլոր տղամարդիկը տառացիօրէն ջարդեց եւ ցիրուցան ըրաւ կիներն ու մանուկները, որոնց մեծ մասն ալ կոտորուեցաւ: Գասթե-

մունի, Պրոուսա, Գոնիա, Ատանա եւ Հալէպ նահանգներու հայերը տարագրուեցան ու կոտորուեցան Տէր Զօրի գաւառներուն մէջ: Տէր Զօրի միւլթեսարըՖ Սալէհ Ձէքի պէյ իր ոճրագործութիւններով կը մրցէր Կ. Պոլսոյ իր ղեկավարներուն հետ: Տարագրեալներու կարաւանները ճամբու ընթացքին կը կողոպտուէին իրենց ընկերացող ժանտարմներու կողմէ: Հետիոտն ու բռնի ճամբորդութեան մը տանջանքները, անօթութիւնը, տարանցիկ հիւանդութիւնները կը հնձէին մարդիկը: «Դիակներուն հետեւեցէք», կ'ըսէր արաբ մը Նիսիպիւնէն Մուսուլ մեկնելու ժողովուրդը սպայի մը:

Անատոլուի եւ Միջագետքի ընդարձակ դաշտերը լի են հոն կուտակուած ոսկորներով: Վիճակագրութիւնները 1,250,000ի կը հասցնեն ջարդուածներու թիւը:

Տարագրութենէն եւ ջարդերէն ետք կարգը եկաւ հայոց ունեցուածքի լուծարքին: Հայապատկան ամբողջ հարստութիւնը կողոպտուեցաւ կամ բռնագրաւուեցաւ: Աւարի մատնուեցան հնագիտական բարձրարժէք առարկաներ, հայկական եկեղեցիներու եւ վանքերու անօթներ եւ այլ արժէքաւոր իրեր, որոնց մէկ փոքր մասը յանձնուեցաւ պետական գանձին: Տնտեսական գլխիվայր չըլլում մը տեղի ունեցաւ. թշուառ վիճակի մէջ գտնուող թուրքերը դարձան մեծափարթամ հարուստներ:

Հայերը իրաւասու են հետեւեալ պահանջներուն.

- ա.- Կորուսեալ կեանքերու արժէքը, մահացած՝ կոտորածներու եւ տարագրութեան հետեւանքով (սովահարութիւն, յոգնաբեկութիւն, տանջանք եւ տարանցիկ հիւանդութիւններ):
- բ.- Քանդուած ու հրկիզուած բնակարաններու վե-

րանորոգման ծախսերու գինը:

գ.- Շարժուն հարստութեանց վերադարձը:

դ.- Հատուցում՝ առեւտրական եւ այլ կարգի տնտեսական շահերու փոխարէն:

*
* *

Տոքթ. Արմենակ Ապուհայթեան, Խարբերդի դեղագործ Գարեգին, վերապատուելի Եփրեմ Ճենազեան, ծխախոտի վարչութեան տնօրէն Հայրի Էֆէնտի:

Առաջին երկուքը, իսլամացած ըլլալով, այժմ կը կոչուին Տոքթ. Արիֆ Ապտուլլահ, եւ Գատրի Էֆէնտի:

Վերապատուելին իբր ասորի ճանչցուած ըլլալով, միեւնոյն անունը կը կրէ:

Ուրֆա մնացած բոլոր հայերը, ինչպէս նաեւ բազմաթիւ սուրիացի արաբներ պատրաստ են վկայելու իմ մատնանշած գեղծումներուն մասին:

Փրանց Էկհարթ, Ուրֆայի մէջ ունեցած իր բոլոր իրերը վաճառած ըլլալով, դարմանուելու համար այժմ կը գտնուի Կ. Պոլսոյ գերմանական հիւանդանոց: Իր կիներն ու 6 զաւակները կը գտնուին Բերայի «Փեթերսպուրկ» հիւանդանոց: Առաջին պատեհ առիթին կը սպասեն Գերմանիա վերադառնալու համար:

ԳԱՐԻԻԷԼ ՏԱՂԱԻԱՐԵԱՆ

Նախկին թարգման եւ կցորդ գերման սպայակոյտի

Կոստանդնուպոլիս,
15 Յունուար 1919

Փաստ. 883-27

**Ա 4.– ԱՊԱՑՈՅՑ ԱՅՆ ԲԱՆԻ ՈՐ ԹՈՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅՈՑ ԲՆԱԶՆՁՈՒՄԸ ՈՐՈՇԱԾ ԷՐ ԸՆԴՀ. ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵՆԷՆ ՇԱՏ ԱՌԱՋ**

Ներկայ կառավարութիւնը եւ նախորդը, թրքական հին եւ այժմու մամուլը, ինչպէս նաեւ թրքական բոլոր կազմակերպութիւնները կը ճգնին համոզել աշխարհը, որ

1.- Վանի ապստամբութիւնն է եղած պատճառ հայերու տարագրութեան, ինչպէս եւ անոնց համակրանքը Համաձայնականներու նկատմամբ:

2.- Թուրքերը բնաւ նախայարձակ չեն եղած. անոնք զոհերն են հայ կամաւորներուն:

3.- Թուրք ազգին մեծամասնութիւնը պատասխանատու չէ գործուած գազանութիւններուն համար:

Շատ դիւրին է հերքել այս պատճառաբանութիւնները.— Սեբաստիոյ առաջնորդ Գնէլ եպս. Գալեմքերեան կը նկարագրէ մեզի տարագրութեանց ժամանակ Երզրնկայի առաջնորդական տեղապահ Սահակ Օտապաչեանի սպանութիւնը, որ տեղի ունեցաւ Սուշեհի մօտ՝ այն կառքին մէջ որ զինք կը տանէր իր թեմը. կառապանը, որ հայ մըն էր, նոյնպէս սպաննուեցաւ:

Արդարութիւնը երեւան հանելու սիրոյն, կը կրկնենք մեր դիմումները հիմնուելով հայ ճամբորդներու բերանացի հաստատումներուն եւ Շապին Գարահիսարի առաջնորդական փոխանորդ Վաղինակ վարդապետի [Թորիկեան] տեղեկագիրներուն վրայ: Բոլորը կը հաստատեն որ այս ոճիրը քաղաքական բնոյթ ունէր եւ որ գործադրուած էր որոշեալ ծրագրով մը.—

ա.- Օտապաչեան սրբազանի անցնելիք ճամբուն վրայ շրջագայութիւնը բացարձակապէս արգիլուած էր. ժանտարմները կը հսկէին եւ ետ կը դարձնէին բոլոր ճամբորդները:

բ.- Ոճիրը գործուած վայրէն անցնող բոլոր ճամբորդները տեսած են հետքերը ձիու եւրոպական նալերու, որոնցմով պայտուած կ'ըլլան պաշտօնեաներու ձիերը. ասիկա անհերքելի ապացոյց է, որ անցքը փակ եղած պահուն պաշտօնեաներ կը գտնուէին հոն, ուր նշանակուած էր իբրեւ ոճիրի վայր:

գ.- [Նահանգապետ] Մուսամէրի ծառայութեան մէջ գտնուող ճեղալ եւ իր արբանեակը՝ Մահիր նոյն օրերուն տեսնուած էին Զառա քաղաքը եւ շրջակայքը:

դ.- Մուսամէրը կը կատարէր դատաստանական ձեւակերպութիւնները, բայց իրականութեան մէջ ան բոլորովին անտարբեր էր եւ անհոգ բոլոր այն անիրաւութիւններուն նկատմամբ, որ յաջորդաբար կը կատարուէին:

Ակնբախ պարագայ մը կը ներկայանայ մեզի.— Երբ սպաննուած տեղապահին զգեստները եւ պայուսակները բերին Սեբաստիա իր մօրը յանձնելու համար, հաստատեցինք որ ոճրագործները ձեռք չէին տուած ո՛չ դրամին եւ ոչ ալ հագուստներուն, ինչ որ կը փաստէր թէ սպանութիւնը գողութեան նպատակով չէր եղած: Իր դրամապանակը ձեռքուած էր դանակով մը եւ պարունակութիւնը պարպուած:

Տեղապահին վերարկուին վրայ բացուած խոր ծակերը փաստեր էին, որ ոճրագործները բացարձակ հրահանգ ունէին զայն սպաննելու:

Հակառակ Պատրիարքարանի եւ տեղապահի մօտ բոլոր դիմումներուն եւ պահանջներուն, կեղրոնական կառավարութիւնը եւ տեղական իշխանութիւնները ցոյց տուին զարմանալի անփութութիւն մը:

Փաստ. 883-42

Ա 5.- ԹՐՔԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ ԾԱԽՈՒԱ՞Ծ ԷՒՆ ԹԷ ՈՉ

Կոստանդնուպոլսոյ ուղևորական դեսպանատան նախկին թարգման Պ. Մանտելլիթայմ հրատարակած է Թուրքիոյ վերաբերեալ գրքոյկ, ուր կը խօսի ընդհ. պատերազմի եղելութիւններուն մասին, մինչեւ Թուրքիոյ մասնակցութիւնը պատերազմին.— Ինչպէ՞ս գերմանական եւ աւստրիական կառավարութիւնները ձեռք ձգած են թուրք թերթերը: Պարոն Մանտելլիթայմ կը հրատարակէ մինչեւ իսկ ցանկ մը, ցոյց տալով որ Իքտամ, Սապահ, Թանիմ, Թասֆիլի Էֆֆիար, Թերճիման թերթերը առատ կաշառք ստացած են գերման եւ աւստրիական դեսպանատուններէն:

Կը զարմանամ որ թրքական բոլոր թերթերը, մանաւանդ Սապահ կը փորձեն ժխտել այս յայտնութիւնը: Սապահ կ'ըսէ որ այս մեղադրանքը երեւակայական գրպարտութիւն մըն է:

Ի հաստատութիւն պարոն Թարգմանին այս յայտնութեան, պիտի յիշատակեմ Սապահ-ի նախկին խմբագրապետ հանգուցեալ Տիրան Քելէկեանի վկայութիւնը:

1914-ին էր: Թուրքիոյ պատերազմին մուտք գործելէ առաջ, գերմանո-աւստրիական դիւանագիտութիւնը սաղրանքներ կը հիւսէր Թուրքիան պատերազմին մասնակցիլ տալու համար. գացած էի տեսնելու պ. Տիրան Քելէկեանը, խմբագրապետ Սապահի եւ Միւլքիէ Լիսէին մէջ քաղաքական պատմութեան դասախօս: Առանձին էր իր աշխատասենեակին մէջ: Խօսեցանք իթիհատականներու անիմաստ եւ արկածախնդրական քաղաքականութեան մասին: Պարոն Քելէկեան թուեց ինծի իթիհատի բոլոր ծրագիրները — քափիթիլասիոններու եւ առանձնաշնորհումներու ջնջում, ճիհատի յայտարարութիւն եւայլն: «Գերմանական դեսպանատունը առատօրէն կը վճարէ թուրք թերթերուն եւ կարգ մը անձերու» ըսաւ Քելէկեան: «Կը կարծէ՞ք ինծի նուէր մը չիստացան: Գերմանացի մը, ճիշդ նոյն աթոռին վրայ ուր դուք նստած էք, ահագին գումար մը խոստացաւ, բայց կտրուկ մերժեցի. բնաւ չեմ կրնար տանիլ որ անունս աղտոտ ցուցակի մը վրայ երեւնայ. այս բոլորին համար մեզմէ հաշիւ կը պահանջուի օր մը: Ճիշդ է որ ներկայիս ի նպաստ գերմանացիներուն կը գրեմ, ստիպուած եմ այդպէս ընելու:

«Մեր թերթը՝ Սապահ եւս օգտուելու իր բաժինը ունեցաւ. թերթը գնուած է, բայց ոչ իմ անձս»:

Սապահ թերթի խմբագրապետին կողմէ եղած այս յայտնութիւնները անգամ մը եւս կը հաստատեն, որ թրքական թերթերը ծախուած էին գերմանական դես-

պանատան, գերմանական քաղաքականութիւնը ջատագովելու համար:

Անձնական յիշատակներ ալ ունիմ: 1914ին, գորակոչի ժամանակ, զինուորական ծառայութիւնս կ'ընէի գրաքննութեան մէջ: Պաշտօնիս բերումով կը հետեւէի եղելութիւններուն, ինչպէս նաեւ թերթերու եւ գրաքննութեան կողմնակալ քաղաքականութեան: Հակառակ չէգործութեան իր յայտարարութեան, թրքական կառավարութիւնը կը հետեւէր ծայրայեղօրէն գերմանասէր քաղաքականութեան, եւ թերթերուն կ'արգիլէր Գերմանիոյ դէմ գրել: Թուրք թերթերու մասին չեմ խօսիր. ասոնք չէին դադրեր մեծ ժխտով գովերգել գերմանական յաղթանակները: Հայկական Ազատամարտ թերթը խիստ դիտողութիւններու կ'ենթարկուէր ամէն անգամ որ Համաձայնականներուն ի նպաստ լուր մը փորձէր սահեցնել: Անգամ մը «Ազատամարտ» յօդուած մը հրատարակած էր. հեղինակը կը փաստէր որ պատերազմը երկար պիտի տեւէր եւ որ վերջաւորութեան Գերմանիա ուժասպառ պիտի պարտուէր: Այս յօդուածը մեծ գրգռութիւն առաջացուց զինուորական գրասենեակներուն մէջ, եւ ջնջուեցաւ: Հայկական ուրիշ թերթ մը՝ «Վերջին լուր» յօդուած մը տպած էր եւ կը փաստէր որ պատերազմը վերջ պիտի գտնէր Գերմանիոյ պարտութեամբ:

Գրաքննութեանն դուրս դրուեցայ եւ սպառնալիք ստացայ նոյնիսկ պատերազմական ատեան կանչուելու: Թուրքերը չէին տեսներ որ իրենց քաղաքականութիւնը անդունդ կը տանէր զիրենք. այս մէկը քիչ կարեւոր էր,— յղփացած էին գերմանական ոսկիով:

Գերմանական դեսպանատան մէջ կազմակերպուած էին յատուկ գրասենեակ մը, ուր մասնաւոր ուշադրութեան առարկայ էր հայկական թերթերու կեցուածքը: Գերմանական կառավարութիւնը կ'ուզէր տեղեկութիւններ հաւաքել հայ ժողովուրդի զգացումներուն մասին, որոնց համակրանքը կ'երթար Համաձայնականներուն կողմը, որոնք կը կուռէին ի նպաստ արդար դատերու: Այս մէկը կը գայրացնէր դեսպանութիւնը:

Թրքական թերթերը ի գուր կ'ուրանան յայտնի ճշմարտութիւնները: Փաստերը ջախջախիչ են: Առանց բացառութեան կը ծափահարեն գերմանական յաղթանակները, յաճախ երեւակայական. եւ հիմա որ Համաձայնականները յաղթական կը պատին մայրաքաղաքի փողոցներուն մէջ, միեւնոյն թերթերը, միշտ առանց բացառութեան, երեմիականներ կ'արձակեն եւ նախատինք կը տեղան Միտութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան հասցէին:

Փաստ. 883-84

Ա 6.– ՀԱՅՈՑ ՈՒՆԵՑՈՒԱԾՔԻ ԿՈՂՈՊՈՒՏ

Կոստանդնուպոլիս հրատարակուող թրքական «Հատիսաթ» օրաթերթը 9 Դեկտ. 1919ին կը գրէ.–

Հայոց տարագրութեան օրերուն, գոհարեղեններով եւ թանկարժէք առարկաներով լեցուն վեց կղաւած արկղներ Օսմանեան դրամատան կողմէ յանձնուեցան ելեւմտական մախարարութեան, որ ստանձնեց այս նկատառելի հարստութեան պահպանումը:

Այս արկղներուն պարունակութիւնը Էնվեր փաշան գրաւած էր մախկին կայսր Կիյոմ Բ.ի այցելութեան առթիւ շքանշաններ եւ պատուանշաններ շինել տալու համար: Իմացանք որ այդ արկղներէն մէկուն պարունակութիւնը գնահատուած է 130.000 թրքական ոսկիի: Կը հետեւցուի, հետեւաբար, որ վեց արկղներու ընդհանուր արժէքը 17 միլիոն ֆրանք էր:

Փաստ. 883-41

Ա 7.– ԱՀՄԷՏ ՌԵՖԻԶ ՊԷՅԻ ՅՕԴՈՒԱԾԸ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ «ԻՔՏԱՍ» ԹԵՐԹԻՆ ՍԷՁ

Հայերուն վրայ գործուած սարսափները արդարացնելու նպատակով, կանխաւ պատրաստուած էր քարոզչութիւն: Ահա Իթթիհատականներու կողմէ շրջաբերութեան դրուած ստապատիր տեղեկութիւնները.–

- 1.- Հայերը դաշնակցած են մեր թշնամիներուն:
- 2.- Անոնք դաւադրութիւն մը կը պատրաստեն Կոստանդնուպոլսոյ մէջ:
- 3.- Անոնք պիտի սպաննեն Իթթիհատի ղեկավարները:
- 4.- Պիտի բանան Նեղուցները:

Սովորական այս գրպարտութիւնները բաւարար չէին իրենց երազած հանրային կարծիքը ստեղծելու համար: Ի շահ մեզի պիտի ըլլար եթէ Հայերը յաջողէին սպաննել Իթթիհատի ղեկավարները. ամբողջ Թուրքիան առ յաւել տրախտապարտ պիտի մնար իրենց:

Բազմաթիւ նահանգներու մէջ, պետութեան պաշտօնեաները՝ ժանտարմներ էին որ ամէնէն սարսափելի ոճիրները գործեցին Հայերուն դէմ: Ամէն տեղ, քիչ բացառութեամբ, վալիներն էին որ համաձայն իրենց ոճրային հակումներուն, ղեկավարեցին սարսափները:

Անոնք որ գաւառներէն կու գային, մեծ յուզումով կը պատմէին թէ ինչպէս էր կազմակերպուած տարագրութիւնը.– ժանտարմները կը շրջապատէին տունները եւ բնակիչները կը նետէին կառքերու մէջ. յաճախ քա-

ղաքէն քիչ հեռու կը սկսէին ջարդերը: Շատ մը կիներ, սարսափահար, ի վիճակի չէին ըլլար դիտելու ահաւոր ոճիրները:

Տարագրութեան նախօրէին, թուրքերը կը գնէին հարուստ Հայերու տունները կանխիկ վճարելով գումար մը, զոր ետ կ'առնէին վաճառքի օրինաւոր փոխանցումէն անմիջապէս ետք:

Որեւէ պարագայի տակ, ոչ մէկ կառավարութիւն նման գազանութիւն չէր գործած. մարդկութեան դէմ ոճիր էր. բացայայտ որ այդպիսի հրէշագործութիւններ չէին կրնար անպատիժ մնալ:

Միշտ կը խորհիմ այս դժբախտ ընտանիքներուն մասին, որոնք մատնուած ցրտահարութեան, փոթորիկներու եւ անօթութեան, գիշերները ամբողջ անցուցին լեռներու վրայ, անիծելով իրենց ճակատագիրը, մինչեւ որ զոհը դարձան բարբարոս չէթէներուն եւ կամ սովամահութեան եւ հիւանդութիւններու:

Դիտողութիւն.– Այս յօդուածին հեղինակ Ահմետ Ռեֆիք պէյ թուրքերուն քաջածանօթ պատմագիր մըն է: Այս յօդուածը աւելի մեծ արժէք պիտի ունենար եթէ Ահմետ Ռեֆիք պէյ շարունակ խնկարկած չըլլար Միտիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութիւնը, մինչեւ անոր անկումը:

Փաստ. 883-24

Ա 8.- ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿ ՍՊԱՆՆՈՒԱԾ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐՈՒ

1.- Տոքթ. Վահան Ղազարոսեան.— Խմբագրապետ «Բժիշկ» շաբաթաթերթի. սպաննուած է Ֆոչայի մէջ (Զմիւռնիա) իր զինուորական հրամանատարին հրահանգով:

2.- Տոքթ. Պերճ, որդին անասնաբոյժ Մինաս պէյի, սպաննուած է Պիթլիսի եւ Մուշի միջեւ:

3.- Տոքթ. Ներսէս, Վանէն. Մշոյ զինուորական հիւանդանոցի բժիշկ. խեղդամահ եղած է իր տան մէջ՝ պաշտօնակից եւ քաղաքապետարանի բժիշկ Տոքթ. Ասաֆի ձեռքով:

4.- Տոքթ. Գարեգին Իբրանոսեան, Սոնկուրլուէն. բժիշկ Այաշի քաղաքապետարանի: Անգարայի եւ Գըր-չեհիրի միջեւ սպաննուած է հօրը հետ միասին:

5.- Տոքթ. Բենիամին, ատամնաբոյժ. սպաննուած է Սարըքամիշի ճամբուն վրայ:

6.- Տոքթ. Մայք Գարակէօզեան, Սարայ գիւղի (Վան) զինուորական բժիշկ. սպաննուած է:

7.- Տոքթ. Պօղոս Գոճապէյէքեան, սպաննուած է Պիթլիս-Մուշ ճամբուն վրայ թուրք վիրաւորներ խնամած միջոցին:

8.- Տոքթ. Սերթիեան, Զինուորական բժիշկ էրզրումի մէջ. տեղահանութեանց մասին գերմանացի սպաներու հետ ունեցած վէճի մը հետեւանքով, զօրաբաժնի հրամանատարին հրահանգով սպաննուած է:

9.- Տոքթ. Պօղոս Հիսարլեան զինուորական բժիշկ էրզրումի մէջ. իր պետին արտօնութեամբ՝ ճամբորդութեան ընթացքին սպաննուած:

10.- Տոքթ. Արթին պէյ, գնդապետ, էլ-Ազիզի (Տիար-պէքիր) զինուորական հիւանդանոցի բժշկապետ, սպաննուած ճամբորդութեան ընթացքին:

11.- Տոքթ. Մինաս Եարմայեան, Թոքատէն. նախկին բժիշկ Թոքատի քաղաքապետարանի. սպաննուած է այն միջոցին երբ անձնուիրութեամբ կը խնամէր թրքական բանակի վիրաւորները:

12.- Տոքթ. Խաչիկ Տէօվլէթեան, սպաննուած է Շար-Գչլայի մէջ Սվազի նահանգապետ Մուամմէրի հրամանով:

ՌՈՒԲԷՆ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

29 Փետրուար 1919

Փաստ. 883-18

Ա 9.- ՑՈՒՑԱԿ ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ (Թուրքերու մօտ)

1.- Քասիմ փաշայի մէջ, Քեհիա թաղամաս, Փիրինճի փողոց, թիւ 12, սպայ Ճեմալի մօտ, Արամ առնով տղայ մը (թրքական անունը Շիւքրի) եւ Շիւքրիէ անունով աղջիկ մը (հայկական անունը ծանօթ չէ): Փոխադարձաբար 16 եւ 18 տարեկան:

2.- Շահգատէ Պաշի մէջ, Պեզլուեան փողոց, Ֆերիք Ահմէտ Մուխթար փաշայի տան մէջ, երկու աղջնակներ (անունները անծանօթ), 8 եւ 10 տարեկան:

3.- Աթ Աք-Սերայի մէջ, Հոր-Հոր աղբիւրի դիմաց, Ապտիւլ Քերիմ փաշայի (Ատանայի նախկին հրամանատար) տան մէջ, երկու աղջնակներ:

4.- Ֆաթիհի մէջ, Զարչամպա թաղամաս, Մեհմէտ Աղայի մզկիթ, թիւ 22, Տոքթ. Ռեֆիք պէյի (քաղաքապետարանի բժիշկ) տան մէջ, Սաթենիկ անունով աղջիկ մը, որ Կեսարիոյ դպրոցէն տարուած է (հօրը անունը Գէորգ): Նոյն այս տան մէջ Կեսարիոյ հայերէն գոյցը-լած են 100 կապերտներ:

5.- Կետիկ փաշայի մէջ, Պիլեգիլիճի խանին հակադիր կողմը, թիւ 21, հազարապետ Ալի պէյի տան մէջ,

Հուրիէ անունով 8 տարու աղջնակ մը (հայկական անունը անծանօթ):

6.- Քիւչիւք Լանկայի մէջ, Քիւրքճի Պաշի փողոց, թիւ 112, Յարաբերութեանց պետ առողջապահութեան գրասենեակի. 13 տարեկան աղջնակ մը էրզրումէն:

7.- Ֆաթիհի մէջ, Բըզ թաշի, թիւ 25, Տոքթ. Հաճի Քեմալի տան մէջ, պարտիզակցի երկու աղջնակներ՝ Տիրուհի Ստեփանեան եւ Մերտուհի Միհալեան անուններով:

8.- Նուրի Օսմանիէ ոստիկանատան դիմաց, մեծաբանակի վաճառական Պալճի Մուսթաֆայի մօտ 7 տարեկան աղջնակ մը:

9.- Ֆաթիհի մէջ, Զարչամպա Ալթա թաղամաս, Ռիւշտի փողոց, թիւ 96, ճարտարագէտ Իպրահիմ պէյի տան մէջ, Իքպալ անունով (թրքական անուն) 15 տարեկան աղջիկ մը:

10.- Սիրքեճի մէջ, Տեմիր Քաիու թաղամաս, Քուս փողոց, թիւ 32, արաբ ընտանիքի մը մօտ, Պարտիզակէն Ֆիլոր անուն 7 տարեկան աղջնակ մը:

Փաստ. 883-16ա

**Ա 10.- ԹՈՒՐՔ ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐՈՒՆ**

1.- Տոքթ. Ռեֆի.— 1914-1916 տարիներուն, իբրև բժշկապետ ծառայած է զանազան զինուորական հիւանդանոցներու մէջ: Կովկասեան ճակատին վրայ ծառայող իր պաշտօնակիցներուն յորդորած է մահմետական դառնալ, սպառնալով որ այլապէս պիտի կոտորւին: Ժանտատենդի համաճարակի օրերուն իր հայ պաշտօնակիցները նշանակած է այնպիսի հիւանդանոցներու մէջ, ուր ժանտատենդը ահաւոր աւերներ կը գործէր:

2.- Ալի-Սաապ թուրք բժիշկը արբանեակն էր Տրապիզոնի նահանգապետ ճեմալ Ազմիրի: Առողջապահական անձնակազմին տնօրէնն էր այդ քաղաքի ջարդերուն ժամանակ: Իր գործած ոճիրներուն մասին կը վկայեն Տրապիզոնի բոլոր բնակիչները:

3.- Սանի Եավեր.— Բժշկապետ Երզնկայի Ազիզիէ հիւանդանոցին: Նախապէս ենթասպայ, ապա հազարապետ: Հիւանդանոցին դիմաց գտնուող դաշտին մէջ

սպաննած է առողջապահական անձնակազմին հայ քարտուղարը (քաղաքապետարանի բժիշկ Տոքթ. Վասիլաքի ականատես վկան է):

4.- Տոքթ. Շեքէթ.— Հիւանդանոցի բակին մէջ գտնուող չեթէներուն հետ փորձած է սպաննել Երզնկայի հայ բժիշկները: Միեւնոյն այս բժիշկը իր պաշտօնակիցներուն ներկայութեան պարծեցած է, որ թոյն խմցուցած է իր հայ հիւանդներուն: Վկայ են քաղաքին մէջ գտնուող բոլոր հայ եւ թուրք բժիշկները:

5.- Տոքթ. Ֆերիտոն.— Բժշկապետ զինուորական հիւանդանոցի 1916ին, Երզնկայի անկման նախօրեակին, սպաննած է հայ ատամնաբոյժը՝ պր. Լեւոն Եկաւեանը, վերջինիս քնացած պահուն. իրեն աջակցած են յիսնապետ մը եւ զինուորական մթերանոցի քարտուղար մը: Այս ոճիրին վկայ է Օրտուո նահանգի Փերչինպէ գիւղէն զինուոր Հիւսէինը:

Փաստ. 883-69

Ա 11.- ՈՃՐԱԳՈՐԾ ԹՈՒՐՔ ԲԺԻՇԿՆԵՐԸ

Պր. Կապրաշ կ'ամբաստանէ Գոնիայի առողջապահական գրասենեակի պետ Տոքթ. Վասֆի պէյը՝ Տրապիզոնի հիւանդանոցին մէջ հազարաւոր հայ տղոց թուճակներուն եւ սպանութեան մէջ:

Վասֆի պէյի յաջորդ՝ Տոքթ. Սատէտտինը իւրացուց Տրապիզոնի հայերուն լքեալ գոյքերը, եւ բռնագրաւեց հայապատկան ընդարձակ բնակարան մը:

Փաստ. 883-33

Ա 12.- ՍՊԱՆՆՈՒԱԾ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐ

Թոքատի տեղահանութեան աւարտին, զինակոչի գրասենեակը բերել կու տայ զինուորական հիւանդանոց աշխատող հայ բժիշկները, Մարգոլանի քաղաքապետարանի բժիշկ Տոքթ. Էմինեանը, Զիլէի քաղաքապետարանի բժիշկ Տոքթ. Արմենակ Սարայտարեանը եւ Թոքատի զինուորական հիւանդանոցի բժիշկ Տոքթ. Միսաք Փանոսեանը. ասոնք կը ձերբակալուին, կը տարագրուին եւ կը սպաննուին:

Փաստ. 883-58

Ա 13.– ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐՈՒ ԵՒ ԹՈՒՐՔ ՍՊԱՆԵՐՈՒ ԴԵՐԸ
(ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ)

Մահմուտ Բեամիլի փաշա.— Բանակի երրորդ զորամասի հրամանատար, որ իսկական պատուհաս մը եղաւ հայերուն համար: Թուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ պատերազմի յայտարարութենէն երկու շաբաթ ետք, հրետանիի 30րդ գումարտակի 90րդ գունդով կ'անցնէինք Բաբերդ գաւառէն. հայերը մեզի ըսին որ կառավարութիւնը, զինուորական իշխանութիւններու միջոցաւ, կը զինէ ու կը կազմակերպէ թուրքերն ու մահմետականները: Թուրք-մահմետական բնակչութեան զինումի այս տենդոտ գործունէութիւնը նշմարելի էր ընդհ. պատերազմի առաջին օրերէն Անատոլիոյ բոլոր նահանգներուն մէջ:

Կովկասի ճակատին վրայ, 1915 թ. կռիւներու օրերուն, երրորդ զորաբանակի հրամանատարն էր Հաֆրդ Իսմայիլ փաշա (սպայակոյտի նախկին անդամ եւ արտասահմանի զինուորական կցորդ): 1915 թ. Դեկտեմբերի կռիւներէն ետք, վերէն եկած հրահանգով զինաթափ ընել տուաւ հայ զինուորները: Հայ բոլոր բժիշկներն ու դեղագործները, ինչպէս նաեւ հայ սպաներն ու զինուորները՝ ենթակայ թուրք սպաներու ատելութեան ու թրչնամանքին, ականատես վկաներն են այս զինաթափումին:

Սարըղամիշի վրայ կատարուած թրքական առաջին յարձակման ընթացքին, ճակատին վրայ ոչ մէկ հայ զինուոր կը գտնուէր: Որքան որ տարագրութեան օրերը կը մօտենային, այնքան ալ կը վտանգուէր հայ զինուոր-բանուորներու կացութիւնը, մանաւանդ «անոնց» որ կ'աշխատէին էրզրում-Դերջան-Երզնկա մայրուղիին վրայ:

Տարակոյս չկայ որ հայ զինուորներու, սպաներու եւ բժիշկներու բնաջնջումը կեդրոնական կառավարութեան մէկ որոշումն էր եւ որ թուրք սպաները պարտականութիւն ունէին զայն գործադրութեան դնելու: 1915 թ. Մայիս ամսուան ընթացքին, ճակատ գտնուող բոլոր հայ սպաներն ու բժիշկները բանտարկուեցան, ապա տարուեցան էրզրում:

Բժիշկները յատկացուեցան հիւանդանոցային, իսկ սպաները բանակային փոխադրական աշխատանքներու:

Զինուորական իշխանութիւնները գործօն դեր վերցուցին տարագրումի գործին մէջ: Զօրահաւաքի գրասենեակները կը ծառայէին կառավարական ծրագրի իրագործման: Զինուորագրութենէ ազատ կացուցման նպատակով փրկագինի գանձումը, կամ բանակի կա-

րիքներուն համար կատարուած բռնագրաւումները՝ պատրուակ եղան համատարած գողութիւն ու կողոպուտ սարքելու համար:

Բոլոր անոնք որ բողոք բարձրացնելու համարձակութիւնը կ'ունենային, կը յանձնուէին զինուորական իշխանութեանց,— բան մը որ համագոր էր բնաջնջուելու:

Հոն ուր ժանտարմական զօրքը անբաւարար էր, բնաջնջումի գործը կ'ամբողջացնէին սպաներն ու կանոնաւոր բանակը:

Այսպէս, Նիքսար գտնուող ջոկատները, ղեկավարութեամբ էտիրնեցի հագարապետ Թահսիմ պէյի (նախկին հրամանատար Բերայի զինուորական վարժարանի գումարտակին), վերահսկեցին տարագրումի աշխատանքներուն, եւ կոտորած սարքեցին: Նիքսարի զօրանոցին հրամանատարը՝ հանգստեան կոչուած նախկին սպայ Իսմայիլ Հաքքի (Հաճի-Պապա անուանեալ) հռչակաւոր եղաւ իբրեւ իսկական ճիւղ:

Իրիկուն մը, հագարապետ Թահսին պէյ հետեւեալ ձեւով ճառախօսեց իր զինուորներուն. «Դուք կոչուած էք հայերը, այս կեաւուրներն ու դաւաճանները բնաջնջելու առաքելութեան. պէտք չէ մոռնալ որ ձեր գործը միայն ջնջել ու ոչնչացնել է: Միշտ զգոյշ եւ արթուն պիտի ըլլաք որպէսզի որեւէ դժբախտ բան չպատահի ձեզի, որովհետեւ հայերը վատ դիտաւորութիւններ ունին, եւ յեղափոխական պատրաստութիւններ կը տեսնեն այդ նպատակով: Մանաւանդ զիշերները երբ պահակութեան էք, թոյլ չտաք որ ոեւէ մէկը ձեզի մօտենայ: Գործողութեան ժամանակ, զիտցէք որ կրնաք խնայել անվնաս կրներուն (կ'ակնարկէր գեղեցիկ կրներուն): Ուրեմն արիացէք ու քաջ եղէք»:

Այս երեք հրամանատարները, ի մասնաւորի գոնիացի փոխ-հրամանատար սպայ Օսման պէյը, եւ ընդհանրապէս բոլոր սպաները կազմակերպողն ու ղեկավարն էին ջարդերուն, կողոպուտին եւ առեւանգումներուն:

Թահսին պէյ, Օսման պէյ եւ զօրահաւաքի գրասենեակի քարտուղար՝ Ճեմիլ պէյ,— հայ բժիշկ Գարակէօգեանի ընտանիքը փրկելու անուան տակ, տունէն դուրս հանեցին բոլոր աղջիկներն ու կիները եւ ապա աքսորեցին. սպայ Հաճի-Պապա եւ Օսման պէյ սպաննել տուին հայ սպայ Վահան, որ քանի մը թուրք զինուորներու հետ անտառէ մը կ'անցնէր:

Շապին Գարահիսարի հայերուն դէմ, ոչ միայն հագարաւոր զինուորներ ղրկուեցան Սըվազէն, այլ նաեւ

Թնդանօթներ եւ գնդացիներ:

Մեծ թիւով զինուորներ ղրկուեցան նոյնպէս Կեմերէկի եւ Տինտիլիի հայերուն դէմ, որոնք կողոպտուեցան, բռնաբարուեցան ու ջարդուեցան: Ամէնէն հռչակաւոր թուրք սպաներէն, կարելի է յիշատակել Սըվազցի Հաքքըզատէ Մեհմէտ փաշայի երկու որդիները՝ Հիւմի փաշան եւ Ֆեհմի պէյը:

Սըվազցի կարեւոր գունդ մը ղրկուեցաւ նաեւ Տիւրիկի Բինկեան գիւղը, հրամանատարութեամբ ծագումով գոնիացի Էնվեր պէյ տեղակալ սպային:

Բաբերդ գտնուող ՑԱրդ պահեստի գունդին առաքելութիւն տրուած էր ջարդերու Վարազվահան գիւղին մէջ խոնուած հայերը: Բաբերդի եւ Թորդումի հայերը բնաջնջուեցան այս գունդի զինուորներուն կողմէ: Այսպէս, Բաբերդի հայերը բնաջնջուեցան թէ՛ զինուորականներու եւ թէ՛ թուրք խուժանին կողմէ: Քեամիլ պէյն էր, — Բանկայի զինուորական վարժարանի երբեմնի ծերուկ ուսուցիչը — որ հրահանգեց այս նահանգի հայերուն բնաջնջումը:

Տարագրութեան ժամանակ ջարդեր կազմակերպուեցան ամէնուրեք. կը կոտորէին բժիշկներ, դեղագործներ, սպաներն ու աշակերտները Երզնկայի զինուորական վարժարանին:

1915 թ. Մայիս ամսուն, Էրզրումի հայ զինուորականները ուղարկուեցան Երզնկա եւ Սըվազ, ուր անոնց մեծագոյն մասը սպաննուեցաւ թուրք սպաներու ձեռքով: Եւ սակայն, Երզնկայի զինուորական վարժարանին պահեստի հայ սպաներուն սպանութիւնը կը գլխանցնի ամէն երեւակայութիւն:

Երզնկայի Պահեստի սպայից այս վարժարանին բացումը կատարուած էր պատերազմի օրերուն: Ուսանողներէն 150-ը հայեր էին: Երբ տարագրութիւնները սկսան, գումարտակի հրամանատար սպայ Շահինը եւ Խոճա Իսմայիլ Հաքքին անմիջապէս կազմակերպեցին

հայ ուսանողներու ջարդը. կապկպուած վիճակի մէջ՝ անոնք տասնեակներով տարուեցան ու սպաննուեցան Վասկերտի ձորին մէջ: Այս ուսանողներուն մէկ մասը սպաննուեցաւ Տոքթ. Համիտ պէյ սպային կողմէ, որ թունաւոր շիճուկ մը կը սրսկէր անոնց: 25 հայ ուսանողներ գիտական այս հնարքով գտան իրենց մահը: 105 ուսանողներ հրացանագարկ եղան Վասկերտի ձորին մէջ. միայն 20 ուսանողներ աւարտեցին դասընթացները: 16-ը ասոնցմէ սպաննուեցան սպայի կոչումը ստանալէ ետք:

Հայ զինուորները գիտական փորձարկումներու ասպարէզ էին իրենց համար: Կոստանդնուպոլսոյ բժշկական կաճառի դասախօս մը, Համտի պէյ, փորձարկութիւններ կատարած է ուսումնասիրելու համար թէ ինչ արդիւնք կ'ունենայ ժանտառնուէ վարակուած հիւանդի մը արեան ներարկումը առողջ մարդուն: Տոքթ. Համտի կը շարունակէր իր փորձարկութիւնները, հակառակ անոր որ օրական 4-5 հայ զինուոր զոհ կ'երթար այդ փորձերուն:

Երզնկայի միջնակարգ վարժարանը 40 հայ աշակերտ ունէր: Տարագրութեան օրերուն բոլոր այս տղաքը հրացանագարկ եղան ու նետուեցան Զինպերէկ Քէօփրուի հորերուն մէջ: Բոլոր այս հորերը Երզնկայի հայերուն դիակներով լեցուած էին:

Երրորդ գորաբաժնի հրամանատար Մահմուտ Քեամիլ փաշան հանդիսացաւ ամէնէն սոսկալի հայատեացներէն մէկը:

1915 թ. Յունիսին, իր սպայակոյտին հետ Էրզրում հասնելուն, քաղաքին մէջ լքուած մէկ քանի հայ բանուորներ տեսնելով, չկրցաւ զսպել իր բարկութիւնը. «Չեմ կրնար հանդուրժել որ հայու [պատկանող] կատու մը իսկ մնացած ըլլայ իմ բանակիս մօտակայքը»:

Վերջերս, Յրդ գորաբաժնի հրամանատար Շեքի փաշա կը յայտարարէր. «Այս կողմերը տակաւին հայեր, կեաւուներ կը գտնուի՞ն»:

Փաստ. 883-61

Ա 14.– ՁԻՆԱԴԱԴԱՐԷՆ ԵՏՔ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ՍԵՁ

Ձեր բարեացակամ նկատողութեան կը ներկայացնենք այս կարեւոր խնդիրը:

Թուրքիոյ բոլոր նահանգներուն մէջ, ուր տակաւին Համաձայնականներու զօրք հաստատուած չէ, ապահովութիւն չկայ բնաւ ընդհանրապէս քրիստոնեաներու եւ մասնաւորաբար հայերու համար:

Այդ վայրերէն հասնող լուրերը յուսահատութիւն կը պատճառեն. Սըվազի, Անգարայի, Տրապիզոնի եւ միւս վիլայէթներուն մէջ, եւ նոյնիսկ Կոստանդնուպոլսոյ այնքան մօտիկ Իզմիթի սանճաքին ու Պրուսայի գիւղերուն մէջ, հայերէն անոնք՝ որ իրենց տուները վերադարձած են եւ անոնք որ տարագրուած չէին, ա՜հ ու սարսափի մէջ կ'ապրին: Օրակարգի խնդիր դարձած են՝ կողոպուտները, սպառնալիքները եւ նոյնիսկ սպանութիւնները:

Այսպէս, Սըվազ վերադարձող հայերը, քաղաքէն երկու ժամ հեռու, կողոպտուած են ու ահաբեկուած են թարկուած:

Կիլիկիայէն Գոնիա մեկնող կարգ մը հայեր, ճանապարհին կը կանգնեցուէին, ծեծի կ'ենթարկուէին ու կը բանտարկուէին:

Կեսարիայէն հասած լուրերը կ'իմացնեն, որ անապահովութեան պատճառաւ շատ մը հայեր որոշած են գաղթել Կիլիկիա, ուր կը յուսան պաշտպանութիւն գտնել Համաձայնականներու կողմէ:

Կեմիլիէն կը հաղորդեն, որ թուրք չեթէները ձերբակալած ու կապկապած են բազմաթիւ հայեր, կողոպտած են անոնց ինչքերը եւ սպաննած մէկ քանին: Այս բոլորը տեղի ունեցած են Կեմիլիէն երեսուն քայլաչափ հեռու՝ Տէիրմէնի մէջ:

Իշխանութիւններու վերաբերմունքը ժողովուրդին նկատմամբ աւելի վատ է քան ջարդերու ժամանակ:

Այսպէս Ձենկիլէրի (Պազար-Քէօյ), Պարտիզակի, Ատափազարի, Կէյվէյի, Պիլեճիկի մէջ եւ շրջակայքը, թուրք գաղթականները եւ նոյնիսկ ժանտարմները յաճախ կը կրկեն. «Դուք հայերդ, դուք ձեզ շատ ապահով կը զգաք, կը խորհիք որ Համաձայնականներու գինուորները պիտի գան. գիտցէք որ շուտով ձեզ պիտի բնաջնջենք»:

Թուրքերը չյարգեցին բնաւ գինադադարի պայմանները. դո՛ւք, Համաձայնականներդ միայն յարգել պիտի

տաք զանոնք. առանց ձեր միջամտութեան, հայերը հանգստութիւն պիտի չվայելեն բնաւ:

Վերջերս, Մարգուանէն հասած նամակը աւելի քան պերճախօս է:— Կը սպառնան ու կը սպաննեն. սարսափ կը տիրէ քաղաքին մէջ եւ շրջակայքը: Կառավարութիւնը ոչ մէկ հեղինակութիւն ունի. ամէն օր ոճիրներ կը գործուին քաղաքէն քիչ հեռու՝ գիւղերուն մէջ: Կողոպուտը սովորական բան է դարձած: Շուրջ քսան օր Սիրեքլի Եռքուշի մէջ միեւնոյն օրը զգայացունց գողութիւններ եղան: Գիւղերը յարձակման կ'ենթարկուին աւազակներու կողմէ: Հայերուն համար վտանգաւոր բան է՝ եզներ, կովեր, ոչխարներ ունենալ գիւղերուն մէջ եւ կամ հարստութեան տէր ըլլալ քաղաքներու մէջ: Անոնք որ քաղաքի ծայրամասերուն կը բնակէին, ստիպուած են կեդրոն փոխադրուիլ: Կարգ մը ունեւոր ընտանիքներ մասնաւոր պահակներ կը պահեն: Իրիկնամուտին, ամէն մարդ սարսարփի մատնուած՝ տուն կը քաշուի:

Տարբեր չէ կացութիւնը միւս քաղաքներուն մէջ՝ Հաւզա, Քէոփրու, Ամասիա:

Քրիստոնեայ ազգաբնակչութիւնը, յոյն եւ հայ, Կ. Պոլիս կ'երթայ ապահովութիւն փնտռելու համար:

Իբրանոսեան հաստատութեան տնօրէն Արամ Աքտէրեանի բնակարանը յարձակման ենթարկուեցաւ աւազակներու կողմէ:

Սըրբի, որդին թուրք երեւելիներէն էշրէֆ Ռեշիտ պէյի, որ գործօն մասնակցութիւն ունեցաւ ջարդերուն մէջ եւ որ իր տունը երեք հայ կիներ կը պահէ, շատ նշանակալի եռանդ մը ցոյց կու տայ: Աչքի զարնող հայ առեւտրականներուն սպառնական նամակներ ղրկելով, հսկայական գումարներ կորզեց անոնցմէ: Մերժողները հազիւ թէ ազատեցան՝ Կոստանդնուպոլիս ապաստանելով:

Սըրբին մինչեւ իսկ ատրճանակ պարպեց այժմ Կ. Պոլիս գտնուող Յովսէփ Տոնտեանի վրայ: Գանգատ ներկայացուեցաւ իշխանութիւններուն, բայց ապարդիւն:

Քաղաքային եւ գինուորական իշխանութիւնները չեն փոխած իրենց մտայնութիւնը:

Աքտէրեանի պարագային, Սըրբիի յանցապարտութիւնը բացայայտ է. կառավարութիւնը, սակայն, խուլ ու համր կը ձեւանայ:

Բ. ՄՈՒՇ – ՊԻԹԼԻՍ

Փաստ. 883-35ք

Բ 1.– ՄՇՈՅ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԵՐԵՍՓՈԽԱՆ ՀՈՃԱ ԻԼԻԱՍ

Հոճա Իլիաս հանդիսացաւ կազմակերպիչը Մշոյ գաւառին կոտորածներուն: Մշոյ միւլթեսարը՝ չարամիտ Սերվէթը հեռագրով մը իր մօտ կը հրաւիրէ Խոճա Իլիասը, որպէսզի անոր օժանդակութիւնը եւ համբաւը ապահովէր յառաջիկայ կոտորածներուն մէջ: Խոճա Իլիաս կու գայ Մուշ, ժողովներ կը կազմակերպէ քաղաքապետարանի մէջ կամ իր տունը: Այս յանձնախումբերու անդամներն են.— ՄիսթեսարըՖ Սերվէթ, Էնվէր փաշայի հօրեղբայր Խալիլ, Հոճա Իլիասի մէկ ազգականը՝ Ֆալամաշ, Տերվիշ, Հաքքի Մուսա, Ռաշիտ, Սալեհ: Հայերու բնաջնջման յայտագիրը կը հաղորդուի աւագակապետներու.— Իսաալի, Թովալլի, Չեքնիկի, Վոլիցկի, Թարզինց:

Իլիասը, իբրեւ Հոճա (հոգեւոր պետ) եւ իբրեւ երեսփոխական մեծ ազդեցութիւն ունի թուրք հասարակ ժողովուրդին վրայ: Մզկիթներու եւ հրապարակներու վրայ կը գրգռէ թրքական մոլեռանդութիւնը. անոնց կը բացատրէ կեանքը քրիստոնեաներուն հանուած ճիհատի (սրբազան պատերազմ) իմաստը. անոնց կը բացատրէ մարգարէներու եւ փատիշահին հրամանները, սպառնալով որ պիտի գրկուին դրախին հուրիններէն, եթէ քաջութիւն չունին հրահանգներուն ենթարկուելու: Հայերը ջարդելը բարեպաշտութեան արարք կատարելու համազօր է:

Իլիաս կ'առաջարկէ թուրք երեւելիներուն, որ յորդորեն հայերը երեսփոխանին ասանջականութեան դիմելու: Խեղճերը, խաբուած, կը հնազանդին այս թելադրանքներուն եւ կ'երթան ապաստանելու երեսփոխանին մօտ. ի միջի այլոց Քէշիշեան Նազարէթի, Մեսրիկեանի, Տիգրանի, Պատուիասեան Արամի եւ Պետրոսի, Ամրիկեան Սկրտիչի եւ այլն ընտանիքները կը հաստատուին Իլիասի մօտ, միասին բերելով իրենց ամբողջ հարստութիւնը: Բոլորը կողոպտելէ ետք, Հոճա Իլիաս գիրենք փոխադրել կու տայ քաղաքէն դուրս, ուր նախապէս ընտրուած ոճ-

րագործներու ձեռքով բոլորը կը սպաննուին:

Միեւնոյն գիշերը, գինարբուք կը կազմակերպէ: Կը գրգռէ թուրքերը ըսելով որ ով որ չի կոտորեր հայերը, դուրս պիտի դուրս իսլամութենէ: Ձէնքեր կը բաժնէ: Հայկական թաղամասին դիմաց, բլուրին վրայ թնդանօթներ գետեղել կու տայ եւ անձնապէս գլուխ անցնելով կը ումբակոծէ դժբախտ բնակիչները. շատեր կը ջախջախուին փլատակներուն տակ, կամ ողջ ողջ կ'այրին: Գազան երեսփոխանը կ'չտացած չէ. հաւաքել կու տայ վերապրողները. մեծահասակները քաղաքէն դուրս կը տարուին եւ կը սպաննուին, մինչ անչափահասները կը թխմեն մարագի մը մէջ, քարիւղ կը սրսկեն իրենց վրայ եւ բոլորը կ'այրին:

Այսպէս, Մշոյ հայութիւնը չտարագրուեցաւ, այլ իր երեսփոխանին նախաձեռնութեամբ քաղաքին մէջ կոտորուեցաւ: Հրաշքով է որ մէկ քանի հայեր փրկուեցան: Մուշի հայերը այսպէս բնաջնջելէ եւ անոնց հարստութեան մեծ բաժնին տիրանալէ ետք, այս սրիկայ ճիւղը կու գայ մայրաքաղաք, իրեն հետ բերելով քանի մը սիրուն աղջիկներ: Չերագած փարթամութեան տէր դարձած եւ մոռցած որ օր մը հաշիւ կրնար պահանջուիլ իր գազանութիւններուն համար, ան կը պարծենար իր քաջագործութիւններով: Մշոյ հայ երեսփոխանը, հանգուցեալ Գեղամ [Տէր Կարապետեան], որ ամբողջ տարագրութեան շրջանին հիւանդ, անկողին էր ինկած եւ այդպէս գերծ մնացած մահուան դատապարտուելէ, համարձակեցաւ իրեն փոքրիկ նկատողութիւն մը ընել: Հոճա Իլիաս անպատկառօրէն պատասխանեց. «Այնքան խանդավառուած էինք, այնքան եռանդուն, որ եթէ դուն Մուշ գտնուէիր, սեփական ձեռքերովս քեզ խողխողած կ'ըլլայի»:

Չարաշուք այս երեսփոխանը 1000 թրքական ոսկի կորզեց մշեցի հայ վաճառականէ մը՝ սպառնալով այլապէս գինք տարագրել տալու:

Փաստ. 883-68

Բ 2.- ՊԻԹԼԻՍԻ ՍԱՐՍԱՓՆԵՐԸ

(Քաղուած «Renaissance»էն)

Վանի ջարդերը աւարտելէ ետք, նահանգապետ ձեւտէթ, քաղաքային պաշտօնեաներու եւ զինուորականներու ընկերակցութեամբ, Պիթլիս եկաւ: Իր ժամանումէն երեք օր ետք սկսաւ հայ բնակչութեան աքսորը: Բոլոր թուրքերը զինուեցան ոտքէն մինչեւ գլուխ: Խանութները փակուեցան: Արգիլուեցաւ հայերուն դուրս ելլել խիստ պաշարման ենթարկուած քաղաքէն:

Պիթլիս եկող ճամբորդներ սպաննուեցան ճանապարհին: Շրջակայ գիւղերու բնակիչները քաղաք ապաստանած էին: Կառավարութիւնը վտարեց եւ բնաջնջեց զանոնք: Թուրք խուժանը եւս սկսաւ մասնակի սպանութիւններու: Թրքական թաղամասերու մէջ ցրուած հայկական հատուկներ բնակարաններ թալանուեցան, եւ կիները բռնաբարուեցան:

Կառավարիչ ձեւտէթ հպարտօրէն կը շրջէր քաղաքի փողոցներուն մէջ, եւ կը հրամայէր իր տունը տանիլ ճամբուն վրայ հանդիպած հայ գեղեցիկ կիները:

Այսպէս շարունակուեցաւ երեք օր: Չորրորդ օրը հաւաքեցին 15 տարիքը անց բոլոր տղամարդիկը: Ահագանգի մատնուած կիները դիմեցին նահանգապետ Ապտիլ Խալիք պէյին: Իբրեւ պատասխան, վերջինս ծեծել տուաւ զիրենք: Յետոյ ծաղրանքով աւելցուց.—

— Ձեր ամուսինները այս կողմէն կ'երթան,— ու մատով ցոյց կու տար քաղաքին ճամբան,— իսկ դուք պիտի

երթաք անոնց միանայու եւ ձեր կարօտը առնելու:

Մարդորսութիւնը տասը օր տեւեց: Տղամարդիկը կը տանէին զօրանոց, ուր համայնքին երեւելի մարդիկ առանձնացուելէ ետք փոխադրուեցան կեդրոնական բանտ: Ապա սկսաւ աքսորը: 8-10 հոգինոց խումբերով, բանտարկեալները կը դրկուէին անծանօթ ուղղութեամբ եւ կը կոտորուէին: Չարդի կեդրոնը կը գտնուէր Արաբա կամուրջ կոչուած վայրը: Այսպէս շարունակուեցաւ բազմաթիւ օրեր: Դիակները կը նետէին ձորերու մէջ:

Տղամարդիկը այս ձեւով բնաջնջելէ ետք, ձեռնարկուեցաւ բնակարաններու թալանին, ապա կիներու տարագրութեան:

Թուրքերը հրապարակաւ կը յափշտակէին ամէնէն գեղեցիկ կիներն ու աղջիկները: Եւ որովհետեւ կառավարութիւնը պաշտօնապէս արգիլած էր հայեր պահել, այս կիներն ու աղջիկները մահամետականներու մօտ կը պահէին միայն մէկ գիշեր, եւ եբր անոնք անասնաբար յագեցուցած ըլլային իրենց կիրքը, փողոց կը նետէին զանոնք:

Այս շարչարանքներէն խոյս տալու համար, բազմաթիւ կիներ ու աղջիկներ թոյն առին կամ կախուեցան. թուրքերը մնացածները իրար մէջ փոխանակեցին իբրեւ գրաւական իրենց դրամական պարտքերուն:

Փաստ. 883-70

Բ 3.- ԱՌԱՋԻՆ ՁՈՂԵՐԸ (Պիթլիս)

(Ականատես վկայի մը՝ օր. Վարդուհի Նալպանտեանի պատումը քաղուած «Renaissance»-էն)

1915 թ. Յուլիս ամսու վերջին օրերն էին, ամէնէն դժոխայինները՝ Իթիթիւտ կուսակցութեան Պիթլիս հաստատուելէն ի վեր: Գործադրութեան անցաւ վայրին՝ Ապտիւլիսայիք: Շրջակայքի գիւղերէն սկսաւ «չարադէտ» տարրին մաքրագործումը:

Հայերուն հետ խառն ապրող այդ թուրքերն ու քիւրտերը հոչակ հանած են իրենց վայրագութեան համար: Վայրին հրահանգով, չեթէական գունդեր կազմուեցան, գինուած մինչեւ ակռաները: Ամենայն ազատութիւն ստացան ու շուներու վայրագ վտահակներու նման արձակուեցան հայկական գիւղերուն վրայ: Արագօրէն գլուխ բերին անոնք իրենց գործը: Յատուկ հրահանգով մը, նախ հաւաքեցին տղամարդիկն ու 5-6 տարու տղաքը, յետոյ սկսան չարչարել գանոնք ամէնէն «նրբին» ու վայրագ եղանակով: Ոմանք մահացան գանակոծութեամբ, ուրիշներ ողջ-ողջ հրկիզուեցան:

Քանի մը գիւղացիներ, ընդհանուր խառնաշփոթութենէն օգտուելով, յաջողած էին մօտակայ լեռները ապաստանիլ: Վայրին, Ապտուլիսայիք, իմանալով այս փախուստի մասին, չուզելով տաժանելի հետապնդումներու ձեռնարկել, դիմեց խորամանկութեան. բանազնացներ ուղարկեց՝ փախստականներուն իմացնելու համար որ զսպած է չեթէական գունդերու «չարժումները» եւ որ ապահով կրնան վերադառնալ իրենց տուները: Բացայայտ ծուղակ մը, որուն զոհ գացին սակայն շատեր:

*
**

Մինչ կը կոտորէին քաղաք ապաստանած գիւղացիները, միեւնոյն ատեն սկսան գանգուածային ձերբակալութիւնները Պիթլիսի հայերուն: Ոչ ոք բացառուած էր՝ ծերունիներ, մանուկներ ձերբակալուեցան ու կապկպուած տարուեցան քաղաքին բանտը: Օրեր շարունակ, ամէն առաւօտ, արեւածագէն առաջ, 50 հոգիէ բաղկացեալ կարաւաններ քաղաքէն դուրս կը բերուէին, առաջին շարքին քահանայ մը, նոյնպէս կապկպուած: Քաղաքէն դուրս հանուելէ ետք, այդ դժբախտները կը սպաննուէին հրացանի գնդակներով, կացիներով եւ բահ ու բրիչով:

Տասնեակէն օրուան միջոցին, փոթորիկը աւելց տարաւ Պիթլիսի բոլոր տղամարդիկը: Սպանդը գործադրը-

ւեցաւ արագօրէն ու մեծ վարպետութեամբ: Այս անգամ ոչ ոք կրցաւ ազատիլ: Ձոհերը, արդէն ուժասպառ սովի ու տեսակաւոր չարչարանքներու պատճառաւ, մահուան առաջնորդուելու ատեն ի վիճակի չէին այլեւս ոտքի կանգնելու...

*
**

Երբոր քաղաքը «մաքրուեցաւ» այսպէս տղամարդոցմէն, էրզրումէն եկած Թուֆան կոչուած կոմիսարին գլխաւորած քաղաքային պաշտօնեաներն ու ոստիկանները երեւցան մեր դռներուն...: Այս մարդը կիներուն դահիճն էր...: Բոլոր կիները տարուեցան ու փականքի տակ առնուեցան Գիրգոյեաններու, Ափլապատեաններու եւ այլոց ընդարձակ տուններուն մէջ: Ասոնցմէ շատերը, նախագգալով իրենց վիճակուած ճակատագիրը եւ խուսափելու համար նման տխուր վախճանէ, թոյն առին կամ կախեցին իրենք զիրենք. ուրիշներ կրակի տուին բնակարանը եւ ողջ-ողջ հրկիզուեցան: Մնացածները, երկու օր առանց սնունդի պահուելէ ետք, տարուեցան Արաբու-Ձոր կոչուած վայրը:

Գիշերը անցաւ սարսափելի ահուդողով: Առաւօտ կանուխ, քաղաքի եւ շրջակայքի քիւրտերն ու թուրքերը խուժեցին իրենց վրայ. ամէնէն գեղանիները տարուեցան ձորերը, ուր շատեր դիմադրեցին, եւ ինկան հրացանի կոթերու ու կացնի հարուածներուն տակ, ուրիշներ անձնասպան եղան թոյն կուլ տալով...

Սպանդէն վերապրողները ժանտարմներու կողմէ տարուեցան Ծակ-Քար կոչուած տեղը, ուր քիւրտերու եւ թուրքերու նոր յարձակում մը տեղի ունեցաւ իրենց վրայ: Ոմանք առեւանգուեցան, ուրիշներ տեղւոյն վրայ մահացան գնդակներու տարափի մը տակ: Գազանային տեսարանները իրարու կը յաջորդէին աներեւակայելիօրէն այնպիսի դաժանութեամբ, այլազան ու նրբին երանգներով, որ շատ մը կիներ, հահրեկուած, իրենց հոգին կ'աւանդէին ի տես ընկերուհիներու կրած տանջանքներուն...: Մանկիկներ, որ տոպրակի պէս օդը կը նետուէին ու կը խլուէին սուխներու ծայրին... Կոյս աղջիկներ, ձիերու կապուած ու քաշկոտուած, ապա եաթաղանի հարուածներով փորոտուած...: Պագշոտութեան այլանդակ տեսարաններ, զորս անկարելի է նկարագրել...

Մեռելային խնճոք

Մինչ՝ կիրները կ'իյնային այսպէս, անտիրութեան մատնուած երեխաները սայլերու վրայ բեռցուած քաղաքէն դուրս կը տարուէին ու գետերու մէջ կը թափուէին, ուրիշներ մասնաւոր կերպով փորուած փոսերու մէջ կը թափուէին, — անդին, քաղաքին մէջ՝ Ապտիլիսալիքը, Ճեւտէթը, Խալիլ փաշայէ եւ ոստիկանապետ Թուֆանէ բաղկացեալ արիւնկաակ սպայակոյտը խնճոքի կը հրահրէր Պիթլիսի հայ երեւելիներէն K..., H..., Ս. վարդապետը... եւ ամերիկացի միսիոնար պր. Ճորճը: Խնճոքը սարքուած էր Ծակ-Քարի պանդոկին մէջ, ուր նախապէս տեղի ունեցած էր կիրներու ջարդը: Հիւրերը գրկաբաց ընդունուեցան, բայց շուտով զոհուելու սահմանուած այս խեղճերուն արգիլուած էր ձեռք տալ սեղանին վրայ առատօրէն դրուած ճաշերուն եւ քաղցրաւենիքին: Ճաշի աւարտին գիրենք հանգստանալու հրահրեցին: Ամբողջ գիշերը խեղճերը չկրցան աչքերնին փակել. այս կասկածելի հրահրէրն ու հիւրասիրութիւնը կ'անհանգստացնէր գիրենք. չէին սխալեր իրենց

չարագուշակ նախագագացումին մէջ: Արշայոյսէն առաջ, ժանտարմներ յայտնուեցան ու իւրաքանչիւրը 15 գնդակներով ծակծկեցին:

Ոսկիով բեռնաւորուած ուղտերը

Հայոց ունեցուածքը բռնագրաւուեցաւ. շաբաթներու ընթացքին մահմետական ամբոխը կողոպտեց տուններն ու խանութները: Աւարին մեծագոյն մասը բաժնուեցան սպանդին չորս կազմակերպիչներն ու գործարարողները:

Գործի աւարտին, Ապտիլիսալիք, Ճեւտէթ եւ Խալիլ քաղաքէն հեռացան իրենց հետ տանելով 18 հակերով բեռնաւորուած ուղտերու կարաւան մը: Խայտաբղէտ գոյնի սաւաններով ծածկուած այս հակերը կը պարունակէին ոսկի, արծաթ, թանկարժէք առարկաներ եւ հնութիւններ:

Այս հարստութիւններով բեռնաւորուած չորս դահիճները հեռացան քաղաքէն:

Մեկնեցան Կոստանդնուպոլիս:

Փաստ. 883-46

Բ 4.- ՊԻԹԼԻՍԻ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՋԱՐԴԵՐԸ

Վանի իրադարձութիւններէն ետք, ընդհանուր նահանգապետ Ճեւտէթ պէյ քանի մը պաշտօնեաներով եւ զինուորներով Պիթլիս եկաւ: Աւագակապետի մը նման միշտ զինուած էր ան: Երեք օր ետք սկսան տեղահանութիւնն ու կոտորածները:

Բոլոր թուրքերը զինուած էին: Վաճառատուները փակ էին եւ հայերուն արգիլուած էր քաղաքը լքել: Քաղաքէն դուրս սպանութիւնները սովորական բան էին: Մուշէն եկող բոլոր հայերը անգթօրէն սպաննուած էին:

Ջարդերէն փրկուած գիւղացիները Պիթլիս կ'ապաստանէին: Քաղաքի հայերը կ'ուզէին օգնել անոնց, բայց կառավարութիւնը անմիջապէս կը տարագրէր՝ քաղաքէն դուրս սպաննելու համար զանոնք:

Քաղաքին հայ երեւելիները դիմեցին կառավարութեան. վերջինս պատասխանեց իրենց. «Մի խառնուիք գիւղացիներու գործերուն, ձեր գործերով զբաղեցէք»:

Իշխանութիւններէն քաջայերուած՝ թուրք խուժանը սկսաւ կոտորել եւ կողոպտել թրքական թաղամասերուն մէջ ապրող հայերուն տունները եւ առեւանգել մանկամարդ կիներն ու սիրուն աղջիկները:

Ջերբակալեցին 15 տարեկանէ վեր բոլոր տղամարդիկը: Ժանտարմներն ու զինուորները սկսան մարդոր-

սութեան. բռնութեամբ մուտք կը գործէին տունները թաքնուած հայեր փնտնելու համար. սարսափ կը տիրէր քաղաքին: Այս բռնարարքներուն դէմ բողոքող կիրները ծեծի կ'ենթարկուէին. իրենց կ'ըսուէր. «Ապահով եղէք, ձեր ամուսինները տարագրուած են. շուտով պիտի միանաք անոնց»:

Այս ահուելի կացութիւնը տեւեց 10 օր. համաձայն թուրքերու վկայութեան, տարագրեալները կը սպաննուէին սուրերով, կացիներով, շարշարանքի գործիքներով: Հրացանազարկ եղած հայերը ծանօթ էին իբրեւ թուրքերու բարեկամներ:

Տղամարդոց ոչնչացման աւարտին, սկսաւ կողոպուտը: Տան մը մէջ եթէ բամպակ կամ իոտաներկ գտնէին, այդ տան կին բնակիչները սաստկօրէն կը գանակոծուէին:

Կողոպուտը աւարտելէ ետք, սկսաւ կիրներու տարագրումը: Խուժանը կ'առեւանգէր հայ բոլոր գեղուհիները: Բռնաբարումները կը գործուէին բացայայտօրէն, փողոցներու մէջ իսկ: Թուրք պարտապաններ իրենց պարտքերուն փոխարէն կու տային հայ դեռատի աղջիկներ: Այս թշուառներէն շատերը անձնասպան կ'ըլլային:

Փաստ. 883-35

Բ 5.- ՎԱՆԻ ԵՐԵՍՓՈՒԽԱՆ ՎՈՒՍԵԱՆԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Վռամեան հեռախօսով կանչուեցաւ նահանգապետ Գեւորթի մօտ երթալու, ձերբակալուեցաւ եւ 50 զինեալ ժանտարմներու ուղեկցութեամբ տարագրուեցաւ Պիթլիս: Մենք զինք տեսանք Պիթլիսի մէջ, ուր նետուած էր ահռելի զնտանի մը մէջ. հոն էր ան, առանց սնունդի, անկիւն մը նետուած, բոլորովին մերկ, նայուածքը խոժոռ, մօրուքը շատ երկարած, մարմինը ամբողջովին վերքերով ծածկուած: Ժանտարմներու զօրանոցին մէջ օրական 50 գաւազանի հարուած կը ստանար. արիւնը կը հոսէր ապարախտ հերոսին քիթէն ու բերանէն: Գանակոծու-մը աւարտելէն ետք բանտ կը տանէին զինք: Հաց չէին տար իրեն բնաւ: Օր մը հաց տարինք իրեն, ինչ որ պատ-ճառ եղաւ հօրս ու իր ծառային ձերբակալութեան: 15 օր ետք բերին Վռամեանը, ձեռքերը կապուած: Մենք՝ քա-նի մը տղաք, հետեւեցանք սուգի թափօրին. խեղճ կալանաւորը, ժանտարմներէ շրջապատուած, գանակոծուե-ցաւ ամբողջ ճամբուն ընթացքին: Հետեւեցանք իրեն մինչեւ Արաբի կամուրջ կոչուող կիրճը, բայց ժանտարմնե-րը, նկատած ըլլալով մեր լրտեսական խումբը, առաջացան մեր կողմը եւ կրակեցին: Մեր ընկերներէն մէկը զարնուեցաւ եւ մեռաւ:

ՌՈՒԲԷՆ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

20 Յունուար 1919

Փաստ. 883-32

Բ 6.- ՏԱՄՆԵՒՆԻՔ ՕՐ ԿԱԽԱՂԱՆԻՆ ՎՐԱՅ

Պիթլիսի երիտասարդութեան ընտրանին՝ Արմենակ Օխիկեան, Գեղամ Պասմաճեան եւ Օհաննէս Մուրատ-եան, Վանի դէպքերէն անմիջապէս ետք, Պիթլիսի մէջ կախաղան հանուեցան, հետեւեալ պարագաներու տակ:

Իրենց սպանութենէն քանի մը օր առաջ, փողոցներուն մէջ պտտուցին այս երեք երիտասարդ հայերը, կապկպուած եւ ենթակայ թուրք խուժանին լուտանքներուն: Տխրալի այս կատակերգութենէն ետք, անոնք տար-ւեցան քաղաքէն դուրս հոն ուր կանգնեցուած էին կախաղանները:

Մարմինները կախուած կը մնան 15 օրեր ամբողջ. շուները կը ծուատեն անոնց դիակներուն պատառիկնե-րը:

ՌՈՒԲԷՆ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

20 Յունուար 1919

Փաստ. 883-66t

Բ 7.- ԲԱՆՏԱԽՈՒՑԷՆ ԳԵՐԵՉՄԱՆ
(Քաղուած «Renaissance»էն)

Ծանօթ է որ Վանայ Իշխանը դաւադրութեամբ սպաննել տալէ ետք, նահանգապետ Ճետտէ իր մօտ հրաւիրած էր Արշակ Վռամեանն ու Արամ Մանուկեանը: Հրաւերին ընդառաջած էր միայն Վռամեան, որ իսկոյն ձերբակալուելով տարուած էր Պիթիխ: Ստորեւ բերուած փաստաթուղթերը յատկանշական տեղեկութիւններ կը հաղորդեն՝ ցարդ անյայտ մնացած՝ անոր բանտային կեանքին, կրած չարչարանքներուն եւ մահուան պարագաներուն մասին:

Արմենակ Օխիկեանը (կամ Հոխիկեանը) դաշնակցական յայտնի գործիչն է, ծանօթ Սլաք ծածկանունով:

Պր. Վռամեան, — «Դաշնակցութիւն» կոմիտէի ամէնէն գործօն անդամներէն մէկը, եւ երեսփոխան Օսմանեան Խորհրդարանին մէջ — Վան կը գտնուէր, այս քաղաքի տեղահանութենէն ու կոտորածներէն որոշ ժամանակ առաջ:

Քաղաքին կառավարիչը ոստիկան մը զրկեց Վռամեանին ու զինք հրաւիրեց իր պալատը: Թակարդ մըն էր: Նահանգապետին մօտ հասնելուն պէս, Վռամեան ձերբակալուեցաւ իսկոյն եւ տարուեցաւ Պիթիխի բանտ: Գարշէլի խուց մը նետուած, սեւցած աչքերով, ցաք ու ցրիւ մօրուքով, գրեթէ մերկ վիճակի մէջ կը քաշկուտուէր ան՝ չարչարանքներէն, խոնաւութենէն ու սովահարութենէն հալումաշ դարձած իր մարմինով: Ամէն օր կը հանէին զինք բանտէն եւ կը գանակոծէին խարազա-

նի յիսուն հարուածներով. քիթէն արիւնը կը հոսէր յորդառատ. յետոյ կրկին խուց կը քաշքշէին զինք: Մնանելու ոչինչ կու տային իրեն, ոչ իսկ կտոր մը չոր հաց: Օրին մէկը ծառայ մը իրեն հաց կը բերէ: Բերողը կը բռնեն ու կը բանտարկեն: Տասնեւհինգ օր ետք, շղթայ զարկին Վռամեանին եւ 50 ժանտարմներու ընկերակցութեամբ, տարին քաղաքէն դուրս: Հեռուէն քանի մը բարեկամներ կը հետեւէին թափօրին:

Իջան Արաբու-Ձոր կոչուած հովիտ մը: Ժանտարմները նշմարեցին զանոնք, հրացանները ուղղեցին եւ կրակ բացին: Այս անձերէն մէկը զարնուեցաւ: Վռամեան, ժանտարմներով շրջապատուած, անհետացաւ ձորին մէջ: Այնուհետեւ իր մասին խօսող չեղաւ:

Արաբու-Ձորը իր գերեզմանը եղաւ:

Փաստ. 883-66q

Բ 8.- ԿԱԽԱՂԱՆԸ
(Քաղուած «Renaissance»էն)

Վանի դէպքերէն անմիջապէս ետք, Պիթիխի ծանօթ ընտանիքներուն պատկանող երեք երիտասարդներ ձերբակալուեցան, — Ա. Հոխիկեան, Գ. Պասմաճեան, Օհաննէս Մուրատեան: Բազմաթիւ օրեր այս դժբախտ երիտասարդները, խստօրէն կապկպուած, պտտցուեցան քաղաքի բոլոր փողոցներուն մէջ, ենթարկուելով մահամետական խուժանին ծաղրանքին ու նախատինքներուն:

Յետոյ, քաղաքէն դուրս, Սեւ-Փշատ կոչուած վայրին մէջ երեք կախաղաններ սարքեցին: Մահապատիժի գործադրութենէն ետք ամբողջ 15 օր դիակները մնացին կախաղաններուն վրայ կախուած: Մարմնի տարբազարուած բեկորները ինքնաբերաբար գետին կը թափէին, կեր դառնալով հոն հաւաքուած շուններուն:

Փաստ. 883-44

Բ 9.- ԱՐԻՒՆԱԹԱԹԱՒ ԼԻՃԸ

Աքսորի ընթացքին բոլոր տեսածներէս այն մէկը, որ բազմաթիւ ուրիշներու կարգին ընդմիջտ դրոշմուած պիտի մնայ յիշողութեանս մէջ, այն տեսարանն է, զոր պիտի ջանամ նկարագրել կարելի հարազատութեամբ:

1915 թ. Սեպտեմբեր 15ին, Խարբերդի մէջ պր. Նահումէն բաժնուելէ ետք, ես եւ երկու ընկերակիցներս՝ Աբր[ահամ] Ամատո եւ Տ. Արտիթթի, շարունակեցինք մեր ճամբան դէպի Պիթիս, ուր, Փրանսահպատակի հանգամանքով կ'ուղարկուէինք Չմիւռնիա, նախկին նահանգապետ Ռահմի պէյի հրամանով:

Շարունակեցինք մեր ճամբան երկու օր առանց մասնայատուկ ոչինչի հանդիպելու, բացի հոս ու հոն ցրուած հայերու դիակներէն, որոնց կը հանդիպէինք գրեթէ ամէն քայլափոխի: «Մասնայատուկ ոչինչ» կ'ըսեմ, որովհետեւ ընտելացած էինք արդէն այս տեսակ տեսարաններու, որոնց ամէն օր ականատես ըլլալու բերումով այլեւս ազդեցութիւն չէին գործեր անոնք մեր վրայ:

Երրորդ օրը, սկսանք շրջանցել Պաքիր-Մատէնի մերձակայքին ցցուող լեռները:

Լեռնանցքի մը վրայ, մարդկային բազմութեան մը ձայները լսեցինք: Մեր հարցումին թէ ի՞նչ էր այդ, ժանտարմները պատասխանեցին որ նախօրէին երեք հազար հայեր անցած էին այնտեղէն եւ որ վստահաբար անոնք է որ դադար առած են լիճին եզերքը: Հինգ վայրկեան անց, մեր աչքերով հաստատեցինք ժանտարմներուն ըսածը:

Արդարեւ, լիճին մօտենալէ ետք տեսանք մարդկային բազմութիւն մը որ պտոյտ կու տար ամէն կողմ դառնալով: Իմացանք որ այս խեղճ մարդիկը կը պատրաստուէին լիճը ճեղքել ու առաջ անցնիլ:

Մեր հոն հասնելէն ետք, շատեր փութացին մեզ մօտ եւ անձկութեամբ հարց տուին, թէ ուրկէ՞ կու գայինք եւ արդեօ՞ք մենք ալ հայ ենք: Բաւարարութիւն տուինք իրենց հետաքրքրութեան եւ նստանք չոր հացով մեր քաղցը յագեցնելու համար: Այս տեսնելով շատ մը կիներ փութացին մեզ հիւրասիրելու ասկէ-անկէ ճարուած ու տեստեղէնով:

Հագիւ ճաշը աւարտած, յանկարծ լիճին հանդիպակաց լեռնէն արձակուած հրացանի ձայներ լսեցինք: Այդ կողմ ուղղեցինք մեր հայեացքները եւ լեռներու գագաթին նշմարեցինք քիւրտերու բազմութիւն մը, որ չես գիտեր ուրկէ եկան:

Հրացաններով եւ կացիններով էին զինուած բոլորը: Հայերը, որ փորձառութեամբ գիտէին թէ անողորմ

են քիւրտերը, խուճապի մատնուեցան՝ տեսնելով գանոնք մինչեւ ատամները գինուած. շուարած իրարու կը նայէին եւ, բնազդաբար, մօտեցան ժանտարմներու խումբին, կարծես պաշտպանութիւն աղերսելու համար:

Յանկարծ լսեցինք նոր պայթումներ, որոնք կու գային լիճին աջ եւ ձախ կողմերը եզերող լեռներէն: Խեղճ հայերը այս անգամ ամբողջապէս կորսնցուցին իրենց քաջութիւնը, մտածելով որ վստահ, բոլորն ալ պիտի կողպտուին: Խեղճերը չէին պատկերացներ, թէ ի՞նչ պիտի պատահէր քանի մը վայրկեան ետք...

Հրացանի առաջին զարկերուն, ժանտարմները իրենց տեղէն իսկ չչարժեցան. բայց երկրորդ զարկերէն ետք, նախագալով որ ծանրակշիւ բան մը կը պատրաստուի, անոնցմէ մէկը, հաւանաբար գլխաւորը, ճերմակ թաշկինակ մը անցնելով հրացանին, ելաւ եւ գնաց քիւրտերուն կողմը: Քանի մը վայրկեան անց, գլխաւորը եկաւ երեք քիւրտերու ընկերակցութեամբ ու միւս ժանտարմներուն հետ կարճատեւ խորհրդակցութենէ մը ետք, տեսանք որ անոնք առանձնացան հեռու տեղ մը: Ան, որ քիւրտերու գլխաւորը կը համարուէր, թընդացող ձայնով մը գոռաց. «Մահմետականները թող հեռանան»:

Անմիջապէս մէկ կողմ քաշուեցան բոլոր ժանտարմներն ու հայերու կողմէ վարձուած ջորեպանները: Հայերը, սարսափահար աչքերով, կը հետեւէին այս սարքուած դաւադրութեան: Ինչ կը վերաբերի ինծի, ընկերներուս հետ խորհրդակցելէ ետք, դիմեցի ժանտարմներու պետին իմանալու համար թէ ի՞նչ պէտք է ընէինք մենք այս պարագային, նկատի ունենալով որ մենք ոչ հայ էինք եւ ոչ ալ մահմետական... Իբրեւ պատասխան, ըսաւ որ իրեն պէտք է յանձնէինք մեր ունեցած դրամները եւ որ միայն այդ ձեւով մեզ ազատելու միջոցը կրնային գտնել: Անմիջապէս վեց մեծիտիէ վճարեցինք իրեն:

Ճիշդ այդ պահուն, երբ մօտեցած էինք թուրքերուն, քիւրտերը գահավիժեցին լեռներէն եւ միաժամանակ երեք կողմերէն շրջապատեցին հայերը, այնպիսի ձեւով մը, որ եթէ անոնցմէ մէկը խոյս տալ մտածէր, կրնար միայն լիճ նետուիլ: Մենք փոռուած էինք գետին, լիճին եզերքը, անգիտանալով ճշդիւ թէ ի՞նչ տեղի պիտի ունենար մեր աչքերուն առջեւ:

Սաստիկ ճակատամարտի մը ընթացքին, երբ մարդիկ հազարներով կը մեռնին, այս կամ այն չափով բան մը կայ վսեմ, որովհետեւ երկուստեք իտէպլի մը համար կը պայքարին եւ ամէն պարագայի տակ, կը կռուին հա-

Լասար գէնքերով: Մինչդեռ հոս, նման ոչինչ կար: Եղածը պարզապէս կատղած գազաններու յարձակում մըն էր անպաշտպան ոչխարներու հօտի մը վրայ:

Տեսանք յանկարծակիօրէն չարաշուք փայլատակումը հազարաւոր կացիններու, որոնք միեւնոյն կշռոյթով կը բարձրանային ու կ'իջնէին գլուխներուն վրայ դըժբախտ հայերուն, որոնք, խելագարուելու աստիճան ահաբեկուած, նուազագոյն շարժումն իսկ չէին ըներ պաշտպանուելու համար: Ծայր աստիճան սարսափի մատնուած, յուսահատական ճիչ ու աղաղակ կը բարձրացնէին՝ շրջակայքի սարերը հիմնովին խախտելու աստիճան:

Արցունքը յորդառատ կը հոսէր մեր աչքերէն եւ մեր

սրտերը կը ճմլուէին ամէն անգամ որ կացինները կը բարձրանային այս թշուառներուն վրայ: Անոնք որ փախուստի գիմելու փորձ մը կ'ընէին, կ'իյնային հարուածներուն տակ անողորմաբար: ...: Մեծ ու փոքր, կին ու աղջիկ, առանց բացառութեան, բոլորը ենթարկուեցան հրէշային այս սպանդին...: Ոմանք կը փորձէին խուսափիլ հատու կացինին հարուածէն եւ կ'ուզէին նետուիլ լճին սառն ջուրերուն մէջ, որ հոն նուազ ահաւոր մահ կը գտնեն, բայց արդէն ջրափին կանգնած էին քիւրտեր՝ իրենց վստահուած չարաշուք պարտականութիւնը գործադրելու նպատակով: Անոնք կը կրակէին ու կը սպաննէին բոլոր այն թշուառ հայերը, որ կը փորձէին ջուրերուն մէջ լողալու ճամբով փրկուիլ գտնել:

Գ. ԿԱՐԻՆ – ԷՐՁՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳ

Փաստ. 883-73

Գ 1.– ԷՐՁՐՈՒՄԻ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ

Երկու օրուան արկածալից ու սարսափելի ճամբորդութենէ մը ետք, երրորդ կարաւանը ճամբան կը փոխէ ու կ'ուղղուի դէպի Երզնկա, անցնելով դիակներով եւ արեան ճահճներով ծածկուած դաշտերէ ու կը հասնի Բաբերդի գիւղերէն Բլուր, որ արդէն ամայացած էր ու քանդուած:

Հոս երկու կորուստ ունեցանք, Կարապետը Հերթեւ գիւղէն եւ Սեթոն՝ Կան գիւղէն, երկուքն ալ կտոր-կտոր եղած եաթաղանի հարուածներէն:

Հասնելէ ետք գետին մօտ (թրքական Սփեկոր գիւղին մօտակայքը), ուր անճանաչելի դարձած դիակներ սփռուած էին, կարաւանէն երեք կիներ՝ սարսափի մատնուած, իրենց երեխաները նետեցին գետին յորձանքներուն մէջ:

Երզնկայի մօտենալէ ետք կարաւանը կանգնեցուցին հայոց գերեզմանատան մէջ, ուր բոլոր տարագրեալներու աչքին առջեւ ոչխարի մը պէս մորթեցին վահան Մնացականեանը, որ արդէն խելագարուած էր էրզրու-

մի բանտին մէջ իր կրած չարչարանքներուն եւ գանակահարուածեան հետեւանքով:

Հոս է որ կը գատեն շուրջ 60 ընտանիքներ եւ կը ղրկեն ուղղակի Քեմախ:

Քեմախի երեսփոխան Խալէտ պէյն էր սարքած դաւադրութիւնը, — բոլորը կը ջարդուին. ընկերացող ժանտարմները վերադարձան արիւնաթաթաւ վիճակի մէջ:

Ոստիկան զօրաց հրամանատար Մուխթար պէյ, որ կարաւանին կ'ընկերանար, ճանապարհին անընդհատ մահու սպառնալիքով կը չարչրկէր Բարսեղ Ազարեանը, որպէսզի վերջինս յօժարի աղջիկը կնութեան տալ իրեն:

Իմացած ըլլալով որ նահանգապետ Թահսին պէյը Երզնկա կը գտնուի, կարաւանի մարդիկը կ'աղերսեն լալագին որ վերջ մը տայ իրենց տառապանքին. ու կը պատմեն ժանտարմներու կողմէ գործուած սպանութիւններու մասին: Վալին անողորմ կ'ըսէ. «Ապահով եղէք, Ուրֆայէն անդին պիտի չանցնիք. ժանտարմներուն հետ լաւ վարուեցէք»:

Փաստ. 883-76ա

Գ 2.– ՋԱՐԴԱՐԱՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԸ ԷՐՁՐՈՒՄԻ ՍԷՋ

Կասկածէ վեր է այսօր որ Սըվազի, Խարբերդի, Պիթլիսի, էրզրումի, Տիարպեքիւրի, Տրապիզոնի վալիները եւ Սամսոնի ու Կեսարիոյ միւթեսարըֆները հաւաքական ժողով մը գումարեցին, իթիհատի կեդրոնէն տրուած հրահանգին համաձայն, հայոց բնաջնջման ծրագիրը մշակելու նպատակով:

Փաստ. 883-50

Գ 3.- ԵՐԶՆԿԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՒ ԵՐԵՍՓՈԽԱՆ ԽԱԼԷՏԻ ԱՐԱՐՔՆԵՐԸ

Խալէտ պէյ, Քեմախի երեսփոխանը, որդի Թահիր փաշայի, Սեհիրգատէ ընտանիքէն.— Ընդհանուր զօրակոչէն ետք, զինուորական պաշտօն վարելու կոչուած էր Երզնկայի 4րդ զօրաբանակին մէջ: Ամիսներ ետք, կազմած էր արդէն հինգ հարիւր հոգինոց գունդ մը, ընտրուած Քեմախի եւ Երզնկայի ամէնէն արիւնարբու թուրքերէն:

Ընտրած էր Քեմախի եւ շրջակայ գիւղերու ամէնէն ուժեղ, երիտասարդ ու կորովի հայերը եւ ըսած որ զիրենք կը զրկէ ամէլէ թապուրիններու մէջ աշխատելու: Յետոյ, զանոնք զրկեց Մամախաթունի մօտ գտնուող Սանսիա-Տերէ, ուր եւ անգթօրէն սպաննել տուաւ բոլորը:

Դաւակներ գիւղէն Վարդան Գրիգորեանը ականատես գիւղացի մըն է: Խալէտ, իրեն գործակից Շէյթան Պեքիրի հետ առեւանդեցին Սարգիս Տէր Ստեփանեանի աղջիկը՝ Բրաբիոնը. երեք օր բռնի պահելէ ետք, հօրը վերադարձուցին զայն: Տեղահանութենէն 8 օր առաջ Խալէտ պէյ ձերբակալած էր արդէն հետեւեալ անձերը.—

Սարգիս Տէր Ստեփանեան, Խաչիկ Չալճեան, Աբգար Բարսեղեան, Տիրան Թաշճեան, Հաճիպապ Փաշայեան, Տոքթ. Տիրան Փափագեան, Տէր Վարդան Չաքարեան քահանան:

Ասոնք Խարբերդ զրկուեցան եւ իրենց ունեցուածքն ու բնակարանները բռնազրաւուեցան: Իրենց տարագրուելէն ետք, երիտասարդներուն պարտադրուեցաւ երկրորդ անգամ փրկագին վճարել եւ յաջորդ օր Սաւսիա-Տէրէ տարուելով կոտորուեցան (Այս ձորին մէջ նախապէս ջարդուած էին Քեմախի հայերը):

Ասկէ ութ օր ետք, Մայիսի 26ին, սկսաւ ամբողջ հայ համայնքին տարագրումը: Խալէտ պէյ եւ իր մեղսակիցները հրամայեցին 40-50 տարեկան բոլոր տղամարդոց, որ հաւաքուին հայոց գերեզմանատունը, ուր ժանտարմներն ու չեթէները սպաննեցին ամէնքը: Ողջ մնացածներուն ստիպեցին առաջ շարժիլ Քեմախի ուղղութեամբ. ճամբան դադար առնել տուին Խալէտի հօրեղբօր Հաճի պէյի օթեւանը: Հոս, շրջակայքի եօթը գիւղերէն հաւաքուած քիւրտերը եւ չեթէները յանկարծակի յարձակեցան անմեղ ու անպաշտպան հայերուն վրայ եւ վայրագօրէն կոտորեցին զանոնք: Կարաւան մը կազմեցին այս ահաւոր սպանդէն փրկուած մարդոցմով, եւ անոնց միացնելով հայկական չորս գիւղերու (Դաւակներ, Գառնի, Թորդան եւ Գոմեր) բնակիչները, տարագրեցին զանոնք սպայ Մուսթաֆա էֆէնտիի եւ 10 ժանտարմներու ուղեկցութեամբ:

Երեք օրերու տաժանելի գնացքէ ետք, Խալէտ, ընկերակցութեամբ իր զարմիկին՝ Մազար պէյի եւ վանեցի Քեմալ պէյի, ինչպէս նաեւ Ասլան պէյ եւ չեթէյապետ Պող Աղա քիւրտերուն, ընդամէնը 20 ոճրագործներ, եկան կողոպտելու կարաւանը: Իրենց հետ տարին 60.000 թրքական ոսկեդրամ եւ վեց գեղանի աղջիկներ, որոնք տուն պիտի չվերադարձուէին այնուհետեւ:

Յաջորդ օր, այս նոյն մարդիկ վերադարձան եւ կարաւանի տղամարդիկը բաժնեցին կիներէն: Կիներն ու երեխաները սկսան լալ: Ասոր վրայ Խալէտ իբր փրկագին հազար ոսկի պահանջեց: Հայերը հագիւ 500 ոսկի կարողացան հաւաքել ու վճարել իրենց ազատութեան համար, երբ յանկարծ նոր առաջարկ մը ներկայացուեցաւ,— իրենց յանձնել Գառնիի գիւղացիներէն Տիգրան Յովակիմեանն ու Պետրոս Հազարեանը, որոնք Սահմանադրութեան առաջին օրերուն համարձակութիւնն ունեցած էին 3000 ոսկիով գնելու Խալէտի հօրեղբօր պատկանող հողեր: Ասոր վրայ, խլեցին ու բռնի տարին եւ սպաննեցին զանոնք: Ոճրագործները բարձրաձայն կը գոռային. «Ահա թէ ինչպէս կը գնուի Սատրք պէյի ստացուածքը»:

Տարագրեալները շարունակեցին իրենց գողգոթան մինչեւ Գանլը-Տէրէի անցքը եւ այս սոսկայի նեղ կիրճին մէջ դէմ յանդիման գտնուեցան արիւնածարաւ խուժանի մը, բաղկացած չեթէներէ, զինուորներէ, ժանտարմներէ եւ թուրք ժողովուրդէ,— կին, երեխայ, ծերունիներ, բոլորը զինուած կացիներով, սուրերով եւայլն, եւ որոնք անողորմաբար ջարդեցին հայերը:

Կարաւանէն վերապրողները իրենց ճամբան շարունակեցին դէպի Արմտան. այստեղ անոնք կողոպտուեցան ու կոտորուեցան թուրք ջորեպաններու եւ ուղտապաններու ձեռքով: Քիչեր միայն ազատեցան ու կարողացան հասնիլ Օվայի գայմագամութիւն:

Այս եղանակով է որ հարուստ ու բարգաւաճ Երզնկա քաղաքի հայերը բնաջնջուեցան: Այս ահաւոր սպանդէն փրկուածներու պարագան՝ հրաշքի համագօր բան մըն է:

Խալէտի գործած ոճիրներուն մէջ կան այնպիսիներ, որ բացառիկ կերպով գազանային են: Առիթով մը ինք խոստովանած է թէ բազմաթիւ ոճիրներ գործած է, բայց անոնց մէջ կան այնպիսիներ, որ իր քուսը կը փախցնեն:

Տարագիրներու վերջին կարաւանը Երզնկայէն հեռանալու պահուն, երբ Խալէտ կը վերադառնար քաղա-

քին մօտ, Եփրատի ափին կառուցուած իր պալատը, կը նշմարէ ողբալի ձայներ արձակող ամբօխ մը: Մօտենալով անոր, կը տեսնէ ժանտարմի մը հսկողութեան տակ գտնուող 7-800 հայ երեխաներ, ծայրայեղօրէն ողբալի վիճակի մէջ: Բոլորը անոք ու անօգնական եւ սովահար էին, ոմանք արդէն մահացած, ուրիշներ՝ մեռնելու վրայ:

Խալէտ հարց կու տայ ժանտարմին թէ ի՞նչ բանի կը սպասէ. «Պէ՛յ էֆէնտի, կը պատասխանէ ժանտարմը,

ծնողները սպաննեցինք եւ ասոնք ոչ կրնան առաջ երթալ եւ ոչ ետ դառնալ, ու ուտելու ոչինչ ունին»:

«Գետին մէջ թափէ», կը պոռայ Խալէտ. ժանտարմը սարսափի մատնուած այդ մտքէն, կը դառնայ ու կը փախչի: Արիւնածարաւ երեսփոխանը երկար չի տատամսիր. մօտակայ գիւղերէն բերել կու տայ թուրքեր եւ քիւրտեր, ու բոլոր երեխաները գետ թափել տալէ ետք, բոլորովին հանգստացած, իր ճամբան կը շարունակէ:

Փաստ. 883-79ր

Գ 4.– ԵՐԿՈՒ ԱՐՄՏԱՆՆԵՐՈՒ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Չեթէներ՝ Արմտանի հինգ գիւղերուն բնակչութիւնը էշքի-Օղլուի ագարակին առջեւ հաւաքած՝ 20.000 թրք. ոսկի փրկագին կը պահանջեն անոնցմէ: Գուճարը գանձելէ ետք, չեթէները կը ձեռնարկեն տղամարդիկը սպաննելու գործին:

Կիներէ եւ երեխաներէ բաղկացած կարաւանը Եփրատի ափ հասնելուն, կիներն ու մանուկները կը վազեն ջուր նետուելու համար: Չեթէները կ'արգիլեն այս յուսահատական արարքը: Ապա, կիներն ու մանուկները տառաջիօրէն մերկացնելով, կը ճեղքեն անոնց փորերը, եւ կը գլխատեն զանոնք: Արիւնլուայ մարմինները կը թաւալին Եփրատի ալիքներուն մէջ:

Հրաշքով ազատած քանի մը պառաւներ եւ մանուկներ փախուստ կու տան տարբեր ուղղութիւններով: Ոչ ոք գիտէ անոնց ճակատագրին մասին:

Փաստ. 883-81ա

Գ 5.- ԲԱԲԵՐԴՅԻ ԱՂՋԿԱՅ ՄԸ ՍՐՏԱՃՍԼԻԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հետեւեալ ձեւով կը պատմէ իր արկածալից կեանքը ծագումով բաբերցի օր. Գեղարդ Լուսիկեան, այժմ ապաստանած Վաղինակ քահանայի տունը (Ֆիլիպէ).—

1915 թ. Յուլիս ամսուն, սուինաւոր ժանտարմներ շրջապատեցին Բաբերդի երեւելի հայերուն բնակարանները, ձերբակալեցին տղամարդիկը եւ քարիւղի շիշեր տանելով այրեցին այն տունները, ուր ապաստանած հայերը կրնային դիմադրութիւն ցոյց տալ: Ապա հրահանգեցին ընտանիքներուն պատրաստ ըլլալ յաջորդ առաւօտ ժամը 9-ին Երզնկա տարագրուելու համար:

Մեզի ընկերացող ժանտարմներ սկսան բռնաբարել աղջիկներն ու կիները:

Քաղաքէն հագիւ երկու ժամ հեռաւորութեան վրայ, գինեալ չեթէներ հասան բարբարոսութիւնը լրացնելու. տղամարդիկ սպաննուեցան մեր աչքերուն առջեւ. ամուսիններու պաշտպանութեան նպատակով զանոնք շրջափակող կիները եւս սպաննուեցան գազանաբար:

Քրդի, Զալակուր եւ Բլուր գիւղերու ճամբուն վրայ քիւրտերը խուժեցին կարաւանին վրայ ջարդէն վերապրած տարեց մարդիկն ու կիները կոտորելու համար. բռնաբարեցին նաեւ կիները եւ առեւանգեցին գեղեցիկ կոյսերը:

Բլուր գիւղի միւտիրը բռնութեամբ կնութեան առաւ հօրեղբօրս՝ Պարգեւ Լուսիկեանի երեսուն տարու կինը, որուն երկու երեխաները մօտս ապաստանեցան:

Այդ պահուն էր, որ քաղաքի երեւելիներէն Յակոբ Աղապապեան, Զաքար Շէյրանեան եւ եղբայրը՝ Կարապետ, որոնք մինչ այդ ողջ մնացած էին ձեւով մը, դուրս բերուեցան կարաւանէն եւ փողկապով մը տառացիօրէն խեղդամահ եղան:

Քեմախ Պողազիի մօտ, Եփրատի եզրին մեզ կանգնե-

ցուցին, հոս առանձնացուցին կիները, աղջիկները եւ երեխաները:

Երզնկայէն եկած թուրքերը ընտրեցին իրենց հաւնած կիներն ու աղջիկները: Այս դժբախտները, թուով 400 հոգի, տարուեցան Երզնկա, միւսները թափեցին Եփրատի ալիքներուն մէջ:

Երզնկայի մէջ կային բազմաթիւ հայուհիներ, բերւած էրզրումէն եւ շրջակայքէն. 300-ը ամուսնացուցած էին զինուորականներու եւ 200-ը քաղաքային պաշտօնեաներու հետ: Ես բաժին ինկայ Շաքիր կոչուած դատաւորին, եւ վեց զարմիկներէս միայն երկուքը կրցայ փրկել:

Երկու ամիս ետք, Կոստանդնուպոլսէն եկած հրահանգով, հաւաքեցին մեծ ու փոքր հայերը, մինչեւ 70 տարու, եւ թափեցին Եփրատի ջուրերուն մէջ: Աչքերովս տեսայ թաւալող դիակներ, եւ ողջ մնացած տղոց տապալակիւր ջուրերու մէջ...

Արաբկիր հասնելուն մնացած էինք 15 հոգի միայն. ճամբան ուտելիք ոչինչ ունէինք. կը սնանէինք խոտով, իսկ թուրք գիւղացիներ կը պահանջէին աւարի իրենց բաժինը:

Շնորհիւ դատաւորին, յաջողեցայ Երզնկա վերադառնալ կորսնցնելով Յարութիւն զարմիկս, զոր նետած էին Եփրատի ջուրերուն մէջ:

Դատաւորը Կալիպոլիի մէջ պաշտօն ստացած ըլլալով, փոխադրուեցանք Կոստանդնուպոլիս: Ահաւոր է նկարագրել այն ինչ որ տեսանք ճամբու ընթացքին.— իրար վրայ դիզուած դիակներ, արտերու վրայ ցրուած դիակներ, արեան լերդացած ճահիճներ, խեղդամահ ու կտոր կտոր եղած մարդկային մարմիններ... Ո՛հ, ահաւոր է, ահաւոր...

Փաստ. 883-25

**Գ 6.- ԲԱԲԵՐԴԻ ԶԱՐԴԵՐՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ
(ԷՐԶՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳ)**

Բաբերդի եւ շրջակայ 20 հայկական գիւղերու հայերը այլուր չտարագրուեցան. անոնք տեղւոյն վրայ ջարդուեցան:

Սպանդի պատասխանատուներն են.—

1.- Թահսիմ պէյ, էրզրումի ընդհանուր կառավարիչ: Ան եղաւ ջարդերուն կազմակերպիչը:

2.- Նուրսէթ պէյ, Բաբերդի գայմազամ, կազմակերպութեան վարիչ. ան կախել տուաւ համայնքին առաջնորդը՝ տեղապահ Անանիա Հազարապետեանը, Վ. Լուսիկեանը եւ ուրիշներ: Անդրանիկ Պոյաճեան, Յակոբ եւ Սմբատ Աղազարեան, Արշակ եւ Մանուկ Սիմոնեան, Յովհաննէս եւ Սերոբ Պալեան, Չաքոս Այվազեան, Խաչիկ Մ., Մ. Պօղոսեան եւ շատ ուրիշներ, փողով ու թմբուկով եւ թուրք երեւելիներու ու ամբօխի ընկերակցութեամբ, տարուեցան ճորոխ գետի եզերքը եւ

հոն կոտորուեցան:

Գիւղացիներու ջարդը աւարտելէ ետք, Բաբերդի հայերուն մնացեալ մասը տարին քաղաքէն հեռու, ուրիշներ Երզնկայի ճամբան, ուր բոլորը մորթուեցան: Ի վարձատրութիւն այս չարագործութիւններուն, Նուրսէթ պէյ շահակուեցաւ միւթեսարիՖ Արղանա-Մատենի, ուր կոտորել տուաւ Մուշի, Խուլփի, Խիանքի, Պիթլիսի տարագրեալներուն վերջին կարաւանները: Նուրսէթ պէյ Ուրֆա ուղարկուեցաւ տարագիր հայերը բնաջնջելու բացարձակ ազատութեամբ լիազօրուած: Տակաւին կը գտնուի Ուրֆա, ուր կառուցանել տուած է հոյակապ տուն մը:

[Այնուհետեւ կը տրուի անուանացանկը ջարդերու պատասխանատու 17 ուրիշ անձերու]:

Փաստ. 883-37

**Գ 7.- ԲՂԻԻ ԴԷՊԵՐԸ՝ ԶՕՐԱԿՈՉԷՆ ՄԻՆՉ ՏԱՐԱԳՐՈՒՄ
(Փախստականի մը պատմութիւնը)**

Քղիի մէջ զօրակոչը կանոնաւոր կերպով ընթացաւ: Բոլոր անոնք որ փրկագին վճարած էին, իրենք զիրենք ապահով կը զգային: Տեղահանութենէն երեք օր առաջ գայմազամը պաշտօնանկ եղաւ եւ փոխարինուեցաւ չեթէյապետով մը՝ Միտհատ: Այս վերջինը, գալուն պէս, ժողով գումարելու պատրուակով իր մօտ հրաւիրեց հայ երեւելիները, 25 հոգի: Հրաւիրեալներու կարգին էին Առաջնորդը եւ Միացեալ ընկերութեան ղարոցներու ընդհանուր տնօրէն Յակոբ Աղասէր: Նոյն ժամանակ մոռնետիկը հայերը կը հրաւիրէր պատրաստ ըլլալ երեք օր ետք մեկնելու: Առաջին կարաւանը ճամբայ ելաւ 1915 թ. Մայիս 30ին:

Կարաւանին մաս կը կազմեն գայմազամին կողմէ հրաւիրուած 25 հայերը: Երկու օր քայլելէ ետք, վերջիններս անջատեցին կարաւանէն այն պատրուակով որ կառավարիչը եկած է զիրենք հարցաքննելու եւ որ քանի մը ժամ ետք պիտի վերադարձուին: Շարունակեցինք մեր ճամբան դէպի Բալու: Կը հանդիպէինք բոցերու մէջ լողացող գիւղերու, համատարած հրդեհին մէջ կորսուած բնակիչներով, որոնց պոռչտուքները արձագանգ կու տային եթերին մէջ: Բալուի մէջ բոլոր տղամարդիկը անջատեցին մեզմէ: Եփրատի կամուրջին մօտ, ատրճանակի կրակոցներով՝ ժանտարմները տուին կոտորածի ու թալանի ազդանշանը: Իսկոյն շրջապատուեցանք ասպատակներով եւ մարդասպաններով:

մեզմէ շատեր, բարբարոսներու ձեռքը չիյնալու համար, նետուեցան գետին ալիքներուն մէջ: Մնացեալներս, հրաշքով փրկուած կին ու աղջիկներ, ամբողջովին կողոպտուած, անօթի, կիսամերկ,— շարունակեցինք մեր ճամբան: Բոլոր աղջիկներն ու կիները առեւանգուեցան: Արգիլուած էր մեզի մօտենալ աղբիւրներուն. ծարաւը կը տառապեցնէր ու չարաչար կը սպաննէր մեզ: Խարբերդ հասնելուն, տարագրեալներու շարքէն հինգ կիներս, յաջողեցանք գաղտնօրէն հոն մնալ, մինչ մնացեալները ստիպուած էին շարունակել իրենց ճամբան:

Բացի քանի մը հայ բժիշկներէ, Խարբերդի ամբողջ բնակչութիւնը տարագրուած էր:

Ամիս մը ետք, անոնք եւս, զինեալ ժանտարմներով շրջապատուած, քաղաքէն դուրս տարուեցան եւ հրացանագարկ եղան: Պայթումներուն ձայնը կը լսէինք եւ սարսափի կը մատնուէինք:

Խարբերդի մէջ Իթիհատը բացած էր որբանոց մը, ուր 3-400 հայ տղաք կը պահուէին: Մոռնողի եւ խնամքի բացակայութեան պատճառով, փոխանցիկ հիւանդութիւնները մահ կը սփռէին: Իշխանութիւնները թուրքերուն բաժնեցին գեղեցիկ զօրեղ մանուկները, իսկ միւսները նետեցին գետի ջուրերուն մէջ:

Քղիի տեղահանութիւնը տեւեց 24 ժամ: Վերջին կարաւանները տառացիօրէն բնաջնջուեցան:

Փաստ. 883-64

Գ 8.- ՁԱՐԴԱՐԱՐ ԵՐԵՍՓՈԽԱՆԻ ՄԸ ԳԱՁԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քեմախի կոտորածներին փրկուած երկու հայեր, Չլիրեան եւ Ծառուկեան, որոնք Տերսիմի լեռները ապաստանած էին եւ այդ տեղէն յաջողած թուրք-ուսական սահմանը անցնելի, հետեւեալը կը պատմեն.—

Երզնկայի եւ շրջակայքի հայերէն հազար տղամարդ կապկեցին ու տարին մահուան: Քեմախի երեսփոխան Խալէտը, չեթէներու գլխապետի մը նման ձիու վրայ բազմած եւ ատրճանակի ձեռքին, կը հսկէ: Քանի մը խեղճ տարագրեալներ իրեն կը մօտենան ու կ'ըսեն. «Պէ՛յ էֆէնտի, լա՛ւ գիտենք որ մեզ մահուան կ'առաջնորդեն. կը խնդրենք որ միայն որ գնդակով սպաննեն»:

— Շատ լաւ, կը պատասխանէ Խալէտ դաժանօրէն, եւ կը հրամայէ որ գետին պռուկին. կը կրակէ, բայց շուտով ափսոսալով գնդակներուն, գանոնք սպաննել կու տայ չեթէներուն կացիներուն եւ սպանդի այլ գործիքներու միջոցաւ:

Դահլիճները կը յոգնին, արիւնը կը հոսի յորդառատ, գիւղերը կը կուտակուին իրարու վրայ եւ անկարելի կը դառնայ մեռեալները գատորոշել ողջերէն: Այն ատեն Խալէտ կը պոռայ. «Կայսերական հրամանազիր եկած է. պիտի խնայենք այս սպանդէն ազատողներու եւ ողջ մնացածներու կեանքը»:

Այս միտմարական խօսքերուն վրայ, անոնք որոնք վէրք ստացած էին միայն եւ անոնք որ մեռեալ կը ձեւացնէին, անմիջապէս կը բարձրացնեն իրենց գլուխները. ամէնքը կը բնաջնջուին, բացի մէկ կամ երկու հրաշքով փրկուածներէ:

Գազանաբարոյ երեսփոխանը խուժք մը ուրիշ հայերու կը հրամայէ փոսեր պատրաստել եւ թաղել կու տայ

գանոնք մէկ առ մէկ իրենց ձեռքով պատրաստուած փոսին մէջ: Մէկ քանին, որոնք բաւարար թանձր հողով ծածկուած չեն եղած, իրենց մատներով ծակեր կը բանան շնչելու համար. գիշերուան խաւարէն օգտուելով, ասոնք դուրս կու գան իրենց գերեզմանափոսէն ու փախուստ կու տան:

Խալէտի հօրեղբայրը, Հաճի Սըտըք պէյ, դիտողութիւն կ'ընէ իր զարմիկին, յայտնելով որ այդ ձեւով կ'արատաւորէ իրենց ընտանիքին պատիւը: Առանց խպնելու, Խալէտ կը պատասխանէ անոր. «Դուն չես հասկընար այս բաները. ոչ իսկ մէկ հոգի պէտք է վերապրի այս ցեղէն»:

Մենք քիչ բան գիտենք Երզնկայի սպանդներուն մասին, որովհետեւ 25.000 հայեր ունեցող այդ քաղաքէն միայն 25 հոգի կը մնայ:

Այս ճիւղ երեսփոխանին արբանեակներէն են՝ Երզնկայի կառավարիչ Մեմտուհը, որ ձերբակալուած է, եւ Հաճի Հիւսէինի որդին Հաֆիզը, որ այժմ Կ. Պոլիս կը գտնուի: Ուրիշ ոճրագործներ եւս գոյուլթիւն ունին:

Ուրիշ թուրք երեւելի մը կը պատմէ որ էրզրումէն, Տրապիզոնէն եւ Գայլ-գետէն եկող կարաւանները Խալէտի չեթէներուն կողմէ կոտորուեցան: Դարձեալ նոյն սրիկան է որ Երզնկայի հայ երեւելիները բանտարկած է Քեմախի եկեղեցիին մէջ ու ջարդել տուած:

Քեմախի բոլոր բնակիչները լաւ գիտեն որ այս երեսփոխանին տունը կը կերակրուէին 200 չեթէներ:

Այս չարաշուք երեսփոխանը մայրաքաղաքին մէջ կը ձեմի՝ թուրք կառավարութեան անգորութեանը ապաւինած:

Փաստ. 884-4

Պատճեն

Գ 9.– ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ

ԷՐԶՐՈՒՄՆԱՀԱՆԳԻ ԽՈՏՈՐՁՈՒՐ ՇՐՁԱՆԻ ՀԱՅՈՑ ՏԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ
(Կազմուած «Տայք Միութիւն» հետազոտութեան եւ օգնութեան կոմիտէի կողմէ)

Copie

MEMOIRE

Sur la déportation de la région de Khodortchour (province d'Erzeroum)
dressé par le Comité de Recherches et de secours de "L'UNION DE DAÏK"

Թարգմանութիւնը.—

Excellence,

Ձերդ գերազանցութիւն,

Nous avons l'honneur de porter à Votre haute connaissance ce qui suit:

Պատիւ ունինք Ձերդ բարձրութեան ներկայացնելու հետեւեալը.—

Arrivés en mission de recherches et de secours de la part de "l'Union des Arméniens de Daïk", nous voulons entreprendre de recherches dans l'intérieur de la Turquie d'Asie, ainsi que dans les contrées occupées par les puissances Alliés en Syrie, Mésopotamie, Palestine et Cilicie, pour découvrir les malheureuses épaves de nos compatriotes arrachés, au nombre de 10.000 âmes, à leurs foyers pour être déportés.

«Տայքի հայոց միութեան» կողմէ հետազոտելու եւ օգնելու առաքելութեամբ հոս եկած ըլլալով, կը փափաքինք փնտռութիւններ կատարել Ասիական Թուրքիոյ, ինչպէս նաեւ Դաշնակից պետութիւններու կողմէ զբաղուած Սուրիոյ, Միջագետքի, Պաղեստինի եւ Կիլիկիոյ մէջ՝ գտնելու համար թշուառ բեկորները մեր 10.000 հայրենակիցներուն, որոնք տարագրուած են արմատախիլ ըլլալով իրենց օճախներէն:

Cette mesure fut prise par le Gouvernement Turc au début de la guerre universelle. Nos compatriotes déportés étaient natifs des villages: Khodortchour, Areki, Moghragoud, Goudrachen, Garmirk, Dzédounts, Tzignachour, Hounoud et autres du Vilayet d'Erzeroum. Toute la localité couverte par ses villages est connue sous le nom de Khodortchour et les trois quarts de sa population appartiennent à l'Eglise Arméno-Catholique, ce qui peut être confirmé par le Patriarcat Arménien Catholique à Constantinople.

Բարբարոսական այդ վճիռը տրուեցաւ թրքական պետութեան կողմէ համաշխարհային պատերազմի սկիզբը: Մեր տարագրեալ հայրենակիցները կը պատկանէին հետեւեալ գիւղերուն.— Խոտորջուր, Արեգի, Մոխրակոյտ, Կուտրաշէն, Կարմիրք, Ձկունք[?], Ձկնաջուր, Հունուտ եւ էրզրումի նահանգէն ուրիշ գիւղեր: Այս շրջանը կը կոչուի Խոտորջուր, եւ իր բնակչութեան երեք քառորդը կը պատկանի հայ-կաթողիկէ եկեղեցիին, բան մը որ կրնայ հաստատուիլ Կոստանդնուպոլսոյ հայ-կաթողիկէ պատրիարքարանէն:

Ont été déportés et sûrement massacrés, avec la population, une trentaine de prêtres arméniens catholiques, dont les Dix étaient sortis des séminaires de Vienne (Mékharistes), de Beyrouth, de Bzommar (Liban), de Saint-Suplice (Paris) et de Rome. Ces dix prêtres s'occupaient principalement de l'instruction et de l'éducation de nos enfants des deux sexes.

Ժողովուրդին հետ տարագրուեցան, եւ վստահաբար կոտորուեցան, շուրջ երեսուն հայ-կաթողիկէ հոգեւորականներ, որոնց տասը շրջանաւարտ էին Վիեննայի Միխիթարեան, Պէյրութի, Չմմառի (Լիբանան), Սէն-Սիլվիսի (Փարիզ) եւ Հռոմի դպրեվանքերէն: Այս տասը կրօնաւորները կը զբաղէին մեր երկու սեռի երեխաներու ուսումով եւ դաստիարակութեամբ:

Nous devons Vous dire, Excellence, que nos compatriotes ont toujours été de rudes travailleurs et ne négligeaient rien pour assurer un bien-être relatif à leurs familles. Ainsi, dans nos villages bien propres et soigneusement arrangés, presque tout le monde vivait dans les maisons en pierre entourées de jardins. Notre bien-être, dû au travail, faisait un contraste frappant avec la misère de nos voisins musulmans, avec les-

Պէտք է յայտնել որ մեր հայրենակիցները եղած են միշտ չարքաշ աշխատաւորներ եւ ոչինչ խնայած են իրենց ընտանիքներուն համար յարաբերական բարեկեցութիւն մը ապահովելու: Այսպէս, մեր բարեկարգ եւ մաքուր գիւղերուն մէջ գրեթէ ամէնքը կը բնակէին պարտէզներով շրջապատուած քարաշէն տուններու մէջ: Աշխատանքով շահուած մեր այս բարեկեցութիւնը հակադրութիւն մը կը կազմէր համեմատած թշուառութեանը մեր հարեւան մահմետականներուն, որոնց

quels, soit dit en passant, nous vivions pourtant en bonne intelligence. Chaque village avait son église et ses deux écoles, où l'enseignement était, comme nous l'avons dit, confié à des prêtres instruits, qui prenaient d'autant plus à cœur leur tâche, qu'ils étaient nés dans le pays.

Inquiets du sort de notre compatriotes à Khodortchour, nous n'avons eu connaissance de la catastrophe déchaînée sur eux que bien après le commencement de la guerre. Frappés de deuil et de désespoir, nous formâmes de suite "L'Union des Arméniens de Daïk" (le nom historique de notre pays). Pour avoir une souscription parmi les nôtres se trouvant en grand nombre en Russie et pour prendre des mesures de sauvetage à l'égard de nos malheureux déportés, nous ramassâmes sans peine des sommes considérables et nous nous mîmes fiévreusement à l'œuvre. Il s'agissait avant tout de savoir qu'il restait des survivants parmi nos déportés et où ils se trouvaient. Les nombreuses démarches que nous fîmes n'aboutirent malheureusement à rien. Nos cris de détresse adressés plus d'une fois au Saint-Siège, aux Ambassades d'Espagne et des Etats-Unis d'Amérique, à Pétrograd, restèrent sans résultat.

Pour toute éventualité nous avons même remis à l'Ambassade des Etats-Unis d'Amérique à Constantinople – par voie diplomatique – une assez forte somme, avec prière de la mettre à la disposition de nos rescapés, s'il y en avait; mais ladite Ambassade ne nous ayant avisés que de la réception de l'argent, nous en concluâmes que l'on ne savait rien du sort fait à nos déportés.

Sur ces entrefaites les troupes Russes occupèrent les provinces arméniennes. Pensant que les Turcs n'y reviendraient plus, nous dépêchâmes alors 200 jeunes Khodortchouriotes à Erzeroum avec la double mission de rebâtir une patrie de nos foyers dévastés par les Turcs et de faire en même temps des recherches et des investigations dans les régions occupées par les Russes, pour découvrir des traces de nos malheureux déportés. Ces mêmes jeunes gens étaient chargés par notre "Union" de défendre Khodortchour et de se joindre, en cas de nécessité, aux corps des volontaires arméniens qui se battaient avec les Russes contre l'ennemi commun.

Nous dépensâmes, à cette époque, pas mal d'argent et beaucoup de personnes parmi nous se disposaient déjà à aller s'établir de nouveau au pays natal, lorsque l'armée révolutionnaire Russe, complètement désorganisée, abandonna l'Arménie et le Caucase pour prendre le chemin de la Russie.

L'offensive turque ne tarda point et cette fois-ci les Arméniens étant seuls à défendre le front, nos jeunes

հետ, անցողակի ըսենք, լաւ յարաբերութիւններ ունէինք: Իւրաքանչիւր գիւղ ունէր իր եկեղեցին ու երկու վարժարաններ. դաստիարակութեան գործը, ինչպէս ըսինք, վստահուած էր զարգացած հոգեւորականներու, որոնք տեղաբնիկներ ըլլալով՝ հոգածութեամբ կը կատարէին իրենց պարտականութիւնը:

Խոտորչուրի մեր հայրենակիցներու ճակատագրով մտահոգուած՝ պատերազմի շղթայագերծումէն բաւական ետք միայն մենք իմացանք անոնց գլխուն եկած աղէտի մասին: Սուգի մատնուած եւ յուսահատ, հիմնեցինք «Տայքի հայոց միութիւնը» (Տայք պատմական անունն է մեր երկրամասին), որպէսզի հանգանակութիւն մը կատարենք մեր հայրենակիցներուն մէջ – որոնք մեծաթիւ են Ռուսիոյ մէջ – եւ օգնութեան հասնինք մեր դժբախտ տարագիրներուն: Դժուարութիւն չունեցանք նկատառելի գումարներ հաւաքելու համար եւ լծուեցանք տենդագին աշխատանքի: Հարկ էր նախ եւ առաջ գիտնալ թէ արդեօք վերապրողներ կա՞ն մեր տարագրեալներէն եւ ո՞ւր կը գտնուէին անոնք: Դժբախտաբար մեր բազմաթիւ դիմումները արդիւնք չտուին: Ապարդիւն մնացին նաեւ մեր տազնապահար կոչերը [Վատիկանի] Սուրբ Աթոռին եւ Փեթրոկրատի մէջ սպանական եւ ամերիկեան դեսպանատուներուն: Ամէն հաւանականութիւն հաշուի առնելով, բաւական մեծ գումար մըն ալ, դիւանագիտական ճամբով, դրկեցինք Կոստանդնուպոլսոյ ամերիկեան դեսպանատուն, որպէսզի յատկացնեն մեր վերապրողներուն, եթէ կային այդպիսիներ:

Միացեալ Նահանգներու դեսպանատունը ուղարկուած գումարը ստացած ըլլալու մասին միայն տեղեակ պահեց մեզ. եզրակացուցինք, հետեւաբար, որ բան չեն գիտեր մեր տարագրեալներուն վիճակուած ճակատագրի մասին:

Մինչ այս, մինչ այն, ռուսական զօրքերը գրաւեցին հայկական նահանգները: Խորհելով որ թուրքերը հոն չեն վերադառնար այլեւս, էրզրում դրկեցինք 200 խոտորչուրցի երիտասարդներ, վստահելով իրենց երկու առաքելութիւններ, – վերաշինել մեր աւերուած օճախներուն մէկ մասը, եւ, միաժամանակ, ռուսերու գրաւած շրջաններուն մէջ փնտռուքներ կատարել մեր դժբախտ տարագրեալներուն հետքերը գտնելու համար: Մեր «Միութիւնը» պարտականութիւն տուած էր նաեւ այս երիտասարդներուն, որ պաշտպանեն Խոտորչուրը եւ անհրաժեշտութեան պարագային, միանան հայ կամաւորական գունդերուն, որոնք ռուսերուն հետ միատեղ կը կռուէին հասարակաց թշնամիին դէմ:

Այդ օրերուն մենք բաւական մեծ գումարներ ծախսեցինք եւ մեզմէ շատեր տրամադիր էին երթալ ու վերահաստատուել մեր ծննդավայրը, երբ ռուս յեղափոխական բանակը, ամբողջովին կազմալուծուած, լքեց Հայաստանն ու Կովկասը եւ բռնեց Ռուսիոյ ճամբան:

Թրքական հակայարձակումը չուշացաւ. այս անգամ, ճակատը պաշտպանելու համար հայերը առանձին մնացած ըլլալով, մեր երիտասարդ հայրենակիցները

compatriotes se battirent dans les rangs des troupes arméniennes et plusieurs d'entre eux tombèrent sur le champ d'honneur. D'autres furent pris par les Turcs comme prisonniers et personnes n'a jamais su ce qu'ils sont devenus.

La nouvelle situation ne nous a pourtant pas désespérés et sitôt que nous apprîmes la bonne et heureuse nouvelle de la victoire des Puissances Alliées, "L'Union" a décidé d'envoyer une Mission en Turquie pour faire des recherches et venir au secours de compatriotes éventuellement échappés aux hécatombes...

Cette Commission, composée de sept personnes, se trouve ici depuis deux semaines. Par suite des investigations faites depuis notre arrivée, nous avons appris qu'il y a une cinquantaine d'orphelins et de femmes de Khodortchour à Eghine et à Ourfa. Il peut bien se faire qu'il y en ait d'ailleurs en Anatolie et dans les contrées occupées par les Alliés.

Pour assurer donc à notre Mission quelque chance de réussite, nous venons prier respectueusement Votre Excellence de vouloir bien:

- 1) Nous accorder des saufs-conduits, afin que nous puissions rechercher sans obstacle des orphelins et des déportés chez des musulmans, tant à Constantinople qu'à l'intérieur de la Turquie.
- 2) Intervenir auprès de qui de droit pour faire valoir nos justes réclamations en ce qui concerne la restitution de nos biens volés et la reconstruction de nos villages dévastés.
- 3) Obtenir le châtiement des coupables et des auteurs des atrocités.
- 4) Donner des ordres aux autorités militaires de l'Entente en Mésopotamie, Palestine, Syrie et Cilicie, pour que nous puissions ramasser sur un point tous nos rescapés et faciliter ainsi leur évacuation.
- 5) Prendre des dispositions spéciales, afin que les Directeurs des Orphelinats à Constantinople et dans les provinces, ainsi que les Autorités (La zone occupée comprise) et avec les représentants de "L'Union" au Caucase, en Crimée et ailleurs en Russie où nos compatriotes sont dispersés un peu partout.

Dans l'espoir que Votre Excellence, guidée comme toujours, par les sentiments humanitaires qui la caractérisent si bien, voudra bien faire bon accueil à notre requête, nous vous présentons, Excellence, avec nos très vifs et sincères remerciements, nos hommages respectueux.

Signé Le Président
Le Secrétaire
Les membres

Constantinople, le 1 Février 1919

կուռեցան հայկական գունդերու շարքերուն մէջ եւ շատեր անոնցմէ ինկան պատուոյ դաշտին վրայ: Ուրիշներ գերի բռնուեցան թուրքերէն եւ բնաւ չգիտցանք թէ ինչ եղան անոնք:

Նոր կացութիւնը, այսուհանդերձ, յուսահատութեան չմատնեց մեզ. անմիջապէս որ առիւնք Դաշնակից պետութեանց յաղթանակին ուրախ լուրը, «Միութիւնը» որոշեց պատգամաւորութիւն մը ուղարկել Թուրքիա, որպէսզի փնտռուքներ կատարէ եւ օգնութեան հասնի Ողջակիզումէն փրկուած մեր հայրենակիցներուն:

Եօթը հոգինոց այս յանձնախումբը երկու շաբաթէ ի վեր հոս կը գտնուի: Մեր ժամանումէն ետք կատարած հետազոտութեան շնորհիւ, իմացանք որ խոտորընդոցի մօտ 50 որբեր եւ կիներ կը գտնուին Ակնի եւ Ուրֆայի մէջ: Հաւանական է որ ուրիշներ եւս կը գտնուին Անատոլի եւ Դաշնակիցներու գրաւած միւս երկրամասերուն մէջ:

Մեր առաքելութիւնը յաջողութեամբ գլուխ բերելու համար, Զերդ Վսեմութեան պիտի խնդրենք որ՝

- 1.- Ապահովագիր-անցագրեր շնորհէք մեզի, որպէսզի կարենանք անարգել փնտռել, թէ՛ Կ. Պոլսոյ եւ թէ՛ Թուրքիոյ ներքին գաւառներու մէջ, մահմետականներու մօտ գտնուող որբերն ու տարագիրները:
- 2.- Միջամտել առ որ անկ է, որ կարենանք արժեցնել մեր արդար պահանջները ինչ կը վերաբերի կողոպուտած մեր ունեցուածքի վերադարձին եւ քանդուած մեր գիւղերու վերաշինութեան:
- 3.- Յանցաւորներու եւ ոճրագործութեանց հեղինակներու պատժումը:
- 4.- Հրամայել Միջագետքի, Պաղեստինի, Սուրիոյ եւ Կիլիկիոյ մէջ գտնուող Համաձայնականներու գինուորական իշխանութեանց, թոյլ տալ եւ դիւրացնել որ մենք կարենանք մէկ տեղ հաւաքել ու փոխադրել մեր փրկուած տարագիրները:
- 5.- Մասնաւոր միջոցներ ձեռք առնել, որպէսզի Կ. Պոլսոյ եւ գաւառներու որբանոցներուն տնօրէնները եւ իշխանութիւնները (ներառեալ գրաւուած երկրամասերուն) մեզ հետզհետէ տեղեակ պահեն խոտորընդոցի ազատեալներուն մասին:
- 6.- Իրաւունք շնորհել մեզի որ հեռագրով հաղորդակցինք երկրի ներսերը (ներառեալ գրաւուած շրջանը) եւ Կովկաս, Խրիմ ու Ռուսիա գտնուող մեր «Միութեան» անդամներուն հետ:

Յուսարով որ Զերդ Վսեմութիւնը, առաջնորդուած, ինչպէս միշտ, գինք յատկանշող մարդկայնական զգացումներէն, պիտի ուզէ ընդառաջել մեր խնդրանքին, կը ներկայացնենք Զեզի, մեր խորին ու անկեղծ շնորհակալութեամբ հանդերձ, մեր յարգալի մեծարանքը:

Ստորագրութիւնք
Նախագահի, ատենադպրի եւ անդամներու
Կոստանդնուպոլիս, 1 Փետրուար 1919

Դ. ՏՐԱՊԻՉՈՆ – ԿԻՐԱՍՈՆ

Փաստ. 883-15

Դ 1.– ԻՆՉՊԷՍ ԲՆԱՋՆՁՈՒԹՅԱՆ ՏՐԱՊԻՉՈՆԻ ՀԱՅԵՐԸ

15 Մայիս 1915.— Տոբթ. Պեհաէտտին Շաքիրի եւ Նազըմի այցելութեանէն ետք, Տրապիզոնի մէջ կ'իմացուի Երզնկայի հայերուն տեղահանութիւնը:

27 Մայիս 1915.— Իշխանութիւնները կը գրաւեն հայոց ունեցած գէնքերը: Այդ միջոցին, հայ երեւելիները կը դիմեն կառավարութեան՝ յայտարարելով որ հայերը իրենց ամբողջ ունեցուածքը եւ տուները կը յանձնեն կառավարութեան, պայմանաւ որ ոստիկան զօրաց հրակողութիւն հաստատուի իրենց [Թաղերուն վրայ]: Կառավարիչը վստահեցուց որ իրենք պիտի չտարագրուին:

22 Յունիս 1915.— Իշխանութիւնները կը ձերբակալեն բոլոր հայ մտաւորականները, թուով 35-40 հոգի: Վերջիններս, երկու օր բանտ պահուելէ ետք, առաջատանաւ կը հանուին, կը սպաննուին ջուրին բացերը եւ ծով կը նետուին:

30 Յունիս 1915.— Իշխանութիւնները կը սկսին տարագրել լուսաւորչական հայերը, եւ կը յայտարարեն որ կաթողիկէ եւ բողոքական հայերը անհանգստանալու պատճառ չունին բնաւ:

3 Յուլիս 1915.— Կաթողիկէ եւ բողոքական հայերը

յանկարծ հրահանգ կը ստանան իրենք եւս մեկնելու: Խեղճերը ժամանակ չեն ունենար իրենց հետ տանելու անհրաժեշտ իրեղէնները:

Առաջին կարաւանը կը հասնի մինչեւ Տոգտապան, ուր կը ջարդուի. երկրորդ եւ երրորդ կարաւանները կը հասնին մինչեւ Քեմախ, ուր նոյնպէս կը կոտորուին: Տրապիզոնի հայերէն միայն պր. Կայծակ Արապեան կանացի ծպտումով կը հասնի Դամասկոս, ուր կը մեռնի ժանտատենդէ:

Գլխաւոր պատասխանատուները.—

Ճեմալ Ազմի, կառավարիչ, «ճիւղաղ եւ մարդակեր»:

Նայիլ, Միտլիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան քարտուղար:

Ռիզա, օգնական Նայիլի:

[Կը հետեւի անուաններ, որոնցմէ] Քիրզատէ Շէֆքի եւ իր փեսան Մուսթաֆա, որ շատ մը հայ վաճառականներու ապրանքներուն տիրանալէ ետք, եկած ու հաստատուած է Կ. Պոլիս, Կալթա, Միկուրթա խան, գերմանական Օրիենթ պանքի յարկին վերեւ:

Փաստ. 883-84դ

Դ 2.– ԱՐԻԻՆԱԼԻ ԷՋԵՐ ՏՐԱՊԻՉՈՆԵՆ

Հայ յեղափոխականներ փնտուելու պատրուակով, տեղական իշխանութիւնները բանտ կը նետեն Տրապիզոնի անուանի հայերը:

Իշխանութիւնները լուր կը տարածեն որ՝ Գարակէօզեան վեց եղբայրները, Սարեան երեք եղբայրները, Յակոբ Քեչիչեանը եւ Սեդրակ Եսայեանը աքսորուած են ծովու ճամբով:

Ձերբակալուածներու ծնողները, այս ըսի-ըսաւներէն խաբուելով, սպիտակեղէն եւ վերմակներ կը պատրաստեն եւ յաջորդ օր ծովափ կ'երթան որպէսզի վերջին անգամ մը տեսնեն իրենց հարազատները: Շուտով կը

հասնին կալանաւորները, մէկը միւսին կապկպուած, բայց ամէն յարաբերութիւն արգիլուած է անոնց հետ:

Ժանտարմները կ'արգելին սպիտակեղէնի յանձնումը, ըսելով որ անոնց պէտք պիտի չունենան:

Գիշերանց բոլորը ծով կը թափուին:

Քիչ անց, կը ձերբակալեն հայոց առաջնորդ Գէորդ Թուրեան [վարդապետը] եւ էրզրումի պատերազմական ատեան տանելու պատրուակով՝ սպաննել կու տան գայն իր կառքին մէջ իսկ, էսդանա-Կիւմիւլիւշխանէ ճամբուն վրայ:

Փաստ. 883-67ր

Դ 3.- ԻՆՉ ԿՄՐԺԵՆ ՀԵՐՔՈՒՄՆԵՐԸ
(Քաղաւած «Renaissance»էն)

Տրապիզոն, Կարմիր Խաչի հիւանդանոցին մէջ կը գտնուին շատ մը հայ տիկիներ եւ ծերունիներ: Նահանգին առողջապահական բաժնի տեսուչը՝ Ալի Սալիպ պէյ յաճախ հիւանդանոց կ'այցելէր: Տասնեակ մը տարիներ Փարիզ աշխատած բժիշկ մը, այսուհանդերձ ճիւղ մը:

Սրահին մէջ հիւանդ մը կար՝ օրիորդ Սուրէնեան: Օր մը հիւանդանոցին մէջ ծառայող թուրքերը սրուակի մը պարունակութիւնը խմցուցին իրեն: Անմիջապէս յետոյ, հիւանդ օրիորդը կողորդի ցաւեր զգաց: Հիւանդապահներ մածուն տուին իրեն, ինչ որ բարելաւում առաջացուց: Յաջորդ օրը, նոյն դեղաջուրէն խմցուցին. աղջիկը տեղույն վրայ շունչը փչեց:

Միեւնոյն ճակատագիրը ունեցաւ կաթողիկէ հայուհի մը, իբր հետեւանք դարմանումի նոյն միջոցին: Հաստատեցինք որ անմիջական մահացումի նման դէպքեր

կը պատահէին նաեւ միւս սրահներուն մէջ:

Այս նոյն բժիշկը հիւանդանոցէն դուրս փոխադրել տուաւ տիկին Արաքսի Եսայեանը՝ յղի վիճակով, զոր ուրիշ կնոջ մը հետ նաւակ մը դրած տարին ծովուն բացերը եւ ալիքներուն յանձնեցին երկուքը:

Այս դէպքը կը պատահէր հայոց տարագրումէն մէկ ու կէս ամիս ետք: Խեղճ Արաքսին մինչ այդ հագիւ ազատած էր իրեն դէմ կատարուած հետապնդումներէն:

Ուրիշ օր մը, հիւանդանոց բերին հայ մանուկներով լի կողով մը: Այս փոքրիկ արարածներուն մէկ մասը կիսամեռ վիճակի մէջ էին, ուրիշներ արդէն խեղդուած:

Միեւնոյն այս բժիշկը, փոխանակ խնամելու այս խեղճուկ մանուկները, նետել տուաւ զանոնք հիւանդանոցին մէկ անկիւնը, ուր բոլորը մահացան:

Փաստ. 883-40

Դ 4.- ԿԻՐԱՍՈՆԻ ՀԱՅԵՐՈՒՆ ԲՆԱԶՆՁՈՒՄԸ
(ՓԱԽՍՏԱԿԱՆ ԿՆՈՋ ՄԸ ՊԱՏՈՒՄԸ)

1915 թ. Յունիս ամսուն է որ Կիրասոնի բոլոր հայերը ձերբակալեցին. առաջին նշանն էր հայերու դէմ նիւթուած դաւադրութեան: Սարսափի մատնուած կիները դիմեցին կառավարութեան, որ ժամանակաւորապէս ազատ թողուց բանտարկեալները՝ այն խոստումով, որ նշանակուած օրը պատրաստ պիտի ըլլան մեկնելու:

Քանի մը օր ետք, ծանուցուեցաւ, որ բոլոր հայերը պիտի հեռանան քաղաքէն: Մեզի հետ վերցուցինք մեր դրամն ու գոհարեղէնները:

Տարագրութիւնը սկսաւ: Մեր կարաւանը, որ չորրորդն էր, կը բաղկանար 1500 հոգիէ, որոնց 500-ը տղամարդիկ էին: Երկու օր անց հասանք Տարքէոյ, ուր 30 պառուսներ առանձնացնելով հրացանագարկ ըրին: Սարսափը մեր հոգիներուն, շարունակեցինք մեր ճամբան: Երրորդ օրը հասանք Իքի-սու: Կարաւանը առաջնորդող հրամանատար սպան հրահանգեց տղամարդիկը անջատել. 80 ժանտարմներով շրջապատուած՝ անոնք զրկուեցան էյրիսէլ լեռը: 24 ժամ անց, երեք ժանտարմներ վերադարձան եւ ըսին մեզի. «Ուրախ եղէք, եթէ դրամ տաք մեզի, ձեր ամուսինները պիտի

վերադառնան. այսպէս է Կիրասոնի իշխանութեանց հրամանը»: Տուինք դրամով ու գոհարեղէններով լի մեր թաշկինակները: Բայց մեծ եղաւ մեր յուսախաբութիւնը երբ միայն 8 հայեր վերադարձան...

Հինգերորդ օրը հասանք էյրիսէլ, որ սպանդին թատրն էր հանդիսացած. ժանտարմները շնականօրէն յարեցին. «Ահա ձեր դիակները»...

Շապին Գարահիսարի մէջ կողոպտուեցանք թուրք խուժանէն: Յաջորդ օր վրանաբնակ քիւրտերու գիւղի մը մէջն էինք: Գիշերը քիւրտերը մեծ խարոյկ մը վառեցին, սպառնալով մեզ կրակին մէջ նետել եթէ 2-300 ոսկի չտայինք. եւ իրողապէս գիւղացի տղեկ մը նետեցին բոցերուն մէջ. սարսափահար այս տեսարանէն՝ հաւաքեցինք եւ քիւրտերուն յանձնեցինք մեր մօտ մնացած դրամը:

Առաւօտուն կը հասնինք Գայլ գետի ափերուն. քիւրտերը առեւանգեցին մեր կարաւանին սիրուն աղջիկները: Արգիլուեցաւ մեզի անցնիլ գետին կամուրջէն. շատեր խեղդուեցան ալիքներուն մէջ: Ես եւ ընկերուհիներէս մէկ քանին լողալով ճեղքեցինք գետը: Երբ Ածպտեր հասանք, հրամանատար Հասան Սապրի 8 հայեր զա-

տեց, ծնրադրել տուաւ զանոնք ու հրացանի բռնել տուաւ, ապա կիսամեռ վիճակի մէջ զանոնք նետել տուաւ նախօրօք փորուած փոսի մը մէջ:

Ներկայիս այս ճիւղը կը պտտի մայրաքաղաքի փողոցներուն մէջ:

Երբ Քաւաքը կոչուած քարանձաւը հասանք, շրջապատուեցանք Կիրասոնէն եկած ոճրագործներով. ասոնցմէ ամէնէն նշանաւորներն էին՝

– Սարը Մահմուտգատէ Էշրէֆ եւ եղբայրը Հասան, որոնք հարստացան հայերու պատկանող ունեցուածքով: Այժմ առեւտուրով կը զբաղին Կոստանդնուպոլսոյ մէջ: Կը բնակին Բերա, Շիշլի, Հաճի Մանսուր խան, թիւ 28:

- Քեթիպ Ահմէտ
- Քեմալ, ոստիկան զօրաց հրամանատար
- Հագարապետ Ֆայիք
- Սպայ Օսման եւ իր եղբայրը

Այս ճիւղները կողոպտեցին եւ ողորմելի վիճակի մատնեցին մեզ: Թալանէն զատ, սրիկայուլթիւնը ունեցան գոհարեղէն ու դրամի փնտռուածք կատարելու կիներու մարմիններուն մէջ...

25 օր քալելէ ետք, յոգնած եւ ուժասպառ կը հասնինք Քուրու-Չայ, ուր ոչ մէկ հայ մնացած էր: Քիչ մը հեռուն, հագարաւոր դիակներ նշմարեցինք: Մեզի ընկերացող ժանտարմները մեղուի փեթակներ կը շրջեն մեր վրայ. մեղուախոտմբը կը յարձակի մեր վրայ, եւ ոճրագործները կը ծիծաղին յիմարաբար... Այս գիւղէն

քանի մը ժամ հեռու գտնուող գիւղին մէջ, մեզի ընկերացող գայմագամը իր հրացանը պարպեց, իսկոյն տղամարդ, կին ու մանուկ քիւրտեր՝ կացիններով, սուրերով, մանգաղներով ու բիրերով գինուած, յարձակում գործեցին մեր վրայ. եւ սկսաւ սպանդը: Մեր կարաւանը, որ զանազան գիւղերէ հաւաքուած 500 հոգիէ կը բաղկանար, այնպէս ջարդուեցաւ, որ միայն 40 հոգի ազատեցաւ:

Վերստին ճամբայ կը հանուինք եւ կը հասնինք Տեմիր-Մաղարա կոչուած քաղաքը, որուն «հայերու սպանդանոց» անունը տուին թուրքերը: Իրողապէս հագարաւոր հայեր խողխողուած էին հոն: Միեւնոյն օրը հասանք Եփրատի կամուրջը: Պահակը դրամ պահանջեց, այլապէս սպառնաց գետը թափել մեզ: Արդարեւ, մեզ համոզելու նպատակով, 25 տարու հայ երիտասարդ մը նետեց գետին ալիքներուն մէջ: Բարբախտաբար Երզնկայի ու այլ գիւղերու հայ տարագրեալները վճարեցին պահանջուած փրկագինը: Եփրատի ափերուն դադար առած ժամերու ընթացքին գետին ալիքներուն մէջ ծփացող հագարաւոր դիակներ տեսանք:

Մեր մեկնումի 38րդ օրը հասանք Ակն: Թրքական որբանոցին մէջ 500 հայ տղաք կը գտնուէին: Այս բոլոր դժբախտ որբերը մահացան թունաւորուած՝ բժիշկին եւ դեղագործին կարգադրութեամբ...: Դիակները նետուեցան Եփրատի մէջ: Այս բժիշկը, որուն անունը կ'անգիտանամ, անամօթաբար յայտարարեց. «հայերը երկիր չունին. իրենց գերեզմանը Եփրատն է»:

Ե. ՍԵՔԱՍՏԻԱ – ՍԸՎԱԶ ՆԱՀԱՆԳ

Փաստ. 883-31

Ե 1.– ՍԸՎԱԶԻ ԱՊԱԳԱՅ ՍԱՐՍԱՓՆԵՐՈՒՆ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԸ

13 Ապրիլ 1913-ին, Մուսամբէր նշանակուեցաւ Սըվազի վալի: Նախապէս եղած էր Ղանղալի եւ Ազիզիէի գայմագամ, Կեսարիոյ կառավարիչ եւ Ատանայի ու Գոնիայի վալի:

Սըվազ ժամանելուն առաջին օրերէն դիւրին էր հաստատել որ թշնամական կեցուածք ունի հայերուն նկատմամբ: Հայերու բարգաւաճ կեանքը, անոնց տնտեսական եւ առեւտրական գործունէութիւնը կը գրգռէին իր նախանձը, եւ այդ մասին ան բացայայտօրէն կ'արտայայտուէր:

Նախ ուզեց տնտեսապէս քայքայել հայերը: Անոնց տնտեսութիւնը տկարացնելու նպատակով՝ կազմակերպեց արհեստակցական եւ առեւտրական թուրք համագործակցական միութիւններ: Հակահայ շրջապտոյտով մը, անձնապէս գնաց Ազիզիէ, ուր առեւտուրի գործը բացառապէս հայերու ձեռքը կը գտնուէր. համագործակցական միութիւններ կազմակերպեց հոն, եւ թուրքերուն արգիլեց առեւտուր ընել հայերուն հետ: Միեւնոյն նպատակով, քանի մը հոճաներ (որոնց անունները յիշուած են Սըվազի ոճրագործներու ցանկին մէջ) քարոզներ խօսեցան. միեւնոյն այս հոճաները շուտով արդէն ջարդի յորդորներ պիտի կարգային:

1913 թ. Օգոստոս ամսուն, գայմագամին հրամանով ինտերէնս դիւրին մօտ սպաննուեցաւ ամերիկացի միսիոնար Հոլլարակը: Քաղաքային եւ դատական իշխանութիւնները հայերը ամբաստանեցին իբրեւ հեղինակ այս ոճիրին: Ոճրագործը կառավարութեան վարձկան թուրք մըն էր:

1914-ի գարնան, երբ Թորգոմ եպիսկոպոս տակաւին Սըվազի առաջնորդն էր, Մուսամբէր ցոյց տուաւ իր կոյր մոլեռանդութիւնը: Օժանդակ կանգնեցաւ թուրքերուն եւ անոնց անունին արձանագրել տուաւ Խանձարի եւ Խորսանայի հայ համայնքներուն պատկանող մարգերը: Ամէն բողոք ապարդիւն անցաւ: Ս. Նշանի վանքին պատկան հողերուն վրայ ուզեց գորանոց եւ ուրիշ շէնքեր կանգնեցնել: Արգիլեց հայերուն իրենց մեռելները թաղել եկեղեցիի կողքին գտնուող եւ Հողդար կոչուող բլուրին վրայ, որպէսզի այդ հողամասը դադրի այլեւս հայկական ստացուածք ըլլալէ:

Ընդհ. պատերազմի սկիզբներուն, թուրքերը գէշ աչքով կը նայէին հայերուն: Հայերուն համար անըմբռնելի էր այս թշնամական զգացումը, նկատի ունենալով

որ լրիւ կը կատարէին իրենց պարտաւորութիւնները:

Հայ առեւտրականներու ապրանքները բռնագրաւեցան: Հայոց շէնքերը զինուորականներու տրամադրուեցան, ինչպէս նաեւ Ս. Սարգիս եղեղեցին՝ որպէս բնակարան զինուորներու:

Ձինուորական ծառայութենէ գերծ մնացած հայերը ստիպուեցան աշխատիլ Կարմիր-Խաչին համար: Գրաւեցան հայկական բոլոր հանրօգուտ շինութիւնները:

Արամեան եւ Սանասարեան վարժարանները լեցուեցան զինուորներով եւ պատերազմական գերիներով:

Վալին ճնշեց հայ մտաւորականութիւնը: Ջնջուեցաւ ազգային պատմութեան դասաւանդումը. պարտադիր դարձուցին թուրք լեզուի ուսուցումը մինչեւ իսկ տարրական դասարաններուն մէջ:

Քաղաքէն դուրս, գիւղերուն եւ գաւառին մէջ սարսափ կը տիրէր:

Դասալիքները բռնելու եւ խուզարկութիւն կատարելու պատրուակին տակ, կողոպուտն ու հալածանքը սովորական դէպք դարձաւ:

Պեզիրճի թաղեցի թուրք մը աղջիկ մը առեւանգեց եւ բռնաբարելէ ետք ստիպեց որ կրօնափոխ դառնայ:

Վալին արգիլեց Ս. Խնդրակատար եկեղեցւոյ վերանորոգումը:

1914 թ. Դեկտ. 10ին, Սըվազ եկաւ 1200 չեթէներէ բաղկացեալ վոհմակ մը: Թրքութիւնը խանդավառ ընդունելութիւն ցոյց տուաւ այս աւազակներուն: Միլիթի նախկին աշակերտ սպայ Իպրահիմ եւ կայսերական ազարակներու փոխ-տնօրէն Ալթա պէյ կ'ընկերանային այս չեթէներուն: Սպայ Իպրահիմ գրգռիչ ճառ մը խօսեցաւ քաղաքապետարանին դիմաց, ապա էրգրում մեկնեցաւ արիւնարբու վոհմակը. իրենց ճամբուն վրայ գտնուող հայ գիւղերը թատր դարձան ոճրագործութեանց, կողոպուտի եւ բռնաբարումներու:

1914 թ. Դեկտ. 20-ին, Սըվազ ժամանեցին Գնէլ Գալեմքէրեան սրբազանը եւ Երզնկայի առաջնորդական փոխանորդ Սահակ Օտապաչեանը:

1914 թ. Դեկտ. 31ի երեկոյեան, Սու-Շէհիրի մօտ, մեծ պողոտային վրայ սպաննուեցան առաջնորդական փոխանորդ Սահակ Օտապաչեանն ու իր կառապանը: Սու-Շէհիրի քահանան առ որ անկ է հաղորդեց սպանութեան պարագաները:

Սըվազի առաջնորդ Գալեմքէրեան սրբազան անմի-

ջապէս ներկայացաւ վալիին, որ հետեւեալը պատասխանեց իրեն.

«Մենք պաշտօնական ոչ մէկ տեղեկութիւն ունինք. ստով մէկտեղ անմիջապէս կը հեռաձայնեմ եւ պատասխանը կը հաղորդեմ ձեզի»:

Յաջորդ օր, ոստիկանապետ Ռիֆաթ պէյ եւ ոստիկան զօրաց հրամանատար Խալիլ պէյ առաջնորդարան գացին ոճիրին մասին իրազեկուելու համար:

Հայ համայնքը բուռն անձկութեան մատնուած էր: Սպանութիւնը քաղաքական բնոյթ ունէր: Վալին էր ընտրած ոճրագործները: Չեթէյապետ Խալիլ պէյ ինք էր՝ իր ընկերներուն հետ, ոճիրին հեղինակը: Մուամմէրի բնակարանէն է որ Խալիլ մեկնած էր սպանութեան համար ճշդուած վայրը: Իր ընկերակիցներն էին՝ Մուամմէրի ծառայութեան մէջ գտնուող Ճելալ, Էմիր փաշայի որդին, Համիտ (ներկայիս Կեմերէկի կառավարիչ), Սաճանաք Օղլու Էտհէմ, Քութուս Օղլու Հիւսէին եւ Ջարայը Մահիր (վերջինս ոճրագործ մըն էր, 15 տարուան բանտարկութեան դատապարտուած եւ Մուամմէրի կողմէ ազատ արձակուած):

Այս չարագործները ամէնէն չարաղէտ արարքները գործեցին 1915 թ. Յուլիսի կոտորածներու ժամանակ. Ղանդալ — Մալաթիա ճանապարհին յատկապէս, անոնք գործեցին ամէն կարգի կողոպուտ, սպանութիւն եւ զազանութիւններ:

1915 թ. Յունուարին, Երզնկա — Սրվազ ճանապարհին վրայ սպաննուեցան բազմաթիւ հայ զինուորներ:

Նոյնպէս, 1915-ի սկիզբներուն հալածանքներ սկսած էին հայ զինուորներուն դէմ: Դժբախտ զինուորները զինաթափ եղան եւ չարաչար աշխատանքի դրկուեցան ամելէ թապուրիներու մէջ, սոված, կիսամերկ եւ դատապարտուած տարապարհակ աշխատանքի: Մինչեւ իսկ մտաւորական մարդոց կը պարտադրուէր ծանր բեռներ շալկել կամ ճամբաներու քարերը կտտրել: Նպատակ ունէին քայքայել հայերը՝ բարոյապէս, ֆիզիքապէս, տնտեսական գետնի վրայ...

1915-ի Յունուարի վերջերուն, գիշեր մը մեծ յուզում պատեց քաղաքը: Թուրքերը կ'ամբաստանէին հայերը որ թունաւորած են թուրք զինուորներու հացը: Բոլոր հացագործները եւ բազմաթիւ հայ զինուորներ ձերբակալուեցան: Մուամմէրի նպատակն էր թուրք խուժանի գայրոյթին յանձնել հայերը: Ջրոյց չըջան ընել կու տար որ այդ հացը ուտող շունները մեռած են:

Սուտը երեւան ելաւ:

Մուամմէր ճարտար էր դաւեր սարքելուն մէջ: Քաղաքապետարանի հրապարակը բերին Հողդարի մօտերը գտնուած եւ կտոր-կտոր եղած դիակ մը եւ ամբողջ 24 ժամ հոն ցուցադրեցին: Կառավարութիւնը այս սարսափազդու ցուցադրութիւնը կը կատարէր որպէսզի թուրքերը գրգռէ հայերուն դէմ:

Նահանգապետ Մուամմէր շարունակ կը խորհրդակ-

ցէր իր արբանեակներուն հետ,— Տոքթ. Ֆազլի Պարքի, երեսփոխան Քասիմ, Կամի պէյ, Գուլազաի Ալի էֆէնտի եւայլն, որոնց հետ միասին ամիսներէ ի վեր կը մշակուէր հայոց բնաջնջումը: Կը ճշդուէին նաեւ ծրագրի գործադրութեան անհրաժեշտ միջոցառումները:

1915 թ. Մարտ ամսուան սկիզբներուն, Մուամմէր 4000 ժանտարմներ մարզեց: Գունդը բաղկացած էր Տերենտէի քիւրտերէ, չեթէներէ, դարափափախներէ եւ զօրացրուած ոճրագործներէ. ժանտարմներու երկու հազարը Սրվազի համար էր, իսկ մնացեալը չըջակայ գիւղերուն:

1915-ի գարնան, կառավարութիւնը գէնքերը հաւաքելու հրաման արձակեց այն պատճառաբանութեամբ որ պէտք ունի անոնց, սպառնալով Պատերազմական ատեանին յանձնել անաստողները: Շատ մը հայեր յանձնեցին իրենց գէնքերը. նոյնը ըրին թուրքերը պարզապէս երեւոյթները փրկելու համար, որովհետեւ գէնքերը շուտով ետ տրուեցան իրենց:

Կառավարութիւնը ցուցադրութեան դրաւ հայոց գէնքերը. անոնց վրայ աւելցնելով նաեւ կառավարական գէնքեր, լուսանկարել տուակ զանոնք՝ թուրք խուժանը գրգռելու նպատակով: Միեւնոյն ժամանակ Բարձր Դրան յղեց տեղեկագիր մը, ուր հայերը կ'ամբաստանուէին իբրեւ դաւաճաններ:

Մուամմէր ճիզ չէր խնայեր հայերու դէմ դաւեր սարքելու եւ զանոնք կազմալուծելու համար:

Ռուս պատերազմական զերիններուն մէջ կային նաեւ հայեր:

Պատրուակ բռնելով որ հայ սպայ մը փախուստ տուած է, թուրք իշխանութիւնները կը սկսին հետապնդել եւ ձերբակալել հայեր (հայ սպայի մը փախուստին լուրը սուտ էր, որովհետեւ ռուս սպաները կը պնդէին որ պատերազմական զերիններէն ոչ ոք փախած է):

1915 թ. Մարտի 15ին, ձերբակալուեցան Մանուկ Պէյ-լէրեանը եւ Յուլալ Համբարձումեանը: Մուամմէրի մօտ հրաւիրուեցան երեւելի ուրիշ հայեր, ինչպէս՝

- Վահան Վարդանեան — դաշնակցական
- Յարութիւն Վարդիկեան — »
- Տ. Փոլատեան — »
- Մուրատ (Խորոխոնցի) — հնչակեան
- Տեվէ Տիգրան — »
- Նալպանտ Օհաննէս
- Նշան Մոսկովեան
- Միքայէլ Գաբրիէլեան — վիլայէթի թարգմաններէն

Այս հրաւիրեալները բանտ նետուեցան: Միեւնոյն օրը հրաւիրուեցաւ նաեւ Մուրատ¹, որ չինկաւ լարուած

1.- Խօսքը Սեբաստացի ծանօթ հայրուկապետ Մուրատի մասին է (Խրիմեան):

Թակարդին մէջ: Գալեմքէրեան սրբազան ի զուր բողոք բարձրացուց: Հայ գինուորական բժիշկ Տոքթ. Հայրանեան խնդրեց բանտարկեալներու ազատ արձակումը: Յանդուզն այս միջամտութեան համար բժիշկը վրայ տուաւ իր կեանքը:

Բոլոր այս կալանաւորները, ինչպէս նաեւ Սըվազի շրջակայ գիւղերէն շատեր, ճամբայ հանուեցան իբր թէ Եոզղատ՝ պատերազմական ատեան տարուելու, բայց սպաննուեցան անոնք Եէնի խանի եւ Եոզղատի միջեւ, ուրկէ կառավարութիւնը հեռագրեց, որ տարագրեալները ողջ եւ առողջ տեղ հասած են:

1915 թ. Ապրիլի սկիզբը, Սըվազի եւ շրջակայքի մէջ հալածանքները հասած էին իրենց ծայրագոյն սաստկութեան:

Իշխանութիւնները ձեռք առած էին ամէն միջոց՝ Սըվազի եւ հարեւան գիւղերու միջեւ հազորակցական կապը անկարելի դարձնելու համար: Ոչ ոք գիտէր թէ ինչ տեղի կ'ունենայ մէկ ժամ հեռու գտնուող գիւղի մը մէջ:

Ապրիլ եւ Մայիս ամիսներուն, սկսաւ գիւղերու կոտորածը: Երեւելի հայերը կը ձերբակալէին, ըսելով որ «Սըվազի իշխանութիւնները կը պահանջեն ձեզ, բայց հազիւ գիւղէն հեռացած, բոլորը կը սպաննուէին անգթաբար: Հազիւ քանի մը հոգի հասան Սըվազ դատուելու համար:

Քաղաքին մէջ ամէն տեղ, ամէն փողոցի անկիւն ժանտարմները կը հսկէին, ոչ ոք կրնար մօտենալ կալանաւորներուն: Քաղաքը սգաւոր երեւոյթ զգեցած էր:

Ժանտարմները շրջապատեցին ամերիկեան վարժարանը, դասալիքները փնտուելու պատրուակին տակ եւ երբ չգտան այդպիսիք, խրեցին գիրքեր ու ձերբակալեցին գինուորական տարիքի մէջ չգտնուող աշակերտներ:

Շատ պարզ էր. պէտք էր հալածանքի ենթարկել բոլոր հայերը, անգթօրէն եւ առանց բացառութեան:

Մուամմէր արտակարգօրէն աշխոյժ էր. այցելութիւններ կու տար, ժողովներու կը նախագահէր եւ դէպի Մարզուան, Ամասիա, Թոքատ եւայլն հրամաններ կ'արձակէր:

Փաստ. 883-73

Ե 2.- ՍԵՔԱՍՏԻՈՅ ՍԱՐՏԻՐՈՍՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ
(Մերաստիոյ առաջնորդ Գնէլ եպս. Գալեմքէրեանի տեղեկագրէն քաղուած)

Հետեւեալ դէպքը յստակ պատկերացում կու տայ, զօրաշարժի վաղորդայնին, հայերու նկատմամբ թուրքերու մտայնութեան մասին:

Օր մը, քաղաքին մէջ շրջան ըրաւ զգայացունց լուր մը, ըստ որուն թրքական բանակի հայ հացագործներ թունաւորած են գինուորներու հացը: Թուրքերը կատուած էին:

Նահանգապետ Մուամմէրին եւ հրամանատար Փերթեւ պէյին գացին անոնք եւ վճռական եղանակով հաստատեցին լուրը, աւելցնելով որ այդ հացը ուտող շունները սատկած էին: Պահանջեցի որ հարցի լուսաբանման համար քննութիւն մը բացուի:

Այս նպատակով կազմուած յատուկ յանձնախումբ մը հաւաքեց եւ կնքեց կասկածի տեղիք տուող բոլոր հացերը: Այդ հացը ուտող շուններուն եւ նապաստակներուն վրայ թունաւորման ոչ մէկ նշան տեսնուեցաւ:

գինուորներուն մէջ եւս թունաւորման պարագայ չէր յայտնուած: Յայտարարուեցաւ լուրին բոլորովին յերիւրածոյ եւ սխալ ըլլալը: Այս միջադէպէն ետք, բանտ տարուած հայերը ազատ արձակուեցան, եւ հայ ազգաբնակչութիւնը հանգստացաւ:

Սակայն, վալիին հետապնդած նպատակը իրականացած էր արդէն եւ հայերու նկատմամբ՝ թուրքերու թրշնամանքը սպառնական բնոյթ ստացած: Թուրքերը կ'ըսէին. «Իրենց եպիսկոպոսին՝ Սահակ եպիսկոպոս Օտապաչեանի սպանութեան վրէժը լուծելու համար, հայերը թունաւորեցին հազարաւոր մահմետական գինուորներ»:

Իրականութիւնը այն էր որ Տոքթ. Համտի պէյ, քաղաքին շունները անհետացնելու համար, դիմած էր պարզապէս գանոնք թունաւորել տալու միջոցին:

Փաստ. 883-69

Ե 3.- ՍԵՔԱՍՏԻՈՅ ՀԱՅԵՐՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆԸ

Վիրայէթի հայերուն բնաջնջման մասին Իթիֆհատի կեդրոնէն եկած հրամանին վրայ, Սեբաստիոյ մէջ վալի Մուամմէրի նախագահութեամբ ժողով մը գումարուեցաւ: Ներկայ էին ոստիկան զօրաց հրամանատար Խալիլ պէյը, ժանտարմներու հարիւրապետ Ալի Շեքէթ պէյ, ոստիկանապետներ Ռիֆաթ պէյ եւ Ճելալ պէյ, քննիչ էմին պէյ, հաշուապահական գրասենեակի քննիչ Խատրի պէյ եւ ոստիկանական կոմիսար Մահմուտ պէյ:

Այս ժողովին մէջ կազմուած ծրագիրը տառացիօրէն գործադրութեան դրուեցաւ Մուամմէր պէյի կողմէ, որ այս արիւնայի սպանդին մէջ ցոյց տուաւ ապշեցուցիչ ճարտարութիւն մը:

1915 թ. Յունիս 3, Չորեքշաբթի օր հարիւրաւոր ժանտարմներ ու ոստիկաններ ձերբակալեցին վաճառատուներու եւ արհեստանոցներու մէջ իրենց գործով զբաղող հայերը: Անոնք որ խուսափած էին այս զանգուածային ձերբակալութիւններէն՝ հետապնդուեցան ու կալանաւորուեցան: Այս խստութեամբ հետազօտում տեղի ունեցած չէր երբեք:

Յունիս 10-ի առաւօտեան, հրապարակուեցաւ ազգ մը, ըստ որուն հայերը պիտի տարագրուէին Մուսուլ: Հայերը պէտք է լքէին քաղաքը: Կարաւանները ճամբայ հանուեցան դէպի Մալաթիա: Մուամմէրի կողմէ կազմուած չեթէներու վոհմակը, որուն մէջ կը գտնուէին ոստիկանական կոմիսար Մահմուտ պէյ, Խալիլ պէյ, Պահանաք Օղլու-էթհէմ, գառացի Մահիր պէյ, Քիւթիւք Հիւսէյն (Մահակ Օտապաչեան վարդապետի եւ այլ քահանաներու ծանօթ ոճրագործը), Համիտ պէյ (էմիր փաշայի որդին), Ճիզմեճի Հաճի, կը խուժեն կարաւաններուն վրայ: Կատարեալ կողոպուտ մը կը սարքուի: Պահուած ոսկիներ փնտռելու համար, չեթէները կը ճեղքեն կիներու փորերը. յղի կիներու արգանդը ճեղքելը գուարճալի զբաղում դարձաւ չեթէներուն համար: 10-12 տարեկան տղաքը կը գատուին որպէսզի բազմանայ մահմետականներու թուաքանակը: Վերապրողները, սուրհներու եւ ժանտարմներու սպառնալիքին տակ, կը քշուին Մալաթիա եւ աւելի հեռուները:

Կալանաւոր հայերը, կանխօրօք բաժնուած 200-300 հոգինոց կարաւաններու եւ 10-15 ժանտարմներու ուղեկցութեամբ, կը տարուին քաղաքէն 3 ժամ հեռու գտնուող ագարակ մը, եւ անասելի կատաղութեամբ կը սպաննուին ճելալի ղեկավարութեան տակ գտնուող չեթէներու վոհմակին կողմէ:

Գլխաւոր ջարդարարներն են՝ Իթիֆհատի պատասխանատու քարտուղար Կանի պէյ, Շեքէր Օղլու Իսմայիլ, Խալիլ պէյ, Սոպաճի Շիւքրի, Սուլթանիէ վարժարանի տնօրէն Քեամիլ պէյ, Արհեստից վարժարանի տնօրէն Ջիա եւայլն:

Փաստ. 883-77ա

Ե 4.- ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՕՏԱՊԱՇԵԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

(ԳՈՒԼ ԵՍՍ. Գալեմքերեանի տեղեկագրէն)

Մահակ վարդապետ Օտապաչեան, դէպի Երզնկա ճամբորդութեան ընթացքին, 1914 թ. Դեկտեմբեր 18-ին, գահանաբար սպաննուեցաւ Սու-Շեհիրի մօտերը: Իր հայ կառապանին դիակը գտնուեցաւ միեւնոյն վայրին մէջ: Հայոց մեծ ջարդերէն շատ առաջ գործուած այս ոճիրը քաղաքական էր: Ապացոյցները բազմաթիւ են. —

- 1.- Ոճիր գործուած օրը իշխանութիւնները արգիլած էին ճամբորդել:
- 2.- Առաջին անցորդները տեղւոյն վրայ տեսած են հետքերը ձիու եւրոպական նալերու, որոնցմով պայտուած կ'ըլլան ոստիկան զօրաց ձիերը:
- 3.- Մուամմէրի մեղսակիցները՝ յիսնապետ Ճելալ եւ ոճրագործ Մահիր միեւնոյն օրը կը տեսնուին Ջառայի շրջակայքը:
- 4.- Նահանգապետ Մուամմէրի կատարեալ անտարբերութիւնը երբ դիմում կ'ըլլար իրեն այս ոճիրին շուրջ քննութիւն բանալու:
- 5.- Ոճրագործները իրենց զոհի իրերու մէջէն միայն անոր նոթատետրի գրաւոր էջերը փրցուցած էին:

Փաստ. 883-28

Ե 5.- ՍԵՔԱՍՏԻՈՅ ՈՐՈՒԳՈՐԾՆԵՐԸ 1915-Ի ԶԱՐԴԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ

Գրգռիչներ եւ կազմակերպիչները

1.- Վալի Մուամմէր.— Ամէնէն կատաղիներէն մէկը. ոճրագործ մը, հայերու պատուհասը:

2.- Տոբթ. Պեհաէտտին Շաքիր.— Հռչակաւոր գրգռիչներէն մէկը: Շրջապտոյտներ կատարեց Անատոլի մէջ կազմակերպելու եւ վերահսկելու համար տարագրութիւնը եւ կոտորածները. ճառեր խօսած է Իթիթիհատի Ակումբին մէջ:

3.- Տոբթ. Ֆազլի Պարթի պէյ.— Գայմազամ, գինուորական եւ երեսփոխական Չանկըրի: 1915 թ. Մարտամսուն, մասնաւոր նպատակով եւ պաշտօնական հրահանգներով մայրաքաղաքէն ճամբայ ելած, գրգռիչ ճառեր խօսած Իթիթիհատի ակումբներուն եւ մզկիթներուն մէջ, յատկապէս Ուլու Ճամի: Վալին ներկայ էր միշտ. իրենց ճառերուն կարգախօսն էր.— «Պէտք է բնաջնջել հայը, ներքին թշնամին»:

4.- Պաճանաքատէ Համտի.— Քաղաքապետարանի տեսուչ, կազմակերպիչ ջարդերու: Անձնապէս՝ իբրեւ չէթէ մարգած է իր գարմիկը՝ էտհէմը:

5.- Ռասիմ.— Երեսփոխան Սեբաստիայէն, բարեկամ եւ խորհրդատու Մուամմէրի, կազմակերպիչ չէթէներու: 1915ի Յունիսի վերջերուն, գացած է բանտ, ուր կալանաւորուած էին 6000 հայ բանտարկեալներ եւ այսպէս խօսած անոնց. «Կ'երդնում իմ եւ կառավարութեան պատուոյն վրայ, որ դուք ողջ եւ ապահով պիտի երթաք միանալու ձեր ընտանիքներուն. յանձնեցէք ուրեմն կառավարութեան ձեր դրամը, որ շուտով պիտի վերադարձուի»:

6.- Մուսթաֆա Հոճա Թուրքալ.— Անդամ Անճումանի (Անատոլուի քրիստոնեաներու բնաջնջման կազմակերպութիւն):

Իթիթիհատի ակումբի քարտուղար Կանի պէյը փոխարինող՝ անոր բացակայութեան ատեն: Իր արբանեակներուն հետ պատրաստած է հայ մտաւորականներու եւ վաճառականներու ցուցակը:

7.- Կանի պէյ.— Ծնունդով էրզրումէն, մտերիմ բարեկամ վալիին, կազմակերպիչ չէթէներու: Ընդհանուր քարտուղար Իթիթիհատի ակումբին: Պալքանեան պատերազմի ընթացքին աստիճանագործի դարձաւ սպայ էր Տրապիզոնի մէջ, ուր աստիճանագրուեցաւ Իթիթիհատի (Իթիթիհատի հակադրուած կուսակցութիւն): 1914ի աշնան Սեբաստիա կը գտնուէր. 1915ի գարնան մայրաքաղաք մեկնեցաւ հայկական ջարդերու կազմակերպութեան յատկացուած ժողովներուն մասնակցելու համար: Իր վերադարձէն երեք օր ետք սկսան Սեբաստիոյ հայ բանտարկեալներու ջարդերը:

8.- Ղու Աղասի Ալի էֆէնտի.— Սուլայի, Մուամմէրի խորհրդական, կազմակերպիչ կոտորածներու. պատրաստած է սպանութեան ենթարկուելիք հայերու անւանացանկը:

9.- Ռիզա.— Նախորդին եղբայրը, ջարդարար չէթէ: Հետեւեալ չորս հոճաները.

- ա.- Տերինտէլի հոճա.**— գրգռութիւն սերմանող:
- բ.- Կամալի հոճա.**— նոյնպէս, սարսափելի հայատեաց:
- գ.- Իզզէթ հոճա.**— գրգռութիւն սերմանող:
- դ.- Էօչէնէ օղլու Մուսթաֆա.**— նոյնպէս:

Ասոնք թուրքերու միտքերը պատրաստեցին հայկական ջարդերուն: Իրենց քարոզներուն մէջ յաճախ կը կրկնէին. «Պէտք է սպաննել կեաւուրները. մեր գիրքերը կը խօսին անոր օրինականութեան մասին եւ նոյնիսկ մեր Շէյխ-իւլ-իսլամը ֆեթվա հանեց: Նոյն այս մոլեռանդ հոճաներն էին, որ պալքանեան պատերազմի օրերուն կը քարոզէին պոյքութի ենթարկել հայերու հետ առեւտուրը:

10.- Հալի պէյ.— Ժանտարմներու հրամանատար եւ գայմազամ. ջարդարար:

11.- Ալի Շեֆիք.— Ժանտարմներու գնդապետ, 1916ին գայմազամ: Մէկը կազմակերպիչներէն եւ ջարդարարներէն Գազա Հաֆիքի հայկական գիւղերուն: Եղաւ մեղսակիցը Սեբաստիոյ կալանաւորներու ջարդարարներուն: Ներկայիս կը գտնուի Սամսոն:

12.- Ռիֆատ.— Ոստիկանապետ: Զերբակալեց բոլոր տղամարդիկը: Մեղսակիցներու հետ կողոպտեց տունէ-

ըը եւ հսկայ հարստութիւն կուտակեց: Ներկայիս կը գտնուի Կ. Պոլիս:

13.- Տեֆթերտար Թեւֆիք.— Անդամ լքեալ գոյքերու յանձնախումբին: Կողոպտիչ:

14.- Աքը փաշագաստէ Մուրթեգա.— Նախորդին քարտուղարը: Տեֆթերտարին հետ լքեալ գոյքերու կողոպտիչներէն մէկը: Եղբայրը չէթէ է:

15.- Նուր պէյ.— «Սիվազ» թերթի տնօրէն: Երեւակայական լուրեր կը հրատարակէր թուրքերու դէմ՝ հայ չէթէներու գործած վայրագութիւններու մասին: Միեւնոյն տիւրը դերը խաղաց ինչ որ «Իթիտալ» թերթը 1909ին, Ատանայի կոտորածներու ժամանակ:

16.- Էմինէ պէյ.— Վերաքննիչ:

17.- Խալիք.— Հաշուապահական դիւանի վերաքննիչ: Մեկսակից ջարդերու եւ կողոպուտի: Լքեալ գոյքերու հաշուեյարդարի յանձնախումբին անդամ էր: Չընչին գիներով թուրքերուն ծախեց հայերու բնակարանները: Հայերու տուններուն մէջ տեղաւորեց թուրք գաղթականները:

18.- Քոմիսէր Մահմուտ չէթէ.— Սեբաստիայէն մինչեւ Մալաթիոյ շրջակայքը ընկերացաւ տարագրեալներուն: Ճանապարհին, իր ընկերները եւ թուրք գիւղացիներ հանդիսացան իր գործակիցները: Բոլոր տղամարդիկը, 8-80 տարեկան, բաժնեց կիներէն եւ, կողոպտելէ ետք, Հասան Չէլէպիի մօտ գանոնք բոլորը կոտորեց: Կիներու ներկայութեան, կացինի հարուածներով սպաննել տուաւ քահանաները, թուով 8-10 հատ:

19.- Ճելալ.— Մուամմէրի ծառայութեան մէջ, ջարդարար բազմաթիւ հայերու՝ Չէլէպիիչէրի եւ Թաւթայի ձորերուն մէջ:

20.- Քելչէ պէյ.— Ոստիկան գօրաց սպայ. կը հրամայէր ժանտարմներուն որ սպաննեն կալանաւորները. գիշերները կը քանակոծէր գանոնք: Հիւճախտէ մեռած թոքատի մէջ: Հոգեվարքի պահերուն սարսափելի խղճի խայթեր ունեցաւ իր գործած վայրագութիւններուն համար:

21.- Հալիս պէյ.— Չէթէյապետ. տեսուչ «Թեքրիլաթ Մախսուսիէ» յանձնախումբի: 1915, Յունուար 3-ին, մեղսակիցներու հետ սպաննեց առաջնորդական փոխանորդ Սահակ Օտապաշեանը (որ Գարահիսար կ'երթար) եւ կառապանը, Առաքել, երիտասարդ հայ մը Չառայէն: Այժմ Սեբաստիա կը գտնուի:

22.- Համիտ, որդի Էմիրէ փաշայի.— Չէթէ մը, մեղսակից տեղապահ Սահակ Օտապաշեանի ոճրագործներուն: Այժմ Սեբաստիա կը գտնուի:

23.- Պաճանաք Օղլու-էտհէմ.— Չէթէ:

24.- Քիւթիւկիւնէ Օղլու Հիւսէյին.— Նոյն:

25.- Չառայի Մահիք.— Չէթէ: Այս երեք ոճրագործները, նախորդ երկուքին հետ, մեղսակից են տեղապահ Օտապաշեանի սպանութեան: Չարդերու ժամանակ, ասոնք չարչարեցին եւ սպաննեցին բազմաթիւ հայեր, յատկապէս հոգեւորականներ:

26.- Ճիգմէճի Հաճիք.— Չարդարար, կառապան: Ինք փոխադրեց ձերբակալուած մտաւորականները եւ եղաւ գանոնք սպաննողներէն մէկը:

27.- Չերքէզ Քատիք.— Էմիր փաշայի փեսան, չէթէ: Ինք եւ նախորդ հինգ անձերը Հասան Չէլէպիէն եւ Հեքիմ Խանէն մինչեւ Սիվազ փոխադրեցին եւ Մուամմէրին յանձնեցին գոհարեղէններով լեցուն 48 պարկ եւ ուրիշ մը, որ կը պարունակէր 36.000 թրքական ոսկի:

28.- Շեքէր Օղլու Իսմայիլ.— Սեբաստիոյ Իթթիհատի կոմիտէին նախագահը: Այժմ հսկայ հարստութեան տէր:

29.- Սոպաճի Չիլ Շիւքրի.— Օգնական ժանտարմ ձերբակալութիւններու ժամանակ: Ինք է որ մատնացոյց կ'ընէր կալանաւորուելիք հայերը:

30.- Ուլաչի Տուրան միւտիւրը.— Իթթիհատական անուանի աւագակ:

31.- Ակճագչլայի միւտիւրը.— Չէթէ մը:

32.- Ղարկա Տիւրկերէ Հասան.— Չէթէ: Երկու ոճրագործները յարձակած են Ուլաչի մօտ գտնուող հայկական գիւղերու վրայ եւ գանոնք քանդած, բնակչութիւնը բնաջնջելով:

33.- Վէյալէ.— Տիվրիկլի Հաճի էօմէր եւ իր եղբայրը՝

34.- Հանիֆ.— Բանտարկեալներու սպաննիչներ. ներկայիս հարստացած իրենց յափշտակած աւարով:

35.- Սիւլէյման.— Նուրի պէյի որդին. ջարդարար գործօն մասնակցութիւն ունեցած է 1895ի ջարդերուն, ինչպէս կը յոխորտար ինք՝ «հայեր ջարդած ըլլալու հաճոյքին համար»:

36.- Քեազիմ.— Նուրի պէյի որդին: Ենիխան-Սեբաստիա ճամբուն վրայ, Պալազորի ազարակին մօտ, քիւրտ գաղթականներու հետ միասին, սպաննած է այն կալանաւորները, որ դատուելու համար Սեբաստիոյ պատերազմական ատեանը կ'ուղարկուէին:

37.- Թեքէչէն Իպրահիմ.— Մեղսակից ոճրագործներու. եղած է 1895ի ջարդարարներէն: Նահանգապետ Մուամմէր գինք Տայի (հօրեղբայր) կը կոչէր:

38.- Էվլիյա.— Աւարով հարստացած:

39.- Թայիպ էֆէնտի.— Քաղաքապետարանի պաշտօնեայ:

40.- Նպարավաճառ Նուրի.— Մեղսակից ջարդարարներու:

41.- Արբաճի Շիւքրի.— Նոյնը:

42.- Չիա.— Նոյնը: Արհեստից վարժարանի տնօրէն:

43.- Խայրի.— Տնօրէն Իշ Եուրտուի (աշխատանքի տուն): Այս աշխատանոցի բանուորուհիները գերեվարուած հայուհիներ են:

44.- Քիամիլ.— Սուլթանիէ լիսէի տնօրէն. մեղսակից ոճրագործներու:

45.- Արբաճի Իսմայիլ.— Ոճրագործ եւ աւագակ: Իր որդին՝ Իպրահիմ, ուսանած ըլլալով Կ. Պոլսոյ Օսմանեան համալսարանին մէջ, դարձաւ 1200 հոգիինոց չէթէական վոճմակի մը հրամանատարը:

46.- Պաքալ Ազիզ.— Ջարդարար:

47.- Պաքալ Պեհճէթ.— Նոյնը:

48.- Պէրպէր Շիւքրի.— Ջարդարար. սպաննողներէն մէկը Սեբաստիոյ Սանասարեան վարժարանի ուսուցիչ Մնճուկեանի: Կոտորածի ժամանակ ուսուցիչը բացազանչած է. «Դուք չէթէներդ, չէք գիտեր թէ ինչ կ'ընէք. հայերու մահէն ետք դուք մեռած, ոչնչացած կ'ըլլաք»: Շիւքրին գայն կը գնդակահարէ ըսելով. «Կեաւո՛ւր, դեռ կը համարձակիս խօսիլ!»

49.- Սաատուլլահ, Եուզպաչի ժանտարմ.— Բանտարկեալներուն հսկիչն էր «Գալէ» կոչուած Սեբաստիոյ միջնաբերդին մէջ: Կողոպտած է բանտարեալները: Ընչաքաղցին մէկն էր: Այժմ տէր է հսկայ հարստութեան: 1916ի Յուլիսին միեւնոյն բանտին մէջ հաւաքեց

հայ գինուորները եւ մէկն եղաւ անոնց սպաննիչներէն: (Բոլոր այս ամբոցները զօրանոցներու վերածուած պատերազմական ատեան տարուողներու համար, որոնք միայն հայեր էին):

50.- Ահմէտ պէյ Մերթուլաճի.— Արիւնկզակ ոճրագործ մը. Գարահիսարի գայմագամ, որ կը դեկավարէր մանուկներու սպանդը: Գարահիսարէն հայ տիկին մը կը պահէ: Սեբաստիոյ մէջ հաւատափոխ հայերուն պարծեցած է, ըսելով «ձեր փեսան եղայ»: Այժմ Գարամանի գայմագամն է:

51.- Գնդապետ Ալի պէյ.— Պատերազմական ատեանի նախագահ: Քաղաքապետարանի առջեւ կախել տուաւ չորս հայեր: 30.000 հայեր, ի բացակայութեան, մահուան դատապարտեց, ամբաստանելով որ անոնցմէ 15.000ը անցած են Կովկաս թուրքերու դէմ կռուելու համար, իսկ միւսները փորձած են խափանել օսմանեան բանակի նահանջի ճամբան:

52.- Մուսթաֆա Սապրի պէյ.— Նախագահ պատերազմական ատեանին, կողոպտել տուած է հայոց ինչքերը եւ քանդել տուած անոնց տունները: Գողնալէ ետք իսլամացած Միրիճան Օտապաչեանի ապրանքները, այրել տուած է անոր վաճառատունը: Բռնաբարած է բազմաթիւ հայ աղջիկներ:

53.- Գայմագամ Փերթեէ.— Փոխանորդաբար զօրագունդի հրամանատար. արբանեակ Մուամմէրի. ջարդարար:

54.- Թեւֆիք Չիֆթիլի Միւտիլի.— Տեսուչ ազարակներու. չէթէ, ջարդարար: Այժմ կը գտնուի Գոնիա:

55.- Ախրր փաշագատէ Հայիտ.— Նախորդին քարտուղարը: Ջարդարարներէն մէկը Չէլչպիլէր ձորի մէջ սպաննուած հայերու:

56.- Ախրր Փաշագատէ Մուրթեզա.— Կողոպտիչ: Ուրիշ թուրքերու հետ Աքչեհիր փոխադրած են հայոց լքեալ գոյքերը եւ իրարու մէջ բաժնուած:

57.- Աւնտուք Չատէ Նիւսին.— Կողոպտած է հայ առեւտրականներու վաճառատուները: Սեփականացուցած է 2000 ոսկին վաճառական Թաղէոս Կիւրեղեանի, որուն աւանդապահն էր:

58.- Քեազիմ.— Վալիին օգնական. չէթէ. ուրիշ չէթէներու հետ Ղանղալի մօտ կողոպտած է տարագրեալ հայերը, գազանութիւններ եւ բռնաբարումներ գործած: Այժմ Գոնիա կը գտնուի:

59.- Խանտենէ Զատէ Հասան.— Իր ընկերներուն հետ կողոպտած է հայոց վաճառատուները:

60.- Ահմէտ պէյ.— Թրքական որբանոցի տնօրէն: Մահուան սպառնալիքի տակ, թլփատել տուած էր բոլոր հայ որբերը:

61.- Փանտարմա Հաֆիզ.— Յիսնապետ Աբուլի որդին. մեղսակից ձերբակալութեանց եւ ջարդերու: Այժմ Թոքատ կը գտնուի:

62.- Խայրէ.— Կողոպտիչ որդին սանտալագործի մը: Լաւ հարստութիւն դիպած է:

63.- Մահմուտ Քեամիլ.— Հրամանատար Կովկասեան ճակատի վրայ: Էրզրումի անկումէն ետք, նշանակուած է պետական ենթաքարտուղար պատերազմական նախարարութեան մէջ:

Նոյն այս Մահմուտ Քեամիլ չարաշուք դեր մը խաղաց հայ զինուորներու ջարդին մէջ:

Այս ոճրագործները ոչ միայն Սեբաստիոյ հայերը 4 Յունուար 1919

ջարդեցին, այլեւ գործօն բաժին ունեցան այն սպանդին մէջ, որու ընթացքին զոհուեցան Թոքատի, Մարգուանի, Ամասիոյ, Սամսոնի, Օրտուի, Կեսարիոյ, Երզրատի, Տիվրիկի ու այլ վայրերու տղամարդիկ:

Այս անուանացանկը հեռու է ամբողջական ըլլալէ. տակաւին բացայայտելիք ուրիշ տիրահաշուակ անձնաւորութիւնն գոյութիւն ունին:

Սեբաստիոյ բոլոր թուրքերը ըմբոշխնեցին ջարդերու, կողոպուտի եւ բռնաբարութեան հաճոյքը:

Մուամմէր մասնակցած է արեւելեան եօթը նահանգներու վալիներու ժողովներուն, որոնք Մահմուտ Քեամիլի նախագահութեամբ կայացան Էրզրումի մէջ: Այս խորհուրդին մէջ քննարկուած եւ հաստատուած է բնաջնջումի ծրագիրը:

ՌՈՒԲԷՆ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

Փաստ. 883-49

Ե 6.- ՍԵԲԱՍՏԻՈՅ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ԳՈՒՆԴԵՐԸ ԳԱՅԱ ՏԻՊԻԻ ԳԵՐԵԶՄԱՆՆՈՑ-ՍՊԱՆԴԱՆՈՑԸ

1916 թ. Յուլիսի սկիզբը պատերազմական նախարար տիրահաշուակ էնվեր Սեբաստիա եկաւ: Այցելեց հանրային հաստատութիւնները: Ամէնուր կը խօսէր դռներուն առջեւ կանգնած պահակներուն հետ: Շարունակ կը հարցնէր անոնց անունները, որպէսզի իմանայ իրենց ազգային պատկանելիութիւնը: Միշտ անտարբեր կը ձեւացնէր ինքզինք: Իր շուրջ գտնուողները, սակայն, քաջածանօթ էին իր զգացումներուն: Անոնք գաղտնաբար ժողովուրդին խորհուրդ տուին հեռանալ փողոցներէն եւ անոր անցած ճամբաներուն վրայ մեծ խումբերով չերեւիլ: Որովհետեւ կրնար զիրենք բոլոր ճակատ ուղարկելու միտքը յղանալ:

Փոխ-սպարապետին մեկնելէն անմիջապէս ետք, բանուորական գունդերը (ամելէ թապուրի), իրենց հրամանատար Պեհճէթ պէյի հրահանգով հաւաքեցին հայոց Ս. Սարգիս եկեղեցին: Այս կը պատահէր 1916 թ. Յուլիս 13-ին:

Այդ օրերուն կարծես թէ ամէն ինչ մոռցուած էր եւ ոչ ոք կը խօսէր այլեւս ջարդի եւ տարագրութեան մասին: Քննիչի գալուստը սպասելով, բանուորները տարուե-

ցան աւելի զանգուածեղ եւ բարձր պարիսպ ունեցող Շիֆալի մետրեսէն (դպրոց) եւ բանտարկուեցան իսկոյն:

Շուտով մետրեսէին պաշտպանութեան համար հասան բազմաթիւ ժանտարմներ:

Այն ատեն յայտնուեցաւ դարբիններու պետը՝ Մուհիետին. ան դուրս բերել տուաւ նախ փաթիթոց (մահմետականութեան նշան) կրող գործաւորները, ապա յոյները, որոնց անուանացանկը ունէր արդէն: Միւսներէն պահանջեց իրենց անձնագիրները: Անոնք որ կրնային փաստել իրենց մահմետական ըլլալը՝ նոյնպէս դուրս ելան: Կը մնային շուրջ 1500 հայեր, որոնք ամէնէն սոսկալի ու մղձաւանջային գիշեր մը անցուցին:

Յաջորդ օրը, Գոչ-Հիսարէն եւ չրջակայքէն ուրիշ խումբեր եկան: Բանուորներու [հայ] թիւը բարձրացաւ 2.700-ի: Ասոնցմէ մօտ 500-ը ազատ արձակուեցան, շնորհիւ հրամանատարի օգնական Մուխթար պէյի եւ կարգ մը երեւելիներու միջամտութեան: Ասոնք երաշխիք տուած էին որ բանուորները պիտի իսլամանան: Շատ լաւ գիտէին, հետեւաբար, թէ ինչ դաւադրութիւն մը

կը սարքուէր:

Զօրագունդի մնացեալ անդամներուն յայտնեցին որ պիտի երթան աշխատելու Պոզանթի՝ Ատանայի երկաթագծին վրայ:

Բանուորներէն ոմանք՝ որ իրենց սպառնացող սուրհմները տեսնելով՝ վերահաս վտանգ մը կը տեսնէին իրենց գոյութեան, մարդ ղրկեցին Սըվազի գերման հիւպատոս պը. Ուերթին, իմանալու համար թէ արդեօք իսկապէս Պոզանթի կը ղրկուին: Գերմանացի հիւպատոսը, առանց դոյզն վերապահուածութեան, տուաւ այդ ապահովութիւնը:

Այս 2200 գործաւորները, որոնք ընդհանուր զօրակոչէն ի վեր, ձմրան ցուրտին ու ձիւնին եւ կամ ամրան սօթին ներքեւ, անձրեւի տակ ու փոշիներու մէջ, առանց անհրաժեշտ զգեստի եւ սնունդի, տաժանելի գործ կատարած էին,— այս 2200 բանուորները, որոնց մէջ կային ուսեալ մարդիկ, արուեստագէտներ եւ վարպետ արհեստաւորներ, ճամբայ հանուեցան ժանտարմներով շրջապատուած: Իրենց մեկնումէն օր մը ետք, զօրաւոր պարաններով կապկպեցին գիրենք: Երկու օր քայլէ ետք, անոնք հասան Գայա-Տիպի գիւղը, տարագրեալներու ամէնէն ահաւոր գերագմաննոցներէն մէկը:

Անմիջապէս որ կարաւանը հոն հասաւ, կացիներով զինուած, արիւնածարաւ ու շահամով գիւղացիներ երեւցան շրջակայքը: Բացորոշ էր այլեւս որ այս մարդիկ պիտի յարձակէին դժբախտ բանուորներուն վրայ, կտոր-կտոր ընելու համար զանոնք: Օրհասական այդ պահուն, երիտասարդ մը, որ մինչ այդ իր անբասիր պահուածքին համար ժանտարմներու մասնայատուկ վերաբերումին արժանացած էր, դասակի տասնապետին դիմեց խնդրանքի հետեւեալ խօսքերով. «Կը տեսնեմ որ պիտի մեռնիմ. կեանքի տեւողութիւնը սահմանուած ժամանակ մը ունի: Ամէն մարդ կը մեռնի ու կամ կանուխ. բայց ես զինուոր եմ եւ իրաւունք ունիմ փամփուշտի կապարով մը մեռնելու. անպատուած պիտի ըլ-

լամ եթէ կացինի հարուածով մը մեռնիմ: Կը խնդրեմ, հետեւաբար, որ գնդակ մը տեղաւորէք գլխուս»:

Խնդրանքը ընդունուեցաւ: Զինուոր մը հրացանին փողը երիտասարդին ճակատին ուղղելով սպաննեց զայն: Գիւղացիներուն համար ասիկա ազդանշան եղաւ նաեւ միւսներու ջարդին, որուն հետեւանքով բարձրացած վայնասիւնը լսելի էր հեռուներէն: Ընդհանուր խառնաշփոթութենէն օգտուելով քանի մը խեղճեր յաջողեցան քակել իրենց կապերը ու խոյս տալ բաց դաշտերու ուղղութեամբ:

Այս չարաշուք դէպքէն որոշ ժամանակ անց, Վեհիպ փաշայի բանակատեղիին մէջ զգալի էր արդէն բանուորական ջոկատի բացակայութիւնը: Վեհիպ փաշա բացատրութիւն պահանջեց Սըվազի նահանգապետ Մուամմէր պէյէն: Կ'ըսեն թէ կառավարիչը Կոստանդնուպոլսէն տրուած հեռագրով հրաման ստացած է Սըվազ գտնուող բանուորական ջոկատները երկու ժամուան միջոցին Պոզանթի ղրկելու: Անձնապէս տառացիօրէն կրկնած է այս հրամանը ու անմիջապէս, վերահսկողութեան նպատակով, քննական շրջապատոյտ կատարած: Բանուորական գունդերուն ընկերացող ոստիկան զօրաց պետը եւ Գայա-Տիպիի հրամանատարը չարաշար գործածած են իրենց տրուած իշխանութիւնն ու ցուցմունքները: Յամենայն դէպս Մուամմէրի եւ Վեհիպ փաշայի յարաբերութիւնները պղտորեցան: Կոտորածի ենթարկուած բանուորական զօրագունդին ընկերացող ժանտարմներուն պետը կանչուեցաւ սպայակոյտին մօտ:

Դատուեցաւ ան եւ կախաղան հանուեցաւ:

Գալով Մուամմէրի, երկար չկրցաւ մնալ Սըվազ: Միեւնոյն հանգամանքով, եւ քիչ մը հանգստանալու համար, փոխադրուեցաւ Գոնիա. երկար չտեւեց նաեւ այս մէկը:

Իսկ Գայա-Տիպիի գիւղացիները, որոնք հագարաւոր հայեր ջարդեցին, անպատիժ կը մնան մինչեւ այսօր:

Փաստ. 883-66գ

Ե 7.– ՍԵՔԱՍՏԻՈՅ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՈՂԲԱԼԻ ՎԻՃԱԿԸ
(Տեղեկագիր Սեբաստիոյ առաջնորդ Գնէլ Սրբ. Գալեմքէրեանի)

1914 թ. աշնան տեղի ունեցաւ Սանասարեան վարժարանի մանրակրկիտ խուզարկութիւնը: Վալին, Մուամմէր պէյ, կասկածելով Կ. Պոլսէն ուղարկուած հակերու բովանդակութենէն, կը հրահանգէ ուշադրութեամբ քննել զանոնք: Պր. Եգեանցի նուիրած մէկ քանի հատորներ վալին ներկայացուեցան իբրեւ յեղափոխական մոլորեցուցիչ գիրքեր:

Գարնան սկիզբը [1915] Մուամմէր գրաւել տուաւ ամբողջ գրադարանը, հնատիպ մատեանները եւ կարասիները, որ լքեալ գոյքերու յանձնախումբին յանձնուեցան: Հակառակ բողոքներուն, գրաւուեցաւ նաեւ նոր վարժարանի մը կառուցման համար գնուած շինանիւթը:

1915 թ. Յունիսի 3-ին, վարժարանի երկու ուսուցիչներ, Լեւոն Քանթարեանն ու Հայկ Սրապեանը աքսորուեցան եւ սպաննուեցան, նոյն օրն իսկ ձերբակալուած հայերուն հետ:

Սեպտեմբեր 15ին դպրոցէն ճամբայ ելաւ երկրորդ կարաւանը: Այս անգամ էր որ գրաւուեցան վարժարանին կարասիներն ու գիրքերը:

Օր մը ոստիկանապետ Ռիֆաթ պէյ կ'ազդարարէ ուսուցիչներէն Տէտէեանին որ իբրեւ պուլկարահպատակ պէտք է ընտանեօք մեկնի Կոստանդնուպոլիս: Ճամբան իրենց ընկերացող երկու ժանտարմները կը սպաննեն գիրենք:

Միւսնոյն մեքենայութիւնը ի գործ դրուեցաւ Գառնիկ Թուղլաճեան եւ Արամ Մուշեղեան ուսուցիչներուն եւ 9 աշակերտներուն նկատմամբ: 1915 թ. Հոկտեմբեր 15ին ճամբայ հանուեցան անոնք Կեսարիա-Ուլու-Գշլա ուղղութեամբ եւ, հակառակ իրենց տրուած անցագրիւրին, սպաննուեցան անոնք Կեմերէկի ճամբուն վրայ:

Լքեալ գոյքերու յանձնախումբը գրաւման ենթարկեց վարժարանին ամբողջ ունեցուածքը:

Փաստ. 883-73ա

Ե 8.– ԹՈՒՐՔԻ ՄԸ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՍԸՎԱԶԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՒԱԾ ԳԱԶԱՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Քաղաքի շուկային մէջ աճուրդի հանուած են արիւնաթաթախ եւ կրակոցներէ ծակծկուած զգեստներ:

«Սապահ» թերթի խմբագրապետ Տիրան Քելէկեան Սըվազ եկաւ, բոլորովին հիւժած տարագրութեան ճամբու տառապանքներէն. հիւանդանոց տարին գինք: Իր ողբերգական վախճանին պարագաները լուսաբանուած չեն մինչեւ հիմա:

Նահանգապետ Մուամմէրին մտահոգութիւն կը պատճառէր հայ գինուորներու ներկայութիւնը բանուորական գունդերուն մէջ (ամելէ թապուրի). հրաման

արձակեց որ խումբ առ խումբ բնաջնջեն զանոնք: Երկու տարիներէ ի վեր կառավարութեան համար տաժանակիր աշխատանքներ կատարելու դատապարտուած դժբախտ այս գինուորները սպաննուեցան հետեւեալ սպաներու հսկողութեան տակ.— Բանուորական գունդերու պետ Պեհմէթ պէյ, հարիւրապետներ Սաատուլլահ պէյ, Հիքմէթ պէյ, Նուրի պէյ, ճամբաներու շինութեան վերակացու՝ տեղակալ Ալի Շեքէթ պէյ, գիտահետազօտական յանձնախումբի նախագահ Շիւքրի պէյ, յիսնապետներ՝ Ֆիքրի պէյ, Շիւքրի եւ Ռահմի պէյ:

Փաստ. 883-83բ

Ե 9.- ԱՄԱՍԻՈՅ ՋԱՐԴԵՐԸ

1915 թ. Մայիսի սկիզբը, նահանգապետ Մուսամբեր Ամասիա կու գայ իթթիհատականներուն տեղեկացներու համար որ կոտորածներու խնդրով շրջապատյոտի եկած է: Արդիւնքը այն կ'ըլլայ որ հարիւրաւոր հայեր կը ձերբակալուին:

Տեղական իշխանութիւններու հրահանգին ենթարկուելով, հայերը գինակոչի գրասենեակին կը յանձնեն իրենց գէնքերը՝ որսի հրացաններ, ատրճանակներ եւայլն: Այսքան հլու հնազանդութիւն չի բաւականացներ միւթեարք Սըրրի պէյը, որ խուզարկել կու տայ բոլոր բնակարանները, առանց նոր բան երեւան հանելու. ապա կը հասնի անաբեկելու ժամը: Կը գումարուի խորհրդաժողով նախագահութեամբ Մուսամբերի սիրելիին՝ ոստիկան զօրաց հարիւրապետ Նուրի պէյի եւ մասնակցութեամբ՝ Ամասիոյ նախկին երեսփոխան Նա-

ֆիզի, Քէօփրուլի Խոճա Հաֆըզի, Նաֆիզ Սըտքիի եղբոր՝ Քեամիլի, Նալպանտ Իզգէթի, Թեւֆիք Հաֆըզ միւթթիին, երկրաչափ Ռեզմիի, Ալի որբանոցի տնօրէնին եւ Մուսթաֆա Ճոնոնին:

Այս խորհուրդն էր որ ամէն օր կը հրահանգէր ամէն տեսակի չարչարանքները, — գանահարում, սննդագրուկում, եռացած կամ սառն ջուրով լողանք, եղունգներու պոկում, գլուխն ի վար ոտքերէն կախել, շիկացած երկաթով մարմնի ամէնէն զգայուն մասերու խարանում:

Շատեր չըիմանալով մահացան, ինչպէս վիրաբոյժ Հայկազուն Թապիպեանը:

Ձեռնարկեցին նոյնպէս բանտէն ազատ արձակուած ոճրագործներով ջարդարար գունդի մը կազմութեան: Միւթթի Հաֆիզ շրջաբերական-ֆեթվա հանեց ջարդերու մասին:

Փաստ. 883-84ա

Ե 10.- ԱՄԱՍԻՈՅ ՋԱՐԴԵՐԸ

Ապտիւլլահ Ջատէ Մուսթաֆա — թուրք մը — հետեւեալ ձեւով կը նկարագրէ Ամասիոյ ջարդերը. —

Ամէն մարդ գիտէ այժմ այն զգուելի դերը, զոր հայերու բնաջնջումին մէջ խաղաց Սըվազի նահանգապետ Մուսամբեր:

Միւթթեարք Սըրրի պէյ, ոստիկան զօրաց հարիւրապետ Նուրի պէյ, երեսփոխան Նաֆիզ պէյ, երկրաչափ Ռեամի պէյ, Իզգէթ Քեամիլ եւ Թիմարհանէճի Խալիլ տարագրութեան յանձնախումբին անդամ նշանակուեցան:

Նաֆիզ պէյ մեծ եռանդ ցոյց տուաւ չեթէներու գունդին կազմակերպման մէջ. այս գունդը դրուած էր հսկողութեան ներքեւ իր փեսային՝ Թոփճի Շիւքրուլի, որ կը պարծենար թէ անձամբ սպաննած է քաղաքի երեւելիներէն 31 հայեր. — բժիշկ, դեղագործ, ատամնաբոյժ եւայլն, որովհետեւ կ'ըսէր, չուզեցի ստորին խաւի մար-

դոց սպանութեան անպատուութիւնը կրել: Նոյն ձեւով, նկատառելի հարստութիւն դիզած է սպաննելէ ետք իր գոհերը:

5000 տղամարդոց եւ 7000 կիներու բնաջնջումը մեծ ուժի կը կարօտէր. այդ պատճառով ալ Սըրրի պէյ էպէմ գիւղէն զինեց 200 փայտահատներ, որոնցմէ մէկ քանին հրացանագարկ եղան, իբրեւ հետեւանք կողոպտուած աւարի բաժանման շուրջ ծագած վէճի մը:

Չեմ ուզեր կրկնել նախ քան կոտորածները գործուած բոլոր գազանային արարքները, թէ ինչպէս բանտին մէջ ծեծեցին տղամարդիկն ու կիները, թէ ինչպէս քաշեցին փրցուցին անոնց եղունգները կամ մամլակներու մէջ ճգմեցին գլուխները:

Ինչ կը վերաբերի երկրաչափ Ռեամի պէյի, ան է որ վերմիչ եւ Սազ-Տաղ գիւղերու կողմերը մատնացոյց ըրաւ իբրեւ հայոց սպանդանոցի վայր:

Փաստ. 883-79ա

Ե 11.– ՁԱՌԱՅԻ ՁԱՐԴԸ

Ձառայի ջարդին կազմակերպիչներն են՝ Մահիր Եռզրազյան, Ռիզա Ճինչաբաբ, Մուղլիս Ահմէտ աղա, Քեպապճի Ահմէտ, Պաքալ Ահմէտ:

Հայերը ջարդելու նպատակով Մահիր Եռզրազյանի հետ ընկերներուն հետ չեթէներու գունդ մը կազմեց: Տեղական կառավարութիւնը տարագրելու պատրուակով քաղաքին հայ երիտասարդութիւնը տարաւ դէպի Մուստարի ձորի, ուր չեթէներու խումբը կը սպասէր գոհերուն: Կացիները, եսթաղաններն ու մանգաղները կ'աշխատցուին ամէնէն անասելի զազանութիւններ ի

գործ դնելու համար: Դիակները կը նետուին Գզըլ-Ըր-մաք գետը:

Ոճրագործները իրենց միջեւ կը բաժնուին գեղեցիկ աղջիկներն ու կիները: Ծերունիները կ'ուղարկուին Տէր Զօր, կորստեան անդունդը, ուր սպաննուեցան ջարդերէն վերապրողները: 50 ընտանիքներ հաւատափոխ եղան, բայց եւ այնպէս հալածանքի ենթակայ էին անվերջ:

Ձառայի թուրքերը, աւագակութեան վարժ, ցարդ կը շահագործեն մնացած աւարը:

Փաստ. 883-79գ

Ե 12.– ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԿՈՏՈՐԱԾԸ

Զիֆթէ Մինարէ այցելութեան մը առիթով, էնվեր փաշա, ամելէ թապուրի գունդին պատկանող հայ զինուորներէն մէկուն հարց կու տայ թէ արդեօք ընտանիք, զաւակներ ունի՞: «Ունէի, բայց տարագրուած են, կը պատասխանէ զինուորը»: Կը յուսամ որ ի մօտոյ դուք եւս կ'ազատիք», կ'ըսէ էնվեր: Այդ օրը, արդարեւ, չուշացաւ: Շաբաթ մը ետք հայ զինուորները խումբերով ուղարկուեցան եւ, ոստիկան զօրաց հարիւրապետ Նու-

րի պէյի հրամանով կոտորուեցան Կեմերէկէն Շար-Գչլա տանող տանող ճամբուն վրայ: Խումբերու ուղարկումը շարունակուեցաւ մինչեւ ամբողջական բնաջնջումը 2000 հայ զինուորներուն:

Մուսամէր պէյ, համաձայնաբար էնվեր փաշայի, անհրաժեշտ ցուցմունքներ կատարած էր Նուրի պէյին, որպէսզի գլուխ բերէ այս ջարդը:

Փաստ. 883-83

Ե 13.– ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ

1915 թ. Յունիս 1-ի նախօրէին, Շապին Գարահիսարի դրութիւնը անտանելի էր. ժանտարմները յանկարծական ու կոպիտ եղանակով մոռտք կը գործէին հայոց տուններէն ներս, դասալիքներ ու գէնք փնտրելու պատրուակով: Կանխօրօք մատնանշուած մարդիկը կը ձերբակալուէին ու բանտ կը տարուէին:

Այս մարդոց վրայ ի գործ դրուած զազանութիւնները սարսափի մատնած էին ժողովուրդը, որ ջարդերէն պաշտպանուելու համար քաշուած էր միջնաբերդ:

Զինուորներու եւ ժանտարմներու յարձակումը 25 օր տեւեց եւ հազարաւոր մարդոց մահուան պատճառ դարձաւ: Այն ատեն կարգ մը հայեր փորձեցին փախուստի դիմել: Միջնաբերդին մնացած 6000 հոգին անձ-

նատուր եղաւ, բայց եւ այնպէս կոտորուեցաւ:

Անկարագրելի է յարձակման անցած թուրքերու գործած բարբարոսութիւնը:

Փրկուեցան միայն մօտ 800 մանուկներ, որոնք իսլամացուեցան:

Միեւնոյն ճակատագրին ենթարկուեցան Շապին Գարահիսարի գիւղերը: Պէտք է յատկապէս յիշատակել Բուրգ գիւղը, որուն բնակչութիւնը տարուեցաւ Եփրատի ափին, ուր գեղեցիկ աղջիկները զատուելով տարուեցան, Տէր Գուրգէն քահանան խողխողուեցաւ ժողովուրդին աչքին առաջ, իր երկու աղջիկները բաժին ինկան Սապրի պէյին, իսկ ժողովուրդը զանգուածով թափեցին Եփրատի մէջ:

Փաստ. 883-66ա

Ե 14.– ՄԱՐԶՈՒԱՆԻ ԴԱՀԻՃՆԵՐԸ

Սըվազի ընդհանուր կառավարիչը՝ հռչակաւոր Մուսամէշը, Մարզուանի կոտորածներուն մէջ նոյն քաղաքէն ունեցաւ նշանաւոր գործակիցներ։—

Ֆայիք պէյ — Մարզուանի քաղաքապետ
Մահիր պէյ — Ոստիկան գորաց հրամանատար
Սալիհ էֆէնտի — Ոստիկանութեան կոմիսար

Զէնքեր հաւաքելու պատրուակով, այս երեք ոճրագործները կը ձերբակալեն Մարզուանի երիտասարդութեան ընտրանին ու ահաւոր չարչարանքներու ենթարկելէ ետք, կը բանտարկեն զանոնք։ 22 տարեկան հայ երիտասարդը՝ Զարեհ Կիւլպէնկեան դժբախտը զրկուած էր Ամասիա առանց որ գանակոծուի։ սրիկաները հրահանգ կը զրկեն որ շուտով վերադարձուի։ Հայ երի-

տասարդը զմեղիով կոկորդը կը կտրէ ու կը մեռնի։

Ապա, կը սկսին քաղաքին հիւսիսը գտնուող զօրանոցը փոխադրել 15-էն մինչեւ 50 տարեկան հայերը, թուով 6000 հոգի։ Կէս գիշերին պարաններով կապկպուած եւ ժանտարմներով շրջապատուած, կը տանէին զանոնք դէպի սպանդանոց։

Յետոյ կարգը կու գար կիներու տարագրումին։ Ասոնցմէ հազիւ 40-ը Հալէպ հասաւ. մնացեալը մահացաւ սովի ու հիւանդութեանց պատճառով. սիրուն աղջիկները առեւանգուած էին արդէն չէչէններու, քիւրտերու եւ այլ մահմետական բարբարոսներու կողմէ։

Շատ հազուադէպ ընտանիքներ կրօնափոխ եղան, իրենց ամբողջ հարստութիւնը կառավարութեան յանձնելով, բայց յետոյ անոնք եւս աքսորուեցան։

Փաստ. 883-55

Ե 15.– ԶԱՌԱՅԻ ԶԱՐԴԵՐԸ
(Սըվազի նահանգ)

Զառա գիւղը կը գտնուի Սըվազի հիւսիս արեւելքը, քաղաքէն 12 ժամ հեռաւորութեան վրայ։ Նշանաւոր է իր մարգագետիններով եւ բերրի դաշտերով։ Տեղահանութենէն առաջ 1000 հայ տուն կար հոն։

Գլխաւոր ջարդարարներն են՝
[Կը հետեւի 7 անուններ]։

Գայմագամին թելադրանքով, Եուզպաշիգատէ Մահիր կազմակերպեց չեթէներ, որոնք սկսան ահ ու սարսափ տարածել հայ բնակչութեան մէջ։

Նախ եւ առաջ հաւաքեցին բոլոր երիտասարդները եւ գիւղէն հեռացնելով տարին Ս. Թագաւոր վանքին ետին գտնուող Մուստար Զոր, ուր կոտորեցին զանոնք կացինի հարուածներով։ Սպանդի ժամանակ թուրքերը կը պոռային. «Ահա՛, հոս է կեաւուրներու Հայաստանը»։

Տղամարդոց կոտորածէն ետք, կիները բանտարկեցին ու ահաբեկման ենթարկեցին։ Գեղեցիկ հարսներն ու աղջիկները բռնութեամբ կրօնափոխ դարձնելով տարին իրենց հարեմները։ Միւս կիներն ու պառուաները տարագրուեցան Տէր Զօր։

Սարսափի այդ օրերուն արհեստաւորներու 50 ընտանիքներ կրօնափոխ եղան, բայց այս թշուառ հայերը եւս դուրս դրուեցան իրենց տուներէն։

Թուրք երեւելիները, կողոպտելէ ետք տարագրեալ հայերու ինչքերը, սկսան թալանել նաեւ գիւղ մնացողները։ Դրամ չունեցողները կ'ենթարկուէին ահաւոր չարչարանքներու. ձիու պայտեր կը գամէին անոնց ձեռքերուն ու ոտքերուն։

Զառայի բնակչութիւնը կը պահանջէ չարագործներուն պատժուիլը։

Փաստ. 883-67

**Ե 16.– ԻՆՉ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ ՍԵՔԱՍՏԻՈՅ ՄԷՁ
(Քաղուած «Renaissance»էն)**

..... Սկիզբը, ամէն կարգի ոճրագործները դարանամուտ եղան պահ մը. անմեղ երեւալու եւ արդարութեանէն խուսափելու համար, փորձեցին դիմակ փոխել: Բայց երբ տեսան որ զինադադարն ու պարտութիւնը ոչ մէկ փոփոխութիւն առաջացուցած են թուրքիոյ կառուցուածքին մէջ, վերստին սպառնական կեցուածք որդեգրեցին: Ո՞վ էր որ պիտի պատժէր զիրենք, քանի որ ոչ մէկ փոփոխութիւն տեղի ունեցած էր իշխանութեան մէջ, քանի որ երէկուան իրենց մեղսակից բոլոր պաշտօնեաները կը պահուէին իշխանութեան գլուխ, եւ ոճրագործներու օրինակին կը հետեւին ոչ միայն պաշտօնեաները, այլ նաեւ ամբողջ մահմետական բնակչութիւնը: Չեն նեղուիր նոյնիսկ բարձրաձայն յայտարարելով թէ մեծ սխալ մը գործած են թոյլ տալով որ կարգ մը հայեր վերապրին:

Ասով մէկտեղ, դեռ ամբողջ ծրագիր մը գոյութիւն ունի հայոց բնակարանները քանդելու համար:

Պատերազմի օրերուն, զինուորական իշխանութիւնները գրաւած էին հայոց բնակարանները:

Այժմ, զինաթափման հետեւանքով, զինուորները կը հեռանան այդ տուներէն: Բայց ի՞նչ վիճակի մէջ կը թողուն զանոնք: Քարուքանդ եղած, այլեւս անբնակելի են անոնք: Միեւնոյնն է պարագան մահմետական գաղթականներու կողմէ գրաւուած տուներուն: Ասոնք հաստատուած էին ընդհանրապէս ամէնէն ընդարձակ տու-

ներուն մէջ, որուն մէկ թելը կը գործածէին բնակութեան համար, իսկ միւսը՝ իբր... տաքնալու փայտ:

Պիւն պատկանող երեք մեծ տուները չվերադարձնելու համար, կրակի տուած են զանոնք:

Իշխանութեանց մօտ բողոք բարձրացնելու պարագային, կը պատասխանուի միայն մերժումով, ծաղրանքով եւ սպառնալիքներով...

Վերջերս, կառավարիչը յայտարարեց թէ բռնի հաւատափոխ դարձած հայերը ազատ են վերադառնալու իրենց նախկին կրօնքին: Բայց խուլ սպառնալիքներու եւ սպառնալից վերաբերմունքներու հետեւանքով, ոչ ոք դառնափոխներէն կը համարձակի վերադառնալ իր ազգութեան ծոցը: Նոյնիսկ համարձակող չկայ հրապարակաւ հայերէն լրագիր կարդալու: Կրօնափոխ դարձուած կիները չեն համարձակիր վերամիանալ տարագրութենէ վերադարձած իրենց ամուսիններուն. չեն կրնար մինչեւ իսկ յարաբերիլ իրենց ծնողներուն հետ:

Ինչ կը վերաբերի որբերուն, շուրջ 4-500 տղայ ու աղջիկ, անոնք խղճալի վիճակի մէջ կը գտնուին: Բացի ասոնցմէ, թուրքերու մօտ կը գտնուին բազմաթիւ ուրիշներ, որոնց արգիլուած է մայրենի լեզուով խօսիլ ու յարաբերիլ իրենց ազգակիցներուն հետ: Նոյնպէս, բազմաթիւ աղջնակներ ու կիներ կը գտնուին հարէմներու մէջ, ուր կը պահուին սարսափի տակ:

Փաստ. 883-51

Ե 17.– ՋԱՐԴԱՐԱՐ ՄԸ ԲԱՐՁՐ ՊԱՇՏՕՆԻ ԿՈՉՈՒԱԾ

Կոստանդնուպոլսոյ բոլոր օրաթերթերը մատնանիչ ըրին նախկին երեսփոխան Կէօզլուքլու Քէօփրիլու Հաֆրզ Խոճան, որպէս գլխաւոր դրդիչ Ամասիոյ (Սըվազ) 16.000 հայերու ջարդին:

Այս անձնաւորութիւնը, որ միւլթի կարգուած էր հռչակաւոր Մուամէրի կողմէ, ստորագրած է ջարդի հրովարտակը, եւ եղած է գլխաւոր ղեկավարը գործը-

ւած չարիքներուն: Ի՞նք է որ կողոպտած է Տոթթ. Բարունակ Ոսկիի հարուստ բնակարանը, եւ Տէր Զօր աքսորել տուած է զինք, անոր հաշմանդամ ծեր մայրը, կիներ եւ երկու պզտիկները: Սակաւաթիւ վերապրողները պատրաստ են բողոք բառնալու այս Խոճա Հաֆրզի դէմ:

Կառավարութիւնը այս չարաշուք Խոճան կը կոչէ բարձր պաշտօնի մը գլուխը:

Փաստ. 883-48

Ե 18.- ԹՈՔԱՏԻ ՏԱՐԱԳՐՈՒՄԸ 1915ԻՆ

(Քաղուած «Renaissance»էն)

Առաւօտ մը մոռնեալիկը ծանուցանեց, որ կառավարութիւնը արգելած է թղթախաղը սրճարաններուն մէջ: Այս կը պատահէր 1915 թ. Յունիսի սկիզբներուն: Անմիջապէս ետքը ձերբակալուեցան այնքան մեծ թիւով հայեր որ խնդիրը արդարեւ ահազանգային բնոյթ ստացաւ: Հարցը թղթախաղին կապուած էր բնաւ: Յետոյ տեսնուեցաւ որ հարցաքննութիւնները քաղաքական իմաստ ունէին: Իշխանութիւնները կ'ուզէին երեւան հանել դաւադրութիւն մը: Բայց արդէն, ի պատասխան կառավարութեան պահանջին, հայերը յանձնած էին իրենց ունեցած բոլոր գէնքերը:

Մինչ այդ, ձերբակալուածներու թիւը այնքան մեծ ծաւալ ստացաւ, որ բանտերուն մէջ այլեւս տեղ չէր մնացած. ու դեռ բոլոր կալանաւորները տակաւին բանտ չէին դրուած: Պատրիարքական տեղապահը յանկարծ Սրվազ դրկուեցաւ, բայց իր մեկնումէն կէս ժամ ետք, գինք տանող կառքը դատարկ վերադարձաւ: Ըսեցաւ որ սպաննուած է իրեն ընկերացող ժանտարմներուն կողմէ²:

Քիչ անց անհաւատալի տեսարաններ պարզուեցան. հարիւրաւոր վաճառական եւ գործարար հայեր, որոնց դէմ ոչ մէկ մեղադրանք կարելի էր ընել, բոլորը պարանով իրարու կապուած եւ մեծ թիւով ժանտարմներու ընկերակցութեամբ, տարուեցան Սրվազ: Միաժամանակ մէկ քանի օրուան մէջ գորքեր կը հասնէին քաղաք: Անոնք կու գային շրջակայքի գիւղերէն եւ քաղաքի փողոցներէն կ'անցնէին սարսափի մատնելով ամէն մարդ:

Քաղաքին մէջ անհաւատալի բաներ կը պատմուէին. թէ՛ մարդիկը տարուած են Չիֆթլիք կամ Չամլի-պէյ, թէ՛ բոլորովին մերկ վիճակի մէջ տարուած ու կացինի հարուածներով թափուած են գիւղացիներու կողմէ կանխօրօք փորուած փոսի մը մէջ, եւ հողով ծածկուած. թէ՛ 4000 հայեր հաւաքած են Թոքատէն քիչ մը հեռու Պիգեռիի վանքին մօտ գտնուող բաց դաշտ մը եւ անձամբ այդ շրջանի միւտիրին հրամանով հրացանագարկ եղած: Տուն մնացած անոնց կիներն ու զաւակները հաւաքական աղերսագիր մը ներկայացուցին կառավարութեան, տեղեկութիւն խնդրելով իրենց ամուսիններուն եւ հայրերուն մասին: Խուսափողական պատասխաններ տրուեցան իրենց: Հոն մնացողներու մեծամասնութեան համար, իրենց ամուսիններուն եւ հայրերուն երկարատեւ բացակայութիւնը անտանելի դրութիւն կը ստեղծէ: Կիները սկսան հազարներով հաւաքուի կառավարական շէնքերուն առջեւ եւ իրենց ամուսիններուն եւ հայրերուն վերադարձը պահանջեցին:

Իրենց պողտուքները, ծովու ալիքներու ձայներուն պէս, կը լսուէին շատ հեռուներէն: Բայց ոչ ոք կը լսէ իրենց զանգատները: Մարդկութիւնը սնանկացած է: Ասոր վրայ, յանկարծ, կառավարութիւնը ծանուցանեց հայ բնակչութիւնը անմիջապէս տարագրելու հրէշային որոշումը: Յայտարարուեցաւ նոյնպէս որ կիներն ու երեխաները եւս պէտք է լքեն իրենց տունները, որպէսզի միանան իրենց ամուսիններուն եւ հայրերուն:

Սկիզբը սակաւաթիւ ընտանիքներ մահմետական դարձած էին: Ապահովութեան նկատմամբ, անոնք ստիպուած էին իրենց տունները մնալ: Համարձակեցան երթալ իրենց մօտիկ բարեկամներուն խորհուրդ տալու համար որ իրենց օրինակին հետեւին, որպէսզի խուսափին իրենց սպառնացող սոսկալի ճակատագրէն: Բայց մեծամասնութիւնը պատրաստուեցաւ հեռանալ ու մահուամբ գտնել փրկութիւն: Հակառակ ձերբակալուած մարդոց կրած աննկարագրելի թշուառութեան, այնպիսի արիւթիւն ու համակերպում մը կար անոնց մէջ, նման առաջին դարերու քրիստոնեաներու պարզած վսեմ տեսարաններուն: Տղաքն ու աղջնակները արհամարհանքով կը պատասխանէին բոլոր անոնց՝ որ խորհուրդ կու տային իրենց մնալ քաղաք:

Ոստիկանութիւնը սկսաւ կոպտօրէն վերաբերուիլ ժողովուրդին հետ: Ոմանք անհամբեր կը սպասէին իրենց մեկնումի թուականին: Ուրիշներ, աւելի անհամբեր, կառքեր վարձեցին իրենց ծախքով եւ մեկնեցան, միշտ ժանտարմներու ուղեկցութեամբ: Ոմանք կը յուզուէին աչքի առաջ ունենալով ճամբու ընթացքին իրենց կրելիք գրկանքները: Շատեր ընկճուեցան այդ տառապանքներու սաստկութենէն: Ճամբու ընթացքին բոլորն ալ կողոպտուեցան թուրքերէն: Գիւղերու հայերը յոռեգոյն ճակատագիրը ունեցան. ժանտարմները քշել տուին զանոնք նախիրի մը պէս: Սովորական բան էր տեսնել մայրեր՝ երեխայ մը շալկած իրենց կուսակին, երկրորդին ձեռքէն բռնած ու տակաւին բեռնաւորուած՝ քարուքանդ դարձած հայրենի օճախէն վերցուած խղճուկ պաշարեղէնով: Աշխարհ մը թշուառութիւն կը հոսէր անոնց դէմքերէն: Կը կողոպտուէին տուններն ու խանութները, ուր արժէքաւոր ոչինչ մնացած էր արդէն: Ուրիշներ՝ կնքուած ելեմուտքի գրասենեակի պաշտօնեաներու կողմէ, կը վաճառուէին ծիծաղելի գիներով:

2.- Խօսքը կը վերաբերի Երզնկայի առաջնորդ նշանակուած Սահակ վրդ. Օտապաշեանի սպանութեան (1914, 31 Դեկտ.):

Յաճախ կը խանգարուէր կարաւաններու երթը աղ- ջըկան մը կամ երեխայի մը առեւանգման հետեւանքով, զոր մահմեմատականները բռնի կը տանէին, մայրերու կատաղութեան եւ իշխանաւորներու անտարբերու- թեան ներքեւ:

Քիչ չէր հիւանդացողներու եւ մահացողներու թիւը:

Այսուհանդերձ, բացի հարագատներէն, ոչ ոք նեղու- թիւն կը զգար: Մահացողը թաղելու համար ամէնէն դժուար բանը գերեզմանափոր մը, մինչեւ իսկ բահ մը գտնելն էր:

Քանի մը օր ետք, տարագրուեցան նոյնպէս բոլոր իսլամացած հայերը:

Փաստ. 883-52

Ե 19.- ՋԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Կոստանդնուպոլիս նոր եկած Տոքթ. Ուզունեան հե- տեւեալ յայտնութիւնները կը կատարէ.-

Սըվազ.- Տոքթ. Հայրանեան, Տոքթ. Մագսուտ եւ Տոքթ. Պաղտասար տարագրուեցան. հինգ ամիս բանտ մնալէ ետք թուրք ժանտամներու եւ գիւղացիներու կողմէ սպաննուեցան կացինի հարուածներով:

Քիչեր մը, ծնունդով սամսոնցի դեղագործ Վահան Շիրինեան երիտասարդը, ինչպէս նաեւ ուրիշ երիտա- սարդներ ձերբակալուեցան եւ ամբաստանուեցաւ այն յանցանքով՝ որ էրզրումի անկման առթիւ ուրախ տրա- մադրութեան մէջ գտնուած են. սպաննուած են Մուսամ- մէրի հրահանգով:

Ամերիկեան հիւանդանոցէն օրիորդ Կրեֆին դրամ կը բաժնէր հայ զինուորներուն: Հիւանդանոցը յան- կարծ պաշարման կ'ենթարկուի, զինուորները կը ձեր- բակալուին եւ կը սպաննուին: Երկու տարի զինուորա- կան դաժան ծառայութեան մը ենթարկուելէ ետք, ամե- լէ թապուրիի հայ զինուորները կ'առանձնացուին եւ Շար-Քչլայի մօտ կը սպաննուին:

Տիվրիկ.- Տիվրիկի հայերը տարագրուելէ ետք կը կողոպտուին եւ կը սպաննուին Սարը Չիչաքի ճամբուն վրայ. խեղճերուն կ'արգիլուի ջուր խմել: Մահը, հիւան- դութիւններն ու թշուառութիւնը ահռելի նախճիր կը գործեն. հայրեր, մայրեր եւ մանուկներ ողջ-ողջ կը թաղուին. սիրտ պատուող սրտաճմլիկ տեսարաններ կը

պարզուին. կը տեսնուին մահացած երիտասարդ մայ- րեր՝ երեխաները իրենց ծիծերուն վրայ բռնած:

Զօրահաւաքի գրասենեակին պետ Ատիլ պէյ (Քէօր Ատիլ) բարբարոսը քաղաքապետարանին մէջ խեղճ կի- ներ ծեծելէ ետք, անոնց ոտքերը այրել կու տայ շիկա- ցած երկաթներով, ստիպելով որ յայտնեն իրենց ամու- սիններուն թաքստոցները: Ստոյգ մահէ ազատելէ ետք, քանի մը հայեր ապաստանած էին լեռները. Վարդուհի անունով հիւանդապահուհի մը գաղտնաբար ու- տեստեղէն կը հասցնէր անոնց. այս դժբախտներէն քա- նի մը հոգի կը ձերբակալուին եւ Տիվրիկ կը բերուին եւ Քէօր Ատիլի հրամանով կը սպաննուին Սըվազի ճամ- բուն վրայ: Ուրիշներ դեռ լեռները կը գտնուին:

Էրզրում.- 3000 հայեր տաժանակիր աշխատանքի դատապարտուած էին. ծանր բեռներ կրելու պարտադ- րանքին եւ սովահարութեան հետեւանքով՝ ամէն օր հա- րիւրներով կը մահանային. դիակներով լեցուին էին նա- եւ այն ճամբաները, ուրկէ կ'անցնէին հիւանդացած տարագիրները:

Պատերազմական գերիները, հիւանդ վիճակի մէջ, կը տարուէին տաք բաղնիքներ եւ կ'ենթարկուէին ահռելի չարչարանքներու: Բժշկապետ Ֆուատ պէյ, քաջածա- նօթ իր հայատեացութեամբ, ամէնէն ծանր աշխա- տանքներ կը պարտադրէր հիւանդներուն: Հիւանդները չէին դիմանար ու կը մեռնէին: Անօգուտ էին այս մա- սին ներկայացուած զեկուցագրերն ու բողոքները:

Ձ. ԽԱՐԲԵՐԴ – ՏԻԱՐՊԵՔԻՐ – ՈՒՐՖԱ

Փաստ. 883-65

Ձ 1.– ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱԽԿԻՆ ՎԱԼԻ ՍԱՊԻԹ ՊԷՅ

(Թուրքի մը վկայութիւնը)

Տիրահոգակ վալին ամէնէն արիւնարբուններէն մէկն էր: Ահաւասիկ մէկը անոր ոճիրներէն.—

Տոքթ. Յարութիւն Մանուէլեան եւ Տոքթ. Յարութիւն Վեգնէեան Մալաթիոյ ճամբով աքտորուեցան Ուրֆա, հակառակ անոր որ բողոքական էին եւ զիրենք տարագրելու հրահանգ չկար: Ճանապարհին, Մալաթիոյ էշրաֆներէն (երեւելի) Միւֆթիզատէ Ֆէյզի, յաջողեցաւ դիւրացնել անոնց փախուստը, եւ իր տան մէջ պահեց զանոնք: Սապիթ պէյ, իմանալով այս փախուստին մասին, հոն կը զրկէ ոստիկանապետ Ռեշատ պէյը, որ չըջապատման տակ կ'առնէ խոճա Ֆէյզիի տունը, կը ձերբակալէ ու կը բանտարկէ այս վերջինը երկու բժիշկներուն հետ միասին:

Խոճային ներկայութեան, ոստիկանապետը խեղդել

կու տայ երկու հայերը եւ խոճային կ'ըսէ. «Խոճա, ահա՛ քու պաշտպանեալներդ»:

Խոճա Ֆէյզի կը պատասխանէ. «Դուն խեղդեցիր զանոնք, բայց չես կրնար զիս եւս խեղդել: Օր մը վրէժը պիտի լուծենք այս դժբախտներուն մահուան. Աստուած վկայ է այս ոճիրին»:

Ամէն իրիկուն, հազարաւոր հայեր կ'անցնէին Ֆապրիքաթորեան եղբայրներու տան առջեւէն, որ բնակատեղին էր վալին. անոնք գիտակից էին որ կէս ժամ հեռաւորութեան վրայ պիտի կոտորուէին: Դժբախտ այս մարդիկը կը քալէին երգելով. «Ով սրիկայ, որ չես վախնար Աստուծոմէ. մահը թէ մեզ եւ թէ ձեզ համար է»: Բայց վալին կը մնար անտարբեր:

Փաստ. 883-29ր

Ձ 2.– ՈՂՋԱԿԻՉՈՒՄ ՍԸ

Խարբերդի գերմանական որբանոցի տնօրէնտիին Օրիորդ Ճեմմի Եանսոն, դանիացի, կը պատմէ հետեւեալը.—

Հայոց տարագրութեան ժամանակ, շնորհիւ շարունակական փնտռութիւններու, ես եւ գերմանացի (կրօնաւոր) ընկերուհիներս յաջողեցանք հաւաքել եւ մեր որբանոցներուն մէջ ապաստան տալ շուրջ 300 հայ որբերու:

Վեց ամիս ետք, Խարբերդի իշխանութիւնները պաշտօնապէս դիմեցին մեր տնօրէնութեան եւ պահանջեցին որբերը իրենց յանձնել: Որբանոցի տեսչութիւնը եւ մեր քաղաքի գերման զինուորական իշխանութիւնները միջամտեցին Խարբերդի կառավարութեան մօտ ուժգին ընդդիմանալու համար թրքական իշխանութեանց պահանջին: Եւ սակայն ի գուր էր: Կառավարութիւնը կը պնդէր յայտնելով որ Կոստանդնուպոլսէն խիստ հրահանգ կայ որբերը առնելու եւ զրկելու հոն ուր կը գտնուէին իրենց ծնողները:

Ստիպուեցանք տեղի տալ, իշխանութիւններէն հանդիսաւոր երաշխիք ստանալէ ետք, որ այս փոքրիկները ողջ ու առողջ պիտի հասնին իրենց համար սահմանուած վայրը: Իշխանութեանց կողմէ առաքուած մասնաւոր գործակալներ տարին 300 որբերը:

Երկու օր ետք, երեկոյեան կողմ, երկու որբեր եկան մեզ մօտ: Արագ վազքով եկած էին ու քրտինքներու մէջ կը լողային: Պատմեցին որ քաղաքէն երկու ժամ դուրս, ողջ-ողջ կ'այրեն իրենց ընկերները. իրենք կրցած էին փախուստ տալ...

Մենք հաւատք չընծայեցինք այդպիսի անհաւատալի պատմութեան մը: Այսուհանդերձ, յաջորդ առաւօտ, մեր խղճի հանգստութեան համար, ես եւ գերմանացի քոյրերը երկու որբերուն առաջնորդութեամբ ուղղուեցանք ցոյց տրուած տեղը: Անապատային վայր մըն էր, քաղաքէն երկու ժամ դուրս: Հեռուէն նշմարեցինք դեռ ծխացող սեւ զանգուած մը: ...կախառն այդ մոխրակոյտը քրքրելով տեսանք մեր խեղճուկ փոքրիկներուն ածխացած ոսկորները...

Փաստ. 883-40ա

Ձ 3.- ՍԱՐՍԱՓԵԼԻ ՈՃՐԱԳՈՐԾ ՍԸ՝ ՄԵՀՄԷՏ ՊԷՅ

Մալաթիոյ երեսփոխան Հաշիմ պէյի որդի Մեհմէտ պէյ զօրակոչի առաջին օրերէն զինուորագրուած է իբրեւ ժանտարմ եւ մեկնած է կովկասեան ճակատ, ուր Տոքթ. Պեհմէտտին Շաքիրի հետ համաձայնելէ ետք, կը վերադառնայ Մալաթիա որպէսզի զբաղի բանտերէն արձակուած ոճրագործներով չեթէական գուճեր կազմակերպելու:

Մեհմէտ պէյ գործօն մասնակցութիւն ունեցաւ ոչ միայն Մալաթիոյ հայերու կոտորածներուն մէջ, այլ նաեւ ձեռքերը թաթխած է ուրիշ նահանգներու հայերու արեան մէջ:

Մեհմէտ պէյ Իթթիհատի կեդրոնին ուղարկած է տարագիրներէն կորզած դրամին ու գոհարեղէնին կէսը՝ միւս կէսը բաժնուած են ինք եւ իր հրամանին տակ գտնուող ոճրագործները:

Թալէաթ փաշայի կառավարութեան օրերուն, Մեհմէտ պէյ եւ Մալաթիոյ կառավարիչ Պիթիսի Գէլ Բեշիտ մէկուկէս տարուան բանտարկութեան դատապարտուած էին, բայց զօրագունդի հրամանատարը մերժած էր դատավճիռը գործադրել:

Փաստ. 883-76

Ձ 4.- ԽԱՐԲԵՐՂԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՍԱՊԻԹԻ ՄԵՂՍԱԿԻՑՆԵՐԸ

Տարագրութեան եւ կոտորածներու օրերուն, Խարբերղի վալի Սապիթ պէյը իրեն արժանի մեղաւկիցներ ունեցաւ. իր ստորադասը, Ֆայիք, հարստացած Խարբերղի տարագրեալներու թողօնին աւարումով, այժմ սեփականատէրն է Հիւսէյնիկ մեծ գիւղին: Բանտապետ Հասան, ոստիկան զօրաց խորհրդական Մեհմէտ, Շետէլգատէ Ֆեհմի վաճառականը, — բոլորը հարստացած են յափշտակելով հայերէն հարիւր հազարաւոր ոսկի արժողութեամբ ինչքերը:

Խարբերղի հայերուն մեծագոյն դահիճները հանդիսացան՝ Խարբերղի Իթթիհատի նախագահը՝ Հաճի Գայա եւ Քեախթա ցեղախումբին պետը՝ Հաճի Պետրի: Ասոնք ջարդեցին Սամսունի, Օրտուլի, Կեսարիոյ եւ բազմաթիւ այլ վայրերու հայերը, որոնք ղժբախտութիւնը ունեցան իրենց աշիրէթական երկրամասերէն անցնելու:

Կողոպուտի ամբողջ աւարը, — գորգ, գոհարեղէն, այլեւայլ ապրանքներ տակաւին իրենց մօտ կը մնան:

Փաստ. 883-65

Ձ 5.- ԽԱՐԲԵՐՂԻ ԲՆԱԶՆՁՈՒՄԸ
(Երեսփոխան Մեհմէտ պէյի կողմէ պատմուած)

Տարագրութեան օրերուն Խարբերղ կը գտնուէի: Հայերը ճամբորդութեան պատրաստութիւններ կը տեսնէին, ուրախ, կարծես գիւղագնացութեան կ'երթան: Հարուստները կառքեր եւ ձիեր վարձեցին, եւ մեկնումի պատրաստ էին, անգիտակ իրենց սպասող եղեռնական վախճանին:

Բայց երբ հոտը առին կառավարական ծրագրին, 30.000 հայեր իսլամանալու առաջարկ ներկայացուցին, կառավարութիւնը կտրուկ կերպով մերժեց:

Տարագրեալները ճամբայ ելան կարաւաններով, շրջապատուած ժանտարմներէ: Քաղաքը պարպուեցաւ երկու օրէն. բազմամարդ քաղաքին ամայացուած

սարսուղեցիկ էր մեզի համար:

Առաջնորդական տեղապահին եւ մտաւորական դասու տարագրումէն մէկ օր ետք տեղի կ'ունենային կոտորածները:

Տարագրեալներէն շատեր, նոյնիսկ առատ փրկագին վճարելով հանդերձ, չազատեցան ետթաղանէն:

Կիները, սարսափի մատնուած, լքած էին իրենց զաւակները ճամբաներու վրայ. այս խեղճ երեխաները քաղաք վերադարձան սրտաճմլիկ վիճակի մէջ:

Այս նկարագրութիւնը մէկ էջն է միայն Խարբերղի արիւնալի պատմութեան: Խարբերղի կոտորածը իր ահաւորութեամբ վեր է ամէն երեւակայութենէ:

Փաստ. 883-39

Ձ 6.– ԽԱՐԲԵՐԴԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Խարբերդի վալին, Սապիթ պէյ, ամէնէն մեծ պատասխանատուն է իր նահանգին մէջ գործուած գազանութիւններուն: Իր ղեկավարած նահանգը թատերաբեմ դարձաւ ուրիշ նահանգներու հայերու ջարդերուն:

Բայց միայն վալինն դատապարտումը բաւակա՞ն է երբ Խարբերդի միւս ոճրագործները կ'ըմբռնեն իրենց բարբարոսութեան պտուղները եւ փարթամ կեանք մը կը վարեն:

Ամէնէն կատաղի դահիճներն են.—

Իգոլ աշիրէթէն Հաճի Կայա, Խարբերդի Իթիհատին պետը, եւ Հաճի Պետրի աղա, Քիահթա ցեղախումբին պետը: Առաջինը Իթիհատի ոգին էր, իսկ երկրորդը, իր Զէյնէլ եղբոր հետ, Խարբերդի գաւառ Մալաթիոյ փորձանքը դարձաւ: Սամսոնի, Օրտուի, Կեսարիոյ եւ այլ շրջաններու հայերը այս ոճրագործներու ճորտերուն ձեռքով սպաննուեցան: Մալաթիոյ մէջ, ուր զինուորական առաքելութեամբ մը գացած էի, տեսայ այս հուշակաւոր ճիւղի Հաճի Պետրի աղան, որուն մատները գարդարուած էին հայ եպիսկոպոսներու մատանիներով: Եռանդով կը խօսէր կեաւորներու դէմ իրեննե-

րու գործած գազանութիւններուն մասին:

Ուրիշ ճիւղ մըն է Ֆայիքը, Հիւսէյնիկէն. այժմ ան կը թագաւորէ աւերակներուն վրայ այս գիւղին, ժամանակին բնակուած միայն հայերով, որոնք իրենց ժրջան աշխատանքով այնքան բարեբեր դարձուցած էին զայն:

— Հասան.— Ոստիկան զօրաց պետ:

— Մեհմէտ.— Քարտուղար ոստիկանութեան:

— Շեմիլիզաւտ Ֆեհմի, որոնք նախքան տարագրութիւնը շատ աղքատ, այսօր նկատառելի հարստութեան տէր են:

Միայն Սապիթի ձերբակալութիւնը բաւարար չէ. վերոյիշեալ բոլոր ոճրագործներն ու իրենց մեղսակիցները պէտք է իրենց զարհուրելի ոճիրներուն համապատասխան պատիժը ստանան:

ՏՈՔԹ. ԶԱԻԷՆ ՎԱՀՐԱՄ
Խարբերդի Զինուորական
հիւանդանոցի բժիշկներէն մէկը

Փաստ. 884-39ա

Ձ 7.– ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԱՅԼ ՎԱՅՐԵՐՈՒ ՄԷՁ

(Քաղուած վիճակագրութիւններէն)

Հիւսնի-Մանսուրէն արտաքսուած 212 հայերէն միայն 128 հոգի Հալէպ հասած է: 56 տղամարդ եւ 11 կին սպաննուած են: 9 տղայ եւ 3 աղջնակ առեւանգուած են. 6 հոգի կորսուած է:

Երկրորդ տարագրութեան ժամանակ, քսորուած են 696 անձեր, որոնցմէ միայն 321 հոգի հասած է Հալէպ: 206 տղամարդ եւ 57 կին սպաննուած են. 19 տղայ եւ 70 երիտասարդ կին ու աղջիկ առեւանգուած են. 23 հոգի կորսուած է:

Փաստ. 883-19

Ձ 8.– ՏԻԱՐՊԵՔԻՐԻ ՍԱՐՍԱՓՆԵՐԸ

(Թուրք եւ հայ ականառեսներու վկայութիւն)

Բազմաթիւ հայ երիտասարդներ ձերբակալուեցան եւ բանտարկուեցան: Ենթարկուեցան ամէն տեսակի չարչարանքներու: 1915 թ. Մայիս 28ին, բոլոր հայ կալանաւորները, ժանտարմներով չրջապատուած, բերուեցան բերդին բակը: Զիրենք բնաջնջելու հրամանը տակաւին հասած չըլլալով, վալի Տոքթ. Ռեշիտ յանձնախումբ մը կը կազմէ եւ ստորագրել կու տայ բնաջնջումի գործադրութեան ծրագիրը:

Մայիս 30ին, Չերքէզ Եւփեր Շաքիրի հսկողութեան տակ բոլոր կալանաւորները կը բերուին քաղաքին հարաւը՝ Մարտինի դուռը:

Քաղաքի փողոցներէն անցած ժամանակ, կալանաւորները կը սկսին բարձրաձայն երգել, որպէս վերջին հրաժեշտ հայրենի օճախին:

Միեւնոյն գիշերը [առաջնորդական] տեղապահ Ջըլղատեանը պտտցուցին թրքական թաղերուն մէջ բոլորին ծաղրին ենթարկելով: Շէյխեր, հոճաներ, մոլլաներ զայն անարգեցին եւ չարչարեցին, նուազի ընկերակցութեամբ: Մէկ առ մէկ քաշեցին ակռաները, շիկացած երկաթով այրեցին քունքերը, մարմնի միսերը կտրատեցին, աչքերը փորեցին եւ այրեցին՝ մարմնին վրայ քարիւղ կաթեցնելով: Յաջորդ առտու, մեռած գտնելով գինք՝ բանտապահները կալանաւորներուն իմացուցին որ տեղապահը, բանտը այրել տալու նպատակով ինքզինք քարիւղով հրկիզած էր: Նոյն օրը դիակը ցուցադրուեցաւ ժողովուրդին եւ քանի մը բժիշկներու ստորագրել տուին տեղեկագիր մը որ տեղապահը մահացած էր ժանտատենդէ:

Տարագրուած հայերը, ըստ տեղացի թուրքերու պատմածին, կոտորուած են հետեւեալ պայմաններուն տակ. —

Շատ մը մարդիկ դիմումներ կը կատարեն տարագրը-

եալները ջարդելու եւ անոնց ինչքերը սեփականացնելու համար: Կարգ մը ցեղախումբեր կը փորձեն յարձակիլ կարաւանին վրայ, բայց զօրքը կ'արգիլէ: Տարագրեալները ողջ եւ առողջ կը հասնին Չայիքիան, որ որոշուած էր իբրեւ սպանդանոց:

Չերքէզ Շաքիր, աւագակներու հաւանական յարձակում մը պատրուակելով, կը յայտարարէ որ տարագիրներու հետիոտն երթալը աւելի ապահով է քան լաստանաւերով, եւ զանոնք կը հանէ լաստերէն: Կարաւանը կը հասնի որոշուած տեղը եւ հոն Փերիխիանի ցեղախումբը, որ տեղեկացուած էր ոստիկան զօրքերու եւ չերքէզներու կողմէ, հրացանազարկ կ'ընէ տարագիրները:

Տարագրեալներուն մէջ կը գտնուէին Ստեփան Չրաճեան եւ իր երկու աղջիկները, Գազազեան, Ապտիւլմեսիր, Ճերտիսէ, Տիրան, Խանտանեան Կարապետ եւ այլն:

Պարոն Տիրան Գազազեան իր կեանքը փրկելու համար կ'առաջարկէ 10,000 թրքական ոսկի վճարել եւ մահմետական դառնալ, բայց ի գուր:

Կոտորածի աւարտին, դահիճները կը խուժեն իրենց զոհերուն վրայ, կը խողխողեն մահամերձները եւ, անոնց ունեցուածքը յափշտակելէ ետք կը հեռանան:

Բարբարոսները կը հագուին իրենց զոհերուն արիւնլուայ զգեստներն ու ձերմակեղէնները: Կարաւանի հրամանատարի հրահանգով դիակներուն կը հագուեցնեն մահմետականներու զգեստներ. փաթթոցներ կ'անցընեն մահացածներու գլուխին, կը լուսանկարեն եւ հոս հոն կը պտտցնեն ժողովուրդը հայերուն դէմ գրքուելու համար: Լուսանկարները տպուած են գրքոյկներու մէջ իբրեւ հայերու կողմէ գործուած դազանութիւններու տեսարաններ:

Փաստ. 883-47

Ձ 9.- ՏԻԱՐՊԵՔԻՐԻ ՆԱԽԿԻՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ՓԻՐԻՆՆԻՉԱՍԷ ՖԵՅՉԻ ՊԷՅ

Այս ճիւղին պատմութիւնը թուրքի մը կողմէ պատմուած է: Երեսփոխան Ֆէյզի պէյ Տիարպեքիրի երեւելիներէն մէկն էր, եւ շատ ազդեցիկ: Հոն կը գտնուէր հայերու տարագրութեան ժամանակ: Ինք եւ Տիարպեքիրի վալին՝ արիւնարբու Տոքթ. Ռեշիտ պատրաստեցին Վիլայէթի հայոց վրայ գործադրուելիք սարսափներու ծրագիրը: Վալին նախագահութեան ենթակայ 18 անդամներէ բաղկացեալ յանձնախումբ մը կազմեցին: Ֆէյզի պէյ հանդիսացաւ ամէնէն գործունեայ անդամներէն մէկը:

Ահա եւ միւս անդամները.—
[Կը հետեւի՝ անունները, 14 հաս]:

Այս յանձնախումբը կազմակերպելէ ետք, Ֆէյզի պէյ կազմեց նաեւ աւագակներէ բաղկացեալ ջարդարարներու վոհմակ մը: Այս խումբը կոչուեցաւ Միլլա, որ վալին նպատակներու հետապնդման համար հանդիսացաւ դիւրաշարժ եւ միեւնոյն ժամանակ սոսկալի գործիք մը:

Ազգին ներկայացուցիչ՝ այս չարաշուք երեսփոխանը ամէն ջանք թափեց ձեռք բերելու համար ներում անլանի աւագակներ՝ Փերիխանի որդի Էօմէր Մուստաֆայի գաւակներուն, որոնք հետապնդումի տակ էին իշխանութիւններուն կողմէ:

Ֆէյզիի նախաձեռնութեամբ, երեւելի 670 հայեր, — մտաւորականներ, առեւտրականներ, ճարտարարուեստի մարզի մարդիկ — ձերբակալուեցան եւ երկու աւագակներուն կողմէ առաջնորդուեցան սպանդանոց: Բոլոր այս հայերը սպաննուեցան Տիարպեքիրէն 12 ժամ

հեռու Ղելիքիանի մէջ: Այս նախճիրէն վերադարձին, Ֆէյզի պէյ իր տան մէջ ջերմօրէն հիւրասիրեց արիւնարբու ոճրագործները, եւ շնականօրէն պահանջեց անոնցմէ. «Կ'երդնունք ձեր գլխուն վրայ, պէյ էֆէնտի, որ ոչ մէկը ողջ ձգեցինք»:

Առաջնորդական տեղապահ Ջլղատեանի նահատակութիւնը, պատմուած «Տիարպեքիրի սարսափները»-ի մէջ, գործն է գլխաւոր ոստիկանապետ Ռեսուլ պէյի:

Ալիպունտի վանքի վանահայրը տանիքէն վար նետուեցաւ. մարմնի անդամները ջարդուեցան, ողորմելի վիճակի մը մէջ, վիզէն պարան մը կապուած, քաշկոտուեցաւ փողոցներուն մէջ. դժբախտ մարդը մեռաւ այսպէս ամէնէն սոսկալի մահուամբ մը:

Ֆէյզի պէյի խորհուրդով է դարձեալ, որ 80 երիտասարդ ու կորովի հայեր բանտարկուեցան Դաշնակցութեան ակումբին մէջ, ուր չարչարուեցան. անոնք ենթարկուեցան անլուր նահատակութեան մը. անոնց եղունգները քաշեցին, աչքերը փորեցին, գլուխներուն վրայ շիկացած անօթներ դրին. ահաւոր մահ մը ունեցան երկարատեւ հոգեվարքով:

Ահաւոր այս շահատակութիւններէն ետք, նախկին երեսփոխանը կը վերադառնայ Կոստանդնուպոլիս, հետը բերելով պաշտօնական փաստաթուղթեր, զոր կը յանձնէ Իթիհատի Կեդր. կոմիտէին: Վերադարձին եւս անգործօն չի մնար. Մերտինէն եւ Ճեզիրէէն անցնելով, ձեռքերը կը թաթիսէ հայերու արեան մէջ:

Եւ այսօր, այս ոճրագործը կը վայելէ իր հարստութիւնը եւ փարթամ կեանք մը կը վարէ իր բնակարանին մէջ: Կը բնակի Շիշլի, Պոյաճի փողոց, Քարլո Ամանճիճի յարկաբաժնին մէջ, թիւ 3:

Փաստ. 883-36

Ձ 10.– ԱՄԲԱՍՏԱՆԱԳԻՐ ՈՒՐՖԱՅԻ ԳԵՐՄԱՆԱՅԻ ՄԻՍԻՈՆԱՐ ՖՐԱՆՑ ԷԿԶԱՐԹԻ ԴԷՄ

1900ին, գերմանացի միսիոնար Ֆրանց Էկզարթ ընտանեօք հաստատուեցաւ Ուրֆա, ուր դանիացի հայասէր օրիորդ Քարէն Եփփէի հետ որբանոց մը հիմնեց:

Որբանոցին մէջ ատեն մը իր միսիոնարական առաքելութիւնը կատարելէ ետք, Էկզարթ սկսաւ բարեկամական սերտ յարաբերութիւններ մշակել հայ առեւտրականներու հետ եւ, շնորհիւ անոնց օժանդակութեան, յաջողեցաւ հիմնել գորգագործարան մը, ուր կ'աշխատցնէր հայ տղաք ու աղջիկներ:

Էկզարթ մնալուն յարաբերութեան մէջ էր հայ վաճառականներու հետ. քիչ ատենէն այս մտերմութիւնը կը վերածուէր ընտանեկան յարաբերութիւններու, որոնց շնորհիւ կրցաւ գիտելիքներ ձեռք բերել հայոց լեզուին մէջ եւ կատարելագործել իր թուրքերէնը, մինչդեռ իր կիներն ու Յ գաւակները սահուն հայերէն խօսիլ կը սորվէին եւ թուրքերէն բառ մը իսկ չէին գիտեր:

Մինչեւ հայոց տարագրութիւնը Էկզարթ իր հայ գործաւորներուն հետ շարունակեց իր գործարանին շահարկումը, երբ, ի գարմանս իր հայ շրջապատին, գործունէութեան նոր դաշտ մը բացուեցաւ իրեն համար:

Տարագրութիւնը սկսելէն շուրջ 15 օր առաջ, տեղական իշխանութիւնները խորհրդապահաբար իմացուցած էին իրեն, որ Ուրֆայի եւ շրջակայ գիւղերու հայերը մօտ օրէն պիտի տարագրուին եւ կոտորուին: Այս լուրը առնելուն պէս, այդ մասին հաղորդ պահեց իր մտերիմ հայ բարեկամները, միաժամանակ ապահովեցնելով որ կարելին պիտի ընէր գիրենք պաշտպանելու համար եւ, հետեւաբար, մտահոգուելու պէտք չունին իրենք: Հայերը պատճառ չունէին կասկածելու իր խոստումներէն, արուած ըլլալով որ Էկզարթ եւրոպացի էր եւ որ իրենք հին ու մտերիմ բարեկամ մը կը համարէին գիրենք:

Ասկէ ետք, Էկզարթ սկսաւ գաղտնաբար հայոց ապրանքները իր գորգագործարանը փոխադրել, հոն թաքցընելու համար:

Հիմա որ բաւական բարձր արժէք ներկայացնող ապրանքները ապահով տեղ կը գտնուէին, բնակաբար հայերը մտածեցին նաեւ իրենց կեանքը փրկելու մասին: Հետեւաբար, իրենց ունեցած թանկարժէք իրեղէններով – ոսկի, գոհարեղէն, հնութիւններ եւայլն – ապաստանեցան Էկզարթի տունը, որ կը գտնուէր քաղաքէն հինգ վայրկեան հեռու ընդարձակ պարտէզի մը մէջ: Այս ձեւով կը յուսային զերծ մնացած ըլլալ աղէտալի հետեւանքներ ունեցող տարագրութեան մը վտանգներէն:

Կոտորածները սկսած էին արդէն: Երկու օր հայերը իր մօտ պահելէ ետք, Էկզարթ սկսաւ բռնագրաւել անոնց շարժուն կարասիները եւ այս յափշտակութիւնը աւարտելէ ետք, դիմեց Ուրֆայի կառավարչին եւ հայերուն դէմ դանդաղ ներկայացուց անոր: Միւթեսարը՝ Ֆին մօտ գնաց բոլորովին գունատ եւ սարսափի մատնուած ըլլալու երեւոյթ մը ձեւացնելով. – «Էֆէնտիս, պէյս, այս պահուս տունէն կու գամ. մօտս ապաստանած են մեզի թշնամի մեծ թիւով հայեր՝ իրենց ընտանիքներով, եւ կը խնդրեն որ գիրենք պաշտպանեմ եւ փրկեմ տարագրումէն: Պատասխանեցի՝ ոչ մէկ պատասխանատուութիւն կրնամ վերցնել, բայց անկարելի եղաւ տունէն դուրս հանել գիրենք. եւ որպէսզի պատասխանատու չմնամ, ահա ձեզ տեղեակ կը պահեմ կացութեան մասին: Դուրս հանէ հայերը բնակարանէս»: Այս ըսելէ ետք հրաժեշտ տուաւ միւթեսարը՝ Ֆին:

Անմիջապէս տեղական իշխանութիւնները հրահանգեցին ոստիկան զօրաց հրամանատարին որ ժանտարմներ ուղարկեն Ֆրանց Էկզարթի բնակարանը: Ժանտարմները մտրակի հարուածներով արտաքսեցին ապաստանեալ ընտանիքները եւ քաղաքէն դուրս 2-3 ժամ հեռու տանելէ ետք, անգլթօրէն սպաննեցին բոլորը առանց բացառութեան:

Սակայն եւ այնպէս յազեցած չէր Էկզարթի արիւնածարաւ բնազդը: Կ'ուզէր գործօն մասնակցութիւն բերել հայկական կոտորածներուն: Այս մտադրութեամբ ալ դիմեց գերմանացի այն սպային, որ կցուած էր թրքական թնդանօթային զօրագունդին. այս վերջինը բերած էր յատկապէս ղեկավարելու համար հայկական ջարդերը. եւ անոր Էկզարթ ումբակոծել տուաւ բնակարանները այն երեւելի հայերուն որ դեռ չէին տարագրուած:

Իր նպատակներու իրագործումէն ետք, Էկզարթ կը վաճառէ Ուրֆայի եւ շրջակայքի մէջ յափշտակած ապրանքները. պղնձեղէնները, գոհարեղէնները, գորգերը, մետաքսեղէնները եւ այլ արժէքաւոր առարկաները կը ծախէ Հալէպի մէջ: Մտեց նոյնպէս Քարէն Եփփէի որբանոցէն իր գողցած իրեղէնները: Էկզարթ դեռ իր մօտ կը պահէ գոհարեղէններու եւ արժէքաւոր առարկաներու մէկ մասը:

Այսպէս, գործօն մասնակցութիւն բերելով հայութեան բնաջնջումին, Էկզարթ հարստացած է. բայց որովհետեւ աշխատող ձեռքեր չէին մնացած այլեւս, ստիպուեցաւ փակել իր գործարանը եւ վերադառնալ միսիոնարական իր նախկին պաշտօնին:

Այս ալ հարստանայու լաւ առիթ էր: Եւրոպայի եւ Ամերիկայի այն միսիոնարները, որոնց կը դիմէր ան ու կը պարզէր հայոց ահռելի դրուժիւնը, ոսկեդրամով գումարներ կը ղրկէին իրեն: Սակայն էկհարթ, որ կարեւոր գումարներ կը գանձէր թրքական Նամակատունէն եւ Օսմ. դրամատունէն, փոխանակ եղածին պէս դժբախտ հայերու բաժնեկու, սկսաւ շահարկել գանոնք՝ ոսկեդրամները թղթադրամի վերածելով: Կարելի չէ նոյնպէս գաղափար կազմել իր ստեղծած եկամուտի աղբիւրներուն մասին:

Իսկական գերիի վերածած էր այն հայուհիները զոր օրն ի բուն կ'աշխատցնէր իր մրգաստանին մէջ, Հալէպի արեւակէզ երկնքին տակ: Հսկելու համար Տիկին էկհարթ կ'երթար անոնց մօտ, անարգելով, ծեծելով եւ ճանկուտելով գանոնք:

էկհարթ իր տան մէջ եւս ունէր ամսական 5-10 դահեկանով աշխատող երկոտասնեակ մը հայ սպասուհիներ: Եթէ պատահէր որ այս աղախիններէն մէկը կամ միւսը զգուած այլեւս իրեն հանդէպ ցոյց տրուած յոռի վերաբերումէն, ձգէր հեռանար, էկհարթ ոստիկանութեան կը դիմէր՝ գողութեամբ զրպարտելով աղախինը:

Ֆրանց էկհարթը շատ լաւ կը ճանչնան Ուրֆայի եւ շրջակայ գիւղերու թուրք, արաբ եւ սուրիացի բնակիչները:

Ահա ամփոփումը այն ամէնուն որ գիտեմ իր ա-

րարքներուն մասին:

Ստորեւ կը նշեմ անունները Ուրֆա գտնուող այն անձերուն, որոնք պատրաստ են վկայելու իմ յայտարարութեանց ճշգրտութեան մասին:

Տոքթ. Արմենակ Ապուհայթեան, դեղագործ Գարեգին՝ Խարբերդէն, քարոզիչ էֆրայիմ ձենագեան, ծխախոտի վարչութեան տեսուչ Խայրի էֆէնտի:

Առաջին երկուքը մահմետականացած են եւ կը կոչուին Տոքթ. Արիֆ Ապտուլլահ եւ Քատի էֆէնտի:

Քարոզիչը, ասորի ըլլալով, նոյն անունը կը կրէ:

Ինչ որ կը մնայ հայերէն Ուրֆայի մէջ, ինչպէս նաեւ արաբները եւ ասորիները, պատրաստ են վկայելու իմ նշած գեղծումներուն մասին:

Ֆրանց էկհարթ, վաճառած ըլլալով այն ամէնը որ ունէր Ուրֆայի մէջ, այժմ կը դարմանուի Կոստանդնուպոլսոյ գերմանական հիւանդանոցին մէջ: Կինն ու զաւակները Բերայի Փեթերսպուրկ հիւանդանոցն են: Առաջին պատեհ առիթին կը սպասեն Գերմանիա վերադառնալու համար:

ԳԱՐԻԻԷԼ ՏԱՂԱԻԱՐԵԱՆ

Նախկին թարգման գերման սպաներու սպասարկութեան մէջ

Կ. Պոլիս, 15 Յունուար 1919

Փաստ. 883-84

**Ձ 11.– ՏԻԿԻՆ ՎԱՐԴԱՆՈՅՇ ԲՐՈՒՏԵԱՆԻ, ՕՐ. ԱՇԽԷՆ ՕՏԱՊԱՇԵԱՆԻ ԵՒ
ՎԵՐԳԻՆԷ ՕՀԱՆՆԵՍԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՄԻՍԻՈՆԱՐ ԷԿԿԼԱՐԹԻ ՄԱՍԻՆ
(Քաղաւած «Renaissance»էն)**

Տիկ. Վարդուհի Բրուտեան կը յայտնէ որ ինք գերման միսիոնար էկկլարթի մօտ գացած է ընկերանալով տիկ. Արաքսի Քիւլասեանի, որ կինն էր ուրֆացի այն հարուստ առեւտրականին, որ իր ամբողջ հարստութիւնը՝ գոհարեղէն եւ այլ իրեր, վստահած էր էկկլարթին: Այս տիկինները Ռազգայէն Ուրֆա գացած են Քիւլասեանի պահ գրած հարստութենէն գումար մը պահանջելու համար էկկլարթէն:

Ներկայացած են այս վերջինին եւ խնդրած, աղաչած որ գէթ քանի մը ոսկի տայ որպէսզի սփոփեն իրենց թշուառութիւնը. էկկլարթ, իր կնոջ ներկայութեան, չճանչնալ կը ձեւացնէ տիկ. Քիւլասեանը եւ կը վռնտէ երկու կիները անոնց հասցէին անարգանքներ տեղալով թէ «Ինչպէ՞ս կը համարձակիք գումար պահանջել գոյութիւն չունեցող աւանդէ մը»: Տիկ. Քիւլասեանի ողբ ու կոծին վերջ մը դնելու համար, էկկլարթ կը սպառնայ տարագրել տալ զիրենք Տէր Զօր:

Տիկին Բրուտեան կ'երդնու որ ականատես եղած է այս տեսարանին:

էկկլարթ ամօլը իրենց մօտ բերել կու տային հայուհիներ, կը շահագործէին զանոնք, ապա կը ծախէին թուրքերուն: Քիչ մնաց օրիորդ Աշխէն Օտապաշեան եւս գոհ կ'երթար այս զգուելի առուծախին: Ազատելու համար զինք էկկլարթի հետապնդումներէն, Օր. Օտապաշեանի ծնողները հնարամտութիւնը ունեցան իրենց աղջիկը ամիսներով մառանի մը մէջ պահելու եւ լուր տարածելու որ մեռած է ժանտատենդէ:

էկկլարթ խեղճ տարագիրները կը շահագործէր այլեւայլ հնարքներով: Կը տարածայնէր որ թուրք պաշտօնեաները կաշառելով կրնար փրկել հայերը եւ, իւրաքանչիւրէն 20, 30, 40, 50 եւ 100 ոսկի գանձելով, կը խոստանար շոգեկառքով զիրենք Հայէպ ուղարկել: Պայմանաւորուած օրը երբ կը ներկայանային, խարազանի հար-

ւածներով կը վռնտէր զանոնք, սպառնալով չարաղէտ Տէր Զօրի յիշեցումով: Այսպէս, տիկ. Վարդանոյշ Բրուտեանէն կորցած է 25 թրքական ոսկեղրամ: Երբ այս վերջինս իր ճամբորդական տոմսակը առնելու համար ներկայացած է զգուելի այս մարդուն, գանահարութեան ենթարկուած է անխղճօրէն:

Յաճախ էկկլարթ կը պոռար դժբախտ այս հայուհիներու երեսին. «Հայը պէտք չէ ապրի. այս ցեղը պիտի անհետանայ երկրագունդէն: Եթէ ապրիլ կ'ուզէք, գացէք թուրքերուն, մահմետական դարձէք»:

Պ. Արտաշէս Պաշմաճեանի, տիկիններ Բրուտեանի, Օտապաշեանի, Օհաննէսեանի յայտարարութիւններէն ի յայտ կու գայ որ թաքնուած հայերու մատնիչը նոյնինքն էկկլարթն է եւ ոչ երբեք դաւադիր պահակ մը, ինչպէս իր պաշտպանողական նամակով կը յաւակնի ան:

Մինչեւ տարագրութիւն, էկկլարթ չարաչար կերպով օգտագործած է հայերուն վստահութիւնը, իսկ այնուհետեւ դաւաճանած անոնց՝ որոնց նկատմամբ բարեկամութիւն կը ձեւացնէր: Ոստիկաններով եւ լրտեսներով շրջապատուած, կ'երթար հայկական թաղամաս. ծանօթ էր անոնց թաքստոցներուն: Հայերէն (որովհետեւ ծանօթ էր լեզուին) կը յորդորէր որ դուրս գան իրենց թաքստոցներէն, «Տղաք, կ'ըսէր անոնց, լքեցէք ձեր ապաստարանները եւ շրջագայեցէք ազատօրէն ընդհանուր զինադադարի հրամանը եկած է. այդ ես է որ կ'ըսեմ ձեզի»: Հայերը դուրս գալուն յաջորդ օրը, բոլոր ձերբակալել ու սպաննել կու տար:

Այդպիսին են, համառօտակի, յայտարարութիւնները տիկիններ Բրուտեանի, Օտապաշեանի, Օհաննէսեանի, որոնք պատրաստ են այդ մասին վկայելու արդարութեան ատեանին առաջ:

Է. Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Փաստ. 883-14

Է 1.– ԶԷՅԹՈՒՆԻ ԵՒ ՍԱՐԱՇԻ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՋԱՐԳԵՐԸ
(Հատուածներ «Արիամարտ»էն)

Ընդհանուր պատերազմի ստեղծած քաղաքական պայմանները նպաստեցին որպէսզի Երիտասարդ թուրքերը գործադրութեան դնեն իրենց հրէշային ծրագիրը: Իրենց նպատակն է մահացու հարուած մը տալ հայոց ազգին:

Որոշեցին սկսիլ Զէյթունէն, որ իթիհատական կառավարութեան աչքին փուշն էր: Որ պահած էին անոր դէմ, թէ պատմական եւ թէ կառավարական ոխ: Ուզեցին միանգամընդմիջտ քանդել արծիւներու այս միջնաբերդը, որ, Կիլիկիոյ աւերակներուն մէջ, կը գոյատեւէր ապրելով անկախ կեանք մը:

1914 թ. Սեպտեմբերի սկիզբն էր: Թրքական կառավարութիւնը կասկածելի չէզոքութիւն կը պահէր տակաւին: Մարաշի կառավարիչը Հայտար պէյ – Միուլթիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան մէջ նորադարձ մը, որ աւելի ուշ Մուսուլի, ապա Պիթլիսի վայրի դարձաւ – Կեդրոնական կառավարութեան հրամանով, եւ կամ անոր շնորհիւ արժանանալու յոյսով, Զէյթուն ժամանեց ոստիկան զօրաց ջոկատով մը: Հրամայեց որ Նազարէթ Չառուշ Նորաշխարհեանը իր մօտ գայ: Տեղւոյն երեւելիներէն մէկն էր Նազարէթ, միաժամանակ Զէյթունի քաղաքապետը: Գուշակելով յարուած դասը՝ Նազարէթ մերժեց ներկայանալ առաջին կոչերուն: Ի վերջոյ սակայն որոշեց ներկայանալ, նկատի ունենալով որ յամառութեան պատճառաւ նոր հալածանքներու կրնային ենթարկուիլ իր հայրենակիցները: «Պէտք է անձս գոհեմ ձեր կեանքը խնայելու համար», ըսաւ ան իր ընկերներուն եւ նոյն իրիկունն իսկ յանձնուեցաւ: Հայտար պէյ ծեծել տուած է զինք խարազանի 600 հարուածներով եւ յաջորդ առաւօտ կիսամեռ վիճակի մէջ զրկած Մարաշ: Հոս շարունակուած է գանակոծութիւնը: Օրեր ետք, Հայտար պէյ Մարաշի բանտը կը զրկէ Գատիգատէի փեսան՝ դեղագործ Լուիթֆի էֆէնտին իբր թէ բանտարկեալին վէրքերը դարմանելու: Դեղագործը կը սրկէ թոյն մը, որ շուտով կը գործէ իր ազդեցութիւնը: Նոյն երեկոյեան մահացաւ: Նազարէթ Չառուշի մարմինը բանտէն դուրս կը հանուի եւ կը թաղուի մօտակայ դաշտին մէջ: Այդ շաբթուան ամբողջ տեւողութեան հսկողութեան տակ կ'առնեն մարմինը որպէսզի հայերը չփախցնեն զայն: Այդ պահուն վարագոյրը կ'իջ-

նէր այն վայրագութեանց վրայ, որոնց թատերաբեմ հանդիսացաւ Զէյթունը յետագային: [Իթիհատի] կոմիտէին անդամները լայն շունչ քաշեցին եւ շարունակեցին աւելի ազատօրէն ու թեթեւ սրտով հետապնդել բնաջնջումի իրենց նպատակը: Ծրագիրը կազմուած էր արդէն ժամանակին: կը մնար պատրուակ մը ճարել անոր գործադրութեան համար:

Տարտանջի կռիւներուն ժամանակ, ճակատ ուղարկելու պատրուակով Մարաշ գտնուող բոլոր հայ զինուորները, զինաթափ եղած, զրկուեցան Ուրֆա բանուորական գունդերուն (ամելէ թապուրի) միանալու համար: Թուրք պատասխանատուներուն կը թողունք ըսել թէ ինչ եղաւ հազարաւոր այդ երիտասարդներու ճակատագիրը: Ինչ որ մենք գիտենք, այն է որ անոնց մէկ մասը, անկարող այլեւս տոկալու իրենց վրայ գործ դրուած վայրագութիւններուն, փախուստ տուին եւ ապաստանեցան Զէյթուն: Այս ժամանակ է որ գործադրութեան զրուեցաւ Զէյթունի դէմ ծրագրուած մահուան վճիռը: Հրահրուած թուրք երեւելիներու եւ մասնաւորաբար Մարաշի Իթիհատի Ակումբէն՝ Մարաշի կառավարիչը փախստականներու հետապնդումը վրստահեցաւ ոստիկան զօրաց հրամանատար Սուլէյման պէյին, որ երկրամասի վայրագ ժամտարմներու օգնութեամբ՝ զէյթունցիներէն պահանջեց որ փախստականները յանձնեն: Զէյթունցիները պատասխանեցին որ կ'անգիտանային անոնց գտնուած տեղը, ինչ որ պատճառ դարձաւ որ անոնք գարշելի վերաբերմունքի արժանանան Սիւլէյմանի եւ իր ընկերներուն կողմէ:

Ի վերջոյ, Սիւլէյման պաշարման ենթարկեց եւ կրակի տուաւ քաղաքը: Քաղաքացիներուն յաւելեալ չարչարանքներ խնայելու համար, փախստականները քաշուեցան լեռները: Ծրագիրը յաջողած եւ գտնուած՝ երկարատեանէ ի վեր սպասուած պատրուակը, որպէսզի կարելի ըլլայ անցնիլ կանխորոշուած ահռելի հրէշագործութիւններուն:

Թուրք ամբոխը, գրգռուած այն սարքովի տարածայնութիւններէն, որ իբր թէ զէյթունցիները ապստամբած են, պահանջեց իշխանութիւններէն որ գործադրէ քաղաքը հայերէն պարպելու նախօրօք տրուած որոշումը: Զոկատներ, թնդանօթներ եւ հրացաններ

գործի անցան: Ձէյթունի բնակիչները կրկին դիմեցին կառավարութեան, հաւատարմութեան երդում տալով եւ խնդրելով որ վերջ տրուի բարբարոսութեան: Բայց ի գուր՝ վճիռը արձակուած էր՝ պէտք էր վերջին հարուածով մը փակել Ձէյթունի պատմութիւնը:

Ասկէ ետք, ոչինչ կրնար կասեցնել նախայարձակներուն կատաղութիւնը: Վանքը, ուր ապաստանած էին մանուկները, կիներն ու ծերունիները, թնդանօթի բռնուեցաւ ուժգին՝ բոլոր այդ դժբախտ արարածները մահացան աւերակներու տակ:

Ձէյթունի երեւելիները, թուով 40 հոգի, ոտք ու ձեռք կապկպուած, զրկուեցան Մարաշ: Բնակչութեան մնացեալ մասը ցրիւ տրուեցաւ այնպիսի եղանակով, որ այսօր աւերակոյտի վերածուած Ձէյթունը, պարպուած

իր քրիստոնեայ բնակչութենէն, դարձած է իր նուաճողին անուկով Սիւլէյմանիէ...

Ձէյթունի շրջակայ 30 հայ գիւղերու բնակչութիւնը նոյնպէս տարագրուեցաւ: Տղամարդիկ անջատուեցան կարաւաններէն եւ սառնասրտութեամբ կոտորուեցան Մարաշի զօրանոցներուն մէջ: Կիներն ու երեխաները, յոգնած, անօթի, ուժասպառ, զգեստները կողոպտուած ու մերկ, քշուեցան, հրացաններուն անցուած սուխնեւորով, դէպի Մարաշ, անկէ ալ դէպի անձանօթ վայրեր:

Մինչեւ այսօր ոչ ոք տեղեկութիւն ունի թէ ո՛ւր կը գտնուի այս դժբախտ ժողովուրդը: Կարծես թէ գետինը ճեղքուած է եւ բոլորը կուլ տուած:

ՄԱՐԱՇՅԻ ՄԸ

Փաստ. 884-39

Է 2.- ՆՈՐ ՍԱՆՐԱՍԱՄՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԻԼԻԿԻՈՅ ԱՔՍՈՐԻ ՍԱՍԻՆ

Այնթապի հանրաժանութ ամերիկացի միսիոնար Տոթթ-Շեփրատ, որ տարիներէ ի վեր Թուրքիա կը բնակի, իր տեղեկագրէն քաղուած հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ.-

Այնթապի [հայոց] արտաքսման հրամանը արձակուած է 21 Յուլիսին [1915], վաթսուն ընտանիքի համար: Քանի մը օր ետք երկրորդ հրաման մը արձակուեցաւ եօթանասուն ընտանիքի համար: Ապա աքսորուեցան 1500 հոգի, յաջորդ օր՝ 1000 հոգի. այնպէս որ Այնթապի ամբողջ համայնքը արտաքսուեցաւ: Ամէն ջանք՝ այս որոշումէն զերծ պահելու ամերիկեան հաստատութիւնները, ապարդիւն անցան: Բացի բեռնաբարձ անասունէ մը, արգիլուած էր միասին տանիլ որեւէ ուրիշ պիտոյք:

Աքսորեալներու առաջին կայանը Հալէպն էր, ուր խոնուած էին արդէն 15.000 հայեր, աւելի հեռուները դրկուելու սահմանուած:

Դիմադրութեան թոյլ փորձեր տեղի ունեցան միայն Մարաշի մօտ, իբրեւ հետեւանք սպանութեանը ժանտարմի մը, որ դրկուած էր Ամանոսի լեռներուն մէջ գտնուող հայկական Ֆրնտրճաք գիւղը աքսորելու համար: Կառավարութիւնը անմիջապէս դրկեց երեք գունդ, որոնք մոխիրի վերածեցին գիւղը:

Զէյթունցիները յաջողեցան բազմաթիւ յարձակումներով ազատել աքսորեալներու կարաւանները: Կիլիկիոյ մէջ համեմատաբար լաւ պայմաններու մէջ տեղի կ'ունենայ արտաքսման գործը: Որոշ է որ աւազակները կը կողոպտեն բոլոր աքսորեալները. բայց բռնաբարուամներն ու մարդասպանութիւնները չեն գործադրուիր այն մեծ ծաւալով, որ տեղի կ'ունենայ հայկական նահանգներու մէջ:

Դժնդակ այս աքսորէն սակաւաթիւ վերապրողներ կը ցրուին թրքական եւ արաբական գիւղերու մէջ. աքսորեալներու մեծ մասը կը գտնուի Տէր Զօր, ուր հասած էին արդէն 15.000 հայեր: Տէր Զօրէն մինչեւ ճարապուս, Սասիլ եւայլն անապատային կիզիչ տարա-

ծուծիւններ են, ուր կը գտնուին ամէն կողմէ աքսորեալները:

Տոթթ-Շեփրատ կը պատմէ որ Կիլիկիայէն մինչեւ Կ. Պոլիս, ճանապարհի բոլոր քաղաքներու հայերը արտաքսուած են կամ՝ աքսորուելու վրայ:

Այն վայրերուն մէջ ուր փոխադրութիւնը շոգեկառքով է, ջարդերը շատ մեծ չեն. բայց հայկական նահանգներուն մէջ, ինչպէս Տիարպեքիոն մինչեւ Երզնկա, Պիթլիս, էրզրում եւայլն, ուր երկաթուղի չկայ, հայ ազգաբնակչութիւնը կոտորուած է ամբողջովին: Ամելէ թապուրիներու մէջ գտնուող երիտասարդներ լրիւ սպանուած են. կիները՝ կամ բռնաբարուած եւ կամ սպանուած:

Ջարդերը տեղի ունեցած են այնպիսի եղանակով, որ կարելի չըլլայ այլեւ խօսիլ հայ նոր սերունդի մը մասին: Մէկէն երկու տարեկան երեխաները տարուած են թուրքերու տունները, բայց երկու տարեկանէն մինչեւ ամէնէն ծերերը անողորմաբար սպաննուած են:

Տեղւոյն վրայ կոտորուած հայերու թիւը, առանց չափազանցութեան, կը նկատուի աւելի քան 200.000 հոգի, առանց հաշուելու անոնք որ բնաջնջուած են արտաքսման ժամանակ. այնպէս որ կարելի է ըսել որ այժմ Հայաստանի մէջ հայ չկայ:

*
**

Փաստ. 884-39բ

ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՓՐԿՈՒԹԻՒՆ ՉԷ ԱՅԼԵՒ

Կիլիկիոյ շրջանին մէջ շատ մը հայեր, որ կոտորուելու վախէն իսլամանալ կ'ուզէին, այսուհետեւ կը մերժուին թուրքերէն: Ուստի, կարելի է կորսուած համարել մահուան փրկուելու վերջին ապաւէնը:

Փաստ. 883-38

Է 3.- ՄԱՐԱՇԻ ՀԱՅԵՐՈՒ ԳԱՆԳԱՏԸ ԹՈՒՐՔ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԴԷՄ

- Իսմայիլ Հաքի պէյ.- Ատանայի վայրի եւ
- Աւնի պէյ.- Ատանայի ոստիկան զօրաց հրամանատար: Այս երկուքը Մարաշ եկան, հրահանգեցին քաղաքին տարագրութիւնը, ջարդեցին Ֆրնտուճաքի եւ ուրիշ երեք գիւղերու հայերը:
- Տեղակալ Ղայիպ պէյ.- Ինք էր հրամանատարը այն զինուորներուն, որոնք Ձէյթունի, Ֆրնտուճաքի, Ուրֆայի եւ Սուէտիոյ [?] մէջ ջարդեր գործեցին:
- Շեւտէթ պէյ.- Ատանայի վայրի, որ Աւնի պէյի հետ տարագրեց եւ կոտորեց մարաշցի 8000 հայեր, որոնք կ'աշխատէին Ինթիլիի մէջ, Պաղատի երկաթուղիին վրայ:
- Չէքի պէյ.- Կառավարիչ Տէր Զօրի եւ
- Էօմէր պէյ.- Րաքայի ոստիկան զօրաց հրամանատար. այս երկուքը կոտորել տուին Տէր Զօրի աւազներուն մէջ ցրուած 10.000 հայեր:
- Էմիր Ուալի Եհհապ պէյ.- Մարաշի մօտ՝ Քազարճիքի գայմագամ. կողոպտեց եւ ջարդել տուաւ իր սահմաններէն անցնող կիւրիւնցի հայերը: Քիւրտերուն հետ կողոպտեցին եւ իրար մէջ բաժանուեցան 160.000 թրքական ոսկի եւ շատ մը արժէքաւոր զարդեղէններ:
- Մուստաֆա Ապտիւլ-Ուալի պէյ.- Հայկալի վայրի:
- Ապտուլահէտ Նուրի պէյ.- Հայկալի տեղահանութեան յանձնարումբի պետ:
- Էյուպ պէյ.- Հայկալի տեղահանութեան փոխ տնօրէն:
- Համտի պէյ.- Հայկալի ոստիկանապետ (աւելի ուշ

Պրուսայի ոստիկանապետ):
 Բոլոր վերոյիշեալները, եւ յատկապէս Նիազի էֆէնտի եւ Իզզէթ Չաւուշ, Հայկալի ոստիկանութեան պատասխանատուները, պարտականութիւն ունէին հայերը տարագրելու Քարլիք, Հայկալ քաղաքէն դուրս:
 Առանց որ ուղղակի մասնակցած ըլլան հայկական ջարդերուն, այս անարգ անձնաւորութիւնները մեծագոյն ոճրագործները կը հանդիսանան այդ դժբախտ ազգի բնաջնջման մէջ: Իրենք է որ հայերը դուրս հանել տուին քաղաքներէն դիմելով բարբարոս միջոցներու, կողոպուտի ենթարկելով զանոնք եւ վերջապէս, երբ այլեւս դրամ չէր մնացած դժբախտաբար այս մարդոց մօտ, զրկեցին անապատի ուղղութեամբ:
 Ծանօթ թուրք երեւելիներ, որոնք մասնակից են Մարաշի հայոց դէմ գործուած ոճիրներուն.-
 [Կը հետեւի անուանացանկը 67 հոգիի]:
 Վերեւ յիշատակուած անձերը, մեծ մասամբ, կը պատկանին Միուլթիւն եւ Յաւալդիմուլթիւն կուսակցութեան Մարաշի կոմիտէին: Այսինքն, իրենք կազմակերպեցին տարագրութիւնը, ջնջին գիւղերով գնեցին տարագրեալներու ապրանքներն ու կարասիները, բռնագրաւեցին անոնց կողմէ լքուած առարկաներ, շահագործեցին հայոց հողերն ու շէնքերը եւ այս ձեւով տէր դարձան հսկայ հարստութեանց:
 Ժողովուրդի հեռանալէն առաջ բոլոր այս մահմետականները մասնակից եղան առանց դատաւարանի կատարուած զանգուածային գործողութեանց: Այսպէս, իրենց կողմէ պարզ մատնութեամբ մը, մատնութիւն, որուն զոհ էին որեւէ պատճառով իրենց համար անհաճոյ հայ մը, օրական տասնեակներով անմեղներ կը մեռցուէին: Անոնք բնաջնջել տուին նաեւ Ֆրնտուճաք եւ Քիւրիֆլի հայկական գիւղերու բնակիչները, ջարդեցին եւ կողոպտեցին Կիւրիւնէն եկող կիւներն ու մանուկները, որոնք Մարաշի գաւառէն կ'անցնէին:

Փաստ. 883-71

Է 4.- ԲՈՂՈՔ ՄԸ

Աքսորէն վերադարձին, Մարաշի տարագրեալ հայերը կը տեսնեն որ իրենց բնակարանները կամ մահմետականներու կողմէ գրաւուած են եւ կամ վաճառուած՝ յօգուտ պետական գանձին:
 Այգեստանները, արտերն ու պարտէզները գնած է Երկրագործական դրամատունը:
 Հաշուապահական գրասենեակի տնօրէն Մուսթաֆա պէյին ներկայացուած ղիմումներ ոչ մէկ արդիւնքի յանգեցան:
 Նկատի ունենալով մօտալուտ ձմեռը եւ հայրենադարձներու ծայրայեղ թշուառութիւնը, աւելի քան անհրաժեշտ է միջոց մը գտնել իրերու այս կացութիւնը դարմանելու:

Ը. ԱՆԳԱՐԱ – ԿԵՍԱՐԻԱ – ԳՈՆԻԱ

Փաստ. 883-85

Ը 1.– ԱՆԳԱՐԱՅԻ ԲՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ՋԱՐԴԵՐՆ ՈՒ ՏԱՐԱԳՐՈՒՄԸ

(Տեղեկագիր Օրիորդ Ժանն Վալանսի – ականատես վկայ, ֆրանսուհի, ծնեալ Փարիզ, 13րդ քաղամաս: «Renaissance» – իրողութիւններ եւ փաստաթուղթեր)

1915 թ. Յուլիսին, Անգարայի ընդհանուր կառավարիչ Մագհար պէյ, ինչպէս նաեւ ոստիկանապետը պաշտօնանկ եղած էին եւ փոխարինուած, առաջինը առժամեայ վայրի Աթիֆի կողմէ, իսկ երկրորդը Պեհաէտտինի, 22 տարու ստահակ մը:

Միեւնոյն ատեն, Անգարա կու գային անկանոն կոչուած գունդեր, որոնք՝ կանոնաւոր գունդերուն բաղդատմամբ, շատ լաւ սպառազինուած էին: Ի տես անոնց, կարելի էր դիւրութեամբ հասկնալ որ բանտերէն հաւաքուած աւազակներ եւ ոճրագործներ էին:

Իր ժամանուածն անմիջապէս ետք, առժամեայ վայրին հրաման արձակած էր ժողովուրդին զինուորական իշխանութեան յանձնել իր գէնքերը: Հակառակ պարագային գէնք ունեցողները կախաղան պիտի հանուէին:

Կոստանդնուպոլսէն հասնող շոգեկառքերը ամէն իրիկուն կը բերէին հայեր, որոնց մէջ շատերը օտարահայատակ:

Այս խումբերուն մէջ կը տեսնուէին ամէն տարիքի երեսփոխաններ, լրագրողներ, պաշտօնեաներ, վաճառականներ, որոնք բոլորը կուտակուեցան ոստիկանական բանտին մէջ: Բոլոր այս իրադարձութիւնները եւ մանաւանդ անկանոն զօրքերու ներկայութիւնը կը սարսափեցնէր ժողովուրդը եւ նախագգալ կու տար խստագոյն դէպքեր:

1915 թ. Յուլիսի վերջին օրը, ոստիկաններու եւ ժամտարմներու կողմէ բաց է բաց սկսաւ Անգարա քաղաքի հայերուն հալածանքը: Առաջին օրը, աւելի քան յիսուս հոգի բանտ նետուեցան – Օսմանեան դրամատան տնօրէն պ. Շնորհքեան, նահանգային խորհուրդի անդամ եւ Անգարայի փաստաբանական ատեանի նախագահ՝ Արմենակ էֆէնտի, քաղաքապետական խորհուրդի անդամ Սաուլեան էֆէնտի, յայտնի վաճառական եւ «Տէյլի Նիուզ»ի թղթակից պարոն Հիւրմիւզ, «Իքտամ» լրագրի խմբագիր՝ Ֆերիտ եւայլն:

Յանկը շատ երկար է:

Այս ձերբակալութիւնները կը կատարուէին ղեկավարութեամբ առժամեայ վայրի Աթիֆի, ոստիկանապետ

Պեհաէտտինի, Իթիհատի ներկայացուցիչ Նեճաթի կողմէ, օգնութեամբը Գըրշէհլրի միւլթի Հոճային եւ Ճինկենէ Հագգիի (Ճինկենէ Հաքքին այսօր ձգախէժէ անիւներով կառք կը վարէ):

Յաջորդ օր, ձերբակալութիւնները կը շարունակուէին: ոստիկաններ ու ժամտարմներ կը խուզարկէին տունները թաքնուածներ գտնելու համար: 1915, Օգոստոս 1-ի արեւամուտին, Անգարայի քաղաքապետութիւնը – տխրօրէի հոգածու – բահերով եւ բրիչներով բեռնաւորուած կառքեր ղրկեց քաղաքէն դուրս, եւ Իթիհատի ֆետայիներ (կամաւորներ): Կէս գիշերին, ոստիկաններու եւ ժամտարմներու ուղեկցութեամբ 800 հայեր, զոյգ-զոյգ կապուած, կը հանուէին բանտերէն եւ կը տարուէին դէպի Պայա գաւառակի ճամբան: Բանտ կը մնային միայն ռուսահայատակ հայերը: Արշալոյսին, ժամտարմներու եւ ոստիկաններու կողմէ խեղճերը յանձնուեցան անկանոն զօրքին (դահիճներուն), որոնք Անգարայի ֆետայիներուն հետ կը սպասէին եւ որոնք կոտորեցին մինչեւ վերջին մարդը:

Օսման պէյ, ոստիկան զօրաց հրամանատարը, այդ օր կը ներկայացնէր իր հրաժարականը: Քաղաքապետարանի բահերն ու բրիչները փոխադրող կառքերու մեկնումէն 24 ժամ չանցած, [Իթիհատի] կոմիտէի հերոսները քաղաք կը վերադառնային յաղթական եւ վաճառքի կը հանէին կոտորուած հայերու իրեղէնները, – հագուստ, կօշիկ եւայլն: Այրիացած կիները կը վազէին տեսնելու եւ գատորոշելու համար իրենց զաւակներուն, ամուսիններուն, եղբայրներուն բաճկոնը, տաբատը կամ կօշիկները:

Քաղաքին մէջ տիրող սարսափը կը սարսուացնէր մինչեւ իսկ ամէնէն քաջարիները:

Յաջորդ օրերուն, լուրեր կը հասնէին հայկական շրջակայ գիւղերու ամբողջական քանդումին մասին: Այսպէս, Անգարայէն քանի մը ժամ հեռու գտնուող եւ 250 ընտանիք ունեցող Սթանոս գիւղը ամբողջութեամբ քանդուած էր: – կիներն ու երեխաները սրախողխող եղած անկանոն զօրքին կողմէ:

Կը խնայուէր հայ գինուորներուն պայմանաւ որ մահմետական դառնային: Այսպէս, բռնութեամբ, Պօղոս եւ Կարապետ կը դառնային Ահմետ եւ Մեհմետ: Կը յուսացուէր որ յորդառատ հոսած հայու արիւնը յագեցուցած պիտի ըլլար Աթրճիներու, Պեհաէտտիներու եւ Նեճաթիներու ծարաւը:

Կը սխալէինք, որովհետեւ 10 օր չէր անցած, արդէն գրոյց կը շրջէր թէ կաթողիկէ հայերը եւս պիտի ենթարկուին միեւնոյն ճակատագրին: Եպիսկոպոսը այցելու թիւն տուաւ առժամեայ վայրի Աթրճին եւ տեղեկացուց այս գրոյցներու մասին: Աթրճի շնորհաւորեց եպիսկոպոսը կաթողիկէներուն՝ օսմանիզմի նկատմամբ ունեցած նուիրումին համար եւ վստահեցուց որ ոչինչ պիտի ըլլար անոնց դէմ:

Ի՛նչ հեզմանք նորին վսեմութիւն ջարդարար Աթրճի կողմէ:

Օգոստոս 15ին, Ս. Կոյսի տօնին օրը, ժամը 10-ի ատենները, քաղաքը շրջափակուած էր եւ 2000-է աւելի կաթողիկէներ ձերբակալուած եւ բանտ նետուած էին:

Բարեկեցիկ ընտանիքները գիւղերը կը գտնուէին. կէսօրէ ետք ժամը 2-ի ատենները, ոստիկաններով եւ ժանտարմներով լեցուած կառքերը կը խուժէին գիւղերը, կը մտնէին տունները եւ խլելով տղամարդիկը իրենց ընտանեկան պարագաներէն, — կին, զաւակ, մայր — կը տանէին Անգարայի բանտը:

Այս դժբախտ մարդոց ընտանիքները, չհաշտուելով նման սոսկալի բաժանման գաղափարին հետ, հետիոտն կ'երթային անոնց ետեւէն:

Միեւնոյն գիշեր, կը սկսէր գիւղերու կողոպուտը եւ յաջորդ օր կաթողիկէ հայոց տունները գրաւուած էին թուրքերէն: Օգոստոս 16ին, կէսօրին, մուսուլմանները կ'իմացնէր կաթողիկէ ժողովուրդին, որ ժամը 2-ին Գոնիա մեկնող շոգեկառքով պիտի տարագրուէին իրենց տղամարդիկ, եւ անոնց հետեւիլ փափաքող ընտանիքները կայարան պէտք է գտնուէին առաւելագոյն 20 քիլոկրամ բեռով:

Անկարելի է նկարագրել այդ օրուան ողբերգական դէպքերը: Ոչ մէկ ընտանիք ուզեց բաժնուիլ իր հարազատներէն:

Ժամը 2-ին 10.000 կաթողիկէ կիներ եւ երեխաներ խռնուած էին կայարան:

Իրականացած էր թշուառականներու ծրագիրը: 10.000 կաթողիկէ կիներն ու մանուկները շրջափակեցին կայարանին մէջ, զրկելով զանոնք ամէն ազատութենէ: Խռնեցին գիւղերը կայարանի արմտիքի շտեմարանին մէջ. հոն պէտք է քնանային, ուտէին եւ իրենց պէտքերը հոգային: Այդ միջոցին իրենց տունները գրաւուած էին ոստիկանութեան կողմէ:

Ամսու 17-ին, գիշերուան մօտ, կաթողիկէները կը բռնէին իրենց եղբայրներուն՝ լուսաւորչական հայերու ճամբան: Միեւնոյն տիտղոս «հոգածութիւնը» — կառքե-

րը, բահերը, բրիչները եւայլն եւայլն:

Այդ օրուան արշալոյսը վերջինը պիտի ըլլար այս դժբախտներուն համար: Զոհաբերութեան սեղանին առջեւ անկանոն զօրքերը իրենց ժամանումին կը սպասէին: Եպիսկոպոսը խնդրեց որ արտօնեն իրեն՝ աղօթելու եւ վերջին հաղորդութիւնը տալու: Ընթացք տրուեցաւ այդ խնդրանքին:

Մինչ դատապարտեալները մահապարտի իրենց աղօթքը կ'արտասանէին, պատահեցաւ անակնկալը. — Աճապարանօք հասած ձիաւոր ժանտարմներ կը ծանուցանէին որ Սուլթանը կը խնայէր իրենց կեանքին, բայց պէտք է Տէր Զօր տարագրուէին:

Ի՞նչ անցած-դարձած էր:

Կաթողիկէ հայոց ձերբակալութեան օրը, յոյն մը շոգեկառք առած եւ Կոստանդնուպոլսոյ կաթողիկէ մեծամեծներուն տեղեկացուցած էր Անգարայի մէջ պատրաստուող ողբերգութեան մասին: Այս վերջինները առանց ժամանակ կորսնցնելու, — նոյն գիշերն իսկ խմացուցած էին Գերապայծառ Տոլչին¹, եւ շնորհիւ այս բարձրաստիճան հոգեւորականի կատարած անհրաժեշտ դիմումներով, խնայուած էր այս մարտիրոսներուն կեանքը. մեծամասնութիւնը սակայն, աւելի ուշ, Տէր Զօրի տաժանագին ուղեւորութեան ընթացքին մահացաւ սովէն եւ զրկանքներէն:

Մինչ 2000 կաթողիկէները հետիոտն կ'ընթանային Գրոշէիւր — Կեսարիա — Նիկիտէ — Պոզանթի եւայլն ճանապարհէն, իրենց ընտանիքները, շրջափակուած [Անգարայի] կայարանին շտեմարաններուն մէջ, կ'ենթարկուէին սոսկալի լլկանքներու:

Բոլոր այս ընտանիքները, մեծ մասամբ հարուստ եւ բարեկեցիկ, անտեղեակ իրենց հարազատներու ճակատագրին, զրկուած բաւարար սնունդէ, իրարու վրայ դիզուած, առանց փոխնորդ զգեստեղէնի, ենթակայ էին համաճարակ հիւանդութիւններու: Առաջին մահացողները երեխաները եղան:

Չարչարանքի այս օրերուն ամէնէն դեռատիներուն թուրքերը կ'առաջարկէին իսլամանալ, անամօթաբար խոստանալով ամուսնանալ իրենց հետ եւ երջանիկ թագուհիներ դառնալ: Այս խոստումները ոչ մէկ արդիւնք տուին, բայց թուրքերը չէին յուսահատեր:

Տեսնելով որ այս ընտանիքներուն մէջ գտնուող հոգեւոր քոյրերն էին արգելք իրենց անարգ ցանկութիւններուն, ձերբակալեցին եւ էսքի-Շեհիւր դրկեցին գանոնք: Սակայն յոյն կրօնաւորը (առ ի չգոյ՛ կաթողիկէ կղերի մը), որ կանչուած էր երեխաներու թաղման, արժանաւորապէս փոխարինեց զայն թիկունք կանգնելով կրօնաւորուհիներու նուիրական գործին եւ յորդորելով ժողովուրդը օրինակ առնելու Քրիստոսի գերագոյն զոհաբերութենէն:

1.- Պապական Գովարակ Կ. Պոլսոյ մէջ:

Թուրքերը տեսնելով որ իրենց բոլոր պիղծ փորձերը ապարդիւն կ'անցնէին, Գոնիա աքսորեցին ժողովուրդին ամբողջութիւնը, կին եւ երեխայ:

Մինչ այդ, յանձնախումբեր կու գային Կոստանդնուպոլսէն տարագրեալներու ինչքերուն տիրանալու համար: Այս յանձնախումբերը, բոլորը գործակից ակազակներու, իրարու կը յաջորդէին:

Տարագրեալներու բոլոր վաճառատուները աճուրդի հանուած էին. տան կարասիները նոյնպէս: Կարասիներու եւ գոյքերու մեծ մասը տարուած էր հայ եւ կաթողիկէ եկեղեցիները, որոնք այս ձեւով տօնավաճառներու վերածուած էին:

Հետագային Ջմիւռնիայէն եկան 10.000 յոյներ, ամէն դասի եւ աստիճանի զինուորներ եւ մարդիկ, Ամելէ-Թապուրին (բանուորական գունդեր), որոնք պիտի կառուցանէին Անգարա-Յոզղատ-Սվազ երկաթուղին: Այտընի մեղմ կլիմային վարժուած այս 10.000 մարդիկը տարուեցան Ասսի-Յոզղատի լեռը, ուր առանց սնունդի ու զգեստաւորումի եւ ենթակայ դաժան ճրմբան մը խստութիւններուն, կը մեռնէին անոնք հարիւրներով: Այս 10.000 յոյներուն հազիւ 800-ը կրցան վերադառնալ իրենց տուները:

Գասթամունիի վայրի Ռեշիտ փաշա մերժած ըլլալով իր նահանգին մէջ կիրարկել նոյն գազանութիւնները, ինչ որ ըրած էր Աթրֆ Անգարայի մէջ, պաշտօնանկ եղաւ եւ փոխարինուեցաւ միեւնոյն Աթրֆով:

Այս ջարդարարը Անգարայի մէջ փոխարինուեցաւ նշանաւոր ուրիշ ջարդարարով մը՝ Տոքթ. Ռեշիտ, Տիարպեքիրի նախկին վայրին, որ իր նոր պաշտօնատեղին ժամանեց ընկերակցութեամբ Մուսթաֆա Թուրհան դահիճին՝ իբրեւ ոստիկանապետ Անգարայի:

Կոտորածներու, կողոպուտի եւ զանգուածային տարագրութեան հետեւանքով դիւրութեամբ ձեռք բերուած նիւթական հսկայական հարստութիւններուն հրապոյրը շատ զօրաւոր ըլլալուն՝ Անգարայի երիտասարդ թուրքերը, ղեկավարութեամբ նոր վայրին, որոշեցին

միեւնոյն ձեւով վարուիլ նոյնպէս քաղաքի յոյներուն հետ: 1916 թ. Օգոստոս ամիսն էր եւ Ռումանիա նոր մտած ընդհանուր պատերազմի մէջ: Որոշապէս Յունաստան եւս պիտի հետեւիմ անոր օրինակին:

Այնպէս որ Անգարայի նոր վայրին՝ Ռեշիտ հաւաքեց հայկական սարսափներու հեղինակները, այսինքն նեճատիները, միւլթի խոճա, հազար ճինկէնէները, մոլլա շեմսետիները եւայլն, եւ անոնց հետ համաձայնութիւն գոյացուց յոյները տարագրել Հայմանա: Այսուհանդերձ այս որոշումը նախ ներկայացուեցաւ Իթթիհատի Կեդր. վարչութեան, որ պատասխանեց թէ յոյներու տարագրումը կարելի էր կատարել առանձնաբար [հայերէն] եւ անոնց զանգուածային հեռացումին համար պէտք էր սպասել որ Յունաստան իրողապէս մտնէ պատերազմին մէջ:

Շնորհիւ գաղտնասացութիւններու, յոյներ շուտով իրագեկ դարձան թէ ի մօտոյ ինչ պիտի պատահէր իրենց: Անոնցմէ մէջէն ամէնէն հարուստները մեծ կաշառքներով յաջողեցան հեռանալ Անգարայէն եւ երթալ Ջմիւռնիա կամ Կոստանդնուպոլիս, բայց մեծամասնութիւն կազմող աղքատները համակերպեցան իրենց վիճակուած ճակատագրին:

Մինչ այդ, հայերու կողոպուտով հարստացած դահիճները կը զբաղէին առեւտուրով. տիրացած ըլլալով Անգարա քաղաքին մէջ գտնուող բոլոր ապրանքներուն, եւ հսկայական հարստութիւններ դիզելու մարմաջէն տարուած, անոնց գիները կը բարձրացնէին անվերջ:

Այս պահուն, շնորհիւ դժբախտ քրիստոնեաներուն պատկանող հարստութեանց յափշտակումին, անոնք կը վարեն շքեղաշուք կեանք մը. գալով իրենց գոհերուն, անոնց մէկ մասը մահացած է արդէն սովահարութեան եւ այլ զրկանքներու հետեւանքով, իսկ մնացեալները, երբեմնի հարուստներ, իրենց գոյութիւնը կը քաշկռտեն ողբալիօրէն...

ԺԱՆՆ ՎԱԼԱՆՍ

Փաստ. 883-54

Ը 2.- ԱՆԳԱՐԱՅԻ ԼՔԵԱԼ ԳՈՅՔԵՐՈՒՄ ԿՈՂՈՊՈՒՏԸ

Աքսորէ վերադարձած թուրք մը՝ Շեհսուրվարզատէ Հաճի Օսման, հետեւեալը կը պատմէ «Ալեմտար» թերթին մէջ.—

Երբ սկսաւ Անգարայի տեղահանութիւնը, չարաղէտ այս գործին վրայ հսկելու համար յանձնախումբ մը նշանակուեցաւ, հետեւեալ անդամներէն՝

- 1.- Պեհաէտտին պէյ.— Նախագահ յանձնախումբի եւ պետ ոստիկանական բաժանմունքի:
- 2.- Շեմսետտին.— Անդամ էնճիւմէնի (էնճիւմէնը գաղտնի կոմիտէն է, որ կազմուած է թուրքիոյ քրիստոնեաները ոչնչացնելու համար):
- 3.- Նեճատի պէյ.— Իթթիհատի պատասխանատու քարտուղար:
- 4.- Ռասիմ պէյ.— Քաղաքապետ:
- 5.- Գարա-Մեհմէտ պէյ.— անդամ Իթթիհատի Կեդր. կոմիտէի:
- 6.- Թոփճի Զիա պէյ.— Գաղթականական յանձնախումբի տեսուչ:
- 7.- Շեւքէթ.— Դեղագործ:
- 8.- Գարապիպերին Հասան էֆէնտի.— Դրամատան փոխ-տնօրէն:

Հայերու տեղահանութենէն ետք, Պեհաէտտին պէյ արգիլեց քաղաքացիներուն, մայրամուտէն ետք դուրս գալ: Ով որ անսաստէր այս հրամանին, մահուամբ պիտի պատժուէր:

Ասիկա պարզապէս կողոպտելու համար էր հայոց բնակարաններն ու վաճառատունները, որոնք կնքուած էին արդէն ոստիկանութեան կողմէ: Գիշերները այս կողոպուտը ատեն մը շարունակուեցաւ:

Իթթիհատի նոր ակումբը կահաւորուեցաւ այս ոճ-րագործ յանձնախումբին կողմէ: Հոն փոխադրուեցան արժէքաւոր գորգեր, թէյամաններ եւ արծաթեղէններ: Բացի այս թանկարժէք կարասիներէն, Պեհաէտտին պէյ մեծաթիւ գորգեր ղրկեց Կոստանդնուպոլիս: Աթրֆ պէյ, հակառակ անոր որ անուանի ոճրագործ եւ աւագակ մըն էր, մասնակից չեղաւ այս կողոպուտին. մինչեւ իսկ ձերբակալել ու բանտարկել տուաւ Պեհաէտտին պէյը, որ [այլապէս] մեղսակից էր իր ոճրագործութիւններուն:

Իթթիհատի ակումբը որբանոց մը եւ գործարան մը հիմնեց իբրեւ դրամազուլիս ունենալով լքեալ գոյքերը:

Կը թալանէին փարթամ վաճառատուններու ապրանքները եւ չնչին գինով կը ծախէին իրենց արբանեակներուն:

Փաստ. 883-45

Ը 3.- ԱՆԳԱՐԱՅԻ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Անգարայի տարագրութեան եւ հայերու վրայ գործընթաց վայրագութեանց հերոսը եղաւ ոստիկանութեան ընդհ. տնօրէն Պեհախտին պէյ:

Գործակիցները եղան իր նախագահութեան տակ կազմուած յանձնախումբին անդամները:

[Կը հետեւին 6 անուններ]:

Այս ղեկավարներու հրամանով, ոստիկանները եւ ժանտարմները կողոպտեցին եւ բաժնուեցան հայերու բոլոր ինչքերը: Ոստիկանութեան ընդհ. տնօրէնը, Պեհախտին պէյ, Կոստանդնուպոլիս ուղարկեց գորգերու բազմաթիւ հակեր:

Այս յանձնախումբը լուծուեցաւ եւ ուրիշ մը կազմուեցաւ Չորումի նախկին միւլթեսարըֆ Նուրետտին պէյի նախագահութեամբ: Այս յանձնախումբի անդամները ամբողջացուցին կողոպուտը: Յափշտակեցին հայ առեւտրական Օննիկ Փոթուքեանի վաճառատունը: Այս վաճառատան հիմնադրամը թրքական նոր որբանոցի դրամազլուխը կազմեց:

Գարա Մեհմէտ 1000 թրքական ոսկիի ծախու առաւ 100.000 թրքական ոսկի արժողութեամբ ապրանքները:

Հեճիանլի աշիրէթի ցեղապետ Շեֆսոնիւր ԶԱՏԷ ՀԱՃԻ ՕՍՄԱՆ

ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱԼԱՅԻ (ԱՆԳԱՐԱ)

Պալա գիւղը ունէր 300 հայ տուն: Գիշեր մը, գայմագամ Բեհամիլ պէյի հրամանով, բոլոր տղամարդիկ տարագրուեցան Բէնիօրու-Բէնիօրի կողմերը եւ անողորմաբար սպանուեցան:

Տարագրութեան եւ վայրագութեանց պատասխանատուներն են.

Քեմալ պէյ.— Պալայի գայմագամ:

Ճայքը պէյ.— Վիճակագրական գրասենեակի պաշտօնեայ:

Մեհմէտ պէյ.— Կալուածային գրասենեակի պաշտօնեայ:

Ոստիկանները եւ ժանտարմները եղան իրենց շահագրգիռ գործակիցները:

Փաստ. 883-60

Ը 4. – ԱՆԳԱՐԱՅԻ ԶԱՐԴԵՐԸ

Իթիֆհատի կեդրոնը պաշտօնանկ ըրաւ Անգարայի ընդհանուր կառավարիչ Մագհար պէյը, որովհետեւ ան մերժած էր հայերը տարագրել տալ:

Աթըֆ պէյ եւ Պեհախտին պէյ եկան Անգարա, առաջինը որպէս առժամանակեայ վալի՝ երկրորդը՝ ոստիկանապետ:

1915 թ. Յունիսին իշխանութիւնները հրամայեցին գէնքերը հաւաքել: Հրահանգը գործադրուեցաւ վրդովեցուցիչ կողմնակալութեամբ մը: Ոչ-մահմետականներու բոլոր գէնքերը հաւաքեցին: Յունիսի վերջերուն գաղտնաբար վերադարձուցին մահմետականներու գէնքերը:

Յունիսի 22-ին, բանտէն արձակեցին բոլոր թիապարտները եւ զինեցին զանոնք: Թշնամանքը քրիստոնեաներու նկատմամբ բացայայտ կերպով կ'արտայայտուէր: Չերքէզ պէյ մը Անգարա կու գայ եւ քաղաքային

ու զինուորական իշխանութիւններու կողմէ կ'ընդունուի խանգավառութեամբ: Իթիֆհատի կոմիտէն յաճախակի ժողովներ կը գումարէ.— հայերու տարագրումը որոշուած է:

Յունիսի 29ի գիշերը, ոստիկանները կը ձերբակալեն ու կեդրոնական բանտ կը տանին հայ երեւելիները. պաշտօնեայ մը կը գրաւէ կալանաւորներու դրամն ու մատանիները, եւ յատուկ տոմարի մը մէջ կ'արձանագրէ զանոնք:

Յունիսի 30ին, կալանաւորներու կարաւան մը կը տարուի այնպիսի աճապարանքով, որ շատ մը հայ երեւելիներ կիսամերկ վիճակի մէջ էին: Այս վերջիններուն մէջ կը գտնուէին փաստաբաններ, դատաւորներ, դեղագործներ, վաճառականներ եւայլն: Կարաւանին կը հսկէին՝ ոստիկանական կոմիսար Ռահիմ Իպրահիմը, բանտապետ Իպրահիմ, ոստիկան զօրաց ենթասպայ

Միւմէյիգատէ Գարա Ալի եւ Սիվրիհիսարցի ոստիկան Իսմայիլը: Զինուորներով եւ ժանտարմներով շրջանակ-
 ւած կարաւանին ետեւէն կու գային ջարդի յատուկ
 գործիքներով բեռնաւորուած քանի մը սայլեր: Այս թա-
 փօրը՝ եօթը ժամ հեռու գտնուող Քոյրուքճիօղլու կոչ-
 ւող անտառը հասնելուն պէս, դիմաւորուեցաւ կացին-
 ներով, դանակներով եւ մանգաղներով զինուած չեթէ-
 ներու վոճմակի մը կողմէ: Հսկիչները կարաւանը յանձ-
 նեցին այս չեթէներուն:

Փաստաբան Արմենակը կշտամբեց չեթէները, ըսե-
 լով. «Որոչ է որ հոս եկած էք մեզ կոտորելու նպատա-
 կով: Հարց կու տամ ձեզի. գիտէ՞ք թէ ինչու վարձուած
 էք այս սպանդին համար. (ո՛չ, պատասխանեցին չեթէ-
 ները). գիտցէք որ կոմիտէն [Իթթիհատի] եւ բարձրաս-
 տիճան պաշտօնատարները (իրենց անձնական շահե-
 րուն համար պարզապէս) կ'արատաւորեն պատմութիւ-
 նը եւ հայրենիքը կ'առաջնորդեն դէպի կործանում: Բա-
 ցէք ձեր Գուրանը. պիտի տեսնէք որ ան ձեզի կը պատ-
 ւիրէ բարեկամաբար (եղբայրօրէն) ապրելու ոչ-մահմե-
 տականներու հետ: Անոնք որ հրաման կու տան ձեզի որ
 սպաննէք մեզ, ծանօթ չեն Գուրանին: Գիտցէք որ թէ՛
 հրահանգողներ եւ թէ՛ գործադրողները պիտի մահա-
 նան միեւնոյն մահով ու միեւնոյն վայրին մէջ: Ես ա-
 ւարտեցի, պատրաստ ենք մեռնելու: Ըրէք այնպէս՝ ինչ-
 պէս կը թելադրէ ձեր խիղճը»:

Հագիւ ճառը աւարտած, չեթէները խուժեցին իրենց
 զոհերուն վրայ ու անխղճօրէն կոտորեցին բոլորը. յե-
 տոյ մարմինները նետեցին կանխօրօք պատրաստուած
 եւ կիրով լեցուն փոսերու մէջ: Մէկ քանին թաղուեցան
 հոգեվարքի վիճակին մէջ:

Յար եւ նման սպանդի մը սահմանուած էր նաեւ 300
 հայերէ բաղկացեալ երկրորդ կարաւանը: Ասոնք տար-
 ւեցան Անգարայէն վեց ժամ հեռու, Քայաչ կոչուած այ-
 գին եւ հոն կոտորուեցան:

Օգոստոս 4-ին, Օսմ. դրամատան տնօրէն պարոն
 Գէորգ Շնորհքեանը եւ փաստաբան Արմենակի եղբայ-
 րը ձերբակալուեցան ու սպաննուեցան Քայաչի այգիին
 մէջ:

Օգոստոս 8-ին, ոստիկանապետ Պեհաշտտին պէյ Կ.
 Պոլիս գնաց եւ յաջողեցաւ ստանալ Անգարայի կաթողի-
 կէ հայոց տարագրութեան հրամանը: Վերադարձաւ
 Օգոստոս 13ին:

Յաջորդ օր ձեռնարկուեցաւ կաթողիկէներու ձեր-

բակալութեան. ասոնք Տէր Զօր տարագրուեցան:

Ահաւասիկ այն ճառը զոր արտասանեց Տարագրու-
 թեան բաժանմունքին տնօրէնը, կարաւանի մեկնումին
 պահուն.—

«Օսմանեան կառավարութիւնը պատերազմ հռչա-
 կեց Անգլոյ, Ֆրանսայի, Ռուսիոյ եւ ուրիշ պետու-
 թիւններու դէմ, եւ արդէն շահած է պատերազմը: Մի
 խորհիք որ մեզմէ հաշիւ պիտի պահանջուի օր մը. մենք
 ազատ ենք մեր ուզածը ընելու. սակայն դուք ջարդի
 պիտի չենթարկուիք, ինչպէս եղան հայերը²: Ապահով
 եղէք ձեր կեանքին համար: Օ՛ն, աղօթեցէք կառավա-
 րութեան եւ թուրք ազգին համար»:

Օգոստոս 14ին, մունեստիկը ազդարարեց որ հայուհի-
 ները պէտք է հեռանան քաղաքէն, նոյն օրն իսկ, յետ մի-
 ջօրէին: Միասին ապրանք վերցնելը արգիւրուած էր: Կա-
 յարանին մէջ, երկու իթթիհատականներ եկան ու գեղե-
 ցիկ աղջիկներ պահանջեցին. վերջիններս՝ իրենց կեան-
 քէն աւելի մահը գերադասելով, մնացին իրենց ծնողնե-
 րուն մօտ: Կին ու մանուկ, երկու շաբաթ խոնուած
 մնացին կայարանի մթերանոցներուն մէջ:

Սեպտեմբեր 1-ին, կիները էսքի-Շեհիր տարագրուե-
 ցան, իսկ մանկահասակները խլուելով՝ իսլամացուե-
 ցան:

Լքեալ գոյքերու յանձնախումբի անդամներ՝ Ֆին-
 ճանգատէ Մեհմէտ Շեմսետտին եւ Գարա Պիպեր՝ կնքե-
 ցին տարագիրներու բնակարաններն ու վաճառատու-
 ները, իւրացնելէ ետք անոնց մէկ մասին ինչքերը:

Շատ ու շատ բան կորսուեցաւ, որովհետեւ լքեալ
 գոյքերու լուծարքի յանձնախումբին կազմութիւնը
 շատ ուշացուցին:

Էթիք (Անգարա) գիւղի բժիշկ Տոթթ. Ալաշտտին
 գողցաւ Արսլանկիւլ օղլու Գրիգոր հայուն 30.000 ոս-
 կին: Կառավարիչը պաշտօնագրիկեց բժիշկը, բայց ան
 փախաւ: Միեւնոյն այս մարդը հարիւր հազարաւոր ոս-
 կիներ գողցաւ Անգարայի մէջ:

Լքեալ գոյքերու երկրորդ յանձնախումբին նախա-
 գահը, Նուրետտին պէյ կողոպտեց եկեղեցիներու եւ
 վանքերու թանկարժէք իրերը եւ Պերլին տանելով վա-
 ճառեց: Այս իրողութիւնը կը հաստատուի անվիճելի
 ապացոյցներով: Միեւնոյն այս անձնաւորութիւնը իւ-
 րացուց Գուրչունլու խանին մէջ գտնուող բուրդի հա-
 կերը:

Յուլիս 27ին, Քեսքինի հայերը (Անգարայի նահանգ)
 հաւաքեցին կապուած վիճակի մէջ ու տարագրեցին Տե-
 ւէպակրտանու, ուր եւ ջարդեցին զանոնք:

2.- Իմա՝ լուսաորչական հայերը:

Փաստ. 883-16

**Ը 5.- ԵՈՉՂԱՏԻ ԽԺԴԺՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(Թուրք պաշտօնեայի մը կողմէ պատմուած)**

Երզրատի հայերը, 25.000 հոգի, տարագրուեցան Պո-
ղազլիանի գաւառակը: Երզրատ փոխադրուած Աքտա-
ղի գալմագամը գլխաւորեց տարագրութիւնը:

Տարագրեալներու կարաւանը ջարդուեցաւ Պողագ-
Քեմինի կիրճին մէջ: Ջարդարարներու կողմէ ընտրու-
ած աղջիկները եւ 7 տարեկան աղջնակները բռնաբար-
ուեցան: Ջարդարարներու վոհմակը չինսայեց մինչեւ իսկ
ծծկերներուն:

Նագիֆ պէյ, անդամ «լքեալ գոյքերու հաշուեյար-
դարի յանձնախումբ»ին, հսկայ գումարի մը տէր դար-

ձաւ: Կ. Պոլիս ուղարկեց 36.000 թրքական ոսկի. տիրա-
ցաւ 3-4000 օխա աֆիոնի համարժէք գումարին: Կոս-
տանդնուպոլիս վերադարձաւ հետը բերելով հայոց եկե-
ղեցւոյ սուրբ անօթներով եւ ահագին գոհարեղէնով:
Այժմ կը բնակի Սան Սթեֆանօ:

[Կը հետեւին անունները 8 թուրք պատասխանատու-
ներու (պաշտօնեայ, զինուորական եւայլն)]:

30 Դեկտ. 1918

Փաստ. 883-66

Ը 6.- ՊՈԶՈՒՔԻ ԵՒ ՉԱՄՔԱՔԻ (ԵՈՉՂԱՏ) ԲՆԱՋՆՁՈՒՄԸ

1915 թ. կէսերուն էր. կառավարութիւնը 15 օր ժա-
մանակ տուաւ գէնքերը յանձնելու, նոյնիսկ այնպիսի-
ները որ արգիլուած չէին:

Երրորդ օրը, գէնքերը փնտռելու պատրուակով (հա-
կառակ անոր որ բոլոր գէնքերը յանձնուած էին) կա-
ռավարութիւնը սկսաւ ձերբակալել հայ երեւելիները:

Նախկին միւլթեսարըֆը, որ դէմ էր օրինապահ ժողո-
վուրդի մը բնաջնջումին, փոխարինուեցաւ երիտա-
սարդ իթթիհատականով մը, Քեմալ պէյ, որ իր պաշտօ-
նին անցնելու առաջին օրէն շրջակայքի թուրք գիւղա-
ցիներով եւ չերքէզներով կազմակերպեց չեթէական
խումբեր անոնց պետ կարգելով Պողագլեցի Պեքիր պէյն
ու Սիւլէյման Քեհիան:

Պոզուքի շրջանին մէջ բացառաբար հայերէ բնակ-
ւած 40 գիւղեր կային: Ասոնք ինսայսէր հողամշակներ
էին, որ իրենց հարեւան ու ընչաքաղց թուրքերուն նա-
խանձը կը շարժէին:

Յուլիսի 5-ին, անմիջական տարագրութեան հրա-
հանգ տրուեցաւ. ամբողջ արու բնակչութիւնը տարուե-
ցաւ 30 վայրկեան հեռու ձոր մը եւ կոտորուեցաւ յատ-
կապէս այս նպատակով բերուած մահմետական զին-
ւորներու կողմէ: Չեթէները կազմակերպուած էին միւ-
լթեսարըֆին եւ թուրք երեւելիներուն կողմէ, ինչպիսիք
էին Պողագլեանէն Իպրահիմ պէյը եւ Գոզանէն Ահմէտ

պէյը. ջարդին գործօն մասնակցութիւն բերաւ շրջա-
կայքի ամբողջ բնակչութիւնը, կին ու տղամարդ:
Միայն չորս հայեր լեռները ապաստանելով՝ փրկուե-
ցան:

Յուլիս 7ին, թուրք գիւղացիներէ եւ չերքէզներէ
բաղկացած խուժանը մտաւ հայոց տուններ եւ ջարդի
ենթարկեց մանուկները, հաշմանդամներն ու ծերունի-
ները: Բոլոր գեղանի կիներն ու աղջիկները բռնաբար-
ուեցան ու տարուեցան. փոքր թիւ մը միայն ազատեցաւ
հաւատափոխութեամբ:

Այս բոլոր գազանութիւններուն մէջ, Քեմալի պէյ
իբրեւ մեղսակից ունեցաւ զինուորական ապահովու-
թեան սպայ Մուլիս պէյն ու չեթէներու պետերը:

Այս սրիկայ վայրին, պարկերու մէջ լեցնելով ողջ-ողջ
թաղել տուաւ բազմաթիւ ծերունիներ, երեխաներ, կի-
ներ եւ աղջնակներ: Հայերը իրենց ամբողջ հարստու-
թիւնը տուին՝ գնդակով սպաննուելու շնորհը ձեռք բե-
րելու համար:

Գեղանի աղջիկներ վաճառքի հանուեցան 20 դրուչի,
կամ կէս օխա ծխախոտի փոխարէն: Շատ մը թուրքեր
10-12 աղջիկ ձեռք բերին իբրեւ հարձ կամ սպասուհի:
Այս բոլոր թշուառ հայուհիները մշտական սարսափի
տակ կ'ապրին: Վերջին տարիներուն անոնցմէ շատեր
սպաննուեցան:

Փաստ. 883-43

Ը 7.- ՊՈՂԱԶԼԵԱՆ

(Եռզդատ գաւառ, Անգարա նահանգ)

Պողազլեան ունի 120 գիւղ. ասոնցմէ 23-ը հայաբնակ էին, 43.000 բնակչութեամբ: 1915 թ. Յուլիս ամիսը Պողազլեանի երկրամասը դարձաւ գերեզմաննոց 95.000 հայերու, որոնց 92.000ը Չորումէն, Սուսկուրլուէն, Մեծիտ-էօզիէն, Եռզդատէն եւ Քէօհնիէն էին. ջարդը սկըսաւ 5 Յուլիսին եւ բնաջնջումի գործը իր լրումին հասաւ քանի մը շաբթուան ընթացքին: «20 օրուան մէջ ամբողջ ազգ մը բնաջնջեցինք» յայտարարեց իրաւամբ հազարապետ Շիւքրի պէյ, ծագումով մոնաստրցի:

Հայկական գիւղերու մէջ, որոնցմէ իւրաքանչիւրը 400-500 տուն կը հաշուէր, 20-30 բնակարան կը մնան միայն: Երկրորդ ջարդ մը տեղի ունեցաւ 1916ի Փետրուարին: Արիւնայի սպանդներու ընթացքին ամբողջ բնակչութիւնը տառաջիօրէն բնաջինջ եղաւ: Այս երկու սպանդներու միջոցին, վերապրող տղաքը ցրիւ եղան ամէն կողմ: Այս խեղճերը թշուառականի եւ անպատուութեան երկար ու սարսափելի հոգեվարք մը կ'ապրին: 1300էն մինչեւ 1500 գնահատուող այս թշուառները, անօգնական եւ անսնունդ, վտարուած իրենց բնակարաններէն, կ'ապրին ամէնէն ստորին ստրկութեան մը մէջ, դատապարտուած իրենց թուրք հարեւաններուն կողմէ՝ տաժանակիր աշխատանքի:

Հեռուէ հեռու, կ'իմանանք որ հասած են երջանկութեան ժամերը եւ որ Կոստանդնուպոլսոյ մէջ տօնուած է Համաձայնական պետութիւններու նաւատորմիդին մոտքը, մինչ հոս մենք կ'ապրինք սարսափի վարչակարգին տակ:

Տեղական իշխանութիւնները կը մնան անգործօն վիճակի մէջ: Մեր գայմագամը, Աղա պէյ կոչուած Չերմեռանդ իթիբիհատական մը, փոխանակ ոճրագործները պատօժելու, թրքական ստորին բնազդներէ տարուած է: «Մեր նախորդը՝ Քեմալ պէյ ձեզմէ շատերուն կեանքը խնայելու յանգանքը գործեց. եթէ ես իր տեղը ըլլայի, բո-

լորդ կը բնաջնջէի»: Այս եղաւ իր պատասխանը երբ իրեն դիմուեցաւ որպէսզի վերջ մը դնէ բռնութեանց եւ բռնաբարումի արարքներուն:

Մէկ ամսուան ընթացքին, 15 հոկտեմբերէն — 15 Նոյեմբեր 1918ին, 25 հայեր սպաննուեցան: Այս դժբախտները սպաննուեցան ուղղակի այն մարդոց կողմէ, որոնք տարագրութեան օրերուն յափշտակած էին անոնց ունեցուածքը: Այս սպանութիւնները գործուեցան պարզապէս վերջ մը դնելու համար ինչքերու վերադարձին վերաբերող հայոց պահանջներուն:

1918 թ. Նոյեմբեր 12ին, երկու հայ կիներ, ջաղացքէն վերադարձի իրենց ճամբուն վրայ, քաղաքապետարանի շէնքէն միայն 200 մեթր հեռու գտնուող վայրին մէջ բռնաբարուեցան ամբողջ գիշերուան ընթացքին, ապա առաւօտեան կողմ սպաննուեցան դաշոյնի հարուածներով եւ կապարով:

Այս երկու դժբախտ կիները իրենց ետին կը թողուն 8 որբեր:

* * *

Տարագրութենէ փրկուած քանի մը հոգի, որ ապաստան գտած են Չաթի անտառապատ լեռներուն մէջ, չեն համարձակիր վերադառնալու իրենց գիւղերը: Հակառակ ընդհանուր ներումի հուշակման, հայ փախստականները խստօրէն կը հետապնդուին:

Դո՛ւք, ախոյեաններն էք քաղաքակրթութեան, մարդկայնութեան եւ քրիստոնէութեան:

Կը դիմենք ձեզի խնդրելով որ դադրեցնել տաք մեր տառապանքները:

Հայ վերապրողներու կողմէ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԱՅԵԱՆ

Փաստ. 883-40ա

Ը 8.- ՊՈՂԱԶԼԵԱՆ

(Եռզրատի գաւառակ, Անգարա նահանգ)

Կը փափաքինք տեղեկագրել ձեզի այն անմոռանալի հալածանքները, որոնց ենթարկուեցանք ու տակաւին կ'ենթարկուինք:

Չորումի, Հաճի-Քէոյի, Ալաճայի, Սոնկուրլուի, Եռզրատի հայերը ջարդուեցան Պողազլեանի մէջ կազմուած վոհմակներուն կողմէ: Այս վերջինները, տղամարդերէ բաղկացած կարաւանները բնաջնջելէ ետք, կոտորեցին կիներն ու մանուկները, որոնց մէկ մասը ցիրուցան ըրին մահմետական գիւղերու մէջ: Կորուստի մատնուեցաւ Պողազլեանի շրջանի 20 գիւղերու հայ բնակչութիւնը: Հայ աղջիկներն ու կիները, բանտարկուած թուրք տուներու մէջ, անպատիւ կեանք մը կ'ապրին: Կը շարունակուի կիներու եւ աղջիկներու վաճառքը: Կարծես թէ հին ժամանակներու Ափրիկէի խորերը կը գտնուինք:

Թրքական իշխանութիւնները կը խօսին տեղահանութեան մասին, մինչդեռ այս շրջանի 50,000 հայերը տառաջիորէն ջարդուած են: Սակաւաթիւ վերապրողներ, որոնք գրկուած են գոյատեւելու ամէն միջոցէ, կ'ապրին մահուան սպառնալիքին տակ:

Իրենց գիւղերը վերադարձած հայ գինուորները յուսահատական վիճակի մէջ կը գտնուին, որովհետեւ չեն կրնար տեսնել թուրք տուներու մէջ բանտարկուած իրենց կիները: Իրենց բնակարանները քանդուած են եւ կամ թուրքերու կողմէ գրաւուած: Իշխանութիւնները ոչ մէկ գոհացում կու տան իրենց պահանջներուն:

Հարց կու տանք Համաձայնական պետութիւններուն.— Պիտի շարունակե՞ն հանդուրժել յարատեւումը այս անիրաւութեանց ու անպատուութիւններուն. պիտի շարունակուի՞ դեռ երկար ժամանակ սրբապղծումը մեր եկեղեցիներուն, մեր սրբազան անօթներուն:

Երկու հայեր սպաննուեցան ճիշդ այն օրը, երբ իշխանութիւնները յայտարարեցին որ հայոց ինչքերը պիտի վերադարձուին իրենց. ոճրագործներուն դէմ կառավարութիւնը ոչ մէկ միջոցառում ձեռք առաւ: Հայերը ահ ու սարսափի մատնուած են. գինեալ վոհմակները ժանտարմներու քթին տակ կը շրջագային:

12 Նոյեմբեր 1918

Փաստ. 883-67ա

Ը 9.- ՉՈՐՈՒՄԻ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ

(Քաղուած «Renaissance»էն)

Միւլէյման պէյ, կառավարիչ Չորումի եւ «Ֆետայի» Իթթիհատի, քար ու քանդ ըրաւ քաղաքին 150.000 ոսկի արժող հայապատկան տուները եւ, բացի իր շրջանին մէջ կազմակերպած կոտորածներէն, ահռելի գազանութիւններ գործեց: Այս «արժանաւոր» կառավարիչը յափշտակեց հայոց ինչքերը, գինակցեցաւ Նուրի Չառուզ կոչուող ժանտարմին, որ Սոնկուրլուի մէջ կացինի

հարուածներով ջարդած էր աւելի քան 500 տղամարդ, կին ու երեխայ. կողոպտեց անոնց դրամը, գոհարեղէններն ու թանկարժէք իրերը. վերջապէս, խափանեց կեդրոնական կառավարութեան ուղղուած բողոքները՝ քանդելով գանգատի այդ նամակներու կնիքները, ապա եւ ուշացնելով կամ արգելելով հեռագիրներու փոխանցումը իրենց հասցէատէրերուն:

Փաստ. 883-29ա

Ը 10.– ԷՎԵՐԷԿԻ ՄԷՋ (ԿԵՍԱՐԻԱ) ԹՐՔԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ ԿՈՄԻՏԷ ՍԸ

Էվերէկ-Ֆենիսէի մէջ գործի լծուած է 18 հոգիէ բաղկացեալ թրքական գաղտնի կոմիտէ մը, որուն նպատակն է վերապրող սակաւաթիւ հայերը սպաննել եւ ցոյց տալ որ այս նահանգներու բնակիչները բացառապէս թուրքերէ կը բաղկանան:

Ահա իրենց գլխաւոր պատճառաբանութիւնները կազմակերպութեան.–

1.- Հայոց համակրանքը Համաձայնականներու

նկատմամբ եւ վերջիններու բարեացակամ կեցուածքը հայոց հանդէպ:

2.- Այն վախը որ վերապրող հայերը կրնան ապագային վկայել իրենց գործած ոճիրներուն, սպանութեանց եւ կողոպուտին մասին:

Իշխանութիւնները բարեացակամ են այս կոմիտէին նկատմամբ:

Այս գիւղին հայերը կրնան յաւելեալ տեղեկութիւններ հաղորդել այս մասին:

Փաստ.883-86

Ը 11.– ԲԵՍԱԴՐՈՒԱԾ ԱՃՊԱՐԱՐՈՒԹԻՒՆ (Քաղուած «Renaissance»էն)

1915 թ. Մայիսին, Կեսարիոյ գիւղերէն Էվերէկը, տեղւոյն գալմագամ Սալէհ պէյի ջանքերով, ողողուած էր արդէն հայերու արեամբ: Հարեւան Ինճէ-Սու գիւղի հայերը ինչպէս ինչպէս էին: Կը թուէր թէ Սալէհ Ձէքի մոռցած էր գանոնք: Պարզապէս կեղծիք էր: Ինճէ-Սուի գիւղացիներուն ուրիշ դեր ու ճակատագիր էր վիճակուած:

Էվերէկի ջարդերէն քանի մը օր անց, բացորոշ ամբաստանութիւն մը կը ներկայացուի իշխանութեանց: Ըստ այս ամբաստանութեան, Ինճէ-Սուի հայերը կը պատրաստուէին խռովութիւններ յարուցանելու.– գիւղը յեղափոխականներու որջ մըն է. իշխանութիւնները իսկական գրգռուած վիճակի մէջ են. բերել կու տան քահանան եւ գիւղապետը եւ ամբողջ գիւղը մը աներեւակայելի շարժարանքներու կ'ենթարկեն գանոնք՝ խոստովանիլ տալու համար որ հարուած մը կը պատրաստեն պետութեան դէմ: Կը պահանջեն «խռովարարներու» անուանացանկը:

Քահանան ու գիւղապետը կը հերքեն նման խռովարարներու կամ յեղափոխականներու գոյութիւնը Ինճէ-Սուի մէջ: Բայց եւ այնպէս շարժարանքները կը կրկնապատկուին: Այն ատեն, կրած տանջանքներէն խելագուրկ, քահանան կը յայտնէ որ այդ անուանացանկը կը գտնուի իր մօտ գիւղը, գաղտնի դարակի մը մէջ պահուած: Անմիջապէս կը դադրեցնեն շարժարանքը: Երկու տանջարներ հետը առած եւ մեծաթիւ ժանտարմներու ընկերակցութեամբ, գալմագամը գիւղ կու գայ: Կը

խուզարկեն բնակարանը. ոչ մէկ անուանացանկ գոյութիւն ունի: Քահանան կը խոստովանի այն ատեն, որ խուսափանքի այդ միջոցին դիմած է շարժարանքներէն ազատելու համար: Սալէհ Ձէքի, կատղած, կը հրամայէ կրկնապատկել խոշտանգումները: Այդպէս շարունակեցաւ մինչեւ առաւօտ:

Եկած ժամանակ, ժանտարմները բաւական քոնիակ խմած էին... Կիսագիւցով վիճակի մէջ, շղթայագեր զգաններու նման խուժեցին քահանային ընտանիքին անդամներուն վրայ, բռնաբարեցին կիները, ապա սպանեցին գանոնք: Սպանուեցաւ նաեւ քահանան ու գիւղապետը: Ապա վոհմակը անցաւ միւս տունները... Բահերու, եռաժանիներու, խարազաններու, կացիներու հարուածներուն տակ անակնկալի եկած զոհերը տանջահար կը կոտորուին: Կը սպանուին նոյնպէս տանիքներու վրայ ապաստան փնտռողները:

Տանիքներու վերեւ, եթերին մէջ կը թռչէին սրունքներ, բազուկներ, մարդկային մարմնի խեղուած անդամներ, մինչ արեամբ եւ ալքոլով գինովցած ջարդարարները կը շարունակէին հալածել, կոտորել ու սպաննել ով որ իրենց ձեռքը անցնէր: Շուրջ երկոտասան գիւղացիներ սպաննուած էին արդէն երբ յղփացած գալմագամը երեւցաւ կրկին քահանային տան առջեւ, դուրս քաշկուտել տուաւ դիակները ու հեղափոխուեալ ինդաց յար եւ նման այն որսորդին, որ կը հրճուի ինքնագոհ, ի տես իր որսացած կենդանիներու բազմութեան:

Հնարքը

Գայմագամը անմիջապէս կը հրամայէ ժանտարմներուն որ հաւաքեն բոլոր դիակները եւ սայլերու վրայ բեռցնեն: Կը հրահանգուի նոյնպէս հաւաքել գիւղին հայերը: Գործը արագօրէն գլուխ կը բերուի: Կը ձերբակալուին 40 գիւղացիներ, ներառեալ կիներ եւ աղջիկներ: զանոնք կը բաժնեն երկու խումբի,— մահացածներու եւ կենդանի մնացածներու: Կը կազմուի տարօրինակ կարաւան մը, որ գայմագամին ու իր ժանտարմներուն ուղեկցութեամբ կը բռնէ Էվերէկի ճամբան: Գիշերը Էվերէկ հասնելու քանի մը քիլոմետր մնացած, կարաւանը կանգնեցուցին բլուրի մը ստորոտին մինչեւ լուսաբաց սպասելու համար: Առաւօտուն, կարաւանին մէկ մասը չարթնցաւ...: Նախօրօք կազմուած խումբերը ցրուած էին բլուրին շուրջը: տղամարդիկ ու կիներ գետին պառկած, տարբեր դիրքերով, իրարմէ համաչափ հեռաւորութեամբ, ոմանք ձորին եզերքը, ուրիշներ ժայռերու խորտուբորտութեան մէջ, մէկ քանին ալ

բլուրի լանջերուն: Բոլորին կուրծքը արիւնյուլայ եւ ձեռքերուն կամ անմիջապէս կողքին ունէին հրացաններ եւ ատրճանակներ՝ փողերը ուղղուած ճամբուն կողմը: դիակներուն միջեւ փամփուշտի տուփեր կուտակուած էին, իսկ նախորդ օր դիակներու փոխադրութեան յատկացուած սայլերը, այժմ, լեցուած էին զէնք ու գինամթերքի արկղներով:

Սալէհ Ձէքի եւ ժանտարմները աճապարանօք Էվերէկ վերադարձան եւ պատահարին մասին գեկուցեցին իշխանութիւններուն եւ գիւղացիներուն: — Ինձէ-Սուրի հայերը ապստամբած էին եւ լեռ բարձրանալով ամրացած հոն: Սակայն շնորհիւ Ալլահի ողորմածութեան, ապստամբութիւնը ճնշուած էր:

Անմիջապէս կը կազմուի քննիչ յանձնախումբ եւ հեռագիրներ կը դրկուին նահանգապետարան:

Ջերմ շնորհաւորանքներ իրարու՝ վտանգը հեռացած ըլլալու համար... Էլ-Համտուլլահ, Մաշալլահ, Ինչալլահ... հանդիսաւոր ատենագրութիւն կը կազմուի ու կ'ուղարկուի նահանգապետին:

Փաստ. 883-69

Ը 12.- ԿԵՍԱՐԻՈՅ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԻ ՏՆՕՐԷՆ ՍԱՊՐԻ ՊԷՅ

Սապրի պէյ կ'ամբաստանուի Թալասի միւտիր Խայիքի սպանութեան մէջ: Ան մեղսակիցն է Կեսարիոյ իթթի-հատականներու պետ Ճեմիլի, որ պատասխանատուն է Կեսարիոյ շրջակայքը գործուած բոլոր ոճիրներուն: Ինք է որ կոտորել տուած է Վահան Ճամճեան, Գաբրիէլ Քիւրքճեան, Մարգար Եազըճեան, Վահան Քեհեայեան, Գէորդ Ճամճեան վաճառականները, որոնք անպարտ արձակուած էին Պատերազմական ատեանէն:

Փաստ. 883-66ե

Ը 13.- ՆԱԼԸ ԽԱՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Նալը խանի (Անգարա) տեղահանութիւնը կատարուեցաւ Մալ-Միւտիրի եւ Ահմէտ պէյի կողմէ: Հայ զինուորներու ընտանիքները ցրուեցին թուրք գիւղերու մէջ, իրենց ազգութիւնը մոռցնել տալու նպատակով:

Նալը խանէն 1 ժամ հեռու գտնուող Եարլըք հասնելէ ետք, տարագրեալ հայերը կողոպտուեցան Քէօռ Սալիտ Քէօփէճլի կողմէ, որուն կ'օգնէին թուրք գիւղացիներ: Այս Քէօռ Սալիտը, Մանուկեանի ազարակին իւրացումով, հարուստ անձնաւորութիւն դարձաւ:

Ահմէտ պէյը յափշտակեց հայոց պատկանող ոչխարները, այծերն ու կովերը:

Փաստ. 883-68ա

Ը 14.- ՄԻՎՐԻՀԻՄԱՐԻ ՍԱՐՍԱՓՆԵՐԸ
(Քաղուածք «Renaissance»-ին)

Մեր քաղաքը, որ կը գտնուի Անգարայի նահանգին մէջ, ատենօք 850 հայ ընտանիք կը հաշուէր, ամէնքը բարեկեցիկ վիճակի մէջ: Առանց բացառութեան բոլորը աքսորուեցան, մեծ մասը Պոլլովատին եւ շրջակայքը: Այսօր, այդ 850 ընտանիքներէն միայն 140-ը վերագարձած են, բայց թուական մեծ նուազումով. այնպէս որ Սիվրի-Հիսարի բնակչութեան երեք քառորդը ջարդուած է:

Մէկ մասը մահացած է Տէր-Ջօր, ուրիշ մաս մը ճանապարհին Եփրատին մէջ թափուած է, մնացեալը գոհ

զացած է հիւանդութեանց եւ թշուառութեան:

Այժմ աղէտալի երեւոյթ ունի մեր քաղաքը: Հազիւ վաթսուց տուներ կը մնան կանգուն. մնացեալները կամ աւերակոյտի են վերածուած եւ կամ անբնակելի են: Քանի մը տուներ այ ծախուած են թուրքերու: Վերադարձող գաղթականները թշուառագոյն վիճակի մէջ կը գտնուին: Քաղաքին թուրքերու մէջ կան, ընդհակառակն, 50,000 թրքական ոսկիի տիրացած՝ իշխանական կեանք վարողներ:

Փաստ. 883-75բ

Ը 15.- ՀԵՐՈՍԻ ՄԸ ՇԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(Գրք-Շեհիք)

1915 թ. Օգոստոս ամսուան ընթացքին էր որ տեղի ունեցաւ Գրք-Շեհիքի հայոց տարագրութիւնն ու ջարդը: Նոյն միջոցին, Մեհմէտ Չաւուշ, որ հուշակ շահած էր Նեղոսցիներու պաշտպանութեան մէջ եւ Նեղոսցիներու գալմազամ տիտղոսին արժանացած, Անգարայէն Գրք-Շեհիք եկաւ:

Քաղաքիս բոլոր երեւելի անձնաւորութիւնները, կառավարիչին առաջնորդութեամբ գացին զինք զիմաւորելու եւ հանդիսաւոր ընդունելութիւն մը ցոյց տուին իրեն:

Մեհմէտ Չաւուշ կու գար այնպիսի պահու մը երբ «սուրբ գործը» աւարտած էր: 14 տարեկանէն վեր բոլոր հայերը կորստեան մատնուած էին արդէն: Ոչինչ կը մնար ընելիք իրեն: Այսուհանդերձ գոհացում տրուեցաւ իր փափաքին: Աճապարանօք հաւաքեցին 12 երեխաներ, մեծամասնութիւնը 12 տարեկանէն վար, եւ յանձնեցին Տարտանէլի նշանաւոր հերոսին: Վերջինս երեխաները տարաւ Իտեհիք թաղամասը: Մանուկներուն մաքառումը երկար չտեւեց: «Հերոս»ը մէկ առ մէկ

զգեստեց բոլորը:

Յաղթական Տարտանէլի կռիւներուն, յաղթական Գրք-Շեհիքի՝ հերոսը (գահրաման) շարունակեց իր փառահեղ արշաւանքը միւս նահանգներուն մէջ եւս:

Գնաց Մուճուր: Ճամբուն վրայ հանդիպեցաւ զօրագունդի մը, որուն մէջ երկու հայ զինուորներ կային. իրենց ընկերներէն բաժնելով՝ սպաննեց զանոնք:

Մուճուրէն անցաւ Մեճիէ գաւառակը: Միեւնոյն յաղթական ընդունելութիւնը մահմետական բնակչութեան կողմէ: Յաջորդ օր, իրեն տրուած գահրամանի (յաղթական) յորջորջումը արժեցնելու համար, ձերբակալել կու տայ Քէօզէքէն, Եոզղատէն, Կիւրիէն եկած եւ հոն գտնուող 7 գաղթական հայեր, կը տանի Պուլամաճի ջերմուկին մօտ ու կը սպաննէ զանոնք:

Այս քաջագործութիւնները կանգ առին Եոզղատ՝ Քելլերի մէջ սարքած կոտորածներով, ուր Քեմալներու, Թեֆլիքներու եւ Ֆեւզիներու հետ նշանակելի դեր մը խաղաց եւ ուր իր գազաթնակէտին հասաւ Տարտանէլի հերոսին փառահեղ ասպարէզը:

Փաստ. 883-26

Ը 16.– ԳԸՐ-ՇԵՀԻՐԻ (ԵՈԶՂԱՏ) ՏԱՐԱԳՐՈՒՄԸ

1915 թ. Յունիս, Յուլիս եւ Օգոստոս ամիսներուն, Գըր-Շեհիրի հայերուն մօտ արգիլեալ զէնքեր կը փնտռեն, եւ յեղափոխականներ. բայց ի գուր:

Ապա կը ձերբակալեն ու Անգարայի պատերազմական ատեան կ'ուղարկեն 15 երիտասարդներ, որոնք իւրաքանչիւր Շաբաթ օր աղքատներուն համար դրամ կը հանգանակէին:

Իթթիհատի գաւը.— Միւթեսարըֆը, զօրագունդի հրամանատարն ու կոմիսարը կը պահանջեն ու սպառնալիքի տակ կը յաջողին մեծ գումարներ կորզել: Միեւնոյն ժամանակ զիւրի Իթթիհատի ներկայացուցիչներէն Պահթիր Օղլու Զիա, Մուզուր Օղլու Միւլէյման եւ Գարա Մուամմէր հայերու տեղահանութեան պահանջ կը դնեն:

Ձերբակալութիւնները.— Կը սկսին ձերբակալել երեւելիները, թուով 14 հոգի: Այս դժբախտները կը տարագրուին եւ Արփա-Չուխուրի մէջ կը կոտորուին զօրահաւաքի պետ Մուճուր Քատիր պէյի ու իր ընկերներուն ձեռամբ:

Երկրորդ անգամ կը ձերբակալեն 65 հայեր, որոնք կը սպաննուին Չկիր Ռեճիպի եւ Հասան Չաւուշի չեթէներուն կողմէ:

Երրորդ անգամ կը ձերբակալուին 135 հայեր եւ կը տարուին Գըր-Շեհիրէն 20 վայրկեան հեռու գտնուող դաշտ մը եւ կը ջարդուին չեթէներուն եւ թուրք զիւղացիներուն կողմէ:

Հայերու տեղահանութիւնը զիւղերէն եւ կողոպուտը.— Կը սկսի հայերէ բնակուած մօտակայ զիւղերուն պարպումը: Նոյն պաշտօնեաներն են կողոպուտը կազմակերպողները, — զօրագունդի հրամանատարը, կոմիսարը, Իթթիհատի ներկայացուցիչները: Վերջիներս չեն վստահիր իրենց գործակալներուն՝ իրենց բաժին հանուած աւարին համար. կը հարցաքննեն կին ու տղամարդ կողոպտեալները իմանալու եւ արձանագրելու համար, թէ ինչ ունէին եւ որքանը կողոպտուած է:

Մահմետականացում.— Կ'առաջարկեն կիներուն որ մահմետականութիւն ընդունին. բայց փոքրամասնութիւն են հաւանողները: Մեծամասնութիւնը կ'աքսորուի դէպի մահ:

Լքեալ գոյքերու վաճառքը.— Իթթիհատի միեւնոյն ներկայացուցիչները կը դառնան լքեալ գոյքերու յանձնախումբին անդամներ, եւ կը սկսին վաճառքի: Գիւղին թուրք առեւտրականները եւ պաշտօնեաները 35 հոգինոց խումբ մը կազմեն եւ կը պարտադրեն ցած գիներ: Այսպէս, 70.000 թրքական լիրա արժող Գէորգ Փիրաճեանի վաճառատան ապրանքները կը ծախուին 800 թրք. լիրայի:

[Կը հետեւի թուրք պաշտօնեաներու եւ Իթթիհատի անդամներու 11 հոգիոց անուանացանկ, իբրեւ պատասխանատու Գըր-Շեհիրի չարագործութիւններուն]:

Փաստ. 883-87

Ը 17.– ՊՈԼՈՒԻ ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը հետեւեալ տեղեկագիրը ներկայացնելով ձեզի, կը խնդրէ որ թրքական իշխանութիւններէն պահանջէք այս դատապարտութիւններուն վերաբերող բոլոր վաւերաթուղթերը: Այդ փաստաթուղթերու ուսումնասիրութիւնը լոյս աշխարհ պիտի բերէ թրքական արդարադատութեան մոլթ ծալքերը:

– Թուրք պաշտօնատար Մեհմէտ Ալի պէյ, նախագահ Պոլսի հետաքննիչ յանձնախումբի եւ Մանճարիճի էմին ժանտարմը ընտրուած էին իբրեւ պատասխանատու ամբաստանեալ հայերը ահաբեկութեան մատնելու համար: Չարչարանքի իրենց գործիքներն էին՝ խարագաններ, մտրակներ, շիկացած երկաթներ եւ բիրեր:

Մեհմէտ պէյը, ալլապէս Սոփաճի անուանեալ, նշանաւոր է ամէն դատաւարութենէ ետք իր արձակած մահաւճիռներով. նոյնպէս նաեւ Իպրահիմ պէյը՝ Չարդարարներէն մէկը Ատանայի 1909 թ. կոտորածներու օրերուն:

Թահիմ պէյ չեթէպպետն ու իր մեղսակիցները՝ Սարը Մեհմէտ, Հաֆիզ Ալի, Փոսթաճի Նուրի եւ ուրիշ ոճրագործներ քարիւղով այրեցին զոնկուլտաքի հայ մը՝ Արշակ Եալտըզճեանը:

Ամբողջ երեք ամիսներ մնացինք բանտարկուած վիճակով եւ անընդհատ կ'ազդարարէին մեզի որ պիտի գլխատուինք: Մեր դատը աւարտեցաւ 1916 թ. Յունւար 23ին:

Մեզմէ ոմանք ամբաստանուած էին իբր անդամ Հայկական Բարեգործական ընկերութեան: Ասոնք յաջողեցան կարեւոր գումարներու միջոցաւ կաշառել Պատերազմական ատեանի անդամները, եւ դատապարտուեցան տաժանակիր աշխատանքներու: Տէր Եղիա քահանան դատապարտուեցաւ 9 տարուան: Դժբախտ քահանան մեռաւ բանտին մէջ:

Հետեւեալները մահաւճիռ ստացան եւ դատաւճիռը գործադրուեցաւ:

[Կը հետեւի մահաւճիռ ստացած ու սպաննուածներու 35 անունները (երկուքը յոյն), թուականներու յիշատակութեամբ]:

Պատերազմական ատեանի նախագահ Սոփաճի Մեհմէտ Ալի ոճրագործը ներկայիս Կոստանդնուպոլիս կը գտնուի:

Պատերազմական ատեանը անտարբեր էր հայերու կեանքին նկատմամբ թէ՛ ով որու տեղ մահաւճիռի կ'ենթարկուէր:

Տոքթ. Ահմէտ Միտհաթ, պատասխանատու քարտուղար Իթիհատի, գլխաւոր կազմակերպիչներէն մէկն էր Պոլսի հայոց տեղահանութեանց ջարդերուն եւ կրօնափոխութեան:

Մահաւճիռ ձեռք բերելու նպատակով հայոց բնակարաններուն մէջ տեղադրել կու տար ռումբեր, զէնքեր եւ արգիլեալ թերթեր:

Այս ճիւղը այնքան մեծ սարսափի կը մատնէր դատապարտեալները որ 58 բանտարկեալներ մահացան նախքան իրենց դատաւճիռի գործադրութիւնը:

Միւսնոյն այս քարտուղարն էր որ բազմաթիւ անգամներ Այաշ եւ Չանղըրի գնաց, սպաննել տալու համար Կոստանդնուպոլսէն զրկուած մտաւորականներն ու երեւելի հայերը:

Միտհատ Շիւքրին ատենէ մը ի վեր Պրոսա կը գտնուի:

Խոճա Սայիտ էֆէնտին կը մեղադրուի Խարբերդի մզկիթներուն մէջ հայերու բնաջնջումը քարոզելուն համար: Անձնապէս նաեւ մասնակից է կոտորածներուն եւ տեղահանութիւններուն:

Ամէնէն զարհուրելի ոճիրները գործելէ ետք, Խոճա Սայիտը իր կողոպտած աւարին հարստութիւնը վայելելու համար գացած է Կոստանդնուպոլիս: Հետապընդումներէ խուսափելու համար ներկայիս մեկնած է Անատոլիոյ նահանգները:

Փաստ. 883-72

Ը 18.- ԳՈՆԻԱՅԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

1915 թ. Մայիսի սկիզբն էր. ոստիկանները խստիւ խոզարկեցին հայոց բնակարանները, յատկապէս վաճառականներուն եւ բարեկեցիկներուն: Հակառակ բազմաթիւ գիշերներու ընթացքին թափուած ճիգերուն, այս հետազօտութիւնները ոչ մէկ արդիւնք տուին:

Քանի մը օր ետք, իթթիհատական ակումբի կազմած ցանկերու հիման վրայ սկսան աքսորել երեւելիները՝ վաճառականներ, գոհարավաճառներ, ուսուցիչներ: Հարիւրաւոր հայեր տարագրուեցան Սուլթանիէ (Գոնիայի հողամաս): Պր. Գարեգին Տէր Խաչատուրեան դիմեց վալի Ազմի պէյին որպէսզի արտօնէ որ անոնք տուն վերադառնան: Վալին իրեն պատասխանեց տառացիօրէն այսպէս.

— «Կառավարութեան քաղաքականութիւնը չի կըրնար փոխուիլ. գոհ եղէք որ չէք ջարդուիր, ինչպէս ձեր հայրենակիցները ուրիշ վիլայէթներու մէջ»:

Բնակչութեան մնացեալ մասը յանկարծական տեղահանութենէ մը վախնալով, մեկնումի պատրաստութիւններ տեսաւ: Առիթէն օգտուելով, ծախու զրուած ապրանքներուն համար ծայր աստիճան ցած գիներ առաջարկեցին. «Ի՞նչ կ'արժեն այս ապրանքները, կ'ըսէին, քանի մը օր ետք պիտի ջարդուիք արդէն»:

300 հայ ընտանիքներ ճամբայ հանուեցան դէպի Տէր

Ջօր: Միւսները կը սպասէին իրենց մեկնումին, երբ վալին՝ ձեւալ պէյ³ Գոնիայէն գալով հրամայեց որ աքսորեալները տուն վերադարձուին. եւ սակայն տեղահանութեան սպառնալիքը շարունակեց մնալ դեռ երկու տարի:

Մինչ այդ, նոր ցուցակներ կը կազմուէին, մարդիկ կը բանտարկուէին ու չարչարանքի կ'ենթարկուէին. կիներն ու աղջիկներն անգամ բանտ կը նետուէին ու կ'ենթարկուէին անսովոր դանակոծման:

Ձեւալ պէյի բարեացակամ վերաբերմունքին հակառակ, ստորագաս պաշտօնեաները ձեւը կը գտնէին կոպտօրէն վերաբերուելու հայերուն հետ:

Ձեւալ պէյի հրաժարումէն ետք, իթթիհատի պատասխանատու քարտուղարը՝ քաջածանօթ Ֆերիտ պէյ յաջողեցաւ տարագրել մնացեալ հայերը:

Տարագրութեան վճիռը յետս կոչել տալու նպատակով հայոց եպիսկոպոսին կատարած թախանձանքները գերմանացիներուն, ապարդիւն անցան նոյնպէս:

Լքեալ գոյքերու յանձնաժողովին անդամները իրենց միջեւ բաժնեցին հայերու ունեցուածքները:

Սուլթանիէի մէջ տարագրեալներուն հրահանգուեցաւ միանալ այլ վայրերէ եկող կարաւաններուն: Տարագրեալներուն ընկերացող ժանտարմները, իբր թէ հսկելու համար իրենց ապահովութեան, կողոպտեցին զիրենք եւ տասնեակներով հայեր սպաննեցին: Թուրք գիւղացիներ եւս մասնակցեցան այս չարագործութիւններուն:

3.- Դեւալ պէյ – Հալէպի նախկին նահանգապետ, որ մերժած էր եմթարկուիլ թալէաթի հրահանգներուն. այդ պատճառով պաշտօնանկ եղած ու փոխադրուած էր Գոնիա:

Փաստ. 883-62

Ը 19.- ՊՈԼՈՒԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ԻԶՉԷԹ ՊԷՅԻ ԴԵՐԸ

Մեծ եղաւ այս ճիւղին բաժինը հայոց դէմ գործը-
լած գազանութիւններուն մէջ: Իր հսկողութեան ներ-
քեւ կազմակերպուեցան չեթէները: Հայոց տուններուն
մէջ գետեղել տուաւ արգիլուած իրեր,— զէնքեր, ռում-
բեր, անգլիական, ֆրանսական, ռուսական դրօշակներ
եւայլն: Ինքն է հայերը ոստիկանատուն կանչողն ու չե-
թէներուն յանձնողը:

Հայոց տեղահանութեան արտօնութիւնը ձեռք բերե-
լու համար, 1915ին արդէն Իզգէթ պէյ դիմեց կեդրոնա-
կան կառավարութեան: 1916-17 տարիներուն, Իթթիհա-
տի քարտուղար Ահմէտ Միտհատ եւ Իզգէթ պէյ յաջողե-
ցան հայոց տարագրութեան համար հրամանագիր ստո-
րագրել տալ: Թուրք տարրը հրճուեցաւ ի տես հայերու
չարչարանքներուն:

Երկուշաբթին տօնական օր էր Թուրքերուն համար,
որովհետեւ հայերը այդ օրը կը կախէին, եւ այդ մասին
Իզգէթ պէյ կանխաւ իմաց կու տար իր հայրենակիցնե-
րուն:

Կախաղանները կը լարուէին քաղաքապետարանի
հրապարակին վրայ, ուր կը հաւաքուէր բազմութիւնը,
չարախինդ ուրախութեամբ մը գուարճանալու համար:
Այդ օր լեկի-լեցուն էին բոլոր սրճարանները. գրոյցնե-
րու նիւթը՝ կախաղաններու շուրջ էր միայն. մարդոց
քիչ մը տխրութիւն պատճառողը՝ դատապարտեալնե-

րու վերջին խօսքերն էին, որոնցմով անոնք Թուրքիոյ
վերջնական անկումը կը մարգարէանային: Թուրքերը
մինչեւ հիմա կը յիշեն այն հերոսները, որոնք կախաղան
բարձրացած պահուն կը գոռային. «Կեցցէ Հայաստան»:

Արմալի գիւղի քահանային երիտասարդ որդին՝ Տա-
ճատը կախաղանին առաջ հետեւեալ բառերով աւար-
տեց իր հակիրճ ճառախօսութիւնը. «Մեզ կախելով,
դուք Թուրքիոյ գերեզմանը կը փորէք»:

Նշրաֆներու ներկայացուցիչ եւ վարչական խոր-
հուրդի անդամ՝ Սուրէյա պէյը կը յորդորէր Թուրք ժո-
ղովուրդը որ չխղճայ մեռնողներուն համար. կը ծաղ-
րէր զոհերը եւ եթէ պատահէր որ պատերազմական ատ-
եանը մահապատիժ չսահմանէր մէկու մը նկատմամբ,
կ'ամբաստանէր զայն իր երկչոտութեան համար:

Թուրքերը այսօր ալ նոյն մտայնութիւնն ունին: Զի-
նադադարէն ետք, Դեկտեմբեր 11ին, Ներքին գործոց
նախարարութիւնը Պոլսու իշխանութիւններուն հե-
ռագրեց որ ազատ արձակեն քաղաքական նկատմամբ
բանտարկուած հայերը: Այսուհանդերձ, միայն Դեկտ-
28ին հայ քաղաքական բանտարկեալները ազատ ար-
ձակուեցան:

Թուրք տուններու մէջ տակաւին հայ որբեր կան, իսկ
երիտասարդ հայուհիները դեռ փակուած կը պահուին
թրքական հարէմներու մէջ:

Փաստ. 883-63

Ը 20.- ԳԱՍԹԵՄՈՒՆԻԻ ՆԱԽԿԻՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԱԹԸՖ ՊԷՅ

Այս վալիին գազանութիւնները անմոռանալի են,
Անգարայի նախկին վալի Աթրֆ պէյ գործեց աննման
վարպետութեամբ: Որպէս վարձատրութիւն հայերու
բնաջնջման ծրագրի գործադրութեան մէջ իր ցոյց
տուած եռանդին, պաշտօնի բարձրացում ունեցաւ
կարգուելով վալի Գասթեմունիի մէջ, ուր եւ շարունա-
կեց իր աղէտալի գործը: Այս ճիւղի հրամանով է որ

խողխողուեցան թրքական «Սապահ» թերթի տաղան-
դաւոր խմբագիրը, պր. Տիրան Քելէկեան, որ աքսոր-
ւած էր Գասթեմունի նահանգապետութեան ենթակայ
Չանղըրի:

ՄԵՀՄԷՏ ՆԵՃԻՊ ՊԷՅ
Տնօրէն Մամուրէթ-իւլ-Ազիզի
Ծխախոտի վարչութեան

Թ. ՊՐՈՒՍԱ – ՆԻԿՈՄԵԴԻԱ – ԻԶՄԻՏ

Փաստ. 883-30

Թ 1.– ՊՐՈՒՍԱՅԻ ՀԱՅԵՐՈՒՆ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿՈՏՈՐՈՒՄԸ

1915 թ. Ապրիլ 15ին սկսած խուզարկութիւնները կը տեւեն մէկ ամիս: Կը ձեռքբերուին բոլոր հայ մտաւորականներն ու երեւելի անձնաւորութիւնները: Կը հարցաքննուին ոստիկանապետ Մահմուտ Ճելետտինի եւ դատական նախաքննիչ Մեհմէտ Ալիի կողմէ: Քանի մը արգելափակուածներ կը դրկուին Պանտրմայի պատերազմական ատեանը, 200 ուրիշներ կը տարուին Աթրանոս:

Այսպէս կը խօսուի իրենց. «Դուք ոչ մէկ յանցանք ունիք, բայց նկատի ունենալով Պրոսայի մէջ ձեր ներկայութեան անյարմարութիւնը, պիտի տեղափոխուի Սթանոս, ուր պիտի մնայ 15 կամ 20 օր:

Իթիբահատի ներկայացուցիչ Մեհմետճէի ժամանելուն, կը ձեռնարկուի զանգուածային ձեռքբերութեանց: Պանտրմա եւ Սթանոս տեղափոխուածներուն մեծամասնութիւնը կը բերուի Պրոսա եւ կ'ենթարկուի ասուելի չարչարանքներու:

Ձէնքերու հաւաքում.— Ձէնք կը պահանջուի: Հայերը իշխանութեանց կը յանձնեն ինչ որ ունին: Կը պահանջուի յեղափոխական կոմիտէներու պատկանող զէնքերը: Հայերը նման բան չունէին, եւ կը սկսին չարչարանքները:

Սթանոս տեղափոխուած կալանաւորները հոն կը մնան մինչեւ Յուլիսի 10: Չանոնք կը բաժնեն չորս խումբերու եւ իւրաքանչիւր օր մէկ խումբ կը տարագրուի: Ոչ մէկ տեղեկութիւն այս 300 դժբախտներէն: Կոտորուած են:

Քանի մը անուններ յիշատակենք այս սպաննուածներէն.—

[Կը հետեւի 34 անուններ]:

Պանտրմայի պատերազմական ատեան տարուածները.—

100 հոգի էին, որոնցմէ 20-ը Պրոսայէն էին, միւսները շրջակայքի գիւղերէն: Մէկ մասը մահուան կը դատապարտուի, միւսները 5 տարուան բանտարկութեան: Պրոսայի առաջնորդական տեղապահ Պարգեւ [վրդ.] Դանիէլեանը եւ ատենադպիր Սուքրաս Տիւլիերեանը, որոնք հինգ տարուան բանտարկութեան դատապարտուած էին, կը տարագրուին Տէր Զօր, ուր կը մեռնին ժանտատենդէ:

Մահուան դատապարտուածները Պրոսայի մէջ կատարան հանուեցան Ահա եւ անունները.—

Տոքթ. Ալեքսան Ստեփանեան — բժիշկ
Բարունակ Աճեմեան — դեղագործ

Սիմոնիկ Սարաֆեան — յանձնակատար
Միսաք Մերմերեան — Ոսկերիչ
եւ երկու գիւղացիներ

Տարագրութիւնը.— Տարագրութեան հրահանգը կ'արձակուի 1915 թ. Օգոստոսի 1-ին. մեկնումի պատրաստութիւններուն համար միայն երեք օր կը տրուի: Պարպումէն առաջ արդէն տուները կը կողոպտուին: Կը տարագրուին 1200 ընտանիքներ. բողոքական եւ կաթողիկէ 150 ընտանիքներ զերծ կը մնան այս պատիժէն:

Պրոսայի հայերը Պիլեճիքի ճամբով Գոնիա կ'աքսորուին, յետոյ Տէր Զօր:

Ամերիկայի հիւպատոսը.— Տարագրութեան օրերուն էր որ Ամերիկայի երիտասարդ հիւպատոսը Պրոսա եկաւ: Իր ժամանումին առիթով է որ թուրքերը քիչ մը զգուշաւոր եղան եւ հրաժարեցան բողոքական եւ կաթողիկէ հայերը տարագրելէ:

Ահաւասիկ գլխաւոր պատասխանատուները.—

Ալի Օսման.— Նահանգապետ

Իպրահիմ պէյ.— Իթիբահատի վերաքննիչ

Մուխթար պէյ.— Քաղաքապետական խորհուրդի նախկին նախագահ

Իսմայիլ Հաքքի.— Ոստիկան զօրաց հրամանատար

Այս չորս անձնաւորութիւնները հայերու բնաջնջման կազմակերպիչներն ու սաղորիչներն են:

Մահմուտ Ճելալետտին պէյ.— Ոստիկանապետ

Մեհմետճէ.— Իթիբահատի պատուիրակ, յատկապէս առաքուած մայրաքաղաքէն:

Մեհմէտ Ալի.— Դատական պատուիրակ

Թեմալիք — Կոմիսար

Այս չորսը կալանաւորները հարցաքննողներն են եւ զանոնք չարչարողները:

Լքեալ գոյքերը հաշուեյարդարի են/թարկող յանձնախումբի անդամներն են.—

Սումթագ պէյ.— Յատկապէս առաքուած Կոստանդնուպոլսէն: Ապա դարձած Լիբանանի կառավարիչ:

Ապտուրահման պէյ.— Մայրաքաղաքէն առաքուած է:

Ռեճէպ պէյ

Ասոնք կազմակերպեցին կողոպուտը եւ տէր դարձան ահագին հարստութիւններու:

Փաստ. 883-75

**Թ 2.- ՊՐՈՒՍԱՅԻ ԻՐԱԴԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(Ականատեսի սը վկայութիւնը)**

1915 թ. Մայիսին, Պրոուսայի նահանգապետ Ալի Օսման պէյի, Իթիբակատի լիազօր պատուիրակ եւ ոստիկանապետ Իպրահիմի (գոնիացի) կողմէ կազմուած նախագիծի մը հիմամբ, տեղի ունեցաւ մտաւորականներու եւ հանրածանօթ անձնաւորութիւններու ձեռքակալումը. գուգահեռաբար, գիշերանց, խուզարկուեցան քաղաքի հայոց բնակարանները:

Խուզարկութեանց ընթացքին, կարգ մը տուներու մէջ բացիկներ, հայրենասիրական երգեր ու բանաստեղծութիւններ գտնուելուն պատրուակով որոշ հայեր տարագրեցին Պրոուսայէն 2.5 ժամ հեռու գտնուող Սթանոս. ուրիշներ, ինչպէս Տոքթ. Մելքիսեղէկեան, Սիմոն Սեֆէրեան, պատերազմական ատեան ղրկուելով՝ դատապարտուեցան մահապատժի եւ սպաննուեցան հայկական թաղամասի մէջ գտնուող Սէտ-Պաշի կամուրջին վրայ:

Ասոնց յանցագործութիւնը այլ բան չէր եթէ ոչ բացիկներ եւ իւղանկարներ ունենալ իրենց տան մէջ:

Առաջնորդական տեղապահ Պարգեւ վարդապետ, Պանտրմայի պատերազմական ատեան տարուելով, հինգ տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ, տան մէջ «Ազատամարտ» թերթի քանի մը օրինակներ եւ Բաֆֆիի կարգ մը վէպեր գտնուելուն պատճառաւ:

Դժբախտ դատապարտեալը, Պրոուսայի եւ Գոնիայի բանտերուն մէջ երկու տարի խղճալի կեանք վարելէ ետք, տարուեցաւ Տէր Զօր ուր եւ մահացաւ ողբերգական եղանակով մը:

Պրոուսայի 300 հայերու Սթանոս աքսորուելէ ետք,

իշխանութիւնները ժողովուրդը ապահովցուցին որ հալածանքներու շրջանը փակուած է: Բայց հակառակ մէկէ աւելի անգամներ տրուած այս հաւաստիացումներուն, հոգեւորական մը եւ ուրիշ հինգ հայեր խիստ կալանքի տակ Պիլեծիկէն Պրոուսա տարին, Պանտրմայի պատերազմական ատեանին ներկայանալու համար:

Չանգուածային ձեռքակալութիւնները կը վերսկսին Պրոուսայի մէջ. բանտերը կը լեցուին հայերով: Այն ատեն վալին մեծ բարբարոսութիւն մը ցուցադրեց. Գառնիկ Շիշմանեանը հրացանի կոթերու եւ խարազանի հարուածներուն տակ արիւնլուայ դարձաւ. Մահմէտ Չեհը քաշեց-հանեց անոր ոտքին եղունգները. ապա չարչարանքներու ենթարկուած 72 անձերը տարուեցան Ատրանոս:

Պրոուսահայերու հոգեվիճակէն օգտուելով, քաղաքապետ Ահմէտ Մուխթար պատուեց Միհրան Պայթայեանին պարտական իր մուրհակը՝ 2000 թրք. ոսկի արժողութեամբ:

1915 թ. Յուլիսի վերջին օրերուն, Մահմէտ Չեհ մեծաթիւ չեթէներու խումբով մը կ'երթայ Սթանոս, կը կողոպտէ բոլոր տարագրեալները եւ կը հրամայէ կապել-կապկպել այն 400 հոգին, որ լուսաբացին մէկ առ մէկ հրացանազարկ եղան: Ասոնց մէջ էին՝ դեղագործ Արմենակ Լուծֆեանը, Օսմանեան դրամատան փաստաբան Յարուսթիւն Մինաս Ֆնտրգլեանը, Պրոուսայի մետաքսագիտութեան հիմնարկի դասախօս Եղուարդ Պէյագեանը, Պրոուսայի հանրային պարտուց ատենադպիր Օննիկ Ղուկասեանը:

Փաստ. 883-21

**Թ 3.- ՉԵՆԿԻԼԷՐԻ ՀԱՅՈՑ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ
(Պրուսայի նահանգ)**

1915 թ. Օգոստոս 4-ին, 2000 թուրք զինուորներ շրջապատեցին Չենկիլէրը: Երեւելիները հրաւիրուեցան իշխանութեանց մօտ երթալու: Ամբողջ բնակչութիւնը (1200 տուն) առաւօտուն իսկ պէտք է հեռանայ գիւղէն:

Թուրք զինուորները եւ գիւղացիները հրացանի կոթերով եւ մտրակներով պարպել կու տան գիւղը:

Բացարձակապէս արգելուած է որեւէ բան առնել:— Կայսերական կառավարութիւնը պիտի հոգայ ժողովուրդին կարիքները:

Կը գատեն տղամարդիկը եւ կէս ժամ հեռաւորութեան վրայ կը կոտորեն զանոնք: Տուներուն մէջ մնացած ծծկեր երեխաները եւ մանուկները կը մորթուին: Նոյն եղանակով նաեւ անոնք, որոնց մայրերը, խարազանի հարուածներու տակ քալելու բռնադատուած, ստիպուած էին ճամբան թողուլ զիրենք:

Կանացի գգեստներով ծպտուած կարգ մը տղամարդիկ՝ երեւան բերուելով կը սպաննուին իրենց հարազատներու աչքին առջեւ:

Կողոպուտը.— Չենկիլէրը Եալովա գաւառակի ամէնէն հարուստ գիւղերէն մէկն էր: Իշխանութիւնները գիւղի բնակիչներէն 100 հոգի վար կը դնեն. ասոնք եկեղեցի կը փոխադրեն լքուած բոլոր իրեղէնները, որոնք տեղւոյն վրայ կը բաժնուին տարագրողներուն եւ ամէն կողմէ հասած թուրք գիւղացիներուն միջեւ: Կողոպուտի աւարտին, 100 հայերը կը հանուին գիւղէն դուրս եւ կը կոտորուին:

Հայերու փնտռտուքը.— Գիւղին մէջ մնացած 9 ծերունիներ՝ կոյր , հաշմանդամ եւ կաղ, կ'ենթարկուին ամէնէն սարսափելի չարչարանքներուն: Անոնցմէ մէկ քանին կը մահանան:

[Կը հետեւի կոտորածի կազմակերպիչներու 15 անունները, կուսակցական եւ կառավարական պաշտօնատարներ, կուսակցական վարիչներ]:

30 Դեկտ. 1918

Փաստ. 883-59

**Թ 4.- ՀԱՃԻ ՍԻՒԼԷՅՍԱՆ
(Աֆիոն-Գարահիսար)**

Այս Խոճա Սիւլէյմանը կ'ամբաստանենք իբրեւ մեծագոյն դահիճներէն մէկը հայերուն:

Ծագումով Աֆիոն-Գարահիսարցի է. այժմ կը կոչուի Իզմիրի գատէ. ժամանակին սպասեակ էր թրքական բաղնիքներու մէջ. այսօր հսկայական հարստութեան տէր է:

Ընդհանուր Պատերազմի յայտարարութենէն ետք, երբ Իթիհատի կոմիտէն սկսաւ հայերը բնաջնջել, այս խոճան հանդիսացաւ ամէնէն կատաղի ճիւղերէն մէկը, իրեն արբանեակ ունենալով ուրիշ սրիկայ մը՝ Հասան Ֆեհմին եւ Իթիհատի անդամները:

Իր նոր ասպարէզը սկսաւ իբրեւ քարոզիչ իսլամու-

թեան. քանի մը հայեր մատնեց որպէս յեղափոխականներ, եւ տարագրել ու սպաննել տուաւ զանոնք:

Անմիջապէս որ Ձմիւռնիայէն 50 հայ ընտանիքներ Աֆիոն-Գարահիսար հասան, Խոճա Սիւլէյման կարելին ըրաւ զանոնք իսլամացնելու համար. ինք է որ կառավարութեան խորհուրդ տուաւ գաղտնի պահել Ձմիւռնիոյ վալի Ռահմի պէյի հեռագիրը, որմով կը պահանջուէր հայ աքսորեալներու վերադարձը. մեծ գումար պահանջեց անոնց մեկնումը արտօնելու համար:

Անողոք այս Խոճային պահանջած գումարը վճարելէ ետք միայն հայերը կրցան վերադառնալ իրենց քաղաքը:

Աներեւակայելի դաժանութեամբ վարուեցաւ Աֆիոն-Գարահիսարի հայերուն հետ:

Փաստ. 883-17

Թ 5.- ԱՖԻՈՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

[Անունները 12 իթիհատական պատասխանատուներու, որոնք որոշած են մեր տարագրութիւնը]

Ըստ պաշտօնական արձանագրութեանց, հայոց տարագրութիւնը որոշուած է հետեւեալ պատճառներով:

- 1.- իթիհատի Կեդր. վարչութեան կամքը:
- 2.- Հայերուն հարստութիւնը բաժնելու համար թուրքերուն:
- 3.- Աֆիոն-Գարահիսարը պէտք է բացառապէս ըլլայ թրքական կեդրոն մը:

Յաջորդ օր, տարագրութեան հրամանը փոխանցուած է մունետիկին կողմէ: Ամբողջ բնակչութիւնը տարագրուած է. գերծ կը կացուցուին միայն քանի մը արհեստաւորներ, որոնց պէտք ունին թուրքերը, եւ գինւորներու քանի մը ընտանիքներ:

Աֆիոն-Գարահիսարի հայերը համբաւուած էին իրենց մեծ հարստութեամբ. ունէին աֆիոնի նկատառելի պահեստ: Յանձնախումբ կը կազմուի զայն գողնալու եւ բաժնուելու համար:

Հայերու կրօնափոխութիւնը.— Աֆիոն-Գարահիսարէն անցնող այլ վայրերու տարագրեալներուն կը յորդորուի իսլամանալ: Կ'ընտրուին 50 աղջնակներ եւ մանչեր, 14-15 տարեկան: Յարդ ոչ մէկ տեղեկութիւն այս դժբախտներէն:

Բողոքական հայերու տաճարին խաչը, ինչպէս նաեւ հայոց եկեղեցիին խաչն ու գանգակը վերցուած են եւ փոխարինուած մահիկով:

Անգլիական հովանաւորութեան տակ գտնուող տաճարին կարասիները կը գտնուին Ֆաքիր էֆէնտիին մօտ:

27 Դեկտեմբեր 1918

Փաստ. 883-55ա

Թ 6.- ԿԵՍԼԻԿԻ ԵՒ ՇՐՁԱԿԱՅՔԻ ՏԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՋԱՐԴԵՐՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Կեմլիկի, Պէյնիի (Մեծ ու Փոքր), Կիւրգէի, Քարաքի, Սէօլէգի, Նոր-Գիւղի, Օրթաքէոյի, Չենկիլէրի եւայլն տեղահանութեան գլխաւոր պատասխանատուն Ալած պէյն է, Պրուսայէն. անոր արբանեակներն էին՝ նախկին գայմագամ Հիլմի պէյ, ոստիկան զօրաց հրամանատար Ասսէմ պէյ, նախկին ոստիկանապետ եւ քաղաքապետարանի քարտուղար Քերեստէճի Չատէ Քիամիլ էֆէնտի, յիսնապետ Պեսսիմ:

Այս վերջինը մեծագոյն դերը ունեցաւ սպանութեանը մէջ 45 հայ գինուորներու, որոնք տեղահանութենէն ետք գինուորական հրամանատարի արտօնութեամբ՝

վերադարձած էին իրենց գիւղերը: Այս տխրահռչակ յիսնապետը կը բանտարկէ ու կ'ահաբեկէ գինուորները, ապա կը տանի Ելիճա Տէրիմէն կոչուած վայրը ու հրացանագարի ընել կու տայ գանոնք: Այժմ այս ճիւղը կը բնակի Բազար-Քէոյ, ազատօրէն ըմբռնուելով իր սրբորագործութիւնները:

Այս գիւղերու ամբողջ հարստութիւնը փոխադրուած է թրքական գիւղերը. բոլոր թուրքերը բաժնեկից են այս կողոպուտին:

Երկրորդական յափշտակիցներու ցանկը այնքան երկար է, որ անկարելի է մի առ մի թուել զանոնք:

Փաստ. 883-51ա

Թ 7.- ԲԷՕՍԵՐԷ – ՏԵՐԵՍԻԻ ՍՊԱՆԴԸ

Սամսոնի միութեսարդֆին պատասխանատուութիւնը

Ի գուր է որ Սամսոնի միութեսարդֆ ձեմալ պէյ կը բողոքէ որ իր ձեռքերը թաթխուած չեն հայոց արեան մէջ: Հետեւեալ փաստաթուղթը կը հաստատէ իր յանցագործութիւնը:—

Պիլեծիքի (Պրուսա) հայերը տարագրուած էին: Պրուսացի քանի մը հայեր դեռ կը մնային հոն: Խաւար գիշեր մը, իրարու կապուած երկու հայեր, ժանտարմի մը հսկողութեամբ, կը բարձրանային քաղաքին մօտ գտնուող բլուր մը: Քանի մը վայրկեան ետք, ուրիշ երկու հայեր, յետոյ հինգ ուրիշներ բարձրացան նոյն բլուրը, միշտ ժանտարմներու ուղեկցութեամբ: Տասը վայրկեան անց, ձեմալ պէյ, կառավարական պաշտօնեաներու ընկերակցութեամբ, հասաւ միեւնոյն բլուրը, ուրկէ լսուող պայթումները վատ բան գուշակել կու

տային: Քանի մը վայրկեան ետք ձեմալ պէյ իջաւ բլուրէն, չարամիտ նայուածք մը դէմքին. սարսափազդու էր աչքերուն արտայայտութիւնը: Յաջորդ օր բլուրի ետին, Քէօսերէ-Տերեսի կոչուած ձորին մէջ կը տեսնուէին անդամահատուած մարմիններ, ջախջախուած գլուխներ, կիսովին թաղուած դիակներ, գետինը կարմիր ներկուած: Ի տես արիւնով թաթաւուն այս հողին ու բզկտուած մարմիններուն, մահուան սարսուռ մը անցաւ մեր մարմնով:

Ձեմալ պէյ արիւնարբու մարդ է եւ գործօն մասնակցութիւն ունեցած սրբազան պատերազմին (Ճիհատ): Այս սպանդի վաղորդային, թուրք երեւելի մը կ'ըսէր. «Կ'ուզեմ որ իմ ձեռքերուն վրայ դրոշմուած մնայ հայերու արիւնը»:

Փաստ. 883-22

Թ 8.- ԳԱՐԱՍՈՒՐՍԱԼԻ ԵՄԵՆԱՎԱ ԳԱՒԱՌԱԿ ՀԱՅՈՑ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԸ

Գարամուրսալ կը գտնուի իգմիթի ծովախորշի ափին. բնակչութեան մէջ հայերը կը գրաւեն նշանակալի դիրք. գաւառակի լաւագոյն տարրերն են:

Ինչպէս ամէն տեղ, հոս եւս ոճիրները կը գործուին վերէն եկած հրահանգի վրայ, բայց կառավարական պաշտօնեաները, իբրեւ կազմակերպիչ եւ գործադիրներ, գործօն դեր կը ստանձնեն:

Այս ոճրագործներու բոլոր արարքները վկայուած են Գարամուրսալի պատասխանատու տեսուչ Իսմայիլ էֆէնտիի եւ փաստաբան Սարըքլի Կիւրճի Մուսթաֆա էֆէնտիի կողմէ:

Ահաւասիկ պաշտօնական ոճրագործներու անուանացանկ մը. [կը հետեւի 12 անուններ]:

Գարամուրսալի մէջ կառավարութիւնը կը հրահանգէ հաւաքել հայերու գէնքերը եւ կը խոստանայ պաշտպանել զիրենք: Զէնքերը կը յանձնուին թուրքերուն եւ կը վաճառուին անոնք թիւֆէնկճի Մուստաֆայի կողմէ:

Յիշատակուած ոճրագործներուն մէջ ամէնէն դաժանը եղաւ աւագակ եւ ջարդարար Մեհմէտ ձեմալը: Տարագրութեան ժամանակ, ան խոստացաւ հայերուն զիրենք ուղարկել շոգեկառքով եւ իւրաքանչիւրին վճարել տուաւ երկու թրքական ոսկի, բայց այսպէս կողոպտելէ ետք, զիրենք ճամբու դրաւ հետիտան, նոյնիսկ ծերունիներն ու երեխաները:

Նախկին եւ ներկայ միութեսարդֆները, ինչպէս նաեւ գաւառակի միւլթիին նոյնպէս կողոպտիչներ եւ դահիճներ են: Մեքեճէի կայարանին մէջ անոնք սպաննեցին Պետրոս անունով հայ կառապանը՝ իր հարստութեան տէր դառնալու համար:

Նուրի պէյ հուշակալուր դարձաւ իր գործած դաժանութիւններով, իր անձնական շահուն համար կանգ չառնելով որեւէ գազանութեան առջեւ:

Այս բոլոր ոճրագործները սպաննեցին, կողոպտեցին եւ ահ ու սարսափի մատնեցին դժբախտ տարագիրները. մինչեւ իսկ մերկացուցին դիակները:

Փաստ. 883-35ա

Թ 9.- ՇԵՒՔԷԹ ՊԷՅ՝

ՍԵՂԱՍԱԿԻՑ ԱՏԱԲԱԶԱՐԻ ԵՒ ԻԶՍԻԹԻ ՉԵԹԷԱՊԵՏ ԻՊՐԱՀԻՍԻ

Նախքան ընդհանուր պատերազմը, Շեւքէթ պէյ պարզ գործաւոր մըն էր, որ հասարակ կեանք մը կը վարէր Մալթեփէի մէջ: Հարստահարութիւններու ժամանակ ճամբայ ելաւ դէպի Իզմիթ եւ Ատաբազար, ուրկէ Մալթեփէ վերադարձաւ հարուստ աւարով: Այս աւանին յոյներն ու հայերը վկայ են անոր վարած կենցաղին ակնբախ տարբերութեան.— աղքատ ու պարտքերու տակ թաղուած նախքան պատերազմը, մեծափարթամ՝ հայերու տարագրութենէն ետք: Չի քաշուիր բացայայտօրէն յայտարարել, որ երկրորդ շրջապտոյտի մը պիտի ձեռնարկէ եւ վերադառնայ շատ աւելի ճոխ աւարով

մը: Արդարեւ, կը մեկնի ու կը վերադառնայ հսկայական հարստութեամբ. թալանած է 2000 ոչխար, արժէքաւոր բազմաթիւ գործեր եւ ահագին թանկարժէք իրեր, մատանիներ, ժամացոյցներ, ոսկեղէններ եւ այլն: Մալթեփէի բնակիչ քրիստոնեաները (յոյն եւ հայ) պատրաստ են վկայելու ի նպաստ այս տեղեկագրի բովանդակութեան: Աւագակ Շեւքէթ պէյի առեւտրական գրասենեակի հասցէն.— Ստամպուլ, Սիրքեճի, Քոսովօ խան, № 7:

Փաստ. 883-76բ

Թ 10.- ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐ ԻԶՍԻԹԻ ԲԱՆՏԻՆ ՍԷՁ

Իբրեւ քոմիթաճի ամբաստանեալ՝ նետուած էի Իզմիթի բանտը. տարբեր հայեր ալ հոն բերին, ուրիշներու կարգին տաղանդաւոր բանաստեղծ Արտաշէս Յարութիւնեանը, իր հօրը հետ: Հարցաքննութեան ժամանակ, քաղաքական բաժանմունքի պետը Ռեշիտ պէյ եւ կեդրոնական բանտի միւտիրը՝ Չեթէպաշի Իպրահիմ մահացու հարչարանքներու ենթարկել տուին զանոնք:

Յարութիւնեան եւ հայրը այն աստիճան զանակոծեցան որ իրենց ոտքերն ու ձեռքերը արիւնլուայ վիճակի մէջ էին. ոչ կրնային ուտել, ոչ բազուկները բարձրացնել. խոր վիշտ կը պատճառէր բոլորիս իրենց այդ վիճակը: Քանի մը շաբաթ ետք, անհետացուցին Յարութիւնն ու հայրը: Ոչ ոք տեղեակ է անոնց վիճակուած ճակատագրէն:

Փաստ. 883-66դ

Թ 11.- ՍԱԶՀԱՐ ՊԷՅԻ ՊԱՏՄԱԾԸ

Մագհար պէյ, որ վերջերս վերադարձած է Իզմիտէն, ուր գացած էր հայոց տեղահանութեան շուրջ քննութիւն կատարելու, այսպէս արտայայտուած է Ազգամ թերթի խմբագրին.—

Հարկ է աւելցնել Արմաշի, Պահչեճիկի ու Ուզուն-Թաւլայի ոստիկան զօրաց հրամանատարներ՝ Լազ Թեֆիքն ու Քէլ Ահմէտը: Սակայն ինչո՞ւ համար մոռացութեան տալ վաճառատուներ, խանութներ, բնակարաններ թալանողները, 400 տուն ունեցող թաղամասը հրկիզողները, եւ այլն եւ այլն: Պիտի յիշատակենք անոնցմէ մէկ քանին.— Տեյի Մագհար, այժմ Պիթլիսի նահանգապետ, Ֆուատ պէյ, այժմ քաղաքային քննիչ, Նետիմ պէյ, այժմ Կ. Պոլիս, Ախթար պէյ, Հիւսնի պէյ, փաստաբան Վաաֆի, եւ այլն եւ այլն:

- Իզմիտի հայերը կը բողոքեն չորս անձերու դէմ.—
- 1.- Բանտապետ Իպրահիմ պէյի դէմ, որ այժմ Պատում կը բնակի.
- 2.- Պահչեճիկի միւտիր Ալի Շուհուրի դէմ.
- 3.- Ուզուն-Թաւլայի միւտիր Վեճիհի դէմ.
- 4.- Արմաշի միւտիր Ֆահրետտինի դէմ:

Փաստ. 883-29

**Թ 12.- ԱՄՔԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ 1914-1918 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ
ՊԱՐՏԻՉԱԿԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԱԼԻ ՇՈՒՈՒՐԻ ԴԷՄ**

Այս պաշտօնատարը իբրև ոճրագործ կ'ամբաստան-
վի հետեւեալ պատճառներով.—

- 1.- Որպէս խորհրդական Կեդրոնական բանտի տնօ-
րէն Իպրահիմ պէյի, Պարտիզակի եւ Օվաճըքի մէջ հա-
յոց զէնքերը հաւաքելու պատրուակով, ծեծել կու տայ
գիւղին մտաւորականները եւ երեւելի անձնաւորու-
թիւնները:
- 2.- Համաձայն Կեդրոնական կառավարութեան հրա-
հանգներուն՝ բողոքական եւ կաթողիկէ հայերը, ինչպէս
նաեւ գինուորներու ընտանիքները պէտք էջր աքսորել-
հակառակ ասոր, ան տարագրել տուած է զանոնք:
- 3.- Ստիպած է որ հայերու տեղահանութեան համար
Իզմիթէն եկած սայլապաններն ու սայլերը բարձր գին
պահանջեն, որպէսզի բաժնեկից ըլլայ անոնց:
- 4.- Կ'արգիլէ արժէքաւոր կարասիներու վաճառքը եւ
թոյլ չի տար որ թուրքերն ու հրեաները գնեն զանոնք-
ապա կ'առնէ բոլորը:
- 5.- Տեղահանութեան ատեն հրացանով կը սպաննէ

Մկրտիչ Պոլիկեան կոչուած կոյր ծերունին եւ Խաչիկ
Գապաքեանը, իսկ Կարապետ Շարուղեանը կը մահա-
նայ գանակոծութեամբ:

- 6.- Իրեն արբանեակ Ֆայիք Չաւուշի միջոցաւ, մեծ
գումար կը գանձէ Իզմիթէն Գոնիա ճամբորդութեան
համար. յետագային սակայն խեղճ տարագիրները երկ-
րորդ անգամ կը վճարեն միեւնոյն ուղեւորութեան հա-
մար:
- 7.- Հայոց սրբատեղին կը պղծէ աղտեղութեամբ: Կը
կողոպտէ հայ եկեղեցւոյ սրբազան անօթները:
- 8.- Կեդրոնական կառավարութեան արտօնու-
թեամբ, կաթողիկէ եւ բողոքական հայերը կը վերա-
դառնան Իզմիթ. անկէ կ'անցնին Պարտիզակ, բայց դա-
ժան միւտիրը՝ Ալի Շուուր չ'ընդունիր զիրենք:
- 9.- Ալեքսան Պալճեան եւ իր որդին իբրև գինուորի
ընտանիք Տեյրմէն-Տերէ եկած էին՝ վերադառնալու
նպատակով: Միւտիրը զանոնք սպաննել տուաւ գիւղին
մերձակայքը:

Փաստ. 883-56

Թ 13.- ԱՐՍԼԱՆՊԵԿԻ (ԻՉՄԻՏ) ՏԱՐԱԳՐՈՒՄԸ

1915 թ. Յուլիս 18ին, գիշեր ատեն Արսլանպէկ գիւղը
պաշարուեցաւ 200 գինուորներէ: Տեղահանութեան
հսկեցին թրքական քաղաքային խումբ մը եւ Իզմիտի
ոստիկան զօրաց հրամանատար Իպրահիմ էֆէնտին:
Հրաման արձակեցին մինչ երեկոյ էսքիչէհիր մեկնիլ:
Իպրահիմ էֆէնտի յայտարարութեամբ, կարճ ատեն
մը էսքիչէհիր մնալէ ետք, քանի մը ամիսէն հայերը պի-
տի վերադառնալին իրենց գիւղը:

Յաջորդ օր, թուրք գիւղացիներ եկան հայոց շար-
ժուն գոյքերը գնելու: 40 դրուշ կու տային կովու մը հա-
մար, 10 դրուշ կարի մեքենայի մը համար, 2 դրուշ ան-
կողինի մը, եւ շնական անկեղծութեամբ կ'ըսէին. «Եթէ
չհամաձայնիք, վաղը անվճար այս բոլորին տէրն ենք»:

Տարագրուած սկսաւ երեկոյեան. գիւղացիները ժող-
վեցին գիւղէն դուրս, տուն մնացողները ծեծի ենթար-
կուեցան ժանտարմներու ձեռքով: Տերպինտէ հասնե-
լուն, իւրաքանչիւրէն 40 դրուշ գանձեցին իբրև ճամ-
բու ծախք. այս ձեւով 70.000 դրուշ հաւաքուեցաւ: Արս-
լանպէկի մէջ ոստիկան զօրաց հրամանատար Իպրահիմ
էֆէնտին սկսաւ կողոպտել լքեալ ինչքերը. ապա 200
կառքերով հասան Ուզուն Թարլա միւտիրն ու չերքէզ
աւազակներ, որոնք վերցուցին ու տարին իրենց գտած

կարասիները:
Իպրահիմ էֆէնտին, որ հայ գինուորներու միջոցաւ
արժէքաւոր կարասիները հայոց եկեղեցին փոխադրել
տուած էր, կը բանայ եկեղեցիին դուռը եւ կը գողնայ
ոսկեայ եւ արծաթեայ բոլոր թանկարժէք առարկանե-
րը:
Հարեւան գիւղացիները կը խուժեն գիւղ եւ կը կո-
ղոպտեն մնացածը: Կը մնային արգասաբեր դաշտները,
ուր ամբարուած էին հսկայ քանակութեամբ բամպակ,
ծխախոտ եւ եգիպտացորեն: Կը կազմուի յանձնախումբ
մը այդ բոլորը վաճառելու նպատակով: Միւտիրը կ'իւ-
րացնէ գումարին կէսը, մնացեալը կը բաժնուին յանձ-
նախումբին անդամները:
Արսլանպէկէն 30 վայրկեան հեռու գտնուող Գարա-
չալըք գիւղի խոճան՝ Տաւուտ էֆէնտի, յայտարարեց որ
Կեդրոնական կառավարութեան հրամանը այսպէս է.
«Սպաննեցէ՛ք, քանդեցէ՛ք, այրեցէ՛ք, կողոպտեցէ՛ք, առե-
լանդեցէ՛ք. այս ամէնը ընելու համար ամէ՛ն իրաւունք
տրուած է ձեզի»:
Հայոց բնակարանները գրաւուած են այժմ հարեւան
թուրք գիւղացիներու եւ կամ զանազան վայրերէ եկած
թուրք գաղթականներու կողմէ:

Ժ. ԹՐԱԿԻԱ – ԱՏՐԻԱՆԱՊՈԼԻՍ – ՌՈՏՈՍԹՕ

Փաստ. 883-73գ

Ժ 1.– ԱՏՐԻԱՆԱՊՈԼԻՍՈՅ ՉԱՐԱԳՈՐԾՆԵՐԸ

Ատրիանապոլսոյ հայերու տարագրութեան օրերուն, հետեւեալ պաշտօնեաները անուանի դարձան իրենց չարագործութիւններով:—

Տեֆտէրտար Էմին պէյ, նախագահը լքեալ գոյքերու յանձնաժողովին. նախ եւ առաջ խուժանին կողոպտել տուաւ հայոց տուններուն մէջ գտնուող պաշարեղէնն ու վառելանիւթը. ապա իր տունը փոխադրել տուաւ թանկարժէք առարկաները,— գորգեր, մետաքսեայ ծածկոցներ եւայլն: Զինուորական հիւանդանոց փոխադրել տուաւ անկողիններն ու վերմակները. կարի մեքենաներ եւ դաշնամուրներ տարուեցան Իթիօհատի ակումբները եւ թրքական վարժարանները: Միծաղելի գիներով վաճառքի արարքներ տեղի ունեցան, 10.000 թրք. ոսկի արժող Գազազեաններու տունը ոստիկան զօրաց հրամանատարին ծախուեցաւ 22 ոսկիի...:

— Այլ փաշա կոչուող պազարին մէջ կողոպտուեցաւ հայապատկան 300 խանութներու գանձարկղներուն պարունակութիւնը. գողցուեցան գոհարեղէններ եւայլն: Ապրանքները ծախուեցան իթիօհատական վաճառականներուն:

— Ատրիանապոլիս գաւառակի գայմագամ Մեհմէտ Կալի պէյ, որ Ատրիանապոլիս եկած էր բոլորովին աղքատ, Կոստանդնուպոլիս վերադարձաւ 50.000 թրք. ոսկիի հարստութեամբ:

— Իթիօհատի պատասխանատու քարտուղար Ապտիւլ Կանի պէյ Կոստանդնուպոլիս փոխադրեց հարիւր հազարաւոր թրք. ոսկի եւ բազմաթիւ բեռնակառքով լեցուած կարասիներ:

Փաստ. 883-66բ

Ժ 2.– ԷՁ ՄԸ ԱՏՐԻԱՆԱՊՈԼԻՍՈՅ ԱՆՄԻՏ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԷՆ

Կոստանդնուպոլիս կատարուած դիմումներու արդիւնքով, արտօնութիւն ձեռք բերուեցաւ որպէսզի Ատրիանապոլսէն եւ Ռոտոսթոյէն տարագրուած ընտանիքները վերադառնան իրենց քաղաքը:

Վալին՝ Զեքերիա պէյ, անգիտանալ ձեւացնելով այս արտօնութիւնը երկու անգամ այդ ընտանիքները Իգմիտ ուղարկեց:

Ոստիկաններն ու ժանտարմները ձերբակալեցին հայ երեւելիներ եւ խուզարկելէ ետք բանտ նետեցին: Առաւօտ կանուխ բերին նաեւ անոնց ընտանիքները, կողոպտելէ ետք անոնց ունեցուածքը:

Հայերը տարագրուեցան Դամասկոս եւ Հալէպ, ենթակայ՝ երկար ճամբորդութեան մը գրկանքներուն եւ տանջանքներուն: Մնացեալը, մահուան սպառնալիքի տակ, կրօնափոխ եղաւ, բայց շատ չանցած, կեղրոնական կառավարութեան հրահանգով այդ հաւատափոխութիւնը անվաւեր նկատուեցաւ:

Զեքերիա վալին, կրօնապատկան կալուածոց հաստատութեան պաշտօնեան եւ տեֆտերտար Էմինը քան-

դել տուին երկու վաճառատուներ եւ սրճարան մը, յափշտակեցին հայոց եկեղեցին կառուցանելու սահմանուած շիւնանիւթերը. 250 ոսկի գնահատուող կարասիները գնեցին վճարելով միայն 34 թրքական թղթոսկի:

Կանի-պէյ, Իթիօհատի պատասխանատու քարտուղարը, կողոպտեց ու փոշիացուց հայոց առեւտուրը:

Ազգ. պաշտպանութեան յանձնաժողովի նախագահը, որ միաժամանակ իթիօհատական ակումբի մը նախագահն էր, մեծ քանակութեամբ ժամացոյցներ եւ գոհարեղէններ գնեց հայ վաճառատուներէն, 120 թրք. ոսկի միայն վճարելով:

Ռուստեմ-խան Պահեստանոցի պաշտօնեան՝ Այլի, որ հազիւ իր ապրուստը կրնար հոգալ, ներկայիս տէր է հսկայ հարստութեան: Գալէ-Իչի հիւանդանոցին բժշկապետը՝ էրթողրուլ պէյ յափշտակեց հայոց եկեղեցիին թաղմանական կառքը երկու դազաղներով, թանկարժէք գորգեր, տասը շապիկ եւ մոմերով լեցուն արկղներ:

Փաստ. 883-75ա

Ժ 3.- ԱՏՐԻԱՆԱՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՏԱՐԱԳՐՈՒՄԸ

Թեքիր-Տաղի միլիթեսարը՝ Ջեքերի պէյ, Ատրիանապոլսոյ առժամանակեայ վալի կարգուեցաւ ի վարձատրութիւն Ռոտոսթոյի հայերու տարագրութեան ընթացքին իր ցոյց տուած եռանդին եւ ճարտարութեան: Ամէն ճիգ թափեց ան յաջողութեամբ պսակելու համար Ատրիանապոլսոյ հայութիւնը եւս տարագրելու: Առանց կանխաւ ոեւէ նախազուշացում կատարելու, Ջեքերիէ պէյ 1915 թ. Հոկտ. 15ի գիշերը ձերբակալել տուաւ քաղաքին երեւելիները:

Անկէ ետք — եւ հակառակ հայոց հոգեւոր հովիւ Տէր Արսէնին տուած իր հաւաստիացումին որ այլեւս ոչ ոք պիտի տարագրուի — Փետրուար 18ի գիշերը երկրորդ քսորի մը հրահանգը արձակեց: Այս մէկը կը կատարուէր առանց որ կեդրոնական կառավարութենէն որեւէ ցուցմունք ստացած ըլլար. այս պատճառաւ է որ երկրորդ կարաւանի տարագրեալները Հայտարարական վերադարձուեցան Ռոտոսթո, առանց սակայն Ատրիանապոլիս մտնելու արտօնութեան:

Փաստ. 883-77բ

Ժ 4.- ՌՈՏՈՍԹՈՅԻ ԹՈՒՐԹ ՉԱՐԱԳՈՐԾՆԵՐԸ

1.- Ռոտոսթոյի միլիթի պէյը. Կազմակերպիչ հայոց տարագրութեան, Իթիհատի քարոզիչ: Հրամանատար Սալիմ փաշան եւ պատերազմական ատեանի նախագահ՝ Մուխթար պէյը մերժեցին ստորագրել Ռոտոսթոյի հայոց տեղահանութեան հրամանագիրը: Յանուն Շերիաթի միլիթիին սպառնաց անոնց, դիտել տալով որ հայոց տեղահանութիւնը որոշուած է ճիշտով (սրբազան պատերազմ):

Միլիթիին սեփականացուց կարեւոր բաժին մը հայոց ձգած ինչքերէն: Ձինադադարէն ետք, հիմնեց «Ճեմիէթ Իսլամիէ» անունով միութիւն մը, որ քաղաքին ու գիւղերուն մէջ հակաքրիստոնեայ գործօն քարոզչութիւն կը ծաւալէ:

2.- Ատիլ պէյ. Ռոտոսթոյի իթիհատական երեսփոխան. գործակից միլիթիին եւ հրահրիչ անոր չարագործութիւններուն. եռուն գործունէութիւն ցոյց տուաւ հայոց տարագրումին մէջ. «Հայոց եկեղեցիներուն զանգակները պէտք է լռեն այլեւս», յայտարարեց ան՝ Ռոտոսթոյի վաճառականներ Փափատոպուլոսի եւ Նիքոլայի ներկայութեան: Ձինադադարէն ետք եւս Ատիլ պէյ կը շարունակէ իր հակաքրիստոնէական քարոզչութիւնը:

3.- Ռահմի պէյ, որդին Ատիլ պէյի, իթիհատական քարոզիչ: «Վրկութիւնը կը կայանայ մահմետական դառնալուն մէջ», յայտարարեց ան, ի ներկայութեան Յակոբ Գլըճեանի, Սարգիս Պաղտիկեանի եւ շատ ուրիշներու: Ձինադադարէն ետք եւս կը շարունակէ մնալ նոյն քարոզիչը:

4.- Ռեֆիք պէյ, Ատանայի հայոց ջարդարարը. 1909 թ. Ատանայի կոտորածներու ժամանակ սպաննած է Ներսէս եպիսկոպոս Դանիէլեանը: Շուրջ տասը տարիէ ի վեր հաստատուած է Ռոտոսթո, ուր առեւտրական տուն մը բացած է Ատանայի կոտորածներու օրերուն իր դիզած դրամագլուխով:

Ծայր աստիճանի մոլեռանդ փան-թուրքիստ: Կազմակերպած է հակաքրիստոնեայ տնտեսական պոլքթ: Տեղահանութենէն առաջ, զինուորական բռնագրաւման պատրուակով, կողոպտեց հայոց վաճառատուները, հանդիսացաւ գլխաւոր կազմակերպիչներէն մէկը տարագրութեան: Տեղահանութենէն ետք, իր ազարակին մէջ անվճար կերպով աշխատացուց ոչ-տարագրեալ հայերը, պատճառաբանելով որ այլապէս դատապարտուած պիտի ըլլային շատ աւելի ծանր աշխատանքներունու ազգագոյն պահանջներուն կը պատասխանէր քսորելու սպառնալիքով:

ԺԱ. ՏԵՐ ԶՕՐ

Փաստ. 883-81

ԺԱ 1.- ՏԵՐ ԶՕՐԻ ՍԱՐՍԱՓԱԶԴՈՒ ԶԱՐԴԷՆ ՎԵՐԱՊՐՈՂԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Տէր Զօր հասանք 4-5000 հաշուող հայ տարագիրներու հետ: Հոն մնացինք մինչեւ 27 Յուլիս [1915]: Մեզ ուղարկեցին Սուվար (արաբական միւտիրոլթիւն), ուր 100.000 հոգի էինք:

Մեր չորս ժանտարմները մեզ յանձնեցին չերքէզական գուլիտի պետ Օսման պէյին: Այս միւտիրոլթեան մէջ մնալու ութերորդ օրը հասաւ Տէր Զօրի միւտեսարը՝ Զէքի պէյ:

Մուսնետիկը հրաւիրեց տարագիրները համախմբուելու ըստ իւրաքանչիւր խումբի ծննդավայր քաղաքի եւ հաւաքուելու վրաններուն տակ: Մուսնետիկի կոչին համաձայն, իւրաքանչիւր համախմբուած պէտք է նշանակէր իր ներկայացուցիչը որպէսզի դիւրացուէր շուտով կատարուելիք պարենաւորման գործը:

Երկու օր ետք, միւտեսարը՝ Զէքի պէյ հրամայեց այս ներկայացուցիչներուն, որ կազմեն անուանացանկը բոլոր անոնց որ 1000-1500 թրքական լիրա ունէին, եւ գումարները անմիջապէս իրեն յանձնեն:

Յաջորդ օր, յայտարարուածին համաձայն ամէն մարդ գնաց 10 վայրկեան հեռու գտնուող Սուվարի քաղաքապետարան՝ յանձնելու համար իր մօտ գտնուող դրամը: Ոչ ոք վերադարձաւ: Բոլորը սպաննուած էին գիշերը:

Միւտեսարը՝ տիրացաւ նաեւ գոհերու պահած դրամին: Կոտորուածներու ընտանիքները քաղաքապետարան գացին իրենց ամուսիններուն միանալու համար:

Գարա-Համզա անուանով չերքէզ մը այս ընտանիքներու մէջէն ընտրեց երկու աղջիկներ, մէկը Տարտանէլէն, միւսը Թեքիրտաղէն¹: Գեղեցիկ եւ Լուսին Պայեան:

Ամբողջ կարաւանը ջարդուեցաւ: Քանի մը հոգի, որոնք վիրաւորուած էին միայն եւ թաքնուած դիակներու մէջ, հրացանազարկ եղան. միայն Արուսեակ, 10 տարեկան աղջնակ մը Ատաբազարէն, փրկուեցաւ այս ահաւոր նախճիրէն:

Միւտեսարը՝ Զէքի պէյ կը մեկնի Շետատի, Մերկետէ եւ Հասիչէ, նոր չեթէներ կազմակերպելու նպատակով:

Այդ օր, հրոսակներու պետ Օսման պէյ ալիւր եւ դրամ կը բաժնէր չեթէներուն: Գիշերը կամ առաւօտ կանուխ զանոնք կը զրկէր Շետատի, նոր չարագործութիւններ կատարելու համար: Իբրեւ կեդրոն իրենց գոր-

ծողութիւններուն, միւտեսարը՝ Զէքի պէյ գիւղեր ընտրած էր, - Շետատի, Մերկետէ, Հասիչէ: Հրոսակապետները կը մնային Սուվար. գլխաւորներն էին՝ Ռաս-իւլ-Այնէն (Մաֆա գիւղ) Օսման պէյ, Շէյխ Սիւլէյման պէյ, Ապտիւլքերիմ պէյ, Մուհամմէտ պէյ եւ եղբայրը Մեհմէտ պէյ, թափառաշրջիկ արաբներ՝ Խալիֆ պէյ, Ճաւուտ պէյ, Հիւսնի պէյ, Շապան աղա, Մուհաճիր պէյ, Գարա Համզա (Թարիման գիւղէն):

Տակաւին կային ուրիշներ, որոնց անունները մոռցած եմ:

Այս հրոսակապետները հաւաքեցին երիտասարդները եւ, հակառակ անոր որ իրենց պահանջած փրկագինը գանձած էին արդէն, գոյգ-գոյգ կապած զանոնք՝ տարին Սուվարի բլուրը եւ բոլորը կոտորեցին:

Զէքի պէյ վերադարձաւ Կարապետին կառքով, հայ մը գործ ճամբան սպաննել տուաւ եւ մինչեւ Սուվար ինք վարեց կառքը:

Կիները կը դիմեն Զէքի պէյին եւ կը պահանջեն իրենց ամուսիններն ու եղբայրները: Զէքի պէյ կը պատասխանէ որ պիտի ուղարկուին Շետատէ, ուր իրենք ալ միանալով անոնց՝ պիտի մնան մինչեւ պատերազմի աւարտը:

Զրոյց կը շրջի թէ Ատաբազարէն վեց տարեկան աղջրնակ մը ողբաձայն «Մայրիկ, հայրիկ» կը գոչէր. սարսափահար աղջնակը կը պատմէ ի գործ դրուած զազանութիւններուն մասին: Հայերը, ի լուր աղջնակի պատմածներուն, ահազանգային վիճակի մէջ են:

Միւտեսարը՝ Զէքի պէյ Շետատի, Հասիչէ, Մերկետէ մեկնած ըլլալով, բացի քանի մը հոգիէ Սուվարի մէջ մարդ չէ մնացած:

Այս ժամանակամիջոցին Զէքի պէյ հայերը կը կանչէ մասնակցելու ճամբաներու շինութեան: Երիտասարդները կը մերժեն, բայց Զէքի պէյ կը սպառնայ սպաննել զիրենք: Երիտասարդներու այն վճռական կեցուածքին վրայ թէ իրենք ոչ զինուոր են եւ ոչ ալ նոր տարագրեալներ, միւտեսարը՝ Զէքի պէյ որ հարիւրապետ մը եւ 200 ժանտարմներ ուղարկեն Տէր Զօրէն: Ասոնց միջոցաւ հայերը բռնի կը տարուին Խապուր գետի ափին այնպիսի տեղ մը, որ իսկապէս թերակղզի մը ձեւ ունէր: Ամէն կողմ ժանտարմներով եւ չեթէներով շրջա-

1.- Թեքիրտաղը թրքական անուանակոչումն է Ռոտուսթոյի:

պատուած՝ հայ երիտասարդները կը դիմադրեն (avec leur pistolet)² մաուզէրներու ահեղ կրակոցներուն: Դիմադրութիւնը տեւեց մօտաւորապէս երեք ժամ. բոլոր հայերը մահացան այս յուսահատական կռուին մէջ:

Ձէքի պէյ Տէր Զօր փոխադրել տուաւ կոտորուածներուն բոլոր անասունները, կառքերը եւ իրեղէնները:

Այս պահուն, թուրք երկու սպաներու ընկերակցութեամբ Ռաս-իւլ-Այն հասան երկու ամերիկացիներ. կ'ուզէին տեղեկութիւններ հաւաքել Տէր Զօր հաստատուած հայերու մասին: «Չերքէզներն են որ զանոնք ջարդեցին», կը պատասխանեն արաբները առանց տատամսերու:

2.- Ֆրանսերէն՝ իրենց ատրճանակներով:

Ձէքի պէյ, իր կարգին, կը վստահեցնէ ամերիկացիներն ու սպաները, որ ինք հայերը դրկած է խապուր գետի եզերքը, ուր թափառաչրջիկ արաբները կոտորած են զանոնք:

Այս անակնկալ այցելութենէն ազդարարուած, չըրջագայութեան ելած է Տէր Զօրի եւ Ռաս-իւլ-Այնի երկրամասի տարածքին, վստահ ըլլալու համար թէ ամբողջովին բնաջնջած են հայերը: Այս նպատակով ալ խիստ խուզարկութեան ենթակայ է արաբներու պատկանող բոլոր վրանները եւ որպէսզի ոչ մէկ կենդանի վկայ թողու, սպաննել տուած է արաբներու մօտ ապաստան գտած տարագիրներու բեկորները: Ձէքին կոստանդնուպոլիս վերադարձած է հսկայական հարստութեան տիրացած:

Փաստ. 883-10ր

ԺԱ 2.- ՏԵՐ ԶՕՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԷՆ ՓՐԿՈՒԱԾ ԱԿԱՆԱՏԵՍԻ ՍԸ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Արեւելեան Անատոլի մէկ ծայրէն միւսը կատարուած երկար եւ աներեւակայեփորէն դժուարին ճամբորդութենէ մը ետք հասայ Տէր Զօր:

Ականատես եղայ ամէն օր հարիւրաւոր հայերու մահուան: Անթուրիանն ու տանջանքները կը սպառնային ջարդերէն վերապրածներու կեանքին: Եւ սակայն, հակառակ այս բոլորին, հայերը կը փորձէին նոր կեանք ստեղծել:

Ձէքի պէյ, որ Տէր Զօրի միւթեսարըֆ կարգուած էր, նախապէս իբրեւ կառավարիչ իր դեկավարած գաւառակին մէջ (Տիարպեքիրի վիլայէթ) արտասովոր եռանդ ցոյց տուած էր գործուող գազանութիւններուն մէջ:

Ծագումով չերքէզ ըլլալով, չերքէզ ջարդարարներ գատած էր չերքէզական այն գիւղերէն, ուրկէ անցած էր Տիարպեքիրէն Ռաս-իւլ-Այն ճամբուն վրայ:

Ձէքի պէյ կազմակերպեց 500 ոճրագործներէ բաղկացած չեթէներու գունդ մը, որուն հրամանատարութիւնը յանձնեց Սիւլէյման անունով չեչէնի մը, որ միեւնոյն ատեն կարգուած էր Սուվարի միւտիր կայան մը՝ Ռաս-իւլ-Այնէն ծագում առնող խապուր գետին վրայ:

«Ինչպէ՞ս կը հանդուրժէք որ դեռ կ'ապրին հայերը, որովհետեւ եթէ հանգիստ ձգուին անոնք, տէր կը դառնան ձեր երկրին: Մնաց որ, ես եկած եմ անձամբ զբաղելու այդ խնդրով»: Պաշտօնական առաջին ընդունելութեան ընթացքին կատարուած այս յայտարարութիւնը շատ նշանակալից էր: Ան կը հաստատէր շրջան ընող զրոյց մը ըստ որուն Ձէքի պէյի հրահանգուած էր բնաջնջել հայերը:

Երեք օր ետք, մոնեստիրը կը յայտարարէր որ հայերը պէտք է անցնէին Եփրատի միւս ափը, սպառնալիք

կարդալով միաժամանակ բոլոր անոնց որ հայեր կը պահէին իրենց մօտ:

Յիսուն հազար հայեր, մահուան սարսափը հոգիին մէջ, կը սպասէին իրենց փրկութեան ժամուն, մինչ Ձէքի պէյ, մտրակը ձեռին, կը հսկէր անցքին վրայ:

Յիսուն հազար այս հայերը, չորս կարաւաններու բաժնուած, մէկ ամսուան ընթացքին տեղահանուեցան եւ կոտորուեցան:

Ես չորրորդ կարաւանին մէջ էի: Ընկերացող չերքէզները կը վստահեցնէին մեզ, թէ նախորդ կարաւանները ապահով հասած էին Ռաս-իւլ-Այն, ուրկէ եւ առած էին Պաղտատ մեկնող շոգեկառքը: Մենք սարսափի մէջ էինք ի տես գետին վրայ ծփացող դիակներուն:

Փրկութեան յոյս չկար: Ձէքի պէյի հրամանին տակ գտնուող ջարդարար հրոսակները մեզմէ շատ հեռու կը գտնուէին: Նախ եւ առաջ ամէնէն երիտասարդները կ'անջատէին մեզմէ՝ ալիւրի պարկեր շալկելու պատրուակին տակ: Քիչ անց, պայթումի ձայներ լսուեցան ու վիրաւոր եւ մերկ մարդ մը վազեց պոռալով. «Գիտէ՞ք, կը ջարդեն»: Միտած ըլլալով արդէն, մենք, վեց բարեկամներ, գետ նետուեցանք եւ հեռացանք: Պայթումի եւ ողբ ու կոծի ձայներ կը հետեւէին մեզի:

15.000 թրքական լիրայի փոխարէն, Ձէքի պէյ Զերքէզ Սիւլէյմանին ծախած էր մեր կարաւանը:

Մեծ թիւով կիներ խրամի մը մէջ նետած եւ այրած էին քարիւղով: 2000 մանուկներ, ամէնէն մեծերը հազիւ թէ 10 տարեկան, այրած էին նոյնպէս:

Քննութիւն մը՝ Ռաս-իւլ-Այնի չերքէզ գիւղերուն մէջ, քաղաքակիրթ աշխարհին ցոյց պիտի տայ, որ մինչեւ իսկ թրքական [անցեալի] տարեգրութեանց մէջ նմանօրինակ ոճիրներ չեն գործուած բնաւ:

Փաստ. 883-84ր

**ԺԱ 3.- ԱՄՔԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ
ՏԵՐ-ՉՕՐԻ ԴԱՀԻՃ ԻՍՍԱՅԻԼ ՀԱԳԳԸ ՊԵՅԻ ԴԷՄ**

– Արթին Աթանասեան, ատափագարցի, տարագրուեալ փախստական Տէր Զօրի կոտորածներէն, այժմ ատենապետ որբերու կեդրոնական գրասենեակին, Բերա, Փան Կալթի, Սուրբ Յակոբ:

– Արամ Մանկուկեան, արսլանբէկցի տարագրեալ, փախստական Տէր Զօրի կոտորածներէն, այժմ կը բնակի Քասրմ փաշա, Հայկական փողոց, թիւ 33:

– Յովսէփ Սինանեան, Քէօթահայէն տարագրեալ, փախստական Տէր Զօրի կոտորածներէն, այժմ կը բնակի Բերա, Մեծ փողոց, «Կաւուռ» ամսագրի գրասենեակ, թիւ 65:

Այս երեք անձերը պատրաստ են երգմամբ վկայելու, որ Իսմայիլ Հագգըն, վերջերս անգլիական զինուորական իշխանութեանց ջանքերով ձերբակալուած Աֆրոն-

Գարահիսարի մէջ, եղած է գլխաւոր կազմակերպիչը Հայէպէն-Մեսքենէ-Տէր Զօր կատարուած տարագրութեանց:

1.- Սարսափելիօրէն ահաբեկած է տարագրեալներու կարաւանները:

2.- Մեսքենէն Տէր Զօր տարած է Հայ մանուկներ եւ այրած զանոնք:

3.- Այս երեխաները փոխադրող Հայ կառապանները սպաննած է անձամբ, իր ձեռքերով:

4.- Կոտորած է Տէր Զօրի երկու որբանոցներու 1500 Հայ որբերը:

5.- Անողորմաբար կողոպտած է Հայ տարագրեալները:

6.- Իսմայիլ Հագգըն մեծագոյն պատասխանատուն է 80.000 Հայերու ջարդին:

Փաստ. 883-88

**ԺԱ 4.- ՏԵՐ ԶՕՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԷՆ ՓՐԿՈՒԱԾ
ՍԻՎՐԻ-ՀԻՍԱՐՑԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՍԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
(Այժմու բնակարանը Սկիտար, Սելամսըզ, Իքի-Գույուլէ փողոց, N° 5)**

Տարագրութեան ժամանակ ընտանիքս կը բաղկանար 13 հոգիէ: Հայրս ձերբակալուեցաւ Սուվարի մէջ, Տէր Զօրէն անդին, եւ սպաննուեցաւ Շետատիէի մէջ: Երկու եղբայրներս մեռան զրկանքներու եւ երկար ճանապարհորդութեանց հետեւանքով, – Սիվրի-Հիսարէն Աֆրոն Գարահիսար, ասկէ էրէյլի, ապա Տարսոն, Օսմանիէ, Քաթմա, ուր մեռաւ Կարապետ եղբայրս. Քաթմայէն անցանք Պապ, Աք-Տերուն, Մեսքենէ, Ռաքթա, Տէր Զօր: Հագիւ Տէր Զօր հաստատուած՝ միւթեսարըֆ Ձէքի պէյը եւ տարագրութեան տեսուչ Իսմայիլ պէյը հրամայեցին կրկին աքսորուիլ: Դադար առինք Եփրատի եզերքը, ուր մեզի ընկերացող քահանաներու գլխուն քարիւղ թափելով այրեցին:

Մեր կարաւանը տարուեցաւ Սուվար. տարագրիւններուն մէկ մաս բաժնեցին եւ սպաննեցին Հասաքէ գիւղին կողմերը:

Սուվարի մէջ չեչէնները բանտարկեցին 800 Հայեր եւ կողոպտելէ ետք՝ սպաննեցին զանոնք: Այս կոտորածի յաջորդ օրը, առաջ մղեցին մեզ Շետատիէի կողմերը, ուր եկաւ Տէր Զօրի միւթեսարըֆը: Այս կարաւանը կը

բաղկանար միայն կիներէ եւ մանուկներէ, տարեց անձերը արդէն սպաննուած ըլլալով: Ճամբան, երկու չեչէններ գատեցին 12-14 տարու տղաքը, թուով 20 հոգի: Խարազանի եւ մտրակի հարուածներով մեզ գետին պառկեցուցին: Ընկերներս մերժեցին մահմետական դառնալ: Ես փրկեցի կեանքս: Վերամիացայ կիներու կարաւանին, ուր գտայ մայրս թշուառ վիճակի մէջ:

Երկու օր ետք, արաբներ հանել տուին կիներու եւ տղոց բոլոր զգեստները: Չեչէնները սպաննեցին կիները, եւ տղաքը նետեցին գետին մէջ:

Սեփական աչքերովս տեսայ արաբներ, որ կիներու փորը կը ճեղքէին անոնց մարմիններուն մէջ իբր թէ պահուած ոսկի գտնելու համար:

Մայրս իսլամացած էր եւ կը կոչուէր Մերիամ, քոյրս՝ Փաթիմա, իսկ ես՝ Մեհմէտ Ռեմզի: Գացինք Սաֆա չեչէնական գիւղը. հոն մնացինք մէկ տարի: Այնտեղէն գացինք Ռաս-իւլ-Այն, ուր մտայ Պաղտատի երկաթուղային ծառայութեան մէջ:

Յետոյ ապաստանեցանք Հայէպ, ուր գիտէինք որ անգլիացիները պիտի ժամանեն:

Փաստ. 883-79

ԺԱ 5.- ԱԼԻ ԻՀՍԱՆ ՓԱՇԱՅԻ ՉԱՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.- Ալի Իհսան եւ իւր լի փաշաները, փոխադարձաբար հրամանատար 51րդ եւ 52րդ զօրամիաւորումներու, ջարդել տուին իրենց ծառայութեան մէջ գտնուող հայ սպաններն ու բժիշկները:

Վկայ են այս զօրքերուն մէջ գտնուող թուրք սպանները:

2.- Ալի Իհսան փաշան, 6րդ զօրաբաժինը ղեկավարած օրերուն հաւաքել տուաւ Մուսուլ տարագրուած հայերը եւ, բանուորական գումարտակ մը կազմելու պատրուակին տակ, 15-60 տարու 1200 հայեր ճամբայ հանեց: Այս կարաւանը սովահարութեամբ տառաջիօրէն ոչնչացուեցաւ: Ալի Իհսան փաշա խստիւ արգիլած էր պարենաւորել այս դժբախտները: Արգիլած էր նոյնպէս բժշկական ամէն խնամք:

Բանուորական այս գումարտակի բժիշկը՝ հարիւրապետ Սաֆէթ պէյ պատրաստ է այս մասին վկայութիւն տալու:

3.- 41րդ զօրաբաժնի հրամանատար Ալի Իհսան փաշան, Ուրմիոյ վրայ (Պարսկաստան) յարձակման ընթացքին հրահանգ արձակեց՝ ո՛չ մէկ ձեռով խնայել հայերուն, նոյնիսկ երեխաներուն եւ կիներուն: Այս հրա-

հանգին հրամանագիրը կը գտնուի միեւնոյն զօրաբաժնի արխիւներուն մէջ: Կողոպտեց Ուրմիոյ հայերուն տուները՝ իր բանակատեղին փոխադրել տուաւ 120 բեռ գորգեր, որոնց մէկ մասը բաժնուեցաւ սպաներուն, իսկ մեծագոյն բաժինը պահեց իրեն համար: Նշանթաղի իր բնակարանին մէջ կը գտնուի նոյն այս գորգերուն մեծ մթերքը:

Այս իսկական գողութենէն ետք, հաւաքել տուաւ 500 հայեր եւ իբր թէ Երեւան ուղարկեց զանոնք: 500 հոգինոց այս կարաւանը ջարդուեցաւ՝ Իհսան փաշայէն ստացուած հրահանգին համաձայն:

4.- 1918 թ. հայկանան բանակի դէմ մղուած մեծ կռիւներու ընթացքին, գերի բռնուած 200 հայ զինուորներ, 22րդ գումարտակի հրամանատար փոխ գնդապետ Իպրահիմ պէյի հրահանգով, սրախողխող եղան: Իր կոտորածը վարձատրուեցաւ. Իպրահիմ պէյ զօրաբաժնի զօրավարի կոչում ստացաւ:

Գերիներու այս ջարդը կը գործադրուէր հակառակ անոր որ հայ զօրքի հրամանատարը կը խնայէր 800 թուրք գերիներու կեանքին:

ԺԲ. ԿՈՎԿԱՍ

Փաստ. 883-57

ԺԲ 1.- ԿՈՎԿԱՍԻ ՄԷՁ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԳՈՐԾՈՒԱԾ ՈՃԻՐՆԵՐՈՒ ՀԵՂԻՆԱԿ ԹՈՒՐՔ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐ

Զօրավար Եագուպ Շեքի փաշա.— Կովկասեան ճակատի 2րդ զօրաբաժնի հրամանատար: Տիրահուշակ իր արձակած նշանաբաններով, որոնցմով կը հրահանգէր իր զինուորներուն՝ չխնայել ո՛չ մէկ հայու այն բոլոր վայրերը, ուր թրքական զօրքը կը մտնէ: «Ջարդեցէք հայերը: ա՛յդ է պարտականութիւնը ամէն միւսիւման լաւ զինուորի», կ'ըսէր ան: Յաճախ հեռագրեր կը ստանար Թալէաթ փաշայէն՝ կովկասահայ բնակչութիւնը բնաջնջելու հրամանով: Հրաման, զոր այլապէս սեփական նախաձեռնութեամբ անխնայօրէն կը գործադրէր ան: Իբրեւ ապացոյց ըստածին, կարելի է դիմել 2րդ զօրաբաժնի գործածած նշանաբաններուն, ի մասնաւորի 1918 թ. Փետրուար 6էն ետք արձակուածներուն: Պատերազմական նախարարութիւնը կրնայ հայթայթել անոնց թղթածրարը: Շեքի փաշա այժմ Կոստանդնուպոլիս կը գտնուի:

Փոխ-գնդապետ Օսման պէյ եւ իր համհարգը՝ Իսկենտէք պէյ.— Կը գլխաւորէր 2րդ զօրաբաժնի 10րդ գումարտակը: 1918ին Կարսի մէջ իր համհարգին՝ Իսկենտէք պէյին սպաննել տուաւ հայ պատգամաւոր՝ սպայ Նալպանտեանը, որ աչքերը կապուած եւ ճերմակ դրօշակով մը, ղրկուած էր զօրավար Նազարէկեանի կողմէ, թուրք սպաներու հետ քննարկելու Կարսի քաղաքային բնակչութեան պարպումին հետ կապուած խնդիրներ: Նալպանտեանը ընդունողը Օսման պէյն էր, որ իր

հիւրը հրաւիրեց ընթրիքի: Ճոխ սեղան էր եւ գինին առատ: Ընթրիքի ընթացքին, Օսման կ'առաջարկէ հայ սպային դաւաճանել իր երկրին եւ բարձր վարձատրութեամբ թրքական բանակին մէջ ծառայել: Նալպանտեանի կտրուկ մերժումին վրայ, Օսման չի պնդեր այլեւս եւ բանակցութիւնը կը շարունակուի պարպումի պայմաններուն շուրջ: Երեկոյեան, համհարգ Իսկենտէք պէյի եւ երկու զինուորներու ուղեկցութեամբ Նալպանտեան, դարձեալ աչքերը կապուած, կ'առաջնորդուի թրքական առաջապահ ղիրքերը: Ճամբու ընթացքին կը գրաւեն Նալպանտեանի գէնքերը ու, ամայի վայր մը տանելով, Իսկենտէք ատրճանակի երեք հարուածներով կը սպաննէ հայ պատգամաւորը:

Օսման պէյ իր զինուորներուն կը հրահանգէր հայերը չսպաննել վերջնականապէս, այլ մահացու կերպով վիրաւորել եւ ձգել որ տանջուելով մեռնին անոնք:

Վերջերս այս երկու սպաները Պաթումէն վերադարձին եկան Կոստանդնուպոլիս: Մանօթ չենք իրենց հասցէին, բայց պատերազմական նախարարութիւնը դիւրութեամբ կրնայ գտնել:

*
**

Վերոյիշեալ յայտարարութիւնները կատարած է Օսման պէյի գումարտակին պատկանող բժիշկ Լուի Մարքի, որ քրիստոնեայ արաբ մըն է:

Փաստ. 883-95

ԱՐԵՒՍՏԱՆԱՅ ԽՈՐՈՒՐԴ
 СОВѢТЪ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ
 Conseil des Réfugiés
 arméniens

ԺԲ 2.- ԿՈՎԿԱՍ ԵՒ ՌՈՒՍԻԱ ԱՊԱՍՏԱՆԱԾ ԹՐՔԱՀԱՅԵՐՈՒ ՎԻՃԱԿԸ ԵՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

LA SITUATION AU CAUCASE ET EN RUSSIE DES RÉFUGIÉS ARMÉNIENS DE L'ARMÉNIE TURQUE ET LA QUESTION DE SECOURS

La deuxième année de la guerre, environ 500.000 Arméniens, hommes, femmes et enfants se sont réfugiés au Caucase et ailleurs à la suite des épouvantables massacres perpétrés par le gouvernement turc sur ses sujets Arméniens. Pendant quatre ans ces réfugiés ont supporté les souffrances et les privations les plus terribles, ils ont essayé plusieurs fois de regagner leur pays dévastés et ils ont dû reculer devant les troupes turques et maintenant que l'heure de la Justice a sonné, ils ont décidé à rentrer définitivement à leur patrie en ruines et à se mettre à sa régénération.

Les réfugiés Arméniens sont établis selon les nombres suivants:

Sur le territoire de la République Arménienne, Erivan – 400.000 pers.	
Sur le territoire du Caucase du Nord – 50.000 »	
Sur le territoire du département de Tiflis Akhalkalak, Akhaltzkha – 30.000 »	
Divers territoires d'Elisabetpol, Bakou, Russie et le littoral de la Mer Noire – 20.000 » 500.000 »	
150.000 de ces réfugiés sont des enfants.	

Ces réfugiés ont perdu tous leurs biens mobiliers et immobiliers. Privés de tous les moyens de subsistance,

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ.—

Պատերազմի երկրորդ տարին, շուրջ 500.000 հայեր, տղամարդ, կին եւ երեխաներ, ապաստանեցան Կովկաս, իբրեւ հետեւանք թուրք կառավարութեան կողմէ հայ հպատակներու հանդէպ գործադրուած սարսափելի կոտորածներուն: Ամբողջ չորս տարի հայ տարագիրները ենթարկուեցան ահռելի տանջանքներու եւ զրկանքներու: Բազմաթիւ փորձեր կատարեցին անոնք վերադառնալու համար իրենց աւերուած երկիրը, բայց ստիպուեցան վերադառնալ [առաջացող] թրքական զօրքերու առջեւէն: Այժմ երբ արդարութեան ժամը եկած է, անոնք որոշած են վերջնականապէս վերադառնալ իրենց քանդուած հայրենիքը եւ ձեռնամուխ ըլլալ անոր վերակենդանացման:

Հայ տարագիրները հաստատուած են հետեւեալ կերպով.

Հայաստանի Հանրապետութիւն (Երեւան)	– 400.000 հոգի
Հիւսիսային Կովկաս	– 50.000 »
Թիֆլիսի երկրամաս (Ախալքալաք, Ախալցխա)	– 30.000 »
Էլիզապէթպոլ (Գանձակ), Պաքու	– 20.000 »
	500.000 »

Այս տարագիրներուն 150.000-ը մանուկներ են:

Տարագիրները կորսնցուցած են իրենց բոլոր անշարժ եւ շարժուն ունեցուածքը: Ապրուստի ամէն միջոցէ զրկուած՝ անոնք օժանդակութիւն կը ստանան ռուս կառավարութենէն, հայ բարեգործական ընկերութիւններէն եւ Ամերիկեան օգնութեան ընկերութիւններէն: Անցեալ տարուէն ի վեր ռուս կառավարութիւնը դադրեցուցած է իր օժանդակութիւնը, հայկական ընկերութեանց աղբիւրները սպառած են, ամերիկեան ըն-

ils recevaient des secours de la caisse du gouvernement Russe, des sociétés de bienfaisance Arménienne et des sociétés de secours Américains. Le gouvernement Russe a cessé de donner des secours dès l'année dernière, les sources des sociétés Arméniennes sont épuisées et la société Américaine qui a rendu des services inappréciables était dans l'impossibilité de faire transporter des grands moyens de secours.

400.000 réfugiés sont actuellement à la charge de la caisse de l'Etat Arménien et sont secourus en même temps par la société de secours Américaine qui n'a jamais cessé son œuvre hautement humanitaire. Le manque des denrées, le défaut d'objets d'habillements et autre ont créé une crise qui prend un caractère de plus en plus aigu. La République étant privée d'un débouché à la mer se trouve à la merci du caprice de la République Géorgienne qui a fermé son port de Poti au tansit des denrées achetées par la République Arménien au Couban et en Ukraine.

La situation des réfugiés Arméniens au Caucase du Nord est de nature à provoquer les plus vives inquiétudes: les Bolchéviks ont empêché le fonctionnement des organisations de bienfaisance Arméniennes et le comité Américain est privé des moyens de secourir. Les réfugiés sont voués à la plus déplorable des conditions dans ce pays dont ils ne connaissent ni les mœurs, ni la langue et dont le climat est l'un des plus rigoureux. Le seul moyen de les sauver c'est de faciliter leur réinstallation sur le sol de la Mère-Patrie qu'ils aspirent si ardemment.

La situation des réfugiés Arméniens n'est pas moins pénible dans les autres parties du Caucase: Les Géorgiens ont fait preuve à leur égard d'une conduite inhumaine en leur interdisant pour des desseins chovinistes la rentrée dans leurs pays (Akhalkalak, Akhaltzkha); et maintenant qu'ils sont rentrés ils se trouvent dépouillés de tous les moyens de rétablir leur économie.

Les mesures suivantes seraient de nature à donner un terme à cette vie de souffrances et de malheurs.

1.- Créer des moyens pour que ces réfugiés regagnent leurs pays respectifs (Van, Bitlis, Erzeroum, Trébizonde et autres).

2.- Obliger le gouvernement Géorgien d'enlever l'interdiction du tansit pour que la République Arménienne puisse opérer le transport des denrées.

3.- Leur faire parvenir des objets de première nécessité tels que habillements, chaussures, matières pharmaceutiques et sanitaires.

կերութիւնը, որ անգնահատելի ծառայութիւններ մատուցած էր, անկարելիութեան առջեւ կը գտնուի օգնութեան մեծ միջոցներ փոխադրելու:

Ներկայիս 400.000 տարագիրներու բեռը կը գտնուի հայկական պետութեան գանձին վրայ. անոնց կ'օգնէ միաժամանակ Ամերիկեան Օգնութեան Միութիւնը, որ չդադրեցուց բնաւ իր վեհ ու մարդասիրական գործը: Ուտեստեղէնի, զգեստեղէնի եւ այլ անհրաժեշտ իրերու չգոյութիւնը ստեղծած է այնպիսի տագնապ, որ աւելի ու աւելի սուր բնոյթ կը ստանայ: Հայաստանի Հանրապետութիւնը ծովային ելքէ գուրկ ըլլալով, մատնուած է քմահաճոյքին Վրաստանի հանրապետութեան, որ իր ֆոթիի նաւահանգիստը փակեց՝ Կոնստանդնուպոլսէն եւ Ուքրաինայէն Հայաստանի Հանրապետութեան կողմէ գնուած արմատիքի տարանցիկ փոխադրութեան առաջ:

Հիւսիսային Կովկասի տարագիրներուն կացութիւնը խստագոյն մտահոգութիւններու առիթ է.— Պոլշեւիկները արգելք հանդիսացան Հայ Բարեգործական ընկերութեանց գործունէութեան, եւ Ամերիկեան կոմիտէին արգիլուած է օգնութիւն փութացնել: Տարագիրները ամէնէն խղճալի վիճակի մէջ կը գտնուին խրատագոյն կլիմայ մը ունեցող այս երկրին մէջ, որուն ոչ սովորութիւններուն ծանօթ են անոնք եւ ոչ ալ լեզուին: Զիրենք փրկելու միակ միջոցը՝ օգնել է իրենց որպէսզի վերահաստատուին իրենց մայր հայրենիքին մէջ, որուն ցանկութիւնը այնքան մեծ է եւ բուռն իրենց մէջ:

Տարագիրներու վիճակը նուազ տաժանելի չէ Կովկասի միւս շրջաններուն մէջ: Վրացիները անմարդկային վերաբերմունք ունեցան իրենց հանդէպ, ազգայնամոլական նկատումներով արգիլելով անոնց մուտքը իրենց երկիրը (Ախալքալաք, Ախալցխա): Եւ այժմ որ վերադարձած են, գուրկ են իրենց տնտեսութիւնը հոգալու ամէն միջոցէ:

Տառապալից ու դժբախտ այս կեանքին վերջ մը դնելու համար, անհրաժեշտ կը գտնենք հետեւեալ միջոցառումները.—

1.- Միջոցներ ստեղծել որպէսզի տարագիրները վերադառնան իրենց համապատասխան երկրամասերը (Վան, Պիթլիս, Էրզրում, Տրապիզոն եւ այլն):

2.- Ստիպել վրացական կառավարութիւնը որ վերցընէ տարանցումի վրայ դրած արգելքը, որպէսզի Հայկական Հանրապետութիւնը կարենայ կազմակերպել ուտեստեղէնի փոխադրութիւնը:

3.- Բաւարարել տարագիրներու ամէնէն անհրաժեշտ կարիքները, ինչպէս՝ զգեստեղէններ, կօշիկներ, դեղորայք եւ առողջապահական իրեր:

4.- Նախապատրաստական աշխատանք տանիլ հայ տարագիրները վերահաստատելու համար իրենց հայրենի օճախներուն մէջ:

Այդ նպատակով կեդրոնացնել Տրապիզոնի, Սամսո-

4.- Travail de préparation pour la réinstallation des réfugiés Arméniens dans leur pays. Concentration des instruments agricoles, des semences, des bêtes de travail, des charpentes et poutres dans les ports de Trébizonde, de Samsoun et dans un port de la Cilicie.

5.- Secours matériel immédiat aux réfugiés Arméniens se trouvant sur le territoire de la République Arménienne et sur celui du Caucase du Nord et ailleurs.

La sécurité des Arméniens restés dans l'Arménie turque et celle des émigrés rentrés

Il est hors de doute que les Arméniens survécant aux massacres et restés sous la terreur turque se trouvent dans les conditions beaucoup plus insupportables.

Indépendamment de la décision à l'effet de notre avenir politique, la question la plus vitale qui se présente actuellement à nous ainsi qu'aux puissances alliées et protectrices c'est l'œuvre du sauvetage des Arméniens survécants. Les cercles et les corps constitués, à cet effet, dans le sein de la nation Arménienne sont dans l'impossibilité de faire des démarches sans avoir été secondés de votre intervention énergique. Malgré que la présence des forces Alliées à Constantinople ait écarté les barbares dominateurs turcs du Pouvoir Central de l'Etat turc, le système de l'Union et Progrès continue à agir triomphalement dans les provinces. Les administrations des gouvernements généraux sont entre leurs mains et les forces secrètes exercent toute leur influence sur toute les branches des administrations gouvernementales aussi bien que sur la mentalité turque.

Les Arméniens survécant aux massacres, aux souffrances et privations de la déportation sont loin de se sentir en sécurité et ce manque de confiance n'est que trop compréhensible. Il n'est pas difficile de voir que les Turcs s'efforcent de supprimer les traces des atrocités perpétrées.

De nombreux femmes et enfants, islamisés par forces, sont transportés par les Turcs à l'intérieur du pays; les malheureux sous la terreur turque, n'osent se montrer au grand jour.

On nous autorise à vous signaler que le gouvernement turc et les dirigeants Kurdes établissent des mahométans sur le territoire de l'Arménie. Les commissions constituées à cet effet ont à cœur de cacher ce travail systématiquement aux yeux du monde civilisé; d'autre part, les troupes démobilisées et à être démo-

նի եւ Կիրիկիոյ մէկ նաւահանգիստին մէջ գիւղատնտեսական գործիքներ, սերմնացու, լծկան կենդանիներ եւ շինանիւթ:

5.- Տնտեսական անմիջական օգնութիւն այն տարագիրներուն, որոնք կը գտնուին Հայաստանի Հանրապետութեան, Հիւսիսային Կովկասի եւ այլ երկրամասերու մէջ:

Թրքահայաստան մնացած հայերու եւ Երկիր վերադարձած գաղթականներու ապահովութիւնը

Կասկածէ վեր է որ ջարդերէն վերապրած եւ թրքական զարհուրանքին տակ մնացած հայերը շատ աւելի անտանելի պայմաններու մէջ կը գտնուին:

Անկախաբար անկէ թէ քաղաքական ինչ որոշում կը տրուի մեր ապագային համար, թէ՛ մեզի եւ թէ՛ Դաշնակից պետութիւններուն համար ներկայի ամէնէն կենսական խնդիրը՝ վերապրող հայերու փրկութեան գործն է: Հայ իրականութեան մէջ ա՛յս նպատակով կազմուած մարմինները, առանց ձեռ կորովի միջամտութեան, անկարելիութեան մէջ կը գտնուին քայլեր առնելու: Հակառակ անոր որ Դաշնակից զօրքերու ներկայութիւնը Կոստանդնուպոլսոյ մէջ՝ հեռացուցած է թրքական կեդրոնական իշխանութեան բարբարոս տիրակալները, գաւառներուն մէջ, սակայն, կը շարունակէ գործել Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան դրուածքը: Կառավարութեան ընդհանուր վարչամեքենան իրենց ձեռքերուն մէջ է, եւ թաքուն ու մոլթ ուժերու ամբողջական ազդեցութեան տակ կը գտնուին կառավարական վարչամեքենայի բոլոր բաժանմունքները, ինչպէս եւ թրքական մտայնութիւնը:

Կոտորածներէն եւ տարագրութեան տառապանքներէն ու գրկանքներէն վերապրած հայերը անապահով կը զգան իրենք գիրենք, եւ վստահութեան այս բացակայութիւնը շատ հասկնալի է: Դժուար չէ տեսնել որ թուրքերը կը ճգնին ջնջել իրենց գործած գազանութեանց հետքերը:

Բռնի իսլամացուած բազմաթիւ կիներ եւ մանուկներ՝ թուրքերու կողմէ կը տարուին երկրին ներսերը: Թրքական զարհուրանքին ենթարկուած այս դժբախտները չեն համարձակիր յայտնապէս երեւիլ մարդոց:

Լիազօրուած ենք ձեզի յայտնելու որ թուրք կառավարութիւնը եւ քիւրտ ղեկավարները Հայաստանի երկրամասին մէջ մահմետականներ կը տեղաւորեն: Այս նպատակով ստեղծուած յանձնախումբերը ուշադիր են որ քաղաքակիրթ աշխարհի աչքերէն հեռու պահուի կանոնաւոր կերպով տարուող այս աշխատանքը: Միւս կողմէ, գինաթափուած եւ գինաթափութեան ենթակայ զօրքերը, քրիստոնեայի ու հայու արեամբ յղփացած, կը

bilisées assouvies du sang chrétien et Arménien s'abat- tent et continueront à s'abattre sur les provinces Armé- niennes en portant avec elles l'anarchie, de nouvelles persécutions et la terreur de nouveaux massacres.

Ces conditions, on ne peut plus terribles, ont empê- ché les Autorités Arméniennes d'établir des relations avec les provinces Arméniennes et de créer des organi- sations nationales qui pourraient tout au moins garder le status quo et de prévenir ainsi les calamités qui pa- raissent imminentes: il nous est pénible de prévoir que chaque jour perdu fera subir au peuple Arménien toutes les conséquences d'un nouveau malheur.

Le proche avenir présente un tableau encore plus sombre. Les Arméniens restés dans leurs pays et ceux qui regagnent leurs foyers doivent forcément se met- tre au travail de la régénération et à la restauration de leur économie ruinée. Le printemps s'approche et une partie des terres au moins doit être cultivée et ense- mencée; le contraire serait pour le peuple Arménien un véritable malheur.

Il est, certes, impossible de nourrir pendant une période de 1-2 années tous les Arméniens se trouvant actuellement en Arménie turque avec de secours et des denrées envoyés du dehors, étant donné le man- que, dans l'intérieur de la Turquie, des moyens de transport et la désagrégation du mécanisme de l'Etat; si les préparatifs sont faits dès maintenant, le peuple grâce aux travaux agricoles auxquels il est prêt à s'a- donner, arrivera à rétablir du moins une économie mo- deste et ne pas être à la charge des peuples amis.

Nous croyons indispensable d'accentuer tout parti- culièrement qu'une fois la sécurité garantie en Arménie turque, environ 300.000 Arméniens regagneront non seulement le littoral de la Mer Noire, mais encore l'in- terland de la Mère-Patrie.

Tout en soumettant à votre sérieuse attention la si- tuation très grave de l'Arménie turque et celle des Ar- méniens en Turquie, nous nous permettons de vous prier de vouloir bien prendre en bienveillante considé- ration les propositions ci-dessous:

1.- Envoyer aux provinces arméniennes des commis- saires ayant à leur ordres des forces armées compo- sées des troupes alliées, ou bien des volontaires Armé- niens commandés par des officiers alliés.

2.- En ce cas les autorités centrales arméniennes pourront réorganiser les conseils provinciaux et ceux-ci sous la protection des commissaires feront rentrer les islamisés par force au sein de leur église, ramasser les

յարձակին շարունակաբար հայկական նահանգներուն վրայ, իրենց հետ տանելով անիշխանութեան նորանոր հալածանքներ եւ նոր կոտորածներու սարսափը:

Սահմուկեցուցիչ այս պարագաները արգելք հանդի- սացան հայկական իշխանութիւններուն որ յարաբե- րութիւն հաստատեն Հայկական նահանգներուն հետ եւ ազգային մարմիններ ստեղծեն, որպէսզի կարենան գէթ նախկին դրութիւնը (status quo) պահպանել եւ ա- ռաջքը առնել վերահաս աղէտներուն: Յաւալի է նախա- տեսել, որ իւրաքանչիւր կորսուած օր նոր դժբախտու- թեան մը ենթարկուելու առիթ է հայ ժողովուրդին հա- մար:

Մօտիկ ապագան աւելի մութ պատկեր մը կը ներկա- յացնէ:

Երկրին մէջ մնացած հայերը եւ անոնք որոնք կը վե- րադառնան իրենց օճախը, պարտաւոր են աշխատանքի լծուիլ իրենց տնտեսութիւնը վերականգնելու եւ վե- րաշխուժացնելու համար: Գարունը կը մօտենայ եւ գէթ հողերուն մէկ մասը պէտք է մշակուի, սերմանուի, այ- լապէս հայ ժողովուրդին համար իսկական դժբախտու- թիւն կ'ըլլայ:

Անկարելի է անշուշտ ներկայիս Թրքահայաստան գտնուող բոլոր հայերը 1-2 տարի կերակրել արտասահ- մանէն եկող օգնութեամբ, մանաւանդ որ Թուրքիոյ մէջ փոխադրական միջոցներ չկան ու պետական կա- ռոյցը քայքայուած վիճակի է: Եթէ այժմէն սկսին պատրաստութիւնները, երկրագործական աշխատանք- ներու պատրաստ ժողովուրդը կը յաջողի վերականգնել համեստ տնտեսութիւն մը առնուազն, եւ դուրս գալ բարեկամ ժողովուրդներու վրայ բեռ ըլլալու պար- տադրանքէն:

Անհրաժեշտ կը համարենք մասնաւոր կերպով շեշ- տել, որ այն պահուն երբ կ'երաշխաւորուի Թրքահա- յաստանի անվտանգութիւնը, շուրջ 300.000 հայեր կը վերադառնան թէ Սեւ ծովեան ափերը եւ թէ Մայր-հայ- րենիքի ներքին գաւառները:

Ձեր լուրջ ուշադրութեան յանձնելով Թրքահայաս- տանի եւ Թուրքիոյ հայերու ծանր կացութիւնը, ձեր բարեացակամ նկատողութեան կը յանձնենք հետեւեալ առաջարկները:—

1.- Հայկական նահանգներ ուղարկել կոմիսարներ, որոնց հրամանին տակ գտնուին դաշնակից զօրքերը եւ կամ դաշնակից սպաներու հրամանին տակ գործող հայ կամաւորներ:

2.- Նման պարագայի մը, հայ կեղը. իշխանութիւն- ները պիտի կարենան վերակազմել գաւառական ժո- ղովները, որոնք, կոմիսարներու հովանաւորութեան ներքեւ, ի վիճակի կ'ըլլան՝ հայոց եկեղեցիին վերա- դարձնելու բռնի իսլամացածները, որբերը հաւաքելու, վիճակագրութիւններ կազմելու, արձանագրելու հայե-

orphelins, dresser les statistiques, établir les dommages et pertes des Arméniens et protéger et soulager le peuple.

3.- Charger les commissaires d'organiser avec le concours des autorités Arméniennes le retour des Arméniens réfugiés et déportés en dehors des zones de massacres en procurant à ceux-ci des moyens d'habitation, des semences, des moyens de transport etc. Le peuple Arménien sera très heureux si les dépenses pour sa réinstallation sont faites au compte du chapitre des indemnités incombant à ceux qui ont ravagé l'Arménie. La Croix Rouge Américaine pénétrant effectivement en Arménie, ferait une véritable œuvre de salut. Le peuple habitant les contrées désolées et dévastées a grand besoin d'habillement, de secours médical etc.

L'installation des étapes de ravitaillement et d'habitation ainsi que la disponibilité des moyens de transport sur tout le trajet, que les réfugiés et déportés auront à parcourir, seraient d'une utilité incontestable.

Les réfugiés Arméniens au Caucase et en Russie ainsi que les Arméniens restés en Turquie s'adressent par votre entremise aux sentiments humanitaires que vous incarnez et ils ont la ferme confiance que les puissances Alliées prendront en considération les propositions formulées ci-dessus et préviendront l'extermination des dernières épaves du peuple Arménien.

Pas une force ne serait à même de maîtriser le désir ardent qui anime les Arméniens de regagner le sol de la Mère-Patrie; il est donc d'une nécessité urgente de pourvoir dès maintenant au rétablissement de la sécurité.

Dans le cas où la sécurité en Arménie ne serait pas une réalité catégorique et que le rapatriement des Arméniens réfugiés et déportés ne serait pas organisé, le terrible catastrophe s'abattraît à l'heure même où la voix de l'Universelle Justice se fait entendre.

LES DELEGUES DES REFUGIES ARMENIENS DE LA TURQUIE EN RUSSIE ET AU CAUCASE

ըու կրած վնասներն ու կորուստները, եւ պաշտպանելու ու սփոփելու ժողովուրդը:

3.- Պարտականութիւն տալ կոմիսարներուն կազմակերպելու, հայոց իշխանութեանց աջակցութեամբ, տարագիր ու գաղթական հայերու վերադարձը կոտորածի գօտիներէն, հայթայթելով այս վերջիններուն բնակարան, սերմնցու, փոխադրական միջոցներ եւայլն: Հայ ժողովուրդը շատ երջանիկ պիտի զգայ երբ վերաբնակեցման ծախսերը ըլլան ի հաշիւ անոնց որ աւերեցին Հայաստանը: Ամերիկեան Կարմիր խաչը փրկարար դեր պիտի խաղայ իսկապէս, երբ իրողապէս մտուք գործէ Հայաստան: Ամայացած ու աւերուած գաւառներու ժողովուրդը մեծ կարիք ունի զգեստեղէնի, բժշկական խնամքի եւայլն:

Անժխտելի օգտակարութիւն պիտի ունենայ՝ բնակութեան եւ մատակարարման կայաններու, ինչպէս նաեւ փոխադրական միջոցներու հայթայթումը այն ճանապարհներուն, ուրկէ պիտի անցնին գաղթականները:

Կովկաս եւ Ռուսիա ապաստանած տարագիրները, ինչպէս նաեւ Թուրքիա մնացողները, Զեր միջոցաւ կը դիմեն ձեր մարմնաւորած մարդկայնական զգացումներուն, այն հաստատ համոզումով, որ Դաշնակից պետութիւնները հաշուի պիտի առնեն վերեւ բանաձեւուած առաջարկները եւ առաջը պիտի առնեն հայ ժողովուրդի վերջին բեկորներու բնաջնջումին:

Ոչ մէկ ոյժ պիտի կարենար զսպել հայերու եռանդուն բաղձանքը՝ Մայր-հայրենիք վերադառնալու: Անյետաձգելի ստիպողականութիւն է, հետեւաբար, այժմէն իսկ վերահաստատել անոր անվտանգութիւնը:

Այն պարագային երբ ապահովութիւնը բացարձակ իրողութիւն չդառնայ Հայաստանի մէջ եւ չկազմակերպուի գաղթական ու տարագիր հայերու հայրենադարձութիւնը, սոսկալի աղէտը պիտի պատուհասէ գանոնք ճիշդ այն պահուն՝ երբ Տիեզերական Արդարութիւնը իր ձայնը լսելի կը դարձնէ:

ԹՈՒՐԳԻԱՅԷՆ ԴԷՊԻ ԿՈՎԿԱՍ ԵՒ ՌՈՒՍԻԱ ՏԱՐԱԳՐՈՒԱԾ ՀԱՅԵՐՈՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐ

Ե. ԲԱԺԻՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱԼԷՊ ՀԱՒԱԶՈՒԱԾ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ

Պատերազմի տարիներուն Հալէպ քաղաքը կը հանդիսանար այն կարեւորագոյն կեդրոնը, ուր կը տարուէին հայկական նահանգներէն, Կիլիկիայէն ու Փոքր Ասիոյ զանազան շրջաններէն տեղահանուած հայութեան բեկորները, անկէ քշուելու համար ատելի հեռու, գլխաւորաբար Միջագետքի ու Տէր Ջօրի անապատները: 1917-18 տարիներուն հոն խմբուած կը մնային տակաւին նկատառելի թիւով հայեր, որոնց թիւը զինադադարի յայտարարութենէն ետք ստուարացաւ տարբեր վայրերէ հոն հաւաքուող վերապրողներով: Ստորեւ բերուած փաստաթուղթերը խօսուն են այդ մասին.— կարնեցիներ, սեբաստացիներ, կեսարացիներ, ուրֆացիներ, զոնիացիներ, Կիլիկիայէն ու տակաւին Մուսուլէն եւ Տէր Ջօրի սպանդանոցէն փրկուած հայորդիներ խոնուած են հոն եւ, Ազգ. իշխանութիւններու եւ հայրենակցական խմբաւորումներու հովանաւորութեան տակ, կը ջանան միջոցներ գտնել նոր կեանքի մը կազմակերպման համար: Բայց նաեւ համաշխարհային պատերազմի աւարտն էր ու Դաշնակիցներու յաղթանակը նոր հեռանկար կը բանար վերապրող հայութեան զանգուածներուն մէջ:

– Չէ՞ որ ի վերջոյ արդարութիւն պէտք է ըլլար հայ ժողովուրդին, այնքա՛ն տանջուած ու կոտորակուած, նոյնքան արիւն թափած ռազմի ճակատներուն վրայ, մարտնչելով թէ՛ դաշնակից բանակներու շարքերուն մէջ, եւ թէ անոնց կողքին կռուող կամաւորական առանձին գունդերով: Պէտք չէ մոռնալ նոյնպէս անկախ Հայաստանի գոյամման փաստը, ինքնին խանդավառիչ իրողութիւն, որ անհուն բերկրանքով լեցուցած էր սրտերը. ու տակաւին Մեծ Հայքէն մինչեւ Կիլիկիա տարածուող Մեծն Հայաստանի հեռանկարը, որուն սահմաններուն մէջ ուրֆացիներ եւ կեսարացիներ կ'երազէին ներգրաւուած տեսնել իրենց երբեմնի բնօրանները:

Ահա հոգեբանական մման մթնոլորտի մը մէջ է որ կազմուած են յաջորդ էջերուն բերուած փաստաթուղթերը, որոնք քաղուած են Պոսթընի Հ.Յ.Դ. Կեդր. արխիւներուն Ամերիկայի յատուկ մէկ թղթածրարէն (թիւ 1407), ինչ որ ենթադրել կու տայ որ անոնք պէտք է օգտագործուէին այդ օրերուն Միացեալ Նահանգներու մէջ ծաւալող Հայ դատի հետապնդման աշխատանքներուն մէջ:

Ընդհանրապէս ամփոփ գիծերու մէջ շարադրուած այդ տեղեկագիրներուն մէջ կը նկարագրուի իւրաքանչիւր նահանգի մէջ թուրքերու եւ քիւրտերու գործած զանգուածային ջարդերը, տեղահանութեանց ու տարագրութեան ընթացքին հայերու վրայ ի գործ դրուած զանազան բռնութիւնները, առեւանգումները, բռնի կրօնափոխութիւնը եւայլն: Կը տրուին նոյնպէս հայրենի երկրին մէջ հայոց կրած մարդկային եւ նիւթական կորուստները: Յատկանշական եւ պատմական արժէք կը ներկայացնեն մասնաւորաբար Էրզրումի, Սեբաստիոյ եւ կարգ մը այլ շրջաններու վերաբերող զեկուցագրերը, որոնք ազգագրական եւ տնտեսական բնոյթի կարեւոր տեղեկութիւններ կը բովանդակեն: Այդպիսիներէն մէկն է նաեւ Հալէպի մէջ հաստատուած որբանոցի 1915-1919 տարիներու գործունէութեան մասին կազմուած ամփոփ տեղեկագիրը:

Փաստ. 1407-44

Ե 1.- ԷՐԶՐՈՒՄՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՑ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

DEPORTATION DES ARMÉNIENS DU VILAYET D'ERZEROUH

Situé aux sources des deux grands fleuves de la Mésopotamie, l'Euphrate et le Tigre, et confinant par le nord-est à la Caucase, le vilayet d'Erzeroum forme un plateau d'une altitude moyenne de 1500 mètres au dessus du niveau de la mer. Par suite même de cette élévation le climat y est très rigoureuse et l'hiver occupe les huit mois de l'année. Baïbourd avec ses 45 villages, Erzindjan avec ses 150 villages, Bayazid, Diadin et les vastes plaines de Passin, avec leur 460 villages peuvent être considérés comme ses principales subdivisions. La ville elle-même se trouve bâtie aux pieds de hauts massifs dont les cimes portent des neiges éternelles.

La population arménienne du vilayet remontait en 1914 à deux cent quinze mille d'habitants environ. La ville d'Erzeroum en renfermait 25000, la ville d'Erzindjan 16000, celle de Baïbourt 9000 et celle de Bayazid 4000. Le reste vivait dans les campagnes et s'occupait d'agriculture.

Les paysans étaient propriétaires pour la plupart; il y en avait fort peu, à peine 15% qui fussent exclusivement fermiers. Laborieux et énergiques, ils trouvaient tous dans leur travail l'aisance et le bien-être. Rarement on y rencontrait des familles vraiment pauvres, à moins que ce ne fussent des villages exposés aux rapines continuelles des Kurdes ou à la rapacité vorace des exacteurs turcs.

Dans les villes, surtout à Erzeroum même, le commerce était fort prospère. Le port de Trébizonde servait de voie à l'importation des marchandises russes. Batoum fournissait le pétrole dont le nombre des caisses dépassait les trois cents mille par an et l'on recevait de l'Europe les objets de manufacture, les articles de fantaisie, les boissons, le sucre et autres. Erzeroum recevait en outre les produits des autres vilayets tel que le vin et les eaux-de-vie de Diarbékir et de Kharpout, les fruits de Malatia etc. A son tour, elle expédiait à ces mêmes pays, des articles de manufacture et autre étoffes de fabrication indigène. L'exportation consistait surtout en moutons et gros bétail, dont le nombre, chaque année, atteignait approximativement cent mille. Les troupeaux étaient expédiés au printemps soit

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ.—

Միջագետքի երկու մեծ գետերով՝ Եփրատի եւ Տիգրիսի ափունքներուն եւ հիւսիս արեւելեան կողմէն սահմանակից Կովկասին՝ էրզրումի նահանգը կը կազմէ բարձաւանդակ մը՝ ծովու մակերեսէն 1500 մետր բարձրութեամբ: Այս բարձր դիրքին հետեւանքով խստաշունչ կլիմայ ունի ան եւ ութը ամիս տեւող ձմեռ մը: Բաբերդը իր 45 գիւղերով, Երզնկան իր 150 գիւղերով, Պայազիտը, Տիատինը եւ Բասենի ընդարձակ դաշտերը կարելի է համարել անոր գլխաւոր ենթաշրջանները: [էրզրում] քաղաքը կառուցուած է ստորոտին բարձր լեռներու, որոնց գագաթները ծածկուած են մշտնջենական ձիւնով:

1914-ին նահանգի հայութեան թիւը կը հասնէր շուրջ երկու հարիւր տասնհինգ հազարի: էրզրում քաղաքը ունէր 25000, Երզնկան 16000, Բաբերդը 9000, Պայազիտը 4000: Մնացեալը կ'ապրէր գիւղերու մէջ եւ կը զբաղէր երկրագործութեամբ:

Գիւղացիներուն մեծամասնութիւնը սեփականատէր էր [իր արտերուն] եւ շատ փոքր մաս մը, հազիւ 15%ը, ագարակի տէր:

Ժրջան ու շարքաշ աշխատանքի շնորհիւ անոնք կը վայելէին հանգիստ ու բարեկեցիկ կեանք: Հագուադէպ էր հանդիպիլ իսկապէս աղքատ ընտանիքներու, բացառեալ այն գիւղերէն որոնք յարատեւօրէն ենթակայ էին քիւրտ կողոպտիչներուն եւ կամ թուրք անկուշտ ու կեղեքիչ հարկահաններու ընչաքաղցութեան:

Քաղաքներուն մէջ, մանաւանդ էրզրումի, առեւտուրը շատ բարգաւաճ էր: Տրապիզոնի նաւահանգիստին եւ Կովկասի միջոցաւ կը ներածուէին եւրոպական եւ ռուսական ապրանքները: Պաթումը կը հայթայթէր քարիւղ, տարեկան աւելի քան երեք հարիւր հազար տակառ: Եւրոպայէն կը ստացուէին գործարանային ապրանքները եւ պաճուճանքային իրեր, խմիչքներ եւայլն: էրզրում կը ստանար նոյնպէս միւս նահանգներու արտադրութիւնները, ինչպէս Տիարպեքիւրի եւ Խարբերդի գինիներն ու օղին, Մալաթիոյ պտուղներ եւայլն: Իր կարգին, միեւնոյն այս երկիրներուն էրզրում կ'արտածէր կերպաս եւ տեղական այլ գործըւածքներ: Կ'արտածուէր մանաւանդ ոչխար եւ արջառ, որոնց թիւը կը հասնէր տարեկան շուրջ հարիւր հազարի: Ոչխարի ճօտերը կ'ուղարկուէին գարնան, կամ Կոստանդնուպոլիս եւ կամ Հալէպ: Կը ներածուէին նաեւ

à Constantinople soit à Alep. On emportait en outre la laine, les peaux, des conserves, du jambon, des denrées et des fruits. Le transit des marchandises passant par Erzeroum à destination de la Perse, donnait lieu à un nouveau genre de trafic.

Le commerce se trouvait presque entièrement entre les mains des Arméniens qui formaient le 80% des commerçants. Il y avait dans le vilayet environ soixante commerçants dont les affaires annuelles dépassaient le chiffre de trente mille livres turque or, cinq cents dont le trafic arrivait de dix à quinze mille livres et deux mille cinq cents qui faisaient des affaires des 800 à mille livres.

Il en était des métiers comme du commerce, le tisserand, l'horloger, le cordonnier, le tailleur, l'architecte, le maçon étaient tous arméniens. Si bien qu'à l'époque des déportations, alors même que les turcs avaient la rage d'égorger, ils se trouvaient forcés à ménager quelques hommes de métier pour pouvoir vivre eux-mêmes!

N'oublions pas de dire, qu'au point de vue scolaire encore les arméniens dépassaient de beaucoup les turcs. Entre les écoles primaires qu'ils avaient, un peu partout même dans les villages de peu d'importance, ils tenaient dans la ville une école secondaire intitulée Sanasarian, où sous la direction de maîtres intelligents et instruits l'on faisait faire aux jeunes gens des études vraiment sérieuses. Bien plus, les communautés catholiques et protestantes avaient des écoles spéciales pour l'enseignement des langues européens, telles que le français et l'anglais, le plus souvent les turcs eux-mêmes malgré qu'ils eussent une lycée subventionnée par le gouvernement, avaient recours à nos écoles pour l'instruction de leurs enfants.

Les communautés et les monastères disposaient de vastes richesses dont les revenus, sauf une petite partie destinée aux pauvres, servaient uniquement à l'entretien des écoles. Le monastère dit Garmir Vank avec ses nombreux troupeaux de bœufs, de moutons, de chèvres et de porcs, ainsi que ses vastes terrains environnant formait un capital de cinquante mille livres turques or, ayant pour revenu annuel cinq à six mille livres. Deux cent soixante orphelins étaient nourris et éduqués dans son enceinte! Les monastères de Vahegha Vank[?] et de Soussanvartik[?], étaient en possession de biens valant soixante mille livres. L'église d'Erzeroum elle-même avait d'immenses propriétés, des marchés entiers lui appartenaient et son avoir pouvait être évalué à trois cents dix mille livres turques or,

բուրդ, կաշի, պահածոներ, ապուխտ, արմաթե եւ պտուղներ: Էրզրումէն դէպի Պարսկաստան ապրանքներու տարանցումը նոր աշխուժացում կու տար առեւտուրին:

Առեւտուրը գրեթէ ամբողջութեամբ կը գտնուէր հայերու ձեռքը, որոնք վաճառականներու 80% կը կազմէին: Նահանգին մէջ կային շուրջ վաթսուս վաճառականներ, որոնց տարեկան գործառնութիւնը երեսուն հազար թրքական ոսկեդրամէն աւելի էր, հինգ հարիւր [վաճառականներ], որոնց գործառնութիւնը կը հասնէր տասէն տասնըհինգ հազար ոսկիի եւ երկու հազար եւ հինգ հարիւր [վաճառականներ], որոնց գործառնութիւնը 800-1000 ոսկի էր:

Առեւտուրին նման կային նաեւ արհեստները. ջուրհակը, ժամագործը, կօշկակարը, դերձակը, ճարտարապետը, որմնադիրը, բոլորը նոյնպէս հայ էին, այնքան որ տարագրութեան ժամանակ, երբ թուրքերը սպաններու կատաղութենէն բռնուած էին, ստիպուած եղան ինչայելու քանի մը արհեստաւորներու՝ իրենց գոյութեան համար իսկ...

Չմոռնանք յիշելու նաեւ որ կրթական մարզին մէջ եւս հայերը մեծագոյն չափերով կը գերազանցէին թուրքերը: Բացի ամէն վայրի, մինչեւ իսկ աննշան գիւղերու մէջ ունեցած իրենց դպրոցներէն, քաղաքին մէջ կը պահէին Սանասարեան անունով երկրորդական վարժարանը, ուր իմաստուն եւ զարգացեալ ուսուցիչներու ղեկավարութեան տակ իսկապէս լրջագոյն ուսում կը ջամբուէր երիտասարդութեան: Աւելին, կաթողիկէ եւ բողոքական յարանուանութիւնները յատուկ դպրոցներ ունէին եւրոպական լեզուներ ուսուցանելու համար, ինչպէս Փրանսերէն եւ անգլերէն: Յաճախ իրենց զաւակներու կրթութեան համար թուրքերն ալ կը դիմէին մեր վարժարաններուն, հակառակ անոր որ կառավարութեան ծախսով պահուող լիսէ մը ունէին իրենք:

Համայնքներն ու վանքերը սեփականատէր էին ընդարձակ կալուածներու. բացի աղքատներուն յատկացուած փոքր մասէ մը, անոնց հասոյթը ամբողջութեամբ կը ծառայէր դպրոցներու պահպանութեան. կարմիր վանքը իր եզներու, ոչխարներու, այծերու եւ խոզերու բազմաթիւ նախիրներով, ինչպէս նաեւ շրջակայքի ընդարձակ կալուածներով կը կազմէր թրքական յիսուն հազար հնչուն ոսկիի դրամագլուխ մը՝ տարեկան հինգէն վեց հազար ոսկի եկամուտով: Այդ վանքը կը կերակրէր ու կը դաստիարակէր երկու հարիւր վաթսուս որբեր:

Վահեկա վանքը [?] եւ Սուսանվարդիք [?] վանքերը ունէին վաթսուս հազար ոսկի արժողութեամբ ստացուածքներ: Հսկայական կալուածներ ունէր Էրզրումի եկեղեցին. բազմաթիւ շուկաներու տէրն էր ան եւ իր ունեցուածքը երեք հարիւր հազար թրքական ոսկեդրամ:

en dehors des églises des villages et districts. L'église catholique à son tour avec ses objets d'or, ses antiquités, son argenterie, ses tapis précieux, ses immeubles et ses terrains pouvait atteindre cinquante mille livres turques or.

Tant de fortunes, tant de labeurs, tant de progrès, tant de vies furent, en un jeu de vandalisme, ensevelis à tout jamais, sous les cendres...

Les déportations ne furent pas sans préliminaires. Le gouvernement eut d'abord recours aux provocations. Il voulait mettre à bout le patience du peuple et amener de la sorte une esquisse de révolte. Sur le front on égorgait les soldats arméniens. Dans les campagnes des bandes irrégulières détruisaient les monastères, pillaient les villages arméniens et violaient leurs filles dans leurs propres foyers. Pour sensationner la ville, les unionistes firent poignarder en pleine rue, le nommé Setrak Bastermadjian qu'ils croyaient être un personnage le plus en vue.

Rien ne bougea cependant, car on savait qu'un million de soldats campaient alentour. D'ailleurs la jeunesse arménienne presque toute entière se trouvait déjà engagée dans les armées. Vinrent ensuite les emprisonnements en masse et les insolences sans nom des thcétés guidés par les chefs Djefher et Djemal. En plein marché, ses bandes retiraient de leurs comptoirs les commerçants et leur mettant le pioche à la main, les faisaient travailler, sous des pluies de verges, à démolir une chapelle qui avait été construite par les russes sur la tombe d'un de leurs consuls. Le gouverneur de la ville Tahsin pacha, à qui on portait les plaintes, jouait l'imbécile ou le sourd suivant les circonstances.

L'on était en fin mars 1915 et la déportation commença dans les campagnes. Le gouvernement fit d'abord évacuer les plaines de Passin prétendant qu'elles étaient trop près de la frontière et qu'il y avait lieu de se méfier des arméniens. Les milliers de familles, escortées par les gendarmes, furent éloignées du vilayet et conduites à l'inconnu. Bien après quelques femmes survivantes nous apprirent à Malatia qu'on les avaient toutes égorgées aux environs de cette ville sans même épargner les petits enfants.

En mai eut lieu l'émigration des villages situés dans la plaine même d'Erzeroum. Après avoir fait sortir les paysans de leurs demeures, on les laisse cinq jours durant sous une pluie torrentielle et glaciale au milieu de la campagne. Quand vêtements, couvertures, effets et aliments furent imbibés d'eau, à coup de crosse, les

մով կը գնահատուէր, առանց հաշուելու գիւղերու եւ գաւառակի եկեղեցիները: Կաթողիկէ եկեղեցին, իր կարգին, իր ոսկեղէն իրերով, հնութիւններով, արծաթեղէնով, թանկարժէք գորգերով, շէնքերով եւ կալ-լածներով թրքական շուրջ յիսուն հազար ոսկեղրամի արժողութեամբ հարստութեան տէր էր:

Այդքան հարստութիւններ, աշխատանք, այդպիսի յառաջդիմութիւն փոշիի վերածուեցան իբր հետեւանք բարբարոսական արարքներու:

Տարագրութիւնը կատարուեցաւ նախապատրաստուած ձեւով: Կառավարութիւնը նախ դիմեց գրգռիչ քայլերու: Կ'ուզէր այդ ձեւով յորդեցնել ժողովուրդին համբերութեան բաժակը եւ զայն մղել ըմբոստութեան: [Պատերազմի] ճակատին վրայ կը սպաննէին հայ զինուորները: Գիւղերուն մէջ հրոսակային անկանոն գուռեր կ'աւերէին վանքերը, կը կողոպտէին հայկական գիւղերը եւ կը բռնաբարէին հայ աղջիկները իրենց օժախներուն մէջ իսկ: Քաղաքը սարսափի մատնելու նպատակով, իթիհատականներ հրապարակաւ դաշունահարել տուին Սեդրակ Պատրմաճեանը, զոր քաղաքի] ամէնէն երեւելի անձնաւորութիւնը կը նկատէին:

Բայց եւ այնպէս ոչ մէկ խլրտում, որովհետեւ [հայերը] կը գիտակցէին որ շրջանին մէջ մէկ միլիոն զինուոր կար:

Այլապէս նաեւ հայ երիտասարդութիւնը գրեթէ ամբողջութեամբ բանակ գացած էր: Ապա սկսան զանգուածային բանտարկութիւններ եւ ձեւհէրի ու ձեւալի գլխաւորած չեթէներու լրբութիւնները: Գուռերը շուկային մէջ իսկ խանութներէն դուրս կը քաշէին վաճառականները եւ, բրիչ տալով անոնց ձեռքը, խարազանի հարուածներով կը պարտադրէին որ քանդեն այն մատուռը, զոր ռուսերը կառուցած էին իրենց հիւպատոսներէն մէկուն շիրիմին վրայ: Քաղաքի կառավարիչ Թահսին փաշա, որուն գանգատ կը ներկայացուէր, խենթ կամ խուլ կը ձեւացնէր:

1915 թ. Մարտի վերջերուն էր, կառավարութիւնը նախ պարպել տուաւ Բասենի դաշտին [գիւղերը], պատրուակելով որ անոնք շատ մօտ կը գտնուին ռազմաճակատին եւ որ պէտք չէր վստահիլ հայերուն: Հագարաւոր ընտանիքներ, ժանտարմներու ընկերակցութեամբ, հեռացուեցան նահանգէն եւ տարուեցան դէպի անձանօթը: Բաւական ժամանակ անց, քանի մը վերապրող կիներ իմացուցին մեզի որ քաղաքին մօտերը սպաննած էին ամէնքը առանց խնայելու նոյնիսկ մանուկներուն:

Մայիսին տեղի ունեցաւ էրզրումի Դաշտի գիւղերուն տարագրութիւնը: Գիւղացիները իրենց տուներէն հանելէ ետք, հինգ օր ամբողջ զանոնք կը պահէին բացօթեայ դաշտի մէջ՝ տեղատարափ եւ սառն անձրեւի տակ: Անգամ մը որ զգեստները, վերմակները, գոյքերն ու սննդեղէնը ջրահեղձ դարձած էին, ժանտարմները

gendarmes poussaient en avant ces êtres exténués à travers les rivières et les crues des torrents, les mères en désespoir jetaient leurs enfants dans les eaux et la ville frémit d'horreur en face de ce spectacle que les officiers allemands allaient contempler et photographier en amateurs! Toute cette population fut exterminée sans pitié dans le district de Terdjian sur le front de Mamakhatoun, où le préfet de police d'Erzeroum Khouloussi éféndi était allé organiser les tueries avec les tchétsés. De rares survivantes ont été depuis lors vues à Diarbékir et à Kharpout.

La ville eut son tour. Cinquante familles des plus riches formaient un premier groupe. Elles partirent pour Kharpout le 1er juin. Sous la garde de gendarmes que commandait le Yaver du vali, Hasan Bey. A ceux-ci étaient associés les chefs de bandes nommés Djourdjou Orlou avec ses tchétsés.

A Palou, village situé non loin de Kharpout, ces mêmes gendarmes de concert avec les tchétsés, assassinèrent tous les hommes, enlevèrent une partie de femmes et des jeunes filles et laissèrent entrer les autres à Kharpout, littéralement nues n'ayant pas même pas de quoi cacher leur honte!

Le second groupe formait mille trois cents familles, appartenant pour la plupart à la classe des commerçants. A ceux-ci vinrent se rejoindre en route trois cent soixante des familles de[?] gros village situé dans le district de Kiskim et dont les habitants ont presque tous leur commerce en Russie. Pour cette raison même à la mobilisation il n'y avait que des femmes dans ses villages et presque pas d'hommes. Huit cents gendarmes commandés par l'officier Moukhtar, furent chargés de les conduire. A Kémakh d'abord le kaïmacam du lieu, secondé par le chef de bande arrêta au passage du pont, quatre cent soixante hommes, dont nous ne pûmes plus rien savoir dès lors si ce n'est que des émigrés sortis après nous avaient reconnu dans les eaux de notre région, les cadavres de certaines d'entre eux. La caravane erra longtemps encore à travers des montagnes environnantes, commandée cette fois par le kaïmacam d'Adiaman Mehmed.

Le 15 août au matin tandis que le troupe défilait sur un sentier escarpé et étroit, les gendarmes postés sur un sommet, arrêtaient les hommes au passage. Les tribus kurdes auxquels on avait fait appel, les attachèrent en files qui furent échelonnées sur les pentes, et leur bey Sémiar assis sur une élévation ouvrit devant lui des sacs où vinrent tomber tour à tour les montres, les bijoux, les monnaies et tous ce qu'il y avait précieux

խարազանի հարուածներով, գետերու եւ հեղեղատներու մէջէն առաջ կը մղէին այս ուժասպառ հակները: Յուսահատ կիներ յորդահոս ջուրերուն մէջ կը նետէին իրենց երեխաները: Քաղաքը սոսկումով լեցուեցաւ այս տեսարանին առջեւ, զոր գերմանացի սպաներ կը դիտէին ու կը լուսանկարէին, որպէս սիրողներ... Այս ժողովուրդը ամբողջութեամբ անգթաբար բնաջնջուեցաւ Դերջան գաւառակի Մամախատունի կամուրջին վրայ, ուր էր գրումի ոստիկանապետ Խուլուսոյ Հֆէնտի չեթէներուն հետ գացած էր կազմակերպելու համար սպանդը: Ասկէ ետք սակաւաթիւ վերապրողներ տեսնուեցան Տիարպեքիր եւ Խարբերդ:

Կարգը հասաւ քաղաքին: Առաջին խումբը կազմուեցաւ ամէնէն հարուստ 50 ընտանիքներէն: Յունիս 1-ին ճամբայ հանուեցան անոնք դէպի Խարբերդ նահանգապետի թիկնապահ Հասան պէյի եւ անոր ժանտարմներուն ընկերակցութեամբ: Ասոնց միացան ճուրճու Օրլու կոչուող գունդի պետերը իրենց չեթէներով:

Խարբերդի մօտ գտնուող Բալու գիւղին մէջ միեւնոյն այս ժանտարմները, չեթէներու հետ միասին, սպաննեցին բոլոր տղամարդիկը, յափշտակեցին կիներուն եւ աղջիկներուն մէկ մասը, եւ թոյլ տուին որ միւսները մուտք գործեն Խարբերդ՝ բոլորովին մերկ, իրենց ամօթը ծածկելու համար ոչինչ ունեցողի վիճակին մէջ:

Երկրորդ կարաւանը կը բաղկանար հազար երեք հարիւր ընտանիքներէ, մեծամասնութեամբ վաճառական դասուն պատկանող: Ճանապարհին, ասոնց վրայ աւելցան երեք հարիւր վաթսուն ընտանիքներ Կիսկիմ գաւառակի¹ մեծ գիւղէն, որուն գրեթէ բոլոր բնակիչները առեւտրական գործեր ունին Ռուսիոյ մէջ: Այս պատճառաւ ալ միայն կիներ կային այս գիւղերուն մէջ եւ տղամարդ գրեթէ չկար: Սպայ Մուխթարի հրամանատարութեան ներքեւ գտնուող ութ հարիւր ժանտարմներ պիտի առաջնորդէին գանոնք: Նախ Քեմախի մէջ, տեղուոյն գայմագամը չեթէներու պետին հետ եկան ու կամուրջին վրայ կեցուցին չորս հարիւր վաթսուն հոգի. թէ ի՞նչ եղաւ անոնց ճակատագիրը, գիտցանք միայն մեզմէ ետք ճամբայ ելած գաղթականներէն, որոնք գետին ջուրերուն մէջ թաւալող դիակներու մէջէն կրցած էին ճանչնալ անոնցմէ ոմանք: Կարաւանը, այս անգամ Ատիամանի գայմագամ Մեհմէտի ղեկավարութեամբ, դեռ երկար շրջեցաւ մօտակայ լեռներուն մէջ:

Օգոստոս 15ի առաւօտեան, նեղ ու սեպածեւ լեռնանցքի մը վրայ կանգնեցուած ժանտարմները կեցուցին բոլոր անցորդները: Օգնութեան կանչուած քիւրտ չեթէները կապեցին գանոնք եւ շարեցին գառիթափին վրայ: Իրենց պետը, նստած բարձունքի մը վրայ, առջեւը բացաւ պայուսակները, ուր թափուեցան հետզհետէ

1.- Անընթեռնելի անուն:

sur les déportés. Une certaine d'hommes s'échappèrent, on ne sait par quel hasard; tout le reste environ trois mille six cents personnes, périrent dans cette vallée sous les hâches des kurdes. Le lendemain un inspecteur arrivé officiellement de la part du gouverneur de Malatia, aide de Kaïmacam d'Adiaman, il fit d'abord fouiller une à une toutes les femmes ainsi que les petits enfants pour enlever tout ce qu'il restait encore précieux! Puis ce même inspecteur au nom Toualif Harbié fit confisquer les tentes, les tapis et tous ce qui semblait avoir quelque valeur. Les chargeant ensuite sur des bêtes de somme qui appartenaient aussi aux déportés, il les fit transporter à Malatia. Ruinés et anéantis au moral comme au physique, les familles atteignaient les bords de l'Euphrate à l'endroit nommé Samsad, là encore les gendarmes jetèrent en eau tous les malades! Enfin, quatre mois après la sortie de cette caravane de mille sept cents familles, des débris d'une soixantaine de familles arrivèrent à Siroudj mourantes toutes, des maladies et de misère. Nous pourrions les suivre trois ans encore à travers des déserts de Racca, en Mésopotamie, mais il faut nous borner et je ne fais ici que le résumé des résumés.

Le troisième groupe était constitué par deux mille trois cents familles. A Kémakh on arrêta la plupart de ses hommes qui furent massacrés et noyés dans le fleuve. Dans les montagnes de Kiouhté le célèbre bey kurde Seïmar avec le gouverneur D'Adiaman firent encore égorger une partie des hommes et enlever de force beaucoup de femmes et de jeunes filles. Les débris continuant leur route, arrivèrent à Tel Héléf où ils eurent pour guide Halim-Bey. Ces derniers, les emmenèrent aux environs de Djesiré, et là, après avoir égorgé le reste des hommes, violé les filles, enlevé les femmes, tué celles qui résistaient et pillé de façon la plus éhontée, conduirent en poussant les survivantes infortunées, dans un état de dénuement indescriptible.

Les sept cents familles du quatrième groupe, unis de cinq cents familles de Khodortchour furent totalement anéanties dans la plaine de Malatia et leurs cadavres furent brûlés.

Enfin, le cinquième et le dernier troupe était formé de cinq cents familles auxquels étaient venus s'associer trois cents familles de Khodortchour. De cette caravane nous n'avons pu encore avoir ni des nouvelles et ni de trace.

Je parle d'Erzindjan. A notre entrée dans cette ville le quartier arménien était désert. les maisons vides, les portes éventrées, les fenêtres brisées, les papiers et les

ժամացոյցներ, գոհարեղէններ, դրամ եւ տարագրեալներուն վրայ գտնուող ամէն թանկարժէք իր: Շուրջ հարիւր հոգի, չես գիտեր բախտի ինչ դիպուածով, ազատեցան. միւս բոլորը, շուրջ երեք հազար վեց հարիւր հոգի, կացինահար՝ կորստեան մատնուեցան այդ ձորին մէջ քիւրտերու կողմէ: Յաջորդ օր, Մալաթիոյ կառավարիչին կողմէ դրկուած պաշտօնական քննիչ մը, Ատիամանի գալմագամին օգնութեամբ մէկ առ մէկ խուզարկել տուաւ բոլոր կիներն ու երեխաները՝ յափշտակելու համար ինչ որ մնացած էր իբր թանկարժէք առարկայ: Ապա, Թուալիֆ Հարպիէ կոչուած այս քննիչը կողոպտեց տարագրեալներուն պատկանող արժէքաւոր առարկաները, գորս բեռուցած անասուններու վրայ, նոյնպէս տարագրիչներուն պատկանող, փոխադրել տուաւ Մալաթիա: Թէ՛ բարոյապէս եւ թէ՛ ֆիզիքապէս կործանած այս ընտանիքները հասան Եփրատի ափերուն, Սամսատ կոչուող վայրը: Հոս եւս ժամտարմները ջուրին մէջ նետեցին բոլոր հիւանդները: Վերջապէս, հազար եօթը հարիւր ընտանիքէ բաղկացեալ այս կարաւանէն չորս ամիս ետք միայն վաթսուն ընտանիքի բեկորները պիտի հասնէին Սրուճ, բոլորը մահամերձ, հիւանդ ու թշուառ վիճակի մէջ: Մենք պիտի կարենայինք տակաւին երեք տարի հետեւիլ իրենց՝ անապատներու, Ռաքքայի եւ Միջագետքի ընդմէջէն, բայց հարկ է կանգ առնել. հոս ամփոփումներուն ամփոփումն է որ կը կատարեմ:

Երրորդ կարաւանը կը բաղկանար երկու հազար երեք հարիւր ընտանիքներէ: Այս մարդոց մեծ մասը կեցուցին Քեմախի մէջ եւ սպաննեցին ու խեղդեցին [Եփրատ] գետին մէջ: Քիւրտերը [?] լեռներուն մէջ քիւրտ յայտնի ցեղապետ Սէյմար եւ Ատիամանի կառավարիչը նոյնպէս սպաննեցին տղամարդոց մէկ մասը եւ շատ մը կիներ ու աղջիկներ տարին բռնի կերպով: Մնացեալները իրենց ճամբան շարունակելով հասան Թէլ-Հէլէֆ, ուր իբր առաջնորդ ունենալով Հալիմ պէյը, տարուեցան ձեզիդէ: Հոս, մնացեալ տղամարդիկը սպաննելէ, աղջիկները բռնաբարելէ, կիները առեւանգելէ, ընդդիմացողները սպաննելէ եւ բոլորը անպատկառօրէն կողոպտելէ ետք, դժբախտ վերապրողները՝ աննկարագրելի զրկանքներու ենթակայ, տարին Մուսուլ:

Չորրորդ կարաւանին եօթը հարիւր ընտանիքները, որոնց միացուած էին խոտորջուրի հինգ հարիւր ընտանիքները, ամբողջութեամբ բնաջնջուեցան ու դիակները հրկիզուեցան Մալաթիոյ դաշտին մէջ:

Վերջապէս, հինգերորդ եւ վերջին խումբը կը բաղկանար հինգ հարիւր ընտանիքներէ, որոնց վրայ աւելցուցած էին երեք հարիւր ընտանիքներ խոտորջուրէն: Այս կարաւանի մասին ոչ մէկ տեղեկութիւն ունինք տակաւին եւ ոչ ալ անոր հետքը գտած:

[Այժմ] խօսքս Երզնկայի մասին է: Երբ մուտք գործեցինք այս քաղաքը, հայկական թաղամասը ամայի էր,

photographies traînant dans les rues au milieu des bayleurs. Le silence mort et désolé de cette ruine encore fumante nous donna le frisson. Les cadavres jonchaient les champs de sable depuis la sortie de la ville jusqu'aux abords de l'Euphrate. Sur la rive en face, les morts, sans sépulture, gisaient dans les alluvions où flottaient aux angles du fleuve. Au dessus se ces choses sanglantes, sur ce festin de tigre, des corbeaux volaient sinistrement. Cette scène n'a pas besoin d'explication. J'ajouterai seulement que c'est la populace turque d'Erzindjan qui de sa propre main avait exécuté ses massacres. Honneur et gloire à tout jamais!

Notons ici que partout le peuple a eu une part active et féroce dans les tueries qui ont eu lieu. A Erzeroum, la plupart des notables parmi lesquels Ahmed Seifoullah et beaucoup d'autres, qui seront indiqués dans la liste à la fin de ce récit, déployèrent un acharnement féroce. A Baïbourt c'est le peuple qui noya dans le Djorok une partie des arméniens de la ville et massacra le reste aux alentours. Le même peuple était si assoiffé de sang, qu'au moment où les déportés étrangers traversèrent la ville, sachant même que ces derniers allaient à la mort, essayaient de les mettre en pièces malgré l'opposition des gendarmes. A Malatia et sur tout le long de la route, nous trouvions partout des turcs animés de la même fureur.

Et maintenant voyons les résultats. En dehors des 42.000 Erzeroumiotes qui se trouvaient déjà au Caucase et en Amérique où ils y étaient passés durant la mobilisation, voici ce que reste des 173.000 arméniens qui ont été déportés:

- A Mousoul 1.600 personnes femmes et enfants
- A Ourfa et Alep 1300 » » »
- Epars çà et là 2200 » presque toutes »

Pour ce qui est des fortunes, elles devinrent toute la proie tantôt du gouvernement turc tantôt du peuple. Seules, quelques familles d'Erzeroum confièrent à la Banque Ottomane une partie de leur argent et de leurs bijoux qu'elles n'ont pas encore retirés jusqu'ici. Quant aux marchandises dont les prix allaient haussant depuis la mobilisation et auxquelles par suite de ce motif, les commerçants avaient versé tous leurs capitaux, elles furent pour la plupart laissées dans les magasins. Quelques uns cependant, précaution inutile, déposèrent des colis dans les églises, qui devaient être scellés par la Banque Ottomane ou les confièrent aux missionnaires protestants. Malgré tout cependant, les

բնակարանները պարապ, դռներն ու պատուհանները ջախջախուած, թուղթերն ու լուսանկարները փողոց թափուած: Մահացած, լքեալ ու դեռ ծխացող այս աւերակներուն տեսքը սարսուռ պատճառեց մեզի: Դիակներով լեցուն էին աւազի դաշտերը, քաղաքին շրջակայքը մինչեւ Նփրատի ափերը: Դիմացի ափին, տիղմի ու ջրափոսերու մէջ պառկած անշիրիմ մարմիններ: Բոլոր այս արիւնալի բաներուն վերեւ, չարաշուք կերպով կը սաւառնէին ագռաւները, գազանային խնճոյքի մը ախորժակով: Բացատրութեան չի կարօտիր այս տեսարանը: Պիտի աւելցնեմ միայն որ Նրզնկայի թրքութիւնը իր սեփական ձեռքերով իրագործած էր այս կոտորածները: Յաւերժ փառք ու պատիւ իրեն...

Նշենք այստեղ որ ամէնուր [թուրք] ժողովուրդը գործօն մասնակցութիւն ունեցած է տեղի ունեցող այս ահուկի ջարդերուն մէջ: Էրզրումի մէջ շատ մը երեւելի անձնաւորութիւններ, որոնց կարգին Ահմէտ Մէյֆուլլահ եւ շատ ուրիշներ (անոնց անունները պիտի յիշուին այս պատմութեան աւարտին) կատաղի մոլեգնութիւն ցուցաբերեցին: Բաբերդի մէջ ժողովուրդն է որ ձորով գետի մէջ խեղդամահ ըրաւ քաղաքի հայերուն մէկ մասը, եւ մնացեալը ջարդեց մօտակայ վայրերուն մէջ: Միեւնոյն ժողովուրդը այն աստիճան արիւնարբու գտնուեցաւ, որ երբ տարագրեալները քաղաքէն կ'անցնէին, գիտնալով հանդերձ որ մահուան կ'առաջնորդուին անոնք, եւ հակառակ ժանտարմներու ընդդիմութեան, փորձեցին կտոր-կտոր ընել զանոնք: Մալաթիոյ մէջ եւ ամբողջ ճամբու ընթացքին, ամէն տեղ կը հանդիպէինք միեւնոյն կատաղութեամբ մոլեգնած թուրքերու:

Այժմ տեսնենք արդիւնքները: Բացի այն 42000 էրզրումցիներէն որ արդէն կովկաս եւ Ամերիկա կը գտնուէին, եւ կամ հոն մեկնած էին գորակոչի շրջանին, ահա թէ ինչ կը մնայ այժմ 173.000 տարագրեալ հայերէն.—

- 1.- Մուսուլ — 1600 հոգի, կին եւ երեխայ
- 2.- Ուրֆա եւ Հալէպ — 1300 հոգի, կին եւ երեխայ
- 3.- Յրուած հոն ու հոն — 2200 հոգի, գրեթէ բոլորը կին ու երեխայ:

Ինչ կը վերաբերի հարստութիւններուն, ասոնք բոլորը գոհ դարձան շուտով կամ թուրք կառավարութեան եւ կամ ժողովուրդին: Էրզրումի մէկ քանի ընտանիքներ միայն Օսմանեան դրամատան վստահած էին իրենց դրամին մէկ մասն ու գոհարեղէնները, զորս մինչեւ այսօր չեն կրցած վերստանալ: Գալով ապրանքներուն, որոնց գիները գինակոչէն ի վեր կը բարձրանային եւ այդ իսկ պատճառով վաճառականները իրենց ամբողջ դրամագլուխը անոնց կը կապէին, մեծ մասը մնաց վաճառատուներուն մէջ: Այսուհանդերձ ոմանք (աւերորդ զգուշաւորութիւն) սնտուկներով ապրանք (Օսմանեան դրամատան կողմէ կնքուած) գետեղեցին ե-

déportés prenaient avec eux beaucoup de richesses. Seul le second troupe de la ville versa le long des routes des biens dont la valeur dépassa de beaucoup un million livres turques.

Avant de terminer, donnons une liste approximative de la fortune arménienne du vilayet:

1) Commerçants	7.300.000 livres turques		
2) Fonctionnaires	1.000.000	»	»
3) Les trois grandes monastères			
avec 37 d'autres	850.000	»	»
4) L'Eglise d'Erzeroum avec ses écoles, marchés, antiquités, cimetières etc.	310.000	»	»
5) L'Eglise Catholique	50.000	»	»
6) L'Eglise Protestante	10.000	»	»
7) Les 372 églises des villages avec tous leurs biens	581.000	»	»
8) La fortune des paysans environ 19.000 familles	5.730.000	»	»
9) La fortune des artisans environ 8380 familles	1.672.000	»	»
Au total dix sept millions cinq cent trois mille			
	17.503.000 livres turques		

Voici à présent la liste des principaux personnages qui ont joué des rôles importants dans ces exécutions:

- 1) Tahsin Pacha, gouverneur d'Erzeroum
- 2) Husséin Bey, mutessarif de Malatia
- 3) Chakir Bey, chef du club arriviste d'Erzeroum

[Ainsi de suite les noms de 40 malfaiteurs, – gouverneurs de vilayets et villes, préfets de police, chefs du parti Ittihad ve Terrakki, etc.].

Nous ne donnons ici que les noms des personnes que nous connaissons pour avoir été en rapport avec eux. Ceux qui ont commis les atrocités à Erzindjan, Khenous, Baïbourt, etc. nous restent inconnus, car il ne reste aucun survivant de ces régions.

ALPHONSE ARAKELIAN
Déporté d'Erzeroum et témoin oculaire
de la plupart des événements du récit

Alep, le 24 février 1919

կեղեցիներու մէջ, կամ յանձնեցին բողոքական միսիոնարներուն: Հակառակ այս բոլորին, տարագիրները իրենց հետ կը տանէին շատ մը հարստութիւններ: Միայն առաջին կարաւանը ճամբու ընթացքին մէկ միլիոն թրքական ոսկի գումարի արժողութեամբ իրեր յանձնեց:

Նախ քան աւարտելը, տանք նահանգի հայերուն հարստութեան մօտաւոր ցուցակը:

1) Մեծ ու փոքր վաճառականներու ունեցուածքը	7.300.000	թրք. ոսկի	
2) Պաշտօնեաներու ունեցուածքը	1.000.000	»	»
3) 3 մեծ վանքերու եւ այլ 37 վանքերու ունեցուածքը	850.000	»	»
4) Էրզրումի եկեղեցի իր դպրոցներով, շուկաներով, հնութիւններով, գերեզմանոցով եւ այլն	310.000	»	»
5) Կաթողիկէ եկեղեցին	50.000	»	»
6) Բողոքական եկեղեցին	10.000	»	»
7) 372 գիղական եկեղեցիները իրենց ինչքերով	581.000	»	»
8) 19.000 գիղական ընտանիքներու հարստութիւնը	5.730.000	»	»
9) 8380 արհեստաւոր ընտանիքներու հարստութիւնը	1.672.000	»	»

Ընդամենը 17 միլիոն հինգ հարիւր երեք հազար 17.503.000 թրք. ոսկի

Ահաւասիկ անուանացանկը այն գլխաւոր անձնաւորութիւններուն, որոնք կարեւոր դերակատարութիւն ունեցան տեղի ունեցած ոճիրներուն մէջ:—

- 1) Թահսին փաշա, էրզրումի կառավարիչ
- 2) Հիւսէին պէյ, Մալաթիոյ միւթեսարըֆ
- 3) Շաքիր պէյ, էրզրումի իթիֆհատական ակումբի պետ

[Եւ շարունակաբար 40 անուններ զանազան քաղաքներու կառավարիչներուն, քաղաքային պաշտօնեաներու, զինուորականներու եւ այլն]:

Կու տանք անունները միայն անոնց, զորս կը ճանչնանք եւ որոնց հետ յարաբերած ենք: Անոնք որ գազանութիւններ գործած են Երզնկայի, Խնուսի, Բաբերդի եւ այլ վայրերու մէջ, անձանօթ են մեզի որովհետեւ այդ շրջաններէն ոչ մէկ վերապրող կը մնայ:

ԱԼՖՈՆՍ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Տարագրուած էրզրումէն եւ ականատես վկայ պատումին մէջ նշուած դէպքերու մեծ մասին

Հալէպ, 24 փետրուար 1919

Փաստ. 1407-45

Ե 2.- ԱՄԲԱՍՏԱՆԱԳԻՐ – ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍԵՐԱՍՏԻՈՅ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Սերաստիոյ կուսակալութեան սահմանները.— Կարին, Խարբերդ, Հալէպ, Ատանա, Անգարա, Գասթեմունի, Տրապիզոն:

Գաւառի բաժանում.— Սվազ, Ամասիա, Թոքատ, Շ[ապին] Գարահիսար:

Գաւառակի բաժանում.— Հաֆիզ, Քոչկերի, Տիվրիկ, Գանկալ, Ելտրզէլի, Թօնուս, Կիւրին, Տարէնտէ, Աշոտի², Ազիզէ:

Բնակչութիւն.—

Սերաստիա	զուտ հայ	5000 տուն	32000 անձ
Հինգ գիւղեր	» »	1025	» 7175 »
Հաֆիզ 21 գիւղերով	» »	3675	» 25725 »
Գոչկերի 7 գիւղերով	» »	1410	» 9870 »
Տիվրիկ 13 գիւղերով	» »	1750	» 12250 »
Գանկալ 7 գիւղերով	» »	935	» 6545 »
Ելտրզէլի 6 գիւղերով	» »	390	» 2730 »
Թօնուս 35 գիւղերով	» »	4990	» 34930 »
Կիւրին	» »	5000	» 35000 »
Տարէնտէ } Աշոտի } Ազիզէ }	» »	800	» 5600 »
	» »	400	» 2800 »
			144.625
Վերադարձողներ			5.000
Բնաջնջուած			139.625

Բռնագաղթը.— 1914 Նոյ. 19-ին Տ. Սահակ վրդ. Օտապաշեան կը սպաննուի Սվազ-Երիզա ճամբուն վրայ Շ[ապին] Գարահիսարի Ազուկիս գիւղին մօտ, Սվազէն զրկուած 5 չեթաներու ձեռքով: Անոնք են.— Քիւթիկի տղայ Հիւսէին, Զառացի Մահիր, Զառացի Քէօր Քասարմի տղայ եւ ընկերները: Ասիկա կ'ըլլայ հայկական հալածանքի ազդանշանը:

1915 Մարտ 28 — գերի ոռու սպաներէն մին կը փախչի: Ասիկա իբր պատրուակ՝ կը ձերբակալուին ծանօթ հայեր, որոնք 40-50 օր բանտարկուելէ եւ սոսկալի տանջանքներու ենթարկուելէ յետոյ կը զրկուին Եֆնի խանի Կէրմոզատի կաղնիի անտառը եւ հոն կը սպաննուին խժոժօրէն: Այս արարքին ներկայ եղած են կուսակալ Մուամմէր, Գօլ Օրտուի հրամանատար Բերթէլ եւ Իթթիհատի ներկայացուցիչ Ղանի:

1915 Ապրիլ — Ամասիոյ եւ Մարզուանի կուսակցական պետերը եւ մտաւորականները թուով 17 հոգի,

Սվազ բերուելով Շիֆայի մէտրէսէն կը բանտարկեն երկու շաբաթ, ապա գիշեր մը Շուն-Քոսակի մօտերքը կը սպաննեն, դարձեալ ներկայութեամբ կուսակալ Մուամմէրի: 1915 Ապրիլ, Սվազի գաւառակներէն խումբ-խումբ տեղույն թաղական խորհրդոց եւ կուսակցութեանց անդամներ, առեւտրականներ, մտաւորականներ Սվազ կը բերուին, մի քանի օր բանտարկուելէն վերջ՝ գիշերները Սվազի շուրջ փաշա Չաղէր Չէրչի Տէրէսի եւ այլ տեղեր կը տարուին եւ աներեւակայելի տանջանքներով կը սպաննուին:

1915 Ապրիլ-Մայիս — գիւղերու հալածանքը կը սկսի. Հաֆիզ գաւառակի բոլոր հայ գիւղերուն այրերը, երիտասարդները Գոչ-Հիսարի մէջ կը բանտարկուին. Սվազ բերուած ատեն անոնցմէ մէկ մասը Փոսեր ըսուած տեղը, Պունագի Զորը, Սէյֆի կիրճը եւ Պողագի կամուրջին մօտերը սպաննելէ վերջ, մնացեալը կը բերուին Սվազ, կը լեցուին բանտի փոխուած Կէօվ Մետրէսէ եւ Շիֆայի Մէտրէսէ. գիշերները 50-100 հոգինոց խումբեր կը տարուին քաղաքին շուրջը եւ կը սպաննուին, այնպէս որ գիւղըր տարագրած ատեն ամէն գիւղէ հազիւ մի քանի ծերեր եւ պատանիներ կը գտնուին, ասոնք ալ ճամբան կ'առնէին:

1915 Մայիս-Յունիս — դասալիք հայ զինուորներէն 500-ի չափ յանձնուածներ Անտրէասի կողմերը զրկուած են որպէս ամէլէ թապուրի եւ հոն խժոժօրէն սպաննած են:

1915 Յունիս — Սվազի հայ բնակչութեան գէնքերը կը հաւաքուին:

1915 Յունիս 3 — Սվազի շուկայի անցքերը կը բռնուին, մօտ երեք հազար հոգի կը ձերբակալուին, տունները կը խուզարկուին, խուզարկութեանց պահուն գտնուած այրեր կը բանտարկուին: Հետզհետէ բանտարկուած 4000 հոգին Սվազի բռնագաղթէն վերջ Գարլըք կոչուած տեղը գիշերները 50-100 հոգինոց խումբեր տարուելով կ'ոչնչացուին ու կ'անհետանան:

1915 Յունիս 17 — բռնագաղթը կը յայտարարուի: Գիւղերը աւելի կանուխ սկսած էին տարագրուիլ:

2.- Չեռագրին մէջ՝ սխալմամբ Մշոտի: Քիչ անդին տրուած է ուղիղ ձևը:

Գաղթի գիծը եւ հայոց սպանդանոցները եղած են Սվազ – Կօլճիտ – Մաղարա – Գանկա – Ալաճախան – Քէօթի Խան – Հասան Կելէպի – Հէքիմխան – Հասան Պատրիկ – Սուսուլի Եագի – Գրրգ Կէօզ – Ֆրընճըլար – Պէյտաղ եւ Կեռկեռտաղ, (Գանլը Տէրէ, Ջէյնէշ եւ Պետրի քիւրտ պէկերու որջերը)։ Ատը Եաման – Սամուսատ – Կէօզէն – Եփրատ – ... – Սուրուճ – Ուրֆա – Այնիսէ – Վերանչէհի – Րէսուլայն – Սուսուլ – Պէրէճիկ – Պապ – Մամպուճ – Նիսիպ – Ռումգալէ – Այնթապ – Հալէպ – Համա – Հոմա – Շամ – Ռագգա եւ Տէր-Ջօր։

Ամբողջ Սեբաստիոյ նահանգին հայ տարագիր ժողովուրդը, անցաւ այս գծերէն, ենթարկուելով անօրինակ չարչարանքներու ու խժուժ մահուան։ 1915 Յունիս 22 - Յուլիս 7, Սեբաստիայէն ելած է 15 կարաւան։ Թէչիր խանի մօտ ամէն կարաւանի առջեւ ելած են հոն յատկապէս սպասող նիզամի զինուոր չեթէներ՝ հարիւրապետով մը։

Առաջին կարաւանին զրկուած օրը Քէօթի խանը զրկուած է չեթէներու խումբը Էմնիթ քոմիսիոնի անուանով³։

Չեթէ Պաշի՝ էմիր Պէկի տղան՝ Համիտ պէկ
Մուամէրի եավեր⁴ Խալիս բէկ
Պաճանախ Ջատէ էտհէմ պէկ
Թիւթիւնջի Հաճի Խալիլ
Քիւթիւկի տղայ Հիւսէին։

Ասոնք բոլոր կարաւաններու այրերը կը հաւաքէին, կը յանձնարարէին որ հնչուն դրամ, ոսկեայ, արծաթեայ եւ այլ թանկագին առարկաներ յանձնեն իրենց, այնպէս որ իւրաքանչիւր պարխանիէ (կարաւանէ) 6-10 թերքի հէյպէ⁵ ոսկի եւ այլ գարդեղէն կողոպտած են։ Երիտասարդներ ու մտաւորականներ եթէ կային, անպայման վար կը դնէին եւ կը սպաննէին։

Հասան Չէյէպի եղած է ամբողջ Սվազ նահանգի գլխաւոր սպանդանոցներէն մին։ Այրերը կ'առնէին ու գիշերը ձորի մը մէջ կը սպաննէին։ Մաս մ'այրերէն կաշառք առնելով կ'արձակէին յաջորդ կայանին ձգուելու նպատակով։

Հէքիմ-Խան.— Հասան-Չէյէպիէն ազատուող այրերէն հոս առնուած եւ սպաննուած են։ Հոս տեղի ունեցած են աղջկանց ու հարսներու առեւանգումներ եւ ճամբաներու վրայ մասնակի սպանութիւններ։

Հասան-Պատրիկ.— Նախորդ կայանէն ազատուած այրերէն հոս բռնուած եւ չարաչար սպաննուած են։ Առեւանգում, թալան, սպանութիւններ։

Սուսուլի-Եագի.— Քիւրտերու յարձակում ծայրայեղ վայրագութեամբ, սպանութիւն, յափշտակութիւն, առեւանգում։ Սարսափելի ծարաւ, որից շատերը խեղդւած են։

Գրրգ-Կէօզ.— Թօխմա գետին վրայ կամուրջ եւ հա-

մանուն աւան. կարաւաններու կամուրջէն անցած ատեն քիւրտերը կամուրջին քով կեցած, այր, կին, տղայ, աղջիկ գետ կը թափէին. թալան, կոտորած։ Գետը արիւնից կարմրեցաւ։ Կարաւանի փոխադրութեան միջոցները ամբողջապէս գրաւուեցան, այնպէս որ հիւժած-մաշած խեղճերը ստիպուած էին ունեցած-չունեցածսին հոն ձգել եւ ուտելիքսին ուտելու վրայ կրել։

Մալաթիայի, էսկիշէի արջեւէն անցած ատեն, քրտական յարձակում եւ կողոպուտ։

Ֆրընճըլար.— Սվազէ, Խարբերդէ, Սամսոնէ, Տրապիզոնէ, էրզրումէ եւ այլ տեղէ եկող գաղթականներու կեղրոն-իջեւան։ Ընդհանուր թշուառութիւն, համաճարակ, լքեալ մանուկներ, հիւանդներ, մեռել, դիակ, աղտեղութիւն։ Սարսափելի տեսարան. հիւանդներ ողջող կը թաղուին։ Հոս 8-10 տարեկան տղոցմէ 20000-ի չափ հոտած են աղտեղութենէ եւ բացարձակ թշուառութենէ։ Ֆրընճըլարի մօտ կը գտնուին Ին-Տէրէսի եւ Ճէհէննէմ-Տէրէսի կոչուող ձորեր, որոնք անթիւ-անհամար հայերու գերեզման եղած են. անունները ինքնին սոսկում կը պատճառեն։

Չէյնէլի-Սաբ.— Այն է Պէյտաղ, Կերկէն, Գպլազ։ Հաստամիստի, Մալաթիայի, Ատեամանի, Քէախտէի միջեւ. Ֆրընճըլար հասնող կարաւանը ասկէ կ'անցնէր։ Տաժանակիր անցք։ Հաստամիստի իշխողներ, քիւրտ Ջէյնէլ, Պետրի-Հայտար, Ալի պէկեր, իրարու եղբայր ու ազգական, անգթութեան տիպարներ, կարաւանին մէջ մնացող այրերը առնելով, Գանլը-Տէրէի մէջ ջարդած են։ Քիչ կողոպուտէ վերջ ասոնց ձեռքը անցնող կարաւաններ սոսկալիօրէն կողոպտուած են, այնպէս որ այս քիւրտերը հարիւր հազարաւոր ոսկիներու եւ թանկագին առարկաներու տիրացած են։ Բազմաթիւ հարսեր ու աղջիկներ բռնաբարուած են։ Ասոնց թերին յաջորդաբար լրացուցած են ուրիշ պէկեր։ Էրզրումցի կարաւանէ մը 1300 հոգի ջարդած եւ 100000 ոսկի յափշտակած են։ Չէյնէլի եւ Պետրի առած հնչուն ոսկիները 30 հատ կագի թէնեքէ լեցուցած են։

Ատրեաման.— Երբեմն այս գծով ալ անցուցած են կարաւաններ. անգամ մը հոս 800 ծերեր եւ տղաներ այրած են շէնքի մը մէջ փակելով։

Եփրատ.— Եփրատէն անցնելու համար կային անցքեր։ Սամուսատի անցք, Գարագատրդ եւ Կէօզէնի անցք։ Գետանցքի պահուն իւրաքանչիւր անհատէ վարձ կ'առնուէր խոշոր քանակով։ Նաւակին մէջ բոլոր գաղթականները անխտիր կը մերկացնէին. շատեր գետը կը նետէին։ Միւս եզերք հասնելէ վերջ հարսներ եւ աղջիկներ կ'առեւանգէին։ Քիւրտերու վկայութեամբ հոս 53000 հոգի սպաննուած եւ գետը թափուած են։

Սամոսատին մօտ Օլին ըսուած վայրին մէջ կարա-

3.- Ապահովութեան յանձնախումբ։
4.- Թիկնապահ, համարգ։
5.- Խորջին։

լաններէն մին ամբողջովին այրած են եւ մոխիրները մաղելով գոհերուն կլլած ոսկիները հանուած են: Բազմաթիւ կանայք եւ աղջկերք ինքզինքնին Եփրատ նետած են:

Սուրուճ.— Կարաւանները ամենախեղճ դրութեան մէջ հոս հասած կ'ըլլային: Համաճարակը մեծ աւեր կը գործէր հոս: Սուրուճի հիւանդանոց ըսուած խանը 27000 հոգի մեռած են: Հոս պաշտօնեաներ կ'առեւանգէին հարսեր եւ աղջիկներ:

Արապ-Փուլնաբ.— Սեբաստիոյ նահանգի 25000ի մօտ բազմութիւն մը ամբողջ մէկ ամիս մնացած են հոս, աննկարագրելի թշուառութեան մէջ: Համաճարակը ահագին աւեր գործած է. անծայրածիր խեղճութիւն եւ թշուառութիւն: Այստեղէն երկու գիծի բաժնուած է գաղթումը: Ա. գիծ Պէրէճիկ, Նիսիպ, Ռումգալէ, Այնթապ, Պապ, Մուսպուճ, Հալէպ, Ռաքքա, իսկ Բ. գիծը՝ Եփրատ, Ուրֆա, Վերանշէհիր, Րէս-իւլ-Այն: Այս վերջին գծով անցնող սեբաստացի 7/8 կարաւաններու կիներ, աղջկերք, տղայք, ամբողջ առեւանգուած են, հագիւ 10-15 կանայք տեղ հասած են! Սուրուճի, Ատեամանի, Րաքքայի, Ուրֆայի շրջակայք, Մալաթիայի շրջակայք, թուրքերու, քիւրտերու եւ արաբներու մօտ Սեբաստիոյ նահանգէն բազմաթիւ կանայք, հարսներ, աղջիկ եւ տղայ մնացել են:

Սեբաստիոյ մէջ մնացած 3000 ամելէ-թապուրիէն 2500 հոգին բռնագաղթէն վերջ Շար-Գշայի ճամբուն վրայ Գայա-Տիպի ըսուած տեղը սպաննուած են: Իսկ մնացած 500 հոգին կ'աշխատցնէին: 15-20 ընտանիք թրքանալով յաջողած են տեղերնուն մէջ ողջ մնալ, իսկ գիւղերը բոլորովին ամայացած են:

Հայ ժողովրդեան շարժուն ու անշարժ կալուածքն ու հարստութիւնը կողոպտելէ ու բռնագրաւելէ զատ, կողոպտուած են նաեւ բոլոր վանքեր, եկեղեցիներ, որոնցից ոմանք բոլորովին քանդուած են: Գերեզմանաքարերէն պետական շէնքեր շինած են. վերջապէս հայր բնաջնջելու եւ նրա հետքն անգամ չորցնելու ամէն ճիգ թափուած եւ միջոցներին մէջ խտրութիւն դրուած է:

Սեբաստիա իբրեւ պատմական քաղաք եկեղեցիներու եւ վանքերու կողմէ շատ հարուստ էր: Ունէր եօթ վանքեր՝ Ս. Նշան համբաւաւոր վանքը, ուր կը գտնուէր Արծրունի Սենեքերիմ թագաւորի արքայական թագն ու գահը, հնութեան տեսակէտէ մեծ արժէք ունեցող: Ս. Հրեշտակապետ՝ անբաւ հարստութեան տէր, Անապատի վանք, Խնդրակատար, Ս. Յակոբի վանք, Դեւոնցա-վանք եւ Ս. Թագաւորի վանք:

Սեբաստիա ունէր նաեւ հինգ եկեղեցի. Մայր եկեղեցի, Ս. Սարգիս, Ս. Փրկիչ, Ս. Մինաս, Ս. Գէորգ: Կար նաեւ Քառասուն մանկանց նահատակավայր լիճը: Ասոնցմէ զատ Սեբաստիա ունէր 14 դպրոցներ, Սանա-

սարեան վարժարան՝ որ նոր փոխադրուած էր, Ազգ. հիւանդանոց, Որբանոց եւ բարեգործական ընկերութիւններ:

Հայ կաթողիկոսներ նաեւ ունէին Ս. Վլաս եկեղեցի շատ հարուստ եւ վարժարան մը՝ աչքաուռ պիւտճէով մը:

Վնասներ.—

Վաճառականական ապրանք, շարժուն, անշարժ ստացուածք, շէնքեր՝ (մեծամասնաբար քանդուած եւ այրուած)	5,000,000
Հունձքի, լուծքի վնաս նուազ չափով	2,000,000
Վանք-եկեղեցիներու հնութիւն-հարստութիւնք, վարժարանաց եւ բարենպատակ հաստատութեանց կորուստներ, բոլոր գիւղերու փճացած հունձքեր, գրաւած արմտիք, արտեր՝ շարժուն ստացուածք, եկեղեցական գանձեր	20,000,000
	27,000,000

Կաթողիկ դպրոցի եւ եկեղեցւոյ վնասները հոս չեն հաշուուած: Ասոնցմէ դուրս կը մնան ընտանեկան զարդեղէն հարստութիւնք, երկաթուղիի եւ վիճակահանութեանց արժեթղթեր եւ կեանքի ապահովագրութիւնք, որոնք պզտիկ հարստութիւն մը չէին կազմեր, այո՛, խիստ!

Սեբաստիոյ տեղահանութեան ու ջարդի գլխաւոր կազմակերպիչներն ու ջարդարարները.—

Մուսամէր պէյ, կուսակալը
Խալիլ պէյ, ժանտարմ. քօմ.

[Կը հետեւին անունները գլխաւոր պատասխանատուներուն եւ ջարդարարներուն, ընդամենը 58 հոգի]⁶:

ԱՄԱՍԻԱ

Ամասիա.— Սեբաստիոյ հիւս. արեւմտեան կողմ, Իրիս գետի եզերքին պատմական հին քաղաք, բարեբեր դաշտերով եւ ընդարձակ ու բարեբեր պարտէզներով օժտուած:

Գաւառակի բաժանում.— Մարզուան, Մէճիտ Էօզի, Հավզա, Վեզիր Քէօփրիւ, Լատիք, Կիւմիշ-Հաճի Քէօյ:

Բնակչութիւն.—	
Մարզուան գուտ հայ 2500 տուն	17500 անձ
Մէճիտ Օէզի » » 200 »	1400 »
Վէզիր Քէօփրիւ » » 600 »	4200 »
Լատիք » » 50 »	350 »
Կիւմիշ-Հաճի » » 1000 »	7000 »
Ամասիա » » 3000 »	21000 »
	51450 անձ
Վերապրողներ՝	1000 »
Բնաջնջուած	50450 »

6.- Stu էջ 347-350, Դ- բաժին:

Տնտեսական վիճակը.— Ամասիա արհեստով վաճառականություն, շերամաբուծություն, եւ ալիւրի գործարաններով հարուստ եւ նշանաւոր քաղաք մ'էր: Անասման դաշտերու արդիւնքը եղող ցորենը գործարաններու մէջ ալիւրի վերածուելով կը փոխարդուէր Սեւ ծովի եզերքը բոլոր քաղաքներ եւ աւելի հեռուն շատ մը ցամաքային քաղաքներ: Շերամաբուծութիւնը այնքան զարգացած էր որ իր ապրանքները ամբողջ հրապարակներու վրայ իսկ հունտերը Կովկասի մէջ մեծ ընդունելութիւն գտած էին եւ բարձր արժէքով կը ծախուէին: Վաճառականական տեսակէտէ եւս խիստ շատ չափազանց յաջողակ էր: Նշանաւոր էր նաեւ աֆիոնի վաճառականութիւնը:

Կալուածք.— Այգիներ ու պարտէզներ ամենամեծ չափով, իսկ ալիւրի խոշոր գործարանները ամբողջապէս հայոց կը պատկանէին:

Զարգացում.— Զարգացման տեսակէտէ եւս օրինակելի վիճակ մը կը ներկայացնէր: Ունէր ազգային վարժարան, ընթերցարան-գրադարան, մամուլ եւ «Ամասիա» թերթը, Իբրանոսեան առեւտրական վարժարան, Ֆրանսիական վարժարան, իր կառավարութեան օժանդակութեամբ ահագին զարկ տուած է մտամշակոյթի! այո՛! չա՛տ!

Վնասներ.—
Վաճառականական ապրանք, շարժուն եւ անշարժ ստացուածք, գրաւուած արմտիք եւայլն
6,500,000 ոսկի
Երեք եկեղեցիներու եւ դպրոցներու կալուածներ, սրբազան անօթներ, սպասներ, զարդեղէն, ձեռագիր մագաղաթեայ գրքեր 1,000,000 ոսկի
Մէծիտ Էօզիւնի ընդհանուր կորուստ եւ վնաս 2,000,000
Հավաքյի » » » 750,000
Լատիքի » » » 250,000
Վէզիր-Քէօփրիւի » » » 3,000,000
7,500,000 ոսկի

Ասոնցմէ դուրս կը մնան Ֆրանս. դպրոցի հարստութիւնը, ընտանեկան զարդիք, ապահովագրութիւնք, երկաթուղու եւ վիճակահանութեան արժեթղթեր, ժողովրդեան կողմէ պանքան ձգուած դրամներ, որոնք վերադարձուած չեն:

Հալածանքը.— 1915 Մարտին կարգ մը ձերբակալութիւններ, իսկ Յունիս ամսուն սկսած է տարագրումը: Այրեր գրեթէ ամբողջութեամբ բանտարկուելէ յետոյ, գիշեր ատեն տարուած են քաղաքի շրջակայ յարմար տեղեր եւ սպաննուած, այնպէս որ Ամասիայի գաղթա-

կանութիւնը իր այդ սիրելեաց դիակներու վրայէն անցած է: Ուղեգրի՞նք եղած է այսպէս.— Թօգատ, Չիֆթլիք — Չըպըզ Քէօյ — Շար Գշլա, ապա սեբաստացոց անցած բոլոր գիծը: Ամէն տեղ զոհ տալով երկու սեռէն, առեւանգեալ փափուկ ներկայացուցիչէ գեղեցիկի, ի ներկայութեան բացէիբաց զանազան բարբարոսաց ու լրբից: Ճամբու ընթացքին հազարաւոր անթաղ դիակներ կոխոտելով, ունեցած է հայն կարեւոյժ սրտաբեկեալ եւ մէկ ամսուան ճամբան ամբողջ վեց ամիս քալելով! միշտ չարչարանքներու եւ աներեւակայելի խժըրժուութեանց ու դաժան մահու ենթակայ:

Կազմակերպիչներ եւ ջարդարարներ.—
Ճէլալ պէյ, միւթեսարըֆը
Օսման Օմարի, ժանտարմի հարիւրապետ

[Կը հետեւին անունները գլխաւոր ջարդարարներուն, ընդամենը 29 հոգի]:

ՄԱՐԶՈՒԱՆ

Մարզուանի գաւառակը ունի երկու գիւղեր.—
I Ենիճէ 150 տուն հայ 1050 բնակչութեամբ
II Քէօր Քէօյ 100 տուն հայ 700 »

Ասոնցմէ հազիւ 40-50 ողջ են:

Տնտեսական վիճակը.— Դրացի քաղաքներու նախանձր գրգռելու չափ չքեղ! ունէին ալիւրի 27-30 խոշոր գործարաններ: Արմտիքի, ալիւրի, թիֆթիկի եւ աֆիոնի խոշոր առեւտուր:

Կալուածք.— Ահագին թուով այգիներ, արտեր, պանդոկներ եւայլն:

Զարգացում.— Մարզուանի հայութիւնը մտաւոր զարգացման մեծ ոյժ տուած էր. զարգացման գործին մեծապէս սատարած է Ամերիկեան գոլէճը: Հայերը միսիոնարներու հետ մրցելով՝ խիստ մեծ զարկ տուած էին զարգացման: Եկեղեցի մ'ունէին այնքան հարուստ իր ոսկիէ եւ արծաթէ զարդեղէններով, ադամանդակու թագերով, քահանայական ծանրագին զգեստներով, անօթներով, սպասներով եւայլն:

Օգնիկեան մատենադարան մը շատ հարուստ, բազմաթիւ արժէքաւոր գրքերով, նաեւ մամուլ՝ «Հայկուներ» կիսամսեայ հանդէս:

Վնասներ.—

Վաճառականական, շարժուն, անշարժ կալուածք եւ գրաւուած զանազան ապրանքներ՝	3.500.000
Ալիւրի գործարաններ 32 հատ	3.000.000
Եկեղեցական շարժուն-անշարժ հարստութիւն	1.000.000
Ս. Աստուածածին չափազանց նշանաւոր վանքը	2.000.000
	9.500.000

Օգնիկեան մատենադարանի վնասը եւ Ս. Սահակ եւ Ս. Հռիփսիմէ Ազգ. երկսեռ վարժարանք՝ 25.000

Ասոնցմէ դուրս կը մնան կանանց զարդեր, վիճակահանութիւն, ապահովագրութիւններ, Ամեր. վարժարան եւ հիւանդանոց, կաթոլիկ հայերի 2 եկեղեցի, ժրգուիթների խոշոր վարժարանը, բողոքականաց ժողովարանի հսկայ շէնքը եւ այլն:

ԿԻՒՄԻՏԵ ՀԱՃԻ ՔԷՕՅ

Մարզուանէն մէկուկէս ժամ հեռու քաղաք մը, որու բնակչութիւնը գրուած է Ամասիոյ մէջ:

Նշանաւոր է իր արտադրած աֆիոնով եւ շինութեանց համար ատաղձներով ու նաեւ կանեփով, որմէ պատրաստուած չուանի վրայ ահագին գործառնութիւն կայ:

Այս քաղաքի հայութենէն 40 հոգի կաշառք տալով հազիւ յաջողած են՝ իսլամանալ եւ մնալ տեղերնին, իսկ տարագրուածներէն այսօր կ'ապրին միմիայն երկու կանայք:

Վնասներ.—

Վաճառականական ապրանք եւ դրամագլուխ	1.500.000
Շարժուն-անշարժ կալուածք	1.000.000
Եկեղեցական եւ դպրոցական շարժուն ու անշարժ կալուածք	550.000
	3.050.000

Ասոնցմէ դուրս են զարդեղէններ եւ արժեթղթեր: Բոլորովին փճացած է Եհնիճի գիւղը: Բոլորովին փճացած է Քէօր-Քէօյը: Հաճի գիւղն ալ ասոնց կարգին կարելի է դասել:

Չարգարարներ, թելադրիչներ.—

[Կը հետեւիմ աւելի քան 50 ջարդարարներու անուններ]:

ԹՈԳԱՏ

Սեբաստիոյ ամենահարուստ քաղաքներէն մին: **Գաւառակի բաժանում.—** Նիկսար, Հէրիկ, Զիլէ: **Բնակչութիւն.—**

Թոգատ	գուտ հայ	4000	տուն	28000	անձ
Շրջակայ գիւղերը	»	»	750	»	5250
Արտօվա ութ գիւղեր	»	»	2150	»	15050
Ղազովա վեց գիւղեր	»	»	950	»	6650
Հէրիկ գուտ հայութիւն			400	»	2800
Զիլէ	»	»	1100	»	7700
Նիկսար	»	»	800	»	5600
					71050
					անձ
					Վերապրողներ հազիւ
					800
					»
					Բնաջնջուած
					70250
					»

Տնտեսական վիճակ.— Թոգատ վաճառականական կարեւոր քաղաք մըն էր: Ունէր շահու չորս գլխաւոր աղբիւրներ. եազմայի, պղնձեղէնի, ծխախոտի ու շերամաբուծութեան գործերը: Այս պատճառով յարաբերութեան մէջ էր Անատոլուի գրեթէ բոլոր քաղաքներու հետ: Զիլէի մէջ կար աֆիոնի խոշոր արտադրութիւն:

Կալուածք.— Երկու համբաւուած արգասաբեր ու մշակուած դաշտեր.— Արտ Օվա եւ Ղազ Օվա, որոնք մեծամասնաբար հայերու կը վերաբերէին: Ահագին քանակութեամբ այգիներ. կարելի է ասել՝ իւրաքանչիւր տուն երեք այգի! Մէ'կ հատի տարեկան բերքի հասոյթով՝ կարելի է ընտանիք մը ապրեցնել երկո՛ւ տարի! Դժբախտաբար այսքան արգասաբեր տեղեր այսօր խոպանացած, այգիներ՝ մեծաւ մասամբ քանդուած, իսկ մնացեալ փոքր մասն ալ գրաւուած տաճիկներէ:

Չարգացում.— Չարգացման տեսակէտէ ալ բաւական յառաջացած էր, մանաւանդ վերջին ժամանակներս:

Եկեղեցական.— Թոգատ ունէր երկու հարուստ վանքեր. Ս. Յովակիմ-Աննա եւ Ս. Յովհան-Ոսկեբերան: Ունէր նաեւ եօթ եկեղեցիներ, ամէնէն նշանաւորը Ս. Լուսաւորիչ եկեղեցին, որուն պատերը ամբողջովին յախճապակեայ էին: Եւրոպացի հնագէտ մը ջանացած էր այդ պատերը գնել 1 1/2 միլիոն ոսկիով, սակայն, աւա՛ղ, այո՛, ի գո՛ւր, չէ՛ր յաջողել!

Վանքերն ու եկեղեցիները ունէին հնութեանց տեսակէտէ խիստ արժէքաւոր գրքեր: Եւրոպացի հնագէտներ խիստ չափազանց շատ անգամ այցելած եւ բուռն մեթոտով ուզած են գնել այդ գրքերը, սակայն չբեղ եղանակով ի գուր! միայն մի հոգի յաջողել է մի կտոր գիրք գնել, որը մի Փրանսացի ֆիլոլոգի⁷ խիստ օգտակար եղած է:

7.- Բանասերի:

Վնասներ.

Վաճառականական ապրանք, դրամագլուխ, չարժուկ-անչարժ կալուածք	8.500.000
Եկեղեցական հարստութիւն, Ս. Լուսաւորչի միայն պատերը	1.500.000
Եօթ եկեղեցիներու բոլոր ոսկեղէն, արծաթեղէն զարդեր, անօթներ, զգեստներ եւ իբրեւ վանքերու կալուածք, ադամանդակուռ թագեր եւայլն	5.500.000 15.500.000

Ասոնցմէ դուրս կը մնան կաթոլիկ հասարակութեան եւ ժողովրդներու եկեղեցիներ, դպրոցներ, որոնք Ֆրանսական կառավարութեան անմիջական հովանուներքեւ էին: Դուրս թողուած են նաեւ ընտանեկան զարդեր, երկաթուղիի եւ վիճակահանութեանց արժեթղթեր, ապահովագրութիւններ:

Հալածանք.— 1915 Յունիսին ձերբակալուած են բոլոր աչքառու անձնաւորութիւններ, ժամանակ մը յարաբերութենէ զուրկ վիճակով քաղաքին մէջ բանտարկուած, ապա օր մ'ալ անհետացած:

Յանկարծ օր մը բոլոր այրերը հաւաքելով շարանշարան իրար են կապել եւ տարել ու սպաննել, աննկարագրելի տանջանքներով: Յետոյ ամբողջ ժողովուրդը ճամբայ են հանել, ճիշտ նոյն մեթոտներով՝ որոնք գործադրուել են Սեբաստիոյ միւս նահանգներում:

Ուղեգրի:— Չիֆթիլիկ— Ենի-Խան — Չպուզ — Շար Գըշլա եւայլն:

Առեւանգում, բռնաբարում ու սպանութիւն գործադրուել են ծայր աստիճան վայրագութեամբ:

ԿԻՒՐԻՆ

Բնակչութեան մասին Սեբաստիոյ ցանկին մէջ տեղեկութիւն տրուած է:

Տնտեսական.— Ժողովուրդը ընդհանրապէս արհեստի նետուած ըլլալով, բուրդեղէն գործուածքներու եւ կերպասներու մէջ շատ յառաջ գացած էր: Կարող էր մրցել եւրոպական ու պարսկական ապրանքներու հետ:

Վաճառականութեան մէջ ալ պզտիկ տեղ չէր բռներ: Իրենց պատրաստած ապրանքներու սպառման համար յաճախ իրենք քաղաք քաղաք կը շրջէին, որով շատ տեղերու հետ առեւտրական ճոխ յարաբերութիւններ ունէին:

Կալուածական.— Այգիներ, պարտէզներ ու արտեր իրենց արգասաւորութեամբ ու պտղաբերութեամբ ժողովուրդը նիւթական լաւ կացութեան մէջ կը պահէին:

Ձարգացում.— Թէեւ տեղին մէջ չունին առաջացած դպրոց, սակայն զարգացման ճաշակ ունենալով իրենց գաւակները կը զրկէին օտար քաղաքներու բարձր վարժարաններ, որի հետեւանքով Կիւրինը հետզհետէ զարգացման ընթացքի մէջ էր:

Եկեղեցական.— Ունէին 8 եկեղեցիներ, շարժուկ-անշարժ մեծ հարստութիւն:

Վնասներ.

Վաճառականական ապրանք, դրամագլուխ, եւ շարժուկ ստացուածք	2185000
Եկեղեցիներու եւ դպրոցներու վնասներ	20000

Կանացի զարդեղէններու, արծաթեղէններու, ապահովագրութեանց եւ անշարժ կալուածոց արժէքները դուրս թողուած են:

Հալածանք.— Գաղթի գիծը եղած է յայտէս.— Ալպիսթան — Գանլը-Տերէ-Գանի տաղ — Այրուկ Բունար — Կէօք Սուրի եզերքը, Սազին Պօղազ — Ազիզիէ — Կէօպէք Օէրէն — Ֆրընճըլար — Այնթապ — Մարաշ — Ուրֆա — Գարապըլդ — Տէր-Զօր: Կարաւան մ'ալ Համա — Հոմս — Շամ — Հավան:

Մարաշ եւ շրջակայք բազմաթիւ կիւրինցիներ սպաննուած են: Գարասար անուն գիւղը ամբողջովին բնաջնջուած է:

Ձարգարարներ.— Մեհմէտ պէյ, Քեամիլ էֆ. Ավանտախ Զատէ, Օսման, Գասապ Օսման, Ղաթրըճը Մուսթաֆա եւ Աղազա Օղլու Մեհմէտ պէյ:

Շ[ԱՊԻՆ] ԳԱՐԱՀԻՍԱՐ

Ահման.— Սեւ ծովու Կիրասոն նաւահանգիստի հարաւ-արեւելքի կողմ պատմական քաղաք մը, Միհրդատ Պոնտացիի հիմնած Նիկոպոլիսը: Ունի երկու ընդարձակ եւ հարուստ դաշտեր, Ախլար Օվա եւ Շալուր: Այս դաշտերու մէջ կային 30 հայ գիւղեր, կային ամէն տեսակ պտղատու ծառերով պարտէզներ:

Գաւառակի բաժանում.— Անտրէաս, Գօշունիսար, Համերիկ, Ալիճօրա:

Բնակչություն.—

Շապին Գարահիսար	գուտ հայ	950	տուն	6660	անձ
Անտրէաս իր 16 գիւղերով	»	2900	»	20300	»
Շալուրի մէջ 7 գիւղեր	»	1207	»	7910	»
Քաղաքի շրջակայքը 7 գիւղեր	»	1300	»	9100	»
Գօյլու Հիսար	»	25	»	175	»
Համիտիէ իր մէկ գիւղով	»	30	»	210	»
Ալիճօրա	»	10	»	70	»
				44431	
Վերապրողներ հագիւ				430	
Բնաջնջուած				44000	

Վնասներ.—

Վաճառականի ապրանք, դրամագլուխ	1.500.000
Քանդուած գիւղեր, փճացած հունձքեր, գրաւուած հող	5.000.000
Երկու վանքերու, քաղաքի 2 եկեղեցիներու եւ շրջակայ 30 գիւղերու, եկեղեցիներու ընդհանուր հարստութիւնը	3.000.000
	9.500.000
Քաղաքի պարտէզներ, տուններ, խանութներ եւայլն	750.000
Ազգային երկու մեծ քարուկիր պանդոկներ	500.000
	10.750.000

Քաղաքը թնդանօթով քանդուած եւ կառավարութեան կողմէ յատկապէս հրդեհուած, այսօր չորս հատ շէնք ունի միայն!

Ասոնցմէ դուրս կը մնան զարդեղէն, ապահովագրութիւն-վիճակահանութեան եւ երկաթուղային արժեթղթեր:

Տնտեսական դրութիւն.— Արհեստ ու վաճառականութիւն, մեծամասնաբար հայոց ձեռքն էր. ժողովուրդը բաւական բարեկեցիկ. յաճախ Սեբաստիոյ, ինարբերդի եւ ուրիշ քաղաքների առուտուրը այստեղ կ'անցնէր, որով յիշեալ քաղաքների հետ առեւտրական յարաբերութիւն կար:

Հալածանք.— Քաղաքը ապստամբած է Յունիս 9-10-ին: Բերդը ապաստանած եւ մօտաւորապէս 15000 զինուորի ու կառավարութեան կողմէ յատկապէս զինուած բազմաթիւ բաշխօգուզներու դէմ 250-300 հոգով 28 օր հերոսաբար կռուած են գարահիսարցիք: Այս անհաւասար ոյժի սարսափելի բախումէն վերջ, քաջ ու մարտիկ ժողովուրդը ստիպուած է տեղի տալ փայտի⁸ չգոյութեան պատճառաւ: Երեք խումբեր, 30-40 հոգինոց, արհամարհելով թշնամիին ոյժը, ճեղքած անցած են, որոնցմէ ապրողներ կան տակաւին, իսկ մնացած ժողովուրդէն քահանաներ եւ երիտասարդներ ողջ-ողջ այրուած ու զանազան տանջանքներով սպաննուած են, իսկ ողջ մնացող կանայք, երեխաներ ու աղջիկներ տարագրուած են: Ասոնցմէ խոշոր մաս մը Ակնայ մօտ գետին քով մի խոռոչի մէջ սպաննուած ու գետը նետուած են: Մաս մըն ալ մինչեւ Տէր-Ջօր ճամբորդած են, բայց ճամբու ընթացքին փճացել են:

Կալուածք.— Թէեւ քաղաքի մէջ հայեր անշարժ կալուածք բազմաթիւ չէին, սակայն շատ պարտէզներ ունէին:

Չարգարարներ ու կազմակերպիչներ.— Փաստաբան Էտհէմ պէյ, Քէլ Հասան:

Ահագին տարածութեան վրայ երկու բերրի դաշտերը գրեթէ ամբողջութեամբ հայոց կը վերաբերէին: Անդրէասի շքեղ այգիները կը պատկանէին հայերուն դրացի ազգաց նախնանք շարժելով:

[Կը հետեւին ջարդարարներու 12 անուններ]:

Չարգացում.— Շ. Գարահիսար ունէր մի լաւ դպրոց: Կը զարգացնէր մի երիտասարդութիւն, ընթերցարան, գրադարան: Այս քաղաքը դժբախտութիւն ունեցած է ուրիշ քաղաքներէ աւելի շատ կառավարութեան ճշմունքներուն ենթարկուելու: Չարգացման միջոցներ կ'արգիլուէին, սակայն ի գուր!

Վաւերացում

Եկեղեցական.— Շ. Գարահիսար ունէր երկու շատ հարուստ վանքեր: Արծրունի Սենքերիմ թագաւորի գաւակներու կառուցածը: Հնութեան տեսակէտէ արժանիք ներկայացնող ձեռագիրներ կային այս վանքերուն մէջ:

Սոյն տեղեկագրին ճշտութիւնը (թերեւս իրականէն քիչ մըն ալ նուազ) կը հաստատենք:

Քաղաքին մէջ կային երկու եկեղեցիներ, շատ հարուստ թագերով, զգեստով, անօթով:

Ատենաղայի⁹ [4 ստորագրութիւններ] Վասն Ատենապետի¹⁰ [3 ստորագրութիւններ]

8.- Փայտ՝ հրացան, փամփուշտ իմաստով:

Փաստ. 1407-39

Ե 3.- ԿԵՍԱՐԻԱ ՔԱՂԱՔԸ ՇՐՋԱԿԱՅ ԻՆԸ ԱՐՈՒԱՐՉԱՆՆԵՐՈՎ

I Կեսարիան, այսինքն Հին Կապադոկիոյ մայրաքաղաքը, վերջերս Գաղատիոյ կուսակալութենէն զատուած անկախ կառավարութիւն մ'էր: Իւր արուարձաններն են՝ Թալաս, Տերէվանք, Թաւրուսուն, Կերմիր, Պալակէսի, Էֆքերէ, Նիրզէ, Մանճըրն եւ Մունճուսուն:

II Հայ ազգաբնակչութեան թիւը բռնագաղթէն առաջ.—

- 23000 Կեսարիա քաղաքի բնակչութիւնը.
- 17500 յիշեալ ինը արուարձաններու բնակչութիւնը.
- Ընդամէնը 40.500 հոգի (քառասուն հազար հինգ հարիւր):

III Սոյն ազգաբնակչութենէն (35500) երեսուն հինգ հազար հինգ հարիւր հոգի բռնի կերպով աքսորեցին, իսկ միւս մասը որպէս զինուորի ընտանիք, հռովմէական եւ բողոքական անունով հազիւ (5000) հինգ հազար հոգի, տեղւոյն վրայ վար դրուեցան, զրկուելով իրենց էրիկ մարդիկներէն եւ մանչ զաւակներէն, եւ ապա բռնի իսլամացուցին մնացորդ յիշեալ այրերն ալ:

IV Գաղթականութենէն առաջ եւ վերջը ամէն տեսակ խոշտանգում, գանակոծում, կեղեքում, ալան-թալան, գոյքերու բռնի գրաւում: Ամբողջ մտաւորական եւ հարուստ դասակարգէն եւ նոյնիսկ հոգեւորականներէն 72 հոգի կախաղան բարձրացուցին: 1920 հոգի էրիկմարդիկներէն 1300 հոգին եւ 13 բարթիով տեղահանուած, ընհանրապէս Սեբաստիոյ եւ Կեմերէկի մէջըրը անլուր շարչարանքներով սպաննուեցան: Չոհերուն միւս մասն ալ Տէր Զօրի եւ Ռաս-իւլ-Այնի ջարդերուն ենթարկուած եւ թշուառութեան ու համաճարակի զոհ դացած են:

V Կեսարիոյ եւ շրջակայից գաղթականութենէն մօտաւորապէս երեսուն հազար հոգի (30.000) նահատակուած են:

VI Բացի Կեսարիոյ մէջ բռնի իսլամացումներէն, այժմ վերապրողներու թիւը մօտաւորապէս հինգ հազար (5000) հոգի է, որոնք Սուրիա, այսինքն Դամասկոս, Հալէպ եւ շրջակայները եւ փոքր մաս մըն ալ Գոնիայի կուսակալութեան մէջ կը գտնուին, մեծամասնաբար որբեր եւ այրիներ:

VII Յափշտակուած շարժուն, անշարժ կալուած եւ ստացուածոց քանակը.—

Կեսարիոյ Ս. Կարապետի մայրավանքը, որ 1500 տարուան հնութիւն մըն է. իր մէջ կը պարունակէր ի միջի այլոց Տիւղեան եւ Պէզճեան ամիրաներու թանկագին նուէրներն ու յիշատակները, որոնք ամենամեծ հնագէտներու կողմէ նոյնիսկ գնահատուած են: Սրբազան ոսկի եւ արծաթեայ ոսկեզօծ անթիւ եւ անհամար անօթներ, ադամանդակուռ թագեր, սաղաւարտեայ, մեծարժէք յախճապակեայ քարեր, սատափեայ դուռ եւ Ս. Կարապետի գեղակերտ գերեզմանն ու զմբէթը:

Շարժուն եւ անշարժ գոյքեր եւ ստացուածքներ, որոնց արժէքը կը հասնի մէկ միլիոն օսմանեան ոսկիի (1.000.000)

- Թոմարգայի Ս. Աս[տուածած]նի վանքը
- Տերէվանքի Ս. Սարգիս վանքը
- Պալակէսի Ս. Դանիէլի վանքը 250.000
- Կեսարիոյ հայոց երեք,
- Բողոքականաց մէկ եւ
- Հռովմէականաց մէկ եկեղեցիները 250.000
- Աղքատախնամի խանը եւ կալուածները 150.000
- Ինը արուարձաններու տասնըչորս եկեղեցիները 250.000
- Ազգապատկան կալուածոց հինգ տարուան հասոյթը 100.000

40500 Հայ բնակչութեան ընդհանուր վնասը 22.000.000

Ընդհ. գումար վնասուց՝ քսանչորս միլիոն օսմ. ոսկի

VIII Որչափ որ ամբողջ թուրք ազգաբնակչութիւնը վերջին աղէտներուն ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցած է, սակայն մենք միայն անոր պարագլուխները ստորեւ նշանակել բաւ կը համարենք.—

[Կը հետեւին անունները աւելի քան յիսուն բուրք բարձրաստիճան պաշտօնատարներու, իթթիհատական ղեկավարներու, չեթներու եւ այլն]:

Ինչպէս որ վերի ցանկէն կ'երեւի, հայ բնաջնջման քաղաքականութեան ասոնք իրենց վայրագութիւնը զանազան ձեւերով ի սպաս դրած են:

Ասոնք շրջակայ գիւղերու թուրք ազդեցիկներու հետ միասին, նաեւ հետեւեալներու ընկերակցու-

Թեամբ,— էրքիլիթի Նեճիպ, Ապտուլլահ, Մուհարէմ, Արիֆ օղլի Օսման, Իւզպաշը Նուրի, որոնք հեծեալ ոստիկաններ էին եւ մաս մըն ալ ասոնց ընկերներու հետ Կեմերէկի կողմի ջարդերը ըրած են:

IX Առեւանգուած եւ այլուր գտնուած որբերու եւ այրիներու մասին հետզհետէ տեղեկութիւն հաւաքելով կը տեղեկագրենք:

Կեսարիոյ Ս. Կարապետ վանքի վանահայր՝ ՍՄԲԱՏ ՎԱՐԴ[ԱՊԵՏ] ՍԱԼԲԱՋԵԱՆ

Ի դիմաց Կեսարիոյ եւ շրջակայից գաղթականական յանձնախումբի՝ Ատենադպիր՝ Բ. Յ. ԲԱՍՏՐՄԱՃԵԱՆ Ատենապետ՝ Դ. Կ. ՍՈՒՐՏՈՒԿԵԱՆ

Հանրագրութիւն՝ [Կը հետեւին 77 հոգիի անունները]:

1919 Փետրուար 21, Հայէսպ

Փաստ. 1407-48

Ե 4.— ԿԱՊԱԴՈՎԿԻԱՆ ՀԱՅՈՒՆ Է ԵՒ ՊԵՏՔ Է ՈՐ ՀԱՅՈՒՆ ՄՆԱՅ

Բոլոր եւրոպական մեծ պատմագիրները կը վկայեն թէ Կապադովկիոյ նախկին տէրերը հայերն էին:

Հին արձանագրութիւնները կը ստուգեն թէ Կէմերէկէն մինչեւ Զամընտաւ գետը հայոց սեփականութիւնն է:

Չորս հազար տարուան հիթիթեան արձանագրութիւնները զորս թուրքի պիղծ ձեռքը չէ կրցած եղծանել, կ'ապացուցանեն թէ ամբողջ Կապադովկիան հայունն է:

Կեսարիա Կապադովկիոյ մայրաքաղաքն է. հայոց Աւրամ Թագաւորը զայն հիմնեց եւ իւր Մշակ Զօրավարին յանձնեց: Այսօր 1500 տարուան հայկական հնութիւններով լի է Կապադովկիան:

Հոյակապ եկեղեցիներ, մեծ ու փարթամ վանքեր, ամէն մի քայլափոխի՝ մենաստաններ!

Հայը քանիցս իւր սուրբ արիւնով ողողած է այդ երկիրը. մէն մի մեթրօ հողը քանի՛ քանի՛ հայու արիւնով շաղախուած է!

Թողունք հին դարերու կոտորածները. վկայ են 1895-ի ջարդերը եւ 1914-15-ի բռնագաղթերը, որոնք միջոցին բիւրաւոր հայեր զոհ գացին: Կէմերէկ եւ շրջականերէն հայ չէ մնացած: Զամընտաւի հայկական գիւղերէն ոչ ոք կայ ողջ: Երգիւթի եւ Կեսարիոյ միջեւ գտնուող եւ Պօզաք անուանեալ 60-70 հայ գիւղերէն այսօր հայ մը գտնել կարելի չէ! Հայը իւր սուրբ արիւնով ոռոգած է ամբողջ Կապադովկիան եւ հայէն զատ ո՛չ ոք ի-

րաւունք ունի տէր լինելու այս երկրին:

Եւ եթէ հայի արիւնով ոռոգուած եւ 4000 տարուան հայու սեփականութիւնը հրէշ թուրքի ձեռքը թողուի, ի բոլոր սրտէ 100000 նահատակներու անուամբ եւ ողջ մնացած ափ մը խեղճերու անուամբ կը բողոքեմք եւ ի հարկին կը պատանջեմք որ Կապադովկիան իր ամբողջ շրջանակներով կցուի Մեծն Հայաստանի եւ Կիլիկիոյ, որպէսզի կարելիութիւն ըլլայ կապ եւ յարաբերութիւն ստեղծել Մայր Հայրենիքի հետ:

Կը պահանջեմք նաեւ ամբողջ վնասուց հատուցումն:

Եւ եթէ ցայսօր թափուած հայ արիւնները անբաւական են, մնացած հայերս պատրաստ եմք երթալ ու գրաւել մեր հին ու պաշտելի հողամասերը, մեր մօրենական ժառանգութիւնները:

Հետեւաբար Կապադովկիոյ ամբողջ հայութիւնը, ի գին իւր ազատ եւ աննախընթաց ծովածաւալ զոհողութեանց, կը պահանջէ որ Ամբողջ Կապադովկիան իր շրջանակներով կցուի Մեծն Հայաստանին:

Գաղթականական յանձնախումբի Ատենադպիր՝ Բ. Յ. ԲԱՍՏՐՄԱՃԵԱՆ Ատենապետ՝ Դ. Կ. ՍԱՏՐԱԲԵԱՆ

Հայէսպ, 26 Դեկտ. 1918

Փաստ. 1407-48ա

Ե 5.- ԿԻՐԱԿԻԻ ԲՈՂՈՔԻ ՄԻԹԻՆԿԻՆ ԲԱՆԱՁԵԻԸ

Կիրակի տեղի ունեցավ բողոքի միթինկը նախագահութեամբ տիար Միքայէլ Նաթանեանի: Բանախօսեցին՝ Պ. Պ. Լ. Գարագաշեան, Հայկազուն Արամեան, Մ. Աղազարեան: Պ. Խոսրով Պապայեան կարդաց հետեւեալ բանաձեւը, որ միաձայնութեամբ եւ ծափերով ընդունուեցաւ:

Հալէպի հայոց եկեղեցիին մէջ հաւաքուած հայերս, թուով 4000, յանուն Հալէպի բնիկ եւ տարագիր 40000-է աւելի հայութեան, կը հաստատենք որ՝

Տիգրանակերտի, Մարաշի, Ուրֆայի եւ առհասարակ թրքական տիրապետութեան տակ մնացած շրջաններու մէջ բնակող հայերու դրութիւնը տարբերութիւն չունի զինադադարէ առաջ եղած կացութենէն:

Թուրք կառավարութիւնն ու ժողովուրդը իրենց պատերազմի ընթացքին ցոյց տուած հայաջինջ քաղաքականութիւնը կը շարունակեն մինչեւ այսօր ալ:

Տիգրանակերտի, Ուրֆայի, Կեսարիոյ, Սեբաստիոյ եւ նոյնիսկ Գոնիայի մէջ պատահած դէպքերը, — սպանութիւնները, կառավարական պաշտօնեաներու կողմէ գործադրուած ծեծ, սպառնալիք, բանտ, առեւանգում, կաշառք, սարսափի տիրապետութիւն, գաղտնի գիտում, եւայլն, ցոյց կու տան որ այս վիճակը պիտի շարունակուի եւ աւելի պիտի վատթարանայ, եթէ վճռողական դարման մը չըլլայ:

Այսօր զինադադարի կնքումէն ի վեր անցած է երեք ամիս եւ Թուրքիա դարձեալ դժոխք մըն է վերապրող հայուն համար:

Նկատելով որ թուրք կառավարութիւնը իր գործունէութեամբ եւ գաւառի մէջ տակաւին պաշօնի վրայ թողուած Նուսրէթ բէկերու, Ալի Իհսան փաշաներու նման հայակեր ու ոճրագործ պաշտօնեաներովը իր ջարդի ու թալանի, առեւանգումի ու զարհուրելի արհաւիրքներու սիրահար թուրք տարրովը կ'արատաւորէ մեծ գոհողութիւններով ձեռք բերուած Համաձայնական սուրբ յաղթանակը, ազգերու ազատութեան սկզբունքներու կիրարկումը, անձի ազատութեան, ինչքի ու պատուի ապահովութեան ամենատարրական սկզբունքներու հասկացողութիւնը, կը պահանջեմք Հայ

Ազգային միութենէն:

Դիմել Համաձայնական պետութիւններու Պ. Պ. ներկայացուցիչներուն, Փարիզի Հայ Դահլիճին⁹, Ամերիկայի Պ. Նախագահին եւ բոլոր քաղաքակիրթ աշխարհին, որպէսզի ամենակարճ ժամանակի մէջ կարգադրութիւն ըլլայ ընդհուպ գրաւելու եւ ապահովելու համար Տիգրանակերտը, Ուրֆան, Մարաշը, Կիլիկիան եւ բոլոր հայկական գաւառները, յանուն նորակազմ Հայաստանի, եւ միանգամ ընդ միշտ վերջ տալ թրքական ոճրալից քաղաքականութեան:

Տանջուած ու արիւնաքամ հայ ժողովուրդը, կանգնած իւր անթիւ գոհերուն, հերոսներուն, քաջամարտիկ կռուողներուն յիշատակին առջեւ, դարձեալ պատրաստ է նոր գոհողութիւններու՝ անձով եւ բոլոր կարելի միջոցներով:

ՈՒՐՖԱՑԻՆԵՐՈՒ ՄԻԹԻՆԿԸ ԱՐԵԱՆ ԴԱՏԸ ԵՒ ՊԱՀԱՆՁԸ

Ի վեր հանելով Ուրֆայի պատմականօրէն հայաքաղաք մը ըլլալը, ու անոր հերոսական դիմադրութիւնը տաճկական ջարդի բոլոր թուականներուն, մանաւանդ իր վերջին պատմութեան տարեգրութեանց մէջ նմանը քիչ տեսնուած հայ կնոջ 21 օրուան պայքարը ընդդէմ պաշիպօզուք ու կանոնաւոր զօրագունդերու, առաջնորդուած գերման եւ թուրք ղեկավարութեամբ ու թնդանօթներով, իրաւունք կու տան իրեն պահանջելու՝

1. Ուրֆայի կցումը Մայր Հայաստանի, ի վարձատրութիւն իւր թափած արիւնին:
2. Կռիւլին վերջը օրինական հիմերով անձնատուր եղած մանուկներու, օրիորդներու եւ տիկիներու յանձնումը Համաձայնականներուն, որոնք կը գտնուին թուրքերու մօտ:
3. Բացարձակ վնասուց հատուցում:
4. Ուրֆայի պատմական ողբերգութեան ու անանուն խժոժութեանց կազմակերպիչներէն Ուրֆայի գերման գորգի գործարանի տնօրէն Հէրն Էկհարթի եւ Օսմանեան Բարլամենթի անդամներէն Շէյխ Սավթաթի Համաձայնական ատեանի մը առջեւ դատուիլը:
5. Ուրֆացիներու դարձը դէպի հայրենիք:

9.- Ըսել կ'ուզէ՝ Ազգ. պատուիրակութեան:

Փաստ. 1407-46

Ե 6.- ԱՄԱՆՈՍԻ (ՀԱՍԱՆՊԵՅԼԻ) ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ՈՒԹ ԳԻՒՂԵՐՈՒ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Ամանոսի եւ շրջակայ ութ գիւղերու հայ բնակչութեան թիւը 4000 էր գաղթէն առաջ: Ներկայ թիւն է 1100 հոգի մօտաւորապէս, որուն 770 հոգին ամանոսցի, մնացեալը կը պատկանի Քէշնեղ, Քէլլէր, Քուղճու, Քարասու, Քունէսլէր, Քիւրտպաղլէ, Իյնթէլի եւ Իսլամիէ անուն գիւղերուն: Գաղթէն առաջ Ամանոսը շրջակայ գիւղերով 750 տուն էր: Հիմա միայն 100 տուն կայ, ան ալ կիսաւեր վիճակի մէջ, որոնց 80 տունը կը պատկանի Ամանոսի, իսկ 20-ը մնացեալ վերոյիշեալ գիւղերուն:

Տեղահանութեան առթիւ Ամանոս գիւղի տուած նիւթական վնասուց ցուցակը.—

30000	ոսկի	450	փլած տուներու շինութեան
2000	»	2	փլած եկեղեցիներու »
500	»	2	» դպրոցներու »
5225	»	85	» խանութներու »
1000	»	4	» պանդոկներու »
4000	»	12	» աղօրիքներու »
15000	»	18000	արմատախիլ ծառերու վնաս
100000	»		վաճառական, ջորեպան, գործաւոր 4 տարուան դադարման կորուստ
500000	»		արտերու 5 տարուան եկամուտ
5000	»	400	թալանուած եզներ
8000	»	800	» կովեր
4000	»	2000	» այծեր
4500	»	150	» ձիեր
150	»	5	» գոմէշներ
400	»	100	» աւանակներ
600	»	6000	» հաւեր
25000	»		գրաւուած գոյքեր, կարասիք
1500	»		թուրքերու քով մնացած գարի, ցորեն, եւայլն
4000	»		վաճառականական նիւթեր, ապրանք
3000	»		պահանջներ այլեւայլերու վրայ
4000	»		աղօրիքի 4 տարուան վարձք
5000	»		խանութ եւ փուռերու »
1000	»		պանդոկներու »
20000	»		պարտէզներու եկամուտ
1200	»		այգիներու գին
500	»		այգիներու եկամուտ
7728000	ոսկի գուտ		Ամանոսի վնաս:
300000	»	8	հայ գիւղերու վնաս
1.072.800	ոսկի		
50000	»		չերամի 5 տարուան վնաս
1.122.800	ոսկի ամբողջ գաւառի վնաս		

Ամանոսի եւ շրջակայ ութ հայ գիւղերու ջարդի հեղինակներու անուանացանկը
 [Կը հետեւի 72 անուններ]:

Վերոյիշեալ եօթանասուներկու անձինքն են որ ամբողջ Իսլամիյէի՝ շուրջ հարիւր քառասունհինգ իսլամ գիւղերուն իթթիհասի կազմակերպիչներն են եւ հեղինակները՝ ջարդի, թալանի, առեւանգումի:
 (Բնագրում թուական չի տրուել):

Ի դիմաց Ամանոսի եւ շրջակայ 8 հայ գիւղերու յանձնախումբի՝
 ՄԻՆԱՍ ՍԷՐԽՕՇԵԱՆ, ՊԵՏՐՈՍ ՔԷՇԻՇԵԱՆ
 Ա. Տ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ, ԳԻՒԶԿՈՒՀԱՐ ՇԻՇԵԱՆ
 (Անընթեռնելի ստորագրութիւն)

Փաստ. 1407-47

Ե 7.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԳՈՆԻԱՅԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Գոնիայի կուսակալութեան Ազգէհիր գաւառը կը գտնուի Սուլթան լեռներու ստորոտը, շոգեկառքի գծէն 3 քիլոմետր հեռու: Ազգէհիր ունէր 1000 տունի մէջ 6000 հայ բնակչութիւն, որոնցմէ 700-ը իբր գինուորի ընտանիք քաղաքը մնալով, մնացած 5300-էն 60 նախապէս անհատաբար՝ իսկ մնացած 5240-ը՝ Օգոստ. Սեպտեմբեր ու Հոկտեմբեր ամիսներուն մէջ հանդերձ ընտանեօք աքսորուած են:

Տարագրումի միջոցին ժողովուրդի քաշած նեղութիւններն ու դժուարութիւնները աննկարագրելի են: Տարագրման ժամանակ թուրք ժողովուրդը որքան որ ամէն կերպով օժանդակած է կառավարութեան, այսուհանդերձ քաղաքին հշրաֆները, որոց ցանկը ներփակ կը գտնէք, անյուր խժողութիւններ գործած եւ փճացման նպատակին մեծապէս օգնած են:

Վերագրեալ տարագրեալներէն 4340-ը մեռած են դժբախտաբար: Անօթուլթենէ, սովէ, հալածանքէ եւ սուրի բերնէ ազատուածներու թիւը հազիւ 1960-ի կը հասնի, որուն 300-ը Հալէպ, 460-ը Շամ¹⁰, 200-ը զանազան տեղեր ցիրուցան եղած են, իսկ 960 թւոյն մեծամասնութիւնը կը կազմեն անտէր որբերն ու թշուառ այրիները:

Տարագրեալ 900 ընտանիքներուն տէր եղած շարժուն եւ անշարժ կալուածներուն արժէքը ըստ մեր գնահատութեան 12 միլիոն օսմ. ոսկի կը հասնի, որուն կէսէն աւելին աւերուած ու խաթարուած, իսկ մնացորդը գրաւման օրէնքին մէջ մտած է:

Քաղաքիս մէջ ջարդ չէ պատահած: Քաղաքս պարպուած է Գոնիայի կառավարիչ ձէլալ բէկի բացակայութեանը. ձէլալ պէյը ոգի ի բռին աշխատած է տեղւոյս հայութիւնը չաքսորել, եւ որքան որ յաջողած է նախապէս կայարանը խճողուած աքսորեալները իրենց տեղը վերադարձնել, սակայն տեղւոյս հշրաֆները կուսակալ ձէլալ բէկը¹¹ հրաժարեցնել տալով իրենց յոռի նպատակը ի կատար ածել յաջողած են:

Քաղաքս պարպած միջոցին հշրաֆներէն իւրաքանչիւրը յաջողած է որեւէ միջոցաւ հայերու աղջիկները առեւանգել, որոնց ց'այսօր կը պահեն իրենց մօտ: Եւ այսօր առեւանգուած ըլլալով 100-ի մօտ աղջիկներ Ազգէհիր կը մնան, եւ 200-է աւելի մանուկ, աղջիկ ու կին մինչեւ Տէր Զօր աստ ու անդ կը գտնուին:

1915 Օգոստոս] 20-ին տեղի ունեցած է քաղաքիս պարպումը, մինչեւ էրէյլի թրէնով: Էրէյլի գայմագամ Ֆարի պէյի, փոլիս-գոմիսէր Իզգէթ պէյի, ժանտարմա գոմանտան Միտհատ եւ Էրզէմ բէյերու ժողովուրդին ցոյց տուած դժուարութիւններն ու հարստահարու-

թիւնները՝ առանց հացի, պաշարի ու կարասիի թողուլը, յետոյ մինչեւ Օսմանիէ հետիոտն ճամբորդել տալը հազար զուլումներով՝ կարելի չէ պատմել առանց յուզմունքի: 1915 Հոկտ. 23-ին դեռ Օսմանիէ էինք:

Դ. բանակի հրամանատար ու ծովային նախարար ձեմալ փաշա երբ կը տեսնէ Օսմանիէի մէջ հաւաքուած հայ տարագրեալներու ծովածաւալ բազմութիւնը, Ատանայի օրուան վային իբր պաշտպան եւ այսքան խրոնոմին իբր պատճառ բռնելով, կը հրաժարեցնէ զայն եւ 100-ի մօտ սուլիաւոր գինուորներու միջոցաւ սուրերով ու բիրերով Օսմանիէի 100 հազարաւորներու հետ միասին դէպի Քաթմա կը քշեն մեզ, ուր կը սպասէր ընդ- [հանուր] Սեւեաթ միւտիւր էյուպ պէյ – Սելանիկի չեթէբաշին – նաեւ Սեւեաթ մէմուրը՝ ձեմիլ Հաքիմ պէյը: Ասոնք հայը հալածելու եւ փճացնելու դերին մէջ մէկգմէկու գերազանցած են: Գրչով պատմել անհնար է ասոնց գործած շահատակութիւնները: Բառին բովանդակ առումով գազաններ են: Անթիւ ու անհամար են ճիւղ կոխտուածները, ողջերն ու կիսամեռները հողի տակ թաղելը, վրաները կրակելը, հիւանդ-հիւանդ սէֆիք ընելը¹²: Ասոնք այս կարգի ճիւղներ են, որոնց արարքը միջնադարու հաւատաքննական գիրքերու մէջ անգամ կարդացուած չէ:

Քաթմայէն վերջ կը քշուինք Պապ, որու գայմագամը, Սեւեաթ մէմուր Միւհարրիմ բէկը (ներկայիս Ատանայի փօլիս միւտիւրի), հշրաֆներէն Թահիր աղա, Մունսուրի գայմագամը, որոնք իրենց կարգին Պապէն պարպեցին ժողովուրդը, անյուր տանջանքներով քշելով դէպի Մեսքենէ:

Հալէպի Սեւեաթ միւտիւրի ումուրի, պոլսեցի Չեթի Պապը Հազգը պէյ, Սեւեաթ մէմուրի մունսուրի Հիւսէին բէկ, իր օգնականը մունսուրի էմեր էֆ-ի-ասոնք ամէնքը ամէն տեսակ վայրագութիւններով, տանջանքներով, ժողովրդեան անօթութենէ մեռցնելով՝ Մեսքենէ հայկական խոշոր գերեզմանատան մը վերածած են, ուր թաղուածներու ստուար թիւը ոչ ո'ք կրնայ հաշիւ ընել: Եթէ մեծաքանակ դրամի ուժով մնացողներ եղան, անոնք ալ առաջնորդուեցան դէպի Տէր Զօր, հայկական վերջին խոշոր սպանդանոցը: Թէ ինչ՞ը տեղի ունեցան հոն, իբր վերջին արարուածը մուհաճիրական կեանքին, ամէնուս ծանօթ է արդէն: Հազգը բէկի վայրագութեանց մէկ նմոյշը կը ներկայացնենք հոս: Մես-

10.- Շամը Դամասկոսն է:
11.- Միւնոյն պատճառով հրաժարեցուած էր Ճելալ պէյ, որ նախապէս Հալէպի նահանգապետն էր:
12.- Տարագրելը:

քենէ զանազան միջոցներով ու զոհողութիւններով, 180-ի չափ որբեր կը խնամուէին: Այս 180 որբերը 18 հատ կառքերով ու գաղթական կառապաններով կը քշուին դէպի Տէր Զօր: Տէր Զօրի կառավարիչ Զէքի բէկ, թաղապետական տնօրէն եւ Զեթէ բաշի այս 180 որբերը քարիւղով կը վառեն կառապաններուն հետ

միասին եւ կառքերը կը գրաւեն...
Հալէպի մէջ գտնուող Գոնիայի ազնէհիւրներու կողմէն՝
[93 ստորագրութիւն]:
[Կը հետեւի Գոնիա-Ազնէհիւրի էշրաֆներու 87 հոգի-
նոց անուանացանկը]:

Փաստ. 1407-38

Ե 8.- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԷՏԻՐՆԷԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՎԵՐԱՊՐՈՂ ԳԱՂԹԱԿԱՆԱՅ

1.- Էտիրնէի վերայէթը, այլ անուամբ Թրակիա, որ սահմանակից է Պոլսոյ եւ Պուլկարիոյ եւ կը կազմէ ամբողջութիւնը եւրոպական Թուրքիոյ, պարունակելով իր մէջ գլխաւորաբար Ռոտոթոյի գաւառը:

2.- Գաղթէն առաջ էտիրնէի կուսակալութեան հայ բնակչութեան թիւն էր.—

I Էտիրնէ	3000	հոգի
II Ռոտոթօ	17000	»
III Մալկարա	4000	»
IV Կելիպոլու	3000	»
V Զորլու	3500	»
VI Հայրապոլ	} 1500	»
VII Պապաէսքի		
VIII Քեշան		
IX Ուզուն Քէօփրի		
X Պրկազ		

Որով 32.000 հոգի ընդհ. հայ բնակչութեան թիւը:

3.- Վերոյիշեալ բնակչութիւնները գաղթի հանեցին Պուլկարիոյ ընդհ. պատերազմի մասնակցած օրը, 1915 սեպտ. 17ին. ստորեւ նշանակուածները.—

Էտիրնէ	2000	հոգի
Ռոտոթօ	14000	»
Մալկարա	3000	»
Կելիպոլու	3000	»
Զորլու	2500	»
Իսկ մնացած գիւղերէն որով ընդամէնը	1200	հոգի
	24500	հոգի

4.- Թրքական անարդար կառավարութեան կողմէ սարքուած գաղթը հայոց հանդէպ սկսաւ 1915 սեպտ. 17ին: Գաղթը սկսելէն մօտաւորապէս երեք ամիս առաջ

հայերու կողմէ մեծաքանակ գործառնութիւնները արգիւրեցան կառավարութեան կողմէ. ճամբորդութիւնը խստիւ կերպով կտրուեցաւ հայոց համար. գիւշերները լոյս վառելը արգիւրեցաւ, ամբաստանելով թէ հայերը օտարներու հետ կը բանակցին եւ պաշար կը հայթայթեն Ֆրանսիական եւ անգլիական զօրքերուն: Կառավարութեան կողմէ եղած մասնաւոր պրոպագանդի իբր արդիւնք, հայը ոչ կրցաւ ծախել իր ապրանքը եւ ոչ գանձել իր առնելիքը:

Կուսակալութեան գաղթը սկսաւ առաջին անգամ Ռոտոթոյէն որպէս հայաչատ կեդրոն: Մունեստիկով ծանուցուեցաւ ժողովրդեան թէ գաղթը մասնակի է եւ ո՛չ ընդհանուր: Այս առթիւ հանուեցան միայն 15-20 ընտանիքներ. քանի մը օր վերջ կրկին 10-20 ընտանիք եւ այսպէս անվերջ: Քիչ յետոյ ամբողջ կուսակալութեան զանազան մասերէն արտահանուած հայեր Ռոտոթօ կը հասնէին եւ անկէ ալ նաւով դէպի Պոլիս կը ճամբուէին:

Գաղթի ժամանակ տեղի ունեցան այն տեսակ վայրագութիւններ, զորս երբեք մարդ կրնայ տոկալ եւ երեւակայել. ժողովուրդը մեծ ու պզտիկ պաշտօնեաներէ եւ խուժաններէ կողոպտուեցաւ: Ճամբաները արգիւրեցան իրենց փոխադրութեան համար, որով ժողովուրդը ստիպուեցան հետիոտն հազարաւոր մղոններ ճամբայ քալել անօթի եւ ծարաւ, որովհետեւ արգիւրուած էր պատահած գիւղերէն հաց գնել կամ ջրհորներէն ջուր հանել: Այնպէս որ իւրաքանչիւր բաժակ ջուրի համար յաճախ 5-10 դրչ. կը վճարէինք: Մայրեր ստիպուեցան իրենց մանուկները ճամբաները թողուլ, տեսնելով որ անկարելի պիտի ըլլայ անոնցմով միասին քալել: Ծեծն ու սպանութիւնը հասարակ բան մըն էր խուժան պահապաններու կողմէ: Իրենց այրերու ներկայութեան կիներ բռնաբարելը մեծ հերոսութիւն կը սեպէին արիւնաբերու պահապանները: Ամէն օր նորանոր խժդժութիւններ կը յօրինէին գործադրելու համար

խեղճ ժողովրդեան վրայ, մինչև որ ժողովուրդը՝ ուժասպառ արդէն կրելու այս բոլոր տանջանքները՝ սկսաւ ճամբու վրայ մեռնիլ հիւանդութենէ, անօթութենէ, ուժասպառութենէ եւ, ի վերջոյ, Ռասուլայնի եւ Տէր-Չօրի տիրահռչակ ջարդերը 1916-ի Օգոստոսին, լրացուցին դաժան ու գազանային գործը: Հրաշքով շատ քիչեր ազատուեցան, հազիւ 10%, մասամբ կաշառքի ու դրամի միջոցաւ:

5.- Յիշեալ կուսակալութենէն արտաքսուած 28500 հայերէն վերապրողներու թիւը 5000 է: 22300 հոգի մեռած են: Տեղահանուածներէն մեռնողները հաշուելով՝ ընդհ. 23500 զոհուեցան:

6.- Յիշեալ կուսակալութեան ողջ մնացող հայու-թեան թիւը 8300 է, որոնցմէ 5000-ը իրենց քաղաքներուն մէջ, իսկ մնացեալները հետեւեալ տեղեր.—

Հալէպ	700 հոգի
Շամ ¹⁰	500 հոգի
Գոնիա	400 »
Գոնիայի շրջան	200 »
Էսքի Շէհիր	80 »
Տէր-Չօր	120 »

Սուրիոյ զանազան մասերուն մէջ մինչև Սուսուլի եւ Պաղտատի անապատները՝ 1500 հոգի

Ընդհ. 3500 հոգի

Սուրիոյ եւ այլ մանր մոնր գիւղերուն անունները, որոնց մէջ 1500 անձինք կան ներկայիս.— Մարտին, Հասաքի, Թէրէրմէն, Մեսքենէ, Տիպսի[?], Ապուհարար, Համամ, Սաբթա, Ռաքթա, Շմաթիա, Պօղսայի, Միատին, Աբուքէմալ, Անա, Մարատ, Սըվար, Շէտատիէ, Խապուր, Րասիլ, Թելհազիֆ, Թէշլիհէր, Հինճար Տաղ, Պէրէճիկ, Վերան-Շէհիր, Պօղազի օղլու, Թաիպէ, Սինսելէ, Թելքէրի, Կեզիպ, Թուման, Այնէլգետա եւայլն: Նէպլքլի արաբ կաթոլիկ ընտանիքին մօտ, որոնք 25 գիւղերէ աւելի ունին, եւ որոնց մօտ կը գտնուին աւելի քան 25 որբեր, աղջիկներ եւ կիներ:

7.- Էտիրնէի հայութեան շարժուն եւ անշարժ կալւածներու արժէքը կը հաշուելի ըստ մասնաւոր տեղեկագիրներու (1916 Յունուար 6-ի, Ռոտոսթօ) չորս ու կէս միլիոն տաճկական ոսկիի:

8.- Ա[տրիանա]պոլսոյ կուսակալութեան հայոց տեղահանութեան եւ զանազան չարագործութեանց բուն պատճառ եղողները եւ թուրք կառավարութեան կորիզները հետեւեալներն են.

Էտիրնէի մէջ.— Կուսակալ Ջեքէրի պէյ, Իթիհասի շէֆ Կանի պէյ, դերձակ Շէֆքէթ էֆ.ի գաղտնի ոստիկան Եագուպ էֆ., փոլիս միւտիւրի Հաճի Ատէլ պէյ, կօշկակար Ալի եւ տղան Մէհմէտ, քաղաքապետ Ահմէտ պէյ, կառապան Թահսին աղա, Թաթար-Գասապ Իսմայիլ Թիւրքի եւ իր հետեւորդները եւ բազմաթիւ իթիհաստական գործակալներ:

Ռոտոսթոյի մէջ.— Ջեքէրի էֆ.ի որ իր հայահալած քաղաքականութեան համար միւթեսարքութենէ կուսակալի աստիճան ստացաւ [ապա կը յիշուին աւելի քան 60 չարագործներու անունները]:

Մալկարայէն.— Քաղաքապետ Մանաօղլու Պէտրի Սայիտ պէյ: [Ապա կը յիշուին աւելի քան 20 անուններ]:

Ուզուն Քէօփրիլէյն.— Գայմագամ Տաղիբ պէյ (խիստ շատ չափազանց վտանգաւոր) [ապա կը յիշուին շուրջ 10 անուններ]:

Չուլուէն.— Քաղաքապետ Էօմէր աղա [ապա կը յիշուին շուրջ 15 անուններ]:

9.- Կուսակալութեան մէջ ընդհանուր գաղթը սկսելէն 2-3 ամիս առաջ, կառավարութեան կողմէ սխտեմաթիք տանջանքները սկսան գործադրուիլ հայ ժողովրդեան վրայ. եկեղեցիները գիշերանց խուզարկուեցան. զանազան զրպարտութիւններ սկսան ի գործ դրուիլ հայ կտրիճ երիտասարդութեան վրայ, զանոնք ամբաստանելով իբր պոմպաճի, գէնք պահողներ, կուսակցական դրդիչներ: Ձանոնք սկսան մի առ մի բանտարկել եւ ծեծել մինչև այն աստիճան, որ այլեւս ենթական անզգայ մարած կը մնար, կը սպասեն որ ենթական ծեծին չղիմանալով հարկ եղած խոստովանութիւնները ընէ. Այսպէս շատ մը կտրիճներ արդէն մեռած կարծելով կը դնեն աւանակներու վրայ եւ գիշերով իրենց տունը կը վերադարձնեն:

Յիշեալ երիտասարդներէն մէկ քանիին անունները հոս յիշել պէտք կը զգանք: Հաճի Պահարիկ Թագուրեան, Յարութիւն Հիւսէինճեան, Մինաս Սըզանեան, Փիլիպոս Գուլոմճեան, Սարգիս Մամուլլեան, Հմայեակ Շամլեան, Օննիկ Ծիծեռնակ, Սերոբէ Թօփալեան, Չօլաք Մանուկ, Պետրոս Մանկէլեան, Մկրտիչ Չուլլայեան, Անդրանիկ Պէրպէրեան, Մկրտիչ Ճոսլեան[?]:

Գաղթականութեան միջոցին ալ անլուր տանջանքներու ենթակայ եղան խեղճ ժողովրդեան բոլոր դասերն ու փոքր[երը], ի մասնաւորի երիտասարդները, որոնց կը բանտարկէին ամէն տեղ, ինչպէս Պոլիս, Իզմիտ, Պիլէճիք, Էսքի-Շէհիր, Գոնիա, Աֆիոն Գարահիսար եւ շարունակաբար բանտերու մէջ ու դուրան ալ անոնց կեանքերուն սպառնալով, զանոնք կողոպտեցին եւ գի-

չեր ու ցորեկ անօթի-ծարաւ թողնելով անիննայ ծեծի կ'արժանացնէին: Իրենց վրդերէն եւ ոտքերէն ու ձեռքերէն 11 հոգի մէկ շղթայի տակ սկսան տանջել. խեղճ երիտասարդները իրենց երկաթեայ 250 օխայ բեռին տակ հագիւ կրնային քայլել. այսպիսով զանոնք թուրք խուժանին կը ցուցադրէին եւ անոնք ալ կու գային ու կը թքնէին երեսներն ու կը սկսէին ամէն տեսակ անվայել խօսքեր ընել. զանոնք կը քարքոծէին ու կ'ըսէին. «Ձեզ պիտի կտրենք. մեռնիլ կ'երթաք կոր. սերմերնիդ պիտի չորցնենք. Քրիստոնեաներ մենք ենք եւայլն!»:

Աֆիոն Գարահիսարի կայարանում երբ նրանց շղթայակապ շոգեկառք կը նստեցնէին, կէսերնին կառքը նստած եւ կէսը չնստած՝ կառքը շարժուել է եւ գրեթէ 80 մետրի չափ խեղճերը քաշկուտուած են իրենց մահուան դէմ պայքարելով:

Յիշեալ երիտասարդներու անունները.— Խաչիկ, Սարգիս, Պետրոս եւ Գէորգ Մամուլգլըեաններ, Ռուբէն Փափագեան, Գրիգոր Քերամեան, Մաքսուտ Քերամեան, Աբգար Քերամեան, Կարապետ Քերամեան, Ասատուր Փափագեան, Միհրան Զիգմէջեան, Կարապետ Փափագեան, Թադէոս Պէգիրճեան եւ իրենց ընտանիքներն ու փոքր տղաքը, այս վերջիններուն ալ ամէն ատեն տեսակ-տեսակ տանջանքներ մատակարարելով:

10.- Նախապէս յիշուած գիւղերու եւ քաղաքներու մէջ ներկայիս ողջ գտնուող թուրքերու եւ արաբներու կողմէ առեւանգուած որբերու, աղջիկներու եւ կանանց անուանները հետեւեալներն են, որոնք տակաւին չեն վերադարձուած.— Օհանէս Եբրանոսեանի երկու աղջիկները, Տիարպէթի թուրք սպայի մը քովը, իսկ միւսը արաբի մը մօտ: Նշան Թարագճեանի երեք երեք աղջիկներն ու մեծ մանչը, Տէր Զօրի մէջ Ուրֆան անուն ժանտարմի մը մօտ: Նշան Սեթեանի հարսն ու աղջիկը, Քալեմքերեանի աղջիկը, Քիրաջիպոզեանի երկու աղջիկները, Տէր Զօրի մէջ Քուչուք Իփրանի մօտ: Հաճի Նազարին երկու աղջիկները, Մալկարացի Բարսեղ Մարկոսեան եւ իր աղջիկը Տէր Զօր ժանտարմ Համիտի մօտ: Գէորգ Հիւսիմեանի ընտանիքը եւ աղջիկը, Պուպակի աղջիկն ու մայրը, Մամուլգլեան Պետրոսի երկու աղջիկները, Պատիկեան Խաչիկին աղջիկը, Արապակեան Սարգիսին աղջիկը Գուրճեանի (Տէր Զօր) Անկլեան Օհանէսի կինը Վերժին, աղջիկը եւ մանչը (Տէր Զօր), Մկրեան Կարապետի ընտանիքը Աննիտա եւ աղջիկը Յրանսուհի (Համամ), Հօքիւզ Կօլտիւրէն Քիւտարի աղջիկը Եղիսաբէթ (Տէր Զօր), Նիկողոս Փիլաճեանի աղջիկը Տիրուհի (Պուժպուլ), Գրիգոր Քարատէնիզեանի երեք աղջիկները՝ Նուարդ, Սիրարբի, Գայիանէ եւ մօ-

րաքոյրը՝ Արաքսի Թաթոսեան (Տէր Զօր), Ասատուր Պօյաճեանի ընտանիքն ու աղջիկը (Ազազ), Փաշաճի Գառնիկին աղջիկը (Տիպսի), Մալկարացի Լուսիկ Պօլիսեան, Հալէպի Մէնջել Միւֆէթիլ Համիտ պէյի մօտ, Բաստրմաճեան Բարսեղի ընտանիքը եւ երկու աղջիկները՝ Տէր Զօր: Կարապետ Ասեղճեանի աղջիկը՝ Նիճեպ: Սարգիս Պապիկեանի աղջիկը՝ Սողմիկ՝ Տէր Զօր: Գէորգ Մալթանեանի աղջիկը Հուփսիմէ՝ Տէր Զօր, Մկրտիչ Քրաջեանի կինը, քոյրերը (3) եւ տղան՝ Սուվարի մէջ: Ռուբէն Թաշճեանի աղջիկը՝ Տէր Զօր: Օհանէս Մէնէտեանի աղջիկները Մէնէտ եւ Գայիանէ՝ Տէր Զօր: Միքայէլ Թաթոսեանի աղջիկը Արաքսի՝ Տէր Զօր: Օհանէս Իսքէնյիճեանի կինը եւ աղջիկը Նէվրիկ՝ Տէր Զօր: Սարգիս Եօզարտճեանի կինը Աննա, 2 աղջիկներն ու մանչը՝ Համամ, Աննիա Փաշաքարովեանի կինը Բարեղ, քոյր Եղիսաբէթ եւ աղջիկը՝ Համամ, Արթին Սուլթանաթիլեանի կինը Մարիամ, աղջիկները Եղիս ու Պայծառ, Համամ: Արթին Թաշճեանի կինը Նուարդ եւ իր աղջիկը՝ Համամ: Թադէոս Փափագեանի աղջիկը Սրբուհի (Տէր Զօր): Յակոբ Կիւպրէճեանի աղջիկները Թագուհի եւ Վարվառ (Համամ): Յակոբ Թէֆճեանի աղջիկը Պայծառ՝ Տէր Զօր: Սարգիս Կիւլկէրեանի կինը Սառա եւ աղջիկը Աղաւնի, Արշակ Փափագեանի աղջիկը Վարդուհի, Պետրոս Անկաճեանի աղջիկները՝ Աննա եւ Հայկանոյշ (Ռաքթա): Կարապետ Հայրապետեանի կինը Եղիսաբէթ՝ Տէր Զօր: Եղիս Անտեսեանի կինը Կիւլեհիա, զաւակը Տօնիկ, աղջիկը Մարթա (Շահատտիէ): Ռուբէն Շափճեանի երկու աղջիկները՝ Տիւստին: Արշակ Չուլֆայեանի երկու աղջիկները՝ Պաղտատ: Յակոբ Էլէքճեանի զաւակը, Սահակ Ազաբեանի զաւակը Օննիկ եւ աղջիկը Մարիամ՝ Սուսուլ: Օննիկ Վարժապետեանի զաւակը Արթին՝ Տէր Զօր: Կարապետ Էսքիճեանի աղջիկը Մարիամ եւ քեռորդին Մարթա, Օհանէս Յրնճեանի աղջիկը Աննիտա՝ Ղաբուլ: Գասպար Պատիկեանի կինը՝ Վերժին՝ Տէր Զօր: Օննիկ Փաշայեանի ընտանիքը՝ Սրվար: Մամուլգլեան Վերժին, Թորոս Թաթոսեանի կինը, Հուփսիմէ, Կարապետ Գաբթանեանի աղջիկը Մաննիկ, Մանտիկեան Գոհարիկ՝ Տէր Զօր: Գէորգ Մանթանեանի կինը Գայիանէ, զաւակը Արմիկ, Մարիամ եւ Մաննիկ, Գէորգ Զատարեանի զաւակը Յովսէփ, Եւա Քրզրյեան, Կիւլիկ Քրզրյեան, Տէր Զօր: Սերոբ Յարութիւնեանի զաւակը Պողոս, Նապուրեան Կարապետի երկու աղջիկները եւ վերջապէս տակաւին շատեր՝ որոնք մեզի անծանօթ են:

Ստորագրութիւններ

[32 անուկն]

Հալէպ, 19 Փետր[ուար] 1919 թ.

Փաստ. 960-68

Ե 9.- ՀԱԼԷՊԻ ՈՐԲԱՆՈՑԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Որբանոցը բացուեցաւ 1915 Յուլիս 31-ին 13 որբերով:

1915 Օգոստոս 10-ին բարձրացաւ մինչեւ	50-ի:
» » 31-ին » »	240-ի
» Դեկտ. 31-ին » »	242-ի
1916 Յունիս 30-ին » »	500-ի
» Դեկտ. 31-ին » »	548-ի
1917 Յունիս 30-ին » »	620-ի
» Դեկտ. 31-ին » »	1003-ի
1918 Մարտ 31-ին » »	1478-ի
» Դեկտ. 31-ին » »	1751-ի
1919 Փետր. 27-ին » »	2000-ի
» Մարտ 31-ին իջաւ	1875-ի

Օրուան թիւերուն նայելով բաղդատաբար մանչերու թիւը միշտ աղջիկներէն 70-100 աւելի եղած է:

1919 Յունուար, Փետրուար, Մարտ ամիսներուն 888 նոր անձինք ընդունուած են եւ 512 դացած են իրենց հայրենիքը կամ բարեկամաց քով:

Որբանոցի բացումէն մինչեւ այսօր ամէն անոք մանչ, աղջիկ կամ մանկամարդ հարս որ դիմած է՝ երբեք մերժուած չէ եւ երբ ոեւէ ազգական կամ բարեկամ մը տանիլ ուզած է ազատ կամքին ձգուած է: Ամէն անհատ գրեթէ բոլորովին մերկ եկած է եւ լաւ հագուստով ու կոշիկով դուրս դացած է: Բացումէն մինչեւ այսօր 4200 անձինք եկած եւ մէկ քանի ամիս կամ տարի մնալէն վերջ դացած են:

Ընակաբան.— Մէկ տունով սկսուեցաւ, հիմակ տասը շէնք կայ իրարու բաւական մօտ: Բոլոր շէնքերու պարունակութիւնն է 135 սենեակ ու սալոն մը:

Ֆիզիքական.— Սկսնակ ամիսներուն որբերը աւելի առողջ էին եւ այն օրերուն եկողներէն մեծամասնութիւնը հիմակ ողջ առողջ են: 1917-ի վերջերը եւ 1918-ի սկիզբները եկող մանաւանդ երկու ամիս խոտով ապրող Չօմագլուցիներէն շատերը մեռան, որոնք հարիւրներով ներս առնուեցան: Սկիզբէն մինչեւ հիմա 850-ի չափ մահ եղած է: Տօք. Ալթունեան, Տօք. Մամուէլ Շմաւոնեան, Տօք. Պօղոսեան շատ հոգ տարած են հիւանդներուն եւ հիմա ալ Տօք. Յովհաննէս Տէր Նահապետեան ամասկանով բոլոր ժամանակը կու տայ. ոեւէ բժիշկ որ դեղագիր տուած է անշուշտ առանց խնայելու առնըլած է: Վերջին 3 ամսուան մէջ 2 մահ պատահած է: 1916

Սեպ., Հոկ. ամիսներուն երբեք մահ պատահած չէ:

Ուտելիք.— Միշտ ջանացած ենք առտու եւ իրիկուն տաք կերակուր տալ քիչ բացառութեամբ: Կէս օրերն ալ հաց, երբեմն հետը քաղցրեղէն կամ նպարեղէն: Հիմակ միջին հաշուով իւրաքանչիւր անհատի օրական 200 տրէմ հաց կը տրուի. անցեալի շատ սուղ օրերուն 125, 150 տրէմ կը տրուէր:

Մարտ ամսուան տրուած է.— 7500 [լիտր] ալիւր, 492 լ. պուլըր, 225 լ. կորկոտ, 205 լ. ոսպ, 336 լ. լուբիա, 18½ լ. բրինձ, 178 լ. սիսեռ, 471 լ. միս, 60¼ լ. իւղ, 234½ լ. չամիչ, 185 լ. ամարտին, 82¼ լ. ուռպ, 25 լ. տան կովու կաթ, 1296 տուփ ամերիկեան կաթ, 129 լ. տան մածոն եւ թան, 653 լ. շուկայի մածոն, 6 տուփ արատոթ, 97½ լ. փաթաթա, 1300 հատ խառնապիթ, 8000 հատ մառուլ, 30 լ. շոմին, 37¼ լ. նարինջ, 7 լ. լեմոն, 6½ օխաթէյ, 81 լ. շաքար:

Վառելիք.— 104 լ. գէյթ, 12 լ. քարիւղ, 336 լ. ածուխ, 10071 լ. փայտ: Բոլոր շէնքերուն մէջ 140 ճրագ կը վառուի:

Օճառ.— Լուացքի եւ լոգանքի համար 66 լիտր:

Հագուստ.— Մեծերու եւ պատիկներու ամէնուն ալ երկերկու ձեռք հագուստ եւ շատ ջանք կ'ըլլայ որ երկու շաբաթն անգամ մը իւրաքանչիւր անհատի լաթերը փոխուին, լուացուին եւ ամէնն ալ բաղնիք երթան: Ատեն մը որբանոցը այնչափ մաքրուած էր որ 1916 Սեպ. 27-ին երբ քննութիւն եղաւ՝ 530 հոգիի վրայ բնաւ ոջիլ չգտնուեցաւ: Այս Յունուար, Փետրուար, Մարտ ամիսներուն կարուած հագուստներու թիւը 7409 կտոր է, որոնցմէ 900-ը տղայոց սուրթ¹³ է:

Կրթութիւն.— Անցեալ տարիներուն մէկ քանի անգամ դպրոց սկսուեցաւ բայց թրքական քաղաքական արգելքներ չթողուցին որ շարունակուի: Վերջին անգամ 1918 Նոյեմբերին սկսուեցաւ եւ մինչեւ հիմա կանոնաւորապէս կը շարունակուի: Հայերէն լեզուին առաջին տեղը տրուած է: Արդէն որբանոցի ամբողջ շրջանին՝ թուրքի փոթորկոտ օրերուն մինչեւ իսկ, լեզուն հայերէնն էր: Տասը ուսուցիչներ եւ 35 ուսուցչուհիներ ունինք: Աշակերտաց գումարը 1163 է, ասոր 522-ը

13.- Համազգեստ:

մանչ, 441-ը աղջիկ եւ 200-ը մանկապարտէզի պատիկներ են: Կարելի եղածին չափ դասագրքեր առնուած են որ- չափ որ գրածախներու քով գտնուած է: Պակաս տեղե- րը տեսրակներով կը լրացուին:

Կրօնք.— Որբանոցը նպատակ ունեցեր է ամէն որբ անհատի իր հայու թիւնը ճանչցնել եւ հայ ապրեցունել: Նորեկի մը արձանագրուելու պահուն անունը, մակա- նունը, ծնողքը, ծննդավայրը եւն. կը գրուի, սակայն բնաւ չի հարցուիր յարանուանութիւնը: Ո՛վ, եւ ո՛ր եկե- դեցին երթալ ուզեր է, ազատ թողուեր է: Մեր շէնքե- րուն մէջ տեղի ունեցած ժողովներուն մէջ հայերէն լեզ- ւով, քրիստոնէական, բարոյական եւ ազգային խրատ- ներ կը տրուին ինչպէս որ օտար եւ հայ հրաւիրեալներ մեր պաշտամունքին ներկայ ըլլալով լսած են:

Ընտանեկան վարչութիւն.— Տունը բաժնուած է տա- րիքի եւ սեռի համեմատութեամբ 30 մայրիկներու, որոնք իրենց օգնականներով միասին կը հսկեն որբե- րուն կեանքին եւ մաքրութեան, նոյնպէս նաեւ շէնքե- րու մաքրութեան: (Դասատուները դրսէն կու գան եւ ամսականով կ'աշխատին): Ամէն կին ու աղջիկ իր առտ- նին գործերը որոշ գիտէ: Հետեւեալ աշխատողները կան. 22 լուացարար, 20 մառանի եւ խոհանոցի գործե- րով զբաղողներ, 12 գիշերապահներ, 50 կարուհի, 25

կին եւ աղջիկ որք 12 շէնքերու մաքրութիւնը կ'ընեն, 3 մահիճ կարող եւ նորոգող, 50 ձեռագործ ընողներ, դպրոց սկսելէն առաջ ձեռագործ ընողներու թիւը շատ աւելի էր:

Մանչերու գործը.— Սկիզբէն ի վեր իւրաքանչիւր տղու գործ մը տրուած է. դպրոց չեղած ատեն այլեւայլ բաներ ծախելով եւ պարտիզպանութեամբ կը զբաղէին: Հիմակ հետեւեալ արհեստանոցներն ու աշխատանոցնե- րը կան.—

Հացագործութիւն, որուն կը հետեւին	20 մանչեր
Հիւսնութիւն	» » 30 »
Կօշկակարութիւն	» » 40 »
Երկաթագործութիւն	» » 12 »
Դերձակութիւն	» » 10 »
Սափրիչութիւն	» » 3 »
Խաղախորդութիւն	» » 10 »
Ջաղացպանութիւն	» » 8 »
Կառապանութիւն	» » 5 »
Պարտիզպանութիւն	» » 10 »
Որմնագրութեան եւ այլ գործեր	» » 8 »
Ընդամէնը	166 »

Փաստ. 960-69

ՀԱՐՑԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ե 10.- ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Յայտնաբար գերադաս մարմնի մը, այս պարագային Լեռնավայր-Կիլիկիոյ Կեդր. կոմիտէի մէկ հարցարանին պատասխաններն են՝ Եղեռնի օրերուն պատահած դէպքերու մասին: Փաստաթուղթը կը գտնուի 1919 թ. Կիլիկիոյ թղթածրարին մէջ: Կարելի չեղաւ գտնել խնդրոյ առարկայ հարցարանը:

1.- Զօրակոչէն անմիջապէս յետոյ թուրք կառավարութեան գաղտնի թելադրութեամբ ժողովուրդին կողմանէ պոյքոթաթ սկսաւ քրիստոնեաներու հանդէպ առեւտրական ասպարէզին մէջ եւ կառավարութեան կողմանէ civil բօլիսներու¹⁴ միջոցաւ հսկողութեան առնուեցաւ քրիստոնեաներու բոլոր գործունէութիւնը քաղաքական եւ առեւտրական տեսակէտով:

2.- 1915ին սկսաւ հայահալած քաղաքականութիւնը եւ զորակոչէն մինչեւ այդ թուականը Իթիթհատը ամէն ջանք կը թափէր գաղտնի թելադրութեամբ թուրք ժողովուրդին միտքերը պատրաստել, եւ արդէն ժողովուրդին մէջ շարժում մը սկսած էր, ատելութեան նշաններ կը ցուցնէին, մասնաւորապէս կը հետաքրքրուէին մեծ ծաւալ տալ այն ատենուան շաբաթաթերթ «Բօլիս Մէճմուլա»ին, որ կը ծառայէր հայատեաց քաղաքականութեան եւ Իթիթհատի գործունէութեան զարկ տալու, որուն հետեւանքով սկսաւ Ապրիլ ամսուան մէջ հայոց տուներէն գէնքի խուզարկութիւնը, ձերբակալուեցան հետեւեալ պարոնները.

1.- Միսակ եւ Կարապետ Աբրահամեան եղբարք (որոնց տունէն գտնուած է ատրճանակ եւ թուրք քաղաքականութեան հակասող ձեռագիրներ) եւ այս պատճառաւ դատապարտուեցան 3 տարի բանտի եւ 50 ոսկի տուգանքի: Դրամը չկրցան վճարել, 6 ամիս աւելի մնացին բանտը փոխան տուգանքի:

2.- Կարպիս Սիմէոնեան, որուն տունէն գտնուեցաւ 2 ժանգոտած ատրճանակ եւ նոյնպէս դատապարտուեցաւ 3 տարի բանտի եւ 50 ոսկի տուգանքի, զոր վճարած է:

3.- Դեղագործ Ղազարոս Քէչիչեան, որու տունէն գտնուեցաւ 2 մարթին, Հ.Յ.Դ. պրոչիւր մը եւ պատկերներ. ինքը բանտի տանջանքներուն չզիմանալով մեռաւ: Տղան Յակոբը կախաղան հանուեցաւ Ատանայի մէջ, նոյնպէս միւս տղան Լոդոֆէթը 2½ տարի բանտ պառկելէ յետոյ աքտրեցին եւ իր տունն ու դեղարանը կողոպտեցին:

3.- Բանակին կենսամթերքին համար գրաւեցին, բո-

լոր վաճառականական պարանքները. շաքար, բամպակ, օճառ, մանիֆաթուրա, պարապ պարկ, թիթեղ, սնտուկ, իւղ եւ վերջապէս ամէն բան գրաւեցին, քրիստոնեայ գինուորներու ու ժանտարմներու զէնքերը հաւաքեցին, յետոյ ղրկեցին դէպի Ատանա գործաւորի բանակ, ուրկէ բաժնեցին ամէն կողմ. մաքսատունը թէքէլ Լիւֆաթը Հարպիյէի հակակշռին տակ առին:

4.- 1915 Յունիս 19ին Կիրակի օրը դրսեցի անուան տակ երեսուն հինգ հոգի ամուրիները հետիոտն ղրկեցին Տարսոն, անկէ շոգեկառքով դէպի Մամուրէ. այս եղաւ տարագրութեան սկզբնաւորութիւնը, իսկ ամուրիներու շրջ մասը նոյն քանակութեամբ, նոյն հանգամանքով, նոյն ուղղութեամբ. իսկ ընդհ. Ազգ. տեղահանութիւնը սկսաւ Յուլիս 25ին, քաղաքին հայութիւնը մասերու բաժնեցին եւ իւրաքանչիւր թաղին 5էն 8 օր միջոց տուին պատրաստուելու այնպէս որ մինչեւ Օգոստ. 18 ամբողջ տեղահանութիւնը վերջացաւ:

5.- Զինուորի ընտանիքները մնացին, նոյնպէս գործարանատէրերը դրամի ուժով մնացին՝ Մ. եւ Գ. Զէլվէեան, Միսակ Քէչիչեան, Յակոբ Մանուէլեան, իրենց պաշտօնեաները եւ ամէնն ալ ընտանեօք! Ասոնցմէ զատ փայտի յանձնառուներէն (միւլթէահիւտ) եւ իրենց ընտանիքը ու պաշտօնեաները ընտանեօք մօտաւորապէս 100 տուն:

6.- Նախապէս տրուած հրահանգին համաձայն կրցածնին ծախեցին (եւ այդ պարանքները չէին առնուեր, կամ հարիւրին մէկի արժողութեամբ կը ծախուէր). մնացածները տուն ձգեցին ու տունը կղպելով բանալիները յանձնեցին կառավարութեան եւ տեղահանութեանէ յետոյ պարանքները հանուելով էմվալը Մէհրուբիյէին¹⁵ ձեռքով ծախեցին. իսկ տուներէն ալ պրզտիկ մաս մը

14.- Ֆրանսերէն՝ քաղաքային ոստիկան: Հոս պէտք է հասկնալ գաղտնի ոստիկան իմաստով:
15.- Լքեալ գոյքերու (յանձնախումբ):

չնչին գինով վարձու տրուեցաւ թուրք գաղթականաց եւ մնացածն ալ ճրի քիւրտ գաղթականներուն. դպրոցները կողոպտեցին, տուներէն շատերը քարուքանդ ըրին:

Կառավարութիւնը գրաւած է բոլոր ապրանքներն ու գոհարեղէնը եւ հմվալը Մեթրուքէն գրաւած է բոլոր ձգուած գոյքերը. խուժանն ալ նոյն միջոցին կողոպտած է բոլոր խանութները:

7.- Տեղահան հայերը մեկնեցան Ատանա, իրենց սեփական միջոցներով եւ ահագին ծախսերով եւ հոն ընդհ. հայ գաղթականներու հետ մեկնեցան թռէնով, կոշտ ու բիրտ ժանտարմաներու հսկողութեամբ դէպի Հալէպ, գաղթականաց կեդրոն:

8 եւ 9.- Առաջին կայանը եղաւ Օսմանիյէ, ուր ահագին խոշտանգումներ եւ սպանութիւններ տեղի ունեցան եւ թուրքերու կողմէ հայ գաղթականներ այդ քաղաքէն վտարուեցան հոլրով եւ սուրով եւ ճանապարհին Ռահիոյ[?] կայարանին շրջակայ քիւրտ գիւղապետները շատ մեծ ոճիրներ ըրին, դեկավարութեամբ թուրք ժանտարմաներու եւ գինուորներու եւ կողոպտեցին բոլոր ժողովուրդը:

10.- Քրուեցան դէպի Հալէպ, ուրկէ երկուքի բաժնուեցան. մաս մը Տէյր էլ Զօրի ուղղութեամբ, միւս մասը Դամասկոս. առաջին ուղղութեամբ գացողները բոլորովին փճացան, իսկ Դամասկոս գտնուողները աւելի լաւ պայմաններու տակ էին, բաղդատմամբ միւսներուն, ուր դարձեալ անոնցմէ ալ մաս մը անթուրթենէ, թշուառութենէ, համաճարակէ [մեռան], եւ մնացածներէն մաս մը վերջին անգամ գինուորագրութեան պատրուակին տակ քշեցին Ամելէ թապուրի եւ հո՛ն փճացուցին:

11.- Մերսինի մէջ ջարդ տեղի չունեցաւ, բայց գաղթականներէն Տէյր էլ Զօր ղրկուողները բոլորովին ջարդուեցան:

12.- Մօտաւորապէս 1222 հոգի տեղահանութեան կորուստ ունինք:

13.- Մօտ 900 հոգի վերադարձած են:

14.- Հազիւ 50 հոգի:

15.- Մօտաւորապէս ընդհ. վնասը 400.000 դեղին ոսկի:

16.- Ժողովուրդը իր բախտին ձգուած էր, օգնող չկար:

17.- Բնիկ հարանցի Խորէն Սարաֆեան տարագրութենէն քսան տարի առաջ հոս հաստատուած թաղականութեան անդամ էր. իր շահուն համար կառավարութեան ձեռքը գործիք դարձաւ, տարագրութեան ատեն թրքացաւ եւ հոս մնաց իբրեւ միւթէահիւտ. շատ մը պատուաւոր հայերու բանտարկուելուն եւ հոս մնացող գործարանատէրերուն վերջին անգամ 11 ամիս յետոյ Ատանա գաղթել տրուելուն պատճառ եղած է. կառավարութեան դրդումներ ընելով, մնացող 11էն սկսեալ մինչեւ 80 տարեկաններու, նոյնիսկ ծեր քահանայի, տարագրուելուն պատճառ եղած է. վերջին անգամներ իր եւ կառավարութեան քաղաքականութիւնը աւրուելով, գինքն ալ քշեցին դէպի Մուսուլ. հոն հասնելէ յետոյ, հոն հայոց հետ գործի ընկեր կ'ըլլայ եւ դարձեալ զանոնք ալ աքսորել կու տայ: Այժմ քաղաքս վերադարձած է:

18.- Ոչ:

19.- Ոչ ոք:

20.- Ոչինչ:

21, 22.- Այդ ուղղութեամբ ոչինչ:

23.- Որոշ դերակատարներու ցանկը ներփակ կը գտնաք, որոնք առաջուց գաղտնի բայց վերջը աւելի համաձակ գործեր են:

Փաստ. 1407-49

Ե 11.– ՏԵՐ ԶՕՐԻ ՏԱՍ ՀԱԶԱՐՆԵՐՈՎ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԷՆ ՈՂՋ ՄՆԱՑՈՂԻ ՄԸ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Նոյն վկան՝ Մարաշի հիւսիս արեւմտեան կողմը 18 ժամ հեռաւորութիւն ունեցող Կապան կոչուած գիւղէն է, երբօրս Վարդիվառիւն աղջիկը Փիփէ Գարատեմիրճեանն է: Յիշեալը իր բնակած գիւղէն 300 տուն ժողովուրդի հետ արտագաղթուած ըլլալով, Մարաշ, Այնթապ, Ուրֆա, Պերսեմիկ, Ռաքքա եւ Տէր Զօրի ճամբով 60 օր տաժանակիր ճամբորդութենէ յետոյ, Տէր Զօրէն 9 ժամ հեռաւորութեամբ Միատին ըսուած գիւղը հասած է: Նոյն գիւղին մէջ տարուան մը միջոցին արդէն իր 3 զաւակները սովի զոհ գացին: 1916 Յուլիսի վերջերը Պապէն, Մեսքեմէն, Համամէն, Սապգայէն, Եփրատ գետին երկայնքը գտնուող, ինչպէս նաեւ Տէր Զօրի բոլոր գաղթականները հաւաքելով Խապուր գետի եզերքը, Սուվար-Գալէսի անունով տեղը կը հաւաքէին: Միայն Ռաքքայի գաղթականները, շնորհիւ տեղացի ժողովուրդին եւ Ուրֆայի ու Տէր Զօրի միւթեսարքներուն, 9-10.000-ի հայութիւն մը ազատուեցաւ:

Նոյն ժամանակ յիշեալ Փիփէն, Միատինի մէջ գտնուող գաղթականներուն հետ դէպի Սուվար-Գալէսի դրկուեցաւ: Անկէ վերջը Փիփէին կենսագրութիւնը հետեւեալն է:–

«Սուվար ըսուած անիծեալ վայրը հասնելուս պէս տեսայ որ Միատին դրկելու համար կարաւան կը գրեն: Մենք ալ արդէն ջորի մը ունէինք եւ ստիպուած գրուեցանք ու գացինք. սակայն դժբախտաբար 1 ամիս յետոյ մեզ նորէն Սուվար դրկեցին: Այդ ժամանակ կարգ մը մարդիկ Շետատիէ եւ անկէ ալ Հասրըճէ ըսուած կողմերը տանելով, կը մորթէին: Մորթուելու տարուած սեֆքէթներու կերպը այսպէս էր. Չեչէններ ու չերքէզներ՝ գինուած, գաղթականները չփախցնելու համար, ամէն հնար ձեռք կ'առնեն, եւ ո՛չ մէկը չեն ձգեր որ վըրաններէն հեռանայ, նոյնիսկ առանց հրամանի ջուր առնելու երթալը: Ասկէ զատ գետէն լողալով անցնողներուն ալ արգելք ըլլալու համար, միւս կողմը մասնաւոր արաբներ դրած են, որոնք փախչողները ետ կը բերէին: Իսկ երբ սպանդանոց ըսուած վայրը բերէին, կողոպտելու եւ մորթելու գործը արաբներու կը ձգէին:

Զանազան տեղացի 300 ընտանիքներու հետ մեզ ալ Խապուր գետի եզերքը տարին. օր մը երթալէ յետոյ էրիկները մեզմէ զատելով, քիչ մը անդին տարին եւ մորթեցին: Յաջորդ օրը մեզ, այսինքն կիներ ու երեխաներ, ճամբեցին եւ դիակներու վրայէն կոխելով անցանք դէպի Շետատիէ, ուր տեսանք անօթի-ծարաւ եւ առանց պատճառի գոռնատած կիներ, որոնք մորթուելէ ազատուած էին: Այս կիներուն մէջ տեսայ եղբօրս կիներ թրուանտը, որ մէկ ձեռքը աւետարանը բռնած, իսկ միւս ձեռքն ալ ձիու եղունգ մ'առած՝ որ կրակին տաքցընելով ուտէր: Զիս տեսնելուն պէս սկսաւ լաւ եւ ըսաւ. «Երեք օր է ի վեր այս ձիու եղունգով կ'ապրիմ. մէկ հատիկ սրտահատորս մեռաւ. մեռեալներուն չեմ ցաւիր, սակայն իմացայ որ ուրիշներ ինձմէ ծածուկ անոր դիակը գողնալով՝ եփած ու կերած են! անոր կը ցաւիր...»:

Հետեւեալ օրը հոն գտնուած արաբներէն ձեռքս կտոր մը հաց անցաւ. այդ հացը անօթութենէ լացող աղջկանս տուի: Պզտիկը երբ հացը ձեռք առաւ սկսաւ ինծի նայելով լալ. «Աղջիկս, ինչո՞ւ կու լաս, ինչո՞ւ հացը չես ուտեր» ըսելուս պէս, աղջիկս հիանալի ու սրտաճմլիկ հայեացքով մը երեսս նայեցաւ. «Ա՛խ, մայրիկ, երբ դուն հոս չէիր, այս կիներ իր գաւակը մորթեց եւ հիմա ալ կ'եփէ որ ուտեն. դո՛ւն ալ գիտ պիտի մորթես...»: Ասոր վրայ աչքերս արցունքով լեցուն աշխատեցայ որ համոզեմ սրտահատորս. դժուարութեամբ յաջողեցայ եւ հացը անոր կերցուցի: Սոյն տեղը արաբները ցորեն բերելով օխան մէկ ոսկիի սկսան ծախել. սակայն դժբախտաբար չեչէնները երբ լսեցին այս խնդիրը, սկսան շարժարել կիները «խնդր կեաւուր, սենտէ փարա վար իքէն, նէ իջին պիզ իսթեր վէ արարքէն կէօսթերմէտին. տէ՛ պաքալըմ լիրալարըն կերեսինի չըգար» ըսելով¹⁶: Սակայն երբ իմանային թէ մէկը ոսկի կ'լլած է, անոր փորը պատռելով աղիքները կը խուզարկէին: Այս տեսնելով կիները դրամը իրենց թշնամին համարելով, գայն գետը կը նետէին՝ փոխանակ շուններուն յանձնելու:

Քսան օր այս խայտառակութիւնները շարունակելէ յետոյ «Ձեզ հայրենիքնիդ պիտի ուղարկենք» ըսելով ճամբայ հանեցին. այս միջոցին ոմանք գեղեցիկ կիներ ու աղջիկներ առնելով կը փախչէին. ոմանք ետ մնացողներուն կը սպաննէին. իսկ ոմանք ալ պզտիկ տղաքները տնկելով նշան կ'առնէին! Այս պահուն կառքով Մեսքեմէնէն շատ պզտիկ տղաներ բերին եւ քիչ յետոյ ամէնքը մորթելով գետը թափեցին, մինչդեռ այս պզտիկները իբր թէ «Ձեզ որբանոց կը տանինք» ըսելով բերած էին:

16.- Թուրքերէն «Անհաւատ խոզ, մտող դրամ ըլլալով հանդերձ, ինչո՞ւ համար մեր պահանջած ու փնտռած ատեն ցոյց չտուիր. օ՛ն, տեսնեմ մնացած ոսկիները հանէ»:

Այս միջոցին չեք քննարկում մեր գիրս աջ ոտքն ազարկած էր, սակայն առերևույթ մեծ չարչարանքի չեն թարկուելու համար ամբողջ ուժովս կը վազելի որ ընկերուհիներէս ետ չմնամ: Վերջապէս մեզ բլուրի մը քով տանելով՝ սկսան խումբ-խումբ գատել եւ ամէն մէկը տեղ մը տանիլ: Այս կարգադրութիւնը երբ տեսանք, սկսանք ուրախանալ եւ այլեւս մեռնելով պիտի ազատուէինք տանջանքէ: Իմ խումբս ալ քիչ մ'անդին լայն քարայրի մը քով տարին եւ սկսան վար նետել: Այս միջոցին աղջկանս ձեռքը բռնած կարգիս կը սպասէի. կարգը եկաւ մէյ մը հեռացանք [?] ես եւ աղջիկս. յետոյ աչքս բացի տեսայ որ արաբ մը գիրս կողոպտել կ'ուզէ, եւ ես ալ ինձմէ առաջ նետուած դիտակներու վրայ իյնալուս շատ վնասուած չեմ. եւ աղջիկս ալ ինձ պէս: Երբ կողոպտող արաբը տեսայ ամենայն սիրով անոր հնազանդեցայ աղաչելով որ վերջ տայ իմ կեանքին. սակայն փոխանակ մեռցնելու, սուրով ուսիս եւ կողիս երեք հարուած տուաւ ու գնաց: Ասոր վրայ բոլորովին ինքզինքս կորսնցուցի եւ միայն ձայն մը լսեցի. «Մայրիկ, մայրիկ, ո՞ւր ես դուն, չըսի՞ր թէ քեզ չեմ թողուր... արդեօք ինչո՞ւ թողիր...»: Աղջիկս էր... բայց ի՛նչ օգուտ! Ո՛չ խօսքով եւ ոչ ալ մարմնով անոր պատասխանելու անկարող էի... Տակաւին մինչ այժմ այդ Ձայնը ականջիս հնչելով՝ գիրս կ'անհանգստացնէ...

Ճիշդ այս պահուն արաբները գեղեցիկ մերսինցի աղջիկ մը քարայրէն դուրս հանելով՝ կ'ուզէին իրենց վրանները տանիլ: Աղջիկը իր բոլոր ուժով մաքառելով՝ ըսաւ. «Եթէ կ'ուզէք գիրս մեռցուցէք, ես հետերնիդ չեմ գար եւ Մահմէտ չեմ ճանչնար...: Այս խօսքերը լսելով արաբները աղջկան ձեռներն ու սրունքները կտրելով, սկսան մորթը քերթել! Ասկէ յետոյ աղջկան քարայր նետեցին: Այդ պահուն կիսամեռ աղջիկը հետեւեալ խօսքերը սկսաւ. «Աստուած իմ, գիտեմ որ մեր վրէժը անոնցմէ պէտք է լուծես. սակայն ներեցէք անոնց! Ով Աստուած, որովհետեւ ինչ ըրածնին չեն գիտեր, ո՛վ Աստուած! Հոգիս քեզ առ...» եւ մեզի դառնալով՝ «Քոյրե՛ր, ձեզմէ մէկը թող կեանքիս վերջ տայ. այլեւս չեմ կրնար դիմանալ...» ըսաւ: Վերջապէս արաբ մը գինք մեռցուց:

Դիակներու մէջ չորս օր մնալէ ետք, արաբ մը քարայրին մէջ մտնելով ըսաւ. «Կիներ... Ձեր մէջ ողջ մնացողները թող գան! Ձիրենք վրանները պիտի տանիմ»: Ես ճարահատ ստիպուեցայ այս արաբին հետեւիլ. ինձմէ գատ ութ կիներ եւս եկան: Ձիս իր վրանը տարաւ, հագուստ տուաւ եւ երեք ամիս վէրքերս դարմանեց: Միւս կիներուն վէրքերը անբուժելի ըլլալուն՝ զանոնք Եփրատ գետը նետած էին!

Բոլորովին աղէկնալէ յետոյ գիրս տանող արաբ Շէմ-մար ցեղէն արաբի մը տուաւ երկու ոչխարի փոխարէն: Այս ցեղը թափառիկ ըլլալով ձմրան ատեն Պաղտատի մօտերը գացին. եւ ես ալ առիթ մը գտնալով փախայ ու Պաղտատ գացի. հոն պաշտօնեայի մը տունը ծառայ մտայ: Գործերս շատ ծանր ըլլալուն համար արդէն ձանձրացած էի. օր մը փախչելու նպատակաւ տունէն դուրս ելայ, եւ մարդ մը ինձի հանդիպելով ըսաւ. «Դուն հայ գաղթականներէն չե՞ս. եկուր քեզի եկեղեցին տանիմ. քահանային յանձնեմ»: այս խօսքը լսելուս պէս ուրախութեամբ հետեւեցայ մարդուն. բայց մարդը գիրս քաղքէն դուրս հանելով՝ թափառիկ արաբի մը գօռով յանձնեց: Գարնան պատճառաւ այս արաբներն ալ Սընճար լեռան կողմը գացին, իսկ ես նորէն առիթ մը գտնելով փախայ եւ երեք օրէն Սընճարի մէջ գտնուող սուրիացիներուն մէջ ինկայ: Հոն հանգստացայ. սակայն կերպով մը դարձեալ արաբի մը ձեռքը ինկայ, որու քով տաժանակիր աշխատութեանց ենթարկուեցայ: Օրական երկու շալակ փայտ եւ գետէն մեծ թուրումներով¹⁷ ջուր բերել ստիպուած էի: Հակառակ պարագային ամէն տեսակ արգահատանք ինձի համար էր: Վերջը ասոր քովէն փախչելով՝ Մերտինի ճամբան բռնեցի: Մերտինի քով հողագործի մը պատահեցայ. արաբերէն Մերտինի ճամբան հարցուցի, մինչդեռ քիւրտ է եղեր. երբ հայ ըլլալս հասկցաւ, գիրս յետաձգեց եւ իր վրանը տարաւ: Երեք ամիս չարաչար աշխատցնելէ յետոյ, երեք այծով ծեր քիւրտի մը որպէս կին ծախեց: Ես անկից ալ փախչելով՝ Մուսիպիինի քով երկաթուղագծի վրայ աշխատող քանի մը մարդոց քով ինկայ: Հոն իտալացի Տէօնիչի անունով մարդու մը հետ ամուսնացայ: Հոն տարիուկէս մնացի: Անգլիացիք Մուսուլ եկան, որի պատճառաւ Ալի Հասան փաշան էրկանս գերի բռնեց եւ գիրս ալ որպէս գաղթական՝ երկաթուղով Հալէպ դրկեց: Մինչդեռ ինձ նման ուրիշ հայ աղջկայ մը ամուսնացած իթալիանէ մը¹⁸ 30 ոսկի առնելով, կինն ալ որպէս իթալիէն փաստիորթին մէջ արձանագրեց եւ միասին ապրելու հրաման տուաւ:

Երբ Ճարապուս հասայ, հօրեղբայրս Կապապետ Քեթէնճեանի Պերեճիկ ըլլալը հասկցայ եւ անոր քով գալով, այժմ միասին Այնթապ կը գտնուիմ: Ազգականներուս թիւը 98 ըլլալով, 2 հատին ուր գացած ըլլալէն լուր չունիմ, իսկ մնացեալ 96էն միայն ես ողջ եմ: 95-ը գաղթի ատեն ախտերով ու դաշոյններով մեռած են: Եւ հիմա տակաւին ի՛նչ ըլլալիքէս լուր չունիմ: Միայն Աստուծմէ կ'աղաչեմ որ համբերութիւն տայ ինձ:

ՓԻՓԷ ՔԱՐԱՏԵՄԻՐՃԵԱՆ

17.- Դոյլերով, տիկերով:
18.- Իտալացիէ մը:

[1919]

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

- Ա**բրահամեան Եսայի – 245, 254:
 Աբրահամեան Տիգրան – 236, 245, 249, 251:
 Աբրահամեան Նարեկ – 236, 249, 254, 255:
 Աբրահամ Փաշա – 118, 129:
 Ադամեան Ադամ – 239:
 Ադամեան Գաբրիէլ – 236, 249:
 Ադամեան Գրիգոր – 257:
 Ադամեան Խաչեր – 256:
 Ադամեան Միհրան – 236, 249:
 Ադամեան Մովսէս – 236, 249, 256:
 Ադամեան Յարէթ – 239:
 Ադամեան Պետրոս – 234-236, 245, 249:
 Ադամեան Սեդրակ – 236, 249:
 Աթրժ պէյ – 313, 371-375, 386:
 Ալի Ֆուատ – 274:
 Արոյեան Գալուստ – 289:
 Ալպոյաճեան Արշակ – 143:
 Ակնունի Է. – 19-21, 36, 40, 54, 76, 78, 82, 86, 90, 96, 101, 109, 110, 116, 144, 190, 209, 301, 310:
 Ահարոնեան Աւետիս – 62, 174, 175, 187, 225, 226:
 Ահմէտ Րիզա – 138, 149, 162, 170, 171, 276:
 Ադամեան Գրիգոր – 258:
 Ադապապեան Յովհաննէս – 107:
 Ադաջանեան Հրանդ – 101:
 Ադասէր Յակոբ – 335:
 Ադբալեան Հրարփի – 219:
 Ամասեան Հմայեակ – 48:
 Ամատունի Յովհաննէս (Աղբատեան) – 7, 92, 127, 134, 140, 142, 143, 169-173, 178, 186, 191:
 Ամիրեան Խաչատուր – 103, 111, 117:
 Այնթապեան Փանոս – 235, 236, 249:
 Այնթապեան Թովմաս – 236, 244, 245, 249, 251:
 Անդրանիկ – Տես Օզանեան Անդրանիկ:
 Անդրէասեան Տիգրան պատուելի – 244:
 Անտէկեան Մովսէս – 257:
 Անտէկեան Պօղոս – 260:
 Անտէկեան Սահակ – 257:
 Անտոն Գօշ – Տես Պոյաճեան Անտոն:
 Անտոնեան Արամ – 20, 21:
 Աշխարհունի Տիգրան – 63, 80:
 Ապաճեան Մանիշակ – 22, 24:
 Ապաճեան Յակոբ – 249, 255, 256:
 Ապուհայաթեան Տոքթ. Արմենակ – 314, 365:
 Ապտիւլ-Խալիբ – 313, 325, 326, 370:
 Ապտիւլ Համիտ – 29, 59, 61, 65, 182, 265, 267, 275, 276, 278, 286, 294-296, 305, 313:
 Ապտիւրահման պէյ – 162:
 Առաքելեան Ալֆոնս – 413:
 Ասլանեան Խաչիկ – 198:
 Աստիկեան Տ. – 302:
 Ատաճեան Սարգիս – 256:
 Ատաճեան Սողոմոն – 256:
 Ատոմ Շահէն (Երիցեան) – 20, 21, 147:
 Ատրունի Արամ – 56, 66, 211, 212:
 Արամ – Տես Մանուկեան Արամ:
 Արամայիս (Տէր Դանիէլեան Միսակ) – 175:
 Արամ Աչոտ – 20, 21, 76, 78, 82, 90, 209, 301, 310:
 Արամեանց Հմայեակ – 83:
 Արզուման – Տես Խաչիկեան Տիգրան:
 Արիստակէս քհն. – 289:
 Արղութեան-Երկայնաբազուկ – 189, 195, 198:
 Արղութեան Յովսէփ (Իշխան) – 25, 27, 172:
 Արմէն Գարօ – 16, 27, 45, 57, 94, 96, 211, 212:
 Արշաւիր – Տես Միսաքեան Շաւարշ:
 Արտաւազդ – Տես Դարբինեան Սամուէլ:
 Բաբաջանեան Մելքոն – 25, 27:
 Բալաջան – Տես Ստեփանեան Ստեփան:
 Բարունակեան Կարապետ (Ջնդի) – 16:

Բարսեղեան Գեղամ – 20, 21, 36, 54, 120, 147:
 Բարսեղեան Պերճունչի – 79, 96, 97:
 Բարսեղեան Սարգիս (Շամիր) – 20, 21, 30, 36, 53, 54, 78, 85, 90, 94, 143, 147, 148, 301:
 Բարսեղեան Տոքթ. Ա. – 30, 44, 53, 64, 114, 129:
 Բեթրոֆ – 67, 68, 75:
 Բիծա (Զրմառացի – Յովհաննէսեան Մկրտիչ) – 16, 29, 35, 46, 56, 65, 66, 79, 105, 129:

Գազանճեան Գէորգ – 239, 255, 256:
 Գազանճեան Եղիշէ – 256:
 Գազանճեան Միհրան – 245:
 Գազանճեան Միքայէլ – 236, 249, 256:
 Գալանթար Դ. – 44, 64, 87:
 Գալթաքճեան – 101, 110:
 Գալուստեան Պետրոս – 245:
 Գալֆայեան Յարութիւն – 24, 34, 74, 78, 81, 147, 301:
 Գալմբէրեան Գնէլ եպս. – 151, 157, 315, 343-346, 352:
 Գալմեան Մ. վրդ. Սուրէն – 157, 162:
 Գասպարեան Արիստակէս – 120, 147:
 Գասպարեան Լեւոն – 214:
 Գարակէօզեան Հմայեակ – 16, 29:
 Գարակէօզեան Յակոբ (Ըլլէոն) – 248, 260:
 Գարակէօզեան Տոքթ. Մայք – 318:
 Գարատեմիրճեան Փեփէ – 433, 434:
 Գարեգին Խաթան (Զապարեան) – 20, 21, 36, 54, 63, 68, 74, 76, 78, 80-82, 85, 90, 101, 110, 190, 209, 301, 310:
 Գարեգին վրդ. (Գոնիա) – 146:
 Գարմէն – Տես Մեղքոնեան Մկրտիչ:
 Գաւաֆեան Արշակ (Քեռի) – 56, 172:
 Գէճանեան Մանուէլ – 257:
 Գէրնէչեան Թովմաս – 236, 249, 257:
 Գիսակ – Տես Սերենկիւրեան Յովհաննէս:
 Գլրճեան Գէորգ – 237, 249, 255, 257:
 Գլրճեան Կարապետ – 237, 249:
 Գլրճեան Մանուկ – 237, 249:
 Գլրճեան Յովհաննէս – 147:
 Գլրճեան Օհաննէս – 257:
 Գոճապէյքեան Տոքթ. Պօղոս – 318:
 Գոճանեան Յովհաննէս – 260:
 Գոմսայ Իսօ – Տես Կորիւն:
 Գոչունեան Վահան – 258:
 Գպուրեան Գրիգոր – 260:

Գրէյ Եղուարդ – 158:
 Գրիգոր Զօհրապ – 20, 21, 24, 34, 63, 68, 74, 79-81, 90, 94, 97, 101, 104, 109, 129, 135, 136, 149, 209, 216, 301, 310:
 Գօճանեան Աւետիս – 257:
 Գօճանեան Փանոս – 249, 256, 258:

Դանիէլեան Ներսէս եպս. – 157, 395:
 Դանիէլեան վրդ. Պարգեւ – 387, 388:
 Դանիէլ Վարուժան (Զպուքեարեան) – 20, 21, 151, 152, 301:
 Դաշնակցական Խեչօ – Տես Ամիրեան Խաչատուր:
 Դարբինեան Յովակիմ – 186:
 Դարբինեան Ռուբէն (Ա. Չիլինգարեան) – 186:
 Դարբինեան Սամուէլ (Արտաւազդ) – 7, 24, 30, 67, 123, 148, 150, 151, 160, 221:
 Դաւթեան Յոնան – 57, 62, 113, 174, 186, 189, 211:
 Դրօ (Կանայեան Դրաստամաս) – 172, 190:

Եաղուպեան Եսայի – 245:
 Եանուշկեւիչ (գօրավար) – 210:
 Եանսոն Ճեմմի – 359:
 Եասեան Արշալիր (մատնիչ) – 58, 83, 218:
 Եարամաղեան Մովսէս – 236, 249:
 Եարմայեան Տոքթ. Մինաս – 318:
 Եզրիտ Արշակ (Մուշեղեան) – 83, 221:
 Եկաւեան Լեւոն – 319:
 Եղօ (Զրմառացի – Փափազեան Պօղոս) – 26, 29, 35, 56, 65, 178, 302:
 Ենովք Շահէն – 120, 147:
 Եոլտենիչ (գօրավար) – 188-190, 211:
 Եսայեան Զապէլ – 143:
 Եսայեան Յակոբ – 149:
 Եսայեան Ստեփան – 254, 255:
 Երամեան (Համբարձում) – 241:
 Երկանեան Արամ – 176:
 Եփրեմեան Մկրտիչ – 235, 252:

Զամպաքճեան Աւետիս – 87:
 Զարեան Կոստան – 97:
 Զարդարեան Ռուբէն – 20, 24, 30, 36, 53, 54, 74, 76, 78, 82, 83, 85, 86, 90, 101, 110, 143, 144, 190, 209, 216, 301:

**Ջաւէն, Ջաւէնեան – Տես Տէր Եղիայեան Ջաւէն պատ-
րիարք:**

**Ջաւրիեւ, Ջաւրեան Յակոբ – 27, 29, 57, 89, 171-173,
178, 186, 210, 211:**

Ջաքարեան Ներսէս – 20, 21, 85, 146, 147:

Ջէքի պէյ – 370, 396-398, 426:

Ջիա Կեօք Ալի – 310:

Ջօհրապ – Տես Գրիգոր Ջօհրապ:

Ջօրեան Բարսեղ (Ժիրայր) – 20, 21, 147:

Ջօրեան Ստեփան – Տես Ռոստոմ:

Էկէարթ Ֆրանց – 314, 364-366, 423:

Էյնաթեան Գարուստ – 225:

Էյնաթեան Ն. – 224:

**Էնվեր – 4, 28, 85, 99, 104, 109, 118-120, 129-131, 134, 141,
141, 171, 310, 317, 323, 350, 354:**

Ըչրր Տոբթ. – 164, 165:

Թագեան Խաչեր – 257:

**Թալէաթ – 20, 24, 26, 28, 30, 32, 35, 37, 42, 47, 53, 57-59,
61, 65, 66, 76, 78, 80, 82, 92, 96, 104, 119, 120, 123, 130, 131,
134, 138, 162, 170, 185, 192, 309, 310, 313, 360, 385:**

**Թահսին պէյ – 16, 56, 66, 91, 184, 292, 300, 310, 313, 331,
335, 413:**

Թաշճեան Յակոբ – 147:

Թաշճեան Տոբթ. – 106, 151:

Թապիպեան Հայկազուն – 353:

Թասլագեան Արմենակ – 257:

Թեբիրեան Փանոս – 236, 249, 251:

Թերլեմէզեան Միհրան (Վանիկ) – 45:

Թերճիմանեան Գէորգ – 147:

**Թիրեաքեան Հայկ (Հրաչ) – 20-22, 30, 44, 47, 53, 64, 65,
75, 77, 90, 94, 147, 216, 301:**

Թիւթիւնճեան Մինաս – 198:

Թիւֆենկճեան Օննիկ – 147:

Թորգոմեան Տք. Վահրամ – 20, 21, 43, 44, 64:

Թորիկեան Մ. վրդ. Վաղինակ – 157, 315:

Թորլայեան Երուանդ (Կապուօշ) – 20:

Թորլաքեան Միսաք – 302:

Թուղլաճեան Գառնիկ – 151, 352:

Թոփճեան Տոբթ. – 74, 81:

Թոքաճեան Վահէ – 16:

Թոքաճեան վրդ. Բարթողիմէոս – 161:

Թրաշեան Սողոմոն – 258:

Իբրանոսեան Հաճի աղա – 101, 125, 135:

Իզգէթ փաշա – 170:

Ինճեճիկեան Աւետիս – 243, 261:

Ինճէեան Մովսէս – 257:

Ինճէեան Սարգիս – 236, 249, 255, 256:

Իշխան – Տես Պօղոսեան Նիկոլ:

Իոսուֆեան Յովհաննէս – 62, 250:

Իպրահիմ պէյ – 127, 128:

Իսահակեան Աւետիք – 209, 214:

Իսկենտէրեան Յարէթ – 245:

Իսմայիլ Հաքքը պէյ – 370:

Իսրայէլեան Արիս – 220:

Լայպքնէխտ Քարլ – 181:

Լարենց Լեւոն (Քիրիչչեան) – 20, 21, 147:

Լեաբով – 25:

Լեւնեան Ռ. – Տես Նազարեանց Լիպարիտ:

Լեփեան Գրիգոր – 48, 211:

**Լեփսիոս Տոբթ. Երզան – 95, 96, 103, 104, 111, 114, 129,
130, 134, 142, 145, 146, 173, 178, 181, 186, 190, 308:**

Լիման Ֆոն Ջանտերս – 65, 104:

Լոնգէ Ժան – 27, 34, 175:

Լուսիկեան Գեղարդ – 334:

Լուրջեան Մանուէլ – 256, 258:

Լուրջեան Յարութիւն – 256:

Լուրջեան Յովհաննէս – 248, 260:

Խաթակ – Տես Գարեգին Խաթակ:

Խալիլ պէյ – 32, 96, 97, 109, 171, 310, 323, 326, 344:

Խանպէկեան Մանուկ – 147:

Խանետանեան Հայկազուն – 302:

Խանտանեան Կարապետ – 362:

Խաչ – Տես Խաչատրեան Աստուածատուր:
Խաչատրեան Աստուածատուր – 7, 37, 58, 74, 80, 81, 138, 143, 149, 158, 208, 211, 212, 216-221, 223-225:
Խաչերեան Վերժին – 23, 46, 63:
Խաչիկեան Իսկէնտէր – 257:
Խաչիկեան Տիգրան (Արզուման) – 19, 100, 103, 173, 178, 186, 225:
Խարլամով – 211:
Խէյրեան Գաբրիէլ – 260:
Խէչօ (Դաշնակցական) – Տես Ամիրեան Խաչատուր:
Խոնասարեան Հայկ – 74, 81:
Խուրուսի պէյ – 170, 292, 410:
Խունունց Յովսէփ – 188, 189:
Խօշեան Կիրակոս – 257:
Խօշեան Պարսամ-Համբարձում – 260:

Մամհուր Տիգրան (Ամսէեան) – 7, 208, 220-222, 224:

Կապուօշ (Թորոյեան Երուանդ) – 20, 21, 30, 43, 53:
Կեպէչեան Սերոբ – 236, 251:
Կերենսկի – 210:
Կէօվկէօզեան Սահակ – 258:
Կիկօ (Թորոսեան Գրիգոր) – 20, 21, 120, 147:
Կիլոմ Բ. – Տես Վիլհելմ Բ.
Կիւրճեան Մելքոն – 20, 21, 147:
Կոմիտաս վրդ. (Սողոմոնեան) – 20, 21, 44, 64:
Կոմս – Տես Փափազեան Վահան:
Կոտոյեան Հաճի Յակոբ – 299:
Կորիւն (Գոմսայ Իսօ) – 15, 28, 179, 184, 293, 299:
Կրաֆֆորթ – 198:
Կրեկորէֆ – 67, 75, 102:

Հազարապետեան Անանիա վրդ. – 107, 157, 335:
Հաճիեան Ենովք – 256:
Համազասպ վրդ. (Սամսոն) – 157:
Համբարձումեան Կոստի – 193, 194:
Համբարձումեան Համբարձում – 20, 21, 36, 54, 119, 147:
Հայրանեան Տոքթ. – 345, 358:
Հանրմեան Արտաւազդ – 19, 169, 178, 213, 235, 241, 252, 254, 255

Հանինեան Ճապրա-Գաբրիէլ – 236, 249, 256, 258:
Հանիսեան Արմենակ – 256:
Հապէչեան Մարտիրոս – 256:
Հապէչեան Միսաք – 236, 249, 251:
Հապէչեան Յարութիւն – 256:
Հապէչեան Ստեփան – 236, 249, 251:
Հապէչեան Փանոս – 256:
Հապիպեան Սեդրակ – 236, 249, 251:
Հացագործեան Արմենակ – 193:
Հաւաբեան Յակոբ – 260:
Հաւաթեան Պետրոս – 260:
Հաֆթը Իսմայիլ փաշա – 320:
Հիլմի պէյ – 86, 91, 98, 110, 282, 283, 310:
Հիսարլեան Տոքթ. Պօղոս – 318:
Հիւսիսեան Գարեգին – 147:
Հիւսիսեան Վահան – 16, 29, 79, 91:
Հիւսմանդ – 296:
Հոհենրոյ-Լանկենպուրկ – 104:
Հողիկեան Վաղարշակ – 204:
Հոճա Իլիաս – 323:
Հրաչ – Տես Թիրեաքեան Հայկ:

Ղազարեան Միսակ – 113, 189:
Ղազարոսեան Տոքթ. Վահան – 318:
Ղարախանեան Ներսէս եպս. – 179:
Ղարիպեան – 56, 66, 130:

Ճանկիւլեան Յարութիւն – 78, 90, 209, 310:
Ճանպուրթ Իսմայիլ – 24, 34, 37, 310:
Ճաւիտ Հիւսէին – 120, 131:
Ճելալ պէյ – 77, 96, 136, 139, 158, 162, 170, 220, 385, 425:
Ճեմալ Ազմի – 176, 309, 310, 313, 319, 340:
Ճեմալ փաշա – 17, 93, 99, 109, 135, 309, 310, 425:
Ճենազեան պատուելի Եփրեմ – 314:
Ճերմակ (Բողիեան Յովհաննէս) – 173, 186:
Ճեւտէթ պէյ – 135, 151, 293, 296, 310, 313, 324-328:

Մազար պէյ – 371, 375, 392:
Մազմանեան Լեւոն – 214:

- Մարձեան Շուքրի – 258:
 Մալումեան Խաչատուր – Տես Ակնունի է.
 Մահմուտ Քեամիլ փաշա – 16, 170, 320, 321, 350:
 Մաղաքեան Տոքթ. – 93:
 Մանուկեան Արամ – 32, 40, 42, 294, 296-298, 328:
 Մանճեան Իգնատիոս – 257:
 Մանուկեան Տոքթ. Յարուժիւն – 359:
 Մանտելշթայմ Անտրէ – 316:
 Մասեհեան Խան Յովհաննէս – 308:
 Մասմանեան Յովհաննէս – 236, 249:
 Մատթեան Յովսէփ – 149, 151:
 Մատրէն Քոլ – 164, 165:
 Մարալ – Տես Փափախեան Փիրոս:
 Մարանճեան Մարուքէ – 211:
 Մարգարեան Յովհաննէս – 239:
 Մարգարեան Սամուէլ – 260:
 Մարգպետ (Ղազարոսեան Ղազարոս) – 7, 24, 63, 74, 81, 146, 208, 209, 211, 212, 216-218, 220-223:
 Մարտիկեան Ոսկան – 20, 24, 63, 80:
 Մարտիկեան Պաղտասար – 260:
 Մելքոնեան Աբրահամ – 55:
 Մելքոնեան Մկրտիչ – 125, 146, 222:
 Մեծատուրեան Արմէն – 223, 225:
 Մեհմէտ Էմին – 15, 99:
 Մեհրապեան Սարգիս (Խանասորի Վարդան) – 44, 56, 66:
 Մեմտուզ պէյ – 310, 336:
 Մեսրոպ եպս. (Արմաշի վանահայր) – 157:
 Մեսրոպ եպս. (Թիֆլիսի առաջնորդ) – 25, 27, 188:
 Մերձանօֆ Գրիգոր (Ռուզան) – 7, 30, 31, 36, 58, 78, 86, 102, 119, 143, 144, 146, 148, 217, 221, 225:
 Մերտինեան Յակոբ – 87:
 Միլիոքով – 210:
 Միհրդատ Հայկազն – 147:
 Մինախորեան Վահան – 141:
 Մինասեան Մինաս – 87:
 Մինասեան Սարգիս – Տես Արամ Աշոտ:
 Միսաքեան Շաւարշ (Արշալիր) – 7, 25, 30, 33, 36, 37, 45, 46, 58, 63, 75-79, 83, 86, 88-90, 121, 123, 127, 128, 141, 144, 149, 152, 208, 217, 220-222, 224, 225:
 Միսահաթ Շիւքրի – 30, 31, 53, 78, 90:
 Միրզա – Տես Քեթեմնճեան Տոքթ. Միրզա:
 Միքայէլեան Արսէն – 179:
 Միքայէլեան Իշխան – Տես Պողոսեան Նիկոլ (Իշխան):
 Միքայէլեան Մովսէս – 239:
 Մկրտիչեան Յարուժիւն (մատնիչ) – 218, 224:
 Մկրտիչ (ընկեր) – 217, 221-224:
 Մճօ, Մջօ – Տես Պոլեան Մկրտիչ:
 Մնացականեան Վահան – 331:
 Մոմճեան Հայկ – 147:
 Մորթման – 138:
 Մուսամէր պէյ – 310, 313, 315, 343-353, 355, 356, 358, 414, 416:
 Մուշեղեան Արամ – 352:
 Մուշեղեան Արշակ – Տես Եգիտ Արշակ:
 Մուպահաճեան Աբիկ – 125, 222:
 Մուսա Ղասրմ – 87, 89, 98, 110:
 Մուրատ – Տես Սեբաստացի Մուրատ:
 Մուրատ (Խորոխոնցի) – 344:
 Մուրատ (Հնչակեան) – Տես Պոյաճեան Համբարձում:
 Մուրատբէկեան Խորէն եպս. – 188:
 Մուրատեան Աւետիս – 258:
 Մուրատեան Օհաննէս – 327:
 Յակոբեան Արամ – 85:
 Յակոբեան Գրիգոր – 147:
 Յակոբեան Պօղոս – 258:
 Յարուժիւն (Պոլիս) – 148-150, 162:
 Յարուժիւնեան Արմենակ – 258:
 Յարուժիւնեան Արտաշէս – 116, 126, 130, 392:
 Յարուժիւնեան Սամսոն – 27:
 Յոնան – Տես Դաւթեան Յոնան:
 Յովակիմ արք. (Իզմիտի առաջնորդ) – 157:
 Յովասափեան Հրանտ վրդ. – 218, 222:
 Յովհաննէսեան Փիլիպոս – 147:
 Յովնան Մ. վրդ. (Կարապետեան) – 20, 21:
 Յուսիկ քհն. (Քաջունի) – 20, 21:
 Նազարբէկեան զօր. Թովմաս – 400:
 Նազարեանց Լիպարիտ – 57, 138, 169, 173, 186, 210:
 Նազարէթ Չաւուշ Նորաշխարհեան – 287, 304, 367:
 Նազիմ պէյ – 310, 340:
 Նաթանեան Միքայէլ – 423:
 Նալպանտեան Մ. վրդ. Գէորգ – 157:
 Նալպանտեան Վարդուհի – 325:
 Նաճի Էօմէր պէյ – 184, 282, 283, 313:
 Նգրուրեան Գրիգոր – 260:

Նեվրոզ — 55:
 Նիկողոսեան Նիկողոս — 249:
 Նիքոլայեֆ — 25, 75:
 Նորատունկեան Սերովբէ — 78, 116, 147, 301:
 Նորսիկեան Միսաք — 140:

Շ ահագ Բարսեղ — 20, 21, 68, 85, 99, 143, 216, 301:
 Շահագ Վարդան — 29, 46, 56, 65, 79:
 Շահրիկեան Յարութիւն — 20, 21, 36, 54, 74, 77, 85, 90, 93, 147:
 Շամիլ — Տես Բարսեղեան Սարգիս:
 Շաննագեան Սարգիս — 260:
 Շառայեան Գեղարդ — 235, 236, 249:
 Շելքէթ պէյ Շեքիր Զատէ — 198:
 Շերիֆ փաշա — 88:
 Շերպէթեան Յովհաննէս — 257:
 Շերպէթեան Պետրոս — 236, 249:
 Շերպէթեան Պօղոս — 239:
 Շերպէթեան Սերոբ — 235, 236, 245, 254-256, 259-262:
 Շեքի փաշա — 321, 400:
 Շեփրա Տոքթ. — 120, 121, 131, 137, 369:
 Շէյքեման Ֆիլիպ — 308:
 Շրխիեան Արսէն — 258:
 Շրխիեան Ռստիկ — 258:
 Շրխիեան Օհան — 258:
 Շիրակեան Արշաւիր — 176:

Ո սկերիչեան Մանուէլ — 224:
 Ուաթ Տոքթ. — 151, 160:
 Ուիլսըն Վուտրոյ — 85, 104, 109:

Չ ագրեան Գէորգ — 258:
 Չարրգ Արամ — 118, 211, 212, 214, 218:
 Չարրգ Ղազար — 211, 222:
 Չաւուչեան Երուանդ — 20, 21:
 Չափարեան Մովսէս — 257:
 Չափարեան Յակոբ — 257:
 Չափարեան Պօղոս — 257:
 Չեռնով Վիկտոր — 265:
 Չէօկիւրեան Յովհաննէս (Օննիկ) — 33, 46, 221-223:

Չէօկիւրեան Տիգրան — 33, 147:
 Չրտրեան Կարապետ — 236, 249, 257:
 Չիլինկիրեան Ռուբէն (Սեւակ) — 149, 151, 152:
 Չիքովանի — 189:
 Չոլաքեան Դանիէլ — 161:
 Չրաքեան Ստեփան — 362:

Պ ալասանեան Գեղամ — 301:
 Պալաքեան Մ. վրդ. Գրիգորիս — 20, 21:
 Պալեան Վաղարշ — 221, 222:
 Պաղտիկեան Գրիգոր — 147:
 Պամաճեան Գեղամ — 327:
 Պայրամեան Միսաք — 260:
 Պապայեան Խոսրով (Վաղարշ) — 7, 208, 217, 220, 224, 225, 423:
 Պապիկեան Դանիէլ — 257:
 Պապիկեան Վանէս — 257:
 Պարթեւեան Խոսրով — 99, 110:
 Պարոյր — Տես Օզանեան Անդրանիկ:
 Պարոյր Արզուման — 147:
 Պարտիզպանեան Տոքթ. Լեւոն — 147:
 Պաստրմաճեան Սեդրակ — Տես Փաստրմաճեան Սեդրակ:
 Պատուհասեան Արամ — 323:
 Պեհրիկեան Խոսրով վրդ. — 157, 162:
 Պետրի պէյ — 20, 21, 30, 53, 81, 310:
 Պետրոսեան Մովսէս — 20, 21, 101, 116, 147:
 Պետրոսեան Յովնան — 258:
 Պետրոսեան Պօղոս — 236:
 Պերար Վիկտոր — 175:
 Պեքիր Սամի պէյ — 96:
 Պէյլիքեան Խոսրով — 289:
 Պէհաթտին Շաքիր — 86, 91, 176, 282, 309, 310, 313, 340, 347, 360, 372, 374:
 Պէյպուտ խան Ճիւանչիր — 302:
 Պիտանեան Պօղոս — 249, 251, 256:
 Պոլեան Մկրտիչ (Մճօ) — 179, 299:
 Պոյաճեան Անտոն (Գօշ) — 113, 211, 214, 264:
 Պոյաճեան Համբարձում (Մուրատ) — 20, 36, 79, 119, 120, 125, 130, 209, 301:
 Պոյաճեան Մարտիրոս — 236, 249, 256:
 Պոյաճեան Յակոբ — 245:
 Պոյաճեան Սամուէլ — 260:
 Պոյաճեան Սարգիս — 256:

Պոսթանձեան Արուսեակ – 23, 24, 63:
 Պուլկարացի Գրիգոր (Կէօզեան) – 193, 194:
 Պուրսալեան Կարապետ – 256:
 Պուրսալեան Յովհաննէս – 239, 256, 258:
 Պուրսալեան Սեդրակ – 236, 249, 251:
 Պուրսալեան Փանոս – 256:
 Պօղոսեան Կարապետ – 194:
 Պօղոսեան Նիկոլ (Իշխան) – 24, 26, 34, 35, 42, 53, 78, 293, 294, 296, 297:
 Պօղոս Նուպար – 17, 27, 43, 160, 175, 189, 210, 263:
 Պօղկէզէնեան Յարութիւն – 149:

Ջանան Ա. – 224:

Ջլղաղեան Մկրտիչ վրդ. – 97, 157, 362, 363:
 Ջնդի – Տես Բարունակեան Կարապետ:

Ռատիօ Տիմիթրիեւ – 171:

Ռատոսլաւով – 33, 38, 171, 172:
 Ռաֆայէլեան Յակոբ – 147:
 Ռեշատ պէյ (Տիարպէթիւրի վալի) – 310, 313, 362, 363, 373:
 Ռէյնոլթ Տոքթ. – 164, 165:
 Ռոստոմ – 6, 86, 111, 113, 189, 190, 210-214, 216, 263, 264, 266, 296, 306:
 Ռոստոմեանց Ռոստոմ – 147:
 Ռորպախ Փօլ – 58, 80:
 Ռուբէն – Տես Տէր Մինասեան Ռուբէն:
 Ռուզան – Տես Մերձանօֆ Գրիգոր:

Սաստէթեան Սմբատ եպս. – 151, 157, 292:

Սալբաճեան Սմբատ վրդ. – 422:
 Սալէճ Ջէքի պէյ – 8, 10, 12, 310, 314:
 Սամուէլօֆ Վաւաճապուճ – 147:
 Սամուէլօֆ Ս. – Տես Մերձանօֆ Գրիգոր:
 Սայապալեան Ժազ – 147:
 Սայիտ Հալիմ փաշա – 21, 309, 310:
 Սապիթ պէյ – 313, 359, 360, 361:
 Սատրաբեան Դ. Կ. – 422:
 Սարաճեան Պետրոս եպս. – 136:
 Սարայտարեան Տոքթ. Արմենակ – 319:

Սարաֆեան Սիմոնիկ – 387:

Սարգիսեան Տիգրան – 63:

Սաֆրաստեան Ա. – 113, 224-226:

Սգայեան Եսայի – 249:

Սգայեան Կարապետ – 236, 249, 251:

Սգայեան Կարապետ Գ. – 236, 249, 257:

Սգայեան Միսաք – 257:

Սգայեան Պետրոս – 237, 249, 255, 257:

Սգայեան Փանոս – 236, 249, 257:

Սեբաստացի Մուրատ (Խրիմեան) – 26, 29, 35, 65, 79, 83, 101, 105, 118, 129, 131, 142, 190, 220, 344:

Սերենկիւլեան Յովհաննէս (Վարդգէս) – 20, 21, 24, 26, 30-32, 34, 36, 37, 40-43, 47, 53, 54, 57, 58, 63, 65, 68, 74, 75, 77-79, 81, 83, 85, 90, 92, 94, 96, 101, 109, 114, 119, 123, 135, 136, 139, 143, 190, 209, 216, 217, 301, 310:

Սերվէտ պէյ – 184, 323:

Սեպուճ (Ներսէսեան Արշակ) – 190:

Սեքլէմեան Աբրահամ – 260:

Սէյֆուլլահ Իլիաս – 86, 91, 286:

Սըրըգեան Միհրան – 239:

Սթամպուլեան Գրիգոր – 237, 249, 257:

Սիւրմանթօ (Եարճանեան Ատոմ) – 20, 21, 30, 53, 147:

Սիւլեան վրդ. Մամբրէ (ուրացող) – 218:

Սլաք – Տես Օխիկեան Արմենակ:

Սմբատ Բիւրատ – 147:

Սնապեան Մարկոս – 237, 249:

Սողիկեան Սարգիս – 151:

Սուլթան Ռեշատ – 4, 311:

Սուլթան Սելիմ – 90, 271, 280, 290:

Սուրէն – Տես Սեբաստացի Մուրատ:

Սուրտուկեան Դ. Կ. – 422:

Սուքիասեան Թազուր – 24, 26, 56:

Ստեփանեան Մովսէս – 222:

Ստեփանեան Սարգիս – 48:

Ստեփանեան Տոքթ. Ալեքսան – 387:

Ստեփանեան Ստեփան (Բալաջան) – 56, 66, 214, 300:

Ստիպեղտոն – 188:

Սրապեան Արամ – 48:

Սրապեան Հայկ – 352:

Սրապեան Օննիկ – 147:

Սրենց Սարգիս (Գլըճեան) – 44, 64:

Սրուանձտեանց Համազասպ – 86, 172:

Սվազցի Յարութիւն – 302:

Սվաճեան Տիգրան – 147:

Սրըգեան Յակոբ – 259:

Վաբորեան Պօղոս – 144:
 Վալանս Ժանն – 371, 373:
 Վահագ – Տես Վռամեան Արշակ:
 Վահրամ Տոքթ. Ջաւէն – 361:
 Վաղարշ – Տես Պապայեան Խոսրով:
 Վանայեան Յարէթ – 260:
 Վանիկ – Տես Թերլեմէզեան Միհրան:
 Վանկենհայմ Հանս – 90, 95, 109, 221:
 Վարանդեան Միքայէլ – 18, 27, 29, 55, 111, 210, 212, 214, 226, 263, 265:
 Վարդան (Խանասորի) – Տես Մեհրապեան Սարգիս:
 Վարդանեան Վարդան – 29, 56, 66, 130, 344:
 Վարդան վրդ. Յակոբեան – 179, 299:
 Վարդգէս – Տես Սերենկիւլեան Յովհաննէս:
 Վարդիկեան Յարութիւն – 56, 130, 344:
 Վեհիպ փաշա – 351:
 Վերֆել Ֆրանց – 234:
 Վիգէն – Տես Ջաւրեան Յակոբ:
 Վիլհելմ Բ. – 96, 119, 317:
 Վիչապեան Գէորգ – 87:
 Վլատիմիր Տիմիրիեւ – 221:
 Վռամեան Արշակ (Դերձակեան Օննիկ) – 24, 26, 31, 32, 34, 40, 42, 53, 54, 56, 58, 65-67, 78, 80, 81, 89, 90, 98, 109, 225, 294, 296, 297, 327, 328:
 Վրացեան Սիմոն – 29, 66, 111:

Տագէսեան Յակոբ – 258:
 Տագէսեան Տիգրան – 258:
 Տաթեւեան Վահագն – 76, 82:
 Տարմաճեան Օհան – 149:
 Տաղաւարեան Գաբրիէլ – 314, 365:
 Տաղաւարեան Տք. Ն. – 20, 21, 78, 120, 209, 310:
 Տաղճեան Յակոբ – 236, 249, 251:
 Տամատեան Ա. – 207:
 Տամատեան Միհրան – 248:
 Տամատ Մահմուտ փաշա – 276:
 Տաշճեան Միսաք – 257:
 Տաշճեան Յակոբ – 236, 249, 251:
 Տեմիրճեան Բարսեղ – 56, 66:
 Տեմլաքեան Պետրոս – 245:
 Տերմէն – 194, 202, 203:
 Տէյիրմէնճեան Շնորհք – 220, 222:
 Տէր Գալուստեան Աբրահամ քհն. – 244:

Տէր Գալուստեան Մովսէս – 235, 236, 245, 249:
 Տէր Գալուստեան Պետրոս – 236, 249, 257:
 Տէր Եղիայեան Ջաւէն պատրիարք – 63, 68, 74, 76, 77, 80-82, 90, 95-97, 104, 109, 118, 123, 129-131, 135, 138, 139, 143, 146, 149, 151, 208:
 Տէր Խորէնեան Ծ. վրդ. Պսակ – 157:
 Տէր Կարապեան Գեղամ – 149, 225, 323:
 Տէր Մինասեան Ռուբէն – 15, 28, 179-182, 184, 293, 299, 300:
 Տէր Մովսէսեան Խաչեր – 236, 249:
 Տէր Մովսէսեան Մովսէս – 256:
 Տէր Մովսէսեան Պօղոս – 237, 249:
 Տէր Մովսէսեան Սարգիս – 256:
 Տէր Յակոբեան Յակոբ – 126:
 Տէօվլէթեան Տոքթ. Խաչիկ – 318:
 Տէօվլէթեան Ղուկաս – 303:
 Տիգրան Ալիջայ – 15, 28, 293, 299:
 Տիւպեր Ջարեհ – 118, 129:
 Տիւլիբեան Սուքիաս – 387:
 Տիւրունի Յակոբ – 147:
 Տոլչի դերպ. – 138, 372:
 Տուտազլեան Պետրոս – 245:
 Տօմանեան Պօղոս – 257:
 Տօնապետեան Ռուբէն – 318, 327, 350:
 Տօնիկեան Սարգիս – 256:

Փաթիաթեան Մովսէս – 258:
 Փալապըրք Մանաս – 194:
 Փանոսեան Հ. Կարապետ – 257:
 Փանոսեան Տք. Միսաք – 319:
 Փանոսեան Ստեփան – 256:
 Փաշայեան Տք. Կարապետ – 20, 21, 36, 45, 54, 64, 78, 85, 86, 94, 116, 141, 147:
 Փաստրմաճեան Գարեգին – Տես Արմէն Գարօ:
 Փաստրմաճեան Սեդրակ – 16, 289, 292, 409:
 Փափազեան Ներսէս – 36, 54, 74, 75, 81, 119, 120, 147:
 Փափազեան Վահան (Կոմս) – 15, 16, 24, 28, 41, 56, 64, 65, 75, 81, 87, 98, 110, 179, 185, 293, 299, 300:
 Փափախեան Փիլոս – 45, 56, 64, 66, 91, 211, 300:
 Փենէնեան Պետրոս – 260:
 Փիլոս – Տես Փափախեան Փիլոս:
 Փիրինճիգատէ Ֆէյզի – 363:
 Փոլատեան Յ. – 29, 56, 66, 79, 130:
 Փոլատեան Տ. – 344:

Քալեան Եսայի – 249:
Քանթարեան Լեւոն – 352:
Քաջբերունի Մեսրոպ – 223:
Քարէն Եփփէ – 364:
Քարոսկեան Խ. – 96:
Քեազիմ պէյ – 299:
Քեթէնճեան Տոքթ. Միրզա – 20, 21, 44, 64, 221:
Քելէկեան Տիրան – 20, 21, 316, 352, 386:
Քելիչեան Գէորգ – 257:
Քելիչեան Նազարէթ – 323:
Քելիչեան Քերոբէ – 257:
Քեռի – Տես Գաւաֆեան Արշակ:
Քերմէնեան Յովհաննէս – 257:
Քերմէնեան Պետրոս – 256:
Քէլեան Ալեքսան – 237:
Քէլեան Արմենակ – 237, 249:
Քէլեան Կարապետ – 237, 249:
Քէլեան Պօղոս – 249:
Քէլիչեան Գրիգոր – 257:
Քէլիչեան Եսայի – 237, 249:
Քէլիչեան Կարապետ – 257:
Քէլիչեան Մովսէս – 255, 257, 259, 260:
Քէլեան Բիւզանդ – 20, 21, 30, 43, 44, 64, 135:
Քէօչեան Ենովք – 257:
Քէօչեան Սարգիս – 257:
Քէօչեան Գրիգոր – 256:
Քէօսեան Հրանտ – 301:
Քէօր Հիւսէին փաշա – 88:
Քիւլասեան Արաքսի – 366:
Քիւրքճեան Ստեփան – 20, 120:

Քիւրքճեան Օհան – 149:
Քրիսեան Շաւարշ – 120, 147:
Քրմոյեան Վահագն – 117, 211:

Օգանեան Անդրանիկ (Պարոյր) – 45, 56, 66, 79, 172, 184, 251:
Օգանեան Մերուժան – 55, 83:
Օխիկեան Արմենակ (Սլաք) – 89, 327:
Օհաննէսեան Վերգինէ – 366:
Օհանջանեան Համազասպ – 86:
Օշական Յակոբ (Քիւֆէճեան) – 97:
Օտապաչեան Աշխէն – 366:
Օտապաչեան Պօղոս – Տես Բարսեղեան Սարգիս:
Օտապաչեան Սահակ Ծ. վրդ. – 29, 289, 315, 343, 345, 346, 348, 357, 414:
Օտեան Երուանդ – 20, 21:

Տալու Լէոփոլտ – 96, 187, 189, 192, 215:
Տեներճեան Քրիս – 101, 147:
Տերմանեան Արշակ – 259:
Տիչեր Անդրէաս – 146, 215:
Տերտինանտ (Պուլկարիոյ Թագաւոր) – 171, 172:
Տերտինանտ Քարլ Շտրոմ – 181:
Տուատ փաշա – 170:
Տոնգլեան Միսակ – 258:
Տրանց Եոզէֆ – 141:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

- Աբաղա** – 32, 204:
Ագչեհիր – 424-426:
Ազիզիէ – 343, 344:
Ազունիս – 414:
Աթանան – 28:
Ալաշկերտ – 16, 267:
Արապաշ – 77, 82, 84, 96:
Արեքսանդրէտ – Տես Իսկենտերուն:
Արճաւազ – 16, 89, 193, 194:
Արմալի – 386:
Արպիսթան – 84, 96:
Ախալցխա – 401, 402:
Ախալքալաք – 401, 402:
Ախլաթ – 88, 89:
Ակն – 76, 82, 156, 339, 342, 420:
Աղբակ – 16:
Աղեքսանդրիա – 236, 240, 245, 251:
Ամանոս – 121, 208, 245, 369, 414, 424:
Ամասիա – 94, 143, 156, 322, 345, 350, 353, 355, 416-418:
Ամերիկա – 5, 6, 7, 15, 18, 19, 22, 24, 25, 27, 28, 35, 41, 43, 55, 57, 83, 85, 98, 100, 109, 111, 129, 134, 136, 137, 140, 142, 145, 164, 165, 169, 170, 172, 173, 179, 186, 190-192, 208, 211-213, 226, 234, 240, 250, 251, 255, 259, 265, 267, 307, 338, 365, 406, 412, 423:
Այաշ – 30, 36, 40, 42, 44, 45, 47, 53, 54, 58, 64, 65, 74, 81, 83, 85, 87, 90, 98, 101, 110, 131, 140, 143, 147, 152, 220, 310, 318, 384:
Այգեստան (Վան) – 24, 34, 193, 297, 298:
Այծպտեր – 341:
Այնթապ – 17, 32, 76, 77, 82, 95, 99, 121, 135-137, 369, 415, 416, 419, 433, 434:
Անգարա – 19, 21, 26, 34, 36, 40, 42, 47, 54, 58, 76, 78, 80, 82, 83, 85, 116, 118-120, 130, 131, 138, 141, 144, 146, 147, 152, 209, 217, 222, 294, 313, 318, 322, 371-377, 381-383, 386, 414:
Այնթափ – 179:
Այտրն – 373:
Անգլիա – 5, 111, 147, 181, 268, 309, 376:
Անտիոք – 243, 244, 246, 261:
Աշոտի – 414:
Առաքելոց վանք – 15, 28:
Առէն – 16, 28, 34:
Առնաուտքեոյ – 24, 148, 223:
Ատաբազար – 44, 64, 114, 120, 129-131, 159, 220, 322, 392, 396:
Ատանա – 17, 32, 44, 64, 83, 84, 96, 97, 120, 123-125, 131, 135-137, 139, 141, 158, 160, 161, 170, 258, 314, 318, 343, 348, 351, 370, 384, 395, 414, 431, 432:
Ատիաման – 410, 411, 415, 416:
Ատրիանապոլիս – Տես Էտիրնէ:
Արաբ-Բունար – 416:
Արաբիլի – 156, 334:
Արաբու-Չոր – 325, 327, 328:
Արարատ լեռ – 59, 61:
Արաքս գետ – 59, 61, 91:
Արդուհն – 33, 131:
Արեգի – 337:
Արծափ – 203:
Արծկէ – 16:
Արդանա-Մատէն – 335:
Արճէշ – 88, 89, 193:
Արմաշ – 128, 156, 157, 392:
Արմտան – 51, 332, 333:
Արսլանպէկ – 118, 131, 393:
Արտամետ – 193:
Աւազան – Տես Տրապիզոն:
Աւզաղբիւր – 179:
Աւստրիա – 92, 141, 263, 281, 283, 290:
Աֆրոն Գարահիսար – 45, 66, 134, 159, 160, 161, 389, 390, 398, 427, 428:

Բարերդ – 8, 10, 11, 13, 33, 87, 106, 107, 156, 157, 300, 301, 321, 331, 334, 335, 407, 412, 413:

Բազառիճ – 51:

Բազու – **Տես Պաքու**:

Բալու – 355, 410:

Բաղէշ – **Տես Պիթլիս**:

Բայազէդ – **Տես Պայազիտ**:

Բանալի – **Տես Սամսոն**:

Բաշկալէ – **Տես Պաշքալէ**:

Բասեն – 8, 32, 156, 267, 289, 407, 409:

Բարձրաբերդ – **Տես Կարին-էրզրում**:

Բարձրաւանդակ – **Տես Սասուն**:

Բերա – 63, 67, 76, 80, 144, 148, 224, 314, 365, 398:

Բերդ – **Տես Շապին Գարահիսար**:

Բերլին – **Տես Պերլին**:

Բերրի – 122:

Բիթլիս – **Տես Պիթլիս**:

Բինկեան – 321:

Բիւրք – 16:

Բլրակ – 12:

Բլուր – 331, 334:

Բղուան – 51, 52:

Բուրդ – 354:

Բունաշէն – 98, 110:

Բօռ-Սայիտ – **Տես Փոր-Սայիտ**:

Գայա Տիպի – 350, 351, 416:

Գալլ գետ – 8, 52, 336, 341:

Գահիրէ – 27, 178, 236, 240, 242, 251, 254, 255, 259-261:

Գատը գիւղ – 224, 225:

Գանկալ – 343, 344, 349, 414:

Գանձակ – 183, 401:

Գառնի – 332:

Գասթեմունի – 373, 386, 414:

Գարամուրսալ – 391:

Գաւաշ – 24, 34:

Գերմանիա – 4, 7, 22, 60, 62, 70, 71, 92, 96, 104, 134, 138, 139, 146, 173, 178, 180, 181, 187, 263, 268, 269, 274, 283, 290, 307, 308, 314, 316:

Գոմեր – 332:

Գոմս – 15, 28, 88, 184:

Գոնիա – 7, 19, 21, 24, 28, 34, 44, 45, 63-66, 78, 80, 85, 114, 119-121, 127, 129-131, 135, 139-141, 143, 144, 146, 151,

152, 158-162, 170, 176, 216-218, 220-223, 225, 301, 306, 314, 319, 322, 343, 349, 351, 371-373, 385, 387, 388, 393, 421, 423, 425-427:

Գոչկերի – 414:

Գոչ-Հիսար – 350:

Գոււմ-Գաբու – 20, 21, 63, 80, 86, 87, 123, 141, 143, 144, 224, 347:

Գուրու-Չայ – 51:

Գրչեհիր – 318, 371, 372, 382, 383:

Դամասկոս (Շամ) – 120, 131, 137, 192, 216, 221, 340, 394, 415, 419, 421, 425, 427, 432:

Դանիա – 99, 189:

Դատուան – 89, 297:

Դարաթաղ – 51:

Դաւկներ – 51, 332:

Դերջան – 8, 16, 33, 44, 64, 156, 320, 410:

Դուրան – **Տես Տարօն**:

Եալովա – 159, 389, 391:

Եգիպտոս – 7, 17-19, 22, 25, 28, 35, 43, 55, 57, 111, 131, 169-173, 178, 213, 224, 234, 235, 238, 240-242, 248, 250, 251, 255, 259, 260, 267, 295, 306, 308:

Եդեսիա – **Տես Ուրֆա**:

Եէնի-Գաբու – 20, 21:

Եէնի Խան – 345, 349, 414, 419:

Ենիճէ – 159, 417:

Եոզղատ – 79, 130, 137, 345, 350, 373, 377-379, 382, 383, 422:

Եողուն Օլուգ – 236, 237, 239, 243, 244, 249, 256:

Երեւան – 113, 183, 188, 214, 225, 226, 399, 401:

Երզնկա – 8, 10, 33, 46, 48, 51, 52, 65, 87, 91, 94-97, 104, 106, 108, 110, 111, 122, 130, 143, 156, 267, 289, 294, 301-304, 308, 319-321, 331-336, 342-344, 369, 407, 411-414:

Երկի – 12:

Եփրատ – 108, 154, 208, 310, 333-335, 342, 354, 382, 397, 398, 407, 412, 415, 416, 433, 434:

Զառա – 315, 348, 354, 355:

Զէյթուն – 4, 17, 28, 29, 31, 32, 37, 40, 42, 44, 47, 64, 66, 73, 77, 82, 84, 96, 131, 142, 156, 244, 304, 367, 368, 370:

Ձիլէ – 319, 418:

Ձմիւռնիա – Տես Իգմիր:

Ձմմառ – 337:

Ձուկիցերիա – 104, 133, 134, 142, 146, 166, 167, 168, 241, 250:

Ձօր – Տես Տէր-Ձօր:

Էգուր – 243, 244:

Էլիզավետպոլ – Տես Գանձակ:

Էնկիւրի – Տես Անգարա:

Էնտերէս – 96, 108:

Էջմիածին – 113, 135, 172:

Էսկի-Շեհիր – 146, 158, 160, 170, 220-222, 372, 376, 393, 427:

Էվերէկ – 16, 36, 208, 380, 381:

Էտիրնէ – 47, 66, 141, 291, 394, 395, 426, 427:

Էրերին – 28:

Էրզրում – Տես Կարին-Էրզրում:

Էրէյլի – 85, 94, 125, 139, 143, 158, 160, 398, 425:

Էրինճիք – 159:

Թալաս – 381, 421:

Թաւրիզ – 214:

Թեքիր-Տաղ – Տես Ռոստոմ:

Թիմար – 28, 32, 193:

Թիֆլիս – 7, 17, 19, 25, 27, 29, 34, 55, 66, 86, 113, 117, 164, 165, 173, 176, 180, 183, 188-191, 193, 201, 202, 210, 211, 270, 401:

Թոթորգայ – 56, 66:

Թորդան – 51, 110, 332:

Թորթում – 49, 56, 66, 91, 321:

Թումարգա – 137, 421:

Թոքատ – 100, 109, 310, 318, 319, 345, 350, 357, 417, 418:

Թրակիա – 394, 426:

Ժընեւ – 7, 18, 19, 25, 27, 60, 62, 96, 97, 100, 102, 113, 133, 169, 181, 182, 186-188, 192, 201, 209, 211-215, 264, 276:

Իգատիր – 172, 193, 203, 204:

Իգմիր – 109, 133, 141, 152, 156, 157, 217, 220, 322, 387, 391-393, 427:

Իգմիր – 139, 149, 160, 161, 221, 224, 295, 318, 329, 373, 389:

Ինճէ-Սու – 380:

Իշխանաձոր – 88:

Իշտիպ – 279, 281:

Իսլահիէ – 208:

Իսկենտէրուկ – 137, 175, 219, 254, 262:

Իտալիա – 147, 181, 280:

Իտլիպ – 84:

Լատիք – 416, 417:

Լեհաստան – 71, 270, 307:

Լեռնասար – Տես Խարբերդ:

Լեռնավայր – Տես Կիլիկիա:

Լեվշիէ – 243, 248:

Լիբանան – 138, 159, 241, 337:

Լուսոնք – 12:

Լոնտոն – 27, 158, 164, 165, 175, 259, 275:

Լօզան – 152, 250:

Խապուր գետ – 396, 397, 427, 433:

Խարբերդ – 37, 66, 74, 76, 81, 82, 94, 97, 98, 106, 110, 116, 122, 125, 135, 151, 153, 156, 157, 185, 211, 293, 301, 302, 305, 313, 329, 331, 332, 335, 359-361, 365, 384, 407, 410, 414, 420:

Խիանք – 335:

Խիզան – 193:

Խնձորիկ – 51:

Խնուս – 16, 87, 88, 91, 98, 102, 110, 143, 191, 220, 300, 413:

Խոճասար – 79:

Խոյթ – 98, 110:

Խոշապ – 151, 193:

Խոտորջուր – 337, 338, 411:

Խորսանա – 79, 343:

Խուլի – 335:

Խոփա – 16:

Խարպէյ – 236, 239, 243, 244, 249, 256, 261:

Խրիմ – 267, 339:

Մակ-Քար – 325, 326:

Կամախ (Քեմախ) – 51, 106, 156, 157, 302, 331, 332, 334, 336, 340, 411:

Կապարդովկիրա – 422:

Կապան – 77, 82, 84, 96:

Կարին-էրզրում – 8, 10, 16, 17, 22, 31-33, 37, 40, 42, 44, 48, 49, 51-54, 56, 57, 64, 66, 67, 76, 77, 80, 82, 86-91, 96, 98, 99, 106, 110, 113, 117, 122, 125, 137, 138, 143, 149, 151, 153, 156, 157, 162, 183-185, 188-191, 196, 198, 201, 216, 267, 276, 282, 289, 292-295, 300, 301, 303, 305, 308, 313, 318, 320, 321, 325, 331, 334-338, 340, 347, 350, 358, 369, 402, 406-409, 412, 413:

Կարճկան – 194, 293:

Կարկառ – 194, 293:

Կարմիր Լեռ – Տես Սուէտիրա:

Կարմիրք – 327:

Կարս – 183, 400:

Կարս-Քաղար – 84:

Կելիպուրու – Տես Տարտանէլ:

Կեմերէկ – 321, 344, 352, 354, 421:

Կեմրիկ – 322, 390:

Կեսիկ փաշա – 20, 143, 318:

Կեսարիա – 16, 44, 46, 47, 56, 63-66, 74, 80, 81, 85, 87, 89, 95, 119, 125, 137, 146, 149, 153, 154, 156, 157, 162, 208, 217, 258, 310, 318, 322, 343, 350, 360, 361, 371, 372, 380, 381, 421-423:

Կէյվէ – 322:

Կէնճ – 89:

Կիլիկիա – 3, 4, 7, 17, 31, 37, 44, 46, 53, 59, 61, 64, 66, 70, 76, 77, 82, 84, 95, 97, 105, 111, 120-122, 125, 129, 131, 135, 136, 145, 153, 161, 170, 173, 175, 180, 217, 218, 223, 241, 261, 272, 284, 287, 293, 322, 337, 339, 367, 369, 403, 406, 422, 423, 431:

Կիպրոս – 17, 218, 221, 223, 247:

Կիսկիրմ – 410:

Կիրասոն – 95, 302, 305, 340-342, 419:

Կիւմիւշխանէ – 8, 340:

Կիւմիւշ Հաճի-Քէոյ – 379, 416, 418:

Կիւրզէ – 390:

Կիւրին – 163, 258, 370, 382, 414, 419:

Կիւրլէ – 159:

Կոկիսոն – 84, 96:

Կոպէնհագէն – 211:

Կոստանդնուպոլիս – Տես Պոլիս:

Կովկաս – 4, 6, 17, 18, 22, 28, 29, 32, 33, 55, 66, 68, 92, 93, 95, 100, 110, 111, 119, 131, 142, 168-172, 178, 179, 182-184, 186, 192, 202, 204, 210, 213, 219, 241, 250, 267, 268, 371,

277, 282, 283, 294-296, 298, 307, 308, 313, 320, 339, 400-403, 405, 407, 412:

Կովտուն – 79:

Կուարաշէն – 337:

Հալէպ – 6, 17, 36, 37, 77, 82, 84, 90, 94, 96, 97, 105, 121, 122, 125, 129, 135-137, 146, 149, 153, 155-158, 162, 170, 192, 209, 212, 215, 217, 218, 221-223, 243, 306, 310, 355, 361, 365, 369, 370, 394, 398, 406, 407, 412, 414-416, 420-422, 425-429, 432, 434:

Հաճըն – 76, 82, 84, 136, 156:

Հաճի Հապիպլի – 243, 244:

Հաճի-Քէոյ – Տես Կիւմիւշ Հաճի-Քէոյ

Համա – 415, 419:

Հայոց Ձոր – 32, 40, 42, 193, 204:

Հայտար փաշա – 65, 395:

Հասան Չելեպի – 348, 415:

Հասան Պէյլի – 77, 84, 96, 136:

Հասիչէ – Հասաքէ – 396, 398, 433:

Հաւզա – 322, 416, 417:

Հաւրան – 135:

Հաֆիզ – 414:

Հերթեւ – 91, 331:

Հեքքեարի – 272:

Հէրիկ – 418:

Հիրչ – 32, 40, 42, 294, 297:

Հիւսէյնիկ – 361:

Հիւսնի Մանսուր – 97, 122, 214, 361:

Հոդդար – 344:

Հոմս – 415, 419:

Հունգարիա – 141, 263:

Հունուա – 337:

Հոռմ – 280, 337:

Ձկնաջուր – 337:

Ձորբերան – 50:

Ղազովա – 418:

Ղանդալ – Տես Գանդալ:

Ղոնիա – Տես Գոնիա:

Ճ ապաղջուր – 98:
 ճարապուրուս – 121, 369, 434:
 ճեզիրէ – 363, 411:
 ճեւիզլիք – 196:
 ճորոխ գետ – 11, 335, 412:

Մ ալաթիա – 302, 344, 346, 348, 359-361, 407, 411-413, 416:
 Մալկարա – 426, 427:
 Մակեդոնիա – 271, 279, 287:
 Մամախաթուն – 44, 50, 52, 64, 292, 300, 332, 410:
 Մամուրէթ-իւլ-Ազիզ – 386:
 Մանազկերտ – 87-89, 172, 300:
 Մանճուսուն – 421:
 Մաշտակ – 193:
 Մարաշ – 17, 31, 42, 76, 82, 84, 120, 121, 131, 136, 137, 209, 258, 367-370, 419, 423, 433:
 Մարզուան – 100, 102, 105, 109, 143, 319, 322, 345, 355, 414, 416-418:
 Մաքրիւզիւղ – 63, 80, 224:
 Մեծն Բրիտանիա – Տես Անգլիա:
 Մեղուս – 49:
 Մեսքենէ – 398, 427, 433:
 Մերկատէ – 396:
 Մերսին – 123, 125, 135-137, 141, 160, 175:
 Մերտին – 362, 363, 427, 434:
 Միթնի – 52:
 Միատին – 427, 433:
 Միջագետք – 5, 7, 58, 76, 77, 80, 82, 96, 153, 168, 180, 189, 208, 209, 215, 217, 218, 241, 306, 314, 337, 339, 406, 409, 411:
 Միկնէր – 194:
 Մշակնոց – 16:
 Մոխրակոյտ – 337:
 Մոկս – 194, 204:
 Մոնթենեկրօ – 270:
 Մոսկուա – 172, 181, 182, 201, 210:
 Մոսկան – 88, 98, 110:
 Մորղուլ – 33:
 Մունճուսուն – 421:
 Մունպուճ – 84, 415, 416, 425:
 Մուշ – Մշոյ դաշտ – 15-17, 28, 29, 33, 40-42, 44, 64, 66, 87, 89, 91, 92, 98, 110, 111, 113, 117, 118, 143, 149, 156, 179, 184, 185, 190, 191, 220, 267, 276, 289, 299, 300, 308, 318, 323, 326, 335:

Մուշաղշէն – 89:
 Մուսա Լեռ, Մուսա-տաղ – Տես Մուէտիա:
 Մուսուլ – 17, 87, 138, 153, 155, 158, 162, 176, 192, 211, 221, 222, 314, 367, 406, 412, 415, 427, 434:

Յ ունաստան – 45, 93, 172, 373:

Ն իկոմեդիա – 44, 64, 90, 105, 109, 123, 125, 127, 129, 130, 135, 140, 141, 143, 148, 158, 160, 170, 173, 387:
 Նիկոէ – 372:
 Նիսիպիւն – 208, 218, 222, 225, 314, 415, 416, 434:
 Նիքսար – 320, 418:

Շ ամ – Տես Վան:
 Շամ – Տես Դամասկոս (Շամ):
 Շանա – 177:
 Շապին Գարահիսար – 4, 16, 26, 52, 56, 66, 67, 79, 97, 100-102, 105, 109, 110, 129, 134, 142, 155-157, 234, 284, 294, 303, 304, 315, 320, 341, 349, 354, 419:
 Շատախ – 40, 42, 103, 111, 204, 293, 294, 296, 298:
 Շար-Գչլա – 354, 358, 416, 417, 419:
 Շեստատէ – 396, 398, 427, 433:
 Շուշի – 183:

Ո ռոտուճ – Տես Տիվրիկ:
 Ուաշինկիթըն – 15, 25, 27, 192:
 Ուզուն-Քէօփրիւ – 119, 141, 186, 427:
 Ուլաշ – 16, 348:
 Ուրտափ – 89:
 Ուրֆա – 104, 129, 135, 137, 153, 156, 157, 192, 209, 215, 216, 234, 272, 284, 294, 301, 304, 310, 314, 331, 335, 339, 359, 364-367, 370, 412, 415, 416, 419, 423, 433:

Չ աթալճա – 119:
 Չանաք Գալէ – 220:

Չանդրրի – 26, 30, 34, 36, 44, 53, 54, 64, 74, 81, 99, 114, 130, 140, 147, 152, 347, 384, 386:

Չարսանճաք – 154, 157:

Չաքմաք – 377:

Չենկիլէր – 159, 161, 170, 322, 389, 390:

Չմչկածաղ – 156:

Չոմաքլու – 258:

Չորլու – 426:

Չորուժ – 36, 54, 375, 378, 379:

Չորք-Մարզպան (Տէօրթ-Եոլ) – 17, 32, 40, 42, 77, 82, 84, 96, 99, 136, 244, 254:

Չուխուր – 89:

Պազէլ – 166, 167, 211:

Պաթուժ – 176, 178, 183, 196, 225, 302, 400, 407:

Պալա – 375:

Պալախոռ – 12, 349:

Պալքեսեր – 44, 64, 159:

Պալքան – 6, 7, 15, 17-19, 22, 24-30, 34-36, 40-45, 47, 53, 55-58, 62-64, 67, 74, 76-78, 80, 83, 85-87, 90, 92, 94-104, 109, 112, 114, 116, 118-121, 123, 125, 127, 129, 132, 138, 141, 143-146, 147-150, 158, 160, 162, 169, 171-173, 178, 186, 188, 208, 217, 224-226, 271, 279-281:

Պաղեստին – 234, 272, 337, 339:

Պաղտատ – 25, 84, 153, 192, 208, 209, 224, 370, 397, 398, 427, 434:

Պայազիտ – 52, 179, 267, 289, 407:

Պանտրմա – 44, 64, 144, 156, 159, 170, 224, 387, 388:

Պաշքալէ – 16, 18:

Պապ – 77, 82, 84, 398, 415, 416, 425, 433:

Պարսկաստան – 183, 223, 271, 275, 277, 283, 300, 408:

Պարտիզակ – 44, 64, 90, 109, 118, 130, 131, 159, 220, 224, 318, 322, 393:

Պաքու – 18, 175, 183, 204, 401:

Պելճիքա – 71, 265, 270:

Պեսրոզրաղ – Տես Փեթրոկրատ:

Պերլին – 17, 26, 109, 111, 142, 176, 290, 310:

Պէյլան – 246:

Պէյրութ – 131, 138, 254, 337:

Պէշիկթաշ – 141, 148:

Պիթիաս – 237, 243, 244, 249, 257:

Պիթիւս – 28, 32, 33, 40, 42, 56, 58, 66, 68, 80, 81, 87, 89, 98, 104, 110, 111, 117, 122, 125, 153, 155, 156, 162, 179, 183,

184, 193, 210, 220, 267, 293, 297, 299, 313, 318, 323-329, 331, 335, 360, 367, 369, 392, 402:

Պիլեճիկ – 24, 127, 322, 387, 388, 391, 427:

Պիլեմեաիք – 161, 222, 223, 225:

Պիլեճիկ – 415, 416, 427, 433, 434:

Պոզանթի – 158, 161, 170, 351, 372:

Պոզուք – 377:

Պոլիս – 4, 7, 8, 12, 15, 16, 18, 21-30, 33, 34-36, 40-47, 53-58, 62-67, 73, 74: 76-83, 85-87, 89-106, 108-111, 114, 116-123, 125-127, 129-134, 136-150, 152-154, 158, 160-163, 169-173, 178, 181, 183, 185, 186, 190, 208, 209, 214, 216, 217, 218, 220-224, 226, 272, 275, 276, 278, 301, 306, 309-311, 313, 314, 321, 322, 326, 334, 336-340, 342, 348, 349, 351, 352, 356, 358, 359, 363, 365, 369, 371-373, 375, 377, 378, 384, 394, 397, 400, 407, 426, 427:

Պոլու – 384, 386:

Պոճթան – 89, 98, 110, 272:

Պողազլեան – 377-379:

Պոստըն – 5, 259, 264, 406:

Պուլայր – 119:

Պուլանըլիս – 15, 87, 89, 185, 192, 300:

Պուլկարիա – 7, 22, 38, 39, 75, 100, 103, 109, 114, 115, 119, 123, 131, 134, 140, 142, 143, 147, 169-173, 178, 181, 186, 208, 209, 221-223, 267, 426:

Պուքրէշ – 22, 169, 170-172, 178, 186, 190:

Պրուսա – 44, 64, 87, 114, 119, 129, 154, 156-159, 322, 370, 384, 387-391:

Ջուլամերիկ – 272:

Ռազգա – 366, 370, 398, 411, 415, 416, 433:

Ռաս-իւլ-Այն – 135, 137, 208, 396-398, 415, 416, 421, 427:

Ռեւանտուզ – 223:

Ռիզէ – 198:

Ռոտոսթօ (Թեքիր-Տաղ) – 119, 151, 394-396, 426, 427:

Ռումանիա – 7, 98, 110, 131, 143, 169, 172, 181, 270, 373:

Ռում-Գալէ (Հոմկլայ) – 415, 416:

Ռումելի – 159, 224, 287:

Ռուսիա – 22, 60, 62, 109, 147, 151, 172, 173, 179, 181, 183, 184, 186, 210, 212, 263, 265, 267, 270, 271, 282, 283, 295, 307, 320, 337, 339, 376, 405, 410:

Ռուսճուք – 55, 75:

Սարմատ – 32:

Սահմանաբերդ – Տես Մարաշ:

Սամաթիա – 20, 21:

Սամարա – 218:

Սամոսատ – 411, 415:

Սամսոն – 37, 46, 56, 67, 95, 96, 141, 153, 157, 199, 302, 310, 331, 347, 350, 360, 361, 391, 402:

Սասուն – 4, 5, 10, 28, 73, 86, 88, 98, 110, 113, 137, 142, 156, 172, 179, 181, 182, 185, 191, 234, 299:

Սարայ – 318:

Սարրղամիշ – 188, 190, 318, 320:

Սարուստան – Տես Կովկաս:

Սեբաստիա – Սըվազ – 7, 16, 26-31, 35, 37, 41, 44-47, 52, 53, 56, 57, 63-67, 76-83, 97, 104, 106, 110, 116, 122, 126, 130, 137, 141, 142, 151, 153, 156, 157, 178, 217, 218, 220, 223, 225, 293, 302, 310, 313, 315, 320-322, 331, 343-353, 355-358, 373, 406, 414-416, 419-421, 423:

Սելանիկ – 172, 278:

Սելեֆքէ – 223:

Սերպիա – 147, 265, 270:

Սեւ Բլուր – Տես Սեբաստիա:

Սէօլէզ – 390:

Սըվազ – Տես Սեբաստիա - Սըվազ:

Սթանոս – 371, 387:

Սիս – 17, 99, 109, 156, 304:

Սիվրիհասար – 382, 398:

Սիրքէճի – 94, 318:

Սլիվան – 98, 110:

Սկիւտար – 21, 65, 104, 129, 141, 144, 222, 224, 225, 398:

Սղերդ – 89, 98, 110, 156, 162, 172:

Սոնկուրլու – 318, 378, 379:

Սուէզ – 234:

Սուէտիա – 4, 137, 234, 235-240, 243-249, 251, 252, 254, 256-262, 284, 370:

Սուլթանիէ – 58, 80, 99, 120, 131, 139, 145, 161, 217, 385:

Սուլինա – 138:

Սուչեհիր – 315, 343, 346:

Սուվար – 396-398, 433:

Սուրիա – 5, 131, 136, 159, 175, 178, 192, 209, 234, 241, 254, 272, 337, 339, 421, 427:

Սոֆիա – 7, 15, 19, 22, 28, 34, 36, 38, 41, 42, 53, 54, 64, 74, 80, 100, 102, 109, 110, 115, 118, 123, 129, 134, 140, 142, 145, 169, 170, 172, 173, 178, 186, 208:

Սպեր – 8:

Ստոկհոլմ – 6, 210-214, 216, 263-266, 270, 307, 308:

Սրուճ – 411, 415, 416:

Վազրֆ – 236, 237, 243, 248, 249, 257:

Վան – 4, 16, 20-22, 24-26, 28-34, 36, 37, 40, 42, 44, 46, 53, 54, 56-58, 64, 66-68, 74, 79, 85, 87-89, 91, 93, 96, 99, 106, 109, 111, 112, 117, 118, 131, 134, 142, 143, 151, 153, 155, 164, 165, 172, 183-185, 193, 194, 202-204, 210, 234, 267, 276, 283, 285, 293, 294, 296, 297, 300, 307, 310, 313, 315, 318, 326-328, 402:

Վաչինկթոն – Տես Ուաչինկթոն:

Վառնա – 27, 55:

Վասկերտ – 321:

Վասպուրական – 4, 28, 32, 92, 193, 234, 307:

Վարդօ – 88:

Վարդահան – 12:

Վերանշէհիր – 77, 82, 415, 416, 427:

Վեզիր Քէօփրիւ – 143, 416, 417:

Վիեննա – 17, 281, 290, 337:

Վիշապ – Տես Պոլիս:

Վիշապաձոր – Տես Տիարպեքիր – Տիգրանակերտ:

Վլատիկաւկաս – 183:

Վրաստան – 271, 402:

Տարենտէ – 414:

Տարսոն – 99, 109, 120, 136, 137, 141, 146, 160, 398:

Տարտանէլ – 34, 45, 65, 66, 81, 104, 119, 151, 161, 334, 367, 382, 426:

Տարօն – 4, 5, 15, 24, 31, 32, 37, 42, 56, 68, 74, 79, 86, 88, 89, 98, 179, 181, 190:

Տաւրոս – 218:

Տերսիմ – 110, 272, 303, 336:

Տէտէ-Աղաճ – 93:

Տէր Զօր – 58, 80, 84, 99, 114, 118, 120-122, 129, 131, 135, 137, 158, 208, 216, 310, 314, 354, 355, 366, 369, 370, 372, 376, 382, 385, 387, 388, 396-398, 406, 415, 419-421, 425-428, 432, 433:

Տէօրթ-Եոլ – Տես Զորք-Մարզպան:

Տիատին – 407:

Տիարպեքիր – Տիգրանակերտ – 63, 67, 74, 78, 80, 81, 83, 85-90, 93, 94, 96-98, 101, 102, 104, 109, 110, 116, 129, 131, 135, 137, 153, 154, 156, 157, 184, 185, 209, 217, 219, 222, 289, 291, 293, 301, 310, 313, 318, 331, 359, 362, 363, 369, 397, 407, 410, 423, 428:

Տինտիլի – 321:

Տիվրիկ – 46, 56, 65-67, 79, 156, 348, 350, 358, 414:

Տրապիզոն – 5, 8, 10, 16, 31, 32, 37, 42, 46, 53, 56, 66, 67, 94-96, 154, 156, 157, 162, 176, 177, 183, 195-197, 199, 200, 210, 267, 302, 304, 305, 310, 313, 319, 322, 331, 336, 340, 341, 347, 402, 407, 414:

Տփղիս – Տես Թիֆլիս:

Ց *իւրիւ* – 168:

Յրօնք – 15, 28

Փ *արիզ* – 74, 174, 175, 210, 219, 226, 263, 276, 308, 337, 371, 423:

Փեթրոկրատ – 172, 178, 182, 186, 210-213, 264, 338:

Փոթի – 402:

Փոր Սայիս – 6, 234, 235, 240, 247-249, 252, 254-256, 259-262:

Փսանք – 89, 179:

Ք *աթմա* – 398, 425:

Քարավրակ – 12:

Քարատուրան – 244:

Քելքիթ – Տես Գայլգետ:

Քեմախ – Տես Կամախ:

Քեպուսիէ – 243, 244, 247:

Քեսապ – 137, 243, 246, 254, 261:

Քեսքին – 376:

Քեօւերէ-Տերեսի – 391:

Քէօթաշիա – 398:

Քիլիս – 135, 136:

Քիչիֆլի – 370:

Քիչնիեւ – 18:

Քղի – 87, 135, 156, 292, 308, 334, 335:

Քոչանա – 279, 281:

Քոլթայիս – 183:

Քսանթայ – 12:

Օ *գումի* – 205:

Օձնի – 289:

Օճաքլլ – 84:

Օսմանիէ – 84, 136, 149, 398, 425:

Օվա – 332:

Օվաճըք – 109, 226, 393:

Օտեսա – 103:

Օրթաքէոյ – 390:

Օրտոււ – 95, 118, 319, 350, 360, 361:

Տ *ընտրճաք* – 121, 369, 370:

Տիլիպէ – 87, 101, 118, 225:

Տոնուզ – 77, 82, 96, 156:

Տրանսա – 147, 174, 175, 181, 241, 268, 271, 290, 295, 301, 376:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ----- 3

Ա. ԲԱԺԻՆ
ՄԵԾ ԵՂԵՌՆԸ
ԱՆՄԻՋԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
 (էջ 7 – 233)

Մեծ Եղեռնը – անմիջական վկայություններ ----- 7

1.– Ահռելի կոտորածն ու սարսափը Բաբերդի եւ շրջակայ գիւղօրէից մէջ ----- 8

2.– Պալքանէն Ամերիկայի Կեդր. կոմիտէին (11-4-1915) ----- 15

3.– «Դրօշակ»ի խմբագրութենէն Պալքանի Կեդր. կոմիտէին (24-4-1915) ----- 18

4.– Վիշապի Կեդր. կոմիտէին Բալկանի Կեդր. կոմիտէին (14-4-1915) ----- 19

5.– Պայմանական հեռագիրներ Բուլղարիայի եւ Պոլսոյ միջեւ (12-4-1915) ----- 22

6.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանեան Կեդր. կոմիտէին (17-4-1915) ----- 24

7.– «Դրօշակ»ի խմբագրութենէն Ամերիկայի Կեդր. կոմիտէին (2-5-1915) ----- 25

8.– Վարդգէսի նամակը (Պոլսէն) Պալքանեան Կեդր. կոմիտէին (21-4-1915) ----- 26

9.– «Դրօշակ»ի խմբագրութենէն Պալքանեան Կեդր. կոմիտէին (6-5-1915) ----- 27

10.– Պալքանի Կ. կոմիտէին «Դրօշակ»ի խմբագրութեան, Ժընեւ (24-4-1915) ----- 28

11.– Պոլսոյ Առժամեայ մարմնէն Պալք[անի] Կեդր. կոմիտէին (28-4-1915) ----- 30

12.– Պալքանէն «Դրօշակ»ի խմբագրութեան (28-4-1915) ----- 34

13.– Վիշապի Առժամեայէն Պալքանի Կ. կոմիտէին (29-4-1915) ----- 36

14.– Դիմում Պուլկարիոյ վարչապետին ----- 38

15.– Պոլսոյ Առժամեայ մարմնէն Պալք. Կեդր. կոմիտէին (29-4-1915) ----- 40

16.– Վարդգէսէն Պալքանի Կեդր. կոմիտէին (1/14-5-1915) ----- 41

17.– Պալքանեան Կ. կոմիտէին Ամերիկայի Կ. կոմիտէին (8-5-1915) ----- 42

18.– Վիշապի Առժամեայ մարմնէն Բալկ. Կեդր. կոմիտէին (8/21-5-1915) ----- 44

19.– Վիշապի Առժամեայէն Պալքանի Կեդր. կոմիտէին ----- 45

20.– Պոլսոյ Առժամեայ մարմնէն Պալքանի Կեդր. կոմիտէին (13/26-5-1915) ----- 47

21.– Երզնկայի ընդարձակ տեղեկագիրը, Մայիս 12 թուակիր ----- 48

22.– Պալքանեն «Դրօշակ»ի խմբագրութեան (13-5-1915) -----	53
23.– Պոլսոյ Առժամեայ մարմնեն Պալքանի Կեդր. կոմիտէին (15-5-1915) -----	56
24.– Պալքանի Կեդր. կոմիտէին «Դրօշակ»ի խմբագրութեան (14-5-1915) -----	57
25.– Վիշապի Առժամեայեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (19-5-1915) -----	58
26.– Հեռագիր «Դրօշակ»ի խմբագրութենէն Օսմ. կառավարութեան (2-6-1915) -----	59
27.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանի Կեդր. կոմիտէին (21-5-1915) -----	63
28.– Պալքանեան Կ. կոմիտէին «Դրօշակ»ի խմբագրութեան (21-5-1915) -----	64
29.– Վիշապի Առժամեայ մարմնի նամակը Պալքանի Կեդր. կոմիտէին (23-5-1915) -----	67
30.– Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան կոչը քաղաքակիրթ աշխարհի հանրային կարծիքին (7-6-1915) -----	69
31.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանի Կեդր. կոմիտէին (26-5-1915) -----	74
32.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանի Կեդր. կոմիտէին (29-5-1915) -----	76
33.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանի Կեդր. կոմիտէին (30-5-1915) -----	77
34.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանի Կեդր. կոմիտէին (1-6-1915) -----	78
35.– Հ.Յ.Դ. Պալքանեան Կեդր. կոմիտէին «Դրօշակ»ի խմբագրութեան (3-6-1915) -----	80
36.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (4/17-6-1915) -----	83
37.– Կիլիկեան աղետը (5-6-1915) -----	84
38.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (6-6-1915) -----	85
39.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (8/21-6-1915) -----	86
40.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (10-6-1915) -----	87
41.– Տարօնէն նամակ Մայիս 15 թուակիր (1915) -----	89
42.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (15/28-6-1915) -----	90
43.– «Դրօշակ»ի խմբագրութեան հեռագիրը Պոլսոյ Առժամեայ մարմնին (17-6-1915)-----	92
44.– Յ. Ամատունիէն Պալքանի Կեդր. կոմիտէին (19-6-1915) -----	93
45.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (23-6-1915) -----	94
46.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (25-6-1915) -----	94
47.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (27-6-1915) -----	95
48.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (29-6-1915) -----	96
49.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (1-7-1915) -----	97
50.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին-(1-5-1915) -----	98
51.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (7-7-1915) -----	99
52.– Պալքանեան Կեդր. կոմիտէին Ամերիկայի Կեդր. կոմիտէին (9-7-1915) -----	100
53.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (9-7-1915) -----	101
54.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (13-7-1915) -----	102
55.– Հ.Յ.Դ. Արեւելեան բիրոյէն Պալքանեան Կեդր. կոմիտէին (14-7-1915) -----	103
56.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (16-7-1915) -----	103
57.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (21-7-1915) -----	104
58.– Ականատեսներու պատմածը -----	106
59.– Պալքանի Կ. կոմիտէին Ամերիկայի Կ. կոմիտէին (25-7-1915) -----	109
60.– Ռոստոմէն «Դրօշակ»ի խմբագրութեան (29-7-1915) -----	113
61.– Ռոստոմէն Յոնան Դաթեանին (30-7-1915) -----	113
62.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (25-7-1915) -----	114
63.– Ապրիլ 24-ի առաջին ոգեկոչումը Սոֆիայի մէջ (4-8-1915) -----	115
64.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (2/15-8-1915) -----	116
65.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (4-8-1915) -----	118
66.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (6-8-1915) -----	119
67.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (8/21-8-1915) -----	120
68.– Վիշապի Առժամեայ մարմնեն Պալքանեան Կեդր. կոմիտէին (11-8-1915) -----	121

69.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանեան Կեդր. կոմիտէին (13-8-1915) -----	123
70.– Ատանայի ոստիկանութեան տնօրէնութեան կուսակալին հեռագիրները -----	124
71.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանեան Կեդր. կոմիտէին (15/28-8-1915) -----	125
72.– Կէպէրինճիյէ գատար -----	127
73.– Պալքանի Կեդր. կոմիտէէն Ամերիկայի Կեդր. կոմիտէին (17-8-1915) -----	129
74.– Չուիցերիոյ հայկական կոմիտէի կոչը տպագրուած գուցերիական եւ երոպ. թերթերում (30-8-1915) -----	133
75.– Յ. Ամատունիէն Ամերիկայի Կեդր. կոմիտէին (18-8-1915) -----	134
76.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանեան Կեդր. կոմիտէին (20-8-1915) -----	135
77.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանեան Կեդր. կոմիտէին (22-8-1915) -----	138
78.– Յ. Ամատունիէն Ամերիկայի Կեդր. կոմիտէին (22-8-1915) -----	140
79.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանեան Կեդր. կոմիտէին (25-8-1915) -----	141
80.– Յ. Ամատունիէն Ամերիկայի Կեդր. կոմիտէին (28-8-1915) -----	142
81.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանեան Կեդր. կոմիտէին (29-8-1915) -----	143
82.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանեան Կեդր. կոմիտէին (1-9-1915) -----	144
83.– Պալքանեան Կեդր. կոմիտէէն Ամերիկայի Կ. կոմիտէին (2-9-1915) -----	145
84.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանի Կ. կոմիտէին (7-9-1915) -----	146
85.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանեան Կեդր. կոմիտէին (8-9-1915) -----	147
86.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանի Կ. կոմիտէին (13/26-9-1915) -----	148
87.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանի Կ. կոմիտէին (Շարունակութիւն Սեպտ. 13-ի) -----	149
88.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանի Կ. կոմիտէին (14/27-9-1915) -----	150
89.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանի Կ. կոմիտէին (16/29-9-1915) -----	151
90.– Յիշատակագիր հայկական կոտորածներու մասին (Սեպտ. 1915) -----	153
91.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանի Կ. կոմիտէին (18-9-1915) -----	158
92.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանի Կ. կոմիտէին (19-9-1915) -----	160
93.– Վիշապի Առժամեայ մարմնէն Պալքանի Կ. կոմիտէին (22-9-1915) -----	162
94.– Լոնտոնի «Հայոց օգնութեան հիմնադրամի կանանց կոմիտէ»ի կոչը ի նպաստ հայութեան (Սեպտ. 1915) -----	164
95.– Appel – Կոչ Չուիցերիոյ ժողովուրդին (Սեպտ.-Հոկտ. 1915) -----	166
96.– Չուիցերիացի մտաւորականներու կոչը (25-10-1915) -----	168
97.– Ամատունիէն Եգիպտոսի կոմիտէին (14/27-10-1915) -----	169
98.– Ամատունիէն Եգիպտոսի կոմիտէին (17/30-10-1915) -----	170
99.– Ամատունիէն Եգիպտոսի կոմիտէին (26-10-1915) -----	171
100.– Ամատունիէն Եգիպտոսի կոմիտէին (1/14-11-1915) -----	172
101.– Ամատունիէն Ամերիկայի Կեդր. կոմիտէին (20-11-1915) -----	173
102.– Աւետիս Ահարոնեանէն Յոնան Դաւթեանին (8-12-1915) -----	174
103.– Տրապիզոնի անտառները ապաստանած փախստական հայերու նամակը (20-12-1915) -----	176
104.– Ամատունիէն Եգիպտոսի կոմիտէին (Յունուար 1916) -----	178
105.– Ռուբէն Տէր Մինասեանէն Արսէն Միքայէլեանին (22-12-1915) -----	179
106.– Les Arméniens et les Jeunes-turcs (Յունուար 1916) -----	181
107.– Ամատունիէն Ամերիկայի Կ. Կ.ին (5/18-1-1916) -----	186
108.– Լէոփոլտ Ֆարի նամակը Աւետիս Ահարոնեանին (29-1-1916) -----	187
109.– Արեւելեան բիրոյէն «Դրօշակ»ի խմբագրութեան (25-2-1916) -----	188
110.– Ռոստոմէն Յոնան Դաւթեանին (8-2-1916) -----	189
111.– Համազասպէն Ամերիկայի Կեդր. կոմիտէին (17-2-1916) -----	190
112.– Յ. Ամատունիէն Ամերիկայի Կեդր. կոմիտէին (10/23-3-1916) -----	191
113.– Լէոփոլտ Ֆարի նամակը «Դրօշակ»ի խմբագրութեան (2-4-1916) -----	192
114.– Գրիգոր Պուկարացիէն Արեւելեան բիրոյին (14-4-1916) -----	193
115.– Տրապիզոնի ջարդերը -----	195

116.– Զարուածքներ կովկասահայ մամուլէն ----- 201

117.– Մարգպետէն Ամերիկայի Կեդր. կոմիտէին (4-11-1916) ----- 208

118.– Աւետիք Իսահակեանէն «Հայրենիք»ի խմբագրութեան (6-7-1917) ----- 209

119.– Ռոստոմէն Միքայէլ Վարանդեանին (1-9-1917) ----- 210

120.– Ռոստոմէն Անտոն Գօշին (12-10-1917) ----- 211

121.– Ռոստոմէն Ամերիկայի Կեդր. կոմիտէին (14-10-1917) ----- 212

122.– Ռոստոմէն Անտոն Գօշին (23-10-1917) ----- 214

123.– Լէոփոլտ Ֆարի նամակը «Դրօշակ»ի խմբագրութեան (29-10-1917) ----- 215

124.– Ռոստոմի մէկ նամակը Ստոկհոլմէն (6-11-1917) ----- 216

125.– Փրոֆ. Աստուածատուր Խաչատրեանի ողբականը (25-6-1918) ----- 217

126.– Պապայեան Խոսրովի [Ընկեր Վաղարշ] զեկուցումը ----- 220

127.– Ընկեր Սկրտիչի զեկուցումը ----- 224

Ծանօթագրութիւններ Ա. քաժնի ----- 228

Բ. ԲԱԺԻՆ

ՍՈՒՍԱԼԵՈՑԻՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

(էջ 234 – 262)

Մուսալեռցիները Եգիպտոսի մէջ ----- 234

1.– Ատենագրութիւն Հ.Յ.Գ. Կարմիր Լեռի ընկերական Ա. Ընդի. ժողովի (22-10-1915) ----- 235

2.– Հ.Յ.Գ. Կարմիր Լեռի մարմնէն Եգիպտոսի կոմիտէին (5-11-1915) ----- 235

3.– Անդամացուցակ Հ.Յ.Գ. Կարմիր Լեռան ենթակոմիտէին ----- 236-237

4.– Հ.Յ.Գ. Կարմիր Լեռի ենթակոմիտէն Եգիպտոսի կոմիտէին (23-11-1915) ----- 238

5.– Վիճակացոյց Հ.Յ.Գ. Կարմիր Լեռի պատանեկան «Անդրանիկ» միութեան (1915) ----- 239

6.– Եգիպտոսի կոմիտէն Ամերիկայի Կեդր. կոմիտէին (23-6-1916) ----- 240

7.– Տեղեկագիր Սուէտիոյ հայոց ապստամբութեան մասին (Արեւելեան բիրոյի) (18-11-1915) ----- 243

8.– Անուանց ցուցակ [1916] Բօր-Սայիտի Կարմիր լեռան ենթակոմիտէի ----- 249

9.– Բաց նամակ Բարեգործականի վարչութեան (31-1-1916) ----- 250

10.– Հ.Յ.Գ. Եգիպտոսի կոմիտէին (10-2-1916) ----- 251

11.– Տեղեկագիր Հ.Յ.Գ. Կարմիր Լեռ ենթակոմիտէի (Հոկտ. 1915 – Յուլիս 1916) ----- 252

12.– Մովսէս Տէր Գալուստեանին (16-10-1916) ----- 254

13.– Հ.Յ.Գ. Եգիպտոսի կոմիտէին (30-12-1917) ----- 255

14.– Անուանացանկ Կարմիր Լեռ ենթակոմիտէի ընկերներու (Փոքր Սայիտ) ----- 256

15.– Հ.Յ.Գ. Եգիպտոսի կոմիտէին (13-1-1918) ----- 259

16.– Ամերիկայէն «Յուսաբեր»ի խմբագրութեան (15-1-1918) ----- 259

17.– Հ.Յ.Գ. Եգիպտոսի կոմիտէին (24-3-1918) ----- 260

18.– Հ.Յ.Գ. Եգիպտոսի կոմիտէին (5-11-1919) ----- 261

Գ. ԲԱԺԻՆ

**ՌՈՍՏՈՄ ԵՒ 1917 Թ. ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ՍՏՈԿՀՈԼՄԻ ՄԷՋ**

(էջ 263– 308)

Ռոստոմ եւ 1917 թ. Ընկերվար Միջազգայնականի խորհրդաժողովը Ստոկհոլմի մէջ -----	263
1.– Միքայէլ Վարանդեանի հեռագիրը Ստոկհոլմի համագումարին -----	265
2.– Ռոստոմի մէկ ելոյթը Ստոկհոլմի մէջ -----	266
3.– Յիշատակագիր Հ. Յ. Դաշնակցութեան (Ռոստոմի կողմէ ներկայացուած Ստոկհոլմի Ընկերվար Միջազգայնական համագումարին (1917) -----	270
4.– Պարոն Զօրեանի Յուշագրին շարունակութիւնը -----	296
5.– Ռոստոմի մէկ յայտարարութիւնը -----	306
6.– Ռոստոմէն Ամերիկայի Կեդր. կոմիտէին (2-12-1917) -----	307
7.– Ռոստոմէն «Դրօշակ»ի խմբագրութեան (12-12-1917) -----	308

Դ. ԲԱԺԻՆ

ՅԵՏ-ԵՂԵՆԵԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

(էջ 309– 405)

Յետ-եղեռնեան վկայութիւններ -----	309
---	-----

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ

Ա 1.– Հայերու ջարդերուն եւ տարագրութեանց պատասխանատուներու անուանացանկ -----	310
Ա 2.– Հայերու դէմ գործուած վայրագութեանց պատասխանատուները -----	311
Ա 3.– Հայկական կոտորածները -----	313
Ա 4.– Ապացոյց այն բանի որ թուրք կառավարութիւնը հայոց բնաջնջումը որոշած է ընդի. պատերազմի յայտարարութենէն շատ առաջ -----	315
Ա 5.– Թրքական թերթերը ծախուած էին թէ ոչ -----	316
Ա 6.– Հայոց ունեցուածքի կողոպուտ -----	317
Ա 7.– Ահմէտ Ռեֆիք պէյի յօդուածը լոյս տեսած «Իքտամ» թերթի մէջ -----	317
Ա 8.– Անուանացանկ սպաննուած հայ բժիշկներու -----	318
Ա 9.– Յուցակ հայ որբերու (թուրքերու մօտ) -----	318
Ա 10.– Թուրք բժիշկներու մասնակցութիւնը հայկական ջարդերուն -----	319
Ա 11.– Ոճրագործ թուրք բժիշկները -----	319
Ա 12.– Մպաննուած հայ բժիշկներ -----	319
Ա 13.– Հրամանատարներու եւ թուրք սպաներու դերը (հայկ. կոտորածներու ընթացքին) -----	320
Ա 14.– Չինադարարէն ետք կացութիւնը նահանգներուն մէջ -----	322

Բ. ՍՈՒՇ – ՊԻԹԼԻՍ

Բ 1.– Մշոյ կոտորածներու կազմակերպիչ երեսփոխան Հոնա Իլիաս	323
Բ 2.– Պիթլիսի սարսափները (Քաղուած «Renaissance»էն)	324
Բ 3.– Առաջին զոհերը (Պիթլիս)	325
Բ 4.– Պիթլիսի տարագրութիւնն ու ջարդերը	326
Բ 5.– Վանի երեսփոխան Վռամեանի շարչարանքներն ու նահատակութիւնը	327
Բ 6.– Տասնեփնգ օր կախաղանին վրայ	327
Բ 7.– Բանտախուցէն գերեզման (Քաղուած «Renaissance»էն)	328
Բ 8.– Կախաղանը (Քաղուած «Renaissance»էն)	328
Բ 9.– Արինաթաթաւ լիճը	329

Գ. ԿԱՐԻՆ – ԷՐՁՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳ

Գ 1.– Էրզրումի խաչելութեան ճամբան	331
Գ 2.– Ջարդարարներու ժողովը Էրզրումի մէջ	331
Գ 3.– Երզնկայի կոտորածները եւ երեսփոխան Խալէտի արարքները	332
Գ 4.– Երկու Արմտաններու ողբերգութիւնները	333
Գ 5.– Բաբերդցի աղջկայ մը սրտաճնլիկ պատմութիւնը	334
Գ 6.– Բաբերդի ջարդերուն պատասխանատուները	335
Գ 7.– Քղիի դէպքերը՝ զօրակոչէն մինչ տարագրում	335
Գ 8.– Ջարդարար երեսփոխանի մը գազանութիւնները	336
Գ 9.– Յիշատակագիր Էրզրում նահանգի Խոտորջուր շրջանի հայոց տարագրութեան մասին (1-2-1919)	337

Դ. ՏՐԱՊԻՉՈՆ – ԿԻՐԱՍՈՆ

Դ 1.– Ինչպէս բնաջնջուեցան Տրապիզոնի հայերը	340
Դ 2.– Արինալի էջեր Տրապիզոնէն	340
Դ 3.– Ի՞նչ կ'արժեն հերքումները (Քաղուած «Renaissance»էն)	341
Դ 4.– Կիրասոնի հայերուն բնաջնջումը	341

Ե. ՍԵՔԱՍՏԻԱ – ՍԵՎԱԶ ՆԱՀԱՆԳ

Ե 1.– Սըվազի ապագայ սարսափներուն նախանշանները	343
Ե 2.– Սեբաստիոյ մարտիրոսութեան նախօրեակին	345
Ե 3.– Սեբաստիոյ հայերուն մարտիրոսութիւնը	346
Ե 4.– Սահակ վրդ. Օտապաշեանի նահատակութիւնը	346
Ե 5.– Սեբաստիոյ ոճրագործները 1915-ի ջարդերու ընթացքին	347
Ե 6.– Սեբաստիոյ բանուորական գունդերը – Գայա-Տիպիի գերեզմանոց-սպանդանոցը	350
Ե 7.– Սեբաստիոյ Սանասարեան վարժարանի ողբալի վիճակը	352
Ե 8.– Թուրքի մը վկայութիւնը Սըվազի մէջ գործուած գազանութեանց մասին	352
Ե 9.– Ամասիոյ ջարդերը	353
Ե 10.– Ամասիոյ ջարդերը	353
Ե 11.– Չառայի ջարդերը	354
Ե 12.– Հայ զինուորներու կոտորածը	354
Ե 13.– Շապին Գարահիսարի կոտորածը	354

Ե 14.– Մարգուանի դահիճները -----	355
Ե 15.– Ջառայի ջարդերը -----	355
Ե 16.– Ի՞նչ տեղի կ'ունենայ Սերաստիոյ մէջ (Քաղուած «Renaissance»էն) -----	356
Ե 17.– Ջարդարար մը բարձր պաշտօնի կոչուած -----	356
Ե 18.– Թոքատի տարագրումը 1915ին (Քաղուած «Renaissance»էն) -----	357
Ե 19.– Ջարդի պատմութիւններ -----	358

Չ. ԽԱՐԲԵՐԴ – ՏԻԱՐՊԵՔԻՐ – ՈՒՐՖԱ

Չ 1.– Խարբերդի նախկին վալի Սապիթ պէյ -----	359
Չ 2.– Ողջակիզումը -----	359
Չ 3.– Սարսափելի ոճրագործ մը՝ Մեհմէտ պէյ -----	360
Չ 4.– Խարբերդի նահանգապետ Սապիթի մեղսակիցները -----	360
Չ 5.– Խարբերդի բնաջնջումը -----	360
Չ 6.– Խարբերդի կոտորածներուն պատասխանատուները -----	361
Չ 7.– Կացութիւնը այլ վայրերու մէջ -----	361
Չ 8.– Տիարպեքիի սարսափները -----	362
Չ 9.– Տիարպեքիի նախկին երեսփոխան Փիրինճիզաւտ Ֆէյզի պէյ -----	363
Չ 10.– Ամբաստանագիր Ուրֆայի գերմանացի միսիոնար Ֆրանց Էկհարթի դէմ -----	364
Չ 11.– Տիկին Վարդանոյշ Բրուտեանի, Օր. Աշխէն Օտապաշեանի եւ Վերգինէ Օհաննէսեանի յայտարարութիւնները միսիոնար Էկհարթի մասին (Քաղուած «Renaissance»էն) -----	366

Է. ԿԻԼԻԿԻԱ

Է 1.– Չէյթունի եւ Մարաշի տարագրութիւնն ու ջարդերը (Քաղուած «Արիամարտ»էն) -----	367
Է 2.– Նոր մանրամասնութիւններ Կիլիկիոյ աքսորի մասին -----	369
Է 3.– Մարաշի հայերու գանգատը թուրք պաշտօնեաներու դէմ -----	370
Է 4.– Բողոք մը -----	370

Ը. ԱՆԳԱՐԱ – ԿԵՍԱՐԻԱ – ԳՈՆԻԱ

Ը 1.– Անգարայի քրիստոնեաներու ջարդերն ու տարագրումը -----	371
Ը 2.– Անգարայի լքեալ գոյքերուն կողոպտումը -----	374
Ը 3.– Անգարայի տարագրութիւնը -----	375
Ը 4.– Անգարայի ջարդերը -----	375
Ը 5.– Եոզղատի խժոժութիւնները -----	377
Ը 6.– Պոզուքի եւ Չամքաքի (Եոզղատ) բնաջնջումը -----	377
Ը 7.– Պողազլեան (Եոզղատ գաւառ, Անգարա նահանգ) -----	378
Ը 8.– Պողազլեան (Եոզղատի գաւառակ, Անգարա նահանգ) -----	379
Ը 9.– Չորումի կառավարիչը (Քաղուած «Renaissance»էն) -----	379
Ը 10.– Էվերէկի մէջ (թրքական) գաղտնի կոմիտէ մը -----	380
Ը 11.– Բեմադրուած աճապարարութիւն (Քաղուած «Renaissance»էն) -----	380
Ը 12.– Կեսարիոյ հաղորդակցութեան գրասենեակի տնօրէն Սապրի պէյ -----	381
Ը 13.– Նալլը խանի տեղահանութեան պատասխանատուները -----	381
Ը 14.– Սիվրիհիսարի սարսափները (Քաղուած «Renaissance»էն) -----	382
Ը 15.– Հերոսի մը շահատակութիւնները -----	382

Ը 16.– Գըր-Շեհիրի (Եռզղատ) տարագրումը ----- 383
 Ը 17.– Պոլուի դատավճիռները ----- 384
 Ը 18.– Գոնիայի տեղահանությունը ----- 385
 Ը 19.– Պոլուի ոստիկանապետ Իզզեթ պեյի դերը ----- 386
 Ը 20.– Գասթեմունիի նախկին կառավարիչ Աթըֆ պեյ ----- 386

Թ. ՊՐՈՒՍԱ – ՆԻԿՈՍԵԳԻԱ – ԻԶՄԻՏ

Թ 1.– Պրուսայի հայերուն տարագրությունն ու կոտորումը ----- 387
 Թ 2.– Պրուսայի իրադարձությունները ----- 388
 Թ 3.– Չենկիլերի հայոց տարագրությունը ----- 389
 Թ 4.– Հաճի Սիլվեյման (Աֆիոն-Գարահիսար) ----- 389
 Թ 5.– Աֆիոն-Գարահիսարի տարագրությունը ----- 390
 Թ 6.– Կեմլիկի եւ շրջակայքի տարագրութեան եւ ջարդերուն պատասխանատուները ----- 390
 Թ 7.– Քէօսերէ-Տերեսիի սպանողը ----- 391
 Թ 8.– Գարամուրսալի [Եալովա գաւառակ] հայոց տարագրությունը եւ ոճրագործները ----- 391
 Թ 9.– Շեքեթ պեյ՝ մեղակից Ատաբազարի եւ Իզմիթի չեթեապետ Իպրահիմի ----- 392
 Թ 10.– Չարչարանքներ Իզմիթի բանտին մէջ ----- 392
 Թ 11.– Մազհար պեյի պատմածը ----- 392
 Թ 12.– Ամբաստանութիւն 1914-1918 տարիներուն Պարտիզակի կառավարիչ Ալի Շուուրի դէմ ----- 393
 Թ 13.– Արսլանպեկի (Իզմիտ) տարագրումը ----- 393

Ժ. ԹՐԱԿԻԱ – ԱՏՐԻԱՆԱՊՈԼԻՍ – ՌՈՏՈՍԹՕ

Ժ 1.– Ատրիանապոլսյ չարագործները ----- 394
 Ժ 2.– Էջ մը Ատրիանապոլսյ անմիտ հալածանքներէն ----- 394
 Ժ 3.– Ատրիանապոլսյ հայոց տարագրումը ----- 395
 Ժ 4.– Ռոտոսթոյի թուրք չարագործները ----- 395

ԺԱ. ՏԷՐ ԶՕՐ

ԺԱ 1.– Տեր Զօրի սարսափագրու ջարդէն վերապրողի մը պատմությունը ----- 396
 ԺԱ 2.– Տեր Զօրի կոտորածներէն փրկուած ականատեսի մը վկայութիւնը ----- 397
 ԺԱ 3.– Ամբաստանութիւն Տեր Զօրի դահիճ Իսմայիլ Հազզը պեյի դէմ ----- 398
 ԺԱ 4.– Տեր Զօրի կոտորածներէն փրկուած սիվրի-հիսարցի երիտասարդի մը պատմությունը ----- 398
 ԺԱ 5.– Ալի Իհսան փաշայի չարագործությունները ----- 399

ԺԲ. ԿՈՎԿԱՍ

ԺԲ 1.– Կովկասի մէջ հայութեան դէմ գործուած ոճիրներու հեղինակ թուրք զինուորականներ ----- 400
 ԺԲ 2.– Կովկաս եւ Ռուսիա ապաստանած թրքահայերու վիճակը եւ օգնութեան խնդիրը ----- 401

Ե. ԲԱԺԻՆ
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱԼԷՊ ՀԱԻԱԶՈՒԱԾ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ
 (էջ 406– 434)

Վկայություններ Հալեպ հաւաքուած վերապրողներու -----	406
Ե 1.– Էրզրում նահանգի հայոց տարագրութիւնը -----	407
Ե 2.– Ամբաստանագիր - Տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան -----	414
Ե 3.– Կեսարիա քաղաքը շրջակայ ինը արուարձաններով -----	421
Ե 4.– Կապադովկիան հայուն է եւ պէտք է որ հայուն մնայ -----	422
Ե 5.– Կիրակիի բողոքի միջինկիւն բանաձեւը -----	423
Ե 6.– Ամանոսի (Հասանպէյի) եւ շրջակայ ութ գիւղերու համառօտ տեղեկագիրը -----	424
Ե 7.– Տեղեկագիր Գոնիայի կուսակալութեան -----	425
Ե 8.– Ընդհանուր տեղեկագիր Էտիրնէի կուսակալութեան հայ վերապրող գաղթականաց -----	426
Ե 9.– Հալեպի որբանոցի տեղեկագիրը (1915–1919) -----	429
Ե 10.– Տեղահանութեան պատմութիւնը -----	431
Ե 11.– Տէր Զօրի տաս հազարներով նահատակներէն ողջ մնացողի մը վկայութիւնը -----	433
Անձնանուններ -----	436
Տեղանուններ -----	445
Բովանդակութիւն -----	453

ՆԻԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ – ԺԲ. ՀԱՏՈՐ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ
ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒԲԵԱՆԻ

Համակարգչային շարուածք եւ էջադրում
ԹԱՄԱՐ ՄՆԱՊԵԱՆ-ՍՈՒՐՃԵԱՆԻ

ՆԻԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
շարքի բոլոր հատորները տեղադրուած են
www.elibrary.am եւ www.historyofarmenia.am կայքէջերուն վրայ:

TOME XII

**ARCHIVAL DOCUMENTS FOR THE HISTORY
OF
THE ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION – DASCHNAKZOUTIOUN**

*All volumes of the series
ARCHIVAL DOCUMENTS FOR THE HISTORY OF THE ARF – DASCHNAKZOUTIOUN
can be found at
www.elibrary.am and www.historyofarmenia.am websites, in digital format.*

E-mail: ypamboukian@arfarchives.org

ՑՐԻՈՒՄԻ ԿԵԴՐՈՆ

HAMAZKAYIN PRINTING & PUBLISHING HOUSE
P.O.BOX 80-1096
BOURJ HAMMOUD – LEBANON
TEL.: 00961 - 1 - 241263/4
FAX: 00961 - 1 - 260329
E-MAIL: print@hamazkayin.com
www.hamazkayin-bookstore.com



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ